ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
«ՎԱՆ ԱՐՅԱՆ»
2014

ՀՏԴ 323(479.25):941(479.25)
ԳՄԴ 66.3(2Հ)+63.3(2Հ)
Հ 422

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Հ 422 **ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**:
Վարդան Հարությունյան:- Եր. «Վան Արյան», 2014թ. 428 էջ:

Տեղեկատվական բնույթի այս գիրքը ներկայացնում է խորհրդային տարիներին Հայաստանում ազգային-հայրենասիրական, հասարակական-քաղաքական եւ այլախոհական գործունեության համար դատապարտված մարդկանց անցած ճանապարհը, հուշեր նրանց մասին եւ նրանց նկատմամբ կայացված դատավճիռները: Սա մեր նորագույն պատմության կարեւոր եւ դեռեւս չլուսաբանված այս ժամանակահատվածի՝ նման դիտանկյունից լուսաբանման առաջին փորձն է:

ՀՏԴ 323(479.25):941(479.25)
ԳՄԴ 66.3(2Հ)+63.3(2Հ)

© Հարությունյան Վ., 2014 թ.

ISBN 978-9939-70-089-2

Գրքի ստեղծման նախապատմությունը

Նման գրքի հրապարակման ցանկություն կար վաղուց, բայց այդ ուղղությամբ քայլեր սկսեցի նախաձեռնել 2011 թվականի աշնանից: Որպես առաջին քայլ դիմեցի Ազգային անվտանգության ծառայություն՝ խնդրելով տրամադրել ինձ խորհրդային տարիներին քաղաքական նկատառումներով դատապարտված անձանց դատավճիռները: Դիմումը ներկայացնելուց մի քանի օր անց ինձ հրավիրեցին ԱԱԾ եւ սկսեցին մանրակրկիտ քննարկել խնդրանքս հնարավորինս ճշգրիտ ու բարձրորակ իրականացնելու ուղիները: Նախ՝ պետք է ճշգրտվեին ցուցակները, իսկ դա, ըստ մեր զրույցի, պետք է անեի ես: Այնուհետեւ ԱԱԾ արխիվների վարչությանը ժամանակ էր հարկավոր՝ գործը ցանկալի մակարդակով անելու համար: Ես համաձայնեցի ցուցակներին առնչվող իմ ունեցած տեղեկություններն ի մի բերել ու ճշգրտել, իսկ նրանք խոստացան քսան օրվա ընթացքում ինձ տրամադրել իրենց արխիվում պահվող բոլոր անհրաժեշտ դատավճիռները: Այս զրույցից մի քանի օր անց ԱԱԾ-ից նամակ ստացա, ըստ որի, համաձայն Արխիվների եւ Տեղեկատվության մասին օրենքների՝ դիմումս մերժվում է: Մերժումն ստորագրել էր նույն պաշտոնյան, որն ինձ հետ ամենայն պատրաստակամությամբ ու մանրամասնորեն քննարկել էր դիմումիս ընթացք տալու ծրագիրը: Հաջորդ օրվա իմ հարցին, թե դա ինչ է նշանակում, նա պատասխանեց, որ ինձ ուղղված մերժման գրության մեջ իրեն է պատկանում միայն ստորագրությունը, իսկ տեքստի հեղինակները բոլորովին այլ մարդիկ են, եւ այդ մերժումն այլ առանձնասենյակում է գրվել:

Պարզ էր արդեն, որ ՀՀ ԱԱԾ-ն, հավատարիմ մնալով խորհրդային ՊԱԿ-ի սկզբունքներին, փորձում էր արհեստական խոչընդոտներ հարուցել գրքի հրապարակման ճանապարհին: Մտածեցի, որ մերժման որեւէ՝ թեկուզ կամայական հիմք չեն ունենա, եթե յուրաքանչյուր դատավճռի համար դիմի հենց այն մարդը, ում նկատմամբ կայացվել է դատավճիռը, իսկ այդ մարդու մահվան դեպքում՝ ժառանգը: Անտրամաբանական կլիներ, եթե մերժեին դիմողին տրամադրել իր կամ հարազատի նկատմամբ կայացված դատավճիռը: Համաձայնագրեր հավաքելու համար հսկայական ժամանակ ծախսեցի: Ոմանք արդեն մահացել են, ոմանք բնակվում են Հայաստանից դուրս, իսկ ոմանց հետ էլ ընդհանրապես կապ չկա: Որոշ դատավճիռների համար այդպես էլ համաձայնագրեր հայթայթել չկարողացա: Ինչեւէ. հավաքեցի համաձայնագրերի մի ամբողջ փաթեթ, որոնցով նախկին դատապարտվածները կամ նրանց մահվան դեպքում՝ ժառանգներն ԱԱԾ տնօրենին հայտնում էին, որ տեղյակ են իմ նախաձեռնության մասին, դեմ չեն, որ իրենց կամ իրենց հարազատների նկատմամբ կայացված դատավճիռները տրամադրվեն ինձ, եւ 2012-ի դեկտեմբերին ուղարկեցի ԱԱԾ: Որքան էլ զարմանալի է՝ կրկին մերժում ստացա: Այլ ճանապարհ չկար՝ ստիպված էի աղմուկ բարձրացնել: Նրանց վրա ազդելու լավագույն տարբերակը հասարակական ճնշումը կարող էր լինել: Որպես առաջին քայլ՝ ստորեւ ներկայացված հայտարարությամբ հանդես եկան մի խումբ նախկին քաղբանտարկյալներ:

Հայտարարություն
8.02.2013

Իրավապաշտպան, իրավունքի եւ ազատության կենտրոն հ/կ նախագահ Վարդան Հարությունյանը նախաձեռնել է խորհրդային տարիներին Հայաստանում ծավալված այլախոհական շարժման մասին մի ուսումնասիրություն հրապարակել: Նախատեսվող ուսումնասիրության մեջ, ի թիվս այլ նյութերի, պետք է տեղ գտնեն նաեւ այդ տարիներին դատապարտվածների դատավճիռները: Դրանք ձեռք բերելու նպատակով՝ դեռեւս 2011թ. նոյեմբերին Վ. Հարությունյանը դիմում է ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայություն: Սակայն, ԱԱԾ-ն՝ իր գրությամբ հղում կատարելով Արխիվային գործի մասին օրենքի 21-րդ եւ Տեղեկատվության մասին օրենքի 8-րդ հոդվածների վրա, մերժում է նրան: Մերժման ակնհայտ անհիմն լինելը վիճարկել չցանկանալով՝ Հարությունյանը մտածում է, որ մերժման որեւէ՝ թեկուզ կամայական հիմք չի լինի, եթե մարդիկ իրենց անունից դիմեն ԱԱԾ եւ պահանջեն ժամանակին իրենց նկատմամբ կայացված դատավճիռները: Նա խորհրդային տարիների քաղբանտարկյալներից, իսկ մահացածների դեպքում՝ նրանց առաջին կարգի ժառանգներից հավաքում է նման դիմումներ ու մեկ փաթեթով 2012 թ. դեկտեմբերի 6-ին ուղարկում ԱԱԾ, իսկ արդեն դեկտեմբերի 11-ով թվագրված գրությամբ կրկին մերժում է ստանում: Այս անգամ արդեն մերժման համար որպես հիմք նշվում է Արխիվային գործի մասին օրենքի 22-րդ հոդվածը:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր դատապարտյալի դատավճիռ պետք է տրվի դատապարտյալին: Այլ կերպ լինել չի կարող: Սակայն, խորհրդային շրջանում քաղաքական բանտարկյալների դատավճիռները բանտարկյալներին աշխատում էին չտրամադրել: Հայտնի են դեպքեր, երբ մարդիկ կարողացել են իրենց դատավճիռները կամ մեղադրական եզրակացություններն ստանալ երկարատեւ հացադուլների արդյունքում: Բայց այդ ժամանակները վաղուց արդեն անցյալ են: Այն երկիրը, որը մարդկանց դատապարտում էր այլախոհ լինելու համար՝ այլեւս գոյություն չունի: Այդ շրջանի քաղբանտարկյալները վաղուց արդարացվել են, բայց Հայաստանի Հանրապետության ԱԱԾ-ն՝ հին ժամանակների ոգուն համաձայն, շարունակում է հույժ գաղտնի փաստաթուղթ համարել խորհրդային շրջանում հրապարակված դատավճիռները: Անգամ խորհրդային ժամանակներում հայտարարվում էր, որ այդ դատավճիռները հրապարակվում են բաց դատավարությունների արդյունքում: Այսինքն՝ այդ դատավճիռներն իրենց հրապարակման պահից արդեն հանրության սեփականությունն են, դրանցից որեւէ մեկը փակ դատավարության արդյունք չէ, եւ դրանք՝ անգամ խորհրդային չափանիշներով, որեւէ տեսակի գաղտնիք համարվել չեն կարող: Դրանք մեզ են վերաբերում, կայացվել են մեր նկատմամբ, եւ մենք իրավունք ունենք պահանջել եւ ստանալ մեր դատավճիռները:

Զարմանալի է միայն, թե ինչու է տխրահռչակ Խորհրդային պետության տապալումից եւ Հայաստանի Անկախ Հանրապետության հռչակումից այսքան տարի անց՝ Անկախ Հայաստանի կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությունը շարունակում հավատարիմ մնալ խորհրդային մտածողությանն ու բարքերին եւ ամեն կերպ ի ցույց դնում իր անհանդուրժո-

ղականությունն այն մարդկանց նկատմամբ, ովքեր ժամանակին պայքարել են այդ բարքերի ու այդ մտածողության դեմ:

Դատապարտելով ԱԱԾ ղեկավարության նման կամայական գործելաոճը՝ հայտարարում ենք, որ հետամուտ ենք լինելու մեր իրավունքների պաշտպանությանը: Ուրախությամբ կընդունենք լրատվամիջոցների ներկայացուցիչների, իրավապաշտպանների, հասարակական ու քաղաքական գործիչների աջակցությունը:

Պարույր Հայրիկյան, Ռազմիկ Մարկոսյան, Ազատ Արշակյան, Շահեն Հարությունյան, Վալտեր Մելիքյան, Բագրատ Շահվերդյան, Գագիկ Առաքելյան, Նորիկ Մարտիրոսյան, Սուրեն Մելիքյան, Կոստան Կարապետյան, Վարդան Հարությունյան

Հայտարարությանն արձագանքեցին լրագրողները, եղան հարցազրույցներ ու այլ հրապարակումներ լրատվամիջոցներում, եւ ԱԱԾ-ն ստիպված եղավ հարցի լուծման համար ինձ հրավիրել զրույցի, որին մասնակցում էին ԱԱԾ բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ ԱԱԾ տնօրենի տեղակալի գլխավորությամբ: Նրանք անհասկանալի համառությամբ պնդում էին, որ այդ դատավճիռներում կան մարդկանց անուններ, ասենք՝ դատավարության ժամանակ հանդես եկած վկաների, որոնք գուցե չեն ցանկանա, որ իրենց անունը պարունակող փաստաթուղթ դուրս գա ԱԱԾ արխիվից: Իմ այն պնդմանը, թե խոսքը մարդկանց նկատմամբ կայացված դատավճռի մասին է, որը չի կարող չտրամադրվել նրան՝ ում նկատմամբ դա կայացվել է, պատասխանում էին, որ նրանք այդ դատավճիռները որպես դատավճիռ չեն դիտարկում, իրենց համար դրանք մարդկանց անուններ պարունակող արխիվային նյութեր են, եւ վերջ: Այն, որ դրանք իրականում դատավճիռներ են, եւ անկախ իրենց պնդումների՝ այդպիսին եղել են, մնում են ու կմնան մշտապես, ու դրանք պետք է տրվեն նրանց, ում նկատմամբ կայացվել են՝ փաստարկ չհամարվեց իրենց համար:

Հարցի այսպիսի լուծում առաջարկեցին. մարդկանց անունների փոխարեն՝ նշել նրանց անուն-ազգանունների սկզբնատառերը, իսկ ես, ըստ իմ հնարավորությունների, ունենալով սկզբնատառերը՝ փորձեի վերծանել դրանք: Անգամ խոստացան աջակցել ինձ այդ դժվարին գործում: Սա անսպասելի էր ինձ համար: Գործս բարդանում էր, բայց համաձայնեցի՝ հուսալով, որ հավատարիմ կմնան իրենց խոստմանը, եւ երբ դժվարությունների հանդիպեմ՝ կօգնեն: Բայց դատավճիռներն ինձ տրամադրելու փուլում խախտեցին իրենց խոստումը: Մարդկանց անուն-ազգանունների իրական սկզբնատառերի փոխարեն՝ կամայական տառեր նշեցին, ինչը դրանց վերծանումը դարձնում էր անհնար, իսկ վերծանման ուղղությամբ խոստացած աջակցությունից ընդհանրապես հրաժարվեցին: Եթե սկզբում այս կամ այն տառին համապատասխան մարդու իրական անունը հարցնում էի՝ պատասխանում էին, ապա մի քանի օր անց տեղեկացրեցին, որ իրենց արգելել են աջակցել ինձ նույնի՛սկ այդ հարցում: Մի խոսքով, ինչպես եւ վայել է իսկական չեկիստին՝ չարեցին այնպես, ինչպես խոստացել էին: Արդյունքում ձեռքիս տակ հայտնվեցին թերի դատավճիռներ: Սկսվեց դրանց վերականգնման մի դժվարին շրջան: Բնական է, որ ինչքան հին էին դատավճիռները, այնքան դժվար էր դրանց վերականգնումը: Մարդիկ մոռացել են ոչ միայն իրենց գործում ներգրավվածների անուն-ազգանունները, այլեւ՝ ամբողջական դրվագ-

ներ: Եթե դատապարտվածների անունները ճշտելը դեռ մի կերպ հնարավոր էր, ապա բազմաթիվ վկաների պարագայում՝ անլուծելի խնդիրներ էին ծագում: Ամեն դեպքում առավելագույնն արվել է դրանք ամբողջական տեսքի բերելու համար: Այնուհանդերձ, քիչ չեն այն դատավճիռները, որոնք հրապարակվում են այնպես, ինչպես ստացել եմ ԱԱԾ-ից: Սակայն, կարծում եմ, անունների բացակայությունը դատավճռի էության վրա չի ազդում եւ ընթերցողին չի խանգարում լիարժեք պատկերացում ստանալ տվյալ փաստաթղթի վերաբերյալ: Հարկ է նշել նաեւ, որ դատավճիռները չափազանց անմխիթար վիճակում էին, բազմաթիվ հատվածներ՝ անընթեռնելի: Ինչ հնարավոր է եղել վերականգնել՝ վերականգնել եմ, իսկ չկարողանալու դեպքում՝ գծիկներ եմ դրել:

60-ականներին դատապարտված քաղբանտարկյալների մի խումբ կա, որոնց հարազատներին կամ անձամբ իրենց չհաջողվեց գտնել: Նրանց նկատմամբ կայացված դատավճիռներն ընդհանրապես չտրամադրեցին ինձ: Նրանց մասին գրքում առկա տեղեկատվությունը վերցրել եմ Արմենակ Մանուկյանի «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ.» գրքից: Այդ նույն գրքից եմ օգտվել նաեւ որոշ՝ մինչեւ 1964 թ. դատապարտվածների դեպքում:

ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անհրաժեշտ ընդգծումներ

Գրքի կառուցվածքը

Այս գրքում յուրաքանչյուր քրեական գործ ներկայացված է առանձին եւ ամբողջական: Քրեական գործեր կան, որ վերաբերում են մեկ մարդու, գործեր կան, որ վերաբերում են խմբերի: Յուրաքանչյուր քրեական գործ ներկայացնելիս՝ սկզբում տրվում է կարճ տեղեկատվություն քրեական գործում ներգրավված մարդկանց, նրանց ծավալած ու քրեական գործի համար հիմք ծառայած գործունեության մասին: Մեր ներկայացրած տեղեկությունները միշտ չէ, որ համընկնում են գործով հրապարակված դատավճռում հիշատակված դրվագներին, եւ պարտադիր էլ չէ, որ դրանք դատավճիռներում հիշատակված լինեն: Սրա հիմնական պատճառն այն է, որ դատավճիռներում հիշատակված դրվագները միշտ չէ, որ իրականում կատարվածի ճշգրիտ արտացոլումն են: Մեր տեղեկությունները, որպես կանոն, հիմնված են գործերին անմիջականորեն կամ միջնորդավորված առնչություններ ունեցող մարդկանց հուշերի ու պատմությունների վրա: Գործի մասին այս անդրադարձներից հետո տրված են գործով դատապարտված յուրաքանչյուրի համառոտ կենսագրական տվյալները, որոնց մի մասը կարող են թերի լինել, քանի որ այս կամ այն պատճառով լիարժեք տեղեկություններ հայթայթել չենք կարողացել: Նույնը վերաբերում է լուսանկարներին: Գրքում հրապարակված են ե՛ւ քրեական գործերում եղած լուսանկարներ, ե՛ւ մեր օրերի լուսանկարներ: Որոշ մարդկանց դեպքում ոչ մի լուսանկար չի հաջողվել հայթայթել, որոշ դեպքերում ունենք միայն քրեական գործում առկա լուսանկարը, այլ դեպքերում՝ ոչ բավարար որակով ու պատահական լուսանկար: Համառոտ կենսագրական տվյալներից հետո գործով դատապարտվածներից ոմանք, որոշ դեպքերում էլ, եթե անմիջական մասնակիցները վախճանվել են՝ նրանց հարազատները, պատմում են, թե ինչպես ներգրավվեցին այլախոհական գործունեության մեջ, ինչպիսի գործունեություն են ծավալել, ինչպես են դատապարտվել եւ կրել իրենց ազատազրկումը, ինչ խնդիրների են առնչվել եւ ինչ դժվարություններ են ստիպված եղել հաղթահարել: Չնայած այն հանգամանքին, որ այդ պատմությունները ներկայացված են առաջին դեմքով, պատմության հերոսներից ոչ ոք անձամբ չի գրել. դրանք տվյալ պատմության հերոսի հետ ունեցած մեր զրույցների գրառումներն են: Մենք այդ զրույցները ձայնագրել, ապա՝ վերծանել ու խմբագրել ենք: Գրել ենք առաջին դեմքով՝ խոսքն առավել հասանելի եւ անհատական զգացմունքներն ավելի անմիջական տեղ հասցնելու նպատակով: Այս հուշ-պատմություններից հետո ներկայացրել ենք գործով կայացած դատավճիռները՝ պահպանելով ե՛ւ դրանց կառուցվածքը, ե՛ւ առկա վրիպակներն ու սխալները: Դրանց վերաբերվել ենք որպես փաստաթղթերի եւ ոչինչ չենք փոխել: Իրար առնչվող, բայց տարբեր գործեր կամ նույն գործչի տարբեր ժամանակահատվածում ծավալած գործունեությունը համադրելիս՝ ընթերցողը կարող է կրկնություններ նկատել: Սա պայմանավորված է գրքի կառուցվածքի տրամաբանությամբ, եւ դրանցից խուսափել չենք ցանկացել: **Այս գիրքը ոչ թե հանգամանալից՝ դեմքերի ու դեպքերի մասին ժամանակագրական հերթականությամբ սահուն շարադրված պատմություն է, այլ ավելի շատ՝ տեղեկատու է, եւ բնական է, որ կարող են կրկնություններ լինել:** Հնարավոր է նաեւ, որ բացթողումներ ու վրիպակներ նկատեք, ինչի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը, բայց կոպիտ սխալներ, առավել եւս խեղաթյուրումներ՝ բացառվում են:

Կարեւոր դիտարկում

Յուրաքանչյուր ոք կարող է իր անձնական կարծիքն ունենալ գրքում ներկայացված մարդկանց ու գործերի վերաբերյալ: Յուրաքանչյուր ոք կարող է այս կամ այն մարդու մասին ունենալ այս կամ այն տեղեկությունը: Յուրաքանչյուր ոք ազատորեն կարող է իր կարծիքն արտահայտել գրքում ներկայացված մարդկանց ու դեպքերի մասին եւ գնահատականներ տալ, ինչն անելուց առաջ, սակայն, չպետք է անտեսել, որ այս մարդկանց ներկայացրել ենք 1960-1988 թթ. համատեքստում: Այստեղ ներկայացված են անհատներ, որոնք գործել են նշված 28 տարիների ընթացքում, եւ հարկ է հաշվի առնել այդ տարիների տրամաբանությունը:

Այս գիրքը պատմության լուսաբանման կամ մարդկանց հերոսացման նպատակ չի հետապնդում: Գրքի ստեղծման շարժառիթը խորհրդային տարիների քաղբանտարկյալներին գնահատելը, նրանց որակումներ տալը, նրանց լավ կամ վատ լինելու մասին դատողություններ անելը չէ: Չի բացառվում, որ նրանցից ոմանք հենց այլախոհական շարժման գործում տխուր դերակատարում ունեցած լինեն: Չի բացառվում նաեւ, որ մի օր, հատկապես ԱԱԾ արխիվների բացվելուց հետո, պարզվի, որ նրանցից ոմանք ոչ միայն քաղբանտարկյալի, այլեւ մարդ լինելու կոչումն են արատավորել: Այս հանգամանքները հետաքրքիր ու կարեւոր են, բայց ոչ այս գրքի համար: Յուրաքանչյուր ոք՝ ով եղել է քաղբանտարկյալի կարգավիճակում, անկախ այն բանից, թե ինչ դերակատարում է ունեցել, ինչպիսի բանտարկյալ է եղել, ինչպես է իրեն դրսեւորել կալանավայրում կամ ազատ արձակվելուց հետո, ինչ հարաբերությունների մեջ է եղել հատուկ ծառայությունների հետ, ինչպես է իրեն դրսեւորում այսօր, եթե դեռ ողջ է, կամ՝ ինչպես են վերաբերվում նրան օտարներն ու յուրայինները, ներկայացված է այս գրքում: Թե ինչպիսին են եղել նրանք քաղբանտարկյալի կարգավիճակի ձեռքբերումից առաջ, այդ ընթացքում կամ դրանից հետո՝ դուրս է այս գրքի շրջանակներից: Իհարկե, ուշադիր ընթերցողը, համադրելով գրքում առկա տեղեկատվությունը, շատ բան կկարողանա կռահել, բայց այդ գործն ամբողջությամբ թողել ենք ուշադիր ընթերցողին ու որեւէ կերպ նրան օգնելու կամ ուղղություն ցույց տալու փորձ չենք արել:

Այլախոհության պատմությունը ԽՍՀՄ-ում

Համառոտ անդրադարձ

ԽՍՀՄ-ում այլախոհության պատմությունն ընդունված է սկսել 1960-ականների սկզբներից: Սա չի նշանակում, թե մինչ այդ խորհրդային երկրում այլախոհություն չի եղել: Բռնատիրական ուղիով ընթացող ցանկացած երկրում այլախոհությունն ինքնաբերաբար ծնվում ու այդ բռնատիրության ողջ ընթացքում ուղեկցում է նրան: Սա շատ բնական է: Այլախոհությունը ծնվում է որպես բռնատիրության պատասխան, որպես դրա արդյունք, եւ քանի դեռ հասարակությունը չի ժողովրդավարացել, քանի դեռ իշխանական կարծիքին չհամապատասխանող կարծիք արտահայտելու համար չեն դադարել մարդուն հետապնդել, չնայած տարատեսակ, անգամ դաժանագույն հետապնդումներին՝ գոյություն է ունենալու: Այսպես եղել է միշտ եւ ամենուր. խորհրդային երկիրը բացառություն լինել չէր կարող: Ընդդիմադիր հայացքների տեր անհատներ եղել են այս երկրի պատմության ողջ 70 տարիների ընթացքում:

Ստալինյան բռնատիրության տարիներին այլախոհները տարրալուծվում էին բռնադատվածների հոծ բանակի մեջ, եւ նրանց մասին կարող են հիշատակումներ անել միայն այդ տարիների անցուդարձը լրջորեն ուսումնասիրողները: Ստալինի մահից հետո խորհրդային երկրում նոր իրավիճակ ստեղծվեց: Երկիրը շարունակում էր մնալ բռնատիրական, շարունակվում էին քաղաքական հալածանքներն ու հետապնդումները, այլակարծությունն ու այլախոհությունը դատապարտելի էին համարվում, բայց բռնություններն այլեւս համատարած բնույթ չէին կրում, իսկ բռնադատվածներն ազատ էին արձակվում: Ավելի ուշ նաեւ սկսվեց այս կարգի մարդկանց գործերի վերանայման ու արդարացման գործընթաց: Ահա այս շրջանում է՛լ ավելի ցայտուն արտահայտվեց հալածվող ու դատապարտվող այլախոհությունը: Կալանավայրերը լցված չէին քրեական հանցագործներով ու միլիոնավոր բռնադատվածներով: Դրանք արդեն լցված էին միլիոնավոր քրեական հանցագործներով եւ սակավաթիվ այլախոհներով:

Ավելի ուշ (1948 թ.-ից)՝ խորհրդային իշխանությունները վճռել էին, իրենց լեզվով ասած, «հատուկ վտանգավոր պետական հանցագործներին», որոնց թվին էին դասվում նաեւ այլախոհները, առանձնացնել քրեական հանցագործներից եւ պահել հատուկ այդ նպատակով կազմակերպված խիստ ռեժիմի կալանավայրերում: Այս շրջանից սկսած՝ ավելի հեշտ ու ավելի հստակ կարելի է խոսել այլախոհության մասին: 1950-ականներին քաղաքական ենթատեքստով դատապարտված մարդկանց, որոնք ազատազրկվել են այս կամ այն կերպ, այս կամ այն չափով տիրող համակարգի նկատմամբ իրենց անհամաձայնությունն արտահայտելու պատճառով, արդեն առանց երկմտելու կարող ենք «այլախոհ» անվանել:

1960-1988 թթ. Խորհրդային Միության 15 հանրապետություններից ծանրակշիռ այլախոհական շարժում կար Էստոնիայում, Լիտվայում, Լատվիայում, Ուկրաինայում, Վրաստանում եւ Հայաստանում: Առանձին այլախոհական միավոր էին կազմում Ղրիմի թաթարները, որոնց պայքարի գլխավոր նպատակն իրենց ազգային իրավունքի իրացումն էր, ինչն առաջին հերթին պետք է արտահայտվեր Ղրիմ վերադառնալու իրավունքի նվաճմամբ: Ռուսաստանում այլախոհությունն առկա էր մեծ քաղաքներում, հիմնականում՝ Մոսկվայում եւ Պետերբուրգում:

Այլախոհության առումով ԽՍՀՄ-ում Հայաստանը 1960-1988 թթ. առանձնահատուկ տեղ է գրավել: Այստեղ, ի տարբերություն այլ հանրապետությունների, ոչ թե տարերային կամ դիպվածային, այլ կազմակերպված այլախոհական շարժում էր գործում: 1962-ին սկսել եւ մինչեւ 1966-ը գործել է Հայաստանի երիտասարդների միությունը: Ճիշտ է, այս կազմակերպությունը չի ունեցել հստակ մշակված ծրագիր ու կանոնադրություն, տարբեր փուլերում դրանք մշակելու զանազան փորձեր են արվել եւ այդպես էլ վերջնական տեսքի չեն բերվել, բայց չորս տարի շարունակ՝ ամենադժվարին պայմաններում գործել է: Կազմակերպությանն անդամակցող մարդկանցից շատերը դատապարտվել են, շատերն էլ տարատեսակ հետապնդումների են ենթարկվել: Նկատենք նաեւ, որ սա չի եղել այնպիսի կառույց, որը կհայտարարեր Խորհրդային Միությունում պաշտոնական համարվող կոմունիստական գաղափարախոսության դեմ պայքարի իր պատրաստակամության մասին: Սա ավելի շատ ազգային-հայրենասիրական կազմակերպություն էր, որի անդամներն իրենց առջեւ դրել էին այդ շրջանում հայ ժողովրդին հուզող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին՝ Եղեռնի օրը (ապրիլի 24-ը) նշելը, Եղեռնի զոհերի հուշարձան ունենալը, Հայաստանի կորցրած տարածքների՝ մասնավորապես Ղարաբաղի եւ Նախիջեւանի վերադարձը, հայոց լեզվի մաքրությունը եւ պահպանումը: 1965 թ. հզոր ցույցը կարելի է նաեւ այս կազմակերպության գրանցած հաջողություններից մեկը համարել: 1966 թ. սկսած՝ Հայաստանը դարձավ ԽՍՀՄ միակ հանրապետությունը, որտեղ գործում էր կազմակերպված ընդդիմադիր կուսակցություն, որն ուներ պաշտոնաթերթ, եւ այդ թերթի ու տարածած թռուցիկների միջոցով հայտարարեց գործող ռեժիմի դեմ իր գաղափարական պայքարի մասին: Դա **Ազգային միացյալ կուսակցությունն** (ԱՄԿ) էր: ԱՄԿ անդամները շարունակաբար կալանավորվում ու երկարատեւ ազատազրկման էին դատապարտվում, բայց կուսակցությունը շարունակում էր գործել: Եվ գործեց մինչեւ 1988 թվականը, երբ արդեն ընդհատակյա պայքարի անհրաժեշտություն չկար: Լյուդմիլա Ալեքսեեւան իր 1992 թ. հրապարակած «Այլախոհության պատմությունը ԽՍՀՄ-ում» գրքի Հայաստանին նվիրված բաժնում գրում է. «Հայաստանը ԽՍՀՄ միակ հանրապետությունն է, որտեղ գործում է կուսակցություն, որն իր առջեւ ԽՍՀՄ-ից դուրս գալու նպատակ է դրել, եւ այդ գաղափարն ընկալվում է ժողովրդի կողմից: 15 տարիների ընթացքում ՊԱԿ-ը հնարավորություն է ունեցել համոզվելու, որ անհնար է ոչնչացնել ԱՄԿ-ն, յուրաքանչյուր ձերբակալությունների շղթայից հետո ի հայտ էին գալիս նոր հետեւորդներ» (էջ 78):

Մի ուշագրավ եւ ընդգծման անհրաժեշտություն ունեցող հանգամանք եւս (բացի ձեւավորված ու ընդհատակում անընդհատ գործող կուսակցության առկայությունից) առանձնացնում է հայաստանյան այլախոհությունը մյուս հանրապետություններում առկա նմանատիպ դրսեւորումներից: ԽՍՀՄ սահմաններից դուրս՝ Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում առկա սփյուռքը՝ ռուսական լինի, ուկրաինական կամ մերձբալթյան, հսկայական աջակցություն էր ցուցաբերում խորհրդային երկրում պայքարող իրենց հայրենակից այլախոհներին: Այդ աջակցությունը հիմնականում արտահայտվում էր նրանց ձայնը դրսում լսելի դարձնելով: Սփյուռքում կազմակերպվում էին աջակցության կենտրոններ, մայրենի լեզվով հրատարակվող մամուլի միջոցներն անդրադառնում էին այլախոհներին, թարգմանաբար օտարներին էին ներկայացնում նրանց գործերը, նրանց անձը եւ նրանց պայքարն ընդհանրապես: Հայաստանյան այլախոհները նման աջակցությունից զուրկ են եղել: Հայկական սփյուռքը միայն դեպքից դեպք է անդրադարձել հայ քաղբանտարկյալներին ու այլախոհներին: Հայ այլախոհները, նրանց նկատմամբ կայացված դատավճիռները, նրանց հետագա ճակատագրերը, որպես կա-

նոն, ԽՍՀՄ սահմաններից դուրս հայտնի էին դառնում ոչ թե հայերի, այլ օտարների աջակցության շնորհիվ: 1968 թ. մոսկովյան այլախոհների կողմից հրատարակվող «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկան» մշտապես, ի թիվս այլոց, անդրադարձել է նաեւ հայ այլախոհներին: Ավելի ուշ՝ «Դեպքերը Հայաստանում» խորագրով առանձին բաժին է բացվում «Խրոնիկայում», որտեղ հեղինակները մանրամասն անդրադառնում էին հայաստանյան իրադարձություններին՝ հետապնդումներին, իրավունքների խախտումներին եւ քաղաքական դատավարություններին:

Քաղաքական կալանավայրերում հայտնված հայ քաղբանտարկյալները, չնչին բացառությամբ, չափազանց ակտիվ են եղել կալանավայրերում: Ցանկացած միջոցառում՝ հացադուլ լիներ, գործադուլ, թե քաղաքական կարգավիճակի պահանջ, ինչը նախատեսում էր լրջագույն ու ամենախիստ պատիժներ՝ ընդհուպ մինչեւ ռեժիմի խստացում եւ բանտային ռեժիմի փոխադրում, առանց հայ քաղբանտարկյալների չի ընթացել: Նրանք միշտ եղել են առաջին շարքերում, եւ որպես ամենաակտիվ կալանավորներ՝ մշտապես ե՛ւ «Խրոնիկայի» էջերում, ե՛ւ արեւմտյան լրատվամիջոցներում շեշտվել է նրանց անունները: Սրանում համոզվելու համար բավական է համացանցում մտնել «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկայի» կայքը, որտեղ տեղադրված են 1968 թվականից սկսած՝ «Խրոնիկայի» բոլոր թողարկումները, եւ ուսումնասիրել էջ առ էջ: Քիչ կհանդիպեն համարներ, որտեղ հայերի կամ Հայաստանի մասին հիշատակումներ չեն լինի, իսկ կալանավայրերից եկած տեղեկատվական հոսքում հայկական ազգանվան բացակայություն չի նկատվի:

Չնայած այն հանգամանքին, որ, ինչպես նշեցինք վերեւում՝ միայն ստալինյան համատարած բռնություններից հետո է հնարավոր եղել խոսել ԽՍՀՄ-ում սակավաթիվ այլախոհների մասին, եւ դասական այլախոհության ի հայտ գալը ԽՍՀՄ-ում ընդունված է ետստալինյան երեւույթ համարել, Հայաստանի Հանրապետության 1994 թ. հունիսի 14-ին ընդունված Բռնադատվածների մասին օրենքն այլախոհներին արհեստականորեն ներառեց Ստալինյան շրջանի բռնադատվածների բանակի մեջ: Ճիշտ այնպես, ինչպես ստալինյան շրջանում էին իրական այլախոհները տարրալուծվում բռնադատվածների հոծ բազմության մեջ ու չէին առանձնացվում, այնպես էլ՝ անկախ Հայաստանում բոլորը բռնադատված են համարվում: Ավելորդ է ասել, որ բռնադատվածը եւ այլախոհության համար դատապարտվածը լիովին տարբեր հասկացություններ են: Մի դեպքում համատարած բռնությունների զոհ են դառնում բացարձակապես անմեղ, երկրի դրվածքին եւ կարգերին չընդդիմացող, նույնիսկ այդ կարգերին հավատարիմ մարդիկ, որոնց մտքով անգամ չէր անցնի, որ կդատապարտվեն, իսկ մյուս դեպքում՝ դատապարտվում է իր երկրի անկախության համար պայքարողը կամ մարդու իրավունքների պաշտպանությամբ հանդես եկողը, որը գիտի՝ իր գործողությունները չեն ներվելու երկրի իշխանությունների կողմից, գիտի, որ դատապարտվելու է եւ գիտակցված անում է քայլեր, որոնք նրա ազատազրկման պատճառ են դառնալու: Ժամանակին այս երկու բացարձակապես տարբեր երեւույթները մեկ օրենքի մեջ ներառելով նույնականացնելը ե՛ւ սխալ էր, ե՛ւ վիրավորական այլախոհների համար:

Քաղբանտարկյալների ցանկը համալրման կարիք ունի

Խորհրդային տարիների հայաստանյան քաղբանտարկյալների ճշգրիտ թիվը հայտնի չէ: Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովին 2000 թ. ԱԱԾ-ի տրամադրած ցուցակի, որտեղ բազմաթիվ սխալներ ու բացթողումներ կան, 1953-1988 թթ. ՀԽՍՀ քր. օր.-ի 65, 67, 206[1] եւ ՌՍՖՍՀ քր. օր.-ի 58 հոդվածներով դատապարտվել է 131 մարդ, իսկ ըստ նույն հանձնաժողովի հրապարակած գրքույկի, որտեղ ներառված չեն 1953-54 թթ. բազմաթիվ դատապարտվածներ՝ 102 մարդ: Եթե նույնիսկ չհաշվենք 1953-54 թթ. չընդգրկված մարդկանց թիվը, այս երկու ցուցակում 12 մարդու տարբերություն կա: Նույնը նկատելի է նաեւ Արմենակ Մանուկյանի «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ.» գրքում հրապարակած անունների եւ մեր ձեռքի տակ եղած ցուցակներում առկա անունների միջեւ: Անճշտություններն առավել ակնառու են դառնում, երբ արդեն իսկ մեզ հայտնի ցուցակները փորձում ենք համեմատել ռուսական «Մեմորիալ» կազմակերպության հրապարակած ցուցակների հետ: Այդ ցուցակներում հայերի ազգանուններ կան, որոնք դատապարտվել են Հայաստանում 1953-60 թթ. ընթացքում, բայց բացակայում են մեր ձեռքի տակ եղած բոլոր ցուցակներում: Սա վկայում է այն մասին, որ կամ Հայաստանի ԱԱԾ արխիվում չեն պահպանվել ամբողջական գործեր, կամ՝ այդ արխիվը դեռ լավ համակարգված չէ, եւ առայժմ դժվար է այնտեղից ամբողջական տեղեկատվություն ստանալ, կամ՝ այդ արխիվից ցուցակներ տրամադրելու աշխատանքները կատարվում են թերի՝ թափթփված ու անպատասխանատու աշխատակիցների կողմից, կամ էլ՝ կանխամտածված են ոչ լիարժեք ցուցակներ տրամադրում հանրությանը:

Թվում էր, թե 1964-ից հետո մարդկանց անունների հարցում անճշտություններ չպետք է լինեն: Վերջին հաշվով՝ ե՛ւ այդ մարդիկ են հայտնի, ե՛ւ հայտնի են նրանց գործերը, նաեւ հրապարակումներ կան նրանց մասին, բայց որքան մեծ էր մեր զարմանքը, երբ պարզեցինք, որ անգամ այս տարիներին դատապարտվածների ցուցակը լիարժեք չէ: ԱԱԾ-ի տրամադրած ցուցակում ընդհանրապես չեն ընդգրկվել Հայաստանի հելսինկյան խմբի դատապարտված անդամների անունները, չնայած նրանք ազատազրկվել են 206[1] հոդվածով: Նույն հոդվածով են դատապարտվել Արսեն Ղազարյանը (1980 թ.), Շիրակ Գյունաշյանը (1983 թ.), որոնց անունները նույնպես չկան: Չկան կրոնական դրդապատճառներով դատապարտվածները: Բացարձակապես չեն հիշատակվում եւ անհայտ են մնում այն մարդիկ, ովքեր դատապարտվել են իրենց ծավալած քաղաքական գործունեության համար, բայց մտացածին՝ քրեական հոդվածներով: Խորհրդային տարիների պետանվտանգության կոմիտեն չէր խորշում, հակառակը՝ հաճախ էր դիմում մտացածին քրեական հոդվածներով մարդկանց դատապարտելու պրակտիկային: Ոմանց համար կեղծ մեղադրանքներ էին հորինվում, ոմանց նկատմամբ գործեր էին «սարքում» սադրիչների մասնակցությամբ, ոմանց հոգեբուժարաններում էին փակում, եւ այս բոլոր մարդիկ այսօր չկան քաղաքական գործունեության կամ իրենց համոզմունքների համար դատապարտվածների ցանկում: Նրանց անունները ճշտելը մեծ ու դժվարին գործ է՝ փակ արխիվների եւ հետաքրքրվողների լայն շրջանակներին հասու չլինելու պատճառով:

2011-2013 թթ. ընթացքում, չնայած մեր թափած ջանքերին, մեզ այդպես էլ չհաջող-

վեց ԱԱԾ-ից ստանալ քաղաքական նկատառումներով դատապարտվածների մասին քիչ թե շատ ամբողջական տեղեկություններ եւ նրանց դատավճիռները: ԱԱԾ-ն՝ սեփա - կանության իրավունքով խստորեն պահում ու պահպանում է այդ դատավճիռները, համարելով, որ դրանք խիստ գաղտնի փաստաթղթեր են, չկամորեն ու միայն հարկադրված լինելու դեպքերում է դրանք տրամադրում ոչ յուրայիններին: Անգամ այլ՝ մասնագիտացված պետական կառույցներին, ինչպիսիք, օրինակ, արխիվներն են, չեն տրամադրում այս գործերի կրկնօրինակները: ՊԱԿ-ի գծով դատապարտված մարդկանց նկատմամբ հարուցված քրեական գործերը եւ այդ գործերով կայացված դատավճիռները պահվում են միայն ԱԱԾ արխիվում: Անգամ դատական դեպարտամենտը չունի դրանք: Այդ պատճառով էլ 1953-1964 թթ. դատապարտվածների դեպքում մեզ համար, բացի 2000 թ. ԱԱԾ-ի կողմից ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովին տրամադրած ցուցակից՝ լրացուցիչ աղբյուր է ծառայել ԱԱԾ լրատվական ծառայության նախկին ղեկավար Արմենակ Մանուկյանի 2005 թ. հրապարակված «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ.» գիրքը:

Ե՛վ Արմենակ Մանուկյանի գրքում եղած անունների, ե՛ւ Մարդու իրավունքների հանձնաժողովի հրապարակած, ե՛ւ մեր ձեռքի տակ եղած ցուցակների համադրմամբ՝ մեր կողմից լրացված ցանկը նույնպես լիարժեք համարել չի կարելի: Այդ ցանկը շարունակում է թերի մնալ եւ թերի կմնա այնքան ժամանակ, քանի դեռ ԱԱԾ-ն հրաժարվում է այլախոհներին առնչվող տեղեկություններ տրամադրել հասարակությանը: Եթե ԱԱԾ-ն նույնպես չունի ցանկի ամբողջական տարբերակը, ինչը չի բացառվում, ապա կարող էին շահագրգիռ կազմակերպությունների ու անձանց հետ համագործակցելով՝ քիչ թե շատ ամբողջական տեսքի բերել ու հրապարակել: Սրանից ոչ ոք չէր տուժի: Ի դեպ, չէր տուժի նաեւ ԱԱԾ-ն: Ավելին, կլրացվեր մեր նորագույն պատմության բազմաթիվ բացթողումներից մեկը:

1963-1988 թթ. ընթացքում, ընդհանուր առմամբ, Հայաստանում տեղի է ունեցել մեզ հայտնի 34 քաղաքական դատավարություն՝ ներառյալ երկու շինծու քրեական դատավարությունները եւ Մոսկվայի մետրոյի պայթեցման գործով դատավարությունը, որը, ճիշտ է, ընթացել է Մոսկվայում, բայց հարկ ենք համարել ներառել հայաստանյան դատավարությունների շարքում: Մեզ հայտնի են ավելի շատ շինծու քրեական դատավարություններ, բայց գրքում միայն սրանք ենք ներառել, որովհետեւ այս դատավարությունների հետեւանքով մարդիկ դատապարտվել են երկարատեւ ազատազրկման եւ կալանավայրերում կրել այդ ժամկետները, իսկ մեզ հայտնի մյուս դեպքերով՝ չնայած շատերը շինծու գործերով դատապարտվել են ազատազրկման, նրանց ազատազրկման ժամկետները ներառվել են քաղաքական հոդվածներով դատապարտված ժամկետների մեջ: Ժամկետների կլանված լինելու հանգամանքը մեզ թույլ է տվել շինծու քրեական գործերի վրա առանձնապես չծանրանալով՝ յուրաքանչյուր դեպքով մարդկանց կենսագրությունը ներկայացնող հատվածներում սրանց մասին հիշատակել: Նշված տարիների ընթացքում, թվարկված 34 դատավարությունների հետեւանքով դատապարտվել է 91 մարդ: Դատապարտվածներից ութի անունները՝ Գյունաշյան Շիրակ, Խաչատրյան Հայկազ, Զատիկյան Ստեփան, Հարությունյան Շահեն, Հայրիկյան Պարույր, Նավասարդյան Աշոտ, Արշակյան Ազատ, Հարությունյան Էդուարդ, կրկնվում են՝ մեկ անգամից ավելի դատապարտված լինելու պատճառով: 1985 թ. գորբաչովյան հրապարակայնության ու վերակառուցման արդյունքում քաղաքական հետապնդումներն սկսեցին նվազման միտումներ դրսեւորել, եւ հույս էր արթնացել, որ պատմության գիրկն են անցնելու: Սակայն, այդ հույսերը չարդարացան: Հենց նույն՝ 1985-ին, իրենց

կրոնական համոզմունքների համար 10 կրիշնայական է դատապարտվել: Նրանցից ոմանք դատապարտվել են տարբեր տարիների ազատազրկման, իսկ ոմանք՝ դատարանների որոշումներով հոգեբուժարաններ են տեղափոխվել: Այս տասնյակը, անկասկած, նույնպես համալրում է խորհրդային շրջանի հայաստանյան քաղբանտարկյալների շարքը: 1988-ին վերսկսվեցին քաղաքական հետապնդումները: Այդ տարվա մարտին կրկին կալանավորվեց Պարույր Հայրիկյանը, իսկ հուլիսին արտաքսվեց Խորհրդային Միությունից: 1988 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ դատախազության հարուցած քրեական գործի շրջանակում կալանավորվեցին եւ Երեւանից Մոսկվա տեղափոխվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ՝ պատմական գիտությունների թեկնածուներ Ալեքսան Հակոբյանը եւ Համբարձում Գալստյանը (սպանվել է 1994 թ.), ֆիզ-մաթ. գիտությունների թեկնածուներ Բաբկեն Արարքցյանը, Դավիթ Վարդանյանը, Վազգեն Մանուկյանը, ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ Սամվել Գեւորգյանը (վախճանվել է 2014 թ.), տեխնիկական գիտությունների դոկտոր, ԳԱ թղթակից անդամ Ռաֆայել Ղազարյանը (վախճանվել է 2007 թ.), ուսուցիչներ Աշոտ Մանուչարյանը եւ Սամսոն Ղազարյանը, ԽՍՀՄ գրողների միության անդամ Վանո Սիրադեղյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նրանց հետ միասին կալանավորվեցին նաեւ Խաչիկ Ստամբոլցյանը եւ Իգոր Մուրադյանը: Նրանց դեմ հարուցված քրեական գործը՝ վեց ամիս շարունակվելուց հետո, այդպես էլ դատական լուծում չստացավ: Կալանավորվածներն ազատ արձակվեցին 1989 թ. մայիսին:

Եթե 1963-88 թթ. ընթացքում քաղբանտարկյալի կարգավիճակում գտնվող մարդկանց թվին ավելացնենք 10 կրիշնայականներին եւ «Ղարաբաղ» կոմիտեի գործով կալանավորվածներին եւ հանենք երկրորդ կամ երրորդ անգամ կրկնվող 10 անունները, ապա կստացվի, որ Խորհրդային Հայաստանում՝ նշված 25 տարիների ընթացքում քաղբանտարկյալի կարգավիճակում եղել է 105 մարդ: Այս 105-ից 95-ը դատապարտվել կամ կալանավորվել եւ քաղբանտարկյալի կարգավիճակում երկար ժամանակ բանտարկված են մնացել իրենց ծավալած քաղաքական գործունեության, իսկ 10-ը՝ իրենց ծավալած կրոնական գործունեության համար:

Այսպիսով, քաղաքական բանտարկյալների 1953-1988 թթ. մեր լրամշակած ցանկի մեջ ներառված է 168 անուն: Վերջին 14 անունները 1988 թ. կալանավորվածներն են, որոնց նկատմամբ, ճիշտ է, դատավճիռներ չեն կայացվել, բայց նրանցից 13-ը՝ 6 ամիս, իսկ մեկը՝ Պարույր Հայրիկյանը, 4 ամիս, քաղբանտարկյալների կարգավիճակով բանտարկված են մնացել:

Ահա այդ ցանկը

1953 թ.

1. Միսաք Լեւոնի Պետրոսյան
2. Մնացական Սեմյոնի Հովհաննիսյան
3. Ռաֆիկ Մարութի Առաքելյան
4. Սիմոն Անուշավանի Արզումանյան
5. Ալեքսանդր Միրզոյի Լալայան
6. Ժորժ Խաչիկի Հովակիմյան
7. Գրիգոր Ղազարի Ջարաջյան

8. Սարգիս Ավետիսի Շահինյան
9. Սերոբ Գրիգորի Հովսեփյան
10. Գրիգոր Մինասի Սաղաթելյան
11. Խաչատուր Բեգոյի Սիմոնյան-Խանսամյան
12. Գեւորգ Առաքելի Սախկալյան
13. Գեորգի Պավելի Քեշիշյան
14. Դավիթ Մարտիրոսի Շահլամյան
15. Մնացական Հովսեփի Մովսիսյան
16. Բուրաստան Բագրատի Հայրապետյան-Նավոյան
17. Գարեգին Վասիլի Բաղդասարյան

1954 թ.

18. Աբրահամ Երեմի Հովհաննիսյան
19. Սարիբեկ Կարապետի Վարդանյան
20. Վարուժան Մուկուչի Մարտիրոսյան
21. Հայկազ Հովհաննեսի Գավալյան
22. Անուշավան Ավագի Պապոյան
23. Հրաչ Վարդանի Վերդյան
24. Սուքիաս Սարգիսի Մկրտչյան
25. Գրիգոր Թադեւոսի Հովակիմյան
26. Սանասար Սարոյի Ասատրյան
27. Նազար Մուրադի Ասատրյան
28. Հրաչ Հովհաննեսի Գեւորգյան
29. Արտավազդ Մինասի Մասունյան
30. Հակոբ Մկրտիչի Հակոբյան
31. Գեւորգ Աբրահամի Գեւորգյան

1955 թ.

32. Սանդրո Շաքարի Գրիշյան
33. Վահան Դարչոյի Անանյան
34. Վաղարշակ Հովհաննեսի Ղահրամանյան
35. Ռազմիկ Վազգենի Գալստյան
36. Քնարիկ Ազատի Գասպարյան

1957 թ.

37. Աննա Մինասի Սրապյան
38. Մազման Պողոսի Հարությունյան
39. Վահան Հարությունի Քերեսեջյան
40. Հովհաննես Գասպարի Տեր-Խաչատրյան
41. Նազար Խաչիկի Ինջյան
42. Կարապետ-Հարություն Մկրտիչի Եղիազարյան
43. Վիկտոր Աբրահամի Ալլախվերդով
44. Լեւոն Մինասի Մարտիրոսյան
45. Կարապետ-Կարպիս Խաչիկի-Շարլի Մանուկյան

46. Թորգոմ Թադեւոսի Հակոբյան
47. Վրույր Գեւորգի Գալստյան

1958 թ.

48. Արմո Հայկի Շահինյան
49. Աղաբեկ-Աղվան Կարապետի Արշակյան
50. Աշոտ Վաղարշակի Ղազարյան
51. Կառլեն Մովսեսի Վարդանյան
52. Ալբերտ Սեդրակի Ոսկանյան
53. Վարդան Գրիգորի Սարիբեկով

1964 թ.

54. Վիգեն Ասատուրի Բաբայան
55. Խաչատուր Ջումշուդի Ամիրջանյան
56. Մերուժան Արտաշեսի Հովհաննիսյան
57. Կարապետ-Կարո Պողոսի Քիրամիջյան
58. Գրիգոր-Հովհաննես Հակոբի Եղյան
59. Խաչիկ Էլոյի Սաֆարյան
60. Էդվարդ Վարդանի Կակոսյան

1967 թ.

61. Սերգեյ Անդրանիկի Մելքոնյան
62. Ֆրունզիկ Աբրահամի Մկրտչյան
63. Զավեն Եղիշի Հարությունյան
64. Սուրիկ Արտավազդի Սարգսյան
65. Ալբերտ Մկրտիչի Ղուբասարյան
66. Մկրտիչ Ռուբենի Մովսիսյան
67. Արկադի Սերգեյի Հայրապետյան
68. Ռուբեն Գուրգենի Սաֆարյան
69. Իվան-Վանիկ Գրիգորի Ստեփանյան
70. Մարտին Սարգիսի Նալբանդյան

1968 թ.

71. Լեւոն-Արա Հարությունի Մնացականյան
72. Ռուբիկ Թադեւոսի Վարդանյան
73. Միսաք Խաչիկի Խաչատրյան
74. Ռաֆիկ Աշոտի Ղարագուլյան
75. Անդրանիկ Սուրենի Մխիթարյան
76. Վահան Սարգիսի Եղիազարյան
77. Էդիկ Վրեժի Ալեքսանյան
78. Հակոբջան Դրաստամատի Թադեւոսյան
79. Ռուբեն Մովսեսի Հովսեփյան

1969 թ.

80. Հովիկ Մարտինի Վասիլյան
81. Ասատուր Հունանի Բաբայան
82. Գեւորգ Ռուբենի Հեքիմյան
83. Աղասի Անդրուշի Անտոնյան
84. Սարգիս Խաչիկի Թորոսյան
85. Շիրակ Պավելի Գյունաշյան
86. Հայկ Բաղդասարի Իսկանդարյան
87. Լեւոն Ռուբենի Առուշանյան
88. Հայկազ Կարապետի Խաչատրյան
89. Ստեփան Սեղբոսի Զատիկյան
90. Շահեն Հարությունի Հարությունյան

1970 թ.

91. Պարույր Արշավիրի Հայրիկյան
92. Հակոբ Հովհաննեսի Աշիկյան
93. Աշոտ Ցոլակի Նավասարդյան
94. Ռաֆայել Սերգեյի Բարսեղով
95. Աշոտ Զավենի Խաչատրյան

1971 - 72 թ.

96. Վալտեր Հունանի Մելիքյան
97. Յուրիկ Աբգարի Բուդաղյան
98. Սերոբ Հայկի Սարգսյան
99. Սուրեն Բալասանի Մելիքյան
100. Արամայիս Վահանի Խաչատրյան

1973 թ.

101. Բագրատ Լեւոնի Շահվերդյան
102. Արարատ Սիրեկանի Թովմասյան

1974 թ.

103. Նորիկ Համբարձումի Մարտիրոսյան
104. Լեւոն Պատվականի Բաղալյան
105. Սամվել Համբարձումի Մարտիրոսյան
106. Ռուբեն Լյուդվիգի Խաչատրյան
107. Պարույր Արշավիրի Հայրիկյան
108. Կոստան Վահանի Կարապետյան
109. Գագիկ Սերյոժայի Առաքելյան
110. Կարապետյան Անահիտ Աղվանի
111. Ֆիրդուս Մեխակի Մուրադյան
112. Գարեգին Համբարձումի Դավթյան
113. Ռազմիկ Արտավազդի Զոհրաբյան
114. Ռազմիկ Գրիգորի Մարկոսյան
115. Ազատ Լեւիկի Արշակյան

116. Քաջիկ Վարազդատի Սահակյան
117. Աշոտ Ցոլակի Նավասարդյան

1975 թ.

118. Անդրանիկ Նահապետի Մարգարյան

1978 թ.

119. Շահեն Հարությունի Հարությունյան
120. Ռոբերտ Խաչիկի Նազարյան
121. Հայկազ Կարապետի Խաչատրյան

1979 թ.

122. Ստեփան Սեղբոսի Զատիկյան
123. Զավեն Մելքոնի Բաղդասարյան
124. Հակոբ Ստեփանյան

1980 թ.

125. Էդուարդ Բագրատի Հարությունյան
126. Արսեն Հայկազի Ղազարյան

1981 թ.

127. Մարզպետ Հարությունի Հարությունյան
128. Իշխան (Կնյազ) Մկրտչի Մկրտչյան
129. Վարդան Լյուդվիկի Հարությունյան
130. Սամվել Էլիբեկի Եղիազարյան
131. Հովհաննես Ռաֆայելի Աղաբաբյան
132. Ալեքսանդր Արամի Մանուչարյան
133. Սմբատ Բատիկի Մելքոնյան
134. Աշոտ Հարությունի Ափիկյան
135. Աշոտ Ցոլակի Նավասարդյան
136. Ազատ Լեւիկի Արշակյան

1982 թ.

137. Շիրակ Պավելի Գյունաշյան

1983 թ.

138. Գեորգի Պավելի Խոմիզուրի
139. Ռաֆայել Աշոտի Պապայան
140. Էդմոնդ Գեղամի Ավետյան
141. Էդուարդ Բագրատի Հարությունյան
142. Սիրվարդ Արտաշեսի Ավագյան
143. Ռաֆայել Լյուդվիգի Օհանյան

1985 թ.

144. Ռաֆֆի Ղազարի Մելքոնյան

ԿրիՇնայականներ

145. Արա Հակոբյան
146. Մարտին Ժամկոչյան
147. Կարեն Սահակյան
148. Արմեն Սահակյան
149. Սուրեն Կարապետյան
150. Արմեն Սարգսյան
151. Գագիկ Բունիաթյան
152. Սարգիս Օհանջանյան
153. Արմինե Խտրյան
154. Սերգեյ Կասյան

1988 թ.

Այս գործերով վճիռներ չեն կայացվել:

155. Պարույր Արշավիրի Հայրիկյան
156. Լեւոն Հակոբի Տեր-Պետրոսյան
157. Բաբկեն Գուրգենի Արարքցյան
158. Վանո Սմբատի Սիրադեղյան
159. Ռաֆայել Ավետիսի Ղազարյան
160. Վազգեն Միքայելի Մանուկյան
161. Դավիթ Մանուկի Վարդանյան
162. Աշոտ Գառնիկի Մանուչարյան
163. Սամվել Գեւորգի Գեւորգյան
164. Սամսոն Սերյոժայի Ղազարյան
165. Ալեքսան Հակոբի Հակոբյան
166. Համբարձում Փայլակի Գալստյան
167. Խաչիկ Վարդանի Ստամբոլցյան
168. Իգոր Մարատի Մուրադյան

Այլախոհական գրականության մասին

Խորհրդային Միության քայքայման փուլում, դրա վերջնական քայքայումից եւ Անկախ Հանրապետության հռչակումից հետո այլ երկրների, առաջին հերթին՝ Ուկրաինայի ու Մերձբալթյան երեք հանրապետությունների օրինակով, փորձեր էին արվում Պետական անվտանգության կոմիտեի արխիվից վերցնել ու հրապարակել խորհրդայինի տարիներին արգելված ստեղծագործությունները: Խոսքը ոչ միայն խորհրդային գրաքննության արգելած գործերի, այլ նաեւ քաղբանտարկյալների ստեղծագործությունների մասին էր: Լինելով այդ գործի մասնակից, մենք վստահաբար գիտեինք, որ ՊԱԿ-ի արխիվում պահվող քրեական գործերում դատապարտված մարդկանց բազմաթիվ ստեղծագործություններ կան, որոնք կարելի էր հրապարակել: Այլ խնդիր է, թե ինչ որակի ստեղծագործություններ են դրանք, ինչ չափով են գրական արժեք ներկայացնում եւ ընդհանրապես՝ որեւէ գրական արժեք ներկայացնո՞ւմ են, թե՞ ոչ: Դրանք պետք է դիտարկվեին որպես քաղաքացիական պոեզիայի, արձակի կամ հրապարակախոսության օրինակներ եւ որպես այդպիսին էլ հրապարակվեին: Չէր բացառվում, որ հետագայում դրանցից առանձնացվեին բարձրորակ նմուշները, իսկ մնացածը մոռացության մատնվեր:

Այն անձինք, ովքեր հանդես էին գալիս այդ նախաձեռնությամբ, անկախ Հայաստանի անվտանգության ծառայության նոր ղեկավարների հետ հանդիպումից հետո վերադարձան ու տեղեկացրին, թե, իբր, նոր ղեկավարությունը պեղել է ՊԱԿ-ի ողջ արխիվը եւ չի գտել արգելված գրական կամ հրապարակախոսական ստեղծագործության ոչ մի նմուշ: Սրանից հետեւում էր, թե հայ այլախոհները չեն գրել որեւէ ստեղծագործություն, որը կբռնագրավեր ՊԱԿ-ը կամ կարգելեր խորհրդային գրաքննությունը՝ Գլավլիտը: Դեռ այն ժամանակ էր պարզ, որ այս պնդումն իրականությանը չէր համապատասխանում: Այս գրքում զետեղված դատավճիռներն այլ բան են վկայում: Դրանց գերակշիռ մեծամասնության մեջ թվարկվում են քաղբանտարկյալների գրած բազմաթիվ ստեղծագործությունները, որոնք պահվում են քրեական գործերում:

Հետաքրքիր կլիներ այսօր հրապարակված տեսնել ոչ միայն առանձին մարդկանց այդ տարիների ստեղծագործությունները, այլեւ 60-70-80 թթ. հրապարակված ինքնահրատ նյութերը, թերթերի եւ թռուցիկների տեքստերը: Այդ նյութերը, հատկապես որոշ թռուցիկներ չափազանց հետաքրքիր կյանք են ունեցել: Քաղբանտարկյալների նկատմամբ կայացված դատավճիռներն ուսումնասիրելիս պարզվում է, որ դրանց մի մասը տարեցտարի կրկնվել է: Օրինակ, այնպիսի թռուցիկներ, ինչպիսիք են՝ «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում», «Կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին», տարածվել են 60-ականների սկզբից սկսած՝ մինչեւ 80-ականներ: Այսպես. այս թռուցիկները տարածվել են 1962-63 թթ. եւ հիշատակվում են «Յոթի գործ»-ում, այնուհետեւ այդ նույն թռուցիկները տարածվել են 1967-ին եւ դրվել Մարտին Նալբանդյանի ու այլոց մեղադրանքների հիմքում: Դրանք հիշատակվում են Զավեն Հարությունյանի գործում, տարածել են նաեւ 1968-ին «Հայ հայրենասերների միություն», ապա՝ «Հանուն Հայրենիքի» խմբերը, Ազգային միացյալ կուսակցության անդամները եւ այսպես շարունակ: Այս թռուցիկների պես երկարակյաց են եղել նաեւ Ավետիս Ահարոնյանի եւ Ավետիք Իսահակյանի նամակները: Սա, նախ, վկայում է, որ այդ տարիների ընթացքում Հայաստանի այլախոհների առաջ քաշած խնդիրները շատ առումներով նույնն են մնացել, ապա նաեւ՝ սկսած 60-ականների ամենասկզբից մինչեւ

80-ականներ ի հայտ եկած այլախոհական խմբերը, խմբակները, կազմակերպությունները ստեղծվել են մի դեպքում՝ մեկը մյուսի հենքի վրա եւ հաջորդել միմյանց, իսկ այլ դեպքերում՝ անմիջականորեն կապված են եղել միմյանց հետ: Ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել, որ բոլոր կազմակերպություններում էլ եղել են մարդիկ, որոնք կապեր են ունեցել նույն ժամանակահատվածում գործող կամ իրենցից առաջ գործած այլ խմբակների հետ: Շատ դեպքերում՝ այս կամ այն խմբի բացահայտումից ու ակտիվ անդամների դատապարտումից հետո նրանց նկատմամբ հարուցված քրեական գործում որպես վկա ներգրավված այս կամ այն գործիչը կամ գործիչները՝ նոր մարդկանց ներգրավելով, շարունակում էին կիսատ մնացած գործը, այսպիսով ապահովելով պայքարի շարունակականությունը: Հայաստանում սա, կարծես, շատ քիչ բացառություններով՝ օրինաչափություն է եղել: Բացառություն են եղել, թերեւս, միայն ուսանողական խմբակները, որոնք, սակայն, կազմավորվելուց հետո՝ գործելու ընթացքում այս կամ այն կերպ նույնպես սկսել են առնչվել ճանապարհ անցած կազմակերպությունների կամ անհատների հետ: Այս հաջորդականությունը էական հանգամանք է եւ առանձին ուսումնասիրության նյութ:

1963 թ. սկսած՝ բոլոր քրեական գործերում առկա են այս կամ այն կարգի ստեղծագործությունների նմուշներ: Այլախոհներից ոմանք գրել են արձակ, ոմանք՝ չափածո, ոմանք՝ հրապարակախոսական նյութեր: Այս ստեղծագործությունները տարածվել են գործող կազմակերպությունների անդամների շրջանում, հաճախ նաեւ ավելի լայն տարածում են ստացել, որոշ ստեղծագործություններ տպագրվել են արտասահմանյան մամուլում, ինչպես օրինակ՝ Վիգեն Բաբայանի բանաստեղծությունները կամ Բագրատ Շահվերդյանի «Երուսաղեմ» երգը, որը ժամանակ առ ժամանակ հնչել է իսրաելական ռադիոյով, Ալեքսանդր Մանուչարյանի «Ազգապատումը» եւ շատ այլ ստեղծագործություններ: Այսպիսով, Հայաստանում գոյություն է ունեցել հարուստ այլախոհական գրականություն, որն առանձին անդրադարձի կարիք ունի:

Քաղաքական բռնությունների ընդհանրական ուրվագիծը

Խորհրդային Միությունում 1918-1988 թթ. իրականացված համատարած բռնությունները կարելի է բաժանել պայմանական ժամանակահատվածների: Առաջինը 1918-1922 թթ. կարմիր տեռորի շրջանն էր, այնուհետեւ՝ 1920-ականների համեմատաբար ոչ այնքան ծանր շրջանը, որին հետեւում են 1930-1953 թթ. ստալինյան շրջանի դաժանագույն բռնությունները: Ստալինյան այս շրջանն էլ կարելի է բաժանել առանձին փուլերի, որոնք իրար շարունակելով հանդերձ՝ նաեւ իրենց բնույթով էապես տարբերվում են իրարից: Առաջինը 1930-33 թթ. կոլեկտիվացման հետ կապված շրջանն է, այնուհետեւ՝ 1935-38 թթ. կուսակցական շարքերի մաքրման, ժողովրդի թշնամիների եւ քաղաքական հակառակորդների ոչնչացման դաժանագույն շրջանը, որը շարունակվում է նաեւ 1939-41 թվականներին: 1930-ականների վերջերից՝ խորհրդային իշխանության որոշումներով «ժողովրդի թշնամիների» ոչնչացմանը զուգահեռ, սկսվում է իրենց բնակավայրերից ամբողջ ժողովուրդների արտաքսման գործը, ինչը սարսափազդու չափերի է հասնում 1941-45 թթ. ընթացող պատերազմի տարիներին ու շարունակվում պատերազմից հետո: Ստալինի մահից հետո՝ 1953-ից հետապնդումների եւ բռնությունների որակն էապես փոխվում է: Նախ՝ դադարում է համատարած բնույթ կրել: Բազմաթիվ քրեական գործեր են վերանայվում, դատապարտվում է անհատի պաշտամունքը, բայց կոմունիստական կուսակցության գաղափարական հակառակորդները եւ խորհրդային իշխանության վարած քաղաքականության քննադատները՝ քննադատության նպատակներից, կուսակցական պատկանելությունից, գաղափարական դիրքորոշումներից անկախ, շարունակում են հետապնդվել օրենքի ողջ խստությամբ:

Հինգ տարվա ընթացքում (1953-1958 թթ.) քաղաքական նկատառումներով Հայաստանում 50-ից ավելի մարդ է դատապարտվել: Սա չափազանց մեծ թիվ է, եթե հաշվի առնենք, որ ետստալինյան շրջան ու մեղմացման փուլ էր: Դատապարտվածների թվի առումով տեսանելի մեղմացում նկատվում է միայն 1958 թվականին, որին հաջորդում է հնգամյա ընդմիջումը: Այդ ընթացքում ձերբակալված ու դատապարտված մարդկանց մասին տեղեկություններ չկան մեր ձեռքի տակ, բայց սա չի նշանակում, որ նրանք չեն եղել: 1962-63-ականներին սկսում է գործել Հայաստանի երիտասարդների միությունը: Այդ միության ակտիվ կազմակերպիչներն ու մասնակիցները 1963-ին կալանավորված «Յոթ հայրենասերներն» էին (հանրությունը նրանց այսպես էր անվանում ձերբակալությունից հետո): Յոթի կալանավորմամբ Հայաստանում սկսվում է դասական այլախոհության շրջանը: Միայն Հայաստանում չէ 60-ականների սկիզբը այլախոհության սկիզբ համարվում. այդ շրջանից է սկսվում այլախոհության պատմությունը ԽՍՀՄ-ում եւ Արեւելավրոպական երկրներում: 60-ականներին «դիսիդենտ» (այլախոհ) տերմինով սկսեցին կոչել բոլորին, ովքեր, հակադրվելով խորհրդային իրականությանը եւ կարգերին, ոչ միայն չէին դիմում բռնության, այլեւ բռնությունը՝ որպես պայքարի ձեւ ու միջոց, մերժում էին կտրականապես: Մինչ այդ, հակախորհրդային եւ հակակոմունիստական ուժերը խորհրդային կարգերի դեմ իրենց պայքարում, ի թիվս պայքարի այլ միջոցների, չէին մերժում նաեւ բռնությունը, հաճախ՝ նաեւ զինված պայքար էին մղում: Սա տեսանելի էր հատկապես ետպատերազմական շրջանի Մերձբալթիկայում, Ուկրաինայի արեւմուտքում, Արեւելաեվրոպական երկրներում: Ահա այս կարգի ընդդիմադիրներից նոր ընդդիմադիրներին տարանջատելու համար՝ 60-ականներին շրջանառության մեջ

է դրվում «այլախոհ» կամ «դիսիդենտ» բնորոշումը:

1964-ի օգոստոսին կայացած «Յոթի դատավարությունից» հետո նոր դատավարություններ տեղի չեն ունենում մինչեւ 1967-ի մայիսը: Ճիշտ է, շարունակում է գործել Հայ երիտասարդական միությունը, նոր խմբեր ու խմբակներ են ձեւավորվում, ընթանում են բաց ու կիսաբաց քննարկումներ, բայց քանի որ այս ամենը տեղավորվում է 60-ականների սկզբի թույլատրելիության սահմաններում՝ քրեական հետապնդումներ տեղի չեն ունենում: Գործող խմբերն ու խմբակները, առանձին անհատները հայրենասիրության դրսեւորումների շրջանակներից դուրս չեն գալիս: Ընդհանրապես, 1960-ականների ողջ շարժումն իր վրա կրում է հայ ժողովրդի 20-րդ դարասկզբին կրած տառապանքների, կորուսյալ հայրենիքի, երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտական փուլում ԽՍՀՄ-ի կողմից Հայկական հարցի հնարավոր լուծմանն առնչվող չարդարացված հույսերի կնիքը: Այս չարդարացված հույսերը, Եղեռնը, պատմական տարածքների կորուստը, ԽՍՀՄ-ի ներսում Ղարաբաղի եւ Նախիջեւանի հարցերի լուծման հնարավորության հեռանկարը հայ այլախոհական մտքի վրա ներգործել է մշտապես՝ ե՛ւ 70-ական, ե՛ւ 80-ական թվականներին, բայց 60-ականներն ամբողջությա՛մբ էին տոգորված այս գաղափարներով: Սա է այն հիմքը, որի վրա ծագել ու զարգացել է հայ այլախոհական միտքը եւ զարգանալով հասել հանուն անկախության ու կոմունիստական բռնապետության դեմ պայքարի անհրաժեշտությանը: Անգամ 1977-ին հրապարակված հայկական Հելսինկյան խմբի հռչակագրում, որը, թվում է, զուտ այլախոհական-իրավապաշտպանական կազմակերպություն պետք է լիներ եւ առաջնորդվեր միմիայն Հելսինկյան համաձայնագրերով՝ ասվում է, որ Հայաստանը ձգտում է դառնալ ՄԱԿ-ի անդամ՝ «աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի համազգային խնդիրները լուծելու համար», եւ որ պետք է հասնել «ներկայումս Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ մտնող Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի ինքնավար մարզի վերամիավորմանը Հայաստանի Հանրապետությանը», նաեւ՝ պետք է «պահանջել հայոց լեզվի կիրառումը Հայաստանի կյանքի բոլոր բնագավառներում»:

Խորհրդային պետանվտանգության ծառայությունները պատկերացնել անգամ չէին կարող, թե ինչի կարող էին հանգեցել 60-ականներին ամենուր ընթացող հայրենասիրական այս զրույցներն ու քննարկումները: 1964 թ. «Յոթի գործ»-ով կայացած դատավճռում՝ Վիգեն Բաբայանին վերաբերող դրվագում դատարանը հեգնանքով արձանագրել էր. «Ամբաստանյալ Բաբայանը հավաքույթներում եւ առանձին զրույցների ժամանակ առաջ է քաշել ավանտյուրիստական բնույթի մի շարք մտքեր, ինչպես օրինակ՝ ազգայնական ոգով տոգորված 50.000-անոց ցույց կազմակերպել»: Մեկ տարի էլ չանցած՝ 1965-ին, «ավանտյուրիստական» կոչված այս ծրագիրն իրականացավ: 50-ականներին սկիզբ առած եւ 60-ականների առաջին տարիներին կուտակված էներգիան տվեց իր արդյունքը՝ 1965 թ. ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցավ հայտնի բազմահազարանոց ցույցը, որը նոր ուժ ու թափ հաղորդեց հետագա բոլոր զարգացումներին: Սկսեցին ձեւավորվել իրարից անկախ գործող նոր խմբակներ: Հատկապես շատ էին դպրոցական-պատանեկան խմբակները: Համատարած ոգեւորություն էր տիրում: Ահա այս ոգեւորության ֆոնին հայ այլախոհության շրջանում հասունանում են նոր մտայնություններ. եթե ԽՍՀՄ-ը հրաժարվում է լուծել Հայկական հարցը, ապա հայերը պետք է փորձեն լուծել այդ հարցը՝ առանց ԽՍՀՄ-ի: Ի հայտ են գալիս գործիչներ, ովքեր սկսում են կասկածի տակ առնել խորհրդային կարեւորագույն դոգմաներից մեկը՝ լենինյան ազգային քաղաքականությունը: Այս դրսեւորումները, որ սկսել էին ձեւավորվել 1965-66 թթ. եւ արտահայտվում էին ոչ միայն այլախոհական շրջանակներում ընթա-

ցող բանավոր քննարկումներում ու զրույցներում, այլեւ դառնում էին գաղտնի տպագրված ու տարածվող բազմաքանակ թռուցիկների նյութ՝ պետանվտանգության ծառայություններն այլեւս հանդուրժել չէին կարող: 1966 թվականին արգելում են նշել Ցեղասպանության օրը: Մասնակիցներից ոմանց 10-15-օրյա կալանքի են ենթարկում: Սկսվում է բռնությունների նոր շրջան: Միայն 1967թ. ընթացքում 10 մարդ՝ տարբեր պատժաչափերով ազատազրկման է դատապարտվում: Այս ընթացքում է ասպարեզ ելնում **Ազգային միացյալ կուսակցությունն՝** անկախության պահանջով ու հակախորհրդային գաղափարներով: Եթե մինչ այդ ազգային-հայրենասիրական պայքար էր ընթանում, եւ խորհրդային իշխանությունը մասնակիցներին դատապարտում էր որպես ազգայնականների եւ նրանց գործունեության մեջ մեծ վտանգ չէր տեսնում, ապա այժմ արդեն ի հայտ են գալիս գաղափարական հակառակորդներ: Սա արդեն նոր երեւույթ էր, որը երկու տասնամյակ անց պետք է հանգեցներ Հայաստանի ապախորհրդայնացմանը եւ անկախացմանը:

Կալանավայրերի պահման պայմանները

ԽՍՀՄ-ում «Հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով դատապարտվածները համարվում էին հատուկ վտանգավոր պետական հանցագործներ եւ իրենց պատիժը կրում էին խիստ ռեժիմի կալանավայրերում: Սրանք հատուկ կալանավայրեր էին, որ ստեղծվել էին 1948 թ. փետրվարի 21-ի ԽՍՀՄ նախարարների խորհրդի որոշմամբ, որի մեջ, մասնավորապես, ասվում էր. «Հատուկ վտանգավոր պետական հանցագործների պահման համար խիստ ռեժիմով Ճամբարների եւ բանտերի կազմակերպման մասին (եւ պատժի կրումից հետո նրանց ուղարկումը բնակության ԽՍՀՄ հեռավոր շրջաններ)»՝ նախատեսված «լրտեսների, դիվերսանտների, ահաբեկիչների, տրոցկիստների, աջերի, մենշեւիկների, էսէռների, անարխիստների, նացիոնալիստների, սպիտակ էմիգրանտների եւ այլ հակախորհրդային կազմակերպությունների եւ խմբերի մասնակիցների համար»: Այս նպատակով ГУЛаг-ի համակարգում (ГУЛаг - Главное управление лагерей, թարգմանաբար՝ Ճամբարների գլխավոր վարչություն) կազմակերպվում են հատուկ ճամբարներ՝ Ստեպլագ, Մինլագ, Դուբրովլագ, Օզյորլագ, Բերլագ:

Խորհրդային կալանավայրերի համակարգը դասակարգվում էր հետեւյալ կերպ՝ արտաքսում, աքսոր, գաղութ-բնակավայրեր, ընդհանուր ռեժիմի, խստացված ռեժիմի, խիստ ռեժիմի ու հատուկ ռեժիմի գաղութներ եւ բանտային ռեժիմ:

ԽՍՀՄ քաղաքական բանտարկյալները, որպես կանոն, իրենց պատիժը կրում էին խիստ կամ հատուկ ռեժիմի կալանավայրերում, բանտում եւ աքսորավայրում: Նշված բոլոր պատժավայրերում եղել են հայ քաղբանտարկյալներ, եւ հենց այդ պատճառով հարկ ենք համարում համառոտ ներկայացնել, թե ինչ պայմաններում են նրանք կրել իրենց պատիժները:

Ահա թե ինչ է գրված ՌԽՖՍՀ ուղղիչ աշխատանքային կոդեքսի մեկնաբանությունների 64-րդ հոդվածում. «Խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում իրենց պատիժն են կրում հատուկ վտանգավոր պետական հանցագործությունների համար ազատազրկված տղամարդիկ կամ նախկինում ազատազրկման ձեւով պատիժ կրածները, ինչպես նաեւ հատուկ վտանգավոր պետական հանցագործությունների համար դատապարտված կամ հատուկ վտանգավոր ռեցիդիվիստներ ճանաչված կանայք, եւ կանայք՝ ում նկատմամբ մահապատիժը ներման կամ համաներման արդյունքում փոխարինվել է ազատազրկմամբ»:

Խիստ ռեժիմի գաղութներում պահվող կալանավորները

- ապրում էին սովորական կացարաններում;
- կարող էին սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների համար ծախսել ամսական մինչեւ հինգ ռուբլի գումար;
- տարվա ընթացքում իրավունք ունեին երկու կարճաժամկետ եւ մեկ երկարաժամկետ տեսակցության;
- տարվա ընթացքում կարող էին ստանալ երկու փաթեթից ոչ ավելի եւ ուղարկել ամսական երկու նամակից ոչ ավելի;
- պատժաչափի կեսը կրելուց հետո նրանց թույլատրվում էր տարվա ընթացքում ստանալ մեկ ծանրոց կամ հանձնուք:

Հատուկ ռեժիմի գաղութներում պահվող կալանավորները

- ապրում էին խիստ մեկուսացված պայմաններում՝ խցային տիպի կացարաններում;
- կարող էին սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների համար ծախսել ամսական մինչեւ չորս ռուբլի գումար;
- տարվա ընթացքում իրավունք ունեին մեկ կարճաժամկետ եւ մեկ երկարաժամկետ տեսակցության;
- տարվա ընթացքում կարող էին ստանալ երկու փաթեթից ոչ ավելի եւ ուղարկել ամսական մեկ նամակ;
- պատժաչափի կեսը կրելուց հետո նրանց թույլատրվում էր տարվա ընթացքում ստանալ մեկ ծանրոց կամ հանձնուք:

Բանտային ռեժիմ, որն իր հերթին բաժանվում էր ընդհանուր եւ խիստ ռեժիմների

ա. Բանտային ընդհանուր ռեժիմ

Այս ռեժիմում պահվում էին առաջին անգամ բանտային ռեժիմի դատապարտվածները եւ խիստ ռեժիմի գաղութներից բանտային ռեժիմ փոխադրվածները:

Բանտային ընդհանուր ռեժիմի կալանավորները

- կարող էին սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների համար ծախսել ամսական մինչեւ երեք ռուբլի գումար;
- տարվա ընթացքում իրավունք ունեին երկու կարճաժամկետ տեսակցության;
- տարվա ընթացքում կարող էին ստանալ երկու փաթեթից ոչ ավելի եւ ուղարկել ամսական մեկ նամակ;
- օգտվում էին օրական մեկ ժամ տեւողությամբ զբոսանքից:

բ. Բանտային խիստ ռեժիմ (այս ռեժիմում պահվում էին 2-6 ամիս ժամկետով)

- սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների համար կարող էին ծախսել ամսական մինչեւ երկու ռուբլի գումար;
- վեց ամսվա ընթացքում կարող էին ստանալ մեկ փաթեթ եւ երկու ամսում ուղարկել մեկ նամակ;
- օգտվում էին օրական կես ժամ տեւողությամբ զբոսանքից:

Հավելենք նաեւ, որ կարճաժամկետ տեսակցության տեւողությունը մինչեւ երեք ժամ էր, երկարաժամկետը՝ մինչեւ երեք օր: Մեկ փաթեթը, որը կալանավորը կարող էր ստանալ տարեկան երկու անգամ, բանտում չպետք է գերազանցեր կես կիլոգրամը, իսկ գաղութում՝ մեկ կիլոգրամը: Ծանրոցը, որը չպետք է գերազանցեր հինգ կիլոգրամը, թույլատրվում էր ստանալ միայն պատժաչափի կեսի ավարտից հետո՝ տարեկան մեկ անգամ: Ի դեպ, կալանավայրի ղեկավարությունը կարող էր թվարկված այս փոքրիկ իրավունքներից զրկել կալանավորին՝ իր հայեցողությամբ: Կալանավորներ կային, որոնք ողջ պատժաչափի ընթացքում այդպես էլ չէին կարողանում հարազատների հետ տեսակցել, որովհետեւ զրկվում էին այդ իրավունքից: Կամ՝ զրկվում էին հինգ ռուբլու սահմաններում գնումներ կատարելու, փաթեթ կամ ծանրոց ստանալու իրավունքներից: Հարազատներին գրված նամակները, կամայական պատրվակներով, կարող էին բռնագրավել կալանավայրի գրաքննիչները:

Բացի պահման այս պայմաններից, կալանավայրերի ներսում կային նաեւ պատժիչ մեկուսարաններ, որտեղ տեղափոխում եւ մինչեւ 15 օր ժամկետով պահում էին կալանավորներին: Այստեղ մեկ օր տրվում էր 450 գրամ հաց եւ ճաշ, իսկ հաջորդ օրը՝ միայն 450 գրամ հաց ու եռացրած ջուր՝ առանց ճաշի: Մեկուսացված կալանավորի

«մահճակալը» փայտյա թաղթ էր՝ առանց ծածկոցի ու ներքնակի, որն առավոտյան ամրացվում էր պատին այնպես, որ դրա վրա հանգստանալու նպատակով նստել կամ պառկել հնարավոր չլիներ: Ավելին, հանգստանալու նպատակով չէր կարելի նույնիսկ հատակին պառկել: Այստեղ չէր թույլատրվում ծխել, նամակ գրել կամ ստանալ, ըստ քմահաճույքի՝ նաեւ արգելում էին կարդալ:

Պատժիչ մեկուսարանից բացի, յուրատեսակ բանտ կար գաղութի ներսում, որը կոչվում էր խցային տիպի կացարան (ПКТ - Помещение камерного типа): Այս կացարաններում մարդիկ պահվում էին մինչեւ վեց ամիս ժամանակով, իսկ սրանց պայմանները չէին տարբերվում բանտային ռեժիմի պայմաններից:

1953-1958 թթ. դատապարտվածները

1953-1958 թթ. դատապարտվածների հիմնական մասը, որպես կանոն, մեղադրվել է խորհրդային իշխանությանը կամ իշխանության առանձին օղակներին, կամ՝ իշխանության այս կամ այն պատասխանատուին վատաբանելու, տրոցկիստ կամ խանջյանական լինելու եւ բուրժուական կարգերը գովաբանելու մեղադրանքներով:

1953 թ. ընթացքում դատապարտվել է 17 մարդ: Նրանցից՝ 25 տարի ազատազրկման են դատապարտվել Մնացական Սեմյոնի Հովհաննիսյանը, Ռաֆիկ Մարութի Առաքելյանը, Սիմոն Անուշավանի Արզումանյանը, Ալեքսանդր Միրզոյի Լալայանը, Ժորժ Խաչիկի Հովակիմյանը: 10-ական տարի ազատազրկման են դատապարտվել Գրիգոր Ղազարի Ջարաջյանը, Սարգիս Ավետիսի Շահինյանը, Սերոբ Գրիգորի Հովսեփյանը, Գրիգոր Մինասի Սաղաթելյանը, Խաչատուր Բեգոյի Սիմոնյան-Խանսամյանը, Գեւորգ Առաքելի Սախկալյանը: 8 տարի ազատազրկման են դատապարտվել Գեորգի Պավելի Քեշիշյանը, Դավիթ Մարտիրոսի Շահլամյանը, Մնացական Հովսեփի Մովսիսյանը, Բուրաստան Բագրատի Հայրապետյան-Նավոյանը: 5 տարի ազատազրկման է դատապարտվել Գարեգին Վասիլի Բաղդասարյանը, իսկ Միսաք Լեւոնի Պետրոսյանի պատժաչափը հայտնի չէ:

1954 թ. դատապարտվել է 14 մարդ: 25 տարի ազատազրկման է դատապարտվել Աբրահամ Երեմի Հովհաննիսյանը: Սարիբեկ Կարապետի Վարդանյանը եւ Վարուժան Մուկուչի Մարտիրոսյանը դատապարտվել են 15-ական տարի ազատազրկման: 10 տարի ազատազրկման են դատապարտվել Հայկազ Հովհաննեսի Գավալյանը, Անուշավան Ավագի Պապոյանը, Հրաչ Վարդանի Վերդյանը, Սուքիաս Սարգիսի Սկրտչյանը, Գրիգոր Թադեւոսի Հովակիմյանը, Սանասար Սարոյի Ասատրյանը, Նազար Մուրադի Ասատրյանը, Հրաչ Հովհաննեսի Գեւորգյանը: Արտավազդ Մինասի Մասունյանը դատապարտվել է 8 տարի ազատազրկման: 5 տարի ազատազրկման են դատապարտվել Հակոբ Մկրտիչի Հակոբյանը եւ Գեւորգ Աբրահամի Գեւորգյանը: Վերջինս «Փորփոր» կեղծանունով հակախորհրդային ու հակակոմունիստական բովանդակությամբ նամակներ է գրել կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի քարտուղարին եւ «Սովետական Հայաստան» թերթի խմբագրություն:

1955-ին 5 մարդ է դատապարտվել. 10 տարի ազատազրկման՝ Սանդրո Շաքարի Գրիշյանը, Վահան Դարչոյի Անանյանը, 8 տարի՝ Վաղարշակ Հովհաննեսի Ղահրամանյանը, 5 տարի՝ Ռազմիկ Վազգենի Գալստյանը, 3 տարի՝ Քնարիկ Ազատի Գասպարյանը: Վերջին երկուսը մեղադրվել են հակախորհրդային բովանդակությամբ թռուցիկ պատրաստելու համար: Ռազմիկ Գալստյանը գրել է տեքստը, իսկ Քնարիկ Գասպարյանը՝ մեքենագրել:

1955 թվականից հետո պատժաչափերի սահմանման մեղմացում է նկատվում: Նույն արարքի կամ ավելի լուրջ արարքի համար արդեն մարդկանց դատապարտում էին զգալիորեն պակաս պատժաչափերի:

1957 թ. դատապարտվել է 11 մարդ: Աննա Մինասի Սրապյանը, որը ծնվել է Ֆրանսիայում ու հայրենադարձվել 1949-ին, ավելի ուշ՝ Ֆրանսիա վերադառնալու ցանկություն է ունեցել, դժգոհել է խորհրդային երկրում առկա կենսական պայմաններից, ինչի համար դատապարտվել է 6 ամիս ազատազրկման: Ըստ Արմենակ Մանուկյանի՝ ինքը դատապարտվել է 6 տարի ազատազրկման, որը հետագայում փոխարինվել է 3 տարի պայմանականով: Մազման Պողոսի Հարությունյանն ունեցել է հակախորհրդային

տրամադրություններ, հեռագիր է ուղարկել ԱՄՆ դեսպանատուն՝ այդ երկիր տեղափոխվելու խնդրանքով, եւ դատապարտվել է 5 տարի ազատազրկման: Դատապարտվել են նաեւ Ֆրանսիայից ներգաղթած Հովհաննես Գասպարի Տեր-Խաչատրյանը՝ 5 տարի ազատազրկում, Վահան Հարությունի Քերեսեջյանը՝ 3 տարի ազատազրկում, Նազար Խաչիկի Ինջյանը՝ 3 տարի ազատազրկում: Այս եռյակն ուներ հակախորհրդային տրամադրություններ եւ ցանկանում էր վերադառնալ Ֆրանսիա: Կարապետ-Հարություն Մկրտիչի Եղիազարյանը տարածել է հակախորհրդային բովանդակությամբ թռուցիկներ եւ դատապարտվել 5 տարի ազատազրկման: Վիկտոր Աբրահամի Ալլախվերդովը խորհրդային պետական մարմիններին գրած իր դիմումների համար դատապարտվել է 2 տարի ազատազրկման: Լեւոն Մինասի Մարտիրոսյանը 3 տարի ազատազրկման է դատապարտվել Մոսկվայում գտնվող Հարավսլավիայի դեսպանատնից այդ երկրի քաղաքացիություն խնդրելու եւ ԽՍՀՄ քաղաքացիությունից հրաժարվելու համար: Ֆրանսիայից Հայաստան ներգաղթած Կարապետ-Կարպիս Խաչիկի-Շարլի Մանուկյանը դեռ 1948 թվականին է փորձել գաղտնի հատել ԽՍՀՄ պետական սահմանը, ձերբակալվել ու դատապարտվել է, բայց Ֆրանսիա վերադառնալու հույսը չի կորցրել: Նա նամակներ է գրել Ֆրանսիայում բնակվող իր հարազատներին, նաեւ ֆրանսիական թերթերից մեկի մի լրագրողի՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել իրեն Ֆրանսիա վերադարձնելու համար: Այդ նամակները խորհրդային իշխանությունները հակախորհրդային են գնահատում եւ Մանուկյանին կալանավորում ու դատապարտում են 6 տարի ազատազրկման: Թորգոմ Թադեւոսի Հակոբյանը 6 տարի ազատազրկման է դատապարտվում հակախորհրդային արտահայտություններ թույլ տալու համար: 1957 թ. հակախորհրդային ագիտացիայի ու պրոպագանդայի համար վերջին դատապարտվածը Վրույր Գեւորգի Գալստյանն է: Ըստ ԱԱԾ-ի կողմից ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովին տրամադրված ցուցակի՝ նա ազատվել է պատասխանատվությունից եւ հանձնվել ծնողների խնամակալությանը, իսկ ըստ Արմենակ Մանուկյանի հրապարակած տեղեկատվության՝ դատապարտվել է, այնուհետեւ՝ հարկադիր բուժման նպատակով տեղափոխվել հոգեբուժարան: Նույն՝ հոգեբուժարանային ճակատագրին է արժանացել, ըստ Արմենակ Մանուկյանի, նաեւ Մազման Պողոսյանը:

1958 թ. դատապարտվել է 6 մարդ: Խորհրդային իշխանության ներկայացուցիչներին անստորագիր նամակներ գրելու համար Արմո Հայկի Շահինյանը դատապարտվել է 2 տարի ազատազրկման: 2 տարի ազատազրկման են դատապարտվել նաեւ Աղաբեկ-Աղվան Կարապետի Արշակյանը, Աշոտ Վաղարշակի Ղազարյանը՝ 5 տարի, Կառլեն Մովսեսի Վարդանյանը՝ 3 տարի, իսկ 1-ական տարի ազատազրկման են դատապարտվել Ալբերտ Սեդրակի Ոսկանյանը եւ Վարդան Գրիգորի Սարիբեկովը: Վերջին չորս դատապարտվածները ազատազրկվել են նույն գործով. Աշոտ Ղազարյանը թռուցիկի տեքստ է գրել ու բազմացրել եւ, Կառլեն Վարդանյանի հետ միասին, տարածել Գյումրի քաղաքում: Ղազարյանի գրած այդ թռուցիկն իր բովանդակությամբ առավել համահունչ է 60-ականների վերջերի եւ 70-80-ական թվականների տրամադրություններին: Այդ թռուցիկում նա արծարծում է կազմակերպվելու եւ անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը, որը տարիներ անց որդեգրում են հայ այլախոհները: Փաստորեն, գյումրեցի **Աշոտ Ղազարյանն** իր ժամանակից շատ էր առաջ ընկել: Ցավալի է, որ հայտնի չէ, թե ինչպես է հետագայում դասավորվել նրա ճակատագիրը:

Ահա նրա հեղինակած եւ տարածած թռուցիկի տեքստը. **«Հայ ժողովուրդ, արդեն ժամանակն է պատռելու դեմոկրատիայի քողի տակ թաքնված սուտն ու կեղծիքը, որը**

ստիպված ենք եղել երկար ժամանակ լուռ կերպով տանելու եւ մեզ խաբելու: Այժմ հասել է այն ժամը, որ մենք պետք է թոթափենք կոմունիստական բռնապետության ստրկացնող լուծը, որը մեր՝ հայերիս ուսերին այսքան ծանր է դրված: Ժամանակն է արդեն, որպեսզի գիտակցենք անկախ ու ինքնուրույն հայկական միասնական պետություն ստեղծելու մասին: Իմ սիրելի ազգ, իմ սիրելի ժողովուրդ, ոտքի կանգնիր, պատրաստ մնա պաշտպանելու քո միասնության շահերը: Քո հարցը քննարկվում է ամենուրեք, նույնիսկ ՄԱԿ-ում, եւ յուրաքանչյուր հայրենասեր հայ մտահոգված է քո երջանիկ բախտով, քո ապագայով: Թող կորչի այս ստոր ու կեղծ կոմունիստական բռնակալությունը, որը խոչընդոտ է հանդիսանում մեր հայ ազգի վերամիավորմանը: Կեցցե՛ ապագա հայկական ազատ ու ինքնուրույն պետությունը» (տեքստը վերցված է Արմենակ Մանուկյանի «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ.» գրքից):

«Յոթի գործ»

1961-62 թվականներից սկսած, Երեւանում՝ որպես խրուշչովյան ձնհալի արդյունք սկսել է գործել «Հայ երիտասարդական միություն» անունը կրող բազմամարդ մի կազմակերպություն, որը չուներ հստակ ձեւավորված կառույց եւ գրավոր ձեւակերպված կանոնադրություն ու ծրագիր: Միության մեջ ընդգրկված էին ե՛ւ ուսանողներ, ե՛ւ դասախոսներ, ե՛ւ մտավորականներ, ե՛ւ սոցիալական տարբեր շերտերի այլ ներկայացուցիչներ: Այս կազմակերպությունը չի եղել հակախորհրդային կամ հակակոմունիստական կառույց, բայց սա չի նշանակում, որ դրան անդամակցող առանձին անձինք չէին կարող այս կամ այն չափով դեմ լինել խորհրդային երկրի արտաքին կամ ներքին քաղաքականության առանձին դրսեւորումների, ունենալ ընդգծված հակախորհրդային հայացքներ, անգամ խոսել կամ գրել անկախ Հայաստան ունենալու անհրաժեշտության մասին: Այս կարգի փոքրաթիվ բացառությունները չհաշված, Հայ երիտասարդական միությունը գլխավորապես եղել է ազգային-հայրենասիրական կազմակերպություն, որի հիմնական նպատակը հայոց լեզվի պահպանման, Ցեղասպանության հիշատակի օրը նշելու եւ կորուսյալ հայկական տարածքների վերադարձն էր: ՀԵՄ-ի անդամներ էին նաեւ հայտնի «Յոթի գործ»-ով դատապարտված Խաչատուր Ամիրջանյանը, Խաչիկ Սաֆարյանը, Վիգեն Բաբայանը, Գրիգոր Եղյանը, Էդուարդ Կակոսյանը, Կարապետ Քիրամիջյանը եւ Մերուժան Հովհաննիսյանը: Դատելով այս գործով հրապարակված դատավճռից՝ ի տարբերություն Հայ երիտասարդական միության այլ անդամների, Խաչիկ Սաֆարյանը, Կարապետ Քիրամիջյանը, Վիգեն Բաբայանը եւ Մերուժան Հովհաննիսյանը փորձել են իրենց կազմակերպությանը տալ հստակ ձեւավորված կուռ կազմակերպական բնույթ: Նրանց է միացել նաեւ Խաչատուր Ամիրջանյանը: Հավաքվել է անդամավճար, ստեղծվել է գործող կառույց եւ ցանկությունների ու քննարկումների փուլից անցել են կոնկրետ գործողությունների դաշտ: Խաչատուր Ամիրջանյանը եւ Խաչիկ Սաֆարյանը սկսել են գրել կազմակերպության ծրագիրը:

«Յոթի գործը» հայտնի է նաեւ «Յոթ հայրենասերների գործ» անվամբ: Այս գործով ձերբակալություններն սկսվել են 1963-ի դեկտեմբերից, իսկ դատավարությունն ընթացել է 1964-ի օգոստոսի 5-26-ը: Խմբի անդամներին մեղադրանք է ներկայացվել ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը):

Մերուժան Հովհաննիսյան

Մերուժան Հովհաննիսյան
լուս. քր. գործից


Գրիգոր Եղյան
լուս. քր. գործից



Էդվարդ Կակոսյան
լուս. քր. գործից



Էդվարդ Կակոսյան



Խաչատուր Ամիրջանյան
լուս. քր. գործից

Խաչիկ Սաֆարյան
լուս. քր. գործից



Կարո Քիրամիջյան

Վիգեն Բաբայան

Խաչատուր Ջումշուղի Ամիրջանյանը ծնվել է 1924-ին, Իջեւանի շրջանում: Աշխատել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում: Մինչեւ «Յոթի գործ»-ով իր ապագա համախոհների հետ ծանոթանալը, նա արդեն իսկ ունեցել է ձեւավորված պատկերացումներ խորհրդային երկրում տիրող կարգերի ու բարքերի վերաբերյալ: Իր «Պրոլետարիատի դիկտատուրայի 45 տարին» հոդվածում, որը հետագայում մշակել եւ վերանվանել է «Համամիութենական հայրենասերների ընկերության հայտարարություն», նա արտահայտել է հակախորհրդային հայացքներ: Կալանավորվել է 1964 թ. հունվարի 22-ին: Դատապարտվել է 5 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայում՝ քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրում: Երեք տարի անց վաղաժամ ազատ է արձակվել ու վերադարձել Հայաստան: Հակասական դերակատարում է ունեցել 1967-69 թթ. գործող այլախոհական կազմակերպությունների ու առանձին այլախոհների ճակատագրում: Աշխատել է «Միտք» հրատարակչությունում: Հեռացել է ընտանիքից: Բոլորից լքված ու մենության մեջ վախճանվել է 1969 թվականին:

Խաչիկ Էդոյի Սաֆարյանը ծնվել է 1932 թ. ապրիլի 1-ին, Թալինի շրջանի Ներքին

Բազմաբերդ գյուղում: Աշխատել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտում: Գիտությունների թեկնածու էր: Եղել է ընդհատակյա գործող կուռ կազմակերպության ստեղծման նախաձեռնողներից մեկը: Ունեցել է «անկախական» հայացքներ եւ անկախ Հայաստան ստեղծելու ուղղությամբ որոշակի քարոզչական աշխատանքներ է տարել: Կալանավորվել է 1963 թ. դեկտեմբերի 29-ին, դատապարտվել է չորս տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրում: Ողջ պատժաչափը կրելուց հետո վերադարձել է Հայաստան: Աշխատել է Հայկական այգեգործական գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: Մասնագիտական աշխատությունների հեղինակ է: 1990 թ. ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի, իսկ 1995-ին՝ ՀՀ ԱԺ պատգամավոր: Վախճանվել է Երեւանում՝ 2001 թ. հունիսի 5-ին:

Վիգեն Ասատուրի Բաբայանը ծնվել է 1940 թ., Երեւան քաղաքում: Մինչեւ կալանավորվելը եղել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող: «Հանուն Հայրենիքի» խմբի գործով 1969-ին դատապարտված Ասատուր Բաբայանի որդին է: Մինչեւ կալանավորվելը նրա «Կտակ հայ որդուն» պոեմը տպագրվել է արեւմուտքում հրատարակվող հայկական մամուլում: Կազմակերպել եւ ղեկավարել է առանձին գործող խմբակ: Կալանավորվել է 1963 թ. դեկտեմբերի 29-ին: Դատապարտվել է 5 տարի ազատազրկման: Պատիժը կրելուց հետո վերադարձել է Հայաստան: Աշխատել է «Ծիածան» ռադիոկայանում: 1980-ին տեղափոխվել է ԱՄՆ՝ մշտական բնակության: Աշխատել է «Ամերիկայի ձայն» ռադիոկայանում: Բանաստեղծությունների ժողովածուների ու այլ գրքերի հեղինակ է: Վախճանվել է քաղցկեղից 2004 թ. դեկտեմբերի 16-ին:

Գրիգոր-Հովհաննես Հակոբի Եղյանը ծնվել է 1926 թ., Երուսաղեմում: Կրթությունը՝ բարձրագույն: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի թարգմանիչն էր: Գրել է մարդու իրավունքներին վերաբերող հոդվածներ: Նրա հեղինակած «Տեսություն մարդկային պատմության մասին» հոդվածում խոսվում է առանց խորհրդային կարգերի՝ անկախ Հայաստան ունենալու մասին: Կալանավորվել է 1963 թ. դեկտեմբերի 29-ին: Դատապարտվել է 2 տարի ազատազրկման: Ազատազրկումից հետո վերադարձել է Հայաստան: Եղիշե Չարենցի անվան դպրոցում անգլերենի ուսուցիչ է աշխատել: Այնուհետեւ տեղափոխվել է ԱՄՆ, որտեղ էլ բնակվում է մինչ օրս:

Էդվարդ Վարդանի Կակոսյանը ծնվել է 1936 թ., Երեւանում: Մինչ կալանավորումը եղել է Երեւանի պետական համալսարանի ուսանող: Աշխատել է դպրոցում՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ: Կազմակերպել է հայոց լեզվի անաղարտության խնդիրներով զբաղվող «Հայկազուն» խմբակը: Մտադիր է եղել հիմնել Մաշտոցյան ընկերություն: Իր ծավալած գործունեությունը գաղտնի կամ ընդհատակյա չի եղել: Նրա դատապարտման համար հիմք է հանդիսացել միայն այն հանգամանքը, որ առնչվել է «Յոթի գործ»-ով մյուս ամբաստանյալների հետ: Կալանավորվել է 1963 թ. դեկտեմբերի 30-ին: Դատապարտվել է 1,5 տարի ազատազրկման: Պատիժը կրելուց հետո վերադարձել է Հայաստան: Ժամանակ անց տեղափոխվել է ԱՄՆ: ԽՍՀՄ փլուզումից հետո կրկին վերադարձել է Հայաստան: Արորդիների ուխտի քրմապետն էր: Վախճանվել է 2005 թ. օգոստոսի 24-ին:

Կարապետ-Կարո Պողոսի Քիրամիջյանը ծնվել է 1940 թ., Բեյրութում: Մինչեւ կալանավորվելը Երեւանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի ուսանող էր: Ակտիվորեն մասնակցել է կազմակերպության համակարգման, հոդվածների տպագրման, բազմացման ու տարածման աշխատանքներին: Եղել է այդ տարիներին գործող

սակավաթիվ «անկախականներից» մեկը: Կալանավորվել է 1963 թ. դեկտեմբերի 29-ին: Դատապարտվել է 2 տարի ազատազրկման: Ներկայումս ապրում է ԱՄՆ-ում:

Մերուժան Արտաշեսի Հովհաննիսյանը ծնվել է 1940 թ., Էջմիածին քաղաքում: Եղել է կազմակերպության ամենաակտիվ մասնակիցներից մեկը: Ընդհատակյա տպարան հիմնելու համար տպատառեր եւ տպագրական հաստոցի մասեր հայթայթելու գործը նա է հաջողել: Նաեւ կարողացել է գրամեքենաներ ձեռք բերել: Եվրոպական հայալեզու մամուլում տպագրելու նպատակով կարողացել է մի շարք ստեղծագործություններ ուղարկել արտերկիր: Կալանավորվել է 1963 թ. դեկտեմբերի 29-ին: Դատապարտվել է 5 տարի ազատազրկման: Դրսեւորած ըմբոստ վարքի պատճառով է՛լ ավելի է խստացվել նրա ռեժիմը, եւ մորդովական խիստ ռեժիմի քաղկալանավորների համար նախատեսված կալանավայրից նա տեղափոխվել է Վլադիմիրի բանտ: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Հայաստան: Պահպանել է իր կապերն այլախոհական շրջանակների հետ: 1968 թ. մասնակցել է Ազգային միացյալ կուսակցության անդամների հրատարակած «Երկունք» թռուցիկի երկրորդ համարի նախապատրաստման աշխատանքներին: Մասնակցել է նաեւ այդ թռուցիկի առաջնորդող՝ «Հայաստանն ապագայում» վերնագրով հոդվածի մշակման աշխատանքներին, որը, սակայն, ԱՄԿ-ականների ձերբակալման պատճառով չի հրապարակվել: Հետագայում դատապարտվել է եւս մեկ անգամ: Այս դատապարտումը, սակայն, չի առնչվել հասարակական-քաղաքական գործունեությանը: Ապրում է Երեւանում: Բանաստեղծական ժողովածուների, գրքերի ու հուշագրությունների հեղինակ է: Հանրությանը հայտնի է «Մերուժան» գրական անվամբ:

«Յոթ հայրենասերների» գործով կայացված դատավճիռը

Դատավճռի տեքստում Ազգային անվտանգության ծառայության կողմից ջնջված վկաների անունների փոխարեն կամայական տառեր են նշված, իսկ կետագծերով նշված են տեքստը մեզ տրամադրելուց առաջ ջնջված այլ հատվածներ: Փաստորեն, ԱԱԾ-ն որպես հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն՝ գործով անցնող վկաների անունները ջնջելուց եւ փոխարենը կամայական տառեր դնելուց բացի, ջնջել է նաեւ տեղեկատվությունը, թե 50 տարի առաջ որ քաղբանտարկյալը որ ուսումնական հաստատության որ ֆակուլտետում է ուսանել կամ որտեղ է աշխատել ու որ հասցեում է բնակվել:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

5-26 օգոստոսի 1964 թվի

Նախագահությամբ՝	**Էդ. Սիմոնյանի**
Ատենակալներ՝	**Կ. Յանիկյանի, Հ. Արիստակեսյանի**
Քարտուղարությամբ՝	**Թ. Ենգիբարյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող՝**
դատախազ՝	**Գ. Քոչինյանի**
դատապաշտպան՝	**Արեւշատյան**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի՝

1. ԽԱՉԱՏՈՒՐ ՋՈՒՄՇՈՒՂԻ ԱՄԻՐՋԱՆՅԱՆԻ 1924թ. ծնված, Հայկ. ՍՍՌ Իջեւանի շրջանի Ուզունթալա գյուղում, հայ, ՍՍՌՄ քաղաքացի, 1944 թվականից ՍՄԿՊ անդամ, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին 5 անձ, չդատված, մինչեւ կալանավորվելը աշխատել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի ----------, բնակվել է Երեւան, ---------- մեղադրանք է առաջադրվել եւ դատի է տրվել Հայկ ՍՍՌ քրեական օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Կալանքի տակ է 22/1-1964 թվականից:

Առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց:

2. ԽԱՉԻԿ ԷԼՈՅԻ ՍԱՖԱՐՅԱՆ, 1932թ. ծնված, Հայկ ՍՍՌ Թալինի շրջանի ն. Բազմաբերդ գյուղում, հայ, ՍՍՌՄ քաղաքացի, ՍՄԿՊ-ի անդամ 1962 թվականից, բարձրագույն կրթությամբ, գիտության թեկնածու, ամուսնացած, խնամքին 5 անձ, չդատված, մինչեւ կալանավորվելը աշխատել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտում՝ որպես մեթոդիստ: Մեղադրանք է առաջադրվել եւ դատի է տրվել Հայկ. ՍՍՌ-ի քր. օրենսգրքի 65 հոդ. 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Կալանքի տակ է 29/12-1963 թվականից:

Առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց:

3. ՎԻԳԵՆ ԱՍԱՏՈՒՐԻ ԲԱԲԱՅԱՆ, 1940 թ. ծնված, ծնվել եւ բնակվում է Երեւան քաղաքում, հայ, ՍՍՌՄ քաղաքացի, ՀԱՄԼԿԵՄ անդամ, ամուսնացած, խնամքին 3 անձ, դատված անզգույշ սպանության համար 1957 թ. 2,6 տարվա ազատազրկման, դատվածությունը վերացված, մինչեւ կալանավորումը հանդիսացել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ----------, մեղադրանք է առաջադրվել եւ դատաի է տրվել Հայկ ՍՍՌ քր. օր-ի 65 հոդ 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Կալանքի տակ է 29/12-1963 թվականից:

Առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց:

4. ԳՐԻԳՈՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲԻ ԵՂՅԱՆ, 1926թ. ծնված Երուսաղեմ քաղաքում /Պաղեստին/, հայ, ՍՍՌՄ քաղաքացի, անպարտիական, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված, բարձրագույն կրթությամբ ---------- Մեղադրանք է առաջադրվել եւ դատի է տրվել Հայկական ՍՍՌ քրեական օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով: Կալանքի տակ է 29/12-1963 թվականից:

Առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց:

5. ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆԻ ԿԱԿՈՍՅԱՆ 1936թ. ծնված, ծնվել է եւ բնակվել է Երեւան քաղաքում, ՍՍՌՄ-ի քաղաքացի, ՀԱՄԼԿԵՄ անդամ, ամուրի, խնամքին ոչ ոք, մինչեւ կալանավորվելը հանդիսացել է Երեւանի պետական համալսարանի հեռակա բաժնի ---------- 3-րդ կուրսի ուսանող , ---------- դպրոցի հայոց լեզվի եւ գրականության դասատու, նախկինում դատված քր. օրենսգրքի 184 հոդ. ուղղիչ աշխատանքների մեկ տարի ժամկետով:

Կալանքի տակ է 30/12-1963 թվականից:

Մեղադրանք է առաջադրվել եւ դատի է տրվել Հայկ. ՍՍՌ քր. օր-ի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց:

6. ԿԱՐԱՊԵՏ-ԿԱՐՈ ՊՈՂՈՍԻ ՔԱՋԱՄԻՐՅԱՆԻ 1940թ. ծնված Բեյրութ քաղաքում /Լիբանան/, հայ, ՍՍՌՄ քաղաքացի, ՀամԼԿԵՄ անդամ, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված, մինչեւ կալանավորվելը հանդիսացել է Երեւանի պետական համալսարանի ---------- ուսանող, բնակվել է Շահումյանի շրջանի ---------- նո. 101 տանը:

Կալանքի տակ է 29/12-1963 թվականից:

Մեղադրանք է առաջադրվել եւ դատի է տրվել Հայկ. ՍՍՌ-ի քրեական օրենսգրքի 65 հոդ. 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց:

7. ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ 1940թ. ծնված, ծնվել է Հայկ. ՍՍՌ-ի Էջմիածին քաղաքում, հայ, ՍՍՌՄ քաղաքացի, անպարտիական, միջնակարգ կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ ոք, նախկինում, այն է՝ 1958թ. ապօրինի կարգով հրազեն պահելու համար դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամանակով: Մինչեւ կալանավորվելը՝ առանց զբաղմունքի, բնակվել է Էջմիածին քաղաքի ----------: Կալանքի տակ է 29/12-1963 թվականից:

Մեղադրանք է առաջադրվել եւ դատի է տրվել Հայկ ՍՍՌ-ի քրեական օրենսգրքի 65 հոդ 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց:

Գործի դատաքննությամբ, վկաների ցուցմունքներով, ամբաստանյալների բացատրությամբ, ինչպես նաեւ գործի նախաքննությամբ ձեռք բերված տվյալներով եւ գործով առգրավված իրեղեն ապացույցներով հաստատված են, որ ամբաստանյալներ Խաչիկ Էլոյի Սաֆարյանը, Կարապետ Կարոյի Քիրամիջյանը, Վիգեն Ասատուրի Բաբայանը, Մերուժան Արտաշեսի Հովհաննիսյանը 1962 թվականի վերջերից իրենց ունեցած ազգայնական-հակասովետական հայացքների ընդհանրության հիման վրա համաձայնության են եկել ստեղծելու գաղտնի խմբակներ, նպատակ ունենալով ագիտացիա եւ պրոպագանդա մղելու միջոցով իրենց շուրջը համախմբել համակիրներ եւ այդ ուղիով հասնել իրենց ազգայնական հակասովետական նպատակների իրականացմանը: Ամբաստանյալները իրենց այդ մտադրությունները իրականացնելու համար ձեռք են բերել ազգայնական հակասովետական բովանդակությամբ հոդվածներ «Բատովսկին իրավացի չէ» «Այսօր Վարիայից ստացա» բառերով սկսվող Սկաչկոյի «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածի դեմ գրված հոդվածներ, որոնց հեղինակները անհայտ են եւ քննությամբ չի հայտնաբերված: Իրենց՝ ամբաստանյալների կողմից գրված «Հայկական դատի 85 տարին» 9 էջանոց «Հայրենասերների համամիութենական ընկերության հայտարարությունը» բառերով սկսվող հոդվածները, «Թանկագին հայրենակիցներ» բառերով սկսվող եւ «Գլխավոր խորհուրդ» բառերով վերջացող կոչը «Կտակ հայ որդուն» պոեմը, «Ինչն է ազգերի միաձուլումը եւ ով է ձգտում նրան» խորագիրը կրող հոդվածը, «Ողջույն Կիրովաբադի հայ բարեկամներին» «Տեսություն մարդկային պատմության մասին» հոդվածները, զանազան բանաստեղծություններ:

Ամբաստանյալները օգտագործել են նաեւ հայ բուրժուա-նացիոնալիստական (ազգայնական) գրականությունը՝ թերթեր, ամսագրեր, տարեգրեր, գրքեր, որտեղից արտատպելով հակասովետական-ազգայնական բովանդակություն ունեցող հոդվածներ եւ նյութեր, ինչպես օրինակ՝ «Մայիսի 28-ը» «Սիրելի Արտաշեսին-Ավետիկ ստորագրությամբ նամակը եւ այդ ամենը բազմացրել ու տարածել են իրենց համախոհների շրջանում: Այդ ճանապարհով աշխատել են իրականացնել գաղտնի խմբակի առջեւ դրված

առաջնահերթ խնդիրներից մեկը, այն է՝ բարձրացնելու ազգանական ոգին քաղաքականապես անկայուն մարդկանց շրջանում, բորբոքելու նրանց ազգայնական տրամադրությունները, վերջիններիս իրենց գործունեության ոլորտի մեջ ներգրավելու նպատակով:

Ամբաստանյալները չցանկանալով տեսնել Սովետական Հայաստանի անցած ժամանակաշրջանում ձեռք բերած վիթխարի հաջողություններն ու նվաճումները՝ տնտեսության , գիտության, կուլտուրայի, արվեստի, կրթության եւ այլն բնագավառներում, տեսնելով միայն մեր առաջընթացի առանձին թերությունները, աշխատել են իրենց ագիտացիայի համար հիմնական առանցք դարձնել այդ թերությունների չափազանցրած պատկերացումները եւ դրանով իսկ արատավորել սովետական իրականությունը: Այսպես՝, հավաքույթներում քննարկված ազգայնական հարցերից մեկն էլ հանդիսացել է հայոց լեզվի մաքրությունը, այն իբր ռուսական լեզվի մեջ միաձուլվելուց փրկելու հարցը: Այդ կապակցությամբ օգտագործելով առանձին երիտասարդների ոչ լուրջ վերաբերմունքը, որոնք խոսակցական լեզվի մեջ օգտագործում են հայերեն եւ ռուսերեն բառեր կամ առանձին հիմնարկ-ձեռնարկներում եւ առեւտրական կետերում ապրանքների ոչ հայերեն անվանարկումը կամ ցուցանակների անհաջող ձեւակերպումը վերագրում են ոչ թե առանձին մարդկանց ոչ լուրջ վերաբերմունքին, այլ ինչ-որ պաշտոնական թույլատրված ուղղության, որը ոչինչ ընդհանուր չունի լենինյան ազգային քաղաքականության գծի հետ, հատկապես յուրաքանչյուր ազգի լեզվի պահպանման եւ զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականության հետ:

Այդ եւ նրանց կողմից առաջ քաշված ազգայնական-հակասովետական մյուս հարցերի շուրջը տարված ընդհատակյան աշխատանքի հետեւանքով ամբաստանյալներին որոշ չափով հաջողվել է Երեւանի առանձին ձեռնարկություններից, որոշ քաղաքականապես անկայուն անձանց ընդգրկել իրենց գաղտնի խմբակի մեջ: Ամբաստանյալները իրենց համակիրների հետ կազմակերպել են սիստեմատիկ հավաքույթներ, որոնք հրավիրվել են տարբեր վայրերում, նրանցից յուրաքանչյուրին մասնակցել են 3-ից մինչեւ 15-20 մարդ:

Ամբաստանյալները իրենց հանցավոր գործունեությունը ծավալելու եւ այն ավելի կազմակերպված հունի մեջ դնելու համար, քննարկել եւ լուծել են մի շարք կազմակերպական հարցեր, այսպես՝ լուրջ կերպով մտածել են գաղտնի գործունեության համար նյութական բազա ստեղծելու մասին, հավաքույթներում քննարկել եւ գործնականորեն լուծել են անդամավճարներ հավաքելու հարցը, հավաքված փողով մի շարք ծախսեր են կատարել, այն է՝ վճարվել է տպագրական մեքենայի մասեր պատրաստելու, գրամեքենաների տեղափոխությունը կատարելու խորհրդի անդամների տեղափոխությունների հետ կապված ծախսերը հոգալու, ինչպես նաեւ հավաքույթների համար վարձված սենյակի վարձը վճարելու համար:

Տպագրական մեքենա պատրաստելու համար ձեռնարկված են եղել մի շարք միջոցառումներ՝ նախագծվել է մեքենան, պատրաստել են տվյալ մեքենայի առանձին մասեր եւ հափշտակման միջոցով ձեռք են բերվել շուրջ 25 կգ. տպատառեր: Խմբակի ղեկավարները- ամբաստանյալները ցանկացել են տպագրական մեքենայի միջոցով տպագրել, բազմացնել եւ տարածել զանազան ազգայնական հակասովետական բովանդակության հոդվածներ: Նրանք ցանկացել են ստեղծել նաեւ անդամատոմսեր, սակայն այդ աշխատանքը նրանց հետագա գործողություններում ծավալում չի ստացել, այն թողնելով ավելի ուշ ժամանակվա:

Որոշակի աշխատանք է կատարվել արտասահմանի հետ կապ հաստատելու ուղղությամբ, նրանց հաջողվել է արտասահման ուղարկել ամբաստանյալ Վիգեն Բաբայանի

«Կտակ հայ որդուն» ազգայնական-հակասովետական ոգով գրված պոեմը, որը տպագրվել է «Սփյուռք» շաբաթաթերթում եւ Փարիզի դաշնակցական երիտասարդական «Հայաստան» թերթում: Հատկապես ցանկացել են արտասահման ուղարկել «Այսօր Վարիյայից ստացա» ազգայնական հակասովետական հոդվածը, որը նրանց չի հաջողվել:

Տեսակցություններ են ունեցել արտասահմանյան «Սփյուռք» շաբաթաթերթի խմբագրության աշխատակից Գեւորգ Աճեմյանի հետ, որը զրույցի ժամանակ տեղեկություն է տվել արտասահմանում տարվող աշխատանքի մասին, խմբակի անդամներին հետաքրքրող ազգայնական հարցերի շուրջը:

Հավաքված անդամավճարներից գոյացած միջոցների հաշվին խմբակի անդամներից մեկնել են Ղարաբաղ՝ նույնանման աշխատանք ծավալելու միջոցով համակիրների խմբակ ստեղծելու, ինչպես նաեւ բնակչության մեջ բորբոքելու ազգայնական հակասովետական տրամադրություններ:

Ամբաստանյալները իրենց գործի նկատմամբ համակիրների շրջանում հավատը ամրացնելու համար պատրանք են ստեղծել այն մասին, որ իրենք միայնակ չեն եւ որ նույնանման կազմակերպություններ կան նաեւ Հայաստանից դուրս հարեւան հանրապետություններում:

Խմբակի անդամները աշխատանք են ծավալել գաղտնի գործունեության մեջ նոր համակիրներ ներգրավելու համար, ըստ որում նոր ընդգրկված անձնավորությունները ստուգվել են եւ նախազգուշացվել իրենց շրջաններում գործունեություն ծավալելու համար զգույշ լինելու:

Հավաքույթներում մասնակիցների շրջանում ազգայնական կրքեր բորբոքելու հետ միասին, առանձին դեպքերում քննարկվել են նաեւ տեռորիստական ակտ կազմակերպելու եւ կազմակերպության համար զենք ձեռք բերելու հարցերը, սակայն հետագայում նրանք հրաժարվել են այդ միջոցների գործադրումից:

Ամբաստանյալները խեղաթյուրելով Սովետական պետության լենինյան ազգային քաղաքականությունը եւ հերյուրանքներ տարածելով այդ ուղղությամբ պրոպագանդել են Սովետական Հայաստանը Սովետական միությունից անջատելու եւ այսպես կոչված «անկախ» Հայկական պետություն ստեղծելու գաղափարը:

Կազմակերպված խմբակների միջեւ աշխատանքը համաձայնացնելու, այդ աշխատանքները ղեկավարելու եւ սկսած գաղտնի աշխատանքը ավելի լայն մասշտաբներով ծավալելու համար, խմբակի անդամները հավաքույթներից մեկում ստեղծել են ղեկավար կենտրոն, որին կոչել են խորհուրդ: Խորհուրդը հանձնարարել է իր անդամներից երկուսին մշակելու կազմակերպության ծրագիրը, սակայն այդ աշխատանքը մնացել է անավարտ՝ գաղտնի խմբակի մերկացման կապակցությամբ:

Նախաքննությամբ, դատաքննությամբ եւ գործով առգրավված իրեղեն ապացույցներով հաստատված է ամբաստանյալներից յուրաքանչյուրի կողմից գաղտնի ճանապարհով կատարված ներքոհիշյալ գործնական աշխատանքները:

Ամբաստանյալ Խաչիկ Ամիրջանյանը մինչեւ մյուս ամբաստանյալների հետ ծանոթանալը, դեռեւս 1962թ. վերջերին կազմել է «Պրոլետարիատի դիկտատուրայի 45 տարին» հոդվածը, որպեսիսը 1963թ. վերամշակել ու ավելացնելով 13 կետեր, այն վերանվանել է «Համամիութենական հայրենասերների ընկերության հայտարարություն» որտեղ ավելի խորացնելով իր հակասովետական հայացքները, հոդվածին տվել է ծրագրային բնույթ:

Նրա մեջ ամբաստանյալ Ամիրջանյանը թույլ է տվել մի շարք թշնամական հակասովետական զրպարտչական հերյուրանքներ եւ կոչ արել տապալելու Սովետական իշ-

խանությունը, այդ հոդվածում նա տվել է կոնկրետ դրույթներ նոր ստեղծվելիք իշխանության համար:

Ամբաստանյալ Ամիրջանյանը միաժամանակ կազմել է կես էջանոց ռուսերեն լեզվով մեկ այլ հակասովետական բովանդակությամբ հոդված, որտեղ նա նորից կոչ է արել տապալելու սովետական կարգը: Ամբաստանյալ Ամիրջանյանը իր կողմից գրած հակասովետական բովանդակությամբ հոդվածները համակիրների մեջ տարածելու նպատակով, բանավոր պրոպագանդայի հետ միասին քայլեր է ձեռնարկել հոդվածները բազմացնելու եւ այն տարածելու ուղղությամբ, մյուս ամբաստանյալների հետ միասին աշխատանք կատարել գաղտնի խմբակի հավաքույթներ կազմակերպելու համար: Ամիրջանյանը իր ընկեր գործով վկա Х-ի ծանոթի բնակարանում կազմակերպված հավաքույթում, որին մասնակցել են գործով վկաներ Х-ը, Z-ը, Օ-ը, ուրիշները մասսայականացրել է իր 9 էջանոց հակասովետական բովանդակության հոդվածը:

Նույն հոդվածի բովանդակությունը պրոպոգանդելու նպատակով ելույթ է ունեցել նաեւ 1963 թ. գարնանը գործով վկա Ֆ-ի բնակարանում տեղի ունեցած հավաքույթում, որին մասնակցել է նաեւ ամբաստանյալ Կարապետ Քիրամիջյանը:

Նույն ելույթներն է ունեցել նաեւ անասնաբուժական ինստիտուտի հանրակացարանի --------, պետական համալսարանի հանրակացարանի սենյակներից մեկում եւ այլ վայրերում տեղի ունեցած հավաքույթներում:

Նա իր հոդվածները տվել է կարդալու Ձ-ին, Х-ին, այնուհետեւ ամբաստանյալ Կարապետ Քիրամիջյանի միջոցով տարածել է խորհրդի անդամների եւ մյուս համակիրների շրջանում:

Այդ կարգի հավաքույթներից մեկում, որը տեղի է ունեցել Էջմիածին քաղաքում ամբաստանյալ Մերուժան Հովհաննիսյանի բնակարանում, որտեղ Ամիրջանյանը մասնակցել է գաղտնի խմբակների աշխատանքները ղեկավարող խորհրդի ընտրությանը, որի կազմում ընտրվել է նաեւ ինքը:

Այդ հավաքույթում քննության է առնվել նաեւ գաղտնի տպարան հիմնելու, անդամատոմսեր ունենալու, անդամավճարներ հավաքելու եւ մասնավորապես խորհրդի գործունեության ծրագիր մշակելու հարցը, որի սոցիալական հարցերին նվիրված բաժնի մշակումը հանձնարարվել է Ամիրջանյանին:

Տես գթ. հատոր 6 59-61, 65-70, 73-75, 76-79, 80-85, 90-95, 96-97, 98-102 103-105, 106-110, 111-112, 114-116, 117-118, 119-121, 122-124, 125, 128, 129-130, 139--144 եւ դատական նիստի արձանագրությունը:

Ամբաստանյալ Սաֆարյան Խաչիկը հանդիսացել է հակասովետական ազգայնական բովանդակություն ունեցող «Այսօր Վարիայից ստացա» բառերով սկսվող հոդվածի բազմացնելու եւ տարածելու գործի նախաձեռնողը:

Այդ հոդվածը 1963թ. սկզբին Սաֆարյանը ստացել է գործով վկա Փ-ից եւ չնայած վերջինիս նախազգուշացմանը, որ հոդվածում արծածված մտքերը վտանգավոր են, ինքը այն բազմացրել է եւ տարածել:

Ամբաստանյալ Սաֆարյանը նույն Փ-ից 1963թ. գարնանը ստացել է նաեւ «Սկաչկոյի հոդվածի առթիվ գրված հոդվածը» որը նույնպես ունի հակասովետական բովանդակություն: Սաֆարյանը այդ հոդվածների բովանդակությունը պրոպագանդելու նպատակով ընթերցել, բազմացրել եւ մասսայականացրել է խմբակի գաղտնի հավաքույթներում, նա այդ հոդվածները ընթերցել է գյուղինստիտուտի իր աշխատասենյակում տեղի ունեցած հավաքույթում, որին մասնակցել են ամբաստանյալներից Քիրամիջյանը, Հովհաննիսյանը, Բաբայանը, գործով վկաներ Ք-ն Թ-ն եւ ուրիշներ: Քա-

նի որ հոդվածը պարունակում է նաեւ հարձակումներ հին բոլշեւիկ Արտաշես Կարինյանի դեմ, հավաքույթի մասնակիցները որոշել են նրա դեմ տեռորիստական ակտ կատարել: Նույն հավաքույթում ամբաստանյալ Բաբայանը եւ վկա Թ-ն հանձնարարություն են ստացել ստուգելու նրան տեռորի ենթարկելու հնարավորությունը, սակայն հետագայում հրաժարվել են իրենց մտադրությունը իրագործելուց:

Ամբաստանյալ Սաֆարյանը մասնակցել եւ ղեկավարել է Զվարթնոցում եւ Նորքում կազմակերպված գաղտնի հավաքույթները, որոնք բազմամարդ են եղել եւ նրանցից յուրաքանչյուրին մասնակցել են 15-20 մարդ: Այդ հավաքույթներում նա շարադրել է իր ազգայնական հակասովետական մտքերը, խոսել է նաեւ վստահելի մարդկանց ներգրավելու եւ ընդհատակյա աշխատանք տանելու գործում զգույշ լինելու մասին: Այսպիսի հավաքույթներ Սաֆարյանի մասնակցությամբ հրավիրվել են գյուղինստիտուտում, Կիեւյան կամուրջի մոտ, մոնումենտի այգում, Նորքում, Էջմիածնում եւ այլ վայրերում:

Սաֆարյանը աշխատանք է կատարել նաեւ գաղտնի խմբակների մեջ նոր մարդկանց ներգրավելու ուղղությամբ, անձամբ ինքը այդ խմբակներում ներգրավել է 3-4 անձնավորությունների: Բացի այդ նա իր ընկերներից մեկի, գործով վկա Մոսկվայում բնակվող ՈՒ-ի միջոցով աշխատանք է տարել Մոսկվայի հայ ուսանողության եւ հայ մտավորականության շրջանում ազգայնական տրամադրություններ բորբոքելու նպատակով: Ամբաստանյալ Սաֆարյանը աշխատանք է կատարել արտասահմանի հետ կապ հաստատելու ուղղությամբ: Նա զրույց է ունեցել Երեւան ժամանած «Սփյուռք» շաբաթաթերթի խմբագրության աշխատակից Գեւորգ Աճեմյանի հետ, որից հետաքրքրվել է, թե արտասահմանում իրեն հետաքրքրող ազգայնական հարցերի շուրջը ինչպիսի աշխատանք է կատարվում:

Սաֆարյանի մասնակցությամբ տարբեր հավաքույթներում քննարկվել են կազմակերպչական մի շարք հարցեր եւ հատկապես անդամատոմսեր ունենալու, անդամավճարներ սահմանելու եւ գանձելու, զենք ունենալու, տպագրական մեքենա ձեռք բերելու հարցերը, որոնց նկատմամբ նա ունեցել է երբեմն մյուս ամբաստանյալների կարծիքին չհամապատասխանող կարծիք: Այսպես, նա դեմ է եղել մասսայական անդամատոմս ունենալու հարցին, գտնելով որ պետք է անդամատոմս ունենալ սահմանափակ թվով պրոպագանդայի համար: Դեմ է եղել զենք ձեռք բերելուն, նշելով որ ամենաուժեղ զենքը դա մեր պրոպագանդան է, որի վրա պետք է բեւեռել հիմնական ուշադրությունը:

Սաֆարյանը մյուս ամբաստանյալների հետ միասին պրոպագանդել է նաեւ այսպես կոչված «անկախ» Հայաստան ունենալու հարցը: Հավաքներից մեկում գաղտնի խմբակների աշխատանքը կազմակերպելու եւ ղեկավարելու համար Սաֆարյանի մասնակցությամբ քննարկվել է ղեկավար կենտրոն ունենալու հարցը, որովհետեւ բացատրում է Սաֆարյանը, «նախատեսված է եղել ունենալու կուռ կազմակերպություն իր կայուն ծրագրով եւ կանոնադրությամբ, ունենալ 10 հոգուց բաղկացած խմբակներ, որոնք պետք է իրար գոյության մասին չիմանային եւ ղեկավար կենտրոնի անդամները պետք է կապ պահպանեին տասնապետերի հետ»: Ամբաստանյալ Հովհաննիսյանի բնակարանում տեղի ունեցած հավաքում Սաֆարյանի մասնակցությամբ ընտրվել է այդպիսի խորհուրդ, որի կազմում ընտրվել է նաեւ ինքը, նույն հավաքույթում Սաֆարյանին հանձնարարվել է կազմելու ծրագիր ազգայնական մասը:

Տես հատոր 1-ին գթ. 266-271, 272-276, 277-281, 282-284, 285-289, 290-292, 293-298, 299-304 հատոր 2-րդ գթ. 6-9, 10-14, 15-18, 19-23, 24-27, 28-30, 31-33, 34-36, 37-41, 42-45, 46-48, 53-59, 60-62, 63-73, 74-75, 103-105 եւ դատական նիստի արձանագրությունը:

Ամբաստանյալ Վիգեն Բաբայանը ունենալով ազգայնական հակասովետական տրամադրություններ, իր այդ տրամադրությունները համակիրների շրջանում պրոպագանդելու համար, մյուս ամբաստանյալների հետ միասին կազմակերպել է գաղտնի խմբակների հավաքույթներ, ինչպես նաեւ ակտիվ մասնակցություն է ունեցել ամբաստանյալներ Կակոսյանի, Քիրամիջյանի, Հովհաննիսյանի եւ մյուսների կողմից հրավիրված հավաքույթներին: Գաղտնի խմբակների անդամների կողմից կազմակերպված ավելի քան 30 հավաքույթների մեծ մասին Բաբայանը մասնակցել է: Բաբայանը իրեն եւ իր համախոհ Ա-ի առաջարկով կազմակերպել է խումբ, որի կազմում ընդգրկվել են Բ-ն, Գ-ն, Դ-ն, Ե-ն եւ Ը-ն: Ամբաստանյալ Բաբայանը անձամբ գաղտնի խմբում ընդգրկել է համակիր Թ-ին, Ժ-ին եւ ուրիշներին:

Բաբայանը իր գրամեքենայով բազմացրել եւ տարածել է մյուս ամբաստանյալ Հովհաննիսյանի հետ միասին կազմած «Նաիրի» շաբաթաթերթից վերցված «Մայիսի 28-ը» եւ Հովհաննիսյանի կողմից գրված «Հայկական դատի 85 տարին» հակասովետական բովանդակությամբ հոդվածները: Տվել է իր համախոհներին կարդալու «Սկաչկոյի» հոդվածի առթիվ հոդվածը Թ-ին, Ը-ին եւ ուրիշներին:

Բաբայանը Քիրամիջյանի եւ Հովհաննիսյանի հետ մեկնել են Ստեփանակերտ իրենց հետ տանելով հակասովետական բովանդակությամբ հոդվածներ, հանդիպում են ունեցել մի շարք անձանց հետ եւ այդ հոդվածները հանձնել են նրանց տարածելու, համախոհներ հավաքագրելու, գաղտնի շարժում ծավալելու, ազգաբնակչության մեջ ազգայնական հակասովետական տրամադրություններ բորբոքելու նպատակով:

Ամբաստանյալ Բաբայանը գործնական մասնակցություն է ունեցել ձեռք բերված տպագրական միջոցների տեղափոխման եւ պահպանման գործում: Նա Քիրամիջյանի հետ միասին տպատառերը եւ մյուս մասերը տեղափոխել եւ թաքցրել է Գեղարդի լեռներում, իսկ այնուհետեւ Հովհաննիսյանի հետ տեղափոխել է էջմիածին Եղյան Գրիգորի մոտ, ապա տեղափոխել եւ թաքցրել են գործով վկա էջմիածնի բնակիչ Y-ի բնակարանում:

Ամբաստանյալ Բաբայանը հավաքույթներում եւ առանձին զրույցների ժամանակ առաջ է քաշել ավանտյուրիստական բնույթի մի շարք մտքեր, ինչպես օրինակ ազգայնական ոգով տոգորված 50.000-անոց ցույց կազմակերպելու, 1000 հոգի զինելու եւ սահմանակից պետության նկատմամբ պրովոկացիոն միջադեպ կազմակերպելու, տեռորիստական ակտ կազմակերպելու նպատակով զենք ձեռք բերելու եւ այլն: Զենք ձեռք բերելու հարցում նա ամբաստանյալ Քիրամիջյանի հետ գործնական քայլերի է դիմել, նախ խմբակի տրամադրության տակ է դրել իր հորը պատկանող գործով առգրավված իրեղեն ապացույց ատրճանակը, ապա որոշել է զենք առնել անդամավճարի փողով, սակայն արդյունքի չի հասել:

Բաբայանը, որ հանդիսանում է նաեւ «Կտակ հայ որդուն» պոեմի հեղինակը, այն տարածել է համախոհների մեջ, իսկ ամբաստանյալ Հովհաննիսյանը այն ուղարկել է արտասահման, որը տպագրվել է «Սփյուռք» շաբաթաթերթում եւ Փարիզում հրատարակվող «Հայկական երիտասարդական դաշնակցական նոր սերունդ»-ի օրգան «Հայաստան» թերթում, ամբաստանյալ Բաբայանի այդ պոեմն ունի սուր հակասովետական ազգայնական բովանդակություն, ինքը՝ հեղինակը նշում է, որ «պոեմը իմ հայացքների արտահայտությունն է»:

Բաբայանը գործնական աշխատանք է ծավալել անդամավճարների հավաքման հարցում, նա մի քանի անգամ անդամավճար է ստացել Բ-ից եւ հանձնել Քիրամիջյանին, ամեն անգամ 15-20 ռուբլու սահմաններում:

Բաբայանը մյուս ամբաստանյալներ Քիրամիջյանի, Սաֆարյանի եւ Հովհաննիսյանի հետ միասին ցանկացել են ձեռք բերել դաշնակցական պարտիայի ծրագիրը:

Տես հատոր 3-րդ գթ. 79-83, 84-91, 92-95, 96-101, 102-111, 112-123, 124-129, 130-132, 133-135, 137-140, 141-146, 148-154, 155-160, 161-168, 169-179, 180-191, 192-194, 195-199, 200-204, 207-210, 211-215, 216-219, 220-223, 224-230, 321-234, 241-246 եւ դատական նիստի արձանագրությունը:

Ամբաստանյալ Կարապետ Քիրամիջյանը աշխատանք է ծավալել իր ազգայնական հակասովետական համոզմունքներն ու հայացքները իր համախոհների շրջապատում գաղտնի ագիտացիայի եւ պրոպագանդայի միջոցով տարածելու համար:

Քիրամիջյանը առանձնապես մեծ ակտիվություն է ցուցաբերել մարդկանց հավաքագրելու, նրանց հավատարմությունը ստուգելու հարցում: Այդ նպատակով 1962թ. 1963թ. ընթացքում անձամբ հավաքագրել է որոշ թվով մարդկանց եւ նրանց ներգրավել է կազմակերպված գաղտնի խմբակներում:

Քննությամբ հիմնավորված 30 հավաքույթներում, բացառությամբ 4-5, մնացածներին մասնակցել է, անձամբ կազմակերպել է մի շարք հավաքույթներ, որտեղ ինքը ելույթ է ունեցել ազգայնական հակասովետական բնույթ կրող հարցերի շուրջը:

Հավաքույթ է կազմակերպել նաեւ տաքսի մեքենայի մեջ, որին մասնակցել են վարորդ Գ-ն, Բ-ն, Ե-ն:

Քիրամիջյանը աշխատանք է կատարել ազգայնական հակասովետական բնույթ կրող մի շարք հոդվածներ, այդ թվում նաեւ ամբաստանյալների կողմից գրված, ձեռք բերելու, բազմացնելու եւ դրանք տարածելու գործում:

Այսպես, Սաֆարյանից վերցրել է «Այսօր Վարիայից ստացա» հակասովետական ազգայնական բովանդակությամբ հոդվածը եւ քրոջ միջոցով բազմացրել ու տարածել է գործով վկաներ իրենց համախոհների շրջանում Բ-ին, Հ-ին, Զ-ին, Է-ին, Ի-ին եւ ուրիշներին:

Ամբաստանյալ Ամիրջանյանից վերցրել է նրա կողմից գրված հոդվածները եւ տարածել, տարածել է նաեւ «Սկաչկոյի հոդվածի» առթիվ գրված հոդվածը, որը բազմացնել է տվել գործով վկա Ց-ի քույր Ռ-ի միջոցով:

Քիրամիջյանի կողմից ազգայնական-հակասովետական ագիտացիան եւ պրոպագանդան տարվել է նաեւ այսպես կոչված «անկախ» Հայաստան ստեղծելու հարցի շուրջը: Քիրամիջյանի անմիջական մասնակցությամբ քննարկվել է կազմակերպության համար զենք ձեռք բերելու, Ա. Կարինյանի դեմ տեռոր կազմակերպելու, տպագրական մեքենա ունենալու, անդամատոմսեր ունենալու, անդամավճար սահմանելու եւ կազմակերպչական բնույթի այլ հարցեր: Զենք ձեռք բերելու հարցով կապվել է մի շարք անձնավորությունների հետ, գործով վկա Չ-ի, Պ-ի, որոնք խոստացել են 4-5 ատրճանակ ձեռք բերել իրենց փամփուշտներով, հատը 50 ռուբլով, սակայն չի հաջողվել զենք ձեռք բերել: Զենքի նպատակների մասին ամբաստանյալ Քիրամիջյանը նշում է, որ «այն պետք է գործադրվեր մեր գործին խոչընդոտողներին ոչնչացնելու, Կարինյանի նման մարդկանց ոչնչացնելու եւ փաստաթղթերի տեղափոխությունը ապահովելու համար»:

Քիրամիջյանի մասնակցությամբ գործնական քայլեր է կիրառվել տպագրական մեքենա ձեռք բերելու համար: Հովհաննիսյանի հետ միասին խնդրել են գործով վկա Տ-ին տպագրական մեքենա պատրաստելու, բացատրել են նրա չափսերը եւ ձեւը: Մասնակցել է ամբաստանյալ Հովհաննիսյանի կողմից հափշտակված 25 կգ. տպատառերը եւ պատրաստված տպագրական մեքենայի մասերը թաքցնելու գործին:

Քիրամիջյանը մյուս ամբաստանյալ Հովհաննիսյանի եւ Բաբայանի հետ միասին

գործնական քայլեր են կատարել համակիրների նույնպիսի խմբակներ ստեղծելու ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Վրաստանում:

Էջմիածնում հրավիրված հավաքույթներից մեկում, որին մասնակցել է ամբաստանյալը, կազմվել է խորհուրդ: Խորհրդի կազմում ընտրվել է նաեւ Քիրամիջյանը: Ամբաստանյալը գաղտնի խմբակների գործունեության համար նյութական միջոցներ ստեղծողներից մեկն է հանդիսացել, որը փաստորեն ֆինանսավորել է կատարված գաղտնի աշխատանքները եւ մյուսների հետ միասին տնօրինել հավաքված անդամավճարները:

Տես հատոր 2-րդ գք. 154-157, 160-161, 162-168, 169-173, 174-178, 179-180, 183-184, 185-186, 187-190, 191-194, 195-198, 199-200, 211-215, 220-223, 224-226, 227-229, 230-232, 233-237, 238-241, 242-245, 246-251, 252-254, 255-257, 258-260, 262-265, 266-268, 269-273, 274-281 եւ դատական նիստի արձանագրությունը:

Ամբաստանյալ Գրիգոր Եղյանը ունենալով ազգայնական հակասովետական հայացքներ, իրեն հայացքները ագիտացիայի եւ պրոպագանդայի միջոցով տարածելու ուղղությամբ կատարել է հետեւյալ աշխատանքները:

Ամբաստանյալ Հովհաննիսյանից ստացել է «Այսօր Վարիայից ստացա» բառերով սկսվող «Ստաչկոյի հոդվածի դեմ գրված եւ «Բատովսկին իրավացի չէ» հոդվածները, որոնք ունեն հակասովետական-ազգայնական բովանդակություն, կարդացել եւ տարածել է համախոհների շրջանում (Լ-ի, Խ-ի, Ծ-ի, Կ-ի): Ինքն անձամբ գրել է 3 հակասովետական բովանդակություն ունեցող հոդվածներ՝

1) Մարդկային իրավունքի մասին
2) Յուրաքանչյուր մարդու իրավունքն է
3) Տեսություն մարդկային պատմության մասին:

Այդ հոդվածներում հեղինակը նենգափոխել է սովետական իրականությունը եւ վարկաբեկել սովետական սիստեմը՝ քաղաքական եւ տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում:

Այդ հոդվածներից առաջին երկուսը չեն տարածվել եւ այն ձեռագիր վիճակում հայտնաբերվել է Եղյանի բնակարանում: Իսկ 3-րդ հոդվածը, որ կրում է «Տեսություն մարդկային պատմության մասին» խորագիրը, Հովհաննիսյանի միջոցով տպագրվել եւ այն ընթերցվել ու պրոպագանդվել է ինչպես ամբաստանյալների մի մասի կողմից, այնպես էլ գաղտնի հավաքույթներում հեղինակի կողմից: Հոդվածն ունի հակասովետական-ազգայնական բնույթ, հոդվածում խոսելով պետական սիստեմի մասին, հեղինակը գտնում է, որ իրեն համար նախընտրելի է «անկախ» Հայաստան առանց Սովետական կարգի:

Ամբաստանյալ Եղյանը մասնակցել է մի շարք հավաքույթների, որտեղ խոսել է իր ազգայնական հակասովետական տեսկետների մասին: Մասնավորապես նա մասնակցել է Գյուղինստիտուտի լսարաններում հրավիրված 2 հավաքի, Նորքի եւ Էջմիածնում իր եւ Հովհաննիսյանի տանը հրավիրված մի քանի հավաքույթների:

Նա, ինչպես եւ մյուս ամբաստանյալները, որոշակի մտահոգություն է ցուցաբերել ստեղծված գաղտնի խմբակում նոր մարդկանց հավաքագրելու հարցում, անձամբ հավաքագրել է Ն-ին:

Ամբաստանյալ Եղյանը Հովհաննիսյանի հետ որոշակի աշխատանք է կատարել արտասահմանի հետ կապ հաստատելու եւ «Այսօր Վարիայից ստացա» ու «Բատովսկին իրավացի չէ» հակասովետական բովանդակությամբ հոդվածները արտասահման ուղարկելու համար: Նա այդ հոդվածները հանձնել է արտասահման մեկնող «Ի-ին եւ Ջ-ին նպատակ ունենալով այն տպագրելու արտասահմանյան ռեակցիոն թերթերում:

Ամբաստանյալ Եղյանի մասնակցությամբ տեղի ունեցած մի շարք հավաքներում քննարկվել են տպարան ստեղծելու, անդամավճարներ սահմանելու, անդամատոմս ունենալու, զենք ձեռք բերելու, տեռորիստական ակտ կատարելու եւ այլ հարցեր:

Այդ հարցերի կապակցությամբ ամբաստանյալը ունեցել է իրեն առանձին կարծիքը: Այսպես, նա բացասական կարծիք է հայտնել տեռորի եւ անդամատոմս ունենալու հարցերում: Տպագրական մեքենա ձեռք բերելու հարցում դեմ լինելով հանդերձ, հետագայում իր բնակարանում է թաքցրել տպագրական մեքենայի պատրաստված մասերը, տպատառերը, առանց որեւէ առարկություն անելու, որը խոսում է նրա անուղղակի համաձայնության մասին:

Ամբաստանյալ Եղյանը հաստատում է, որ 1963թ. հուլիսին ամբաստանյալ Հովհաննիսյանի տանը հրավիրված հավաքում կազմվել է խորհուրդ, որի կազմում ընտրվել է նաեւ ինքը եւ, որ որպես խորհրդի անդամ ինքը 1963թ. նոյեմբերին Հովհաննիսյանի առաջարկով Նորքում Յ-ի բնակարանում ղեկավարել է հերթական մի հավաքույթ, որտեղ ներկա է եղել 15-20 մարդ:

Եղյանը հաստատում է, որ խորհրդում ծրագիր կազմելու հարցը հանձնարարվել է Սաֆարյանին եւ Ամիրջանյանին, միաժամանակ նշում է, որ հանձնարարվել է խորհրդի անդամներին համախոհների շրջանում պրոպագանդա անելու համար ձեռք բերելու կամ գրելու համապատասխան հոդվածներ եւ նյութեր:

Ամբաստանյալ Եղյանը տարածել է նաեւ արտասահմանյան բուրժուա-ազգայնական գրականություն, «Միջնաբերդ» ամսագիրը տվել է Հովհաննիսյանին կարդալու, որի միջոցով էլ տարածել է մյուսների շրջանում, այնտեղից տպագրվել է «Ավետիկ» ստորագրությամբ նամակը ուղղված ոմն Արտաշեսի, որը ունի հակասովետական վարկաբեկիչ բովանդակություն, ինչպես նաեւ տարածել է «Սփյուռք» շաբաթաթերթը եւ Կարո Փոլադյանի «Հուշեր» գիրքը, որտեղ գովաբանել է դաշնակցությունը, որը նույնպես տվել է Հովհաննիսյանին կարդալու:

Տես հատոր 4-րդ գթ. 2-9, 10-16, 17-21, 22-26, 27-30, 31-36, 37-43, 46-57, 58-63, 64-68, 69-73, 73-77, 78-82, 83-86, 87-90, 91-93, 94-98, 99-102, 103-106, 107-112, 113-116, 117-119, 120-122, 123-125, 126-129, 130-134, 135-137, 138-142, 143-146, 149-155 եւ դատական նիստի արձանագրությունը:

Սույն գործով ամբաստանյալ Էդուարդ Կակոսյանը գրել է երկու հակասովետական ազգայնական բովանդակությամբ հոդվածներ, մեկը՝ «Ինչ է ազգերի միաձուլումը եւ ով է ձգտում դրան», մյուսը՝ «Ողջույն Կիրովաբադի հայ բարեկամներին» վերնագրերով, որոնց մեջ ամբաստանյալ Կակոսյանը նենգափոխել է սովետական իրականությունը եւ թույլ է տվել զրպարտանք ՍՍՌՄ-ում տարվող ազգային քաղաքականության նկատմամբ:

Վերը նշված հոդվածները Կակոսյանը բանավոր եւ գրավոր ձեւով պրոպագանդել է իր համախոհների շրջանում, նույն գործով վկաներ Ղ-ի եւ Վ-ի օգնությամբ բազմացրել է 60 օրինակից եւ տարածել, մեկական օրինակ տալով ամբաստանյալ Բաբայանին, Բ-ին Ղ-ին Ճ-ին Մ-ին: Այդ հոդվածները 1963թ. քննարկվել են գործով վկա Մ-ի տանը, ամբաստանյալ Կակոսյանի նախագահությամբ կազմակերպված հավաքում, որտեղ բացի մատնանշված անձանցից մասնակցել են նաեւ ամբաստանյալներ Բաբայանը եւ Հովհաննիսյանը:

Բացի դրանից ամբաստանյալ Կակոսյանը կազմակերպել է նաեւ մի շարք այլ հավաքույթներ, այսպես Կիեւյան կամուրջի մոտ, 1963թ. գարնանը իրեն բնակարանում, մասնակցել է նաեւ այլ վայրերում հրավիրված մի քանի հավաքների:

Էջմիածնում առաջին անգամ մասնակցել է Հովհաննիսյանի տանը, որտեղ մասնակ-

ցել են 10-15 մարդ, իրեն խմբակի անդամներից հավաքին մասնակցել է միայն Կակոսյանը, խոսվել է կազմակերպություն ստեղծելու, անդամավճարներ հավաքեու, եւ այլ հարցերի շուրջը, հավաքում ելույթ են ունեցել Քիրամիջյանը, Բաբայանը, ինքը եւ եկել են այն եզրակացության, որ պետք է ունենան ընդհատակյա կազմակերպություն եւ սահմանվի անդամավճարներ, երկու գծի մասին (իրեն խմբակի եւ Հովհաննիսյանի խմբակի) հարց չի եղել, այլ միայն խոսել են ընդհանուր գործունեություն ծավալելու մասին, նշում է Կակոսյանը, իսկ այդ նշանակում է, որ ոչ միայն Կակոսյանի խումբը պայքարել է հայոց լեզվի մաքրության համար, կամ մաշտոցյան ընկերություն հիմնելու համար, այլ ամբաստանյալ Կակոսյանը եւ իր համախոհները բաժանել են մյուս խմբի ազգայնական հակասովետական հայացքները:

Կակոսյանը իր կողմից ստեղծված գաղտնի խմբի անունը դրել է «Հայկազուն» եւ որոշել այն գրել նշանաբանի ձեւով հոդվածների վերնագրերում, գաղտնի խմբի անդամների վրա խորհրդավոր տպավորություն թողնելու համար:

Կակոսյանի կողմից կազմակերպված գաղտնի խմբակը բաղկացած է եղել 5 հոգուց, որի կազմում բացի իրենից մտել են նաեւ Ղ-ն, Ո-ն, Մ-ն, Ճ-ն :

Տես հատոր 5-րդ գթ. 200-207, 208-218, 218-230, 231-239, 240-243, 244-253, 254-255-268, 275-281, 282-287, 288-291, 293-294, 295-299 հատոր 6-րդ գթ. 1-7, 8-12, 14-20, 21-22 եւ դատական նիստի արձանագրությունը:

Ամբաստանյալ Մերուժան Հովհաննիսյանը իր մյուս համախոհների հետ միասին կազմակերպել է բազմաթիվ գաղտնի հավաքույթներ, որոնց ինքը ակտիվ մասնակցություն է ունեցել կամ իր ելույթներով կամ իրենց բովանդակությամբ ազգայնական հակասովետական հոդվածներ եւ նյութեր մատակարարելով: Գաղտնի խմբակների կազմակերպած 30 հավաքներից, բացառությամբ 5-6 մնացածին ինքը մասնակցել է: Ամբաստանյալ Հովհաննիսյանը իրեն ազգայնական եւ հակասովետական հայացքները ագիտացիայի եւ պրոպոգանդայի միջոցով տարածել է իրենց համախոհների շրջանում, ինքը հավաքույթներում կարդացել եւ տարածել է «Այսօր Վարիայից ստացա» Սկաչկոյի հոդվածի դեմ գրված «Մայիսի 28-ը» «Հայկական դատի 85 տարին» եւ ամբաստանյալ Ամիրջանյանի կողմից գրված հոդվածները:

Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Զվարթնոցում կազմակերպված հավաքույթում, որտեղ մասնակցել են շուրջ 20 հոգի, ելույթ է ունեցել ամբաստանյալ Խաչիկ Սաֆարյանը, իսկ Նորքում Յ-ի տանը հավաքույթում մասնակցել եւ ելույթ է ունեցել խորհրդի անդամ Եղյանը, որին անձամբ, որպես խորհրդի անդամի ներկայացրել է Հովհաննիսյանը, կազմակերպելով ղեկավար անդամի հանդիպումը համախոհների հետ:

Ամբաստանյալ Հովհաննիսյանը լիովին համամիտ է եղել «Այսօր Վարիայից ստացա» բառերով սկսվող հոդվածի բովանդակությանը եւ ջանքեր չի խնայել այն պրոպագանդելու համար:

Հովհաննիսյանի բնակարանում հրավիրված հավաքույթներից մեկում ընտրվել է խորհուրդ, որի կազմում բացի իրենից ընտրվել են նաեւ Գրիգոր Եղյանը, Խաչիկ Սաֆարյանը, Կարապետ Քիրամիջյանը, Խաչիկ Ամիրջանյանը եւ Ն-ն: Հավաքույթում նախատեսվել է կազմակերպության համար ծրագիր մշակել որպիսի պարտականությունը դրվել է Խաչիկ Ամիրջանյանի եւ Խաչիկ Սաֆարյանի վրա:

Այդ հավաքույթում քննարկվել է նաեւ անդամավճար հավաքելու եւ անդամատոմս ունենալու հարցը: Անդամատոմսեր ձեռք բերելու ուղղությամբ կոնկրետ քայլեր է ձեռնարկել Հովհաննիսյանը, նա այդ նպատակի համար Էջմիածնի տպարանից վերցրել է շուրջ 100 թերթիկներ (տոմսերի միջուկների համար), սակայն նրա լիակատար ավարտ-

մանը չի հասել - նկատի ունենալով, որ խորհրդի մյուս անդամները դեմ են եղել այդպիսի փաստաթուղթ ստեղծելուն, վախենալով, որ կարող են բռնվել եւ ցանկացել են ունենալ մի քանի հատ տոմսեր միայն պրոպագանդայի նպատակով օգտագործելու:

Ամբաստանյալ Հովհաննիսյանը գաղտնի հավաքույթներում պրոպագանդել է «անկախ» Հայաստան ստեղծելու գաղափարը եւ այդպիսի «անկախ» հանրապետությունը պետք է լինի ըստ նրա առանց Սովետական կարգի: «Ինձ համար նախընտրելի է,- հայտարարեց նա դատական նիստում,- որ Հայաստանում լինեն բուրժուա-ազգայնական (նացիոնալիստական) կարգեր»:

Ամբաստանյալ Հովհաննիսյանը ամբաստանյալ Բաբայանի հետ միասին «Նաիրի» շաբաթաթերթից օգտվելով կազմել են «Մայիսի 28-ը» խորագիրը կրող ազգայնական հակասովետական հոդվածը, անձամբ ինքը գրել է «Հայկական դատի 85 տարին» հոդվածը, որտեղ մի շարք զրպարտչական հայտարարություններ է թույլ տվել Սովետական Հայաստանի հասցեին:

Մյուս ամբաստանյալներից Քիրամիջյանի եւ Բաբայանի հետ տպարան ունենալու հարցում համակարծիք լինելով հանդերձ, Հովհաննիսյանը առաջինն է եղել, որ գործնական քայլեր է ձեռնարկել ստեղծվելիք տպարանի համար տառեր եւ տպագրական մեքենայի մասեր ձեռք բերելու գործում:

Մերուժան Հովհաննիսյանը էջմիածնի բնակիչ Շ-ին հանձնարարել է պատրաստելու երկու հատ գլան տպագրական մեքենայի համար, որին անդամավճարների գումարից վճարել է 20 ռուբլի: Քննությամբ եւ ամբաստանյալի խոստովանությամբ հիմնավորված է, որ նա հափշտակել է շուրջ 25 կգ. տպատառեր, որոնց թաքցնելու աշխատանքներին, սկսած Գեղարդի լեռների թաքստոցից հանելուց մինչեւ Գրիգոր Եղյանի խցում եւ գործով վկա Ս-ի բնակարանում թաքցնելու պահը անձամբ մասնակցել է:

Մինչեւ տպագրական մեքենա ձեռք բերելը, զանազան ճանապարհներով մի շարք գրամեքենաներ են ձեռք բերել, որոնցից մեկը եղել է Հովհաննիսյանի բնակարանում, այդ մեքենայի վրա ինքը անձամբ մեքենագրել է իրեն կողմից գրված «Հայկական դատի 58 տարին» եւ Եղյան Գրիգորի «Տեսություն մարդկային պատմության մասին» հոդվածները:

Տեղի ունեցած մի շարք հավաքույթներում խոսվել է զենք ձեռք բերելու մասին, այս հարցով մյուս ամբաստանյալներ Բաբայանի եւ Քիրամիջյանի հետ միասին ակտիվ գործունեություն է ծավալել նաեւ Հովհաննիսյանը, սակայն զենք ձեռք բերել չի հաջողվել:

Ամբաստանյալ Հովհաննիսյանը Քիրամիջյանի հետ միասին առանձնակի մտահոգություն է ցուցաբերել նոր համախոհներ հավաքագրելու գործում, հավաքագրվածներին ժամանակին զգուշացվել է՝ աշխատանքը գաղտնի եւ զգույշ կատարելու համար: Անձամբ հավաքագրել է մի շարք անձնավորությունների:

Ամբաստանյալ Հովհաննիսյանը ակտիվ աշխատանք է կատարել անդամավճարներ սահմանելու եւ գանձելու ուղղությամբ, ըստ ամբաստանյալի կարծիքի անդամավճարները անհրաժեշտ են հոդվածներ բազմացնելու եւ տարածելու ծախսերը հոգալու, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ գաղտնի խմբի անդամների ընտանիքներին օգնելու համար: Նա անձամբ մասնակցություն է ունեցել անդամավճարների հավաքման եւ հավաքված դրամական միջոցները ծախսելու հարցում, այսպես 20 ռուբլի տվել է տպագրական մեքենայի մասեր ձեռք բերելու, 60-70 ռուբլի, որը ըստ մեղադրական եզրակացության վերագրվում է , որ յուրացվել է նրա կողմից, սակայն դատաքննությամբ հիմնավորվեց հակառակը, որ այդպիսին նույնպես ծախսվել է գաղտնի խմբի կարիքների համար: Ամբաստանյալը աշխատել է կապ հաստատել նաեւ արտասահմանի հետ, նա ամբաստանյալ Եղյանի հետ միասին աշխատել է արտասահման ուղարկել

«Այսօր Վարիայից ստացա» բառերով սկսվող հակասովետական ազգայնական բովանդակությամբ հոդվածը եւ մի շարք բանաստեղծություններ, մինչ այդ նա ճեմարանի ուսանող Կ-ի միջոցով արտասահման է ուղարկել նաեւ գործով մյուս ամբաստանյալ Բաբայանի «Կտակ հայ որդուն» պոեմը, որը տպագրվել է «Սփյուռք» շաբաթաթերթում եւ Փարիզի դաշնակցական երիտասարդական «Հայաստան» թերթում, չնայած ամբաստանյալ Հովհաննիսյանը իր պաշտպանական ճառում ժխտեց՝ պոեմը իր կողմից արտասահման ուղարկված լինելու փաստը, բայց քանի որ նախաքննության ընթացքում նա բազմիցս ցուցմունք է տվել այդ մասին, վերջին բացատրությունը կոլեգիային հավատ չի ներշնչում, ամբաստանյալ Հովհաննիսյանը հանձնարարություն է տվել գործով վկա Հ-ին, արտասահմանում ձեռք բերելու եւ իրեն հանձնելու դաշնակցական պարտիայի ծրագիրը:

Տես հատոր 4-րդ գթ. 222-226, 227-228, 229-232, 233-238, 239-244, 245-250, 250-253, 254-260, 261-264, 267-269, 270-271, 272-277 277-286, 287-291, 292-296, 297-300 հատոր 5-րդ գթ. 1-7, 8-11, 13-18, 19-23, 24-27,30-32, 33-37, 38-40 43-44, 45-46, 47-51, 52-55, 59-60, 67-71, 72-77 78-81, 82-86, 87-89, 90-94, 95-98, 99-102, 103-105 106-108, 109-111, 112-123 եւ դատական նիստի արձանագրությունը:

Այսպիսով ամբաստանյալներ՝ Խաչատուր Ջումշուդի Ամիրջանյանը, Խաչիկ Էլոյի Սաֆարյանը, Վիգեն Ասատուրի Բաբայանը, Գրիգոր-Հովհաննես Հակոբի Եղյանը, Էդուարդ Վարդանի Կակոսյանը, Կարապետ-Կարո Պողոսի Քիրամիջյանը, ու Մերուժան Արտաշեսի Հովհաննիսյանը կատարել են հանցանք, որը նախատեսված է Հայկ. ՍՍՌ քրեական օրենսգրքի 65 հոդ. 1-ին մասով եւ 67 հոդվածով: Դատական կոլեգիան միաժամանակ հաշվի առավ այն հանգամանքը, որ ամբաստանյալները ինչպես նախաքննությամբ, այնպես էլ դատաքննությամբ ընդունեցին եւ զղջացին իրենց կատարած հանցանքը, ուստի ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով Հայկական ՍՍՌ քրեական դատավարության օրենսգրքի 293-294 հոդվածներով

ՎՃՌԵՑ

Էդուարդ Վարդանի Կակոսյանին ճանաչել հանցավոր Հայկական ՍՍՌ քր. օրենսգրքի 65 հոդ. 1-ին մասով եւ 67 հոդվածով եւ 65 հոդվածի 1-ին մասով նրան ենթարկել ազատազրկման 1 տարի 6 ամիս ժամանակով, ընտրված խափանման միջոց կալանքը թողնել անփոփոխ եւ կալանքի սկիզբը հաշվել 30/12-1963 թվականից:

Գրիգոր-Հովհաննես Հակոբի Եղյանին եւ Կարապետ-Կարո Պողոսի Քիրամիջյանին հանցավոր ճանաչել Հայկ. ՍՍՌ քր օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով եւ 65 հոդվածի 1-ին մասով ՝ նրանցից յուրաքանչյուրին ենթարկել 2-ական տարվա ազատազրկման, ընտրված խափանման միջոց կալանքը թողնել անփոփոխ եւ կալանքի սկիզբը հաշվել Քիրամիջյան Կարապետի համար 29/12-1963թվականից, իսկ Եղյան Գրիգորի համար 29/12/1963 թվականից:

Խաչիկ Էլոյի Սաֆարյանին հանցավոր ճանաչել Հայկական ՍՍՌ քեական օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով եւ 65 հոդվածի 1-ին մասով նրան ենթարկել ազատազրկման 4 (չորս) տարի ժամանակով, խափանման միջոց կալանքը թողնել անփոփոխ եւ կալանքի սկիզբը հաշվել 29/12/-1963թվականից:

Միաժամանակ կոլեգիան զրկեց նրան Սովետական բանակի սպայի կրտսել լեյտենանտ կոչումից:

Վիգեն Ասատուրի Բաբայանին, Մերուժան Արտաշեսի Հովհաննիսյանին եւ Խաչատուր Ջումշուղի Ամիրջանյանին հանցավոր ճանաչել Հայկական ՍՍՌ քրեական օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով, 65 հոդվածի 1-ին մասով նրանցից յուրաքանչյուրին ենթարկել 5-ական տարվա (հինգ) ազատազրկման:

Խափանման միջոց կալանքը թողնել անփոփոխ եւ կալանքի սկիզբը հաշվել Վիգեն Բաբայանի համար 29/12-1963թվականից, Մերուժան Հովհաննիսյանի համար 29/12-1963 թվականից Խաչատուր Ամիրջանյանի համար 22/1-1964 թվականից, Խաչատուր Ամիրջանյանին զրկել Սովետական բանակի սպայի կրտսեր լեյտենանտ կոչումից:

Դատապարտյալներ Էդուարդ Վարդանի Կակոսյանին, Գրիգոր- Հովհաննես Հակոբի Եղյանին, Կարապետ- Կարո Պողոսի Քիրամիջյանին , Խաչիկ Էլոյի Սաֆարյանին, Վիգեն Ասատուրի Բաբայանին, Մերուժան Արտաշեսի Հովհաննիսյանին եւ Խաչատուր Ջումշուղի Ամիրջանյանին իրենց նկատմամբ ազատազրկման ձեւով սահմանված պատիժը Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության 1963թ. օգոստոսի 3-ի հրամանագրի 1-ին հոդվածի համաձայն, պետք է կրեն խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Գործով իրեղեն ապացույց հանդիսացող տպագրական մեքենաներից երկուսը, որից մեկը նո. 02869 «Մոսկվա» մարրկայի ռուսերեն տառերով, մյուսը՝ նո. 64333 «Կոնտինենտալ» մարկայի հայերեն տառերով, որոնք պատկանում են Երեւանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտին, վերադարձնել ինստիտուտին:

Մեկ «Մերսեդես» մարկայի նո. 68824 մեքենան, որը վերցված է ամբաստանյալ Մերուժան Հովհաննիսյանի մոտից, որը հափշտակված է Ավտոդետալ գործարանից վերադարձնել գործարանին:

Ամբաստանյալ Վիգեն Բաբայանին պատկանյալ «Մոսկվա» մարկայի նո. 20029 գրամեքենան եւ գործով վկա Ռ-ին պատկանող նո. 69333 գրամեքենաները բռնագրավել որպես հանցագործության գործիքի:

Էջմիածնի գիտությունների ակադեմիայի տպարանից հափշտակված տառերը եւ տպագրական այլ մասերը վերադարձնել տպարանին:

Գործով իրեղեն ապացույց «Մաուզեր» սիստեմի ատրճանակը իր 17 փամփուշտներով եւ փամփուշտների 2 պահունակներով, որը վերցված է գործով վկա Ջ-ի մոտից հանձնել հասարակական կարգի պահպանության մինիստրությանը:

Մյուս իրեղեն ապացույցները՝ գրքերը, հոդվածները, ոտանավորները, գրագրությունները, եւ գրավոր մնացած բոլոր փաստաթղթերը, որոնք չեն անցնում գործի նյութերով, ինչպես նաեւ տպագրական մեքենայի պատրաստված բոլոր մասերը հանձնել պետական անվտանգության կոմիտեին ի տնօրինություն:

Դատավճիռը վերջնական է եւ բեկանման կարգով գանգատարկման ենթակա չէ: Հսկողական կարգը բացատրված է դատապարտյալներին:

Նախագահ՝ **Էդ. Սիմոնյան**
Ատենակալներ՝ **Կ. Յանիկյան, Հ. Արիստակեսյան**

Եռամյա դադար

1964 թ. օգոստոսից մինչեւ 1967-ի մայիսը Հայաստանում քաղաքական դատավարություններ գրեթե չեն ընթացել: Պատճառը, թերեւս, այն էր, որ ընդհատակյա եւ կիսաընդհատակյա զարգացումները տեղավորվում էին իշխանությունների նախանշած թույլատրելիության սահմաններում: Դրանք, որպես կանոն, կրում էին ընդգծված հայրենասիրական բնույթ եւ չէին հակադրվում խորհրդային իշխանություններին: Սակայն, 1965 թ. ապրիլի 24-ին կայացած ցույցը գլխիվայր շրջեց ամեն ինչ, ջարդեց բազմաթիվ տաբուներ: Այդ ցույցից հետո հանրությունը, հատկապես քաղաքական այլախոհական պայքարի մեջ ընդգրկված մարդիկ սկսում են գիտակցել, որ կարելի է եւ կարո՛ղ են հակադրվել գործող կարգերին, որ հազարավոր մարդիկ պատրաստ են դուրս գալ փողոց եւ իշխանություններին ստիպել նահանջել: Այլախոհների շրջանում սկսում է ձեւավորվել այն համոզմունքը, որ հայ ժողովրդի կորուստների համար մեղավոր է նաեւ Խորհրդային Միությունը: 1967 թ. մայիսի 10-ին տեղի է ունենում **Ֆրունզիկ Աբրահամի Մկրտչյանի** եւ **Սերգեյ Անդրանիկի Մելքոնյանի** դատավարությունը: Յուրաքանչյուրը 10 ամիս ազատազրկման է դատապարտվում: Պատիժը մեղմ էր, որովհետեւ նրանց դեռ չէր հաջողվել շատ բան անել: Մկրտչյանը եւ Մելքոնյանը մեղադրվում են երիտասարդներից բաղկացած ազգայնական-հայրենասիրական խումբ ստեղծելու, ԽՍՀՄ-ում տարվող ազգային քաղաքականությունը քննադատելու, ինքնուրույն Հայաստան ունենալու անհրաժեշտության մասին բանավոր զրույցներ ունենալու, կուսակցություն ստեղծելու ծրագիր մշակելու համար:

Այս գործով կայացված դատավճիռը Ազգային անվտանգության ծառայության արխիվից մեզ ստանալ չհաջողվեց: ԱԱԾ-ն մերժեց նրանց դատավճիռը մեզ տրամադրելու խնդրանքը՝ պատճառաբանելով, որ չունենք դատապարտվածների կամ նրանց ժառանգների համաձայնությունը: Ցավոք, Մկրտչյանին, Մելքոնյանին կամ նրանց ժառանգներին գտնելու մեր փորձերն արդյունք չտվեցին:

1965թ. ապրիլի 24-ի ցույցի լուսանկարներից: Վերցված են imyerevan.com կայքից:

Զավեն Հարությունյան

Ֆրունզիկ Մկրտչյանի եւ Սերգեյ Մելքոնյանի դատավարությունից չորս ամիս անց՝ 1967-ի սեպտեմբերի 4-15-ը տեղի է ունենում Զավեն Հարությունյանի դատավարությունը:

1965 թ. ապրիլի 24-ի ցույցի ժամանակ Զավեն Հարությունյանը փողոց ելած բազմության առաջին շարքերում էր: Նաեւ այդ երթն է ելակետ դարձել, որ Մատենադարանի գիտաշխատող Հարությունյանը սկսի զբաղվել ազգային-հայրենասիրական բնույթի գրականության պատրաստմամբ, հայթայթմամբ ու տարածմամբ: 1966-ի սկզբներին՝ արդեն պաշտոնապես նա հրավիրվում է Պետանվտանգության կոմիտե ու նախազգուշացվում իր հակաօրինական գործունեության համար: ՊԱԿ-ին հաջողվել էր տեղեկություններ հայթայթել այն մասին, որ նա զբաղվում է «քաղաքականապես վտանգավոր բովանդակությամբ» գրականության տարածմամբ: Սակայն, հենց նույն թվականի մարտ ամսին, այսինքն՝ ՊԱԿ-ի նախազգուշացումից կարճ ժամանակ անց, նա ստեղծում է բարձր դասարանի դպրոցականներից կազմված պատանեկան հայրենասիրական խմբակ՝ «Հայոց պատանիների միություն» անվամբ, իր ծրագրով ու կանոնադրությամբ: Խմբակի ծրագրային դրույթները չէին հակադրվում կոմունիստական գաղափարախոսությանն ու սոցիալիզմի դրույթներին: Գլխավոր խնդիրներն էին՝ Ղարաբաղի ու Նախիջեւանի վերամիավորումը Սովետական Հայաստանին եւ հայոց լեզվի անաղարտության պահպանումը: Կազմակերպությունը հիմնականում զբաղվում էր հայրենասիրական բովանդակությամբ թռուցիկների տարածմամբ: Նույնիսկ Զավեն Հարությունյանի նկատմամբ կայացված դատավճիռն է արձանագրում, որ «նշված թռուցիկներն իրենց բովանդակությամբ բացահայտ հակասովետական բնույթ չեն կրում, բայց այդ թռուցիկները կազմելու եւ տարածման անթույլատրելի երեւույթը ըստ էության հակապետական են, խորթ եւ անընդունելի մեր հասարակության համար»: Ինքը՝ Հարությունյանը, դատարանի դահլիճում հայտարարում է, որ իրեն հակասովետական ագիտացիայի եւ պրոպագանդայի համար դատապարտելը սխալ է, որովհետեւ ինքը չի հակադրվել ու չի հակադրվում սովետական իշխանությանը եւ կարգերին: Միայն մեկ անգամ է Զավեն Հարությունյանը հստակ հակադրվում ԽՍՀՄ-ի հայտարարած քաղաքական կուրսին՝ երբ 1966 թ. դեկտեմբերի 22-ին «Սովետական Հայաստան» թերթում հրապարակվում է ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահի հայտարարությունը՝ Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու մասին: Դրան ի պատասխան՝ Զավեն Հարությունյանը կազմում է նոր թռուցիկ՝ «Ամանորյա կոչ հայ ժողովրդին», որտեղ կոչ է արվում հայ ժողովրդին՝ պայքարի դուրս գալ իր ոտնահարված իրավունքների վերականգնման համար: Այդ թռուցիկներից ավելի քան 1000 օրինակ՝ իր ստեղծած պատանեկան խմբակի տղաների միջոցով, նա հաջողում է դեկտեմբերի 31-ի գիշերը տարածել Երեւան ու Վանաձոր քաղաքներում: Բացի «Հայոց պատանիների միություն» կազմակերպության անունից հրապարակված եւ «ՀՊՄ» ստորագրված թռուցիկներից, Զավեն Հարությունյանի առաջարկով՝ պատանիների միության անդամները տարածել են նաեւ «Բոլոր հայերին» վերնագրով թռուցիկ՝ «Հայաստանի վերամիավորման շարժման կենտրոնական խորհուրդ» ստորագրությամբ:

Զ. Հարությունյանը, դատելով դատավճռից եւ ի մի բերելով նրա ծանոթների եւ այդ շրջանում նրան առնչված մարդկանց հուշերը, բացի «Հայոց պատանիների միության» անդամներից, կապ է ունեցել նաեւ այլ մարդկանց ու խմբակների հետ, բայց նրանց ով

լինելը քննությունը պարզել չի կարողացել՝ նախաքննության ընթացքում Հարությունյանի դրսեւորած ճիշտ կեցվածքի շնորհիվ: Այսպես, իր թռուցիկներից մեկը, որը տվել էր բազմացման ու տարածման նպատակով, ստորագրված էր «Հայաստանի վերամիավորման շարժում», որի գործունեությանը մասնակցելու համար մեղադրվել են ավելի ուշ դատապարտված Մարտին Նալբանդյանը եւ նրա համախոհները: Այս կազմակերպության հետ առնչություններ է ունեցել նաեւ «Հանուն Հայրենիքի» ամսագրի գործով 1969 թ. դատապարտված Գեւորգ Հեքիմյանը: Քննության սկզբում Հարությունյանը հրաժարվել է նաեւ «Հայոց պատանիների միության» հետ իր առնչությունից՝ հուսալով, որ Պետանվտանգության կոմիտե տարված պատանիները կասեն, որ ոչնչից տեղյակ չեն: Սակայն, չեկիստների եւ ծնողների ճնշման տակ նրանք տալիս են Զավեն Հարությունյանի դեմ պահանջվող ցուցմունքներ, եւ վերջինս ստիպված է լինում ընդունել, որ կապ է ունեցել այդ պատանեկան կազմակերպության հետ: Ե՛վ նախաքննության, ե՛ւ դատաքննության ընթացքում Հարությունյանն իրեն մեղավոր չի ճանաչում եւ հայտարարում է, որ հակաօրինական ոչ մի քայլ չի արել:



Զավեն Հարությունյան
լուս. քր. գործից



Զավեն Հարությունյան

Զավեն Եղիշի Հարությունյանը ծնվել է 1936 թ., Երեւան քաղաքում: Կրթությունը՝ բարձրագույն: Մասնագիտությամբ՝ պատմաբան: Մինչեւ կալանավորվելն աշխատել է Մատենադարանում: Գրել է ազգային-հայրենասիրական բովանդակությամբ թռուցիկներ, կազմակերպել է դրանց տպագրման, բազմացման ու տարածման աշխատանքները: Բազմացրել ու տարածել է արգելված գրականություն: Կալանավորվել է 1967-ի հունվարի 8-ին: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Դատապարտվել է ազատազրկման երեք տարի ժամկետով: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Հայաստան, եղել է ոստիկանական հսկողության տակ: Արգելել են աշխատել Մատենադարանում: Աշխատանքի է տեղավորվել Հանրագիտարանի խմբագ-

րությունում: 1984 թ. մեկնել է ԱՄՆ՝ մշտական բնակության: Այնտեղ էլ հիվանդացել է քաղցկեղով: 1986-ին՝ արդեն քայքայված առողջությամբ այցելում է Հայաստան ու վախճանվում Երեւանում:

Զավեն Հարությունյանի գործով կայացված դատավճիռը

Այս դատավճռում ԱԱԾ կողմից ջնջված վկաների անունների փոխարեն կամայական տառեր են նշված: Մեզ հաջողվել է ճշտել միայն 3 վկաների անուններ եւ լրացնել, իսկ մնացածը թողել ենք այնպես, ինչպես կա:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1967 թվի սեպտեմբերի 4-15-ին

Նախագահությամբ՝	**Ա. Եղիազարյանի**
Ատենակալներ՝	**Տ. Խ. Հակոբյան**
	Զ. Ս. Ալավերդյան
Քարտուղարությամբ՝	**Ա. Ավագյանի**
Մասնակցությամբ՝	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Գ. Ղամարյանի**
Դատապաշտպան՝	**Մովսիսյան**

Քննության առնելով դատական դռնփակ նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝

Զավեն Եղիշեի Հարությունյանի, ծնվել է 1936 թվականին Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, ամուրի, խնամքին մեկ անձ՝ մայրը, նախկինում չդատված, բարձրագույն կրթությամբ, աշխատել է հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (մատենադարանում) որպես կրտսեր գիտական աշխատող, բնակվել է Երեւանի Նոյեմբերյան փողոցի նո. 125 տանը: Սույն գործով կալանքի տակ է 1967 թվականի հունվարի 8-ից:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրենսգրքի 65 հոդվածի առաջին մասով եւ 67 հոդվածով:

Դատաքննությամբ, վկաների ցուցմունքներով, իրեղեն ապացույցներով, եւ գործի բոլոր փաստական տվյալներով գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան գտավ ապացուցված հետեւյալը՝

Ամբաստանյալ Զավեն Հարությունյանը դեռեւս 1966 թվականի սկիզբները քաղաքականապես վտանգավոր բովանդակությամբ գրականություն տարածելու համար մարտ ամսին կանչվել է ՀՍՍՀ Պետական անվտանգության կոմիտե եւ նախազգուշացվել անթույլատրելի արարքի համար:

Ընդունելով, որ իր այդ արարքը իրոք անթույլատրելի է, Հարությունյանը խոստացել է վերջ տալ եւ այլեւս չկրկնել:

Սակայն, այդ նախազգուշացումից շատ չանցած նույն 1966 թվականի մարտ ամսին ամբաստանյալ Զավեն Հարությունյանը իր տանը հանդիպելով Երեւանի նո. 3 դպրոցի աշակերտ գործով վկա Ասատուր Գասպարյանին նրա հետ զրույցի է բռնվում ազգայնական հարցերի շուրջ: Ասատուր Գասպարյանը այդ զրույցի ընթացքում հայտնում է, որ իրենց դասարանի աշակերտներից մի քանիսը նույնպես հետաքրքրվում են ազգային հարցերով, մտադիր են կազմակերպել մի խմբակ «Հայաստանի պատանիների միություն» անունով, որը պետք է զբաղվի հայոց պատմության ուսումնասիրմամբ, կազմի ու տարածի հայ երեխաներին միայն հայկական դպրոց տանելու, Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայաստանին միացնելու կոչ պարունակող թռուցիկներ: Ասատուր Գասպարյանը հայտնում է ամբաստանյալ Զավեն Հարությունյանին, որ ինքը այդ գաղտնիքը վստահում է նրան, որովհետեւ տեսել է իրեն 1965 թվականի ապրիլի 24-ին փողոցում շարժվող բազմության առաջին շարքերում:

Զավեն Հարությունյանը ունենալով բարձրագույն կրթություն, հանդիսանալով մատենադարանի կրտսեր գիտաշխատող, իր ընդհանուր պատրաստակամությամբ շատ ավելի բարձր մակարդակի տեր, փոխանակ համոզելու եւ ետ կանգնեցնելու Ասատուր Գասպարյանին իր անթույլատրելի գործողություններից հավանություն է տալիս նրա սխալ մտայնություններին: Ավելին, օտվելով աշակերտ Ասատուր Գասպարյանի քաղաքական անհասությունից ավելի է բորբոքում նրան եւ հավանություն է տալիս աշակերտներից անլեգալ խմբակ կազմակերպելու եւ թռուցիկներ տարածելու գաղափարին:

Ամբաստանյալ Զավեն Հարությունյանի նման վերաբերմունքը եւ կարծիքը թեւավորում է Գասպարյանին, որը կարճ ժամանակում իրենց դասարանի աշակերտներից կազմակերպում է համախոհների անլեգալ մի խումբ, որը ինքն իրեն անվանում է «հայաստանի պատանիների միություն» եւ խմբակի մեջ են ներգրավվում աշակերտներ Կ-ն, Ս-ն, Խ-ն, Մ-ն, Ն-ն, Ի-ն եւ ուրիշներ թվով 15 աշակերտ:

Այդ խմբակը իր ահավաքույթներում մշակում է ծրագիր եւ կանոնադրություն, որը Գասպարյանի կողմից ներկայացվում է ամբաստանյալ Զավեն Հարությունյանին, նրա հավանությանն ստանալու համար: Զավեն Հարությունյանը խրախուսում է այդ նախաձեռնությունը եւ հավանություն տալիս անլեգալ խմբակի ծրագրին միայն «Հայաստանի պատանիների միություն» անվան մեջ «Հայաստան» բառը փոխարինելով «հայոց» բառով: Դրանից հետո Ասատուր Գասպարյանը հայտնում է խմբակի անդամներին, որ կա մի մարդ, որը ուղղություն է տալիս իրենց խմբակի գործողություններին:

Այս բոլորից հետո ամբաստանյալ Զավեն Հարությունյանը փաստորեն ստանձնում է նշված անլեգալ խմբակի ղեկավարի դերը, այսպես, օրինակ՝ 1966 թվականի ապրիլի 24-ի նախօրյակին Ասատուր Գասպարյանը Հարությունյանին է ներկայացնում «կոչ հայ ժողովրդին» վերնագրով «ՀՊՄ» ստորագրությամբ տեքստը: Հարությունյանը մշակում եւ խմբագրում է այդ տեքստը, հանձնարարում է Գասպարյանին բազմացնել այն զգուշացնելով, որ իրենց կողմից ձեռնարկվեն բոլոր նախազգուշական միջոցները, որպեսզի համապատասխան օրգանները չկարողանան հայտնաբերել թռուցիկը կազմողներին եւ տարածողներին: Ընդորում, «կոչ հայ ժողովրդին» թռուցիկի տեքստի հետ ամբաստանյալ Զավեն Հարությունյանը Գասպարյանին տալիս է «բոլոր հայերին» վերնագրով «Հայաստանի վերամիավորման շարժման կենտրոնական խորհուրդ» ստորագրությամբ կոչ թռուցիկը 100 օրինակից ավելի հանձնարարելով այն նույնպես

տարածել Երեւան քաղաքում, որը եւ կատարվում է ՀՊՄ խմբակի անդամների կողմից 1966 թվականի ապրիլի 24-ին (հատոր 3 գբ. 54, 220):

1966 թվականի օգոստոսին Գասպարյանը հայտնում է ամբաստանյալ Զավեն Հարությունյանին, որ իրենք մտադիր են ուսումնական տարին սկսելուց առաջ թռուցիկներ տարածել Երեւանում այն մասին, որ հայերը իրենց երեխաներին սովորելու ուղարկեն միայն հայկական դպրոցներում: Զավեն Հարությունյանի համաձայնությամբ Գասպարյանը ներկայացնում է «կոչ հայ ժողովրդին» վերնագրով «հայոց պատանիների միություն» ստորագրությամբ նոր թռուցիկի սեւագիր տեքստը, որը Հարությունյանի կողմից վերջնականապես խմբագրվելուց հետո բազմացվում է ու տարածվում Երեւանում հայրուրավոր օրինակներով:

Դրանով չբավարարվելով, Զավեն Հարությունյանը ինքը անձամբ կազմում է «կոչ հայ մեծ ժողովրդին» վերնագրով եւ «հայոց դատ» ստորագրությամբ մի թռուցիկ, որը նույնպես լուսապատճենահանման միջոցով մի քանի հայրուր օրինակ բազմացվում եւ տարածվում է Գասպարյանի ու խմբակի մյուս անդամների կողմից (հատոր 3, գբ. 112):

Չնայած նշված թռուցիկները իրենց բովանդակությամբ բացահայտ հակասովետական բնույթ չեն կրում, բայց այդ թռուցիկները կազմելու եւ տարածման անթույլատրելի երեւույթը ըստ էության հակապետական են, խորթ եւ անընդունելի մեր հասարակության համար: Մանավանդ, որ դրանք կազմված են ոչ օբեկտիվ, միտումնավոր կերպով, նրանց մեջ աղավաղված է օբեկտիվ իրականությունը, որի հետեւանքով կարող էր անցանկալի տրամադրություններ առաջացնել անգիտակից որոշ անհատների եւ դեռեւս պատանիների մեջ: Թերեւս դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ թռուցիկները դժգոհություն են առաջացրել քաղաքացիների մեջ եւ վերջիններս իրենց փոստարկղերում հայտնաբերած թռուցիկները բերել եւ ներկայացրել են համապատասխան մարմիններին: Ներկայացված բազմաթիվ թռուցիկներ կցված են սույն քրեական գործին որպես իրեղեն ապացույց (հատոր 3 գբ.112):

1966 թվականի դեկտեմբերի 22-ին, երբ «Սովետական Հայաստան» թերթում տեղադրվել է ՍՍՀՄ մինիստրների Սովետի նախագահի հայտարարությունը թուրքիայից տերիտորիալ պահանջներ չունենալու մասին, ամբաստանյալ Զավեն Հարությունյանը կազմել է նոր թռուցիկ «ամանորյա կոչ հայ ժողովրդին» վերնագրով «հայոց դատ» ստորագրությամբ եւ իր ազդեցության տակ գտնվող Կ-ին, Պ-ին, Ասատուր Գասպարյանին, Տ-ին, ՈՒ-ին հատկապես թռուցիկը տարածելու հարցը քննարկելու նպատակով հավաքել է Ու-ի տանը, ընթերցել տեքստը եւ հանձնարարել մեծ քանակությամբ բազմացնելու եւ նոր տարվա նախօրյակին Երեւանում տարածելու համար: Այդ թռուցիկում Սովետական Կառավարության ղեկավարի հայտարարությունը դիտավորյալ կերպով մեկնաբանվում է սխալ դիրքերից եւ ընթերցողների մեջ սխալ դժգոհություն առաջացնելու նպատակով, միտումնավոր կերպով կոչ է արվում հայ ժողովրդին դուրս գալ պայքարի իբր թե՝ ոտնահարված իրավունքների վերականգնման համար: Կոչ, որը իր բովանդակությամբ զրպարտչական է եւ նպատակ է հետապնդում սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորելու (հատոր3, գբ 158):

«Ամանորյա կոչ հայ ժողովրդին» լուսապատճենահանվել է 1000 օրինակից ավելի եւ տարածվել Երեւան ու Կիրովական քաղաքներում 1966թ. դեկտեմբերի 31-ի երեկոյան Ասատուր Գասպարյանի Կ-ի Տ-ի Ր-ի Լ-ի եւ մյուսների կողմից:

Ամբաստանյալ Զավեն Հարությունյանը առանց հաշվի առնելու, որ Ասատուր Գասպարյանը, Խ-ն Ս-ն եւ մյուսները դեռ 18 տարին չբոլորած աշակերտներ են, ծանոթանալու համար նրանց է տվել Սկաչկայի «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆե-

ռանսում» հոդվածի վերաբերյալ ոմն Ֆ-ի մեքենագրված պատասխան-մեկնաբանությունը (հատոր 3 գբ. 178-218), որը իր ամբողջ բովանդակությամբ սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող զրպարտչական հոդված է, ուղղված Սովետական Միության արտաքին քաղաքականության, ազգերի իրավահավասարության, մարքս-լենինյան ուսմունքի դեմ:

Զավեն Հարությունյանը ծանոթանալու համար վկա Գասպարյանին է տվել նաեւ «կոչ բոլոր հայրենասեր հայերին - պայքարը պետք է շարունակվի» ռոտատորով բազմացված հոդվածը «Հայաստանի վերամիավորման շարժման կենտրոնական խորհուրդ» ստորագրությամբ: Գասպարյանն իր հերթին այդ հոդվածը ընթերցել է ՀՊՄ խմբակի անդամներ Կ-ի Խ-ի Ի-ի Մ-ի եւ մյուսների ներկայությամբ:

Նշված հոդվածում եւս բացահայտ պրովոկացիոն հարձակումներ են կատարվում Սովետական իշխանության արտաքին եւ ներքին քաղաքականության դեմ: Խոսվում է այն մասին, որ Սվետական Միության այլ հանրապետություններում բնակվող հայերը իբր թե՝ հալածվում են եւ ենթարկվում հարկադրյալ ձուլման: Աշակերտ Խ-ն, որը իր պատրաստականությամբ ի վիճակի չէր խորամուխ լինել եւ հասկանալ այդ հոդվածում տեղ գտած նենգափոխությունները եւ դրա վտանգավորությունը, «կոչ բոլոր հայրենասեր հայերին» հոդվածը արտագրել է աշակերտական տետրում եւ պահել իր մոտ (հատոր 3 գբ 168ա):

1966 թվականի գարնանը, ամբաստանյալ Զավեն Հարությունյանը, ըստ իր հայտարարության պետական գրավաճառից գնել է Լեւոն Շանթի «Մեր անկախությունը» գիրքը, որը տպագրվել է Բոստոն քաղաքում եւ Ռ-ին պատկանող Աստրա-2 մագնիտաֆոնով իր ընթերցանությամբ ձայնագրել է գրքի լրիվ տեքստը: Սկավառակի վրա ձայնագրված տեքստը ամբաստանյալի տանը լսել են Տ-ն Պ-ն ՈՒ-ն Ասատուր Գասպարյանը եւ Ն-ն:

Լեւոն Շանթը հանդիսանալով ռեակցիոն դաշնակցական կուսակցության ակտիվ գործիչ «Մեր անկախությունը» գրքում առաջ է քաշում «անկախ Հայաստան» ստեղծելու գաղափարը: Արդարացնելով դաշնակցական կուսակցության գործունեությունը Շանթը իր գրքում թույլ է տալիս պրովոկացիոն հերհուրանքներ սովետական կառավարության հասցեին (հատոր 3 գբ.247):

Բացի դրանից, ամբաստանյալ Զավեն Հարությունյանը 1966 թվականին նախաքննությամբ ի հայտ չբերված անձնավորությունից ձեռք է բերել «ինչ է հարկավոր» վերնագրով հոդվածը, որը իր մեջ պարունակում է հակասովետական, զրպարտչական հերուրանքներ: Հարձակումներ է թույլ տրվում ՍՍՀՄ-ում տարվող ազգային քաղաքականության, սովետական կարգերի հասցեին: Պայքարի է կոչում նրանց դեմ, ովքեր արգելք կհանդիսանան Հայաստանին այլ տերիտորիաներ միացնելը, ընդհուպ մինչեւ նրանց «շան տուր տալը» (հատոր 3 գբ.142-1057):

«Ինչ է հարկավոր» վերնագրով հոդվածի բովանդակության հետ իրենց տանը Զավեն Հարությունյանը ծանոթացրել է Տ-ին ՈՒ-ին Ասատուր Գասպարյանին Պ-ին եւ Ր-ին 1966 թվականի դեկտեմբերի սկզբներին հավաքույթներից մեկի ժամանակ:

Առաջադրված մեղադրանքում ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդվածի առաջին մասով եւ 67 հոդվածով ամբաստանյալ Զավեն Հարությունյանը իրեն մեղավոր չճանաչեց պատճառաբանելով, որ «հայոց պատանիների միություն» խմբակի կազմակերպման մեջ ինքը ոչ մի մասնակցություն չի ունեցել, որ «կոչ հայ ժողովրդին» վերնագրով թռուցիկների հեղինակը ինքը չի, որ իր կողմից անլեգալ հավաքույթներ չեն կազմակերպվել, «բոլոր հայերին» թռուցիկը եւ «բոլոր հայրենասեր հայերին» հոդվածը ինքը չի տվել Ասատուր

Գասպարյանին եւ որ ամենակարեւորն է իր գործողությունները ուղղված չեն եղել Սովետական իշխանության դեմ, ինչպես նաեւ իր այդ արարքը չպետք է դիտել որպես հակասովետական ագիտացիա կամ պրոպագանդա: Ամբաստանյալ Զավեն Հարությունյանը իրեն մեղավոր չճանաչեց ՀՍՍՀ քր. օր-ի 206[1] հոդվածով, այսինքն սովետական կամ հասարակական կարգը արատավորող հերիյուրանքներ տարածելու մեջ:

Հարությունյանի նման պատճառաբանությունները անհիմն են եւ հերքված գործի բոլոր տվյալներով:

Վկա Ասատուր Գասպարյանը դատաքննության ընթացքում հաստատեց, որ իր բոլոր գործողությունները «հայոց պատանիների միություն» անվամբ խմբակ կազմակերպելու վերաբերյալ համաձայնեցրել է ամբաստանյալ Զավեն Հարությունյանի հետ: Հարությունյանը չժխտեց, որ ինքը նույնիսկ «Հայաստան» սկզբնական բառը փոխարինել է «հայոց» բառով: Ա-ն Կ-ն Ս-ն եւ մյուսները հաստատեցին, որ Ասատուր Գասպարյանը իրենց տեղյակ է պահել, որ «կա մեկը» որը իրենց մշտապես օգնում է թռուցիկները կազմելու, տարածելու, ինչպես նաեւ հոդվածներ մատակարարելու գործում, եւ որ այդ «մեկը» հանդիսացել է ամբաստանյալ Զավեն Հարությունյանը:

Հարությունյանը դատաքննության ընթացքում չժխտեց, որ «կոչ հայ ժողովրդին» Գասպարյանի կողմից իրեն ներկայացված երկու թռուցիկների տեքստերը նախապես ուղղել է, որից հետո նոր վերադարձրել է բազմացման ու տարածման համար:

Նախաքննությամբ եւ դատաքննությամբ ապացուցվել է, որ թռուցիկները կազմելու եւ տարածելու գործում ամենաակտիվ դերը կատարել է ինքը- Զավեն Հարությունյանը: Նա է «կոչ հայ մեծ ժողովրդին» «կոչ հայ ժողովրդին» եւ «ամանորյա կոչ հայ ժողովրդին» վերնագրերով թռուցիկները տպագրելու է տվել գրամեքենայի վրա Պ-ին եւ Ժ-ին: Ամբաստանյալ Զավեն Հարությունյանը այդ երեք թռուցիկների գրամեքենայով տպագրած տեքստերը վարձատվությամբ ֆոտոժապավենի վրա լուսանկարելու է տվել մատենադարանի աշխատակցուհի Բ-ին որպիսի հանգամանքը հաստատեցին Դ-ն Պ-ն եւ Ժ-ն: Չժխտեց նաեւ ինքը ամբաստանյալը: Միայն ամբաստանյալ Զավեն Հարությունյանի նախաձեռնությամբ է գումարներ հավաքվել թռուցիկները բազմացնելու հետ կապված ծախսերը հոգալու համար: Օրինակ՝ դրամ է հավաքվել նաեւ աշակերտներ Ս-ից Ա-ից Կ-ից եւ մյուսներից, որոնք ոչ մի տեղ չեն աշխատել եւ գտնվել են նյութական սուղ պայմաններում: 1966 թվականի օգոստոս եւ դեկտեմբեր ամիսներին Զավեն Հարությունյանի առաջարկով լրաչուցիչ գումար է հավաքվել «կոչ հայ մեծ ժողովրդին» եւ «ամանորյա կոչ հայ ժողովրդին» թռուցիկները հայրուրավոր օրինակներով բազմացնելու համար:

Հարցաքննված վկա Արամ Բուդաղյանը հաստատեց, որ ամբաստանյալ Զավեն Հարությունյանը իրենից վերցրել է հայ պատմական դեմքերի ֆոտոժապավենը, որը հետագայում խմբակի անդամների կողմից օգտագործվել է նկարներ բազմացնելու համար: Այդ նկարների յուրաքանչյուրը 30 կոպեկով վաճառվել է դարձյալ թռուցիկներ տարածելու հետ կապված ծախսերը հոգալու համար:

Այս փաստը բացի Արամ Բուդաղյանը հաստատեցին վկաներ Ա-ն Կ-ն Ս-ն ՈՒ-ն եւ ուրիշներ, ինչպես նաեւ ամբաստանյալ Զավեն Հարությունյանը:

Երբ 1966 թվականի ամռան ամիսներին Գասպարյանը տեղյակ է պահել Զավեն Հարությունյանին, որ իրենց խմբակի որոշ անդամներ սկսել են տարակուսանքով վերաբերվել թռուցիկների տարածման գործին եւ ցանկանում են հեռանալ խմբից, Զավեն Հարությունյանը պատրաստակամություն է հայտնել հանդիպումներ ունենալ այդպիսիների հետ, առաջարկել է խմբակը բաժանել երկու մասի եւ աստիճանաբար ազատ-

վել ոչ վստահելի անդամներից, որը կատարվել է Ասատուր Գասպարյանի կողմից:

Ամբաստանյալ Զավեն Հարությունյանը երեք անգամ հանդիպում է ունեցել Կ-ի հետ: Հանդիպել է նաեւ Ս-ի հետ, որը սկսել էր ծաղրանքի ենթարկել «հայոց պատանիների միություն» խմբակը եւ նրա գործունեությունը ընդհանրապես: Հանդիպումների ժամանակ Հարությունյանը պահպանել է կոնսպիրատիվ միջոցներ, որպեսզի իր անլեգալ գործունեությունը չբացահայտվի: Նա զրույցի ժամանակ դարձյալ հորդորել է նրանց շարունակել իրենց անլեգալ աշխատանքը: Կ-ին Ս-ին եւ մյուսներին ծանոթացրել է իր համախոհներ՝ Պ-ի Տ-ի Ռ-ի հետ ու հավաքույթներ կազմակերպել ինչպես իրենց այնպես էլ Ռ-ի տներում: Ինքը՝ ամբաստանյալ Զավեն Հարությունյանը հաստատեց, որ թռուցիկները տարածելու, լուսապատճենահանելու, գումարներ հավաքելու ու հոդվածներ կարդալու նպատակով նրանք 5 անգամ հավաքվել են Ռ-ի տանը, մեկ անգամ Ր-ի եւ մի քանի անգամ իրենց տանը:

Ամբաստանյալ Զավեն Հարությունյանը նույնիսկ փորձել է թռուցիկների տեքստեր կազմելու մեջ ներգրավել մատենադարանի գիտաշխատող Շմավոն Սմբատյանին, որը ոչ միայն չի համաձայնվել Հարությունյանի առաջարկի հետ, այլ նույնիսկ խորհուրդ է տվել նրան ընդհանրապես չզբաղվել նման վնասակար գործունեությամբ:

Ամբաստանյալ Զավեն Հարությունյանը վճարով Արամ Բուդաղյանի միջոցով ֆոտոժապավենի վրա նկարահանել է Լեւոն Շանթի «Մեր անկախությունը» գիրքը, ժապավենը տվել է Ասատուր Գասպարյանին եւ բոլոր հնարավորությունները ստեղծել է այդ հակասովետական բովանդակությամբ գրքի լուսապատճենման համար: Այդ գիրքը բազմացվել է 4 օրինակից Ա-ի եւ Խ-ի տներում որից 2 օրինակ կազմել է ինքը, ամբաստանյալը, իսկ մեկ օրինակ 15 ռուբլով վաճառել է գործով վկա Շմավոն Սմբատյանին:

Նախաքննական օրգանը հաշվի առնելով Ասատուր Գասպարյանի, Կ-ի եւ մյուսների երիտասարդությունը, որ նրանք հանցանք են կատարել ընկնելով Հարությունյանի ազդեցության տակ նրանց մեղադրանք չի առաջադրել:

Այսպիսով կոլեգիան գտնում է, որ ինչպես թռուցիկների տեքստերի կազմելը, այնպես էլ նրանց բազմացման ու տարածման նախաձեռնողը եղել է ամբաստանյալ Հարությունյանը: Զավեն Հարությունյանն է ուղղություն տվել «հայոց պատանիների միություն» խմբակի բոլոր գործողություններին, նա է միջոցներ ձեռնարկել, որ խմբակը չդադարի գործելուց եւ հետագայում խմբակի ակտիվ մասնակիցներին ծանոթացրել է իր համախոհների հետ: Մատակարարել նրանց հակասովետական բովանդակությամբ հոդվածներով ու այլ գրականությամբ:

Ամբաստանյալ Զավեն Հարությունյանի այս արարքները դուրս են գալիս ՀՍՍՀ քր. օր-ի 206[1] հոդվածի շրջանակներից եւ բովանդակությամբ, բնույթով, էությամբ, գործելու եղանակով համընկնում են ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդվածի առաջին մասին եւ 67 հոդվածին, որի հիման վրա ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը այդ հոդվածներով կոլեգիան համարում է ապացուցված:

Կոլեգիան գտնում է, որ ամբաստանյալը իր այդ հանցավոր արարքներով ենթակա է խիստ պատժի, սակայն պատժաչափը որոշելիս հաշվի է առնվում, որ Հարությունյանը նախկինում դատված չի եղել, վատառողջ է եւ այն, որ նրա խնամքին է գտնվում զառամյալ մայրը:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՍՍՀ քր. դատ. օր-ի 293-294 հոդվածներով գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալ Ջավեն Եղիշի Հարությունյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդվածի առաջին մասով եւ 67 հոդվածով: 65 հոդվածի առաջին մասի սանկցայով նրան ենթարկել ազատազրկման երեք (3) տարի ժամկետով, թողնելով պատիժը կրելու ուժեղացված ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութներում: Կալանքի սկիզբը հաշվել 1967 թվականի հունվարի ութից:

Գործով իրեղեն ապացույցներ՝

1. «ինչ է հարկավոր» «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» «կոչ բոլոր հայրենասեր հայերին- պայքարը պետք է շարունակվի» վերնագրերով հակասովետական, ազգայնական բովանդակությամբ հոդվածները թողնել գործում:

2. Լեւոն Շանթի «Մեր անկախությունը» գրքի լուսապատճենված երկու օրինակները թողնել գործում: Գործում թողնել նաեւ այդ գրքի երկու սկավառակների վրա ձայնագրված մագնիտաֆոնի սկավառակները:

3. Լեւոն Շանթի «Մեր անկախությունը» լուսապատճենված մի մասը եւ թռուցիկները որոնք կարված են գործում թողնել գործի մեջ, իսկ ՊԱԿ-ում ի պահ հանձնված թռուցիկների մնացած տեքստերը ոչնչացնել:

5. Աստրա-2 մագնիտաֆոնը եւ նրա միկրաֆոնը վերադարձնել տիրոջը՝ Է-ին;

6. Հայկական շրիֆտի «Ուկրաինա» մակնիշի նո. 88320 գրամեքենան վերադարձնել Երեւանի նո 192 միջնակարգ դպրոցին:

7. Երեք ֆոտոսարքերը (ֆոտոուվելիչիտելները) վերադարձնել իրենց տիրոջը՝ Ա-ին Ի-ն եւ Մ-ին:

Ի պահ հանձնված թռուցիկների բոլոր տեքստերը ոչնչացնել:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող՝	**Ա. Եղիազարյան**
Ատենակալներ՝	**Խ. Հակոբյան, Ս. Ալավերդյան**
Ճիշտ է գործով նախագահող՝	**Ս. Եղիազարյան**

Հայաստանի վերամիավորման շարժում

1967 թ. նոյեմբերի 25-29-ին Երեւանում կայացել է այդ տարվա ընթացքում երրորդ քաղաքական դատավարությունը: 206[1] հոդվածով (սովետական պետական կամ հասարակական կարգը արատավորող ակնհայտ կեղծ հերյուրանքներ տարածելը) յոթ հոգանոց խումբ է դատապարտվում: Մինչ այդ՝ այս նույն տարվա մայիսին արդեն դատապարտվել էին **Մերգեյ Մելքոնյանը** եւ **Ֆրունզիկ Մկրտչյանը,** սեպտեմբերին՝ **Զավեն Հարությունյանը:** Այս անգամ մեղադրյալի աթոռին էին «Հայաստանի վերամիավորման շարժում» կազմակերպության անդամներ **Մարտին Սարգիսի Նալբանդյանը,** Երեւանի պետհամալսարանի ավագ գիտաշխատող **Ալբերտ Մկրտիչի Ղուբասարյանը,** նույն համալսարանի ուսանող **Սուրիկ Արտավազդի Սարգսյանը,** ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցիչ **Մկրտիչ Ռուբենի Մովսիսյանը,** ինժեներ **Արկադի Սերգեյի Հայրապետյանը,** ինժեներ **Ռուբեն Գուրգենի Սաֆարյանը,** տնտեսագետ **Իվան-Վանիկ Գրիգորի Ստեփանյանը:**

Այս խմբի անդամներից որեւէ մեկի կամ նրանց ժառանգներին գտնել չհաջողվեց: Հենց այդ պատճառաբանությամբ էլ ԱԱԾ-ում հրաժարվեցին մեզ տրամադրել նրանց նկատմամբ կայացված դատավճիռը: Որպես տեղեկատվության աղբյուր օգտագործել ենք Արմենակ Մանուկյանի «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988թթ.» գիրքը, այլ քաղբանտարկյալների նկատմամբ կայացված դատավճիռները, որոնց մեջ հիմնականում հիշատակվում է այս խմբի անդամ Մարտին Նալբանդյանը: Օգտվել ենք նաեւ Նալբանդյանի հետ առնչություններ ունեցած Շահեն Հարությունյանի հուշերից: Ցավոք, այս խմբի հետ սերտ համագործակցած «Հանուն Հայրենիքի» խմբի անդամներից ոչ ոք այսօր ողջ չէ. նրանց միջոցով հնարավոր կլիներ առավել լիարժեք տեղեկություններ տալ խմբի մասնակիցների մասին: 1968 թ. տպագրված «Հանուն Հայրենիքի» ամսագրում անդրադարձ կա այս գործով կայացած դատավարությանը՝ «Դատական կատակերգություն» վերնագրով: Հոդվածի հեղինակը Հովիկ Վասիլյանն է:

Խումբը պատրաստել եւ տարածել է Ղարաբաղի ու Նախիջեւանի խնդիրներին, ընդհանրապես՝ Հայկական հարցին անդրադարձող թռուցիկներ: Նրանք կարողացել են տպագրական միջոցներ հայթայթել եւ 1966-67 թթ. ընթացքում մեծ քանակությամբ թռուցիկներ տարածել: Այդ թռուցիկներում հեղինակները մեղադրում են խորհրդային կառավարությանը՝ Հայկական հարցը միտումնավոր չլուծելու, այդ հարցը սովետա-թուրքական դիվանագիտության մեջ ի վնաս հայ ժողովրդի օգտագործելու եւ հայ ժողովրդի իրավունքներն ու նվիրական զգացմունքները ոտնահարելու համար: Խմբի անդամներից Մարտին Նալբանդյանն ունեցել է երկար տարիների պայքարի փորձ եւ բազմաբնույթ կապեր՝ գործող տարբեր ընդհատակյա կազմակերպությունների եւ անհատների հետ: Իր գործունեությունը նա սկսել է 1963-64-ականներից: Առնչություններ է ունեցել այդ շրջանում գործող Հայաստանի երիտասարդական միության հետ: «Յոթ հայրենասերների» դատապարտումից հետո, ապագա ԱՄԿ հիմնադիրներից մեկի՝ Շահեն Հարությունյանի հետ նախաձեռնել է 1965-ին Եղեռնի 50-ամյակի կապակցությամբ թռուցիկների տպագրության ու տարածման գործը: Թռուցիկներում 1965թ. ապրիլի 24-ին ցույցի դուրս գալու կոչ է արվել: Շահեն Հարությունյանը հիշում է, որ Մարտին Նալբանդյանի հեղինակած թռուցիկները՝ 1965-ի մարտ-ապրիլ ամիսներին, ապրիլի 24-ին ընդառաջ, Մարտին Նալբանդյանի եւ Մերուժան Հովհաննիսյանի մորաքրոջ որդի

Ստյոպա Հակոբյանի հետ միասին բազմացրել են Երեւանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի լաբորատորիայում: Մարտին Նալբանդյանն ապագա «Հանուն Հայրենիքի» խմբի անդամ Գեւորգ Հեքիմյանի միջոցով 1967-ին ծանոթացել է Հովիկ Վասիլյանի հետ եւ նրան է փոխանցել երեք թռուցիկ՝ «Կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին», «1921թ. մարտի 16-ին Մոսկվայում» եւ «Հայի հոգում գարունն արթնացավ…» վերնագրերով: Վասիլյանն՝ իր հերթին, իր համախոհներ Շիրակ Գյունաշյանի եւ Լեւոն Առուշանյանի հետ դրանք տարածել է Երեւան ու Աբովյան քաղաքներում:

Չնայած այն հանգամանքին, որ Մարտին Նալբանդյանը եւ խմբի մյուս անդամներն ունեցել են կազմակերպություն, կարողացել են ծավալել լուրջ գործունեություն, պատրաստել եւ տարածել բազմաքանակ թռուցիկներ, կապ են ունեցել այլ կազմակերպությունների ու անհատների հետ, իրենց ծավալած գործունեության համեմատ նրանք դատապարտվեցին նկատելիորեն մեղմ պատժաչափերի: Սուրիկ Սարգսյանը դատապարտվեց 1 տարի 6 ամիս ժամկետով, Ալբերտ Ղուբասարյանը՝ 2 տարի, Մկրտիչ Մովսիսյանը՝ 1 տարի, Արկադի Հայրապետյանը՝ 2 տարի, Ռուբեն Սաֆարյանը՝ 2 տարի 6 ամիս, Իվան-Վանիկ Ստեփանյանը՝ 2 տարի 2 ամիս, Մարտին Նալբանդյանը 2 տարի 6 ամիս:

Խմբի անդամների նկատմամբ կիրառվեց նաեւ 1967 թ. հոկտեմբերի 31-ին սոցիալիստական հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ հայտարարված համաներումը, ինչի շնորհիվ նրանցից չորսն ազատվեցին պատժից, իսկ երեքի պատժաչափերը կրճատվեցին կիսով չափ:

Մարտին Նալբանդյանը հետագայում տեղափոխվել է ԱՄՆ մշտական բնակության, որտեղ էլ 1991 թվականին վախճանվել է: **Ալբերտ Ղուբասարյանը** պատմաբան էր, մասնակցում էր Հայկական հանրագիտարանի խմբագրական աշխատանքներին եւ Էրեբունիի պեղումներին: 1987 թ. եղել է «Հայ դատի պաշտպանության ընկերության» նախագահության անդամ: Վախճանվել է 1990-ին:

Լեւոն-Արա Մնացականյան

1968 թվականի մայիսին մեկ տարի ազատազրկման է դատապարտվում Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Լեւոն-Արա Հարությունի Մնացականյանը: Ծանոթների շրջանում նա ավելի շատ հայտնի էր Արայիկ Մնացականյան անուն-ազգանվամբ: 1967-ին նա գրել է «Նոր շարժում» վերնագրով թռուցիկ եւ կազմակերպել նույնանուն խմբակ, որին հաջողվել է հայթայթել տպատառեր եւ տպագրել ու տարածել թռուցիկներ: Խմբակի նպատակն էր՝ պայքարել խորհրդային բարքերի ու կոմունիստական հայտարարված արժեքների մաքրության համար, թույլ չտալ, որ դրանք աղավաղվեն, եւ որ՝ խորհրդային հասարակությունը չգաղափարազրկվի ու չբուրժուականացվի: Առանցքային են եղել նաեւ Ղարաբաղի ու Նախիջեւանի խնդիրները, որոնց լուծումը Մնացականյանը, ինչպես եւ՝ այդ շրջանում շատերը, տեսնում էր Մոսկվայի բարի կամքի եւ կոմունիստական կուսակցության վարած ազգային արդար քաղաքականության համատեքստում: Թռուցիկներից մեկում՝ ԽՄԿԿ 23-րդ համագումարի կապակցությամբ նա կոչ է անում «ապրիլի 3-ին հավաքվել օպերայի հրապարակում եւ առաջարկել, որպեսզի այս արդար համագումարը արդար լուծի Ղարաբաղի եւ Նախիջեւանի հողերի հարցը» (Արմենակ Մանուկյան, «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988թթ.»): Խմբակի ղեկավար Արա Մնացականյանը եղել է այն մարդկանց թվում, ում 1966-ի ապրիլի 24-ին Կոմիտասի անվան այգուց ձերբակալել եւ 15-օրյա կալանքի են ենթարկել: Այդ կալանքի ժամանակ էլ նա ծանոթացել է Հայկազ Խաչատրյանի, Ստեփան Զատիկյանի, Շահեն Հարությունյանի եւ այլոց հետ:

Հիշում է Շահեն Հարությունյանը. ««Փարոսի» տարածումից հետո՝ մի օր պատահաբար Հայկազ Խաչատրյանը քաղաքում հանդիպում է Արա Մնացականյանին, որը նույնպես ապրիլի 24-ի օրը մեզ հետ 15-օրյա կալանքի էր վերցվել: Ահա այս Արան Հայկազին ասում է, որ «Փարոս» թերթ է տպագրվել, ուզում է մեկ օրինակ տեսնել: Հայկազն ասել է, թե ինքը տեղյակ չէ, բայց Շահենից կհարցնի, գուցե նա ունենա: Հաջորդ օրն ինձ առաջարկեց հանդիպել Արային եւ թերթ տալ նրան: Հանդիպեցի եւ մեկ օրինակ թերթ տվեցի, իհարկե՝ ասելով, որ ուրիշից եմ վերցրել եւ չգիտեմ, թե տարածողներն ովքեր են: Ամիսներ անց Արայիկն իր խմբի հետ ձերբակալվում է: Ձերբակալությունը, ինչքան այսօր կարողանում եմ հիշել, կապված էր ինչ-որ տպատառերի հետ: Նրա մոտ հայտնաբերում են իմ տված «Փարոսը»: Արայիկ Մնացականյանը հարցաքննության ժամանակ ասում է, որ թերթն ստացել է ինձանից: Փաստորեն, Արայիկն առաջին մարդն էր, որը ցուցմունք էր տվել «Փարոսի»-ին ունեցած իմ առնչությունների վերաբերյալ»:

Դատապարտվելուց հետո Արա Մնացականյանը այլախոհական շրջանակների հետ շփումներ չի ունեցել, քաղաքական շեշտադրումներով հարուցված որեւէ քրեական գործի կամ որեւէ խմբի հետ չի առնչվել: Այս գործով կայացած դատավճիռը եւս Ազգայինի անվտանգության ծառայության արխիվից ստանալ չհաջողվեց: ԱԱԾ-ն մերժեց դատավճիռը մեզ տրամադրելու խնդրանքը՝ պատճառաբանելով, որ չունենք դատապարտվածի կամ նրա ժառանգների համաձայնությունը, իսկ Լեւոն-Արա Մնացականյանին կամ նրա ժառանգներին գտնելու մեր փորձերն ապարդյուն անցան:

Հայ հայրենասերների միություն

1967-68 թթ. ասպարեզ է գալիս մի նոր կազմակերպություն՝ «Հայ հայրենասերների միությունը»: Միությունն ուներ իր կանոնադրությունը, որը քննարկվել եւ ընդունվել էր կազմակերպության անդամների ժողովում: Նոր անդամները պետք է ընդունեին այդ կանոնադրության դրույթները, ենթարկվեին դրա պահանջներին եւ անդամավճար մուծեին: Այս միությունը մասնաճյուղեր ուներ Արարատում, Գյումրիում, Արտաշատում, Երեւանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում: Յուրաքանչյուր մասնաճյուղ ուներ իր ղեկավարը, իսկ կազմակերպության ընդհանուր ղեկավարումն իրականացնում էր Հակոբջան Թադեւոսյանը: Այս կազմակերպությունը նույնպես, ժամանակի ոգուն համահունչ՝ առաջնային էր համարում Եղեռնի, կորուսյալ հայկական տարածքների, Ղարաբաղի եւ Նախիջեւանի խնդիրները: Նրանք համարում էին, որ ինչպես նշված է դատավճռում՝ Խորհրդային Միությունը «որոշ հարցերում արհամարհում եւ ոտնահարում է հայ ժողովրդի կենսական շահերը»: Միաժամանակ՝ խորհրդային կարգերի դեմ ոչինչ չունեին: Այս առումով հատկանշական է այն իրողությունը, որ կազմակերպության անդամները՝ ծանոթանալով Ազգային միացյալ կուսակցության արդեն հրատարակած «Փարոս» թերթին, խստորեն մերժել էին թերթի էջերում առաջ քաշված գաղափարները՝ հակասովետիզմի եւ անկախության անհրաժեշտության կապակցությամբ: Նրանց համար հատկապես անընդունելի է եղել անկախության գաղափարը: Ահա թե ինչպես է այդ դրվագը նկարագրված խմբի անդամների նկատմամբ կայացված դատավճռում. «1967 թվականի վերջին Թադեւոսյանը ստացել է Էդիկ Ալեքսանյանից հակասովետական բովանդակություն ունեցող «Փարոս» անլեգալ թերթը… Այդ թերթը պարունակում է թշնամական հարձակումներ սովետական պետության հասցեին եւ կոչ է անում անջատել Հայաստանը ՍՍՀՄ-ից ու ստեղծել «անկախ հայկական պետություն». գործով բոլոր ամբաստանյալները, ինչպես նաեւ խմբակի մյուս անդամները, քննադատության են ենթարկել «Փարոս» թերթի հակասովետական բովանդակությունը եւ բացառել են թերթի հայացքները, համարելով այն վնասակար ու անընդունելի իրենց խմբակների համար»: Խմբի անդամները դեռեւս չէին հասել Հայաստանի անկախության գաղափարին եւ մեր երկրի ապագան տեսնում էին Խորհրդային Միության շրջանակներում: Նրանց հաջողվում է ձեռք բերել տպագրական միջոցներ եւ բազմացնել ու տարածել թռուցիկներ: 1967 թվականի ապրիլի 24-ին ընդառաջ՝ տպագրում ու Երեւանում, Գյումրիում, Արարատի եւ Արտաշատի շրջաններում տարածում են Հակոբջան Թադեւոսյանի հեղինակած երեք թռուցիկները՝ «Կոչ հայ մտավորականությանը՝ Մեծ եղեռնի 52-րդ տարեդարձի առթիվ», «Կոչ հայ ժողովրդին՝ Մեծ եղեռնի 52-րդ տարեդարձի կապակցությամբ» եւ «Խոսք սրտի խորքից՝ հայոց ողբերգության 52-րդ տարեդարձի կապակցությամբ» վերնագրերով: Թռուցիկներում հիմնականում շեշտադրվում էին այն իրողությունները, որ խորհրդային կառավարությունը ոտնահարում է հայ ժողովրդի իրավունքները հօգուտ Թուրքիայի, ԽՍՀՄ-ում տարվում է հայերի ձուլման եւ ռուսացման քաղաքականություն, եւ կոչ էր արվում բարձրաձայնել Լեռնային Ղարաբաղի ու Նախիջեւանի ինքնավար հանրապետությունը Հայաստանին միացնելու հարցը: Նույն բովանդակությամբ թռուցիկներ են պատրաստել եւ տարածել նաեւ հաջորդ տարի՝ 1968-ի գարնանը՝ հետեւյալ վերագրերով՝ «Կոչ հայ մտավորականությանը՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Կոչ հայ երիտասարդությանը՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Հիշեցում հայ ժողովրդին՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի կապակցությամբ»:

Հենց այս նույն տարում՝ 1968-ի ապրիլին խմբի ներքոնշյալ անդամները ձերբակալվել են եւ դատապարտվել 206[1] հոդվածով (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը):

Անդրանիկ Մխիթարյան
լուս. քր. գործից



Անդրանիկ Մխիթարյան

Վահան Եղիազարյան



Ռաֆիկ Ղարագուլյան

Հակոբջան Թադեւոսյան



Հակոբջան Թադեւոսյան
լուս. քր. գործից



Ռուբեն Հովսեփյան
լուս. քր. գործից



Էդիկ Ալեքսանյան

Հակոբջան Դրաստամատի Թադեւոսյանը ծնվել է 1949 թ., Արտաշատի շրջանի Մուղան (Մասիսի շրջանի Հովտաշեն) գյուղում: Ձերբակալման պահին եղել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող: Կալանավորվել է 19 տարեկանում՝ 1968-ի ապրիլի 17-ին: Ձնայած գրեթե պատանի էր, բայց նրան հաջողվել է կազմակերպել

ու ղեկավարել ընդհատակյա բազմամարդ կազմակերպություն՝ իր մասնաճյուղերով: Պետանվտանգության կոմիտեում սկզբում չեն հավատացել, որ կազմակերպությունն, իրոք, ղեկավարում է Հակոբջան Թադեւոսյանը: Թադեւոսյանը կալանավորվելուց հետո ստիպված է եղել ջանք թափել նրանց դրանում համոզելու համար: Դատապարտվել է 2 տարի 3 ամիս ժամանակով: Պատիժը կրել է Հայաստանում, ընդհանուր ռեժիմի գաղութում: Ազատ արձակվելուց հետո մշտական կապեր է հաստատել հայ այլ քաղբանտարկյալների եւ այլախոհների հետ: Ծանոթացել է Ազգային միացյալ կուսակցության անդամների հետ: Այս ծանոթությունն առիթ է դարձել, որպեսզի վերաարժեվորի իր պատկերացումները Հայաստանի ապագայի ու խորհրդային կարգերի նկատմամբ: Արդյունքում՝ դառնում է հակախորհրդային համոզմունքների տեր գործիչ ու անկախության ջատագով: Անդամագրվում է ԱՄԿ-ին: 1973-74 թթ.՝ իր գլխավորած խմբակով մասնակցում է ԱՄԿ-ի կազմակերպած գործողություններին: Դառնում է ԱՄԿ խորհրդի անդամ: Հետագայում՝ վկայի կարգավիճակով հարցաքննվել է Ազգային միացյալ կուսակցության անդամների դատավարությունների ժամանակ: 1988-ին խմբագրել է «Ազգային ինքնորոշում» միավորման հրատարակած «Հայրենիք» ամսագիրը: 1990-ին Անկախության բանակի ռազմական խորհրդի անդամ էր: Արտաշատի ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպիչներից էր եւ Արտաշատի «Անկախության բանակի» կորդինատորը: Բանաստեղծությունների, 19-20-րդ դարերի ֆիդայական շարժմանը վերաբերող մենագրության, էսսեների ու բազմաթիվ հոդվածների հեղինակ է: 2009-ին հետմահու հրատարակվել է նրա «Բեկորներիս իրավունքով» գիրքը: Վախճանվել է 49 տարեկանում, 1998 թ. օգոստոսի 8-ին:

Ռուբեն Հովհաննեսի Հովսեփյանը ծնվել է 1947 թ., Արարատի շրջանի Ավշար գյուղում: Ձերբակալման պահին եղել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող: 1967-ի սկզբին ծանոթացել եւ մտերմացել է Հակոբջան Թադեւոսյանի հետ: Այդ շրջանում էլ նրանք վճռել են կազմակերպություն ստեղծել եւ նպաստել Հայկական հարցի լուծմանը: Հովսեփյանը գործել է նաեւ Հակոբջան Թադեւոսյանի հետ ծանոթանալուց առաջ՝ 1965-66-ականներին: Իր ծավալած գործունեության համար 1966-ին Պետանվտանգության կոմիտեի կողմից նախազգուշացվել է: Կալանավորվել է 1968 թ. ապրիլի 16-ին: Դատապարտվել է 2 տարի 3 ամիս ազատազրկման: Պատիժը կրել է Հայաստանում՝ ընդհանուր ռեժիմի գաղութում: Պատիժը կրելուց հետո վերականգնվել է մանկավարժական ինստիտուտում, որն ավարտելուց հետո 20 տարի աշխատել է «Լույս» հրատարակչությունում: 1990-ին ընտրվել է շրջխորհրդի պատգամավոր: 1998-ին մեկնել է Ղարաբաղ, եղել է համայնքի նախագահ, զբաղվել է ազատագրված տարածքների վերաբնակեցման հարցերով: Ներկայումս բնակվում է Երեւանում:

Էդիկ Վրեժի Ալեքսանյանը ծնվել է 1942 թ., Գյումրի քաղաքում: Եղել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող: Մինչեւ դատավարությունը նրա նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց, չի կիրառվել: Դատապարտվել է 1 տարի 6 ամիս ժամանակով: Կալանավորվել է դատարանի դահլիճում: Պատիժը կրել է Հայաստանում՝ ընդհանուր ռեժիմի գաղութում: Ազատ արձակվելուց հետո փորձել է վերականգնվել համալսարանում, բայց խոչընդոտների է հանդիպել: Դիմել է պատմական գիտությունների դոկտոր Հայկազ Պողոսյանին, որն այդ տարիներին կրթության համակարգում բարձր պաշտոն էր զբաղեցնում: Նրա օգնությամբ եւ միջնորդությամբ վերականգնվել եւ ավարտել է համալսարանը: Ապրում եւ աշխատում է Երեւանում:

Ռուբիկ Թադեւոսի Վարդանյանը ծնվել է Գյումրիում: Մինչեւ դատավարությունը չի կալանավորվել: Դատապարտվել է 1 տարի 6 ամիս ժամանակով: Կալանավորվել է դատարանի դահլիճում: Պատիժը կրել է Հայաստանում՝ ընդհանուր ռեժիմի գաղութում:

Ռաֆիկ Աշոտի Ղարագուլյանը ծնվել է 1939թ., Վրաստանի Ախալքալաքի շրջանի Մարտունի գյուղում: Սովորել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Ազգային-հայրենասիրական գործունեությամբ սկսել է զբաղվել 1965-ից: Իր ծավալած գործունեության համար Պետանվտանգության կոմիտեի կողմից նախազգուշացվել է 1966-ին: Հետագայում անդամակցել է «Հայ հայրենասերների միությանը»: Կալանավորվել է 1968-ի ապրիլի 16-ին: Դատապարտվել է 1 տարի ժամանակով: Պատիժը կրել է Հայաստանում՝ ընդհանուր ռեժիմի գաղութում: Ազատ արձակվելուց հետո զբաղվել է նկարչությամբ: Եղել է ԽՍՀՄ նկարիչների միության անդամ: Կապված է եղել այլախոհական շրջանակների հետ: Վախճանվել է 1979 թվականին:

Միսաք Խաչիկի Խաչատրյանը ծնվել է 1949 թ., Արարատի շրջանում: Արտաշատի քիմիական տեխնիկումի ուսանող էր: Մինչեւ դատավարությունը կալանքի տակ չի եղել: Դատապարտվել է 1 տարի 2 ամիս ժամանակով: Կալանավորվել է դատարանի դահլիճում: Պատիժը կրել է Հայաստանում՝ ընդհանուր ռեժիմի գաղութում:

Անդրանիկ Սուրենի Մխիթարյանը ծնվել է 1946 թ., Թալինի շրջանի Սուսեր գյուղում: Սովորել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի գեղարվեստի ֆակուլտետում: Կալանավորվել է 1968-ի ապրիլի 16-ին, իսկ մայիսի 28-ին խափանման միջոց կալանքը փոխվել է, եւ նա ազատ է արձակվել: Դատապարտվել է 1 տարի ազատազրկման, եւ դատարանի վճռով՝ նրա նկատմամբ սահմանված մեկ տարի ազատազրկումը փոխարինվել է երկու տարի փորձաշրջանով պայմանական դատապարտությամբ: Ինստիտուտն ավարտելուց հետո տեղափոխվել է Աշտարակ: Աշխատել է տեղի Գեղարվեստի դպրոցում: 1988 թվականից մասնակցել է Ղարաբաղյան շարժմանը: Եղել է Աշտարակի «Ղարաբաղ» կոմիտեի անդամ: 1990-91 թթ. զբաղվել է ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպմամբ: 90-ականներին նշանակվել է Գեղարվեստի դպրոցի տնօրեն: 1995-ից հրավիրվել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ որպես մշակույթի եւ հասարակական կապերի բաժնի պետի տեղակալ, որտեղ էլ աշխատում է մինչ օրս: Զբաղվում է գեղանկարչությամբ:

Վահան Սարգիսի Եղիազարյանը ծնվել է 1947 թ., Մարտունու շրջանի Ծակքար գյուղում: Սովորել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Կալանավորվել է 1968-ի ապրիլի 16-ին, իսկ մայիսի 28-ին խափանման միջոցը փոխվել է, եւ նա ազատ է արձակվել: Դատապարտվել է 1 տարի ազատազրկման: Նրա նկատմամբ սահմանված մեկ տարի ազատազրկումը փոխարինվել է պայմանական դատապարտմամբ՝ երկու տարի փորձաշրջանով: Պատիժը կրելուց հետո Մասիս քաղաքում է բնակվել եւ աշխատել որպես ուսուցիչ, ապա՝ Մասիսի գիշերօթիկ դպրոցի տնօրեն: Վախճանվել է 1994 թ. հուլիսին:

Պատմում է Հակոբջան Թադեւոսյանի կինը՝ Սիրունը

1965 թվականին 9-րդ դասարանում էի սովորում: Եղեռնի 50-ամյակի կապակցությամբ դպրոցում պատի թերթ հրապարակեցինք: Այդ տարիներին դա լուրջ ու վտանգավոր գործ էր: Իմ հայացքներում որոշիչ է եղել հորս ազդեցությունը. նա ընդգծված ազգայնական էր: 1966-ին տեղի ունեցավ Եղեռնին նվիրված հայտնի ցույցը: Ցույցի

ժամանակ ծանոթացա Հակոբջանի մեծ եղբոր հետ, իսկ հետո՝ հայրիկիս հետ ծանոթացրի: Այնուհետեւ հայրիկիս հետ ծանոթացավ նաեւ Հակոբջանը: Նրանք հաճախ էին այցելում հայրիկիս ու երկար զրուցում: Մի օր էլ Հակոբջանը հայրիկիս ասել էր, որ «Հայ հայրենասերների միություն» անունը կրող գաղտնի կազմակերպություն է գործում: Հետագայում ինձ առաջարկվեց անդամակցել այդ կազմակերպությանը: Համաձայնեցի: Կազմակերպությունը բավական խայտաբղետ ու բազմամարդ էր: Ուսանողներ, տարեց մարդիկ ու բանվորներ կային: Մասնակցում էի ժողովներին ու այլ միջոցառումների: Ամեն ինչ արվում էր գաղտնի ու չափազանց կարգապահ: Կարգապահությունը Հակոբջանի համար ամենակարեւորն էր: Ժամադրությունից մեկ րոպե ուշացումն անգամ դիտողության էր արժանանում: Ինքը՝ Հակոբջանը, ընդգծված պարտաճանաչ էր ու պահանջկոտ: Նա էր կազմակերպիչն ու «տանողը»: Ամեն ինչ նրա շուրջն էր պտտվում: Անընդհատ շարժման մեջ էր: Գնում էր Գորիս, Գյումրի, Կապան, Սոչի: Ամենուր մասնաճյուղեր էր ստեղծում: Դեռ դպրոցական նստարանից՝ 16-17 տարեկանից էր Հակոբջանն այս կարգի գործերի մեջ: Բնական է, որ Պետանվտանգության կոմիտեն չէր կարող ինչ-որ ժամանակ անց չիմանալ, որ կազմակերպություն է գործում, այն էլ՝ այդքան ճյուղավորված: Նրանք փնտրել են կազմակերպության ղեկավարին, որը, ըստ իրենց պատկերացումների, պետք է հասուն մարդ լիներ: Անգամ Արտաշատի ՊԱԿ-ում, ուր տարել են Հակոբջանին, չեն հավատացել, որ նա է կազմակերպության ղեկավարը: Հակոբջանը չեկիստներին դրանում համոզելու համար մեծ ջանքեր է թափել:

1968 թվականի ապրիլի 24-ի կապակցությամբ մեծ քանակությամբ թռուցիկներ էին տպագրվել: Դրանք գտնվում էին Կիլիկիա թաղամասում Հակոբջանի վարձած սենյակում: Տարբեր խմբակների ներկայացուցիչներ՝ յուրաքանչյուրն իր պայմանավորված օրն ու ժամին պետք է գային ու տանեին իրենց բաժին թռուցիկները: Մենք՝ մի քանի հոգով ապրիլի 17-ին՝ պայմանավորված ժամին պետք է գնայինք մեր բաժինը տանելու: Յուրաքանչյուրիս կցված էր կոնկրետ տարածք, որտեղ պետք է դրանք տարածեինք: Պայմանավորված ժամին եկանք, բայց սենյակի դուռը փակ էր: Հակոբջանը չկար: Պարտաճանաչ Հակոբջանի բացակայությունն ավելի քան զարմանալի էր: Մեզ հետ էր նաեւ Հակոբջանի եղբայրը: Նա սենյակ մտավ օդանցքից, այնտեղից մեզ տվեց մեր բաժին թռուցիկներն, ու մենք հեռացանք: Այդ պահին դեռ չգիտեինք, որ Հակոբջանն ու մեր մյուս ընկերներն արդեն ձերբակալված են: Շատ ավելի ուշ իմացանք, որ մեր պայմանավորվածությունից առաջ Հակոբջանը մանկավարժական ինստիտուտի հանրակացարանում նշանակված հանդիպում է ունենում Ռուբիկ Հովսեփյանի հետ: Գալիս է Ռուբիկի սենյակ, իսկ այնտեղ չեկիստներն արդեն խուզարկություն են իրականացնում: Տանում են ե՛ւ Ռուբիկին, ե՛ւ Հակոբջանին: Չեկիստները դեռ չէին հասցրել իմանալ Կիլիկիայում գտնվող գաղտնի սենյակի մասին, այնպես որ՝ չնայած մեր ընկերները ձերբակալված էին, մենք կարողացանք տարածել թռուցիկները, որ տպագրել էինք ապրիլի 24-ին ընդառաջ:

Արդեն ավարտել էի դպրոցն ու սովորում էի ինստիտուտում: Առաջին կուրսի ավարտական քննություններն էի պատրաստվում հանձնել, երբ Պետանվտանգության կոմիտեից եկան իմ հետեւից: Այդպես էլ թույլ չտվեցին քննություններին մասնակցել: 1968 թվականի հունիսն էր:

Տղաների դատավարությունն, ըստ էության, փակ էր: Միայն իրենց ընտրած մարդիկ կարող էին գտնվել դահլիճում: Դատը երկար տեւեց՝ մոտ մեկ ամիս: Վկաները շատ էին: Հանրապետության բոլոր շրջաններից վկաներ կային, Սոչիից ու այլ քաղաքներից

նույնպես կային: Տղաների դատի ժամանակ ծանոթացա Պարույր Հայրիկյանի ու Անդրանիկ Մարգարյանի հետ: Ծանոթանալիս Պարույրը ներկայացավ «Վրեժ» անունով: Հետո, իհարկե, իմացա նրա իսկական անունը: Նրանք որեւէ առնչություն չունեին Հակոբջանենց հետ: Ուղղակի իմանալով, որ քաղաքական դատ է ընթանում՝ եկել էին դատարան: Դատավճռի հրապարակումից հետո տղաներին տեղափոխեցին Երեւանից ոչ հեռու գտնվող Շահումյանի գաղութ: Պատմում էին, որ քրեականներն ընդգծված հարգանքով էին վերաբերվում իրենց: Ազատվելուց հետո ես ու Հակոբջանն ամուսնացանք: Հակոբջանը ցանկանում էր վերականգնվել համալսարանում, բայց չէին թողնում: Պետանվտանգության կոմիտեն ամեն կերպ խոչընդոտում էր: Նա մտերիմ էր Պարույր Սեւակին: Ստիպված դիմեց նրան: Սեւակը եւ Ջոն Կիրակոսյանը միջնորդագրեր գրեցին, ինչից հետո նա վերականգնվեց ու ավարտեց համալսարանը: Ընդունվեց ասպիրանտուրա, գրեց գիտական թեզ՝ «Հայ ազգային-ազատագրական պայքարը 1880-1920-ական թվականներին» թեմայով: Պաշտպանության ժամանակ գիտական թեզն ազգայնական գործ բնորոշվեց ու մերժվեց: Ուսմանն ու աշխատանքին զուգահեռ՝ շարունակում էր իր գործունեությունը: Ես ծանոթացրել էի իրեն Պարույր Հայրիկյանի հետ: Այդ ծանոթությունից հետո Հակոբջանը դարձավ ԱՄԿ անդամ: Սա արդեն բոլորովին այլ բան էր: 70-ականներին ԱՄԿ-ն մեծ գործունեություն էր ծավալել: Անընդհատ ձերբակալություններ էին տեղի ունենում, եւ միայն ԱՄԿ-ականների ցուցաբերած ամրության շնորհիվ է, որ ՊԱԿ-ը չկարողացավ 1974-75 թթ. երկրորդ անգամ կալանավորել նաեւ Հակոբջանին:

Հայ հայրենասերների միության գործով կայացված դատավճիռը

Դատավճռի տեքստում կետագծերով նշված են Ազգային անվտանգության ծառայության կողմից տեքստը մեզ տրամադրելուց առաջ ջնջված մասերը: Ջնջված են դատապարտվածների անձնական տվյալները եւ գործով անցնող վկաների անունները: Դրանց փոխարեն կամայական տառեր են դրված: Մեր կողմից կետագծերով նշված են նաեւ դատավճռում առկա անընթեռնելի հատվածները:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1968 թվականի նոյեմբերի 20-ին հետեւյալ կազմով՝

Նախագահությամբ՝	**Ս. Դանիելյանի**
Ատենակալներ՝	**1. Դ. Գաբրիելյանի**
	2. Ե. Լազարեւա-Բախշյանի
Քարտուղարությամբ՝	**Կ. Մելքոնյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Ա. Շլեյչյանի**
դատապաշտպաններ՝	**Ս. Արեւշատյանի, Գ. Հարոյանի**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝

1) ՀԱԿՈԲՋԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ծնված 1949թ. Հայկական ՍՍՀ Արտաշատի Շրջանի Մուղան գյուղում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, մինչեւ կալանավորվելը ՀԼԿԵՄ անդամ, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված, Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող, բնակվել է Արտաշատի շրջանի Մուղան գյուղում, կալանքի տակ է 1968թվականի ապրիլի 17-ից (հ.1 գ.թ. 81-83):

2) ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ, ծնված 1947թ. Հայկական ՍՍՀ Արարատի շրջանի Ավշար գյուղում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, մինչեւ կալանավորվելը ՀԼԿԵՄ անդամ, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված,Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող, բնակվել է ուսանողական հանրակացարանում, կալանքի տակ է 1968թվականի ապրիլի 16- ից (հ.1 գթ. 292-294):

3) ԷԴԻԿ ՎՐԵԺԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ, ծնված 1942թ. Լենինական քաղաքում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀԼԿԵՄ անդամ, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված, Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող, բնակվում է Երեւան քաղաքի Կիրովի փող. նո. 12 շենքում, կալանքի տակ չի եղել:

4) ՌՈՒԲԻԿ ԹԱԴԵՎՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ծնվել է Լենինական քաղաքում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀԼԿԵՄ անդամ, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված, աշխատում է Երեւանի հուշանվերների ֆաբրիկայում ----------, բնակվում է Երեւանում՝ --------- կալանքի տակ չի եղել:

5) ՌԱՖԻԿ ԱՇՈՏԻ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆԻ ծնված 1939թ. Վրացական ՍՍՀ Ախալքալաքի շրջանի Մարտունի գյուղում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված, Երեւանի թատերական գեղարվեստական ինստիտուտի արդյունաբերական գրաֆիկայի ֆակուլտետի ---- ուսանող, բնակվել է Երեւան, Ուսանողների թաղամասի --, կալանքի տակ է 1968 թվականի ապրիլի 16-ից (հ. 2 գթ. 151-153):

6) ՄԻՍԱՔ ԽԱՉԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ծնված 1949թ. Հայկական ՍՍՀ Արարատի շրջանի Ղարալար գյուղում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀԼԿԵՄ անդամ, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված Արտաշատի քիմիական տեխնիկումի ---------- ուսանող, բնակվում է Արտաշատի շրջանի Նորվզլու գյուղում ---------, կալանքի տակ չի եղել:

7) ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ծնված 1946թ. Հայկական ՍՍՀ Թալինի շրջանի Սուսեր գյուղում, հայ ՍՍՀՄ քաղաքացի, ՀԼԿԵՄ անդամ, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված, Երեւանի Խ. Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտի գեղարվեստի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող, բնակվում է Երեւան քաղաքում, ուսանողական թաղամասի 6-րդ կորպուսում, սույն գործով կալանքի տակ է եղել 1968թվականի ապրիլի 16-ից մինչեւ մայիսի 28-ը (հ.2 գթ. 264-266,304):

8) ՎԱՀԱՆ ՍԱՐԳԻՍԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ, ծնված 1947թ. Հայկական ՍՍՀ Մարտունու շրջանի Ծակքար գյուղում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀԼԿԵՄ անդամ-ամուսնացած, խնամքին 3 անձ, չդատված, Երեւանի Խ. Աբովյանի անվան հայակական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ---------- ուսանող, բնակվում է ինս-

տիտուտի հանրակացարանում, սույն գործով եղել է կալանքի տակ 1968 թվականի ապրիլի 16-ից մինչեւ 28-ը (հ.3. գ.թ. 1-3, 60-61):

Բոլոր ամբաստանյալները մեղադրվում են Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 206[1] հոդվածով:

Դատաքննությամբ ապացուցված է հետեւյալը:

Ամբաստանյալներ Թադեւոսյանը, Հովսեփյանը, Ալեքսանյանը, Վարդանյանը, Ղարագուլյանը, Խաչատրյանը, Մխիթարյանը եւ Եղիազարյանը համարելով, որ Սովետական կառավարչության ազգային քաղաքականությունը որոշ հարցերում արհամարում եւ ոտնահարում է հայ ժողովրդի կենսական շահերը, 1967-1968թթ. տպագիր միջոցով պատրաստել եւ տարածել են նյութեր, որոնք բովանդակել են սովետական պետական ու հասարակական կարգը, ՍՄԿԿ ու Սովետական կառավարության արտաքին եւ ազգային քաղաքականությունը վարքաբեկող զրպարտիչ հերյուրանքներ:

Այդ նպատակով ամբաստանյալ Թադեւոսյանը 1966 թվականի աշնանը, լինելով Երեւանի պետական համալսարանի ուսանող, այդ համալսարանում կազմակերպել է անլեգալ խմբակ, որի մեջ ներգրավել է ավելի քան 20 մարդ, այդ թվում ամբաստանյալ էդիկ Ալեքսանյանին:

1967 թվականի ընթացքում Թադեւոսյանի առաջարկով անլեգալ խմբակներ են կազմակերպել Ռ. Հովսեփյանը՝ Երեւանի մանկավարժական ինստիտուտում, իսկ Մ. Խաչատրյանը Արարատ քաղաքի քիմիական տեխնիկումում: Նույն ժամանակ ամբաստանյալ Ռ. Վարդանյանը ամբաստանյալ է. Ալեքսանյանի օժանդակությամբ նույնպես խմբակ է կազմակերպել Լենինական քաղաքում:

Այս բոլոր խմբակները Թադեւոսյանի նախաձեռնությամբ միավորվելով կազմել են այսպես կոչված «հայ հայրենասերների միություն»:

Ղեկավարվելով անլեգալ խմբակների գործունեությամբ, Թադեւոսյանը Երեւանում եւ Արարատում անձամբ, իսկ Լենինականում է. Առաքելյանի միջոցով գումարել եւ անց է կացրել գաղտնի հավաքույթներ, որոնցում քննարկվել են նրա կողմից կազմված զրպարտչական բովանդակություն ունեցող թռուցիկների, այլ փաստաթղթերի տեքստերը եւ մի շարք կազմակերպչական հարցեր:

Թռուցիկները բազմացնելու եւ տարածելու հետ կապված ծախսերը հոգալու նպատակով, Թադեւոսյանը խմբակի անդամներից սիստեմիկաբար հավաքել է անդամավճար եւ այլ դրամական միջոցներ:

1967 թվականի ապրիլին Թադեւոսյանը կազմել եւ խմբակի անդամների մասնակցությամբ գրամեքենայով բազմացրել է ավելի քան 600 օրինակ երեք տարբեր թռուցիկների տեքստեր՝ «Կոչ հայ մտավորականությանը՝ մեծ եղեռնի 52-րդ տարեդարձի առթիվ», «Կոչ հայ ժողովրդին՝ մեծ եղեռնի 52-րդ տարեդարձի կապակցությամբ» եւ «Խոսք սրտի խորքից, հայոց ողբերգության 52-րդ տարեդարձի կապակցությամբ»:

(հ. 5 գթ. 202, 218, 223):

Նույն ամսում Թադեւոսյանը նշված թռուցիկները Ռուբեն Հովսեփյանի, էդիկ Ալեքսանյանի, եւ խմբակի մյուս անդամների միջոցով տարածել է Երեւանում, Լենինականում, Արարատի եւ Արտաշատի շրջաններում:

Այդ թռուցիկները պարունակում են ակնհայտ հերյուրանքներ, որ Սովետական կառավարությունն իբր ոտնահարում է հայ ժողովրդի իրավունքները հօգուտ Թուրքիայի, ՍՍՀՄ-ում տարվում է հայերի ձուլման եւ ռուսացման քաղաքականություն, հայոց ազգը ենթարկվում է կործանման եւ բարոյական ոչնչացման, կոչ է արվում բարձրացնել լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի ինքնավար հանրապետությունը Հայաստանին

միացնելու հարցը:

1967 թվականի մայիսին Թադեւոսյանը կազմել է «հայ հայրենասերների միության կանոնադրություն» կոչվող փաստաթուղթ, որը զրպարտիչ հերյուրանքներ է պարունակում այն մասին, որ սովետական կարգերում ոտնահարվում է ազգային զգացմունքները, առհամարվում են փոքր ազգերի իրավունքներն ու շահերը, խախտվել են դեմոկրատիայի սկզբունքներն, իսկ «հայոց ազգը դանդաղ գնում է դեպի ոչնչացումը»: Կոչ է արվում պահանջել Թուրքիայից հայոց հողերի վերադարձումը: (հ. գբ. -----):

Նույն թվականի հոկտեմբեր ամսին Թադեւոսյանը կազմել է այսպես կոչված «ճառ արտասանված հայ հայրենասերների վերամիավորման 1-ին կոնֆերանսին» որում զրպարտիչ կերպով հայտարարվել է, որ Սովետական Միությունում չեն բավարարվում հայ ժողովրդի ազգային շահից բխող պահանջները եւ այդպիսիք բավարարելու համար անհրաժեշտ է ստեղծել ընդհատակյա կազմակերպություն:

(հ.5 գբ. 41- -, 206-20-):

Նշված երկու փաստաթղթերը նա նախապես քննարկման է ենթարկել խմբի անլեգալ հավաքույթներում եւ ապա բազմացրել ու հանձնել է ամբաստանյալներ Ռուբեն Հովսեփյանին եւ Էդիկ Ալեքսանյանին հետագայում տարածելու համար:

1967 թվականի ընթացքում Թադեւոսյանը տարածել է լուսանկարչական ու ռոտոտպագրային եղանակով բազմացված թռուցիկներ, «բաց նամակ ՍՄԿԿ-ի կենտկոմի քաղբյուրոյին», «Կրկին ռուս թուրքական դիվանագիտության զոհասեղանին», որոնք նա ստացել է ամբաստանյալ Ռուբեն Հովսեփյանից, ինչպես նաեւ թռուցիկ, որը սկսվում է «1921թ. մարտի 16-ին Մոսկվայում» վերնագրով:

Ըստ այդ փաստաթղթերի, Սովետական կառավարությունը ոտնակոխ է անում հայ ժողովրդի օրինական կենսական շահերը ի օգուտ Թուրքիայի, կոպիտ ձեւով ոտնահարում է ազգային արժանապատվությունը ու կրկին «հայկական հարցը» օգտագործում է որպես միջոց Թուրքիայի հետ դիվանագիտական հարցերը լուծելու նպատակով:

(հ.5 գբ. 205, հ.6 գբ. 1 եւ 5, գբ. 308 – 309, 311, հ. 6.6 գբ. 2-3, 4-25):

Նշված թռուցիկները ու նյութերը նա հանձնել է ամբաստանյալներ Ռուբեն Հովսեփյանին, Էդիկ Ալեքսանյանին եւ խմբակի մյուս մասնակիցներին տարածելու նպատակով:

Զրպարտչական գրականություն բազմացնելու ու տարածելու նպատակով Թադեւոսյանը անլեգալ հավաքույթներում առաջարկել է պատրաստել ռոտատոր, որից հետո ձեռք է բերել մոմաթերթեր, իսկ խմբակի անդամներից մեկը նրա հանձնարարությամբ պատրաստել է ռոտատորի որոշ մասեր:

1967 թվականի վերջին Թադեւոսյանը ստացել է Էդիկ Ալեքսանյանից հակասովետական բովանդակություն ունեցող «Փարոս» անլեգալ թերթը, որը կազմել եւ տարածել են ամբաստանյալների հետ առնչություն եւ ծանոթություն չունեցող անձինք: Այդ թերթը պարունակում է թշնամական հարձակումներ սովետկան պետության հասցեին եւ կոչ է անում անջատել Հայաստանի ՍՍՀՄ-ից ու ստեղծել «անկախ հայակական պետություն» (հ.6 գբ. 60-61):

Չնայած նրան, որ Թադեւոսյանը խիստ բացասական կարծիք է ունեցել «Փարոս» թերթի նկատմամբ, նա այդ թերթը կարդացել ու քննարկման է ենթարկել խմբակների հավաքույթներին Երեւանում եւ Արարատում, թերթի հետ ծանոթացրել է նաեւ Երեւան քաղաքի բնակիչ Ղ-ին, որը խմբակի անդամ չի եղել, այնուհետեւ հանձնել է Ռուբեն Հովսեփյանին եւ վկա Զ-ին հետագա տարածման համար:

Գործով բոլոր ամբաստանյալները, ինչպես նաեւ խմբակի մյուս անդամները, քննա-

դատության են ենթարկել «Փարոս» թերթի հակասովետական բովանդակությունը եւ բացառել են թերթի հայացքները, համարելով այն վնասակար ու անընդունելի իրենց խմբակների համար: Նույնը երեւում է «ՀՀՄ-ի կանոնադրություն» տեքստից: (հ.5 գթ. 226-239):

1968 թվականի հունվարին Թադեւոսյանի հանձնարարությամբ Մոսկվայում ձեռք է բերվել «Օպտիմա» մակնիշի էլեկտրական գրամեքենա, որի շրիֆտը Երեւանում փոխվել է հայերենի:

1968 թվականի գարնանը Թադեւոսյանը կազմել է երեք տեսակի նոր թռուցիկներ՝ «Կոչ հայ մտավորականությանը՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ» «Կոչ հայ երիտասարդությանը՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Հիշեցում հայ ժողովրդին՝ Մեծ Եղեռնի 53-րդ տարեդարձի կապակցությամբ»: Խմբակի անլեգալ հավաքույթներում քննարկելուց հետո նա այդ թռուցիկները խմբակի անդամների օգնությամբ բազմացրել է հատուկ այդ նպատակով վարձած կոնսպիրատիվ սենյակում «Օպտիմա» գրամեքենայով ավելի քան 2000 օրինակ: (հ.6 գթ. 26,36,31):

Նշված թռուցիկներում զրպարտիչ կարգով հայտարարվել է, որ խորհրդային իրավակարգում հայ ազգը ինտերնացիոնալիզմի քողի տակ բարոյական մահի է ենթարկվում, իսկ հայոց լեզուն - ռուսացման:

Այդ թռուցիկները տարածելու նպատակով Թադեւոսյանը հանձնել է 500 օրինակ Էդիկ Ալեքսանյանին, 300 օրինակ՝ Ռուբեն Հովսեփյանին, 220 օրինակ՝ Միսակ Խաչատրյանին, 530 օրինակ խմբակի այլ մասնակիցներին, 1968 թվականի ապրիլիան տարածել են թռուցիկները Երեւանում, Լենինականում, Արտաշատում եւ Արարատում: Մնացած թռուցիկները նա պատրաստել է հանձնելու խմբակի մյուս անդամներին տարածելու համար, սակայն չէր հասցրել այդ անել, որովհետեւ ապրիլի 17-ին ձերբակալվել էր, իսկ թռուցիկները հայտնաբերվել եւ առգրավվել էին:

(հ.1 գթ. 203, 95-113, 90-93):

1968 թվականի գարնանը ամբաստանյալ Թադեւոսյանը եւ Ալեքսանյանը Վարդանյանի միջոցով փորձել են անլեգալ խմբակ կազմակերպել նաեւ Կիրովական քաղաքում, սակայն այդ նրանց չի հաջողվել:

Ամբաստանյալ Ռուբեն Հովսեփյանը ծանոթացել եւ ազգայնական համաոզմունքների հողի վրա մտերմացել է Թադեւոսյանի հետ 1967թ. սկզբներին: Նույն ժամանակ նա ստացել է Թադեւոսյանից «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը, որը արտագրել եւ հանձնել է ամբաստանյալ Եղիազարյանին բազմացնելու համար:

Նույն թվականի ապրիլին նա հանձնել է Թադեւոսյանին Եղիազարյանի եւ գործով վկա Բ-ին իր մոտ ունեցած թռուցիկները վերնագրով՝ «Կրկին ռուս թուրքական դիվանագիտության զոհասեղանին», «բաց նամակ ՍՄԿԿ-ի Կենտկոմի քաղբյուրոյին», ինչպես նաեւ մի թռուցիկ, որը սկսվում է «1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում» բառերով:

Նույն ժամանակ Հովսեփյանը ստացել է ամբաստանյալ Թադեւոսյանից եւ տարածել է Երեւանի մանկավարժական ինստիտուտում թռուցիկներ՝ «Կոչ հայ մտավորականությանը մեծ եղեռնի 52-րդ տարեդարձի առիթով», «Կոչ հայ ժողովրդին՝ մեծ եղեռնի 52-րդ տարեդարձի կապակցությամբ» եւ «Խոսք սրտի խորքից հայոց ողբերգության 52-րդ տարեդարձի կապակցությամբ»:

1967 թվականի վերջին Հովսեփյանը, Թադեւոսյանի առաջարկով հիշյալ ինստիտուտում կազմակերպել է անլեգալ խմբակ «Հույս անվան տակ» որի մեջ մտել են ամբաստանյալ Մխիթարյանը եւ այլ ուսանողներ, իսկ հետագայում խմբակի մեջ է ներգրավվել

նաեւ ամբաստանյալ Եղիազարյանը:

Այս խմբակը բաղկացած է 7 հոգուց, Հովսեփյանի ղեկավարությամբ սիստեմատիկ հավաքույթներում քննարկել է հարցեր, կապված զրպարտչական նյութեր բազմացնելու եւ տարածելու հետ: Խմբակի մասնակիցներից գանձվել է անդամավճարներ, իսկ գոյացած գումարները օգտագործվել է խմբակի գոյության ապահովման համար:

Նույն ժամանակ Հովսեփյանը ստացել է Թադեւոսյանից վերոհիշյալ «ճառի» տեքստը եւ հակասովետական «Փարոս» թերթի օրինակը, որոնք կարդացել է խմբակի հավաքույթում:

1968 թվականի մարտին Հովսեփյանը ստացել է Թադեւոսյանից հետեւյալ թռուցիկների տեքստերը՝ «Կոչ հայ մտավորականությանը՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Կոչ հայ երիտասարդությանը՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Հիշեցում հայ ժողովրդին՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի կապակցությամբ»: Այդ տեքստերը Հովսեփյանը քննարկման է ենթարկել խմբակի հավաքույթում, որից հետո հատուկ այդ նպատակով վարձած կոնսպիրատիվ սենյակում դրանք գրամեքենայով բազմացրել է մեծ քանակությամբ:

Բազմացված թռուցիկներից 155 օրինակ նա հանձնել է ամբաստանյալ Ղարագուլյանին տարածելու համար, իսկ մնացած ---- օրինակը առգրավվել է ապրիլի 15-ին Հովսեփյանի եւ մյուսների ձերբակալման ժամանակ:

(հ. ----------)

Ամբաստանյալ Ալեքսանյանը, հանդիսանալով Թադեւոսյանի կողմից կազմակերպված անլեգալ խմբի անդամ 1967 թվականի գարնանը ակտիվ մասնակցություն է ունեցել խմբի աշխատանքներին:

1967 թվականի ապրիլին Ալեքսանյանը ստացել է Թադեւոսյանից 650 օրինակ թռուցիկներ՝ «Կոչ հայ մտավորականությանը՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Կոչ հայ ժողովրդին՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի կապակցությամբ», «Խոսք սրտի խորքից» եւ տարածել է այդպիսիք Լենինական եւ Երեւան քաղաքներում:

1967 թվականի օգոստոսին Ալեքսանյանը Լենինական քաղաքում հայտնել է ամբաստանյալ Վարդանյանին Երեւան քաղաքում գոյություն ունեցող անլեգալ խմբակի մասին, որից հետո Վարդանյանը կազմակերպել է նույնանման խմբակ Լենինականում:

Նույն թվի վերջերին Լենինականի խմբակի հավաքույթներից մեկում նա կարդացել ու քննարկման է ենթարկել Թադեւոսյանից ստացած նյութերը՝ «ՀՀՄ-ի կանոնադրությունը», «Ճառ արտասանված հայ հայրենասերների վերամիավորման առաջին կոնֆերանսում»:

Նույն ժամանակ նա ստացել է Վարդանյանից 200 ռուբլի դրամ, որը վերջինս հավաքել էր խմբակի անդամներից եւ հանձնել է այդ դրամը Թադեւոսյանին գրամեքենա ձեռք բերելու համար:

1967 թվականի աշնանը Ալեքսանյանը ստացել է Վարդանյանից վերոհիշյալ «Փարոս» հակասովետական թերթը եւ հանձնել է այն Թադեւոսյանին:

1967 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Ալեքսանյանը խմբակի կոնսպիրատիվ սենյակում Թադեւոսյանի հետ միասին մասնակցել է վերը նշված երեք տիպի թռուցիկների պատրաստմանը: Այդ թռուցիկներից 650 օրինակ նա տարել է Լենինական ու հանձնել է Վարդանյանին տարածելու համար, իսկ 30 օրինակ ինքն է տարածել Երեւանի պետական համալսարանի հանրակացարանում:

Նույն ամիսներին Ալեքսանյանը եւ Թադեւոսյանը ամբաստանյալ Վարդանյանի միջոցով կապ են հաստատել Կիրովական քաղաքի բնակիչ Գառնիկ անունով անձնավո-

ության հետ ու բանակցություններ են վարել Կիրովականում անլեգալ խմբակ կազմակերպելու համար: Այդ նպատակով էլ Ալեքսանյանը հանձնել է Վարդանյանին հետեւյալ զրպարտչական նյութերը՝ «Ճառ ատրասանված հայ հայրենասերների վերամիավորման 1-ին կոնֆերանսում», «կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին», «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում», որոնք վերջինս պետք է հանձներ այդ անձնավորությանը:

Ամբաստանյալ Վարդանյանը 1967 թվականի օգոստոսին Լենինական քաղաքում կազմակերպել է անլեգալ խմբակ, որի մեջ ընդգրկել է 8 հոգի: Հանդիսանալով այդ խմբակի ղեկավար, նա սիստեմատիկաբար անց է կացրել հավաքույթներ, խմբակի մասնակիցներից կանոնավոր կերպով հավաքել է անդամավճար, Ալեքսանյանի միջոցով կապ է հաստատել Թադեւոսյանի հետ:

1967 թվականի վերջին Վարդանյանի խմբակի հավաքույթում Ալեքսանյանի հետ միասին քննարկել է «ՀՀՄ-ի կանոնադրությունը», ինչպես նաեւ «Ճառը»:

Նույն ժամանակ խմբակի դրամական միջոցներից հանձնել է Ալեքսանյանին 200 ռուբլի՝ թռուցիկներ բազմացնելու ու տարածելու նպատակով գրամեքենա ձեռք բերելու համար: Նույն Ալեքսանյանին հանձնել է նաեւ վերեւում հիշատակված «Փարոս» թերթը, որը նա ստացել էր գործով վկա Մ-ից:

Համատեղ անլեգալ աշխատանք տանելու նպատակով Վարդանյանը կապ է հաստատել Կիրովական քաղաքի բնակիչ՝ ոմն Գառնիկի հետ եւ 1968 թվականի ապրիլին կազմակերպել է Թադեւոսյանի ու Ալեքսանյանի հանդիպումը նրա հետ Երեւանում, որից հետո Ալեքսանյանից ստացել է հերյուրանքներ պարունակող նյութեր հիշյալ անձնավորությանը հանձնելու համար:

1968 թվականի ապրիլին Վարդանյանը ստացել է Ալեքսանյանից 450 օրինակ թռուցիկներ-կոչեր, որոնց ճնշող մեծամասնությունը տարածել է Լենինականում ինչպես ինքն անձամբ, այնպես էլ խմբակի անդամների միջոցով:

Ամբաստանյալ Միսակ Խաչատրյանը 1967 թվականի դեկտեմբերին Թադեւոսյանի առաջարկով Արարատ քաղաքի քիմիական տեխնիկումում կազմակերպել է նույնանման անլեգալ խմբակ, որի մեջ ընդգրկել է 6 ուսանող:

1967 թվականի դեկտեմբեր ամսից մինչեւ 1968 թվականի ապրիլ ամիսը Խաչատրյանը անց է կացրել խմբակի 4 հավաքույթներ, որոնցից երկուսին մասնակցել է Թադեւոսյանը: Հավաքույթներում քննարկվել է կազմակերպչական ու թռուցիկների տարածման հետ կապված հարցեր, կարդացվել է հիշատակված «Փարոս» թերթի մի մասը:

1968 թվականի ապրիլին Խաչատրյանը ստացել է Թադեւոսյանից 220 օրինակ թռուցիկներ՝ «Կոչ հայ մտավորականությանը՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Կոչ հայ երիտասարդությանը՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ» եւ «Հիշեցում հայ ժողովրդին՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի կապակցությամբ» որոնց բովանդակությանը ծանոթացրել է խմբակի անդամներին:

Նույն թվականի ապրիլի 17-ին Խաչատրյանը ինչպես անձամբ, այնպես էլ խմբի անդամների միջոցով այդ թռուցիկները տարածել է Արարատ եւ Արտաշատ քաղաքներում:

Ամբաստանյալ Ռաֆիկ Ղարագուլյանը 1967 թվականի նոյեմբերին ծանոթանալով Ռ. Հովսեփյանի հետ, 2 անգամ մասնակցել է մանկավարժական ինստիտուտի անլեգալ խմբակի հավաքույթներին:

1968 թվականի ապրիլի 16-ին Ղարագուլյանը վերցրել է Հովսեփյանից 158 օրինակ վերոհիշյալ թռուցիկներից տարածելու նպատակով, նույն օրը այդ թռուցիկները նա բե-

ռել է թատերական-գեղարվեստական ինստիտուտ, որտեղ թռուցիկների բովանդակության հետ ծանոթացրել է իր համակուրսեցի երեք ուսանողներին առաջարկել է նրանց մասնակցել թռուցիկների տարածմանը, սակայն այդ անձինք չեն համաձայնվել:

Թռուցիկներից մեկի տեքստի հետ նա ծանոթացրել է իր եղբորը:

Թռուցիկների հետագա տարածումը նրան չի հաջողվել, քանի որ նույն օրը նա ձերբակալվել է:

Ամբաստանյալ Անդրանիկ Մխիթարյանը 1967 թվականի նոյեմբեր ամսից եղել է Հովսեփյանի կողմից կազմակերպված անլեգալ խմբակի անդամ, մասնակցել է զրպարտչական նյութերի քննարկմանը:

1968 թվականի փետրվարին նա վերցրել է Հովսեփյանի «Ճառ արտասանված հայ հայրենասերների վերամիավորման 1-ին կոնֆերանսում» վերնագրով փաստաթուղթը եւ հանձնել է այն համակուրսեցի Է-ին բազմացնելու համար:

1968 թվականի ապրիլին Մխիթարյանը մասնակցել է վերոհիշյալ թռուցիկներ կոչերի բազմացմանը: Նրա խնդրանքով նույն Է-ն, որը խմբակի անդամ չէր, Հովսեփյանի կոնսպիրատիվ սենյակում մեքենագրել է թռուցիկները, իսկ Մխիթարյանն ուղղումներ է մտցրել մեքենագրված տեքստի մեջ:

Սակայն տարածել այդ թռուցիկները նրան չի հաջողվել, քանի որ 1968 թ. ապրիլի 16-ին թռուցիկները ստանալու պահին, ձեռբակալվել է:

Ամբաստանյալ Վահան Եղիազարյանը 1967 թ. ամառը ստացել է Ռուբեն Հովսեփյանից «բաց նամակ ՍՄԿԿ-ի Կենտկոմի քաղբյուրոյին» ու «կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին» վերնագրով թռուցիկներ եւ ծանոթացրել է նրանց բովանդակության հետ ուսանողներ՝ Թ-ին եւ Ժ-ին;

Նույն ժամանակ նա բազմացման նպատակով ստացել է Հովսեփյանից վերեւում հիշված «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը, որը նշված թռուցիկների հետ միասին տարել է իր բնակավայրը՝ Մարտունու շրջանի Ծակքար գյուղը, որտեղ նրանք կարդացել է իր բարեկամ Ի-ին:

1968 թվականի մարտին Վահան Եղիազարյանը Ռուբեն Հովսեփյանի եւ մյուսների հետ միասին կարդացել ու քննարկել է «Ճառ արտասանված հայ հայրենասերների վերամիավորման 1-ին կոնֆերանսում» վերնագրով փաստաթուղթը: Նույն ամսին Ռ. Հովսեփյանի կողմից նա ներգրավվել է անլեգալ խմբակի մեջ:

1968 թվականի մարտ-ապրիլ ամիսներին նա Ռուբեն Հովսեփյանի հետ միասին բնակվել է խմբակի անլեգալ կոնսպիրատիվ սենյակում եւ մասնակցել է ներքոհիշյալ թռուցիկների մեծաքանակ բազմացմանը «Կոչ հայ մտավորականությանը՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Կոչ հայ երիտասարդությանը՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Հիշեցում հայ ժողովրդին՝ մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի կապակցությամբ»: Այդ թռուցիկներից մեկի տեքստի հետ ծանոթացել է վկա Ը-ն:

1968 թվականի ապրիլի 16-ին Վահան Եղիազարյանը ձերբակալվել է, այդ իսկ պատճառով նրան չի հաջողվել տարածել պատրաստված թռուցիկները:

Դատաքննության ընթացքում բոլոր ամբաստանյալներն առաջադրված մեղադրանքում իրենց մեղավոր ճանաչեցին եւ բացատրեցին, որ իրոք զրպարտիչ հերյուրանքներ պարունակող թռուցիկներ եւ այլ փաստաթղթեր են պատրաստել եւ տարածել այնպես, ինչպես դա շարադրված է սույն դատավճռի նկարագրական մասում:

Ամբաստանյալների կողմից կատարված հանցանքը հիմնավորված է նաեւ նախաքննության ընթացքում հայտնաբերված մեծ քանակությամբ թռուցիկներով երկու գրամեքենայով եւ այլ իրեղեն ապացույցներով:

(հ.5 գբ. 201-206):

Գործով հարցաքննված բոլոր վկաները հաստատեցին, որ ամբաստանյալներ՝ Հ. Թադեւոսյանը, Ռ. Հովսեփյանը, Է. Ալեքսանյանը, Ռ. Վարդանյանը, Մ. Խաչատրյանը, Ռ. Ղարագուլյանը, Ա. Մխիթարյանը եւ Վ. Եղիազարյանը կատարել են վերանշված արարքները:

Այսպիսով ապացուցված է, որ ամբաստանյալ Հ. Թադեւոսյանը, Ռ. Հովսեփյանը, Է. Ալեքսանյանը, Ռ. Վարդանյանը, Մ. Խաչատրյանը, Ռ. Ղարագուլյանը, Ա. Մխիթարյանը եւ Վ. Եղիազարյանը գրավոր եւ տպագրված ձեւով սիստեմատիկորեն պատրաստել եւ տարածել են սովետական պետական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ:

Պատիժ սահմանելիս դատական կոլեգիան հաշվի է առնում, որ ամբաստանյալներ Ռ. Հովսեփյանը 1966թ. իսկ Ռ. Ղարագուլյանը 1965-1966թթ. նույնպես զբաղվել են նույնանման անլեգալ գործունեությամբ: Այդ կապակցությամբ 1966թ. նրանք կանչվել են պետական անվերապահության կոմիտե եւ համապատասխան ձեւով նախազգուշացվել:

(հ. 8 գբ. 58-61: հ.4 գբ. 250-256, 269-275, հ.3 գբ. 302-306, հ.8 գբ. 39-57):

Սակայն այն նախազգուշացումից հետո նրանք շարունակել են նույն արարքները:

Միաժամանակ դատական կոլեգիան հաշվի է առնում յուրաքանչյուր ամբաստանյալի կատարած դերը, նրանց երիտասարդությունը եւ քաղաքականապես անհաս լինելը, բնութագրերը, Ղարագուլյանի ֆիզիկական պակասությունը (ձախ ոտքը կարճ է աջից 7,5 սմ. չափով, հ.8 գբ. 130-, 23-30) եւ այն, որ ամբաստանյալներ Հ. Թադեւոսյանը, Ռ. Հովսեփյանը, Է. Ալեքսանյանը, Ռ. Վարդանյանը, Մ. Խաչատրյանը, Ռ. Ղարագուլյանը, Ա. Մխիթարյանը եւ Վ. Եղիազարյանը հիմնականում ազնվորեն խոստովանել են իրենց արարքները, առաջին երկուսը, բացի դրանից աջակցել են հանցագործության բացելուն:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով Հայկական ՍՍՀ քր. դատ. օրի 293-294 հոդվածներով, դատական կոլեգիան՝

ՎՃՌԵՑ

Հակոբջան Դրաստամատի Թադեւոսյանին, Ռուբեն Մովսեսի Հովսեփյանին, Էդիկ Վրեժի Ալեքսանյանին, Ռուբիկ Թադեւոսի Վարդանյանին, Միսաք Խաչիկի Խաչատրյանին, Ռաֆիկ Աշոտի Ղարագուլյանին, Անդրանիկ Սուրենի Մխիթարյանին եւ Վահան Սարգիսի Եղիազարյանին ճանաչել հանցավոր Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 206[1] հոդվածով եւ ենթարկել ազատազրկման:

Հակոբջան Դրաստամատի Թադեւոսյանին՝ 2 տարի 3 ամիս (երկու տարի երեք ամիս) ժամանակով պատիժը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Պատժի սկիզբը հաշվել 1968 թվականի ապրիլի 17-ից:

Ռուբեն Մովսեսի Հովսեփյանին՝ 2 տարի երեք ամիս (երկու տարի երեք ամիս) ժամանակով, պատիժը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Պատժի սկիզբը հաշվել 1968 թվականի ապրիլի 16-ից:

Էդիկ Վրեժի Ալեքսանյանին՝ 1 տարի եւ 6 ամիս (մեկ տարի վեց ամիս) ժամանակով, պատիժը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Ռուբիկ Թադեւոսի Վարդանյանին 1 տարի եւ 6 ամիս (մեկ տարի եւ վեց ամիս) ժամանակով, պատիժը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Միսաք Խաչիկի Խաչատրյանին՝ 1 տարի 2 ամիս (մեկ տարի եւ երկու ամիս) ժամանակով, պատիժը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Է. Վ. Ալեքսանյանի, Ռ. Թ. Վարդանյանի եւ Մ. Խ. Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխել՝ անմիջապես վերցնել կալանքի եւ ուղարկել պետական անվտանգության կոմիտեի քննչական մեկուսարան: Կալանքի սկիզբը հաշվել 1968 թվականի նոյեմբերի 20-ից:

Ռաֆիկ Աշոտի Ղարագուլյանին՝ 1 տարի (մեկ տարի) ժամանակով, պատիժը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Պատժի սկիզբը հաշվել 1968թվականի ապրիլի 16-ից:

Անդրանիկ Սուրենի Մխիթարյանին՝ 1 տարի (մեկ տարի) ժամանակով ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Նկատի ունենալով, որ բացի վերոհիշյալից, որ նրա ընտանիքը բազմանդամ է, իսկ հայրը հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ է եւ նա սովորում եւ աշխատում է, դատապարտյալ Ա. Մխիթարյանի նկատմամբ կիրառել քր. օրի 41 հոդվածը եւ սահմանված մեկ տարի ազատազրկումը փոխարինել պայմանական դատապարտությամբ երկու տարի փորձաշրջանով:

Վահան Սարգիսի Եղիազարյանին՝ 1 տարի (մեկ տարի) ժամանակով ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Նկատի ունենալով, բացի վերոհիշյալ հանգամանքներից, որ նրա խնամքին տակ են գտնվում կինը եւ երկու մանկահասակ երեխաները, դատապարտյալ Եղիազարյանի նկատմամբ կիրառել քր. օրի 41 հոդվածը եւ սահմանված մեկ տարի ազատազրկումը փոխարինել պայմանական դատապարտությամբ երկու տարի փորձաշրջանով:

Գործով իրեղեն ապացույցներ՝ «Օպտիմա» եւ «Մոսկվա» մակնիշի երկու գրամեքենաները 125 ռուբլի դրամը պետականացնել, իսկ ռոտատորի մասերը, թռուցիկները, փաստաթղթերը եւ լոզունգները ոչնչացնել:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկ կարգով գանգատարկման եւ բողոքարկման ենթակա չէ:

Նախագահ՝ **Դանիելյան**
Ատենակալներ՝ **Դ. Գաբրիելյան է. Լազարեւա- Բախշիյան**
ՃԻՇՏ Է ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

25/11-68թ. ԵՄ.

Ազգային միացյալ կուսակցություն

1966 թվականի հոկտեմբերին Հայկազ Խաչատրյանը եւ նրա համախոհներ Ստեփան Զատիկյանն ու Շահեն Հարությունյանը հիմնադրում են Ազգային միացյալ կուսակցությունը: Այս կուսակցությունն էապես տարբերվում էր իրենից առաջ եղած բոլոր կազմակերպություններից: Մինչ այդ գործող կազմակերպություններն ու անհատները հիմնականում հանդես էին գալիս հայրենասիրության դիրքերից, առաջ քաշում Ղարաբաղի, Նախիջեւանի, Ցեղասպանության խնդիրները, արծարծում Հայկական հարցը եւ չէին պատկերացնում կամ իրենց առջեւ խնդիր չէին դնում տեսնել Հայաստանը ԽՍՀՄ կազմից դուրս՝ որպես անկախ պետություն: Իհարկե, բացառություններ կային: Դեռեւս 1964-ին «Յոթի գործ»-ով դատավարության ժամանակ է արձանագրվել, որ դատապարտյալներից ոմանք՝ Խաչիկ Սաֆարյանը, Գրիգոր Եղյանը, իրենց գրավոր տեքստերում, իսկ Մերուժան Հովհաննիսյանը՝ բանավոր ելույթներում, խոսել են անկախ Հայաստանի հեռանկարի մասին: Իր այս ցանկության մասին Մերուժան Հովհաննիսյանը հայտարարել էր նաեւ դատարանի դահլիճում: Սակայն, սրանք եղել են ընդամենը ցանկություններ, չեն կրել համակարգված բնույթ, եւ որ ամենակարեւորն է՝ չեն եղել ծրագրային: Մինչեւ ԱՄԿ-ն՝ չի եղել որեւէ կազմակերպություն, խումբ, խմբակ կամ անհատ այլախոհ, որն իր առաջնային նպատակը համարեր անկախ Հայաստանի համար պայքարը:

ԱՄԿ-ն անկախ Հայաստանի ստեղծման համար պայքարող կուսակցություն էր: Յուրաքանչյուր ԱՄԿ-ական՝ կուսակցության շարքերն ընդունվելիս պետք է իմանար, որ դա է լինելու իր կյանքի գլխավոր նպատակը: ԱՄԿ ծրագրից հետեւում է, որ այս կառույցն իրեն պատկերացնում է ոչ միայն որպես դասական կուսակցություն, այլ նաեւ՝ որպես հայ ժողովրդի անունից հանդես եկող միավոր, որպես միջպետական ու միջազգային շփումների կողմ: Ըստ ԱՄԿ ծրագրի՝ այս կազմակերպության կարեւորագույն հատկանիշներն են.

1. Ազգայնական չէ: Նրա էությանը խորթ են «միլիտարիզմը, թթու ազգայնականությունը, գերիշխանության ձգտումը (դիկտատուրա), ռասայական խտրականությունը»;
2. Հարգում է հարեւան ազգերին ու ճանաչում նրանց իրավունքը. «Վիճելի բոլոր հարցերը ԱՄԿ-ն պարտավոր է լուծել խաղաղ, փոխադարձ զիջումների եւ հարգանքի միջոցով, առանց թույլ տալու մեկ ուրիշի միջամտությունը, հարգելով դրացի ազգերի սուվերենությունը եւ արժանապատվությունը»;
3. Հարգում է միջազգային իրավունքը եւ հենվում այդ իրավունքին;
4. Խաղաղարար եւ խաղաղասեր է:

Ուշադիր ընթերցողը կնկատի, որ ծրագրի յուրաքանչյուր դրույթ ունի ճշգրիտ ձեւակերպում եւ այլակարծությունների ու տարընթերցումների տեղիք չի տալիս: ԱՄԿ-ի էությունն ընդգծող ծրագրի 6-րդ կետը՝ շեշտելու համար ամբողջությամբ գրված է մեծատառով. «ԱՄԿ-ի ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Է ԱԶԱՏԱԳՐԵԼ ԱԶԳԸ ՕՏԱՐԻ ԼԾԻՑ, ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

ԱՄԿ-ն նոր երեւույթ դարձավ ոչ միայն հայկական իրականության մեջ, այլեւ ողջ ԽՍՀՄ-ում, եւ այդ հսկա կայսրության տարածքում միակ ընդհատակյա կուսակցութ -

յունն էր, որ չնայած ճնշումներին, հալածանքներին, կալանավորումներին՝ իր հիմնադրման պահից մինչեւ ԽՍՀՄ փլուզումն անխափան ու անընդհատ գործեց: Փաստորեն, ստեղծվել էր ընդհատակյա կենսունակ այնպիսի կառույց, որի դեմ անզոր գտնվեց խորհրդային անվտանգության համակարգը: Հետեւողականորեն կալանավորում եւ երկարատեւ պատժաչափերի էին դատապարտում ԱՄԿ-ականներին, սիբիրյան կամ ուրալյան կալանավայրեր էին տեղափոխում, բայց դրան զուգահեռ՝ Հայաստանում նորանոր մարդիկ էին անդամագրվում ու շարունակում ԱՄԿ-ի անունից գործել: 1968-ից հետո՝ քաղաքական նկատառումներով դատապարտվածների գերակշիռ մասը կամ ԱՄԿ-ական է եղել, կամ առնչություններ է ունեցել ԱՄԿ-ի հետ: ԱՄԿ-ականների եւ ոչ ԱՄԿ-ական հայ այլախոհների տարբերություններից մեկն էլ այն էր, որ ԱՄԿ-ականները դատավարությունների ընթացքում, չնչին բացառություններով, իրենց մեղավոր չէին ճանաչում ու չէին զղջում իրենց ծավալած գործողությունների համար: Հակառակը՝ նրանք հայտարարում էին, որ ԱՄԿ անդամ են, մնում են հավատարիմ ԱՄԿ սկզբունքներին եւ իրենց մեղավոր չեն ճանաչում: Իսկ մինչ ԱՄԿ-ականները՝ դատապարտված գործիչներից շատերը հեշտությամբ հանդես էին գալիս զղջման հայտարարություններով: Եթե համեմատենք այս գրքում ներկայացված քաղբանտարկյալների դատավճիռները, չենք կարող չնկատել այդ իրողությունը: Իհարկե, դատավարությունների ժամանակ դրսեւորած այս արժանապատիվ կեցվածքն ԱՄԿ-ականների մենաշնորհը չէր: Եղել են նաեւ ոչ ԱՄԿ-ականներ, որոնք նման կեցվածք են դրսեւորել. օրինակ՝ Զավեն Հարությունյանը 1967 թ. դատավարության ժամանակ: Նույն կեցվածքն են որդեգրել նաեւ 1970-ականների կեսերին եւ 80-ականների առաջին կեսին դատապարտված իրավապաշտպաններն ու անհատ այլախոհները, բայց ԱՄԿ-ականներն այս տեսակետից շահեկանորեն տարբերվում են մյուսներից:

1988-ին ԱՄԿ-ն ինքնալուծարվեց, որի հենքի վրա Պարույր Հայրիկյանն ստեղծեց Ազգային ինքնորոշում միավորումը: Այնուհետեւ նախկին ԱՄԿ-ականների կողմից ստեղծվեցին Հայաստանի հանրապետական կուսակցությունը (Աշոտ Նավասարդյան) եւ Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միությունը (Ազատ Արշակյան):

Ազգային միացյալ կուսակցության ծրագիրը

ԱՄԿ-ն քաղաքական, դեմոկրատական, հասարակական կազմակերպություն է, որի անդամը պետք է լինի ամբողջ հայության գիտակից տարրը: Հայ ժողովրդի միասնականությունը, ազգային հոգեբանության եւ բնորոշ կողմերի անխախտ պահպանումը, փոխադարձ սիրո առկայությունը ներկայումս հանդիսանում է ամբողջ աշխարհի հայ տարրի հիմնական բնույթը, որի շնորհիվ այդ տառապած, հայրենիքից քշված ժողովուրդը կկարողանա հասնել իր բարի նպատակների, իղձերի իրականացմանը՝ կկարողանա վերականգնել կորցրած պետականությունը, կվերադարձնի հափշտակված, սրբապղծված Հայրենի Հողը: Եւ ամենից կարեւորն է, Հայ ապրելու իր սեփական տան մեջ, իր սուրբ հողի վրա, նորից կստեղծի այն աշխարհահռչակ դրախտը, որ հիշատակվում է Սուրբ Գրքում, քանզի նա ունի այն բոլոր առավելությունները, որով օժտված է մարդը լայն իմաստով:

1) ԱՄԿ-ն իր հասարակական, քաղաքական, գաղափարական գործունեության ընթացքում զավթողական ոչ մի նպատակ չպետք է ունենա, կուսակցության ազգային-ա -

զատագրական պայքարի գաղափարներին խորթ են միլիտարիզմը, թթու ազգայնականությունը, գերիշխանության ձգտումը (դիկտատուրա), ռասայական խտրականությունը եւ միջազգային օրենքների կոպիտ խախտումը:

2) Դրացի բոլոր ազգերի հետ ԱՄԿ-ն պետք է ձգտի բարի եւ անկեղծ եղբայրական հարաբերությունների մեջ լինել: Վիճելի բոլոր հարցերը ԱՄԿ-ն պարտավոր է լուծել խաղաղ, փոխադարձ զիջումների եւ հարգանքի միջոցով, առանց թույլ տալու մեկ ուրիշի միջամտությունը, հարգելով դրացի ազգերի սուվերենությունը եւ արժանապատվությունը:

3) Բոլոր այն ազգերը, որոնք կցանկանան ազնիվ, եղբայրական փոխհարաբերությունների մեջ մտնել Հայ ժողովրդի հետ, օգնության ձեռք կմեկնեն կամ օգնության կարիք կզգան առանց շահամոլության, ԱՄԿ-ի սրբազան պարտքն է սրտաբաց դիմավորելու եւ ողջունելու նման մարդասիրական քայլը:

4) Այն ազգը, որ վստահ լինելով իր ազգային բազմաքանակության եւ զենքի հզորության վրա, կձգտի զարտուղի ստոր ճանապարհներով, թաքնված բարեկամի դիմակի տակ, իր գերիշխանությունը տարածել, երկիրը կողոպտել եւ ստրկացնել, ԱՄԿ-ն պարտավոր է նախ դիվանագիտական միջոցներով, իմաստուն, խոհեմ, օգտագործելով մտքի ուժը, հիմնվելով միջազգային օրենքների վրա, անվեհեր խիզախությամբ եւ հաստատակամությամբ հեռացնել վտանգն իր հայրենիքից, աշխատելով վերջ դնել օրհասական պատերազմի վտանգին:

Եթե դիվանագիտական միջոցները չօգնեն խաղաղության գործին, բարիդրացիական հարաբերությունների վերականգնմանը, եւ թշնամին ավազակային ոտնձգություն կանի, հաշվի չառնելով ուրիշ ազգերի արժանապատվությունը, ԱՄԿ-ն ոտքի պետք է հանի ամբողջ ժողովրդին թշնամու դեմ: Միասնական ուժի, խիզախորեն պայքարի նվիվածության, Հայրենիքի ջերմ սիրո, նրա ազատության եւ խաղաղության համար մարտնչող ուժի դեմ բոլոր իմպերիալիստներն անզոր կլինեն:

5) Քանի դեռ գոյություն չունի Ազատ եւ Անկախ Հայաստան, նշանակում է՝ բացակայում է ամենակարեւոր բանը լիարժեք ազգ կամ պետություն կոչվելու համար: Հայրենասեր մարտնչող ուժի վրա ծանրանում է այդ առաջնային ու դժվարին խնդիրը:

6) ԱՄԿ-ի ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Է ԱԶԱՏԱԳՐԵԼ ԱԶԳԸ ՕՏԱՐԻ ԼԾԻՑ, ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

7) Պայքարել Միացյալ Հայկական Պետություն ստեղծելու համար, իսկ հետագայում նաեւ Կիլիկիայի Հայկական հանրապետության ստեղծման համար:

8) Հայաստանում կլինի մեկ հասարակարգ՝ ծնունդ կյանքի օրենքների, ապրելա - կերպի, ազնիվ աշխատանքի եւ ջերմ հայրենասիրության: Այդ հասարակարգում չեն լինի հզորն ու տերը: Հայ ազգի մեջ եղած բոլոր հասարակական կողմերը, որոնք արգասիքն են ճնշման եւ բռնությունների, արագ կերպով արմատախիլ կլինեն, երբ ժողովուրդը տերն ու տնօրենը կլինի իր Հայրենիքի եւ ունեցվածքի:

9) ԱՄԿ-ն անողոք պայքար պետք է ծավալի հայ ժողովրդին կողոպտելու դեմ, նրա ողջ հարստությունը Ռուսաստան տեղափոխելու դեմ: Հայ ժողովրդի ստեղծած բարիք - ները, երկրի ընդերքում գտնվող հարստությունը, երկրի ամբողջ տնտեսությունը մեկ տնօրեն պետք է ունենա՝ Հայ ժողովուրդը:

10) Անողոք պայքար սկսել մոսկովյան գերիշխանության դեմ, կամայականությունների եւ բռնությունների դեմ, որից հեծում եւ տքնում է ամբողջ ազգը: Ազատագրել ազ - գը նման անմարդկային, միջազգային օրենքներով անթույլատրելի վիճակից:

11) Պահանջել Ռուսաստանից՝ խաղաղ ճանապարհով վերադարձնել Հայաստանին այն հողային տարածությունները, որ անօրինական կարգով տրվել են Ադրբեջանին եւ Վրաստանին: Միեւնույն ժամանակ ամեն կերպ պետք է խուսափել ռուսական ստոր քաղաքականությունից, որը նա գործադրում է իր ամբողջ գոյության ընթացքում, բոլոր ազգերի նկատմամբ՝ հեռու թե մոտիկ, այսինքն՝ չներգրավվել նրա հրահրած կեղտոտ ազգամիջյան խառնակչությունների եւ չվստահել ոչ մի բանում:

Եթե Ռուսաստանը կփորձի արդարացի պահանջների դեմ ուժ գործադրել, այն ժամանակ ԱՄԿ-ի պարտքն է գործադրել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք հարկավոր կլինեն սանձելու բռնությունը, նման դեպքերում ԱՄԿ-ն կլինի անողոք:

12) ԱՄԿ-ն պետք է պահանջի ներկա կառավարությունից, որպեսզի վերականգնվի ազգային բանակը եւ սպառազինվի ժամանակակից առաջնակարգ զենքով, որի համար Հայաստանը մեծ հնարավորություններ ունի: Ամբողջ հայ զինվորականությունը, սկսած շարքային զինվորից մինչեւ մարշալն ու ծովակալը, պետք է վերադառնան իրենց հայրենիքը՝ Հայաստան: Պետք է վերադարձնել նաեւ բոլոր գիտնականներին, գյուտարարներին ու մասնագետներին, որոնք իրենց տաղանդով պարտական են միմիայն Հայ ժողովրդին, բայց իրենց գիտելիքները տալիս են Ռուսաստանին, իսկ հայրենիքի եւ ազգի համար ոչինչ չեն ներկայացնում:

13) ԱՄԿ-ի նպատակն է ներկայիս Հայկական հանրապետությունը, որը կեղծ պետություն է իր խաբեբայական սիստեմով, դարձնել իսկական Արժեք պետություն, որը ոչ միայն չպետք է ենթարկվի օտարի հրամաններին եւ դուրս գա նրա ստրկատիրական գերիշխանությունից, այլեւ այդ Անկախ Հայաստանը պետք է ունենա զորք, զենք եւ դրամ (ոսկու պաշար):

14) Եթե Ռուսաստանը կցանկանա անշահախնդիր, բարեկամական հարաբերությունների մեջ մտնել Հայկական Հանրապետության հետ, Հայաստանը երբեք չի հրաժարվի անկեղծ բարեկամությունից:

15) ԱՄԿ-ի սրբազան պարտքն է իր բողոքի ձայնը բարձրացնել Հայկական դատին արդարացի լուծում տալու համար եւ եռանդուն պայքար ծավալել Արեւմտյան Հայաստանի ստեղծման համար, որպեսզի աշխարհի բոլոր կողմերից երեք միլիոնից ավելի թափառական հայեր վերադառնան իրենց հազարամյակների օրրանը, որը շատ կարեւոր դեր կխաղա խաղաղության համար Միջին Արեւելքում եւ ամբողջ աշխարհում:

ԱՄԿ-ի այս ազնիվ ձգտումներն իրականացնելու համար, կուսակցության յուրաքանչյուր անդամից պահանջվում է.

ա. ջերմ սեր դեպի հայրենիքն ու ազգը
բ. անձնազոհություն
գ. համառություն, տոկունություն, եւ խիզախություն
դ. վստահություն իր ճշմարտացիության, գիտելիքների եւ հաղթանակի վրա
ե. հավատ դեպի ընկերը եւ կուսակցությունը

Լինել խորաթափանց եւ աչալուրջ: Ինչպես Սուրբ Գրքում ամփոփված ասվում է՝ Հույս, Հավատ եւ Սեր:

ԱՄԿ-ի ծրագիրն ընդհանուր համաձայնությունից եւ հաստատումից հետո ենթակա չէ քննարկման եւ փոփոխությունների այնքան ժամանակ, մինչեւ իրադրությունների արմատական փոփոխություններ տեղի չունենան: Ծրագիրը միշտ էլ ենթակա է նույն գաղափարական նպատակներին ծառայող խնդիրների ավելացմանը:

ԱՄԿ-ի կանոնադրությունը

Այս կազմակերպությունը վերաբերում է միայն հայ ազգին: Շատ հազվագյուտ բացառությամբ՝ կարող են անդամ լինել օտար ազգի միայն այն քաղաքական գործիչները կամ արվեստագետները, հայագետները, որոնք կանգնած են ճնշված ազգերի պաշտպանության դիրքերում:

Աշխարհի ամեն մի մասում ապրող հայ ազգի ամեն մի զավակ իրավունք ունի մտնելու «Ազգային միացյալ կուսակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության շարքերը, առանց սեռի, կրթական մակարդակի խտրականության:

1) ԱՄԿ-ի անդամ կարող են լինել 18 տարեկանից ոչ պակաս անձինք, որոնք կընդունեն ԱՄԿ-ի ծրագիրը, կանոնադրությունը եւ Ազգային Սրբազան Երդումը:

2) ԱՄԿ-ի անդամը պարտավոր է սրբությամբ կատարել կուսակցության ծրագիրը, նրա իրագործումը կյանքում՝ ի նպաստ Ազգի եւ Հայրենիքի պահանջների:

3) ԱՄԿ-ի անդամը պարտադիր կերպով պետք է զբաղվի ինքնազարգացմամբ եւ աչալուրջ կերպով հետեւի միջազգային իրադարձություններին:

ա. պետք է ուսումնասիրի փիլիսոփայություն, պատմություն, հատկապես Հայոց պատմություն 19-20-րդ դարերի, կրոն (բոլոր դավանանքների), մոտ անցյալի եւ ժամանակակից միջազգային քաղաքականություն, հատկապես այն ազգերի, որոնք անմիջական առնչություն ունեն Հայ ազգի, նրա ճակատագրի հետ:

բ. պետք է լինել բարի եւ ազնիվ, միեւնույն ժամանակ անողոք չարի նկատմամբ:

4) ԱՄԿ-ի բարձրագույն ղեկավար մարմինը հանդիսանում է Գլխավոր խորհուրդը, որի որոշումները խստորեն պարտադիր են կուսակցության յուրաքանչյուր անդամի համար:

5) ԱՄԿ-ի բոլոր անդամները պարտադիր կերպով տալիս են իրենց նյութական օգնությունը՝ անդամավճարը, սահմանված չափով:

6) ԱՄԿ-ի յուրաքանչյուր անդամ անմիջականորեն ենթարկվում է իր խմբի ղեկավարին, որն ընտրվի է: Խմբի ղեկավարները հաշվի են առնում խմբի անդամների կարծիքը եւ խորհուրդները, բայց վճռական ձայնը պատկանում է խմբի ղեկավարին:

7) Խմբի ղեկավարները անմիջականորեն ենթարկվում են Գլխավոր խորհրդին:

8) ԱՄԿ-ի յուրաքանչյուր անդամից խստորեն պահանջվում է սրբությամբ պահպանել կուսակցության գաղտնիքները: Դավաճանության դեպքում կդիտվի որպես ազգի ու Հայրենիքի դավաճան:

9) ԱՄԿ-ի բոլոր անդամները, որոնք ընդունում են կուսակցության կանոնադրությունը եւ Ազգային Սրբազան Երդումը, պարտադիր կերպով ենթարկվում են ԱՄԿ-ի քաղաքական եւ գաղափարական գործունեությանը:

ԱՄԿ-ի երդումը

Երկրի վրա երկնի մի կտոր, երկրային դրախտ, աստվածային տուրք - ոգով միշտ անմահ, հանճարով հզոր ու միշտ… տառապած, խոշտանգված, լկված իմ Մայր Հայաստան, իմ սուրբ Հայրենիք: Դու, որ ինձ տվիր միս ու արյունդ, անմահ ու անեղծ Ոգին Հայկական, Աստվածային հանճարդ վսեմ, բյուր սերունդներիդ հրաշագործած Սուրբ Հողը տանջված, բայց միշտ փառավոր, այսօր տառապում ես նորից օտարի բիրտ

կրնկի տակ: Սնվում է նա քո միս ու արյունով, անհունաթռիչ մտքովդ հզոր, հզորանալու, ոչնչացնելու Ոգին Հայկական: Քո հանճարեղ զավակներն իրենց Միտքն ու Արյունը տվին թշնամուն, տարված սին հույսով, գեթ խնայելու հայրենիքն իրենց: Արյամբ հղփացած ոսոխը, սակայն, չբավարարվեց լոկ այդ արյունով: Նա ցանկանում է Ոգին Հայկական արմատից պոկել, ցրել աշխարհում, Հայի անունը աշխարհից ջնջել: Դատարկ, սին հույսեր արյունածարավ բորենիների: Այդ չի հաջողվի: Ոգին Հայկական անմահ է, գիտցե՛ք: Այդ ասում եմ ես՝ Որդին Հայկազուն մի Աստվածային Սուրբ Ժողովրդի: Երդվում եմ ես քեզ, Ժողովուրդ հայոց, երդվում եմ անմեղ զոհերիդ արյամբ, քո զավակների Սուրբ գերեզմանով. քանի պղծում է իր ներկայությամբ Հայոց Սուրբ Հողը գեթ մի թշնամի, քանի ապրում եմ, քանի շնչում եմ, կպայքարեմ ես սրի դեմ՝ սրով, հրի դեմ՝ հրով, մահվան դեմ՝ մահով: Իմ կյանքը քոնն է, դու ես այն տվել, թե դավաճանեմ քո ազատության սրբազան գործին, թե ձեռքս դողա մահ տալ թշնամուն, ստոր ոսոխին, նենգ դավաճանին, անգամ դա լինի ՄԱՅՐՍ ՀԱՐԱԶԱՏ, թող նզովքը քո, Ժողովուրդ Հայոց ու Աստվածային զայրույթդ հզոր, տիեզերապիղծ ստոր արարքը պատժե մահով, քանզի ամենասուրբ մայրը ինձ համար դու ես, Հայաստան:

ԱՄԿ գործով առաջին դատավարությունը

Ազգային միացյալ կուսակցության գործով առաջին դատավարությունն ընթացել է 1969 թ. հունվարին: Ամբաստանյալները երեքն էին՝ Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Զատիկյանը եւ Շահեն Հարությունյանը: Նրանք մեղադրվում էին ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Բացի այս հոդվածներից, Հայկազ Խաչատրյանը մեղադրվում էր նաեւ 232 հոդվածով (ապօրինի կերպով զենք, զինամթերք կամ պայթուցիկ նյութեր կրելը, պահելը, պատրաստելը, ձեռք բերելը կամ վաճառելը), ինչի համար դատապարտվում է 2 տարի ազատազրկման: Խոսքը ռազմաճակատից բերած ատրճանակի մասին էր, որն առգրավել էին նրա բնակարանի խուզարկության ժամանակ: Իսկ Շահեն Հարությունյանը մեղադրվում էր նաեւ 211 հոդվածի 1-ին մասով (փաստաթղթեր, դրոշմակներ, կնիքներ, բլանկներ հափշտակելը կամ փչացնելը), ինչի համար դատապարտվում է 1 տարի ազատազրկման: Ե՛վ Հայկազ Խաչատրյանը, ե՛ւ Շահեն Հարությունյանն այս վերջին երկու հոդվածներով նախատեսված պատժի կրումից ազատվում են հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1967 թվականի հոկտեմբերի 31-ի ներում շնորհելու մասին հրամանագրի համաձայն:

Հայկազ Խաչատրյան
լուս. քր. գործից



Ստեփան Զատիկյան
լուս. քր. գործից



Շահեն Հարությունյան
լուս. քր. գործից

Հայկազ Կարոյի Խաչատրյանը ծնվել է 1919 թվականին, Երեւանում: Նկարիչ է: Մասնակցել է 2-րդ համաշխարհային պատերազմին եւ պարգեւատրվել Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով: 1966 թ. ապրիլի 24-ին Կոմիտասի անվան զբոսայգում ձերբակալվել է եւ, ի թիվս շատերի, ենթարկվել 15-օրյա կալանքի: Այնտեղ էլ ծանոթացել է իր ապագա համախոհներ Ստեփան Զատիկյանի եւ Շահեն Հարությունյանի հետ: Ազատ արձակվելուց հետո, հենց նրանց հետ էլ հիմնադրել է Ազգային միացյալ կուսակցությունը: Ինքն է գրել կուսակցության ծրագիրը եւ կանոնադրությունը: Համախոհների հետ միասին կազմակերպել է «Փարոս» թերթի տպագրությունը եւ տարածումը: Կալանավորվել է 1968-ի հուլիսի 11-ին: Դատապարտվել է 5 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայրերում: Ազատ է արձակվել 1975-ին: Չնայած ազատ արձակվելուց հետո գտնվել է ոստիկանական հսկողության տակ, բայց չի կտրել կապերը համախոհների հետ եւ շարունակել է իր գործունեությունը: 1978-ին կրկին կալանավորվել է. այս անգամ արդեն ՊԱԿ-ի մշակած շինծու մեղադրանքով՝ ՀԽՍՀ քր. օր.-ի 222 (խուլիգանություն) եւ 149 (քաղաքացիների անձնական գույքի դիտավորյալ ոչնչացում) հոդվածներով: Դատապարտվել է 1 տարի 6 ամիս ազատազրկման: Պատիժը կրելու համար ուղարկել են Վորկուտայի, այնուհետեւ՝ Սիկտիվկարի քրեական հանցագործների համար նախատեսված կալանավայր: ՊԱԿ-ի կարեւորագույն խնդիրներից մեկն էր՝ ոչ միայն հեռու պահել Հայկազ Խաչատրյանին Հայաստանից, այլեւ հատուկ մշակված դաժանագույն բանտային պայմաններով ու տեղից տեղ ձգվող երկարատեւ էտապներով քայքայել նրա առողջությունը: Սա արդեն Մոսկվայի մետրոյում տեղի ունեցած պայթյունից հետո էր: Բանտային ծանր պայմանների հետեւանքով 60-ամյա Հայկազ Խաչատրյանի առողջությունը վերջնականապես քայքայվում է, իսկ կաթվածից հետո զրկվում է ընդհատակյա ակտիվ գործունեություն ծավալելու հնարավորությունից: 1980-ին ազատ է արձակվում ու վերադառնում Հայաստան: Հիմնականում զբաղվում է գեղանկարչությամբ: Երբեք չի խզել կապերը հայ այլախոհների եւ ԱՄԿ-ականների հետ: Նրանց համար միշտ մնացել է որպես խորհրդատու եւ հեղինակություն: Վախճանվել է Երեւանում 1989 թ. սեպտեմբերի 28-ին:

Ստեփան Սեղբոսի Զատիկյանը ծնվել է 1946 թ., Երեւանում: Մինչեւ ձերբակալվելը սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի 5-րդ կուրսում: 1966 թ. ապրիլի

24-ին Կոմիտասի անվան զբոսայգում ձերբակալվել է եւ, ի թիվս շատերի, ենթարկվել 15-օրյա կալանքի: Այնտեղ էլ ծանոթացել է իր ապագա համախոհներ Հայկազ Խաչատրյանի եւ Շահեն Հարությունյանի հետ: Հետագայում նրանց հետ մասնակցել է Ազգային միացյալ կուսակցության հիմնադրմանը: Գրել է կուսակցության երդման տեքստը: Մասնակցել է ծրագրի ու կանոնադրության մշակման եւ խմբագրման աշխատանքներին: Ընկերների հետ միասին կազմակերպել է «Փարոս» թերթի տպագրումն ու տարածումը: Կալանավորվել է 1968-ի հուլիսի 11-ին: Դատապարտվել է 4 տարի ազատազրկման: Սկզբում պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում, այնուհետեւ կալանավայրում ծավալած ակտիվ գործունեության համար 1970-ին խստացվել է ռեժիմը, եւ նա ուղարկվել է Վլադիմիրի բանտ: 1972-ին ազատ է արձակվել եւ վերադարձել Երեւան: Նրա նկատմամբ սահմանվել է ոստիկանական հսկողություն, ինչը չի խանգարել Զատիկյանին շարունակել շփվել ԱՄԿ-ական իր ընկերների եւ այլ այլախոհների հետ:

1977 թ. հունվարի 8-ին պայթյուն է իրականացվում Մոսկվայի մետրոյում: Նույն թվականի հոկտեմբերի 28-ին պայթյունն իրականացնելու մեղադրանքով ձերբակալվում են Հակոբ Ստեփանյանը եւ Զավեն Բաղդասարյանը, իսկ նոյեմբերի 2-ին՝ որպես կազմակերպիչ ձերբակալվում է Ստեփան Զատիկյանը: Այս գործով իրականացված ե՛ւ նախաքննությունը, ե՛ւ դատաքննությունը ժամանակին տարատեսակ կասկածների տեղիք տվեցին: Այսօր էլ շատ բան դեռ մութ է մնում: Ամեն ինչ, նաեւ դատավարությունը, իրականացվում էր գերգաղտնիության պայմաններում, այնպես որ հասարակությանն անհայտ մնաց, թե ինչ էր կատարվել իրականում, եւ իրո՞ք Զատիկյանը, Բաղդասարյանն ու Ստեփանյանն առնչություն ունեին այս գործին: ԽՍՀՄ-ում եւ արտերկրում գործող բազմաթիվ իրավապաշտպաններ այդ ժամանակ հանդես եկան դատավարության գաղտնիությունը դատապարտող հայտարարություններով: Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր եւ հանրահայտ գիտնական ու իրավապաշտպան Անդրեյ Սախարովը հայտարարեց, որ դա կարող է եւ ՊԱԿ-ի կողմից ԽՍՀՄ-ում այլախոհության դեմ ուղղված սադրանք լինել: 1979 թ. հունվարի 24-ին երեքին էլ դատապարտեցին մահապատժի: Դատավճռի հրապարակումից հինգ օր անց՝ 1979-ի հունվարի 29-ին Հակոբ Ստեփանյանին, Զավեն Բաղդասարյանին եւ Ստեփան Զատիկյանին գնդակահարում են:

Շահեն Հարությունի Հարությունյանը ծնվել է 1937 թ., Երեւանում: Մինչեւ կալանավորվելը սովորել է մանկավարժական ուսումնարանի 3-րդ կուրսում: Կալանավորվել է 1968-ի հուլիսի 11-ին: Ընդհատակյա գործունեություն սկսել է ծավալել 1963 թվականից: Ծանոթացել է այդ ժամանակ գործող «Հայաստանի երիտասարդական միություն» կոչվող կազմակերպության անդամների հետ: Հետագայում «Յոթի գործ»-ով խուզարկություն է կատարվել նրա բնակարանում, նա հարցաքննվել է եւ դատավարության ժամանակ ներգրավվել է որպես վկա: Ճանաչել է 60-ականներին գործող այլախոհներից շատերին եւ առնչվել նրանց հետ: Եղել է 1965 թ. Եղեռնի 50-ամյակի կապակցությամբ իրականացված ցույցի կազմակերպիչներից մեկը: 1966-ի ապրիլի 24-ին Կոմիտասի անվան զբոսայգում ձերբակալվել է եւ, ի թիվս շատերի, ենթարկվել 15-օրյա կալանքի: Այնտեղ էլ ծանոթացել է Հայկազ Խաչատրյանի եւ Ստեփան Զատիկյանի հետ: Հետագայում՝ նրանց հետ միասին մասնակցել է Ազգային միացյալ կուսակցության հիմնադրմանը: Մասնակցել է կուսակցության կանոնադրության ու ծրագրի մշակման աշխատանքներին: Կազմել է կուսակցության հարցաթերթիկը: Համախոհների հետ միասին կազմակերպել է «Փարոս» թերթի տպագրումն ու տարածու-

մը: Դատապարտվել է 3 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի կալանավայրերում: Ազատ արձակվելուց հետո եղել է ոստիկանական հսկողության տակ, բայց չի կտրել կապերը այլախոհների հետ եւ շարունակել է հակախորհրդային գործունեությունը: 1976 թ. մասնակցել է Հայաստանի հելսինկյան խմբի կազմակերպման աշխատանքներին, որի գործունեության մասին պաշտոնապես հայտարարվել է 1977-ի ապրիլին: Ինքն է եղել Մոսկովյան հելսինկյան խմբի հետ հայաստանյան խմբի կապող օղակը: Նույն տարվա դեկտեմբերին՝ ՊԱԿ-ի կազմակերպած սադրանքի հետեւանքով ձերբակալվում է եւ շինծու մեղադրանքով (խուլիգանություն) դատապարտվում երեք տարի ազատազրկման: Դատապարտվելուց հետո նրան տեղափոխում են Մոսկվայի ՊԱԿ-ի մեկուսարան՝ Լեֆորտովո, որտեղ պահում են հինգ ամիս եւ հարցաքննում մոսկովյան մետրոյում իրականացված պայթյունի գործով: Այնուհետեւ տեղափոխում են Հայաստան, որտեղ էլ շարունակում է կրել իր պատիժը: Ազատ է արձակվում 1981-ին: Ազատ արձակվելուց հետո շարունակում է առնչվել հայաստանյան ու խորհրդային այլախոհների հետ, մասնակցում է Հայաստանի հելսինկյան խմբի աշխատանքներին: 1985-ին ՊԱԿ-ը նրան կանգնեցնում է երկընտրանքի առաջ. կամ՝ նոր կալանավորում, կամ՝ հեռանալ ԽՍՀՄ-ից: Հարկադրված մեկնում է ԱՄՆ: 1986-ին ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է կայացնում զրկել Շահեն Հարությունյանին ԽՍՀՄ քաղաքացիությունից: ԱՄՆ-ում նա կազմակերպում է Հայ քաղբանտարկյալների պաշտպանության կոմիտե եւ «Երկունք» վերնագրով թերթ է հրատարակում: Ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում:

«Փարոս» թերթը

1967 թ. ապրիլին, Ցեղասպանության օրվա կապակցությամբ, ԱՄԿ-ն տարածում է «Փարոս» վերնագրով առաջին թռուցիկը, իսկ նույն տարվա հոկտեմբերի 19-20-ին տարածում է նաեւ չորս էջից բաղկացած «Փարոս» թերթը՝ հետեւյալ ութ հոդվածներով. «Ելնում են նորերը», «Հայ ժողովրդին», «Հայաստանը լծի տակ», «Հայկական հարցը», «Միջազգային դրությունն այսօր», «Փաստերն անողոք են», «Ինչ է ազգի լեզուն», «Երկու խոսք»: 1950-ականների վերջերից սկսած՝ Հայաստանում գործող շատ խմբեր ու խմբակներ են զբաղվել թռուցիկների ու թերթիկների տարածմամբ, ինչի պատճառով բազմաթիվ մարդիկ են կալանավորվել ու դատապարտվել: Բայց «Փարոսը» էապես տարբերվում էր իրենից առաջ եղած թռուցիկներից: Սա նոր երեւույթ էր ոչ միայն Պետանվտանգության կոմիտեի ու խորհրդային իշխանությունների, այլեւ այդ շրջանում գործող այլախոհների համար: Նախ՝ դա թերթ էր եւ այդ թերթում խոսվում էր այն մասին, որ Հայաստանը պետք է դուրս գա ԽՍՀՄ կազմից եւ անկախ պետություն դառնա, ասվում էր, որ Հայաստանը բռնակցվել է Ռուսաստանին եւ ըստ էության՝ գաղութ է, քննադատվում էր մարքս-լենինյան ուսմունքը, հեղինակները հանդես էին գալիս հակախորհրդային ու հակակոմունիստական դիրքերից: Սա խորհրդային պետությանն ուղղված մարտահրավեր էր: Այդ ժամանակաշրջանի համար այս ամենը դժվարամարս նորույթ էր եւ մերժելի էր ոչ միայն հասարակության մեծամասնության, այլեւ հրապարակում գործող այլախոհների համար: Առաջին անգամ 1958-ին՝ իրենց տարածած թռուցիկով սովետներին նման մարտահրավեր էր նետել Աշոտ Ղազարյանն իր խմբակով: Դրանից հետո տասը տարի Խորհրդային Հայաստանում գրավոր նման կոչ չէր

հնչել, եւ այդ կարգի խնդիրներ չէին քննարկվել: Հայկական հարցի լուծման ամենաակտիվ ջատագովներն անգամ՝ հարցի լուծման հույսը կապում էին Ռուսաստանի բարյացակամության հետ եւ ԽՍՀՄ շրջանակներում էին պատկերացնում Ղարաբաղի ու Նախիջեւանի խնդիրների լուծումը: Անկախության հարցը կամ ընդհանրապես չէր քննարկվում կամ էլ քննարկվում էր որպես վերացական, ցանկալի, բայց անհասանելի մի բան: Ահա այս մտայնության պայմաններում էր, որ ասպարեզ ելավ «Փարոսը» եւ այդ շրջանի հայ հասարակական-քաղաքական մտածողության մեջ հեղափոխական դեր կատարեց՝ ջարդեց բազմաթիվ տաբուներ, քննարկելի դարձրեց այնպիսի արգելված թեմաներ, ինչպիսիք էին անկախությունը եւ կոմունիզմի գաղափարախոսության սխալ լինելու հնարավորությունը: Ի դեմս «Փարոսը» տարածողների՝ խորհրդային պետությունը տեսնում էր արդեն ոչ թե պարզ այլախոհների, այլ՝ վտանգավոր գաղափարական թշնամիների: Պետանվտանգության կոմիտեին հանձնարարված էր հնարավորինս շուտ բացահայտել ու կալանավորել նրանց, բայց լայնածավալ որոնողական աշխատանքները ցանկալի արդյունք չեն տալիս: Անգամ այլախոհական շրջանակներում ներդրված եւ այդ շրջանակներում հեղինակություն վայելող գործակալի միջոցով չեն կարողանում «Փարոսի» հեղինակների մասին լիարժեք ու վերջնական տեղեկություններ հավաքել: Տենդագին փնտրտուքների ընթացքում ՊԱԿ-ը 1967-68 թթ. ընթացքում ձերբակալում է բազմաթիվ այլախոհների ու նրանց առնչվող մարդկանց եւ դատապարտում տարբեր պատժաչափերի: Ձերբակալվածներից մեկը հարցաքննության ժամանակ հայտնում է, որ իր մոտ հայտնաբերված «Փարոս» թերթը ստացել է Շահեն Հարությունյանից: Հետեւելով Շահեն Հարությունյանին եւ համադրելով այլ աղբյուրներից ստացած տեղեկությունները՝ ՊԱԿ-ը բացահայտում է ԱՄԿ եռյակին: 1968-ի հուլիսի 9-ից սկսվում ձերբակալությունները:

Հայկազ Խաչատրյանի առաջին հարցաքննության արձանագրությունը կազմվել է 1968 թ. հուլիսի 9-ին: Առաջին իսկ հարցաքննության ժամանակ Խաչատրյանը հայտարարում է, որ միշտ տարված է եղել հայրենասիրական գաղափարներով եւ Ստեփան Զատիկյանի ու Շահեն Հարությունյանի հետ հենց ինքն է պատրաստել եւ տարածել «Փարոսը»:

Նույն օրվա՝ հուլիսի 9-ի հարցաքննության ընթացքում Ստեփան Զատիկյանը հայ - տարարում է, որ ունի հայրենասիրական գաղափարներ, որոնք երբեք չի թաքցրել, բայց հրաժարվում է «Փարոսից» եւ չի տալիս իր ընկերների անունները:

Հուլիսի 10-ի հարցաքննության ժամանակ Ստեփան Զատիկյանը քննիչին տեղեկացնում է, որ հացադուլ է սկսել եւ հետեւյալ գրավոր հայտարարությունն է անում.

Պետական անվտանգության կոմիտեի
քննչական բաժնի պետ Դադայանին
կասկածյալ Ստեփան Սեղբոսի Զատիկյանից

Հայտարարություն

Որպեսզի հասնեմ իմ մի քանի օրինական պահանջների բավարարմանը՝ հանդիպեմ հանրապետության դատախազի հետ, հանդիպեմ հասարակության ներկայացուցիչների հետ, հանդիպեմ մոբս հետ, ինչպես նաեւ հարցաքննությունների ժամանակ որպես հիմքերի հիմք ընդունվի Մարդու իրավունքների դեկլարացիան, որը բարձր է ցանկացած պետության, ցանկացած հասարակարգի օրենքներից, որի տակ կա նաեւ ՍՍՀՄ-ի ներկայացուցչի ստորագրությունը, հայտարարում եմ հացադուլ, որը, փաստորեն, սկսել եմ 1968 թ. հուլիսի 9-ից եւ գրավոր այդ մասին հայտնում եմ 1968 թ. հուլիսի 10-ին, ժամը 16-ին: Մինչ այդ ինձ հնարավորություն չի տրվել հայտնել այդ մասին գրավոր:

Ս. Զատիկյան

10. 7. 1968

Քննիչի պնդումից հետո՝ այնուամենայնիվ, ցուցմունքներ տալ, Զատիկյանը կրկին ընդգծում է իր նախկին ցուցմունքները եւ հայտարարում. «Ոչի՛նչ հակասովետական չեմ արել»:

Այս կեցվածքով է նա շարունակում հանդես գալ նաեւ հետագա հարցաքննությունների ժամանակ, նույնիսկ հուլիսի 15-ին, երբ նրան են ներկայացնում իր տնից հայտնաբերված Հայկազ Խաչատրյանի տետրը եւ ԱՄԿ ծրագիրը: «Իմը չեն»,- պնդում է նա:

Միայն օգոստոսի 28-ին, երբ տեղի է ունենում առերես հարցաքննություն Հայկազ Խաչատրյանի հետ, եւ Խաչատրյանը հորդորում է հանձն առնել ԱՄԿ անդամությունը, նա համաձայնում է ու սկսում ցուցմունքներ տալ: Առերես հարցաքննության ժամանակ Հայկազ Խաչատրյանը նույն կերպ հորդորում է նաեւ Շահեն Հարությունյանին՝ առաջարկելով ասել թաքցրած գրամեքենայի տեղը: Խաչատրյանի այս գործելաոճը մեկ նպատակ էր հետապնդում՝ ցույց տալ անվտանգության մարմիններին, որ նրանք, իրոք, լրիվ բացահայտել են «Փարոսին» առնչվող գործը, համոզել, որ ԱՄԿ կոչվածն ընդամենը ձերբակալված երեքն են, հնարավորինս շուտ ավարտել նախաքննությունը, փակել գործը, որպեսզի ՊԱԿ-ը շատ չխորանա եւ ԱՄԿ դրսում մնացած անդամներին հայտնաբերելու վտանգավոր փնտրտուքներով չզբաղվի:

Հայկազ Խաչատրյանի գաղտնագիրը

Պետանվտանգության կոմիտեի մեկուսարանում Հայկազ Խաչատրյանն ընկերներին ուղղված գաղտնագիր է գրել, որը հետագայում՝ խուզարկության ժամանակ հայտնաբերվել է ոմն կալանավոր Խուդոյանի մոտ: Այսօր այն պահվում է ԱՄԿ հիմնադիրների նկատմամբ հարուցված քրեական գործում: Ստորեւ ներկայացնում ենք այդ գաղտնագիրը.

Ողջույն եւ համբերություն բոլորիդ

Վստահ եղեք, որ մեր գործն արդար է, եւ մենք բանտարկվում ենք անօրեն կերպով, բռնությամբ: Ճիշտ է, որ մենք հրապարակել ենք «Փարոս» լրագիրը մի քանի անգամ, ավելի ճիշտ՝ երկու անգամ, որտեղ մենք քննադատել ենք տիրող անարդարությունները

ՓԱՐՈՍ

№ 1 ԵՐԵՎԱՆ 1967 թ.

ՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՀԱՅԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է:

ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵԼՆՈՒՄ ԵՆ ՆՈՐԵՐԸ

Որքան դալիր, որքան կյաներ: Ղեքան ավեր նյութեն հայ ժողովրդի դեմ, նրա կամքը մնում է անխորտակ, խիզախությունը անընկճելի: Բոլորին քաջ հայտնի է Հայկազ: Թե ինչպիսի խիզախությամբ ու վճռությամբ, մի ձեռքին ուր, մյուսին մոդաշ այդ հանձարեղ ստեղծագործ ժողովուրդը դարեր շարունակ նվաճել է թագավորական ոստիների դեմ, որոնք ուզում էին ազգերի դեմ, որոնք ազատությունն ու անկախությունը պահպանելու համար մինչև նույն ժամանակ լրացարելով իր ինքնությունից: Մեծանալ պատիվ, հարյուրապատիվ ավելի ուժերի դեմ են ելել խիզախորեն, չնայելով թշնամի կամքը, մի քանի անգամ չեն նահանջել, նրանց վիճակը, մինչև այսպես վերջին կաթիլը, մինչև [illegible] ելել, բայց ոչինչ դեռ [illegible] ոչ ոչ կորցրեց ոչ [illegible] մնացած ավելի ուժեղ է ոչնչ իր ազատամարտ թշնամիներից:

Մարդկությունը [illegible] պայքարը անընդհատ [illegible] է: [illegible] կեցություն է [illegible] ազատ ապրելու: [illegible] ոչ ոչ [illegible] ոչ ոչ [illegible] ոչ ոչ

ազգի դեմ, ռուսիֆիկացիայի դեմ, ռուսական զավթողական քաղաքականության դեմ եւ պահանջել ենք Հայաստանի անկախությունը, որի համար մենք բռնի կերպով ձերբակալվել ենք. դա դեռ ոչինչ չի նշանակում, նրանք խախտում են միջազգային տարրական օրենքները:

Համարձակ եղեք, մեր գործն արդարությունն է:

Ինչ վերաբերում է այն ատրճանակին, որ ես բերել եմ պատերազմից որպես հիշատակ, դրա մեջ ոչ մի հանցանք չկա, դրա մասին տեղյակ չեք:

Ես լիովին առողջ եմ: Եղեք անվախ եւ համարձակ, մենք ոչ մի բանից չենք վախենում եւ վախենալու պատճառ չունենք. սա ասում եմ նրա համար, որ դուք մի փոքր անգամ վախ չունենաք: Շատերն են նստում, եւ դեռ շատերն են բանտարկվելու արդարության համար:

Դեռ նոր սերունդ կլինի: Բարեւներով՝ Հայկազ:

«Փարոս»-ի 2-րդ էջի հոդվածը

Հայ ժողովրդին (հեղինակ՝ Հայկազ Խաչատրյան)

Ծանր է հիշել հայ ժողովրդի տառապած ուղին:

Ձեզ համար պարզ է, թե ռուս «եղբայրն» ինչպիսի նողկալի դավեր է նյութել Հայ Ժողովրդի դեմ, ինչպիսի դժոխային, բազմաթիվ ոճրագործություններ, որոնցից ամենադժոխայինները կատարվեցին XX դարում, մի դարաշրջան, երբ աշխարհի ամենահետամնաց եւ փոքրիկ ազգերն անգամ դարձան անձեռնմխելի պետություն, իսկ Հայն այսօր դեռ մնում է ստրկական վիճակում, այն էլ՝ մի գծուծ, ապերախտ ազգի լծի տակ, որն արատավորում է հայի անունն ամբողջ աշխարհում եւ նսեմացնում հազարամյակների ստեղծած փառքը:

Այո, կան մարդիկ այս հողի վրա, որոնց օգնությամբ բռնանում են ազգի ազատության դեմ, ստրկացնում, կողոպտում, սպանում են նրան: Դրանք հագել են ծաղրածուի խայտաբղետ զգեստ եւ քարշ են գալիս ծիրանի հագած տխմարների ոտքերի տակ, սոսկ նյութի համար եւ նյութի գերի: Այդ մարդուկները հայ ազգի հետ ոչ մի առնչություն չունեն: Հայի արյունից դավաճան երբեք չի ծնվում:

Դուք, ազգին եւ հայրենիքին նվիրված քաջորդի որդիք եւ առաջադեմ փառապանծ ինտելիգենցիա, դուք եք այսօր, դուք եք վաղը: Ձեր կամքը, խիզախությունը, վճռականությունը երջանկությունն է այսօր Հայ ազգի եւ Փառքը նրա գալիքի: Ձեր երակներում հորդում է խիզախ պապերի ազնիվ արյունը: Չկա աշխարհում ավելի թանկ բան, քան ազատությունն ու փառքը Ազգի ու Հայրենիքի, որի համար դարեր շարունակ չեն խնայել իրենց կյանքը բազմաթիվ քաջեր, սրբազան մարդիկ:

Այսօր մեր բոլորիս սրբազան պարտքն է՝ ազատագրել Հայ ժողովրդին Ռուսաստանի լծից, որի համար ներկայումս ստեղծված են միջազգային լայն հնարավորություններ, հատկապես առաջադեմ ազգերի համար: Դրա համար ոչ մի դժվարությունների առաջ չենք կանգնի: Միայն միասնական վճռականությունն իրականություն կդարձնի Հայ ժողովրդի դարավոր իղձը եւ հետագայում վերջ կդնի Հայկական դժվարամարս հարցին, որից Ռուսաստանը սնվում եւ մարսում է իրեն յուրահատուկ գայլի ախորժակով:

Դուրս վանենք ժողովրդի միջից օտարի նյութապաշտական, ստոր հավատը, որի միջոցով շղթա են դրել Հայ ազգի ձեռքին ու մտքին: Գործենք համարձակ ու վստահորեն: Իրավունքները ժողովրդին են վերապահվում: Ոչ ոք չի կարող բռնանալ ժողովրդի ազատության դեմ: Եղեք անողոք նրանց նկատմամբ, ովքեր կկանգնեն մարդու իրավունքների եւ Ազգի ազատության դեմ:

Իշխանության գլուխ անցած յուրաքանչյուր ոք պարտավոր է անձնազոհ կերպով կատարել այն, ինչ պահանջում է Ազգի եւ Հայրենիքի շահերը, նրա անկախ գոյակցությունը:

Պատմում է Շահեն Հարությունյանը

1963 թ. համալսարանում Հովհաննես Շիրազին նվիրված երեկո էր կազմակերպվել: Ես էլ էի այնտեղ: Ընդմիջման ժամանակ հանդիպեցի Վիգեն Բաբայանին, նրա միջոցով էլ ծանոթացա Սաֆարյան Խաչիկի եւ Քիրամիջյան Կարոյի հետ: Այդ օրն՝ ավելի ուշ Վիգենի հետ մեկնեցի Էջմիածին՝ Հովհաննիսյան Մերուժանենց տուն: Մերուժանենց տանը ծանոթացա Կակոսյան Էդիկի եւ Ամիրջանյան Խաչիկի հետ: Մերուժանենց տանը մի երեսուն հոգի հավաքված մարդ կար: Այդ օրվանից այս մարդկանց հետ հանդիպումներս սկսեցին կրել սիստեմատիկ բնույթ: Նրանք, փաստորեն, իրենցից կազմակերպություն էին ներկայացնում եւ քանի որ չունեին անդամագրվելու հատուկ կարգ, ես էլ ինքնաբերաբար սկսեցի համարվել այդ կազմակերպության անդամ: Մեր հիմնական գործը մարդկանց մեջ գրականության տարածումն էր: Տարածում էինք Նիկոլ Կարապետյանի, Սկաչկոյի եւ այլ հեղինակների հոդվածներ ու նյութեր: Մեր այս կարգի գործունեությունն ամիսներ տեւեց: 1963 թ. դեկտեմբերի 24-ին ձերբակալվեցին հայտնի «Յոթ հայրենասերները»՝ Խաչիկ Ամիրջանյանը, Խաչիկ Սաֆարյանը, Վիգեն Բաբայանը, Գրիգոր Եղյանը, Էդիկ Կակոսյանը, Կարապետ Քիրամիջյանը, Մերուժան Հովհաննիսյանը: 1964-ի մարտին ինձ կանչեցին հարցաքննության: Հարցաքննությանը զուգահեռ՝ տանս խուզարկություն կազմակերպեցին եւ գտան Նիկոլ Կարապետյանի հոդվածների մոխիրը: Կինս՝ Մեժլումյան Լաուրան, մինչեւ նրանց մեր տուն մտնելը հասցրել էր դրանք այրել: Այնպես որ՝ քրեական գործին առանձին ծրարով կցեցին մոխիրը: Ողջ նախաքննության ընթացքում ես կապի մեջ էի Հեքիմյան Գեւորգի հետ, որը հետագայում դատապարտվեց «Հանուն Հայրենիքի» ամսագրի գործով: 1964 թ. օգոստոսի 5-ին տեղի ունեցավ «Յոթ հայրենասերների» դատավարությունը: Այդ օրը Հեքիմյան Գեւորգի հետ հանդիպեցինք Հաղբանակի այգում ու ծրագրեցինք, պայքարը շարունակելուն զուգահեռ, կազմակերպել նաեւ քաղբանտարկյալների ընտանիքներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու գործը, ինչը հետագայում հաջողությամբ իրականացրինք: Այդ նպատակով հատուկ դրամահավաք էինք կազմակերպում, ինչին շատերը պատրաստակամորեն մասնակցում էին:

Նալբանդյան Մարտինի եւ Հովհաննիսյան Մերուժանի մորաքրոջ տղա Հակոբյան Ստյոպայի հետ մտածում էինք ինչ-որ կերպ կազմակերպել Եղեռնի 50-ամյակը նշելու գործը: Այդ ուղղությամբ մեծ աշխատանք տարանք: Պատրաստեցինք ֆոտոթռուցիկներ, դրանք տարածեցինք փոստարկղերը գցելու միջոցով: Ցույցը շատ հաջող անցավ: Իշխանությունները ուժ չկիրառեցին: Ընդամենը մի քանի հոգու մի քանի օրով ձերբակալեցին: Նույն փորձը արեցինք հաջորդ տարի՝ 1966-ին: Էլի թռուցիկներ տարածեցինք, սակայն, այդ օրը քիչ մարդ եկավ հրապարակ: Հրապարակում կանգնած՝ ես ու Հեքիմյան Գեւորգը եկողներին ասում էինք, որ գնան Կոմիտասի անվան այգի: Որոշ ժամանակ անց ես էլ գնացի այգի ու միացա ոչ այնքան մարդաշատ բազմությանը: Մեր այնտեղ մնալը երկար չտեւեց: Ոստիկանները շրջապատեցին մեզ, ձերբակալեցին ու տարան ոստիկանություն: Հասարակական կարգը խախտելու համար բոլորիս էլ 15 օր-

վա կալանք նշանակեցին: Խցում 31 հոգի էինք: Երկուսը մեզ հետ կապ չունեցող հարբեցողներ էին, որ ընդհանուր խառնաշփոթի մեջ այգուց բերման էին ենթարկվել: Խցակիցներիս մեջ կային ինձ ե՛ւ ծանոթ, ե՛ւ անծանոթ մարդիկ: Խցում պատուհաններին ապակիներ չկային, ցուրտ էր: Հայկազ Խաչատրյանը, որը նույնպես մեզ հետ էր, առաջարկեց հացադուլ հայտարարել: Մեր մեկօրյա հացադուլը տվեց իր արդյունքը: Մեզ ծածկոցներ տվեցին, ու մենք դադարեցրինք հացադուլը: Ճաշին մեզանից միայն մեկն էր, որ նառին պառկած՝ չգնաց իր բաժին ճաշը վերցնելու: Մոտեցա նրան, հարցրի անունը, ասաց՝ Ստեփան: Առաջարկեցի, որ բոլորի պես՝ ինքն էլ իր բաժինն ընդունի: Նա էլ ճաշը վերցրեց: Խցակիցներով պայմանավորվեցինք հետագայում՝ ազատվելուց հետո հանդիպել: Այդպես էլ արեցինք: Մոտ մի 14-15 հոգով ազատվելուց հետո հանդիպեցինք «Լոռի» ռեստորանում: Դեռ խցում՝ ես, Ստեփանը եւ Հայկազը պայմանավորվել էինք, որ «Լոռի» ռեստորանում հավաքվելուց՝ մեզ հետ հետագա պայքարի աջակիցներ կընտրենք: Սակայն, նման կադրեր չեղան: Բոլորն էլ շատ լավ ու հայրենասեր մարդիկ էին, բայց ընդհատակյա քաղաքական պայքարի ցանկություններ ու ծրագրեր չունեին:

«Լոռի» ռեստորանի հանդիպումից հետո մենք մնացինք երեքով: Հայկազն առաջարկեց ստեղծել կազմակերպություն: Ես ասացի, որ պետք է ստեղծվի ոչ թե կազմակերպություն, այլ կուսակցություն: Վճռեցինք, որ կուսակցություն ենք ստեղծում: Հայկազ Խաչատրյանը գրեց ծրագիրը, ես՝ կանոնադրությունը, իսկ Զատիկյան Ստեփանը գրեց երդման տեքստը: 1966 թվականի հոկտեմբերն էր: Հայկազ Խաչատրյանի առաջարկով՝ կուսակցությունն անվանվեց Ազգային միացյալ կուսակցություն:

Մեր ծրագրած առաջին գործերից եղավ 1967 թ. ապրիլի 24-ին նվիրված թռուցիկների պատրաստումը: Հայկազը ցինկի վրա յուղաներկով գրում էր պահանջվող տեքստի թարս՝ հայելային տառերը, ազոտական թթվի մեջ ցինկը քայքայում էր, այնպես՝ որ ներկոտ մասը մնում էր, ես ու Ստեփանը, կլիշեի վրա հավաքելուց հետո, քսում էինք տպագրական ներկը, լիսեռով անցնում վրայից, եւ թռուցիկը պատրաստ էր: Տպում էինք Հայկազենց տանը, չնայած Ստեփանը հետագայում ցուցմունքներում ասում էր, թե ինքը դրանք տպել է իր տան նկուղում: 1967-ի ապրիլին թռուցիկների ողջ խմբաքանակն արդեն պատրաստ էր: Բարեհաջող տարածեցինք:

67-ի աշնանը ես, պատահաբար, Մանուկ անունով մի տղայի միջոցով ծանոթացա Պարույրի հետ: Դեռ չափազանց երիտասարդ էր, բայց արդեն թռուցիկներ էր տպում ու տարածում: Նա ինձ տեղեկացրեց, որ մի հինգ հոգանոց խումբ ունի եւ չի կողմնորոշվում, թե ինչ անուն ընտրի: Առաջարկեցի խումբն անվանել «Շանթ» եւ ընդգրկվել մեր կազմակերպության մեջ, որպես ԱՄԿ երիտասարդական մասնաճյուղ: Պարույրն այդպես էլ արեց: Պարույրի ներկայացրած մարդկանց ընդունեցինք ԱՄԿ շարքերը: Միայն Ազատ Արշակյանի տարիքը չէր ներում: Նրա 18 տարին դեռ չէր լրացել, բայց Պարույրը պնդում էր: Մտածեցի, որ մեկ տարին մեծ բան չի, եւ նրան նույնպես ընդունեցի ԱՄԿ շարքերը: Այս կապակցությամբ Ստեփանն ասաց. «Մեր մեջ առաջին խախտումը դու կատարեցիր»: Հոկտեմբեր ամսին պատրաստեցինք «Փարոս» թերթը:

Մեր երեքից ՊԱԿ-ի տեսադաշտում միայն ես էի: Ոչ Հայկազը, ոչ էլ Ստեփանը նախկինում՝ չհաշված 15-օրյա կալանքը ապրիլի 24-ի հետ կապված, որեւէ կերպ ՊԱԿ-ին չէին առնչվել: «Փարոս» թերթն այդ տարիներին էապես տարբերվում էր իրենից առաջ եղած բոլոր թռուցիկներից: Որպես կանոն՝ եղած թռուցիկները վերաբերում էին Եղեռնին կամ կրում էին հայրենասիրական բնույթ, իսկ «Փարոսը» խիստ ընդգծված հակասովե-

տական բնույթ էր կրում: Պարունակում էր ռուսական կայսրության դեմ պայքարի կոչեր: ԱՄԿ ծրագրի 5-րդ եւ 6-րդ կետերը նախատեսում էին պայքար ռուսական կայսրության դեմ եւ Հայաստանի անկախացում: Յուրաքանչյուր նոր ընդունվող ԱՄԿ-ականի այս կետերի վերաբերյալ պարտադիր հարց էր տրվում՝ համաձա՞յն է, արդյոք, այս կետերում շարադրվածի հետ, եթե՝ այո, ապա ստորագրում էր անձնական քարտը: Դրանից հետո էր միայն մարդն ընդունում երդումը եւ համարվում ԱՄԿ-ական: Ահա այս տրամաբանությունն էլ դրված էր «Փարոսի» հիմքում:

«Փարոսի» տարածումից հետո, մի օր պատահաբար Հայկազը քաղաքում հանդիպում է Արա Մնացականյանին, որը նույնպես ապրիլի 24-ի օրը մեզ հետ 15-օրյա կալանքի էր վերցվել: Ահա այս Արան Հայկազին ասում է, որ «Փարոս» թերթ է տպագրվել, ուզում է մեկ օրինակ տեսնել: Հայկազն ասել է, թե ինքը տեղյակ չի, բայց Շահենից կհարցնի, գուցե նա ունենա: Հաջորդ օրն ինձ առաջարկեց հանդիպել Արային եւ թերթ տալ նրան: Հանդիպեցի եւ մեկ օրինակ թերթ տվեցի, իհարկե՝ ասելով, որ ուրիշից եմ վերցրել եւ չգիտեմ, թե տարածողներն ովքեր են: Ամիսներ անց Արայիկն իր խմբի հետ ձերբակալվում է: Ձերբակալությունը, ինչքան այսօր կարողանում եմ հիշել, կապված էր ինչ-որ տպատառերի հետ: Նրա մոտ հայտնաբերում են իմ տված «Փարոսը»: Արայիկ Մնացականյանը հարցաքննության ժամանակ ասում է, որ ստացել է ինձանից: Փաստորեն, Արայիկն առաջին մարդն էր, որը ցուցմունք էր տվել «Փարոս»-ին ունեցած իմ առնչությունների վերաբերյալ: Ինձ ՊԱԿ կանչել եւ այդ մասին հարցեր տալ չէին կարող: Վստահ էին, որ մի բան կհորինեմ Արայիկի մոտ եղած «Փարոսի» հետ կապված եւ իմ միջոցով հրատարակիչների հետքի վրա դուրս գալ չեն կարող: Նրանց հարկավոր էր մարդ, ում միջոցով կկարողանան ոչ թե մոտավոր, այլ հստակ տեղեկություններ ստանալ «Փարոսի» եւ ԱՄԿ-ի վերաբերյալ: Եւ ՊԱԿ-ը ժամանակից շուտ կալանավայրից ազատ արձակեց մինչ այդ «Յոթի գործ»-ով դատապարտված Ամիրջանյան Խաչիկին: Վիգեն Բաբայանի տիկնոջ՝ Սեդայի միջոցով նա փոխանցել էր, որ ցանկանում է հանդիպել ինձ: Գնացի հանդիպմանը: Ամեն ամիս Ամիրջանյան Խաչիկի ընտանիքի համար, երբ նա կալանավայրում էր, գումար էինք հավաքում: Նա այլախոհներիս մեջ հեղինակություն էր վայելում: Վերջին հաշվով դատապարտված ու կալանավայրից հենց նոր ազատ արձակված մարդ էր: «Փարոսով» էր հետաքրքրված: Առաջարկում էր իմանալ, թե ովքեր են կազմակերպիչները, աջակցել ու օգնել սկսած լավ գործը շարունակելու համար: Ես նրան ծանոթացրեցի Հայկազի հետ: Հետագայում բոլորն են համոզվել, որ Խաչիկը կալանավայրից վաղաժամ ազատ է արձակվել հատուկ ԱՄԿ-ն բացահայտելու գործում ՊԱԿ-ին օժանդակելու համար: Անձամբ ես նրա երեսին եմ սա ասել: Մեզ հետ միաժամանակ ձերբակալվեց նաեւ «Հանուն Հայրենիքի» խումբը: Այս խմբի հետ Ամիրջանյանը նույնպես կապեր էր հաստատել, եւ նրանց ձերբակալումը կրկին նրա մատնությամբ տեղի ունեցավ: Նրանք ձերբակալվեցին հուլիսի երկուսին, մենք՝ ինձնին:

Ազատ արձակվելուց հետո՝ 1974 թ. ես պաշտոնապես հրաժարվեցի սովետական քաղաքացիությունից: 1975-ին մեկնեցի Մոսկվա՝ Գերմանիայի դեսպանատուն, համապատասխան դիմում հանձնելու նպատակով: Մոտեցա դեսպանատան շենքին, զանգահարեցի դեսպանատան երկրորդ քարտուղարին, ներկայացա եւ ասացի գալուս նպատակը: Նա առաջարկեց ներս մտնել, սակայն ոստիկանները, ներս թողնելու փոխարեն, ինձանից վերցրին իմ անձնագիրը եւ տարան իրենց պահակակետ: Մոտս եղած փաստաթղթերից հասկացան, թե ով եմ: Իմացան, որ դատապարտված եմ եղել

քաղաքական հոդվածով: Մինչ նրանք, իրենց հենակետում ինձ փակելուց հետո, դրսում կանգնած վճռում էին, թե ինչ պետք է անեն ինձ հետ, ես հենակետի ներսում եղած հեռախոսով կրկին զանգահարեցի դեսպանատան երկրորդ քարտուղարին եւ տեղեկացրեցի, որ փակված եմ դեսպանատանը կից ոստիկանական հենակետում: Նա խոստացավ դուրս գալ եւ անձամբ ներս տանել ինձ: Ոստիկաններին ասացի, որ երկրորդ քարտուղարը հիմա դուրս է գալու: Այդ ժամանակ նրանք տվեցին իմ անձնագիրը եւ պահանջեցին հեռանալ դեսպանատանը հարող տարածքից: Հեռացա ու այդ օրն էլ այցելեցի Սախարովին: Պատմեցի եղելությունը: Զրույցին ներկա էր նաեւ Լյուդմիլա Ալեքսեեւան: Նա ասաց, որ Գերմանիայի դեսպանատան հետ կապեր չունի, բայց կարող է իմ նամակը գերմանացիներին փոխանցել ամերիկացիների միջոցով: Վերադարձա Երեւան: Մի քանի օրից ինձ կանչեցին ՊԱԿ եւ բացատրություններ պահանջեցին իմ Մոսկվա գնալու եւ Գերմանիայի դեսպանատանը լինելու հետ կապված: Ասացի, որ հրաժարվել եմ ԽՍՀՄ քաղաքացիությունից եւ դիմում եմ դեսպանատուն՝ այստեղից հեռանալու համար: Որոշ ժամանակ անց կրկին այցելեցի Մոսկվա՝ իմանալու համար, թե ինչ ընթացք ստացավ դիմումս: Այս անգամ գնացի Յուրի Օռլովի տուն: Այդ օրը՝ Օռլովի տանը Լյուդմիլա Ալեքսեեւան մամուլի ասուլիս էր կազմակերպել: Սակայն, նախատեսված ասուլիսը ինչ-ինչ պատճառով տեղի չունեցավ: Այնտեղ էր նաեւ Զվիադ Գամսախուրդիան՝ Վրաստանի ապագա նախագահը, որը խորհրդային տարիներին հայտնի դարձավ նրանով, որ ձերբակալվելուց հետո ընկճվեց, հանդես եկավ իրավապաշտպանական իր գործունեությունը եւ ընդհանրապես այլախոհությունը դատապարտող տխրահռչակ հայտարարությամբ: Ծանոթացանք, զրուցեցինք: Իմացա, որ պատրաստվում է ստեղծել վրացական Հելսինկյան խումբ: Ասացի, որ ես էլ պատրաստ եմ հայկական Հելսինկյան խումբ ստեղծել: Օռլովենց տանն էլ որոշեցինք, որ հայկական եւ վրացական Հելսինկյան խմբերի ստեղծման մասին համատեղ ասուլիսով Մոսկվայում՝ ավելի ուշ միասին կհայտարարենք:

Վերադարձա Երեւան, հանդիպեցի մարդկանց, որոնք, իմ կարծիքով, կարող էին մասնակցել ստեղծվող Հելսինկյան խմբի աշխատանքներին: Դիմեցի Ռաֆայել Պապայանին եւ Էդմոնդ Ավետյանին: Ես ցանկանում էի, որ այդ գործին մասնակցեն ժամանակի ճանաչված այլախոհ մտավորականներ՝ Լեւոն Ներսիսյանը, Էդմոնդ Ավետյանը եւ Ռաֆայել Պապայանը: Երեքն էլ աշխատում էին Երեւանի պետական համալսարանում, այլախոհներ էին եւ այս գործում կարող էին լավ դեր կատարել: Ըստ էության, նրանք չմերժեցին իմ առաջարկը: Սակայն, այն տարիներին անդամակցությունը Հելսինկյան խմբին՝ պահանջում էր հրապարակայնություն: Մասնակիցը պետք է հանդես գար իր անուն-ազգանունով: Ե՛վ Պապայանը, ե՛ւ Ավետյանը, ե՛ւ Ներսիսյանն այդ շրջանում դեռ պատրաստ չէին դրան: Հետագայում Պապայանը եւ Ավետյանը այլախոհության համար դատապարտվեցին: Ընդ որում, ՊԱԿ-ը որոշեց Էդմոնդ Ավետյանին շատ ավելի խիստ պատժել, եւ նրան հոգեբուժարան տարան: Այդ օրերին Էդմոնդ Ավետյանին է այցելում Ռոբերտ Նազարյանը, նրանից իմանում Հելսինկյան խումբ ստեղծելու իմ ծրագրերի մասին ու անմիջապես այցելում ինձ եւ առաջարկում իր թեկնածությունը: Հանդիպեցինք նաեւ Էդուարդ Հարությունյանին: Մինչ այդ ՊԱԿ-ը հոգեբուժարաններում էր պահել նրան: Հարությունյանը լեցուն էր ակտիվ գործունեություն ծավալելու վճռականությամբ: Ե՛վ Էդուարդ Հարությունյանը, ե՛ւ Ռոբերտ Նազարյանը, առանց երկմտելու, հանձն առան ներկայացնել հայկական Հելսինկյան խումբը: Էդուարդ Հարությունյանը գրեց խմբի հռչակագիրը: Ես եւ Նազարյան Ռոբերտը թռանք

Մոսկվա: Ապրում էինք Կապիտանչուկի եւ հոգեւորական-այլախոհ Գլեբ Յակունինի տներում: Ինքը՝ Կապիտանչուկը, տպագրեց եւ մի տասը օրինակ բազմացրեց մեր Հռչակագրի տեքստը: Հաջորդ օրը Յուրի Օռլովի տանը կազմակերպված մամլո ասուլիսին, որը վարում էր Տատյանա Վելիկանովան, Ռոբերտ Նազարյանն ընթերցեց մեր Հռչակագիրը: Պաշտոնապես հռչակվեց Հայաստանի հելսինկյան խմբի գոյության մասին: Մինչեւ մեր Երեւան հասնելն արդեն հնարավոր բոլոր ռադիոկայաններով հայտարարվել էր մեր հռչակած կոմիտեի մասին: Դա 1977 թ. ապրիլն էր:

1977 թ. հունվարին տեղի ունեցավ Մոսկվայի մետրոյի պայթյունը: Նոյեմբերին արդեն այդ պայթյունի համար ձերբակալվեց Ստեփան Զատիկյանն իր երկու ընկերների՝ Հակոբ Ստեփանյանի եւ Զավեն Բաղդասարյանի հետ: Այս կապակցությամբ ես պատրաստվում էի Մոսկվա մեկնել: Հովիկ Վասիլյանը պնդում էր, որ Մոսկվա գնալու ժամանակ չկա եւ հարկավոր է արեւմտյան լրատվամիջոցներին Զատիկյանի կալանավորման մասին հայտնել հեռախոսով՝ Երեւանից: Դեկտեմբերի 2-ին ես զանգահարել եմ Մոսկվա՝ արտասահմանյան թղթակիցների ինձ մոտ եղած հեռախոսահամարներով եւ Հելսինկյան խմբի անունից տեղեկացրել եմ նրանց Ստեփանի ու իր ընկերների ձերբակալության եւ ներկայացված մեղադրանքի մասին: Նույն օրն ինֆորմացիան հնչել է արտասահմանյան մամուլի միջոցներով, եւ որպես ինֆորմացիայի աղբյուր նշվել է իմ անունը: Մի քանի օր անց՝ տնից դուրս գալուց ինձ ձերբակալեցին, իբր, խուլիգանություն կատարելու համար եւ դատապարտեցին երեք տարի ազատազրկման: Արագ կազմակերպված դատավարությունից հետո ինձ տարան Մոսկվա՝ Լեֆորտովո: Նրանք ունեին արտասահմանյան լրագրողների հետ ունեցած իմ հեռախոսային զրույցի ձայնագրությունը: Հետաքրքրվում էին՝ որտեղից եմ իմացել, թե ինչի համար է կալանավորվել Զատիկյանը: Լեֆորտովոյի մեկուսարանում ինձ պահեցին հինգ ամիս: Այնտեղ էին բերել նաեւ Պարույրին, այն դեպքում, որ նա Ստեփանի գործի հետ որեւէ առնչություն ունենալ չէր կարող՝ թեկուզ միայն այն պատճառով, որ այդ ընթացքում գտնվում էր Պերմի կալանավայրերում: Պարույրի այնտեղ լինելու մասին իմացա պատահաբար՝ երգից: Մեկ ժամով մեզ տանում էին զբոսանքի: Զբոսանքի տեղում լսեցի՝ մեկը երգում էր «Մայր Արաքսի ափերով»-ը: Ես անմիջապես շարունակեցի երգը: Հսկիչները սա դիտարկեցին որպես ռեժիմի կոպիտ խախտում եւ երկուսիս էլ պատժախուց տարան: Մեր խցերն ունեին ընդհանուր միջանցք, եւ մենք կարողանում էինք հաղորդակցվել: Բացի Պարույրից, ես Լեֆորտովոյում հանդիպեցի նաեւ Ստեփան Զատիկյանին: Մինչեւ հիմա էլ չգիտեմ՝ պատահաբա՞ր ստացվեց, թե ՊԱԿ-ի կողմից ծրագրված էր մեր հանդիպումը: Երբ ինձ հերթական զբոսանքից դեպի խուց էին տանում՝ միջանցքում ինձ ընդառաջ բերեցին Ստեփանին: Ե՛վ Լեֆորտովոյում, ե՛ւ Երեւանի ՊԱԿ-ի մեկուսարանում՝ տարբեր խցերում եղած կալանավորների հանդիպումներն իսպառ բացառվում էին: Յուրաքանչյուր շարժ մշակված էր այնպես, որ պատահականություններ չլինեն: Մեզ հրահանգեցին կանգնել: Մի պահ մենք դեմ առ դեմ էինք, եւ մեր միջեւ եղած հեռավորությունը մի 10-15 մետր էր: Ես Ստեփանին հարցրեցի. « Ո՞նց ես»: Այլ բան չգտա հարցնելու: Ի պատասխան իմ հարցի՝ Ստեփանը աչքերը փակեց ու ժպտաց: Ոչինչ չասաց:

Հինգ ամիս անց ինձ վերադարձրին Հայաստան՝ Սովետաշենի կալանավայր: Երեք տարի ազատազրկումից հետո, երբ ազատ արձակվեցի, իր առաջին ազատազրկումից վերադարձել էր նաեւ Էդիկ Հարությունյանը: Հելսինկյան խումբը նոր անդամներ ուներ: Շարունակում էինք անել այն, ինչ արել էինք մինչեւ մեր կալանավորումը: Մի օր էլ ինձ

հերթական անգամ հրավիրեցին Պետանվտանգության կոմիտե եւ առաջարկեցին հեռանալ երկրից: Իմ առաջ հստակ պայման դրեցին՝ եթե հրաժարվում եմ լքել խորհրդային միությունը, ապա մնում եմ ԽՍՀՄ-ում ու կրկին դատապարտվում: Որ ինձ դատելու էին՝ կասկած չկար: Պարզ առաջարկ էր. կամ՝ բանտ, կամ՝ Ամերիկա: Տեղում պետք է վճիռ կայացնեի: Ստիպված համաձայնեցի Ամերիկա մեկնելու տարբերակին:

Տեղափոխվեցի ԱՄՆ: Մեկ շաբաթից ձեռնամուխ եղա «Սովետահայ քաղբանտարկյալների պաշտպանության հանձնախմբի» ձեւավորման գործին: Դեռ նոր էի սկսել իմ գործունեությունը, երբ ինձ զանգահարեց Վիգեն Բաբայանը եւ տեղեկացրեց, որ ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ինձ զրկել են ՍՍՀՄ քաղաքացիությունից: Այնքան էլ ծանր չտարա: Հետագայում սկսեցի հրատարակել նաեւ «Երկունք» անունով թերթ:

ԱՄԿ հիմնադիրների գործով կայացված դատավճիռը

Մեր ձեռքի տակ է նաեւ այս գործով նախաքննության մարմնի՝ Պետական անվտանգության կոմիտեի քննչական վարչության նախապես ռուսերեն կազմված մեղադրական եզրակացության հայերեն թարգմանությունը: Օգտվելով մեր ձեռքի տակ եղած մեղադրական եզրակացությունից, գործին առնչվող մարդկանց հուշերից ու այլ աղբյուրներից, լրացնելով ԱԱԾ կողմից ջնջված վկաների անունները, դատավճիռը ավարտուն տեսքի ենք բերել: Նման դեպքերում չի բացառվում, որ ԱԱԾ արխիվում պահվող դատավճռի հետ համեմատելիս, միայն անունների դեպքում, ի հայտ գան աննշան ու փաստաթղթի էության եւ բովանդակության վրա բացարձակապես չազդող չնչին տարբերություններ:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1969 թվականի հունվարի 9-ին Երեւան քաղաքում

Նախագահությամբ՝	**Ա. Ս. Եղիազարյանի**
Ատենակալներ՝	**1. Գ. Ս. Կարապետյան**
	2. Հ. Ն. Ասատրյան
Քարտուղարությամբ՝	**Հ. Շղոյան**
Մասնակցությամբ՝	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Գ. Ղամբարյանի**
Դատապաշտպաններ՝	**Մ. Եգանյան, Դ. Կարապետյան**

Քննության առնելով դատական դռնփակ նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝

1/ Հայկազ Կարոյի Խաչատրյանի, ծնվել է 1919 թվականին Երեւան քաղաքում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, բարձրագույն կրթությամբ, մասնագիտությամբ նկարիչ, Հայրենական պատերազմի մասնակից, պարգեւատրվել է «Փառքի» 3-րդ աստիճանի շքանշանով, նախկինում չդատված, անկուսակցական, ամուրի, բնակվել է Երեւանի 26 Կոմիսարների փողոցի նո. 9 շենքում: Սույն գործով կալանքի տակ է 1968 թվականի հուլիսի 11-ից:

Մեղադրվում է քր. օրի 65 հոդվ. 1-ին մասով 67 հոդվածով եւ 230 հոդվ. 1-ին մասով:

2/ Շահեն Հարությունի Հարությունյանի, ծնվել է 1937 թվականին Երեւան քաղաքում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, ամուսնացած, խնամքին երկու երեխա, անկուսակցական, նախկինում չդատված, սովորել է մանկավարժական ուսումնարանի 3-րդ կուրսում, բնակվել է Երեւանի Չերնիշեւսկի փողոցի 23 շենքում, սույն գործով կալանքի տակ է 1968 թվականի հուլիսի 11-ից:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65 հոդվ. 1-ին մասով, 67 հոդվածով եւ 211 հոդվ. 1-ին մասով:

3/ Ստեփան Սեղբոյի Զատիկյանի, ծնվել է 1946թ. Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, ամուրի, նախկինում չդատված, սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի 5-րդ կուրսում, սույն գործով կալանքի տակ է 1968 թվականի հուլիսի 11-ից: Բնակվում է Երեւանի Աթաբեկյան փողոցի 56 շենքում:

Մեղադրվում է քր. օրի 65 հ. 1 մ. եւ 67 հոդվածով:

Դատաքննությամբ, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացություններով, գործին կցված իրեղեն ապացույցներով, ինչպես նաեւ ամբաստանյալների ցուցմունքներով գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան ապացուցված է համարում հետեւյալը՝

1966 թվականի ապրիլի 24-ին ժողդատարանի որոշմամբ հակահասարակական արարքի համար ամբաստանյալներ Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Զատիկյանը եւ Շահեն Հարությունյանը կալանավորվել են 15 օրով եւ ուղարկվել են Երեւանի նո.1 քննչական մեկուսարան: Այնտեղ ծանոթանալով միմիանց հետ, մտքերի փոխանակություն են ունեցել Ղարաբաղը եւ Նախիջեւանը Սովետական Հայաստանին միացնելու եւ այլ ազգային հարցերի շուրջը:

Մեկուսարանից դուրս գալուց հետո ամբաստալյալները մտերմանալով միմյանց հետ հաճախակի հանդիպումներ են ունեցել Հայկազ Խաչատրյանի տանը եւ սխալ եզրակացության են հանգել այն մասին, որ իբր Սովետական Հայաստանը իրավահավասար հանրապետություն չի սովետական պետության մեջ, որ հայերը հարստահարվում են եւ կողոպտվում ռուս ժողովրդի կողմից եւ ընդհանրապես զրկված են ազատությունից եւ անկախությունից:

1967 թվականի սկզբներից ամբաստանյալներ Խաչատրյանը, Զատիկյանը եւ Հարությունյանը լայն մասսաների մեջ հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա տանելու նպատակով ստեղծել են անլեգալ կազմակերպություն եւ անցել կոնկրետ գործունեության:

Որպեսզի հնարավորություն ունենան մեծ քանակությամբ անլեգալ թռուցիկներ ու

թերթեր տպագրեն, ամբաստանյալները սկսել են դրամական միջոցներ հավաքել, որպիսինը պահվել է խնայողական դրամարկղում Հայկազ Խաչատրյանի անձնական ավանդի հետ միասին: Ձեռք են բերել ցինկի թիթեղներ, տպագրական ներկ եւ այլ հարմարանքներ: Այս բոլորը պահվել են Հայկազ Խաչատրյանի տանը:

Ի վերջո՝ 1967 թվականի ապրիլի 24-ին Խաչատրյանը, Ջատիկյանը եւ Հարությունյանը «Փարոս» վերնագրով 200 օրինակ թռուցիկ են տպագրել, որպիսինը տարածվել է Երեւան քաղաքում ամբաստանյալներ Խաչատրյանի եւ Ջատիկյանի կողմից Երեւան քաղաքում: Այդ թռուցիկի «ապրիլի 24-ը» վերնագրով հոդվածը գրվել է Շահեն Հարությունյանի կողմից, իսկ «Հայ ժողովրդին» հոդվածը Հայկազ Խաչատրյանի կողմից:

Ամբաստանյալներ Խաչատրյանը, Ջատիկյանը եւ Հարությունյանը իրենց անլեգալ հակապետական կազմակերպության գործունեությունը ավելի կոնկրետ ու կազմակերպված դարձնելու նպատակով որոշել են Հայաստանի Խորհրդային սոցիալիստական հանրապետությունում ստեղծել առանձին, գաղտնի «ազգային միացյալ կուսակցություն» իր ծրագրով եւ կանոնադրությամբ, որը հիմնականում գրվել է Հայկազ Խաչատրյանի կղմից, սակայն ուղղվել եւ վերջնական տեսքը մշակվել է Ստեփան Ջատիկյանի եւ Շահեն Հարությունյանի անմիջական մասնակցությամբ: Անձամբ Հարությունյանը կազմել է նաեւ այդ կուսակցության անդամի հարցաթերթիկը, իսկ Ստեփան Ջատիկյանը երդումը:

«Ազգային միացյալ կուսակցության» ծրագրի եւ կանոնադրության մեջ ամբաստանյալները զրպարտչական գաղափարներ են շարադրել ՍՍՀՄ ազգային քաղաքականության, ազգային իրավահավասարության դեմ: Միանգամայն սխալ եզրակացության են հանգել, որ իբր Հայաստանը գտնվում է «Ռուսաստանի ստրկատիրական գերիշխանության տակ» եւ կոչ են անում աստղծել անկախ Հայաստան եւ այլն: Այդ ծրագիրը տպագրվել է 3 օրինակ ամբաստանյալ Շահեն Հարությունյանի կողմից, կոմիսիոն խանութից նախապես գնված «ռեյնմետալ» սիստեմի նո. 172155 գրամեքենայի վրա, որը հայտնաբերվել եւ առգրավվել է գործով վկա Սիրանուշ Չալյանի բնակարանից:

Ամբաստանյալ Խաչատրյանը մշակել է նաեւ կազմակերպվելիք «ազգային միացյալ կուսակցություն» կառուցվածքը ղեկավար օրգաններով, նրա կլոր կնիքի էսքիզը-ձեւը, որոնք հավանության են արժանացել Ջատիկյանի եւ Հարությունյանի կողմից: Հայկազ Խաչատրյանը մշակել է նաեւ հատուկ ծածկագիր (կոդ), միմիանց հետ գաղտնի գրագրություն վարելու համար:

1967 թվականի հոկտեմբեր ամսին, Հայկազ Խաչատրյանի նախաձեռնությամբ, իր տանը եւ ապա Ստեփան Ջատիկյանի մոտ գաղտնի տպագրել են շուրջ 290 օրինակ «Փարոս» կոչվող անլեգալ թերթը, որը կոչել են «ազգային միացյալ կուսակցության» օրգան: Թերթում տպագրել են «ելնում են նորերը», «հայ ժողովրդին» , «Հայաստանը լծի տակ», «փաստերն անողոք են» եւ այլ հոդվածներ, որոնց հեղինակները հանդիսանում են ամբաստանյալներ՝ Խաչատրյանը, Ջատիկյանը եւ Հարությունյանը: Այդ հոդվածները հիմնականում պարունակում են դաշնակցական գաղափարներ, թշնամական հարձակումներ է կատարվում Մարքս-Լենինյան ուսմունքի դեմ, խեղաթյուրվում է կոմունիզմի հիմունքները, հայ ժողովրդի վիճակը զրպարտչորեն պատկերացվում է «գաղութային, կեղեքվող» եւ կոչ է արված պայքարել «անկախ հայկական պետություն» ստեղծելու համար:

«Փարոս» թերթը ամբաստանյալ Ջատիկյանը տարածել է Երեւանի պետական համալսարանի, պոլիտեխնիկական ինսիտուտի շենքերում եւ առանձին քաղաքացիների

բնակարանների փոստարկղերում, նպատակ ունենալով ներազդել դեռ լրիվ չկազմակերպված երիտասարդների եւ ուսանողների վրա, թյուրիմացության մեջ գցել երիտասարդական այն խավին, որոնք իրենց քաղաքական պատրաստակամությամբ չեն կարող քննադատորեն մոտենալ անլեգալ «Փարոս» թերթի բովանդակությանը, ցանկանալով այդ կարգի մարդկանց քցել իրենց ազդեցության տակ:

Ամբաստանյալներ Հ. Խաչատրյանը, Ս. Զատիկյանը եւ Հ. Հարությունյանը «ազգային միացյալ կուսակցության» ծրագրի ու կանոնադրության, ինչպես նաեւ «Փարոս» թերթի բովանդակությանը ծանոթացրել են Մեսրոպ Ղազարյանին, Պարույր Հայրիկյանին, Ասատուր Բաբայանին, Լեւոն Մնացականյանին եւ ուրիշներին:

Դեռ 1968 թվականի գարնանը, ամբաստանյալ Շահեն Հարությունյանը կապ է հաստատել մեկ այլ անլեգալ խմբի անդամներ Աղասի Անտոնյանի, Ասատուր Բաբայանի եւ մյուսների հետ, որոնք նույնպես կալանավորվել են կոմիտեի կողմից եւ առաջարկել է միանալ իրենց կազմակերպության հետ եւ գործել համատեղ: Հարությունյանը մի քանի անգամ մասնակցել է այդ խմբի հավաքույթներին, ծանոթացրել է նրանց Հայկազ Խաչատրյանի հետ, իրենց ծրագրին ու կանոնադրությանը սակայն ծրագրի որոշ դրվագների հետ համաձայնության չգալու պատճառով այդ միացումը չի կատարվել:

Բացի այդ ամբաստանյալ Զատիկյանը գրել եւ պահել է սովետական իրականությունը արատավորող զրպարտչական հոդվածներ, ինչպիսիք են «Սովետական տնտեսության էությունը» «վարագույրի մյուս կողմում», «կոմունիստական տակտիկայի եւ ստրատեգիայի մի քանի հարցերի շուրջը» եւ այլ հոդվածներ: Շահեն Հարությունյանը պահել է իր մոտ Գեմբարսկու նամակը ուղղված Ուտանին, դաշնակցական Ահարոնյանի նամակը հասցեագրված ՍՍՀՄ արտաքին գործերի նախկին մինիստր Չիչերինին եւ այլ հոդվածներ, որոնցում խեղաթյուրված է ՍՍՀՄ արտաքին եւ ներքին քաղաքականությունը:

Ամբաստանյալ Հայկազ Խաչատրյանը 1945 թվականին զորացրվելով սովետական բանակից իր հետ բերել եւ ապօրինի կերպով պահել է նո. 442 «նագան» եւ «պարաբելում» սիստեմի ատրճանակներ իրենց մարտական փամփուշտներով, իսկ Շահեն Հարությունյանը 1967 թվականի սկզբին մանկավարժական տեխնիկումից հափշտակել է Ալիսա Գարուշի Հարությունյանին պատկանող նո. 035400 հասունության ատեստատը, ջնջել տեքստը, նպատակ ունենալով հետագայում օգտագործել այդ ատեստատը, սակայն չի օգտագործել եւ պահել է իրենց տանը որտեղից եւ հայտնաբերվել է խուզարկության ժամանակ:

Ամբաստանյալներ Հայկազ Խաչատրյանը եւ Ստեփան Զատիկյանը լիովին ընդունեցին իրենց առաջադրված մեղադրանքի բոլոր փաստերը դրանում մեղավոր չճանաչեցին, իրենց գործողությունները եւ անլեգալ գործունեությունը համարելով ճիշտ մեղայականով հանդես չեկան, իսկ ամբաստանյալ Շահեն Հարությունյանը առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց եւ հայտարարեց, որ զղջում է իր արարքների համար:

Բացի ամբաստանյալների խոստովանական ցուցմունքներից, նրանց առաջադրված մեղադրանքը հաստատված է առգրավված իրեղեն ապացույցներով, փորձագետի եզրակացությամբ, կազմակերպված քննչական փորձով, ճանաչման արձանագրություններով, վկաներ Վահան Ազատյանի, Սիրուշ Չալջյանի, Հովհաննես Օհանյանի, Մերուժան Կարապետյանի, Ֆեոդր Զվերեւի, Մեսրոպ Ղազարյանի եւ մյուսների ցուցմունքներով, ինչպես նաեւ գործի մնացած բոլոր տվյալներով:

Պատիժ սահմանելիս, կոլեգիան հաշվի է առնում ամբաստանյալների ինքնուրուությունը, Զատիկյանի եւ Հարությունյանի երիտասարդությունը, նախկինում դատապարտված չլինելը, այն, որ նրանք հիմնականում ընկել են իրենցից տարիքով անհամեմատ մեծ Հայկազ Խաչատրյանի ազդեցության տակ, որը իր բնակարանը տրամադրել է նրանց, թելադրողի դեր է կատարել բոլոր հարցերում: Շահեն Հարությունյանի նկատմամաբ պատիժ սահմանելիս կոլեգիան հաշվի է առնում նաեւ նրա դատաքննության ժամանակ մեղայականով հանդես գալը:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր.դատ.օրի 293-294 հոդվածներով գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան՝

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալ Հայկազ Կարոյի Խաչատրյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի 232 հոդվ. 1-ին մասով, 65 հոդվ. առաջին մասով եւ 67 հոդվածով քր. օրի 232 հոդվ. 1-ին մասով ազատազրկել նրան երկու (2) տարի ժամանակով եւ կիրառելով ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1967 թվականի հոկտեմբերի 31-ի ներում շնորհելու մասին հրամանագիր 1-ին հոդվածը եւ ազատել նրան պատիժը կրելուց:

Քր. օրի 65 հոդվ. առաջին մասով Հ. Կ. Խաչատրյանին ազատազրկել հինգ (5) տարի ժամանակով, առանց հետագա աքսորի, թողնելով պատիժը կրելու խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Դատապարտյալ Խաչատրյանից առգրավված «նագան» եւ «պարաբելում» սիստեմի ատրճանակները իրենց մարտական փամփուշտներով ոչնչացնել:

Ամբաստանյալ Ստեփան Սեղբոսի Զատիկյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի 65 հոդվ. 1-ին մասով եւ 67 հոդվածով: Քր. օրի 65 հոդվ. առաջին մասով ազատազրկել նրան չորս (4) տարի ժամանակով, առանց հետագա աքսորի, թողնելով պատիժը կրելու խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Ամբաստանյալ Շահեն Հարությունի Հարությունյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի 65 հոդվ. 1-ին մասով, 67 հոդվածով եւ 211 հոդվածի 1-ին մասով: 211 հոդվ. 1-ին մասով ազատազրկել նրան մեկ (1) տարի ժամանակով եւ կիրառելով ՍՍՀՄ գերագույն սովետի նախագահության 1967 թվականի հոկտեմբերի 31-ի ներում շնորհելու մասին հրամանագրի առաջին հոդվածը ազատել պատիժը կրելուց: Քր. օրի 65 հոդվածի առաջին մասով Շ. Հ. Հարությունյանին ազատազրկել երեք (3) տարի ժամանակով, որպիսին պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, առանց հետագա աքսորի:

Դատապարտյալներ Հ. Կ. Խաչատրյանի. Ս. Ս. Զատիկյանի եւ Շ. Հ. Հարությունյանի կալանքի սկիզբը հաշվել 1968 թվականի հուլիսի 11-ից:

Իրեղեն ապացույց նո. 172155 «Ռեյնմետալ» գրամեքենան պետականացնել, նո. 035400 հասունության ատեստատը ոչնչացնել:

Ցինկի կտորները, 5 շիշ թթուները, կապույտ գույնի կազմի թուղթը ոչնչացնել:

Քրեական գործին կարված «Փարոս» թռուցիկները եւ թերթերի օրինակները «ազգային միացյալ կուսակցության» ծրագիրը եւ կանոնադրության օրինակները եւ հա - կասովետական այլ հոդվածներ թողնել քրեական գործում:

Թռուցիկների եւ թերթերի մնացած օրինակները, հոդվածները, առանձին տետրերը

որոնք գործին չեն կարված, բայց պահվում են առանձին ծրարով՝ ոչնչացնել:

Անձնական խուզարկության ժամանակ դատապարտյալ Խաչատրյանից առգրավված քսան ռուբլի դրամը վերադարձնել իրեն:

Դատավճիռը վերջնական է եւ բեկման կարգով գանգատարկման ենթակա չէ:

Նախագահող՝ **Ա. Եղիազարյան**
Ատենակալներ՝ **Գ. Մ. Կարապետյան, Հ.Ն. Ասատրյան**
Ճիշտ է գործով նախագահող՝ **Եղիազարյան**

6/1-69թ. եմ.
10.VIII.68թ.

«Հանուն Հայրենիքի» խումբը եւ ամսագիրը

«Հանուն Հայրենիքի» ամսագիրը հրատարակած խմբի անդամների նկատմամբ դատավճիռը հրապարակվել է 1969 թ. փետրվարի 28-ին: Բոլորն էլ դատապարտվել են ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Խմբի անդամներից կալանավորվել է ութ մարդ, բայց նրանցից միայն յոթը դատապարտվեցին: Ժամանակի լավագույն մտավորականներից մեկը՝ Հայկ Իսկանդարյանը նախաքննության փուլում՝ անհայտ հանգամանքներում մահացավ բանտախցում: Ըստ ընկերների եւ հարազատների հուշերի՝ նա որեւէ առողջական խնդիր չի ունեցել:

Խումբը ստեղծվել է 1968 թ. սկզբին: ԱՍԿ անդամ Շահեն Հարությունյանի միջոցով նրանք կապ են հաստատել Ազգային միացյալ կուսակցության հետ: Հետագա միավորման կապակցությամբ քննարկումներ են ընթացել, բայց միավորումը, ծրագրային տարաձայնությունների պատճառով, չի կայացել: Գեւորգ Հեքիմյանի միջոցով առնչվել են 1963-67 թթ. ընթացքում ձեւավորված եւ գործող այլ խմբակների ու անձանց հետ: Խմբի հիմնական նպատակները Հայ դատի, Ղարաբաղի ու Նախիջեւանի, հայոց լեզվի մաքրության, ներքին սփյուռքում բնակվող հայերի ինքնության պաշտպանության հարցերն էին: Սակայն, հարկ է ընդգծել, որ նրանք 60-ականներին յուրահատուկ ազգային-հայրենասիրական գործունեություն ծավալած շատերից էապես տարբերվում էին: «Հանուն Հայրենիքի» խմբի անդամներն անկաշկանդ խոսում, քննարկում ու գրում էին նաեւ խորհրդային կարգերի դեմ: Բարձրաձայնում էին 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի, Հայաստանի ու հայ ժողովրդի շահերի դեմ ուղղված սովետա-թուրքական դիվանագիտության մասին: Իրենց գրավոր խոսքում արդարացնում էին դաշնակցությանը եւ մեղադրում էին կոմունիստներին: Ճիշտ է, հստակ երեւացող անկախական միտումներ դեռ չկային, բայց արդեն նշմարվում էին դեպի անկախություն տանող զարգացումները: Խումբն այդ ժամանակահատվածի համար դժվարին խնդիր էր դրել իր առջեւ՝ ստեղծել ընդհատակյա տպարան, տպագրել ամսագիր եւ տարածել: Ըստ էության, իրենց առջեւ դրած խնդրի կարեւոր մասը նրանք կարողացան իրականացնել: Ստեղծեցին տպարան ու տպագրեցին իրենց պատկերացրած ամսագիրը, բայց չհասցրին տարածել: Մատնության հետեւանքով, տարածման համար արդեն ամսագրի պատրաստ օրինակներով հանդերձ, խմբի անդամները ձերբակալվեցին:

«Հանուն Հայրենիքի» ամսագիրը բաղկացած էր 38 էջից: Շապիկին հաջորդող երեսին Վիգեն Բաբայանի «Կտակ հայ որդուն» պոեմից մեծատառերով գրված քառատողհատված է.

Քանզի սնվել ես մորդ արգանդում որպես հայ որդի,
Երդվիր, սիրելիս, որ պիտի պաշտես սուրբ հողը նրա,
Դու պիտի լինես դյուցազուն զինվոր քո ժողովրդի,
Մաշտոցյան լեզուն անաղարտ պահես շրթներիդ վրա:

Վերջին էջում՝ ամսագրի բովանդակությունից ներքեւ խմբագրական կոլեգիայի անդամների կեղծանուններն են՝ Զարգանդ Մաշտոց (Ասատուր Բաբայան), Արտավազդ Կոչենց (Աղասի Անտոնյան), Հարություն Բագրատունյանց (Հովիկ Վասիլյան), Շավարշ Սիրունյան (Շիրակ Գյունաշյան), Գարսեւան Հովհաննիսյան (Գեւորգ Հեքիմյան), Սմբատ Պողոսյան (Սարգիս Թորոսյան):


ՀԱՆՈՒՆ
Հ
Ի
Ր
Ա
Ն
Ի
Ֆ
Ի
Ի
Ա
Ի
Ր
Ա
Ն
Ի
Ա
Ի
Ա
Ի
Ա

Ամսագրում զետեղված հետեւյալ երեք հոդվածների հեղինակը Հովիկ Վասիլյանն էր. «Որպես նախաբան», որը, փաստորեն, կազմակերպության ծրագիրն էր, «Բաց նամակ Քոչինյաններին», որտեղ նա քննադատում է կոմերիտմիության համագումարում Քոչինյանի ունեցած ելույթը՝ պաշտպանելով դաշնակցությանը վերջինիս հարձակումներից ու Հայաստանի կորուստների համար մեղադրելով բոլշեւիկներին, եւ վերջապես՝ «Դատական կատակերգություն» հոդվածը, որն անդրադառնում է 1967 թ. նոյեմբերի 25-29-ին տեղի ունեցած «Հայաստանի վերամիավորման շարժում» կազմակերպության անդամների դատավարությանը: Գեւորգ Հեքիմյանը գրել է «Երկու խոսք Ղարաբաղի եւ Նախիջեւանի մասին» հոդվածը: Տպագրվել են նաեւ Ավետիս Ահարոնյանի նամակը «Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար պարոն Չիչերինին» եւ դաշնակցության «Հեղափոխության ալբոմ» ամսագրից վերցված «Հեղափոխության աղբյուրները» հոդվածը, որոնք խմբագրությանն էր տրամադրել Հայկ Իսկանդարյանը:

Խմբի բոլոր անդամները դատապարտվեցին այդ տարիների համար չափազանց խիստ համարվող պատժաչափերի: Հովիկ Վասիլյանը, Գեւորգ Հեքիմյանը, Ասատուր Բաբայանը եւ Սարգիս Թորոսյանը ազատազրկվեցին վեց տարի ժամկետով: Բազմաթիվ մեղմացնող հանգամանքներ հաշվի առնելով ու դրանց մասին դատավճռում հատուկ ընդգծելով՝ Աղասի Անտոնյանին հինգ տարի ազատազրկեցին, Շիրակ Գյունաշյանին՝ չորս տարի, իսկ Լեւոն Առուշանյանին՝ մեկ տարի վեց ամիս:

Չնայած խումբը կազմավորվել էր 1968-ի սկզբին, խմբի անդամների հիմնական մասն արդեն ընդհատակյա գործունեության բավական մեծ փորձ ուներ: Այսպես. Գեւորգ Հեքիմյանը եւ Ասատուր Բաբայանը 60-ականների սկզբից էին սկսել իրենց ընդհատակյա գործունեությունը: Գեւորգ Հեքիմյանն առնչություններ է ունեցել 60-ականների շարժումներին: Մասնակցել է 1965 թ. ապրիլի 24-ի ցույցին: Եղել է նաեւ կազմակերպիչներից մեկը 1966 թ. ապրիլի 24-ին Կոմիտասի անվան այգում կայացած հայտնի ցույցի, որի մասնակիցները կալանավորվեցին: Հայտնվել է Պետանվտանգության կոմիտեի տեսադաշտում: 1964-65թթ. ծավալած գործունեության կապակցությամբ ՊԱԿ-ի կողմից երկու անգամ պաշտոնական նախազգուշացում է ստացել: Չնայած նախազգուշացումներին եւ հետապնդումներին՝ շարունակել է իր գործունեությունը:

Ասատուր Բաբայանը «Յոթի գործ»-ով դատապարտված բանաստեղծ Վիգեն Բաբայանի հայրն էր: Դեռեւս 1964-1965 թվականներին զգուշացվել է Պետական անվտանգության կոմիտեի կողմից, բայց չի դադարեցրել իր գործունեությունը:

Հովիկ Վասիլյանը եւ Շիրակ Գյունաշյանը դեռեւս 1965 թվականին են՝ իրենց համախոհների հետ միասին, հայրենասիրական բնույթի՝ հայոց լեզվի մաքրության եւ ռուսաֆիկացման դեմ ուղղված թռուցիկներ տարածել Երեւանում: 1967 թվականին նույնպես՝ նշված բովանդակությամբ թռուցիկներ են տարածել Երեւանում ու Աբովյանում, որին այս անգամ մասնակցել է նաեւ Լեւոն Առուշանյանը:

Հովիկ Մարտինի Վասիլյանը ծնվել է 1936 թ., Իջեւանի շրջանում: Մինչեւ կալանավորվելն առնչվել է ընդհատակում գործող այլ կազմակերպությունների հետ: 1965-67թթ., համախոհների հետ միասին, լուսապատճենման միջոցով բազմացրել եւ տարածել է ինչպես իր հեղինակած, այնպես էլ այլ հեղինակների կազմած թռուցիկներ: Եղել է «Հանուն Հայրենիքի» խմբի ակտիվ մասնակիցներից ու կազմակերպիչներից մեկը: Խմբի կազմավորումից հետո նա է ընտրվել խմբի ղեկավար: Կալանավորվել է 1968 թ. հուլիսի 4-ին: Դատապարտվել է վեց տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում: Ա-

Հովիկ Վասիլյան
լուս. քր. գործից

Հովիկ Վասիլյան

Հայկ Իսկանդարյան
լուս. քր. գործից

Շիրակ Գյունաշյան
լուս. քր. գործից

Շիրակ Գյունաշյան

Աղասի Անտոնյան
լուս. քր. գործից



Աղասի Անտոնյան

Սարգիս Թորոսյան
լուս. քր. գործից



Սարգիս Թորոսյան

Գևորգ Հեքիմյան
լուս. քր. գործից

Գևորգ Հեքիմյան



Ասատուր Բաբայան
լուս. քր. գործից

զատ արձակվելուց հետո եղել է ոստիկանական հսկողության տակ, բայց շարունակել է իր գործունեությունը: 1970-80-ական թվականներին որոշիչ դերակատարում է ունեցել հայ այլախոհական շրջանակներում: 1987 թ. դեկտեմբերին համախոհների հետ ստեղծել է «Հայ դատի պաշտպանության ընկերություն» կազմակերպությունը, այնուհետեւ՝ «Ազգային վերածնունդ» կուսակցությունը: Վախճանվել է 2012 թ. սեպտեմբերի 14-ին, Երեւանում:

Ասատուր Հունանի Բաբայանը ծնվել է 1915 թ. նոյեմբերի 12-ին, Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղում: «Յոթի գործ»-ով դատապարտված բանաստեղծ Վիգեն Բաբայանի հայրն է: Ծնողների մահից հետո ապրել է մանկատանը: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո տեղափոխվել է Երեւան: Սովորել է մանկավարժական ինստիտուտում: 1941-ին մեկնել է ռազմաճակատ: 7 անգամ վիրավորվել է եւ պարգեւատրվել շքանշաններով ու մեդալներով: Մինչեւ կալանավորվելը հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ է աշխատել: Պատերազմի մասնակից այն անձանցից մեկն էր, որոնք վստահ էին, որ 1945-ին Խորհրդային Միությունը պատերազմ կհայտարարի Թուրքիային, ու դրանով կլուծվի Հայկական հարցը: Այդ հույսերը չարդարացան: Երկիրը, որի համար այս մարդիկ արյուն էին թափել՝ Հայաստանի համար ոչինչ անել չէր պատրաստվում: Ընդհակառակը՝ հայտարարվում էր, որ Թուրքիայից տարածքային պահանջ չունեն: Մնում էր ապավինել սեփական ուժերին եւ սեփական հնարավորություններով փորձել լուծել հայ ժողովրդի առջեւ ծառացած խնդիրները: Ասատուր Բաբայանն առաջիններից էր, որ հասկացավ այս ճշմարտությունը: Իր նպատակից նրան հետ չպահեցին ոչ ՊԱԿ-ի հետապնդումներն ու նախազգուշացումները, ոչ որդու կալանավորումն ու դատապարտումը: 1968 թ. մասնակցում է «Հանուն Հայրենիքի» խմբի կազմակերպման ու նույնանուն ամսագրի տպագրման աշխատանքներին: Կալանավորվել է 1968 թ. հուլիսի 4-ին: Դատապարտվել է վեց տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Երեւան, եղել է ոստիկանական հսկողության տակ: Աշխատելու հնարավորություն չեն տվել: Դժվարությամբ կարողացել է աշխատանքի տեղավորվել Աղի հանքում գտնվող դպրոցներից մեկում՝ որպես պահակ: Վախճանվել է Երեւանում, 1988 թ. հուլիսի 29-ին:

Գեւորգ Ռուբենի Հեքիմյանը ծնվել է 1936թ., Սիրիայի Հալեպ քաղաքում: Քաղաքական գործունեությունը սկսել է 60-ականների առաջին կեսից: Անդամակցել է 1962-63 թթ. գործող «Հայաստանի երիտասարդական միություն» կազմակերպությանը: «Յոթ հայրենասերների» դատավարությունից հետո է՛լ ավելի է ակտիվացրել իր գործունեությունը: Կազմակերպիչներից մեկն է եղել 1966 թ. ապրիլի 24-ին Կոմիտասի անվան այգում կայացած միջոցառման, որի մասնակիցներին կալանավորեցին: Չնայած ՊԱԿ-ի նախազգուշացումներին՝ շարունակել է իր գործը: 60-ականների գործիչների միջեւ յուրօրինակ կամրջի դեր է կատարել: Մասնակցել է «Հանուն Հայրենիքի» խմբի կազմակերպման եւ նույնանուն ամսագրի տպագրության աշխատանքներին: Հեղինակել է ամսագրում տպագրված հոդվածներից մեկը: Կալանավորվել է 1968 թ. հուլիսի 4-ին: Դատապարտվել է վեց տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական ճամբարներում: Հայաստան վերադառնալուց հետո չի կտրել կապերն ընկերների ու այլախոհների հետ: Վախճանվել է 2005-ին, Երեւանում:

Աղասի Անդրուշի Անտոնյանը ծնվել 1931 թ., Սպիտակի շրջանի Կաթնաջուր գյուղում: «Հանուն Հայրենիքի» խմբի անդամների հետ ծանոթացել է Ասատուր Բաբայանի միջոցով: Խմբի ժողովները եւ ամսագրի տպագրման աշխատանքներն իրակա-

նացվել են Ավանում գտնվող նրա տանը: Կալանավորվել է 1968 թ. հուլիսի 4-ին: Դատապարտվել է հինգ տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Երեւան: Եղել է ոստիկանական հսկողության տակ: Պահպանել է մտերիմ հարաբերություններն ընկերների հետ: Վախճանվել է 2000 թ. նոյեմբերին:

Սարգիս Խաչիկի Թորոսյանը ծնվել է 1930 թ., Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում: Մասնակցել է «Հանուն Հայրենիքի» խմբի կազմակերպման եւ նույնանուն ամսագրի տպագրման աշխատանքներին: Թորոսյանին է հաջողվել հայթայթել տպատառերը: Կալանավորվել է 1968-ի հուլիսի 4-ին: Դատապարտվել է վեց տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական ճամբարներում: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Երեւան: Եղել է ոստիկանական հսկողության տակ: Ոչ միայն չի կտրել կապերն իր ընկերների հետ, այլեւ յուրահատուկ կապող օղակ է հանդիսացել տարբեր տարիների եւ գաղափարների պատկանող քաղբանտարկյալների միջեւ: Վախճանվել է Երեւանում, 2000 թվականի ապրիլին:

Շիրակ Պավելի Գյունաշյանը ծնվել է 1939 թ., Ախուրյանի շրջանի Հայկավան գյուղում: Մինչեւ կալանավորվելը սովորել է պոլիտեխնիկական ինստիտուտում, միաժամանակ աշխատել է Երեւանի էլեկտրալամպերի գործարանում, որտեղ էլ մտերմացել է Հովիկ Վասիլյանի հետ: 1965-ից մինչեւ իր կյանքի վերջը Շիրակ Գյունաշյանը չդադարեցրեց իր հայրենասիրական գործունեությունը: «Հանուն Հայրենիքի» խմբի կազմակերպիչներից էր: Կալանավորվել է 1968 թ. օգոստոսի 11-ին: Դատապարտվել է չորս տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավայրերում: Հայաստան վերադառնալուց հետո շարունակել է իր գործունեությունը: 1982-ին ձերբակալվել է երկրորդ անգամ: Այս անգամ 206[1] հոդվածով (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) ներկայացված շինծու մեղադրանքով դատապարտվել է երեք տարի ազատազրկման: 1987-ին՝ իր ընկերների հետ հիմնադրել է «Հայ դատի պաշտպանության ընկերություն» կազմակերպությունը: 1988-ից ներգրավվել է Ղարաբաղյան շարժման մեջ: Նա էր «Էրեբունի» օդանավակայանից Արցախ առաքվող զինամթերքի ու սննդամթերքի համակարգողն ու կազմակերպիչը: Մինչեւ զինադադարի կնքումը՝ նրա հիմնական աշխատավայրը «Էրեբունի» օդանավակայանն էր: 1996 թվականին՝ նրա նախաձեռնությամբ ստեղծվեց 1960-80-ականների քաղբանտարկյալների հասարակական կազմակերպությունը՝ «Ակումբ-65»-ը: Վախճանվել է 1997-ին, Երեւանում:

Լեւոն Ռուբենի Առուշանյանը ծնվել է 1939 թ., Շամշադինի շրջանի Այգեձոր գյուղում: Դեռեւս 1967-ին, Շիրակ Գյունաշյանի, Հովիկ Վասիլյանի եւ այլոց հետ միասին՝ նա թռուցիկներ է տարածել Երեւանում ու Աբովյանում: Արդեն տպագրված «Հանուն Հայրենիքի» ամսագիրը վերջնական տեսքի բերելու համար խմբի անդամներն, անվտանգության նկատառումներով, Աղասի Անտոնյանի տնից տեղափոխել են Աբովյան քաղաք՝ Լեւոն Առուշանյանի բնակարան: Սա էլ եղել է նրա դատապարտման գլխավոր պատճառը: Կալանավորվել է 1968 թ. հուլիսի 4-ին: Դատապարտվել է մեկ տարի վեց ամիս ժամանակով: Ազատ արձակվելուց հետո որեւէ գործունեությամբ չի զբաղվել:


Уголовное ДЕЛО №204

по обвинению Василяна Овика Мартыновича, Бабаяна Аслана Игнатовича, Экмекяна Георгия Рубановича, Актанян Агасы Экмекчиевича, Просян Фарнаса Матвеевича, Панчиян Шираза Павловича, Шоканоян Гайка Багратовича и Вардапетян Левона Рубановича в контрреволюционной организации, направленной против Советской Армении.

«Հանուն Հայրենիքի» խմբի անդամների նկատմամբ հարուցված
քր. գործի կազմը

Պատմում է Աղասի Անտոնյանի կինը՝ Մարին

1964 թվականին Ասատուր Բաբայանի որդուն՝ Վիգեն Բաբայանին, եւս վեց հոգու հետ դատեցին: Բաբայան Ասատուրը զինվորական էր, պատերազմի մասնակից, 7 անգամ վիրավորված, շքանշաններով ու մեդալներով պարգեւատրված: Երեւանի գնդում Աղասին՝ ամուսինս, նրա հետ է ծառայել: Ամուսնանալուց հետո գնեցինք Ավանի այս հողամասը, տուն կառուցեցինք, որտեղ այսօր էլ ապրում է մեր ընտանիքը: Ասատուրենք ապրում էին մեզանից քիչ վերեւ: Փաստորեն, նախկին ծանոթներն ու ծառայակիցները դարձան նաեւ հարեւաններ: Վիգենենց դատից հետո նրանք ընկերներով հաճախ էին հավաքվում մեր տանը: Սկզբնական շրջանում ես չգիտեի իրենց հավաքների իրական նպատակը: Կարծում էի՝ ընդամենը ընկերներ են ու հավաքվում են: Վասիլյան Հովիկն էր, Շիրակ Գյունաշյանն էր, Գեւորգ Հեքիմյանն էր, Ասատուրն էր Բաբայան, Սարգիսը Թորոսյան եւ ամուսինս՝ Աղասի Անտոնյանը: Թե երբ եւ որտեղ էին իրար հետ ծանոթացել՝ չեմ կարող ասել, չգիտեմ: Միայն կարող եմ ասել, որ մինչեւ վերջ էլ մնացին լավ ու իրար հավատարիմ ընկերներ:

Մի օր էլ Աղասին ասաց ինձ իրենց հավաքների իրական պատճառների մասին եւ տեղեկացրեց, որ որոշել են մեր տանն ամսագիր տպագրել: Սկզբում չէի համաձայնվում, վախենում էի, հետո համաձայնվեցի: Համաձայնությունս ստանալուց հետո՝ արդեն իմ ներկայությամբ սկսեցին քննարկել ապագա ամսագրի տպագրման մանրամասները: Սարգիսն ու Աղասին Սեւանից բերեցին տպատառերը: Աշխատանքը դանդաղ էր ընթանում: Երեւի մեկ տարի անց՝ Հարությունյան Շահենի միջոցով մեզ հետ ծանոթացավ Ամիրջանյան Խաչիկը: Նա Ասատուրի որդու՝ Վիգենի հետ 1964 թ. դատապարտվել ու ժամկետից շուտ ազատ էր արձակվել: Ծանոթանալուց որոշ ժամանակ

անց նա մեր տուն եկավ Ասատուրի հետ եւ ասաց, որ կնոջից բաժանվում է ու ապրելու տեղ չունի, խնդրեց ապաստան տրամադրել: Ես մի փոքրիկ սենյակ առանձնացրի, անկողին դրեցի, ու միառժամանակ նա մեր տանն էր ապրում: Որոշ ժամանակ անց տղաներից ոմանք սկսեցին կասկածանքով վերաբերվել Խաչիկին: Ասատուրը չէր հավատում, պնդում էր, որ Խաչիկը ազնիվ է, բայց մյուսները կասկածում էին: Ամսագրի տպագրման աշխատանքներում Խաչիկը ներգրավված չէր: Ամեն ինչ արվում էր նրանից գաղտնի: Նա գիտեր միայն, որ խումբ է գործում: Թե ինչ է անում այդ խումբը եւ ինչով է զբաղված՝ չգիտեր: Անընդհատ հարցուփորձ էր անում, առաջարկում իր ծառայությունները:

Բաբայան Ասատուրը գրաշարություն սովորեցրեց ինձ: Հեքիմյան Գեւորգը լամպերի գործարանում հատուկ հարմարանք-սեղանիկ էր սարքել: Ես տառերը շարում էի այդ հարմարանքի մեջ, բառերի միջակայքը ապահովելու համար յուրաքանչյուր բառի ավարտին լուցկու հատիկի ջարդած կտոր էի տեղավորում, ներկը քսում էի ու գրտնակով գրտնակում: Ամսագրի ողջ խմբաքանակը այդպես տպագրեցի: Մնում էր կազմելը: Այդ ընթացքում արդեն կասկածանքները, որ ՊԱԿ-ը կարող է տեղեկանալ գործի մասին՝ էլ ավելի էին ամրապնդվել տղաների մեջ: Որոշեցին մեր տնից տեղափոխել: Ողջ խմբաքանակը դասավորեցի արկղերի մեջ ու տարան Աբովյան: Կազմման աշխատանքներն ավարտեցին Աբովյանում՝ Հովիկի քրոջ տանը: Ավարտելուց հետո ողջ խմբաքանակն արդեն տրանսպորտով փորձում են տեղափոխել Երեւան՝ տարածելու համար: Սակայն, Աբովյանից գալուց՝ Միուբում ավտոբուսը կանգնեցնում են: Տղաներից ավտոբուսում են լինում Հովիկ Վասիլյանը, Շիրակ Գյունաշյանը, Գեւորգ Հեքիմյանը եւ Հովիկի քրոջ ամուսինը: Հայտարարում են, որ մեծ գումար է կորել, եւ ավտոբուսի ուղեւորներից յուրաքանչյուրն իր ուղեբեռով պետք է դուրս գա: Տղաները, բնականաբար, թողնում են իրենց պայուսակներն՝ ասելով, որ իրենցը չեն: Մի խոսքով, ձերբակալում են տղաներին եւ ամեն մեկին առանձին մեքենա նստեցնելով՝ տեղափոխում ՊԱԿ-ի մեկուսարան: Դա հուլիսի 2-ին էր: Աղասին տան դռներն էր ներկում, բայց երիկամների հետ կապված խնդիրներ ուներ, վատ զգաց ու պառկեց: Երեկոյան 9-ի կողմերն՝ առանց դուռը ծեծելու մի մեծ խումբ մտավ մեր տուն: Պահանջեցին, որ Աղասին հագնվի: Ասացին, որ ձերբակալելու եւ տունը խուզարկելու սանկցիա ունեն: Մեզ՝ տնեցիներիս փակեցին մի սենյակում ու սկսեցին խուզարկությունը: Մինչեւ գիշերվա երեքը մեր տանն էին: Այդ ընթացքում տղաների բռնվելու մասին իմանում է Սարգիսը եւ շտապում մեր տուն՝ Աղասուն զգուշացնելու նպատակով: Չիմանալով, իհարկե, որ այդ պահին մեր տանը խուզարկություն է ընթանում: Մեր տանը մոտենալիս՝ տեսնում է բակում կանգնած մեքենաները, հասկանում է, որ արդեն ուշ է, փորձում է հեռանալ, բայց բռնում են: Սաքոյին նույնպես բերեցին մեր տուն: Նա մնաց մեզ հետ այնքան ժամանակ՝ մինչեւ որ ավարտվեց մեր տան խուզարկությունը, ինչից հետո Սաքոյին տարան իրենց տուն ու սկսեցին այնտեղ խուզարկել: Ես գործում ներգրավված էի որպես վկա: Բնական է, որ տղաները բոլորն էլ ասում էին, որ ես ոչնչից տեղյակ չեմ: Նույնը ասում էի նաեւ ես: Նախաքննության փուլում Ամիրջանյան Խաչիկի նկատմամբ մեր կասկածները վերջնականապես հիմնավորվեցին: Նախաքննությունն ութ ամիս տեւեց: Դատը տեղի ունեցավ փետրվարի 12-ին՝ Աղասու ծննդյան օրը: Ինձ ու Հեքիմյան Գեւորգի կնոջը դատական նիստերի դահլիճ չթողեցին, քանի որ մենք գործում որպես վկաներ էինք ներգրավված: Միայն ցուցմունքներ տալուց հետո թույլ տվեցին նստել դահլիճում:

Բոլորին էլ բարձր պատժաչափեր նշանակեցին: Հովիկ Վասիլյանին, Ասատուր Բաբայանին, Գեւորգ Հեքիմյանին, Սարգիս Թորոսյանին տվեցին վեցական տարի, Աղա-

սուն՝ հինգ, Շիրակ Գյունաշյանին՝ չորս: Միայն Հովիկի քրոջ ամուսնուն՝ Առուշանյան Լեւոնին, որը կազմակերպության գործունեության հետ որեւէ առնչություն չուներ, մեկ տարի վեց ամիս տվեցին: Դատից հետո տղաներին տեղափոխեցին Մորդովիա: Տարեկան մեկ անգամ տեսակցություն էր թույլատրվում: Ամբողջ տարին գումար էինք կուտակում, հավաքվում էինք կանանցով ու միասին տեսակցության գնում: Գնում էինք Մոսկվա, Մոսկվայից գնացքով՝ Սարանսկ, իսկ այնտեղից արդեն բեռնատար մեքենաների թափքերին՝ դեպի կալանավայրեր: Տղաները գտնվում էին տարբեր կալանավայրերում: Հեռավորությունը նրանց միջեւ բավականին մեծ էր: Մի տարի էլ այդ նույն չարչարանքներով հասանք գաղութ, բայց տեսակցություն չտվեցին: Երրորդ գաղութն էր: Սարգիսը եւ Աղասին միասին էին նստած, ու ես գնացել էի նրա կնոջ հետ: Ինչքան խնդրեցինք՝ չթույլատրեցին: Այդպես էլ՝ առանց հանդիպելու վերադարձանք Երեւան:

Հայաստան վերադառնալուց հետո տղաները շարունակում էին իրենց ընկերությունը: Մեր ընտանիքներն էլ էին արդեն հարազատացել: Բոլորն արդեն մահացել են, բայց մեր ընտանիքների միջեւ կապն այսօր էլ չի կտրվել: Հաճախ մեր տանն էին հավաքվում: Քանի դեռ Աղասին նստած էր, ես որեւէ հետապնդում կամ ճնշում իմ նկատմամբ չեմ զգացել: Լվացքատանն էի աշխատում: Աղասու վերադառնալուց հետո տեղափոխվեցի «Ալմաստ» գործարան: Այդտեղ արդեն գալիս էին, ինձ կանչում էին տնօրենի մոտ եւ հետաքրքրվում, թե ինչ է անում Աղասին: Անընդհատ առանձնակի ուշադրություն էի զգում: Մի անգամ բանվորներով ինչ-որ աշխատանքային խնդրի հետ կապված հրաժարվել էինք աշխատել: Տնօրեն Միդոյանը ներս մտավ ու հարցրեց՝ ինչու՞ չեք աշխատում: Ես փորձեցի բացատրել մեր չաշխատելու պատճառը: Նա էլ, թե՝ տիկին, սա քեզ համար ցույց չի, որ կազմակերպես ու հայկական հողեր ուզես, լուսամուտից հիմա քեզ դուրս կշպրտեմ: Իսկ ինքը՝ Աղասին, ընդհանրապես աշխատելու հնարավորություն չուներ: Եվ ոչ միայն նա: Վերադառնալուց հետո երկու տարի հսկողության տակ էր: Երեկոյան 8-ից տնից դուրս գալու իրավունք չուներ, հասարակական վայրերում լինելու իրավունք չուներ: Թանգարան էր մտել՝ դուրս էին արել: Մի Զանազյան ազգանունով միլիցիոներ կար, հանգիստ չէր տալիս: Անընդհատ գալիս էր: Որտեղ էլ որ աշխատանքի տեղավորվեր՝ կարճ ժամանակից հեռացնում էին: Վասիլյան Հովիկի հետ միասին քանի տեղ աշխատելու փորձ արեցին, ոչինչ չստացվեց: Մի անգամ էլ տեղավորվեցին աշխատանքի որպես մայթեզրերի քարեր շարող բանվորներ: Անգամ այդտեղ խնդիրներ առաջացան:

Մեկ անգամ էլ մեր տունը խուզարկեցին 1977-ին, Զատիկյան Ստեփանի հետ կապված: Զատիկյանի ձերբակալության օրը տղաներն ասացին ինձ, որ գնամ նրանց տուն եւ տեսնեմ, թե ինչ է կատարվում այնտեղ: Մեծ աղջկաս հետ գնացի: Հասանք նրանց տուն, բայց մեզ ներս չթողեցին: Մի քանի օրից եկան իմ աշխատանքի վայր, ինձ տուն բերեցին ու խուզարկություն կազմակերպեցին մեր տանը: Բայց ոչինչ չգտան:

Հայկ Իսկանդարյան

Առեղծվածային մահ

«Հանուն Հայրենիքի» ամսագրի հրատարակմանն աջակցելու համար՝ խմբի անդամների հետ ձերբակալվում է նաեւ Հայկ Իսկանդարյանը: Դատավարությունից առաջ նա մահացավ ՊԱԿ-ի մեկուսարանում: Մինչ օրս նրա մահվան հանգամանքները հայտնի չեն եւ անհայտ կմնան այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայությունը միայն անունով է դարձել ազգային անվտանգություն, իսկ իրականում՝ եւ՛ իր մտածողությամբ, եւ՛ իր առջեւ դրված խնդիրներով, եւ՛ իր առօրյայով, եւ՛ իր գործելաոճով, եւ՛ անցյալի նկատմամբ դրսեւորվող անսքող հավատարմությամբ մնացել է Չեկա - ՊԱԿ – ԿԳԲ:

Հայկ Բաղդասարի Իսկանդարյանը ծնվել է 1909 թ. սեպտեմբերի 23-ին, Սիսիանի շրջանում: 1922 թվականին հոր հետ տեղափոխվել է Բաքու, որտեղ սովորել եւ 1928-ին ավարտել է Թումանյանի անվան դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Երեւանի պետական համալսարանի շինարարական ֆակուլտետը: Ուսումը շարունակել է Մոսկվայի Կույբիշեւի անվան ռազմա-ճարտարագիտական ակադեմիայում: 1942-ին մեկնել է ռազմաճակատ: Կերչում հայտնվել է շրջափակման մեջ եւ գերեվարվել: Ռազմագերիների ճամբարում հայերին առանձնացրել եւ տեղափոխել են Լիխվիցա քաղաք, որտեղ Իսկանդարյանն ընդունվել է հայկական լեգեոն՝ ստանալով կրտսեր հրամանատարի կոչում: Բեռլինում հրատարակվող «Հայաստան» լրագրի խմբագրությունում թարգմանիչ է աշխատել: 1944-ին ֆաշիստները ձերբակալել ու բանտարկել են նրան՝ որպես վստահություն չներշնչող տարրի: Կալանավորներին տեղափոխող գնացքը ենթարկվում է ռմբակոծության, եւ Իսկանդարյանն, առիթից օգտվելով, փախչում է: Ֆրանսիայի Նիմ քաղաքում միանում է պարտիզաններին ու պարտիզանական ջոկատների կազմում կռվում ֆաշիստների դեմ: Հայկական գնդի հետ 1945-ին վերադառնում է Հայաստան: Պատերազմից հետո՝ մինչեւ իր ձերբակալումը եւ մահը ճարտարագետ է աշխատել հիդրոշինարարության բնագավառում: 1960-68 թթ. «Երեւաննախագիծ» ինստիտուտում եղել է հիդրոտեխնիկական կառույցների խմբի ղեկավար: 1964 թվականին ԽՍՀՄ ղեկավար մարմիններին՝ ԽՄԿԿ կենտրոնական կոմիտեին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, Նախարարների խորհրդին հասցեագրված՝ Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայաստանին վերամիավորելու հարցով նամակներ է պատրաստում՝ հավաքելով 5501 ստորագրություն: Հնարավորինս շատ ու ծանրակշիռ ստորագրություններ հավաքելու նպատակով Հայկ Իսկանդարյանը ջանք է թափում, որ առաջին երկու ստորագրությունները լինեն Մարտիրոս Սարյանինը եւ Գոհար Գասպարյանինը եւ հաջողում է: Եւս մեկ նման բովանդակությամբ նամակ Իսկանդարյանը պատրաստում է 1967 թվականին, որի տակ պետք է լինեին միայն Ղարաբաղի եւ Նախիջեւանի բնակիչների ստորագրությունները: Հավաքում է 1906 ստորագրություն:

1967 թվականին Սարգիս Թորոսյանը նրան առաջարկում է մասնակցել «Հանուն Հայրենիքի» ամսագրի տպագրության աշխատանքներին, բայց Հայկ Իսկանդարյանը դեմ է արտահայտվում ընդհատակյա ամսագրի լույսընծայման մտադրությանը: Իր դեմ լինելը նա բացատրում է այն հանգամանքով, որ խորհրդային հատուկ ծառայությունները շատ շուտ կկարողանան բացահայտել ու ձերբակալել գաղտնի գործող կազմակերպության անդամներին: Դեմ լինելով հանդերձ, նա ամսագրի հրատարակմանն է

տրամադրում իր ձեռքի տակ եղած Գարեգին Նժդեհի «Բաց նամակ հայ մտավորականությանը» գրքույկը եւ Ավետիս Ահարոնյանի «Սովետական Ռուսիո արտաքին գործոց ժողովրդական կոմիսար պարոն Չիչերինին» նամակը: 1968 թ. հուլիսի 2-ին «Հանուն Հայրենիքի» խումբը ձերբակալվում է: Իսկանդարյանը վաղուց ի վեր ՊԱԿ-ի ուշադրության կենտրոնում էր: Պարզելով, որ նա առնչություն ունի խմբի անդամների հետ՝ վճռում են ձերբակալել նաեւ նրան:

Խուզարկությամբ՝ Հայկ Իսկանդարյանի մոտ հայտնաբերվել եւ առգրավվել են հետեւյալ փաստաթղթերը՝ Թալերի «Հայաստանը եւ Թուրքիան», Դոկտոր Նազըմի ճառը 1910 թ. (հայերին ոչնչացնելու մասին), Բուլղարիայի կոմկուսի քարտուղար Դիմիտրովի ելույթը հայկական հողերի մասին, Օրջոնիկիձեի ելույթը Նարիմանովի որոշման կապակցությամբ, Գեմբարսկու երկու նամակը՝ ա. Ու Տանին, բ. Հնդկաստանի պրեզիդենտին, «Պրավդայի» հոդվածը 1921 թվականին՝ վերնագրված «Կեցցե Սովետական Հայաստանը», Ստալինի հեռագիրը Լենինին (Արեւմտյան Հայաստանի կապակցությամբ):

Թվարկված նյութերը բազմացված են եղել՝ 50-ական օրինակ, եւ պետք է ուղարկվեին Սովետական Միության կազմում գտնվող հանրապետությունների ակադեմիաներին, գրողներին, հասարակական ու քաղաքական գործիչներին:

Առգրավվել էին նաեւ իր հեղինակած հետեւյալ նյութերը՝ Նամակ Շոլոխովին («Գրո՛ղ Շոլոխով » վերնագրով, որտեղ Շոլոխովին մեղադրում է ռուսական շովինիզմի սպասարկու լինելու համար. նամակն ուղարկվել է խորհրդային 15 հանրապետությունների գրողների միություններին), Մտորումներ ինքնուրույն պետականություն ունենալու մասին, Կոչ սփյուռքի հայերին (5-ական օրինակ՝ հայկական համայնքներ ուղարկելու համար), շնորհակալական պատասխան նամակներ Բ. Գեմբարսկուն, Ի. Էրենբուրգին եւ Կոչ Եղեռնի օրվա կապակցությամբ, որը ներկայացնում ենք ստորեւ.

Թանկագին ընկերներ

Մեր սուրբ նահատակների հիշատակին նվիրված օրը՝ ապրիլի 24-ը, որ անմոռաց սխրագործությամբ անցյալ տարի դարձրինք հայ ժողովրդի պայքարի եւ նրա պատմության անմոռանալի էջերից մեկը, պետք է դառնա ավանդական ու նվիրական մի սրբազան պահ հայի համար:

Այս տարի այդ արժանահիշատակ օրը նշելու համար, խոնարհ ու որդիական պարտքի սուրբ գիտակցությամբ, փողոց դուրս եկանք, սակայն իշխանավորները՝ ազգային, մարդկային արժանապատվությունից զուրկ իրենց բութ կամակատարների միջոցով ճնշեցին մեր խաղաղ եւ արդար ցույցը, որն ուղղված էր ցեղասպանության, մեր պատմական հայրենիքի զավթման եւ աշխարհում իր նմանը չունեցող անլուր անարդարության դեմ: Այդ մարդիկ պետք է սարսուռ ապրեն, երբ հիշեն, որ իրենք պաշտպան կանգնեցին թուրքին եւ արդարասպանությանը: Ահա իմաստը նրանց ամոթաբեր եւ խայտառակ արարքի: Բայց մենք, այնուամենայնիվ, վսեմ պարտքի գիտակցությամբ՝ այդ նվիրական օրը լցրեցինք մայրաքաղաքի փողոցներն ու հրապարակները եւ հարգանք մատուցեցինք միլիոնավոր նահատակների շիրիմներին:

Լինենք վսեմ եւ հպարտ մեր արդարության խոր գիտակցությամբ եւ չխնայենք կյանքը, ուժերը, եռանդը մեր մեջ՝ ժողովրդի շահերի պաշտպանության ոտնահարված իրավունքների վերահաստատման պայքարի դժվարին ճանապարհին:

Հայկ Իսկանդարյան

Բեյրութում Հնչակյան կուսակցությունը 1965թ. հանդես է գալիս հայերին ուղղված կոչով, որում, մասնավորապես, ասվում է. «Կոչ ենք անում մեր հայրենակիցներին՝ ոտքի կանգնել եւ խաղաղ միջոցներով հետապնդել մեր հողային դատը»: Իսկանդարյանը հանդես է գալիս պատասխան կոչով՝ ուղղված սփյուռքի քաղաքական-հասարակական կազմակերպություններին, ողջ հայ ժողովրդին: Նա, մասնավորապես, գրում է. «Երկրորդ աշխարհամարտից հետո աշխարհի բազմաթիվ ժողովուրդներ դարձան պետական կյանքի տերեր, ժողովուրդներ, որոնք անգամ պետական գիտակցության չէին հասնում. մենք ուրախ ենք նրանց առաջընթացի համար, բայց չպետք է մոռանանք, որ մեր պաշտելի հայրենիքը թուրք զավթիչների տիրապետության տակ է, որ հայ ավերված փլատակների տակ դեռեւս չի փտել թուրքի ձեռքով մորթված հայ մանուկի դին…»:

Կոչը ստորագրված է այսպես՝ Հայ Դատի Երեւանյան կոմիտե:

1968 թ. սեպտեմբերի 10-ին, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայում հիդրոշինարար Աստվածատրյանին նվիրված կոնֆերանս է ընթանում: Կոնֆերանսին մասնակցում է նաեւ Իսկանդարյանը: Հենց կոնֆերանսի դահլիճում էլ ձերբակալում են նրան:

Ձերբակալությունից երեք ամիս անց՝ դեկտեմբերի 16-ին ընտանիքի անդամների հետ տեսակցության հնարավորություն են ընձեռում նրան: Սա էլ լինում է հարազատների հետ Իսկանդարյանի վերջին հանդիպումը: 59 տարեկանում՝ 1968 թ. դեկտեմբերի 25-ին՝ տեսակցությունից ինն օր անց, ՊԱԿ-ի մեկուսարանում՝ անհայտ հանգամանքներում վախճանվում է Հայկ Իսկանդարյանը: Երկու օր անց՝ դեկտեմբերի 27-ին, ՊԱԿ-ից զանգահարում են Իսկանդարյանի ընտանիքի անդամներին եւ հրավիրելով իրենց մոտ՝ տեղեկացնում, որ Իսկանդարյանը մահացել է: Արգելում են զանգահարել անգամ ամենամոտ հարազատներին: Ողջ օրն ընտանիքի անդամներին պահում են Պետանվտանգության կոմիտեի շենքում եւ միայն երեկոյան դուրս են բերում ետնամուտքից, նստեցնում ՊԱԿ-ի շենքի բակում սպասող ավտոբուսն ու տանում Սովետաշենի գերեզմանատուն: Այնտեղ էլ՝ Պետանվտանգության կոմիտեի աշխատակիցների բերած բանվորները թաղում են ժամանակի լավագույն մտավորականներից մեկին՝ Հայկ Իսկանդարյանին:

Պատմում է Հայկ Իսկանդարյանի դուստրը՝ Ալբինան

«Այդ օրը մայրս առաջարկեց թաքցնել տանը գտնվող գրամեքենան, սակայն նա ասաց, որ դրա կարիքը չկա. «Նրանց ամեն ինչ հայտնի է, միեւնույն է՝ կգտնեն»: Ձերբակալությունից երեք ամիս անց՝ դեկտեմբերի 16-ին մեզ նրա հետ տեսակցության հնարավորություն տվեցին: Նա շատ էր փոխվել: Մազերն ամբողջությամբ սպիտակել էին: Դա եղավ մեր վերջին հանդիպումը: 9 օր անց՝ դեկտեմբերի 25-ին, ՊԱԿ-ի մեկուսարանում նա մահանում է»:

Պատմում է Հայկ Իսկանդարյանի դուստրը՝ Ալլան

«Դեկտեմբերի 27-ին, ժամը ցերեկվա 1-ի կողմերը մեզ բոլորիս կանչեցին ՊԱԿ: Մենք պատկերացում անգամ չունեինք, թե ինչ է մեզ սպասվում: Այնտեղ էին երեք ներկայացուցիչներ ինստիտուտից, տեղային կոմիտեից, պրոֆկոմից եւ դիրեկցիայից: Մեզ ասացին, որ նա մահացել է: Մենք ցանկացանք զանգահարել մոտ հարազատներին եւ տեղեկացնել, սակայն թույլ չտվեցին: Երեկոյան ՊԱԿ-ի շենքի բակի կողմից մեզ դուրս հանեցին, արագ նստեցրին ավտոբուսի մեջ եւ տարան Սովետաշենի գերեզմանոց: Իրենք էլ՝ իրենց ձեռքով շատ արագ կատարեցին թաղման արարողությունը»:

«Հանուն Հայրենիքի» խմբի անդամների գործով կայացված դատավճիռը

Այս դատավճիռը, նույնպես գործին առնչություններ ունեցող մարդկանց հիշողությունների եւ մեր ձեռքի տակ եղած մեղադրական եզրակացության ու այլ փաստաթղթերի օգնությամբ, կարողացել ենք քիչ թե շատ ավարտուն տեսքի բերել՝ լրացնելով ԱԱԾ կողմից վկաների ջնջված անունները: Չլրացված են մնացել միայն մի քանի անուններ, մեզ տրամադրված անմխիթար վիճակում գտնվող դատավճռի անընթեռնելի մի քանի հատված եւ գործով դատապարտված Լեւոն Առուշանյանի անձնական տվյալները:

ԴԱՏԱՎՃԻՌ

1969թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1969թվի փետրվարի 28-ին

Նախագահությամբ՝	**Ս.Ս. Եղիազարյանի**
Ատենակալներ՝	**1. Ս. Գ. Պետրոսյանի**
	2. Հ. Գ. Աղլամազյանի
Քարտուղարությամբ՝	**Կ. Մելքոնյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Գ. Ղամբարյանի**
Դատապաշտպաններ՝	**Գ. Հարոյանի եւ Ս. Մոսոյանի**

Քննության առնելով դատական դռնփակ նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի՝

1. ՀՈՎԻԿ ՄԱՐՏԻՆԻ ՎԱՍԻԼՅԱՆԻ, ծնվել է 1936թվ. Իջեւանի շրջանի Վերին Արդան Գյուղում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, միջնակարգ կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ ոք, նախկինում չդատված, մշտապես բնակվել է Երեւան քաղաքի Կոմիտաս փողոցի 22 շենքում, սույն գործով կալանքի տակ է 1968թվ. հուլիսի 4-ից:

2. ԱՍԱՏՈՒՐ ՀՈՒՆԱՆԻ ԲԱԲԱՅԱՆԻ, ծնվել է 1915թվ. Ադրբեջանի ՍՍՀ Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, բարձրագույն կրթությամբ, նախկինում չդատված, մինչեւ կալանավորվելը աշխատել է որպես ուսուցիչ, խնամքին 3 անձ, ամուսնացած, Հայրենական պատերազմի մասնակից, 7 անգամ վիրավորված, պարգեւատրված է շքանշաններով եւ մեդալներով, Մշտապես բնակվել է Երեւանում, սույն գործով կալանքի տակ է 1968թվ. հուլիսի 4-ից:

3. ԳԵՎՈՐԳ ՌՈՒԲԵՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ծնվել է 1936թ.վ Սիրիայի Հալեբ քաղաքում,

ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին ոչ ոք, նախկինում չդատված, աշխատել է էլեկտրոլամպերի գործարանում որպես բանվոր, մշտապես բնակվել է Երեւան, Ն. Ձեյթուն 5-րդ փողոց տուն նո. 28: Սույն գործով կալանքի տակ է 1968թվ. հուլիսի 4-ից:

4. ԱՂԱՍԻ ԱՆԴՐՈՒՇԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ծնվել 1931թվ. Սպիտակի շրջանի Կաթնաջուր գյուղում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, 6-րդ դասարանի կրթությամբ, խնամքին կինը եւ 4 երեխաներ, սովետական բանակում ծառայել է, աշխատել է 6-րդ տրեստի 3-րդ շինվարչությունում որպես բանվոր, մշտապես բնակվել է Երեւանի Ավան 4-րդ փողոցի 15 տանը: Սույն գործով կալանքի տակ է 1968թ հուլիսի 4-ից: Նախկինում չդատված:

5. ՍԱՐԳԻՍ ԽԱՉԻԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ, ծնվել է 1930թվ. Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, նախկինում չդատված, 8-րդ դասարանի կրթությամբ, ամուսնացած, խնամքին կինը եւ 3 երեխաներ, աշխատել է տաքսամոտորային պարկում որպես ավտովարորդ, մշտապես բնակվել է Երեւան----: Սույն գործով կալանքի տակ է 1968թվ. հուլիսի 4-ից:

6. ՇԻՐԱԿ ՊԱՎԵԼԻ ԳՅՈՒՆԱՇՅԱՆԻ, ծնվել է 1939թվ. ՀՍՍՀ Ախուրյանի շրջանի Հայկավան գյուղում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, թերի բարձրագույն կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ ոք, աշխատել է Երեւանի էլեկտրոլամպերի գործարանում որպես ինժեներ, կոնստրուկտոր, մշտապես բնակվել է Երեւանում, Մարգարյան փող. նո. 23 տանը: Սույն գործով կալանքի տակ 1968թվ. օգոստոսի 11-ից: Նախկինում չդատված:

7. ԼԵՎՈՆ ՌՈՒԲԵՆԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ, ծնվել է 1939թվ. ՀՍՍՀ Շամշադինի շրջանի Այգեձոր գյուղում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, 9-րդ դասարանի կրթությամբ, նախկինում չդատված, ամուսնացած, խնամքին կինը եւ 4 երեխաներ, մինչեւ կալանավորվելը աշխատել է շին վարչությունում որպես բեռնակիր բանվոր, մշտապես բնակվել է Աբովյան քաղաքի ---------- : Սույն գործով կալանքի տակ է 1968թվ. հուլիսի 4-ից:

Դատաքննությամբ, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացություններով, քննչական փորձերով, առգրավված իրեղեն ապացույցներով եւ գործով բոլոր ամբաստանյալների ինքնախոստովանությամբ, Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան ապացուցված է համարում հետեւյալը՝

Ամբաստանյալներ Հովիկ Վասիլյանը եւ Շիրակ Գյունաշյանը աշխատելով Երեւանի էլեկտրոլամպերի գործարանում, մշտապես հանդիպումներ են ունեցել միմիանց հետ ու խոսել են հայ ժողովրդի պատմական անցյալի, նրա տերիտորիաների, ինչպես նաեւ լեզվի անաղարտության մասին:

Չուենալով համապատասխան կրթություն եւ պատրաստականություն, գտնվելով քաղաքականապես ցածր մակարդակի վրա նրանք սխալ եզրակացության են հանգել այն մասին, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո, իբր հայկական լեզուն ռուսացվել է եւ որ հայ ժողովրդի շահերը ոտնահարվում են ռուսների կողմից:

Իրենց դատողություններով ամբաստանյալներ Վասիլյանը եւ Գյունաշյանը, իսկ հետագայում նաեւ Գեւորգ Հեքիմյանը, Աղասի Անտոնյանը, Ասատուր Բաբայանը եւ Սար -

գիս Թորոսյանը աղավաղելով մեր իրականությունը, խորհրդային միությունում գտնվող բոլոր ազգերի իրավահավասարությունը գտել են, որ իբր հայ ժողովրդի այն մասը, որը մշտապես բնակվում է միության մյուս հանրապետություններում հալածված են եւ գտնվում են «ողբերգական» վիճակում:

Առանց հաշվի առնելու պատմական իրադարձությունները, 1917թվ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեր երկրի իրավիճակը, նրա փոխհարաբերությունները կապիտալիստական մի շարք երկրների հետ եւ միջազգային իրադրությունը ընդհանրապես ամբաստանյալներ Վասիլյանը, Գ. Հեքիմյանը, Ա. Բաբայանը, Ա. Անտոնյանը, Շ. Գյունաշյանը եւ Ս. Թորոսյանը բանավոր եւ գրավոր զրպարտչական հերյուրանքներ են տարածել խորհրդային միության կառավարության կողմից տարվող ներքին եւ արտաքին քաղաքականության նկատմամբ, հատկապես թուրքիայի հետ կնքված պայմանագրերի շուրջ: Խորհրդային միության հանրապետությունների միասնությունը խախտելու նպատակով պահել եւ ամսագրի ձեւով փորձել են տարածել դաշնակցության կուսակցության պարագլուխների հակասովետական բովանդակություն կրող հոդվածները, որոնցում կոչ է արվում «անկախ» հայաստան ստեղծելու մասին, ինչպես նաեւ այս բովանդակության հոդվածներ են գրել իրենք: Եւ վերջապես այդ նպատակին հասնելու համար ստեղծել են անլեգալ կազմակերպություն, որի ղեկավար է ընտրվել ամբաստանյալ Հովիկ Վասիլյանը: Այսպես օրինակ՝

1965թվ. գարնանը Վասիլյանը եւ Շիրակ Գյունաշյանը գործով վկաներ Գագիկ Գեւորգյանի եւ Միշա Մնոյանի հետ Երեւան քաղաքի Լենինյան շրջանում եւ «Մոսկվա» կինոթատրոնի մոտ «այլեւս չի կարելի լսել» վերնագրով լուսազգայուն թղթի վրա տպագրված 50 օրինակ թռուցիկ են տարածել, որի հեղինակը հանդիսացել է Հովիկ Վասիլյանը:

Այդ թռուցիկում միանգամայն սխալ տեսանկյունով է մեկնաբանվում հայ եւ ՍՍՀ Միության մյուս ժողովուրդների վիճակը մեկնաբանելով, որ իբր «խարիսխվում է» նրանց արտոնությունները եւ այդ ազգերը ռուսականացվում են:

1967թվ. փետրվար ամսին ամբաստանյալ Գեւորգ Հեքիմյանը, որը դեռ 3 տարի առաջ պետական անվտանգության կոմիտեի կողմից նախազգուշացված է եղել, մեկ այլ հակասովետական կազմակերպության հետ առնչվելու համար, քր. օրի 206[1] հոդվածով դատապարտված Մարտին Նալբանդյանից վերցրել է «կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին» վերնագիրը կրող թռուցիկը եւ տվել է Հովիկ Վասիլյանին Երեւան քաղաքի բնակիչների մեջ տարածելու նպատակով:

Վասիլյանը իր հերթին, այդ թռուցիկները տարածելու գործին ներգրավել է Շիրակ Գյունաշյանին, ------- գործով ամբաստանյալ Լեւոն Առուշանյանին եւ վկա Միշա Մնոյանին: Նշված թռուցիկները մի քանի հայրուր օրինակից տարածվել է 1967թվ. մարտ ամսին Երեւանի Լենինի անվան պողոտայում գտնվող փակ շուկայում եւ Աբովյան քաղաքում: Բացի այդ նույն ամբաստանյալները տարածել են նաեւ առանց վերնագրի մեկ այլ թռուցիկ, որոնցում զրպարտչական հերյուրանքներ են շարադրված այն մասին, որ իբր սովետական կառավարությունը շարունակում է ցարական ռուսաստանի քաղաքականությունը, ոտնահարում է հայ ժողովրդի իրավունքները եւ իբր թույլ է տալիս նրա նկատմամբ բարոյական գենոցիտ:

Ընդ որում «կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին» վերնագիրը կրող թռուցիկների մի մասը տարածվել է Երեւանի Աերոֆլոտի քաղաքային գործակալության բարձրահարկ շենքի տանիքից, պիրոտեխնիկական հարմարանքի գործադրմամբ, որը պատրաստել են ամբաստանյալ Վասիլյանը եւ վկա Մնոյանը:

Գեւորգ Հեքիմյանը, Հովիկ Վասիլյանը եւ Շիրակ Գյունաշյանը իրենց անլեգալ գործունեությունը ավելի ընդլայնելու նպատակով 1968թվ. փետրվար ամսին կապ են հաստատել գործով վկա Կիրով Խաչատրյանի հետ, որը իր հերթին նույնանման խումբ է ունեցել եւ նույնպես զբաղվել է զրպարտչական բովանդակությամբ թռուցիկներ տարածելով:

Նրանք մի քանի անգամ հավաքվել են ամբաստանյալ Գեւորգ Հեքիմյանի բնակարանը եւ քննարկել են համատեղ գործելու միջոցների մասին, սակայն Կիրով Խաչատրյանի Օդեսա գնալու կապակցությամբ այդ միացումը տեղի չի ունեցել: Իսկ մինչ այդ Հեքիմյանը եւ Վասիլյանը Կ. Խաչատրյանին են տվել ամբաստանյալ Սարգիս Թորոսյանի կողմից ձեռք բերված տպագրական հարմարանքներ թռուցիկներ տպագրելու եւ տարածելու նպատակով, սակայն Խաչատրյանը դրանք չի օգտագործել եւ Հեքիմյանի, Վասիլյանի, Թորոսյանի եւ մյուսների կալանավորվելուց հետո ներկայացրել է պետական անվտանգության կոմիտե:

Գեւորգ Հեքիմյանը, Հովիկ Վասիլյանը եւ Շիրակ Գյունաշյանը տարբեր պատրվակներով ծանոթանալով գործով մյուս ամբաստանյալներ Ասատուր Բաբայանի, Աղասի Անտոնյանի եւ Սարգիս Թորոսյանի հետ 1968 թվականին սկզբներին որոշել են ստեղծել գաղտնի կազմակերպություն, որը պետք է զբաղվի հակասովետական բնույթի բազմատիրաժ թերթեր կամ ամսագրեր տպագրելու եւ ժողովրդի մեջ տարածելու հարցերով:

Այդ նպատակով բոլոր ամբաստանյալները բացառությամբ Առուշանյանի բազմաթիվ անգամ գաղտնի հավաքույթներ են կազմակերպել Աղասի Անտոնյանի բնակարանում, քննարկել են «Հանուն հայրենիքի» վերնագիրը կրող ամսագիր հրատարակելու հարցերը, նրանում տպագրվելիք հոդվածների բովանդակությունը, տպագրական միջոցներ հայթայթելու մասին, ինչպես նաեւ գրամեքենա ձեռք բերելու հարցը եւ այլ կազմակերպչական խնդիրներ: Գաղտնի ամսագրի հրատարակման նպատակով, կազմակերպության պահանջով ամբաստանյալ Թորոսյանը գնել է «Կոնսուլ» մակնիշի գրամեքենա եւ հանձնել Աղասի Անտոնյանին: Բացի այդ Թորոսյանը ձեռք է բերել տպագրական հարմարանքներ, որոնց սակայն չեն օգտագործել եւ Վասիլյանի ու Հեքիմյանի կողմից հանձնվել են Կիրով Խաչատրյանին:

Ձանալով լինատիպ տպագրական հարմարանքներ ձեռք բերել, ամբաստանյալներ Աղասի Անտոնյանը եւ Շիրակ Գյունաշյանը հանդիպումներ են ունեցել գործով վկա Ի-ի հետ եւ խնդրել են նրան բացատրել լինատիպ տպագրության ձեւը: Գյունաշյանը նույնիսկ իր ծոցատետրում այդ մեքենայի մոտավոր սխեման է գծել, սակայն հետագայում հրաժարվել են նաեւ այդ մտքից: Ի վերջո Սարգիս Թորոսյանը եւ Աղասի Անտոնյանը մի անգամ գնացել են Սեւան քաղաքի տպարան եւ գրաշար Հովեյանի միջոցով ձեռք են բերել շուրջ 30 կգ տպագրական տառեր, տողեր, ներկ եւ բերել Երեւան պահել են Անտոնյանի բնակարանում:

Երբ կազմակերպության բոլոր անդամները տեղյակ են պահվել, որ տպագրության համար անհրաժեշտ պարագաները արդեն ձեռք են բերվել ամբաստանյալները, բացի Առուշանյանից, ձեռնմուխ են եղել հոդվածների պատրաստմանը:

Ամբաստանյալ Հովիկ Վասիլյանը ամսագրում տպագրելու համար անձամբ գրել է 3 հոդված այն է՝ «որպես նախաբան» որը փաստորեն հանդիսացել է կազմակերպության ծրագիրը, «բաց նամակ Քոչինյաններին» եւ «դատական կատակերգություն»:

Այդ հոդվածներում Հովիկ Վասիլյանը գովեստով է նշում դաշնակցություն կուսակցության գործունեությունը, թույլ է տվել զրպարտանք բոլշեւիկների հասցեին նրանց

անվանելով «Գաղութարարներ» որ իբր ռուսաստանը աջակցել է թուրքերին հայկական ջարդերի ժամանակ, կոչ է արել «միավորվել մեկ ընդհանուր համաժողովրդական հզոր շարժման մեջ» եւ լուսաբանել է այլ հակասովետական գրվածքներ, որոնք ամբողջությամբ հագեցած են դաշնակցության կուսակցության վտանգավոր, զուտ նեղ ազգայնական բովանդակությամբ: Վասիլյանը անձամբ գիպսից պատրաստել է «Հանուն Հայրենիքի» ամսագրի շապիկի կլիշեն եւ տվել է Աղասի Անտոնյանին տպագրության համար:

Ամբաստանյալ Գեւորգ Հեքիմյանը այդ ամսագրի համար գրել է տպագրության է հանձնել «երկու խոսք Ղարաբաղի եւ Նախիջեւանի մասին» հոդվածը, որտեղ ռուս ժողովրդի մասին հերյուրանք է տարածել անվանելով նրանց «ազգակուլներ»:

Սարգիս Թորոսյանը ամսագրում տպագրելու համար ձեռք է բերել «ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար պարոն Չիչերինին» եւ «Հեղափոխության աղբյուրները» հոդվածները, որոնք վերցված են դաշնակցության «հեղափոխական ալբոմ» ամսագրից: Այդ հոդվածները դաշնակցության կուսակցության լիդեր Ահարոնյանի հեղինակությամբ նշվում է, որ իբր սովետական հայաստանը զոհ է եղել սովետական դիվանագիտությանը եւ հայաստանի խորհրդայնացումը դժբախտություն է համարում հայ ժողովրդի համար: Գովերգվում է դաշնակների գործունեությունը հայաստանում եւ զրպարտելով բոլշեւիկներին կոչ է արվում պայքարել հայաստանի «անկախության համար քանի որ իբր գտնվում է «ստրկական» վիճակում եւ այլն:

Այս բոլոր հոդվածները քննարկվել են Աղասի Անտոնյանի տանը Ասատուր Բաբայանի, Գեւորգ Հեքիմյանի, Հովիկ Վասիլյանի, Սարգիս Թորոսյանի, Շիրակ Գյունաշյանի մասնակցությամբ եւ բոլորի կողմից հավանության է արժանացել ամսագրում տպագրելու համար:

Ամբաստանյալ Ասատուր Բաբայանը, որը դեռ 1964-1965 թվականներին քաղաքական վնասակար գործունեության համար զգուշացված է եղել պետական անվտանգության կոմիտեի կողմից համապատասխան հետեւություններ չի արել եւ ընդգրկվելով նշված հակասովետական կազմակերպության մեջ ակտիվ մասնակցություն է ունեցել նրա գործունեությանը:

«Հանուն Հայրենիքի» ամսագիրը տպագրելու համար Հայկ Իսկանդարյանը, որի նկատմամբ գործը կարճվել է մահվան կապակցությամբ, ստանդարտ չափի մեծ քանակությամբ թուղթ է վերցրել եւ հանձնել է Անտոնյանին, սովորեցնելով նրան տառերը շարելու ձեւը:

Ասատուր Բաբայանը ունենալով բարձրագույն կրթություն, լինելով տարիքով ավելի մեծ փոխանակ հետ պահի մնացած ամբաստանյալներին այդ հանցավոր քայլից, քաջալերել է նրանց: Հայկ Իսկանդարյանը վերցրել է դաշնակցություն կուսակցության գործիչ Նժդեհի «բաց նամակը հայ մտավորականությանը» գիրքը, որը խիստ սահմանափակված է ընթերցողների համար եւ կազմակերպության մյուս անդամներին ծանոթացրել է նրա բովանդակությանը: Բաբայանը իր տանը պահել է մեկ այլ գործով անհայտ կազմակերպության «ծրագիր եւ երդումը» որը ըստ իր բովանդակության միանգամայն հակասովետական է:

Բաբայանը անձամբ կազմել եւ պահել է «անմեղ մեղավորներ» վերնագրով հոդվածը, որտեղ սովետական քաղաքացուն, սովետական իրականության մեջ նկարագրում է որպես ճնշված իրավազուրկ: Նա մասնակցել է կազմակերպության բոլոր հավաքույթներին, բոլոր հարցերի քննարկմանը եւ միջոցներ է տրամադրել «կոնսուլ» մակնիշի գրամեքենա ձեռք բերելու համար:

1968թվ. մարտ ամսին Հովիկ Վասիլյանի Մուրմանսկ գնալուց հետո Աղասի Անտոնյանը եւ Շիրակ Գյունաշյանը ձեռնմուխ են եղել «Հանուն Հայրենիքի» գաղտնի ամսագրի տպագրմանը եւ տպագրել են 343 օրինակ:

Երբ ամբաստանյալ Հովիկ Վասիլյանը 1968թվ. հունիսի 25-ին վերադարձել է Մուրմանսկից, անմիջապես հանդիպել է կազմակերպության անդամներ Հեքիմյանի, Գյունաշյանի, եւ մյուսների հետ, Անտոնյանի տնից Առուշանյանի տուն են տեղափոխել բոլոր տպագրական միջոցները, այլ հարմարանքներ եւ տպագրված ամսագրի բոլոր օրինակները, իսկ մեկ օր անց ամսագրի մի մասը Գյունաշյանի հետ տարել է նրա քրոջ տանը, որտեղ սկսել են կազմել ամսագիրը:

Վասիլյանը այդ աշխատանքին է ներգրավել Առուշանյանին, որը դեռ 1968թվ. մարտ ամսից գիտենալով կազմակերպության գոյության եւ ամսագրի տպագրման մասին մասնակցել է հակասովետական կազմակերպության աշխատանքին կազմելով շուրջ 30-40 ամսագիր:

Կազմված 160 օրինակ «Հանուն Հայրենիքի» ամսագիրը Վասիլյանը, Գյունաշյանը եւ մյուսները դարձյալ տեղափոխել են Առուշանյանի բնակարան եւ պահել հատուկ պատրաստված թաքստոցում, իսկ 1968թվ. հունիսի 28-ին հավաքվելով Գեւորգ Հեքիմյանի բնակարանում ամբաստանյալները բացառությամբ Առուշանյանի քննարկել են կազմակերպչական հարցեր եւ տպագրված «Հանուն Հայրենիքի» ամսագրի տարածման հետ կապված հարցեր:

Այդ հավաքույթներում Հովիկ Վասիլյանը ընտրվել է կազմակերպության ղեկավար «Հարություն Բագրատունյանց» ծածկանունով, Գեւորգ Հեքիմյանը Վասիլյանի տեղակալ «Գարսեւան Հովհաննիսյան» ծածկանունով, Ասատուր Բաբայանը ընտրվել է կազմակերպության գործունեության վրա հսկող անձ «Զարգանդ Մաշտոց» ծածկանունով, Սարգիս Թորոսյանը ընտրվել է կազմակերպության մատակարարման գծով ղեկավար «Շավարշ Սիրունյան» ծածկանունով:

Թվարկված բոլոր ամբաստանյալները ընտրվել են «Հանուն Հայրենիքի» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ, իսկ գործով վկա Մնոյանի վրա նրա բացակայությամբ դրվել է կազմակերպության անդամների վրա գաղտնի հսկողություն սահմանելու պարտականությունը:

Համաձայն նախապես պայմանավորվածության ամբաստանյալներ Հովիկ Վասիլյանը, Գեւորգ Հեքիմյանը վկա Միշա Մնոյանը 1968թվ. հուլիսի 2-ի վաղ առավոտյան հավաքվել են Առուշանյանի բնակարանը եւ նրա բացակայությամբ ձեռնամուխ են եղել ամսագրի մնացած օրինակների հավաքմանը եւ կազմելուն: Բոլոր օրինակները կազմելուց հետո նրանք 101 օրինակ ամսագիրը դուրս են բերել Առուշանյանի բնակարանից Երեւան տեղափոխելու համար, սակայն ճանապարհին, ավտոբուսի մեջ բռնվել են եւ բերման ենթարկվել կոմիտե:

Դեռեւս 1968թվ. մարտ-մայիս ամիսներին ամբաստանյալներ Գեւորգ Հեքիմյանը, Աղասի Անտոնյանը, Ասատուր Բաբայանը, եւ Սարգիս Թորոսյանը, իսկ սկզբում նաեւ Հովիկ Վասիլյանը, Անտոնյանի բնակարանում եւ բուսաբանական այգում մի քանի անգամ գաղտնի հանդիպումներ են ունեցել մեկ այլ «Ազգային միացյալ կուսակցություն» անունը կրող հակասովետական կազմակերպության ներկայացուցիչներ, այժմ դատապարտվածներ Հայկազ Խաչատրյանի եւ Շահեն Հարությունյանի հետ, կազմակերպությունները միացնելու ու համատեղ գործելու նպատակով, քննարկել են նրանց ծրագրերը եւ կանոնադրությունները, գաղտնի հրապարակված եւ ազգաբնակչության մեջ տարածված «Փարոս» թերթը սակայն այդ կազմակերպությունների միացումը տե-

ղի չի ունեցել ծրագրային որոշ տարաձայնությունների, հակակարծիքների, ինչպես նաեւ փարոսականների կալանավորման պատճառով:

Գաղտնի հրապարակված «Փարոս» թերթը ձեռք է բերել ամբաստանյալ Թորոսյանը եւ ծանոթացրել է կազմակերպության մյուս անդամներին: Նույն Թորոսյանը վերցնելով Իսանդարյանից դաշնակցական Նժդեհի «բաց նամակներ հայ մտավորականությանը» հակասովետական բովանդակություն ունեցող գրքույկը, իր կնոջը արտագրել է տվել եւ պահել իր տանը, որը առգրավվել է խուզարկության ժամանակ:

Խուզարկությամբ ամբաստանյալ Առուշանյանի բնակարանից հայտնաբերվել է «Հանուն Հայրենիքի» ամսագրի կազմված 242 օրինակները, տպագրական ներկը, մեծաքանակ տպատառեր, այլ հարմարանքներ, ինչպես նաեւ տպագրական թուղթ, որոնք վերցվել են Իսկանդարյանից ամբաստանյալներ Բաբայանի եւ Թորոսյանի կողմից:

Այսպիսով՝ ամբաստանյալներ Հովիկ Վասիլյանին, Գեւորգ Հեքիմյանին, Ասատուր Բաբայանին, Աղասի Անտոնյանին, Լեւոն Առուշանյանին առաջարկված մեղադրանքը քր. օրի 65 հոդ 1-ին մասով եւ 67 հոդվածով կոլեգիան համարում է հիմնավորված:

Բոլոր ամբաստանյալները առաջադրված մեղադրանքներում իրենց լիովին մեղավոր ճանաչեցին եւ հանդես եկան մեղայականով:

Բացի ինքնախոստովանությունից, ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները հիմնավորված են հարցաքննված վկաներ Միշա Մնոյանի, Կիրով Խաչատրյանի, Լ-ի, Խ-ի, Ծ-ի, Վ. Հովեյանի, Կ-ի եւ մյուսների ցուցմունքներով, առգրավված իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով եւ գործի մնացած բոլորր փաստական տվյալներով:

Աղասի Անտոնյանին եւ Լեւոն Առուշանյանին մեղմ պատիժ սահմանելիս կոլեգան հաշվի է առնում Անտոնյանի մինչեւ այդ անբասիր լինելը: Աշխատելով եւ ունենալով ընդամենը 3-րդ դասարանի կրթություն նա ընկել է Բաբայանի, Վասիլյանի եւ մյուսների ազդեցության տակ: Օգտվելով այդ առիթից նրանք Անտոնյանի բնակարանը վեր են ածել հավաքատեղիի եւ օգտագործել են նրա ամսագրի տպագրության հետ կապված բոլոր աշխատանքներում: Անտոնյանի խնամքին են գտնվում 4 անչափահաս երեխաներ, կոլեգիան հաշվի է առնում նաեւ նրա առողջական վիճակը:

Լեւոն Առուշանյանը հանցագործության մեջ է ներգրավվել գործով ամբաստանյալ Հովիկ Վասիլյանի կողմից: Նա գիտենալով հանդերձ կազմակերպության գոյության մասին չի մասնակցել նրանց աշատանքներին, տեղյակ է ղել «Հանուն Հայրենիքի» ամսագրի բովանդակությանը եւ իր բնակարանը տրամադրել է Վասիլյանին վերջինիս պահանջով եւ կազմակերպության հանձնարարությունները կատարել է ընդամենը մի քանի օր: 1967թվ. Առուշանյանը մասնակցել է թռուցիկների տարածմանը դարձյալ Վասիլյանի դրդմամբ:

Առուշանյանի խնամքին են գտնվում 4 երեխաներ, որոնցից 2-ի համար ալիմենտ է վճարում աշխատավարձի 33 տոկոսի չափով: Բացի այդ նրա կինը հղի է:

Առուշանյանին երկար ժամանակով հասարակությունից մեկուսացնելը խիստ կանդրադառնա նրա երեխաների նյութական ապահովման վրա: Բացի այդ մեղայականով հանդես գալով Առուշանյանը ցուցմունք տվեց, որ այսուհետեւ ոչ միայն չի կատարի մնան արարքներ, այլ ինքը կկանխի ուրիշներին, որոնք կփորձեն թռուցիկներ տարածել:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՍՍՀ քր. դատ. օրի 293-294 հոդվածներով Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալներ Հովիկ Մարտինի Վասիլյանին, Ասատուր Հունանի Բաբայանին, Գեւորգ Ռուբենի Հեքիմյանին, Աղասի Անդրուշի Անտոնյանին, Սարգիս Խաչիկի Թորոսյանին, Շիրակ Պավելի Գյունաշյանին, Լեւոն Ռուբենի Առուշանյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի 65 հոդ. առաջին մասով եւ 67 հոդվածով ու 65 հոդվածի առաջին մասի սանկցիայով դատապարտել Հ. Մ. Վասիլյանին, Գ. Ռ. Հեքիմյանին, Ա. Հ. Բաբայանին եւ Ս. Խ. Թորոսյանին յուրաքանչյուրին 6 (վեց) տարի ժամանակով առանց հետագա աքսորի:

Ա. Ա. Անտոնյանին ազատազրկել 5 (հինգ) տարի ժամանակով, իսկ Շ. Պ. Գյունաշյանին ազատազրկել 4 (չորս) տարի ժամանակով, երկուսին էլ առանց հետագա աքսորի: Լ. Ռ. Առուշանյանին նույն 65 հոդվածի առաջին մասով ազատազրկել մեկ տարի վեց ամիս ժամանակով, առանց հետագա աքսորի: Բոլոր դատապարտյալները պատիժը պետք է կրեն խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Դատապարտյալներ Հովիկ Մարտինի Վասիլյանի, Ասատուր Հունանի Բաբայանի, Գեւորգ Ռուբենի Հեքիմյանի, Աղասի Անդրուշի Անտոնյանի, Սարգիս Խաչիկի Թորոսյանի եւ Լեւոն Ռուբենի Առուշանյանի կալանքի սկիզբը հաշվել 1968թվականի հուլիսի 4-ից, իսկ Շիրակ Պավելի Գյունաշյանի կալանքի սկիզբը հաշվել 1968թ. օգոստոսի 14-ից:

Իրեղեն ապացույց ճանաչված «Կոնսուլ» մակնիշի գրամեքենան պետականացնել:

«Հանուն Հայրենիքի» ամսագրի բոլոր օրինակները բացի քրեական գործին կցվածից ոչնչացնել, բացառությամբ 2 օրինակի որոնք թողնել պետական անվտանգության կոմիտեի տրամադրության տակ:

1968թ. օգոստոսի 13-ի նախաքննական օրդերի կողմից կայացած որոշման մեջ նշված իրեղեն ապացույցները (հատոր 4 գթ 47-53) այն է տպագրական----եր, մամլիչ, տառափսե եւ այլ հարմարանքներ, ինչպես նաեւ տպագրական ներկը թողնել պետական անվտանգության կոմիտեի տնօրինությանը, չեկիստական լաբարոտորիային, համաձայն իրենց միջնորդությանը: Տպագրական մաքուր չոգտագործված թուղթը պետականացնել:

Մնացած հակասովետական բնույթի հոդվածները, նամակները, բացառությամբ քրեական գործին կցված օրինակներից ոչնչացնել:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով գանգատարկման ենթակա չէ:

Նախագահող՝ **Ս. Եղիազարյան**
Ատենակալներ՝

1/3-69թ.

«Ծասում» եւ «Երկունք»

ԱՄԿ-ի գործով երկրորդ դատավարությունը

1969 թ. հունվարի 9-ին Երեւանում տեղի ունեցավ Ազգային միացյալ կուսակցության հիմնադիրների դատավարությունը: Պետանվտանգության կոմիտեում, հավանաբար, վստահ են եղել, որ հակախորհրդային այդ կազմակերպությունը, որն իր «Փարոս» թերթով ու ծրագրային դրույթներով հայտարարել էր հանուն Հայաստանի անկախության սկսած պայքարի մասին՝ ոչնչացված է: Այս մտայնությունը նրանց մեջ ամրապնդվել էր նաեւ ԱՄԿ հիմնադիրների ջանքերով: Նախաքննության ընթացքում Հայկազ Խաչատրյանն իր ընկերներին՝ Ստեփան Զատիկյանին եւ Շահեն Հարությունյանին հորդորում է, ամեն ինչ իրենց վրա վերցնելով՝ տալ այնպիսի ցուցմունքներ, որոնցից կհետեւեր, որ ԱՄԿ-ն միմիայն այդ երեքն են: ՊԱԿ-ն անգամ չէր կասկածում, որ ԱՄԿ-ն արդեն լավ կազմակերպված ու ճյուղավորված կազմակերպություն է, որը շարունակում է եւ շարունակելու է գործել: Այդ օրերին գործող ԱՄԿ կառույցներից ամենաակտիվը Պարույր Հայրիկյանի գլխավորած մասնաճյուղն էր: Նրանք դեռ 1968 թ. ապրիլի 24-ին էին հաջողել Եղեռնի օրվան նվիրված ռադիոհաղորդում կազմակերպել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում: Մինչեւ ԱՄԿ ղեկավարների դատավարությունը՝ նրանց հաջողվում է տարածել «Ցասում» վերնագրով թռուցիկը, իսկ դատավարությունից օրեր անց՝ «Երկունքը», 5000 տպաքանակով: «Երկունք»-ն սկսվում է «Անկախությունը որպես կենսական պահանջ» հոդվածով, որտեղ ԽՍՀՄ-ն անվանվում է ռուսական կայսրություն, եւ անկախության համար պայքարի կոչ է արվում, իսկ վերջում՝ «Փոր - ձառություն առանց փորձի. խորհուրդներ ընդհատակյա կազմակերպություններին» նյութը: Ճակատային մասում «Մահ կամ ազատ Հայաստան» բնաբանն էր, տակը՝ «Եր - կունք» անունը եւ թվագրումը՝ N1 հունվար, 1969 Երեւան:


ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԿՈՒՆՔ

№1 ՀՈՒՆՎԱՐ 1969 ԵՐԵՎԱՆ

ԱԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋ

«Երկունքը» տարածվել է Երեւանում, Գյումրիում ու Վանաձորում: Ռեկորդային կարճ ժամանակահատվածում երեւանյան բուհերը, կինոթատրոնները եւ մարդաշատ վայրերը հեղեղվել են այդ թռուցիկով: «Երկունք»-ի երկրորդ համարը տպագրության է նախապատրաստվել մարտին, բայց կազմակերպիչների բացահայտվելու պատճառով չի հրապարակվել: 1969 թ. մարտի վերջին Պետանվտանգության կոմիտեին հաջողվում է դուրս գալ ԱՄԿ այս կառույցի հետքի վրա, եւ սկսվում են ձերբակալությունները: Ձերբակալվում են Պարույր Հայրիկյանը, Հակոբ Աշիկյանը, Աշոտ Նավասարդյանը, Ռաֆայել Բարսեղովը եւ Աշոտ Խաչատրյանը: Տասնյակ ԱՄԿ-ականներ, որոնք չէին հայտնվել ՊԱԿ-ի տեսադաշտում, մնում են ազատության մեջ ու շարունակում իրենց գործունեությունը: ԱՄԿ յուրահատկություններից մեկն էլ այն էր, որ եթե անգամ որեւէ ԱՄԿ-ական ձերբակալվելուց հետո անուններ տար, ապա տալու էր միայն այն մարդկանց անունները, որոնք գիտեր: Իսկ ԱՄԿ-ականներից յուրաքանչյուրը ճանաչում էր սահմանափակ թվով մարդկանց: Հատկանշական է, որ այս խմբի ձերբակալված անդամները ե՛ւ նախաքննության, ե՛ւ դատավարության ընթացքում չհայտարարեցին իրենց ԱՄԿ-ական լինելու մասին: Այդ շրջանում Ազգային միացյալ կուսակցությունը համարվում էր կալանավորված ԱՄԿ-ականների գլխավոր գաղտնիքը, եւ կուսակցության գոյության մասին խոսելը, դրա մասին ցուցմունքներ տալը դավաճանական քայլ կդիտարկվեր: Բացահայտված ու ձերբակալված անդամների համար կարեւորագույն խնդիր է դառնում իրենցով սահմանափակել կալանավորվածների թիվը: Այդպես վարվեցին ԱՄԿ հիմնադիրները՝ նախաքննության ու դատավարության ժամանակ բարձրաձայնելով, որ ԱՄԿ-ն ներկայացնում են միայն իրենք: Նույն կեցվածքը որդեգրեցին ԱՄԿ այս մասնաճյուղի կալանավորված անդամները՝ չբացահայտելով, որ իրենք ԱՄԿ անդամներ են: Այդ շրջանում գուցեեւ եղել են դեպքեր, երբ կալանավորվածները նաեւ սխալներ են թույլ տվել, բայց մի հարցում մնացել են անբասիր՝ ոչ ոք չի խոսել իր ԱՄԿ անդամ լինելու եւ ԱՄԿ-ի գոյության մասին: Միայն 1974-ին եւ դրանից հետո է փոխվել այս մարտավարությունը. 1974-ից հետո նախաքննությունների ու դատավարությունների ժամանակ ԱՄԿ անդամները հայտարարում էին, որ գոյություն ունի Հայաստանի անկախության համար պայքարող կուսակցություն, եւ իրենք էլ այդ կուսակցության անդամներ են: ԱՄԿ որոշ մասնաճյուղերի անդամներ նույնիսկ ավելի ուշ շրջանում՝ նախաքննության փուլում այս հանգամանքը գաղտնի էին պահում եւ հայտարարում էին իրենց ԱՄԿ-ական լինելու մասին միայն դատավարության ժամանակ՝ օգտագործելով դատարանը որպես ԱՄԿ-ի հռչակած ծրագրերի ու գաղափարների մասին բարձրաձայնելու հարթակ: Օրինակ, 1981-ի իրենց դատավարության ժամանակ այսպես վարվեցին ԱՄԿ երիտասարդական մասնաճյուղ հանդիսացող «Հայ երիտասարդների միություն» խմբի անդամները: Ողջ նախաքննության ընթացքում նրանք հանդես էին գալիս որպես առանձին ստեղծված խումբ եւ միայն դատարանի դահլիճում՝ դատավարության ավարտական փուլում, կազմակերպության ղեկավար Մարզպետ Հարությունյանը հայտարարեց, որ կազմակերպությունը ԱՄԿ երիտասարդական կառույց է:

ԱՄԿ գործով երկրորդ դատավարությունը տեղի է ունեցել 1970 թ. փետրվարին: Դատապարտվում են Պարույր Հայրիկյանը, Հակոբ Աշիկյանը, Աշոտ Նավասարդյանը, Աշոտ Խաչատրյանը եւ Ռաֆայել Բարսեղովը: Բոլորն էլ մեղադրվում են ՀԽՍՀ 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը):

Պարույր Հայրիկյան
լուս. քր. գործից



Ռաֆայել Բարսեղով
լուս. քր. գործից

Հակոբ Աշիկյան
լուս. քր. գործից

Աշոտ Նավասարդյան
լուս. քր. գործից

Աշոտ Խաչատրյան
լուս. քր. գործից

Պարույր Արշավիրի Հայրիկյանը ծնվել է 1949 թ., Երեւանում: Մինչեւ կալանավորվելը սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետի երեկոյան բաժնի 3-րդ կուրսում, միաժամանակ աշխատել է Սովետաշենի տրիկոտաժի ֆաբրիկայում: Դեռ պատանության տարիներից զբաղվել է հայրենասիրական գործունեությամբ: Կազմակերպել է «Հայ երիտասարդական միություն» խմբակը: Խմբակի անդամները զբաղվել են ֆոտոեղանակով բազմացված թռուցիկնե - րի տարածմամբ: Հետագայում կապ են հաստատում Ազգային միացյալ կուսակցության հետ: Դառնում են ԱՄԿ-ականներ: Հայրիկյանը հիմնում է «Շանթ» ԱՄԿ երիտասար-

դական կառույցը: ԱՄԿ ղեկավարների կալանավորումից հետո՝ Հայրիկյանի գլխավո - րությամբ կազմակերպվում է «Ցասում» վերնագրով թռուցիկի տպագրումը եւ տարածումը, իսկ նրանց դատավարությունից հետո տարածվում է «Երկունք» թռուցիկը: Կալանավորվել է 1969-ին: Դատապարտվել է 4 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում: 1973-ին ազատ արձակվելուց հետո վերադարձել է Հայաստան եւ անմիջապես վերցվել ոստիկանական հսկողության տակ: Չնայած հսկողությանը՝ չի դադարեցրել իր գործունեությունը: Ակտիվացրել է նախկինում իր գլխավորած ԱՄԿ կառույցը: Ներգրավվել են նոր անդամներ: Իրար հետ չառնչվող տարբեր խմբակներ՝ Հայրիկյանի գլխավորությամբ, զբաղվել են թռուցիկների տարածմամբ, պատերին Հայաստանի անկախության մասին կոչեր գրելով: 1974 թ. փետրվարին նա կրկին կալանավորվում է: Այս անգամ՝ քր. օր.-ի 217[1] հոդվածով (վարչական հսկողության կանոնները չարամտորեն խախտելը): Այս շինծու մեղադրանքով 1974 թ. մարտի 5-ին նրան դատապարտում են 2 տարի ազատազրկման: Իսկ մի քանի օր անց՝ մարտի 29-ին, քր. օր.-ի 65 հոդվածի 2-րդ մասով եւ 67 հոդվածով նոր մեղադրանք են առաջադրում: 1974 թ. նոյեմբերին դատապարտվում է 7 տարի ազատազրկման եւ 3 տարի աքսորի: Պատիժը կրել է սկզբում՝ Մորդովիայի, այնուհետեւ՝ Պերմի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում: Յոթնամյա ազատազրկման ժամկետը լրանալուց մի քանի ամիս առաջ՝ նոր շինծու մեղադրանք են ներկայացնում նրան: Այս անգամ Հայրիկյանը մեղադրվում է ՌՍՖՍՌ քր. օր.-ի 174 հոդվածի 2-րդ մասով (կաշառք տալ): 1981-ին դատապարտում են 3 տարի ազատազրկման: Պատիժը կրում է Իրկուտսկի մարզի քրեական հանցագործների համար նախատեսված կալանավայրում, որից հետո՝ համաձայն 1974 թ. դատավճռի, երեք տարով աքսորվում է: Հայաստան է վերադառնում 1987-ին: Նույն թվականին՝ ԱՄԿ հենքի վրա ստեղծում է Ազգային ինքնորոշում միավորումը: 1990-ին ընտրվել է Գերագույն խորհրդի, ապա 1995-ին՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: Ապրում է Երեւանում: Գլխավորում է Ազգային ինքնորոշում միավորումը:

Հակոբ Հովհաննեսի Աշիկյանը ծնվել է 1949 թ., Երեւանում: Մինչեւ կալանավորվելը սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետի երեկոյան բաժնի 3-րդ կուրսում, միաժամանակ աշխատել է Երեւանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի լաբորատորիայում: Անդամագրվել է ԱՄԿ-ին 1967-ին: Կալանավորվել է 1969-ին եւ դատապարտվել 2 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավայրերում: Ազատ արձակվելուց հետո բնակվել է Երեւանում: Աշխատել է որպես ատամնաբույժ: Վախճանվել է 2005 թ., Երեւանում:

Աշոտ Ցոլակի Նավասարդյանը ծնվել է 1950 թ., Երեւանում: Անդամագրվել է Ազգային միացյալ կուսակցությանը 1967-ին: Մասնակցել է 1968 թ. ապրիլի 24-ի երեկոյան Ցեղասպանության հուշարձանի մոտ տեղի ունեցած ռադիոհաղորդման աշխատանքների կազմակերպմանը, իսկ 1969-ին՝ «Ցասում» եւ «Երկունք» թռուցիկների տարածմանը: Կալանավորվել է 1969-ին եւ դատապարտվել 2 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավայրերում: Կալանավայրից ազատ արձակվելուց հետո՝ 1971-ին վերադարձել է Երեւան, անմիջապես վերցվել է ոստիկանական հսկողության տակ, բայց չի դադարեցրել ընդհատակյան գործունեությունը: Կազմակերպել է ԱՄԿ-ի առանձին խմբակ, որի մեջ ներգրավվել են Լեւոն Բաղալյանը, Սամվել եւ Նորիկ Մարտիրոսյանները: Խմբակն զբաղվել է Հայաստանի անկախության կոչեր

պարունակող թռուցիկների պատրաստմամբ ու տարածմամբ: Ինչպես նաեւ՝ անկախ Հայաստան ստեղծելու կոչեր են գրել շենքերի պատերին: 1974-ի մարտին նա կրկին կալանավորվում է եւ դատապարտվում յոթ տարի ազատազրկման եւ երկու տարի աքսորի: Ներման խնդրագրով ազատ է արձակվում ժամկետից շուտ՝ 1976 թ. դեկտեմբեր - ին: 1981-ին կրկին ձերբակալվում է՝ այս անգամ արդեն Ազատ Արշակյանի հետ միասին, Ազգային միացյալ կուսակցության պաշտոնաթերթ «Փարոս-4»-ի հրապարակման ու տարածման համար: Նույն թվականի սեպտեմբերին ճանաչվում է որպես հատուկ վտանգավոր պետական ռեցիդիվիստ եւ դատապարտվում 8 տարի ազատազրկման եւ 3 տարի աքսորի: Աշոտ Նավասարդյանը եւ Ազատ Արշակյանը միակ հայ քաղբանտարկյալներն են, որ ճանաչվել են հատուկ վտանգավոր պետական ռեցիդիվիստներ: Այս անգամ եւս ազատ է արձակվել վաղակետ՝ 1987-ին՝ գորբաչովյան պերեստրոյկայի արդյունքում: 1989 թվականից զբաղվել է Հայաստանի սահմանների պաշտպանությունն իրականացնող ռազմականացված ջոկատների կազմակերպմամբ ու դրանց գործունեության համակարգմամբ: Ղեկավարել է «Անկախության բանակ» ռազմաքաղաքական միավորումը: 1990-ին հիմնադրել է Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Նույն թվականին ընտրվել է Գերագույն խորհրդի, իսկ 1995-ին՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: Վախճանվել է 1997թ., Երեւանում:

Ռաֆայել Մերգեյի Բարսեղովը ծնվել է 1956 թ., Թբիլիսիում: Անհայր է մեծացել: Մայրը բնակվել է Թբիլիսիում, իսկ ինքը՝ 1961-ից մինչեւ 1968 թվականը եղբայրների հետ՝ Նուբարաշենի մանկատանը: Ազգային միացյալ կուսակցությանն անդամագրվել է 1968-ին: Կալանավորվել է 1969-ին: Դատապարտվել է 6 ամիս կալանքի եւ ազատ արձակվել դատարանի դահլիճից: Հետագայում մշտական բնակության նպատակով Վրաստան է տեղափոխվել:

Աշոտ Զավենի Խաչատրյանը ծնվել է 1951 թ., Ապարանի շրջանում: Բնակվել է Երեւանում: Մինչեւ կալանավորվելը սովորել է Երեւանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետում: Կալանավորվել է 1969-ին, դատապարտվել է 6 ամիս կալանքի եւ ազատ է արձակվել դատարանի դահլիճից: Բնակվում է Երեւանում:

Պատմում է Պարույր Հայրիկյանը

Իմ ձեւավորման՝ այսպիսի աշխարհընկալումով կայացման հարցում որոշիչ դեր են խաղացել մի կողմից՝ իմ ընթերցասիրությունը, մյուս կողմից՝ հայրս: Այն օրերին մշտապես ազդարարվում էր, թե մենք՝ մեր ժողովուրդը, այսօր անհամեմատ ավելի բարվոք վիճակում ենք, քան եղել ենք դարեր շարունակ: Երբ առաջին անգամ մեր աշխարհագրության ուսուցչուհին ցույց տվեց մեզ Հայաստանի քարտեզը, ես նրան խնդրեցի քարտեզի վրա ցույց տալ Արարատ լեռը: Նա ցույց տվեց Հայաստանի սահմաններից դուրս մի կետ, ինչն ինձ ցնցեց. «Ինչպե՞ս, Արարատը Հայաստանում չէ»՞: «Իսկ ի՞նչ է, դու չգիտեի՞ր»,- եղավ ուսուցչուհուս պատասխանը: Ինձ համար դա ցնցող բան էր: Ինչպե՞ս է, որ ամեն ինչ լավ է, որ հայերս այսօր շատ ավելի լավ ենք ապրում, քան երբեւէ, բայց Արարատը Հայաստանում չէ: Տուն վերադառնալուն պես ասացի. «Հայրիկ, գիտե՞ս, Արարատը Հայաստանում չի»: Երեւի տասը-տասնմեկ տարեկան էի: Հայրս էլ՝ ուսուցչուհուս պես ասաց՝ ի՞նչ է, չգիտեի՞ր: Թեւաթափ էի: Հատկապես ազդված էի այն բանից, որ մեծերը՝ հայրս, ուսուցչուհիս, մյուսներն, այդ երեւույթի մասին այդքան հան-

գիստ էին խոսում: Սկսեցի ավելի խորը հետաքրքրվել: Իմացա, որ Հայաստանի պատմական տարածքից մեզ մի կտոր է միայն մնացել: Իմացա Եղեռնի, ստալինյան բռնությունների, շարունակվող հալածանքների, անմեղ զոհերի մասին:

Հայրիկիս ընկերներից Չալգուշյան Անդրանիկը, որ Ազնավուրի առաջին հայերեն թարգմանիչն էր, ինձ գրականություն էր տալիս: Այն ժամանակ արգելված գրողներ էին Լեւոն Շանթը, Ավետիս Ահարոնյանը: Ինքնահրատ եղանակով էին տարածվում նաեւ Շիրազի շատ ստեղծագործություններ: Ինձ մոտ աստիճանաբար պատկերացում էր ձեւավորվում, որ մի մեծ անարդարություն կա, եւ մարդիկ այդ անարդարությանը համակերպվել են:

Մեր տանը շատ էին խոսում ապրիլի 24-ի մասին, Աբրահամ Հայրիկյանի մասին, որը մեծ մտավորական է եղել Պոլսում: Որպես գրող, հրապարակախոս նա այնքան էլ հայտնի չէր, բայց որպես գավառի համար դպրոցներ հիմնող, ուսուցիչներ պատրաստող՝ հայտնի է եղել: Հայրիկյանները Պոլսում հարուստ են եղել: Նրանց ավագ որդին՝ Աբրահամ Հայրիկյանը, այդ ողջ հարստությունը տրամադրել է Արդի (Հայրիկյան) վարժարանին: Նա եղել է ապրիլի 24-ին երիտթուրքերի կազմած՝ ձերբակալման ու ոչնչացման ենթակա հայ մտավորականների ցուցակում: Վանեցի տատիկներս էլ պատմում էին Վանի գաղթի մասին:

Այս բոլոր պատմությունները, խոսակցությունները կաթիլ-կաթիլ դառնում էին իմ էության մի մասը եւ համապատասխան տրամադրություն ձեւավորում: Նուբարաշենի մերձակա բլուրներից մեկից Արարատը շատ գեղեցիկ էր երեւում: Ամեն առավոտ վազում էի դեպի այդ բլուրը, այնտեղից նայում էի Արարատին ու արտասվալից զրուցում նրա հետ: Ոչ ոք այդ մասին չգիտեր: Դա իմ պատանեկան գաղտնիքն էր: Հետո իմացա, որ մայրական պապս իր տունն այնպես է կառուցել, որ դեպի Արարատ նայող պատշգամբ ունենա, ու ամեն առավոտ այնտեղից Արարատին նայելով արտասվել է: Նա արտասվելու չափազանց լուրջ պատճառ է ունեցել: Մայրական ընտանիքս 15-16 թթ. որոշում է վերադառնալ Վան: Արարատի փեշերով անցնելիս ընտանիքի 22 անդամները խոլերայից մահանում են: 25-ամյա պապս բոլորին հողին է հանձնում այնտեղ ու վերադառնում, որպեսզի արդեն այստեղից ամեն առավոտ՝ իր շինած տան պատշգամբից նայի այդ ուղղությամբ ու արտասվի նրանց համար:

16 տարեկանում, 1965 թվականին որոշեցի՝ եթե մեծերն այս անարդարությունը հանդուրժում են, իրենց գործն է, բայց ես պետք է պայքարեմ: Երկու համադասարանցիներիս հետ պայմանավորվեցինք գաղտնի խումբ ստեղծել: Նրանցից մեկը հետագայում մահացավ Ամերիկայում, իսկ մյուսն այսօր էլ ապրում է Երեւանում: Խումբը կոչեցինք «Անխախտ եռյակ»: 9-րդ դասարանում էինք: Ապրիլի 23-ի գիշերը դպրոցի պատին փակցրեցինք մեր կողմից նախօրոք պատրաստված պատի թերթ: Դա իմ առաջին «գործն» էր: Այդ օրը դպրոցում Երիտասարդության օր էին հայտարարել ու այդ կապակցությամբ երեկո կազմակերպել: Պարզ է, որ նպատակը ապրիլի 24-ից դպրոցականների ուշադրությունը շեղելն էր: Իսկ մենք դպրոցի հայտարարությունների տախտակին փակցված մեր պատի թերթում կոչ էինք արել չմոռանալ այդ օրը: Դպրոցի տնօրենը պարզել էր, որ պատի թերթի հեղինակը մենք ենք: Կանչեց, ասաց, որ թերթի մասին ոչ ոքի չի ասի, միաժամանակ հորդորեց՝ նման բաներ այլեւս չանել: Պատի թերթի հրապարակման հաջորդ օրը՝ ապրիլի 24-ին, մեզ միացավ մեր դպրոցի բարձր դասարանի աշակերտներից եւս մեկը: Դարձանք չորս եւ «Եռյակ» կոչվել արդեն չէինք կարող ու որոշեցինք խումբը վերանվանել Հայկական երիտասարդական միություն:

Սա է եղել սկիզբը: Հաջորդ օրը մենք իմացանք, որ Երեւանում ապրիլի 24-ին մեծ

ցույց է եղել: Բացի դրանից, լսել էինք «Յոթ հայրենասերներ»-ի դատի մասին: Ժողովր - դի մեջ տարաբնույթ խոսակցություններ էին պտտվում: Խոսվում էր այն մասին, որ գո - յություն ունի հայրենասիրական մեծ կազմակերպություն, որ նրանցից յոթին դատում են, որ Խաչիկ անունով մեկն ամեն ինչ իր վրա է վերցրել՝ փրկելով այլոց: Այս ամենը համեմվում էր առասպելաբանությամբ ու ոգեւորում մեզ:

Սկսեցինք ֆոտոեղանակով թռուցիկներ պատրաստել եւ տարածել: Փողոցներում՝ ասֆալտին հայրենասիրական կոչեր էինք գրում: Մեր խումբը բավական երկար գոր- ծեց: Ֆոտոթռուցիկներում իմ եւ Էլիզա Մարգարյանի հեղինակած բանաստեղծություն- ներն էին: Էլիզան գրել էր.

Որոտում է Արարատը՝
Սիմվոլը մեր հայ ազգի,
Պահանջում է, որ գերության
Շղթան փշրենք իր վզի:

Ես գրել էի.

Զարթնեք, հայեր, ժամն է հասել,
Մի մոլորվեք դուք նորից,
Օգնությանը պետք չէ սպասել
Միշտ շահամոլ օտարից:

Ահա այս կարգի նյութեր ֆոտոեղանակով տպագրում ու տարածում էինք: Աստիճա- նաբար մեզ էին միանում նաեւ մեծահասակներ: Նրանցից էր մեր մանկապարտեզի դաստիարակչուհին, որի հետ շատ մտերիմ էի: Նրա նկուղում էլ կազմակերպում էինք մեր տպագրական գործունեությունը:

1967 թ. գարնանը Երեւան-Կիրովական գնացքում թռուցիկներ բաժանելիս բռնվել էր ՀԵՄ-ի անդամ աղջիկներից մեկը: Նա 10-րդ դասարանցի էր: Դա մեր առաջին բա- ցահայտումն էր: Նրանից պահանջում էին ասել, թե ումից է ստացել այդ թռուցիկները: Դոխոյան Մարիան, որն այսօր Նուբարաշենում է ապրում, ամեն ինչ իր վրա էր վերց- րել ու հրաժարվել էր ասել, թե ումից է ստացել դրանք: Մարիան մեզ մեծ դաս տվեց: Նրա օրինակով հասկացանք, որ ՊԱԿ-ից կարելի է ոչ միայն չվախենալ, այլեւ հրա- ժարվել նրանց ինչ-որ բան ասել: Արշակյան Ազատն իմ ընկերներից էր: Նա արդեն ներգրավված էր մեր խմբում, բայց ուշ-ուշ էինք հանդիպում: Ես արդեն Պոլիտեխնիկի առաջին կուրսն էի ավարտում: Այդ օրերին նա իմ ուսանողական ընկերներից Աշիկյան Հակոբի հետ մեր տանն էր: Պատմեցի, որ Մարիան բռնվել է, որ հաշվի առնելով սեռը եւ տարիքը՝ չեն կալանավորել, բայց ՊԱԿ-ի, ծնողների ու ուսուցիչների կողմից լուրջ ճնշման տակ է գտնվում: Ստիպում են ասել, թե ով է իրեն տվել թռուցիկները: Նրանք, իհարկե, կռահում էին, որ ես եմ տվել, պահանջում էին հայտնել իմ անունը, բայց Մա - րիան լռում էր: Նույն այդ թռուցիկներից մենք տարածել էինք, ի թիվս այլ վայրերի, նաեւ Երեւանի Առաջին մաս կոչվող թաղամասում գտնվող Ազատենց դպրոցում: Երբ Ազատն իմացավ, որ Մարիայից պահանջում են ասել, թե ումից է ստացել դրանք, առաջարկեց ասել՝ իբր թռուցիկներն ինքն է գտել իրենց դպրոցում, տվել է ինձ, ես էլ իմ հերթին՝ Մա - րիային: Այսպիսով՝ շղթան փակվում էր: Այդպես էլ արեցինք: Ստացվեց՝ իբր անհայտ մարդիկ թռուցիկներ են տարածել Ազատենց դպրոցում, իսկ դա գրանցված փաստ էր, եւ ՊԱԿ-ն այդ մասին գիտեր, Ազատը դրանք վերցրել է դպրոցից՝ փոխանցել ինձ, ես էլ իմ հերթին՝ Մարիային, որն էլ արդեն՝ առանց հետին մտքի, գնացքի մեջ դրանք տվել է տարբեր ուղեւորների: Հետո ինձ կանչեցին հարցաքննության, եւ ես հաստատեցի, որ ես եմ դրանք տվել Մարիային եւ ստացել եմ Ազատ Արշակյանից: Նույնը հաստատեց նաեւ

Ազատը: Այսպիսով՝ գործը փակվեց, իսկ մենք հասկացանք, որ ՊԱԿ-ից ոչ միայն կարելի է չվախենալ, ոչ միայն կարելի է հրաժարվել ասել պահանջվող ինֆորմացիան, այլ նաեւ կարելի է նրանց մոլորեցնել:

Այս բացահայտումը նպաստեց, որ մեր մասին լուր տարածվի: Ողջ Նուբարաշենը, Էրեբունին խոսում էր այն մասին, որ լուրջ հայրենասիրական խումբ է գործում, եւ Պարույր անունով մեկը կա, որը ղեկավարում է այդ խումբը: Ժիրիկ անունով մեր ընկերոջն է մոտենում Արեշից Մանուկ անունով մեկը, որը ճանաչում էր Շահեն Հարությունյանին եւ հետաքրքրվում է ինձանով: Ցանկություն է հայտնում ծանոթանալ ինձ հետ: Այսպես, Ժիրիկի միջոցով ես ծանոթացա Շահեն Հարությունյանի հետ:

Մեր գործունեությունը հիմնականում հայրենասիրական էր եւ հայրենասիրությունից այն կողմ չէր անցնում: Այսօրվա պես հիշում եմ, որ ինձ վրա լուրջ տպավորություն գործեց, երբ Շահեն Հարությունյանն առաջին հանդիպման ժամանակ, մատնացույց անելով սովետական բանակի երկու սպաների, ասաց՝ օրինակ, սրանք ի՞նչ գործ ունեն մեր հայրենիքում: Սա ինձ համար արդեն մեկ այլ հարթություն էր:

Շահենի միջոցով ծանոթացա Ստեփան Զատիկյանի հետ: 1966 թվականին ստեղծված Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) հիմնադիր անդամներ Ստեփանը եւ Շահենը մեզ արդեն դիտարկում էին որպես կայացած գործիչներ: Մենք 17-18 տարեկան էինք, բայց ճանապարհ էինք անցել, գործ էինք արել, հասցրել էինք բռնվել, բայց չնահանջել: Մեր խումբն անհամեմատ ավելի մարդաշատ էր, քան ԱՄԿ-ն: 1967 թ. ապրիլից մեր խմբի երկու աղջիկ եւ չորս տղա արդեն ԱՄԿ անդամներ էին: Սկսվեց պայքարի նոր փուլ: Ինձ առաջարկվեց ստեղծել ԱՄԿ երիտասարդական կառույց: Շահենի առաջարկով այդ կառույցը «Շանթ» անվանվեց: Դրա մեջ ես ներգրավեցի Անդրանիկ Մարգարյանին, Կարապետ Ջղլյանին, Մանուկ Թոփուզյանին եւ ուրիշների, ընդհանուր թվով՝ 14 հոգու:

ԱՄԿ-ի «Փարոսի» հրապարակումից եւ տարածումից հետո, երբ ԱՄԿ ղեկավարներն արդեն կալանավորված էին, պարզվեց, որ ես ԱՄԿ իսկապես գործող հատվածի փաստացի ղեկավարն եմ: Դա ինձ համար դժվար չէր, քանի որ ե՛ւ ես, ե՛ւ իմ ընկերներն արդեն ունեինք պայքարի անհրաժեշտ փորձ, կային լուրջ կազմակերպական կառույց եւ գործ անելու ձգտում:

ԱՄԿ ղեկավարների ձերբակալությունից հետո առաջին գործը, որ արեցինք՝ Չեխոսլովակիայի դեպքերի վերաբերյալ թռուցիկի պատրաստումն էր: Թռուցիկներում ասվում էր, որ հայ ժողովուրդը չի ցանկանում մասնակցել կոմունիստական կուսակցության զավթիչ գործողություններին: Ճիշտ է, տեքստը ստորագրված էր ԱՄԿ, բայց խոսվում էր ողջ հայ ժողովրդի անունից:

Սակայն, դեպքերն այնպես զարգացան, որ այդ թռուցիկները չտարածվեցին: Այդ օրերին ՊԱԿ-ում Հայկազ Խաչատրյանն՝ առերես հարցաքննության ժամանակ Շահեն Հարությունյանին ասում է՝ գրամեքենան, որ թաքցրել ես, տեղն ասա, թող վերցնեն, որ գործը փակվի, եւ ամեն ինչ ավարտվի: Հայկազը տեղյակ չէր, որ գրամեքենան գտնվում է ՀԵՄ-ի անդամներից մեկի տան նկուղում: Չգիտեր, որ դա իմ գաղտնարանն է, եւ այնտեղ մենք տպագրական գործունեություն ենք ծավալում: Շահենը, վստահ լինելով, որ բացի գրամեքենայից՝ ուրիշ ոչինչ չկա այդ նկուղում, Հայկազի հորդորով ասում է գրամեքենայի տեղը: Նշված վայրում կատարվում է խուզարկություն: Գրամեքենայի հետ միասին ՊԱԿ-ը տանում է նաեւ իմ ճամպրուկը՝ մեր նախկին եւ ընթացիկ թռուցիկների օրինակներով:

Ինձ վրա ԱՄԿ ղեկավարների գործից առանձնացված գործ է հարուցվում: Այդ մա -

սին դատի ժամանակ ինձ ասաց Ստեփան Զատիկյանը: Մի կողմից՝ նրանք ինձ վրա գործ են հարուցում, մյուս կողմից էլ Ստեփանի եւ Շահենի ընտանիքներին ներշնչում են՝ իբր, ես մատնիչ եմ: Սա էր ՊԱԿ-ի սադրիչ գործելակերպը: Այդ օրերին շատ նուրբ հոգեբանական խաղ էր գնում: Հիմա, արդեն իմ այս տարիքի բարձունքից հիշելով այդ դեպքերը՝ զարմանում եմ, թե ինչպես եմ կարողացել 19 տարեկանում դիմակայել ու դուրս գալ այդ իրավիճակից: Երեւի դա ստացվել է, որովհետեւ շրջապատված եմ եղել լավ ընկերներով:

Մինչեւ ԱՄԿ ղեկավարների դատավարությունը, մենք կարողացանք տարածել «Ցասում» վերնագրված թռուցիկները, իսկ նրանց դատավարությունից հետո՝ «Երկունքը»: «Երկունքը» ցնցել էր ՊԱԿ-ին: Նման բան նրանք պատկերացնել չէին կարող, որ մի կես ժամվա ընթացքում գործող բոլոր բուհերը հեղեղվեն թռուցիկներով: «Երկունք» թերթը շատ մեծ քանակությամբ տարածվեց Երեւանում, Կիրովականում (Վանաձոր), Լենինականում (Գյումրի): Բոլոր բուհերում ու կինոթատրոններում, մարդաշատ բոլոր վայրերում տարածվեց: Իմ սխալներից մեկն եմ համարում, որ «Երկունք», «Ցասում», «Հայք» մասնաճյուղերի անդամներից յուրաքանչյուրը շատ ավելի պատրաստ լինելով ղեկավարի դերին, քան Ազատ Արշակյանը, որը երեք-չորս ամսով հեռանալով Հայաստանից՝ կտրվել էր մեր իրականությունից, նրան վստահեցի ինձանից հետո ընդհանուր ղեկավարի դերը: Նա իմ ընկերն էր, ես նրան շատ էի վստահում: Բայց իմ բռնվելուց հետո նա, փաստորեն, չկարողացավ իրականացնել գործի ղեկավարումը, եւ կազմակերպությունն անգործության մատնվեց:

ՊԱԿ-ի գործը ոչ միայն մեզ բացահայտելն ու դատելն էր, այլեւ ամեն կերպ մեզ հոգեբանորեն կոտրելը: Նրանք կարողանում էին, ժամանակի մտայնությունը հաշվի առնելով, մեր դեմ օգտագործել անգամ մեր ծնողներին: Ինչու՞ պետք է ձեր որդին բանտ նստի, օգնեք մեզ, որպեսզի նա իր սխալը հասկանա եւ խուսափի երկարատեւ պատժաչափից: Ահա սա էր նրանց լարած թակարդը, որի մեջ ընկնում էին մեր ծնողները: Ծնողների հետ նրանք հանդես էին գալիս որպես դաշնակիցներ, ինչը ծանր էր նստում մեզ վրա:

Դատապարտվեցի 4 տարի ազատազրկման: Այդ տարիներն անցկացրի Մորդովիայի քաղաքական կալանավայրերում: Իմ առաջին պատժաչափը ավարտելուց հետո՝ 1973 թվականին վերադառնալով Հայաստան, գտնվում էի վարչական հսկողության տակ: Չնայած դրան, անմիջապես սկսեցի վերականգնել անգործության մատնված մեր կառույցները: Ամենակարեւոր դրվագներից մեկը եղավ ԱՄԿ ծրագրում փոփոխություններ կատարելը, «Անկախություն հանրաքվեի ճանապարհով» ռազմավարության որդեգրումը: Նպատակը՝ կուսակցությունը ժամանակի ոգուն ավելի համահունչ դարձնելն էր: Ստեղծվեց ԱՄԿ ղեկավար մարմին՝ ԱՄԿ խորհուրդ: Ինձ միաձայն ղեկավար ընտրեցին: 1974-ին կրկին կալանավորվեցի եւ դատապարտվեցի 10 տարի ազատազրկման ու աքսորի:

ՊԱԿ-ը մի մեծ խնդիր ուներ՝ որպես երեւույթ ոչնչացնել ԱՄԿ-ն: Իրենց այդ նպատակին հասնելու համար կարեւոր էին համարում ցույց տալ, որ արդեն դատապարտված ԱՄԿ-ականները հետ են կանգնում իրենց պայքարից, զղջում են կատարածի համար եւ հայցում խորհրդային իշխանության ներողամտությունը: Դատապարտվելուց հետո, հաշվի առնելով յուրաքանչյուր դատապարտված ԱՄԿ-ականի անձնական հատկանիշները, յուրաքանչյուրի նկատմամբ յուրահատուկ ծրագրեր էին մշակում: Նրանց համար չափազանց կարեւոր էր հասնել դրան, որ կալանավայրերում գտնվող ԱՄԿ-ականները հանդես գան ներման ու զղջման դիմումներով: Եթե դա համատարած

բնույթ կրեր, կարող էր կոտրել դեռեւս չբացահայտված ԱՄԿ-ականների կամքը: Կարող էր անգամ նպաստել ԱՄԿ-ի ոչնչացմանը: Սակայն, ի պատիվ ԱՄԿ-ականների, կարող ենք փաստել, որ ներման խնդրագրեր գրողների թիվը խիստ սահմանափակ եղավ: Քչաթիվ ներման խնդրագիր գրողներից էին նաեւ Աշոտ Նավասարդյանը եւ Ազատ Արշակյանը: Ճշմարտության առաջ մեղանչած չլինելու համար հարկ է շեշտել, որ Աշոտն ու Ազատը հետագայում՝ 1981-ին, չնայած ներման խնդրագրով ազատ արձակվելու հանգամանքին, «Փարոսի» հերթական համարը թողարկելու մեղադրանքով կրկին դատապարտվեցին:

Մենք կալանավայրերում էլ՝ հացադուլերով, բողոքագրերով, դրսի հետ կապը պահպանելով, գրականություն ստեղծելով ու փոխանցելով շարունակում էինք պայքարը հանուն Ազատ ու Անկախ Հայաստանի: Մեզ միացան նաեւ այլ ազգերի քաղկալանավորներ, եւ ԱՄԿ-ն դարձավ միջազգային կազմակերպություն: Այս ամենն ինձ չներվեց, եւ կալանաժամկետիս ավարտից երեք ամիս առաջ իմ ժամկետն ավելացրին երեք տարի երեք ամսով ու տեղափոխեցին նախ՝ Պերմի բանտ, ապա՝ Իրկուտսկի մարզի քրեական հանցագործների համար նախատեսված կալանավայր:

1987 թվականին վերադառնալով կալանավայրից՝ 4 ընկերների հետ ես ԱՄԿ-ն դուրս բերեցի ընդհատակից ու վերանվանեցի Ազգային ինքնորոշում միավորում (ԱԻՄ): Դա ԽՍՀՄ տարածքում առաջին այլընտրանքային քաղաքական կազմակերպությունն էր՝ իր «Անկախություն» շաբաթաթերթով: ԱԻՄ-ի առաջնահերթ խնդիրն Անկախության հանրաքվեն էր, որը տեղի ունեցավ 1991 թվականի սեպտեմբերին:

ԱՄԿ-ականների գործով կայացված երկրորդ դատավճիռը

Այս դատավճիռը նույնպես մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերի օգնությամբ կարողացել ենք քիչ թե շատ ավարտուն տեսքի բերել՝ լրացնելով ԱԱԾ կողմից վկաների ջնջված անունների հիմնական մասը: Չենք լրացրել միայն գործով դատապարտվածներից ոմանց աշխատանքի կամ ուսման վայրերի մասին ԱԱԾ կողմից ջնջված հատվածները եւ գործով անցնող 3-4 վկայի անուն:

ԴԱ ՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

23-ը փետրվարի 1970 թվի

Նախագահությամբ՝	**Ա. Խանամիրյանի**
Ատենակալներ՝	**1. Հ. Տեր- Հովհաննիսյան**
	2. Վ. Դուրգարյան
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Ա. Շլեպչյան**
դատապաշտպաններ՝	**Ս. Արեւշատյան, Ա. Մելիքյան, Ա. Մոսոյան**

Քննության առնելով դատական դռնփակ նիստում քրեական գործն ըստ մեղադրան - քի՝

1. ՊԱՐՈՒՅՐ ԱՐՇԱՎԻՐԻ ՀԱՅՐԻԿՅԱՆԻ, որը ծնվել է 1949 թվականի հուլիսի 5-ին Երեւան քաղաքում, Երեւան քաղաքի Շահումյանի շրջանի Սովետաշենի ավանի բնակիչ՝ 14 փողոց տուն նո. 3, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀԱՄԼԿԵՄ անդամ, չդատված, ամուրի, խնամքին ոչ ոք, մինչ սույն գործով կալանավորվելը սովորելիս է եղել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբերնետիկայի ֆակուլտետի երեկոյան բաժնի 3-րդ կուրսում, միաժամանակ աշխատելիս է եղել Սովետաշենի տրիկոտաժի ֆաբրիկայում որպես էլեկտրիկ, սույն գործով կալանքի տակ է 1969 թվականի մարտի 9-ից, մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

2. Հակոբ Հովհաննեսի Աշիկյանի, որը ծնվել է 1949 թվականի դեկտեմբերի 15-ին Երեւան քաղաքում, Երեւան քաղաքի բնակիչ, Արաբկիր թաղամաս 27 փողոցի տուն նո. 11, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, չդատված, ամուրի, խնամքին ոչ ոք, մինչեւ սույն գործով կալանավորվելը սովորելիս է եղել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբերնետիկայի ֆակուլտետի երեկոյան բաժնի 3-րդ կուրսում, միաժամանակ աշխատելիս է եղել Երեւանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի լաբարատորիայում, որպես լաբորանտ, սույն գործով կալանքի տակ է 1969 թվականի հուլիսի 16-ից, աջ ոտքը ծնկից ներքեւ, մանուկ հասակում գնացքի տակ ընկնելու հետեւանքով կտրված է (տես բժշկական տեղեկանքը գթ. հատոր 6), մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օրի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

3. Աշոտ Ցոլակի Նավասարդյանի, որը ծնվել է 1950 թվականի մարտի 28-ին Երեւան քաղաքում, Երեւան քաղաքի բնակիչ՝ Օրջոնոգիձեի պողոտա 302 բն. 6, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, չդատված, ամուրի, խնամքին ոչ ոք, միջնակարգ կրթությամբ, մինչեւ սույն գործով կալանավորվելը աշխատելիս է եղել ------- , սույն գործով կալանքի տակ է 1969 թվականի հուլիսի 19-ից, մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օրի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

4. Ռաֆայել Սերգեյի Բարսեղովի, որը ծնվել է 1956 թվականի դեկտեմբերի 21-ին Թբիլիսի քաղաքում, հայր չունի, ունի մայր, որը բնակվում է Թբիլիսի քաղաքում, ինքը 1961 թվականից մինչեւ 1968 թվականը գտնվելիս է եղել Երեւան Շահումյանի շրջանի Սովետաշեն ավանի մանկատնում որպես մանկատան սան, այդտեղ դպրոցն ավարտելուց հետո դուրս է գրվել եւ աշխատանքի է անցել Երեւանի ------- ինստիտուտի փորձարարական գործարանում որպես հավաքող փականագործ, բնակվելիս է եղել Երեւանում ---------, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, ամուրի, խնամքին ոչ ոք, սույն գործով կալանքի տակ է 1969 թվականի օգոստոսի 4-ից, մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

5. Աշոտ Զավենի Խաչատրյանի, որը ծնվել է 1951 թվականի հուլիսի 4-ին Հայկական ՍՍՀ Ապարանի շրջանի Ապարան գյուղում, Երեւան քաղաքի բնակիչ՝ ------ ազգությամբ

հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, ամուրի, գտնվել է ծնողների խնամքի տակ, մինչեւ սույն գործով կալանավորվելը սովորելիս է եղել Երեւանի պետական համալսարանի ------- 3-րդ կուրսում, սույն գործով կալանքի տակ է 1969 թվականի օգոստոսի 11-ից, մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օրի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Ամբաստանյալների եւ վկաների ցուցմունքները, ինչպես նաեւ նախաքննությամբ եւ դատաքննությամբ ձեռք բերված մյուս տվյալները ի մի բերելով կոլեգիան գտավ ապացուցված հետեւյալը:

Ամբաստանյալներ Պարույր Հայրիկյանը, Հակոբ Աշիկյանը, Աշոտ Նավասարդյանը, Ռաֆայել Բարսեղովը, Աշոտ Խաչատրյանը, չունենալով քաղաքական համապատասխան հասունություն, ընկնելով հայ ժողովրդի մասին տարբեր ժամանակներում ընթերցած ազգապատմագրական վեպերի, ինչպես նաեւ այս կամ այն ձեւով իրենց ձեռքը ընկած նաեւ արտասահմանյան «Զարթոնք», «Ազդակ», «Արմենյա» եւ այլ թերթերում զետեղված զուտ ազգայնական կրքեր բորբոքող, իսկ երբեմն էլ հակասովետական տրամադրություններ առաջացնող հոդվածների ազդեցության տակ, սկսել են համակվել ազգայնական ոգով, անտեսել ՍՍՀՄ եղբարյական ժողովուրդների ընդհանուր, ինտերնացիոնալ շահերը ու ձգտումները:

Տարվելով նեղ ազգակնական բովերով, ամբաստնյալ Պարույր Հայրիկյանը, գործով վկա հարցաքննված Ազատ Արշակյանի եւ Կարո Ջղալյանի հետ (վերջինս զորակոչված է եւ այժմ գտնվում է զինվորական ծառայության մեջ) 1967 թվականին կազմել են «Շանթ» (խոսքը վերաբերվում է գրող Լեւոն Շանթին), անուն կրող գաղտնի մի խմբակ, որի սկզբնական նպատակն է եղել իբր խորամուտ լինել հայ ժողովրդի պատմությունը ուսումնասիրելուն, անաղարտ պահել հայոց լեզուն, ծառայել հայ ժողովրդի վերամիավորման գործին, պայքարել հայ ժողովրդի այլ ազգերի հետ ձուլման՝ ասիմիլացիայի դեմ:

Ամբաստանյալ Պարույր Հայրիկյանը «Շանթ» խմբակի մեջ ներգրավելով վերը նշված հայացքներ ունեցող, իր համակուրսեցի ամբաստանյալ Հակոբ Աշիկյանին, ինչպես նաեւ գործով վկաներ Անդրանիկ Մարգարյանին, Արամ Բոյաջյանին եւ մյուսներին սկսել են մտածել իրենց հայացքները տարածելու հնարավորությունների եւ միջոցների մասին:

Այդ «Շանթ» խմբակը, պետական անվտանգության կոմիտեի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ բացահայտվել եւ ցրվել է:

Ամբաստանյալներ Պարույր Հայրիկյանը եւ Աշիկյան Հակոբը թեպետ պետական անվտանգության կոմիտեին «Շանթ» անունը կրող այդ խմբակի գոյության մասին, 1967 թվականին տված իրենց բացատրություններում խոստացել են այլեւս նման հարցերով չզբաղվել, (տես նրանց բացատրությունները գթ. 18-25, 30-32 եւ մյուս էջերը հատոր 5), սակայն շարունակել են մնալ իրենց նեղ ազգայնական կրքերը բորբոքող հայացքների վրա եւ էլ ավելի խորացրել այն:

Այսպես օրինակ ամբաստնյալ Պարույր Հայրիկյանը ծանոթանալով մեկ այլ գործով, հակասովետական գործունեությամբ զբաղվող Ջատիկյան Ստեփանի հետ (վերջինս իր համագործակիցներ Հայկազ Խաչատրյանի եւ Շահեն Հարությունյանի հետ միասին ՀՍՍՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգայի 1969 թվականի հունվարի 3-ի դատավճռով, քր. օրի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով դատապարտվել են տարբեր պատիժների), վերցրել է նրանցից հակասովետական

բնույթի «ազգային միացյալ կուսակցություն» «Փարոս» վերնագիրը կրող թերթը (տես գթ. ----- հատոր 4 եւ 133-136 հատոր 5) եւ նրանց այսպես կոչված «Ազգային միացյալ կուսակցություն» «ծրագիր-կանոնադրությունը» (տես գթ. 35-41 հատոր 4) եւ այդպիսիք կարդացել ինչպես անձամբ այնպես էլ տվել է կարդալու խմբի մյուս անդամներին:

Բացի վերը նշվածից, ամբաստամյալ Պարույր Հայրիկյանի անմիջական նախաձեռնությամբ, ամբաստանյալներ Հակոբ Աշիկյանի, Աշոտ Նավասարդյանի, վկաներ Վ. Խաչիրյանի, Ազատ Արշակյանի եւ մյուսների մասնակցությամբ, որոշում է 1968 թվականի ապրիլի 24-ին, եղեռնի հիսուներեքամյակի կապակցությամբ Երեւանի ծիծեռնակաբերդում, եղեռնի հուշարձանի մոտ, կազմակերպել ռադիոհաղորդում, որի համար նրանցից Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը, վկաներ Վ. Խաչիրյանը , Ի-ն եւ մյուսները նախապես ձեռք են բերել մագնիտոֆոն, որի վրա Պարույր Հայրիկյանը կազմակերպել է ռադիո հաղորդման տեքստի գրառումը, ռադիո դինամիկ, ակումլյատոր, լարեր եւ ռադիո հաղորդման համար այլ սարքավորումներ (տես այդ առթիվ գթ. 76-204 հատոր 1-ին, գթ. 17, 27-109, 106 հատոր 2-րդ, գթ. 116-126, 191-211, 217-224 հատոր 3-րդ, գթ. 168-170, 161-103, 134-105 հատոր 5) եւ 1968 թվականի ապրիլի 24-ի երեկոյան ժամը 6-ին թե 7-ին կատարում այդ ռադիոհաղորդումը, ապա ցրվում, հեռանում այդտեղից, ոչնչացնելով ռադիոհաղորդման տեքստը:

Ըստ Պարույր Հայրիկյանի եւ մյուսների հայտարարության, այդ ռադիոհաղորդման տեքստի բովանդակությունը կրել է զուտ ազգայնական, եղեռնի հետ կապված հարցերի մասին: Նրանց այդ հայտարարություններին հակառակ հավաստի այլ տվյալներ ձեռք չբերվեցին նաեւ դատաքննության ժամանակ:

Ամբաստանյալ Պարույր Հայրիկյանը, բացի Հակոբ Աշիկյանից, որին որպես համակորսեցու իր շուրջն է համախմբած եղել դեռ 1967 թվականի սկզբներից, Աշոտ Նավասարդյանին, որին խմբակի մեջ է ներգրավել 1967 թվականի գարնանը, Ռաֆայել Բարսեղովին 1968 թվականի կեսերից եւ Աշոտ Խաչատրյանին 1968 թվականի վերջերից, տարբեր ժամանակներում ներգրավել է նաեւ վկաներ Կարո Ջղալյանին, Ազատ Արշակյանին, Անդրանիկ Մարգարյանին, Արամ Բոյաջյանին, Գերման Մարկոսյանին եւ ուրիշները, որոնց համար երբեմն առանձին-առանձին, երբեմն էլ հավաքույթների ժամանակ ընթերցվել են «Ազդակ» թերթից վերցրած «ոչ միայն հացիվ» հոդվածը (տես գթ. 105-106 հատոր 5), Սիլվա Կապուտիկյանի երկու նամակներուն առթիվ, նույն «Ազդակ» թերթում տպագրված «հայու ողբերգություն» վերնագիրը կրող հոդվածը, (տես գթ. 109-111 հատոր 5), «Արմենյա» թերթում տպագրված «աշխարհը քսան տարի ետքը» հոդվածը, (տես գթ. 118-119 հատոր 5), դաշնակցական Ա. Ահարոնյանի 1919 թվականի մայիսի–ի թվակիր նամակը հասցեագրված Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինին (տես գթ. 114-117 հատոր 5), «Արմենիա» թերթի 1960 թվականի սեպտեմբերի 17-ի համարում տպված «Աշխարհի կոմունիստական կուսակցությունների դիրքորոշումը երեկ եւ այսօր» հոդվածը (տես գթ. 119 հատոր 5), «Կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին» վերնագիրը կրող հոդվածը (տես գթ. 120 հատոր 5) «Հ. Հ. Դաշնակցության հուշագրի եզրակացությունը» վերնագրով հոդվածը (գթ. 121-122 հատոր 5), «հայ դատի լուծման ճանապարհները» վերնագրով հոդվածը (տես գթ. 123-124 հատոր 5), Սոցիալիստական հեղափոխության սկզբունքները եւ սովետական իրականությունը խեղաթյուրող, ինչպես նաեւ ազգային կրքեր բորբոքող մի շարք այլ հոդվածներ (տես գթ. 125, 126-130, 131, 132, 133-134 հատոր 5):

Ընկնելով այդ վերը թվարկված հոդվածների ազդեցության տակ իրենք եւս սկսել են սովետական կարգերը արատավորող եւ վարկաբեկող զրպարտչական հերյուրանքներ տարածել ինչպես իրենց շրջապատում, այնպես էլ ժողովրդի մեջ, հակասովետական թռուցիկներ տարածելու միջոցով:

Այսպես օրինակ, ամբաստանյալ Պարույր Հայրիկյանի նախաձեռնությամբ, զուտ ազգայնական նեղ հայացքների ընդհանրության հիման վրա ստեղծված այդ խմբակը, հետզհետե սկսել է այն աստիճանի վատ տրամադրվել դեպի սովետական պետության միջոցառումները, որ 1968 թվականի դեկտեմբերի ունեցած հավաքույթներից մեկում ընթերցելով ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը, հասարակական կարգի պահպանության մինիստրությունը ներքին գործերի մինիստրություն վերակոչելու մասին, կազմել է «Կոչ հայ ժողովրդին», «Ցասում» ստորագրությամբ մի թռուցիկ, որում թշնամական այն միտքն է արտահայտված, որ իբր թե հասարակական կարգի պահպանության մինիստրությունը ներքին գործերի մինիստրություն վերանվանելը նոր բռնակալության սկիզբն է, որ հայ ժողովրդի համար դա վերադարձ է 1937 եւ 1949 թվականների իրադրությունը, որ իբր թե սկսվելու է հայ ժողովրդի առաջավոր մտքի վերջնական բնաջնջման, թուրք ջարդարարների 1915 թվականի գործը եւ սովետական իրականության դեմ ուղղված այլ հերյուրանքներ, տես հատոր 5 գբ. 74-63:

Այդ թռուցիկը հիմանականում կազմվել է ամբաստանյալ Պարույր Հայրիկյանի թելադրանքով, բազմացմանը մասնակցել են նաեւ մյուսները: Այն տարածել են Երեւան քաղաքում:

Ամբաստանյալներից, ինչպես եւ վկաներից ով ինչ չափով է մասնակցել բազմացմանը եւ տարածմանը, այդ մասին որոշակի ցուցմունքներ չտրվեցին:

Այդ «Կոչ հայ ժողովրդին», «Ցասում» ստորագրությամբ թռուցիկի տարածումից հետո, 1968 թվականի դեկտեմբերին Պարույր Հայրիկյանը ձեռնամուխ է եղել «Երկունք» վերնագիրը կրող թռուցիկի կազմանը: Այդ նպատակով նա գրել է «Անկախությունը որպես կենսական պահանջ» «Փորձառությունը առանց փորձի» եւ ծանոթացրել է դրանց բովանդակության հետ ամբաստանյալներ Հակոբ Աշիկյանին, Ռաֆայել Բարսեղովին, եւ խմբակի մյուս անդամներին, ինչպես նաեւ գործով վկաներ Անդրանիկ Մարգարյանին եւ Կարո Ջղալյանին:

1969 թվականի հունվարին ամբաստանյալ Պարույր Հայրիկյանը ամբաստանյալներ Հակոբ Աշիկյանի, Աշոտ Նավասարդյանի, Աշոտ Խաչատրյանի եւ այլ անձանց մասնակցությամբ, սարի թաղի Մ. Գորկու փողոցի նո. 104 եւ Հայդարի նո. 25 տներում գտնված իրենց սենյակներում (Սարի Թաղի Մ. Գորկու փողոցի նո. 104 տանը եղած սենյակը Պարույր Հայրիկյանը վարձած է եղել իրենց գաղտնի խմբակի գործունեության համար, իսկ Հայդարի փողոցի նո. 25 տանը եղած սենյակում Բարսեղով Ռաֆայելը բնակվելիս է եղել 1968 թվականի կեսերից, այն ժամանակվանից, երբ Սովետաշենի մանկատնից որպես մանկատան սան, ավարտելով դպրոցը դուրս է գրվել մանկատնից եւ աշխատանքի անցել Երեւանի ---------- գիրահետազոտական ինստիտուտի----- գործարանում որպես փականագործ հավաքող), վկա Քեֆշզյան Հովակիմի կողմից, Պարույր Հայրիկյանի խնդրանքով պատրաստված ցինկե կլիշեների վրա բազմացրել են այդ «Երկունք» կոչված թռուցիկը մեծ քանակությամբ եւ 1969 թվականի հունվար փետրվար ամիսներին տարածել Երեւանում, Լենինականում եւ Կիրովականում: Ի դեպ այդ թռուցիկները, բացի Երեւանում տարածելուց, Պարույր Հայրիկյանը տարել եւ տարածել է նաեւ Լենինականում, իսկ Աշոտ Խաչատրյանը եւ Ռաֆայել Բարսեղովը Հայ-

րիկյանի առաջարկությամբ տարել եւ տարածել են Կիրովականում: Այդ «Երկունք» թռուցիկում տես գթ. 21-36 1-ին հատոր եւ 68-72 5-րդ հատոր, խեղաթյուրելով սովետական իրականությունը զրպարտչորեն ՍՍՀՄ անվանել են Ռուսական կայսրություն, որտեղ ռուսները իբր թե մարքսիզմի քողի տակ իրենց շովինիստական նպատակներն են իրականացնում, որ ՍՍՀՄ,ում վերջին տասնամյակներում աշխուժացել եւ թափ է ստացել ազգային ազատագրական պայքարը, որ 1920 թվականի նոյեմբերի 29 –ին՝ Հայաստանում սովետական կարգերի ստեղծումը իբր թե հայ ժողովրդի համար այրունոտ մայրամուտ էր: Այնուհետեւ այդ թռուցիկում պահանջ է դրվում Հայաստանին վերադարձնել Արցախը եւ Նախիջեւանը եւ որ այդ հարցի լուծման համար Հայաստանը պետք է դուրս գա ՍՍՀՄ կազմից եւ ստեղծի իր անկախ պետությունը: Բացի այդ, թռուցիկում մեթոդական ցուցումներ են տրված գաղտնի խմբակների անդամներին կոնսպիրատիվ հարցերի շուրջը:

Վերը նշված հակասովետական բնույթի հոդվածների մեծ մասը մեքենագրվել են Պարույր Հայրիկյանի եւ մյուսների կողմից, իրենց իսկ կողմից ձեռք բերված «Ուրանիա նո. 347210 եւ «Պրոգրես» նո. 585795 գրամեքենաների վրա, որպիսիք նախաքննության ժամանակ առգրավել են որպես իրեղեն ապացույց:

Բացի այդ, Պարույր Հայրիկյանի խնդրանքով, գործով վկա Սուսաննա Ենգիբարյանի կողմից, իր աշխատանքի վարյում գրամեքենայի վրա բազմացվել են «Փարոս» հակասովետական թռուցիկից «ելնում են նորերը» եւ «Հայ ժողովրդին» վերնագրերով հոդվածները:

«Երկունք» եւ «Կոչ Հայ ժողովրդին» թռուցիկների տեքստերով ցինկե կլիշեները պատրաստվել են Պարույր Հայրիկյանի խնդրանքով գործով վկա Քեֆշզյան Հովակիմի կողմից, իսկ այդ թռուցիկների բազմացնելուց հետո, այդ կլիշեները, Հայրիկյանի խնդրանքով ոչնչացրել է ամբաստանյալ Աշոտ Նավասարդյանը: Վերջինիս տված ցուցմունքով նախաքննության ժամանակ այդ կլիշեների կտորտանքը հայտնաբերվել են Նորագավթի ոռոգիչ ջրանցքում եւ որպես իրեղեն ապացույց կցվել գործին (տես գթ. 73 հատոր 5):

«Երկունք» վերնագիրը կրող թռուցիկը Երեւան Լենինական եւ Կիրովական քաղաքների բնակելի շենքերի փոստարկղերում եւ այլուր գցելու միջեցով տարածելուց բացի, այն տվել են կարդալու նաեւ գործով վկաներին այսպես օրինակ Պարույր Հայրիկյանը տվել է կարդալու վկաներ Ազատ Արշակյանին եւ Հ-ին, Բարսեղով Ռաֆայելը տվել է կարդալու վկաներ Ջ-ին եւ Ղ-ին, Աշոտ Նավասարդյանը տվել է կարդալու Ճ-ին, Հակոբ Աշիկյանը տվել է կարդալու վկաներ Մ-ին եւ Արամ Բոյաջյանին:

«Երկունք» վերնագիրը կրող թռուցիկի հետագա համարի համար, Պարույր Հայրիկյանը 1969 թվականի մարտին գրել է «Հայաստանը ապագայում» վերնագրով մեկ նոր հոդված որպիսին գրամեքենայի վրա տպագրել է վկա Սուսաննա Ենգիբարյանը, սակայն Հայրիկյանի կալանավորման պատճառով այն լույս չի տեսել:

Նախաքննության ժամանակ կատարված խուզարկությամբ, Պարույր Հայրիկյանի Հակոբ Աշիկյանի եւ Ռաֆայել Բարսեղովի մոտից վերցվել են մի քանի գրառումներ որպիսիք նույնպես պարունակում են զրպարտիչ հերյուրանքներ սովետական իրականության եւ սովետական պետության միջոցառումների նկատմամբ:

Պարույր Հայրիկյանին, Հակոբ Աշիկյանին, Աշոտ Նավասարդյանին, Ռաֆայել Բարսեղովին եւ Աշոտ Խաչատրյանին մեղսագրված հանցանքը, վերը նկարագրված արարքներում, ապացուցված է ոչ միայն իրենց նախաքննությանը եւ դատաքննությանը

տված ցուցմունքներով այլեւ վկաներ Սուսաննա Ենգիբարյանի, Արամ Բոյաջյանի, Անդրանիկ Մարգարյանի, Ն-ի, Գերման Մարկոսյանի, Վ. Խաչիրյանի, Հավակիմ Քեֆշզյանի եւ մյուսների ցուցմունքներով, ինչպես նաեւ «Փարոս» «Երկունք» «Կոչ հայ ժողովրդին» թռուցիկների եւ հակասովետական բնույթի միքանի այլ հոդվածների եւ գրառումների առգրավման փաստով, այդ նյութերը բազմացնելու համար օգտագործված «Ուրանիա» եւ «Պրոգրես» գրամեքենաների, ցինկից պատրաստված կլիշների, ռադիո հաղորդումը անցկացնելու հարմարանքի՝ ռադիո դինամիկի, ակումլյատորի, ռադիո լարերի, հայտնաբերման եւ առգրավման փաստով: (տես գթ. 181, 183, 184 հատոր 5:

Հայրիկյանը, Աշիկյանը, Նավասարդյանը, Բարսեղովը եւ Խաչատրյանը թեպետ դատաքննության ժամանակ ընդունեցին, որ այս կամ այն չափով կատարել են վերը նշված արարքները, սակայն այն կատարել են ինչպես իրենք հայտարարեցին ազգասիրական զգացմունքներից ելնելով եւ ըստ իրենց այդ արարքները չպետք է համարել քրեական հետապնդելի արարքներ, իսկ Հայրիկյանը հայտարարեց նաեւ այն, որ այդ խմբակը իր նախաձեռնությամբ չէ որ ստեղծվել է, որ խմբակը ղեկավար չի ունեցել, որ այդ արարքները կատարվել են մյուսների այս կամ այն չափի մասնակցությամբ, չունենալով ղեկավար:

Հայրիկյանի այդ պնդումը հերքված է ոչ միայն գործով մյուս ամբաստանյալների եւ վկաների հատկապես նախաքննության ցուցմունքներով, այլեւ այն փաստով, որ վերը նշված գործունեության համար ինքն է վարձել իր միջոցներով Մ. Գորկու փողոցի նու. 104 տանը սենյակ, որտեղ եւ հիմնականում տարվել են հակասովետական կազմակերպչական աշխատանքները, իր անմիջական նախաձեռնությամբ են գնվել գրամեքենաները, 1968 թվականի ապրիլի 24-ին ծիծեռնակաբերդում կազմակերպել ռադիոհաղորդումը: Հայրիկյանի խնդրանքով է վկա Հովակիմ Քեֆշզյանը պատրաստել «Երկունք» եւ «Կոչ հայ ժողովրդին» թռուցիկների կլիշները, որ այդպիսիք ոչնչացվել է Նավասարդյանի կողմից, թռուցիկները բազմացնելուց հետո, իր առաջարկությամբ: Ի դեպ նախաքննության ժամանակ տված Նավասարդյանի ցուցմունքների հիման վրա է, որ հայտնաբերվել են կլիշեյի կտորտանքները:

Անհիմն է նաեւ ամբաստանյալների պնդումը այն մասին, որ իրենց այդ արարքները չի կարելի դիտել որպես քրեական հետապնդելի արարք այն պատճառով, որ այն կատարել են հայրենասիրական-ազգասիրական զգացմունքներից ելնելով:

Կոլեգիան գտնում է, որ նրանք դուրս գալով այդ զգացմունքների շրջանակներից ոչ միայն ազգային կրքեր են բորբոքել այլ եւ իրենց կողմից տարածած թռուցիկներում վարքաբեկելով սովետական իրականությունը, սովետական պետությանը փաստորեն տարել են հակասովետական պրոպագանդա այսինքն կատարել են հանցանք որպիսին պատժելի է Հայկական ՍՍՀ քր. օրի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Կոլեգիան միաժամանակ գտնում է, որ ամբաստանյալների նկատմամբ պատիժ սահմանելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն նրանց յուրաքանչյուրի մասնակցության չափը վերը նկարագրված հանցանքում այլեւ այն, որ նրանք հանցանքը կատարելիս համարյա թե նոր են հասած եղել չափահաս տարիքին, իսկ նրանցից Աշոտ Խաչատրյանը հանցանքի պահին անչափահաս է եղել, չեն ունեցել քաղաքական համապատասխան հասունություն, որ նրանցից Հակոբ Աշիկյանը դեռ մանուկ հասակից, դժբախտ պատահարից՝ գնացքի տակ ընկնելու հետեւանքով, զրկված է աջ ոտքից, որ Ռաֆայել Բարսեղովը զրկված լինելով ծնողներից մինչեւ 1968 թվականի հունիսը եղել

է մանկատան սան որտեղ թե ուսման մեջ եւ թե կենցաղում իրեն լավ է դրսեւորել, բնութագրվում է դրականապես տես բնութագիրը գթ. 97 հատոր 6, մանկատնից դուրս գալուց հետո աշխատանքի է անցել Երեւանի --------- փորձարարական գործորոնում որպես բանվոր, որտեղ աշխատել է մինչեւ սույն գործով կալանավորվելը:

Հանրօգուտ աշխատանքով է զբաղված եղել նաեւ Նավասարդյանը, նա մինչեւ կալանավորվելը աշխատելիս է եղել Երեւանի ---------- որպես մոտորիստ: Պարույր Հայրիկյանը եւ Հակոբ Աշիկյանը բացի աշխատելուց միաժամանակ սովորելիս են եղել պոլիտեխնիկ ինստիտուտի կիբերնետիկայի ֆակուլտետի երեկոյան բաժնի 3-րդ կուրսում, իսկ Աշոտ Խաչատրյանը սովորելիս է եղել Երեւանի պետական համալսարանի ----------:

Ամբաստանյալներից ոչ մեկը մինչեւ այս հանցանքի կատարումը որեւէ բանում արատավորված չի եղել, նրանց առաջին դատվածությունն է: Ի դեպ 1969 թվականի մարտից հետո՝ ամբաստանյալ Պարույր Հայրիկյանի կալանավորվելուց հետո, մյուս ամբաստանյալները դադարել են վերը նշված որեւէ գործողություն կատարել:

Այս ամենը հաշվի առնելով կոլեգիան գտնում է, որ երկարատեւ ազատազրկումը կարող է խիստ ծանր հետեւանքներ ունենալ ինչպես նրանց առողջության վրա այդպես եւ որպես երիտասարդների նրանց հետագայում ճիշտ դաստիարակելու գործին:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օրի 293 եւ 294 հոդվածներով կոլեգիան՝

ՎՃՌԵՑ

Պարույր Արշավիրի Հայրիկյանին, Հակոբ Հովհաննեսի Աշիկյանին, Աշոտ Ցոլակի Նավասարդյանին, Ռաֆայել Սերգեյի Բարսեղովին եւ Աշոտ Զավենի Խաչատրյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օր.ի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Քր. օրի 65 հ. 1-ին մասի սանկցիայի հիման վրա դատապարտել նրանցից Պարույր Արշավիրի Հայրիկյանին 4 (– տարի չորս տարի ժամանակով ազատազրկման, Հակոբ Հովհաննեսի Աշիկյանին եւ Աշոտ Ցոլակի Նավասարդյանին յուրաքանչյուրին երկու 2 տարի ժամանակով առանց աքսորի: Ռաֆայել Սերգեյի Բարսեղովին եւ Աշոտ Զավենի Խաչատրյանին դատապարտել յուրաքանչյուրին վեց 6 ամիս ժամանակով ազատազրկման: Նկատի ունենալով որ նրանք արդեն իսկ այդ պատիժը կրել են՝ նրանցից Ռաֆայել Բարսեղովը կալանքի տակ է 1969 թվականի օգոստոսի 4-ից, իսկ Աշոտ Խաչատրյանը կալանքի տակ է 1969 թվականի օգոստոսի 11-ից, ուստի նրանց ազատել կալանքից:

Պարույր Արշավիրի Հայրիկյանի կալանքի սկիզբը հաշվել 1969 թվականի մարտի 30-ից, Հակոբ Հովհաննեսի Աշիկյանի կալանքի սկիզբը հաշվել 1969 թ. հուլիսի 16-ից, Աշոտ Ցոլակի Նավասարդյանի կալանքի սկիզբը հաշվել 1969 թ. հուլիսի 10-ից:

Պարույր Արշավիրի Հայրիկյանը, Հակոբ Հովհաննեսի Աշիկյանը եւ Աշոտ Ցոլակի Նավասարդյանը պատիժը պետք է կրեն խիստ ռեժիմի գաղութում:

Գործով առգրավված եւ պետական անվտանգության կոմիտեի քննչական բաժնում գտնվող «Ուրանիա» նո. 347210 եւ «Պրոգրես» նո. 5-85795 գրամեքենաները, էլեկտրոգլանցեվատելը, ռադիոդինամիկը, ակումլյատորը, «Ժամանակակից թուրքիան» եւ «Հայաստանի միջազգային իրավիճակը 1920-22 թվականներին» վերնագրով երկու

հատ գրքերը պետականացնել: Գործին առանձին պակետով կցված Ջ. Կիրակոսյանի հեղինակությամբ «Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը» գիրքը թողնել պետանվտանգության կոմիտեի տրամադրության տակ:

Գործով առգրավված եւ պետանվտանգության կոմիտեի քննչական բաժնում եղած ճամպրուկը հանձնել ըստ պատկանելույն: Նույն քննչական բաժնում եղած նկարչության համար տետրակը, ցինկից թերթիկները, գուպկան, ցելեֆոնից սփրոցը եւ պարկը, ռեզինից ձեռնոցները եւ մատնոցները, 134 օրինակ «Երկունք» եւ 20 հատ «Կոչ հայ ժողովրդին» թռուցիկները եւ չգրված թղթերը որպես իրենից արժեք չներկայացնող իրեր ոչնչացնել:

Դատավճիռը վճռաբեկության կարգով գանգատարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԽԱՆԱՄԻՐՅԱՆ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ ստորագրություններ
Ճիշտ է ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ա. ԽԱՆԱՄԻՐՅԱՆ**

3/3-70թ. եմ.

Հայաստանի վերամիավորման միություն

Երկու դատավճիռ՝ մեկ գործով

«Հայաստանի վերամիավորման միությունը» կազմավորվել է 1969 թվականի աշնանը: Այս միության անդամ Վալտեր Մելիքյանն իր ազգային-հայրենասիրական գործունեությունն սկսել էր 60-ականների առաջին կեսից: 1965-66 թթ. երկու անգամ Պետանվտանգության կոմիտեից նախազգուշացում է ստացել, բայց շարունակել է իր գործունեությունը: ՀՎՄ-ն ձեւավորվել է մի այնպիսի ժամանակահատվածում, երբ արդեն հրապարակ էին իջնում կազմակերպություններ ու գործիչներ, որոնք, հայրենասիրությանն ու տարածքային պահանջներին զուգահեռ, առաջ էին քաշում լիովին նոր խնդիրներ՝ անկախություն, պայքար սովետական կարգերի դեմ, ժողովրդավարություն: ՀՎՄ ծրագրում նույնպես կար «անկախ հանրապետություն» ստեղծելու եւ ժողովրդավարության մասին հիշատակում, բայց պնդել, որ սա անկախական կազմակերպություն էր՝ սխալ կլինի: Այս միությունն իր գլխավոր խնդիրն էր համարում Հայաստանի կորցրած տարածքների, մասնավորապես՝ Ղարաբաղի եւ Նախիջեւանի խնդրի լուծումը: Սրա - նից էլ բխում է կազմակերպության անվանումը: ՀՄՎ ղեկավարներից Վալտեր Մելիքյանը՝ գալով 60-ականների առաջին կեսից՝ 60-ականների վերջ ու 70-ականների սկիզբ էր բերել նշված ժամանակահատվածին բնորոշ խնդիրները՝ հավելելով դրանք 60-ականների վերջին ձեւավորված խնդիրներին՝ ժողովրդավարությանն ու անկախությանը: Սակայն, նպատակների այս խառնուրդում գերակշռում էր 60-ականների առաջին կեսի մտայնությունը: Անկախ պետականությունը եւ ժողովրդավարությունն այդպես էլ այս կազմակերպության գործունեության ընթացքում չդարձան հստակ ձեւակերպված պահանջ ու նպատակ: Չնայած սրան, ՊԱԿ-ը՝ հիմնավորելու համար, թե ինչու պետք է ՀՎՄ անդամները դատապարտվեն 65 եւ 67 հոդվածներով, նրանց նկատմամբ կայացված երկրորդ դատավճռում արհեստական ու ուռճացված շեշտադրում է անում անկախության մասին կազմակերպության ծրագրում եղած «անկախ պետականություն» ձեւակերպման վրա: Կազմակերպության ղեկավարները շփումներ են ունեցել ժամանակին գործող այլ այլախոհների եւ այլախոհական կազմակերպությունների հետ: Նախաձեռնել են համատեղ քննարկումներ, փոխանակել գրականություն: Ի պատիվ ՀՎՄ ձերբակալված անդամների՝ ընդգծենք, որ ՊԱԿ-ն այդպես էլ, ողջ նախաքննության ընթացքում, չկարողացավ իմանալ նրանցից՝ իրենց հետ շփումներ ունեցող այլ կազմակերպությունների ու անհատ այլախոհների անուններն, ու ստիպված էր դատավճռում նշել, որ այդ մարդիկ մնում են գործով չպարզված:

Որքան էլ տարօրինակ է՝ ՀՎՄ գործով կայացվեց երկու դատավճիռ: Սա միակ դեպքն է 1960-1988 թթ. կայացած քաղաքական դատավարությունների պատմության մեջ: Այստեղ մենք ներկայացնում ենք գործով կայացված ե՛ւ առաջին, ե՛ւ երկրորդ դատավճիռը: Առաջին դատավճիռը կայացվեց 1971 թվականի հոկտեմբերի 18-ին՝ դա - տավոր Ն. Մանուկյանի նախագահությամբ: Նախագահող դատավորն իր հայեցողությամբ ամբաստանյալներին առաջադրված 65-րդ (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67-րդ (պետական հանցագործություններ նախապատրաստելուն կամ կատարելուն, այդպիսի հանցագործություններ կատարելու նպատակ ունեցող կազմակերպություն ստեղծելուն ուղղված կազմակերպական գործունեություն) հոդվածները փոխում է ավելի մեղմ՝ 206[1] հոդվածով (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը): Գործը քննելով՝

դատավորը հետեւություն է անում, որ ամբաստանյալները խորհրդային իշխանությունը քայքայելու նպատակ չեն հետապնդել եւ նման կոչեր չեն հնչեցրել: Սա հիմնավորվել էր ե՛ւ վկաների, ե՛ւ ամբաստանյալների ցուցմունքներով, նաեւ գործում եղած այլ ապացույցներով: 206[1] հոդվածն առաջին հերթին նախատեսում էր, որ դատապարտյալներն իրենց պատիժը կրելու են ավելի թեթեւ՝ ընդհանուր ռեժիմի կալանավայրում ու մնալու են Հայաստանում: Այս հոդվածով դատապարտվեցին Վալտեր Մելիքյանը՝ երեք տարի, Յուրիկ Բուդաղյանը՝ երեք տարի, Սերոբ Սարգսյանը՝ երկու տարի, Սուրեն Մելիքյանը՝ երկու տարի եւ Արամայիս Խաչատրյանը՝ մեկ տարի ժամանակով: Որպես կանոն, ՊԱԿ-ի վարույթով անցնող գործերով դատավորներն ինքնագործունեության իրավունք չունեին, եւ դատավորի այս ինքնագործունեությունն արժանանում է ՊԱԿ-ի խստագույն գնահատականին: Պետանվտանգության կոմիտեն պահանջում է նրա կայացրած դատավճիռը բեկանել ու իր առաջ քաշած մեղադրանքով նոր դատավարություն է կազմակերպում: Փոխում են ե՛ւ դատավորին, ե՛ւ դատախազին, ու 1972 թ. մարտի 20-ին՝ առաջին դատավճռից հինգ ամիս անց, դատավոր Ա. Եղիազարյանի նախագահությամբ եւ դատախազ Գ. Ղալումյանի մասնակցությամբ, նրանց դատապարտում են 65 եւ 67 հոդվածներով: Այս դատավճռով մեղադրյալներին դատապարտում են ավելի մեծ պատժաչափերի, իսկ պատիժն արդեն պետք է կրեին խիստ ռեժիմի կալանավայրում: Սա նախատեսում էր, որ դատապարտյալներն իրենց պատիժը պետք է կրեն Հայաստանի սահմաններից դուրս՝ Ուրալում գտնվող քաղկալանավորների համար նախատեսված հատուկ կալանավայրերում: Երկրորդ դատավճիռը կայացնելիս՝ առաջին դատավճռով մեկ տարի ազատազրկման դատապարտված Արամայիս Խաչատրյանը գործով արդեն որպես վկա է հանդես գալիս:

Վալտեր Մելիքյան
լուս. քր. գործից

Վալտեր Մելիքյան

Յուրիկ Բուդաղյան
լուս. քր. գործից

Յուրիկ Բուդաղյան



Սերոբ Սարգսյան
լուս. քր. գործից



Սերոբ Սարգսյան

Սուրեն Մելիքյան

Վալտեր Հունանի Մելիքյանը ծնվել է 1939 թվականին, Շամշադինի շրջանի Բերդ ավանում: Սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 60-ականների կեսերից սկսել է զբաղվել ազգային-հայրենասիրական գործունեությամբ: Երկու անգամ պաշտոնապես նախազգուշացվել է ՊԱԿ-ի կողմից: Ակտիվորեն մասնակցել է ԱՎՄ-ի կազմակերպման աշխատանքներին: Գրել է կազմակերպության ծրագիրը: ԱՎՄ-ի ղեկավարն է եղել: Կալանավորվել է 1971 թ. փետրվարին: Դատապարտվել է 4 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայրերում: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Հայաստան: Նրան արգելել են բնակվել Երեւանում: Ստիպված է եղել տեղափոխվել Բերդ, որտեղ էլ ապրում է մինչեւ օրս: Ակտիվորեն մասնակցել է 1989-91 թթ. Հայաստանի սահմանների պաշտպանության գործին: Եղել է Տավուշի ինքնապաշտպանական ուժերի կազմակերպիչներից մեկը:

Յուրիկ Աբգարի Բուդաղյանը ծնվել է 1943 թ., Թումանյանի շրջանի Շնող գյուղում: Սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Գերազանց ավարտելով՝ ընդունվել է ասպիրանտուրա: Աշխատել է Երեւանի ջերմաէլեկտրակայանում՝ որպես ավագ ինժեներ: Ազգային-հայրենասիրական գործունեությամբ սկսել է զբաղվել Վալտեր Մելիքյանի հետ ծանոթանալուց հետո՝ 1966-67 թվականներից: Ակտիվորեն մասնակցել է ԱՎՄ կազմակերպման աշխատանքներին: Գրել է կազմակերպության կանոնադրությունը: Կալանավորվել է 1971 թ. փետրվարին: Դատապարտվել է 3 տարի 6 ամիս ժամանակով: Պատիժը կրել է Մորդովիայի եւ Պերմի քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայրերում: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Երեւան, եղել է ոստիկանական հսկողության տակ: Աշխատել է էներգահամակարգում: Այժմ ապրում եւ աշխատում է Երեւանում:

Սերոբ Հայկի Սարգսյանը ծնվել է 1926 թ., Երեւանում: Կրթությունը՝ թերի բարձրագույն: Երեւանի Կիրովի անվան քիմկոմբինատում՝ «Նաիրիտում» ավագ ինժեներ է աշխատել: Ազգային-հայրենասիրական գործունեությամբ սկսել է զբաղվել 1968-69 թվականներից: Եղել է ՀՎՄ կազմակերպիչներից ու ակտիվ անդամներից մեկը: Կալանավորվել է 1971թվականի փետրվարին: Դատապարտվել է 2 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայրերում: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Երեւան եւ շարունակել է աշխատել Կիրովի անվան քիմկոմբինատում: Վախճանվել է 1986-ին, 60 տարեկանում:

Սուրեն Բալասանի Մելիքյանը ծնվել է 1948 թ., Շամշադինի շրջանի Բերդ ավանում: Դեռ դպրոցական տարիներից է զբաղվել ազգային-հայրենասիրական գործունեությամբ: Հիմնել է «Հույս» պատանեկան կազմակերպությունը: Ուսումը շարունակելու նպատակով Երեւան տեղափոխվելուց հետո, պոլիտեխնիկական ինստիտուտի առաջին կուրսում ուսանելիս՝ 1969 թ. կազմակերպել է ուսանողներից բաղկացած գաղտնի կազմակերպություն, որի գլխավոր նպատակը Ղարաբաղը եւ Նախիջեւանը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու գործն էր: Կազմակերպությունն անվանվել է Հայաստանի վերամիավորման միություն: Ահա այս կազմակերպության հենքի վրա էլ գործել է ՀՎՄ-ն: Կալանավորվել է 1971 թ. մայիսին: Դատապարտվել է 3 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական բանտարկյալների համար նախապատրաստված կալանավայրերում: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Երեւան, եղել է ոստիկանական հսկողության տակ: Փորձել է շարունակել կիսատ մնացած ուսումը, սակայն, երրորդ կուրսից շարունակելու փոխարեն, պարտադրել են վերսկ-

սել առաջին կուրսից: 1989-91 թվականներին ակտիվորեն մասնակցել է Հայաստանի սահմանների պաշտպանության, ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման գործին: Ապրում եւ աշխատում է Երեւանում:

Պատմում է Յուրիկ Բուդաղյանը

Դժվար է ասել, թե ինչպես եղավ, որ ես ներգրավվեցի ընդհատակյա հայրենասիրական շարժման մեջ: Անցել է արդեն քառասուն տարի, եւ այս ողջ ընթացքում ինքս ինձ այս հարցը տալիս եմ: Հստակ պատասխան այդպես էլ գտնել չեմ կարողացել: Բայց տարիների հեռվից շատ բան վերլուծելով, շատ բան իմաստավորելով ու վերաիմաստավորելով՝ այսօր արդեն կարելի է ինչ-որ եզրահանգում անել: Վերջապես պետք է հասկանալ, թե քառասուն տարի առաջ ի՞նչը պետք է իմ կարգավիճակն ունեցող մարդուն դրդեր այդ քայլին: Գերազանց ավարտել էի ինստիտուտը, սովորում էի ասպիրանտուրայում, իմ նախընտրած մասնագիտությամբ ու բարձր աշխատավարձով աշխատում էի ՏԷՑ-ում, հարգված ու սիրված էի, շուտով պետք է բնակարան ստանայի: Մի խոսքով, ունեի այն ամենն, ինչ կարող էր երազել միջինից բարձր կարողությունների տեր սովետական մարդը: Ամենայն հավանականությամբ, ինձ այդ քայլին դրդեց Խորհրդային Միությունում առկա, ամենուր տարածված, անգամ անզեն աչքով տեսանելի կեղծիքը: Ժողովների ժամանակ ամբիոններից՝ պաշտոնական միջոցառումներին ասվում էր մի բան, իսկ իրական կյանքում բոլորովին այլ բան էր արվում: Դա վակուում էր ստեղծում: Ես միակը չէի: Շատերն էին զգում դա: Ինչու՞ եւ ինչի՞ համար է մարդն ապրում: Մի՞թե լոզունգային ու սուտ գաղափարների համար: Մի՞թե միայն սեփական բարեկեցության համար: Այդ շրջանում իմ վաղվա օրվա վրա ես ավելի քան վստահ էի: Վստահ էի, որ կավարտեմ ասպիրանտուրան, կունենամ առաջխաղացում աշխատանքում, վստահ էի, որ ապրելու եմ բարեկեցիկ ու ապահով կյանքով: Բայց մի՞թե միայն դա բավարար է: Այս մտքերը, ապա կոմունիստական գաղափարախոսության կողմից ազգայինի իսպառ մերժումը մտահոգում էին ինձ: Ինչու՞ է մերժվում ազգայինը, ինչու՞ են Հայաստանը եւ հայ ժողովուրդն այս վիճակում: Պակաս բան կար, եւ այսօր արդեն կարող եմ ասել, որ այդ պակասի փնտրտու՛քն ինձ բերեց դեպի այս ճանապարհը: Ինստիտուտն ավարտեցի 1965 թ. վերջին, 66-ից՝ այս ուղղությամբ արդեն որոշակի գործունեություն էի ծավալում: ՏԷՑ-ում ինձ պես մտածող մարդիկ կային: Հավաքվում՝ զրուցում էինք: Դա, իհարկե, լուրջ գործունեություն համարել չէր կարելի, բայց մարդիկ տարված էին ազատամտությամբ: Այդ շրջանում էլ ծանոթացա Վալտեր Մելիքյանի հետ: Այդ ծանոթությամբ իմ կյանքում բոլորովին նոր էտապ սկսվեց: Նա վաղուց էր ներգրավված այս կարգի գործունեության մեջ, այդ տարիներին գործող տարբեր կազմակերպությունների ու անհատների հետ կապեր ուներ: Նրա դերը մեծ է եղել ե՛ւ իմ գործունեության, ե՛ւ ընդհանրապես հայաստանյան ազգայնական շարժման մեջ: Նա ուներ կազմակերպչական մեծ տաղանդ, կարողանում էր իրարամերժ մարդկանց հետ ընդհանուր լեզու գտնել: Մեծ է եղել նաեւ Սուրիկ Մելիքյանի դերը: 1968-69 թթ. մեր խումբն արդեն ձեւավորվել էր: Ունեինք մեր խմբակները: Խմբակների անդամները քարտեր ու - նեին, որտեղ լրացվում էին յուրաքանչյուրի անձնական տվյալները: Վալտերը դրանք պահել էր Բերդում: ՊԱԿ-ի աշխատակիցները խուզարկության ժամանակ, դժբախտաբար, կարողացել էին հայտնաբերել դրանք: Այդ պատճառով մեզանից՝ ձերբակալված -

ներիցս բացի, թվով մոտ քառասուն մարդ հայտնվեց ՊԱԿ-ի տեսադաշտում: Նրանց, իհարկե, չդատեցին, բայց բացահայտումը վճռական եղավ նրանցից շատերի համար: Շատերի ապագան այս պատճառով խեղվեց: Ոմանք ուսանողներ էին, ոմանք՝ տարբեր բնագավառների աշխատողներ. նրանք ընկան սեւ ցուցակի մեջ՝ դրանից բխող բոլոր տխուր հետեւանքներով հանդերձ:

Թե ինչպես ՊԱԿ-ը կարողացավ դուրս գալ մեր կազմակերպության վրա, ես հստակ ասել չեմ կարող: Ինձ միայն հայտնի է, որ մեր կազմակերպության անդամներից մեկին, որը կապի մեջ էր Ղարաբաղում եղած մեր խմբի հետ, Ստեփանակերտից վերադառնալիս բռնել էին: Մի քանի օր կալանքի տակ մնալուց հետո նա հայտնել էր մեր մասին: Մեր խմբի անդամներից ոմանք պնդում էին եւ շարունակում են պնդել, որ նա ի սկզբանե ներդրված գործակալ է եղել: Սակայն, ես նման բան պնդել չեմ կարող: Այն, որ մենք շուտով պետք է բռնվենք, կասկածից վեր էր: Ես դրանում ավելի քան վստահ էի: Մեզ սկսեցին բացահայտ հետեւել: Ինքս պատրաստ էի բռնվելուն: Տունս մաքրել էի: Իմ գործունեության մասին վկայող ոչինչ չէի թողել: Այնպես որ, խուզարկության ժամանակ հայտնաբերեցին միայն Ստեփան Շահումյանի գիրքը եւ մի հատոր էլ Լենինից, որոնց վրա ես գրառումներ էի կատարել:

Նախաքննության փուլում ՊԱԿ-ի կողմից իմ կամ իմ հարազատների վրա անօրինական ճնշումներ չեմ զգացել: Ասենք, ճնշելու խնդիր էլ չունեին: Վալտերի տան խուզարկության ժամանակ մեր ձեռքով գրված այնքան նյութ էին հայտնաբերել, որ դիմադրելու կամ ինչ-որ բանից հրաժարվելու հարկ անգամ չկար: Եղածը լրիվ բավարար էր այն տարիներին գործող օրենքների շրջանակներում մեզ մեղադրանք առաջադրելու համար: Ամեն ինչ պարզ էր ե՛ւ մեզ համար, ե՛ւ նրանց համար: Մենք միայն մեկ խնդիր ունեինք՝ կալանավորվողների ցանկը սահմանափակել մեզանով, նոր մարդկանց չներքաշել: Ուրախ եմ, որ դա հաջողվեց մեզ: Ճիշտ է, խուզարկության ժամանակ հայտնաբերված ցուցակում եղածներին շատ ճնշեցին, նրանցից մեկն անգամ, ճնշումներին չդիմանալով, լուրջ հոգեկան խանգարում ստացավ, բայց մարդ չկալանավորվեց:

Մեզ դատեցին երկու անգամ: Առաջին դատի ժամանակ դատավորը, եթե չեմ սխալվում՝ Մանուկյան ազգանունով, իր հայեցողությամբ փոխեց մեր 65, 67 հոդվածները՝ հակասովետական ագիտացիա ու պրոպագանդա, ավելի մեղմ՝ 206[1] հոդվածով՝ զրպարտություն սովետական կարգերի հասցեին: Այս դատավարությունից եւ մեր նկատմամբ սահմանված պատժաչափերից ՊԱԿ-ը դժգոհ մնաց: Կազմակերպեցին երկրորդ դատավարությունը՝ նորից 65 եւ 67 հոդվածներով, եւ դատապարտեցին հակասովետական ագիտացիայի համար: Այնպես որ, մեր գործով երկու դատավճիռ է կայացվել:

Ամենածանր հիշողությունը մնացել է էտապից: Դաժան բան էր: Քրեականներ, հակահիգենիկ պայմաններ, միջատներ: Կալանավայրում արդեն հեշտ էր: Հիմնականում քաղբանտարկյալներ էին: Մորդովիայում էինք: Այնտեղ՝ քաղաքական կալանավայրերում «բանտարկյալ» ու «ադմինիստրացիա» փոխհարաբերությունները տասնամյակների ընթացքում հստակեցվել էին: Որոշ ժամանակ անց որոշեցին մեզ Մորդովիայից Պերմ տեղափոխել: Այդ էտապը վայրենություն էր հիշեցնում: Ուղեկցվում էր աներեւակայելի վայրագությամբ: Ամառ էր, ջուրը քիչ էր, սնունդ բացարձակապես չկար: Բանտարկյալների համար նախատեսված վագոնի յուրաքանչյուր չորս տեղանոց կուպեում յոթ-ութ մարդ էր գտնվում: Ողջ ցերեկը վագոնը կանգնում էր կիզիչ արեւի տակ, գիշերն էին միայն կցում շարժվող գնացքին: Սովետներն այս եղանակով երեւի ցանկանում էին մարդկանցից գաղտնի պահել կալանավորների տեղափոխումը: Երբ տեղ հասանք եւ

մեզ իջեցրին վագոնից, մենք ուղղակի թափվեցինք ճամփեզրին: Իրար վրա թափված մարդիկ շարժվել անգամ չէին կարողանում: Մեկը նույնիսկ մահացավ: Մի քանի ժամ մեզ թողեցին այդպես ճամփեզրին ընկած: Կամաց-կամաց ուշքի գալուց հետո՝ նոր միայն մեզ տեղափոխեցին գաղութ: Գաղութը նախկինում անչափահաս աղջիկների համար նախատեսված կալանավայր էր եղել, որ ունեցել էր նաեւ կարի արտադրամաս: Երեւում էր, որ նրանց տեղափոխումը կատարվել է հապշտապ, որովհետեւ ամենուր ջարդված ու փչացած կարի մեքենաների կույտեր ու մասեր էին: Այնտեղ ապրելու որեւէ տարբերակ չկար: Ոչ քնելու պայմաններ, ոչ սնունդ, ոչ հագուստ: Ավելի ուշ, երբ արդեն Մորդովիայից բերեցին մեր իրերը, մենք կարողացանք կամաց-կամաց կազմակերպել մեր կենցաղը: Հայերից այնտեղ էին Սարգիս Թորոսյանը եւ Բագրատ Շահվերդյանը: Այնտեղ էր նաեւ մեր բոլորի սիրելի Թամոյանը՝ այսօր եզդիների շեյխ Թամոյանի հայրը: Ոչ հայ հայտնի քաղբանտարկյալներից շատերի հետ եմ առնչվել ու ընկերություն արել: Ոմանց հետ այսօր էլ կապեր ունեմ:

Հայաստան վերադարձա պատժաչափիս ավարտից հետո: Կարող է զարմանալի թվալ, բայց մարդկանց կողմից աջակցություն էի զգում: Խոսքս կոմունիստ-կոմերիտական ճակատի աշխատողներին չի վերաբերում, այլ սովորական մարդկանց: Մարդկանց ջերմ վերաբերմունքն ինձ խրախուսում էր: Անընդհատ համոզվում էի, որ այս ճանապարհին կանգնելով չեմ սխալվել: Մինչեւ դատապարտվելս ՏԷՑ-ի ընտանեկան հանրակացարանից մեկ սենյակ էի ստացել: Դատապարտվելուց հետո՝ մինչեւ ազատ արձակվելս մայրս էր ապրում այնտեղ: Լավ է, գոհ եմ: Տնօրեն Կունջուլյանն այդ ողջ ընթացքում այդպես էլ այդ սենյակը ուրիշի չհատկացրեց: Ցանկություն հայտնեցի ՏԷՑ վերադառնալ, բայց հատուկ բաժնից մերժեցին՝ ասելով, որ նման կարեւորագույն հիմնարկում ես՝ հայրենիքի դավաճանս, աշխատել չեմ կարող: Դրանից հետո մոտեցա Ստեփան Սահակի Հասրաթյանին, հոյակապ մի մարդու, որը նաեւ իմ դիպլոմի ոչ պաշտոնական ղեկավարն էր: Ժամանակին ինքն էր միջնորդել, որ ես ՏԷՑ գնայի: Ինքն ինձ մշտապես աջակցել է: Նա էլ բացատրեց ինձ, որ ՏԷՑ գնալու փորձեր էլ չանեմ, ոչինչ չի ստացվելու, եւ աշխատանք առաջարկեց քաղաքային ցանցում: Այնտեղ ղեկավարը Օսիպովն էր: Նա էլ է ինձ մշտապես աջակցել: Նրա օգնությամբ երկու անգամ բնակարան եմ ստացել, պաշտոնական առաջխաղացում եմ ունեցել: Սրանք մոռանալ չեմ կարող: Մեծ դժվարություններ, որ արհեստականորեն պետք է իմ շուրջն ստեղծվեին, չեմ զգացել: Ընդհակառակը, շրջապատված եմ եղել հոգատար մարդկանցով, որոնք աջակցել են ինձ: Ես սովորական ինժեներ էի: Առավելագույնին, որ սովետների ժամանակ կարողացա հասնել՝ գլխավոր ինժեների տեղակալի պաշտոնն էր: Գլխավոր ինժեներ նշանակվեցի արդեն այն ժամանակ, երբ սովետն այլեւս չկար, ամեն ինչ քայքայվում էր, եւ այդ պաշտոնն արդեն ոչինչ չէր ներկայացնում իրենից: Ասենք, այլ հավակնորդներ չկային էլ:

Երբ դեռ նոր էի վերադարձել կալանավայրից, վերցված էի ոստիկանական հսկողության տակ. ամեն շաբաթ պետք է գնայի ոստիկանություն՝ ստորագրելու, որ քաղաքից չեմ բացակայի: Ամեն ինչ նորմալ էր, միայն Էրեբունու բաժնում մի սրիկա ոստիկան կար՝ ավագ լեյտենանտ, որն անընդհատ բանսարկություններով էր զբաղվում, փորձում էր արհեստական դժվարություններ ստեղծել ինձ համար: Միակ բացասականը դա էր, այլ՝ ավելի վատ բան կալանավայրից վերադառնալուց հետո չեմ զգացել: Հետագայում՝ անկախ Հայաստանում այդ ոստիկանը կոչումներ ու բարձր պաշտոններ ստացավ:

Ամեն ինչ հետեւում է մնացել: Հայաստանն այլեւս անկախ հանրապետություն է: Բայց մի բան պետք է ցավով արձանագրեմ. այս Հայաստանը, որ կա՝ այն Հայաստա -

նը չէ: Ինձ համար սա հիմա շատ ավելի օտար է, քան Սովետական Հայաստանն էր: Ես դեռ սպասում եմ իմ երազած Հայաստանին:

Պատմում է Սուրեն Մելիքյանը

Ամեն ինչ սկսվեց 1963 թ. հունվար ամսին: Մեծ եղբորս հրավերով մեր տուն եկան այն ժամանակ գործող Հայաստանի երիտասարդական միության խորհրդի անդամ, պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ամբիոնի ավագ դասախոս, «Քյոխ» մականունով Զավեն Մարտիրոսյանը եւ նույն ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետի ավագ դասախոս Լեւոն Դարբինյանը: Այդ օրն առաջին անգամ նրանցից լսեցի Հայոց ցեղասպանության, մեր կորցրած երկրի, մեր ժողովրդի ներկա իրական վիճակի մասին: Սա ինձ համար նորություն էր եւ բոլորովին չէր համապատասխանում այն ամենին, ինչ կարդացել էի գրքերում կամ իմացել դպրոցում: Այդ օրն իմ մեջ մեծ հեղափոխություն կատարվեց: Եթե մինչ այդ պատրաստվում էի՝ դպրոցն ավարտելուց հետո գնալ Սուվորովյան ուսումնարան եւ ազնվորեն ու նվիրումով ծառայել Սովետական Միությանը, ապա այդ օրվանից ապագայի հետ կապված բոլոր ծրագրերս փոխվեցին:

Նրանց գնալուց երեք ամիս հետո, Շամշադինի շրջանի Բերդ քաղաքում արդեն կազմակերպել էի յոթ հոգուց բաղկացած «Հույս» պատանեկան ընդհատակյա կազմակերպությունը: Փառք Աստծո, այդ յոթն էլ այսօր կենդանի են: 1965 թ. ապրիլի 24-ին Բերդում կարողացանք մեծ ցույց կազմակերպել: Այդ օրը Բերդի մշակույթի տան մոտ՝ այդ տարիներին հայտնի ծանրորդ Նավթալյանն իր ուժն էր ցուցադրում: Մեծ բազմություն էր հավաքվել: Մենք այդ միջոցառումը ցույցի վերածեցինք: Եղան Եղեռնին նվիրված ելույթներ, բանաստեղծություններ արտասանվեցին:

1966 թ. դպրոցն ավարտելուց հետո մեր «Հույս» կազմակերպությունն ընդլայնեցինք՝ խմբակներ ստեղծելով շրջանի այլ գյուղերում: Մեր տարածքում՝ Կարմիրի, Գյադաբեկի եւ Շամշադինի շրջանների միջեւ երկու ադրբեջանական գյուղ կար: Դրանք գտնվում էին մեր շրջանի մեջ, բայց բնակեցված էին ադրբեջանցիներով: Այդ գյուղերը չունեին ոչ կոլխոզ, ոչ սովխոզ եւ ոչ էլ՝ գյուղական խորհուրդ: Պատերազմի տարիներին աչքից հեռու այդ տարածքներում բնակություն էին հաստատել ադրբեջանցի ղաչաղները, որոնք մեր գյուղերից աղջիկներ առեւանգելով, թալան ու գողություններ անելով էին ապրում: Որոշել էինք այդ գյուղերն այրել ու քշել բնակիչներին:

10-րդ դասարանում մեր խմբակներից մի քանիսը մատնության հետեւանքով բացահայտվեցին: Խմբակներում ներգրավված յոթ գերազանցիկներ, որոնք պետք է կարմիր դիպլոմ ստանային, զրկվեցին դրանից: Մատնիչը հետագայում՝ խորհրդային տարիներին բարձր պաշտոններ էր զբաղեցնում ոստիկանության համակարգում: Անկախ Հայաստանում նույնպես աչքաթող չարվեց, շարունակեց պաշտոնավարել: Բարձր պաշտոններ զբաղեցրեց մաքսայինում, դարձավ Երեւանի քաղաքապետի գլխավոր խորհրդական: Մինչ օրս էլ պաշտոնավարում է:

Ուսումս շարունակելու նպատակով տեղափոխվեցի Երեւան: Ընդունվեցի պոլիտեխնիկական ինստիտուտ: Արդեն մասնաճյուղեր ունեինք Իջեւանում, Կարմիրի շրջանում, սկսեցինք հիմնվել Երեւանում:

«Յոթ հայրենասերների» դատավարությունից հետո Երիտասարդական միության անդամներից ոմանք հրաժարվեցին իրենց պայքարից, իսկ ոմանք էլ հայտարարեցին,

որ անիմաստ է ընդհատակյա գործունեությամբ զբաղվելը, միեւնույն է՝ բռնվելու ենք, եւ հարկավոր է ընդհատակյա կազմակերպված պայքարը փոխարինել անհատական պայքարով: Այսինքն՝ հարկավոր է լավ կրթություն ստանալ, ինտեգրվել սովետական իրականությանը եւ, գործող օրենքի շրջանակներում, հայրենասիրական գործունեություն ծավալել: Նրանց սկսեցինք անվանել «կուլտուրականներ», որովհետեւ շեշտը դնում էին մշակութային գործունեության, հայ մշակույթի քարոզչության վրա ու մերժում օրենքից դուրս կազմակերպված ցանկացած գործունեություն՝ համարելով վտանգավոր ու անիմաստ:

Ուսմանս զուգահեռ՝ վիճակագրական վարչությունում պահակ էի աշխատում, եւ մեր ժողովները տեղի էին ունենում այդ վարչության ավտոպարկում: Մի անգամ ընկերներիցս մեկն ասաց, որ մեզ նման գործող այլ կազմակերպություններ կան, եւ հնարավոր է նրանց հանդիպել: Գնացինք հանդիպման: Հանդիպմանը եկել էին Բուդաղյան Յուրան, Սարգսյան Սերոբը եւ որքան էլ ծիծաղելի կարող է հնչել՝ եղբայրս՝ Վալտեր Մելիքյանը: Ահա այս խմբով էլ հետագայում դատապարտվեցինք: Հանդիպումից հետո վճռեցինք միավորվել: Վալտերենց կազմակերպությունը դեռ շարունակում էր կոչվել Հայաստանի երիտասարդական միություն: Միավորվելուց հետո մեր ընդհանուր կազմակերպությունն անվանեցինք Հայաստանի վերամիավորման միություն:

Խմբակ ունեինք նաեւ Ղարաբաղում: Ահա ղարաբաղյան այդ խմբակին պետք է ուղարկվեին մեր ծրագիրը, կանոնադրությունը եւ այլ նյութեր: Որոշվեց, որ դրանք պետք է տանի Արամայիս Խաչատրյանը: Ես ի սկզբանե կասկածում էի նրան: Ցավոք, հետագայում պարզվեց, որ կասկածներս հիմնազուրկ չեն: Հենց նա էլ մատնել էր մեզ: Այս մատնության հետեւանքով 1971 թ. փետրվարին ձերբակալեցին տղաներին, իսկ ինձ՝ մայիսին: Որպես կալանավորման դեմ բողոք՝ հացադուլ հայտարարեցի, որը տեւեց 12 օր: Տեղի ունեցող հարցաքննություններից արդեն կարողացել էի հասկանալ, թե ինչ է հայտնի նրանց: Որոշեցի, որ մեր ծավալած գործունեության մասին լռելը եւ ցուցմունքներ չտալն իմաստ չունի: Բացի մարդկանց անուններ տալուց, մնացած ամեն ինչի մասին կարելի էր խոսել: Քանի որ չորսս էինք ձերբակալված, հայտարարեցինք, որ հենց այս չորսս էլ եղել ենք, իսկ մնացած բոլորն, ովքեր առնչվել են մեզ, ընդամենը մեր ընկերներն են եւ տեղյակ չեն եղել մեր ընդհատակյա գործունեությունից: Կարողացանք այնպես անել, որ մեզանից բացի՝ էլ ոչ ոք չկալանավորվի: Մեր տղաներից մեկին՝ Գեւորգյան Յուրային, որ գյուղինստիտուտի մեր մասնաճյուղի ղեկավարն էր, ահաբեկեցին, որ ընդունի իր կապը մեզ հետ, ծեծեցին, բայց ոչ մի անուն չտվեց. հեռացրին ինստիտուտից: Սարգսյան Աշոտին ծեծեցին՝ հոգեկան խանգարում ստացավ: Շատերին տարատեսակ հալածանքների ենթարկեցին, բայց այդպես էլ չկարողացան, մեր չորսից բացի, նոր մարդ ներգրավել:

Մեզ դատեցին երկու անգամ. մեկ անգամ՝ 206[1] հոդվածով, իսկ մի քանի ամիս հետո՝ 65, 67 հոդվածներով: Այդպես էլ պարզ չեղավ, թե ինչ խաղ խաղացին. միայն մեզ մեղսագրված 206[1] համեմատաբար մեղմ հոդվածը վերաորակավորեցին 65, 67 հոդվածների: Դատից հետո ՊԱԿ-ի մեկուսարանից մեզ տեղափոխեցին Երեւանի բանտ: 1971-72 թթ. ձմեռը հատկապես ցուրտ էր: Ահա այդ ցուրտ պայմաններում մեզ բաժանեցին խցերի վրա՝ յուրաքանչյուրիս մեկ խուց, առանց ապակի լուսամուտներով, առանց ջեռուցման, առանց տաք ծածկոցների ու առանց ներքնակի: Ծանրագույն պայմաններ էին: Այդ խցերը նախատեսված էին կալանավորներին էտապ տանելուց առաջ կարճ ժամանակահատված, առավելագույնը՝ մեկ-երկու ժամ պահելու համար, բայց մեզ այնտեղ օրերով պահեցին: Ամբողջ գիշեր խցում վազում էինք, որ չսառչենք: Երեւանի բան-

տից մեզ տեղափոխեցին Թբիլիսիի Մետեխի բանտ: Կարծես, դրախտ էինք ընկել: Ե՛վ մաքրությունն էր տեղը, ե՛ւ ուտելիքը: Հետագայում պարզեցինք, որ բանտի պետը՝ իմանալով, որ քաղբանտարկյալներ ենք, մեզ համար հատուկ պայմաններ էր ստեղծել: Տասն օր օգտվել ենք նրա «հյուրասիրությունից»: Ողջ կալանավորման ընթացքում դրանք մեր ամենաերջանիկ օրերն են եղել. չորս՝ միասին, նորմալ ու մաքուր խցում եւ կարգին ուտելիքով: Այնուհետեւ՝ Ռոստովի բանտ, որտեղ յուրաքանչյուր երկու-երեք կալանավորին մեկ մահճակալ էր հասնում: Մի խոսքով, տեսանք էտապը՝ իր ողջ պերճանքով հանդերձ: Էտապը յուրաքանչյուր կալանավորի համար դաժանագույն փորձություն է: Հասանք Մորդովիա, եւ մեզ բաժանեցին տարբեր գաղութների վրա: Մի քանի ամսից մեզ մոտ բերեցին Բաբայան Ասատուրին, Գյունաշյան Շիրակին, Հեքիմյան Գեւորգին եւ իմ հարազատ ընկեր Սերոբ Սարգսյանին, որին բոլորս՝ իր ազնվության ու մաքրության համար շատ էինք սիրում: Սերոբն օրը երեք տուփ մախորկա էր ծխում: Բաբայան Ասատուրը՝ որպես պատերազմի մասնակից եւ հաշմանդամ, չէր աշխատում: Նրան ձերբակալությունից հետո ինչ-որ դեղ էին սրսկել, եւ նրա մարմնի կեսը տարեկան մի քանի անգամ անշարժանում էր: Մենք էինք կերակրում նրան: Փոխարենը՝ առողջ ժամանակ նա էր հետեւում, որ մենք լավ սնվենք: Գաղութի տարածքում՝ ծաղիկների հետ նաեւ կանաչի էր աճեցնում: Մեր բաժին ճաշին կանաչի, մարգարին եւ այլ համեմունքներ էր ավելացնում: Գաղութում մտերմացա այսօր արդեն շատ հայտնի այլազգի քաղբանտարկյալների հետ: Մենք աշխատում էինք կարի արտադրամասում: Հայերից միայն Գյունաշյան Շիրակն էր, որ արտադրամասում չէր աշխատում: Երկու պատերազմի հանցագործների հետ միասին, ամեն օր նախաճաշից հետո նրան տանում էին ոչ հեռու գտնվող կանանց գաղութ՝ հյուսնություն անելու: Ճաշում էր այն - տեղ, ընթրում մեզ հետ:

Պատժաչափս ավարտելուց հետո ազատ արձակվեցի եւ Հայաստան վերադարձա Մոսկվայով: Մոսկվայում ինձ դիմավորեցին Շիմոն Գրիլյուսը, Տատյանա Սերգեեւնա Խոդորովիչը, Գալինա Սալովան, Ելենա Սիրոտենկոն, Գրիգորի Պոդյապոլսկին: Երեւան վերադառնալուց հետո պահպանում էի իմ կապերը մոսկովյան իրավապաշտպանների հետ: Կապը հիմնականում Ելենա Սիրոտենկոյի միջոցով էր իրականացվում:

Հայաստանում ինձ անմիջապես վերցրին վարչական հսկողության տակ: Երեկոյան 8-ից հետո տնից դուրս գալու, քաղաքից բացակայելու, հասարակական վայրերում գտնվելու իրավունք չունեի:

Հայրիկյան Պարույրը կալանավայրից առաջին անգամ վերադառնալուց հետո այցելել էր ծնողներիս: Նա կրկին կալանավորված էր, եւ ես էլ որոշեցի այցելել նրա ծնող - ներին: Գիտեի, որ Սովետաշենը փոքրիկ բնակավայր է, եւ բոլորն իրար ճանաչում են: Տրանսպորտով հասա Սովետաշեն ու պատահական մարդկանցից սկսեցի հետաքրքրվել, թե որն է Պարույրենց տունը: Այդպես էլ ոչ ոք նրանց տան տեղը ցույց չտվեց ինձ: Ձեռնունայն վերադարձա: Հետագայում գտա Սովետաշենում ապրող մի ծանոթի, ասացի, որ ցանկանում եմ այցելել Պարույրի ծնողներին: Այդ տարիներին մարդկանց մեջ վախն այնքան մեծ էր, որ նա առաջարկեց ինձ՝ Սովետաշեն գնալ իրարից առանձին, որ մեզ միասին չտեսնեն: Ասաց, որ ինքը գնալու է առջեւից, ես պետք է հետեւեմ իրեն, Պարույրենց տան մոտ ինքը մի պահ կկանգնի եւ հայացքով կշրջվի դեպի տունն ու կհեռանա: Նրա այդ շարժումներից ես պետք է կռահեի, որ հենց դա է Պարույրենց տունը: Այդպես էլ արեցինք: Ծանոթացա Պարույրի ընտանիքի անդամների հետ: Հայրը՝ Արշավիր Հայրիկյանը, փառավոր մարդ էր: Սիրով եմ հիշում նրան: Այդ տարիներին մարդիկ վախով էին շփվում մեզ հետ: Հարսանիքների, կնունք-ծնունդների, նման այլ

միջոցառումների ժամանակ խուսափում էին մեզանից: Կարծես վախենում էին, թե մեզ հետ երկու բառ փոխանակելու համար իրենց կկալանավորեն: Ցանկություն հայտնեցի գրանցվել քեռուս տանը, ասաց. «Ա՛յ տղա, ի՞նչ է, ուզում ես, որ մեզ տնով-տեղով Սիբիր աքսորե՞ն»: Ոչ ոք չհամաձայնեց գրանցման հարցում աջակցել ինձ: Իր տանն ինձ գրանցեց պոլիտեխնիկական ինստիտուտի դոկտոր Կիմ Հոբարյանը:

Ուսումս շարունակելու համար հանձնեցի համապատասխան քննությունները, բայց երրորդ կուրսից ուսումս շարունակելու փոխարեն՝ ստիպեցին կրկին սկսել առաջին կուրսից: 1975 թվականից հետո, կարելի է ասել, անցել եմ անհատական գործունեության: Կազմակերպությունների մեջ չեմ եղել, միաժամանակ՝ ընկերներիս հետ կապերս չեմ խզել: Դեպքից դեպք ՊԱԿ են հրավիրել, հարցաքննել են Ստեփան Զատիկյանի մոսկովյան մետրոյի պայթեցման գործով: Այդպես շարունակվեց մինչեւ 1988 թվականը, երբ կրկին վերսկսեցի իմ ակտիվ գործունեությունը: Կազմակերպում էի մեր շրջանի սահմանների պաշտպանության գործը, զբաղվում էի զենքի պատրաստմամբ ու հայթայթմամբ. մի խոսքով՝ այն ամենով, ինչով պետք է զբաղվեի: Նոր ժամանակներ էին: Այն մարդիկ, որոնք հեգնում էին մեզ, կազմակերպում էին մեր ընտանիքի անդամների նկատմամբ հալածանքները, դարձան հայրենասերներ ու հայրենիքի պաշտպաններ: Պատկերացրեք, գյուղում այսպիսի դեպք է տեղի ունեցել. երբ մենք՝ եղբայրներով դատապարտված էինք, հայրս տան մոտ նստած է լինում, ինչ-որ սրիկաներ մի դույլ հող են բերում՝ դնում առաջը, ասելով. «Տղաներդ հող են ուզում, ա՛ռ, տար տուն, կեր՝ կշտացիր»: Ղարաբաղ ուզելը, Նախիջեւան ուզելը Հայաստանում հեգնանքի արժանի մի բան էր: Փառք Աստծո, եկան նոր ժամանակներ, եւ մարդիկ փոխվեցին: Սա նաեւ մեր աշխատանքի արդյունքն է:

«Հայաստանի վերամիավորման միության» անդամների գործով կայացված առաջին դատավճիռը

Այս դատավճիռը ՀՎՄ անդամների գործով կայացված առաջին դատավճիռն է, որը հետագայում Պետանվտանգության կոմիտեի պահանջով բեկանվել է: Հրապարակում ենք այս գործով կայացված երկու դատավճիռները: Դրանք համեմատելու դեպքում ընթերցողը հետաքրքիր շատ բան կտեսնի: Օրինակ, թե ինչպես է հնարավոր գործի նույն դրվագները նկարագրելիս անել բացարձակապես տարբեր հետեւություններ կամ թե ինչպես է հնարավոր գործով անցնող մեղադրյալին՝ առանց հիմնավոր պատճառաբանության եւ առանց անգամ այդ մասին որեւէ գրավոր հիշատակման վերածել գործով անցնող վկայի եւ նման շատ այլ փաստեր:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1971թվի հոկտեմբերի 18-ին

Նախագահությամբ՝	**Ն. Մանուկյանի**
Ատենակալներ՝	**1. Բ. Առաքելյանի**
	2. Հ. Տեր –Հովհաննիսյանի
Քարտուղարությամբ՝	**Կ. Մելքոնյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Ա Շլեպչյանի**
դատապաշտպան՝	**Ա. Մոսոյանի**

Քննության առնելով դատական դռնփակ նիստում քրեական գործ ըստ մեղադրան - քի՝

1. Վալտեր Հունանի Մելիքյանի, ծնվել է 1939թվականին Շամշադինի շրջանի Բերդ ավանում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ՍՄԿԿ անդամությունից վտարված սույն գործի կապակցությամբ, ամուսնացած, խնամքին չորս անձ, նախկինում չդատված, մինչեւ կալանավորվելը աշխատել է Շամշադինի ցանցային շրջանի տեսուչ, բնակվել է նույն շրջանի Բերդ ավանում, կալանքի տակ է 1971թվականի փետրվարի 19-ից:

Մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օր 65 հոդվածի 1-ին մասով 67 հոդվածով եւ 232 հոդվածի 1-ին մասով:

2. Յուրիկ Աբգարի Բուդաղյանի, ծնված 1943թվականին Թումանյանի շրջանի Շնոխ գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, անկուսակցական, չամուսնացած, խնամքին ոչ ոք, նախկինում չդատված, մինչեւ կալանավորվելը աշխատել է Երեւանի ջերմոէլեկտրոկայանում որպես ավագ ինժեներ, բնակվել է Երեւանի Բաքվի փողոց նո. 23 տան 53 բնակարանում, կալանքի տակ է 1971թվականի փետրվարի 19-ից:

Մեղադրվում է հայկական ՍՍՀ քր. օր 65հոդ. 1-ին մասով եւ 67 հոդվածով:

3. Սերոբ Հայկի Սարգսյանի, ծնված 1926թվականին Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, թերի բարձրագույն կրթությամբ, անկուսակցական, ամուսնացած, խնամքին ոչ ոք, նախկինում չդատված, մինչեւ կալանավորվելը աշխատել է -------, որպես ավագ ինժեներ, բնակվել է Երեւանի ------ բնակարանում կալանքի տակ է 1971թվականի փետրվարի 19-ից:

Մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օր. 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

4. Սուրեն Բալասանի Մելիքյանի, ծնված 1948 թվականին Շամշադինի շրջանի Բերդ ավանում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ՀամԼԿԵՄ ան-

դամությունից վտարված սույն գործի կապակցությամբ, նախկինում չդատված, մինչեւ կալանավորվելը սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի 2-րդ կուրսում, բնակվել է Երեւանի Զեյթունի ուսանողական թաղամաս 7-րդ մասնաշենք նո. 25 սենյակ, կալանքի տակ է 1971թվականի մայիսի 26-ից:

Մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օր. 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով:

5. Արամայիս վահանի Խաչատրյանի ծնվել է 1951 թվականին Ադրբեջանի ՍՍՀ Մարտունու շրջանի Ախտորաշեն գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ՀամԼԿԵՄ անդամությունից վտարված սույն գործի կապակցությամբ, ամուրի, նախկինում չդատված, մինչեւ կալանավորվելը սովորել է Երեւանի ----- ինստիտուտի------ կուրսում, բնակվել է Երեւան ------ սենյակ: Մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օր. 206[1] հոդվածով:

Դատաքննությամբ, վկաների ցուցմունքներով, իրեղեվ ապացույցներով, ինչպես նաեւ ամբաստանյալների խոստովանությամբ դատական կոլեգիան ապացուցված գտավ հետեւյալը՝

Ամբաստանյալ Սուրեն Մելիքյանը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, մինչեւ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտ ընդունվելը ու այնուհետեւ նշված ինստիտուտի շինարարական ֆակուլտետի առաջին կուրսում սովորելիս, տարբեր անձնավորությունների հետ Լեռնային ղարաբաղի ինքնավար մարզի եւ Նախիջեւանի ինքնավար հանրապետության մասին ունեցած խոսակցությունների ազդեցության տակ, ազգայնական հայացքներով է տրամադրվել:

Այդ հարցի շուրջ մտքեր փոխանակելով համակուրսեցիներից մի քանիսի հետ ամբաստանյալ Ս. Մելիքյանը որոշել է կազմակերպել գաղտնի խումբ, որտեղ ուսումնասիրել Ղարաբաղի ու Նախիջեւանի պատման զարգացման պրոբլեմները ու այնուհետեւ հարց բարձրացնել իշխանության համապատասխան օրգանների առջեւ վերը նշված տերիտորիաները հայաստանին միացնելու առումով:

Այդ նպատակով Ս. Մելքոնյանը 1969 թվականի սեպտեմբեր ամսին կազմակերպել է գաղտնի հավաքույթ, որին մասնակցել են Ը-ն Թ-ն Խ-ն Բ-ն եւ Ա-ն: Նշված անձնավորությունները որոշել են այդ խումբը կոչել «Հայաստանի վերամիավորման միություն» եւ Ս. Մելիքյանին ընտրել են որպես խմբի ղեկավար: Վերջինս նախորոկ մշակել է գաղտնի խմբի գործունեության ծրագիրը, որը հավակույթի ժամանակ քննարկման է առնվել:

Այդ ծրագրում նշված է, որ խմբի հիմնական նպատակն է գործել այն ուղղությամբ, որպեսզի Հայկական ՍՍՀ միացվեն բոլոր այն տերիտորիաները, որոնք նախկինում պատկանել են հայաստանին:

Երկրորդ հավակույթը ամբաստանյալ Ս. Մելիքյանը կազմակերպել է 1969թվականի հոկտեմբեր ամսին:

Դրանից հետո հիվանդության պատճառով ինստիտուտից տարեկետում վերցնելու եւ Շամշադինի Շրջանի Բերդ ավան մեկնելու պատճառով ամբաստանյալ Ս. Մելիքյանը մինչեւ 1970 թվականի հոկտեմբեր ամիսը իր կողմից կազմակերպված գաղտնի խմբի հավակույթներին չի մասնակցել:

Ամբաստանյալներ Վալտեր Մելիքյանը, Յուրիկ Բուդաղյանը եւ Սերոբ Սարգսյանը լինելով ազգային հայացքներով տրամադրված եւ իմանալով, որ ամբաստանյալ Սուրեն Մելիքյանը գաղտնի խումբ է կազմակերպել, որոշել են կապ հաստատել այդ խմբի հետ, որպեսզի կարողանան նրա գործունեությանը տալ իրենց հայացքներին համա -

պատասխանող ուղղություն:

Իրականացնելով այդ մտադրությունը ամբաստանյալ Բուդաղյանը 1969թվականի հոկտեմբեր ամսին վերը նշված խմբի հավակույթում ելույթ է ունեցել ազգային հարցի վերաբերյալ, որի ընթացքում նա Ղարաբաղին եւ Նախիջեւանին վերաբերող հարցը ազգային տեսանկյունով մեկնաբանելով, նշել է, որ խմբի գործունեությունը պետք է օ-ժանդակի այդ տերիտորիաները Հայաստանին միացնելուն:

Դրանից հետո ամբաստանյալ Բուդաղյանը 1969թվականի նոյեմբեր ամսին երկ-րորդ անգամ է մասնակցել այդ խմբի հավաքույթին, որը տեղի է ունեցել իր բնակարա-նում: Նշված հավակույթը կազմակերպվել է ամբաստանյալ Վ. Մելիքյանի նախաձեռնությամբ: Մասնակցելով այդ հավակույթին Վ. Մելիքյանը խմբի մասնակից-ներին ծանոթացրել է իր կողմից մշակված «ՀՎՄ» համառոտ ծրագրի եւ կանոնադրութ-յան հետ:

Ամբաստանյալներ Վ. Մելիքյանը եւ Ս. Սարգսյանը մասնակցել են այդ խմբի հավա-քույթներին 1969թվականի հոկտեմբեր ամսին եւ 1970 թվականի հունվար ամսին:

Նշված հավաքույթների ժամանակ ամբաստանյալ Վ. Մելիքյանը ցուցումներ է տվել խմբի մասնակիցներին, որ նրանք պետք է ուսումնասիրեն հայ ազգի պատմությունը լուսավորող գրականություն: Դրանից հետո ամբաստանյալ Սարգսյանը մինչեւ 1970 թվականի վերջը կապ պահպանելով վերը նշված խմբի համար մի քանի անգամ մաս-նակցել է նրա հավաքույթներին:

Ամբաստանյալներ Վ. Մելիքյանը, Բուդաղյանը եւ Սարգսյանը մասնակցելով գաղտ-նի հավաքույթներին, համոզվել են, որ իրենք միատեսակ հայացքներ ունեն Ղարաբա-ղի եւ Նախիջեւանի տերիտորիաները հայաստանին միացնելու վերաբերյալ:

1970թվականի գարնանից նրանք սկսել են հաճախակի հանդիպումներ ունենալ մի-միանց հետ եւ մտքեր փոխանակել իրենց հետաքրքրող հարցերի շուրջ:

Հանդիպումների ժամանակ նրանք պայմանավորվել են ակտիվացնել իրենց գոր-ծունեությունը որպեսզի կարողանան ազգայնական հայացքներ ունեցող անձնավո-րություններ հայտնաբերել ու նրանցից գաղտնի խմբեր կազմակերպեն:

Այդ հանցավոր մտադրությունը իրականացնելու նպատակով 1970թվականի ամա-ռը ամբաստանյալ Սարգսյանը իր բնակարան է հրավիրել քիմիոկոմբինատի աշխա-տողներ Չ-ին Պ-ին Ջ-ին Ռ-ին եւ ամբաստանյալ Արամայիս Խաչատրյանին: Այդ հավաքույթի ժամանակ Սարգսյանը կարդացել է Վ. Մելիքյանի կողմից մշակված «ՀՎՄ»-ի համառոտ ծրագիրը ու կանոնադրությունը: Վ. Մելիքյանը մասնակցելով հա-վաքույթին իր ելույթում նշել է, որ կազմակերպվող խմբի հիմնական նպատակն է գոր-ծել Ղարաբաղը եւ Նախիջեւանը հայաստանին միացնելու ուղղությամբ:

Վերը հիշատակված անձնավորություններին ամբաստանյալ Սարգսյանը երկրորդ անգամ հավաքի է հրավիրել 1970թվականի օգոստոս ամսին:

Հավաքույթի հաջորդ օրը նրա բոլոր մասնակիցները հայտնել են Սարգսյանին որ ի -րենք չեն ցանկանում մասնակցել գաղտնի խմբի գործունեությանը:

Նշված դեպքից հետո ամբաստանյալ Վ. Մելիքյանը, Բուդաղյանը եւ Սարգսյանը փո-խանակ խորը վերլուծելու իրենց սխալ հայացքները եւ դադարեցնելու ազգայնական հողի վրա գաղտնի խմբակներ ստեղծելու գործունեությունը, նրանք 1970թվականի աշ-նանը որոշել են իրենց անվանել «ՀՎՄ-ի» կենտրոնական խորհրդի անդամներ, բաժա-նելով իրար մեջ պարտականությունները, հետեւյալ կերպ՝ Վ. Մելիքյանը կազմակերպչական հարցերի ղեկավար, Բուդաղյանը քաղաքական աշխատանքի ղե-կավար եւ Սարգսյանը տնտեսական ֆինանսական հարցերի ղեկավար:

Այդ միջոցառումից հետո նրանց հաջողվել է Ս. Մելքոնյանի միջոցով 1970 թվականի հոկտեմբերին կազմակերպել մեկ ազգայնական գաղտնի խումբ, որը բաղկացած է ընդամենը հինգ ուսանողներից: Նշված խումբը մինչեւ 1971թվականի փետրվար ամիսը ունեցել է մի քանի հավաքույթներ:

1970 թվականի գարնանից մինչեւ նույն թվականի աշունը ամբաստանյալներ Վ. Մելիքյանը, Բուդաղյանը եւ Սարգսյանը մի քանի անգամ հանդիպումներ են ունեցել Հակոբ եւ Մուրադ անուններով անձնավորությունների հետ, որոնք հանդես են եկել որպես ազգայնական գաղտնի այլ խմբի ներկայացուցիչներ ու առաջակել բանակցություն վարել խմբերը միացնելու վերաբերյալ:

Վերը նշված ժամանակաշրջանում ամբաստանյալ Վ. Մելիքյանը գործով չբացահայտված անձնավորություններից ստացել է հինգ ձեռագիր նյութեր, որոնք իրենց մեջ պարունակում են սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ: Ստացված նյութերը ամբաստանյալ Սարգսյանը արտագրել է Վ. Մելիքյանի հանձնարարությամբ ու վերադարձրել նրան:

Վ. Մելիքյանը իր մոտ պահելով արտագրված օրինակները, իսկական ձեռագիր նյութերը վերադարձրել է հեղինակին, դրանից հետո նշված ձեռագիր նյութերը տվել է ամբաստանյալ Բուդաղյանին, որպեսզի վերջինս ուսումնասիրի այդպիսիք եւ գրավոր հայտնի իր կարծիքը:

Կատարելով այդ հանձնարարությունը Բուդաղյանը 1970 թվականին գրել է ազգայնական հայացքներ պարունակող «դիտարկումներ» «Մեր ձգտումներն ու նպատակները», «երկու խոսք» եւ «մեր խնդիրները արդի էտապում»:

Նշված հոդվածներում կա զրպարտչական պնդումներ այն մասին, որ իբր սովետական կառավարությունը ոտնակոխ է անում հայ ժողովրդի ազգային զգացմունքները եւ իրավունքները:

Ամբաստանյալ Վ. Մելիքյանը այդ հոդվածները տվել է արտագրելու ամբաստանյալ Սարգսյանին եւ վկա 3-ին; Դրանից հետո նա նշված հոդվածները տվել է ուսումնասիրելու գործով չբացահայտված Հակոբ անունով անձնավորությանը ու այնուհետեւ ետ ստանալով, այդպիսիք պահել է իր մոտ:

1969-70 թվականներին ամբաստանյալ Վ. Մելիքյանը անձամբ գրել է ազգայնական հայացքներ պարունակող երեք հոդված եւ մշակել է «ՀՎՄ-ի» կանոնադրությունը եւ ծրագիրը:

Իր կողմից գրված նյութերը Վ. Մելիքյանը տվել է ծանոթանալու ամբաստանյալներ Բուդաղյանին, Սարգսյանին , Ս. Մելիքյանին, Ա. Խաչատրյանին եւ վկաներ Մ-ին ու Թ-ին:

Ամբաստանյալներ Վ. Մելիքյանը, Բուդաղյանը եւ Սարգսյանը 1970թ. գարնանը բնակչության մեջ տարածելու նպատակով մշակել ու պատրաստել են ազգայնական հայացք պարունակող լուսանկար թռուցիկ, սակայն այդպիսիք չեն տարածել:

Ամբաստանյալ Վ. Մելիքյանը 1969թվականի վերջին Արամայիս Խաչատրյանի միջոցով ծանոթանալով Ստեփանակերտ քաղաքի բնակչուհի, գործով վկա Մուսաելյանի հետ եւ իմանալով, որ վերջինս նույնպես ազգայնական հայացքներ ունի, որոշել է նրա օժանդակությամբ Ղարաբաղում գաղտնի խումբ կազմակերպել: Այդ նպատակով Մուսաելյանին ուղարկելու համար 1970թվականի աշնանը, ամբաստանյալ Վ. Մելիքյանը գործով վկա Ō-ի միջոցով արտագրել է տվել իրեն եւ Բուդաղյանի կողմից գրած տաս ձեռագիր նյութեր:

Միաժամանակ նա հանձնարարել է ամբաստանյալ Ս. Մելիքյանին այդ նյութերը Խա -

չատրյանի միջոցով ուղարկել Ստեփանակերտ Մուսաելյանին:

1970թվականի սեպտեմբեր ամսին, վերադառնալով Երեւան քաղաք եւ շարունակելով պարապմունքները ինստիտուտում, ամբաստանյալ Ս. Մելիքյանը վերսկսել է իր գործունեությունը գաղտնի խմբում:

Նա 1970թվականի հոկտեմբեր ամսին կազմակերպել է հավաքույթ, որտեղ քննարկվել է գաղտնի խմբի գուծունեությունը ակտիվացնելու մասին: Այդ հավաքույթին մասնակցել է նաեւ ամբաստանյալ Սարգսյանը որը խմբի մասնակիցներից պահանջել է առաջադրանքներ կատարելու հարցում լինել պարտաճանաչ:

Նույն ամսին Ս. Մելիքյանը պոլիտեխնիկական եւ զովետ ինստիտուտների մի քանի ուսանողներից կազմակերպել է գաղտնի մեկ այլ խումբ ու հավաքույթներին մասնակից է դարձրել վկաներ Ջ-ին Ղ-ին Ճ-ին Մ-ին եւ ամբաստանյալ Խաչատրյանին:

1970 թվականի հոկտեմբեր ամսից մինչեւ 1971 թվականի փետրվար ամիսը ամբաստանյալ Ս. Մելիքյանը ակտիվացնելով իր գուծունեությունը օժանդակել է ամբաստանյալներ Բուդաղյանի եւ Վ. Մելիքյանի կողմից գրված քաղաքականապես վտանգավոր հրահրիչ բովանդակություն պարունակող ձեռագիր նյութերի տարածմանը:

Այսպես, նշված ժամանակահատվածում ամբաստանյալ Ս. Մելիքյանը գործով վկա Ս-ինյանի միջոցով գաղտնի հավաքույթների մասնակիցներին ծանոթացրել է «ՀՎՄ» ծրագրին եւ կանոնադրությանը, «ՀՎՄ»-ի անդամի երդման, «հիշեցում հայրենասերներին» եւ «մեր խնդիրները արդի էտապում» ձեռագիր նյութերի հետ:

Բացի դրանից 1970 թվականի հոկտեմբեր ամսից լինելով «ՀՎՄ»-ի կենտրոնական խորհրդի կազմում, Ս. Մելիքյանը գործով ամբաստանյալ Սարգսյանի մասնակցությամբ, Խաչատրյանի միջոցով 1970 թվականի նոյեմբերի 6-ին Ստեփանակերտ քաղաք Նինա Մուսաելյանին հանձնելու համար տասը ձեռագիր նյութեր, որոնք պատրաստել էր Վ. Մելիքյանը:

Ամբաստանյալ Խաչատրյանը 1969-70 թվականներին աշխատելով Երեւան ---------- , հաճախակի զրույցներ է ունեցել --------- նախկին աշխատողներ, գործով ամբաստանյալներ Վ. Մելիքյանի եւ Սարգսյանի հետ , որոնց ընթացքում վերջիններս հայտնել են իրենց ձեռնարկները լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի տերիտորիաները հայաստանին միացնելու վերաբերյալ:

Ընկնելով ամբաստանյալներ Վ. Մելիքյանի եւ Սարգսյանի ազգայնական հայացքների ազդեցության տակ, ամբաստանյալ Խաչատրյանը ընդունել է նրանց առաջարկությունը գաղտնի խմբի հավաքույթներին մասնակցելու մասին:

Նա 1970 թվականի հուլիս ամսին մասնակցել է գաղտնի հավաքույթին, որ տեղի է ունեցել ամբաստանյալ Սարգսյանի բնակարանում:

Նույն թվականի աշնանը ընդունվելով Երեւանի ----- ինստիտուտ սովորելու Խա - չատրյանը ազատվել է --------- աշխատելուց եւ դադարել է ամբաստնյալ Սարգսյանի կողմից կազմակերպված հավաքույթներին մասնակցել: Սակայն մնալով ազգայնական հայացողության ազդեցության տակ Խաչատրյանը 1970 թվականի հոկտեմբեր ամսից մինչեւ նույն թվականի դեկտեմբեր ամիսը մի քանի անգամ մասնակցել է ամբաստանյալ Վ. Մելիքյանի կազմակերպած հավաքույթներին:

Վերը նշված ժամանակաշրջանում ամբաստանյալ Խաչատրյանը կատարել է նաեւ այլ գործողություններ, որոնցով օժանդակել է գաղտնի խմբի կազմակերպելուն եւ սովետական իրականությանը արատավորող ձեռագիր նյութեր տարածմանը:

Այսպես 1969 թվականի ամառվա արձակուրդի ժամանկ գնալով Ստեփանակերտ ծնողների մոտ, ամբաստանյալ Խաչատրյանը գործով վկա Մուսաելյանին հայտնել է,

որ իբր Երեւանում կան գաղտնի խմբեր, որոնք զբաղվում են Լեռնային Ղարաբաղը հայաստանին միացնելու հարցով: Դրանից հետո 1969 թ. դեկտեմբերին, երբ Մուսաելյանը իր անձնական գործով եկել է Երեւան քաղաք Խաչատրյանը նրան ծանոթացրել է ամբաստանյալ Վ. Մելիքյանի հետ:

Վերջինս հավաստիացրել է նրան Ղարաբաղի հարցով զբաղվող խմբերի գոյության մասին:

Ամբաստանյալ Խաչատրյանը իմանալով, որ Մուսաելյանը ցանկանում է օժանդակել վերը նշված խմբակների գործունեությանը, նամակագրությամբ կապ է պահպանել նրա հետ եւ այդ մասին հայտնելով Վ. Մելիքյանին առաջարկել է անհրաժեշտ փաստաթղթեր ուղարկել ստեփանակերտ Նինային:

1970 թվականի նոյեմբերի 6-ին Խաչատրյանը հանդիպելով ամբաստանյալներ Ս. Մելիքյանի եւ Սարգսյանի հետ, նրանցից ստացել է ամբաստանյալ Վ. Մելիքյանի կողմից պատրաստված ձեռագիր նյութեր, որոնք նույն օրը տարել է Ստեփանակերտ եւ հանձնել Մուսաելյանին, իսկ 1971 թվականի փետրվար ամսին այդ նյութերը հետ է վերադարձրել Երեւան:

Դատաքննության ընթացքում ամբաստանյալներ Վ. Մելիքյանը, Բուդաղյանը եւ Սարգսյանը ընդունել են, որ իրենք 1969 թվականի աշնանից մինչեւ 1970 թվականի հոկտեմբեր ամիսը մի քանի անգամ մասնակցել են ամբաստանյալ Ս. Մելիքյանի կողմից կազմակերպած հավաքույթներին:

Նրանք հաստատել են, որ լինելով «ՀՎՄ»-ի կենտրոնական խորհրդի» կազմում միջոցներ են ձեռնարկել գաղտնի խմբեր կազմակերպելու ուղղությամբ եւ հանդիպումներ են ունեցել գործով չբացահայտված անձնավորությունների հետ, որոնք ներկայացել են որպես գաղտնի այլ խմբի ներկայացուցիչներ:

Ամբաստնյալ Վ. Մելիքյանը խոստովանել է, որ չբացահայտված անձնավորություններից ստացել է ձեռագիր նյութեր, որոնք իրենց մեջ պարունակել են քաղաքականապես վտանգավոր, զրպարտչական հերյուրանքներ:

Ամբաստանյալ Սարգսյանը ընդունել է, որ այդ ձեռագիր նյութերից չորսը ինքը արտագրել է Վ. Մելիքյանի հանձնարարությամբ:

Ամբաստնյալներ Բուդաղյանը եւ Վ. Մելիքյանը իրենց հանցավոր են ճանաչել նաեւ նրանում, որ 1969-70 թվականներին գրել ու տարածել են ազգայնական հայացքներ պարունակող մի քանի հոդվածներ, որոնց մեջ կա զրպարտչական պնդումներ:

Ամբաստանյալներ Վ. Մելիքյանին, Բուդաղյանին եւ Սարգսյանին վերագրված արարքը, բացի իրենց խոստովանական ցուցմունքներից հիմնավորված նաեւ հետեւյալ ապացույցներով:

Վկաներ Թ-ն Բ-ն եւ Խ-ն հաստատել են, որ 1969 թ. աշնանը ամբաստնյալներ Վ. Մելիքյանը եւ Սարգսյանը մասնակցել են գաղտնի խմբի հավքույթներին:

Վկաներ Պ-ն Ջ-ն Ռ-ն եւ ամբաստանյալ Խաչատրյանը ցուցմունք են տվել, որ 1970թ. ամառը Վ. Մելիքյանը եւ Սարգսյանը հավաքույթ են կազմակերպել, որտեղ կարդացել են «ՀՎՄ»-ի ծրագիրը եւ կանոնադրությունը:

Ամբաստանյալ Ս. Մելիքյանը հաստատել է, որ 1969 թվականի ------ ամբաստանյալ Բուդաղյանը ելույթ է ունեցել գաղտնի խմբի հավաքույթին:

Ամբաստանյալ Սարգսյանը եւ վկա Ծ-ն ցուցմունք են տվել, որ 1970 թվականի աշնանը ամբաստանյալ Վ. Մելիքյանը իրենց ձեռագիր նյութեր է տվել արտագրելու:

Ամբաստանյալ Սարգսյանը եւ Ս. Մելիքյանը հաստատել են, որ 1970 թվականի աշ - նանը Բուդաղյանը իրենց ներկայությամբ կարդացել է «մեր խնդիրները արդի էտա -

պում» վերնագրով հոդված:

Ամբաստանյալ Ս. Մելիքյանը հաստատել է, որ գործով վկա Մուսաելյանին ձեռագիր նյութեր ուղարկելու մասին իրեն հանձնարարություն է տվել ամբաստանյալ Վ. Մելիքյանը:

Ինչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ դատական նիստում ամբաստանյալ Ս. Մելիքյանը ընդունել է, որ 1969 թվականի սեպտեմբեր ամսից մինչեւ 1971 թվականի փետրվար ամիսը ինքը մի քանի անգամ գաղտնի հավաքույթներ է կազմակերպել:

Նա ընդունել է նաեւ, որ քաղաքականապես վտանգավոր բովանդակություն պարունակող ձեռագիր նյութեր է ուղարկել Ստեփանակերտ քաղաք Մուսաելյանին:

Ամբաստանյալ Ս. Մելիքյանին վերագրված արարքը բացի իրեն խոստովանական ցուցմունքներից հիմնավորված է նաեւ հետեւյալ ապացույցներով:

Վկաներ՝ Ը-ն Թ-ն Խ-ն Բ-ն Ջ-ն Ճ-ն Շ-ն եւ Յ-ն հաստատել են, որ 1969-70 թվական - ներին ամբաստանյալ Ս. Մելիքյանը հավաքույթներ է կազմակերպել, որտեղ խոսվել է Ղարաբաղը եւ Նախիջեւանը հայաստանին միացնելու մասին, նույնանման ցուցմունք են տվել նաեւ ամբաստնյալներ Բուդաղյանը, Սարգսյանը, Խաչատրյանը եւ Վ. Մելիքյանը:

Ամբաստանյալ Խաչատրյանը ցուցմունք է տվել, որ 1970 թվականի նոյեմբերի 6-ին Մուսայելյանին տանելու համար ձեռագիր նյութեր ստացել է ամբաստանյալ Ս. Մելիքյանից: Վկա Մ-ն հաստատել է, որ Ս. Մելիքյանը իրեն ձեռագիր նյութեր է տվել որոնք կարդացվել են հավաքույթների ժամանակ:

Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Խաչատրյանը իրեն հանցավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում քր. օրի 206[1] հոդվածով:

Նրան վերագրված արարքը բացի իր խոստովանական ցուցմունքներից հիմնավորված են նաեւ հետեւյալ ապացույցներով:

Վկաներ Չ-ն Պ-ն եւ Ջ-ն հաստատել են, որ 1970 թ. հուլիս ամսին Խաչատրյանը մասնակցել է ամբաստանյալ Սարգսյանի բնակարանում տեղի ունեցած հավաքույթին:

Վկաներ Ջ-ն եւ Ճ-ն ցուցմունք եւ տվել, որ 1970թ. հոկտեմբեր ամսից մինչեւ նույն թվականի դեկտեմբեր ամիսը ամբաստանյալ Խաչատրյանը մասնակցել է Ս. Մելիքյա - նի կողմից կազմակերպված հավաքույթներին:

Վկա Մուսաելյանը ցուցմունք է տվել, որ 1970 թվականի նոյեմբեր ամսին Խաչատրյանը բերել է Ստեփանակերտ ու իրեն է հանձնել ձեռագիր նյութեր:

Վերը նշված վկաների ցուցմունքները հաստատել են ամբաստանյալներ Ս. Մելիքյանը եւ Սարգսյանը:

Դատական կոլեգիան վերլուծելով նախաքննությամբ եւ դատաքննությամբ ձեռք բերված տվյալները գտնում է, որ ամբաստանյալներ Վալտեր եւ Սուրեն Մելիքյաններին, Սարգսյանին եւ Բուդաղյանին առաջադրված մեղադրանքը քր. օր 65հոդ. 1-ին մասով եւ 67 հոդվածից պետք է վերաորակել քր. օր 206[1] հոդ. հետեւյալ պատճառաբանությամբ:

Ամբաստանյալներ Սուրեն եւ Վալտեր Մելիքյանը Սարգսյանը եւ Բուդաղյանը ինչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ դատական նիստում բացատրել են, որ գաղտնի խմբակների հավաքույթներին մասնակցելով եւ ազգայնական հայացքներ պարունակող հոդվածներ գրելով ու տարածելով իրենք սովետական իշխանությունը քայքայելու ու թուլացնելու մտադրություն չեն ունեցել:

Ամբաստանյալների կողմից բերված այս առարկությունը գործի տվյալներով չի

հերքված:

Նախաքննությամբ եւ դատաքննությամբ ձեռք բերված տվյալներով չի հիմնավոր - ված որ ամբաստանյալներ Սուրեն եւ Վալտեր Մելիքյանները, Բուդաղյանը եւ Սարգսյանը սովետական իշխանությունը քայքայելու կամ թուլացնելու մտադրություն են ունեցել:

Գործի տվյալներով հիմնավորված է , որ ամբաստանյալների կողմից սովետական իշխանության նկատմամբ թշնամաբար տրամադրված լինելու համար ոչ մի առիթ չի եղել: Նրանք բոլորը ծնվել եւ դաստիարակվել են սովետական ընտանիքում:

Վ. Մելիքյանը եւ Բուդաղյանը պոլիտեխնիկական ինստիտուտը ավարտելուց հետո, անցնելով աշխատանքի կարճ ժամանակաընթացքում հասել են ավագ ինժեների պաշտոնի:

Ամբաստանյալ Սարգսյանը 25 տարի անընդմեջ աշխատելով Երեւանի Կիրովի անվան գործարանում տեխնիկի պաշտոնից հասել է արտադրամասի ավագ ինժեների պաշտոնի:

Ամբաստանյալ Սուրեն Մելիքյանը ընդունվել է սովորելու Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտ:

Նրանք բոլորը աշխատանքում եւ ուսման մեջ բնութագրվում են դրական առումով:

Գործով հարցաքննված վկաների ցուցմունքներով չի հիմնավորված որ ամբաստանյալներ Սուրեն եւ Վալտեր Մելիքյանները Բուդաղյանը եւ Սարգսյանը հավաքույթներին մասնակցելիս սովետական իշխանությունը քայքայելու կամ թուլացնելու կոչեր են արել:

Այն հանգամանքը, որ ամբաստանյալները սովետական իշխանության դեմ պայքարելու մտադրություն չեն ունեցել հիմնավորված է նաեւ նրանով, որ մինչեւ կալանավորվելը, նրանք խզել են իրենց կապերը գաղտնի խմբերի հետ: Այդ նպատակով Վ. Մելիքյանը 1970 թվականի հոկտեմբեր ամսին Երեւան քաղաքից տեղափոխվել է բնակվելու Շամշադինի շրջանի Բերդ ավան եւ այնտեղ ընդունվել աշխատանքի:

Ամբաստանյալ Սուրեն Մելիքյանը 1971 թվականի փետրվար ամսին իր կողմից կազմակերպված գաղտնի խմբի հավաքույթի ժամանակ հայտնել է, որ ինքը հրաժարվում է իր ազգայնական հայացքներից եւ այլեւս չի մասնակցի հավաքույթներին:

Միաժամանակ գործի տվյալներով հիմնավորված է, որ ամբաստանյալներ Բուդաղյանը, Վալտեր Մելիքյանը եւ Սարգսյանը առօրյա կյանքում եւ աշխատանքի վայրում հանդիպելով թերությունների եւ դժվարությունների փոխանակ քննադատաբար մոտենալու այդ երեւույթներին եւ հաղթահարելու, նրանք ընդանրացրել են այդպիսի առանձին դեպքերը եւ իրենց կողմից գրած ձեռագիր նյութերում թույլ տվել սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող արտահայտություններ: Սակայն հաշվի առնելով, որ այդ արարքը նրանք կատարել են առանց սովետական իշխանությունը քայքայելու կամ թուլացնելու մտադրություն ունենալու, հետեւապես նրանց արարքը համապատասխանում է Հայկական ՍՍՀ քր. օր 206[1] հոդվածով նախատեսնված նշավակցներին:

Ամբաստանյալ Վալտեր Մելիքյանին մեղադրանք է առաջադրվել նաեւ ՀՍՍՀ քր. օր 232 հոդ. 1-ին մասով: դատական կոլեգիան գտավ, որ գործի տվյալներով այդ մեղադրանքը Վալտեր Մելիքյանի նկատմամբ չի հիմնավորված հետեւյալ պատճառաբանությամբ:

Վերը նշված հոդվածով Վ. Մելիքյանին մեղադրանք առաջադրելու համար քննչական օրգանի կողմից հիմք է ընդունվել միայն նրա կողմից տրված ցուցմունքները այն

մասին, որ իբր գործով հայտնաբերված ինքնաշեն հրազենը ինքը վերցրել է գործով չբացահայտված անձնավորությունից եւ առանց պատշաճ թույլտվության պահել իրեն մոտ:

Դատական նիստում Վ. Մելիքյանը հրաժարվեց վերը նշված ցուցմունքներից եւ հայտնեց, որ ինքը ինքնաշեն հրազենի գոյության մասին իմացել է միայն խուզարկության ժամանակ այդպիսին հայտնաբերելուց հետո:

Նախաքննության ժամանակ տված ցուցմունքները նա պատճառաբանեց նրանով, որ տալով օգնվոր ցուցմունքներ ցանկացել է իր եղբայր՝ գործով ամբաստանյալ Սուրեն Մելիքյանին զերծ պահել քրեական պատասխանատվությունից:

Ամբաստանյալ Սուրեն Մելիքյանը ինչպես նախաքննության ընթացքում այնպես էլ դատական նիստում պնդել է որ գործով հայտնաբերված ինքնաշեն հրազենը ինքն է ձեռք բերել եւ պահել առանց Վ. Մելիքյանի գիտության:

Վկա Ծ-ն հաստատել է, որ վերը հիշատակված հրազենը ինքը տեսել է Սուրեն Մելիքյանի մոտ:

Դատական կոլեգիան գտավ, որ նման պայմաններում Վ. Մելիքյանին քր. օր 232 հոդ. 1-ին մասով պետք է ճանաչել անպարտ այդ հոդվածով առաջադրված մեղադրանքը չապացուցվելու պատճառով:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով Հայկական ՍՍՀ քրեական դատ օրենսգրքի 293 եւ 294 հոդվածներով դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Վալտեր Հունանի Մելիքյանին, Յուրիկ Աբգարի Բուդաղյանին, Սերոբ Հայկի Սարգսյանին, Սուրեն Բալասանի Մելիքյանին եւ Արամայիս Վահանի Խաչատրյանին հանցավոր ճանաչել քր. օր 206[1] հոդվածով եւ ենթարկել ազատազրկման ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, Վալտեր Մելիքյանին երեք տարի, Յուրիկ Բուդաղյանին երեք տարի, Սերոբ Սարգսյանին երկու տարի, Սուրեն Մելիքյանին երկու տարի եւ Արամայիս Խաչատրյանին մեկ տարի ժամանակով:

Կալանքի սկիզբը հաշվել Վալտեր Մելիքյանին, Բուդաղյանին եւ Սարգսյանին 1971 թվականի փետրվարի 19-ից: Սուրեն Մելիքյանին 1971թվականի մայիսի 26-ից եւ Արամայիս Խաչատրյանին 1971 թվականի փետրվարի 6-ից:

Վալտեր Հունանի Մելիքյանին քր. օր 232 հոդ. 1-մ. ճանաչել անպարտ եւ դատարանով արդարացված այդ հոդվածով առաջադրված մեղադրանքը չապացուցվելու պատճառով: Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով գանգատարկման եւ բողոքարկման ենթակա չէ:

Նախագահ՝ **Մանուկյան**
Ժողատենակալներ՝ ստորագրություններ
Իսկականի հետ ճիշտ է
Գործով նախագահող՝ **ՄԱՆՈՒԿՅԱՆ Ն.**

20/10-71թ.

«Հայաստանի վերամիավորման միության» անդամների գործով կայացված երկրորդ դատավճիռը

ՀՎՄ գործով կայացած այս երկրորդ դատավճիռը՝ շատ դատավճիռների նման աչքի է ընկնում իր թափթփվածությամբ, սխալներով ու հակասություններով: Գործով մեղադրյալ Սուրեն Մելիքյանին հիշատակելիս՝ նրան մեկ որպես Միքայելյան են հիշատակում, մեկ՝ որպես Սամվել: Ե՛վ առաջին, ե՛ւ երկրորդ դատավճիռները տպագրում ենք այն վիճակում, ինչպես ստացել ենք ԱԱԾ-ից: Ջնջված բոլոր վկաների անունների փոխարեն կամայական տառեր են նշված: Միայն մեկ վկայի՝ Նինա Մուսայելյանի անունն ենք կարողացել վերականգնել:

գործ նո. 42
1972-թ

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1972-թ. մարտի 20-ին

Նախագահությամբ՝	**Ա. Եղիազարյանի**
Ատենակալներ՝	**1. Հ. Մ. Ալեքսանյանի**
	2. Պ. Հ. Ղազարյանի
Քարտուղարությամբ՝	**Ս. Հովհաննիսյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Գ. Ղալումյանի**
Դատապաշտպաններ՝	**Մոսոյանի, Մուսինյանի**

Քննության առնելով դռնփակ դատական նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի՝

1. Վալտեր Հունանի Մելիքյանի - ծնվել է 1939թ. Շամշադինի շրջանի Բերդ ավանում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ՍՄԿԿ վտարված է սույն գործի կապակցությամբ, ամուսնացած, խնամքին 3 - երեխա, նախկինում չդատ - ված, սովետական բանակում չի ծառայել, ֆիզիկապես առողջ, մինչեւ կալանավորվե - լը բնակվել է Բերդ ավանում: Սույն գործով կալանքի տակ է 1971-թվ. փետրվարի 19-ից:
Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր.-ի 65-հոդ. առաջին մասով եւ 67-հոդվածով:

2. Յուրի Աբգարի Բուդաղյանի - ծնված 1943թվ. Թումանյանի շրջանի Շնոխ գյուղում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, բարձրագույն կրթությամբ, անկուսակցա - կան, ամուրի, խնամքին 1-ին կարգի հաշմանդամ մայրը, նախկինում չդատված, աշխատել է Երեւանի ջերմոէլեկտրոկայանում որպես ավագ ինժեներ, բնակվել է Երե-

ւանի Բաքվի փողոց նո. 28 տան 53 բնակարանում, սովետական բանակում չի ծառայել, ֆիզիկապես առողջ, սույն գործով կալանքի տակ է 1971-թ. փետրվարի 29-ից սակայն կալանքի սանկցիան դատախազի կողմից տրվել է 1971-թ. փետրվարի 22-ից:

Մեղադրվում է հայկական ՍՍՀ քր. օր 65հոդ. 1-ին մասով եւ 67 հոդվածով:

3. Սերոբ Հայկի Սարգսյանի, ծնվել է 1926 թ. Երեւան քաղաքում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, թերի բարձրագույն կրթությամբ, անկուսակցական, ամուսնացած, խնամքին մեկ անձ, նախկինում չդատված, մինչեւ կալանավորվելը աշխատել է Երեւանի Կիրովի անվան քիմկոմբինատում, որպես ավագ ինժեներ, սովետական բանակում չի ծառայել, բնակվել է Երեւանի քաղաքի մայիսի 9-ի փողոցի 9-շենքի 15- բնակարանում, ֆիզիկապես առողջ, սույն գործով կալանքի սանկցիա է տրվել 1971թվականի փետրվարի 22-ին:

Մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օր.-ի 65 հոդ. առաջին 1-ին մասով եւ 67 հոդվածով:

4. Սուրեն Բալասանի Մելիքյանի – ծնվել է 1948 – թ. Շամշադինի շրջանի Բերդ ավանում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, միջնակարգ կրթությամբ, ՀԱՄԼԿԵՄ անդամությունից վտարվել է սույն գործի կապակցությամբ, ամուրի, խնամքին ոչ-ոք, նախկինում չդատված, մինչեւ կալանավորվելը սովորել է Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի 2-րդ կուրսում, սովետական բանակում չի ծառայել, բնակվել է Երեւանի Զեյթունի ուսանողական թաղամաս 7-րդ մասնաշենք 25 սենյակում, կալանքի սանկցիա է տրվել 1971-թ. մայիսի 25-ին, սակայն կալանավորվել է մայիսի 26-ին:

Մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օր.-ի 65 հոդ. առաջին մասով եւ 67 հոդվածով:

Դատաքննությամբ, հարցաքննված բոլոր վկաների ցուցմունքներով, քրեական գործին կցված իրեղեն ապացույցներով, ձեռագրային փորձագետի եզրակացություններով եւ ամբաստանյալների ինքնախոստովանությամբ քրեական գործերի դատական կոլեգիան ապացուցված է համարում հետեւյալը՝

Դեռ միջնակարգ դպրոցում սովորելիս, ամբաստանյալ Սուրեն Մելիքյանը տարված լինելով հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ սկսել է ընթերցել այնպիսի գրականություն, որին հասկանալու եւ ճիշտ կողմնորոշվելու համար նա համապատասխան պատրաստակամություն չի ունեցել:

Ընդհանրապես տարված լինելով միմիայն ձեւով ազգային սահմանափակ մտքերով, առանց հաշվի առնելու պատմական իրադրությունները սխալ եզրակացության է հանգել այն մասին, որ իբր հայ ժողովրդի շահերը նույնիսկ Խորհրդային Հայաստանում ոտնահարված են, որի պատճառով խնդիր է դրել իր առաջ պայքարել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի եւ նախիջեւանի ինքնավար հանրապետության տերիտորիաների որոշ մասը Հայաստանին միացնելու համար:

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը ընդունվելուց հետո, ամբաստանյալ Սուրեն Մելիքյանը համապատասխան զրույցներ ունենալով իրեն սխալ հայացքներին հարող որոշ ուսանողների հետ, 1969-թ. սեպտեմբեր ամսին գաղտնի խմբակ է կազմակերպել, նրանում հավաքագրելով վկաներ՝ Բ-ին, Գ-ին, Դ-ին, Ե-ին եւ Զ-ին ու գաղտնի հավաքույթ է անցկացրել Երեւանի վիճակագրական վարչության ավտոպարկում, որտեղ ինքը աշխատել է գիշերային պահակ:

Այդ հավաքույթների ժամանակ Սուրեն Միքաելյանի առաջարկությամբ խումբը ան-

վանվել է «Հայաստանի վերամիավորման միություն» այսինքն «ՀՎՄ» եւ ինքն էլ ընտրվել է խմբի ղեկավար:

Գործով մյուս ամբաստանյալներ Յուրիկ Բուդաղյանը, Սերոբ Սարգսյանը եւ Վալտեր Մելիքյանը, որը Սամվել Մելիքյանի հարազատ եղբայրն է, նույնպես ուղիներ են փնտրել գաղտնի խմբակներ կազմակերպել «ինչպես ուսանողության» այնպես էլ Կիրովի անվան քիմիական կոմբինատի բանվորներից:

Ինչպես եւ Սամվել Մելիքյանը, գործով մյուս ամբաստանյալներ Յուրիկ Բուդաղյանը, Սարգսյանը եւ Վալտեր Մելիքյանը իրենց համարելով իբր հայրենասերներ, այսինքն այդ անվան քողի տակ առանց որեւէ հիմքի, միանգամայն սխալ հետեւության են հանգել այն մասին, որ հայ ժողովուրդը ասսիմիլիացիայի է ենթարկված, որ իբր մեզ մոտ բացակայում է ազատությունը եւ դեմոկրատիան ու այդ թեմաների շուրջը զրույցներ ունենալով տարբեր մարդկանց հետ առաջարկել են նրանց ընդգրկվել գաղտնի խմբակներում եւ մասնակցել հավաքույթներին:

Այդ մասին տեղյակ լինելով Սուրեն Մելիքյանը, որպես արդեն գոյություն ունեցող գաղտնի խմբակի ղեկավար 1969-թ. հոկտեմբերին առաջարկել է ամբաստանյալ Յուրիկ Բուդաղյանին ելույթ ունենալ խմբի հավաքույթին ազգային հարցի շուրջը թեմայով, որը եւ կատարվել է Բուդաղյանի կողմից: Այդ երկրորդ հավաքույթը, ինչպես եւ առաջին անգամ տեղի է ունեցել ավտոպարկում, որին մասնակցել են արդեն իսկ թվարկված ուսանողները եւ լրացուցիչ ներգրավված Ե-ն, Ը-ն եւ Թ-ն:

Ամբաստանյալներ Վալտեր Մելիքյանը, Յուրիկ Բուդաղյանը եւ Սերոբ Սարգսյանը նախապես ծրագրած լինելով գաղտնի կազմակերպություն ստեղծել, որոշել են իրենք նույնպես մասնակցել Սուրեն Մելիքյանի խմբի հավաքույթներին, փաստորեն ուղղություն տալ նրանց հետագա գործունեությանը թույլ չտալով, որ նրանք կազմալուծվեն:

Այդ խմբի երրորդ հավաքույթը տեղի է ունեցել 1969-թ. հոկտեմբերի վերջին, ամբաստանյալ Յուրիկ Բուդաղյանի բնակարանում, որին մասնակցել են նաեւ Վալտեր Մելիքյանը եւ Սերոբ Սարգսյանը:

Ելույթ ունենալով Վալտերը պահանջել է խմբի անդամ ուսանողներից կազմակերպված լինել եւ ընթերցել հայ ազգի պատմությանը վերաբերող գրքեր: Նա թվարկել է այդպիսի գրականություն, որը հագեցած է ազգայնական բովանդակությամբ ու կյանքի փորձ եւ համապատասխան պատրաստակամություն չունեցող երիտասարդներին, բացիթյուրիմացության մեջ գցելուց, այլ օգուտ տալ նրանց չէր կարող:

Դատաքննության ընթացքում Սուրեն Մելիքյանը ցուցմունք տվեց, որ նախապես նպատակ ունենալով գաղտնի խմբակներից կազմակերպություն ստեղծել, առաջարկել է իր խմբի անդամներին անդամավճարներ մուծել յուրաքանչյուր ամիս մեկ ռուբլու սահմաններում եւ անկետաներ լրացնել փակցրած լուսանկարներով ու հանձնել իրենց հաշվառում անելու համար, կատարելով իրենց ղեկավարի պահանջը գաղտնի «ՀՎՄ» միության անդամավճարներ եւ մուծել Բ-ն-2 ռուբլի, Զ-ն 3-ռուբլի, Դ-ն 2-ռուբլի, Գ-ն, Ջ-ն, Ի-ն եւ ուրիշներ:

«Հայաստանի վերամիավորման միության» անդամների սահմանած անկետաներ են լրացրել, լուսանկարները փակցրել եւ հանձնել են Սուրեն Մելիքյանին Զ-ն, Լ-ն, Խ-ն, Ծ-ն, Կ-ն, Հ-ն, Ձ-ն եւ Ղ-ն (հատ. 4 գթ. 56-73):

Քանի որ հիվանդության պատճառով Սուրեն Մելիքյանը ինստիտուտից տարեկետում է վերցրել գյուղ գնալու համար, խմբի հետագա հավաքույթների ժամանակ, ժամանակավոր ղեկավար է թողնվել գործով վկա Բ-ն, իսկ ամբաստանյալ Սերոբ Սարգսյանին հանձնարարվել է հսկողություն սահմանել, որ Ս. Մելիքյանի բացակա-

յության ժամանակ գաղտնի խմբակը չդադարի գործունեությունից ընդհանրապես:

Սուրեն Մելիքյանը գյուղ է մեկնել 1969-թ. դեկտեմբերին ու այնտեղ է գտնվել մինչեւ 1970-թ. օգոստոս ամիսը:

Նրա բացակայությունից հետո Սուրեն Մելիքյանի գաղտնի հավաքույթներին մի քանի անգամ մասնակցել են Սերոբ Սարգսյանը, Յուրիկ Բուդաղյանը եւ Վալտեր Մելիքյանը: Նրանք նախապես որոշել են չցրել խումբը: Ընդհակառակը, ավելի ակտիվացնել գործունեությունը, հանձնարարել թռուցիկներ տարածել բնակչության մեջ:

Այդ նպատակով Վալտեր Մելիքյանը կազմել է, իսկ Յուրիկ Բուդաղյանը խմբագրել է «ՓՐԿԻՐ ՄԵՋ ՄԱՅՐԻԿ» հակասովետական բովանդակության թռուցիկը: Հանձնարարվել է ամբաստանյալ Սերոբ Սարգսյանին թռուցիկը բազմացնելու նպատակով լուսանկարել: Լուսանկարելուց հետո Սարգսյանը ժապավենը հանձնել է գործով վկա Ճ-ին տպագրելու: Նա 6-օրինակ բազմացնելուց հետո, համոզվել է, որ թռուցիկի նկարը ստացվում է մուգ գույնի, 4-օրինակը հանձնել է Սերոբ Սարգսյանին, իսկ 2-օրինակը ոչնչացրել է:

Այսպիսով, ամբաստանյալներից անկախ պատճառով «ՓՐԿԻՐ ՄԵՋ ՄԱՅՐԻԿ» թռուցիկը չի տարածվել, իսկ տպագրված 4-օրինակը առգրավվել եւ կցվել է քրեական գործին:

Ամբաստանյալներ Վալտեր Մելիքյանը եւ Յուրիկ Բուդաղյանը իրենց հակասովետական գործունեությոան մեջ ավելի հեռուն են գնացել: Ինչպես դատաքննության ընթացքում ցուցմունք տվեց Յուրիկ Բուդաղյանը, խմբակների ձուլման միջոցով, գաղտնի կազմակերպություն ստեղծելու նպատակով որոշել են գրել կազմակերպության ծրագիրը ու կանոնադրությունը եւ անդամի երդումը:

1970-թ. գարնան ամիսներին Վալտեր Մելիքյանը գրել է կազմակերպության ծրագիրը, իսկ Յուրիկ Բուդաղյանը կանոնադրությունը: Ստեղծվելիք կազմակերպությունը անվանել են «Հայաստանի վերամիավորման միություն» այսինքն՝ «ՀՎՄ»:

Ծրագրում եւ կանոնադրության մեջ Մելիքյանը եւ Բուդաղյանը նշել են, որ կազմակերպությունը պետք է լինի խիստ գաղտնի քաղաքական կազմակերպություն, որը իրեն առաջ խնդիր է դնում «անկախ հանրապետություն» ստեղծելու հարցը, պայքարել է ժողովրդի սոցիալական վիճակը, իբր բարելավման համար: Ծրագրում եւ կանոնադրությամբ նրանք պայքարի միջոց ընտրել են «Հեղափոխությունների եւ ազատագրական շարժումների պատմությունից հայտնի ձեւերով…»:

Ծրագրում նշվել է, որ կազմակերպությունը պետք է գործի ընդհատակյա, ստեղծվի խմբեր եւ խմբակներ, հավաքագրելով նոր անդամներ: Դրանք ի վերջո մտնելու են կազ - մակերպության մեջ: Ըստ այդ կանոնադրության, կազմակերպությունը պետք է ունենա ղեկավար խորհուրդ, առաջնորդ, որը եւ լուծում ու ղեկավարում է «… քաղաքական պայքարի տակտիկական հարցերը …»:

Ամբաստանյալները իրենց հետագա գործողություններով կոչ են արել դրամական միջոցներ հայթայթել հափշտակությունների, սպեկուլյացիայի, կազմակերպված կողոպուտի եւ այլ հանցավոր միջոցներով, առանց հաշվի առնելու՝ թե այդպիսի կոչերը ինչ ազդեցություն կթողնեն ուսանողության մեջ գտնվող որոշ անկայուն, դեռ ոչ հասուն տարրերի նկատմամբ:

Ծրագիր եւ կանոնադրություն կազմելուց հետո, ամբաստանյալներ Վալտեր Մելիքյանը, Յուրիկ Բուդաղյանը եւ Սերոբ Սարգսյանը, իսկ 1970-թ. սեպտեմբերից նաեւ Երե - ւան վերադարձած Սուրեն Մելիքյանը անմիջապես ձեռնամուխ են եղել նրա պրակտիկ իրագործմանը:

1970-թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սերոբ Սարգսյանը, մի քանի անգամ իրենց տանը եւ ապա՝ ժողտնտեսության նվաճումների ցուցահանդեսի տերիտորիայում հավաքույթի է հրավիրել Կիրովի անվան քիմիական կոմբինատի աշխատակիցներ՝ գործով վկաներ Մ-ին, Յ-ին, Տ-ին, Ն-ին, Շ-ին եւ Ո-ին նրանց հետ ներկա է եղել նաեւ Վալտեր Մելիքյանը ու նախապես ոգելից խմիչքներ հյուրասիրելուց հետո Սերոբյանը նրանց ընթերցել է «ՀՎՄ»-ի ծրագիրը եւ կանոնադրությունը, տեղյակ է պահել, որ գոյություն ունի գաղտնի կազմակերպություն ու առաջարկել է լինել այդ կազմակերպության անդամ առանձին գաղտնի խմբակ ստեղծելու միջոցով, ինչպես նախատեսված է եղել «Հայաստանի վերամիավորման միության» ծրագրով:

Իհարկե, թվարկված վկաներից եւ ոչ մեկը չեն համաձայնվել Սերոբյանի եւ Վալտեր Մելիքյանի առաջարկին, իսկ վկա Ո-ն ծաղրելու նպատակով հայտնել է, որ ինքը մեկ այլ նման գաղտնի կազմակերպության անդամ է: Ամբաստանյալ Վալտեր Մելիքյանը հավատալով Ո-ին, մի քանի անգամ խնդրել է նրան ծանոթացնել իրեն այդ կազմակերպության ղեկավարի հետ, համատեղ գործելու նպատակով:

1970-թ. ամռան վերջում, ամբաստանյալներ Վալտեր Մելիքյանը եւ Յուրիկ Բուդաղյանը որոշել են նշանակել «Հայաստանի վերամիավորման միության» ղեկավար խորհուրդ: Ընդ որում՝ գաղափարական աշխատանքի ղեկավարի պարտականությունը ստանձնել է Յուրիկ Բուդաղյանը, կազմակերպչական հարցերի ղեկավար Վալտեր Մելիքյանը, իսկ Սերոբ Սարգսյանին հանձնարարվել է կազմակերպության տնտեսական հարցերի ղեկավարը, որին առանց առարկության համաձայնվել է Սարգսյանը:

Արդեն անցնելով ավելի կոնկրետ եւ վտանգավոր գործունեության Վալտեր Մելիքյանը 1970-թ. գրել է «Ներկա էությամբ անցյալի շարունակությունն է», «Հիշեցում հայրենասերներին» հոդվածները:

Այդ հոդվածներում պարունակում է հակասովետական, զրպարտչական հերյուրանքներ այն մասին, որ սովետական կառավարության կողմից տարվող քաղաքականությունը իբր հակասում է մարքսիզմին եւ ռեակցիոն է: Որ սովետական միությունում ոտնահարվում են մարդու իրավունքները: Տիրում է բռնություն, իբր տարվում է ազգերի կործոնման քաղաքականություն եւ այլ հերյուրանքներ: Ի վերջո հոդվածում կոչ է արվում հայերին, պայքարել ազգային միասնության եւ իրավունքների հարգման համար:

«Ներկան էությամբ անցյալի շարունակությունն է» հակասովետական բովանդակությամբ հոդվածը արտագրելու եւ տարածելու համար Վալտեր Մելիքյանը տվել է գործով վկա Ը-ին, որը արտագրելուց հետո վերադարձրել է նրան:

Ամբաստանյալ Յուրիկ Բուդաղյանը նույն ժամանակ գրել է նույնպես հակասովետական բնույթի «Մեր խնդիրները արդի էտապում», «Հայոց ազգային հարցը եւ նրա լուծման հնարավորությունները», «ազգային հարցի էությունը» հոդվածները եւ «ՀՎՄ»-ի անդամի երդումը:

«Մեր խնդիրները արդի էտապում» հոդվածում Բուդաղյանը ընթերցողներին հավատացնելով, որ իբր հակակառավարական խմբեր գոյություն ունեն նաեւ ՍՍՀՄ այլ հանրապետություններում կոչ է արել «Պայքարի միասնական ճակատ ստեղծել»: Այդ հոդվածում պահանջում է, ավելի ճիշտ հարց է դնում երիտասարդության մեջ սերմանել այն գիտակցությունը, որ «ներկայիս կառավարությունը վարում է այնպիսի քաղաքականությունն, որը հակասում է մարքսիզմին: ՍՍՀՄ-ի ներքին քաղաքականությունը ազգային հարցում «ասված է հոդվածում» հնարավորություններ է ստեղծում վելիկոռուսական մեծապետական շովինիզմի եւ մանր բուժուական նացիոնալիզմի» եւ այլ հա-

կասովետական բնույթի մտքեր, որոնք իրականությանը չեն համապատասխանում եւ այն իրական գոյություն ունեցող վիճակի բացհայտ աղավաղումն է: Այդ հոդվածում է, որ ամբաստանյալ Բուդաղյանը պահանջում է կազմակերպության նյութական միջոցներ ստեղծելու համար դիմել սպեկուլյացիայի, կազմակերպված կողոպուտի եւ այլ հանցավոր միջոցների, որի մասին արդեն ասվեց դատավճռում:

Համաձայն «ծրագրի եւ կանոնադրության» ամբաստանյալները ցանկանալով ընդլայնել իրենց գործունեության շրջանակը, նոր խմբեր ստեղծելու եւ այլ, իբր գոյություն ունեցող կազմակերպությունների հետ կապ ստեղծելու նպատակով, 1970-թ. աշնանը, գործով վկա Ի-ի միջոցով ծանոթացել են ոմն Հակոբի եւ Մուրադի հետ ու բանակցություններ են վարել - համատեղ, անլեգալ աշխատանք ծավալելու համար:

Այդ նպատակով գործով ի հայտ չբերված Հակոբից ստացել են հակասովետական բնույթի «Հայաստանի միացյալ նախարարություն» «մեր ձգտումները եւ նպատակը» եւ այլ վերնագրերով 5-հոդվածներ, որոնց ընթերցումից եւ քննարկումից հետո, Վալտեր Մելիքյանի հանձնարարությամբ, Յուրիկ Բուդաղյանը գրել է պատասխան, նույնպես հակասովետական բնույթի «դիտողություններ» «երկու խոսք» «մեր կարծիքը» եւ ուրիշ հոդվածներ գրախոսականի ձեւով ու ուղարկել են Հակոբին քննարկման:

Այդ բոլոր հոդվածներում բացահայտորեն աղավաղելով մեր իրականությունը, զրպարտորեն նշում են, որ ազատությունը «բանտարկված է» կարմիր քողով, անկախության տենչը խեղդված է, որ իբր սովետական Հայաստանը քաղաքական եւ տնտեսական ստրկացման մեջ է գտնվում: Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների միությունը համարվում է քողարկված ռուսական կայսրություն: Սոցիալիզմի երկիրը անվանում են «սոցիալիզմ մեռածների համար»: Վերեւում նշված հոդվածներում կոչ են արել դուրս գալ քաղաքական պայքարի գոյություն ունեցող քաղաքական հիմքերի դեմ: Պայքարի ելնել ՍՍՀՄ-ի կենտրոնական կառավարության դեմ:

Անտեսելով Սովետական Միության եւ այդ թվում նաեւ Հայկական ՍՍՀ-ի քաղաքական ու տնտեսական զարգացման վիթխարի աճը, սովետական ժողովրդի կուլտուրական, հոգեվոր եւ նյութական բարեկեցության աճը հոդվածներում գրել են, որ «նման միությունը» չի աջակցում «անկախ Հայաստան» ստեղծելու համար:

Տարածման եւ բազմացման համար ամբաստանյալներ Վալտեր Մելիքյանը այդ հոդվածները արտագրելու է տվել Սերոբ Սարգսյանին, վկաներ Է-ին, Ը-ին, Չ-ին եւ Պ-ին:

Օրինակ՝ «Մեր խնդիրները արդի էտապում» հոդվածը արտագրել են Պ-ն եւ Չ-ն: «Երկու խոսք» հոդվածը արտագրել է Է-ն: «Ներկան էությամբ անցյալի շարունակությունն է» եւ այլ հոդվածներ արտագրել է Ը-ն:

1970-թ. ամռան ամիսներին Շամշադինի շրջանի Բերդ ավանում գտնված ժամանակ, ամբաստանյալ Սուրեն Մելիքյանը բազմիցս խոսակցություններ է ունեցել գոր - ծով վկա Ս-ի հետ, հայտնել է նրան ստեղծված գաղտնի խմբակի մասին ու առաջարկել ներգրավվել խմբակի գործունեությոան մեջ, սակայն Ս-ն ոչ միայն չի համաձայնվել Սուրեն Մելիքյանի առաջարկին, այլեւ բացատրել է նրան դրա վտանգավորությունը եւ առաջարկել է հեռու մնալ նման հակապետական գործունեությունից: Սուրենի եղբայրը՝ ամբաստանյալ Վալտեր Մելիքյանը ինչպես 1965-թ., այնպես էլ 1966-թվ. նույն գործունեության համար երկու անգամ նախազգուշացվել է պետական անվատանգության օրգանների կողմից: Նա գրավոր պարտավորագիր է տվել վերջ տալ նման արարքներին, սակայն նա չի կատարել իր խոստումը:

1970-թվ. օգոստոսի վերջին Սուրեն Մելիքյանը վերադառնալով Երեւան ու տեղե-

կանալով, որ իրեն կողմից ստեղծված առաջին անլեգալ խումբը փաստորեն դադարել է գործելուց, ձեռնամուխ է եղել նոր գաղտնի խումբ ստեղծելուն Պոլիտեխնիկ եւ անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի ուսանողներից, լրացուցիչ ներգրավելով Կ-ին, Աշոտ Սարգսյանին, որը ամբաստանյալ Սերոբ Սարգսյանի որդին է, Արամայիս Խաչատրյանին եւ ուրիշներին:

Դատաքննության ժամանակ Սուրեն Մելիքյանը ցուցմունք տվեց, որ ինչպես «ՀՎՄ»-ի ծրագրում եւ կանոնադրության մեջ էր նախատեսված, ինքը նախադրյալներ է ստեղծել գաղտնի կազմակերպություն հիմնադրելու համար: Այդ խմբերի որոշ հավաքույթներին մասնակցել են նաեւ ամբաստանյալներ Սերոբ Սարգսյանը եւ Վալտեր Մելիքյանը:

Խմբի համարյա բոլոր հավաքույթներին ընթերցվել են եւ քննարկվել «ծրագիրը եւ կանոնադրությունը», «Երդումը» եւ այլ հակասովետական բնույթի հոդվածներ, որոնք արդեն իսկ թվարկվեցին դատավճռում:

Վալտեր եւ Սուրեն Մելիքյանները եւ Սերոբ Սարգսյանը համոզվելով, որ խմբակի մասնակիցները չեն կիսում իրենց հայացքները, ընդհանրապես ակտիվություն չեն ցուցաբերում, «ՀՎՄ»-ի ծրագրի եւ կանոնադրության պահանջների համաձայն սույն գործի առաջին դատավճռով (որը բեկանվել է գերագույն դատարանի նախագահության կողմից) դատապարտված Արամայիս Խաչատրյանի միջոցով տեղեկանալով, որ Լեռնային Ղարաբաղում բնակվող Մուսաելյանը նույնպես հետաքրքրվում է «Հայկական հարցով» նրա նախկին տերիտորիայի պատկանելիությամբ, ինչպես իրենք, ամբաստանյալները ցուցմունք տվեցին հանձնարարել են Արամայիս Խաչատրյանին կապ ստեղծել Մուսաելյանի հետ:

Վալտեր Մելիքյանի պահանջով Մուսաելյանը եկել է Երեւան, նրանք հանդիպումներ են ունեցել եւ հետագայում նամակագրական կապ են ստեղծել միմիանց հետ:

Որպես գործունեության ուղեցույց Վալտեր Մելիքյանը անձամբ կազմել եւ Մուսաելյանին է ուղարկել «Ցուցում կազմակերպչական հարցերի կապակցությամբ» նամակ, որ հայերեն լեզվից ռուսերեն է թարգմանել գործով վկա Չ-ն: Այդ նամակով Վալտեր Մելիքյանը ցուցում է տվել Մուսաելյանին թե՝ ինչ ձեւով պետք է Լեռնային Ղարաբաղում գաղտնի խմբակներ ստեղծվեն:

Չբավարարվելով դրանով, 1970-թ. աշնանը Վալտեր Մելիքյանը արտագրելու համար ամբաստանյալ Սերոբ Սարգսյանին է հանձնել «Հիշեցում հայրենասերներին» հոդվածը: Բացի այդ, արդեն իսկ վկաների մի մասի կողմից արտագրված՝ «ներկան էությամբ անցյալի շարունակությունն է» «Ամնիստիա, հումանիզմ, իրականություն», «Մեր ձգտումները» եւ մյուս հակասովետական բովանդակության հոդվածները, «Հայաստանի վերամիավորման միության» ծրագիրը, կանոնադրությունը, երդումը, որոնք արտագրված են եղել 8-աշակերտական տետրերում՝ հանձնել է Սուրեն Մելիքյանին, իսկ վերջինս էլ դրանք ծրարելով տվել է Արամայիս Խաչատրյանին, որը տարել է Լեռնային Ղարաբաղ ու հանձնել է Մուսաելյանին: Որպես ճանապարհածախս, Սուրեն Մելիքյանը արդեն իսկ հավաքած անդամավճարներից 10-ռուբլի է տվել Արամայիս Խաչատրյանին, որը ուղարկվել է Ղարաբաղ:

1971-թ. փետրվարին, երբ Ա. Խաչատրյանը հետ է վերադարձել Երեւան, իր հետ բերելիս Մուսաելյանին հանձնած ու հետ վերադարձված հակասովետական բովանդակության հոդվածները բռնվել է, իսկ հոդվածները առգրավվել են:

Խուզարկությունների միջոցով Մելիքյանների բնակարանից հայտնաբերվել եւ առգրավվել են «ՀՎՄ» անդամների անկետաները լումանկարներով եւ գաղտնի գրակա-

նության մնացած մասը: Արամայիս Խաչատրյանի ձերբակալումից հետո կալանավորվել են Սուրեն եւ Վալտեր Մելիքյանները, Սերոբ Սարգսյանը եւ Յուրիկ Բուդաղյանը:

Դատաքննության ժամանակ բոլոր ամբաստանյալները լիովին ընդունեցին իրենց կատարած արարքները: Վալտեր, Սուրեն Մելիքյանները, Սերոբ Սարգսյանը, եւ Յուրիկ Բուդաղյանը հաստատեցին, որ իրենց կողմից մշակված «ՀՎՄ»ի ծրագիրը, կանոնադրությունը, ինչպես նաեւ Հակոբից ստացված բոլոր հոդվածները եւ պատասխան գրախոսականները ու Յուրիկի ու Վալտերի կողմից գրված հոդվածները, բոլորը իրենց մեջ պարունակում են զրպարտչական, հակասովետական բովանդակության:

Ընդունեցին, որ ստեղծել են գաղտնի կազմակերպություն, ուղիներ են որոնել իբր գոյություն ունեցող այլ կազմակերպության հետ միանալու ու համատեղ գործելու նպատակով, որ այդ հակասովետական բնույթի բոլոր գրականությունը տարածելու նպատակով ընթերցել են խմբակների հավաքույթներին, ուղարկել են Լեռնային Ղարաբաղ Մուսայելյանին այնտեղ տարածելու նպատակով, սակայն առաջադրված մեղադրանքում ՀՍՍՀ քր. օր.-ի 65-հոդ. 1-ին մասով եւ 67-հոդ. մեղավոր չճանաչեցին, այլ մեղավոր ճանաչեցին 206[1] հոդ. , պատճառաբանելով, որ իրենց գործողությունները գիտակցաբար ուղղված չեն եղել սովետական իշխանության դեմ:

Մանրազննին վերլուծելով ամբաստանյալներից յուրաքանչյուրի գործողությունները, հոդվածների բացահայտ հակասովետական բովանդակությունը, Խորհրդային Հայաստանը ՍՍՀՄ-ի կազմից դուրս բերելու համար տարածված պահանջները (գաղտնի ճանապարհով) ՍՍՀՄ-ի ղեկավար մարմինների դեմ բացահայտ զրպարտչական ոտնձգությունները, մեր պետության արտաքին եւ ներքին քաղաքականությունը խեղաթյուրված ուսանողության որոշ մասին հրամցնելը, քաղաքական պայքարի ելնելու վկայակոչելը, ինչպես նաեւ արդեն իսկ մշակված ծրագրով ու կանոնադրությամբ կազմակերպության ստեղծելու փաստի առկայությունը կոլեգիային բերեցին այն համոզման, որ բոլոր ամբաստանյալներին մեղսագրված արարքը հիմնավորված է եւ այն քր. օր.-ի 206[1] վերաորակելու հիմքեր չկան:

Ամբաստանյալներ Վալտեր եւ Սուրեն Մելիքյաններին, Յուրիկ Բուդաղյանին եւ Սերոբ Սարգսյանին մեղսագրված արարքը հաստատված է ոչ միայն իրենց հանձնառումով, գործին կցված իրեղեն ապացույց հակասովետական բնույթի հոդվածներով, այլեւ հարցաքննված բոլոր վկաների ցուցմունքներով:

Այսպես օրինակ՝

Վկաներ Դ-ն, Մ-ն, Յ-ն, Տ-ն, Ն-ն, Շ-ն եւ Ռ-ն իրենց ցուցմունքներում հաստատեցին որ իրոք 1970-թ. հուլիս-օգոստոս ամիսներին ամբաստանյալ Սերոբ Սարգսյանը իրենց ընթերցել է «ՀՎՄ»-ի ծրագիրը եւ կանոնադրությունը, հայտնել է, որ գոյություն ունեն գաղտնի խմբակներ, որոնք զբաղվում են «Հայոց դատով» ու առաջարկել է ներգրավվել այդ խմբակների գործունեության մեջ, սակայն իրենք կատեգորիկ հրաժարվել են:

Վկաներ Է-ն, Ը-ն, Չ-ն եւ Պ-ն դատաքննության ժամանակ ցուցմունք տվեցին, որ գործին կցված բոլոր հակասովետական բնույթի հոդվածները իրենք արտագրել եւ հանձնել են Վալտեր Մելիքյանին:

Վկա Արամայիս Խաչատրյանը հաստատեց, որ իրեն Լեռնային Ղարաբաղ եւ ուղարկել հակասովետական բնույթի հոդվածներ տանելու եւ Մուսաելյանին հանձնելու համար ամբաստանյալներ Սուրեն եւ Վալտեր Մելիքյանները եւ Սերոբ Սարգսյանը:

Է-ն, Ը-ն, Ժ-ն, Գ-ն, Խ-ն, Ո-ն, Ջ-ն, Լ-ն, Բ-ն եւ Փ-ն հաստատեցին, որ 1969-1970-թ.թ. ամբաստանյալներ Վալտեր, Սուրեն Մելիքյանների եւ Սերոբ Սարգսյանի առաջարկով իրենք ներգրավվել են գաղտնի խմբակներում, մասնակցել են հավաքույթներին, որ-

տեղ ընթերցել են «ՀՎՄ»-ի ծրագիրը, կանոնադրությունը, երդումը, այլ հակասովետական բնույթի հոդվածներ, որ իրենք հիմնական հարցերում չեն համաձայնել այդ հոդվածների բովանդակության հետ եւ դադարել են հավաքույթներին մասնակցելուց:

Վկաներ Բ-ն, Զ-ն, Գ-ն, Ժ-ն, Ի-ն Հաստատեցին, որ Սամվել Մելիքյանի առաջարկով իրենք անդամավճարներ են մուծել Ը-ին իսկ Ը-ն ցուցմունք տվեց, որ հավաքված անդամավճարները ինքը հանձնել է ամբաստանյալ Սուրեն Մելիքյանին, որպիսինը չժխտեց նաեւ Ս. Մելիքյանը:

Հարցաքննված վկա Ճ-ն ցուցմունք տվեց, որ «Փրկիր մեզ մայրիկ» թռուցիկը ինքը 6-օրինակ բազմացրել է Սերոբյանի պահանջով եւ հանձնել է նրան: Վկա Ս-ն հաստատեց, որ Սուրեն Մելիքյանը առաջարկել է իրեն ներգրավվել գաղտնի խմբակի գործունեությանը, սակայն ինքը ոչ միայն չի համաձայնվել, այլեւ խորհուրդ է տվել նրան հեռու մնալ այդ հանցավոր արարքներից:

Այն, որ ամբաստանյալ Վալտեր Մելիքյանը, 1965-1966-թ.թ. երկու անգամ նախազգուշացվել է պետական անվտանգության օրգանների կողմից ՍՍՀ-ի նկատմամբ արատավոր հերյուրանքներ տարածելու համար հաստատված է ոչ միայն Վ. Մելիքյանի ինքնախոստովանությամբ, այլեւ հատ 6-գթ. 22-24 կարված նրա գրավոր արձանագրություններով:

Նույն վկաները հաստատեցին, որ գաղտնի հավաքույթներին ոչ միայն մասնակցել են Վալտեր Մելիքյանը եւ Յուրիկ Բուդաղյանը, այլեւ ելույթներ են ունեցել զանազան ազգային թեմաներով:

Այն, որ հակասովետական բնույթի հոդվածներից մի մասը գրվել է Վալտեր Մելիքյանի եւ Յուրիկ Բուդաղյանի կողմից, որ հոդվածներն իրոք արտագրվել են Է-ի, Ը-ի, Չ-ի, Պ-ի եւ Սերոբ Սարգսյանի կողմից հիմնավորված է ոչ միայն իրենց հանձնառումով, այլեւ ձեռագրային փորձագետի եզրակացություններով:

Այսպիսով ամբաստանյալներ Վալտեր եւ Սուրեն Մելիքյաններին, Յուրիկ Բուդաղյանին եւ Սերոբ Սարգսյանին մեղսագրված արարքը քր. օր.-ի 65-հեդ. առաջին մասով եւ 67 -հոդ. կոլեգիան հիմնավորված է համարում:

Պատիժ սահմանելիս կոլեգիան հաշվի է առնում ամբաստանյալների ինքնությունը, որ նրանք նախկինում ոչնչով արատավորված չեն եղել, ազնվորեն ընդունել են հանցավոր արարքը, մեղայականով հանդես են եկել ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ժամանակ: Զղջացել են այդ բանում: Ամբաստանյալները կոլեգիային ցուցմունք տվեցին, որ իրենք մոլորության մեջ են ընկել, սխալվել են եւ ոչ ճիշտ հետեւությունների են հանգել:

Բացի այդ ամբաստանյալներից Սերոբ Սարգսյանը 24-տարի անընդմեջ աշխատել է Երեւանի Կիրովի անվան քիմիական կոմբինատում: Յուրիկ Բուդաղյանի խնամքին է գտնվում աշխատանքային առաջին խմբի հաշմանդամ մայրը, որը ամենօրյա խնամքին խիստ կարիք է զգում: Վալտեր Մելիքյանի խնամքին են գտնվում 3-երեխաներ: Հաշվի է առնվում նաեւ այն, որ սույն գործով դատապարտվում է նաեւ Վալտերի փոքր եղբայր՝ Սուրեն Մելիքյանը:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օր.-ի 293-294հոդ.-վածներով Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալներ Վալտեր Հունանի Մելիքյանին, Յուրիկ Աբգարի Բուդաղյանին, Սերոբ Հայկի Սարգսյանին եւ Սուրեն Բալասանի Մելիքյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օր.-ի 65-հոդ. առաջին մասով եւ 67-հոդ.:

Նրանցից քր. օր.-ի 65-հոդ առաջին մաս. Վալտեր Հունանի Մելիքյանին դատապարտել ազատազրկման չորս (4) տարի, Յուրիկ Աբգարի Բուդաղյանին երեք (3) տարի վեց ամիս, Սուրեն Բալասանի Մելիքյանին երեք տարի, իսկ Սերոբ Հայկի Սարգսյանին երկու տարի ժամանակով: Բոլոր դատապարտյալները պետք է կրեն իրենց պատիժը խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, առանց հետագա աքսորի:

Դատապարտյալներ՝ Վալտեր Հունանի Մելիքյանի, Յուրիկ Աբգարի Բուդաղյանի եւ Սերոբ Հայկի Սարգսյանի – կալանքի սկիզբը հաշվել 1971-թ. փետրվարի 19-ից, իսկ Սուրեն Բալասանի Մելիքյանի կալանքի սկիզբը հաշվել 1971-թ. մայիսի 26-ից:

Գործով իրեղեն ապացույց հակասովետական բովանդակությամբ հոդվածները, որոնք կարված են հատոր 3 գք. 219-368 եւ 4-րդ 1-121 թողնել գործում, իսկ տպագրական տառերը եւ տնտեսական պայուսակը ոչնչացնել:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով գանգատարկման ենթակա չէ:

Նախագահ՝ **Ա. Եղիազարյան**
Ատենակալներ՝ **Հ. Ալեքսանյան, Պ. Ղազարյան**
Իսկականի հետ ճիշտ է՝
Գործով նախագահող՝ **Ա. Եղիազարյան**

24/3-1972-թ.
Ս.Ե.

Բագրատ Շահվերդյան եւ Արարատ Թովմասյան

Թույլատրելիի սահմանագծին

Բագրատ Շահվերդյանն իր գործունեությունն սկսել է 1963 թվականին: Մինչեւ 1970-ականների կեսերը հրապարակում եղած հայ այլախոհներից նա առանձնանում է ծավալված այլախոհական գործունեության նկատմամբ իր ուրույն մոտեցմամբ: Եթե մինչեւ Շահվերդյանն ու նրանից հետո (չհաշված իրավապաշտպաններին) եղած գործիչները, խմբակներն ու խմբերը, նաեւ՝ արդեն ձեւավորված Ազգային միացյալ կուսակցությունը, Հայաստանին ու հայ ժողովրդին հուզող խնդիրները լուծելու համար ձեւավորում էին գաղտնի կազմակերպություններ, զբաղվում ձեռագիր ու տպագիր նյութերի գաղտնի պատրաստմամբ, բազմացմամբ ու տարածմամբ, ապա Բագրատ Շահվերդյանը փորձում էր ծավալել հնարավորինս բաց, անթաքույց գործունեություն: Մինչ այդ՝ 60-ականներին նա էլ է զբաղվել գաղտնի գործունեությամբ. տարածել է թռուցիկներ, համախոհների հետ գաղտնի կազմակերպություն է հիմնել, ընդհատակյա տպարան կազմակերպելու փորձեր է արել ու ժամանակ անց բացահայտվել է: Բացահայտումից հետո հետեւություն է արել, որ ընդհատակյա գործունեությունն արդյունավետ չէ, եւ որոշել է տեղափոխվել գործունեության մի այնպիսի դաշտ, որն իրեն ու իր համախոհներին հնարավորություն կնձեռեր զբաղվել բացահայտ քարոզչությամբ, որի նպատակը պետք է լիներ հասարակության ակտիվ հատվածին, նաեւ լայն հասարակական շերտերին քարոզչության միջոցով հասցնել այն հանգրվանին, որտեղից կսկսվեր կասկածը խորհրդային պետության հռչակած դոգմաների նկատմամբ, եւ թոթափելով վախն ու ավելորդ զգուշավորությունը՝ մարդիկ կկարողանային ազատորեն գնահատել իրականությունը եւ ի վերջո՝ հանգել դրա փոփոխման անհրաժեշտությանը: Փորձել է, տեղավորվելով թույլատրելիի սահմաններում, գործել բացահայտ: Բայց անգամ նրա բացահայտ գործունեությունը գաղտնիության մեծ պաշար է պարունակել: Կազմակերպել է ուսանողական ու աշակերտական խմբակներ, որոնք ուսումնասիրել են հայկական մշակույթը, հավաքել ազգագրական երգեր, կարդացել ու տարածել արգելված գրականություն, նշել ազգային ծեսեր: Այդ խմբակներից մեկի օժանդակությամբ նախաձեռնել է հանդեսի հրատարակություն, որտեղ, ի թիվս այլ նյութերի, եղել է նաեւ անկախության անհրաժեշտության մասին հոդված, ինչն արդեն կալանավորման ու դատապարտման լուրջ առիթ էր: Իր նախընտրած հրապարակային գործունեության սահմաններում՝ իր իսկ ստորագրությամբ խորհրդային իրականությունը քննադատող նամակներ է գրել խորհրդային տարբեր թերթերի ու ամսագրերի խմբագրություններ: Հանդես է եկել դիմումներով: Հայաստանում, մինչեւ 1976-77 թթ. իրավապաշտպանների հանդես գալը, այս կարգի բացահայտ գործունեությամբ առանձնանում է Բագրատ Շահվերդյանը: Լրատվամիջոցների խմբագիրները, իրենց նախաձեռնությամբ, այդ նամակները փոխանցել են ՊԱԿ-ին, որոնք հետագայում նրան առաջադրված մեղադրանքի մաս են կազմել: Արարատ Թովմասյանը նույնպես նամակներ է գրել «Պրավդա» թերթի խմբագրություն եւ Բրեժնեւին: Բագրատ Շահվերդյանը Խորհրդային Հայաստանում առաջիններից մեկն էր, որը կարեւորում ու ընդգծում էր մարդու իրավունքների թեման: Իր ելույթներում ու նամակներում հաճախ է անդրադառնում Խորհրդային Միությունում մարդու իրավունքների բնագավառում տիրող տխուր վիճակին:

Հատկանշական է, որ Բագրատ Շահվերդյանի կալանավորումից ու դատապարտումից հետո՝ նրա կազմակերպած խմբակների անդամները, չնայած ընդհատակյա

պայքարի նկատմամբ Շահվերդյանի ունեցած վերաբերմունքին, անդամագրվեցին ընդհատակում գործող Ազգային միացյալ կուսակցությանը եւ դարձան ԱՄԿ ակտիվ անդամներ: Նրանցից ոմանք հետագայում դատապարտվեցին որպես ԱՄԿ-ականներ:

Ե՛վ Արարատ Թովմասյանը, ե՛ւ Բագրատ Շահվերդյանը դեռ 60-ականներին են ՊԱԿ-ի կողմից նախազգուշացվել իրենց ծավալած գործունեության համար. Թովմասյանն առաջին անգամ 1966-ին՝ թռուցիկներ տպագրելու եւ Ղարաբաղում տարածելու համար, իսկ երկրորդ անգամ՝1968-ին, երբ ապրիլի 24-ի կապակցությամբ փորձել է Արարատ քաղաքում ցույց կազմակերպել: Նույն թվականներին նախազգուշացվել է նաեւ Բագրատ Շահվերդյանը:

Երկուսն էլ դատապարտվել են ՀԽՍՀ քր.օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Բագրատ Շահվերդյանին դատապարտել են նաեւ 156 հոդվածի 1-ին մասով (սպեկուլյացիա՝ շահ ստանալու նպատակով ապրանքներ կամ այլ առարկաներ գնելն ու վաճառելը):

Ի դեպ, ըստ գործով հրապարակված դատավճռի՝ Շահվերդյանը եւ Թովմասյանը իրենց պատիժը պտք է կրեին համեմատաբար մեղմ՝ խստացված ռեժիմի կալանավայրում, ինչը անհասկանալի է, որովհետեւ քր. օր-ի 65 եւ 67 հոդվածներով դատապարտվածները իրենց պատիժը կրում էին խիստ ռեժիմի հատուկ առանձնացված կալանավայրերում: Սա է եղել պատճառը, որ Շահվերդյանին ու Թովմասյանին պատիժը կրելու համար սկզբում տարել են Միջին Ասիա: Ավելի ուշ են միայն հասկացել, որ թյուրիմացություն է տեղի ունեցել, եւ առանց դատավճռում համապատասխան փոփոխություն կատարելու, որը միայն նոր դատավճռի կայացմամբ պետք է տեղի ունենար, Միջին Ասիայից նրանց տեղափոխել են քաղաքական կալանավորների համար նախատեսված Ուրալյան խիստ ռեժիմի կալանավայր: Փաստորեն, դատավճռով նախատեսված մեղմ ռեժիմը կամայականորեն փոխել են խիստ ռեժիմի: Սա օրենքի ուժ ստացած դատավճռի պահանջի կոպտագույն խախտում է եւ վկայում է, թե խորհրդային իշխանություններն ինչպես էին վերաբերվում իրենց իսկ կայացրած դատավճռներին:





Բագրատ Շահվերդյան Բագրատ Շահվերդյան Արարատ Թովմասյան Արարատ Թովմասյան
լուս. քր. գործից *լուս. քր. գործից*

Բագրատ Լեւոնի Շահվերդյանը ծնվել է 1940 թ., Ալավերդու շրջանի Այգեհատ գյուղում: Ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Այլախոհական գործունեությամբ սկսել է զբաղվել ուսանողական տարիներից: Ծավալած ակտիվ գործունեության համար մի քանի անգամ նախազգուշացվել է պետանվտանգության

մարմինների կողմից, հեռացվել է կոմերիտմիությունից ու ինստիտուտից: Առնչվել է 60-ականների երկրորդ կեսին եւ 70-ականների սկզբին գործող բազմաթիվ այլախոհների ու անլեգալ գործող կազմակերպությունների հետ: Առաջ է քաշել այն թեզը, որ այլախոհների հիմնական նպատակներից պետք է լինի հայ ժողովրդին ինքնաճանաչողության մղելը, որից հետո միայն հնարավոր կլինի խոսել քաղաքական խնդիրներից ու անկախությունից: Կալանավորվել է 1973 թ. մարտին: Դատապարտվել է 5 տարի ազատազրկման եւ 2 տարի աքսորի: Պատիժը կրել է Պերմի կալանավայրերում: Գրել է բանաստեղծություններ: Կալանավայրում գրած նրա «Երուսաղեմ» բանաստեղծությունը նոտագրել է քաղբանտարկյալներից մեկը, որն արտերկիր է ուղարկվել: Հետագայում այդ երգը ժամանակ առ ժամանակ հնչել է Իսրայելի ռադիոյով: Եղել է կալանավայրի ամենաակտիվ ու հեղինակություն վայելող կալանավորներից մեկը: Ըմբոստ վարքի համար խստացվել է նրա ռեժիմը, տեղափոխել են Վլադիմիրի բանտ: Աքսորը կրել է Թուրքմենիայում: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Երեւան, վերցվել է ոստիկանական հսկողության տակ: 1987 թ. մեկնել է ԱՄՆ, մշտական բնակության:

Արարատ Միրեկանի Թովմասյանը ծնվել է 1927 թ., Մարտունու շրջանի Գետաշեն գյուղում: Ազգային-հայրենասիրական գործունեությամբ սկսել է զբաղվել 60-ականնե - րի կեսերից: Արարատ քաղաքում ստեղծել է «Հայ հայրենասերների միություն» անունը կրող կազմակերպություն: Կալանավորվել է 1973 թ. ապրիլին: Դատապարտվել է 3 տարի 6 ամիս ազատազրկման: Ազատ է արձակվել վաղաժամ՝ ներման խնդրագրով: Բնակվել է Արարատ քաղաքում: Վախճանվել է 2008 թ.:

Պատմում է Բագրատ Շահվերդյանը

Հայրենասիրական-քաղաքական գործունեության մեջ, որքան այսօր կարողանում եմ հիշել, ներգրավվել եմ այն բանից հետո, երբ գյուղինստիտուտի աշխատակից, իմ համերկրացի՝ լոռեցի Էդիկ Բեգլարյանը տվեց ինձ Բոգդան Գեմբարսկու նամակը: Դա երեւի 1963 թվականն էր: Նամակը ցնցող տպավորություն թողեց ինձ վրա: Նամակի վերջում տպագրված էր Գեմբարսկու հասցեն: Նամակն ինձ անսահման հուզել էր. կարդում էի ընկերներիս համար, զրուցում մարդկանց հետ այդ թեմայով: Անգամ նամակ գրեցի Գեմբարսկուն: Գեմբարսկուն գրված նամակիս նրա աղջիկը պատասխանեց. բողոքում էր սփյուռքի հայկական կազմակերպություններից, որ հայկական հարցի հետ կապված՝ հորը որեւէ աջակցություն չեն ցուցաբերում:

1964 թվականին մի քանի տողաներով՝ ես, Գսպոյան Գրիգորը, համալսարանից մի քանիսը, որոնց անուններն այսօր մոռացել եմ, հավաքվեցինք, ու ես առաջարկեցի մի կազմակերպություն ստեղծել, որը կզբաղվի Գեմբարսկու նամակի եւ նման այլ նյութերի բազմացմամբ ու տարածմամբ: Որոշեցինք կազմակերպությունն անվանել «Հայ հայրենասերների միություն»: Տպագրական միջոցների բացակայության պատճառով մեր ձեռքի տակ հայտնված նյութերի տպագրման ու բազմացման հետ կապված անլուծելի խնդիրներ ունեինք: Ստիպված էինք մտածել սեփական տպարան ստեղծելու մասին: Հետաքրքրվեցինք, թե ով կարող է տպարանից տառեր հայթայթել: Մեր ընկերներից մեկի ծանոթը, ուսմանը զուգահեռ, երեկոյան աշխատում էր տպարանում: Նա խոստացավ տպարանից մեզ համար տպատառեր բերել: Այն տարիներին սա լուրջ ու վտանգավոր գործ էր եւ պետք է արվեր այնպես, որ չիմացվեր: Որոշ ժամանակ անց

այդ երիտասարդն ինչ-որ քանակության տառեր բերեց: Բայց գործն սկսելու համար դա քիչ էր: Հաջորդ խմբաքանակը բերելիս՝ բռնվեց: Բնական է, որ առաջին իսկ հարցաքննության ժամանակ պատմել էր, թե ում համար են նախատեսված տառերը: Այդպես՝ 1964 թ. առաջին անգամ ես հայտնվեցի Պետական անվտանգության կոմիտեում: Քանի որ եղածը մի լուրջ բան չէր, ընդամենը Գեմբարսկու նամակն էր ու տառեր հայթայթելու անհաջող փորձը, մեզ բաց թողեցին:

Արդեն մոտենում էր 1965 թվականը՝ Եղեռնի 50-ամյակը: Որոշեցինք, որ ինչ-որ կերպ պետք է նշվի, ինչ-որ բան պետք է արվի: Մեկն առաջարկեց՝ քանի որ տպարան կամ տպագրական այլ միջոց չունենք, նյութերը բազմացնենք ֆոտոգրաֆիկ եղանակով: Այդ եղանակով մեծ քանակությամբ թռուցիկներ բազմացրինք ու տարածեցինք: Դրանք հիմնականում վերաբերում էին Եղեռնին: Ասվում էր, որ պետք է հիշվի եւ պաշտոնապես նշվի, պետք է ունենանք հուշարձան եւ նման այլ մտքեր, որ այսօր գուցե առօրեական են, բայց այն ժամանակ դրանք համարվում էին խիստ ազգայնական ու վնասակար եւ հետապնդվում էին իշխանությունների կողմից: Թռուցիկներին զուգահեռ կազմակերպում էինք հավաքներ, ինքներս էինք մասնակցում այլոց կազմակերպած հավաքներին: Ապրիլի 24-ին համալսարանում կազմակերպված հավաքից հետո այցելեցինք Կոմիտասի շիրմին: Այնտեղ մեզ ձերբակալեցին ու տարան ոստիկանություն: Մյուս օրը բաց թողեցին: Հետո իմացանք, որ ոմանց ավելի երկար են պահել: 1965 թ. դեպքերից հետո պոլիտեխնիկական ինստիտուտում կոմերիտմիության հատուկ ժողով կազմակերպվեց, որտեղ քննարկման էր դրվել իմ հարցը: Ժողովը վճռեց հեռացնել ինձ կոմերիտմիությունից: Սա ինձ այնքան էլ մեծ ցավ չպատճառեց, բայց սրա հետ մեկտեղ՝ հայտարարեցին, որ մեկ տարով էլ հեռացնում են ինստիտուտից: Որոշեցին, որ պետք է հեռացվեմ մեկ տարով, գնամ բանվորություն անեմ, կանգնեմ ուղղման ճանապարհին եւ ուղղվելուց հետո՝ վերականգնվեմ: Սա ինձ համար ե՛ւ անակնկալ էր, ե՛ւ ցավ: Խնդրում էի, որ ինստիտուտից չհեռացնեն, բայց վճիռն արդեն կայացրել էին:

Այս դեպքերից հետո եկանք եզրակացության, որ ՊԱԿ-ին խաբել չենք կարող: Միեւնույն է, նրանք գործակալների միջոցով իմանալու են մեր յուրաքանչյուր քայլի մասին: Որոշեցինք փոխել մեր մարտավարությունը: Ամենուր հայտարարում էինք, որ անլեգալ որեւէ գործ չենք անում, մեր ողջ գործունեությունը բաց է: Ստեղծում էինք խմբակներ հանրապետության տարբեր շրջաններում եւ ուսումնական հաստատություններում, կազմակերպում էինք արշավներ: Թատերականի մեր աղջիկների, մեզ հետ համագործակցող երգիչների հետ այցելում էինք հայրենադարձների, գրի էինք առնում պատմություններ ու երգեր: Երգում էինք դրանք: Կազմակերպում էինք հանդիպումներ ժամանակի ազատամիտ մտավորականների հետ: Այս ամենին զուգահեռ, խիստ գաղտնի՝ այնպես, որ ոչ ոք չիմանար, պահպանել էինք «Հայ հայրենասերների միություն» կոչվող մեր կազմակերպությունը: Մշակել էինք երդման տեքստ:

Երեւանի 2750-ամյակի տոնակատարությունների ժամանակ Լենինի հրապարակում մի երեսուն հոգով երգեցինք «Մեր հայրենիքը»: Բոլորը զարմացած մեզ էին նայում: Այս շրջանում, հիմա չեմ հիշում, թե ում միջոցով, ծանոթացա Ստեփան Զատիկյանի հետ, ու մտերմացանք: Հաճախ էի լինում նրանց տանը: Նրան դուր էին գալիս մեր հավաքած ազգագրական երգերը, ինքն էլ էր երգում: Շատ ավելի ուշ նա ինձ ասաց Ազգայինի միացյալ կուսակցության մասին: Ինձ տվեց ԱՄԿ երդումը, այլ նյութեր: «Փարոսի» տպագրությունից հետո ինձանից կարծիք հարցրեց: Ասացի, որ իմ կարծիքով՝ հակակոմունիզմն այն ճանապարհը չէ, որով պետք է տանենք մեր ժողովրդին: Ասացի, որ ես էլ կոմունիստական գաղափարները չեմ ընդունում, բայց կարծում եմ, որ սկզբում պետք

է մեր ժողովրդին տանենք ինքնաճանաչողության, հետո նոր արդեն՝ անկախություն եւ այլն: Ասացի՝ գուցե հետաքրքիր է հակակոմունիզմը, սուր նացիոնալիզմը, բայց դրանք արդյունքի բերել չեն կարող: Բացատրում էի, որ անգամ մեզնից՝ միայն ազգային գործունեությամբ զբաղվողներիցս են մարդիկ զգուշանում ու խուսափում, էլ ու՞ր մնաց՝ հակակոմունիզմ ու անկախություն. մարդիկ դրանից սարսափելու են ու չեն ընդունելու: Բայց նա չընդունեց իմ տեսակետները: Մենք շարունակեցինք մնալ լավ բարեկամներ, բայց ոչ՝ գաղափարակիցներ:

Հանդիպում էինք այդ տարիներին գործող տարբեր հայրենասիրական կազմակերպությունների հետ: Հանդիպեցինք նաեւ Վալտեր Մելիքյանենց խմբին: Այն ժամանակ հաճախ էր խոսվում կազմակերպությունները միավորելու եւ մեկ ընդհանուր կազմակերպությամբ գործելու մասին, ինչին ես միշտ դեմ էի լինում: Ես շեշտը շարունակում էի դնել բաց գործունեության վրա՝ պնդելով, որ ցանկացած գաղտնի կառույցի մեջ ՊԱԿ-ն ունենալու է իր գործակալներին, եւ շատ ավելի լավ ու ապահով է բաց գործելը: Այդպես էլ աշխատում էինք: Ուսանողների միջոցով կարողացել էինք կառույցներ ստեղծել տարբեր շրջաններում:

Թե ով էր ստեղծել Արարատ Թովմասյանի խումբը՝ չգիտեմ: Մենք շատ շրջաններում խմբեր ունեինք: Արարատի խումբը միակը չէր: Հետագայում, երբ ձերբակալեցին ինձ, հենց Արարատի խմբի հետ կապեցին: Այդպես էլ պարզ չդարձավ ինձ համար, թե ԿԳԲ-ն ինչու՞ հատկապես այս խումբն ընտրեց ու կապեց ինձ հետ: Մեր աղջիկները մի հանդես էին հրապարակել, որի մեջ տարբեր բնույթի հոդվածներ կային: Նաեւ հոդված կար անկախության մասին: Վճռորոշը երեւի այդ հոդվածն էր: Հանդեսը կոչվում էր «Ե - ռիտասարդ հայ»: Այդ հանդեսը ես տվել էի Արարատ Թովմասյանին: Նա էլ, իր հերթին, Արարատ քաղաքում ցույց էր տվել իր խմբի անդամներին: Ֆորմալ առումով սա էր նրա ձերբակալման առիթը: Նախաքննության ժամանակ նա չէր հայտնել, որ հանդեսն ինձանից է ստացել: Իրենց խմբից ինձ այլ ճանաչողներ էլ կային: Նրանք էին իմ անունը տվել: Այս ճանապարհով ինձ կապեցին Արարատ Թովմասյանի խմբի հետ: Արարատի ձերբակալման ժամանակ ես Մոսկվայում էի: Այնտե՛ղ էլ ձերբակալեցին: Արարատը մեծ ընտանիք ուներ, վարորդ էր աշխատում: Ես ոչ միայն չէի ցանկանում, այլեւ ամեն ինչ անում էի, որ նա չդատապարտվի: Բայց ինքը շատ ազնիվ մարդ էր, չէր թաքցնում իր հայացքները եւ բացասական վերաբերմունքը սովետների հանդեպ: Առաջին օրը դատարանում ինձ ասաց, թե պատրաստվում է հայտարարել, որ ինչ արել է՝ լավ է արել եւ չի ափսոսում արածի համար: Հիշում եմ՝ դատական նիստի ժամանակ Արարատը կոպիտ խոսքերով հայհոյեց Լենինին՝ հայտարարելով, որ նա է ծախել Հա - յաստանը: Դատավորը սարսափած տեսք ուներ, չգիտեր ինչ անի: Արարատին դատելու ոչ մի հիմք չունեին: Այդպես կարող էին դատել բոլորին, ում ես հանդիպել էի: Կարծում եմ, Արարատին դատապարտելու պատճառը՝ նախաքննության ու դատավարության ընթացքում նրա ցուցաբերած հանդգնությունն էր: Հետագայում՝ ժամանակ անց կալանավայրում իմացա, որ նրան ստիպել, թե համոզել են, որ ներման խնդրագիր գրի: Դրանից վատ չզգացի ու չդատապարտեցի: Լավ է, որ Արարատը համաձայնել էր: Մտքումս ուրախ էի, որ կվերադառնա իր երեխաների մոտ:

Մինչեւ իմ ձերբակալությունը, տարիներ շարունակ բազմաթիվ նամակներ եմ գրել տարբեր թերթերի ու ամսագրերի խմբագրություններ՝ «Ավանգարդ», «Գարուն», «Գրական թերթ» եւ այլն: Նախաքննության ընթացքում իմացա, որ իմ բոլոր նամակներն այդ թերթերի խմբագիրները կից գրությամբ՝ այն մասին, որ դրանք ունեն հակասովետա - կան բովանդակություն, ուղարկել են Պետանվտանգության կոմիտե: Մինչեւ այսօր հի-

շում եմ «Գարունի» խմբագրի գրությունը, որտեղ նա տեղեկացնում էր չեկիստներին, որ ես հակասովետական ու ազգայնական մտքեր եմ արծարծել իմ նամակում: Եվ ոչ միայն նա: Այս մտավորական կոչվածները կարող էին չանել դա, կարող էին նամակներս ետ ուղարկել ինձ, կարող էին թողնել անհետեւանք, կարող էին պատռել ու դեն նետել, բայց սրանցից յուրաքանչյուրը նախընտրել էր դրանք ուղարկել Պետանվտանգության կոմիտե: Քրեական գործին ծանոթանալիս այս հանգամանքը շատ տխրեցրեց ինձ: Հետո հանգստացա՝ հասկանալով, որ սա էր նրանց բնույթը: Այդպիսին էին նրանք:

Դատապարտվելուց հետո ինձ տարան էտապ: Յուրաքանչյուր կալանավորի համար բանտային կյանքի ամենադաժան շրջանն էտապն է: Երեւան - Թբիլիսի - Ռոստով - Վոլգոգրադ - Ղազախստան - Պերմ. սա էր իմ բանտային ճանապարհորդությունը: Պերմի մարզի Չուսավոյի շրջանում էին գտնվում քաղաքական գաղութները: Ես նստած էի 35-րդ գաղութում: Այնտեղ հայերից իր ազատազրկման շրջանն էր ավարտում Թորոսյան Սարգիսը: Հետագայում այդտեղ բերեցին Բուդաղյան Յուրիկին, իսկ մեկ տարի անց՝ Զոհրաբյան Ռազմիկին: Անմիջապես ներգրավվեցի գաղութային կյանքի մեջ. մասնակցում էի բողոքի ակցիաներին, մտերմություն էի անում հայտնի քաղաքական կալանավորների հետ: Հատկապես մտերիմ էի ուկրաինացի եւ մերձբալթյան ազգայնականների ու հրեաների հետ: Հայտնի այլախոհ Վլադիմիր Բուկովսկու հետ, ում հետագայում փոխանակեցի Չիլլիի կոմունիստական կուսակցության առաջնորդ Լուիս Կառվալանի հետ, դարձանք մտերիմ ընկերներ: Գաղութի կարի արտադրամասում մեքենաների աշխատանքի ռիթմի տակ մի քանի բանաստեղծություն գրեցի: Բանաստեղծություններից մեկը կոչվում էր «Երուսաղեմ»: Կալանավորներից մեկը նոտագրեց, ու կարողացանք գաղտնի ճանապարհով դուրս ուղարկել: Հետագայում Երուսաղեմի ռադիոյով՝ այդ տարիներին երբեմն-երբեմն հնչում էր: Իմ դրսեւորած ակտիվության համար՝ որպես պատիժ ինձ տեղափոխեցին Վլադիմիրի բանտ: Ինձանից մի երկու ամիս առաջ այնտեղ էր տեղափոխվել Բուկովսկին: Մենք նույն խցում էինք: Բանտում իմացա, որ Զատիկյան Ստեփանն իրականացրել է Մոսկվայի մետրոյի պայթյունն, ու շատ զարմացա: Մոսկվայից եկան ինձ հարցաքննելու: Ասացի, որ Զատիկյանին լավ եմ ճանաչում. զարմացած էի, որ նման քայլի է դիմել: Մինչեւ այսօր այդպես էլ չեմ կարողանում հասկանալ, թե ինչը պետք է Ստեփանի կարգի կազմակերպված, պատրաստված, համեստ ու հայրենասեր մարդուն դրդեր նման քայլի: Ես առողջական բավականին լուրջ խնդիրներ ունեի, բայց հրաժարվում էին հիվանդանոց տանել ինձ: Ահա այդ օրերին էլ տեղի ունեցավ Բուկովսկու փոխանակումը: Եվրոպայում հայտնվելով՝ Բուկովսկին առաջին հերթին հայտարարել էր իմ առողջական խնդիրների մասին, եւ ինձ մեկ ամսով տեղափոխեցին հիվանդանոց: Ազատազրկման ավարտից հետո ինձ տարան Թուրքմենիա՝ աքսոր: Այնտեղ սովխոզի պահակ էի աշխատում եւ ապրում պահակի համար նախատեսված հյուղակում:

Աքսորիս ավարտից հետո կանչեցին ինձ ու ասացին, որ պետք է Երեւան վերադառնամ հատուկ իրենց նախանշած երթուղով: Բողոքեցի՝ ասելով, որ արդեն ազատ մարդ եմ եւ ինչպես ցանկանամ՝ այդպես էլ կգնամ: Նրանք շարունակում էին պնդել իրենց պահանջը: Ամեն ինչ անում էին, որ Մոսկվա չհասնեմ: Սակայն, ճանապարհին փոխեցի գնացքը եւ մեկնեցի Մոսկվա, հանդիպեցի այլախոհների, ինձ հետ նստած քաղկալանավորների ընտանիքների անդամներին ու նոր միայն մեկնեցի Հայաստան: Երեւանում անմիջապես կանչեցին ոստիկանություն եւ տեղեկացրին, որ վերցվում եմ հատուկ հսկողության տակ: Իսկ դրանից բխում էր, որ երեկոյան ժամը ութից հետո տնից դուրս գալու իրավունք չունեմ, Երեւանից բացակայել կարող եմ միայն իրենց հատուկ

թույլտվությամբ, հասարակական ու մարդաշատ վայրերում՝ կինոթատրոններ, միջոցառումներ, ֆուտբոլ եւ նման այլ վայրեր այցելելու իրավունք չունեմ եւ պարտադիր պետք է աշխատանքի ընդունվեմ, հակառակ դեպքում՝ թափառաշրջիկության համար կդատապարտեն ինձ: Սակայն, իմանալով, թե ինչ հոդվածով եմ դատապարտված եղել, աշխատանքի չէին ընդունում: Փակ շղթա էր: Կայարանի մոտակայքում ընթացող մի շինարարությունում մեծ դժվարությամբ կարողացա տեղավորվել որպես բանվոր: Մի ամբողջ տարի բանվոր աշխատեցի, մինչեւ որ «Հանուն Հայրենիքի» ամսագրի տպագրության համար դատապարտված ու ինձանից շուտ Հայաստան վերադարձած Շիրակ Գյունաշյանի միջնորդությամբ՝ որպես ինժեներ տեղավորվեցի գազի հիմնարկությունում: Մի քանի տարուց սկսվեց Պերեստրոյկան: Կալանավայրից վերադարձավ Հայրիկյան Պարույրը: Նախաձեռնեցինք Ազատ Արշակյանի եւ Աշոտ Նավասարդյանի պաշտպանության կոմիտե: Հետագայում ազատ արձակվեցին նաեւ նրանք: Հայաստանում ոչինչ չունեի: Ամուսնացած էի, վարձով էի ապրում: Առաջարկություն ստացա տեղափոխվել ԱՄՆ: Ընդունեցի հրավերը եւ 87-88 թվականներից ապրում եմ Ամերիկայում:

Շահվերդյանի եւ Թովմասյանի գործով կայացված դատավճիռը

Այս դատավճիռը տպագրում ենք այնպես, ինչպես ստացել ենք ԱԱԾ-ից՝ վկաների ջնջված անուններով, քանի որ դրանք լրացնելու մեր ջանքերը արդյունք չտվեցին:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1973թ. դեկտեմբերի 10-ին

Նախագահությամբ՝	**Ա. Քեշիշյանի**
Ատենակալներ՝	**1. Ս. Հայրապետյանի**
	2. Պ. Ասատրյանի
Քարտուղարությամբ՝	**Շ. Օխիկյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Պ. Թոխյանի**

Քննության առնելով դռնբաց դատական նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի

1. Բագրատ Լևոնի Շահվերդյանի, ծնված 1940թ Ալավերդու շրջանի Այգեհատ գյուղում (այժմ Թումանյան շրջան գյուղ Դանուշավան) ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուրի, խնամքին ոչ ոք, բարձրագույն կրթությամբ, մասնագիտությամբ ինժեներ-կոնստրուկտոր, անկուսակցական, նախկինում չդատված, ֆիզիկապես առողջ, 1971թ. սեպտեմբերից հետո մինչեւ իր կալանավորվելը հանրօգուտ աշխատանքով չի զբաղվել:

Կալանքի տակ է 1973 թ. մարտի 20-ից: (չնայած կալանքի թույլտվությունը տրվել է 22/3-73թ.), բնակվել է Մարտունի ավանում, (որտեղ այժմ բնակվում են մայրն ու քույրը), իսկ 1970թ. հետո առանց գրանցվելու բնակվել է Երեւանում տարբեր տեղերում (իր ընկերների, ծանոթների մոտ):

Մեղադրվում է քր. օրի 65 հ. 1-մ., 67 հ. եւ 156 հ. 1-մ:

2. Արարատ Սիրեկանի Թովմասյանի, ծնված 1927թ. Մարտունու շրջանի Գետաշեն գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուսնացած, խնամքին վեց անձ, միջնակարգ կրթությամբ, վտարված ՍՄԿԿ շարքերից (հ.10 գթ. 250-253, 282-287), նախկինում երկու անգամ դատապարտված ուղղիչ աշխատանքի (26/9-69թ. քր. օր 109 հ. 2-մ. եւ 4/10-71թ., 123 հ. 1-մ.) աշխատել է Արարատի ցեմենտ-շիֆերի կոմբինատում որպես վարորդ, կալանքի տակ է 1973թ. ապրիլի 6-ից, բնակվել է Արարատի շրջանի Արարատ քաղաքի Շահումյան փողոց 55, բն. 15-ում:

Մեղադրվում է քր. օր 65 հ. 1-մ. եւ 67 հոդվածով:

Դատաքննությամբ ամբաստանյալներ Բ. Շահվերդյանի եւ Ա. Թովմասյանի բացատրությամբ, վկաներ Ա-ի Բ-ի Գ-ի Դ-ի Փ-ի Ը-ի Թ-ի եւ մյուսների ցուցմունքներով, խուզարկության արձանագրություններով, իրեղեն ապացույցներով, իրեղեն ապացույցների զննման արձանագրություններով, ձեռագրային եւ քիմիական փորձաքննությունների եզրակացություններով եւ գործում եղած գրավոր ապացույցներով, քրեական գործերի դատական կոլեգիան գտավ հիմնավորված հետեւյալը:

Ամբաստնյալներ Բ. Շահվերդյանը եւ Ա. Թովմասյանը ունենալով նեղ ազգայնական հայացքներ, անբարյացկամ տրամադրվելով Սովետական Միության կողմից կիրառվող ներքին ու արտաքին քաղաքականության նկատմամաբ, տարիներ շարունակ զբաղվել են հակասովետական ագիտացիայով եւ պրոպագանդայով: Թռուցիկների, ոտանավորների ու առանձին հոդվածների ձեւով պատրաստել, տարածել եւ պահել են Սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող գրականություն: Նշված գրականությամբ այն զրպարտիչ միտքն է արտահայտվել, որ իբր ՍՍՀՄ- ում ազգերի իրավահավասարություն գոյություն չունի, որ միութենական հանրապետությունները անկախ չեն, այլ Ռուսաստանի գաղութներն են, Հայկական հողերի մի մասը բոլշեւիկներն են վաճառել թուրքերին, որ ՍՍՀՄ-ում գոյություն չունի դեմոկրատիա, խոսքի եւ մամուլի ազատություն եւ նման բազմաթիվ հերյուրանքներ: Գովերգելով բուրժուական-ազգայնական «դաշնակցություն» կուսակցության քաղաքականությունը կոչ են արել «պայքարել մինչեւ թոթափել բոլշեւիզմի գաղութատիրական արյունոտ շղթա - ները» (հ. 10 գթ. 149-ծոցատետրի 3-12էջ):

Ամբաստանյալներ Բ. Շահվերդյանը եւ Ա. Թովմասյանը իրենց ազգայնական հակասովետական նպակները իրականացնելու համար իրենց շուրջ են համախմբել քաղաքականապես անհասուն երիտասարդների (հատկապես պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողների) որոնցից կազմել են գաղտնի խմբակներ «հայրենասերներ» անվան պատրվակով: Նրանց ծանոթացրել են իրենց կողմից պատրաստված ու ձեռք բերված հակասովետական գրականության հետ: Այն պատկերացումն են տվել այդ խմբերի անդամներին, որ իբր հայ ազգի զարգացումն ու նրա մշակույթը կանգ առման եւ ասիմիլացիայի վտանգի տակ են:

Ամբաստանյալներից յուրաքանչյուրը կոնկրետ կատարել է հետեւյալը՝

Բագրատ Շահվերդյանը դեռեւս ուսանող եղած ժամանակ (պոլիտեխնիկական ինստիտուտում) 1965թ. ապրիլին ազգայնական բնույթի թռուցիկներ տարածելու համար

նախազգուշացվել է պետական անվտանգության կոմիտեի կողմից նման արարքի անթույլատրելիության մասին: Սակայն Շահվերդյանը դրանից հետեւություններ չանելով 1966թ. է-ի միջոցով տարածել է համանման բովանդակությամբ չորս թռուցիկներ: 1967թ. վկա Զ-ին է տվել երեք ֆոտոթռուցիկներ զրպարտչական բովանդակության, որ իբր ՍՍՀՄ-ում ազգերը իրավահավասար չեն, որ ՍՍՀՄ-ում չկա դեմոկրատիա, ոտնահարվում են հայ ժողովրդի իրավունքները: Կոչ է արվում ստեղծել «Հայկական միացյալ պետություն»:

1967թ. աշնանը նույն Զ-ին է տվել գաղտնի տպագրված «Փարոս» թերթը որում շարադրված են հակասովետական ազգայնական բովանդակությամբ հոդվածներ, որ իբր Մարքսիզմ-Լենինիզմը նպատակ է հետապնդում հարստահարել փոքր ազգերին:

1968թ. Շահվերդյանը կրկին անգամ նախազգուշացվել է պետական անվտանգության կոմիտեի կողմից: Այս նախազգուշացումից նույնպես համապատասխան հետեւություններ չի արել եւ վերջ չի տվել իր անթույլատրելի գործունեությանը: Շահվերդյանը նման անթույլատրելի արարքների համար վտարվել է ԼԿԵՄ շարքերից: Հակասովետական բնույթի գրականություն տարածելու նպատակով Շահվերդյանը 1963-1972թթ. «Գիտություն եւ տեխնիկա», «Սովետական գրականություն» ամսագրերի, «Սովետական Վրաստան» թերթի խմբագրություններին, Հայաստանի գրողների միություն, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի եւ այլ հիմնարկությունների հասցեներով ուղարկվել է 39 ֆոտո-կոչեր, 13 նյութեր՝ հոդվածներ եւ բանաստեղծություններ: Նրանցից են «Մարդու իրավունքները», «ազգերի մերձեցման քողի տակ», «փաստերը համառ են» «կոչեր սփյուռքի հայությանը», «բաց նամակ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը, մինիստրների սովետին եւ կենտրոնական կոմիտեին»: Այդ փաստաթղթերում բացահայտ հերյուրանք է արտահայտված սովետական իշխանության եւ բոլշեւիկների հասցեին, որ իբր բոլշեւիկները սկզբից եւեթ ազգերի լիկվիդացման նպատակ են հետապնդել, որ ՍՍՀՄ-ը իրենից ներկայացնում է «ռուսական կայսրություն», ոչ ռուս ժողովուրդները չունեն ինքնուրյունություն, անկախություն, ենթարկվում են ասիմիլացիայի, որ ռուսները օգտագործում են իրենց օգտին ոչ ռուս ժողովուրդների աշխատանքը:

Ստեղծված գաղտնի խմբակների հավաքներին մասնակցել են Ա-ն Ժ-ն Բ-ն Ի-ն Ե-ն Գ-ն Լ-ն Ս-ն եւ ուրիշներ:

Նշված խմբակներում Շահվերդյանը տարածել է իր կողմից պատրաստված եւ ձեռք բերված հակասովետական հետեւյալ գրականությունը «մեր ձգտումները եւ նպատակը», «մեր պահանջները», «Հայաստանի միացյալ նախարարությունները», «երազանք եւ իրականություն» «ամնիստիա-հումանիզմ, իրականություն», «հիշեցում հայրենասերներին», «այրան կանչ կամ գեների լեզու» եւ այլ նյութեր: Այդ նյութերում զրպարտչորեն խոսվում է, որ իբր ՍՍՀՄ-ում առկա են ստրկական նոր կանոներ, որ իբր ժողովուրդների նկատմամբ կիրառվում են «կարմիր բռնություն» դեսպոտիզմ եւ ստրկացման քաղաքականություն, որ մարդիկ հիմարացվում են «կոմունիզմի տեսիլքներով», որ ՍՍՀՄ-ը «ռուսիֆիկացման ազգերի կույտ է» եւ այլն հերյուրանքներ:

Շահվերդյանը տարածել է (տվել է դատապարտյալ Թովմասյանին, նրա մոտից էլ ուրիշներն են վերցրել եւ ծանոթացել) արտասահմանում տպագրված «Վարագ» ամսագիրը, որը ընդհանուր օգտագործման համար խիստ սահմանափակ է:

Այդ ամսագրում գովերգվում է 1918-1920թթ. Հայաստանի դաշնակցություն կուսակցության վարած քաղաքականությունը: Դրան հակառակ վատաբանվում է բոլշեւիկների վարած քաղաքականությունը:

1969թ. վերջերին Շահվերդյանը Երեւանի Իսահակյանի անվան այգում «Մաեստրո» անունով ներկայացել է Ժ-ի ղեկավարած գաղտնի խմբի հավաքին եւ իր ելույթում նշել է թե ինչպիսին պետք է լինի գաղտնի խմբի անդամը՝ գաղտնապահ, քաղաքակա - նապես պատրաստված, նվիրված իր նպատակին, ունենա ամուր կամք:

1970թ. գարնանը Շահվերդյանը վկաներ Ա-ի եւ Բ-ի միջոցով կապ է հաստատել գաղտնի խմբի ղեկավարներ Մելիքյան Վալտերի եւ Բուդաղյան Յուրայի հետ (որոնք 1972թ. դատապարտվել են քր. օր. 65 հ. 1-մ. եւ 67 հ.) Ցանկացել են պարզել գաղտնի խմբակները միավորելու եւ համատեղ գործելու հնարավորությունը: Պայմանավորվել են գաղտնի նյութեր փոխանակել խմբակների միջեւ: Այդ նպատակով Շահվերդյանը վկաներ Ա-ի եւ Բ-ի միջոցով Վ. Մելիքյանին եւ Բուդաղյանին է ուղարկել «Հայաստանի միացյալ նախարարություններ», «երազանք եւ իրականություն», «ամնիստիա-հումանիզմ, իրականություն», «դատական հաշվեհարդար հայ հայրենասերների դեմ», «հիշեցում հայրենասերներին», «մեր ձգտումները եւ նպատակները», «մեր պահանջները» նյութերը: Վալտեր Մելիքյանից եւ Յուրա Բուդաղյանից ստացել է «մեր կարծիքը եւ տպավորությունները՝ Հայաստանի միացյալ նախարարություններ, երազանք եւ իրականություն, աշխատանքի մասին», «դիտողություններ», «երկու խոսք» նյութերը: Նշված նյութերը բացահայտ զրպարտանք են արտահայտում սովետական իշխանության հասցեին: Նշվում է, որ իբր հայաստանը ռուսաստանի գաղութն է, ՍՍՀՄ-ը «ցարական իմպերիայի, հարկադիր միություն է, որը արգելակում է ազգերի տնտեսական եւ կուլտուրական զարգացումը: Շահվերդյանը իր կողմից գաղտնի գործունեության մեջ ընդգրկված Ե-ին է տվել ազգայնական բովանդակություն ունեցող «մեր խնդիրները», «Հայաստանի միացյալ նախարարությունները, երազանք եւ իրականություն» նյութերը:

1971թ. ամառը Շահվերդյանը վկաներ Ա-ի եւ Բ-ի միջոցով կազմակերպել է արշավ: Գաղտնի խմբակի մասնակիցներին տարել են Սիսիանի շրջան արշավի, նրանց ֆիզիկական եւ հոգեւոր կոփվածություն տալու համար:

Շահվերդյանը 1969թ. կապ հաստատելով գործով մյուս ամբաստանյալ Ա. Թովմասյանի հետ, ծավալել են հանցավոր գործողություն: Հաճախակի հանդիպելով Թովմասյանին եւ նրա ընկերներին քննարկել են կազմակերպական բնույթի հարցեր՝ Արարատի շրջանում անլեգալ խմբակ ստեղծելու, ազգայնական բնույթի գրականություն ստեղծելու եւ տարածելու համար տպագրական օրգան ստեղծելու, դրամական միջոցներ հավաքելու հարցեր:

Շահվերդյանը եւ Թովմասյանը ըստ իրենց պայմանավորվածության 1972թ. մայիսի 20-ին գնացել են Սարդարաբատ, որտեղ Շահվերդյանը զրույց ունեցավ մի խումբ անձանց հետ (այդ թվում Լ-ի Ա-ի Խ-ի Թ-ի Ծ-ի եւ ուրիշների):

Որոշ ժամանակ անց հավաքել է 420 ռ. ընդ որում Լ-ից 80 ռ. Ա-ից 40ռ. Ծ-ից 100ռ: Հավաքված 420ռ. տրվել է Շահվերդյանին, որը օգտագործել է տարբեր նպատակների:

Տարածելու նպատակով Շահվերդյանը 1970թ. եւ 1973թ. սկզբներին Թովմասյանին է տվել ազգայնական-հակասովետական բնույթի մի շարք նյութեր, այդ թվում արտասահմանում տպագրվող 1970թ. ապրիլ ամսվա «Վարագ» ամսագիրը, որում գովաբանվում է բուրժուա-ազգայնական «դաշնակցություն» կուսակցության գործունեությունը եւ զրպարտչորեն վատաբանվել են բոլշեւիկների եւ սովետական պետության գործունեությունը:

Շահվերդյանը Թովմասյանին է տվել «երիտասարդ հայ» անլեգալ ձեւով պատ - պաստված, գրամեքենայով տպագրված սովետական պետական կարգերը արատա-

վորող հակասովետական բովանդակությամբ ամսագիրը: Որում հիմնականում տպագրված են Շահվերդյանի բանաստեղծությունները «Արմենակ Հայկազյան» ծածկանունով: Այդ նյութերն են «մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիա», «ազգերի մերձեցման քողի տակ», «կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին», «երկու խոսք հայ հայրենասերների պայքարի մասին» եւ այլն:

Խուզարկությամբ Շահվերդյանի բնակարանից հայտնաբերվել է «Էրիկա» մակնիշի գրամեքենա: Ըստ փորձաքննության եզրակացության նշված «երիտասարդ հայ» ամսագիրը տպագրվել է այդ գրամեքենայի վրա: Այդ գրամեքենայի վրա են տպագրվել նաեւ Շահվերդյանի բնակարանից հայտնաբերված հետեւյալ նյութերը՝ «գոյության պայքար», «ճարահատյալ որոշում», «հայրենասեր հայուհիս», «քավության նոխազ», «հայորդիների երգը», «նամակ հեռվից», «Հարություն», «այրան կանչ կամ գեների լեզուն», «վարանում», «վերադարձ», «երազ», «կախարդական տաճար», «ազգերի մերձեցման քողի տակ»:

Շահվերդյանը պատրաստել եւ իր բնակարանում պահել է հետեւյալ գրականությունը, որը հայտնաբերվել է բնակարանի խուզարկության ժամանակ «խռովարարների սերունդը», «Հայաստանը եւ ազգային հարցը», «ոչ ազատություն է տվել ռուսական սոցիալիզը անհատին», «մակագրություններ հեռագրի կապակցությամբ», «մեր խնդիրները», «անհատի պաշտամունքը որպես քավության նոխազ», «հիշեցում հայրենասերներին (բանտախուց, դատավարություն)» եւ այլ նյութեր: «Խռովարարների սերունդը» տեքստում Շահվերդյանը բացահայտ կերպով զրպարտում եւ արատավորում է սովետական պետությունը, ՍՄԿԿ եւ սովետական կառավարության ներքին եւ արտաքին քաղաքականությունը՝ որ իբր խախտվում է ազգերի սուվերենությունը, որ ՍՍՀՄ-ում դեմոկրատիա չկա, ասելով «դեմոկրատիա չկա անհատի համար, էլ ուր մնաց մասսաների համար»: Նենգորեն նշվել է «առաջին պատմական ամենամեծ սուտն այն է, որ բոլոր հանրապետությունները կամավոր եւ հավասար իրավունքներով են միավորվել մեկ պետության մեջ» եւ նման այլ հերյուրանքներ:

Ամբաստանյալ Շահվերդյանը 1967թ. գործով վկա Կ-ից վերցրել է մոտ 10 կգ. տպատառեր, տպագրական նպատակների համար: Այդ տառերը Կ-ն ապօրինի կերպով դուրս է բերած եղել տպարանից, որտեղ ինքը աշխատելիս է եղել: Նշված տպատառերի մի մասը թափել է գետը, իսկ մնացած մասը (1,1կգ) հայտնաբերվել է Շահվերդյանի կողմից թաքցված տեղից (հ. 1 գթ. 70):

1973 թ. փետրվարի 25-ին Շահվերդյանի նախաձեռնությամբ վկա Ռուբեն Խաչատրյանի բնակարանում կազմակերպվել է զորավար Վարդան Մամիկոնյանի օրվա նվիրված հավաք, որին ներկա են եղել 25-30 մարդ: Որտեղ իր ելույթում ամբաստանյալ Ա. Թովմասյանը զրպարտչական արտահայտություններ է կատարել ասելով, որ այժմ ՍՍՀՄ-ում «սպիտակ ջարդ» է տեղի ունենում, որ Ռուսաստանում գտնվող կես միլիոն հայերի համար հայկական դպրոցներ չլինելու պատճառով հայական լեզուն մոռացվում է այդտեղ: Որպիսի հանգամանքը դատաքննության ժամանկ ընդունեց ինքը Ա. Թովմասյանը:

Ամբաստանյալ Շահվերդյանը 1971թ. սեպտեմբերից մինչեւ 1973թ. մարտը հանրօգուտ աշխատանքով չի զբաղվել, այլ զբաղվել է վերեւում նշված գործունեությամբ: Բացի այդ զբաղվել է սպեկուլյացիայով, այդպես Շահվերդյանը 1972թ. հունիսին շահ ստանալու նպատակով Մոսկվայում գնել է 93 հատ փողկապներ հատը 2ռ. 30կ. Այդպիսիք Երեւանում վերավաճառելու նպատակով: Երեւանում բռնվելուց հետո նշված փողկապների մի մասը տվել է իր ընկերներին ասելով, որ նրանք նախորոք իրեն դրամ են

տվել իրենց համար փողկապներ գնելու համար: 30 հատ փողկապներ տվել է վկա Լ-ին, վերավաճառելու բարձր գնով: Նշված փողկապներից Հ-ն Լ-ն գնել է վեց հատ փողկապներ հատը վեց ռուբլի: Վկա Հ-ն իր գնած 6 հատ փողկապներից երկուական հատ տվել է իր ընկերներ Ջ-ին եւ Դ-ին այն գնով ինչ որ ինքն էր գնել հատը վեց ռուբլի: Ամբաստանյալ Շահվերդյանը հինգ փողկապ տվել է Ե-ին հատը ութ ռուբլով վաճառելու, սակայն թանկ լինելու պատճառով չեն վաճառվել եւ այդպիսիք վերադարձվել են Շահվերդյանին:

Վկա Ա-ն նույնպես պնդել է, որ ինքը փողկապ է գնել Շահվերդյանից:

Ամբաստանյալ Թովմասյանը Արարատի շրջանում «հայ հայրենասերների միություն» կոչվող գաղտնի խումբը կազմելու, ազգայնական-հրահրիչ բովանդակությամբ թռուցիկներ պատրաստելու եւ իր կողմից ձեռք բերված գրամեքենայի վրա տպագրելով եւ այդպիսիք լեռնային Ղարաբաղում տարածելու փորձ կատարելու համար 1966թ. պետական անվտանգության կոմիտեի կողմից նախազգուշացվելուց հետո էլ չի դադարել իր վնասակար գործունեությունը: Կապ է պահպանել իր նախկին խմբակի անդամներ Լ-ի Ա-ի Խ-ի Ը-ի Ծ-ի Թ-ի հետ: Որոնց մեջ վատառողջ ազգայնական տրամադրություններ է առաջացրել սովետական իշխանության ազգային քաղաքականության նկատմամբ: Թովմասյանը 1967-1968թթ. պատրաստել, տարածել եւ պահել է հակասովետական-ազգայնական բովանդակության հետեւյալ նյութերը՝ «ՍՄԿԿ նախագահությունը» «Արարատի հայ հայրենասերների միության ծրագիրը» «հայ հայրենասերների միության խմբակը եւ նրա գործունեությունը: Նշված նյութերի մեջ գովերգվում է բուրժուա-ազգայնական «դաշնակցություն» կուսակցության գործունեությունը եւ զրպարտչորեն նշվում, որ սովետական պետությունը եւ նրա ստեղծողը դավաճանել են հայ ժողովրդին եւ գործարքներ են կատարել օգուտ թուրքիայի, որ սովետական հայաստանը սուվերեն չէ, կոչ է արվում պայքարել «միացյալ անկախ հայաստան» ստեղծելու համար:

Թովմասյանը կազմակերպել է 1968թ ապրիլին ազգայնական պահանջներով խմբակային ելույթ ունենալ Արարատ քաղաքում: Այդ նպատակի համար պատրաստել է լոզունգներ, սակայն կազմակերպված ելույթը կանխվել է համապատասխան մարմինների կողմից:

Թովմասյանը կրկին անգամ նախազգուշացվել է նման արարքների անթույլատրելիության մասին:

Թովմասյանը կուսակցականին անվայել նման արարքներ թույլ տալու համար վտարվել է ՍՄԿԿ շարքերից (հ.10 գ.թ. 250-253, 282-287): Թովմասյանը այդ ամենից հետո էլ համապատասխան եզրակացություններ չի արել եւ շարունակել է իր անթույլատրելի արարքները:

1969թ. Թովմասյանը կապ է հաստատել ամբաստանյալ Բ. Շահվերդյանի հետ եւ Սվետական կարգերը արատավորելու նպատակով հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա են արել: Ստեղծել եւ ձեռք են բերել հակասովետական բովանդակության գրականություն եւ այն տարածելու համար կազմակերպական բնույթի գործունեություն են ծավալել:

Թովմասյանը 1971թ. դեկտեմբերի 10-ին բաց նամակ է ուղարկել ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Լ.Ի. Բրեժնեւին եւ «պրավդա» թերթի խմբագրություն: Այդ նամակներում զրպարտչորեն նշել է, որ «հայաստանը սովետական ռուսաստանի կուլտուրական գաղութն է եւ այլ զրպարտություններ սովետական կարգերի նկատմամբ:

Թովմասյանը իր համախոհներով Շահվերդյանի հետ հանդիպելիս խոսել են «ազգային հայրենասիրական» գործունեություն ծավալելու նպատակով տպագրական օրգան ստեղծելու, ազգայնական բնույթի նյութեր ստեղծելու եւ տարածելու, ինչպես նաեւ դրամական միջոցներ հավաքելու եղանակների մասին:

Շահվերդյանի հետ ունեցած նախնական պայմանավորվածության համաձայն 1973թ. մայիսի 28-ին Թովմասյանը վկաներ Ա-ին Խ-ին Ը-ին Ծ-ին Շահվերդյանին հանդիպել են Սարդարապատում: Որտեղ Շահվերդյանը զրուցելով նշված անձանց հետ նշել է, որ «ազգային հայրենասիրական» աշխատանք տանելու համար անհրաժեշտ է դրամական միջոցներ հավաքել:

Սարդարապատում գտնված ժամանակ Թովմասյանը հանդիպել եւ զրույց է ունեցել որպես զբոսաշրջիկ արտասահմանից ժամանած «դաշնակցություն» կուսակցության մեկի՝ Ճ-ի հետ եւ հետաքրքրություն ցուցաբերել դեպի նրա գործունեությունը:

Դրանից որոշ ժամանակ անց Թովմասյանը Լ-ից Ա-ից Ծ-ից Խ-ից եւ իրենցից հավաքել է 480ռ եւ այն հանձնել է ամբաստանյալ Շահվերդյանին, որպիսի հանգամանքը հիմնավորված է նշված անձանց ցուցմունքներով եւ Շահվերդյանի խոստովանությամբ:

Թովմասյանը 1972թ. եւ 1973թ. սկիզբներին տարածելու նպատակով Շահվերդյանից ստացել է հակասովետական բնույթի մի շարք գրականություն՝ այդ թվում արտասահմանում տպագրվող «վարագ» ամսագիրը, որը զրպարտություններ անելով բոլշեւիկների եւ սովետական պետության հասցեին, գովերգում է բուրժուա-ազգային «դաշնակցություն» կուսակցության գործունեությունը:

Թովմասյանը ծանոթանալով նշված ամսագրին այն տվել է ծնոթանալու Ա-ին եւ ուրշներին:

Թովմասյանը Շահվերդյանից ստացել է գաղտնի կերպով պատրաստված մեքենագիր հակասովետական բովանդակություն ունեցող «երիտասարդ հայեր» ամսագիրը; Թովմասյանը այն կարդալուց հետո տվել է կարդալու վկաներ Մ-ին Ծ-ին Լ-ին եւ ուրիշների:

Թովմասյանը Շահվերդյանից ստացել եւ տարածել է նաեւ «մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիա», «ազգերի մերձեցման քողի տակ» «երկու խոսք հայ հայրենասերների պայքարի մասին», «կրկին ռուս թուրքական դիվանագիտության զոհասեղանին» նյութերը, որոնք ունեն հակասովետական-ազգային բովանդակություն:

Այդ նյութերին ծանոթացել են Թովմասյանը եւ վկաներ Լ-ն Ա-ն Վ-ն Ծ-ն Յ-ն եւ ուրիշները:

25/2-7…թ. վկա Ռուբեն Խաչատրյանի բնակարանում տեղի ունեցած հավաքում (Վարդանաց օրվա առթիվ) ---------- ելույթ է ունեցել եւ հայտնել, որ ՍՍՀՄ-ում գոյություն ունի «սպիտակ ջարդ» ասիմիլացիայի ---- հայ ազգի նկատմամբ:

Որպիսի փաստորեն ------- ամբաստանյալ ----:

1973թ, մարտին Թովմասյանը իր բնակարանում հավաքելով իր համախոհներ Խ-ին Ա-ին եւ ուրիշների իր ելույթում հայտնել է, որ անհրաժեշտ է Արարատի շրջանում գաղտնի խմբակ ստեղծել, կոմիտե եւ կոմիտեի ղեկավար ընտրել:

Կոմիտեի ղեկավար ում ընտրելու հարցում տարաձայնություն առաջանալու պատճառով կոմիտե չի ընտրվել: Այդ փաստը հաստատվել է ինչպես Թովմասյանի խոստովանությամբ, այնպես էլ վկաներ Խ-ի եւ Ա-ի ցուցմունքներով:

Թովմասյանը տարածել է նաեւ անձամբ իր կողմից կազմված «դասեր անցյալից եւ ներկայից» «1914թ. առաջին աշխարհամարտը եւ Հայաստանը» բացահայտ հակասովետական բովանդակություն ունեցող նյութերը: Այդ նյութերում ամենաստոր ձեւով

զրպարտություններ են արվել սովետական պետության ստեղծողի եւ բոլշեւիկների հասցեին, ասելով, որ ռուսական բոլշեւիզմը իր վարակը տարածեց նաեւ կովկասում, որ ռուսաստանը իր վրա է վերցրել միջազգային ժանդարմի մենաշնորհը, որ բոլշեւիկները հայաստանը մասնատել են թուրքիայի, ադրբեջանի եւ վրաստանի միջեւ, սակայն դրա համար անամոթաբար մեղադրում են դաշնակցությանը, որ Ռուսաստանը մեկընդմիշտ գաղութացրել է Հայաստանին եւ նման այլ զրպարտություններ (հ. 10 գթ. 42-70, հ.9 գթ.351-450):

Բացի նշվածից ամբաստանյալ Թովմասյանը պատրաստել եւ տարածել է նաեւ ազգայնական բովանդակության հետեւյալ նյութերը «մենք անկեղծ զինվոր ենք» «ղարաբաղի ողբը» «ձայն տուր ով Մասիս» եւ այլ նյութեր, որոնց ծանոթացել են վկաներ Ն-ն Ա-ն եւ ուրիշներ:

Ամբաստանյալ Շահվերդյանը եւ Թովմասյանը չառարկելով իրենց վերագրվող արարքների դեմ, հայտնեցին, որ իրենք կատարել են անթույլատրելի արարքներ, որի համար զղջում են, միաժամանակ հայտնեցին, որ իրենց մեղավոր չեն ճանաչում, պատճառաբանելով, որ իրենք նպատակ չեն ունեցել սովետական իշխանությունը քայքայել կամ թուլացնել, այլ ցանկացել են հարց բարձրացնել, որ Հայաստանի հողերը, Նախիջեւանը, լեռնային Ղարաբաղը, Ախալքալաքը եւ արեւմտյան Հայաստանը միացվեն Սովետական Հայաստանին: Միաժամանկ հայտնեցին, որ եթե իրենց կողմից պատրաստված կամ ձեռք բերված գրականության մեջ ազգայնական-հակասովետական եզրակացություններ կան, այդպիսիք իրենց ազգային զգացմունքների կամ մոլորության արդյունք են, որի համար խնդրեցին իրենց նկատմամբ ներողամիտ լինել:

Ամբաստանյալ Շահվերդյանը պատճառաբանեց, որ «երիտասարդ հայ» ամսագիրը ինքը չի պատրաստել, այլ այդպիսին տվել է «վարդան» անունով մի անձնավորություն: Ինքը վկա Զ-ին չի տվել գաղտնի կերպով տպագրված «փարոս» թերթը, որ ինքը 1970թ. աշնանը Զվարթնոցում հանդիպում չի ունեցել գաղտնի խմբի ղեկավարներ «Վարդան» եւ «Վահան» անձնավորությունների հետ:

Շահվերդյանը միաժամանակ պատճառաբանեց, որ ինքը սպեկուլացիայով չի զբաղվել:

Ամբաստանյալ Շահվերդյանի եւ Թովմասյանի պատճառաբանությունները անհիմն են եւ հերքված են հետեւյալ ապացույցներով:

Վկա Զ-ի ցուցմունքներով հիմնավորված է, որ «փարոս» թերթը Շահվերդյանն է տվել վկա Զ-ին, որի փոխհարաբերությունները Շահվերդյանի հետ նորմալ են եւ զրպարտելու որեւէ հիմք չկա:

Վկաներ Ա-ն եւ Բ-ն իրենց ցուցմունքներում հաստատել են, որ Շահվերդյանը 1970թ. աշնանը իրենց հետ Զվարթնոցում հանդիպել է գաղտնի խմբի ներկայացուցիչներ «Վարդան» եւ «Վահան» ծածկանուն ունեցող անձնավորությունների հետ:

«Երիտասարդ հայ» հակասովետական բովանդակություն ունեցող ամսագիրը, որ պատրաստել է Շահվերդյանը հիմնավորված է հետեւյալ ապացույցներով՝ փորձաքննության եզրակացությամբ, որ նշված ամսագիրը տպագրված է Շահվերդյանի բնակարանից հայտնաբերված «էվրիկա» գրամեքենայով: Շահվերդյանի բնակարանից հայտնաբերվել են այդ նույն գրամեքենայի վրա տպագրված բանաստեղծությունների օրինակներ, որոնք տեղադրված են «երիտասարդ հայ» ամսագրում:

Ամբաստանյալ Թովմասյանը հայտնել է, որ «երիտասարդ հայ» ամսագրի մասին Շահվերդյանի հետ խոսելիս ես ասի , ամսագրի որոշ նյութեր խրթին են եւ արտաքին տեսքը լավ չէ: Շահվերդյանը ասել է ես այդքան եմ կարողացել անել (հ.3 գթ.. 120):

Վկա Ա-ն ցուցմունք է տվել այն մասին, որ 1972թ. վերջին, թե 1973թ. սկզբին Շահ - վերդյանը իրեն ասել է իր մոտ է «երիտասարդ հայեր» հանդեսը, որը այն նյութերից է, որոնք ինքը նախորոք տվել է ինձ ծանոթանալու (հ. 8 գք. 235-241): Բացի այդ հիշյալ ամսագրի մեջ տեղ են գտել հիմնականում Շահվերդյանի բանաստեղծությունները:

Անհիմն է նաեւ Շահվերդյանի այն պատճառաբանությունը, որ ինքը սպեկուլյացիա-յով չի զբաղվել: Վկաներ Լ-ի Հ-ի Ջ-ի Դ-ի ցուցմունքներով հիմնավորված է, որ իրենք փողկապները գնել են մեկ հատը 5-6 ռ. այն դեպքում, երբ Շահվերդյանը Մոսկվայում գնել է հատը 2ռ. 30կ.:

Ե-ն ցուցմունք տվեց այն մասին, որ Շահվերդյանը իրեն 5 հատ փողկապ է տվել եւ ասել վաճառի հատը 8ռ.: Թանկ լինելու պատճառով փողկապները չեն վաճառվել եւ վե-րադարձվել են Շահվերդյանին (հ. 5 գք. 17-20):

Այդ փաստը հիմնավորված է նաեւ փողկապների մեծաքանակությամբ (98 հատ):

Ամբաստանյալներ Շահվերդյանին եւ Թովմասյանին վերագրվող արարքը՝ հակասո-վետական ագիտացիա եւ պրոպագանդա անելը, ինչպես նաեւ այդ նպատակով կազ-մակերպչական գործունեություն կատարելը հիմնավորված է ինչպես իրենց բացատրություններով ու բազմաթիվ վկաների ցուցմունքներով այլեւ ամբաստանյալ-ներ Շահվերդյանի եւ Թովմասյանի կողմից կազմված կամ ձեռք բերված գրականութ-յամբ, որոնք որպես իրեղեն ապացույց կցված են գործին: Նշված գրականության բովանդակությունից պարզ կերպով երեւում է, որ այդպիսիք ազգայնական հակասովե-տական են: Այդ գրականության հակասովետական լինելը հիմնավորված է նաեւ դրանց քննության մասին կազմված արձանագրություններով (հ.7 գք. 1-12, հ.9 գք. 138-184):

Նշված գրականության տարածելը կամ պահելը հիմնավորված է ինչպես ամբաս-տանյալներ Շահվերդյանի եւ Թովմասյանի ցուցմունքներով, այնպես էլ նրանց բնա-կարաններից խուզարկությամբ հայտնաբերված գրականության փաստով (հ. 1 գք. 17-26, 53-60): ու վկաներ Ա-ի Գ-ի Բ-ի Ե-ի Է-ի Ջ-ի Ը-ի Շ-ի Ռ-ի Չ-ի Փ-ի Տ-ի Պ-ի Ձ-ի Լ-ի Թ-ի Ֆ-ի եւ ուրիշների ցուցմունքներով այն մասին, որ իրենք ծանոթացել են նշված գրականությանը:

Անհիմն է ամբաստանյալներ Շահվերդյանի եւ Թովմասյանի այն պնդումը, որ իրենք նպատակ չեն ունեցել սովետական կարգերը քայքայել: Նրանց կողմից կազմված կամ ձեռք բերված փաստաթղթերի բովանդակությունից երեւում է, որ նրանք ցանկացել են սովետական կարգերը քայքայել: Ամեն կերպ զրպարտել եւ արատավորել են սովետա - կան պետական եւ հասարակական կարգերը եւ ցանկացել են ազատագրվել այդ կար-գերից: Այսպես՝ ամբաստանյալ Թովմասյանը նշել է .... , թոթափել բոլշեւիզմի գաղութատիրական արյունոտ շղթաները» (հ.10 գք. 249 ծոցատետրի 3-րդ էջ): «երկու խոսք» տեքստում նշված է «այնքան, որքան որ մեր պայքարի հիմնական նպատակը - --- պես հակադիր է կենտրոնական կառավարության քաղաքականությանը, այդքանով էլ պայքարը գնում է կենտրոնական կառավարության դեմ…» (հ.3 գք. 90):

Այս ամենը կոլեգիային բերում է այն հաստատ համոզմանը, որ ամբաստանյալ-ներ Բ. Շահվերդյանին եւ Ա. Թովմասյանին վերագրվող արարքները գործի տվյալներով հիմնավորված են եւ որ ամբաստանյալների արարքի որակումը՝ Շահվերդյանի նկատ-մամբ քր. օրի 65հ. 1-մ., 67հ. եւ 156հ. 1-մ եւ Թովմասյանի նկատմամաբ քր. օրի 65հ. 1-մ. եւ 67հ. ճիշտ են, նրանք պետք է պատասխանատվության ենթարկվեն այդ հոդվածներով:

Կոլեգիան պատիժ սահմանելիս հաշվի է առնում ինչպես ամբաստանյալների գոր-ծած արարքի վտանգավորությունը այնպես էլ նրանց ինքնությունը, որ նրանցից Շահ-

վերդյանը նախկինում դատված չի եղել, որ Թովմասյանի խնամքին են գտնվում չորս մանկահասակ երեխա եւ ծեր ծնողները:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օրի 193-194 հոդվածներով դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Բագրատ Լեւոնի Շահվերդյանին ճանաչել հանցավոր քր. օրի 65հ. 1-մասով, 67 հ. եւ 156հ. 1 մասով, իսկ Արարատ Սիրեկանի Թովմասյանին ճանաչել հանցավոր քր. օրի 65հ. 1մասով եւ 67 հոդվածով եւ այս հոդվածներով դատապարտել նրանցից Բագրատ Լեւոնի Շահվերդյանին քր. օրի 65հ. 1 մասով ազատազրկման հինգ տարի ժամանակով եւ աքսորի երկու տարի ժամանակով, քր օրի 156 հ. 1-մասով դատապարտել ուղղիչ աշխատանքներով մեկ տարի ժամանակով աշխատավարձի 15 տոկոսի բռնագանձումով, քր. օրի 37հ. համակցությամբ Բ. Շահվերդյանին թողնել կրելու ազատազրկում հինգ տարի ժամանակով եւ աքսոր երկու տարի ժամանակով:

Սահմանել, որ Շահվերդյանը պատիժը կրելու է ուժեղացված ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1973թ. մարտի 10-ից:

Արարատ Թովմասյանին քր. օրի 65հ. 1- մ դատապարտել ազատազրկման երեք տար վեց ամիս ժամանկով առանց աքսորի: Սահմանել, որ Թովմասյանը պատիժը կրելու է ուժեղացված ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1973թ. ապրիլի 6-ից:

Իրեղեն ապացույց «Էվրիկա» գրամեքենան իր արկղով 1,1կգ տպագրական տառերը, հարյուր հատ գրասենյակային եւ ---------- ային թղթերը եւ մեկ սրվակ սոսինձը պետականացնել---------- Շահվերդյանին պատկանող ---------- կալանքը վերացնել:

Դատավճիռը վճռաբեկության կարգով գանգատարկման եւ բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող՝ **Ա. Քեշիշյան**

11./12-73

Ազգային միացյալ կուսակցություն - 1974

1974 թվականն աննախադեպ էր քաղաքական դատավարությունների քանակի առումով: Ե՛վ դրանից առաջ, ե՛ւ դրանից հետո մեկ տարում այդքան շատ դատավարություններ չէին եղել: Այդ տարվա ընթացքում կայացել է 9 դատավարություն, եւ դատապարտվել է 16 մարդ: Նրանցից մեկը՝ Անդրանիկ Մարգարյանը, ճիշտ է, դատապարտվել է 1975 թ. փետրվարին, բայց ձերբակալվել է 1974-ի նոյեմբերին, եւ նրա նկատմամբ հարուցված գործն անմիջականորեն առնչվում է հենց այդ տարվա դատավարություններին: Բոլոր դատապարտվածները Ազգային միացյալ կուսակցության անդամներ էին: 1969 թ. դատապարտվեցին ԱՄԿ հիմնադիրներ Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Զատիկյանը եւ Շահեն Հարությունյանը, այնուհետեւ ձերբակալվեցին ու մեկ տարի անց՝ 1970-ին դատապարտվեցին Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը, Հակոբ Աշիկյանը, Ռաֆայել Բարսեղովը, Աշոտ Խաչատրյանը: Կալանավորումների այս շարքը պատճառ դարձավ, որպեսզի ԱՄԿ-ն ինչ-որ ժամանակահատված նվազեցնի ակտիվ գործունեությունը: Սակայն, սկսած 1972-73-ականներից, երբ կալանավայրերից, պատժաչափերը կրելուց հետո, մեկը մյուսի հետեւից ազատ արձակվեցին դատապարտված ԱՄԿ-ականները, սկսվեց ԱՄԿ-ի ակտիվացման նոր փուլը: Այս առումով յուրահատուկ էր 1973 թվականը: Փորձառու ԱՄԿ-ականներն իրենց ներկայությամբ, մասնակցությամբ ու կուտակած փորձով նոր թափ էին հաղորդում ընդհատակյա պայքարին: Ակտիվանում են ԱՄԿ մասնաճյուղերը, ձեւավորվում են իրարից անկախ գործող, բայց նույն կենտրոնից ղեկավարվող կառույցներ, ձեռք են բերվում տպագրական միջոցներ, հիմնվում է ընդհատակյա տպարան: Իրարից անկախ գործող ԱՄԿ խմբերի ու խմբակների գործունեությունը համակարգում ու կազմակերպում էր կալանավայրից նոր վերադարձած Պարույր Հայրիկյանը: Բացի անկախության համար պայքարի կոչ պարունակող թռուցիկներից ու տպագիր այլ նյութերի տարածումից, ԱՄԿ-ականները մարդաշատ ու տեսանելի վայրերում, շենքերի ու շինությունների պատերին, ճանապարհներին ու մայրուղիների վրա անկախության կոչեր են գրում: Այս վերջին նորամուծությունը հնարավորություն էր տալիս՝ առանց մեծ միջոցներ վատնելու, առանց տպագրական միջոցներ օգտագործելու անկախության գաղափարը հասցնել հնարավորինս շատ մարդկանց: Իհարկե, թռուցիկներն ունեին իրենց արժեքը. դրանք որոշակի տեքստեր էին, որտեղ ընթերցողին բացատրվում էր անկախության անհրաժեշտությունը եւ հնարավորությունը, տիրող գաղափարախոսության արատավորությունը, բայց ընդամենը մեկ թռուցիկ պատրաստելու, տպագրելու եւ տարածելու համար հսկայական ջանքեր, միջոցներ ու ժամանակ էր պահանջվում, եւ դեռ հարց էր՝ տպագրողները կհասցնե՞ն ողջ հասարակության վրա խորհրդային հատուկ ծառայությունների իրականացրած տոտալ վերահսկողության պայմաններում տարածել դրանք, ավելին՝ տարածելուց հետո չբռնվել: Կալանավորվելու եւ երկարատեւ պատժաչափի դատապարտվելու հավանականությունը ե՛ւ նախապատրաստական, ե՛ւ հետագա փուլերում չափազանց մեծ էր: Իսկ տեսանելի վայրերում՝ շենքերի պատերին անկախության մասին կոչեր գրելը համեմատաբար հեշտ էր ու արագ իրականացվող, եւ աշխատանքների ճիշտ կազմակերպման պարագայում՝ բռնվելու հավանականությունը շատ մեծ չէր: Որպես կանոն՝ այդ գործն արվում էր գիշերային ուշ ժամերի, երբ փողոցները դատարկ էին, իսկ առավոտյան մեծ թվով մարդիկ էին տեսնում ու կարդում անկախություն պահանջող կարգախոսները:

Մինչեւ 1974 թվականը ձերբակալված ԱՄԿ անդամների համար նախաքննության ու դատավարության ժամանակ կարեւորագույն գաղտնիքներ էին համարվում ԱՄԿ գոյությունը եւ իրենց ԱՄԿ-ական լինելը: Այդ մասին հարցաքննությունների ժամանակ մեկ բառ ասելն անգամ կարող էր դավաճանություն դիտարկվել: Իսկ ահա 1974-ին եւ դրանից հետո ԱՄԿ անդամները՝ նախաքննության ու դատավարության փուլերում, այնուհետեւ՝ նաեւ կալանավայրերում հայտարարում էին Ազգային միացյալ կուսակցության գոյության, նրա նախաձեռնած պայքարի եւ իրենց ԱՄԿ անդամ լինելու մասին:

1974-ի առաջին դատավարությունը տեղի ունեցավ մարտի 28-ին: Դատապարտվում էին Անահիտ Կարապետյանը, Ֆիրդուս Մուրադյանը եւ Գարեգին Դավթյանը, իսկ սրանից հետո՝ 1974-ի հունիսի 10-ին՝ Քաջիկ Սահակյանը: Մեկ ամիս անց՝ հուլիսի 10-ին դատապարտվում են Նորիկ Մարտիրոսյանը, Սամվել Մարտիրոսյանը եւ Լեւոն Բաղալյանը, հուլիսի 16-ին՝ Ռուբեն Խաչատրյանը, օգոստոսի 30-ին՝ Աշոտ Նավասարդյանը, հոկտեմբերի 3-ին՝ Գագիկ Առաքելյանը եւ Կոստան Կարապետյանը, հոկտեմբերի 23-ին՝ Ազատ Արշակյանը, Ռազմիկ Զոհրաբյանը եւ Ռազմիկ Մարկոսյանը, նոյեմբերի 22-ին՝ Պարույր Հայրիկյանը: 1975-ի փետրվարին դատապարտվում է 1974 թվականի նոյեմբերին կալանավորված Անդրանիկ Մարգարյանը:

Շինծու մեղադրանքով 1974 թ. է դատապարտվել նաեւ ԱՄԿ հին անդամներից Վազգեն Կարախանյանը:

Անահիտ Կարապետյան, Ֆիրդուս Մուրադյան, Գարեգին Դավթյան

Անահիտ Աղվանի Կարապետյանը ծնվել է 1952 թ., Երեւան քաղաքում: Դպրոցական տարիներից զբաղվել է հայրենասիրական գործունեությամբ: Մասնակցել է այդ տարիներին գործող պատանեկան հայրենասիրական խմբակներից մեկի աշխատանքներին: Խմբակը հետագայում կապ է հաստատել այլախոհական գործունեության մեջ ներգրավված Բագրատ Շահվերդյանի եւ Ռուբեն Խաչատրյանի հետ: Նրանց ղեկավարությամբ՝ այս եւ մի քանի նման այլ խմբակներ զուտ հայրենասիրությունից անցում են կատարում դեպի քաղաքականություն, ապա՝ հասնում անկախության գաղափարին: Բագրատ Շահվերդյանի դատավարության ժամանակ Անահիտենց խմբի անդամները ծանոթանում են դատավարությանը ներկա ԱՄԿ-ականների հետ: Կարճ ժամանակ անց խումբն ամբողջությամբ հարում է ԱՄԿ-ին եւ անմիջապես ներգրավվում անկախության կոչերով թռուցիկների պատրաստման ու տարածման, պատերին անկախության կոչեր գրելու եւ այս կարգի այլ գործունեության մեջ:

Առկա խմբերում ու խմբակներում կանայք միշտ էլ շատ են եղել: Նրանք ներգրավված էին «Հանուն Հայրենիքի» խմբում, Հայ հայրենասերների միությունում, Հայաստանի վերամիավորման միությունում, իսկ Ազգային միացյալ կուսակցությունն ունեցել է առանձին ու մինչեւ 1980-ականների երկրորդ կեսը մշտապես գործող «Օրիորդաց խումբ»:

Խմբերում գործող տղամարդիկ՝ ձերբակալվելուց հետո, որպես կանոն, ամեն ինչ արել են, որպեսզի բացահայտվելուց եւ կալանավորվելուց հետո կանանց զերծ պահեն ձերբակալումներից: Կանայք, ծայրահեղ դեպքերում, ներգրավված էին լինում միայն որպես վկաներ:

Անահիտ Կարապետյանենց խմբի տղաների պարագայում, գուցե նրանց տարիքի ու անփորձության, գուցե բոլորովին այլ պատճառներով, այս սկզբունքը չգործեց, եւ նախաքննության ու դատավարության ժամանակ ցուցաբերած ըմբոստ վարքի ու իր դեմ խմբի ձերբակալված անդամների տրված ցուցմունքների հետեւանքով՝ Անահիտ Կարապետյանը հենց դատարանի դահլիճում կալանավորվեց եւ ՀԽՍՀ քր. օր.-ի 69 (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը) եւ 206[1] (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) հոդվածներով դատապարտվեց երկու տարի ազատազրկման: Ֆիրդուս Մուրադյանը եւ Գարեգին Դավթյանը դատապարտվեցին միայն 69-րդ հոդվածով: Անահիտ Կարապետյանը պատիժը կրել է Չուվաշիայի Կազլովկա քաղաքի տարածքում գտնվող կանանց գաղութում: Ազատ արձակվելուց հետո շարունակել է իր գործունեությունը: Ներկայումս բնակվում է Երեւանում:

Ֆիրդուս Մեխակի Մուրադյանը ծնվել է 1955 թ., Աբովյանի շրջանի Զար գյուղում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ձերբակալվել է առաջին կուրսում ուսանելիս՝ 1973 թվականի հոկտեմբերին: Դատապարտվել է 7 ամիս ազատազրկման: Պատիժը կրել է Հայաստանում: Ապրում եւ աշխատում է Երեւանում:

Գարեգին Համբարձումի Դավթյանը ծնվել է 1955թ., Արմավիրում: Ավարտել է Երեւանի գեղարվեստի ինստիտուտը: Ձերբակալվել է երկրորդ կուրսում ուսանելիս՝ 1973 թ. հոկտեմբերին: Դատապարտվել է 7 ամիս ազատազրկման: Պատիժը կրել է Հայաստանում:

Անահիտ Կարապետյանը դատապարտման օրերին

Անահիտ Կարապետյանը որդու՝ Վարուժանի հետ

МИНИСТЕРСТВО ВНУТРЕННИХ ДЕЛ Серия ВС

СПРАВКА № 0219

Чувашской АССР

учреждение ю-34/5

27 марта 1976 г.

Карапетян

Анаида Ивановна

20 февраля 1952 года

г. Ереван

Армянской АССР

армянка

незамужняя

отношение к воинской службе —

осужденному(ой) 28/III-74г. Верховным судом Армянской ССР по ст. 69, 206-1 УК Арм ССР к 2 годам л/с

в том, что он(а) отбывал(а) наказание в местах лишения свобод с 28 марта 1974 г. по 27 марта 1976 г.

откуда освобожден(а) по отбытии наказания.

Зам. Начальника учреждения

Начальник отдела (части)

Անահիտ Կարապետյանի ազատականը

ԽՍՀՄ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ПРОКУРАТУРА
СССР

ПРОКУРАТУРА
АРМЯНСКОЙ ССР

375010, Երևան, Շահումյան 6

375010, Ереван, Шаумян 6

14.03.91 № 13-492-90

Քաղ. Անահիտ Աղվանի Կարապետյանին
Երևան, Շահումյանի փող. 9-րդ շենք
բնակ. 10

Ի պատասխան ՀՀ Գերագույն խորհրդի նախագահին և ՀՀ Գլխավոր դատախազին հասցեագրած դիմումների հայտնվում է, որ ՀՀ Գլխավոր դատախազի հսկողական բողոքի հիման վրա, ՀՀ Գերագույն դատարանի նախագահությունը իր 26.11.90թ. որոշմամբ բեկանել է Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1974թ. մարտի 28-ի, Ձեզ և մյուսներին դատապարտելու վերաբերյալ դատավճիռը և գործը կարճել է հանցակազմի բացակայության պատճառով: Դուք արդարացվել-ռեաբիլիտացվել եք:

Հայտնվում է նաև, որ ՀՀ Գլխավոր դատախազի կողմից նամակ է ուղարկվել Երևանի Ալյումինի գործարանի դիրեկտորին և 26-Կոմիսարների անվան 21 շրջանի Շրջխորհրդի գործկոմի նախագահին՝ գործող օրենսդրության հիման վրա Ձեզ արտահերթ կարգով բնակարանով ապահովելու համար:

Կից ուղարկվում է Ձեր արդարացման տեղեկանքը:

Պետանվտանգության մարմիններում
քննության վրա հսկող բաժնի պետ՝ Մ.Վ.Զիլինգարյան

Արդարացման կապակցությամբ Ա. Կարապետյանին բնակարանի հերթի վերցնելու մասին դատախազության գրությունը

Պատմում է Անահիտ Կարապետյանը

1967 թվականին մեր ուսուցիչը մեզ տարավ Սարդարապատի հուշահամալիր: Այնտեղ տոնախմբություն էր կազմակերպված: Մի խումբ տղաներ ազգագրական երգեր էին երգում ու արտասանում: 15 տարեկան էի: Դա ինձ համար նորություն էր: Զափազանց ոգեորված էի: Հետագայում, մեկ այլ միջոցառման ժամանակ, որը տեղի էր ունենում Մուսա լեռան հրամանատարներից մեկի՝ Եսայի Յաղուբյանի գերեզմանի մոտ, տեղեկացա, որ գոյություն ունի Հայաստանի երիտասարդական միություն, եւ որ՝ Սարդարապատի հուշահամալիրում, Յաղուբյանի գերեզմանի մոտ ու Պանթեոնում միջոցառումները հենց այս կազմակերպության անդամներն են կազմակերպում: Հանգամանքների բերումով կարողացա ծանոթանալ նրանցից ոմանց՝ Քաջիկ Սահակյանի կնոջ՝ Սվետայի, Գեւորգ Ղասաբյանի, Ալիսա Ղափլանյանի եւ այլոց հետ: Ալիսան դերասանուհի է, ապրում է արտերկրում: Այն տարիներին նա արտասանում էր, ես էլ էի արտասանում: Հետագայում ես ամունքի վարպետություն ուսանեցի: Երբ արտասահմանցիներ էին լինում մեր ամունքելու ժամանակ, մեզ՝ լավագույն արտասանողներիս գրիչներ էին նվիրում: Այդ տարիներին դեռ արտասահմանյան ծամոն չկար: Դպրոցական բեմերից մինչեւ մեծ բեմեր, այնուհետեւ կալանավայրերի բեմեր՝ արտասանել եմ: Մեր գործունեությունը համակարգում էր Բագրատ Շահվերդյանը: Գիտակցում էինք, որ ՊԱԿ-ը հետեւում է մեզ: Սակայն, դա մեզ համար խոչընդոտ լինել չէր կարող: 8-րդ

դասարանից սկսած՝ ինձ կանչում էին ՊԱԿ ու պահանջում, որ դադարեցնեմ գործունեությունս: Ես բացատրում էի նրանց, որ անօրինական ոչինչ չեմ անում, որ ընդամենը հայրենասիրական բանաստեղծություններ եմ արտասանում բեմերից, անօրինական գործունեություն ծավալող ոչ ոքի չեմ ճանաչում ու որեւէ կազմակերպության հետ առնչություն չունեմ: Իմ ընտանիքի անդամները, ծնողներս, հարազատներս նույնպես հայրենասեր մարդիկ էին եւ իմ կապերի ու գործունեության համար չէին դատապարտում ինձ: Ավելին, մեր խմբի անդամ էր քույրս՝ Քնարիկ Կարապետյանը, որի կեղծանունը Հրաչուհի էր, եւ հորեղբորս որդին՝ Սամվել Կարապետյանը:

1973 թվականին Բագրատ Շահվերդյանին ձերբակալեցին: Դատավարությանը ներկա էի որպես վկա: 21 տարեկան էի: Բագրատի հետ միասին դատապարտվում էր նաեւ Արարատ Թովմասյանը: Արարատ Թովմասյանի կինը հղի էր: Դատարանում հղի կնոջը վերակարգի զինվորները խփեցին: Ես միջամտեցի, ու աղմուկ բարձրացավ: Ցուցմունքներ տալուց չափազանց համարձակ էի պահում ինձ: Անընդհատ հայտարարում էի, որ դատապարտվողները հայրենասեր մարդիկ են, համամիտ եմ նրանց հայացքներին, եւ խորհրդային դատարանը նրանց դատապարտելու իրավունք չունի: Դատախազը Թոխյանն էր. ձայնը զայրացած բարձրացրեց ու գոռաց, թե՝ ո՞ր իրավունքով եմ Շահվերդյանին պաշտպանում, իսկ ես հանգիստ տոնով պահանջեցի, որ չգոռա: Հիշում եմ՝ ասացի. «Եթե բարձր ձայնը մի կարգին բանի ծառայեր, ապա էշը դղյակներ կկառուցեր»:

Բագրատի դատավարությունից հետո մեր խմբակը հարեց Ազգային միացյալ կուսակցությանը: Դարձանք ԱՄԿ-ականներ: Բաժանված էինք խմբերի: Շողիկ Ասոյանը եղել է իմ ղեկավարը: ԱՄԿ-ն այդ շրջանում չափազանց ակտիվ գործունեություն էր ծավալում: Թռուցիկներ էինք տարածում, Հայաստանի անկախություն պահանջող լոզունգներ էինք գրում շենքերի պատերին ու ճանապարհներին եւ ստորագրում «ԱՄԿ»: Հերթական անգամ պատերին լոզունգներ գրող երիտասարդներից երկուսը ձերբակալվել էին: Նախաքննության ժամանակ պատմել էին այն ամենը, ինչ գիտեին՝ տալով նաեւ իմ անունը: Ձերբակալությունը նրանց մոտ շոկ էր առաջացրել. ընկճված էին, պնդում էին, որ ես, օգտվելով իրենց միամտությունից, ներքաշել եմ հակասովետական գործունեության մեջ:

Մեր տան խուզարկության ժամանակ կասկածելի ոչինչ չհայտնաբերեցին, եթե չհաշվենք Իսահակյանի «Անհուն վրեժի եւ ատելության» բանաստեղծության ձեռագիր տարբերակը: Այդ ձեռագիրն անչափ ոգեւորել էր նրանց: Վերջապես հայտնաբերել էին սպասվող հակասովետական գրականության մի նշանակալի նմուշ: Մեծ էր նրանց հիասթափությունը, երբ ասացի, որ բանաստեղծության հեղինակը Իսահակյանն է: Նախաքննության ընթացքում չկալանավորեցին ինձ: Քաղաքից չբացակայելու ստորագրություն վերցրին ու անընդհատ կանչում էին հարցաքննությունների: Ինձանից ցուցմունքներ էին պահանջում ԱՄԿ այլ գործիչների վերաբերյալ, բայց ես պնդում էի, որ որեւէ մեկի չեմ ճանաչում:

Դատավարության ժամանակ ինձ ընդգծված համարձակ էի պահում: Չէի թաքցնում հայացքներս: Հրաժարվեցի պաշտպանից, ինքս էի պաշտպանում ինձ: Հանդես եկա պաշտպանական ելույթով, որն ավարտվում էր այս քառյակով.

Նպատակիս հասնեմ միայն,
Թող զիս հանեն կախաղան,
Կախաղանեն խեղդուկ ձայնով
Պիտի գոչեմ՝ ա՜խ, Հայաստան:

Այս քառյակն ավարտելուց հետո դահլիճում ներկա զինվորականն ապտակեց ինձ: Մի բան գիտեի՝ նրանք չպետք է տեսնեն իմ արցունքները: Զսպեցի ինձ ու չարտասվեցի: Դատարանը վճռեց հենց դատարանի դահլիճից ինձ վերցնել կալանքի: Անմիջապես տեղափոխեցին ՊԱԿ-ի մեկուսարան: Մի որոշ ժամանակ այնտեղ պահելուց հետո բերեցին Երեւանի բանտ, որտեղ մի հսկիչ մոտեցավ ինձ եւ ասաց, որ ներկա է եղել Պարույր Հայրիկյանի դատավարությանը, տպավորված է, գիտի, որ ես էլ եմ այդ խմբից, եւ ցանկանում է օգնել ինձ: Ծնողներիս նամակ գրեցի, փոխանցեց: Այնուհետեւ իր հերթապահությունների ժամանակ սկսեց ինձ գրքեր, սիգարետ, սուրճ բերել: Հետագայում՝ ազատ արձակվելուց հետո հենց նրա հետ էլ ամուսնացա: Քրեական հեղինակությունները, տեղեկանալով դատապարտմանս շարժառիթների մասին, ինձ ընդգծված հարգանքով էին վերաբերվում: Մեկ ամսից հետո ինձ տեղափոխեցին Երեւանի կանանց գաղութ: Կանանց գաղութում իմ նկատմամբ վերաբերմունքը նույնպես դրական էր: Լավ էին վերաբերվում ե՛ւ քրեական աշխարհի ներկայացուցիչները, ե՛ւ գաղութի ադմինիստրացիան: Այդտեղից ինձ որպես վկա տարան Հայրիկյանի դատավարությանը: Դատավորը հարցրեց. «Ճանաչու՞մ եք ամբաստանյալին», ասացի. «Ոչ, բայց մեծ անպատվություն եմ համարում նման հայորդուն չճանաչելը, եւ շնորհակալ եմ Պետանվտանգության կոմիտեին ու Գերագույն դատարանին, որ մեզ ծանոթանալու առիթ ընձեռեցին»: Մի անգամ կանանց գաղութի պետ Սեդրակյանը մոտեցավ ու ասաց. «Աղջիկ ջան, մենք ընտանիքով Ամերիկայի ձայնով լսել ենք քո մասին, ու ես աղջկաս խոսք եմ տվել, որ ամեն ինչ կանեմ, որ դու ժամկետից շուտ ազատ արձակվես»: Գաղութում չէին ծանրաբեռնում ինձ: Զբաղված էի մշակութային գործերով, տարբեր առիթներով ցերեկույթներ էի կազմակերպում, բեմից արտասանում էի: Սակայն, գաղութի պետն ինչքան էլ որ ցանկանար, իր խոստումն ի կատար ածել չէր կարող. ամեն ինչ Պետանվտանգության կոմիտեի ձեռքում էր:

Մի օր էլ անակնկալ կարգադրեցին, որ իրերս հավաքեմ: Կրկին տեղափոխեցին Երեւանի բանտ: Այնտեղ իմացա, որ վճռել են Ռուսաստան տեղափոխել ինձ: Քրեական աշխարհի հեղինակությունները կազմակերպեցին, որ իմ ուսապարկում ունենամ այն ամենն, ինչ անհրաժեշտ է էտապի համար: Կարճ ժամանակահատվածում պետքական ամեն ինչ հավաքեցին ու փոխանցեցին ինձ: Ե՛վ հագուստ, ե՛ւ ուտելիք, ե՛ւ ծխախոտ: Անգամ գիշերանոց էին փոխանցել:

Երեւանից հասցրին Ռոստով, այնտեղից՝ Ռյազան: Ռյազանի բանտի պետը հայ էր: Հարցրեց դատապարտվելուս պատճառը, փորձեցի հայերեն պատասխանել, բայց հայացքով ու մատի շարժումով սաստեց: Պատասխանեցի ռուսերեն: Որոշ ժամանակ անց միայնակ ներս մտավ ու հարցրեց, թե ինչի կարիք ունեմ: Սիգարետ խնդրեցի: Կարճ ժամանակ անց հսկիչը մախորկա ու առանց ֆիլտրի սիգարետներ բերեց: Ես ուժասպառ էի եղել: Էտապը չափազանց ծանր երեւույթ է: Խցում մենակ, փայտյա նառին պառկած հազիվ շնչում էի: Ուշքի եկա ու զգացի, որ մի հսկիչ կին գդալով տաք ճաշի ջուրը կում-կում բերանս է լցնում: Ինձ հասցրին Զուվաշիայի Կազլովկա քաղաքի կանանց գաղութ: Ընդհանուր առմամբ՝ այնտեղ էլ էին լավ վերաբերվում ինձ: Այնտեղի բեմից էլ եմ արտասանել: Արտասանում էի նաեւ հայերեն: Նրանք, իհարկե, իմ հայերեն արտասանությունը չէին հասկանում, բայց ուշադիր լսում, ծափահարում էին ու հետո խնդրում, որ ռուսերեն շարադրեմ արտասանածիս հակիրճ բովանդակությունը: Երեք հազարանոց գաղութը՝ իմ արտասանությամբ ծափահարում էր Տերյանին:

Ազատ արձակվեցի պատժաչափս ամբողջությամբ կրելուց հետո եւ վերադարձա Հայաստան: Կարճ ժամանակ անց վերականգնեցի կապերս ընկերներիս հետ: Շատե -

ը բանտերում էին: Այլ կանանց հետ այցելում էինք դատապարտվածների հարազատներին: Օգնում ու աջակցում էինք քաղբանտարկյալների ընտանիքներին: Հսկողության տակ էի: Անընդհատ կանչում էին Պետանվտանգության կոմիտե, անձնագիր չէին տալիս, տալուց հետո էլ չէին գրանցում: Բնակարանի համար չէին հերթագրում: Միայն Անկախության հռչակումից հետո՝ Նավասարդյան Աշոտի միջնորդությամբ, որն արդեն Գերագույն խորհրդի պատգամավոր էր, ինձ վերջապես երկսենյականոց բնակարան հատկացրին: Այդ բնակարանում էլ այսօր ապրում եմ:

Անահիտ Կարապետյանի գործով կայացված դատավճիռը

Դատավճիռը տպագրում ենք այնպես, ինչպես ստացել ենք ԱԱԾ-ից՝ գործով անցնող վկաների ջնջված անուններով եւ դատապարտվածների ջնջված անձնական տվյալներով:

1974թ.

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1974թ. մարտի 28-ին

Նախագահությամբ՝	**Ա. Ս. Եղիազարյանի**
Ատենակալներ՝	**1. Ա. Հ. Աղաբաբյանի**
	2. Մ. Գ. Ասլանյանի
Քարտուղարությամբ՝	**Ա. Մ. Ավագյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Գ. Ղամբարյանի**
դատապաշտպաններ՝	**Ա. Ս. Սմբատյանի եւ Ա. Մ. Մոսոյանի**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝

1. Անահիտ Աղվանի Կարապետյանի, ծնվել է 1952թ. ՀՍՍՀ Երեւան քաղաքում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, ՀԱՄ-ԼԿԵՄ- անդամ, միջնակարգ կրթությամբ, նախկինում չդատված, ամուրի, չի սովորում, չի աշխատում, մշտապես բնակվում է Երեւանի Շախսուվարյան փողոցի 9-րդ շենքի 10-րդ բնակարանում: Սույն գործով կալանքի տակ չի, պարգեւներ չունի:

Անահիտ Կարապետյանը մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի. 69 եւ 206 պրիմ հոդվածներով:

2. Ֆիրդուս Մեխակի Մուրադյանի, ծնվել է 1955թ. հունվարի 10-ին ՀՍՍՀ Աբովյանի շրջանի Զար գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀամԼԿԵՄ անդամ, նախկինում չդատված, ամուրի, խնամքին ոչ ոք, սովորում է Երեւանի պետական համալսարանի -------- ֆակուլտետի 1-ին կուրսում, մշտապես բնակվում է Երեւան քաղաքի --------- փողոցի 71/30 շենքի 23 բնակարանում, Սովետական բնակարանում չի ծառայել: Սույն գործով արգելանքի տակ է 1973թվականի հոկտեմբերի 24-ից, դատախազի կողմից կլանքը թույլատրվել է հոկտեմբերի 27-ին:

Ֆիրդուս Մուրադյանը մեղադրվում է ՀՀ քր. օրի 69 հոդվածով:

3. Գարեգին Համբարձումի Դավթյանի, ծնվել է 1955թ. հունվարի 2-ին ՀՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի ----- գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀամԼԿԵՄ անդամ, նախկինում չդատված, ամուրի, խնամքին ոչ ոք, սովորում է Երեւանի գեղարվեստական ինստիտուտի ---------- երրորդ կուրսում, Սովետական բանակում չի ծառայել, մշտապես բնակվում է Երեւանի ---------- փողոցի ---- շենքի 21 բնակարանում, սույն գործով կալանքի տակ է 1973թ. հոկտեմբերի 24-ից, իսկ կալանքը դատա - խազի կողմից թույլատրվել է հոկտեմբերի 27-ից:

Գարեգին Դավթյանը մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի. 69 հոդվածով:

Դատաքննությամբ, հարցաքննված վկաների ցուցմունքներով, գործին կցված իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացությամբ, ամբաստանյալներ Դավթյանի եւ Մուրադյանի լրիվ հանձնառումով Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան ապացուցված է համարում հետեւյալը՝

- Ամբաստանյալ Անահիտ Կարապետյանը, 1970թվ. ծանոթանալով այժմ արդեն հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա տանելու համար դատապարտված Բագրատ Շահվերդյանի եւ նրա համախոհների հետ, բազմիցս հանդիպումներ ունենալուց մտքեր են փոխանակել հայ ժողովրդի պատմությանը վերաբերող մի շարք հարցերի շուրջը, լինելով քաղաքականապես անպատրաստ ու պատմական իրողությունները ճիշտ ըմբռնելու համար ոչ հասուն, սխալ եզրակացությունների են հանգել:

Շահվերդյանը եւ գործով վկա Ռուբեն Խաչատրյանը 1971թ. ամբաստանյալ Անահիտ Կարապետյանին մշտապես մատակարարել են գաղտնի գրականությունով հոդվածների եւ ոտանավորների ձեւով, որոնք իրենց մեջ պարունակում են սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ:

Անահիտ Կարապետյանը նրանցից ստացել է «երկու խոսք», «հիշեցում հայրենասերներին», «դեպքեր, փաստեր իրադրություններ», «ինչեր կզառանցեն», «մեր խնդիրները» եւ այլ հրապարակման ոչ ենթակա նյութեր, որոնցում փորձ է արվում պրոպագանդելու «անկախ հայաստան» ստեղծելու միտքը, հերյուրանքներ տարածում այն մասին, որ ՍՍՀՄ կազմի մեջ մտնող փոքր ազգերը գտնվում են «տնտեսական կապանքների մեջ» որ նրանք զրկված են ինքնուրյուն քաղաքականություն վարելու իրավունքից, որոնց նկատմամաբ տարվում է հակասեմիտիզմի քաղաքականությունը, եւ ի վերջո կոչ է արվում դուրս գալ «քաղաքական պայքարի» սովետական պետության դեմ ու սովետական պետական, հասարակական կարգը արատավորող այլ զրպարտչական պնդումներ:

Ստանալով այդ նյութերը, ամբաստանյալ Անահիտ Կարապետյանը «հիշեցում հայրենասերներին» նյութը տվել է արտագրելու իր քույր գործով վկա Քնարիկ Կարապետյանին, իսկ մնացածն ինքը անձամբ արտագրելով նրանց բովանդակությանը ծանոթացրել է Զ-ին, Քնարիկ Կարապետկանին, Է-ին, որից հետո միայն այդպիսիք բազմացված վիճա-

կում վերադարձրել է Շահվերդյանին եւ Խաչատրյանին (հատ. 3 գբ. 50-145):

Այդ արարքների համար Անահիտ Կարապետյանը կանչվել է ՀՍՍՀ պետական անվտանգության կոմիտե ու նախազգուշացվել է, սակայն նա ոչ միայն համապատասխան հետեւություններ չի արել, այլ 1973թ. գարնանը ծանոթանալով գործով մյուս ամբաստանյալներ Մուրադյանի եւ Դավթյանի, ինչպես նաեւ վկա Ը-ի եւ մյուսների հետ դարձյալ քննարկել է «անկախ հայաստան» ստեղծելու հարցը եւ ապա Մուրադյանին եւ Դավթյանին քցելով իր ազդեցության տակ, նույն թվականի հոկտեմբերի սկզբներին առաջարկել ու կազմակերպել է նրանց Երեւան քաղաքի շենքերի պատերին ազգային թշնամություն առաջ բերելու նպատակով կոչեր գրել: Ընդորում այդ կոչերի տեքստը՝ հատկապես ուղղված ռուս ժողովրդի դեմ թելադրել է ինքը՝ Անահիտ Կարապետյանը:

Համաձայնելով Կարապետյանի առաջարկին Մուրադյանը եւ Դավթյանը հանցավոր համաձայնության գալով միմյանց հետ նախապես ձեռք բերելով վրձին եւ ներկ, պայմանավորվել են գիշերվա ուշ ժամին միմյանց հանդիպել, սակայն Գարեգին Դավթյանը քնից չարթնանալով չի կարողացել մասնակցել կոչեր գրելուն, իսկ Մուրադյանը եւ Թ-ն Ֆուրմանով փողոցի նո. 38 բնակելի շենքի եւ Կոմիտասի անվան փողոցի 54 «բ» տան պատերին գրելով Անահիտ Կարապետյանի կողմից իրենց արդեն իսկ հայտնած ազգային թշնամություն առաջացնող կոչը հեռացել են դեպքի վայրից:

Համաձայն պայմանավորվածության Մուրադյանը եւ Դավթյանը 1973թ. հոկտեմբերի 23-ին բարեկամության փողոցի պուրակում հանդիպելով Անահիտ Կարապետյանին, նրանից հանձնարարություն են ստացել նորից նույն բովանդակության կոչեր գրել, իսկ Մուրադյանը եւ Դավթյանն էլ իրենց հերթին վերցնելով Ծ-ին եւ Թ-ին հոկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը գնալով Երեւանի նո, 77 ռուսական դպրոցի շենքի բակը, այդ շենքի պատին գրել են ազգային թշնամանք առաջացնող կոչ ու հեռացել են, սակայն բռնվել են գործով վկաներ Ի-ի եւ Լ-ի կողմից ու բերման են ենթարկվել սկզբում Երեւանի ՆԳ 26 կոմիսարների անվան բաժին եւ ապա պետական անվտանգության կոմիտե:

Առաջադրված մեղադրանքում քր. օրի 69 հոդվածով ամբաստանյալներ Ֆիրդուս Մուրադյանը եւ Գարեգին Դավթյանը իրենց լիովին մեղավոր ճանաչեցին, սակայն ցուցմունքներ տվեցին, որ իրենց մոլորության մեջ է գցել Անահիտ Կարապետյանը եւ նրա պահանջով է, որ ազգային թշնամանք առաջ բերող կոչեր են գրել շենքերի պատերին եւ կոլեգիայի առաջ հանդես եկան մեղայականով:

Բացի Մուրադյանի եւ Դավթյանի հանձնառումից նրանց մեղսագրված արարքը հիմնավորված է գործով վկաներ Ծ-ի, Խ-ի, ցուցմունքներով այն մասին, որ Մուրադյանը եւ Դավթյանը իրոք շենքերի պատերին գրել են այդ կոչերը:

Վկաներ Ժ-ն Ի-ն եւ Լ-ն ցուցմունք տվեցին այն մասին, որ երբ իրենք 1973թվ. հոկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը կասկածանքի տակ բռնել են Դավթյանին եւ ապա Մուրադյանին, նրանք խոստովանել են, որ նո. 77 ռուսական դպրոցի շենքի պատի կոչը գրել են իրենք:

Ամբաստանյալ Դավթյանի ծնողներ՝ Ս-ն եւ Տ-ն կոլեգիային ցուցմունք տվեցին, որ Մուրադյանը եւ Դավթյանը մոտիկ ընկերներ են եղել եւ բռնվելուց հետո միլիցիայի բաժնում պատմել են, որ շենքերի պատերի կոչերն իրենք են գրել:

Այդ նույնը հաստատեց նաեւ վկա Հ-ն:

Մուրադյանը եւ Դավթյանը նախաքննության ընթացքում ընթերականների ներկայությամբ ցույց են տվել այն շենքերը, որոնց պատերին գրել են ազգային թշնամանք առաջացնող կոչեր (հատ. 3 գբ. 26-39):

Բացի այդ նրանց մեղսագրված արարքը հիմնավորված է նաեւ քիմիական փոր-

ծաքննության եզրակացությամբ, գործին կցված իրեղեն ապացույց՝ ներկի տուփերով, վրձինով եւ մնացած այլ ապացույցներով:

Ամբաստանյալ Անահիտ Կարապետյանը քր. օրի 69 հոդվածով իրեն մեղավոր չճանաչելով պատճառաբանեց, որ Դավթյանին ընդհանրապես չի ճանաչում, իսկ Մուրադյանը կոչեր գրելու համաձայնություն չի տվել:

Չժխտելով, որ կապ հաստատելով, մեկ այլ գործով քր. օրի 65 եւ 67 հոդվածներով դատապարտված Շահվերդյանի եւ վկա Խաչտրյանի հետ նրանցից ստացել է Սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող գրականություն, արտագրել է այդպիսիք ու հետ է վերադարձրել նրանց, սակայն պատճառաբանեց, որ սովետական կարգերը արատավորելու դիտավորություն ինքը չի ունեցել, հետեւապես քր. օրի 206 պրիմ հոդվածով եւս մեղավոր չի ճանաչում:

Անահիտ Կարապետյանի այդ պատճառաբանությունները չեն բխում գործի նյութերից եւ հերքված են հետեւյալ ապացույցներով՝

- Ամբաստանյալներ Մուրադյանը եւ Դավթյանը ինչպես նախաքննության այնպես էլ դատաքննության ժամանակ ցուցմունք տվեցին, որ լավ ճանաչելով Անահիտ Կարապետյանին Երեւանի շենքերի պատերին կոչեր գրելու հանձնարարություններ Կարապետյանից են ստացել,

Գործով վկա Ը-ն նախաքննությամբ հաստատել է, որ ինքը, Մուրադյանը, Դավթյանը եւ Անահիտ Կարապետյանը դեռ 1973թվի մարտի 3-ին եղել են «արեւելյան քաղցրավենիք» սրճարանում ու խոսել են Անահիտի կողմից հանձնարարություններ ստանալու մասին:

Անահիտ Կարապետյանի քույր Քնարիկ Կարապետյանը, Զ-ն հաստատել են, որ 1971թվ. Անահիտը իրենց ներկայությամբ ընթերցել է «երկու խոսք», «դեպքեր, փաստեր, իրադրություններ», «ինչեր կզառանցեն» եւ այլ հատվածներ:

Քնարիկ Կարապետյանը հաստատեց, որ Կարապետյան Անահիտի հանձնարարությամբ ինքը արտագրել է «հիշեցում հայրենասերներին» նյութը:

Նախաքննությամբ Շահվերդյանը, իսկ դատաքննության ժամանակ նաեւ Խաչատրյանը հաստատեցին, որ սովետական կարգերը արատավորող բովանդակությամբ «հիշեցում հայրենասերներին», «երկու խոսք», «մեր խնդիրները» եւ այլ նյութեր արտագրելու համար իրենցից վերցրել է Անահիտ Կարապետյանը, որը այդ աշխատանքը հանձնարարությունը կատարելուց հետո արտագրվածի հետ միասին բոլոր նյութերը վերադարձրել է իրենց: Այս հանգամանքը չժխտեց նաեւ Անահիտ Կարապետյանը եւ հաստատեց, որ քրեական գործում կարված, թվարկած հոդվածների եւ այլն նյութերի տեքստերը արտագրված աշակերտական տետրի թերթերի վրա ինքն է կատարել:

Անահիտ Կարապետյանը չժխտեց, որ այդ նյութերը իրենց մեջ պարունակում են սովետական պետական ու ու հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ: Հետեւապես նրա այն առարկությունը, որ նշված նյութերը արտագրելով եւ ուրիշներին ընթերցելով մեր կարգերը արատավորելու նպատակ ինքը չի ունեցել, իրականությանը չի համապատասխանում:

Դատաքննության ժամանակ հրապարակված Զ-ի եւ Բագրատ Շահվերդյանի ցուցմունքների առթիվ ամբաստանյալ անահիտ Կարապետյանը ոչ մի առարկություն չարեց:

Վկա Կ-ն կոլեգիային ցուցմունք տվեց, որ 1973թվ. հոկտեմբերի 2-րդ կեսերին ամբաստանյալներ Մուրադյանը եւ Անահիտ Կարապետյանը միասին գնացել են նրա աշխատանքի վայրը՝ գրադարան ու ընթերցելու համար մի քանի հատոր գրքեր են տարել:

Հետեւապես դատաքննության ժամանակ Անահիտ Կարապետյանի այն պնդումը,

որ 1973թվ. հոկտեմբեր ամսին ինքը գժտված է եղել Մուրադյանի հետ իրենց ծնողների միջեւ տեղի ունեցած վեճի պատճառով, նույնպես չի համապատասխանում գործի տվյալներին:

1974թ. հունվարի 7-ին ձեռագրային փորձաքննության եզրակացությամբ եւս հաստատված է, որ գործին կցված «հիշեցում հայրենասերներին» հոդվածը արտագրված է Քնարիկ Կարապետյանի, իսկ մնացած բոլորը նյութերը արտագրվել են Անահիտ Կարապետյանի կողմից (հատ. 2 գթ. 309-311):

Այսպիսով ամբաստանյալներ Ֆիրդուս Մուրադյանին եւ Գարեգին Դավթյանին մեղսագրված արարքը քր. օրի 69 հոդվածով, իսկ Անահիտ Կարապետյանին քր. օրի 69 եւ 206 պրիմ հոդվածներով կոլեգիան հիմնավորված է համարում:

Պատիժ սահմանելիս կոլեգիան հաշվի է առնում ինչպես ամբաստանյալների ինքնությունը, այնպես էլ նրանց կատարած արարքի հանորեն վտանգավորությունը:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օրի 293-294 հոդվածներով գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ՝

Ամբաստանյալներ Ֆիրդուս Մեխակի Մուրադյանին եւ Գարեգին Համբարձումի Դավթյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի. 69 հոդվածով եւ այդ հոդվածի սանկցիայով յուրաքանչյուրին դատապարտել ազատազրկման յոթը (7) ամիս ժամանակով, թողնելով այն կրելու ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Դատապարտյալներ Ֆիրդուս Մուրադյանի եւ Գարեգին Դավթյանի կալանքի սկիզբը հաշվել 1973թ. հոկտեմբերի 24-ից:

Անահիտ Աղվանի Կարապետյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի 69 եւ 206 պրիմ հոդվածներով: Քր. օրի 69 հոդվածով դատապարտել նրան ազատազրկման մեկ տարի վեց ամիս ժամանակով, իսկ 206 պրիմ հոդվածով ազատազրկել երկու (2) տարի ժամանակով:

Քր. օրի 37 հոդվածի համակցությամբ վերջին հաշվով Ա. Ա. Կարապետյանին թողնել պատիժը կրելու երկու (2) տարի ժամանակով ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Դատապարտյալ Անահիտ Կարապետյանին անմիջապես վերցնել կալանքի դատարանի դահլիճից եւ նրա կալանքի սկիզբը հաշվել 1974թ. մարտի 28-ից:

Իրեղեն ապացույց ճանաչված երկաթից ներկի տուփերը, ինքնաշեն վրձինը եւ 28 համարի վրձինը ոչնչացնել: Մնացած իրեղեն ապացույց՝ գրականությունը, որ կցված է գործում թողնել գործի մեջ:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով գանգատարկման ենթակա չի:

ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ ստորագրություններ
ՃԻՇՏ է՝

29/3-1974թ.

Քաջիկ Սահակյան

Քաջիկ Վարազդատի Սահակյանը ծնվել է 1952 թ., Աբովյանի շրջանի Նուռնուս գյուղում: Վաղ տարիքից՝ Բագրատ Շահվերդյանի միջոցով, որի հետ ուներ նաեւ ազգակցական կապ, ներգրավվել է պատանեկան խմբակի մեջ: Հետագայում Շահվերդյանի եւ Ռուբեն Խաչատրյանի ազդեցությամբ ձեւավորվել է որպես անկախական գործիչ: Խաչատրյանի միջոցով կապվել է Ազգային միացյալ կուսակցության հետ: Բագրատ Շահվերդյանի դատավարությունից հետո նրանց ողջ խմբակը անդամագրվել է ԱՄԿ-ին: Սովորել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Ձերբակալվել է 1973-ի նոյեմբերին: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 69 (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը), 206[1] (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) եւ 231 (անչափահասներին հանցավոր գործունեության, հարբեցողության, մոլախաղերի մեջ ներգրավելը) հոդվածներով: Դատարանում 69 հոդվածը վերաորակվել է 17-69-ի, այն է՝ ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելուն դրդելը: Դատապարտվել է 3 տարի վեց ամիս ազատազրկման, որը պետք է կրեր ընդհանուր ռեժիմի կալանավայրում, ինչից հետեւում էր, որ կարող էր մնալ Հայաստանում: Սակայն, շատ շուտով նրան՝ ընդհանուր ռեժիմի դատապարտված այլ քաղբանտարկյալների հետ միասին տեղափոխում են Ռուսաստան: Քաջիկ Սահակյանն իր պատիժը կրել է Կազանի կալանավայրում: Կալանավայրում աչքի է ընկնում իր ըմբոստ վարքով, ինչի պատճառով հաճախ է հայտնվում պատժախցերում: Հայաստան վերադառնալուց հետո անմիջապես վերցվում է ոստիկանական հսկողության տակ, բայց չի կտրում կապերը համախոհների հետ: Կարճ ժամանակ անց հիվանդանում եւ 29 տարեկան հասակում՝ 1980 թվականին վախճանվում է:



Քաջիկ Սահակյան
լուս. քր. գործից



Քաջիկ Սահակյան

Պատմում է Քաջիկ Սահակյանի կինը՝ Սվետան

Ես 8-րդ դասարանի աշակերտուհի էի: Այդ շրջանում տարբեր դպրոցներում գործում էին հայրենասիրական խմբակներ: Նման մի խմբակ էլ գործում էր մեր դպրոցում: Ես մասնակցում էի այդ խմբակի աշխատանքներին: Հիմնական թեմաներն էին՝ Հայաստան, հայրենիք, Եղեռն, հայրենասիրական բանաստեղծություններ, Շիրազ, այցեր Ծիծեռնակաբերդ եւ նման այլ բաներ: Նման մի խմբակ էլ կար Քաջիկենց դպրոցում: Քաջիկն էլ դրան էր անդամակցում: Մեր խմբակներն ինչ-որ մի պահի միացան իրար: Դա էլ մեր ծանոթության պատճառը դարձավ: Ավելի ուշ՝ արշավներին, հայրենասիրական բանաստեղծություններին, պատմության ուսումնասիրմանն ավելացավ ապրիլի 24-ին՝ Եղեռնի օրը սեւ դրոշակներ պատրաս -

տելը եւ քաղաքի տարբեր մասերում կախելը, պատի թերթեր ու պլակատներ գրելը: Բայց մեր հիմնական գործը մնում էր շրջապատում հայրենասիրության քարոզը: Այս խնդիրը մեր առաջ դնում էր Շահվերդյան Բագրատը: Մենք Բագրատ Շահվերդյանին եւ Ռուբեն Խաչատրյանին էինք ճանաչում որպես մեր ղեկավարներ: Բագրատին դիմում էինք Մաեստրո, իսկ Ռուբենին՝ Պապ անուններով: Շատ եմ ափսոսում, որ Ռուբենի հետ հետագայում ամեն ինչ այնպես չեղավ, ինչպես որ պետք է լիներ: Այդպես էլ շատ բան անհայտ մնաց: Ոչ ոք իրավունք չունի դատելու: Բոլորը չէ, որ կարող են դիմանալ իրենց բաժին ընկած փորձություններին: Այսօր Ռուբենը ժառանգներ ունի, եւ ես նրա մասին խոսելիս՝ առաջին հերթին նրանց մասին եմ մտածում: Նա դեռ նախաքննության փուլում էր փորձել ինքնասպան լինել: Հետագայում ինքնասպանությամբ էլ հեռացավ կյանքից: Մինչեւ ձերբակալվելը մենք բոլորս շատ հարգում էինք նրան: Նրա տանն էինք միջոցառումներ անցկացնում: Օրինակ՝ Վարդանանց օրը նրա տանն ենք նշել: Հետագայում այդ միջոցառումը մի քանի քրեական գործերով անցավ եւ շատերի մեղադրական եզրակացություններում ընդգրկվեց որպես առանձին դրվագ:

1973 թ. կալանավորեցին Բագրատ Շահվերդյանին: Նրա դատավարության ժամանակ ծանոթացանք Պարույր Հայրիկյանի հետ: Պարույրը նոր էր վերադարձել կալանավայրից: Այդ ծանոթությունը առիթ հանդիսացավ, որ դառնանք Ազգային միացյալ կուսակցության անդամներ: Անցումը դեպի Ազգային միացյալ կուսակցություն՝ շատ արագ կատարվեց: Մենք արդեն պատրաստ էինք դրան: Անկախության գաղափարը նոր չէր մեզ համար: Բագրատ Շահվերդյանն էլ, Ռուբեն Խաչատրյանն էլ անկախականներ էին ու մեզ այդ անցմանը, փաստորեն, պատրաստել էին: ԱՄԿ-ն բոլորովին նոր հարթություն էր: Մեր գործունեության բնույթն ու որակը կտրուկ փոխվեցին: Տարիներ տեւած տեսական քննարկումներից ու զրույցներից անցանք վտանգավոր ու գործնական քայլերի. թռուցիկներ, անկախության պահանջով կարգախոսներ դպրոցների ու շենքերի պատերին, ԱՄԿ օրգան «Փարոս-2»-ի հրատարակում եւ նման այլ բաներ:

Մեր կազմակերպությունը մարդաշատ էր, սակայն բոլորը չէ, որ ճանաչում էին իրար: Բաժանված էինք տասնյակների, եւ յուրաքանչյուր տասնապետ ճանաչում էր մյուս տասնյակի տասնապետին եւ այսպես շարունակ:

Քաջիկն իր գործունեության մեջ չափազանց ակտիվ էր: Նա մասնակցում էր ե՛ւ թռուցիկների տպագրման աշխատանքներին, ե՛ւ լոզունգներ գրելուն, ե՛ւ լուսանկարչական եղանակով թռուցիկների բազմացմանը: Սովորում էր պոլիտեխնիկ ինստիտուտում: Դասի էր, երբ Պետանվտանգության կոմիտեի աշխատակիցները եկան մեր տուն: Կոնդում մի փոքրիկ սենյակում էինք ապրում: Ես հղի էի: Տանն այդ պահին միայն ես էի ու մեր փոքրիկը: Քաջիկի դատից հետո ծնվեց մեր երկրորդ երեխան: Խուզարկեցին ու գտան «Փարոսի» մեկ օրինակ, Անդրանիկի, Դեւորգ Չաուշի լուսանկարները եւ տուն վերադարձած Քաջիկին իրենց հետ վերցնելով՝ հեռացան: Թռուցիկների տպագրության համար օգտագործված գրամեքենաներից երկուսը մեր տանն էին: Երբ կալանավորման վտանգն արդեն ռեալ էր, մեկը շտապ տեղափոխեցինք Քաջիկենց գյուղ՝ Նուռնուս, որը, սակայն, հետագայում հայտնաբերվեց ու դուրս բերվեց գյուղի հասարակական զուգարանահորից, իսկ մյուսը, որ մնացել էր մեզ մոտ, այդպես էլ չգտան: Նրանք երկրորդ գրամեքենայի գոյության մասին տեղյակ էին, գիտեին, որ մենք ենք թաքցրել, ամեն ինչ անում էին հայտնաբերելու համար, բայց չկարողացան: Նախաքննության ընթացքում մեկ անգամ են մեզ տեսակցություն տվել: Տեսակցության նպատակը երկուսիս համար էլ պարզ էր՝ ցանկանում են մեր զրույցից պարզել, թե որտեղ է գտնվում երկրորդ գրամեքենան: Բայց դա լավ հասկանալով, մեր զրույցում այդ թեմային ընդհանրապես չանդրադարձանք:

Դատարանում Քաջիկն իրեն պահում էր ընդգծված համարձակ: Ինձ ներս չթողեցին, քանի որ գործով որպես վկա էի անցնում: Միայն իմ ցուցմունքները լսելուց հետո թույլատրեցին, որ նստեմ դահլիճում: Տեղ-տեղ գործը զավեշտի էր վերածվում: Օրինակ՝ Քաջիկն իր վրա էր վերցնում թռուցիկների տեքստը գրելու գործը, հայտարարում էր, որ ինքն է գրել, իսկ Անահիտ Կարապետյանն այդ նույն դրվագով ցուցմունք էր տալիս, որ ինքն է գրել: Ճիշտ այսպես՝ նաեւ այլ դրվագների հետ կապված:

Դատի օրերին ծանոթուհիս ինձանից աղացած սուրճ էր խնդրել, իսկ ծանոթուհուս ամուսինը ոստիկան էր ու Քաջիկի դատի օրերին հերթապահում էր Գերագույն դատարանի շենքում: Որպեսզի շատ ժամանակ չկորցնեմ եւ հղի վիճակում չհասնեմ նրանց տուն, որոշեցի սուրճը ծանոթուհուս փոխանցել ամուսնու միջոցով, եւ դատարանի շենքում սուրճի փաթեթը տվեցի նրան: Հետագայում այդ ոստիկանին աշխատանքից հեռացրին միայն այն պատճառով, որ ինձանից փաթեթ էր վերցրել: Այսպիսի ժամանակներում էինք ապրում: Դատից հետո Քաջիկին տեղափոխեցին Երեւանից ոչ հեռու գտնվող Շահումյանի գաղութ: Մոտ էր ու հարմար, բայց, չգիտես ինչու, շատ չանցած՝ տարան Ռուսաստան: Նստած էր Կազանում: Ես ողջ ընթացքում այդպես էլ տեսակցություն չունեցա նրա հետ: Եվ իմ գնալն էր մեծ խնդիր՝ երկու մանկահասակ երեխաների առկայության պայմաններում, ե՛ւ Քաջիկն էր, որպես կանոն, իր ըմբոստ վարքի պատճառով հայտնվում պատժախցերում ու տեսակցության իրավունքից զրկված լինում: Անգամ ազատ արձակվելուց, երբ հայրը գնաց կալանավայրից դիմավորելու ու Հայաստան բերելու, ազատ արձակվեց պատժախցից:

Վերադարձից հետո Քաջիկը վերցվեց հսկողության տակ: Բայց շարունակում էր հանդիպել դրսում գտնվող տղաներին: Ազատվելուց դեռ մեկ տարի էլ չէր անցել, երբ հիվանդացավ: Հիվանդությունը վճռորոշ եղավ մեր ընտանիքի համար: Նրա օրգանիզմը՝ կալանավայրում անցկացրած տարիների պատճառով իսպառ կորցրել էր դիմադրողականությունը: Այդպես էլ չապաքինվեց եւ մեկ տարի անց՝ 29 տարեկանում մահացավ:

Քաջիկ Սահակյանի գործով կայացված դատավճիռը

Այս դատավճիռը նույնպես տպագրում ենք այնպես, ինչպես ստացել ենք ԱԱԾ-ից՝ գործով անցնող վկաների ջնջված անուններով, որոնց փոխարեն կամայական տառեր են նշված:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1974թ հունիսի 10-ին

Նախագահությամբ՝ **Ա. Եղիազարյանի**
Ատենակալներ՝ **1. Ա. Աղաբաբյանի**
2. Գ. Սահակյանի

Քարտուղարությամբ՝ **Հ. Եղոյանի**
Մասնակցությամբ **պետական մեղադրող**
Դատախազ՝ **Գ. Ղամբարյանի**
Դատապաշտպան՝ **-----**

Քննության առնելով դատական դռնաբաց նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի՝

Քաջիկ Վարազդատի Սահակյանի, ծնված 1952թ. ՀՍՍՀ Աբովյանի շրջանի

Նառնուս գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, Համլկեմ անդամ, նախկինում չդատված, թերի բարձրագույն կրթությամբ, մինչեւ կալանավորվելը սովորել է պոլիտեխնիկական ինստիտուտի շինֆակի երկրորդ կուրսի երեկոյան բաժնում, միաժամանակ աշխատել է Երեւանի վիտամինների գործարանում որպես բանվոր, ամուսնացած, խնամքին հղի կինը եւ մեկ երեխա, 1969-1971թթ. ծառայել է սովետական բանակում, ֆիզիկապես առողջ, գրանցված է եղել Երեւանի Կոմիտաս փողոցի 11 շենքի 29 բն., սակայն փաստորեն բնակվել է Երեւանի Ռուսթավելի փողոցի 19 շենքում, կառավարական պարգեւներ չունի, սույն գործով արգելանքի է վերցվել 1973թ. նոյեմբերի 20-ին, իսկ կալանքի սանկցիան տրվել է նույն թվականի նոյեմբերի 29-ին: Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 69, 206[1] եւ 231 հոդվածներով:

Դատաքննությամբ, վկաների եւ ամբաստանյալի ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ եւ գործին կցված իրեղեն ապացույցներով Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան ապացուցված է համարում հետեւյալը՝

1973թ. ՀՍՍՀ Պետական անվտանգության օրգանների կողմից հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա տանելու համար կալանավորվել եւ դատի է տրվել ամբաստանյալ Քաջիկ Սահակյանի ազգական Շահվերդյան Բագրատը, որի հետ նա գտնվել է մոտիկ փոխհարաբերությունների մեջ:

Քաջիկ Սահակյանը տոգորված լինելով միայն ձեւով ազգային, սակայն բովանդակությամբ ոչ սոցիալիստական տրամադրություններով, առանց հաստատապես իմանալու Շահվերդյան Բագրատի կալանավորման բուն պատճառների մասին, որոշել է իր նման նեղ հայացքների տեր, սահմանափակ ու քչաքանակ մարդկանց օժանդակությամբ սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերուրանքներ պարունակող թռուցիկներ պատրաստել եւ օգտվելով Շահվերդյանի կալանավորման առիթից այդպիսիք լուսանկարչական ապարատի միջոցով բազմացնել եւ տարածել Երեւան քաղաքում:

Բացի այդ, ամբաստանյալ Քաջիկ Սահակյանը արդեն իսկ նշված պատճառաբանությամբ որոշել է ազգային թշնամություն առաջ բերելու նպատակով, դարձյալ այլ մարդկանց միջոցով Երեւան քաղաքի շենքերի պատերին լոզունգներ գրել, ուղղված ռուս ժողովրդի դեմ:

Իր այդ հանցավոր մտահղացումները իրագործելու նպատակով ամբաստանյալ Քաջիկ Սահակյանը, իր կնոջ՝ Սվետլանա Հովհաննիսյանի եւ մեկ այլ գործով պետական անվտանգության օրգանների կողմից նույնանման արարքի համար կալանավորված գործով վկա Խաչատրյանի միջոցով ծանոթանալով Անահիտ Կարապետյանի հետ, 1973թ. հոկտեմբեր ամսին առաջարկել է նրան ազգային թշնամանք առաջ բերելու նպատակով շենքերի պատերին լոզունգներ գրել:

Անահիտ Կարապետյանը համաձայնելով Սահակյանի առաջարկին, իր հերթին հանցագործության մեջ ներգրավելով 1955թ ծնված Ֆիրդուս Մուրադյանին եւ Գարեգին

Դավթյանին հանձնարարել է նրանց Երեւան քաղաքի շենքերի պատերին ռուս ժողովրդի դեմ ուղղված լոզունգներ գրել, նախապես հայտնելով այդ լոզունգների տեքստը:

Ֆիրդուս Մուրադյանը եւ Գարեգին Դավթյանը առանց խորամուխ լինելու եւ գիտակցելու 1973թ հոկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը Երեւանի Ֆուրմանով փողոցի նո. 38բնակելի շենքի, Կոմիտաս փողոցի 54բ տան եւ նո.77 ռուսական դպրոցի պատերին սպիտակ յուղաներկով գրել են այդ բովանդակությամբ լոզունգներ, որի համար 1974թ, մարտի 28-ին Անահիտ Կարապետյանի հետ միասին դատապարտվել են ազատազրկման (հատ. 3 գբ.50-56):

Նույն 1973թ. հոկտեմբեր ամսին ամբաստանյալ Ռուբեն Խաչատրյանի ցուցումով, որը կատարելիս է եղել հակասովետական ագիտացիա ու պրոպագանդա տանելու համար դատապարտված Հայրիկյան Պարույրի հանձնարարությունը, առաջարկել է Անա - հիտ Կարապետյանին թռուցիկի երկու տեքստեր գրել, որոնք իրենց մեջ պետք է պարունակեն մեր իրականությունը արատավորող ակնհայտ հերուրանքներ այն մասին, որ մեզ մոտ իբր չկա խոսքի ազատություն, որ խորհրդային Հայաստանում բնակվող հայ ժողովուրդը կանգնած է «ճերմակ եղեռնի առջեւ» եւ այդ բովանդակությամբ այլ հերուրանքներ:

Անահիտ Կարապետյանը արդեն երկրորդ անգամ կատարելով Քաջիկ Սահակյանի հանձնարարությունը նշված բովանդակությամբ 2 թռուցիկների տեքստ է գրել ու հանձնել Սահակյանին: Սահակյանը թռուցիկների բնորինակը տվել է Ռ. Խաչատրյանին, որը իր հերթին բովանդակությունը ծանոթացնելով Պարույր Հայրիկյանին եւ ստանալով նրա հավանությունը բազմացնելու համար վերադարձրել է Քաջիկ Սահակյանին:

Ամբաստանյալ Քաջիկ Սահակյանը նախապես ծանոթ լինելով Երեւանի --- դպրոցի աշխարհագրություն առարկայի ուսուցիչ, գործով վկա Վ-ի հետ եւ օգտվելով այն առիթից, որ Վ-ն 9-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպված աշխարհագրության խմբակի պարապմունքներին առանց իրավունքի մասնակից է դարձրել նաեւ իրեն՝ Սահակյանին տրամադրելով ամբիոնը, սկսել է 1958թ. ծնված աշակերտներին պատմել 1915թ արեւմտյան Հայաստանում բնակվող հայ ազգաբնակչության հետ տեղի ունեցած դեպքերի մասին եւ առանց հետագա պատմական իրադարձությունները հաշվի առնելու կոչ է արել ներկայացնել տերիտորյալ պահանջներ եւ ապա հանցավոր գործունեության մեջ ներգրավելով անչափահաս Մ-ին նրան է տվել Անահիտ Կարապետյանի կողմից գրված սովետական կարգերը արատավորող 2 թռուցիկների տեքստերը ու պահանջել այդպիսիք բազմացնել 2000 օրինակով եւ հանձնել իրեն:

Քանի որ թռուցիկները պետք է բազմացվեին լուսանկարչական ապարատով, ամբաստանյալ Քաջիկ Սահակյանը 9-րդ դասարանի աշակերտ Մ-ին է տվել 70 ռ. դրամ, որը նա ձեռք էր բերել իր անձնական գրամեքենան վաճառելուց: Ստանալով թռուցիկների բնօրինակները գրված Անահիտ Կարապետյանի կողմից Մ-ն առանց գիտակցելու իր գործողությունների հասարակայնորեն վտանգավորությունը ուսուցիչ Վ-ի գիտությամբ, նույն դպրոցի 9-րդ դաս աշակերտ Խ-ի անմիջական մասնակցությամբ, թռուցիկները բազմացնելու համար գնել է 2000 հատ թուղթ, անհրաժեշտ քանակի քիմիական լուծույթներ եւ 1973թ. նոյեմբերի 15-ին, Քաջիկ Սահակյանի պահանջով գնալով վկա Ի-ի բնակարանը սկսել է թռուցիկները բազմացնել, սակայն 137 օրինակ պատճենահանելուց հետո, հենց հանցագործության վայրում բռնվել են պետական անվտանգության կոմիտեի աշխատակիցների կողմից, իսկ թռուցիկները եւ լուսանկարչական բոլոր հարամարանքները առգրավվել են (հատ. 1 գբ.7-10):

Զբաղվելով անչափահասներին հանցագործության մեջ ներգրավելով, իսկ Կարա-

պետյան Անահիտին ազգային թշնամանք առաջացնող լոզունգներ գրելուն դրդելով, ամբաստանյալ Քաջիկ Սահակյանը 1973թ. նոյեմբերի 13-ին, դարձյալ մեկ այլ գործով կալանավոր Ռուբեն Խաչատրյանի հանձնարարությամբ, վկա Հրաչյա Գրիգորյանից ստացել է սովետական պետական կարգը արատավորող ու ակնհայտ հերուրանքներ պարունակող «Փարոս-2 լրացուցիչ» թռուցիկը, որից երկու օրինակ հանձնել է Ռուբեն Խաչատրյանին, իսկ մեկ օրինակ պահել է իր տանը, որպիսիք հայտնաբերվել են խուզարկության ժամանակ եւ կցվել գործին որպես իրեղեն ապացույց (հատ. 3 գբ.6):

Քաջիկ Սահակյանը առաջարկել է աշակերտ Մ-ին նաեւ ռուս ժողովրդի դեմ ուղղված լոզունգներ գրել շենքերի պատերին, սակայն նա հրաժարվել է այդ կատարելուց:

Այսպիսով ամբաստանյալ Քաջիկ Սահակյանին մեղսագրվող արարքը ՀՍՍՀ քր. օրի 206[1] եւ 231 հոդվածներով կոլեգիան հիմնավորված է համարում, ինչ վրաբերում է քր. օրի 69 հոդ. առաջադրված մեղադրանքին կոլեգիան գտնում է, որ պատերի վրա ազգային թշնամանք առաջացնող լոզունգներ գրելուն Սահակյանը անմիջական մասնակցություն չի ունեցել, այլ դրդել է Կարապետյան Անահիտին այդ հանձնարարությունը կատարելու, որի համար Սահակյանի արարքը քր. օրի 69 հոդ. պետք է վերաորոկել 17-69 հոդվածով:

Նախաքննական օրգանի կողմից մեղադրանք առաջադրելիս, Քաջիկ Սահակյանը քր. օր 69, 206[1] եւ 231 հոդվածներով իրեն լիովին մեղավոր ճանաչել է, սակայն դատաքննությանը ըստ էության չժխտելով կատարված արարքը մեղավոր չի ճանաչել, չբերելով որեւ պատճառաբանություն:

Քաջիկ Սահակյանի մեղադրանքը հիմնավորված է ոչ միայն իր ցուցմունքներով, այլ հետեւյալ ապացույցներով՝

Գործով վկա Անահիտ Կարապետյանի ցուցմունքով այն մասին, որ ինքը հանձնարարել է Ֆիրդուս Մուրադյանին եւ Գարեգին Դավթյանին ազգային թշնամանք առաջ բերող լոզունգ, ուղղված ռուս ժողովրդի դեմ, շենքի պատերին գրել Քաջիկ Սահակյանի դրդմամբ:

Քրեական գործերի դատական կոլեգիայի 1974թ. մարտի 28-ի դատավճռով, որով այդ արարքի համար դատապարտվել են ինչպես Անահիտ Կարապետյանը, այնպես էլ Ֆիրդուս Մուրադյանը եւ Գարեգին Դավթյանը:

Բացի այդ Անահիտ Կարապետյանին այդպիսի առաջարկ անելը չժխտեց նաեւ ինքը՝ Սահակյանը:

Գործով վկաներ Մ-ն եւ Վ-ն կոլեգիային ցուցմունք տվեցին, որ Սահակյանը առաջարկել է աշակերտներին, բնակելի շենքերի պատերին լոզունգներ գրել, սակայն նրանք չեն համաձայնել, որպիսինը դատաքննությամբ ընդունեց նաեւ ինքը՝ Քաջիկ Սահակյանը:

Քաջիկ Սահակյանը դատաքննությամբ ընդունեց, որ սովետական կարգը արատավորող երկու թռուցիկները գրելու համար Անահիտ Կարապետյանին հանձնարարություն է տվել ինքը: Նա չժխտեց, որ իր առաջարկով է, որ դպրոցականներ Մ-ն եւ Խ-ն սկսել են մեծ քանակությամբ թռուցիկներ բազմացնել: Այդ հանգամանքը հաստատեցին ոչ միայն Մ-ն եւ Խ-ն, այլեւ վկաներ Վ-ն Ի-ն Ս-ն եւ Տ-ն:

Վկա Ի-ն կոլեգիային ցուցմունք տվեց, որ թռուցիկները բազմացնելու համար ինքը իրեն բնակարանը տվել է աշակերտներին Քաջիկ Սահակյանի առաջարկով: Այդ չժխտեց նաեւ ամբաստանյալը, որպիսինը հաստատված է նաեւ Ի-ի բնակարանում խուզարկությամբ հայտնաբերված 107 օրինակ բազմացված թռուցիկներով (հատ. 1 գբ.6-10): Գործով վկա Լ-ն ցուցմունք տվեց, որ ամբաստանյալ Սահակյանին պատկանող գրամեքենան 100 ռուբլով ինքն է վաճառել, որից 60 ռուբլին հանձնել է Սահակյա-

նին, Սահակյանը իր հերթին դատաքննությամբ ընդունեց, որ գրամեքենայի վաճառքից իրեն հանձնած 60 ռուբլուն ավելացրել է եւս 10 ռուբլի եւ բոլոր գումարը տվել է Մ-ին լուսանկարչական թուղթ եւ այլ հարմարանքներ գնելու համար, որի նպատակը եղել է թռուցիկների բազմացումը:

Մ-ն եւ Խ-ն դատաքննությամբ հաստատեցին, որ 2000 օրինակ լուսանկարչական թուղթ եւ այլ օժանդակ նյութեր են գնել ամբաստանյալ Սահակյանի կողմից տված 70 ռուբլի գումարով, որից չհրացաված 11 ռուբլին Մ-ն հանձնել է պետ. Անվտանգության կոմիտեին: Այս թվարկված ապացույցները լիովին ընդունեց նաեւ Քաջիկ Սահակյանը:

Վկա Ծ-ն դատաքննությամբ հաստատեց, որ 1970թ. նոյեմբերի 13-ին Խ-ն ժամանակավոր օգտագործման համար վերցրել է իրեն պատկանող «Լենինգրադ» մակնիշի ֆոտոմեծուցիչը, կարմիր լուսամփոփը եւ այլ հարմարանքներ:

Խ-ն ցուցմունք տվեց, որ թռուցիկները ֆոտոժապովենի վրա արտանկարել է ինքը՝ իր «Զենիթ» մակնիշի ֆոտոապարատով, որպիսինը առգրավել է քննչական օրգանի կողմից եւ խնդրեցին հետ վերադարձնել իրենց պատկանող գույքը:

Վկա, մեկ այլ գործով կալանավոր Աշոտ Նավասարդյանը ցուցմունք տվեց, որ «Փարոս-2 լրացուցիչ», թռուցիկը իր խնդրանքով Խաչատրյանին է հանձնել Հրաչյա Գրիգորյանը: Ընդ որում, այդ ծրարված թռուցիկը հանձնվել է նախապես մշակված անցարանով:

Ռուբեն Խաչատրյանը ցուցմունք տվեց, որ «Փարոս-2 լրացուցիչ» թռուցիկի մեկ օրինակը իրոք ինքը հանձնել է ամբաստանյալ Քաջիկ Սահակյանին, որպիսինը չժխտեց նաեւ Սահակյանը: Վկա Գարեգին Դավթյանը պնդեց, որ թռուցիկով ծրարը անցուրանով հանձնելու համար ինքը նույնպես գնացել է պայմանավորված վայրը, այսինքն Միկոյանի պողոտայի 65 շենքի մուտքի մոտ:

Բացի թվարկված ապացույցներից, ամբաստանյալ Սահակյանին մեղսագրված արարքը հիմնավորված է նաեւ գործին կցված իրեղեն ապացույցներով, փորձագետի եզրակացությամբ եւ գործի մնացած բոլոր փաստական տվյալներով:

Ամբաստանյալ Քաջիկ Սահակյանը պաշտպանական ճառում հայտարարեց, որ ինքը չի հրաժարվում իր հետագա հանցավոր մտադրություններից, չի զղջում կատարած արարքի համար, այլ ցավում է, որ ժամանակից շուտ կալանավորվեց եւ հնարավորություն չունեցավ նո. 145 դպրոցի աշակերտներին լրիվ ներգրավել հանցագործության մեջ եւ «դարձնել իր գաղափարակիցը»:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օրի 293-294 հոդվածներով քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալ Քաջի Վարազդատի Սահկյանին, հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի 206 պրիմ, 17-69 հոդվածներով եւ 206 պրիմ հոդվածով դատապարտել երեք տարի, 17-69 հոդ. երկու տարի ազատազրկման, իսկ 231 հոդվածով ազատազրկել երեք (3) տարի վեց ամիս ժամանակով: Քր. օր 37 հոդվածի համակցությամբ դատապարտյալ Քաջիկ Սահակյանին վերջին հաշվով թողնել պատիժը կրելու ազատազրկում երեք տարի վեց ամիս ժամանակով, ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում առանց հետագա աքսորի: Սահակյանի կալանքի սկիզբը հաշվել 1973թ. նոյեմբերի 20-ից:

Իրեղեն ապացույց թռուցիկները եւ ֆոտոժապավենը, որոնք կցված են գործին թողնել գործում: Թռուցիկների մնացած օրինակները ոչնչացնել:

4 պլաստմասայից փոքրիկ վաննաները, «Լենինգրադ-2» ֆոտոմեծացուցիչը, մետաղյա պինցետը եւ «Ջենիթ-3» լուսանկարչական ապարատը վերադարձնել Խ-ին եւ Թ-ին:

Պակի ֆինբաժին ի պահ հանձնված տասնմեկ ռուբլին պետականացնել: Մնացած բոլոր լուսանկարչական չօգտագործված թղթերը, ծրարները եւ քիմիական լուծույթները ոչնչացնել:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով գանգատարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ ստորագրություն

14/06/74թ
Հ. Ս.

Նորիկ Մարտիրոսյան, Սամվել Մարտիրոսյան, Լեւոն Բաղալյան

Առաջին դատապարտումից եւ պատժաչափը կրելուց հետո կալանավայրից Հայաստան վերադարձած Ազգային միացյալ կուսակցության անդամները ոչ միայն սկսում են ակտիվացնել արդեն իսկ առկա ԱՄԿ կառույցները, այլեւ նախաձեռնում են նոր կառույցների, խմբերի ու խմբակների ձեւավորման գործը: Աշոտ Նավասարդյանը նման մի խմբակ է կազմակերպում Կոնդ թաղամասում: Խմբակի անդամներից ակտիվությամբ հատկապես աչքի են ընկնում Նորիկ ու Սամվել Մարտիրոսյան եղբայրները եւ Լեւոն Բաղալյանը: Խմբակը ղեկավարում է Նորիկ Մարտիրոսյանը: Նրանց հաջողվում է թռուցիկներ տարածել Երեւանում, գրել անկախության կոչ պարունակող գրառումներ շենքերի պատերին: Պատրաստի թռուցիկների հաջորդ խմբաքանակը, որ պետք է տարածվեր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման նախօրյակին՝ նոյեմբերի 28-ի լույս 29-ի գիշերը, չեն հասցնում տարածել: Նոյեմբերի 25-ին Սամվել Մարտիրոսյանը եւ Լեւոն Բաղալյանը ձերբակալվում են: Ժամանակ անց ձերբակալվում է նաեւ Նորիկ Մարտիրոսյանը: Նրանց նկատմամբ դատավճիռը հրապարակվել է 1974-ի հուլիսի 10-ին: Մեղադրվել են ՀԽՍՀ քր. օր.-ի 69 (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը) եւ 206[1] (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) հոդվածներով: Երեքն էլ դատավարության ժամանակ հայտարարում են, որ իրենց գործողությունները համարում են օրինաչափ ու չեն զղջում: Դատավճռում, մասնավորապես, ասված է. «Պետք է շեշտել, որ երեք ամբաստանյալները դատական նիստին տված ցուցմունքներում, իրենց պաշտպանական ճառերում եւ վերջին խոսքում համառ կերպով պնդեցին, որ իրենց ազգայնական հայացքներով եւ համոզմունքներով մնում են որպես Ազգային միացյալ կուսակցության անդամներ»:

Նորիկ Համբարձումի Մարտիրոսյանը ծնվել է 1948 թ., Երեւանում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանը: Մինչեւ կալանավորվելը Նաիրիի շրջանի Արագյուղի միջնակարգ դպրոցում մաթեմատիկայի ուսուցիչ է աշխատել: 1972-ին ծանոթացել է կալանավայրից նոր ազատ արձակված Աշոտ Նավասարդյանի հետ: Նրա միջոցով անդամագրվել է Ազգային միացյալ կուսակցությանը: Կազմակերպել է ԱՄԿ մասնաճյուղ հանդիսացող առանձին խմբակ: Մասնակցել է թռուցիկների տպագրման ու տարածման աշխատանքներին: Գրել է իրենց խմբակի բազմացրած ու տարածած թռուցիկների տեքստերը: Կալանավորվել է 1974 թ. մայիսին: Դատապարտվել է 3 տարի ազատազրկման, որը պետք է կրեր ընդհանուր ռեժիմի կալանավայրում: Սկզբնական շրջանում պատիժը կրում է Երեւանից ոչ հեռու գտնվող Շահումյանի կալանավայրում: Կարճ ժամանակ անց տեղափոխում են Ռուսաստան՝ Պերմի մարզի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայր: Մի քանի շաբաթ այնտեղ մնալուց հետո պատժաչափի մնացած երկու տարին փոխարինում են աքսորով, որը պետք է կրեր նույն մարզում: Ազատ արձակվելուց հետո վերադառնում է Հայաստան: Աշխատում է Երեւանի մեխանիկայի ինստիտուտում: Այնուհետեւ տեղափոխվում է Ղազախստան: Այժմ ապրում եւ աշխատում է Երեւանում:

Լեւոն Պատվականի Բաղալյանը ծնվել է 1951 թ., Երեւանում: Մինչեւ կալանավորվելը սովորել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի 5-րդ կուրսում: Նորիկ եւ Սամվել Մարտիրոսյանների հետ միասին կազմակերպել է ԱՄԿ մասնաճյուղ հանդիսացող խմբակ: Մասնակցել է թռուցիկների տպագրման, բազմաց-

ման ու տարածման աշխատանքներին: Կալանավորվել է 1973 թ. նոյեմբերին: Դատապարտվել է 2 տարի վեց ամիս ժամկետով ազատազրկման, որը պետք է կրեր ընդհանուր ռեժիմի կալանավայրում: Սկզբնական շրջանում պատիժը կրում է Երեւանից ոչ հեռու գտնվող Շահումյանի կալանավայրում, բայց որոշ ժամանակ անց տեղափոխում են Ռուսաստան՝ Կույբիշեւի քրեական հանցագործների համար նախատեսված կալանավայր, որտեղից էլ՝ ողջ պատժաչափը կրելուց հետո ազատ է արձակվում եւ վերադառնում Հայաստան: Վերականգնվում է համալսարանում եւ ավարտում: Իր մասնագիտությամբ աշխատել է երեւանյան տարբեր գործարաններում: Հանկարծամահ է եղել Երեւանում, 2013 թ. դեկտեմբերի 14-ին:

Սամվել Համբարձումի Մարտիրոսյանը ծնվել է 1950 թ., Երեւանում: Ավարտել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի գունավոր մետաղների մշակման ֆակուլտետը: Ավարտելուց հետո աշխատել է նույն ինստիտուտում: Իր եղբոր՝ Նորիկ Մարտիրոսյանի եւ Լեւոն Բաղալյանի հետ միասին կազմակերպել է Ազգային միացյալ կուսակցության մասնաճյուղ հանդիսացող խմբակ: Մասնակցել է թռուցիկների տպագրման, բազմացման ու տարածման աշխատանքներին: Կալանավորվել է 1973-ի նոյեմբերին: Դատապարտվել է ազատազրկման 2 տարի վեց ամիս ժամանակով, որը պետք է կրեր ընդհանուր ռեժիմի կալանավայրում: Սկզբնական շրջանում պատիժը կրել է Երեւանից ոչ հեռու գտնվող Շահումյանի կալանավայրում, բայց հետո՝ իր գործակիցների հետ միասին տեղափոխել են Ռուսաստանի Պերմի մարզ: Այնտեղ էլ՝ կարճ ժամանակ անց մնացած պատժաչափը փոխարինել են աքսորով: Ազատ արձակվելուց հետո վերադարձել է Հայաստան: Աշխատել է տարբեր գործարաններում, այնուհետեւ մեկնել է Ղազախստան: Այժմ ապրում եւ աշխատում է Երեւանում:

Նորիկ Մարտիրոսյան
լուս. քր. գործից



Նորիկ Մարտիրոսյան

Լեւոն Բաղալյան
լուս. քր. գործից

Լեւոն Բաղալյան

Սամվել Մարտիրոսյան
լուս. քր. գործից

Սամվել Մարտիրոսյան

Պատմում է Նորիկ Մարտիրոսյանը

Դեռ շատ վաղ տարիքից, այնուհետեւ ուսանողական տարիներին, միշտ էլ՝ ինչքան ինձ հիշում եմ, մտածել եմ, թե ինչու Հայաստանը անկախ չէ, ինչու մենք չպետք է մեր ճակատագիրը տնօրինելու իրավունք ունենանք: 1972 թվականին, արդեն չեմ հիշում, թե ինչպես եւ ում միջոցով, Կոնդ էր եկել Աշոտ Նավասարդյանը: Ընդհանուր ծանոթների տանն էլ ծանոթացանք ու սկսեցինք շփվել: Մինչ այդ Աշոտն արդեն ընդհատակյա գործունեության համար դատապարտվել ու ազատ էր արձակվել: Աշոտը մեզ ասաց, որ գոյություն ունի կազմակերպություն, որը պայքարում է Հայաստանի անկախության համար, եւ այդ պայքարն օրինական է, Հայաստանը պետք է անկախանա հանրաքվեի ճանապարհով, եւ դրա համար լուրջ աշխատանք պետք է տանել: Մենք ցանկություն հայտնեցինք միանալ այդ պայքարին ու միացանք: Սկզբի համար Աշոտն առաջարկեց ինձ մի թռուցիկ գրել, ինչը եւ արեցի: Տեքստը հավանության արժանացավ: Թռուցիկը բազմացրինք ու տարածեցինք: Հաջորդ թռուցիկը, որ նույնպես պատրաստ էր տարածման համար, պահել էինք Կայարանի պահարաններից մեկում: Երբ եղբայրս՝ Սամվել Մարտիրոսյանը, եւ Լեւոն Բադալյանը գնացել էին վերցնելու՝ նրանց բռնել էին: Մի քանի ամիս տեւեց, մինչեւ որ քննությունը կարողացավ հաստատել նաեւ իմ կապն այդ թռուցիկների հետ, եւ ինձ էլ կալանավորեցին: Մեզ դատապարտելուց հետո ուղարկեցին Հայաստանի Շահումյանի գաղութ: Այնտեղ, մեզանից բացի, կային նաեւ այլ քաղաքական բանտարկյալներ: Այնտեղ էին Առաքելյան Գագիկը, Կարապետյան Կոստանը, Սահակյան Քաջիկը: Մի առիթով, երբ անհիմն պատժախուց նստեցրին Սամվելին, մենք՝ քաղբանտարկյալներս, գործադուլ հայտարարեցինք: Եկան պետանվտանգության ներկայացուցիչները, զրուցեցին մեզ հետ: Թվում էր, թե ամեն ինչ հարթվեց, բայց փոխարենը, բոլորիս համար անակնկալ, մեզ էտապով տեղափոխեցին Ռուսաստան: Ինձ տարան Պերմի մարզ՝ 35-րդ գաղութ: Հայերից այնտեղ էին գտնվում Զոհրաբյան Ռազմիկը եւ Շահվերդյան Բագրատը: Իրենց նախաձեռնությամբ, առանց իմ կողմից գրված դիմումի կամ խնդրագրի, մնացած պատժաչափս փոխել են աքսորով, որը կրել եմ նույն Պերմի մարզի Չուսավոյ քաղաքում: Նույն կերպ վարվեցին նաեւ եղբորս՝ Սամվելի հետ: Նա իր աքսորը կրում էր նույն մարզի Բերեզնիկի քաղաքում: Իսկ Լեւոն Բադալյանին տարան քրեականների համար նախատեսված կալանավայր, որտեղ էլ նա մնաց մինչեւ պատժաչափի ավարտը:

Ազատ արձակվելուց հետո հետապնդումներն ավելի շատ էին: Աշխատում էի Մեխանիկայի ինստիտուտում: Այնտեղ պետանվտանգությունն ուներ իր հատուկ՝ առաջին բաժինը: Ինձ հետ աշխատողներին, մտերմություն անողներին, շփվողներին կանչում ու զրուցում էին: Մարդիկ վախենում էին, իսկ առիթը, փաստորեն, ես էի: Այսպես ապրելը դժվար էր: Հետագայում ամուսնացա եւ մեկնեցի Ղազախստան: Հայաստան եմ վերադարձել 1989 թվականին: Հանդիպեցի Աշոտ Նավասարդյանին, առաջարկեց մտնել Հանրապետական կուսակցություն եւ դառնալ այդ կուսակցության խորհրդի անդամ: Հրաժարվեցի: Հանրապետականում տիրող մթնոլորտն անընդունելի էր ինձ համար: Ուշ-ուշ էի Աշոտին հանդիպում, իսկ նրա մահից հետո ընդհանրապես դադարեցի այնտեղ գնալ: Աշխատում էի էլեկտրացանցում. դժվար էր, մուծումները չանելու պատճառով ստիպված պետք է մարդկանց հոսանքը անջատեի, պետք է ստիպեի, որ մուծումները չուշացնեն, միաժամանակ հասկանում էի, որ մարդիկ ի վիճակի չեն: Նման տեղում ու նման մթնոլորտում աշխատել այլեւս չէի կարող: Դուրս եկա ու սկսեցի տաքսու վարորդ աշխատել: Շատ ավելի հանգիստ ու լավ եմ զգում ինձ:

Խմբակի անդամների գործով կայացված դատավճիռը

Այս դատավճիռը նույնպես ԱԱԾ-ից ստացել ենք վկաների եւ գործով անցնող այլ անձանց անունները ջնջված: Համադրելով մեր ձեռքի տակ եղած այլ փաստաթղթեր, ինչպես նաեւ գործին առնչված մարդկանց հուշերը՝ որոշ անուններ կարողացել ենք վերականգնել, իսկ վկաների մի մասի անունները այդպես էլ մնացել են չվերականգնված:

Դատարանը թափթփվածության հետեւանքով Լեւոն Բաղալյանին առաջադրված 206[1] հոդվածին վճիռ կայացնելիս ընդհանրապես չի անդրադարձել: Այդ հոդվածով ոչ պատիժ է սահմանվել, ոչ էլ այն հանվել է:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1974թ. հուլիսի 10-ին

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝	**Հ. ՍԻՄՈՆՅԱՆԻ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝	**1. Ա. ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ**
	2. Ռ. ՊԱՊԻԿՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝	**Ն. ԳԱԼՍՏՅԱՆԻ**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Պ. ԹՈԽՅԱՆԻ**
Դատապաշտպան՝	**------**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի՝

1. ՆՈՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ծնված 1948թ. Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի. ՀԱՄԼԿԵՄ անդամ, նախկինում չդատված, բարձրագույն կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ-ոք, մինչեւ կալանավորվելն աշխատել է ՀՍՍՀ Նաիրիի շրջանի Արագյուղի միջնակարգ դպրոցում, որպես մաթեմաթիկայի ուսուցիչ, ֆիզիկապես առողջ, զինապարտ, պարգեւատրումներ չունի, բնակվում է Երեւան 29 Ռուսթավելու փողոց նո. 22, սույն գործով կալանքի տակ է 5/5-74թ.:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 69, 206[1] հոդվածներով:

2. ԼԵՎՈՆ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ, ծնված 1951թ. Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀԱՄԼԿԵՄ անդամ, նախկինում չդատված, թերի բարձրագույն կրթությամբ, ֆիզիկապես առողջ, խնամքին ոչ ոք, ամուրի, մինչեւ կալանավորվելը սովորելիս է եղել Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտի 5-րդ կուրսում, բնակվում է Երեւան, Կոնդ տուն նո. 104, սույն գործով արգելանքի տակ է վերցվել 1973թ. նոյեմբերի 22-ին, իսկ կալանքի սանկցիան տրվել է 25/11-1973թ. մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 69, 206[1] հոդվածներով:

3. ՍԱՄՎԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ծնված 1950թ. Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀԱՄԼԿԵՄ անդամ, նախկինում չդատված, բարձրագույն կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ ոք, զինապարտ, մինչեւ կալանավորվելը աշխատել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսումնական մասի----, բնակվում է Երեւանի, Ռուսթավելու փող. նո. 22, սույն գործով արգելանքի տակ է 1973թ. նոյեմբերի 22-ից, իսկ կալանքի սանկցիան տրվել է նույն թվականի նոյեմբերի 25-ին, մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 69, 206[1] հոդվածներով:

Դատաքննությամբ, ամբաստանյալների բացատրություններով, վկաների ցուցմունքներով, գործին կցված իրեղեն ապացույցների առկայությամբ, եւ գործի մյուս տվյալներով ապացուցվեց հետեւյալը:

Ամբաստանյալ Նորիկ Մարտիրոսյանը 1972թ. հանցավոր կապի մեջ է մտել նախկինում հակասովետական գործունեության համար դատապարտված եւ կալանավայրից վերադարձած Աշոտ Նավասարդյանի հետ եւ վերջինիս ցուցումով որոշել է սովետական կարգերը արատավորող ազգային գաղտնի խմբակ ստեղծել, ներգրավելով նրա մեջ իր եղբայր Սամվել Մարտիրոսյանին եւ ամբաստանյալ Լեւոն Բադալյանին:

Այդ մտահղացումը իրականացնելու համար Նորիկ Մարտիրոսյանը իրենց տանը կազմակերպել է հավաքույթներ 10-12 հոգուց բաղկացած, որտեղ հակասովետական ազգային հայացքներով ելույթներ են ունեցել Աշոտ Նավասարդյանը եւ ուրիշները, հավաքույթի մասնակիցներին ծանոթացրել են ազգային բովանդակությամբ նյութեր, խմբակի անդամներից յուրաքանչյուր ամիս հավաքել են չորսական ռուբլի անդամավճար:

Սովետական ժողովրդի մեջ ռասայական եւ ազգային թշնամություն սերմանելու նպատակով Երեւան քաղաքի տարբեր թաղամասերում, կինո-թատրոններում, կուլտուրական վայրերում, շենքերի վրա գրառումներ կատարելու, փոստարկղերի մեջ թերթիկներ քցելու եւ թռուցիկների տարածման միջոցով զրպարտչական հերհուրանքներ են կատարել սովետական իրականության մասին: Այսպես օրինակ ամբաստանյալ Նորիկ Մարտիրոսյանը 1973թ. պատրաստել է «ի հարություն» վեռնագրով թռուցիկի տեքստը այն մասին, որ իբր ռուսները բռնանում են հայ ժողովրդի սուրբ իրավունքները եւ կոչ անում ստեղծել «անկախ հայաստան» եւ այն ամբաստանյալ Լեւոն Բադալյանի հետ միասին լուսանկարչությամբ բազմացնելով-400 օրինակից տարածել են Երեւան քաղաքի Աջափնյակում, Կանազում, Մոսկվա կինոթատրոնում եւ այլ տեղեր: Հիշյալ ամբաստանյալները 1973թ. օգոստոսին Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի պատին, պոլիտեխնիկական ինստիտուտի կորպուսների միջեւ ասֆալտին, Լենինի պողոտայի վրա գտնվող ծածկած շուկայի պատին եւ այլ տեղեր յուղաներկով կատարել են հակասովետական բովանդակությամբ գրառումներ, որոնց մեջ կոչ է արվում կորչեն ռուսները, եւ ստեղծել «անկախ հայաստան», ընդորում Բադալյանը կատարել է գրառումները, իսկ Ն. Մարտիրոսյանը հսկել է:

1973թ. նոյեմբերի 21-ին ամբաստանյալներ Լեւոն Բադալյանը եւ Սամվել Մարտիրոսյանը Երեւանի երկաթուղային կայարանի ավտոմատ պահարանից իրենց պահ տված պայուսակները ստանալիս կասկածանքի տակ բռնվել են ՀՍՍՀ մինիստրների սովետին առընթեր պետ. անվտանգության կոմիտեի աշխատողների կողմից: Ընթերակաների մասնակցությամբ ստուգման ենթարկելով նրանց պայուսակները ամբաստանյալ Լեւոն Բադալյանի մոտ հայտնաբերվել է 5 կապոց քանակով 889 օրինակ այսպես կոչված «Ազգային Միացյալ Կուսակցության» անունից «անկախ հայաստան» ստեղծելու կոչով «հին թշնամի, նոր մորթի» վերնատառով ազգայնական բովանդակությամբ ֆոտոթռուցիկներ, մեծ քանակությամբ ռեզինե մատնոցներ, ծոցատետր,

«կրկին ոտքի հայորդիներ» վեռնագրով եւ այլ իրեր, իսկ ամբաստանյալ Սամվել Մարտիրոսյանի մոտ եղած պայուսակում հայտնաբերվել է «Մոսկվիչ» մակնիշի հայերեն տառերով եւ ժապավենով գրամեքենա:

Քննությամբ պարզվել է, որ «հին թշնամի, նոր մորթի» հակասովետական ազգայնական թռուցիկների տեքստը կազմվել է Նորիկ Մարտիրոսյանի կողմից եւ վերջինիս բնակարանում այն լուսանկարչությամբ բազմացվել եւ Նորիկ Մարտիրոսյանի, Լեւոն Բադալյանի եւ Սամվել Մարտիրոսյանի կողմից, այնուհետեւ որպես ապահով տեղ նշված թռուցիկները Լեւոն Բադալյանի եւ Սամվել Մարտիրոսյանի կողմից պահվել են երկաթգծի ավտոմատ պահարանում այն նպատակով, որպիսի 1973թ. նոյեմբերի 29-ին, այսինքն հայաստանում սովետական իշխանության հաստատման օրը Երեւան քաղաքում տարածելու համար: Պարզվեց նաեւ այն, որ ամբաստանյալ Նորիկ Մարտիրոսյանի հանձնարարությամբ Սամվել Մարտիրոսյանը 1973թ. հոկտեմբերին հավաքած անդամավճարների գումարով նո. 257 խանութից գնել է վերը հիշատակված «Մոսկվիչ» մակնիշի ռուսերեն գրատառով գրամեքենան եւ Երեւանի կենցաղսպասարկման կոմբինատի արհեստանոցում փոխել հայկական տառերով օգտագործելու նպատակով, սակայն բռնվել է:

Ամբաստանյալ Նորիկ Մարտիրոսյանը դատական նիստում ցուցմունք տվեց այն մասին, որ նա 1972թ. ծանոթանալով կալանավայրից վերադարձած Աշոտ Նավասարդյանի հետ խոսել է անկախ հայաստան ստեղծելու անհրաժեշտության մասին եւ որոշել են կազմակերպել գաղտնի խումբ: Այդ նպատակով իրենց բանակարանում կազմակերպել է հավաքույթներ, որտեղ ելույթներ են ունեցել ազգայնական հարցերի եւ այլ թեմաների շուրջը: Գաղտնի խմբի մեջ է ներգրավել Լեւոն Բադալյանին եւ Սամվել Մարտիրոսյանին: Խմբի անդամներից հավաքել է անդամավճար եւ գաղտնի աշխատանքում օգտագործելու համար անդամավճարի գումարով Սամվել Մարտիրոսյանի միջոցով ձեռք է բերել գրամեքենա:

Հայաստանի անկախության գաղափարը տարածելու համար գրել է «ի հարություն» վեռնագրով թռուցիկի տեքստ եւ ամբաստանյալ Լեւոն Բադալյանի մասնակցությամբ բազմացրել 400 –օրինակից բնակչության մեջ տարածել են փոստարկղերի միջոցով, «Մոսկվա» կինոթատրոնում հանդիսականների մեջ ցրելով եւ տարբեր եղանակով քաղաքի մեջ: 1973թ. օգոստոսին Բադալյանի հետ Երեւան քաղաքում պատերի վրա գրառումներ են կատարել հետեւյալ բովանդակությամբ՝ կորչեն ռուսները, որոնք բռնանում են հայ ժողովրդի սրբազան իրավունքներին, կեցցե ազատ հաաստանը եւ տակին գրել «Ազգային միացյալ կուսակցություն»: 1973թ. հոկտեմբերին գրել է ազգային բովանդակությամբ «հին թշնամի, նոր մորթի» վերնագրով թռուցիկների տեքստը, այն Բադալյանի եւ Սամվելի մասնակցությամբ բազմացրել են մոտ 900 օրինակից եւ իր հանձնարարությամբ Բադալյանը եւ Սամվել Մարտիրոսյանը այն թաքցրել են Երեւանի երկաթուղային կայարանի ավտոմատ պահարանում 1973թ նոյեմբերի 29-ին հայաստանում սովետական իշխանության հաստատման օրը քաղաքում տարածելու նպատակով: Ամբաստանյալ Նորիկ Մարտիրոսյանը առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչելով հանդերձ միաժամանակ հայտարարեց, որ ինքը մնում է իր համոզմունքներին եւ չի զղջում իր արարքը:

Ամբաստանյալ Լեւոն Բադալյանը բացատրեց, որ ինքը մասնակցել է Նորիկ Մարտիրոսյանի բնակարանում հրավիրված հավաքույթին, որտեղ ազգայնական գաղափարներով ելույթներ են ունեցել Աշոտ Նավասարդյանը եւ ուրիշներ: Նորիկ Մարտիրոսյանի առաջարկով մտել է գաղտնի խմբի մեջ, հանդիսացել է «Ազգային միացյալ կուսակցութ-

յան» անդամ, որի նպատակն է եղել ստեղծել անկախ հայաստան, մուծել է անդամավճար:

Վերեւ նշված հավաքույթներին մասնակցել եւ գաղտնի խմբի մեջ է հավաքագրվել նաեւ Սամվել Մարտիրոսյանը: Նորիկ Մարտիրոսյանի հետ կատարելով մտքերի փոխանակություն համաձայնվել են ազգային գաղափարները պրոպագանդելու համար դիմել գործնական քայլի: Այդ նպատակով 1973թ. Նորիկ Մարտիրոսյանը գրեց «ի հարություն» վերնագրով թռուցիկի տեքստը այն բազմացրել են ֆոտոապարատով ու տարածել՝ կանազում, կայարանի շենքում, կինոթատրոնում եւ ուրիշ տեղեր:

1973թ. օգոստոսին Նորիկ Մարտիրոսյանի առաջարկով եւ հսկողությամբ պոլիտեխնիկ ինստիտուտի մոտ, Հակոբ Հակոբյանի անվան դպրոցի եւ ծածկած շուկայի պատերին յուղաներկով կատարել է գրառումներ «կեցցե ազատ հայաստանը, կորչեն ռուսները»:

1973թ. հոկտեմբերին Նորիկ Մարտիրոսյանը գրել է «հին թշնամի, նոր մորթի» վերնագրով թռուցիկը, որը ինքը Սամվել Մարտիրոսյանի հետ բազմացրել են 200 օրինակ, իսկ մնացածը բազմացրել են Նորիկ Մարտիրոսյանի հետ եւ վերջինիս հանձնարարությամբ այդ թռուցիկները Սամվել Մարտիրոսյանի հետ տարել պահել են Երեւանի երկաթուղային կայարանի ավտոմատ պահարանում, որպիսի քաղաքում տարածեն 1973թ. նոյեմբերի 29-ին, սակայն նույն ամսի 21-ին բռնվել են, նույն օրը իրենց մոտ բռնվել է նաեւ «Մոսկվա» մակնիշի գրամեքենան: Ամբաստանյալը միաժամանակ հայատարարեց, որ իր գործողությունների մեջ ինքը հանցանք չի դիտում, իրեն մեղավոր չի ճանաչում եւ մնում է իր համոզմունքներին:

Ամբաստանյալ Սամվել Մարտիրոսյանը դատական նիստում ցուցմունք տվեց այն մասին, որ 1973թ. իրենց տանը ծանոթացել է հակասովետական գործունեության համար դատապարտված եւ կալանքը կրելուց հետո ազատված Նավասարդյան Աշոտի հետ, իրեն ուրախություն է պատճառել ազգայնական հայացքներով մարդու հետ հանդիպում ունենալը եւ այդ հարցերի շուրջ նրա ելույթը: Նույն թվականին իրենց տանը մասնակցել է կազմակերպված հավաքույթին, որտեղ խոսվել է կրոնի, հայոց լեզվի, հայ ազգի նկատմամբ ռուսական ազդեցության եւ այլ թեմաների մասին: Իր եղբայր Նորիկ Մարտիրոսյանը իրեն հավաքագրել է գաղտնի ազգայնական խմբի մեջ, 1973թ. հանդիսանում է «ազգային միացյալ կուսակցության» անդամ, վճարել է անդամավճար, գաղտնի աշխատանքի օգտագործման համար Նորիկ Մարտիրոսյանի հանձնարարությամբ անդամավճարների գումարով խանութից գնել է «Մոսկվա» մակնիշի ռուսական տառերով գրամեքենա եւ կենցաղսպասարկման կոմբինատում նրա տառերը փոխել է տվել հայերենով:

1973թ. նոյեմբերի սկիզբներին Նորիկ Մարտիրոսյանի հանձնարարությամբ Լեւոն Բադալյանի հետ բազմացրել են «հին թշնամի, նոր մորթի» վերնագրով ֆոտոթռուցիկներ 200-օրինակից, որի մնացած մասը հաջորդ օրը բազմացրել են Լեւոն Բադալյանը եւ Մարտիրոսյանը եւ վերջինիս առաջարկով այդ թռուցիկները եւ գրամեքենան Լեւոն Բադալյանի հետ տարել թաքցրել են Երեւանի երկաթուղային կայարանի ավտոմատ պահարանում 1973թ. նոյեմբերի 29-ին Երեւան քաղաքում տարածելու նպատակով, սակայն բռնվել են նույն ամսի 21-ին:

Հավաքույթների կազմակերպման եւ գաղտնի խմբակի ստեղծելու նախատեսողը եղել է իր եղբայր Նորիկ Մարիրոսյանը եւ Լեւոն Բադալյանը: Իրենց կուսակցության ծրագիրն է եղել հայաստանի անկախության հարցը: Բացի դրանից Սամվել Մարտիրոսյանը հայտարարեց, որ առաջադրված մեղադրանքում մեղավոր իրեն չի ճանաչում, իր գու-

ծունեությունը գտնում է օրինաչափ եւ ճիշտ, մնում է «Ազգային միացյալ կուսակցության» նվիրված անդամ:

Պետք է շեշտել, որ երեք ամբաստանյալները դատական նիստին տված ցուցմունքներում, իրենց պաշտպանական ճառերում եւ վերջին խոսքում համառ կերպով պնդեցին, որ իրենց ազգայնական հայացքներով եւ համոզմունքներով մնում են որպես «ազգային միացյալ կուսակցության անդամներ»:

Բացի իրենց խոստովանական բացատրություններից ամբաստանյալների հակասովետական արարքը հաստատված է նաեւ հետեւյալ ապացույցներով:

Գործով վկաներ Ռ-ն Զ-ն Է-ն Գ-ն Ե-ն Խ-ն իրենց ցուցմունքներում հաստատել են ամբաստանյալներ Նորիկ եւ Սամվել Մարտիրոսյանների բնակարանում տեղի ունեցած հավաքույթի մասին, որին մասնակցել է նաեւ ամբաստանյալ Լեւոն Բադալյանը եւ ուրիշներ որտեղ ազգային հարցի շուրջ ակտիվ ելույթ է ունեցել Աշոտ Նավասարդյանը, որը կոչ է արել հայակական հողերի միավորման եւ անկախ հայաստան ստեղծելու մասին:

Նավասարդյանի վերաբերյալ քրեական գործը անջատվել է առանձին վարույթ եւ կատարվում է քննություն:

Վկաներ Բ-ն Ճ-ն Դ-ն Թ-ն Լ-ն եւ ուրիշներ ցուցմունք են տվել այն մասին, որ իրենց տան փոստարկղերում հայտնաբերել են թռուցիկներ «ի հարություն» վերնագրով, տակը գրած «Ազգային միացյալ կուսակցություն» եւ այն հանձնել են քննչական օրգաններին, իսկ վկա Ը-ն հաստատեց այն փաստը, որ 1973թ. հուլիսին «Մոսկվա» կինոթատրոնում մի երիտասարդ քանակով 50 հատ «ի հարություն» թռուցիկներ է շպրտել հանդիսատեսներին եւ ինքը դիմել փախուստի (հ. 2 գթ. 69-62, 63-64, 120-130) եւ այս դատական նիստի արձանագրությունը:

Վկաներ Ի-ն Ժ-ն հաստատել են որ 1973թ. նոյեմբերի 21-ին ժամը 20-ի սահմաններում Երեւան քաղաքի երկթուղային կայարանի մոտ ամբաստանյալներ Լեւոն Բադալյանի եւ Սամվել Մարտիրոսյանի ձեռքերին եղած պայուսակներում հայտնաբերել են մեծ քանակությամբ հակասովետական թռուցիկներ եւ գրամեքենա (հ. 2 գթ. 14-16, 17-18 եւ տես. դատական նիստի արձանագրությունը):

Պետք է նշել, որ ամբաստանյալները հաստատել են վերը հիշատակված վկաների ցուցմունքները; Բացի դրանից նրանք ցույց են տվել այն վայրերը որտեղ պահել են թռուցիկները եւ կատարել են պատերին գրառումներ:

Ամբաստանյալների արարքը հաստատված է նաեւ զննման արձանագրությամբ եւ իրեղեն ապացույցներով:

Այսպիսով ամբաստանյալներ Նորիկ Համբարձումի Մարտիրոսյանը, Լեւոն Պատվականի Բադալյանը եւ Սամվել Համբարձումի Մարտիրոսյանը տոգորված լինելով հակասովետական ազգային հայացքներով սովետական ժողովուրդների միջեւ թշնամություն առաջ բերելու, անկախ հայաստան ստեղծելու կոչերով Նորիկ Մարտիրոսյանի ղեկավարությամբ կազմակերպել են հավաքույթներ եւ գաղտնի խմբակ: Երեւան քաղաքի տարբեր տեղամասերում շենքերի պատերի վրա գրառումներ կատարելու, կինոթատրոնի եւ փոստարկղերի միջոցով հակասովետական ազգային բովանդակությամբ թռուցիկներ տարածելով զրպարտչական հերհուրանքներ են կատարել Սովետական իրականության մասին, այսինքն կատարել են հանցանք, որը նախատեսված է ՀՍՍՀ քր. օրի 69 եւ 206[1] հոդվածներով:

Վերոգրյալների հիման վրա եւ ղեկավարվելով ՀՍՍՀ քր. դատ. օրի 203-29 հոդ. ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալներ Նորիկ Համբարձումի Մարտիրոսյանին, Լեւոն Պատվականի Բաղալյանին եւ Սամվել Համբարձումի Մարտիրոսյանին ճանաչել մեղավոր ՀՍՍՀ քր.օրի 69 եւ 206[1] հոդվածներով:

Նորիկ Մարտիրոսյանին դատապարտել ազատազրկման ՀՍՍՀ քր.օրի 69 հդ. երեք (3) տարի ժամանակով, քր. օրի 206[1] հոդ. երեք (3) տարի ժամանակով քր. օրի 37 հոդ համակցությամբ թողնել երեք (3) տարի ազատազրկումը, որը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, կալանքի սկիզբը հաշվելով 1973թ. մայիսի 6-ից:

Լեւոն Բաղալյանին դատապարտել ազատազրկման ՀՍՍՀ քր. օրի 69 հոդ.երկու տարի 6 ամիս (2տ, 6 ամիս) ժամանակով, քր օրի 37 հոդ. համակցությամբ վերջին հաշվով թողնել երկու տարի վեց ամիս ժամանակով ազատազրկում, որը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, կալանքի սկիզբը հաշվելով 1973թ. նոյեմբերի 22-ից:

Սամվել Մարտիրոսյանին դատապարտել ազատազրկման ՀՍՍՀ քր. օրի 69 հոդ. երկու տարի վեց ամիս (2տ, 6 ամիս) ժամանակով քր օրի 206[1] հոդվածով երկու տարի վեց ամիս (2տ 6 ամիս) ժամանակով քր. օրի 27 հոդ. համակցությամբ վերջին հաշվով թողնել կրելու երկու տարի 6 ամիս ժամանակ ազատազրկումը, որը պետք է կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, կալանքի սկիզբը հաշվել 1973թ. նոյեմբերի 22-ից:

Գործին կցված երկուական օրինակ ֆոտոթռուցիկներ «ի հարություն» եւ «հին թշնամի, նոր մորթի» վերնագրով իրեղեն ապացույցները թողնել գործում, իսկ մնացած օրինակները ոչնչացնել;

«ՖԵԴ 2» մակնիշի նո. 56040881 ֆոտոապարատը իր պարագաներով եւ «Մոսկվա» մակնիշի նո. 96171 գրամեքենան իր օժանդակ սարքերով պետականացնել:

Առգրավված պայուսակները, թղթյա պարկը, մեկ զույգ ռեզինե ձեռնոցները, 60 հատ ռեզինից մատնոցները եւ մեկ մետաղյա պինցետը ոչնչացնել:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով գանգատարկման ենթակա չէ:

Նախագահ՝ **Հ. ՍԻՄՈՆՅԱՆ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություններ**
Իսկականի հետ ճիշտ է
ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Հ. ՍԻՄՈՆՅԱՆ**

10/7-74թ.
Հ.Ս.

Ռուբեն Խաչատրյան. ՊԱԿ-ի զոհը

Ըստ էության որպես ՊԱԿ-ի զոհ կարելի է ներկայացնել շատերին: Երեւի այս կազմակերպության կողմից բոլոր կալանավորվածներն ու հետապնդվածներն էլ ինչ որ իմաստով զոհեր են: Բայց եղել են մարդիկ, ովքեր զոհվել են բառի ամենահիսկական իմաստով, երբ գտնվել են ՊԱԿ-ի մեկուսարանում կամ կալանավայրերում: Ռուբեն Խաչատրյանը զոհերի այս շարքում տարբերվում է մյուսներից: Կյանքից հեռանալիս նա չի գտնվել ոչ ՊԱԿ-ի մեկուսարանում եւ ոչ էլ կալանավայրում: Նա կյանքից հեռացել է իր տանը եւ իր կամքով: Բայց նրա ապրած կյանքը, նախաքննության ընթացքում նրա հետ ողջ կատարվածը, նրա հետագա ճակատագիրը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ այս մարդու նկատմամբ ավելի քան դաժան են վարվել: Ի՞նչ է կատարվել իրականում, ինչպե՞ս են կարողացել ՊԱԿ-ի աշխատակիցները նրա ունեցած առողջական խնդիրն օգտագործել նրա ու նրա ընկերների դեմ, ունեցե՞լ է արդյոք նա առողջական խնդիր, թե՞ այն ձեռք է բերել ՊԱԿ-ի մեկուսարանում, մեզ հայտնի չէ: Բայց, որ նկատելի առողջական խնդիրներ չունեցող մարդը կալանավորվելուց անմիջապես հետո, լուրջ հոգեկան խանգարումով մարդ է դարձել՝ հաստատ է: Նրա պատմությունն էապես տարբերվում է մյուսներից:

Ռուբեն Լյուդվիգի Խաչատրյանը ծնվել է 1937 թ., Արթիկի շրջանի Լուսակերտ գյուղում: Մինչեւ ձերբակալվելը Երեւանում տրոլեյբուսի վարորդ է աշխատել: Այլախոհական գործունեությամբ սկսել է զբաղվել 60-ականների կեսերից: Մինչեւ 60-ականների վերջերը տարված է եղել ժամանակի ոգուն բնորոշ հողային պահանջներով ու հայրենասիրությամբ՝ Ղարաբաղ, Նախիջեւան, Ցեղասպանության խնդիր, լեզվի մաքրություն: Առնչվել է այդ շրջանում ընդհատակյա գործող կազմակերպությունների ու առանձին գործող այլախոհների հետ: Կապեր է ունեցել «Հանուն Հայրենիքի» ամսագիրը հրատարակող խմբակի անդամների, Հայաստանի վերամիավորման միության անդամներ Վալտեր Մելիքյանի ու Յուրա Բուդաղյանի հետ: Երկար տարիներ համագործակցել է Բագրատ Շահվերդյանի հետ: 1960-ականների վերջերին նրա մեջ հասունացել է անկախության գաղափարը: 70-ականների սկզբին կապեր է հաստատել Ազգային միացյալ կուսակցության հետ: Դարձել է այդ կուսակցության անդամ: Ակտիվորեն մասնակցել է 1973 թ. ԱՄԿ-ի ծավալած գործունեությանը: Ձերբակալվել է Բագրատ Շահվերդյանի դատավարության օրը՝ 1973 թ. դեկտեմբերի 10-ին: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Դատապարտվել է 2 տարի վեց ամիս ազատազրկման: Նախաքննության փուլում, ինչպես նաեւ հետագայում՝ ինքնասպանության փորձեր է կատարել: Նրա հետ առնչվող մարդիկ պնդում են, որ ձերբակալությունից հետո նա եղել է դեղերի կամ նման կարգի այլ ազդեցության տակ, ինչի հետեւանքով նրա հոգեկան վիճակը խաթարվել է: Դատավճռի կայացումից հետո, անհասկանալի պատճառով քաղբանտարկյալների համար նախատեսված կալանավայր ուղարկելու փոխարեն, նրան տանում են Կապան եւ միայն որոշ ժամանակ անց տեղափոխում Մորդովիա՝ քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայր: Նախաքննության փուլում ՊԱԿ-ի մեկուսարանում կասկածելի բժշկական

միջամտությունը, դրան հաջորդած ազատազրկումը, էտապը, բանտային ու գաղութային ծանր պայմանները, բժշկական օգնության իսպառ բացակայությունը պատճառ են դառնում նրա հոգեկան վիճակի է՛լ ավելի խաթարման: Ժամանակ անց, արդեն լուրջ առողջական խնդիրներ ունեցող Խաչատրյանին վաղաժամ ազատ են արձակում: 1994-ին նա ինքնասպանություն է գործում Երեւանի իր բնակարանում:



Ռուբեն Խաչատրյան
լուս. քր. գործից



Ռուբեն Խաչատրյան

Պատմում է Ռուբեն Խաչատրյանի կինը՝ Տիգրանուհին

Ռուբենի ձերբակալությունը մեզ համար անակնկալ էր: Տանը նստած հաց էինք ուտում, դուռը զանգեցին. ես բացեցի: Ներս մտան եւ հայտարարեցին, որ մեր տունը պետք է խուզարկեն: Ես, իհարկե, տեղյակ էի, թե ինչով է զբաղվում Ռուբիկը, բայց միեւնույն է՝ խուզարկության ու ձերբակալության փաստն անակնկալ էր: Ռուբիկին տարան ՊԱԿ-ի մեկուսարան: Ամեն ամիս նրան հանձնուք էինք տանում: Որեւէ նեղություն հատուկ ծառայությունները մեզ չեն պատճառել: Որեւէ վատ բան չեմ տեսել կամ զգացել: Քննիչը մի շատ խելոք ու լավ մարդ էր: Մեզ տեսակցություններ էր տրամադրում: Անգամ պատրաստակամություն հայտնեց Ռուբիկին իր ծնողների հետ տեսակցություն տրամադրել: Ես այդ քննիչից շատ գոհ եմ: Ինչքան գնում էի, ինքն էր ներքեւ իջնում ու ինձանից վերցնում հանձնուքը: Տեսակցությունների ժամանակ Ռուբիկը բան չէր խոսում: Միայն ասում էր, որ չմտածեմ, ամեն ինչ լավ է լինելու: Ե՛վ Ռուբիկի, ե՛ւ Շահվերդյան Բագրատի, ե՛ւ Պարույր Հայրիկյանի դատավարություններին ես ներգրավված եմ եղել որպես վկա: Բնական է, որ դատարանում ասում էի՝ ոչնչից տեղյակ չեմ: Բացատրում էի, որ՝ այո, գիտեմ նրանց, այցելել են մեր տուն, բայց ես նրանց ընդամենը հյուրասիրել եմ, ավել ոչինչ, իսկ թե ինչով են նրանք զբաղվել՝ տեղյակ չեմ: Ռուբիկին տվեցին երկու տարի վեց ամիս եւ տեղափոխեցին Կապան: Այնտեղ ընտանիքով տեսակցության ենք գնացել նրան: Մի քանի ամիս անց տեղափոխեցին Մորդովիա, որտեղ մնաց մեկ տարի ութ ամիս: Այդ ողջ ընթացքում մենք տեսակցության չգնացինք: Մի օր էլ Պետական անվտանգության կոմիտեից զանգահարեցին մեզ, կանչեցին իրենց մոտ եւ ասացին՝ պետք է դիմում-խնդրագիր գրեք, որ Ռուբիկին վաղակետ ազատ արձակեն: Հենց իրենք էլ թելադրեցին դիմումի բովանդակությունը: Շեշտը հիմնականում պետք է դրվեր իմ վատառողջ լինելու վրա: Պահանջվող դիմումը գրեցինք ամուսնուս եղբոր հետ: Ոչնչից տեղյակ չէինք: Հետո պարզվեց, որ Ռուբիկն արդեն շատ վատ է:

Նրան սրսկել են: Մինչեւ այդ սրսկումը շատ են չարչարել: Նա ցույց էր տալիս իր ծոծրակի ու ուսի միացման հատվածն ու ասում, որ այդտեղից են սրսկել: Մի օր՝ հերթական անգամ հիվանդանոցից դուրս գրվելուց հետո, երբ տանը ոչ ոք չկար, երկուսով զրուցում էինք, ասաց. «Երբ ինձ սրսկեցին, բիբերս լայնացան: Սենյակի պատին կախված

հայելու մեջ նայեցի ինձ ու սարսափով տեսա, որ բիբերս լայնացած են: Կարծես ուշաթափվեցի: Երեւի 15-20 րոպե ոչինչ չեմ զգացել: Երբ աչքերս բացեցի, տանում էին ինձ: Լավ հիշում եմ՝ սենյակների շարք էր ու մերկ ոտքեր: Աչքիս առաջ ծնողներս էին ու դուք՝ ընտանիքիս անդամները, մեռած պառկած»:

Պատմում է Ռուբեն Խաչատրյանի դուստրը՝ Գոհարը

Երկժամյա տեսակցության գնացինք Կապան՝ ուղղաթիռով: Այդ ժամանակ հայրիկն արդեն շատ վատ էր: Ես փոքր էի, բայց լավ հիշում եմ: Հիշում եմ, հայրիկը երեւաց վանդակաճաղերի հետեւից: Շատ զայրացած տեսք ուներ: Ձեռքերը հետեւում կապած էին: Երեւի չէր ցանկանում, որ մենք այդ վիճակում տեսնենք իրեն: Գոռոցով պահանջեց, որ հետ տանեն իրեն: Երեւի կալանավայրի աշխատակիցներն էլ հասկացան վիճակի անհեթեթությունը եւ ձեռքերն արձակեցին: Այնուհետեւ հայրիկը զայրացավ հորեղբորս վրա՝ ասելով. «Ինչու՞ ես երեխաներին բերել»: Առաջին անգամ այնտեղ ինձ անծանոթ ու շեղված բան տեսա նրա հայացքում: Ինչ արել են նրա հետ, արել են այստեղ՝ Երեւանում, ՊԱԿ-ի մեկուսարանում: Շատ խորթ էր, մի տեսակ չարացած: Մեզ՝ ինձ ու եղբորս այդ օրը չսիրեց, չգուրգուրեց: Միայն համբուրեց երկուսիս ճակատը: Մենք լացում էինք, չէինք ցանկանում բաժանվել: Հորեղբայրս դժվարությամբ դուրս հանեց մեզ: Հայրիկիս հայացքը կյանքում չեմ մոռանա: Մինչեւ ձերբակալվելը նրա դեմքին մշտապես բարի ժպիտ էր, իսկ այնտեղ ահավոր հայացք ուներ:

…Բոլորի համար էլ պարզ էր, որ իրենք հիվանդացրին հայրիկին եւ ավելորդ գլխացավանքներ չունենալու համար՝ որոշեցին ժամկետից շուտ ազատ արձակել:

Շատ լավ եմ հիշում հայրիկի վերադարձը: Տանը ես ու եղբայրս՝ Աղասն էինք: Դուռը ծեծեց ու ինքն էլ բացեց: Երկար անձրեւանոցով, լայնեզր գլխարկով ներս մտավ, ձեռքերը լայն բացեց ու անձայն լաց եղավ: Բոլորովին այլ մարդ էր: Կապանի հետ համեմատության եզր անգամ չկար: Ընդհանրապես նա փոփոխական էր: Ազատ արձակվելուց հետո էլ էր փոխվում: Տարիներ շարունակ, ժամանակ առ ժամանակ պառկում էր հոգեբուժարանում, ստանում համապատասխան բուժումներ ու տուն վերադառնում: Հիշում եմ՝ հիվանդության սրացումներից մեկի ժամանակ տանը հայրիկի հետ ոչ ոք չկար, ինձանից ու եղբորիցս բացի: Նա դուրս հանեց մեզ հյուրասենյակից ու դուռը փակեց: Դռան ապակիների հետեւից նայում էինք իրեն: «Դե՛, եկե՛ք,- գոռում էր,- դե, հիմա եկեք ու ինձ հետ խոսեք: Հեշտ էր, հա՞, ձեռքերս բռնած ինձ հարցաքննելը»: Քայլում էր հյուրասենյակում ու բարձր խոսում: Սրացումն անցնելուց հետո, մեր հարցին ի պատասխան ասաց, որ աչքին երեւում են ժամանակին իրեն հարցաքննողները: Ինքը շատ էր ընկճվում՝ հիշելով այդ հարցաքննությունները: Ասում էր, որ իր նկատմամբ շատ դաժան են եղել: Բայց նաեւ ասում էր, որ պահանջվող ցուցմունքներ չի տվել: Տանն առանձին սենյակ ուներ: Պատերին իր ընկերների նկարներն էին:

Հաճախ էր ինքնասպանության փորձ անում: Մենք զգույշ էինք: Ամեն կերպ փորձում էինք ետ կանգնեցնել նման մտքից: Ինձ հետ անկեղծանում էր: Ասում էր, որ վախենում է մեզ համար: Ասում էր՝ իր հետ կապված կարող են վնասել մեզ, իսկ եթե ինքը չլինի՝ մեզ այլեւս վնաս չեն տա: Ասում էր, որ իր համար մահից ավելի ծանր է լինելու, եթե իր պատճառով մենք վնասվենք: Փաստորեն, նա անընդհատ փորձում էր իր մահով՝ իր պատկերացրած վտանգից մեզ փրկել:

1994 թվականի ձմեռն էր, աղջիկս նոր էր ծնվել: Այդ օրը շատ ձյուն եկավ: Առաջին ձյունն էր: Ծանր ժամանակներ էին, ցուրտ էր, վառելիք չկար: Զանգահարեց հայրիկն ու հարցրեց՝ կարո՞ղ եմ երկար խոսել իր հետ: Աղջիկս լացում էր, ասացի՝ այս պահին չեմ կարող, բայց կես ժամից կզանգահարեմ: «Լավ,- ասաց,- կես ժամից զանգահարիր, բայց բոլոր դեպքերում դու քեզ լավ պահիր, դու որ լավ լինես՝ իմ խիղճը հանգիստ կլինի»: Ասաց, հաջողություն մաղթեց ու անջատեց: Մեկ ժամից զանգահարեցի՝ հայրիկն արդեն չկար: Կախվել էր խոհանոցում: Գրություն էր թողել: Գրել էր, որ ինքնասպանության վճիռն ինքն է կայացրել, նաեւ՝ որ սիրել է իր ընտանիքը եւ հայրենիքը, ազնվորեն նվիրվել է հայրենիքին:

Պատմում է Քաջիկ Սահակյանի կինը՝ Սվետան

Շատ եմ ափսոսում, որ Ռուբենի հետ հետագայում ամեն ինչ այնպես չեղավ, ինչպես որ պետք է լիներ: Այդպես էլ շատ բան անհայտ մնաց: Ոչ ոք իրավունք չունի դատելու: Բոլորը չէ, որ կարող էին դիմանալ իրենց բաժին ընկած փորձություններին: Այսօր Ռուբենը ժառանգներ ունի, եւ ես նրա մասին խոսելիս առաջին հերթին նրանց մասին եմ մտածում: Նա դեռ նախաքննության փուլում էր փորձել ինքնասպան լինել: Հետագայում ինքնասպանությամբ էլ հեռացավ կյանքից: Մինչեւ ձերբակալվելը բոլորս շատ հարգում էինք նրան: Նրա տանն էինք միջոցառումներ անցկացնում:

Պատմում է Բագրատ Շահվերդյանը

Ռուբենն իր գործունեությունն սկսել էր դեռ 60-ականների սկզբներից: Մինչեւ 60-ականների վերջերը նա տարված էր 60-ականներին բնորոշ հայրենասիրությամբ՝ Ղարա - բաղ, Նախիջեւան, Եղեռն: Սակայն, 60-ականների վերջերին քաղաքականացավ: Հետագայում հարեց ԱՄԿ-ին: Նրա գործունեությունը սկսեց կրել ընդգծված հակասո - վետական ու անկախական բնույթ: Շատ պինդ ու իր գաղափարներին նվիրված մարդ էր, եւ չափից ավելի կասկածելի է ձերբակալվելուց հետո նրա պահվածքը: Այն, ինչ տեղի ունեցավ նրա հետ նախաքննության փուլում՝ ինձ համար անհայտ ու անհասկանալի է մնում: Նրա վրա ինչ-որ կերպ ազդել են: ՊԱԿ-ի մեկուսարանում ամեն ինչ էլ հնարավոր էր: Մենք շատ մտերիմ ենք եղել: Մի բան լավ հիշում եմ՝ նա սպիրտային խմիչքներ օգտագործելուց միշտ հրաժարվում էր: Ոչ թե չէր ցանկանում խմել, այլ գիտեր, որ չի կարելի իրեն: Խնդիր ուներ, որի մասին չէր խոսում: Կարծում եմ, իր ունեցած հենց այդ խնդիրն էլ Պետանվտանգության կոմիտեի մեկուսարանում օգտագործեցին: Նա հաստատ գտնվել է ինչ-որ դեղերի կամ այլ միջամտության ազդեցության տակ: Երեւի եղածներից ամենահեշտը նրա վրա է հնարավոր եղել այդպես ազդել: Այսօր ես շատ եմ ցավում, որ ժամանակին՝ իմ ազատ արձակվելուց հետո չհանդիպեցի նրան, չփորձեցի ինչ-որ կերպ աջակցել, գոտեպնդել: Նա, փաստորեն, ազատ արձակվելուց հետո իրեն տանջող խնդիրների հետ մեն-մենակ մնաց: Եթե հանդիպեինք, երեւի ամեն ինչ այնպես չդասավորվեր, ինչպես դասավորվեց: Հիմա սրա մասին խոսելն արդեն ուշ է: Ես նրա հետ կապված միայն լավ հիշողություններ ունեմ:

Պատմում է Անահիտ Կարապետյանը

Ռուբենին մենք շատ էինք հավանում: Բագրատ Շահվերդյանն ու Ռուբեն Խաչատրյանն էին մեր ղեկավարները: Ինքն է ինձ ծանոթացրել Քաջիկ Սահակյանի հետ: Տրոլեյբուսի վարորդ էր: Մենք պայմանավորվում էինք, թե որ կանգառում ու որ ժամին ես պետք է տրոլեյբուս բարձրանամ, որպեսզի փոխանցվելիք բաները փոխանցի ինձ, կամ ես՝ իրեն, եւ ասի, թե էլ ինչ պետք է անենք: Ինձ համար շոկ էր, երբ ՊԱԿ-ի մեկուսարանում՝ խցի պատը հատուկ նշանաբանով ծեծելու միջոցով Պարույր Հայրիկյանը տեղեկացրեց ինձ, թե Ռուբենը դավաճան է: Մինչեւ հիմա էլ չեմ կարողանում այս մտքին համակերպվել:

Պատմում է Պարույր Հայրիկյանը

Այս հուշը վերցված է Նորայր Խանզադյանի «Ազգային միացյալ կուսակցություն-Ինքնորոշում միավորում (ԱՄԿ-ԱԻՄ) համառոտ պատմություն, Մաս Բ» գրքույկից:

Ռուբենը հին ԱՄԿ-ականներից էր, եւ ես համոզված էի, որ կդիմանա փորձություններին: Բայց առերես հարցաքննության ժամանակ իմ դիմաց մեկ այլ մարդ էր կանգնած: Նա չէր հասկանում, որ մատնում է ինձ ու ցուցմունքներ է տալիս, որոնք ինձ կրկին կալանավորելու միակ հիմքը դարձան: Ես որոշել էի՝ թեկուզ չեկիստների ներկայությամբ պատժել նրան, թող զարմանալի չթվա՝ նույնիսկ սպանել նոկաուտ անելով: Ռուբենն ինձ համար պարզ մատնիչ չէր: Մենք զգացել, տեսել ու համոզվել էինք, որ գտել ենք կոմունիստական կայսրությունից մեր ժողովրդին ազատագրելու, մեր հայրենիքի փրկության ճանապարհը: Ռուբենն ինձ համար ոչ թե մի քանի ընկերների կործանվելուն նպաստած թուլամորթ մատնիչ էր, այլ Հայաստանի ազատագրման հակառակորդ: Եվ հրաժեշտ տալու պահին, երբ ես որոշում էի, թե ինչպես մեր միջեւ կանգնած չեկիստների արանքից նրան այդ մահացու հարվածը պիտի հասցնեմ, նա այնպիսի ջերմությամբ ու խանդավառությամբ նետվեց ինձ գրկելու, հրաժեշտ տալու, որ կարկամեցի. հազիվ կարողացա ասել՝ խիստ դժգոհ եմ քեզանից, բայց Աստված քեզ հետ: Ռուբենն այնպես այլայլվեց, կարծես իրականությանը չհամապատասխանող, սխալ մի բան եմ ասել իրեն: Ես երազներին չեմ հավատում, բայց մի արտառոց բան տեղի ունեցավ օրեր անց. երազումս ինձ մոտեցավ իր թոթովախոս մանկիկը ու աղերսագին նայելով աչքերիս՝ ասաց՝ Պարույր հոբար, պապաս լավն է: Ես փորձեցի խուսափել երեխայից, բայց նա շարունակում էր՝ Պարույր հոբար, պապաս լավն է: Այդ երազից մեկ-երկու օր առաջ ՊԱԿ-ի բանտում տեղեկացել էի, որ Ռուբեն Խաչատրյանի մասնաճյուղից 7-ական ամիսների ազատազրկման են դատապարտվել Ֆիրդուսն ու Գարեգինը, երկու տարվա՝ Անահիտ Կարապետյանը եւ երեք ու կես տարվա՝ անկոտրում Քաջիկ Սահակյանը, իսկ ինքը՝ Ռուբենը, երկու ու կես տարվա: Բանտի լուսամուտից Ռազմիկ Մարկոսյանի օգնությամբ նրան ձայն տվեցի եւ արհամարհելով լուռ մնալու բանտային պահանջները՝ իրեն ուղղեցի ինձ հայտնի աշխարհի ամենավատ խոսքերը, կոչեցի «դավաճան, մատնիչ» ու սպառնացի՝ աղոթիր, որ երբեւէ ինձ չհանդիպես: Խցընկերը հետո պատմել էր մի այլ կալանավորի, որից էլ տեղեկացա, որ իմ այդ մոլեգնումից հետո նա զարմացած խոսում է ինքն իրեն. «Պարույրն էս ի՞նչ է ասում, ես ինչպե՞ս դավաճան… բայց՝

հա՛, իհարկե, իհարկե, ես մատնել եմ իրեն: Բայց էս ի՞նչ բան է. ես կարծես քնից եմ զարթնում»: Հաջորդ օրը Ռուբենը փորձում է ինքնասպան լինել, բայց հսկիչները փրկում են: Նախ՝ խցում փորձում է կախվել, հետո երակներն է պատռում, հետո մեծ քանակությամբ ծխախոտ է կուլ տալիս… Ռուբենին կալանքից շուտ ազատ թողեցին, բայց ի վերջո՝ տարիներ անց ինքն այս աշխարհից հեռացավ ինքնասպանությամբ…

Ռուբեն Խաչատրյանի գործով կայացված դատավճիռը

ԱԱԾ-ից վկաների ջնջված անուններով ստացված դատավճիռն այլ դատավճիռների ու մեր ձեռքի տակ եղած այլ փաստաթղթերի համադրությամբ փորձել ենք վերականգնել: Սակայն շատ վկաների անուններ մնացել են չլրացված:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1974 թ. հուլիսի 16-ին

Նախագահությամբ՝	**Ն. Մանուկյանի**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝	**1. Ռ. ԹԱՐԱԽՉՅԱՆ**
	2. Օ. ԲՈՑԻՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝	**Շ. ՕԽԻԿՅԱՆ**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
ԴԱՏԱԽԱԶ՝	**Գ. ՂԱՄԱՐՅԱՆ**
ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ՝ -	

Քննության առնելով դատական դռնափակ նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի՝

ՌՈՒԲԵՆ ԼՅՈՒԴՎԻԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ծնված 1937 թ. Հայկ. ՍՍՀ Արթիկի շրջանի Լուսակերտ գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, անկուսակցական, ամուսնացած, խնամքին երկու երեխաներ, մինչ կալանավորվելը աշխատել է Երևանի նո. 2 տրոլեյբուսային պարկում, որպես տրոլեյբուսի վարորդ, բնակվել է Երևան քաղաքի Վրացական փողոցի նո. 17 տանը բնակարան 30:

Մեղադրվում է քր. օրի 65 հ. 1մ. և 67 հոդվածով:

Վկաների ցուցմունքներով, ամբաստանյալի բացատրություններով և իրեղեն ապացույցների զննմամբ դատական կոլեգիան հիմնավորված է համարում հետևյալը:

Ամբաստանյալ Խաչատրյանը 1966թ. հակասովետական հայացքներ ունեցող անձնավորությունների հետ, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և Նախիջևանի ինքնավար հանրապետության մասին ունեցած զրույցների ազդեցության տակ, ազգայնական հայացքներով է տրամադրվել:

Հետագայում, վերը հիշատակված հարցերի շուրջ, մտքեր փոխանակելով մեկ այլ գործով դատապարտված Բագրատ Շահվերդյանի ու Արարատ Թովմասյանի հետ, ամբաստանյալ Խաչատրյանը որոշել է զբաղվել գաղտնի կազմակերպչական գործունեությամբ, որը ուղղված է եղել խմբակներ կազմակերպելուն հակասովետական, ազգային բովանդակությամբ նյութեր պատրաստելուն և այդպիսիք տարածելուն:

Իրականացնելով այդ մտադրությունը, ամբաստանյալ Խաչատրյանը 1967թ. հինգվեց անգամ մասնակցել է գաղտնի խմբի հավակույթներին, որոնք տեղի են ունեցել քաղաքացի Ս-ի բնակարանում:

Այդ հավակույթների ժամանակ, Խաչատրյանը և գաղտնի խմբի մյուս մասնակիցները ծանոթացել են հակասովետական բնույթ կրող նյութերի հետ, մտքեր են փոխանակել գաղտնի խմբեր կազմակերպելու, նրանց հակասովետական աշխատանքին երիտասարդներին ներգրավելու, թռուցիկներ պատրաստելու և այդպիսիք տարածելու մասին:

Բացի դրանից հավակույթներում մտքեր են փոխանակել ազգային հարցի շուրջը, որի ընթացքում նրանք Ղարաբաղին և Նախիջևանին վերաբերող հարցը ազգայնական տեսանկյունով մեկնաբանելով գտել են, որ խմբի գործունեությանը պետք է օժանդակի այդ տերիտորիաները Հայաստանին միացնելու գործում:

Գաղտնի խմբի հակասովետական գործունեությունը նյութապես ապահովելու նպատակով, ամբաստանյալ Խաչատրյանը հավաքել է խմբի մասնակիցներից անդամավճարներ և հանձնել իրենց ղեկավար, գործով վկա Մ-ին:

1968թ. սկզբներին, երբ գաղտնի խմբակներ կազմակերպելու համար ձերբակալվել են և դատի են տրվել Ասատուր Բաբայանը, Սարգիս Թորոսյանը և մյուսները, ամբաստանյալ Խաչատրյանը դադարել է գաղտնի խմբի հավակույթներին մասնակցելուց:

Սակայն նա շարունակել է մինչև 1973թ. զբաղվել քաղաքականապես վտանգավոր, հրահրիչ բովանդակություն պարունակող ձեռագիր նյութերի և թռուցիկների տարածմանը:

Այսպես 1967թ. աշնանը, Երևանի Հանրապետական ստադիոնի մոտակայքում, հանդիպելով գործով վկա Մ-ի հետ, ամբաստանյալ Խաչատրյանը նրանից ստացել է «կրկին ռուս-թուրքիական դիվանագիտության զոհասեղանին» վերնագրով թռուցիկի 50 օրինակներ ու այսպիսիք Երևանի Էրեբունի անվան փողոցի վրա գտնվող շենքի բնակիչների միջև տարածելու նպատակով, գցել է բնակարանների փոստարկղները:

Այդ թռուցիկները իրենց մեջ պարունակում են զրպարտիչ պնդումներ այն մասին, որ իբր սովետական կառավարությունը, շարունակելով Ցարական Ռուսաստանի քաղաքականությունը, ոտնահարում է հայ ժողովրդի ազգային զգացումները և իրավունքները:

Մեկ այլ գործով քր. օրի 65 հ. 1մ. դատապարտված Սարգիս Թորոսյանի ցուցումով, ամբաստանյալ Խաչատրյանը 1967թ. աշնանը լուսանկարչական եղանակով բազմացրել է «պայքար» ստորագրությամբ թռուցիկի 200-օրինակ, որից 190-օրինակ հանձնել է Սարգիս Թորոսյանին, իսկ 10-օրինակ տվել է Բագրատ Շահվերդյանին:

Այդ ֆոտոթռուցիկները պատրաստվել է նկարի ձևով, ընդ որում յուրաքանչյուր նկար արտահայտել է սովետական պետական հասարակական կարգերը արատավորող, զրպարտչական բովանդակության և առանձին պատկերների տրվել է համապատասխան հակասովետական մեկնաբանություն:

1967թ. դեկտեմբերին և 1968թ. հունվար ամսին, ամբաստանյալ Խաչատրյանը ան - ձամբ գրել է «Օրակարգ» և «Երդում» վերնագրերով հակասովետական բնույթ կրող

երկու նյութ, որոնց մեջ շարադրվել է զրպարտիչ պնդումներ այն մասին, որ իբր սովետական միությունում իրականացվում է «սպիտակ ջարդի» քաղաքականություն և որ իբր Հայաստանը գտնվում է գաղութային կախման վիճակում: Բացի դրանից «Օրակարգ» վերնագիր ունեցող նյութը իր մեջ պարունակում է նաև Հայաստանը ՍՍՀՄ-ից անջատելու և, անկախ պետություն, ստեղծելու համար պայքար տանելու կոչ:

Նույն ժամանակաշրջանում (1968-1973թթ.) ամբաստանյալ Խաչատրյանը հանցավոր կապ պահպանելով մեկ այլ գործով դատապարտված Բագրատ Շահվերդյանի հետ, վերջինիցս ստացել է հակասովետական, ազգայնական բնույթ կրող գրականություն ու այդպիսին տարածել գաղտնի խմբերի մասնակիցների միջև:

Այսպես նա, գործով վկա Բ-ի միջոցով տարբեր անձնավորությունների ծանոթացրել է հետևյալ հոդվածների հետ՝ «Հայաստանի միացյալ նախարարություններ, երազանք և իրականություն», «Ամնիստիա, հումանիզմ, իրականություն», «հիշեցում հայրենասերներին», «մեր ձգտումները և նպատակը» «մեր պահանջները», «Արյան կոչ կամ գեների լեզու»:

Վերը հիշատակված հոդվածների մեջ պարունակված է զրպարտիչ հերհուրանքներ սովետական իրականության, ՍՄԿԿ-ի, սովետական կառավարության քաղաքականության մասին:

1970թ. ամբաստանյալ Խաչատրյանը վերսկսել է ակտիվ կերպով զբաղվել գաղտնի կազմակերպչական գործունեությամբ:

Այսպես, նշված թվականի գարնանից մինչև աշնանը նա մի քանի անգամ հանդիպումներ է ունեցել, հակասովետական գործունեության համար դատապարտված Մելիքյանի և Բաբայանի հետ, որոնք հանդես են եկել որպես ազգայնական գաղտնի այլ խմբի ներկայացուցիչներ ու առաջարկել բանակցություններ վարել խմբերը միացնելու վերաբերյալ:

Այդ հանդիպումների ժամանակ ամբաստանյալ Խաչատրյանը վերը հիշատակված անձնավորություններին հանձնել է հինգ ձեռագիր նյութեր, որոնք իրենց մեջ պարունակում են սովետական պետական և հասարակական կարգերը արատավորող զրպարտչական հերհուրանքներ:

Այդ նյութերը Խաչատրյանը ստացել է Շահվերդյանից: Սույն ժամանակաշրջանում (1973թ. գարնանից մինչև աշնանը) ամբաստանյալ Խաչատրյանը հանձնել է Բագրատ Շահվերդյանին հինգ ձեռագիր նյութեր, որոնք ինքը ստացել էր Մելիքյանից և Յուրա Բուդաղյանից:

Այդ ձեռագիր նյութերը եղել են հետևյալ վերնագրերով՝ «դիտողություններ», «Մեր ձգտումները և նպատակը», «երկու խոսք» «Մեր կարծիքը» «մեր խնդիրները արդի էտապում»:

Նշված հոդվածները Միքաելյանի և Յուրա Բուդաղյանի կողմից գրվել է ի պատասխան Խաչատրյանից ստացած ձեռագիր նյութերի:

Վերը հիշատակված հոդվածներում կա զրպարտչական պնդում այն մասին, որ իբր սովետական կառավարությունը ոտնակոխ է անում հայ ժողովրդի ազգային զգացումները և իրավունքները:

Հակասովետական գործունեության համար Բագրատ Շահվերդյանի և Արարատ Թովմասյանի կալանավորելուց հետո, ամբաստանյալ Խաչատրյանը 1973թ. հոկտեմբեր ամսին մեկ այլ գործով կալանավորված Քաջիկ Սահակյանին ցուցում է տվել, որպեսզի վերջինս Երևան քաղաքի շենքերի պատերին և այլ վայրերում, այսպես կոչված «Ազգային միացյալ կուսակցության» անունից գրառումներ կատարել:

Նույն Քաջիկ Սահակյանին 1973թ.-ի նոյեմբեր ամսին ամբաստանյալ Խաչատրյանը առաջարկել է Բագրատ Շահվերդյանի գործով առաջիկա դատական պրոցեսի կպակցությամբ ֆոտոթռուցիկներ գրել:

Երբ Քաջիկ Սահակյանը պատրաստել է երկու թռուցիկների տեքստ ու ցույց տվել Խաչատրյանին, վերջինս հավանություն է տվել և առաջարկել բազմացնել այդպսիսիք ու տարածել:

Սակայն այդ բանը նրանց չի հաջողվել իրականացնել, քանի որ թռուցիկները բազմացնելիս բռնվել են:

Նշված թռուցիկներում տեղ են գտել հակասովետական պնդումներ: Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Խաչատրյանը ընդունեց, որ 1967թ. մի քանի անգամ մասնակցել է հակասովետական գաղտնի խմբի հավակույթներին: Նա հաստատեց, որ 1970թ. ինքը հանդիպումներ է ունեցել դատապարտված Մելիքյանի և Յուրա Բուդաղյանի հետ ու բանակցություններ վարել իրենց գաղտնի խմբերը միացնելու վերաբերյալ:

Դատական նիստում Խաչատրյանը չժխտեց, որ վերը նշված անձնավորություններից ստացել է հակասովետական բնույթ կրող ձեռագիր նյութեր:

Նա իրեն հանցավոր ճանաչեց նաև նրանում, որ 1968-1973թվականներին տարածել է ազգայնական հակասովետական հերյուրանքներ պարունակող թռուցիկներ և նյութեր:

Ամբաստանյալ Խաչատրյանին վերագրված արարքը բացի իր խոստովանական ցուցմունքներից հիմնավորված է նաև հետևյալ ապացույցներով:

Վկաներ Ը-ն, Մ-ն և Թ-ն հաստատել են, որ 1967թ. Խաչատրյանը մասնակցել է գաղտնի խմբի հավակույթներին:

Այդ վկաները ցուցմունքներ են տվել, որ հավակույթների ժամանակ մտքեր են փոխանակել ազգային հարցի շուրջը, որի ընթացքում Ղարաբաղի և Նախիջևանի վերաբերյալ հարցը ազգայնական տեսանկյունով մեկնաբանելով, նշել են, որ խմբի գործունեությանը պետք է օժանդակի այդ տերիտորիաները Հայաստանին միացնելու համար:

Վկա Բ-ն հաստատեց, որ Խաչատրյանը 1970թ. հանդիպումներ է ունեցել Մելիքյա - նի և Յուրա Բուդաղյանի հետ ու բանակցությոններ վարել գաղտնի խմբերը միացնելու վերաբերյալ:

Նշված վկան միաժամանակ բացատրեց, որ այդ հանդիպումների ժամանակ Խաչատրյանը տվել է Մելիքյանին և Յուրա Բուդաղյանին ձեռագիր նյութեր, որոնք հակասովետական բնույթ են կրել:

Այնուհետև Բ-ն հայտնեց, որ նույնանման բովանդակություն պարունակող նյութեր Խաչատրյանը ստացել է Մելիքյանից և Յուրա Բուդաղյանից:

Վկա Ք-ն ցուցմունքներով հաստատված է, որ ամբաստանյալ Խաչատրյանի հանձնարարությամբ Քաջիկ Սահակյանի կողմից գրած թռուցիկները բազմացվել են ֆոտոլուսանկարելու միջոցով:

Վկաներ Մ-ի, Ը-ի և Թ-ի ցուցմունքներով հիմնավորված է, որ 1967թ. աշնանը ամբաստանյալ Խաչատրյանը տարածել է հակասովետական բովանդակություն ունեցող թռուցիկներ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով քր. դատ. օրի 293հ. 294հ. դատական կո - լեգիան

ՎՃՌԵՑ՝

Ռուբեն Լյուդվիգի Խաչատրյանին հանցավոր ճանաչել Հայկական ՍՍՀ քր. օրի 65 հ. 1մ. և 67 հոդ. և ենթարկել ազատազրկման երկու տարի վեց ամիս (2- տարի 6-ամիս) ժամանակով, որպիսին նա պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, առանց աքսորի: Կալանքի սկիզբը հաշվել 1973թ. դեկտեմբերի 10-ից:

Սույն դատավճիռը վճռաբեկության կարգով գանգատարկման և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀ՝	**Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝	**ստորագրություններ**
իսկականի հետ ճիշտ է	
ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	**Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Աշոտ Նավասարդյան

Աշոտ Նավասարդյան
լուս. 1974 թ. քր. գործից

Աշոտ Նավասարդյան

Աշոտ Ցոլակի Նավասարդյանի նկատմամբ սա արդեն երկրորդ դատավճիռն էր: Կայացվել է 1974 թվականի օգոստոսին: Առաջին դատավճռով 1970 թ. նա դատապարտվել էր երկու տարի ազատազրկման: Ազատ արձակվելուց հետո, չնայած ոստիկանական հսկողությանը, շարունակում է իր գործունեությունը: Կազմակերպում է Ազգային միացյալ կուսակցության նոր կառույցներ, որոնք զբաղվել են Հայաստանի անկախության մասին կոչեր պարունակող թռուցիկների պատրաստմամբ ու տարածմամբ եւ շենքերի պատերին անկախ Հայաստան ստեղծելու կոչեր գրելով: 1974-ի մարտին նա կրկին կալանավորվում է եւ ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 2-րդ մասով եւ 67 հոդվածով այս անգամ դատապարտվում է 7 տարի ազատազրկման ու երկու տարի աքսորի: Ազատ է արձակվում ժամկետից շուտ՝ ներման խնդրագրով, 1976-ի դեկտեմբերին:

Աշոտ Նավասարդյանի գործով կայացված դատավճիռը

Այս դատավճիռն ստացել ենք ոչ թե ԱԱԾ-ից, այլ վերցրել ենք մեր անձնական արխիվից: Այդ պատճառով էլ տեքստն ամբողջական է:

Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1974թ. օգոստոսի 30-ին

Նախագահությամբ՝	**Ն. Մանուկյանի**
Ատենակալներ՝	**1. Ս. Մինասյանի**
	2. Կ. Հայրապետյանի
Քարտուղարությամբ՝	**Կ. Մելքոնյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Գ. Ղամարյան**
Դատապաշտպան՝	**------**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի Աշոտ Ցոլակի Նավասարդյանի ծնված 1950թ Երեւան քաղաքում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, միջնակարգ կրթությամբ, անկուսակցական, ամուրի, խնամքին ոչ ոք, դատված 1970թ. քր օրի 65 հ. 1մ. եւ 67հ. կալանքը կրել է (երկու տարի ազատազրկում) մինչեւ կալանավորվելը աշխատել է Երեւանի պոլիվինիլացետատ գործարանում, որպես էլեկտրիկ:

Մեղադրվում է Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 65հ. 1մ., 67հ. եւ 231 հոդ.: Վկաների ցուցմունքներով, ամբաստանյալի բացատրություններով, իրեղեն ապացույցների զննմամբ դատական կոլեգիան հիմնավորված է համարում հետեւյալը:

Ամբաստանյալ Նավասարդյանը հակասովետական գաղտնի կազմակերպչական գործունեության եւ հակասովետական ագիտացիա տանելու համար 1970թ. փետրվարի 23-ին Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի կողմից դատապարտվելուց եւ պատիժը կրելուց հետո վերադառնալով Երեւան քաղաք, չի հրաժարվել իր ազգայնական գաղափարներից ու վերսկսել է իր հակասովետական գործունեությունը:

Այսպես, ազգայնական, հակասովետական իր վտանգավոր գաղափարները Երեւան քաղաքի բնակիչների մեջ տարածելու եւ երիտասարդներին հակասովետական գործունեության մեջ ներգրավելու նպատակով, ամբաստանյալ Նավասարդյանը 1971թ. վերջից մինչեւ 1973թ. աշունը երեք անգամ մասնակցել է մեկ այլ գործով քր. օրի 69հ. եւ 206 պրիմ դատապարտված Լ. Բադալյանի եւ Ն. Մարտիրոսյանի կողմից կազմակերպված հավաքույթների, որտեղ իր ելույթներում նա թույլ է տվել զրպարտչական արտահայտություններ, պնդելով, որ իբր ռուսական ազդեցությունը հայ ժաղովրդին դեպի կործանում է տանում:

Միաժամանկ Նավասարդյանը կոչ է արել երիտասարդության մեջ պրոորագանդա տանել Հայաստանը ՍՍՀՄ-ի կազմից դուրս գալու շուրջը:

1973թ. փետրվարի 25-ին ամբաստանյալ Նավասարդյանը մասնակցել է մեկ այլ գործով քր. օրի 65 հ. 1 մ. դատապարտված Ռ. Խաչատրյանի բնակարանում «Վարդանանց օրվա» նվիրված հավաքույթին, որտեղ նա դարձյալ թույլ է տվել ազգայնական քաղաքականապես վտանգավոր, հրահրիչ բնույթ կրող ելույթի:

Ազգայնական գաղտնի խմբեր կազմակերպելու նպատակով, ամբաստանյալ Նավասարդյանը 1972 եւ 1973 թվականներին ակտիվ կերպով զբաղվել է հակասովետական կազմակերպչական գործունեությամբ:

Այսպես 1972թ. սկզբներին ամբաստանյալ Նավասարդյանը հանձնարարել է Ն. Մարտիրոսյանին կազմակերպել անլեգալ խումբ, որի մեջ ընդգրկվել են դատապարտվածներ Ս. Մարտիրոսյանը եւ Լ. Բադալյանը:

Ամբաստանյալ Նավասարդյանը նրանց ծանոթացրել է ազգայնական բովանդակություն կրող նյութերի հետ ու առաջարկել գաղտնի խմբի աշխատանք տանել այսպես կոչված «Ազգային միացյալ կուսակցության» անունից:

1973 թ. դեկտեմբերին ամբաստանյալ Նավասարդյանը հակասովետական գաղտնի խումբ կազմակերպելու առաջարկություն է արել նաեւ գործով վկա Վ. Մկրտչյանին:

Գաղտնի խմբերի հակասովետական գործունեությունը նյութապես ապահովելու համար, ամբաստանյալ Նավասարդյանը հանձնարարել է Ն. Մարտիրոսյանին եւ Վ. Մկրտչյանին գաղտնի խմբի մասնակիցներից անդամավճար հավաքել եւ տալ իրեն:

Հավաքված անդամավճարներից 1973թ. հոկտեմբեր ամսին ամբաստանյալ Նավասարդյանը գումար է տվել Ն. Մարտիրոսյանին, որպեսզի նա գաղտնի խմբի կարիքնե-

րի համար գնի գրամեքենա:

Հատկացված գումարով Ն. Մարտիրոսյանը ձեռք է բերել ռուսական շրիֆտով «Մոսկվա» մակնիշի գրամեքենա ու կենցաղ սպասարկման արհեստանոցում ռուսաց շրիֆտը փոխել է տվել հայկական շրիֆտով ու թաքցրել Երեւանի երկաթուղային կայարանի ավտոմատ պահախցիկում, որտեղ էլ հայտնաբերվել ու առգրավվել է:

Ամբաստանյալ Նավասարդյանը հավաքված անդամավճարներից գումարներ է տրամադրել Ն. Մարտիրոսյանին նաեւ այն նպատակով, որպեսզի նա հակասովետական թռուցիկները բազմացնելու համար ձեռք բերի տեխնիկական միջոցներ:

Նույն ժամանակաընթացքում այսինքն 1972-1973թթ. ամբաստանյալ Նավասարդյանը ակտիվ գործողություններ է կատարել նաեւ հակասովետական պրոպագանդա կազմակերպելու եւ տարածելու համար:

Այսպես 1973թ. հուլիս ամսին նա հանձնարարել է Ն. Մարտիրոսյանին պատրաստել եւ Երեւան քաղաքում տարածել հակասովետական բնույթ կրող թռուցիկներ:

Կատարելով Նավասարդյանի հանձնարարությունը 1973թ. ամառը Ն. Մարտիրոսյանը գրել է «Ի հարություն» վերնագրով թռուցիկի տեքստ, որը իր մեջ պարունակում է զրպարտչական պնդում այն մասին, որ իբր ռուսները ոտնահարում են հայ ժողովրդի սուրբ իրավունքները:

Բացի դրանից այդ թռուցիկում, այսպես կոչված «անկախ հայաստան» ստեղծելու կոչ է արվում:

Վերը նշված թռուցիկի տեքստում ամբաստանյալ Նավասարդյանի կողմից ուղղումներ եւ ավելացումներ մտցնելուց հետո Ն. Մարտիրոսյանը եւ Լ. Բաղալյանը լուսանկարչական եղանակով բազմացրել են 400 օրինակից ու տարածել Երեւան քաղաքի տարբեր տեղերում:

Չբավարարվելով դրանով Նավասարդյանը 1973թ. օգոստոս ամսին առաջարկել է Ն. Մարտիրոսյանին, Ստեփանյանին եւ Վ. Մկրտչյանին շենքերի պատերին եւ մայթերի վրա հակասովետական գրառումներ կատարել:

Վերը հիշատակված անձնավորությունները իրականացնելով անբաստանյալ Նավասարդյանի հանձնարարությունները 1973թ. օգոստոս ամսին Երեւան քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի պատի վրա, պոլիտեխնիկական ինստիտուտների կորպուսների միջեւ ասֆալտի վրա, Լենինի պողոտայի վրա գտնվող ծածկած շուկայի պատին եւ այլ տեղեր յուղաներկով կատարել են ազգային թշնամանք առաջացնող գրառումներ:

Շարունակելով իր հակասովետական գործունեությունը, ամբաստանյալ Նավասարդյանը 1973թ. հոկտեմբերին հանձնարարել է Ն. Մարտիրոսյանին պատրաստել «Հին թշնամի նոր մորթի» վերնագրով թռուցիկ Երեւան քաղաքում տարածելու համար:

Այդ թռուցիկը իր մեջ պարունակում է սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող հերյուրանքներ եւ ազգային թշնամանք առաջացնող ու այսպես կոչված «Անկախ Հայաստան» ստեղծելու կոչ:

Մեկ այլ գործով դատապարտված Ն. Մարտիրոսյանը, Լ. Բաղալյանը եւ Ս. Մարտիրոսյանը 1973թ. հոկտեմբեր ամսին «Հին թշնամի, նոր մորթի» վերնագրով թռուցիկը բազմացրել են 889 օրինակ, որպեսզի Հայաստանի սովետիզացման օրը, այն 1973թ. նոյեմբերի 29-ին տարածել Երեւան քաղաքում:

Պատրաստի թռուցիկները նրանք ժամանակավորապես թաքցրել են Երեւանի երկաթգծի կայարանի ավտոմատ պահախցում որտեղ 1973թ. նոյեմբեի 21-ին հայտնաբերվել ու առգրավվել է:

Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Նավասարդյանը առաջադրված մեղադրանքում քր. օրի 65 հ. 2մ եւ 67 հ. իրեն հանցավոր չճանաչեց եւ բացատրեց, որ սովետական իշխանությունը քայքայելու կամ թուլացնելու մտադրություն չի ունեցել եւ այդ նպատակով ոչ մի գործողություն չի կատարել: Այնուհետեւ նա պնդեց, որ առանձնապես վտանգավոր պետական հանցագործություն կատարելու նպատակով ագիտացիա չի արել:

Միաժամանակ նա ընդունեց, որ քր. օրի 65 հ. 1 մ դատապարտվելուց ու պատիժը կրելուց հետո վերադառնալով Երեւան քաղաք, մինչեւ 1973թ. վերջերը տարբեր առիթներով մասնակցել է հավաքույթների, որտեղ իր ելույթներում արտահայտել է այն միտքը, որ Հայաստանը գաղութային վիճակում է եւ այդ պատճառով պետք է պայքար տանել Հայաստանը ՍՍՀՄ կազմից դուրս գալու եւ անկախ Հայաստան ստեղծելու ուղղությամբ:

Նա ընդունեց նաեւ, որ այդպիսի պայքար տանելու համար, առաջարկել է Ն. Մարտիրոսյանին եի Վ. Մկրտչյանին գաղտնի խմբեր կազմակերպել:

Ամբաստանյալ Նավասարդյանը չժխտեց, որ 1973թ. առաջարկել է Ն. Մարտիրոսյանին պատրաստել ազգային բնույթ կրող երկու թռուցիկ, որոնցից մեկը տարածել է Երեւան քաղաքի տարբեր տեղերում:

Այնուհետեւ Նավասարդյանը հաստատեց, որ իր հանձնարարությամբ Ն. Մարտիրոսյանը, Վ. Մկրտչյանը եւ Ստեփանյանը 1973թ. օգոստոս ամսին Երեւան քաղաքի տարբեր տեղերում պատերի եւ մայթերի վրա կատարել են ազգային թշնամանք առաջացնող գրառումներ:

Քր. օրի 65 հ. 2մ. եւ 67 հոդ. Նավասարդյանին առաջադրված մեղադրանքը բացի իր խոստովանական ցուցմունքներից հիմնավորված է նաեւ հետեւյալ ապացույցներով

Վկաներ Ն. Մարտիրոսյանը եւ Վ. Մկրտչյանը ցուցմունք են տվել, որ Հայաստանը ՍՍՀՄ –ի կազմից դուրս գալու եւ այսպես կոչված «անկախ Հայաստան» ստեղծելու ուղղությամբ գործունեություն ծավալելու համար, ամբաստանյալ Նավասարդյանը 1972թ. եւ 1973թ. առաջարկել է գաղտնի խմբեր կազմակերպել:

Վկաներ Ն. Մարտիրոսյանը եւ Լ. Բադալյանը հաստատել են, որ 1972-1973թթ. ամբաստանյալ Նավասարդյանը մի քանի անգամ մասնակցելով հավաքույթներին, իր ելույթներում «անկախ հայաստան» ստեղծելու կոչ է արել:

Վկա Ն. Մարտիրոսյանի ցուցմունքներով հիմնավորված է, որ 1973թ. Նավասարդյանի առաջարկությամբ ինքը պատրաստել է «ի հարություն» եւ «հին թշնամի, նոր մորթի» վերնագրով երկու ազգայնական բնույթ կրող թռուցիկներ, որոնցից մեկը բազմացվել եւ տարածվել է Երեւան քաղաքի տարբեր տեղերում:

Վկաներ Ստեփանյանի, Բադալյանի եւ Ն. Մարտիրոսյանի ցուցմունքներով հիմնավորված է, որ 1973թ. ամառը իրենք Նավասարդյանի առաջարկությամբ Երեւան քաղաքի տարբեր տեղերում յուղաներկով շենքերի պատերի եւ մայթի վրա գրել են ազգային թշնամանք առաջացնող լոզունգներ:

Ամբաստանյալ Նավասարդյանին մեղադրանք է առաջադրված ՀՍՍՀ քր. օրի 231 հոդվածով այն բանի համար, որ նա հանցավոր գործունեության մեջ է ներգրավել իր բարեկամ, գործով վկա անչափահաս Գ. Գրիգորյանին:

Այդպիսի մեղադրանք առաջադրելու համար հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ 1973թ. նոյեմբերին Նավասարդյանը հակասովետական բնույթ կրող թռուցիկներ դնելով ծրարի մեջ այդպիսին տվել է Գ. Գրիգորյանին մեկ այլ գործով քր. օրի 65 հ. դատապարտված Ռ. Խաչատրյանին հանձնելու համար: Նշված հանձնարարությունը

Գրիգորյանը կատարել է:

Քր օրի 231 հոդ. առաջադրված մեղադրանքում իրեն հանցավոր չճանաչելով ամ - բաստանյալ Նավասարդյանը բացատրել է, որ Ռ. Խաչատրյանին հանձնելու համար ծրարը տալով անչափահաս Գրիգորյանին, ինքը նրան չի հայտնել, որ ծրարի մեջ դրված է հակասովետական թռուցիկներ: Այնուհետեւ Նավասարդյանը պնդեց, որ Գրիգորյանը տեղյակ չի եղել որ ինքը եւ Խաչատրյանը գաղտնի խմբակի անդամներ են եւ հակասովետական թռուցիկներ են տարածում:

Ամբաստանյալի առաջարկությունները հերքելու համար նախաքննության եւ դատաքննության ընթացքում ապացույցներ ձեռք չեն բերվել: Դեռ ավելին անչափահաս Գրիգորյանի կողմից տված ցուցմունքներից երեւում է, որ 1973թ. նոյեմբեր ամսին, կատարելով Նավասարդյանի հանձնարարությունը, նրանից վերցրել է մեկ հատ ծրար եւ հանձնել Ռ. Խաչատրյանին, չիմանալով թե ինչ նպատակով է այդ արվում եւ ինչ է դրված ծրարի մեջ:

Այդ հանգամանքը հաստատված է նաեւ վկա Ա. Հայրապետյանի ցուցմունքներով: Նման պայմաններում դատական կոլեգիան գտնում է, որ Նավասարդյանին քր. օրի 231 հ. առաջադրված մեղադրանքը պետք է համարել չապացուցված:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օրի 290 եւ 294 հոդվածներով դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Աշոտ Ցոլակի Նավասարդյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի 65 հ. եւ 67 հ. ու ենթարկել ազատազրկման յոթ (7) տարի ժամանակով որպիսին պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1974թ. մարտի երեքից: Կալանք կրելուց հետո աքսորել Նավասարդյանին երկու տարի ժամկետով:

Նավասարդյանին քր. օրի 231 հ. առաջադրված մեղադրանքը համարել չապացուցված եւ նրան այդ հոդվածով ճանաչել անպարտ:

Սույն դատավճիռը վճռաբեկության կարգով գանգատարկման եւ բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություններ**
Իսկականի հետ ճիշտ է՝
ՆԱԽԱԳԱՀ **Ն.** **ՄԱՆՈՒԿՅԱՆ**

3/9-74

Գագիկ Առաքելյան, Կոստան Կարապետյան

Գագիկ Սերյոժայի Առաքելյանը ծնվել է 1955 թ. դեկտեմբերի 12-ին, Երեւան քաղաքում: Մինչեւ ազատազրկվելն աշխատել է Երեւանի «Պոլիվինիլացետատ» գործարանում: Դեռեւս դպրոցում կազմակերպել է աշակերտական-հայրենասիրական «Ամրոց» անունով խմբակ, որը ժամանակ անց բացահայտվել է: Պետական անվտանգության կոմիտեում Առաքելյանի եւ նրա ընկերների հետ պրոֆիլակտիկ զրույցներ ունենալուց հետո նախազգուշացրել ու ազատ են արձակել: Ավելի ուշ ծանոթացել է Ազատ Արշակյանի հետ, որն էլ ներգրավել է նրան Ազգային միացյալ կուսակցության շարքերը: 1973 թ. մասնակցել է ԱՄԿ կազմակերպած այնպիսի գործողությունների, ինչպիսիք են՝ պատերին անկախության պահանջով կոչեր գրելը եւ ԱՄԿ «Փարոս» պաշտոնաթերթի ու թռուցիկների տարածումը: Քանի որ դեռ դպրոցից նա եղել է Պետանվտանգության մարմինների ուշադրության կենտրոնում, բնական է, որ երկար գործել չէր կարող: 1974 թ. մայիսին՝ 19 տարեկանում կալանավորվում ու մեղադրվում է ՀԽՍՀ քր. օր.-ի 69 (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը) եւ 206[1] (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) հոդվածներով: Դատապարտվել է երկու տարի ազատազրկման: Պատիժը կրել է Ռուսաստանի Դերժինսկ քաղաքի քրեական հանցագործների համար նախատեսված կալանավայրում: Ազատ արձակվելուց հետո քաղաքական գործունեություն չի ծավալել:1990-ականներին անդամակցել է Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միությանը: Այժմ Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է: Ապրում եւ աշխատում է Երեւանում:

Կոստան Վահանի Կարապետյանը ծնվել է 1955 թ. հունիսի 20-ին, Երեւան քաղաքում: Մինչեւ ազատազրկվելն աշխատել է «Հայէլեկտրո» գործարանում: Բնակվել է Ազատ Արշակյանի հարեւանությամբ ու նրա հետ ունեցած շփումների արդյունքում էլ՝ վաղ տարիքից ներգրավվել է ազգային-հայրենասիրական գործունեության մեջ: Ընդգրկվել է Ազգային միացյալ կուսակցության շարքերը: 1973-ին ակտիվորեն մասնակցել է ԱՄԿ կազմակերպած այնպիսի գործողությունների, ինչպիսիք են՝ պատերին անկախության պահանջով կոչեր գրելը, ԱՄԿ «Փարոս» պաշտոնաթերթի եւ թռուցիկների տարածումը: 1974-ի մարտին՝ 19 տարեկանում կալանավորվում ու մեղադրվում է ՀԽՍՀ քր. օր.-ի 69 (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը), 207[1] (միլիցիայի աշխատողին կամ ժողովրդական դրուժիննիկին դիմադրություն ցույց տալը) եւ 231 (անչափահասներին հանցավոր գործունեության, հարբեցողության, մոլախաղերի մեջ ներգրավելը) հոդվածներով: Դատապարտվել է երկու տարի ազատազրկման: Պատիժը կրել է Ռուսաստանի Գորկու մարզի քրեական հանցագործների համար նախատեսված կալանավայրում: Ազատ արձակվելուց հետո քաղաքական գոր - ծունեություն չի ծավալել: Այժմ ապրում եւ աշխատում է Երեւանում:



Գագիկ Առաքելյան
լուս. քր. գործից

Գագիկ Առաքելյան



Կոստան Կարաեթյան
լուս. քր. գործից

Կոստան Կարաեթյան

Պատմում է Գագիկ Առաքելյանը

Մինչեւ Ազգային միացյալ կուսակցությանն անդամակցելը, մենք մեկ այլ՝ գործող պատանեկան խմբակ ունեինք՝ «Ամրոց» էր կոչվում: 1969-70 թթ. այդ խմբակը գործում էր մեր դպրոցում: Ես 8-րդ դասարանում էի: Արդեն ծանոթացել էինք նաեւ մեր դպրոցից դուրս գործող այլ պատանեկան խմբակների հետ: Մի քանի տարի շարունակ՝ ապրիլի 24-ի հետ կապված թռուցիկներ ենք տարածել: 9-րդ դասարանում էի սովորում, երբ մեր խմբակը բացահայտվեց, եւ առաջին անգամ խմբակի անդամներիս Պետանվտանգության կոմիտե տարան: Հարցաքննում էին տարածած թռուցիկների ու խմբակի գործունեության հետ կապված: Հարցաքննություններից հետո մեզ պաշտոնապես նախազգուշացրին: Դա իմ առաջին նախազգուշացումն էր: Հետագայում մի քանի անգամ կրկնվել է:

Ազատ Արշակյանը բնակվում էր մեր թաղամասում: Աշոտն արդեն հասցրել էր դատապարտվել, Ազատը ՊԱԿ-ի հետ խնդիրներ ուներ, ու դա մեր թաղամասում գիտեին բոլորը: Այնպես որ, մենք ինչ-որ չափով տեղյակ էինք ե՛ւ նրա, ե՛ւ Աշոտ Նավասարդյանի ծավալած գործունեությունից: Նրանց հետ մտերիմ չէինք, բայց նրանց գոյությունը մեզ ոգեշնչել էր: Դեպքերի հետագա զարգացումներից պարզ դարձավ, որ Ազատը տեղյակ էր մեր ծավալած գործունեության մասին: Երբ դպրոցն ավարտեցինք, Ազատ Արշակյանը մեզ առաջարկեց գործել Ազգային միացյալ կուսակցության շրջանակներում: Դա երեւի 1973 թվականն էր, նոր էի 18 տարեկան դարձել: Սկսվեց մեր գործունեության բոլորովին նոր ու ակտիվ շրջան: Շենքերի պատերին Հայաստանի անկախությունը պահանջող կոչեր էինք գրում, նույնանման կոչերով թռուցիկներ էինք տարածում: Տարածել ենք նաեւ «Փարոս» թերթը: Ծավալել էինք լուրջ կազմակերպական գործունեություն: Մասնաճյուղեր էինք ձեւավորում: 1973-74 թվականներին ինձ հաճախ էին ՊԱԿ տանում: Նախազգուշացնում էին, սպառնում, պահանջում էին, որ վերջ տամ գործունեությանս: Ես երիտասարդ էի ու վստահ, որ լավ գործ եմ անում: Նաեւ հավանական կալանավորմանն էի պատրաստ, նրանց սպառնալիքներին ու նախազգուշացումներին կարեւորություն չէի տալիս: 1974 թ. գարնանն ինձ ու Կոստոյին կալանավորեցին: Այդ թվականին կալանավորվածներս շատ էինք: ՊԱԿ-ի մեկուսարանը լցված էր ԱՍԿ-ականներով: Կալանավորվածներից ոմանց ճանաչում էի, ոմանց մասին լսել էի, իսկ ոմանց էլ ճանաչեցի հետո:

Երկուսիս էլ երկու տարի ազատազրկման դատապարտեցին ու ՊԱԿ-ի մեկուսարանից տեղափոխեցին Երեւանի բանտ: Շահումյանի կալանավայրից մեր խուց բերեցին նաեւ Սահակյան Քաջիկին: Ըստ մեր տեղեկությունների, երեքիս պետք է տեղափոխեին Ռուսաստան: Տեղափոխումն անընդհատ ձգձգվում էր: Որոշ ժամանակ անց՝ Ռուսաստան տանելու փոխարեն երեքիս էլ տարան Շահումյանի գաղութ: Այնտեղ էին Նորիկ ու Սամվել Մարտիրոսյան եղբայրները, Լեւոն Բաղալյանը եւ ԱՄԿ հին անդամներից Կարախանյան Վազգենը: Նրան շինծու մեղադրանքով դատապարտել էին մեկ տարի ազատազրկման: Մի օր էլ Սամվել Մարտիրոսյանին անհիմն պատժախուց տեղափոխեցին: Մենք՝ կալանավայրում եղած քաղբանտարկյալներս, հացադուլ ու գործադուլ հայտարարեցինք: Սա պատճառ հանդիսացավ, որ բոլորիս տեղափոխեն Ռուսաստան ու առանձնացնեն իրարից: Ինձ տարան Դերժինսկ, Կոստան Կարապետյանին՝ Գորկու մարզ, Լեւոն Բաղալյանին՝ Կույբիշեւ, Սահակյան Քաջիկին՝ Կազան, իսկ Նորիկ ու Սամվել Մարտիրոսյաններին՝ Պերմի մարզ, բայց տարբեր քաղաքներ: Ես, փաստորեն, իմ պատիժը կրում էի քրեական հանցագործների համար նախատեսված կալանավայրում: Բոլորն էլ գիտեին, որ ես քաղաքական գործունեության համար եմ դատապարտված: Ինձ շատ հարգալից էին վերաբերվում: Կալանավայրում լուրջ խնդիրներ չեմ ունեցել: Պատժաչափիս ավարտից հետո՝ 1976-ին ազատ արձակվեցի ու վերադարձա Երեւան: Անմիջապես հայտնվեցի ոստիկանական հսկողության տակ: Ըստ էության, դա տնային կալանք էր: Երեկոյան 6-ից հետո տնից դուրս գալու իրավունք չունեի: Աշխատում էի: Աշխատանքից հետո շտապ պետք է հասցնեի տուն վերադառնալ: Հակառակ դեպքում՝ դա կարող էր դիտարկվել ռեժիմի խախտում ու նոր կալանավորման առիթ դառնալ: Նախապես որոշվել էր, որ այդ ռեժիմն իմ նկատմամբ պետք է պահպանվի մեկ տարի, բայց վեց ամիս անց մեղմացվեց, ապա վերջնականապես հանվեց: Սկսեցի ապրել ազատ մարդու կյանքով: Աշխատում ու զբաղվում էի առօրյա հոգսերով: Քաղաքականությամբ ու ընդհատակյա գործունեությամբ չէի զբաղվում:

Պատմում է Կոստան Կարապետյանը

Իմ ձեւավորման վրա էական դեր է խաղացել Ազատ Արշակյանը: 1960-ականների վերջին եւ 70-ականներին մեր Շենգավիթ թաղամասում նրան բոլորն էին սիրում ու հարգում: Իր մակարդակով ու հետաքրքրությունների շրջանակով էապես տարբերվում էր մյուսներից: Բոլորի սիրելին էր: Հաճույքով էի շփվում նրա հետ: Այդ շփումներից էլ ամեն ինչ սկսվեց: Նոր էի դպրոցն ավարտել: Ազատից իմացա, որ Հայաստանի անկախության համար պայքարող կազմակերպություն է գործում: Ներգրավվեցի այդ կազմակերպության մեջ: Մեր հիմնական գործը քաղաքի երեւացող ու մարդաշատ վայրերում Հայաստանի անկախության պահանջով կարգախոսներ գրելն էր: Ունեինք պատրաստի տրաֆարետներ, որոնց օգնությամբ գրում էինք այդ կարգախոսները: 1973 թ. հոկտեմբերի մի ուշ երեկո կարգախոսներ էինք գրում Երրորդ մասում գտնվող հեռախոսախցիկներում, երբ մեզ նկատեցին երկու միլիցիոներներ: Երեքով էինք: Փորձեցին ձերբակալել մեզ: Ես դիմադրեցի, եւ մինչ նրանք զբաղված էին ինձանով, երկու ընկերներս կարողացան փախչել: Միլիցիոներներից մեկն ատրճանակի բռնակով հարվածեց գլխիս: Ընդհանուր քաշքշոցի մեջ հարվածը չէի զգացել: Ինձ արդեն մտցրել էին իրենց

ավտոմեքենան, բայց ես կարողացա փախչել այնտեղից: Միլիցիոներներին ցուցաբերած իմ դիմադրությունն ու քաշքշուկը նկատել էին իրենց բնակարանի պատշգամբում գտնվող մի կին եւ իր դուստրը: Երբ արդեն պարզ էր, որ ոստիկանները, կորցնելով իմ հետքը, այլ ուղղությամբ են գնացել, նրանք ինձ ձայն տվեցին եւ ասացին, որ կարող եմ բարձրանալ իրենց տուն: Միայն այնտեղ՝ նրանց տանը տեսա, որ գլխիցս արյուն է հոսում, եւ հագուստս ամբողջությամբ արնաշաղախ է: Մայր ու աղջիկ մաքրեցին վերքս, կապեցին, լվացին վերնաշապիկս, ինձ այլ հագուստ տվեցին ու առաջարկեցին գիշերել իրենց տանը: Չափազանց վտանգավոր էր այդ վիճակում գիշերով փողոց դուրս գալը: Անկասկած՝ կբռնվեի: Եվ ես մնացի նրանց տանը: Առավոտ շուտ տուն վերադարձա: Օրվա վերջին կրկին գնացի ինձ հյուրընկալած բնակարան՝ նրանց տված հագուստը վերադարձնելու նպատակով: Այնտեղ էլ իմացա, որ Պետանվտանգության կոմիտեից այցելել են նրանց ու հարցրել իմ մասին: Կանայք խոստովանել էին, որ գիշերել եմ իրենց տանը, բայց քանի որ իմ ով լինելը եւ հասցեն չգիտեին՝ ուրիշ ոչինչ չէին ասել: Պարզ էր արդեն, որ փնտրում են ինձ եւ այդ նպատակով շրջակա բնակիչներին այցելում ու հարցաքննում էին: Հաջորդ օրը պետք է գնայի զինկոմիսարիատ՝ հաշվառման, իսկ մեր շրջանի զինկոմիսարիատն այն ժամանակ գտնվում էր «Հայրենիք» կինոթատրոնի դիմացի ոստիկանության շենքի վերեւի հարկում: Փաստորեն, այդ ողջ օրը ոստիկանությունը եւ Պետանվտանգության կոմիտեն ինձ են փնտրել, իսկ ես այդ ընթացքում գտնվել եմ իրենց շենքում: Այդպես էլ չկարողացան գտնել ինձ: Հետագայում՝ ամիսներ անց ինձ ձերբակալելուց հետո երբ պարզեցին ու համոզվեցին, որ իրենց շենքում եմ եղել՝ ապուշ էին կտրել: Մեր ընկերների շրջապատում իմ «քաջագործությունը» առասպելի պես էր պատմվում: Նեղ շրջանակում գիտեին դրա մասին: Մեկը, որն արդեն մահացել է, եւ անունը չեմ ցանկանում ասել՝ թեկուզ միայն այն պատճառով, որ մահացել է, հատուկ ծառայություններին տեղեկացրել էր իմ մասին: Հերթական անգամ՝ դեպքից հինգ ամիս անց, 1974 թ. մարտին ինձ կրկին զինկոմիսարիատ կանչեցին: Այնտեղ հավաքված երիտասարդ տղաներն արագ-արագ մտնում ու դուրս էին գալիս բժշկի սենյակից: Երբ հասավ իմ հերթը, բժիշկն առաջարկեց նստել, այնուհետեւ մոտեցավ ու սկսեց ուսումնասիրել գլխիս առկա սպին, որից հետո ինչ-որ տեղ զանգահարեց: Նրա այդ գործողություններից հասկացա, որ այլ նպատակով են զինկոմիսարիատ կանչել ինձ, եւ որ՝ ձերբակալվելու եմ: Իրոք, զինկոմիսարիատից դուրս գալու պահին ձերբակալեցին:

Ոչ նախաքննության, ոչ էլ դատաքննության փուլում ոչ մի հետաքրքիր ու նշանակալի իրադարձություն տեղի չի ունեցել, չհաշված նրանց ճաշը: Երբ առաջին անգամ տեսա՝ զարմացած էի: Ե՛վ արտաքին տեսքը, ե՛ւ համը, ե՛ւ հոտը ճաշ ասվածի հետ ընդհանուր ոչինչ չունեին: Սա է երեւի՝ որպես իրադարձություն այդ օրերից տպավորվել:

Ինձ ու Գագիկ Առաքելյանին դատապարտեցին երկուական տարի ազատազրկման ու տեղափոխեցին Շահումյանի կալանավայր: Հայ քաղբանտարկյալներից այնտեղ էին գտնվում Նորիկ եւ Սամվել Մարտիրոսյան եղբայրները, Գագիկ Առաքելյանը, Վազգեն Կարախանյանը, Լեւոն Բաղալյանը եւ Քաջիկ Սահակյանը: Ողջ կալանավայրը գործազուրկ էր, աշխատանք չկար: Հաշված մարդիկ էին աշխատում: Ինձ համար անհայտ պատճառներով մի օր էլ մեզ՝ բոլոր քաղբանտարկյալներիս որոշեցին տեղափոխել Ռուսաստան: Մեզ հետ էր նաեւ Անահիտ Կարապետյանը: Նրան Ռոստովից տարան այլ ուղղությամբ: Նույն վագոնում էինք, բայց, բնականաբար, կանայք առանձին կուպեներում էին: Կուպե ասվածն էլ ճաղավանդակներով առանձնացված, վանդակե դռներով մի նեղլիկ արկղ էր, որտեղ տեղավորում էին ոչ թե այնքան մարդ, ինչքան

կտեղավորվեր, այլ այնքան՝ ինչքան մարդու պետք է տեղափոխեին: Էտապը մի անեռեւակայելի պատմություն է: Բոլոր այն բանտարկյալները, որոնք եղել են էտապում, դա մոռանալ չեն կարող: Մեզ Երեւանից տարան Թբիլիսի, այնտեղից՝ Ռոստով, այնուհետեւ՝ Խարկով, ապա՝ Պեմզա, վերջում՝ Գորկի: Գորկու բանտում երկար պահեցին մեզ: Այնուհետեւ բաժանեցին իրարից: Ինձ տարան Սուխոբեզվոդնի կոչվող բնակավայրում գտնվող կալանավայրը, որը գտնվում էր անտառի մեջ: Ազատ արձակվելուց հետո հուշեր գրելու միտք ունեի: Որոշել էի՝ եթե գրեմ, ապա վերնագիրը լինելու է «Ինն ամիս անտառում», բայց այդպես էլ գրելու ժամանակ չգտա:

Պատժաչափս կրելուց հետո վերադարձա Հայաստան: Ի տարբերություն այլոց՝ ինձ ոստիկանական հսկողության տակ չվերցրին: Միայն առիթից առիթ ՊԱԿ են հրավիրել: Մեկ անգամ էլ ՊԱԿ են կանչել Պարույր Հայրիկյանին նամակ գրելու համար: Ըստ էության, ՊԱԿ-ի հետ առնչվելու առիթներ ինքս չեմ տվել, որովհետեւ որեէ գործունեություն չեմ ծավալել:

Գագիկ Առաքելյանի եւ Կոստան Կարապետյանի գործով կայացված դատավճիռը

ԱԱԾ-ից արհեստական թերություններով ստացած այս դատավճիռը այլ դատավճիռների համադրմամբ, մեր ձեռքի տակ եղած այլ փաստաթղթերի եւ գործին առնչված մարդկանց հիշողությունների օգնությամբ կարողացել ենք ավարտուն տեսքի բերել:

ԴԱՏԱՎՃԻՌ

քր. գործ. նո. 132
1974թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1974թվի հոկտեմբերի 3-ին

Նախագահությամբ՝	**Ս. Ասատուրյանի**
Ատենակալներ՝	**1. Ա. Մխիթարյան**
	2. Մ. Տեր-Օհանյան
Քարտուղարությամբ՝	**Ե. Սողոմոնյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Պ. Թոխյանի**
դատապաշտպան՝	**Ե. Խաչիկյան**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի՝

1. Գագիկ Սերյոժայի Առաքելյանի, ծնված 1955թ. դեկտեմբերի 12-ին Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուրի, խնամքին ոչ-ոք, ՀամԼԿԵՄ անդամ, միջնակարգ կրթությամբ, չդատված, ֆիզիկապես առողջ աշխատել է Երեւանի «Պոլիվիլացետատ» գործարանում որպես էլեկտրոմանտյոր, բնակվել է Երեւան քաղաքում, ն. Շենգավիթ 5-րդ փողոց տուն 21, գործով կալանքի տակ է 1974թ. մայիսի 12-ից:

2. Կոստան Վահանի Կարապետյանի, ծնված 1955թ. հունիսի 20-ին Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուրի, խնամքին ոչ-ոք,

ՀամԼԿԵՄ անդամ, միջնական կրթությամբ, չդատված, ֆիզիկապես առողջ, աշխատել է «Հայէլեկտրո» գործարանում որպես ֆրեզերագործ, բնակվել է Երեւան քաղաքում ն. Շենգավիթ 1-ին փողոց տուն 10, գործով կալանքի տակ է 1974 թ. մարտի 20-ից:

Մեղադրվում են՝

Առաքելյանը - ՀՍՍՀ քր. օրի 69 եւ 206[1] հոդվածներով, Կարապետյանը - ՀՍՍՀ քր. օրի 69, 207[1] հոդվածի 1-ին մասով եւ 231 հոդվածներով:

Դատաքննությամբ դատական կոլեգիան գտավ ապացուցված հետեւյալը՝

Ամբաստանյալ Առաքելյանը Երեւան քաղաքի նո. 97 միջնակարգ դպրոցում սովորելիս հանդիսացել է այդ դպրոցի որոշ աշակերտների կողմից կազմակերպված եւ անլեգալ գործունեությամբ զբաղվող «Ամրոց» այսպես կոչված «Հայրենասիրական» խմբի անդամ, որը 1971թ. ՀՍՍՀ Պետ. անվտանգության մարմինների կողմից բացահայտվել է ու նրա անդամները, այդ թվում եւ Առաքելյանը նախազգուշացվել են նման գործունեությամբ զբաղվելու անթույլատրության մասին:

1973 թ, օգոստոսին ամբ. Առաքելյանը մոտ հարաբերություն է ստեղծել այժմ մեկ այլ գործով կալանավորված-հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա տանելու եւ հակասովետական կազմակերպչական գործունեության մեջ մեղադրվող Ազատ Արշակյանի հետ, որի կողմից համապատասխան մշակումից հետո, վերջինս իր համաձայնությունն է տվել մտնել իբր գոյություն ունեցող «Ազգային միացյալ կուսակցություն» (ԱՄԿ) կազմակերպության մեջ, որը նպատակ է ունեցել «Հայկական հողերի վերամիավորումը» եւ այսպես կոչված «Անկախ Հայաստանի» ստեղծումը:

Հետագայում կատարելով Ազատ Արշակյանի հանձնարարությունը՝ խումբ ստեղծելու մասին, ամբաստանյալ Առաքելյանը նրա մեջ է ներգրավել իր ծանոթներ «Ամրոց» խմբի նախկին անդամներ՝ Արամայիս Մանուկյանին, Լեւոն Ավետիսյանին, Արտակ եւ Արբակ Խաչատրյաններին, որոնցից 1973թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին վերցրել է անդամավճարներ եւ հանձնել է Ազատ Արշակյանին:

1973թ. օգոստոսի վերջին ամբ. Առաքելյանը Ազատ Արշակյանից ստացել է ԱՄԿ-ի անունից պատրաստված «Կորչեն ռուսները կեցցե ազատ ու անկախ Հայաստանը» ազգային թշնամություն առաջ բերող տեքստով երկու տրաֆարետ, որոնցից մեկով Լեւոն Ավետիսյանի հետ միասին գրառումներ է կատարել Երեւան քաղաքի Թելմանի փողոցի վրա գտնվող նո. 33 շենքի մոտ, համամիութենական էլեկտրոսարքավորումների կոմպլեկտավորման գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մուտքի մոտ, նո. 1 տեխնիկական ուսումնարանի մուտքի մոտ, «Հայէլեկտրոգործարանի» հին ստադիոնի գլխավոր մուտքի պատին:

Այսպիսի գրառումներ մյուս տրաֆարետի միջոցով, ամբ. Առաքելյանի հանձնարարությամբ, ժողանենվաճումների ցուցահանդեսի մոտ փորձել են կատարել Արամայիս Մանուկյանը եւ Արբակ Խաչատրյանը:

1973թ. նոյեմբերի 2-ին Առաքելյանը գործով վկա Սամվել Մուրադյանի հետ միա-

սին, որի հետ ծանոթացել է Ազատ Արշակյանի միջոցով, վերջինիցս ստացել է «Փարոս-2 (լրացուցիչ)» վերնագրով Սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող թռուցիկներ եւ Արշակյանի հանձնարարությամբ նույն օրը տարածել է Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Այդ գործունեության կապակցությամբ Առաքելյանը բռնվել է երկրորդ անգամ եւ նախազգուշացվել Պետ. անվտանգության մարմինների կողմից:

1974թ. փետրվարի 14-ին Արշակյանի ձերբակալումից հետո ամբ. Առաքելյանը Սամվել Մուրադյանի միջոցով կապվել է այժմ մեկ այլ քր. գործով կալանավորված՝ հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա տանելու եւ հակասովետական կազմակերպչական գործունեության մեջ մեղադրվող Ռազմիկ Մարկոսյանի հետ, որից հանձնարարություն է ստացել «Վարդանանց» օրվա առիթով թռուցիկի տեքստ պատրաստել եւ օգնություն ցույց տալ տպագրական միջոցները թաքցնելու գործում:

Այդ գործունեության կապակցությամբ ամբ. Առաքելյանը այս անգամ եւս նախազգուշացվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի 1972թ. դեկտեմբերի 25-ը «Պետանվտանգության մարմինների կողմից որպես պրոֆիլակտիկ ազդեցություն նախազգուշացում կիրառելու մասին» հրամանագրի հիման վրա: Սակայն չնայած դրան, ամբ. Առաքելյանը պահպանել է իր հանցավոր կապը Ռազմիկ Մարկոսյանի հետ եւ փորձել է կարգավորել անլեգալ խմբի գործունեությունը, որի համար նա 1974թ. մայիսի 12-ին կալանավորվել է:

Դեռեւս 1973թ. հոկտեմբերի կեսերին ամբ. Առաքելյանը Ա. Արշակյանի միջոցով ծանոթացել է նույն գործով մյուս ամբաստանյալ Կոստան Կարապետյանի հետ, ով մինչ այդ Արշակյանի կողմից մշակվել է ազգայնական ոգով, ստացել է նրանից եւ կարդացել է ազգայնական գրականություն, այդ թվում 1932թ. Փարիզում հրապարակված Մ. Վարդանյանի «Դաշնակցության կուսակցության պատմություն» գիրքը, ինչպես նաեւ առաջադրանք է ստացել ազգային թշնամություն առաջ բերող գրառումներ կատարել: Այդ կապակցությամբ ամբ. Առաքելյանին առաջարկվել է ամբ. Կարապետյանի տնօրինության տակ առանձնացնել իր խմբի անդամներից մեկին եւ Առաքելյանը ծանոթացրել է Կարապետյանին Արամայիս Մանուկյանի հետ:

Միաժամանակ, գրառումները համատեղ կատարելու համար, ամբ. Կարապետյանը հանցավոր գործունեության մեջ է ներգրավել նո. 9-րդ դասարանի աշակերտ անչափահաս ծնված 1958թ. Գագիկ Ավետիսյանին:

1973թ. հոկտեմբերի 18-ին, ուշ երեկոյան, ամբ. Կարապետյանը, Արամայիս Մանուկյանի եւ Գագիկ Ավետիսյանի հետ միասին ԱՄԿ անունից պատրաստված՝ «Կորչեն ռուսները կեցցե ազատ եւ անկախ Հայաստանը» ազգային թշնամություն առաջ բերող տեքստով տրաֆարետի օգնությամբ գրառումներ է կատարել Երեւան քաղաքի Լենինյան փողոցի ավտոբուսային կայանի մոտ գտնվող աֆիշների տումբայի վրա «Ակվարյում» ռեստորանի, «Մալաթիա» շուկայի եւ Շահումյան փողոցի վրա գտնվող ժամացույցների արհեցտանոցի մոտ տեղադրված հեռախոսախցիկներում, ինչպես նաեւ Թամանցիների փողոցի նո. 7, 8, 10, 13 եւ 15 շենքերի մոտ գտնվող հեռախոսախցիկներում: Այնուհետեւ Սպանդարյանի անվան հրապարակի վրա գտնվող «Օպտիկա եւ բժշկական գործիքներ» նո. 3 խանութի մոտ տեղադրված հառախոսախցիկում գրառումներ կատարելու ժամանակ ամբաստանյալ Կարապետյանը 1973թ. հոկտեմբերի 19-ին ժամը 01 անց 15 րոպեի սահմաններում բռնվել է Լենինյան շրջանի ներքին գործերի աշխատակիցներ Հակոբյանի եւ Միրզախանյանի կողմից, որոնք նրանից վերցրել են տրաֆարետը եւ սպունգը: Սակայն Կարապետյանը միլ. աշխատակիցներին նրանց վրա դրված պարտականությունների կատարման ժամանակ, դիմադրություն է ցույց

տվել, հնարավորություն տալով փախչելու Արամայիս Մանուկյանին եւ Գագիկ Ավետիսյանին եւ չնայած միլ. աշխատող Հակոբյանը ստիպված ատրճանակի կոթով հարվածել է Կարապետյանի գլխին, վերջինիս եւս հաջողվել է փախուստի դիմել եւ թաքնվել:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներով միայն 1974թ. մարտի 20-ին հաջողվել է Կարապետյանի անձնավորությունը պարզել ու նրան ձերբակալել:

Վերոգրյալը հաստատված է ամբաստանյալների խոստովանությամբ, վկաների ցուցմունքներով, տեղազննության արձանագրություններով եւ լուսանկարներով, գործով իրեղեն ապացույցներով:

Ամբաստանյալ Կարապետյանը նախաքննության ընթացքում եւ դատարանում իրեն լիովին մեղավոր է ճանաչել ու ցուցմունք է տվել, որ իրոք 1973թ. հոկտեմբերի 18-ի եւ 19-ին, տրաֆարետի միջոցով, այսպես կոչված «Ազգային միացյալ կուսակցության» (ԱՄԿ) անունից «Կորչեն ռուսները կեցցե ազատ եւ անկախ հայաստանը» ազգային թշնամությաուն առաջ բերող գրառումներ է կատարել Երեւան քաղաքի մի շարք տեղերում, ընդորում այդ արարքը կատարելու համար հանցավոր գործունեության մեջ է ներգրավել անչափահաս Գագիկ Ավետիսյանին, որը մասնակցել է վերը նշված գրառումների կատարմանը, իսկ երբ տեղում բռնվել է միլիցիայի աշխատակիցների կողմից, որոնք իրեն մոտից հայտնաբերել եւ վերցրել են տրաֆարետն ու սպունգը, ապա նրանց չի ենթարկվել, դիմադրություն է ցույց տվել, դիմել է փախուստի եւ միայն 1974թ. մարտի 20-ին ճանաչվել եւ ձերբակալվել է օրգանի աշխատողի կողմից: Ամբ. Կարապետյանը ցույց է տվել այն վայրերը, որտեղ իրենք կատարել են գրառումները:

(հ.1 գթ. 48-53, 65-68, 71-102, 105-108, 112-113, 113-120, հ. 2 գթ. 164-169, 236-251 եւ դատ.նիստի արձ. 6-25, 44-45):

Ամբաստանյալ Առաքելյանը իր նախաքննության ժամանակ եւ դատարանում տված ցուցմունքներում լիովին ընդունել է կատարած արարքը եւ հայտնել է, որ 1973թ. օգոստոսի վերջերին տրաֆարետի միջոցով ԱՄԿ-ի անունից «Կորչեն ռուսները կեցցե ազատ եւ անկախ հայաստանը» ազգային թշնամություն առաջ բերող գրառումներ է կատարել Երեւան քաղաքի Թելման փողոցի մի շարք տեղերում, ինչպես նաեւ «Հայէլեկտրոգործարանի» հին ստադիոնի գլխավոր մուտքի մոտ: Նման գրառումներ իր ահնձնարարությամբ փորձել են կատարել Արամայիս Մանուկյանը եւ Արբակ Խաչատրյանը: 1973թ. նոյեմբերի 2-ին «Փարոս-2 (լրացուցիչ)» վերնագրով Սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող թռուցիկներ է տարածել Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում: Այս ամենի համար երեք անգամ նախազգուշացվել է պետ. անվտանգութ - յան մարմինների կողմից, սակայն նորից է շարունակել զբաղվել նման գուծունեությամբ:

Առաքելյանը ցույց է տվել այն վայրերը, որտեղ ինքը գրառումներ է կատարել եւ թռուցիկներ է տարածել:

(հ. 1 գթ. 126-162, 173-176, 181-188, 217-220, հ. 2 գթ 157-163, 34-37, 259-268, դատ. նիստի արձ. 23-44):

Վկա Ազատ Արշակյանը հաստատել է, որ իր հանձնարարությամբ ամբաստանյալներ Առաքելյանը եւ Կարապետյանը տրաֆարետների միջոցով «Ազգային միացյալ կուսակցության» անունից «կորչեն ռուսները կեցցե ազատ եւ անկախ հայաստանը» տեքստով գրառումներ են կատարել, իսկ ամբ. Առաքելյանը, բացի դրանից, 1973թ. նոյեմբերի 2-ին Երեւանի Խ. Աբովյանի անվան մակավարժական ինստիտուտում «Փարոս -2 (լրացուցիչ)» վերնագրով թռուցիկներ է տարածել:

(հ. 2, գթ. 1-51, դատ. նիստի արձ. 82-84):

Երեւան քաղաքի Լենինյան շրջանի ՆԳ բաժնի աշխատակից, գործով վկա Հակոբյանը հաստատել է, որ 1973թ. հոկտեմբերի 13-ի լույս 14-ի գիշերը, պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ, Երեւանի Սպանդարյանի անվան հրապարակի վրա գտնվող «Օպտիկա» խանութի մոտ տեղադրված հեռախոսախցիկում ինքը եւ նույն բաժնի աշխատակից Միրզախանյանը տեսել են երեք երիտասարդ տղաների, որոնցից երկուսին հաջողվել է դիմել փախուստի, իսկ երրորդը՝ ամբ. Կարապետյանը դիմադրություն է ցույց տվել, որի հետեւանքով նրան նույնպես հաջողվել է դիմել փախուստի, սակայն մինչ այդ նրա մոտից հայտնաբերվել եւ վերցվել է սպունգը ու տրաֆարետը «կորչեն ռուսները կեցցե ազատ ու անկախ հայաստանը» տեքստով: Հակոբյանը միաժամանակ ցույց է տվել դեպքի վայրը եւ հայտնել է, որ հետագայում՝ 1974թ. մարտի 20-ին, փողոցում հանդիպելով Կարապետյանին, ճանաչել է նրան, ձերբակալել եւ բերման ենթարկել ՆԳ բաժին:

(հ. 2 գբ. 69-74, հ.1 գբ. 17-27, 10-11, 11 եւ դատ նիստի արձ. 72-80):

Նույնանաման ցուցմունք է տվել եւ վկա Միրզախանյանը: (հ.2 գբ. 78-83, հ. 1 գբ. 12-13 եւ դատ. նիստի արձ. 64-67):

Վկա Գագիկ Ավետիսյանը ցուցմունք է տվել, որ իրոք 1973թ. հոկտեմբեր ամսին ամբ. Կարապետյանը իրեն ներգրավել է հանցավոր գործունեության մեջ, այն է՝ նրա հետ միասին մասնակցել է «կորչեն ռուսները կեցցե ազատ եւ անկախ հայաստանը» տեքստով գրառումներ կատարելուն, բռնվել են միլ աշխատողների կողմից, սակայն հաջողվել է դիմել փախուստի: (հ. 2 գբ. 86-92 եւ դատ նիստի արձանագրություն 59-64):

Նշված գրառումներ կատարելու փաստը ամբ. Կարապետյանի մասնակցությամբ նախաքննության ժամանակ հաստատել է նաեւ վկա Արամայիս Մանուկյանը: Այդ ցուցմունքները դատարանում ստուգվել են եւ ամբաստանյալներ Կարապետյանը ու Առաքելյանը հաստատել են նրանց ճշմարտությունը;

(հ. 2 գբ. 98-102, 157-169 եւ դատ, նիստի արձ. 85-87):

Վկա Սամվել Մուրադյանը ցուցմունք է տվել, որ Ազատ Արշակյանի հանձնարարությամբ ամբ. Կարապետյանին տվել է վերը նշված տրաֆարետը ու ներկը՝ իմացել է Կարապետյանից նրա միլ, աշխատողների հետ ընդհարման մասին, ինչպես եւ հաստատել է ամբ. Առաքելյանի հետ 1973թ. նոյեմբերի 2-ին Երեւանի Խ. Աբովյանի անվան ինստիտուտում «Փարոս-2 (լրացուցիչ)» վերնագրով թռուցիկներ տարածելը : (հ 2 գբ. 124-142, դատ. նիստի արձ. 68-71):

Վկա Լեւոն Ավետիսյանը նախաքննության ժամանակ հաստատել է, որ ամբ Առաքելյանի հետ դպրոցում սովորելու ժամանակ իրենք եղել են «Ամրոց» «Հայրենասիրական» խմբի անդամներ եւ այդ կապակցությամբ նախազգուշացվել են ՊԱԿ-ի կողմից: Առաքելյանի հետ միասին մասնակցել է «կորչեն ռուսները կեցցե ազատ եւ անկախ հայաստանը» տեքստով գրառումներ կատարելուն, օրգանի աշխատողներին ցույց է տվել այն վայրերը, որտեղ կատարել են գրառումները:

Վկայի այս ցուցմունքները դատաքննությամբ ստուգվել եւ հաստատվել են: (հ. 2 գբ. 109-114, 252-257, դատ. նիստի արձ. 85-87):

Վկաներ, Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոսներ Սեդա Միրզոյանը եւ Հովհաննես Պետրոսյանը նույն ինստիտուտի ուսանող Սմբատ Մամեդովը ցուցմունք են տվել, որ իրոք 1973թ. նոյեմբերի 2-ին նշված ինստիտուտում տարածվել են թռուցիկներ: (հ. 2 գբ. 143-153, դատ նիստի արձ. 51-58):

Ամբաստանյալներ Առաքելյանի եւ Կարապետյանի արարքները հաստատված են նաեւ հ. 1 գբ. 14-16, 23-29, 31-33 գտնվող տեղազննման արձանագրություններով ու

լուսանկարներով, ինչպես եւ գործով անցնող իրեղեն ապացույցներ ՝ «Կորչեն ռուսները կեցցե ազատ ու անկախ հայաստանը» տեքստով տրաֆարետով, սպունգի եւ «Փարոս-2 (լրացուցիչ)» թռուցիկի լուսանկարով:

(հ.3 գբ. 3-10, 12-18):

Վերոգրյալի հիման վրա դատական կոլեգիան գտնում է, որ ամբ. Առաքելյանի ա - րարքը քր. օրի 69 եւ 206[1] հոդվածներով, իսկ ամբ. Կարապետյանի արարքը քր. օրի 69 հ., 207[1] հ. 1-ին մասով եւ 231 հ. ճիշտ է որոկված եւ ապացուցված է:

Պատիժ սահմանելիս կոլեգիան հաշվի է առնում ինչպես կատարված հանցագործությունների բնույթը եւ հասարակական վտանգավորության աստիճանը, այնպես էլ անբաստանյալներ Առաքելյանի եւ Կարապետյանի անձնավորությունները, որոնք երիտասարդ են, անկեղծորեն զղջացել են կատարածի համար, բնութագրվում են դրականորեն, նրանց առաջին դատվածությունն է:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելուվ ՀՍՍՀ քր. դատ. օրի 293-294հ.հ. Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալ Գագիկ Սերյոժայի Առաքելյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օրի 69 եւ 206[1] հոդվածներով եւ դատապարտել՝ քր. օրի 69 հ. ազատազրկման երկու (2) տարի ժամանակով, քր օրի 206[1] հ. ազատազրկման երկու (2) տարի ժամանակով: ՀՍՍՀ քր. օրի 37 հ. համակցությամբ վերջին հաշվով թողնել նրան կրելու ազատազրկում երկու (2) տարի ժամանակով՝ ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Ամբաստանյալ Կոստան Վահանի Կարապետյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օրի 69հ., 207[1] հ. 1-ին մասով եւ 231 հ. եւ դատապարտել քր. օրի 69 հ. ազատազրկման երկու (2) տարի ժամանակով, քր. օրի 207[1] հ. 1-ին մասով ազատազրկման մեկ (1) տարի ժամանակով եւ քր. օրի 231 հ. ազատազրկման երկու (2) տարի ժամանակով, առանց արտաքսման: ՀՍՍՀ քր. օրի 37 հ. համակցությամբ վերջին հաշվով թողնել Կարապետյանին կրելու ազատազրկում երկու (2) տարի ժամանակով, առանց արտաքսման, որը նա կրելու է ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Գործով ճանաչված իրեղեն ապացույցները՝ տրաֆարետը, թղթի կտորները՝ журнал-ордер 157 եւ «եթե հայ ես տարածիր», «Փարոս-2 (լրացուցիչ)» թռուցիկը եւ ծոցատետրը - թողնել գործին կից, իսկ մնացած իրերը, որոնք նշված են քննիչի 12/8-1974թ. որոշման 2, 4, 5, 6, 9, 10 կետերում (հ. 3 գբ. 1-2) եւ գտնվում են ՊԱԿ-ում թողնել այդ օրգանի տնօրինության տակ:

Դատապարտյալներ Կոստան Կարապետյանի կալանքի սկիզբը հաշվել 1974թ. մարտի 20-ից, իսկ Գագիկ Առաքելյանի կալանքի սկիզբը հաշվել 1974թ. մայիսի 12-ից:

Դատավճիռը վճռաբեկության կարգով գանգատարկման եւ բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ս. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություններ**
Իսկականի հետ ճիշտ է
ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **(ԱՍԱՏՈՒՐՅԱՆ)**

4/10-1974թ.
Թ. Ա.

Ազատ Արշակյան, Ռազմիկ Զոհրաբյան, Ռազմիկ Մարկոսյան

Ազատ Լեւիկի Արշակյանը ծնվել է 1950 թ., Երեւան քաղաքում: 15-16 տարեկանից առնչվել է Հայաստանում գործող ազատամիտների հետ: 1966-67 թթ. անդամակցել է «Հայ երիտասարդական միություն» (ՀԵՄ) պատանեկան կազմակերպությանը, ապա՝ «Շանթ»-ին, իսկ հետո ընդունվել է Ազգային միացյալ կուսակցության շարքերը: 1970 թ. ԱՄԿ անդամների դատավարության ժամանակ ներգրավված է եղել որպես վկա: 1973-ին ԱՄԿ-ի ծավալած գործողությունների ակտիվ մասնակից է: Կազմակերպել է ԱՄԿ մասնաճյուղեր: Մասնակցել է թռուցիկների տպագրման ու տարածման աշխատանքներին: Եղել է Լենինի (Հանրապետության) հրապարակում տեղադրված Լենինի մեծադիր նկարն այրելու կազմակերպիչներից մեկը: Կալանավորվել է 1974-ի ապրիլին: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա), 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցել), 96 հոդվածի 2-րդ մասով (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը) և 231 հոդվածով (անչափահասներին հանցավոր գործունեության, հարբեցողության, մոլախաղերի մեջ ներգրավելը): Մինչ այդ՝ նույն թվականի մարտին դատապարտվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 207 հոդվածով (միլիցիայի աշխատողին կամ ժողովրդական դրուժիննիկին դիմադրություն ցույց տալը): Որպեսզի Պետանվտանգության կոմիտեն չկարողանա հայտնաբերել Լենինի նկարն այրող երկրորդ մասնակցին՝ Սմբատ Ավագյանին, նախաքննության ժամանակ հայտարարել է, որ Ռազմիկ Զոհրաբյանի հետ նկարն այրող երկրորդն ինքն է եղել: Դատապարտվել է յոթ տարի ազատազրկման եւ երեք տարի աքսորի: Պատիժը կրելու համար ուղարկվել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայր: 1977 թ. ապրիլին ներման խնդրագրով վաղակետ ազատ է արձակվել: Հետագայում՝ 1981 թվականին հակախորհրդային գործունեության համար երկրորդ անգամ է կալանավորվել: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 2-րդ մասով եւ 67 հոդվածով: Ճանաչվել է որպես հատուկ վտանգավոր պետական ռեցիդիվիստ ու դատապարտվել ութ տարի ազատազրկման եւ երեք տարի աքսորի: Գորբաչովյան պերեստրոյկայի շնորհիվ՝ 1987-ին վաղակետ ազատ է արձակվել: Ազատ Արշակյանը եւ Աշոտ Նավասարդյանը միակ հայ քաղբանտարկյալներն են, որոնք հատուկ վտանգավոր պետական ռեցիդիվիստներ են ճանաչվել: 1989 թվականից ակտիվորեն մասնակցել է երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Եղել է «Անկախության բանակ» ռազմաքաղաքական միավորման կազմակերպիչներից մեկը: 1990-ին ընտրվել է Գերագույն խորհրդի, իսկ 1995-ին՝ Ազգային ժողովի պատգամավոր: Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միության հիմնադիրն է: Ապրում եւ աշխատում է Երեւանում:

Ռազմիկ Արտավազդի Զոհրաբյանը ծնվել է 1950 թ., Երեւան քաղաքում: Սարի թաղում վարձած նրա բնակարանում է կազմակերպվել ընդհատակյա տպարանը: Ակտիվորեն մասնակցել է թռուցիկների տպագրման ու տարածման աշխատանքներին: Համախոհներից մեկի՝ Սմբատ Ավագյանի հետ 1974թ. հունվարի 20-ի երեկոյան՝ Լենինի մահվան նախօրյակին իրականացրել է Լենինի անվան (Հանրապետության) հրապարակում տեղադրված Լենինի մեծադիր նկարի հրկիզումը: Սմբատ Ավագյանն, ըստ նախապես մշակված ծրագրի, կարողացել է փախչել ու թաքնվել, իսկ Ռազմիկ Զոհ -

բաբյանը չի հասցրել թաքնվել ու ձերբակալվել է նկարն այրելուց անմիջապես հետո: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա), 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը), 96 հոդվածի 2-րդ մասով (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը) և 213 հոդվածի 3-րդ մասով (անչափահասներին հանցավոր գործունեության, հարբեցողության, մոլախաղերի մեջ ներգրավելը): Նախաքննության փուլում, նպատակ ունենալով քննությունից թաքցնել իր հետ Լենինի նկարն այրող ԱՄԿ երկրորդ անդամի ինքնությունը, Զոհրաբյանը մի երկար շրջան ընդհանրապես ցուցմունքներ չի տվել: Միայն այն ժամանակ, երբ ՊԱԿ-ի մեկուսարանում հաստատված գաղտնի գրագրության շնորհիվ տեղեկացել է, որ Ազատ Արշակյանը պատրաստ է ընդունել, թե, իբր,երկրորդ մասնակիցն ինքն է, Զոհրաբյանն սկսել է ցուցմունքներ տալ: Դատապարտվել է յոթ տարի ազատազրկման եւ երեք տարի աքսորի: Պատիժը կրել է սկզբում՝ Մորդովիայի, ապա՝ Պերմի մարզի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում: Ներման խնդրագիր գրելու առաջարկները կտրականապես մերժել է: Կալանավայրում դրսեւորել է ըմբոստ վարքագիծ, ինչի հետեւանքով նրա ռեժիմն է՛լ ավելի է խստացվել, եւ Զոհրաբյանին տեղափոխել են Վլադիմիրի բանտ: Յոթնամյա ազատազրկումից հետո երեք տարով Իրկուտսկի մարզ է աքսորվել: Ողջ պատժաչափը կրելուց հետո՝ 1984-ին վերադարձել է Երեւան: 1991 թվականից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է: 2002-2007 թթ. աշխատել է որպես ՀՀ վարչապետի օգնական: 2007 թվականից ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր է:

Ռազմիկ Գրիգորի Մարկոսյանը ծնվել է 1949 թ., Երեւան քաղաքում: Մինչեւ ձերբակալվելը սովորել է Երեւանի Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի առաջին կուրսում: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1973թ. ԱՄԿ-ի կազմակերպած՝ տեսանելի վայրերում անկախության մասին կոչեր գրելու, գաղտնի տպարանի կազմակերպման, թռուցիկների տպագրման ու տարածման աշխատանքներին: Կալանավորվել է 1974-ի հունիսին: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա), 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը) եւ 213 հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերով (անչափահասներին հանցավոր գործունեության, հարբեցողության, մոլախաղերի մեջ ներգրավելը): Դատապարտվել է չորս տարի ազատազրկման եւ երկու տարի աքսորի: Պատիժը կրել է սկզբում՝ Մորդովիայի, ապա՝ Պերմի մարզի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրում: Կալանավայրում դրսեւորել է ըմբոստ վարքագիծ: Ազատազրկման ավարտից հետո աքսորվել է Ղազախստանի Ցելինոգրադի մարզ: Պատժաչափը շուտով պետք է ավարտվեր, եւ նրան, իբր, աքսորավայրի տարածքն ինքնակամ լքելու, այսինքն՝ փախուստի համար Ղազախական ԽՍՀ քր.օր-ի 198 հոդվածով եւ Ղազախական ԽՍՀ քր. օր 170[1] հոդվածի հատկանիշներով, որը համապատասխանում էր Հայկական ԽՍՀ քր. օր-ի 206[1] հոդվածին (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) նոր շինծու մեղադրանքներով կալանավորում են: Զրպարտության հոդվածով ներկայացված մեղադրանքի համար հիմք էին հանդիսացել Ռազմիկ Մարկոսյանի կողմից դեռեւս 1977-78 թթ. կալանավայրից ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահություն եւ ԽՍՀՄ

գլխավոր դատախազություն գրված դիմումները, որոնք կալանավայրում գրաքննվել էին, եւ ըստ այդ գրաքննության՝դրանք իրենց մեջ սովետական, պետական ու հասարակական կարգերն արատավորող հերյուրանքներ պարունակել չէին կարող, հակառակ դեպքում՝ ժամանակին նույն գրաքննիչները դրանք կառգրավեին: 1980 թ. «փախուստի» համար նրան դատապարտում են երկու, իսկ զրպարտության համար՝ երեք տարի ազատազրկման: Ընդհանուր հաշվով՝ նա կրկին պետք է ազատազրկված մնար երեք տարի: Մարկոսյանն այս դատավճիռը բողոքարկում է, եւ նրա բողոքի արդյունքում «փախուստ» նախատեսող 198 հոդվածով վճիռը բեկանվում է, գործը կարճվում է հանցակազմի բացակայության կապակցությամբ, իսկ զրպարտության համար դատապարտվում է մեկ տարի ազատազրկման: Այս մեկ տարին քրեական կալանավորների համար նախատեսված կալանավայրում կրելուց հետո Ռազմիկ Մարկոսյանը 1981 թ. ապրիլին ազատ է արձակվում եւ վերադառնում է Հայաստան:

Ազատ արձակվելուց հետո մշտական կապ է պահպանել թե՛ հայ, թե՛ օտար այլախոհական շրջանակների հետ: 1987-ին մասնակցել է Ազգային ինքնորոշում միավորման (ԱԻՄ) հիմնադրմանը: Ակտիվորեն մասնակցել է երկրում ընթացող քաղաքական գործընթացներին: «Անկախության բանակ» ռազմաքաղաքական միավորման կազմակերպիչներից մեկն է: 2000 թվականից հրավիրվել է աշխատանքի ՀՀ կառավարությունում, որպես կրոնի գործերով պետական խորհրդի նախագահ, իսկ 2002 թվականից՝ որպես ՀՀ վարչապետի խորհրդական: Զբաղվում է հրապարակախոսությամբ:



Ազատ Արշակյան
լուս. 1974 թ. քր. գործից

Ռազմիկ Մարկոսյան
լուս. քր. գործից

Ռազմիկ Զոհրաբյան
լուս. քր. գործից

Ռազմիկ Զոհրաբյան

Ռազմիկ Մարկոսյան



Պերմի մարզի 36-րդ կալանավայրի պատժիչ մեկուսարանի խցերից մեկը: Քնելու համար նախատեսված տախտակամածները ցերեկն ամրացվում էին պատին: Նստել կարելի էր միայն բետոնե թմբերի վրա:

Պատմում է Ազատ Արշակյանը

Մեր ընտանիքը խորհրդային տարիներին լուրջ խնդիրներ է ունեցել: Պապիս երկու եղբայրներն աքսորվել են: Նրանցից մեկը եղել է հայկական բանակի սպա: Նա այդպես էլ Հայաստան չվերադարձավ, ապրում էր Վրաստանում: Շատ վաղ տարիքից եմ իմացել նրա մասին: 12-13 տարեկանից հորս հետ հաճախ էինք գնում նրան տեսության: Մեր գյուղի գրասենյակն իմ պապերի տունն է եղել: Պատանեկությանս տարիներին այս ամենի մասին մեր ընտանիքում շատ էր խոսվում: Ասվում էր նաեւ, որ մեզ սովետական երկրում պետք չի աչքի ընկնել, որովհետեւ դա կարող է վատ ավարտ ունենալ: Ամենաճիշտ տարբերակը համարվում էր սուսուփուս ու աննկատ ապրելը: Սա այն է, ինչ ինձ տվել է ընտանիքը: Սրա հետ մեկտեղ, շատ էական դեր են ունեցել իմ կյանքում 1965 թ. Եղեռնի տարելիցի հետ կապված դեպքերը: Ես բռնցքամարտով էի զբաղվում: Ամեն տարի՝ մայիսի մեկին մեզ տանում էին տոնական շքերթի: Մինչեւ բուն շքերթը՝ ապրիլի ընթացքում հրապարակում փորձեր էինք անում: Ահա այդ փորձերից մեկի օրն էլ համընկավ ապրիլի 24-ի դեպքերի հետ: Իմ կամքից անկախ՝ ոչ միայն ականատես, այլ նաեւ այդ երթի մասնակիցը դարձա: Ինձ նույնպես ձերբակալեցին, բայց ես բացատրեցի, որ երթի հետ կապ չունեմ, պատանի բռնցքամարտիկ եմ, ցույց տվեցի իմ պայուսակում գտնվող բռնցքամարտիկի ձեռնոցները, եւ բաց թողեցին ինձ: Երթը մեծ ազդեցություն էր թողել ինձ վրա: Ոգեւորված էի: Անմիջապես դրա մասին պատմեցի Պարույր Հայրիկյանին, որի հետ 1960-ին ծանոթացել էի պիոներական ճամբարում, ու ընկերացել էինք: Պարույրը շատ էր ափսոսում, որ երթին չի մասնակցել:

Պարույրենց տանը եղած մթնոլորտն էապես տարբերվում էր մեր տանը եղածից: Մերը բանվորագյուղացիական էր, իսկ նրանցը այլ՝ մի տեսակ մայրաքաղաքային էր: Ավագ Արշավիրի Հայրիկյանին՝ Պարույրի հորը շատ էի հարգում: Նա պատմում էր Պոլսից, Ֆրանսիայից, պոլսահայ հայտնի մտավորականներից: Մյուս Հայրիկյանը՝ Պարույրի հորեղբայրը, երաժիշտ էր: Թեյի սեղանի շուրջը մեզ դասական երաժշտության մասին էր պատմում: Իսկ Պարույրի քույր Սոնան կոմիտասյան երգեր էր երգում: Հատուկ եմ շեշտում Պարույրենց տան այս մթնոլորտը, քանի որ դա նույնպես էապես ազդել է ինձ վրա: Ինքը՝ Պարույրն էլ է վճռական դեր ունեցել իմ կյանքում: Պետք է ընդգծեմ, որ հետագա ողջ գործունեությունս՝ ընդհատակյա կազմակերպությանն անդամագրվելը, թռուցիկներ տարածելը, հակասովետական կամ հայրենասիրական գործունեությամբ զբաղվելը, մի խոսքով՝ այն ամենն, ինչով զբաղվել եմ, եղել են Պարույրի նախաձեռնությունները: Նա ինձ առաջարկել կամ հրավիրել է, իսկ ես պատրաստակամորեն մասնակցել ու ջանասիրաբար աշխատել եմ:

Ինչ-որ հրաշքով միշտ հայտնվում էի այնպիսի միջավայրերում, որտեղ ազատամիտներ էին լինում: Կամավոր ներգրավվել էի Եղեռնի հուշարձանի շինարարության մեջ, օգնում էի շինարարներին, լինում էի Կոմիտասի այգում, որտեղ ծանոթացել եմ Շահվերդյան Բագրատի հետ: Նրան ասացի, որ տատս երգում էր «Մեր Հայրենիքը», բայց ինքս տեքստը չունեմ, ու նա աշակերտական տետրի թերթի վրա ինձ համար գրեց «Մեր Հայրենիքը»: Տեղյակ էի, որ Պարույրն իր ընկերներից մի քանիսի հետ ինչ-որ գործերով է զբաղված, բայց անձամբ դրա մեջ չկայի: Դա նուբարաշենյան պատանեկան խմբակ էր: Վրաստանում ապրող իմ մեծ պապն ինձ շատ ավելի լուրջ դասեր էր տվել, այնպես որ՝ Պարույրենց այդ պատանեկան հայրենասիրությունն ինձ համար անցած էտապ էր: Մի օր էլ Պարույրն ասաց ինձ, որ Կիրովական (Վանաձոր) մեկնող գնաց-

քում թռուցիկներ տարածելիս իրենց աղջիկները բռնվել են, եւ նրանց պարտադրում են ասել, թե որտեղից են ձեռք բերել դրանք: Ասաց, որ փակուղի են մտել ու չգիտեն ինչ անել: Աղջիկների մոտ եղած նույն թռուցիկներից տարածվել էին նաեւ մեր դպրոցում: Ես էլ էի մասնակցել դրանց տարածմանը: Պարույրենց թռուցիկների պատմությունը փակելու համար առաջարկեցի ասել՝ իբր, ես եմ դրանք՝ վերցնելով մեր դպրոցից, փոխանցել իրենց: Այսպիսով, շղթան փակվում էր, ու աղջիկները դուրս էին գալիս անհարմար վիճակից: Պարույրն այդպես էլ արեց: Անմիջապես եկան իմ հետեւից: Մեր դպրոցի տնօրենն ասաց, որ, իրոք, դպրոցում նման թռուցիկներ տարածվել են, ՊԱԿ-ը տեղյակ է, եւ դրանք կարո՛ղ էին հայտնվել իմ ձեռքում: Ես հաստատեցի, որ հենց դպրոցից էլ վերցրել ու տվել եմ Պարույրին: Այդ օրն ինձ՝ ծնողներիս հետ առաջին անգամ տարան Պետանվտանգության կոմիտե ու պաշտոնապես նախազգուշացրին, որ դա անթույլատրելի գործունեություն է: Սա եղավ Հայրիկյանի նախաձեռնությունների մեջ իմ ներգրավման սկիզբը:

Մինչեւ հայտնի «Շանթ» կազմակերպությունը, մենք Շենգավիթում՝ Պարույրից անկախ, բավական մեծ խումբ էինք հասցրել ստեղծել: Արդեն Աշոտ Նավասարդյանը կար ու էլի տղաներ: Մեր խմբակն ուներ իր ծրագիրը: Համաձայն այդ ծրագրի՝ մենք հայ ժողովրդի ապագան տեսնում էինք լենինյան ազգային քաղաքականության եւ կոմունիստական գաղափարախոսության շրջանակներում: Արդեն ՊԱԿ-ի տեսադաշտում էինք, ու մեզ առիթից առիթ տանում էին իրենց մոտ: Իրենց լեզվով դա կոչվում էր պրոֆիլակտիկա: Ահա այդ, այսպես կոչված, պրոֆիլակտիկաների ընթացքում մենք բախվում էինք իսկական խորհրդային իրականությանը: Տեսնում էինք ոչ թե այն, ինչ գրված է գրքերում կամ ինչ պատմում է մեր դասատուն մեզ, այլ այն, ինչ կա իրականում՝ շատ կոպիտ ու գռեհիկ: Պրոֆիլակտիկան իր մեջ ներառում էր ոչ միայն ՊԱԿ տարվելը կամ մեր ծնողներին ՊԱԿ կանչելը, այլեւ դրան հաջորդող ողջ պրոցեսը, երբ քեզ տարաբնույթ ժողովների ժամանակ դատապարտում ու պարսավում են, քեզ ուղղվելու ժամանակ են տալիս, ստիպում են, որ արդարանաս, եւ որ ամենակարեւորն է՝ այդ ամենն անում են մարդիկ, որոնք այդ ժողովներից դուրս բոլորովին այլ բաներ են ասում քեզ: Ահա այդ երկերեսանիությունը, այդ կեղծավորությունը մեզ ռադիկալացրեց: Մի խոսքով, ՊԱԿ-ն իր գործունեությամբ մեզ պարզ ու հասկանալի եւ որ ամենակարեւորն է՝ արագ հասկացնել տվեց, թե ինչ է իրական կոմունիզմը: Մենք հասկացանք, որ խորհրդայինը եւ կոմունիստականը բոլորովին էլ այն չեն, ինչ մենք պատկերացնում ենք: 1967 թվականն էր: «Նաիրիտ» գործարանի մոտ ժողով արեցինք եւ վճռեցինք կտրել մեր կապերը ողջ կոմունիստականի ու խորհրդայինի հետ: Վճիռն ամրապնդեցինք սիմվոլիկ միջոցառմամբ՝ այրեցինք մեր կազմակերպության կոմունիստամետ ծրագիրը:

Եղեռնի հուշարձանի շինարարության ժամանակ Մեսրոպ անունով մեկը, որն ինձանից տարիքով շատ մեծ էր եւ, ամենայն հավանականությամբ, ինձ հավանել էր, առաջարկեց ծանոթանալ իր ընկերներից մի քանիսի հետ: Գնացինք Էջմիածին: Այնտեղ ծանոթացա Ստեփան Զատիկյանի եւ Հայկազ Խաչատրյանի հետ, իսկ ավելի ուշ՝ արդեն Թոխմախում, Շահեն Հարությունյանի հետ: Ինձ դուր էր գալիս, որ ինձանից տարիքով մեծ եւ ոչ օրդինար մարդկանց հետ հանդիպումներ եմ ունենում: Պարույրին պատմեցի հանդիպումներիս մասին: Որոշեցինք հետեւել եւ տեսնել, թե ովքեր են նոր ծանոթներս: Որոշ ժամանակ անց Պարույրն ասաց, որ հետեւելու կարիք չկա, քանի որ այդ մարդիկ «մեր ընկերներն են»:

Պարզվեց՝ նոր ծանոթներս Ազգային միացյալ կուսակցության հիմնադիրներն են: Սկսվեց մեր համագործակցությունը: Տարածեցինք նրանց տված թռուցիկները: Տարա-

ծեցինք ու չբռնվեցինք: Սա լավ քննություն էր, եւ նրանք որոշեցին մեզ ներգրավել ԱՄԿ շարքերը: Միակ խոչընդոտն իմ տարիքն էր: Ես դեռ անչափահաս էի, եւ ըստ ԱՄԿ կանոնադրության՝ ԱՄԿ անդամ դառնալու իրավունք չունեի: Իմ դեպքում բացառություն արվեց: Ընդունեցինք ԱՄԿ երդումն ու դարձանք երդվյալ ԱՄԿ-ականներ: 1968 թ. ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում կազմակերպեցինք հայտնի ռադիոհաղորդումը, որի տեխնիկական մասն իրականացրել էր մեր ընկերներից մեկը՝ Վաչիկը. նրա հայրը որակյալ ռադիոտեխնիկ էր: Հաղորդման ձայնագրված տեքստը կարդաց մեր աղջիկներից մեկը: Այդ ողջ աշխատանքն իրականացվել է շենգավիթյան մեր մասնաճյուղի ուժերով: Այսօր նույնիսկ չեմ հիշում, թե ինչպես բացահայտվեց:

Ես ցանկանում էի օդաչու դառնալ: Նավասարդյան Աշոտի հորը շատ էի հավանում, իսկ նա, ինչպես իմ հարեւաններից շատերը, աշխատում էր օդանավակայանում: 1968-ին՝ օդաչուական ուսում ստանալու նպատակով մեկնեցի Խաբարովսկ: Մոտեցավ զորակոչմանս տարիքը: Վերադարձա Հայաստան ու զորակոչվեցի: Վթարի հետեւանքով լուրջ վնասվածքներ ստացա ու ժամկետից շուտ զորացրվեցի: Խաբարովսկ մեկնելու ու հետագա զորակոչմանս հետեւանքով մի երկար շրջան չեմ մասնակցել մեր տղաների իրականացրած գործողություններին: Առանց ինձ տարածվել են թռուցիկներ, տպագրվել է «Երկունքը»: Երբ 1970-ին մերոնց դատապարտում էին, ես դատավարության ժամանակ ընդամենը որպես վկա էի ներգրավված: Մինչեւ 1972-73-ականները եղել եմ կիսաանկողնային վիճակում: Կալանավայրից վերադարձավ Ստեփան Զատիկյանը, հետագայում՝ նաեւ Պարույրն ու Աշոտը: Կրկին իրար գլխի հավաքվեցինք: Մեզ միացան երկու Ռազմիկները՝ Ռազմիկ Մարկոսյանը եւ Ռազմիկ Զոհրաբյանը: Էլի տղաներ կային: Ծնվեց սեփական տպարան ունենալու միտքը: Զոհրաբյան Ռազմիկը պասիվ էր: Լավ տղա էր, բայց պասիվ էր: Մարկոսյանի հետ երկար մտմտալուց հետո գտանք տպագրական մի նոր եղանակ, որն այսօր կարող է պարզունակ թվալ, բայց 1970-ականների սկզբի համար կարելի էր իսկական գյուտ համարել: Գրամեքենայով տպելուց շատ ավելի լավ ու շատ ավելի արդյունավետ միջոց էր: Մատրիցան դնում էինք մամլիչի մեջ, հալած արճիճը լցնում էինք վրան ու սեղմում: Ըստ էության՝ տպում էինք ամբողջական տողը: Եւ այսպես՝ տող առ տող: Հսկայական ջանքեր էին պահանջվում, բայց, վերջին հաշվով, լավ արդյունք ստացանք: Զոհրաբյան Ռազմիկը Սարի թաղում վարձով էր ապրում: Հենց նրա սենյակն էլ վերածեցինք տպարանի: Այդ եղանակով տպեցինք «Հայեր» թռուցիկը: Տարածեցինք ու չբռնվեցինք: Մեր բռնվելը եղավ բոլորովին այլ առիթով: Ծրագրել էինք այրել Երեւանի Լենինի անվան (Հանրապետության) հրապարակում գտնվող Լենինի մեծադիր նկարը: Հանդուգն քայլ էր: Ողջ հրապարակը, մասնավորապես մեծադիր նկարը, գտնվում էր ոստիկանների շուրջօրյա հսկողության ներքո: Այդ գործը պետք է աներ Մարկոսյան Ռազմիկը: Սակայն, անհասկանալի պատճառներով, անընդհատ ձգձգվում ու տեղի չէր ունենում: Պարզ էր արդեն, որ պետք է այդ գործն ուրիշը ստանձներ: Հանձն առավ Զոհրաբյան Ռազմիկը եւ մեր ընկերներից մեկի հետ գործը հաջողությամբ գլուխ բերեց: Ըստ նախապես մշակած մեր ծրագրի ու հաշվարկների՝ նկարն այրելուց հետո նրանք պետք է հասցնեին հեռանալ դեպքի վայրից ու թաքնվել: Բայց, ի տարբերություն մեր մյուս ընկերոջ, Զոհրաբյան Ռազմիկը թաքնվել չհասցրեց: Հրապարակում հերթապահող ոստիկանները կարողացան ձերբակալել նրան: Բնական է, որ Զոհրաբյան Ռազմիկի ձերբակալվելուց հետո նրա վարձով բնակարանը պետք է խուզարկվեր: Նախապես մաքրել էինք բնակարանը: Այնտեղ ոչինչ չպետք է լիներ: Բայց խուզարկության ժամանակ պետանվտանգության աշխատակիցները հայտնաբերել էին մեր աչքից վրիպած ապակու կտոր, որի վրա տպագրա-

կան ներկի հետքեր էին պահպանվել: Զուտ պատահականության արդյունք էր: Դրանով ՊԱԿ-ի ձեռքում արդեն հայտնվեց մի թել, որը նրանց մեզ վրա դուրս գալու հնարավորություն էր տալիս:

Ձերբակալվել էին Շահվերդյան Բագրատը եւ Թովմասյան Արարատը: Նրանց գործով ինձ կանչում էին ՊԱԿ եւ վկայություն պահանջում, իսկ ես հրաժարվում էի: Արեցին հերթական գրավոր նախազգուշացումը: Նախազգուշացման թերթիկում գրված էր, որ ես՝ այսինչ օրը, այսինչ վայրում Շահվերդյան Բագրատի եւ մյուսների հետ մասնակցել եմ հակասովետական հավաքի: Տվեցին, որպեսզի ստորագրեմ: Ես թերթիկի տակ գրեցի, որ հանդիպել եմ իմ ընկերների հետ, այդ թվում եւ՝ Շահվերդյանի, բայց մեր այդ հանդիպումը եւ հավաքներն ընդհանրապես հակասովետական միջոցառումներ չեմ համարում: Գրառումս նրանց խիստ վրդովեցրեց: Նրանց պատկերացմամբ, ես ընդամենը պետք է ստորագրեի այդ նախազգուշացման՝ խիստ հաշվառվող ու համարակալված թերթիկի տակ, եւ վերջ: Այս դեպքից հետո սկսեցին գալ մեր տուն, անհանգստացնել, ծնողներիս ՊԱԿ տանել: Այդ օրերին էլ այրվեց հրապարակի Լենինի մեծաղիր նկարն, ու Զոհրաբյան Ռազմիկը բռնվեց: Իրար հետ ունեցած մեր կապն ակնհայտ էր: Ռազմիկի հետ մենք հարեւաններ, համադասարանցիներ ու ընկերներ էինք, եւ ինձ վրա դուրս գալը մեծ հմտություն ու ջանքեր չէին պահանջում: Ռազմիկի բռնվելուց որոշ ժամանակ անց կալանավորեցին ինձ: Սակայն, կալանավորման համար հիմք հանդիսացան ոչ թե մեր թռուցիկները կամ Լենինի նկարը, այլ իշխանության ներկայացուցիչներին դիմադրություն ցույց տալը: Հերթական անգամ եկել էին ծնողներիս ՊԱԿ տանելու: Մայրս հիվանդ էր: Մենք նրանց բացատրում էինք, որ հիվանդ է եւ չի կարող գնալ, բայց ՊԱԿ-ի աշխատակիցներն անդրդվելի էին: Ես վրդովվեցի, ասացի, որ վաղուց արդեն չափահաս եւ ամուսնացած տղամարդ եմ, ինքս եմ պատասխանատու իմ գործողությունների համար, եւ նրանք պարտավոր են ծնողներիս հանգիստ թողնել: Նրանք իրենցն էին պնդում: Ես չէի կարծում, որ այդ վեճից ինչ-որ լուրջ բան կարող է ծագել: Հայրս՝ վեճը կանխելու նպատակով խնդրեց, որ մի տասը րոպե ժամանակ տան՝ մայրս հագնվի: Այդպես էլ արեցին: Վեճի ժամանակ ասել էի, որ կարգին երկրում նման կամայականության համար իրենց կգնդակահարեին: Նրանք, բնական է, իրենց ղեկավարներին պատմել էին մեր վեճի ու այդ խոսքիս մասին, ու այնտեղ որոշել էին, որ կարելի է դատապարտել ինձ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնության սպառնալիք հնչեցնելու համար: Ինձ կանչեցին դատախազություն՝ հարցաքննության: Լուրջ մտավախություններ չունեի: Տանը թաքցնելու բաներ կային, այդ թվում՝ «Դաշնակցության պատմություն» գիրքը եւ այլ նյութեր: Ժամանակս չէր ներում եւ մտածեցի՝ հարցաքննությունից կվերադառնամ ու տնից ամեն ինչ կտեղափոխեմ անվտանգ վայր: Բայց տեղի ունեցավ անսպասելի բան: Դատախազությունում մեղադրանք ներկայացրին ինձ եւ մի մեծ խմբով՝ ինձ հետ միասին եկան մեր տուն՝ խուզարկության: Ի թիվս այլ նյութերի՝ գտան նաեւ մի աշակերտական տետր, որտեղ ԱՄԿ օրիորդաց կազմակերպության մի քսան-երեսուն հոգանոց ցուցակն էր: Գտածոներից սա երեւի միակն էր, որ ոչ մի դեպքում չպետք է նրանց ձեռքն ընկներ: Ինչ գտել՝ լցրել էին սեղանին: Մի մեծ կույտ էր գոյացել, այդ թվում եւ՝ այդ տետրը: Խումբը շարունակում էր խուզարկությունը: Կարինե Նավասարդյանը՝ կինս, հայացքով ցույց տվեց սեղանին լցված գտածոների թվում այդ տետրը եւ շշնջաց՝ ցուցակը: Ես դանդաղ մոտեցա, տետրն աննկատ վերցրի սեղանից ու տվեցի Կարինեին, իսկ նա մտցրեց գոտկատեղը եւ ձեռքի տակ եղած պայուսակով ծածկեց: Իմ գործողությունը նկատեց խուզարկությանը ներկա դատախազ Պապին Թոխյանը: Նա սեւեռուն հայացքով նայում էր ինձ: Մեր հայացքները

հանդիպեցին, բայց նա ոչինչ չասաց: Երբ արդեն խուզարկության արձանագրությունն էին կազմում, խուզարկուների ղեկավարը՝ նկատելով Կարինեի ձեռքի պայուսակը, հարցրեց. «Իսկ ռեդիկուլն ստուգե՞լ եք», եւ Թոխյանն ասաց՝ այո: Ես երբեք սա չեմ մոռանա: Խուզարկության ավարտից հետո, ինձ մեկուսարան տանելու փոխարեն վերցրին իրենց հետ, եւ ամբողջ խմբով գնացինք Աշոտ Նավասարդյանենց տուն: Սկսվեց նրանց տան խուզարկությունը: Կարինեն մնաց մեր տանը: Փաստորեն, Թոխյանի շնորհիվ մեր աղջիկների խումբը չբացահայտվեց, եւ նրանք զերծ մնացին ավելորդ քաշքշուկներից, հարցաքննություններից ու հավանական է՝ նաեւ ձերբակալումներից: Ինձ դատապարտեցին իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալու համար, ապա սկսվեց հակասովետական գործունեության համար նախաքննությունը: Լենինի նկարն այրելուց հետո Ռազմիկ Զոհրաբյանին ձերբակալած ոստիկանները, բնական է, զեկուցել էին, որ նա մենակ չի եղել: Նրանք տեսել էին երկրորդին, որը կարողացել էր թաքնվել: Իրականում այդպես էլ կար: Որպեսզի երկրորդով շատ չհետաքրքրվեն, եւ հարցը մեկընդմիշտ փակվի, որոշեցի ասել, որ երկրորդը ես եմ եղել: Դրանով ե՛ւ դրսում մնացած մեր մյուս ընկերոջ՝ Սմբատ Ավագյանի հետքերը կորան, ե՛ւ Զոհրաբյան Ռազմիկի գործը հեշտացավ, որովհետեւ նրան անընդհատ ճնշում էին երկրորդ գործակցի անունն իմանալու համար, իսկ նա չէր հայտնում: Եվ քննիչներն իրենց գործն այս հարցում ավարտված համարեցին:

Կալանավորվածներս շատ էինք, բայց ինձ ու երկու՝ Մարկոսյան ու Զոհրաբյան Ռազմիկներին առանձին դատեցին: Ըստ էության, մեր գործում ինձ համար մութ բան չկար: Ձերբակալվել ենք միայն երեքս: Բոլորը, ովքեր պետք է մնային դրսում, դրսում էլ մնացին: Այս առումով ե՛ւ ես, ե՛ւ Մարկոսյան ու Զոհրաբյան Ռազմիկները մեր գործը լավ ենք կատարել: Միայն մեկ հարց ունեմ՝ ինչպե՞ս եղավ, որ չեկիստները իմացան Մարկոսյան Ռազմիկի թաքցրած տպագրական սարքավորումների ու տպատառերի տեղը: Այդ տարիներին դրանք մեզ համար հսկայական արժեք էին եւ ոչ մի դեպքում չպետք է ընկնեին չեկիստների ձեռքը: Բայց ցավոք՝ ընկան:

Դատավարությունից հետո մեզ տեղափոխեցին քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրեր: Ես ու Աշոտ Նավասարդյանը ժամկետից շուտ ազատ արձակվեցինք ու տուն վերադարձանք: Մորդովիայում էինք: Մեզ միշտ թվացել է, թե խաղը մերն է, եւ մենք ենք ծրագրեր մշակում ու իրականացնում: Սակայն, այսօր՝ դեպքերից այսքան տարի անց բոլորովին այլ աչքերով եմ եղածին նայում: Այսօր արդեն ինձ համար պարզ է, որ ոչ թե մենք էինք ուզում ժամկետից շուտ ազատվել մեր նախանշած ծրագրերն իրականացնելու համար, այլ մեզ էին ցանկանում ազատել՝ իրենց ծրագրերն իրականացնելու համար: Մենք չորս հոգով՝ ես, Աշոտ Նավասարդյանը, Հայրիկյանը եւ Հակոբջան Թադեւոսյանը պայմանավորվել էինք, որ վերադառնում ենք Հայաստան ու ստեղծում «Սահմանադրություն-17» կոչվող մաքուր այլախոհական մի կազմակերպություն: Հակոբջանը դրսում էր, մենք՝ կալանավայրում: Ինձ կալանավայրից բերեցին Երեւան՝ պրոֆիլակտիկայի: 1976 թվականն էր: Այդ տարիներին նման բաներ անում էին. դա մտնում էր ՊԱԿ-ի աշխատանքի մեջ: Զարմանալի, գուցե անգամ աներեւակայելի թվա, բայց Երեւան հասցնելուց հետո՝ առանց զինված պահակախմբի, առանց ձեռնաշղթաների, ընդամենը երկու չեկիստի ուղեկցությամբ ինձ տարան մեր տուն: Ընկերներս ու հարեւաններս լցվեցին մեր տուն: Չեկիստները կատակում էին՝ ասելով, որ կարող են ինձ, ահա՛, այսպես թողնել տանը եւ հեռանալ: Ասում էին՝ նույնը կարող են անել նաեւ Աշոտի հետ, բայց վճիռն, իբր, պետք է մենք կայացնենք: Ես բացատրում եմ, որ այս պահին ոչինչ վճռել չեմ կարող, ընկերներս նստած են, եւ պետք

է նրանց հետ խորհրդակցեմ: Նստած են Աշոտը, Պարույրը, երկու Ռազմիկները: Այս բեմադրությունից հետո ինձ կրկին տարան ՊԱԿ-ի մեկուսարան եւ հետ ուղարկեցին գաղութ: Զոհրաբյան Ռազմիկին ու Աշոտ Նավասարդյանին Մորդովիայից արդեն Պերմ էին տարել: Այս ողջ պատմությունը պատմեցի Մարկոսյան Ռազմիկին ու Հայրիկյան Պարույրին: Ասացի նաեւ չեկիստների կողմից արված վաղաժամ ազատ արձակվելու առաջարկի մասին: Կարծում էի, որ մենք ունենք շուտ դուրս գալու, «Սահմանադրություն-17»-ը ստեղծելու եւ լուրջ գործեր անելու հնարավորություն: Ազատ արձակվելու դիմաց մեզանից պահանջվում էր ներման խնդրագրով դիմել խորհրդային իշխանություններին: Մարկոսյան Ռազմիկը կտրականապես մերժեց: Զոհրաբյան Ռազմիկին դիմելու կարիք անգամ չկար, պարզ էր՝ հրաժարվելու է: Պարույրը նույնպես մերժեց, ասելով՝ եթե նրանք ցանկանում են մեզ ազատ արձակել, թող ազատեն առանց մեր կողմից գրված ներման խնդրագրի: Նույնն արդեն փոխանցվել էր Պերմ՝ Աշոտին, որն ընդունել էր առաջարկը: Եվ մենք՝ ես ու Աշոտ Նավասարդյանը, ներման խնդրագրերով դիմեցինք իշխանություններին ու վաղաժամ ազատ արձակվեցինք: 1976-ի դեկտեմբերին ազատ արձակվեց Աշոտ Նավասարդյանը, իսկ 1977-ի ապրիլին՝ ես:

Ազատվելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղա «Սահմանադրություն-17»-ի ի կատար ածմանը: Գնացի Տալլին, եղա Մոսկվայում, պայմանավորվածություններ ձեռք բերեցի, բայց որքան էլ զարմանալի էր՝ Հայաստանում աջակցություն չստացա: Ազատության մեջ եղած մեր ընկերներին այդ զուտ այլախոհական գաղափարը չէր ոգեւորում: Գործը ձգձգվեց եւ այդպես էլ իրականություն չդարձավ: Կամաց-կամաց միջավայրս սեղմվեց: Հիմնականում առնչվում էի ԱՄԿ կանանց մասնաճյուղի անդամների հետ: 1980-ին տեղեկացանք, որ Պարույրին, դեռ կալանավայրից դուրս չեկած, շինծու մեղադրանք են առաջադրել: Պարզ էր արդեն, որ նա Հայաստան չի վերադառնալու: Այս պարագայում մենք չէինք կարող հանգիստ նստել: Աղջիկների խմբի հետ որոշեցինք հրապարակել «Փարոսի» հաջորդ համարը: Աշխատանքի ողջ ծանրությունն ընկած էր Կարինե Նավասարդյանի ու Սուսաննա Ավագյանի ուսերին: Մեծ խմբաքանակ պատրաստեցինք ու տարածեցինք: Հեռախոսագրքից հանել էինք հայտնի մտավորականների հասցեները եւ հատկապես նրանց փոստարկղերն էինք գցել: Այս անգամ թռուցիկի տակ գրել էինք մեր՝ իմ ու Աշոտ Նավասարդյանի անունները: Ողջ գիշեր տարածեցինք «Փարոսը», իսկ առավոտյան՝ մեկ օրինակ ձեռքներս գնացինք դատախազություն: Մեզ ընդունեց Պապին Թոխյանը: Երբ իմացավ, թե ինչու ենք եկել եւ ինչ ենք արել, քիչ էր մնում ուշաթափվեր: Զանգահարեց ՊԱԿ, այնտեղից ասացին, որ արդեն տեղյակ են: Որոշ մտավորականներ արդեն հասցրել էին իրենց փոստարկղերը ստուգելուց հետո զանգահարել ու տեղեկացնել: Թոխյանի սենյակից մեզ տարան ՊԱԿ-ի մեկուսարան: Ազատ արձակվեցինք 1987 թվականին՝ կրկին վաղաժամ: Այս անգամ արդեն՝ Պերեստրոյկայի շնորհիվ:

Գործով կայացված դատավճիռը

Դատավճիռն առանց ԱԱԾ-ի կողմից արված ջնջումների ենք ներկայացնում: Տեքստն ամբողջական է, որովհետեւ ստացել ենք ոչ թե ԱԱԾ-ից, այլ վերցրել ենք մեր անձնական արխիվից: Այս դատավճիռը նաեւ հիմք է հանդիսացել 1974 թ. կայացված հարակից մի քանի դատավճիռներ վերականգնելու համար:

Գործ նո. 136
1974 թ.

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1974թ. հոկտեմբերի 23-ին

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՍԲ՝	**Ա.Ս.Եղիազարյան**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝	**1.Վ.Մ.ԱԱՐԳԱՅԱՆԻ**
	2.Ն.Ի.ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱԱԲ՝	**Ն.ԳԱԼՍՏՅԱՆԻ**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
ԴԱՏԱԽԱԶ՝	**Գ.ՂԱՍԲԱՐՅԱՆԻ**
ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ՝	**----------**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրական գործը ըստ մեղադրանքի ԱԶԱՏ ԼԵՎԻԿԻ ԱՐՇԱԿՅԱՆԻ, ծնվել է 1950թ. Երեւան քաղաքում: ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին ոչ ոք: 1974թ. մարտի 5-ին դատապարտվել է Երեւանի Լենինյան շրջժողդատարանի կողմից քր. օրի 207 հոդ. երկու տարի ազատազրկման: Աշխատել է Երեւանի ավտոդողերի գործարանում որպես փականագործ: Սովետական բանակում ծառայել է, զորացրվել է հիվանդության պատճառով, մշտապես բնակվում է Երեւան, Ներքին Շենգավիթ, առաջին փողոց տուն նո. 47, կառավարական պարգեւներ չունի, սույն գործով կալանքի տակ է 1974թ. ապրիլի 9-ից:

Ազատ Արշակյանը մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65 հոդ. 1-ին մասով, 67 հոդ., 96 հոդ., 2-րդ մասով եւ 231 հոդվածով: Առաջադրված մեղադրանքում, իրեն մեղավոր չճանաչեց:

ՌԱԶՍԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԶՈՀՐԱԲՅԱՆ, ծնվել է 1950թ. Երեւան քաղաքում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, միջնակարգ կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ ոք, նախկինում չդատված, աշխատել է էլեկտրոտեխնիկական գործարանում որպես փականագործ կարգավորող, սովետական բանակում ծառայել է, կառավարական պարգեւներ չունի, մշտապես գրանցված է Երեւանի Օրջոնոկիձեի պողոտա 20,

բն. 8, սակայն փաստորեն բնակվել է Սարի-թաղ 7-րդ փողոց տուն 52-ում, սույն գործով արգելանքի է վերցվել 1974թ. հունվարի 20-ին, դատախազի կողմից կալանքը թույլատրվել է ս/թ հունվարի 24-ից:

Ռազմիկ Զոհրաբյանը մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65 հոդ. 1-ին մասով, 67 հոդ. 96 հոդ. 2-րդ մասով և 213 հոդ. 3-րդ մասով: Մեղավոր չճանաչեց:

ՌՍԶԱԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, ծնվել է 1949թ. Երեւան քաղաքում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, անկուսակցական, Սովետական բանակում ծառայել է, կառավարական պարգեւներ չունի, ամուրի, խնամքին ոչ ոք, սովորել է Երեւանի հայկական մանկավարժական ինստիտուտի առաջին կուրսում (կուլտուրայի ֆակուլտետում) նախկինում չդատված, աշխատել է պետական համալսարանում որպես մեխանիկ, մշտապես բնակվել է Երեւան Օրջոնոկիձեի պողոտա 4-րդ փակուղի, տուն 13, սույն գործով կալանքի տակ է 1974թ. հունիսի 19-ից:

Ռազմիկ Մարկոսյանը մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդ. 1-ին մասով, 67 հոդ. 213 հոդ. 1-ին եւ 3-րդ մասերով: Առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչեց:

Դատաքննությամբ, վկաների ցուցմունքներով, փորձագետների եզրակացություններով, գործին կցված բազմաթիվ իրեղեն ապացույցներով, ինչպես նաեւ իրենց՝ ամբաստանյալի նախաքննության ու դատաքննության ընթացքում տված ցուցմունքներով, Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան ապացուցված է համարում հետեւյալը՝

«Դեռ 1967թ. Ստեփան Զատիկյանը, Աշոտ Խաչատրյանը, Աշոտ Նավասարդյանը, Շահեն Հարությունյանը եւ մի քանի անհատներ, որոնք տարբեր ժամանակներում Գերագույն դատարանի կողմից դատապարտվել են հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա անելու, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպություն ստեղծելու համար, պարբերաբար ընթերցել են արտասահմանում գործող դաշնակցություն կուսակցության կողմից հրատարակված, զուտ ազգայնական կրքեր բորբոքող, հակասովետական տրամադրություններ առաջացնող հոդվածներ, սկսել են համակվել բովանդակությամբ միայն ազգայնական ոգով եւ լինելով քաղաքականապես անպատրաստ, այդ կարգի հարցերի ճիշտ ըմբռնման համար ոչ հասունացած, կազմակերպել են «Շանթ» կոչվող գաղտնի խմբակը եւ իրենց դատապարտելի ու քրեականորեն պատժելի գործողություններով սկսել են ոտնձգել Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների միության անխախտության, ժողովուրդների բարեկամության ու նրանց իրավահավասար ու ինտերնացիոնալ շահերի դեմ:

Նույն, 1967թ. գործով ամբաստանյալ Ազատ Արշակյանը ընդգրկվելով այդ «Շանթ» գաղտնի խմբակը, ոչ միայն կատարել է Զատիկյանի եւ մյուսների տված բոլոր հանձնարարությունները, այլեւ դառել է այդ խմբի ղեկավարներից մեկը ու Երեւան քաղաքում ակտիվ գործունեություն է ծավալել, ինչպես մեր կարգերը արատավորող հակասովետական բնույթի թռուցիկներ տարածելու գործում, այնպես էլ անկայուն, դեռ գիտակցության չեկած աշակերտներին «Շանթ» խմբակում ներգրավելու ուղղությամբ:

Այսպես՝ Ազատ Արշակյանը «Շանթ» գաղտնի խմբակում ներգրավել է արդեն իսկ մեկ այլ գործով դատապարտված Հակոբ Աշիկյանին վկաներ՝ Թելման Մելոյանին Վարդան Մկրտչյանին եւ ուրիշներն ու գաղտնի հավաքույթների ժամանակ նրանց ընթերցել է ազգային կրքեր բորբոքող գրականություն եւ Զատիկյանի կողմից գած «Փարոս» թերթը, որը իր ամբողջ էությամբ լրիվ հակասովետական է, որտեղ մարքս-լենինյան ուսմունքը համարվում է «բոլոր դավանանքներից ամենաստորը աշխարհը ստրկացնելու,

կողոպտելու, ազգերը ոչնչացնելու միջոց» եւ այլ հերյուրանքներ (հ. 6 գբ. 13-14):

Իր այդ հանցավոր արարքների համար 1967թ. մայիսի 5-ին ամբաստանյալ Ազատ Արշակյանը կանչվել է ՀՍՍՀ Պետական անվտանգության կոմիտե եւ գրավոր նախազգուշացվել է նման գաղտնի գործունեությամբ զբաղվելու համար:

Վերը շարադրվածը հաստատված է ամբաստանյալ Ազատ Արշակյանի լրիվ հանձնառումով, նրա կողմից ՊԱԿ-ին տված գրավոր նախազգուշացումով (գ.1. գբ. 53) վկաներ Զատիկյանի, Մելոյանի, Մկրտչյանի ցուցմունքներով եւ գործին կցված 1970թ. փետրվարի 23-ի դատավճռով (հ.6., գբ. 242-257) եւ դատաքննության ժամանակ հրապարակված վկա Պարույր Հայրիկյանի ցուցմունքներով:

«Շանթ» գաղտնի խմբակը պետական անվտանգության կոմիտեի կողմից բացահայտվելուց հետո, Ստեփան Զատիկյանը, Պարույր Հայրիկյանը եւ ապա հակառակ իր գրավոր խոստմանը Ազատ Արշակյանը, «Ազգային միացյալ կուսակցություն» (ԱՄԿ) անվան տակ ստեղծել են գաղտնի հակասովետական կազմակերպություն, որի ծրագիրը, կանոնադրությունը եւ երդումը կազմվել է Զատիկյանի, իսկ մշակվել է մյուսների հետ նաև Հայրիկյանի կողմից ու բոլորը միասին ձեռնամուխ են եղել ակտիվ, հակասովետական գործունեության:

«Ազգային միացյալ կուսակցություն» ծրագիրը, կանոնադրությունը եւ երդումը իրենց մեջ պարունակում են զրպարտչական մտքեր այն մասին, որ իբր Սովետական Հայաստանը «գտնվում է Ռուսաստանի ստրկատիրական գերիշխանության տակ» կոչ է արվում «անողոք պայքար ծավալել Մոսկովյան գերիշխանության դեմ, ստեղծելով ազատ ու անկախ Հայաստան» եւ այլ հերյուրանքներ:

Որպեսզի այդ հակասովետական կազմակերպությունը «Շանթ» խմբակի նման չբացահայտվի, գաղտնի հավաքույթների ժամանակ Ազատ Արշակյանը եւ մյուսները որոշել են այդ գաղտնի կազմակերպությանը կից ստեղծել խմբակներ եւ միմյանց հետ կապ պահպանել խմբակների ղեկավարների միջոցով: Ամբաստանյալ Ազատ Արշակյանը այդ կազմակերպության կազմում գործել է «Արմեն», իսկ Պ.Հայրիկյանը «Վրեժ» ծածկանվամբ:

Այդ կազմակերպության գործունեությունը ակտիվացնելու, թռուցիկներ եւ հակասովետական այլ գրականություն ազգաբնակչության մեջ տարածելու համար անդամավճարներ են հավաքել յուրաքանչյուր ամիս 6, 3, 2 եւ մեկ ռուբլու չափով: Նայած կազմակերպության անդամի նյութական ապահովությանը:

Ամբաստանյալ Ազատ Արշակյանը խորամանկորեն օգտագործելով 1915թ. տեղի ունեցած եղեռնու դեպքերը «Ազգային միացյալ կազմակերպություն» անվան տակ գործող հակասովետական կազմակերպության մեջ է ներգրավել սույն գործով մյուս ամբաստանյալներ Ռազմիկ Զոհրաբյանին, Ռազմիկ Մարկոսյանին, վկաներ Թելման Մելոյանին, Վարդան Մկրտչյանին, Աշոտ Նավասարդյանին եւ ինքն էլ կնքվել է նրանց ղեկավարը:

Այդ արարքների համար, 1967թ. դեկտեմբերի 8-ին, Ազատ Արշակյանը կրկին կանչվել է ՀՍՍՀ պետական անվտանգության կոմիտե ու նախազգուշացվել է (հ.1, գբ. 55):

Ինչպես եւ առաջին, այս անգամ եւս ամբաստանյալ Արշակյանը ուխտադրուժ լինելով շարունակել է իր հակասովետական գործունեությունը: Նա Մելոյանին, Մկրտչյանին եւ մյուսներին ծանոթացրել է Ա.Մ.Կ.–ի ծրագրին, կանոնադրությանը, երդմանը, մեկ այլ գործով դատապարտյալ Ստեփան Զատիկյանի կողմից գրված «Փարոս-1» թերթին, կոչ է արել նրանց ակտիվ, պրակտիկ գործունեությանն դիմել Սովետական Հայաստանը ՍՍՀՄ-ի կազմից դուրս բերելու համար:

1968թ. ապրիլի 23-ի ուշ երեկոյան, նախապես ձեռք բերված համապատասխան միջոցներով, այն է բարձրախոս, լար, մագնիտոֆոն, մարտկոցներ եւ այլն, ամբաստանյալներ Ազատ Արշակյանը և Պարույր Հայրիկյանը ռադիոբարձրախոսը տեղադրելով Երեւանի Ծիծեռնակաբերդում 1915թ. զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ, հաջորդ օրը, այսինքն ապրիլի 24-ին, հավաքված մեծ թվով բազմության ներկայությամբ գաղտնի ռադիոհաղորդում են կազմակերպել, որում հայ ժողովրդին համարել են «ջարդված» ու կոչ են արել «սթափվել անկախ Հայաստան ստեղծելու համար»:

Այդ հանցավոր գործունեության մեջ են ներգրավվել գործով վկաներ՝ Վարդան Մկրտչյանը, Աշոտ Նավասարդյանը և Վաչե Խաչատրյանը:

Ամբաստանյալ Ազատ Արշակյանին մեղսագրված արարքի թվարկած էպիզոդները հիմնավորված են Ստեփան Զատիկյանի, Աշոտ Նավասարդյանի, Պարույր Հայրիկյանի, Վարդան Մկրտչյանի ցուցմունքներով, Ազատ Արշակյանի լրիվ հանձնառումով, գործին կցված իրեղեն ապացույցներ «Ազգային միացյալ կուսակցություն» կոչվող կազմակերպության ծրագրով, կանոնադրությամբ, «Փարոս» գաղտնի հրապարակված թերթով, 1970թ. փետրվարի 23-ի դատավճռով եւ այլ ապացույցներով (հ.1, գթ. 54, հ.6., գթ. 4-15, 242-251):

Սովետական բանակից զորացրվելուց հետո, 1970թ. փետրվարին, երբ Նավասարդյանի, Հայրիկյանի եւ մյուսների նկատմամբ քր. օրի 65 եւ 67 հոդվածներով հարուցված քրեական գործով Ազատ Արշակյանը հարցաքննվել է որպես վկա եւ ընդունել է, որ Հայրիկյանի եւ Նավասարդյանի հետ ինքը եւս մասնակից է եղել կատարված հակասովետական գործողություններին, նա արդեն երրորդ անգամ է զգուշացվել պետական անվտանգության կոմիտեի կողմից նման հանցավոր արարքներ այլեւս չկատարելու համար, սակայն Արշակյանը դարձյալ համապատասխան հետեւություններ չի արել եւ չի բռնել ուղղման ճանապարհը:

Ընդհակառակը՝ իր հակասովետական գործունեությունը առավել ընդարձակելու եւ «ազգային միացյալ կուսակցություն» «ԱՄԿ» անվամբ հակասովետական կազմակերպությունը ավելի ընդլայնելու նպատակով, 1972– 1973թթ. հավաքույթներ է կազմակերպել որոնցում մասնակից է դարձրել ամբաստանյալներ Ռազմի Զոհրաբյանին, Ռազմիկ Մարկոսյանին, վկաներ՝ Թելման Մելոյանին, Սամվել Մուրադյանին, Յուրիկ Բաղդասարյանին եւ անչափահաս, մեկ այլ գործով քր. օրի 69 եւ 206[1] հոդ. արդեն իսկ դատապարտված Գագիկ Առաքելյանին:

Թվարկված անձանց միջոցով իր հանցավոր մտադրությունները պրակտիկորեն իրականացնելու նպատակով Ազատ Արշակյանը նրանց ծանոթացրել է սովետական իշխանությունը արատավորող հոդվածների հետ, դրդել է թռուցիկներ տարածելու միջոցով պայքարել «ազատ ու անկախ» Հայաստան ստեղծելու համար: Օգտագործելով նրանց միամտությունը, կրթական ցածր մակարդակը, ծանոթանալու համար Ռազմիկ Զոհրաբյանին է տվել ձեռագիր ոտանավորներ, որոնցում կոչ է արված Սովետական Հայաստանը դուրս բերել ՍՍՀՄ-ի կազմից, ծանոթանալու համար վկաներ՝ Թելման Մելոյանին եւ անչափահաս Կոստան Կարապետյանին է տվել դաշնակցության կուսակցության պարագլուխներից մեկի, 1918–1920թթ. դաշնակցության նախկին կառավարության պառլամենտի անդամ Միքայել Վարդանյանի 1932թ. Փարիզում հրատարակված «դաշնակցության կուսակցության պատմությունը» վերնագրով 500 էջից բաղկացած գիրքը, որը պահվելիս է եղել գրադարանում սահմանափակ ընթերցողների համար:

Այդ գրքում գովաբանվում է դաշնակցության կուսակցության եւ 1920թ. ժողովրդի կամքով ու նրանց կողմից տապալված դաշնակցական կառավարության գործունեությունը: Զրպարտորեն նշվում է, որ Սովետական Հայաստանում իբր հայ ժողովուրդը գտնվում է «զնդանի մեջ»: Մեկնաբանելով իր դաշնակցական գաղափարները Վարդանյանը 1917թ. Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը զրպարտչորեն անվանել է «բռնակալություն» եւ այլ իրականությանը չհամապատասխանող ստոր մտքեր:

Վարդանյանի նշված գիրքը խուզարկության ժամանակ հայտնաբերվել եւ առգրավվել է Ազատ Արշակյանի բնակարանից, որը կցված է սույն քրեական գործին որպես իրեղեն ապացույց:

Ամբաստանյալ Ռազմիկ Զոհրաբյանին տված ձեռագիր ոտանավորներում, որոնք խուզարկության ժամանակ հայտնաբերվել են նրա մոտից, հայ ժողոուրդը ներկայացվում է որպես «կախյալ ու անիրավունք», նրանցում կոչ է արված «միացյալ վրեժի», «միացյալ անկախ Հայաստան ստեղծելու» զրպարտչական ու վտանգավոր գաղափարները:

Մթագնելով Ռազմիկ Զոհրաբյանին, Ռազմիկ Մարկոսյանի, Գագիկ Առաքելյանի մտքերը, ի վերջո Արշակյանին հաջողվել է նրանց եւս ներգրավել Ա.Մ.Կ.-ի մեջ, անդամավճարներ է հավաքել ու հակասովետական գործունեության ակտիվ մասնակից է դարձրել:

Այս բոլորը հաստատված է ամբաստանյալ Ազատ Արշակյանի լրիվ հանձնառումով վկաներ՝ Գագիկ Առաքելյանի, Կոստան Կարապետյանի, Սուրիկ Բաղդասարյանի, Թելման Մելոյանի եւ մյուսների ցուցմունքներով, ձեռագրային փորձագետի եզրակացությամբ եւ գործին կցված իրեղեն ապացույց՝ հակասովետական գրականությամբ:

Փորձելով Ազատ Արշակյանին կանգնեցնել ուղղման ճանապարհի վրա, համաձայն ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1972թ. դեկտեմբերի 25-ի հրամանագրի, Ազատ Արշակյանը պետական անվտանգության կոմիտեի կողմից արդեն չորրորդ անգամ է նախազգուշացվել իր, պետականորեն վտանգավոր ու քայքայիչ գործունեության համար, սակայն նա համապաստասխան հետեւություններ դարձյալ չի արել: Ավելին, երբ պետ. անվտանգության կոմիտեի աշխատակիցները փորձել են այդ նպատակի համար Արշակյանին ՊԱԿ տանել, նա ակտիվ դիմադրություն է ցույց տալիս, որի համար 1974թ. մարտի 5-ին ժողդատարանի կողմից քր. օր-ի 207 հոդ. դատապարտվել է 2 տարի ազատազրկման (հ. 6, գթ. 291-293):

1973թ. ամռանը, ամբաստանյալ Ազատ Արշակյանը տեղեկանալով, որ անչափահաս Գագիկ Առաքելյանը նախկինում հանդիսացել է «Ամրոց» գաղտնի խմբակի անդամ, առաջարկել է նրան իր հերթին գաղտնի գործունեության համար մարդիկ հավաքագրել, առանց հաշվի առնելու Առաքելյանի տարիքը:

Գագիկ Առաքելյանը, կատարելով Արշակյանի հանձնարարությունը, գաղտնի գործունեության մասնակից է դարձրել գործով վկաներ Արամայիս Մանուկյանին, Լեւոն Ավետիսյանին, անչափահասներ՝ Արշակ եւ Արբակ Խաչատրյաններին, որոնցից «ազգային միացյալ կուսակցություն Ա.Մ.Կ.» գործունեության համար անդամավճարներ հավաքելով հանձնել է Արշակյանին:

Ընդլայնելով իր գործունեությունը, 1973թ. օգոստոսին ամբաստանյալ Ազատ Արշակյանը գծագրական թղթի վրա տրաֆարետի ձեւով ԱՄԿ-ի անունից լոզունգ տեքստ է պատրաստել ուղղված ռուս ժողովրդի դեմ եւ այպես կոչված «ազատ ու անկախ Հայաստան» ստեղծելու կոչով ու ներկի, սպունգի հետ միասին հանձնելով անչափահաս Գագիկ Առաքելյանին պարտավորեցրել է իր խմբակի անդամների միջոցով գրառումներ

կատարել Երեւան քաղաքի փողոցներում եւ այլ մարդաշատ վայրերում:

Այդ հանձնարարությունը ստանալուց հետո, Գագիկ Առաքելյանը, Լեւոն Ավետիսյանի հետ, տրաֆարետի օգնությամբ Թելմանի փողոցում, Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի ֆիլիալի շենքի, Հայէլեկտրոգործարանի մարզադաշտի եւ այլ տեղերում գրառումներ է կատաել:

Նույնանման, ռուս ժողովրդի դեմ ուղղված լոզունգ փորձել են գրել նաեւ Արամայիս Մանուկյանը եւ Արտակ Խաչատրյանը ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի շրջակայքում, սակայն չկարողանալով ճիշտ օգտագործել Ազատ Արշակյանի կողմից պատրաստված լոզունգի տրաֆերտը այրել են:

Արշակյանին մեղսագրված արարքի այդ մասերը հաստատված են Արամայիս Մանուկյանի, Արտակ Խաչատրյանի, Գագիկ Առաքելյանի, Լեւոն Ավետիսյանի, ցուցմունքներով այն մասին, որ իրենք իրոք նման գործողություններ կատարել են, Արշակյանի լրիվ հանձնառումով, դեպքի վայրի զննման արձանագրութուններով, որ թվարկված վայրերում իրոք ազգային թշնամանք առաջ բերող լոզունգներ են գրված եղել եւ գործի այլ փաստաթղթերով ու փաստական տվյալներով:

1973թ. հոկտեմբերին, ամբաստանյալ Ազատ Արշակյանը նույնանման ազգային թշնամանք առաջ բերող լոզունգների նոր, ավելի փոքր չափի տրաֆարետ պատրաստելով ներկի ու սպունգի հետ հանձնել է գործով վկա Սամվել Մուրադյանին Առաքելյանի եւ Կոստան Կարապետյանի մասնակցությամբ գրառումներ կատարելու համար:

Նշված վկաները իրենց հերթին ներգրավելով Արամայիս Մանուկյանին 1973թ. նոյեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը Թամանցիների փողոցի շուջ 10 հեռախոսախցիկներում գրառումներ են կատարել, սակայն բռնվել են միլիցիայի աշխատակիցներ, պարեկային ծառայության մեջ գտնվող Հակոբյանի եւ Միրզախանյանի կողմից, սակայն նրանց ակտիվ դիմադրություն ցույց տալով բոլորը դիմել են փախուստի:

Մեղադրանքի այդ մասը հաստատված է ինչպես Արշակյանի լրիվ հանձնառումով, այնպես էլ վկաներ Առաքելյանի, Մուրադյանի, Կոստան Կարապետյանի, Արամայիս Մանուկյանի ցուցմունքներով այն մասին, որ իրոք Արշակյանի հանձնարարությամբ իրենք նշված վայրերում տրաֆարետի միջոցով գրառումներ են կատարել (լոզունգներ) ու բռնվել են միլիցիայի աշխատակիցների կողմից: Հակոբյանի, Միրզախանյանի ցուցմունքներով այն մասին, որ Առաքելյանը եւ մյուսները իրենց կողմից բռնվել են հեռախոսախցիկներում տրաֆարետով լոզունգներ գրելիս եւ դիմադրություն ցույց տալով փախուստի են դիմել, առգրավված եւ գործին կցված տրաֆարետով, քիմիական փորձագետի եզրակացություններով, դեպքի վայրի զննման արձանագրություններով եւ գործի մնացած փաստական տվյալներով:

1973 թ. նոյեմբերին ամբաստանյալ Ազատ Արշակյանը քննությամբ ի հայտ չբերված անձանցից ձեռք է բերել 100 օրինակից ավելի «Փարոս-2 լրացուցիչ» միանգամայն հակասովետական բնույթի, ազգային թշնամանք առաջ բերող, գաղտնի հրատարակված թերթը հանձնարարել է Գագիկ Առաքելյանին եւ վկա Սամվել Մուրադյանին այդպիսիք տարածել Երեւանի մանկավարժական ինստիտուտի լսարաններում: Ընդ որում, Արշակյանը զգուշացրել է նրանց, որ թռուցիկները պետք է տարածել ռետինե ձեռնոցներ հագած վիճակում, նրանց վրա մատնահետքեր չթողնելու պաճառով:

Կատարելով Արշակյանի այդ հանձնարարությունը, գործով վկաներ Գագիկ Առաքելյանը եւ Սամվել Մուրադյանը 1973թ. նոյեմբերի 2-ին մուտք գործելով մանկավարժական ինստիտուտի շենքը սկսել են այդ թռուցիկ-թերթը տարածել, սակայն բռնվել են դասախոսների եւ ուսանողների կողմից, իսկ հավաքված թերթ-թռուցիկները կցվել

են սույն քրեական գործին որպես իրեղեն ապացույց:

«Փարոս-2 լրացուցիչ» թերթ-թռուցիկները տարածելուց որոշ ժամանակ անց Գագիկ Առաքելյանը կալանավորվել է եւ քրեական պատասխանատվության է կանչվել քր. օրի 69 եւ 206 պրիմ հոդվածներով ու 1974թ. հոկտեմբերի 3-ին Կոստան Կարապետյանի հետ դատապարտվել է երկու տարի ազատազրկման (տես արձանագրությունը կցված դատավճռի պատճենը):

Այսպիսով անաչափահաս Գագիկ Առաքելյանը եւ Կոստան Կարապետյանը ազատություններից զրկվել են ամբաստանյալ Ազատ Արշակյանի հանցավոր ու միտումնավուր գործողությունների հետեւանքով:

Արշակյանին մեղսագրված արարքի այդ մասը հիմնավորված է Գ. Առաքելյանի, Ա. Մուրադյանի ցուցմունքներով այն մասին, որ 1973թ. նոյեմբերի 2-ին մանկավարժական ինստիտուտում թռուցիկներ են տարածել Ազատ Արշակյանի հանձնարարությամբ, վկաներ Սեդա Միրզոյանի, Սմբատ Մամեդովի, Հովհաննես Պետրոսյանի ցուցմունքներով որոնք հաստատեցին, որ նշված օրը Առաքելյանը եւ Սամվել Մուրադյանը իրենց կողմից բռնվել են «Փարոս-2 լրացուցիչ» թերթ-թռուցիկները պատրաստելիս:

Հաստատելով թվարկած վկաների ցուցմունքները, ամբաստանյալ Ազատ Արշակյանը չժխտեց, որ Գագիկ Առաքելյանը թռուցիկները տարածել է իր հանձնարարությամբ եւ կատեգորիկ հրաժարվել հայտնել թե՝ որտեղից է ինքը ձեռք բերել «Փարոս-2-րդ լրացուցիչ» թերթ-թռուցիկները պատճառաբանելով, որ «չի ցանկանում մեկ» «հայրենասերի եւս քրեական պատասխանատվության ենթարկելու պատճառը դառնալ»:

Բացի թվարկած ապացույցներից, վերոգրյալը հիմնավորված է նաեւ առգրավված ու գործին կցված թռուցիկներով, ռետինիե ձեռնոցներով ու այդ բոլորի մասին կազմված արձանագորություններով:

Գործով ամբաստանյալ Ռազմիկ Մարկոսյանը, ինչպես Ազատ Արշակյանը եւ Ռազմիկ Զոհրաբյանը հանդիսանալով «ազգային միացյալ կուսակցության» անունը կրող գաղտնի կազմակերպության անդամ, 1973թ. օգոստոսի 27-ին Երեւանի Օրջոնոգիձեի պողոտայի նո.1 բնակելի շենքի պատին նախապես պատրաստած տրաֆարետով ազ - գային թշնամանք առաջ բերող լոզունգ է գրել ու դիմել է փախուստի, սակայն ճանաչվել է գործով վկա Վիկտոր Բաբայանի կողմից, որի ցուցմունքները հրապարակման միջոցով քննության է առնվել կոլեգիայի կողմից: Ամբաստանյալ Մարկոսյանը մեղադրանքի միայն այս մասը չի ընդունում:

Բացի այն, որ բոլոր երեք ամբաստանյալները հանդիսացել են գաղտնի հակասովետական կազակերպության անդամ, նրանք սովետական իշխանությունը թուլացնելու նպատակով, սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերուրանքներ պարունակող գրականություն են պահել, պատրաստել, որոշ դեպքում տարածել թռուցիկի, ոտանավորների, երգերի, քառյակների եւ այլ գրառումների ձեւով: Այսպես օրինակեւ

Ամբաստանյալ Ազատ Արշակյանը 1973թ. ընթացքում կազմել, պահել, ձեռք է բերել եւ տարածել «կոչ հայերին», «ելնել նորից», «Ահազնգ» եւ այլ վերնագրորեվ կոչեր ու թռռուցիկներ,

Մեկ այլ գործով քր. օրի 65 եւ 67 հոդվածներով դատապարտված Աշոտ Նավասարդյանից, որը իր կնոջ եղբայրն է ստացել է «ի հարություն» թռուցիկը ու արտագրելով պահել է իրեն մոտ:

Ամբաստանյալ Ռազմիկ Զոհրաբյանը պահել է նաեւ դաշնակցություն կուսակցութ-

յան անդամ Լ. Մոզեյանի «Հայկական գաղթաշխարհը իր գոյության հարցի առջեւ» Փարիզում հրատարակված գիրքը:

Ռազմիկ Մարկոսյանը պահել է գաղտնի պատրաստված ֆոտոթռուցիկի տեքստ: Նա բազմացնելու նպատակով 1974թ. փետրվարին պատրաստել է «Վարդանանց պատերազմի նահատակների հիշատակին» հակասովետական բովանդակության թռուցիկը: Այդ թվարկած բոլոր թռուցիկներում եւ այլ տեքստերում որոնք առգրաված են ամբաստանյալներից եւ կցված են սույն քրեական գործին հակասովետական բնույթի են: Սրանցում կոչ է արվում պայքարել ռուս ժողովրդի դեմ, որոնք իբր «բռնանաում են հայ ժողովրդի սուրբ իրավունքներին» կոչեր են արվում ,դուրս բերել Հայաստանը ՍՍՀՄ-ի կազմից ու դարձնել անկախ, պատճառաբանելով, որ Սովետական Միությունում հայերը իբր «դատապարտված են ստրկության» եւ այլ հերուրանքներ:

Ռազմիկ Զոհրաբյանը հանդիսանալով ՀամԼԿԵՄ անդամ աշխատանքի ընդունվելիս թաքցրել է այդ հանգամանքը ու հաշվառման չենթարկվելով եւ անդամավճար չմուծելով մեխանիկորեն դուրս է մնացել կոմերիտմիության շարքերից: Զոհրաբյանը կոլեգիային բացահայտ հայտատարեց, որ այլեւս չի ցանկանում ՀամԼԿԵՄ անդամ լինել, որովհետեւ ինքը «ազգային միացյալ կուսակցության» անդամ է:

Ամբաստանյալներ Արշակյանը, Զոհրաբյանը եւ Մարկոսյանը թվարկած հանցավոր արարքները կատարելիս հիմանականում օգտգվել են դաշնակցության կուսակցությնան պարագլուխների կողմից արտասահմանում հրապարակվող թերթերից, ամսագրերից եւ գրքերից, իսկ առանձին դեպքերում հորինել են իրենք՝ հատկապես Արշակյանը: Սահմանափակ օգտագործման համար պահվող գրքերից օգտվելիս Արշակյանը դիտավորյալ այնպիսի մեջբերումներ է կատարել, որոնք արատավորվում են մեր իրականությունը, սովետական պետական ու հասարակական կարգերը:

Հայ ժողովուրդի պատմությունը ուսումնասիրելիս հիմնականում օգտվել են մինչեւ խորհրդայնացումը հրապարակված աղբյուրներից, որոնցում հաճախ պատամական դեպքերը հրամցվել են ընթերցողներին աղավաղված ձեւով, իսկ որոշ իրադրություններ դաշնակցության կուսակցության ոգով: Չունենալով համապատասխան կարողություն պատմական դեպքերին եւ նրանց հաջորդող իրադրություններին ճիշտ մոտեցում չեն ունեցել, պարփակվել են իրենց մեջ, իրենց համարել են «հայրենասերներ» առանց պարզորոշ պատկերացում ունենալու «հայերնիք», «հայրենասեր» հասկացություններ մասին:

Ամբաստանյալները չեն հետաքրքրվել ՍՍՀՄ ժողովրդի պատմությունով, միջնակարգ դպրոցներում սովորելիս ցուցաբերել են վատ եւ միջակ առաջադիմություն: Զոհրաբյանը եւ Մարկոսյանը նույնիսկ մնացել են 8-9-ը դասարաններում: Մարկոսյանը եւ Զոհրաբյանը լինելով սահմանափակ մտքի տեր անձնավորություններ իրենց ուժերով նույնիսկ չեն կարողացել ավարտել միջնակարգ դպրոցը եւ հասունության ատեստատ ձեռք բերելու նպատակով դիմել են նոր հանցագործության:

Ռազմիկ Մարկոսյանը 1966–1967թթ. ուսումնական տարում սովորել է նո. 11 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում եւ վատ առաջադիմության պատճառով մնացել է նույն դասարանում: 1968թ. դպրոցից տեղեկանք ստանալով, որ փոխադրվել է 9-րդ դասարան «իններորդ» բառը կեղծիքի միջոցով փոխել է «տասերորդ» բառով եւ 1969թ. այդ կեղծված տեղեկանքը ներկայացնելով նո. 32 միջնակարգ դպրոց ընդունվել է 11-րդ դասարան ու զարտուղի ճանապարհով հասունության ատեստոտ ստացել:

Մյուս ամբոստանյալ Ռազմիկ Զոհրաբյանը հանցավոր ճանապարհով ձեռք բերելով կեղծ տեղեկանք այն մասին, որ իբր 1966–1967թթ. ուսումնական տարում ավար-

տել է Ապարանի բաներիտ միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանը, այն ներկայացրել է նույն՝ նո. 32-րդ դպրոցին ու ընդունվելով 11-րդ դասարան հասունության ատեստատ է ստացել:

Թվարկված բոլոր էպիզոդները հաստատված են ոչ միայն ամբաստանյալների լրիվ հանձնառումով, այլեւ գործին կցված թռուցիկներով, գրքերով, այլ գրառումներով, վկաներ Բուդյոննի, Արմենակյանի, Անդրանիկ Մեդոյանի, Գագիկ Խաչատրյանի, Վարդանյանի, ինչպես նաեւ Աշոտ եւ Կարինե Նավասրդյանների, Անահիտ Արշակյանի դատաքննության ժամանակ հրապարակված ցուցմունքներով, որի առթիվ ամբաստանյալներ Արշակյանը, Զոհրաբյանը եւ Մարկոսյանը ոչ մի առարկություններ չարեցին:

Բացի այդ ամբոստանյալներին մեղսագրված արարքը թվարկած մասերը հիմնավորված է նաեւ ձեռագրային փորձագետի եզրակացություններով այն մասին որ առգրավված թռուցիկները գրված են իրենց կողմից, գլավլիտի տեղեկանքներով, կեղծված տեղեկանքներով, դասամատյաններով եւ այլ ապացույցներով (հ.5, գթ. 18, 58, 78-80, 112-114, 156, 277, 304-368, հ.6 192-195, 201, 205-206 եւ այլն):

Ամբաստանյալներ Արշակյանը, Զոհրաբյանը եւ Մարկոսյանը տեսնելով ու համոզվելով, որ մինչ այդ կատարած գաղտնի, հակասովետական գործողությունները ոչ մի արձագանք չեն գտնում Երեւանի քաղաքի բնակչության մեջ, որոշել են առավել ընդլայնել իրենց գործունեությունը, հակասովետական թռուցիկները պատրաստել եւ տպագրել մեքենայի միջոցով մեծ քանակությամբ բազմացնել ու տարածել Երեւանում:

Որպեսզի ոչինչ չխոչնդոտի իրենց գործողությանը, ամբաստանյալները ամսեկան 50 ռ. վարձով Աարի-թաղի 7-րդ փողոցի 52 շենքում մեկուսացված, առանձին մուտքով սենյակ են վարձել, որի բալանիները գտնվել են ամբաստանյալներից յուրաքանչյուրի մոտ ու այդ սենյակը օգտագործելով կոնսպիրատիվ նպատակների համար ձեռնամուխ են եղել տարբեր բովանդակությամբ Ազատ Արշակյանի կողմից գրված «հայեր» վերնագրով երկու թռուցիկների տպագրությանը:

Այդ նպատակի համար ամբաստանյալներ Ազատ Արշակյանը, Ռազմիկ Մարկոսյանը եւ Ռազմիկ Զոհրաբյանը 1973թ. աշնանը Երեւանի երկրորդական գունավոր մետաղ - ների վարչության ընդունման եւ վերամշակման ցեխի թափոնների կետից հավաքել են օգտագործված մատրիցաներ, տպատառեր, արճիճ, պատրաստել են սեղմիչ, այլ հարմարանքներ: Մարկոսյանը կոնսպիրատիվ սենյակ է բերել շարժական գազօջախ ու այդ աշխատանքում ներգրավելով նաեւ գործով վկա Յուրիկ Բաղդասարյանին ձեռնամուխ են եղել թռուցիկների տեքստի կլիշաների հավաքման եւ ապա տպագրմանը: Գործով վկա Յուրիկ Բաղդասարյանին կլիշեյի պատրաստման ձեւը ու եղանակը սովորեցրել է Ռազմիկ Մարկոսյանը, որից նա յուրաքանչյուր ամիս Մ.Մ.Կ. կազմակերպության անդամավճար է հավաքել:

1973թ. նոյեմբերին եւ դեկտեմբերին ամբաստանյալները տպագրել են հարյուրավոր օրինակներ «Հայեր» վերնագիրը կրող 2 առանձին տեքստերի թռուցիկները եւ տարածել են Երեւանի Օրջոնիկիձեի, Լենինի պողոտաներում, Աբովյանի, Բարեկամության, Սվերդլովի, Խանջյանի, Չարենցի, 26-կոմիսարների եւ այլ փողոցներում:

Այդ «հայեր» վերնագրով թռուցիկները պարունակում են զրպարտիչ գրառումներ հայ ժողովրդի իբր «ստրկացած դրություն», «ռուսական շովինիզմ», «Ռուսական ցիվիլիզացված գենոցիդի» սովետական կառավարության եւ ԱՄԿԿ-ի կողմից տարվող ազգային քաղաքականությունը արատավորող այլ հերուանքներ:

Ինչպես պետք է սպասվեր այդ թռուցիկների գերակշռող մասը բնակիչների կողմից հանձնվել են պետական անվտանգության կոմիտեին, իսկ մի մասը առգրավվել է կոնս-

պիրատիվ սենյակի խուզարկության ժամանակ:

Երբ հայտնի է դարձել, որ պետական անվտանգության կոմիտեն քննություններ է անում «հայեր» թռուցիկները տպագրելու եւ գաղտնի տարածելու առթիվ, հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով ամբաստանյալ Ռազմիկ Մարկոսյանը շուրջ 12կգ. քաշի տպագրական տառերը, մամլիչը, ներկը եւ այլ հարմարանքները թաքցրել է Երեւանի ծայրամասի թաղերից մեկում: Կալանավորվելուց հետո Մարկոսյանը ցույց է տվել թաքստոցը, որտեղից եւ հայտնաբերվել ու որպես իրեղեն ապացույց գործին են կցվել տպագրական հարմարանքները եւ տառերը:

Մեղադրանքի այս մասը աննշան էական ոչ մի նշանակություն չունեցող փոփոխություններով ընդունեցին ամբաստանյալներ Արշակյանը, Զոհրաբյանը եւ Մարկոսյանը: Բացի այդ, թռուցիկներ տպագրելու, բազմացնելու, տարածելու փաստը հաստատված է վկա Յուրիկ Բաղդասարյանի ցուցմունքով այն մասին, որ «հայեր» թռուցիկը իրոք տպագրվել է վարձած Սարի-թաղի 7-րդ փողոցի 52 սենյակում ամբաստանյալների կողմից նաեւ իրեն օժանդակությամբ, թաքստոցից հայտնաբերված տպագրական հարմարանքներով ու գործիքներով, քիմիական փորձագետի եզարկացություններով այն մասին, որ խուզարկությամբ հայտնաբերված ներկի բաղադրությունը/հ. 5 գթ.31, 102 / լիովին համապատասխանում են թռուցիկների տառերի ներկի բաղադրությանը: Տեխնիկական փորձաքննության ակտով այն մասին, որ հայտնաբերված տպատառերը եւ այլ հարմարանքները լրիվ բավարար են «հայեր» վերնագիրը կրող թռուցիկները տպագրելու համար, վկաներ Արամ Քոսյանի, Ավագ Ավանեսյանի, Համլետ Օհանյանի, Ալբերտ Փերիխանյանի, Ֆելիքս Գրիգորյանի, Ռոբերտ Անանյանի ցուցմունքներով, որ իրենց բնակարանների փոստարկղներում իրոք հայտնաբերվել են «հայեր» վերնագրով թռուցիկներ ու ներկայացրել են պետական անվտանգության կոմիտեին, ամբաստանյալների կողմից տպատառերը եւ մատրիցաները վերցնելու ու դեպքի վայրը ցույց տալու արձանագրություններով ու լուսանկարահանումներով-հ.1 գթ. 201,208-209, 222-230, հ.2գթ. 103-109, 126– 130,241-244) ինչպես նաեւ գործում եղած մնացած ապացույցներով:

Իրենց հետագա գործողություններով ավելի հեռու են գնացել ամաբստանյալներ Ռազմիկ Զոհրաբյանը եւ Ազատ Արշակյանը: Նրանք թշնամաբար տրամադրված լինելով սովետակն կարգերի ու սոցիաիստական սիստեմի հանդեպ համարելով իրենց հակասովետական գաղտնի կազմակեւպության անդամենր ու ակտիվ մասնակիցներ, իրենց գաղափարական ու հակասովետական մտքերը ավելի ցայտուն, տպավորիչ ազդեցիկ ու ցինիկ ձեւով արտահայտելու նպատակով որոշել են հրկիզման միջոցով ոչնչացնել ՍՄԿԿ-ի հիմնադիր Վլադիմիր Իլիչի Լենինի 16.75 0.5 մետր չափսերի կենտրոնական հրապարակի պատմության թանագրանի շենքի կամարին տեղադրված մեծադիր նկարը:

Նրանք դիտավորյալ որոշել են Լենինի նկարը այրել նրա մահվան օրվա նախօրյակին եւ այն ժամանակ, երբ ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Գրոմիկոն Խորհրդային Հայաստանը «Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգեւատրելու կապակցությամբ ժամանած է եղել Երեւան:

Համաձայն նախապես պայմանավորվածության, 1974թ. հունվարի 20-ի ժամը 20-ի սահմաններում, իրենց հետ ունենալով կանեստրով բենզին, դանակ եւ հրկիզման համար Զոհրաբյանի կողմից հատուկ պատրաստված ջահ, բենզինը լցնելով Լենինի նկարին հան - որոնեն վտանգավոր եղանակով վառել են Լենինի նկարը ու հեռացել դեպքի վայրից: Հավաքված քաղաքացիները, մինչեւ հրշեջ խմբի ժամանելը հանգցրել են նկարը:

Պատմության թանգարանը պահպանող միլիցիաներ, գործով վկա Մամե Սայադյա - նը հետապնդելով Զոհրաբյանին եւ Արշակյանին կարողացել է բռնել միայն Ռազմիկ Զոհրաբյանին ու ներկայացրել դիվիզոն:

Ինչպես Ռազմիկ Զոհրաբյանը, այնպես էլ Ազատ Արշակյանը նախաքննության ընթացքում ընդունելով, որ Լենինի դիմանկարը իրենք են հրկիզել միասին, մանրամասն ցուցմունք են տվել նախապատրաստական շախտանքների եւ հրկիզման շարժառիթների մասին (հ. 1 գբ. 100-106, 149-150, հ.2 73-78, 84-90, 110-113, 120), սակայն դատաքննության ժամանակ Զոհրաբյանը անհեթեթ պատճառաբանությամբ հրաժարվեց իր ցուցմունքնրի մի մասից հայտարարելով, որ Լենինի նկարը հրկիզել է ինքը, մենակ, առանց Արշակյանի մասնակցության:

Դատաքննության ժամանակ Արշակյանը պատճառաբանեց, որ Լենինի դիմանկարի հրկիզումը ինքը վերցրել է նաեւ իրեն վրա նպատակ ունենալով շեղել քննական օրգանների ուշադրությունը, այլապես խորացված քննություն կատարելու դեպքում կարող էին կալանավորել ԱՄԿ կազմակերպության այլ անդամներ եւ թռուցիկները տարածող այլ մասնակիցներ:

Ռազմիկ Զոհրաբյանը փոփոխելով իրեն ցուցմունքները բացատրեց, որ Ազատ Արշակյանի, որպես դիմանկարի հրկիզման մասնակցի նկատմամբ ցուցմունք է տվել քննիչի թելադրանքով, որպեսզի պատճառաբանությունը կոլեգիային հավատ ներշնչել չի կարող մանավանդ, որ ՊԱԿ-ի քննչական մեկուսարանում գտնված ժամանակ ամբաստանյալները գաղտնի ձեւով նամակներ են փոխանակել միմյանց ու պայմանավորվել են հետագայում արվելիք ցուցմունքների մասին:

Դեռ նախաքննության ընթացքում, ինչպես ամբաստանյալ Արշակյանը, այնպես էլ Զոհրաբյանը երկար ժամանակ հրաժարվել են ցուցմունք տալուց նպատակ ունենալով նսեմացնել իրենց դերը կատարած հանցագործությունների մեջ: Հետագայում համոզվելով , որ քննչական օրգանին ամբողջությամբ հայտնի է իրենց կողմից կատարած բոլոր հանցվոր արարաքները, որոշել են ճշտությամբ ցուցմունք տալ: Ահա դրանից հետո է, որ Արշակյանը եւ Զոհրաբյանը մանրամասն ցուցմունք են տվել թե ինչպես են միասին հրկիզել Լենինի դիմանկարը: Իսկ այն, որ նկարի հրկիզումը կատարվել է երկու անձի կողմից հաստատվեց գործով վկա Մամե Սայադյանի ցուցմունքով:

Վկաներ Վիկտոր Նոսը,Վիտալի Բոլոսովը, Կնյազ Մանուկյանը կոլեգիային մանրամսն ցուցմունք տվեցին թե ինչպես են հանգցրել այրվող Լենինի դիմանկարը: Ռազմիկ Զոհրաբյանի կալանավորվելուց հետո, լաբորատոր ստուգման է ենթարկվել նրա հագուստները, որոնց վրա հայտնաբերվել է բենզինի հետքեր (հ. 5 գբ. 5):

Փորձագետների եզրակացությամբ հիմնավորված է, որ այրված դիմանկարը այլեւս հնարավոր չէ ծառայեցնել իրեն նպատակին (հ.5 գբ. 66): Գործին է կցված նաեւ դեպ - քի վայրում հայտնաբերված ջահը եւ կիսայրված կոնիստրը, որի մեջ բենզին է եղել:

Զոհրաբյանի եւ Արշակյանի կողմից պետությանը պատճառած պատճառած վնասը կազմում է երկու հազար յոթ հարյուր վաթսուն չորս (2764) ռուբլի:

Այսպիսով՝ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան ամբաստանյալներ Ազատ Արշակյանին մեղսագրված արարքը ՀՍՍՀ քրեւօրի 65 հոդ. առաջին մասով, 67 հոդ. 96 հոդ. 2-րդ մասով եւ 231 հոդվածով,

Ռազմիկ Զոհրաբյանին քր. օրի 65 հոդ. 1-ին մասով, 67 հոդ. 96 հոդ. 2-րդ մասով եւ 213 հոդ. 3–րդ ամսով եւ Ռազմիկ Մարկոսյանին քր. օրի 65 հոդ. 1-ին մասով, 67 հոդ. 213 հոդ. 1-ին եւ 3-րդ մասերով մեղսագրված արարքը լիովին հիմնավորված է համա - րում:

Ամբողջ դատաքննության ընթացքում ամբաստանյալները հիմնականում չժխտելով իրենց կողմից կատարած հանցագործությունները մեղայականով հանդես չեկան, չզղջացին կատարծի համար: Ըմբոստանալու, օրենքից չբխող բազմիցս անհեթեթ պահանջներ ներկայացնելու միջոցով փորձում էին ձախողել դատաքննությունը:

Պաշտպանական ճառերում Զոհրաբյանը եւ Մարկոսյանը բացահայտ ափսոսանք հայտնեցին, որ ավելի վաղ ժամնակից չեն հանդիսացել «ազգային միացյալ կոսակցություն» անունը կրող գաղտնի կազմակերպության անդամ: Մարկոսյանը հայտարարեց, որ այսուհետեւ եւս կշարունկի նման գործողություններով զբաղվել, իսկ Զոհրաբյանը պնդեց, որ Լենինի դիմանկարը հրկիզելով ինքը իր բողոքն է հայտնել մեր կարգերի դեմ:

Վերջին խոսքերում ամբաստանյալներ Արշակյնաը, Զոհրաբյանը եւ Մարկոսյանը դարձյալ մեղայականով հանդես չեկան: Հայտարարելով, որ իրենք «ազգային միացյալ կուսակցություն» զինվորներ են, չեն հրաժարվում իրենց գաղափարներից եւ այսուհետեւ եւս կշարունակեն «ազատ ու անկախ» Հայաստանի համար պայքարել:

Վերոգրյալի հիմնա վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օրի 293-294 հոդվածներով գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալներից՝ Ազատ Լեւիկի Արշակյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օ - րի 65 հոդ. առաջին մասով, 67 հոդ. եւ դատապարտել ազատազրկման յոթ (7) տարի ժամանակով, երեք տարի հետագա աքսորով: Քր. օրի 96 հոդ. 2-րդ մասով Արշակյանին ազատազրկել նույնպես յոթը տարի ժամանակով, իսկ նույն օրենսգրքի 231 հոդ. դատապարտել ազատազրկման երեք տարի ժամանակով: Քրեական օրենսգրքի 37 հոդ. համակցությամբ դատապարտյալ Արշակյանին վերջին հաշվով թողնել կրելու յոթը տա - րի ազատազրկումը, երեք տարի հետագա աքսորով, որպիսինը կրելու ղ խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Սույն Ա. Լ. Արշակյանի նկատմամբ Երեւանի Լենինյան շրջժողդատարանի 1974թ. մարտի 5-ի դատավճռով, քր. օրի 207 հոդ. սահմանված պատիժ՝ երկու տարի ազատազրկումը կալանված համարել սույն դատավճռով:

Ազատ Լեւիկի Արշակյանի կալանքի սկիզբը հաշվել 1974թ. ապրիլի 9-ից:

Ռազմիկ Արտավազդի Զոհրաբյանին հանցավոր ճանչել քր. օրի 65 հոդ. 1-ին մասով, 67 հոդ. եւ դատապարտել ազատազրկման յոթը տարի ժամանակով, երեք տարի հետագա աքսորով: Քր. օրի. 96 հոդ. 2-րդ մասով Զոհրաբյանին դատապարտել ազատազրկման դարձյալ յոթ (7) տարի ժամանակով, իսկ քր. օրի 213 հոդ. 3-րդ մասով ազատազրկել երկու տարի ժամանակով: Քր. օրի 37 հոդ. համակցությամբ դատա - պարտյալ Ռազմիկ Զոհրաբյանին վերջին հաշվով թողնել պատիժը կրելու յոթը տարի ազատազրկումը, խիստ ռեժիմի աշխատանքային գաղութում, երեք տարի հետագա աքսորով, կալանքի սկիզբը հաշվել 1974թ. հունվարի 21-ից այսինքն արգելանքի վերցնելու օրվանից:

Ռազմիկ Գրիգորի Մարկոսյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քր. օրի 65 հոդ. 1-ին մասով, 67 հոդ. եւ դատապարտել ազատազրկման չորս (4) տարի ժամանակով, երկու տարի հետագա աքսորով: Քր. օրի 213 հոդ. 1-ին մասով Ռազմիկ Մարկոսյանին ազա - տազրկել երկու տարի ժամանակով, նույն հոդվածի 3-րդ ամսով նույնպես երկու տա-

րի ժամանակով: Քր. օրի 37 հ. համակցությամբ վերջին հաշվով Ռազմիկ Մարկոսյանին թողնել պատիժը կրելու չորս (4) տարի ազատազրկումը, խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, երկու տարի հետագա աքսորով:

Դատապարտյալ Ռազմիկ Գրիգորի Մարկոսյանի կալանքի սկիզբը հաշվել 1974 թ. հունիսի 19-ից:

Իրեղեն ապացույցները, որոնք կցված են քրեական գործին թողնել գործում: Մ. Վարդանյանի «Դաշնակցության կուսակցության պատմություն» Լ. Մոզեանի «Հայ գաղթաշխարհը իր գոյության հարցականին առաջ» եւ պոլիգրաֆիկական տեղեկատու գրքերը հանձնել հանրային գրադարանին:

Քննիչի 1974թ. օգոստոսի 20-ի /հ.թ.գթ.197-200/ որոշմն 1-12 կետերում նշված իրեղեն ապացույցները ոչնչացնել: Ոչնչացնել նաեւ նույն որոշման 16, 23– 25, 41-42 կետերում նշված իրեղեն ապացույցները: Որոշման մեջ (13-15 կետեր) թվարկած գազօջախը, բալոնները և էլեկտրական գործիքը (դռել)որպես հանցագործության առարկա ոչնչացնել քանի, որ իրենցից նյութական արժեք այլեւս չեն ներկայացնում: Որոշման 22 կետը նշված դասամատյանը վերադարձնել Ապարանի շրջանի գիշերօթիկ դպրոցին:

Դատապարտյալներ Ռազմիկ Զոհրաբյանից եւ Ազատ Արշակյանից համապարտ կարգով բռնագանձել երկու հազար յոթը հարյուր վաթսուն չորս (2764) ռուբլի, հօգուտ Երեւանի քաղսովետի գործկոմի կոմունալ հիմնարկների եւ բարեկարգման վարչության:

Ռազիկ Զոհրաբյանի բնակարանիկց առգրավված ռադիոընդունիչը, մագնիտոֆոնը ձեռքի ժամացույցը եւ 68ռ. 47կ. գուսմարը բռնագանձել պատճառած վնասի հատուցման դիմաց:

Զոհրաբյանին եւ Արշակյանին հասանելիք երկու հարյուր յոթը ռուբլի 99կ. (207ռ. 99կ.) փոխանցել քաղսովետի հաշվին որպես պատճառած վնասի հատուցում: Որոնցից 58ռ. 17կ. Զոհրաբյանի հասանելիք աշխատավարձն է, իսկ 149 ռ. 82կ. Ազատ Արշակյանի:

Դատավճիռը վերջնական է վճռաբեկության կարգով գանգատարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություններ**
ԻՍԿԱԿԱՆԱԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

28/10-74 թ.
Հ. Ս.

Պարույր Հայրիկյան

Պարույր Արշավիրի Հայրիկյանի նկատմամբ 1974 թ. նոյեմբերի դատավճիռը երրորդն էր: Առաջին անգամ հակախորհրդային ագիտացիայի եւ պրոպագանդայի համար նա 4 տարի ազատազրկման էր դատապարտվել 1970-ին: 1973-ին ազատ արձակվելուց հետո կրկին շարունակում է ընդհատակյա գործունեությունը: Ակտիվացնում է իր կողմից գլխավորվող ԱՄԿ կառույցները, կազմակերպում է նոր կառույցներ: Նրա գլխավորությամբ սկսում են գործել իրարից անկախ ԱՄԿ մի քանի մասնաճյուղեր: Տարածվում են թռուցիկներ, ԱՄԿ պաշտոնաթերթ «Փարոսը», տեսանելի վայրերում՝ շենքերի պատերին Հայաստանի անկախության մասին կարգախոսներ են գրվում: ՊԱԿ-ն օպերատիվ ճանապարհներով կարողանում է պարզել, որ այս ամենի կազմակերպիչը Հայրիկյանն է, եւ նա 1974-ի փետրվարին՝ իր նկատմամբ սահմանված ոստիկանական հսկողությունից բխող սահմանափակումները խախտելու շինծու մեղադրանքով ձերբակալվում եւ մարտի 5-ին ՀԽՍՀ քր. օր.-ի 217[1] հոդվածով (վարչական հսկողության կանոնները չարամտորեն խախտելը) դատապարտվում է 2 տարի ազատազրկման: Սա բավարար չհամարելով, օրեր անց՝ մարտի 29-ին նոր մեղադրանք են ներկայացնում՝ այս անգամ արդեն ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 2-րդ մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով: Ուղղակի ապացույցներ, որ Հայրիկյանն է 1973-74 թթ. գործողությունների կազմակերպիչը՝ ՊԱԿ-ը չուներ: Մեղադրանքի հիմքում որպես, իբր, հակախորհրդային նյութեր՝ դրվում են 1970-73 թթ. կալանավայրի գրաքննության կողմից ընկերներին ու տարբեր կազմակերպությունների հասցեագրված Հայրիկյանի՝ առգրավված եւ այդպես էլ հասցեատերերին չհասած նամակները եւ մեկ մարդուց՝ Ռուբեն Խաչատրյանից կորզված ցուցմունքները: Թե ինչ միջոցներով էին Պետանվտանգության մարմինները Խաչատրյանից կորզել այդ ցուցմունքները, հայտնի չէ, բայց փաստ է, որ այդ մեթոդների հետեւանքով Ռուբեն Խաչատրյանը հոգեկան ծանր հիվանդություն ձեռք բերեց ու ի վերջո՝ դրա պատճառով էլ հեռացավ կյանքից: 1974-ի նոյեմբերին Պարույր Հայրիկյանը դատապարտվում է 7 տարի ազատազրկման եւ 3 տարի աքսորի: Պատիժը կրել է սկզբում Մորդովիայի, այնուհետեւ՝ Պերմի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում:

Պարույր Հայրիկյան
1974 թ.

Պարույր Հայրիկյան, Ստեփան Զատիկյան
Աշոտ Նավասարդյան 1973 թ.

Պարույր Հայրիկյանի գործով մարտի 5-ին կայացված դատավճիռը

ԳՈՐԾ Հ. 1-94 1974թ.

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Երեւան քաղաքի Օրջոնոգիձեի շրջանի ժողդատարանը հետեւյալ կազմով՝

Ժողդատավոր՝	**Ժ. Ստեփանյան**
Ժողատենակալներ՝	**Ս. Խաչատրյան**
	Ս. Ստեփանյան
Քարտուղարությամբ՝	**Ս. Նալբանդյան**
Դատախազ՝	**Ս. Քեշիշյան**

1974թ. մարտի 5-ին

Դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ մեղադրանքի՝ Պարույր Արշավիրի Հայրիկյանի, ծնվել է 1949թ. ՀՍՍՀ Երեւանում, ազգությամբ հայ, ամուրի, խնամքին ոչ ոք, միջնակարգ կրթությամբ, դատված, աշխատել է Սովետաշենի տրիկոտաժի ֆաբրիկայում որպես էլեկտրիկ, բնակվել է Սովետաշենի 14 փող. հ.3 բնակարանում, ներկայումս Երեւանի հ. 1 քննչական մեկուսարանի կալանավոր է, կալանքի տակ է 1974թ. փետրվարի 12-ից, մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր-ի 217[1] հոդ., առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչեց:

Դատաքննությամբ եւ գործի տվյալներով պարզվեց հետեւյալը՝ գործով ամբաստանյալ Պարույր Արշավիրի Հայրիկյանը 1969թ. դատապարտվելով ՀՍՍՀ Գերագույն դատարանի կողմից 4 տարվա ազատազրկման ՀՍՍՀ քր. օր-ի 65 հ. 1 մասով, ազատազրկման վայրում բնութագրվել է բացասաբար: Կալանավայրից ազատվելուց հետո Հայրիկյանի նկատմամբ 1973թ. հուլիսից կազմվել է վարչական հսկողության գործ: Գտնվելով հսկողության տակ, Հայրիկյանը սիստեմատիկորեն եւ չարամտորեն խախտել է սահմանված սահմանափակումները, հաճախ առանց թույլտվության բացակայել է քաղաքից, չի ներկայացել ՆԳ բաժին, որի պատճառով երկու անգամ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 30 եւ 40 ռուբ. դրամական տուգանքի (տես գ.թ. 27,31), իսկ 1973թ. նոյեմբերի 19-ին Սպանդարյանի ժողդատարանի կողմից ենթարկվել է 3-օրյա կալանքի: Ըստ սահմանված սահմանափակումների Հայրիկյանը ժամը 19-ից հետո պետք է գտնվեր տանը, սակայն ըստ ստուգումների տնից բացակայել է 7/2-1974թ., իսկ 8/2-1974թ. աշխատանքի վայրում խաբելով, որ միլիցիայի կանչով նա գնում է ՆԳ բաժին, բացակայել է աշխատանքից: Բացի այդ, պարզվել է, որ Հայրիկյանը բազմիցս առանց թույլտվության մեկնել է Ալավերդի, Գառնի, Արարատ եւ այլ շրջաններ: Առաջադրված մեղադրանքում Հայրիկյանը իրեն մեղավոր չճանաչեց, նույնը չճանաչեց նաեւ ժողդատարանում, պատճառաբանելով, որ ինքը ոչ թե խուսափել է

վարչական հսկողության ենթարկվելուց, այլ ցանկացել է ման գալ եւ տեսնել Հայաստանի շրջանները: Այսպիսով Հայրիկյանը մասնակիորեն ընդունել է, որ թեպետ առանց նախապես ՆԳ բաժնին տեղյակ պահելու ինքը իրավունք չի ունեցել դուրս գալ Երեւանից, սակայն ինքը մեկնել է տարբեր շրջաններ: Բացի ամբաստանյալի մասնակի խոստովանությունից, Հայրիկյանի հանցանքն ապացուցված է նաեւ վկաներ՝ միլբաժնի տեղամասային տեսուչներ Գաբոյանի, Սերյանյանի, միլաշխատակից Ղազարյանի, Հայրիկյանի մայր՝ Աբրահամյանի ցուցմունքներով եւ գործի ողջ տվյալներով: Ժաղդա - տարանը ապացույցները բավարար համարելով գտնում է, որ Հայրիկյանի հանցանքը համապատասխանում է առաջադրված մեղադրանքին, որով եւ նա պետք է պատժվի:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՍՍՀ քր. օր-ի 293-294 հ.հ. ժողդատարանը

ՎՃՌԵՑ

Պարույր Արշավիրի Հայրիկյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օր-ի 217[1] հոդ. են - թարկելով նրան ազատազրկման երկու (2) տարի ժամանակով, պատիժը խիստ ռեժի - մի ուղղիչ աշխատանքային գաղութում կրելու միջոցով: Դատապարտյալ Պարույր Հայրիկյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը թողնել անփոփոխ, կալանքի սկիզբը հաշվելով 1974թ. փետրվարի 12-ը:

Սույն դատավճիռը կարող է գանգատարկվել եւ բողոքարկվել 7 օրվա ընթացքում ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիային:

Ժողդատավոր՝ ստորագրություն
Ժողատենակալներ՝ -------, ,---------
Ճիշտ է՝ Ժողդատավոր՝ Ժ. Ստեփանյան

Ծանոթություն - ՀՍՍՀ Գերագույն Դատարանի քր. գործերով դատական կոլեգան 2/4-1974 թվականի որոշմամբ, ժողդատարանի վճիռը թողել է ուժի մեջ, իսկ բերված վճռաբեկ գանգատն առանց բավարարման:

Նախագահ՝ ստորագրություն
Ճիշտ է՝ Ժողդատավոր՝ **Ժ. Ստեփանյան**

Պարույր Հայրիկյանի գործով նոյեմբերի 22-ին կայացված դատավճիռը

Ներկայացվող դատավճիռն ամբողջական է, որովհետեւ տպագրության ենք ներկայացրել ոչ թե ԱԱԾ-ից ստացած, այլ Հայրիկյանի անձնական արխիվից վերցված դատավճռի օրինակը:

ԴԱՏԱՎՃԻՌ

Գործ նո. 158
1974թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1974թ. նոյեմբերի 22-ին

Նախագահությամբ՝	**Ս. Դանիելյանի**
Ատենակալներ՝	**1. Գ. Ղսաբյան**
	2. Կ. Ավագյան
Քարտուղարությամբ՝	**Ա. Հովհաննիսյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Պ. Խուդոյանի**
դատապաշտպան՝	**----------**

Քննության առնելով դատական դռնաբաց նիստում քրեական գործը ըստ մեղադրանքի՝

ՊԱՐՈՒՅՐ ԱՐՇԱՎԻՐԻ ՀԱՅՐԻԿՅԱՆԻ, ծնվել է 1949թ. Երեւան քաղաքի Սովետաշեն Ավանում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, թերի բարձրագույն կրթությամբ, ամուրի, նախկինում դատվել է երկու անգամ՝ 23/2-1974թ. քր օրի 65հ.1-ին մասով եւ 67 հոդվածով ազատազրկման 4 տարի ժամանակով, պատիժը կրել է, ազատվել է 30/3-1973թ., 2-րդ անգամ դատապարտվել է 5/3-1974թ. քր. օրի 271[1] հոդ. ազատազրկման 2 տարի ժամանակով, կալանքի տակ է 1974թ. փետրվարի 12-ից /հ.4 գթ. 155-164, 145-147/ սույն գործով խափանման միջոցը՝ կալանք ընտրվել է 29/4-1974թ. /հ.1 գթ. 88-89/, մինչեւ կալանավորումը բնակվել է Երեւան քաղաքի Սովետաշեն ավանի 14 փո. նո.3 տանը:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65հոդ. 2-րդ մասով եւ 67 հոդվածով:

Դատաքննությամբ հաստատված է հետեւյալը՝

Ամբ. Պարույր Հայրիկյանը 1970թ. փետրվարի 23-ին ՀՍՍՀ քր. օրի 65հ. 1-ին մասով եւ 67 հոդ., հակասովետական ագիտացիա ու պրոպագանդա տանելու եւ հակասովետական կազմակերպության գործունեությանը մասնակցելու համար դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամանակով: (հ.4 գթ. 80-87, 155-164).

Պատիժը կրելու ընթացքում եւ դրանից հետո Պ. Հայրիկյանը իր հակասովետական հայացքները չի փոխել, կատարվածի համար չի զղջացել, ուղղման ճանապարհի վրա չի կանգնել: Համառորեն չի ընդունել իր գաղափարական մոլորումները, պնդել է, որ իր կյանքը նվիրել է «Ազատ ու անկախ» Հայաստան ստեղծելու պայքարին եւ նպատակ ունենալով Հայաստանում քայքայելու Սովետական իշխանությունը, շարունակել է տարածել սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ:

Գտնվելով կալանավարյում Պ. Հայրիկյանը նամակագրական կապ է պահպանել իր համախոհների ու այլ անձանց հետ եւ 1970-1972թթ. նրանց հասցեագրված նամակնե-

րի միջոցով փորձել է տարածել թշնամական, հակասովետական հերյուրանքներ ՍՍՀ Միության կազմում գտնվող Հայկական հանրապետության վիճակի մասին եւ կոչ է արել պայքարել ՍՍՀ միության կազմից Հայաստանի անջատման ու «ազատ եւ անկախ» Հայկական պետություն ստեղծելու համար:

Նշված բովանդակություն ունեցող նամակները առգրավվել են կալանավայրի գրաքննության կողմից եւ հասցեատերերին չեն ուղարկվել:

Պարիժը կրելուց հետո Պ. Հայրիկյանը 1973թ. ապրիլի 4-ին վերադարձել է Երեւան: Նրա նկատմամբ սահմանվել է վարչական հսկողություն:

Չնայած դրան Պ. Հայրիկյանը կապ է հաստատել հակասովետական ազգայնական տրամադրություն ունեցող Աշոտ Նավասարդյանի, Ազատ Արշակյանի, Ռուբեն Խաչատրյանի եւ մյուսների հետ, որոնք հետագայում նույնպես դատապարտվել են հակասովետական գործունեության համար:

Հանդես գալով այսպես կոչված «ազգային միացյալ կուսակցություն» անլեգալ կազմակերպության անունից, ամբ. Պ. Հայրիկյանը շարունակել է թշնամական գործունեությունը:

1973թ. հոկտեմբերին Պ. Հայրիկյանը հայտնել է Ռուբեն Խաչատրյանին այն մասին, որ ազգային միացյալ կուսակցության ղեկավար մարմինը կոչվում է Գերագույն խորհուրդ եւ նրա անդամ դառնալու համար անհրաժեշտ է զբաղվել հակասովետական պրակտիկ գործունեությամբ եւ այդ միջոցով ձեռք բերել վստահություն: Այդ նպատակով հանձնարարել է Ռ. Խաչատրյանին Երեւան քաղաքի տարբեր վայրերում գրել հակասովետական ազգայնական լոզունգներ՝ «կորչեն ռուսները, կեցցե ազատ եւ անկախ Հայաստանը»:

Կատարելով նշված հանձնարարությունը Ռ. Խաչատրյանը իր համախոհների, այժմ մեկ այլ գործով դատապարտվածներ՝ Քաջիկ Սահակյանի եւ Անահիտ Կարապետյանի միջոցով Երեւանի փողոցների մայթերի եւ պատրեի վրա գիշերը մեծ տառերով գրել են նշված բովանդակության լոզունգներ, որոնք հաջորդ օրը կարդացել են բազմաթիվ մարդիկ:

Նույն ամսին Պ. Հայրիկյանը պայմանավորվել է Ռ. Խաչատրյանի հետ մեծ քանակությամբ թռուցիկներ պատրաստելու եւ տարածելու մասին: Համաձայն այդ պայմանավորվածության Ռ. Խաչատրյանը հանձնարարել է Քաջիկ Սահակյանին, իսկ վերջինս իր հերթին Անահիտ Կարապետյանին գրել թռուցիկների տեքստը:Անահիտ Կարապետյանը Քաջիկ Սահակյանի մասնակցությամբ գրել է երկու թռուցիկների տեքստեր, որոնք հանձնել է Ռ. Խաչատրյանին: Վերջինս այդ թռուցիկների բնագիրը ցույց է տվել ամբ. Պ. Հայրիկյանին, որը այն կարդացել է եւ առանց դիտողությունների վերադարձրել է Խաչատրյանին: Համարելով ու Պ. Հայրիկյանը թռուցիկների տեքստերը հավանել է, Խաչատրյանը հանձնել է այն Ք. Սահակյանին բազմացնելու եւ տարածելու համար:

Ք. Սահակյանը իր համախոհների միջոցով սկսել է բազմացնել այդ թռուցիկները ֆոտոեղանակով, սակայն այդ աշխատանքը կատարելու ժամանակ բռնվել են պետանվտանգության կոմիտեի կողմից:

Նշված թռուցիկներում զրպարտչորեն հայտարարվում է, որ հայ ժողովրդին սպառնում է «ճերմակ եղեռն», որ «եղեռնը շարունակվում է», «հայ ժողովուրդն իբրեւ թե խաբված է, երկրում բացակայում է ազատությունը, իսկ ազգասեր երիտասարդները դատապարտվում են, կոչ է արվում դուրս գալ պայքարի (հ.4 գթ. 196):

1973թ. նոյեմբերի սկզբին ամբ. Պ. Հայրիկյանը հանձնարարել է Ռ. Խաչատրյանին համախոհների միջոցով պայմանավորված ժամին եւ վայրում անծանոթ անձնավորությունից ստանալ մի ծրար եւ հանձնել իրեն:

Խաչատրյանը կատարել է այդ հանձնարարությունը նույն Ք. Սահակյանի միջոցով: ծրարի մեջ եղել է ֆոտոեղանակով նկարահանված 3 օրինակ «Փարոս-2 լրացուցիչ» վերնագրով թռուցիկ, որը գրվել է այսպես կոչված «ազգային միացյալ կուսակցության Գերագույն խորհրդի» անունից:

Այդ թռուցիկը նույնպես պարունակում է թշնամական կոչեր եւ զրպարտիչ հերյուրանքներ Սովետական իրականության մասին: (հ.4 գթ. 197):

Առաջադրված մեղադրանքում քր. օրի 65հ. 2-րդ մասով եւ 67հ. Պ. Հայրիկյանն իրեն մեղավոր չճանաչեց, պատճառաբանեց, որ հակասովետական ագիտացիա ու պրոպագանդա չի տարել: Ընդունեց, որ 1967 թ. եղել է այսպես կոչված «ազգային միացյալ կուսակցություն» իսկական անդամ, ընդունել է այդ «կուսակցության» ծրագիրը, կանոնադրությունը, երդումը եւ մինչեւ 1969թ. հուլիս ամիսը գործնական ակտիվ աշխատանքով պայքարել է այդ անլեգալ կազմակերպության ծրագիրն իրականացնելու համար:

1969թ. հուլիսի 10-ին նշված գործունեության համար կալանավորվել է, իսկ 23/2-1970թ. դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամանակով: Պատիժը կրելուց հետո 4/4-1973թ. վերադարձել է Երեւան:

Հայտարարեց, որ մինչ այսօր իր գաղափարական տեսագետները չի փոխել, առաջվա նման Հայաստանի «անկախացումը» համարում է կենսական պահանջ, Հայաստանը պետք է դուրս գա ՍՍՀՄ կազմից, քանի որ իր կարծիքով, հայ ժողովրդի շահը չի համընկնում միության շահերի հետ, հայ ժողովուրդը գտնվում է «օտար լծի տակ», Հայաստանը լիարժեք պետություն չէ, Ռուսաստանը «կողոպտում» է հայ ժողովրդին: (արձ. 40-44):

«Ազգային միացյալ կուսակցություն» անվան տակ հանդես եկող կազմակերպության ծրագրում, որը անվերապահորեն ընդունում է ամբ. Պ. Հայրիկյանը, զրպարտչորեն հայտարարվում է, որ Մոսկովյան գերիշխանության տակ հեծում եւ տնքում է ամբողջ հայ ազգը, կոչ է արվում պայքարել դրա դեմ եւ թույլ է տրվում ազգային թշնամություն առաջացնող ակնհայտ սուտ այլ պնդումներ: (հ.4 գթ. 165-172):

Դատական նիստում մեկնաբանելով «ԱՄԿ»-ի ծրագիրը, ամբ. Պ. Հայրիկյանը ընդունեց, որ ըստ ծրագրի Սովետական Ռուսաստանը համարվում է հայ ժողովրդի թշնամին: (արձ. 44-48):

Միաժամանակ պատճառաբանեց, որ պատիժը կրելուց հետո հակասովետական որեւէ արարք թույլ չի տվել, պրակտիկ գործունեությամբ չի զբաղվել, «ազգային միացյալ կուսակցություն» հետ չի առնչվել, այդ պատճառով իրեն համարում է այդ «կուսակցության» միայն, գաղափարակից անդամը:

Դատական նիստի առաջին օրը հրաժարվեց իրեն շահերը պաշտպանող փաստաբանից, պատճառաբանելով, որ վերջինս չի կարող պաշտպանել իրեն, քանի որ նա ՍՄԿԿ անդամ է, իսկ ինքը պայքարել է կոմունիստների դեմ: (արձ. 10):

Դատական նիստի դահլիճում, բազմաթիվ քաղաքացիների ներկայությամբ թույլ տվեց զրպարտչական կոպիտ վիրավորանք Վ. Ի. Լենինի հասցեին, պահանջելով հեռացնել նրա պատկերը դատական նիստերի դահլիճից: (արձ. 4):

Ընդունեց, որ իր կողմից գրված նամակներում եւ դիմումներում թույլ է տվել Սովետական պետական եւ հասարակական կարգն արատավորող զրպարտչական հերյուրանքներ, սակայն պատճառաբանեց, որ այդ արարքը հանցակազմ չի պարունակում, քանի որ նամակներն առգրավվել են կալանավայրի գրաքննության կողմից եւ հասցեատերերին չեն հասել, իսկ դիմումները ուղղված են եղել ապշտոնատար անձանց:

(արձ. 16-106):

Ամբ. Պ. Հայրիկյանի առարկություններն անհիմն են, իսկ առաջադրված մեղադրանքը նշված հարցերով հաստատված է հետեւյալ ապացույցներով՝

Գաղութում պատիժը կրելու ընթացքում Պ. Հայրիկյանի կողմից գրված նամակներից գրաքննության կողմից առգրավվել եւ հետագայում կցվել է սույն գործին 18 նամակ: Նամակներից երեւում է, որ Պ. Հայրիկյանը համառորեն չի ընդունել իր սխալը, չի զղջացել կատարածի համար եւ նամակների միջոցով նորից փորձել է տարածել զրպարտչական հերյուրանքներ, որոնք արատավորում են սովետական պետական եւ հասարակական կարգը:

Այսպես՝

19/5-70թ., 9/6-70թ.,17/6-70թ., 8/2-71թ. նամակներում Պ. Հայրիկյանը խիստ արտահայտություններով հայտնել է, որ չի զղջում կատարածի համար, արգելել է ծնողներին այդ հարցով խորհուրդներ տալ իրեն, իսկ ընկերուհուն՝ Քնարիկին հասցեագրված նամակում գրել է՝ «ամեն դեպքում երջանիկ եմ երջանիկ եմ եւ հպարտ նրանով, որ ինձ էլ բախտ վիճակվեց ծառայել գերյալ հայրենիքիս իրական, ճշմարիտ շահերին, նրա ազատագրմանը, իմ ուժերի չափով»: (հ.4 գթ. 46-49, 55, 204, 75).

Այս կապակցությամբ ամբ. Պ. Հայրիկյանը դատարանում ցուցմունք տվեց, որ իրոք չի զղջացել կատարածի համար, շարունակել է համարել, որ Հայաստանը գտնվում է «գերված վիճակում» եւ այդ պատճառով գրել է նման նամակներ:

(արձ. 51-52)

5/11-70թ. հարազատներին հասցեագրված նամակում Պ. Հայրիկյանը, գովաբանելով արտասահմանում գործող հակասովետական դաշնակցական կուսակցությունը, Պ. Հայրիկյանը գրել է, որ «Այս տարի լրանում է ՀՀԴ Կուսակցության 80 ամյակը: Որոշել ենք նոյեմբերին մի կիրակի նվիրել այս ուշագրավ տարելիցին եւ արժանավայել հիշել…»: (հ.4 հթ. 69):

Դատական նիստում Պ. Հայրիկյանը նորից գովաբանեց հակասովետական դաշնակցություն կուսակցությունը, նշելով որ դա իբրեւ թե միակ կուսակցությունն է, որը 1918-1920թթ. տվել էր Հայաստանին անկախություն: (արձ. 53-54)

29/11-70թ. հորը հասցեագրված նամակում գրել է՝ «այսօր բոլորը ազնիվ հայերի հետ հոգեպես սգացինք Հայաստանի անկախության 50 ամյա կորուստը»: (հ4. գթ. 71):

Դատական նիստում Պ. Հայրիկյանը հաստատեց, որ 29/11-1920թ. երբ Հայաստանը մտել է ՍՍՀՄ կազմի մեջ, համարում է սգո օր, քանի որ իր կարծիքով Հայաստանը այդ օրը կորցրել է իր անկախությունը: (արձ. 55).

8/3-1972թ. նամակում, հասցեագրված իր ընկերներին, շեշտելով իր վճռականությունը, շարունակել պայքարը, Պ. Հայրիկյանը նշել է, որ մնում է նվիրված իրենց կողմից հաստատված լոզունգին «մահ կամ անկախ հայաստան» եւ գրել է՝ «արդեն մոտ երեք տարի է անցել 4 ամյա ազատագրկումիցս, բայց մազաչափ իսկ չեմ վհատվել եւ չեմ կասկածում մեր հաղթանակին»: (հ4 գթ. 123):

21/3-72թ. դիմումում, հասցեագրված ՀՍՍՀ Գերագույն Սովետի նախագահությանը Պ. Հայրիկյանը պնդել է, որ Ռուսաստանը սահմանել է Հայաստանի նկատմամբ գերիշխանություն, տանում է ազգային արդարացի պահանջների ու իրավունքների ոտնահարման քաղաքականություն: Ռուսաստանը իր եւ իր համախոհների կողմից ճանաչվում է նո. 1 թշնամի պետությունը: Իսկ սովետական օրենքները ոտնահարում են մարդու բոլոր իրավունքները: Հայ ազգը գտնվում է ծայրագույն վատ վիճակում: (հ. 5 գթ. 5-7):

24/6-74թ. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հասցեագրված դիմումում Պ. Հայրիկյա - նը ակնհայտորեն սուտ պնդում է, ՍՍՀՄ-ում կատարվում է «մեծագույն հանցագործություն՝ ցեղասպանություն (գենոցիդ)»: (հ.5 գթ. 9).

Դատական նիստում նա պնդեց նույնը, հիմնավորելով այդ նրանով, որ հակասովետական ագիտացիա մղողները ենթարկվում են քրեական պատասխանատվության:

Նույնանման թշնամական, հակասովետական զրպարտիչ հերյուրանքներ են պարունակում Պ. Հայրիկյանի մյուս նամակները եւ դիմումները, որոնք կցված են գործին:

Պ. Հայրիկյանի առարկությունը, որ նամակում հակասովետական մտքեր արտահայտելը հանցակազմ չի պարունակում իբրեւ թե այն պատճառով, որ նամակները հասցեատերերին չի հասել, հակասում է օրենքներին, քանի որ համաձայն քր. օրի 65 հոդ. հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա է համարվում ոչ միայն պետական եւ հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ տարածելը, այլ եւ այդպիսի բովանդակությամբ գրականություն պատրաստելը եւ պահելը:

Ամբ. Պ. Հայրիկյանի մյուս առարկությունը, որ առաջին անգամ դատապարտվելուց եւ պատիժը կրելուց հետո հակասովետական պրակտիկ գործունեությամբ չի զբաղվել, հերքված է հետեւյալ ապացույցներով՝

Այս գործով վկա Ռուբեն Խաչատրյանը դատական նիստում եւ նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ 1973թ. երբ Պ. Հայրիկյանը վերադարձել է կալանավայրից, ինքը նրա համախոհների հետ գնացել է Պ. Հայրիկյանի տուն, ծանոթացել է նրա հետ եւ շնորհավորել է նրա վերադարձը: Համարելով նրան փորձված եւ հեղինակավոր «գործիչ» զրույցներ է ունեցել նրա հետ իրենց հետագա գործունեության մասին, նրանից խորհուրդներ է հարցրել եւ վարվել է նրա խորհուրդներով:

Նախաքննության ընթացքում Ռ. Խաչատրյանը իր բոլոր ցուցմունքներում հայտնել է, որ Պ. Հայրիկյանի կարծիքը ընդունել է որպես ցուցում կամ հանձնարարություն եւ կատարել է այն: (հ.1 գթ. 182-196, 197-205, 206-210, 211-222, 223-239, 240-252, 253-259, հ.2 գթ. 1-9, 10-15, 16-23, 24-28, 29-54, հ.3 գթ. 169-184).

Դատական նիստում հայտարարեց, որ Պ. Հայրիկյանը ցուցմունքներ կամ հանձնարարություններ իրեն չի տվել, այլ ինքն է հարցրել նրանից խորհուրդներ եւ պրակտիկ գործունեությունում ղեկավարվել է նրա կողմից տրված խարհուրդներով: (արձ. 127-128).

Դատական կոլեգիան համարում է, որ ըստ էության այդ ցուցմունքների միջեւ տարբերություն չկա, քանի որ երեւույթի էությունը չի փոխվել: Միայն մի դեպքում՝ նախաքննական պայմաններում այն անվանվել է «հանձնարարություն», իսկ դատական նիստի դահլիճում, որտեղ գտնվում էին ամբաստանյալի հարազատները եւ մի շարք համախոհներ, նույն երեւույթը անվանվել է «խորհուրդ» նամանավանդ, որ վկա Ռ. Խաչատրյանը, դատաքննության ժամանակ մի քանի անգամ կրկնեց, որ նախաքննության ժամանակ տված իր ցուցմունքները հաստատում է:

Ինչպես նախաքննության ժամանակ, այնպես էլ դատական նիստում Խաչատրյանը ցուցմունք է տվել, որ Պ. Հայրիկյանը հայտնել է իրեն, որ ազգային միացյալ կուսակցությունը ունի ղեկավար մարմին, որը կոչվում է «գերագույն խորհուրդ», որի անդամը դառնալու համար հարկավոր է պրակտիկ աշխատանքով ձեռք բերել վստահություն:

Ցանկանալով ընդունվել «ԱՄԿ գերագույն խորհրդի» կազմի մեջ, ինքը վստահություն ձեռք բերելու նպատակով կատարել է հետեւյալ հակասովետական պրակտիկ աշխատանքը:

1973թ. հոկտեմբերին զրույցի ժամանակ ինքը հարցրել է Պ. Հայրիկյանի կարծիքը քաղաքում ազգայնական լոզունգներ գրելու մասին: Պ. Հայրիկյանը հավանություն է տվել այդ մտքին եւ խորհուրդ է տվել Երեւան քաղաքի փողոցներում ու պատերի վրա ԱՄԿ-ի անունից գրել լոզունգներ «կորչեն ռուսները, կեցցե ազատ եւ անկախ հայաստանը»:

Ընդունելով այդ խորհուրդը ինքը հանձնարարել է Ք. Սահակյանին կատարել նման գրառումներ (լոզունգներ): Վերջինս Անահիտ Կարապետյանի օգնությամբ Երեւանի տարբեր վայրերում այլ համախոհների մասնակցությամբ փողոցներում եւ պատերի վրա մեծ տառերով ԱՄԿ-ի անունից գրել են նման լոզունգներ եւ այդ մասին զեկուցել են իրեն, իսկ ինքը՝ Պ. Հայրիկյանին: (արձ.118-120).

Ռ. Խաչատրյանը ցուցմունք տվեց նաեւ, որ իրենց համախոհներ, այն ժամանակ կալանքի տակ վերցված Բագրատ Շահվերդյանի եւ Արարատ Թովմասյանի սպասվելիք դատավարության կապակցությամբ ինքը նույն ամսին հանձնարարել է Քաջիկ Սահակյանին պատրաստել թռուցիկներ: Վերջինս Անահիտ Կարապետյանի հետ միասին գրել են թռուցիկների երկու տեքստ եւ տվել են իրեն, ինքն այդ թռուցիկները Հակոբջան Թադեւոսյանի ներկայությամբ Էրեբունի փողոցում տվել է Պ. Հայրիկյանին, որն այն կարդացել է եւ լռությամբ, առանց դիտողությունների վերադարձրել է իրեն: Այդ լռությունն ինքը համարել է հավանության նշան: Դրանից հետո թռուցիկները վերադարձրել է Քաջիկ Սահակյանին եւ հանձնարարել է բազմացնել դրանք եւ տարածել: Ք. Սահակյանը, Ա. Կարապետյանը եւ մյուսները սկսել են բազմացնել այդ թռուցիկները ֆոտոեղանակով, սակայն բազմացման ժամանակ ձերբակալվել են: (արձ. 120-123).

Նախաքննության բոլոր ցուցմունքներում Ռ. Խաչատրյանը հայտնել է, որ թռուցիկները պատրաստել են Պ. Հայրիկյանի հանձնարարությամբ, նախապես նրա հետ պայմանավորվելուց հետո: (հ.1 գբ. 182-196, 211-227, հ.2 գբ. 29-54, հ.1 գբ. 240-252, 253-259, հ. 2 գբ. 16-23, 24-28, 29-54).

Դատական նիստում Ռ. Խաչատրյանը հաստատեց նաեւ, որ նույն ամսին Պ. Հայրիկյանը հանձնարարել է իրեն մի վստահելի մարդ ուղարկել հոկտեմբերյան պողոտայի նո. 65 շենքի մուտքի մոտ անցախոսով ծրար ստանալու եւ իրեն հանձնելու համար: Անցախոսը, պայմանավորված ժամը հայտնել է իրեն Պ. Հայրիկյանը: Նշված վայրը ինքը ուղարկել է Ք. Սահակյանին: Առաջին անգամ հանդիպումը տեղի չի ունեցել: Պ. Հայրիկյանի առաջարկությամբ ինքը նորից է ուղարկել Սահակյանին նույն վայրը: Այս անգամ Սահակյանին հանդիպել է մի անծանոթ անձնավորություն եւ անցախոսով ստացել է նրանից մի ծրար, որը բերել է իրենց տուն եւ հանձնել է իրեն: Ծրարի մեջ գտնվում էին ֆոտոեղանակով բազմացրած 3 օրինակ «Փարոս-2 լրացուցիչ» վերնագրով թռուցիկներ: (հ.1 գբ. 197).

Նույն պահին այդ թռուցիկների մեկ օրինակ վերցրել է Ք. Սահակյանը, իսկ երկու օրինակները մնացել են իրեն մոտ: Ինքը հայտնել է Պ. Հայրիկյանին հանձնարարությունը կատարելու մասին, որից հետո Պ. Հայրիկյանը եւ Հակոբջան Թադեւոսյանը եկել են իրենց տուն եւ յուրաքանչյուրը վերցրել է մեկական օրինակ: (արձ. 124-128).

Ռ. Խաչատրյանի այս ցուցմունքների ճշտությունը հաստատվել է Ք. Սահակյանի, Ա. Կարապետյանի եւ մասամբ էլ Պ. Հայրիկյանի ցուցմունքներով: Նախաքննության ընթացքում Ք. Սահակյանը հաստատել է, որ Ռ. Խաչատրյանի հանձնարարությամբ Ա. Կարապետյանի եւ մյուսների միջոցով Երեւան քաղաքի երկու շրջաններում գրել է վերը նշված բովանդակությամբ լոզունգներ եւ այդ մասին զեկուցել է Ռ. Խաչատրյանին: (հ.2 գբ. 55-75, 77-89, հ.3 գբ. 138-142):

Դատական նիստում Ք. Սահակյանը ցուցմունք տվեց, որ լոզունգները գրելու մասին միայն խորհրդակցել է Ռ.Խաչատրյանի հետ, սակայն նրա համաձայնությունը չի հարցրել եւ դրա կարիքը չի զգացել:

Նախաքննության ընթացքում Ք. Սահակյանը ընդունել է, որ թռուցիկները գրվել են Խաչատրյանի հանձնարարությամբ, որից հետո թռուցիկների բնագիրը ինքը տվել է Խաչատրյանին, ապա ետ է ստացել բազմացնելու համար եւ համախոհների հետ սկսել է բազմացնել, սակայն ձերբակալվել է: Տվել է այդ թռուցիկները Ռ. Խաչատրյանը Պ. Հայրիկյանին կարդալու թե ոչ ինքը չգիտի: (հ.2 գթ. 65-70, հ.3 գթ. 138-142).

Դատական նիստում Ք. Սահակյանը ցուցմունք տվեց, որ թռուցիկները գրելու եւ տարածելու միտքը առաջացել է իր մոտ, ինքը այդ մասին խորհրդակցել է Խաչատրյանի հետ, ապա Ա. Կարապետյանի հետ գրելուց հետո այն ցույց է տվել Ռ. Խաչատրյանին, որը կարդացել է եւ նույն պահին լռությամբ վերադարձրել է իրեն: Դրանից հետո ինքը ձեռնարկել է թռուցիկների բազմացումը, սակայն այդ աշխատանքը կատարելու ժամանակ ձերբակալվել են:

Այդ ցուցմունքներից ստացվում է, որ Ռ. Խաչատրյանը չէր կարող թռուցիկները ցույց տալ Պ. Հայրիկյանին, քանի որ թռուցիկները նրա մոտ չի մնացել:

«Փարոս-2 լրացուցիչ» թռուցիկի վերաբերյալ Ք. Սահակյանը դատարանում հաստատեց, որ այդ թռուցիկը ծրարով ստացել է Ռ. Խաչատրյանի հանձնարարությամբ անցախոսով Հոկտեմբերյան պողոտայի նո. 65 շենքի մուտքի անծանոթ անձնավորությունից: Սակայն պնդեց, որ ծրարում եղել է այդ թռուցիկի միայն մեկ օրինակ, որը վերցրել է ինքը եւ հետագայում այն հայտնաբերվել է իր բնակարանում խուզարկության ժամանակ:

Այս ցուցմունքներից նույնպես ստացվում է, որ Ռ. Խաչատրյանը ամբ. Պ. Հայրիկյանին եւ Հ. Թադեւոսյանին տալ չէր կարող, քանի որ ծրարում եղել է իբրեւ թե մեկ օրինակ, որը եւ վերցրել է ինքը:

Միայն երբ ամբ. Պ. Հայրիկյանը խնդրեց, Ք. Սահակյանին ճիշտն ասել՝ թռուցիկի քանի օրինակն է եղել ծրարում, Ք. Սահակյանը պատասխանեց, որ իրականում ծրարում եղել է 3 օրինակ: (արձ. 146-157).

Այստեղից, ինչպես նաեւ Ք. Սահակյանի կողմից դատարանում ցուցաբերած վարքագծից պարզ երեւաց, որ նա որոշ չափով փոխեց իր ցուցմունքները միայն Պարույր Հայրիկյանին հովանավորելու նպատակով:

Նա ընդունեց, որ չնայած Պ. Հայրիկյանին անձամբ չի ճանաչում, Ռ. Խաչատրյանը հայտնել է իրեն նրա մասին որպես համախոհի:

Նշված պատճառով դատական կոլեգիան հիմք է ընդունում Ք. Սահակյանի նախաքննական ցուցմունքները, որոնք հիմնականում չեն հակասում դատաքննության ժամանակ տված նրա ցուցմունքներին:

Վկա Անահիտ Կարապետյանը հաստատեց, որ Քաջիկ Սահակյանի հանձնարարությամբ երկու երիտասարդ տղաների միջոցով Երեւանի Արաբկիր թաղամասում գրել է վերը նշված լոզունգները:

Հաստատեց նաեւ, որ Ք. Սահակյանի մասնակցությամբ գրել է երկու թռուցիկ, որոնք կցված են գործին եւ այդպիսիք տվել է Ք. Սահակյանին: Նույնը նա հաստատել է նախաքննության ընթացքում: (հ.2 գթ. 229-235, 236-242, արձ. 159-162).

Ամբաստանյալ Պ. Հայրիկյանը նախաքննության ժամանակ ընդունել է, որ զրույց է ունեցել Ռ. Խաչատրյանի հետ լոզունգներ գրելու մասին եւ դրական է արտահայտվել ասելով, որ ավելի լավ է լոզունգներ գրել քան տարածել մեծածավալ թռուցիկներ, սա -

կայն պատճառաբանեց, որ ուղղակի հանձնարարություն լոզունգներ գրելու համար չի տվել:

Ընդունել է նաեւ, որ Ռ. Խաչատրյանը Երեւանի Էրեբունի փողոցում ծանոթացրել է իրեն ձեռագրով գրված ինչ որ նյութերի հետ, բայց իբրեւ թե չի հիշում թռուցիկների տեքստ էր թե ինչ որ այլ բան: (հ.3 գթ. 169-184, 185-197).

Դատական նիստում Պ. Հայրիկյանը լոզունգների մասին տվեց նույն ցուցմունքը, իսկ թռուցիկների վերաբերյալ հայտարարեց, որ Ռ. Խաչատրյանը տվել է կարդալու ինչ որ բան, որը գրված է եղել Խաչատրյանի ձեռքով, բայց թռուցիկ չի տվել: (արձ. 92-95, 129).

Ի պատասխան դրան Խաչատրյանը հայտնեց, որ ինքը տվել է Պ. Հայրիկյանին կարդալու ինչպես իր ձեռքով գրված նյութեր, այնպես էլ Անահիտ Կարապետյանի ձեռքով գրված երկու թռուցիկները: (արձ. 132).

Վկա Անահիտ Կարապետյանը հաստատեց, որ գործին կցված երկու թռուցիկները ֆոտոեղանակով նկարահանված վիճակում գրված են իր ձեռքով: (արձ. 159-162).

Վկա Հակոբջան Թադեւոսյանը նախաքննության ընթացքում եւ դատարանում ցուցմունք է տվել, որ Ռ. Խաչատրյանի տանը Պ. Հայրիկյանի հետ եղել է, սակայն Ռ. Խա - չատրյանը «Փարոս-2 լրացուցիչ» թռուցիկ իրեն չի տվել:

Հաստատեց, որ Էրեբունի փողոցում իրենք երեքով հանդիպել են, սակայն պատճառաբանեց, որ Ռ. Խաչատրյանը որեւէ գրավոր տեքստ Պ. Հայրիկյանին չի տվել: Ի վերջո հայտարարեց, որ չի հիշում տվել է թե ոչ: (հ.2 գթ. 211-215, 216-219, 220-226, արձ. 137-147).

Գնահատելով Հակոբջան Թադեւոսյանի ցուցմունքները դատական կոլեգիան նկատի է ունենում, որ նա 1968 թ. դատապարտվել է սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ սուտ հերյուրանքներ տարածելու համար: Դատարանում հայտարարեց, որ իր հայացքները չի փոխել, սակայն պրակտիկ գործունեությամբ այլեւս չի զբաղվել, քանի որ չի ցանկանում կրկին անգամ ենթարկվել քրեական պատասխանատվության: Այստեղից պարզ երեւում է, որ վկա Հ. Թադեւոսյանը լինելով Պ. Հայրիկյանի համախոհներից մեկը, իր ցուցմունքներով ցանկացել է հովանավորել նրան եւ միաժամանակ խուսափել անձնական պատասխանատվությունից:

Նախաքննության ընթացքում վկա Հրաչ Գրիգորյանը հաստատեց, որ մեկ այլ գործով դատապարտված Աշոտ Նավասարդյանի հանձնարարությամբ 1973թ. նոյեմբերի սկզբին Երեւան քաղաքի Հոկտեմբերյան պողոտայի նո. 65 շենքի մոտ անցախոսով փոխանցել է ծրար մի անծանոթ անձնավորությանը, որը ինչպես պարզվել է սույն գործի քննությամբ, եղել է Քաջիկ Սահակյանը: (հ. 2 գթ. 248-254).

Ա. Նավասարդյանը, հաստատելով այդ փաստը, նույնպես նախաքննության ժամա - նակ ցուցմունք է տվել, որ ծրարում եղել է երեք օրինակ «Փարոս -2 լրացուցիչ» թռուցիկներ եւ այն Հրաչ Գրիգորյանի միջոցով ուղարկել է Ռ. Խաչատրյանի խնդրանքով նրա ներկայացուցիչին անցախոսով հանձնելու համար:

Սակայն Ռ. Խաչատրյանը առերես հարցաքննության ժամանակ կատեգորիկ կերպով ժխտել է այս ցուցմունքները եւ պնդել է, որ «Փարոս -2 լրացուցիչ» թռուցիկները ստացել է Պարույր Հայրիկյանի հանձնարարությամբ, իսկ Ա. Նավասարդյանի հետ այս թռուցիկների մասին խոսակցություն եւ պայմանավորվածություն չի ունեցել: (հ. 3 գթ. 218-227).

Դատական նիստում Հրաչ Գրիգորյանը եւ Ա. Նավասարդյանը չեն հարցաքննվել, քանի որ առաջինը ծառայում է սովետական բանակում, իսկ երկրորդը էտապով ու -

ղարկվել է հեռավոր գաղութ եւ դատաքննության ժամանակ դեռեւս տեղ չէր հասել:

Գնահատելով այս ցուցմունքները, դատական կոլեգիան գալիս է այն համոզման, որ Ա. Նավասարդյանի ցուցմունքն այն մասին, որ «Փարոս-2 լրացուցիչ» թռուցիկն ուղարկել է Ռ. Խաչատրյանի խնդրանքով ճիշտ չէ: Դատական կոլեգիային հավատ է ներշնչում Ռ. Խաչատրյանի ցուցմունքները:

Պարույր Հայրիկյանի նախաքննության եւ դատաքննության ժամանակ տված ցուցմունքներից եւ գրված դիմումներից, դատական նիստում ասված պաշտպանական ճառից երեւում է, որ նա ունի հակասովետական ազգայնական կայուն համոզմունքներ եւ թշնամաբար է մոտենում ՍՄԿԿ-ի եւ սովետական պետության կողմից տարվող քաղաքականությանը:

Ամբ. Պարույր Հայրիկյանը մեղադրվում է նաեւ նրանում, որ թշնամական նկատառումներով միջոցներ է ձեռնարկել Սովետական միության մասին արտասահմանում զրպարտիչ ինֆորմացիա տարածելու համար: Այդ նպատակով 1971թ. կալանավայրից ուղարկել է Անդրանիկ Մարգարյանին իր գործով դատավճռի պատճենը այն արտասահման ուղարկելու խնդրանքով:

Բացի այդ 1973-1974թթ. նույն նպատակով Մոսկվա քաղաքի բնակչուհի Ելենա Սի - րոտենկոյին, որը կապ ունի արտասահմանի հետ, հաղորդել է տվյալներ Հայաստանում հակասովետական ազգայնական գործունեության համար մի շարք անձանց դատապարտվելու մասին եւ այդ տվյալները տպագրվել են արտասահմանյան հակասովետական «Պոսեւ» ամսագրում:

Դատական կոլեգիան գտնում է, որ այս էպիզոդով մեղադրանքը հիմնավորված չէ:

Ամբ. Պ. Հայրիկյանը դատական նիստում ընդունեց, որ իր դատվածության մասին ինքն է հայտնել Ելենա Սիրոտենկոյին, հնարավոր է որ հայտնել է մի քանի այլ անձանց դատվածության մասին, սակայն չի հիշում: Ընդունեց, որ մտերիմ է եղել Ելենա Սիրոտենկոյի հետ, ունեցել է նրա հետ հանդիպումներ եւ նամակագրություն: Ընդունեց, որ «Պոսեւ» ամսագրում տպագրված հաղորդումը Հայաստանում հակասովետական ազգայնական գործունեության համար դատապարտված անձանց մասին հիմնականում համընկնում է այն նյութին, որոնք հայտնաբերվել են Ելենա Սիրոտենկոյի բնակարանում խուզարկության ժամանակ: (հ.4 գթ. 177,180, հ.1 գթ. 63-64).

Սակայն պատճառաբանեց, որ Ելենա Սիրոտենկոյին երբեւիցե չի խնդրել այդ նյութերը հաղորդել արտասահման եւ այդ մասին խոսակցություն չի եղել: Պատճառաբանեց նաեւ, որ Ելենա Սիրոտենկոյի մոտ հայտնաբերված նյութերի միջեւ կա նաեւ տարբերություն եւ բացի դրանից ամսագրում թվարկված անձանցից երեքին ինքը բոլորովին չի ճանաչում, հետեւաբար նրանց մասին տեղեկություն տալ չէր կարող: (արձ. 77-85).

Վկա Ելենա Սիրոտենկոն նախաքննության ընթացքում հիմնականում հրաժարվել է ցուցմունք տալուց եւ համարյա ոչինչ չի բացատրել: (հ.1 գթ. 61, հ.3 գթ. 74-75, 76-79, 81-85).

Դատական նիստում Ե. Սիրոտենկոն ցուցմունք տվեց, որ իր տանը խուզարկությամբ հայտնաբերված նյութի տվյալները հավաքել է տարբեր ծանոթներից դատվածների ընտանիքներին օգնություն ցույց տալու նպատակով, ամբ. Պ. Հայրիկյանից նման տվյալներ չի ստացել, իսկ թե ինչպես են այդ տվյալները հայտնի դարձել «Պոսեւ» ամսագրին ինքը չգիտի, ինքը այդ տվյալները արտասահման չի հաղորդել, Պարույր Հայրիկյանը իրեն այդ մասին չի խնդրել: (արձ. 175-183).

Ամբ. Հայրիկյանի եւ վկա Ե. Սիրոտենկոյի նշված առարկությունները հերքող ապա-

ցույցներ ինչպես նախաքննության այնպես էլ դատաքննության ժամանակ ձեռք չեն բերվել:

Բացի այդ նախաքննության մարմինը չի նշել, թե կոնկրետ ինչումն է արտահայտվել հակասովետական դիտավորությունը հաղորդումում, որը տպագրվել է «Պոսեւ» ամսագրում նշված հարցի շուրջը:

Դատական կոլեգիան գտնում է, որ այդ էպիզոդով Պ. Հայրիկյանին պետք է արդարացնել ապացույցների անբավարարության պատճառով:

Ամբ. Պարույր Հայրիկյանը մեղադրվում է նաեւ նրանում, որ 1973թ. դեկտեմբերին Ռուբեն Խաչատրյանի սպասվելիք կալանավելու կապակցությամբ դրդել է նրան քննության ժամանակ չնդունել կատարած հանցանքը, հրաժարվել ցուցմունք տալուց, բողոքներ արտահայտել հացադուլով եւ ՄԱԿ-ին հասցեագրված դիմումներով:

Դատական կոլեգիան գտնում է, որ այս արաքը քր. օրի 65հ. եւ 67հոդ. նախատեսված հանցակազմ չի պարունակում:

Պատիժ սահմանելիս դատական կոլեգիան հաշվի է առնում որպես ծանրացուցիչ հանգամանք, այն որ Պարույր Հայրիկյանը կրկին անգամ է կատարել առանձնապես վտանգավոր պետական հանցագործություն, իսկ որպես մեղմացուցիչ համգամանք՝ նրա երիտասարդությունը եւ քաղաքական հարցերով ապակողմնորոշված լինելը:

Դատական կոլեգիան համարում է, որ տարիների ընթացքում Պ. Հայրիկյանը ըմբռնելով իրական կյանքը, կկարողանա ճիշտ կողմնորոշվել եւ վերադաստիարակվել սովետական ոգով, այդ իսկ պատճառով նրան առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ չի ճանաչում:

Ղեկավարվելով քր. դատ. օրի 293-294 հոդվածներով դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ՝

Ամբ. Պարույր Արշավիրի Հայրիկյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օրի 65հ. 2-րդ մասով եւ 67 հոդ.: Քր. օրի 65հոդ. 2-րդ մասի սանկցիայով դատապարտել նրան ազատազրկման յոթ (7) տարի ժամանակով եւ հետագա աքսորի երեք (3) տարի ժամանակով: Պատիժը՝ ազատազրկումը պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Երեւան քաղաքի Օրջոնոգիձեի շրջանի ժողդատարանի 1974թ. մարտի 5-ի դատավճռով քր. օրի 217[1] հոդ. Պարույր Հայրիկյանի նկատմամբ սահմանված 2 տարի ա - զատազրկումը համաձայն քր. օրի 37 հոդ. համարել կլանված սույն դատավճռով նշանակված պատժով:

Կալանքի սկիզբը հաշվել 1974թ. փետրվարի 12-ից:

Գործով իրեղեն ապացույցներ՝ թռուցիկները, Պ. Հայրիկյանի նամակները, դիմումները, գրությունները, որոնք կցված են գործին թողնել գործում:

Դատվճիռը վճռաբեկության կարգով գանգատարկման եւ բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություններ**

Իսկականի հետ ճիշտ է

ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

28/11-74թ.

Հ. Ս.

Անդրանիկ Մարգարյան

Անդրանիկ Նահապետի Մարգարյանը ծնվել է 1951 թ., Երեւան քաղաքում: Ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Մինչեւ կալանավորվելն ինժեներ է աշխատել: Դեռեւս դպրոցում՝ 1965-1967 թթ. կազմակերպել է «Պայքար աշակերտական միություն» անվամբ գաղտնի գործող կազմակերպությունը: Կազմակերպությունն զբաղվել է հայրենասիրական բնույթի թռուցիկների պատրաստմամբ ու տարածմամբ: 1967 թվականին, ծանոթանալով Պարույր Հայրիկյանի հետ, անդամագրվում է «Շանթ» կազմակերպությանն, իսկ 1968 թվականից Ազգային միացյալ կուսակցության անդամ է: 1974-ին կալանավորված Պարույր Հայրիկյանը Պետանվտանգության կոմիտեի մեկուսարանից՝ մեկուսարանի աշխատակիցներից մեկի միջոցով Անդրանիկ Մարգարյանին է ուղարկում իր մշակած ԱՄԿ նոր ծրագիրը, կանոնադրությունն ու այլ փաստաթղթեր, դրանք բազմացնելու ու տարածելու հանձնարարությամբ: Մարգարյանը վերցնում է փաթեթը եւ վերցնելուց հետո՝ 1974-ի նոյեմբերին կալանավորվում է: 1975 թ. փետրվարին ՀՍԽՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա ու պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը) դատապարտվում է երեք տարի ազատազրկման: Պատիժը կրում է սկզբում Մորդովիայի, ապա՝ Պերմի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայում: Պերմի քաղկալանավայրում նա ներման խնդրագիր է գրում եւ 1976-ի նոյեմբերին, ընդհանուր առմամբ՝ անազատության պայմաններում երկու տարի անցկացնելուց հետո, վաղաժամ ազատ է արձակվում: 1987-ին ընտրվում է նոր կազմավորված «Հայ դատ» կազմակերպության նախագահ: Այնուհետեւ՝ 1992-ին անդամագրվում է Հայաստանի հանրապետական կուսակցությանը: 1995-ին ընտրվում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: 2000-ի մայիսին նշանակվել է ՀՀ վարչապետ եւ մինչեւ իր մահը՝ 2007 թ. մարտի 25-ը, ղեկավարել է ՀՀ կառավարությունը:

Անդրանիկ Մարգարյան
լուս. քր. գործից

Անդրանիկ Մարգարյան

Պատմում է Գագիկ Հովսեփյանը

Չնայած այն հանգամանքին, որ ԱՄԿ անդամ եմ դարձել 1968 թվականին, Անդրանիկ Մարգարյանին ծանոթ չեմ եղել: Այն տարիներին գործող գաղտնապահության կանոններն այլ էին: Մենք գործել ենք նույն կուսակցության շրջանակներում, բայց տարբեր խմբակներում: Միայն 1974 թվականի նոյեմբերին իմացա, որ իմ փոխարեն մեկ ուրիշն է կալանավորվել: Այդ կալանավորվածը Մարգարյան Անդրանիկն էր: Հետագայում, նրա ազատ արձակվելուց հետո մտերմացանք:

Երբ Պարույր Հայրիկյանն իր առաջին պատժաչափն ավարտեց եւ 1973-ին վերադարձավ Հայաստան, ԱՄԿ-ն սկսեց շատ ակտիվ գործունեություն ծավալել: Ամեն օր սպասվում էին նորանոր կալանավորումներ: Պարույրի հետ պայմանավորվել էինք՝ եթե ձերբակալեն իրեն, փորձելու է կալանավայրից կապ հաստատել ինձ հետ: Մեկը կար, որին չէի ճանաչում, բայց իր գոյության մասին գիտեի: Պարույրի հետ նրան տվել էինք «Սմբատ» պայմանական անունը: Ինձ պետք է մեկը մոտենար որպես «Սմբատ» եւ ասեր, որ Պարույրն է ուղարկել իրեն: Ճիշտ է, ես «Սմբատ» կեղծանունը կրող մարդուն չէի ճանաչում, բայց իմ խմբում տղաներ կային, որոնք ճանաչում էին նրան: Երբ երկրորդ անգամ՝ 1974-ին Պարույրին ձերբակալեցին, որոշ ժամանակ անց մեկը զանգահարեց մեր տուն, ներկայացավ որպես Սմբատ, ասաց, որ Պարույրի կողմից է ուղարկված եւ պետք է անպայման հանդիպի ինձ, քանի որ բան ունի փոխանցելու: Պայմանավորվեցինք հանդիպել Շրջանայինում: Իմ խմբի այն տղաներին, ովքեր ճանաչում էին Սմբատին, տեղեկացրի մեր հանդիպման մասին եւ ասացի, որ հեռվից հետեւեն մեզ ու տեսնեն՝ արդյո՞ք այդ մարդն իրական Սմբատն է: Շատ մեծ կասկածներ ունեի: Տրամաբանությունը հուշում էր, որ սա կարող է սադրանք լինել: Պրակտիկորեն անհնար էր, որ Պարույրը կարողանար ՊԱԿ-ի մեկուսարանից մարդ ուղարկել ինձ մոտ: Եկավ Սմբատ ներկայացողը: Չափազանց շփոթված էր ու լարված: Առաջարկեց մտնել մոտակա շենքի մուտքը: Հենց մտանք՝ անմիջապես ասացի. «Տե՛ս, չգիտեմ, թե դու ով ես, եթե Սմբատը չես, ճիշտն ասա, որովհետեւ մեզ երկու հոգի, որոնք ճանաչում են Սմբատին, հետեւում են, եւ եթե դու իսկական Սմբատը չես, հենց հիմա կպարզվի»: Նման բան նա հաստատ չէր սպասում: Անհանգստացած սկսեց կմկմալ, թե Պարույրն ինձ համար ՊԱԿ-ի մեկուսարանից բան է փոխանցել, բայց փաթեթն այդ պահին մոտը չի, հետո կզանգահարի ինձ: Ու արագ հեռացավ: Կարելի է ասել՝ փախավ: Մեր տղաներն անմիջապես տեղեկացրին ինձ, որ այդ մարդը Սմբատը չէ: Ինձ հետ հանդիպելու փորձ նա այլեւս չարեց: Ավելի ուշ իմացա, որ նույն մարդը Պարույրի անունից փաթեթ է տվել Անդրանիկին: Անդրանիկը վերցրել է, ու հենց դա էլ նրա կալանավորման առիթ է դարձել:

Այդ փաթեթում Պարույրի՝ մեկուսարանում մշակած ԱՄԿ ծրագրի եւ կանոնադրության տարբերակն էր: Չգիտես ինչու, նա հավատացել էր, որ գտնվելով ՊԱԿ-ի մեկուսարանում՝ կարողացել է հավաքագրել ՊԱԿ-ի աշխատակցին, եւ որ նա այսուհետ դառնալու է իր կապավորը: Ինչի՞ արդյունք էր սա՝ ռոմանտիզմի՞, միամտությա՞ն, կինոների ազդեցությա՞ն, ասել չեմ կարող: Փաստը մնում է փաստ, որ ՊԱԿ-ի աշխատակիցը ոչ թե դարձել էր Պարույրի կապավորը, այլ որպես չեկիստ կատարում էր անվտանգության կոմիտեի աշխատակցի իր գործը՝ բացահայտում էր դրսում մնացած ԱՄԿ-ականներին: Եվ երբ ինձ հետ հանդիպումից հետո պարզեցին, որ կռահել եմ իրենց խաղն ու փաթեթը չեմ վերցնելու, իմ տարբերակից հրաժարվեցին: Հետո իմանում

եմ, որ այս նույն տղան փաթեթ է տվել Մարգարյան Անդրանիկին, ու Անդրանիկին կալանավորել են: Թե կալանավորվելուց հետո ինչ է խոսել Անդրանիկը, ինչպես է պահել իրեն, ինչ է արել, ինչ ցուցմունքներ է տվել՝ ես չգիտեմ:

Սա է ողջ պատմությունը: Անդրանիկի ազատ արձակվելուց հետո մենք մտերմացանք: Նա շատ էր վիրավորված Պարույրից: Համարում էր, որ Պարույրի մեղքով է կալանավորվել:

Հետագայում ես Պարույրից բացատրություն եմ պահանջել: Ցանկանում էի հասկանալ, թե ինչպես է կարողացել, վստահելով չեկիստին, վտանգել դրսում մնացած իր ընկերներին: Պարույրը պատասխանեց, թե հավատացել է նրան:

Երկու նամակի պատմություն

Խորհրդային ամբողջատիրության տարիներին՝ մինչեւ 1960-ականների կեսերը խորհրդային տարբեր հանրապետություններում գործող այլախոհներն իրենց գործունեությունը ծավալում էին իրարից անջատ ու միմյանցից անտեղյակ: Ստալինյան շրջանում գործող այլախոհները տարրալուծվում էին բռնադատվածների՝ միլիոնների հասնող հոծ բազմության մեջ ու որպես առանձին գործոն երեւալու հնարավորություն չունեին: Ստալինից հետո գործող կիսագաղտնի ու գաղտնի խմբակների անդամներն ու առանձին գործող այլախոհները դեռ չունեին 50-60-70-ական թվականների այլախոհների հնարավորությունները, որպեսզի կարողանային կապ պահպանել իրար հետ: 20-րդ դարի 60-ականներից տարբեր հանրապետություններում գործող այլախոհներն արդեն առնչվում էին, եւ աստիճանաբար այդ կապերն ավելի էին սերտանում: Առաջին հերթին դրան նպաստում էին կալանավայրերը: Քաղաքական բանտարկյալներին, որոնց խորհրդային երկիրն անվանում էր հատուկ վտանգավոր պետական հանցագործներ, սկսել էին պահել հատուկ առանձնացված ու խիստ մեկուսացված կալանավայրերում՝ իրենց կամքից անկախ քաղբանտարկյալներին ընձեռելով իրար հետ ծանոթանալու, շփվելու ու մտերմանալու հնարավորություն: Ազատ արձակվելուց հետո ապրելով նույն՝ խորհրդային երկրում, նրանք շարունակում էին կապ պահպանել իրար հետ:

1968 թվականից Մոսկվայում սկսեց հրապարակվել «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկան» («Хроника текущих событий»), որն անդրադառնում էր Խորհրդային Միությունում առկա քաղաքական հետապնդումներին, դատավարություններին, կալանավայրերում գտնվող քաղբանտարկյալներին եւ այլախոհությանն ու ազատամտությանն ընդհանրապես: «Խրոնիկայի» տեղեկատվությունն այդ տարիներին չափազանց մեծ նշանակություն ուներ յուրաքանչյուր այլախոհի, ազատամիտի, քաղբանտարկյալի ու քաղհալածյալի համար: Դրա միջոցով մարդկանց մասին տեղեկատվություն էր տարածվում երկաթյա վարագույրից այն կողմ: Մարդկային խեղվող ճակատագրերի մասին խոսում էր ազատ աշխարհի մամուլը: 20-րդ դարի երկրորդ կեսի աշխարհն այլեւս նախկինը չէր, եւ ինչքան էլ վարագույրը երկաթյա էր, տեղեկատվությունը թափանցում էր դուրս, եւ խորհրդային իշխանությունները ժամանակ առ ժամանակ ստիպված էին լինում իրենց համար տհաճ հարցերի պատասխանել: 1976 թ. մայիսին հիմնադրվեց Մոսկվայի հելսինկյան խումբը, որից հետո նույնանման Հելսինկյան խմբեր հայտնարարվեցին Ուկրաինայում, Լիտվայում, Վրաստանում եւ Հայաստանում: «Ընթացիկ ի-

ռադարձությունների խրոնիկան» հրապարակվեց մինչեւ 1983 թվականը եւ, այլեւս չդիմանալով անընդհատ շարունակվող բռնություններին, հալածանքներին ու կալանավորումներին, փակվեց, իսկ Մոսկվայի հելսինկյան խումբն իր գործունեության դադարեցման մասին հայտարարեց 1982 թվականին: Հայաստանի հելսինկյան խմբի գործով վերջին դատավարությունը տեղի է ունեցել 1983-ի հունիսին: Ե՛վ Հելսինկյան խմբերը, եւ՛ «Խրոնիկան» խիստ անցանկալի երեւույթներ էին խորհրդային իշխանության համար: Բայց, չնայած աներեւակայելի հալածանքներին, չէին կարողանում ոչնչացնել անցանկալի այդ կառույցները: Խորհրդային իշխանությունները եւ հատուկ ծառայություններն անընդհատ նորանոր սադրանքներ էին հորինում այս կազմակերպություններին եւ սրանցում ներգրավված անհատներին արատավորելու ու անվանարկելու համար: Բավական է հիշել խորհրդային մամուլում ժամանակ առ ժամանակ տպագրվող այն դատապարտումները, երբ խորհրդային ռեժիմին հլու-հնազանդ մտավորականները դատապարտում էին այս կամ այն այլախոհին:

Այդ տարիներին «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը Խորհրդային Միության մասին աշխարհին եւ խորհրդային ունկնդիրներին ԽՍՀՄ-ի մասին ճշմարիտ տեղեկատվություն տրամադրող ռադիոկայաններից մեկն էր եւ առանձնահատուկ ատելի էր խորհրդային իշխանության համար: Այս ռադիոկայանի տրամադրած տեղեկատվության մեջ մեծ բաժին էր կազմում հայերին վերաբերող մասը: Եւ ահա գոնե հայերի եւ Հայաստանի մասով «Ամերիկայի ձայն»-ին եւ հայտնի իրավապաշտպաններին վնասազերծելու նպատակով՝ ԽՍՀՄ հատուկ ծառայությունները մի ծրագիր են մշակում, որի նպատակը պետք է լիներ արգելել իրավապաշտպաններին եւ ռադիոկայաններին՝ անդրադառնալ Հայաստանին, հայաստանյան դեպքերին եւ հայ քաղբանտարկյալներին: Ըստ այդ ծրագրի՝ նման պահանջով պետք է հանդես գային հայ քաղբանտարկյալները: Դրա համար որոշ հայ նախկին քաղբանտարկյալների՝ ոմանց մտացածին ու կասկածելի փաստարկներով մոլորեցնելով, ոմանց վստահությունը չարաշահելով, իսկ ոմանց միամտությունը պարզապես օգտագործելով, 1977 թվականին փորձում են դրդել, որ Անդրեյ Սախարովի եւ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի դեմ ստորագրված երկու սադրիչ նամակ հրապարակեն: Ստորագրություններ հավաքելու գործը հանձն առնողներից մեկը ներման խնդրագրով կալանավայրից վաղաժամ ազատ արձակված Անդրանիկ Մարգարյանն էր: Ահա այն երկու նամակները, որ պետք է ստորագրեին հայ այլախոհները.

Քաղաքացի Սախարովին

Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանում ազգային հողի վրա դատապարտվածների առկայության փաստը քաղաքական զանազան նպատակներով օգտագործելը համարում ենք անհարկի եւ պահանջում ենք այսուհետ դադարեցնել վերոհիշյալը օգտագործելուց:

Հայտարարությունը հաստատում ենք…

«Ամերիկայի ձայն» ռադիոկայանին

Խնդրում ենք Ձեզ՝ Ձեր ռադիոկայանով հաղորդել ի լուր շահագրգիռ շրջանների, որ մենք պահանջում ենք՝ Հայաստանում ազգային հողի վրա դատապարտվածների առկայության փաստը չօգտագործվի զանազան քաղաքական նպատակներով: Այդ իրավունքը մենք վերապահում ենք միայն հայ ժողովրդին:

Հայտարարությունը հաստատում ենք…

Պահանջվող ստորագրությունները հավաքելու նպատակով Անդրանիկ Մարգարյա - նը նամակներ է գրում կալանավայրերում գտնվող քաղբանտարկյալներին: Նրա երկու նամակները, որոնցից մեկը վերաբերում է հենց այս թեմային, ամբողջությամբ հրապարակվել են Անդրանիկ Մարգարյանի հիշատակին նվիրված 2007 թ. հրատարակված «Նվիրյալը» գրքում: Ներկայացնենք հատված՝ Ռազմիկ Մարկոսյանին գրած նրա նամակից. **«Այժմ խոսեմ վերը նշված հանգամանքների մասին: Վերջերս արտասահմանյան ռադիոն շատ է խոսում այն մարդկանց մասին, ովքեր նստած են եղել ճամբարներում կամ այժմ նստած են, խոսքս հայերին է վերաբերում: Նրանք հաղորդում են ոչ ճիշտ ինֆորմացիա մեր մասին, իրենց քիթը մտցնում են մեր ներքին գործերի մեջ, որը նրանք երբեք չեն պաշտպանել եւ մինչեւ այժմ, բացի վնասից, օգուտ չեն տվել: Եթե հիշում ես՝ N19 ճամբարում մեր խոսակցություններից մեկում ավելի մանրամասն ենք այդ հարցը քննարկել եւ եկել էինք եզրակացության, որ ոչ մի օտար ուժ, շարժում մեզ՝ հայերիս պետք չէ, որ նրանք միշտ ցանկացել են մեզ օգտագործել իրենց նպատակների համար՝ սկսած քրիստոնեությունից, եղեռնից մինչեւ հիմա: Աշխարհն ստեղծվելուց ի վեր՝ մենք եղել ենք բարու կողմը, եւ կարիք չկա, որ չարը խառնվի մեր գործերին, թեկուզ մեր մասին խոսի…**

Մենք չենք ուզում խաղալիք դառնալ քաղաքական խաղերում: Կյանքը ցույց է տվել, որ այդ խաղերում միշտ էլ խաղալիքները ջարդվել են, կորել կամ էլ, խաղին մասնակցելուց հետո, իրենց դերը կատարելուց հետո, դեն են շպրտվել:

Այս միտքը միշտ էլ եղել է հայի մտքում, ինչպես եւ քեզ մոտ: Հետեւաբար, օրինական են եւ օրինաչափ այն քայլերը, որոնց մենք կդիմենք չարի դեմ գործելու համար…

Նախկին ճամբարականների մեծ մասը այս կարծիքին է, եւ որոշել ենք պատասխանել նրանց: Գրելու ենք հայտարարություններ, եւ ուղարկվելու են Սախարովին եւ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանին: Այս հայտարարությունները ստորագրելու են (արդեն համաձայն են եւ սպասում են ձեր պատասխանին) մոտ 30 հոգի՝ Ստեփանը, Հովիկը, Բաբայանը, Աշոտը, ես, Հակոբջանը եւ ուրիշներ: Գրում եմ այդ հայտարարությունների տեքստերը»:

Ամենայն հավանականությամբ, ե՛ւ նրան, ե՛ւ մյուս ստորագրություն հավաքողներին այդպես էլ չի հաջողվել բավարար թվով մարդկանցից համաձայնություն ստանալ, որոնց ստորագրությունները լուրջ կշիռ կհաղորդեին այս նամակներին: Ռազմիկ Մարկոսյանին ուղղված նամակում նշված «մոտ 30 հոգի» արտահայտությունն էլ երեւի գրվել է Մարկոսյանի վրա համապատասխան տպավորություն կամ ազդեցություն թողնելու նպատակով: Հաջողության չհասնելով՝ գործը նախաձեռնողները ստիպված են լինում հրաժարվել այս նամակների հրապարակման մտադրությունից: Մինչ այդ, Անդրանիկ Մարգարյանը կալանավայրում գտնվող քաղբանտարկյալ Ռազմիկ Մարկոսյանին գրած իր մեկ այլ նամակում հորդորում է նրան ներման խնդրագիր գրել ու վաղաժամ ազատ արձակվել: Հատված այդ նամակից. **«Գիտես երեւի, որ Աշոտը դեկտեմբերի 30-ից տանն է, արդեն աշխատում է, հանդիպում է ձերոնց: Դե, Ազատն էլ ապրիլի 5-ից կլինի տանը: Եղբայրս, ցանկությունս է, ոչ միայն իմը, այլ բոլորի, որ դու էլ շուտ գաս տուն, այնպես, ինչպես մենք: Ձերոնց քո մոտ գալու հիմնական նպատակներից մեկն է, որ ասեն քեզ, թե ինչպես ենք մենք ազատվել, չնայած չէինք հավատում, որ կազատվենք: Նրանց գալը կախված է նաեւ քեզանից»:**

Կալանավայրերում գտնվող ԱՍԿ-ականները, չնայած չեկիստների բոլոր ջանքերին, կտրականապես մերժում էին ներման խնդրագրեր գրելու եւ ժամկետից շուտ ազատ արձակվելու առաջարկները: Նման կերպ ազատ արձակվելու համաձայնություն

տվել են միայն Ազատ Արշակյանը, Անդրանիկ Մարգարյանը, Աշոտ Նավասարդյանը, Արարատ Թովմասյանը եւ Ռուբեն Խաչատրյանը: Վերջինս ազատ է արձակվել հիվանդության պատճառով, եւ նրա ազատ արձակման համար խնդրագիր էր գրել ոչ թե ինքը, այլ՝ կինը: Չնայած մերժումներին, Պետանվտանգության կոմիտեն այս հարցում շոշափելի արդյունքի հասնելու հույսը երբեք չէր կորցնում: Ամեն կերպ ջանում էր ստանալ որքան հնարավոր է շատ ներման խնդրագրեր: Նպատակը պարզ էր՝ ջարդել ԱՍԿ-ա - կանների ոգին, ցույց տալ դրսում մնացածներին, որ անկախության համար պայքարն անհեռանկար գործ է, եւ առաջամարտիկները հրաժարվում են այդ պայքարից: Այս տողերը գրելով՝ մենք Անդրանիկ Մարգարյանին մեղադրանքներ ներկայացնելու նպատակ չենք հետապնդում: Թե ով էր նա, եւ ընդհանրապես ով՝ ով էր, ինչու էր հանձն առել այս դերը՝ կպարզվի շատ ավելի ուշ, երբ կբացվեն ՊԱԿ-ի արխիվը, եւ լյուստրացիա տեղի կունենա: Ամենեւին չի բացառվում, որ իրոք՝ Անդրանիկ Մարգարյանը հետեւություն էր արել, թե անկախության համար պայքարն անհեռանկար գործ է, եւ անհրաժեշտ է՝ այդ իրողությունը չգիտակցող եւ իրենց կյանքը կալանավայրերում անիմաստ անցկացնել պատրաստվող ընկերներին համոզել դրանում: Մեր նպատակն այստեղ մարդկանց դատապարտելը կամ գնահատականներ տալը չէ: Մեր խնդիրը 1970-ականների կեսերի իրադարձությունների ճշգրիտ լուսապատճենումն է: Այս նամակները, չնայած այն հանգամանքին, որ միայն չնչին ազդեցություն կարող էին ունենալ ժամանակի այլախոհական մտքի վրա, այնուամենայնիվ այդ շրջանի հայաստանյան այլախոհության պատմության մաս են կազմում: Մենք պարտավոր ենք շեշտել, որ եղել է նաեւ նման մտայնություն: Սրանից բացի, մեր այս անդրադարձի համար շատ ավելի կարեւոր պատճառ է հանդիսացել այս նամակների հրապարակված լինելու հանգամանքը: Այս նամակները հրապարակվել են, դրանք արդեն շրջանառության մեջ են դրված, այլեւս հասարակության սեփականությունն են դարձել, եւ մենք դրանց չանդրադառնալ չէինք կարող: Թե ինչու եւ ինչ նպատակով են Անդրանիկ Մարգարյանի կյանքի ու գործունեության մասին պատմող «Նվիրյալը» գրքի հեղինակները նրա գրած բազմաթիվ նամակներից հենց սրանք ընտրել եւ հրապարակել՝ պարզ չէ: Ինքը՝ Անդրանիկ Մարգարյանը երեւի չէր ցանկանա դրանք հրապարակված տեսնել: Այս համատեքստում հարկ ենք համարում միայն ընդգծել, որ 2001 թվականին Երեւանում՝ Սախարովի անվան հրապարակում տեղադրված Անդրեյ Սախարովի կիսանդրու բացման արարողության ժամանակ Անդրանիկ Մարգարյանը ընդգծված այլախոհական եւ Սախարովի վաստակը գնահատող ելույթով հանդես եկավ:

Անդրանիկ Մարգարյանի գործով մեղադրական եզրակացությունը

Անդրանիկ Մարգարյանի հարազատները միակն էին, որ այդպես էլ, չնայած մեր բազմաթիվ փորձերին, չցանկացան տալ իրենց համաձայնությունը, որպեսզի ԱԱԾ արխիվից կարողանանք ստանալ նրա նկատմամբ կայացված դատավճիռը: Դա է պատճառը, որ հրապարակում ենք նրա մեղադրական եզրակացությունը՝ արտատպելով հետմահու Անդրանիկ Մարգարյանին նվիրված 2007թ. հրատարակված «Նվիրյալը» գրքից:

«ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՍՍՀ ԴԱՏԱԽԱԶ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ 2-ՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
Ս. ՕՍԻՊՅԱՆ
«30» հունվարի 1975թ.

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Նահապետի Մարգարյանի նկատմամբ նո. 34 քրեական գործով, որը մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր.-ի 65 հոդ. 1-ին մասով եւ 67 հոդ. նախատեսված հանցագործություններում:

Սույն քրեական գործը հարուցվել է 1974թ. նոյեմբերի 10-ին ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր պետական անվտանգության կոմիտեի կողմից, Անդրանիկ Նահապետի Մարգարյանի ձերբակալման ու նրա մոտից հակասովետական ազգայնական բովանդակության նյութեր հայտնաբերելու կապակցությամբ:

1974թ. նոյեմբերի 14-ին Մարգարյանը կալանավորվել է: (հ.1 գթ. 2-68) Գործով կատարված քննությամբ հաստատվել է, որ մեղադրյալ Մարգարյանը տրամադրված լինելով հակասովետականորեն, ազգայնականորեն իր համախոհներ՝ հետագայում ՀՍՍՀ քր. օր.-ի 65 եւ 67 հոդվածներով դատապարտված Պարույր Արշավիրի Հայրիկյանի, Ազատ Լեւիկի Արշակյանի եւ ուրիշների հետ միասին հանդիսացել է իրենց կողմից «Ազգային միացյալ կուսակցություն» կոչվող գաղտնի հակասովետական կազմակերպության անդամ եւ սովետական իշխանությունը քայքայելու նպատակով տարել է հակասովետական ագիտացիա ու պրոպագանդա՝ ուղղված Հայաստանը ՍՍՀՄ-ից անջատելուն եւ այսպես կոչվող «անկախ հայկական պետություն» ստեղծելուն, պատրաստել եւ տարածել է ՍՍԿԿ եւ Սովետական պետության ազգային քաղաքականությունը, սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ պարունակող նյութեր:

Դեռեւս 1965-1967թթ. Մարգարյանը Երեւան քաղաքի նո. նո. 123 եւ 3 դպրոցի աշակերտների թվից, որտեղ ինքն է սովորել, կազմակաերպել է «Պայքար աշակերտական միություն» կոչվող գաղտնի խմբակը եւ զբաղվել դրդիչ բնույթի թռուցիկներ պատրաստելով եւ տարածելով:

1967թ. աշնանը, Մարգարյանը ազգայնական հայացքների ընդհանրության հողի վրա, կապ է հաստատել վերը նշված Հայրիկյանի հետ, որի կողմից ընդգրկվել է «Շանթ» կոչվող անլեգալ խմբի մեջ, մասնակցել է այդ խմբի «ծրագիր եւ կանոնադրություն» կազմելուն, մուծել է անդամավճար, իսկ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լսարաններում կայացած հավաքներում, որտեղ ինքն է սովորել, Հայրիկյան Պարույրի, Արշակյան Ազատի, Աշիկյան Հակոբի, Ջղալյան Կարապետի, Բոյաջյան Արամի եւ խմբի մյուս մասնակիցների հետ քննարկել է հակասովետական ազգայնական բովանդակության նյութեր, մասնավորապես անլեգալ հրապարակված «Փարոս-1» թերթը:

Այս թերթը Մարգարյանն այդ նույն ժամանակ տարածել է «Պայքար աշակերտական միության» խմբակի անդամների միջեւ:

Ձերբակալման ժամանակ Մարգարյանի մոտից առգրավված «Ազգային միացյալ կուսակցության» ծրագիրը, կանոնադրությունը եւ երդումը եւ մյուս փաստաթղթերը, ինչպես եւ «Փարոս-1» թերթը եւ «Շանթ» անլեգալ խմբի «ծրագիրը եւ կանոնադրությունը» պարունակում են հակասովետական ազգայնական գաղափարներ եւ թշնամական

հարձակումներ մարքս-լենինյան ուսմունքի դեմ, որն իբր հետապնդում է փոքր ազգերի շահագործմանը, պայքարի կոչ՝ Հայաստանի՝ ՍՍՀ Միության կազմից դուրս գալու եւ այսպես կոչված «անկախ հայկական պետություն» ստեղծելու համար: (հ.1 գբ. 9-45, 114-138, 203-210, 216-287, հ.2 գբ. 63-94, 96-101, 227-231, հ. 3 գբ. 1-23, 68-177, հ.4 գբ. 38-49, 54-58, 62-67, 70-79)

1967թ. դեկտեմբերին, «Շանթ» եւ «Պայքար աշակերտական միության» խմբերի բացահայտման կապակցությամբ, Մարգարյանը ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր պետական անվտանգության կոմիտեի կողմից ենթարկվել է պրոֆիլակտիկայի: Չնայած դրան, մնալով ազգայնական դիրքերի վրա, նա շարունակել է հանցավոր կապ պահպանել Հայրիկյան Պարույրի եւ մյուս համախոհների հետ:

1968թ. Մարգարյանը մտել է «Ազգային միացյալ կուսակցություն» կոչվող անլեգալ հակասովետական կազմակերպության մեջ եւ նրա մասնակիցներ Հայրիկյան Պարույրի եւ մյուսների հետ միասին գաղտնի հավաքներում քննարկել է ավելի կոնսպիրատիվ հիմքերի վրա հետագա թշնամական գործունեություն տանելու հարցերը:

Շարադրված փաստերը մեղադրյալ Մարգարյանը ընդունել է: Դրանք հաստատվում են նաեւ հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա եւ հակասովետական կազմակերպական գործունեություն տանելու համար դատապարտվածներ Հայրիկյան Պարույրի, Արշակյան Ազատի, Նավասարդյան Աշոտի, Աշիկյան Հակոբի, Բարսեղով Ռաֆայելի, Խաչատրյան Աշոտի, վկաներ՝ Մելոյան Թելմանի, Մկրտչյան Վարդանի եւ մյուսների ցուցմունքներով, զննման արձանագրություններով, պրոֆիլակտիկայի նյութերով եւ իրեղեն ապացույցներով, Մարգարյանի մոտից վերցված փաստաթղթերով, «Շանթ» խմբի «ծրագրով, կանոնադրությամբ եւ թռուցիկով», «Փարոս-1» թերթով: (հ.1 գբ. 10-46, 68-87, 112-300, հ.2 գբ. 1-101, 113-140, հ.3 գբ. 24-140, 178-206, հ.4 գբ. 121-146, հ.5 գբ. 1-41)

1968թ. վերջերին Մարգարյանը Հայրիկյան Պարույրի, Ջղալյան Կարապետի, եւ Աշիկյան Հակոբի հետ միասին Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լսարաններից մեկում պատրաստել է «Անկախությունը որպես կենսական պահանջ» եւ «Փորձառություն առանց փորձի» վերնագրերով հոդվածները եւ այնուհետեւ 1969թ. հունվարին նրանց մասնակցությամբ, Երեւանում, Սարի-Թաղի Մ. Գորկու փողոցի, 104 հասցեով գտնվող կոնսպիրատիվ բնակարանում, ցինկե կլիշեի վրա, օգտագործելով տպագրական ներկ, բազմացրել է մեծ քանակությամբ «Երկունք» վերնագրով թռուցիկներ՝ վերոհիշյալ հոդվածները եւ տարածել է Երեւան քաղաքում:

«Երկունք» թռուցիկները պարունակում են զրպարտչական հերյուրանքներ ազգային-ազատագրական շարժումների առկայության մասին Սովետական Միությունում, անվանելով այն «ռուսական կայսրություն», որն իբր մարքսիզմի քողի տակ իրագործում է շովինիստական նպատակներ, այն մասին, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատումը հանդիսացել է «Արյունալի մայրամուտ» եւ այլ թշնամական պնդումներ: Թռուցիկներում տրվում են «ընդհատակյա կազմակերպություններին հանձնարարություններ» կոնսպիրացիա պահպանելու եղանակների մասին, կազմակերպության անդամների վարքագծի մասին՝ նրանց հնարավոր բանտարկության դեպքում:

1969թ. հուլիսին, Հայրիկյանի բանտարկության կապակցությամբ, նրանց կողմից կատարված հանցագործությունները թաքցնելու նպատակով, Մարգարյանը պայմանավորվելով անլեգալ կազմակերպության անդամներ, հետագայում դատապարտվածներ Աշիկյան Հակոբի, Նավասարդյան Աշոտի հետ, վերջիններից ստացել է պահելու նպատակով հակասովետական ազգայնական բովանդակությամբ նյութեր:

1969թ հակասովետական կազմակերպության մասնակիցներ Հայրիկյանի, Նավասարդյանի գործով քննության ընթացքում, ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր պետական անվտանգության կոմիտեի կողմից Մարգարյանը կրկին նախազգուշացվել է ՍՍՀՄ պետական անվտանգությանը վնաս հասցնող իր գործունեության առիթով:

Շարադրվածը հաստատվում է մեղադրյալ Անդրանիկ Մարգարյանի, դատապարտվածներ՝ Հայրիկյան Պարույրի, Նավասարդյան Աշոտի, վկաներ՝ Աշիկյան Հակոբի, Ջղալյան Կարապետի, Բարսեղով Ռաֆայելի, Խաչատրյան Աշոտի, Մելոյան Թելմանի, Մկրտչյան Վարդանի, Ենգիբարյան Սուսաննայի, Բոյաջյան Արամի, եւ մյուսների ցուցմունքներով, զննման արձանագրությունով եւ իրեղեն ապացույցով, «Երկունք» թռուցիկով: (հ.1 գթ. 68-70, 88-138, 187-193, 197-207, 211-257, 279-284, հ.2 գթ. 1-140, 222-231, հ. 3 1-67, 140-206, հ. 4 123-130, հ. 5 1-20)

Նախազգուշացումից ճիշտ եզրակացություններ չանելով՝ Մարգարյանը 1970-1974թթ. ընթացքում շարունակել է տանել ակտիվ կազմակերպական աշխատանք՝ անլեգալ խմբերի ստեղծման եւ զրպարտչական ազգայնական բովանդակության գրականություն հետագայում տարածելու ուղղությամբ:

Նա նամակագրական կապ է պահպանել կալանավայրում գտնվող Հայրիկյանի հետ, որը 1971թ. նրան է ուղարկել իր գործով դատավճռի պատճենը՝ արտասահման ուղարկելու եւ թշնամական նպատակներով օգտագործելու համար:

1971-1973թթ. Երեւանում Մարգարյանը կապ հաստատելով վկաներ Քեշքերյան Արտեմիսի, Մուղդուսյան Զոհրաբի, Ղազանչյան Ելիզավետայի, Պողոսյան Օֆելյայի հետ անլեգալ աշխատանքում ներգրավելու նպատակով, նրանց մշակել է ազգայնական ոգով, նրանց հետ քննարկել է «հայրենասիրական» բնույթի հարցեր, համոզել է «անկախ հայկական պետության» ստեղծման համար պայքարի անհրաժշտության մեջ, հավաքել է նրանցից դրամ դատապարտված «հայրենասերների» ընտանիքներին օգնություն ցույց տալու նպատակով:

Բերված հանգամանքները հաստատվում են Մեղադրյալ Մարգարյան Անդրանիկի, դատապարտված Հայրիկյան Պարույրի, վկաներ Բարսեղով Ռաֆայելի, Քեշքերյան Արտեմիսի, Մուղդուսյան Զոհրաբի, Ղազանչյան Ելիզավետայի, Պողոսյան Օֆելյայի ցուցմունքներով: (հ.1 գթ. 114-119, 143-144, 193-210-283-286, հ. 4 գթ. 26-33, 50-54, 59-62, 5հ. 20-31)

1973թ փետրվարի 25-ին մեղադրյալ Մարգարյանը Երեւան քաղաքում մասնակցել է հակասովետական գործունեության համար ներկայումս դատապարտված Խաչատրյան Ռուբենի բնակարանում կազմակերպված «Վարդանաց օրվան» նվիրված հավաքին, որում տեղի են ունեցել ազգայնական, քաղաքականապես վնասակար, դրդիչ բովանդակության ելույթներ:

Այդ կապակցությամբ 1973թ դեկտեմբերի 17-ին ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության 1972թ. դեկտեմբերի 25-ի «Պետանվտանգության օրգանների կողմից որպես պրոֆիլակտիկ ներգործության միջոցառում նախազգուշացում կիրառելու մասին» հրամանագրի համապատասխան, ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր պետանվ - տանգության կոմիտեի կողմից Մարգարյանին տրվել է պաշտոնական նախազգուշա - ցում: Սակայն դրանից հետո էլ նա չի դադարեցրել իր հանցավոր գործունեությունը: (հ.1 68-70, 85-86, 167-170, 197-211, հ.3 165-205)

Մարգարյանը շարունակել է կապ պահպանել կալանավայրից վերադարձած Հայրիկյանի եւ կատարված հանցագործությունների մյուս մասնակիցների հետ:

1973թ. ամռանը Մարգարյանը արտագրել է Հայրիկյանից եւ պահել ազգայնական զրպարտչական բովանդակության ձեռագիր բանաստեղծություններ եւ երգեր:

Այդ նյութերում, մասնավորապես խուզարկության ժամանակ Մարգարյանի մոտից վերցված «Հայ ենք մենք», «Կրկին ոտքի» երգերում հայ ժողովուրդը նկարագրվում է որպես «իրավազուրկ», իր նախկին փառքը կորցրած, պարունակում են կոչ «վրիժառության», «միասնության» եւ «պայքարի», ազատ, միասնական Հայաստանի համար գովաբանվում են բուրժուա-նացիոնալիստական «դաշնակցություն» կուսակցության գործիչները:

1973թ. հոկտեմբերի վերջին Մարգարյանը, Երեւան քաղաքում Հայրիկյան Պարույրից ստացել է ցինկե կլիշե՝ «Փարոս-2» լրացուցիչ» վերնագրով թռուցիկի տեսքով, «Ազգային միացյալ կուսակցության գերագույն խորհուրդ» ստորագրությամբ, եւ բազմացրել է դրանք մեծ քանակությամբ: Դրանցից 110 օրինակ այդ նույն ժամանակ, նա տվել է տարածելու համար Արշակյան Ազատին, որը դրանց ավելի քան 100 օրինակ, 1973թ. նոյեմբերի 2-ի երեկոյան, 1974թ. դատապարտված Առաքելյան Գագիկի եւ վկա Մուրադյան Սամվելի միջոցով տարածել է Երեւանի Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, իսկ այդ թռուցիկների մնացած մասը (ավելի քան 70 օրինակ) տարածել է Երեւան քաղաքում ինքը՝ Մարգարյանը: Նշված թռուցիկներից երեք օրինակ տարածվել են նաեւ 1974թ. հակասովետական գործունեության համար դատապարտված Նավասարդյան Աշոտի եւ Սահակյան Քաջիկի կողմից:

Այդ թռուցիկները պարունակում են ազգային թշնամանքի եւ այդպես կոչվող «Ազատ Հայաստանի» ստեղծման կոչ, դիմում՝ ուղղված «հայրենասերներին», «Ազգային միացյալ կուսակցության» «երդումը», որի տեքստը բերվում է նրանց մեջ, ընդունելու կազմակերպչորեն եւ գաղափարապես միավորվելու եւ այդ կուսակցության անունից պրակտիկ թշնամական գործողություններ կատարելու մասին, թռուցիկները պարունակում են նաեւ այլ հերյուրանքներ սովետական իրականության վերաբերյալ:

Այդ փաստաթղթերը հաստատվում են մեղադրյալ Մարգարյանի, դատապարտվածներ Արշակյան Ազատի, Առաքելյան Գագիկի, Նավասարդյան Աշոտի, Սահակյան Քաջիկի, Խաչատրյան Ռուբենի, վկաներ Մուրադյան Սամվելի, Շահինյան Հայկազի, Վարդանյան Ռաֆիկի, Զաքարյան Վարդանի, Նահապետյան Սուրիկի եւ մյուսների ցուցմունքներով, ձեռագրային փորձաքննության եզրակացությամբ, զննման արձանագրությամբ, իրեղեն ապացույցներով, «Փարոս-2» լրացուցիչ թռուցիկներով:

(հ.1 գթ. 143-151, 159-163, 165-171, 197-210, հ.2 33-46, 150-197, հ.3 85-140, 207-247, հ.4 13-25, 106-120, 123-130, 148-165, 205-234)

1973թ. վերջին, իրեն թշնամական գործունեության հետագա ընդլայնման նպատակով, Մարգարյանը դիմել է Հայրիկյան Պարույրին՝ խնդրելով տալ իրեն «Ազգային միացյալ կուսակցության» «ծրագիրը, կանոնադրությունը եւ երդումը»: Հայրիկյանը խոստացել է այդ անել, սակայն շուտով բանտարկվել է:

Հայրիկյանը կալանավայրից, վկա Զաքարյան Սամվելի միջոցով, Մարգարյանին է ուղարկել իր ձեռքով գրված «ծրագրի, կանոնադրության ու երդման» տեքստը եւ հակասովետական ազգայնական բովանդակությամբ այլ փաստաթղթեր՝ խնդրանքով բազմացնել ու տարածել դրանք «լայն ճակատով»:

1974թ. նոյեմբերի 10-ին Մարգարյանը ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր պետական անվտանգության կոմիտեի կողմից ձերբակալվել է եւ նշված փաստաթղթերը նրա մոտից վերացվել են:

Շարադրվածը հաստատվում է մեղադրյալ Մարգարյան Անդրանիկի, դատապարտված Հայրիկյան Պարույրի, վկա Զաքարյան Սամվելի ցուցմունքներով, ձեռագրային

փորձաքննության եզրակացությամբ, անձնական խուզարկության եւ զննման արձանագրություններով, իրեղեն ապացույցներով, Մարգարյանի մոտից վերցված վերոհիշյալ փաստաթղթերով: (հ.1 գթ. 2-46, 130-138, 143-146, 171-177, 197-220, 286-300, հ.4 գթ. 1-9, 80-90, 94-105, 121-130)

Մարգարյանի կողմից կատարված վերեւում ցույց տրված արարքը, այն է՝ սովետական իշխանության քայքայման նպատակով, սովետական պետական եւ հասարակական կարգերը, ՍՄԿԿ ու սովետական պետության ազգային քաղաքականությունը արատավորող զրպարտչական հերյուրանքներ պարունակող գրականության պատրաստելը, պահելը եւ տարածելը կազմում են հակասովետական ագիտացիայի եւ պրոպագանդայի հանցակազմ, այսինքն՝ հանցագործություն, նախատեսված ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդ. 1-ին մասով:

Մարգարյանի մասնակցությունը անլեգալ հակասովետական կազմակերպությանը եւ հանցավոր նպատակների համար նրա կողմից տարած կազմակերպչական գործողությունները համընկնում են ՀՍՍՀ քր. օր-ի 67 հոդ. հատկանիշներին:

Մարգարյանը նախաքննության ընթացքում հաստատելով սույն մեղադրական եզրակացության մեջ բերված փաստերն ու հանգամանքները, առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց: Նա բավարար չափով մերկացվում է նաեւ գործում եղած ապացույցներով:

Շարադրվածի հիման վրա մեղադրվում է՝

Մարգարյան Անդրանիկ Նահապետի – 1951թ. ծնված, ծնվել է Երեւան քաղաքում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, բարձրագույն կրթությամբ, «ՎՆԻԻԷ ԳԱԶՊՐՈՄ»-ի Երեւան կոմպլեքս բաժնի ավագ ինժեներ, Երեւան քաղաքի բնակիչ Վարդաշեն 1-փողոց, տուն 2ա:

Նրանում, որ տրամադրված լինելով հակասովետականորեն, 1967-1974թթ., սովետական իշխանության քայքայման նպատակով, իր համախոհներ՝ ներկայումս դատապարտված Հայրիկյանի, Արշակյանի եւ ուրիշների հետ միասին, տարել է հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա, սովետական պետական եւ հասարակական կարգերը, ՍՄԿԿ ու սովետական պետության ազգային քաղաքականությունը արատավորող զրպարտչական հերյուրանքներ պարունակող հոդվածների, բանաստեղծությունների, թռուցիկների եւ ծրագրային փաստաթղթերի ձեւով գրականություն պատրաստելու, պահելու եւ տարածելու ճանապարհով, այսինքն՝ հանցագործությունում, նախատեսված ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդ. 1-ին մասով:

Հանդիսանալով անլեգալ հակասովետական կազմակերպության անդամ՝ տարել է կազմակերպչական գործունեություն հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա տանելու ուղղությամբ, այսինքն՝ հանցագործությունում նախատեսված ՀՍՍՀ քր. օր-ի 67 հոդ.:

Այսպիսով Անդրանիկ Նահապետի Մարգարյանը մեղադրվում է հանցագործություններում, որոնք նախատեսված են ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդ. 1-ին մասով եւ 67 հոդ.:

Համաձայն ՀՍՍՀ քր. դատ. օր-ի 201 հոդ.՝ գործը ենթակա է ուղարկման ՀՍՍՀ դատախազին:

Մեղադրական եզրակացությունը կազմվել է 1975թ. հունվարի 30-ին Երեւան քաղաքում:

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ
ՔՆՆԻՉ, ՓՈԽԳՆԴԱՊԵՏ՝ ԿԱՐՈՒՄՅԱՆ

Թվացյալ խաղաղ շրջան

1975 թվականի փետրվարին Անդրանիկ Մարգարյանի նկատմամբ կայացված դատավճռից հետո, մինչեւ 1978-ը՝ Հայաստանում քաղաքական դատավարություն չի եղել: 2-2,5 տարի ընդմիջումից հետո ձերբակալումներն սկսվել են 1977 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, իսկ դատավարություններն ընթացել են 1978-ին: Սակայն, սա չի նշանակում, թե այս ընթացքում այլախոհական դրսեւորումներ չեն եղել: Հակառակը՝ տեղի են ունեցել առավել լուրջ գործընթացներ: Ընդհատակում շարունակել է գործել ու ամրապնդվել Ազգային միացյալ կուսակցությունը: Ինքնահրատ գրականության թարգմանությամբ, հրապարակմամբ ու տարածմամբ են զբաղվել կալանավայրից վերադարձած «Հանուն Հայրենիքի» ամսագիրը հրատարակող խմբի անդամները: 1976 թ. ընթացքում գրվել, իսկ 1977-ին ինքնահրատ եղանակով հրատարակվել է Ալեքսանդր Մանուչարյանի «Ազգային իրավունք» գործը, այնուհետեւ ռուսերեն՝ «Իմպերիալիզմը»: 1976-ին Շահեն Հարությունյանը զբաղվել է Հայաստանի հելսինկյան խմբի ձեւավորման աշխատանքներով, որն իր գոյության մասին պաշտոնապես հայտարարել է 1977 թ. ապրիլին: Նույն 1976-ին իր ակտիվ հրապարակային-իրավապաշտպանական գործունեությունն է սկսել Ռոբերտ Նազարյանը, որը մինչ այդ էլ էր հայտնի իր հստակ արտահայտված այլախոհական դիրքորոշմամբ: Ձեւավորվել ու իրարից անկախ գործել են ուսանողական խմբեր ու խմբակներ, որոնք, հայտնվելով ՊԱԿ-ի տեսադաշտում, որոշ դեպքերում ցրվել են, իսկ որոշ դեպքերում՝ ավելի ամրապնդվել ու շարունակել գործել: Այնպես որ, այս ընթացքում՝ մինչեւ 1977 թ. հունվարի 8-ին Մոսկվայի մետրոյի պայթյունը, որին հետեւեցին նոր կալանավորումներ ու հետապնդումներ, Հայաստանում ակտիվ այլախոհական զարգացումներ են ընթացել, բայց մի դեպքում Պետանվտանգության կոմիտեի վատ աշխատանքի պատճառով, մեկ այլ դեպքում՝ այլախոհների ու այլախոհական կազմակերպությունների աշխատանքի ճիշտ կազմակերպման, գաղտնապահության բնագավառում կուտակած փորձը ճիշտ օգտագործելու շնորհիվ հնարավոր է եղել խուսափել շուտ բացահայտվելուց ու կալանավորվելուց:

Շահեն Հարությունյան. Շինծու մեղադրանք

1977 թ. հունվարի 8-ին Մոսկվայի մետրոյում իրականացված պայթյունից հետո ոչ ոք չէր կարծում, որ այդ դեպքը ինչ-որ կերպ կարող է առնչվել Հայաստանին կամ հայ այլախոհներին: Տեղեկատվություն կա, եւ սա տարբեր առիթներով հրապարակավ հաստատել են պայթյունի գործի բացահայտմամբ զբաղվող չեկիստները, որ ԽՍՀՄ ՊԱԿ-ում՝ պայթյունից անմիջապես հետո քննարկել են պայթյունն ուկրաինացի կամ հայ այլախոհներին կապելու տարբերակները: ՊԱԿ-ն այս երկու երկրներում առկա ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչներին է համարել առավել վտանգավոր եւ ծայրահեղական քայլերի հակված: Ի վերջո, այդ պայթյունը ոչ միայն վերագրվեց հայերին, այլեւ Հայաստանում նոր քաղաքական կալանավորումների, հետապնդումների ու հաշվեհարդարների առիթ դարձավ: ԽՍՀՄ ՊԱԿ-ը լուրջ ու հետեւողական աշխատանք էր տանում այս դեպքը Ազգային միացյալ կուսակցության հետ կապելու համար: Հարցաքննում էին իրենց տեսադաշտում եղած հայ եւ օտար այլախոհներին ընդհանրապես, իսկ ԱՄԿ անդամներին փորձում էին դիտարկել որպես այս գործի մեղսակիցներ:



Շահեն Հարությունյան



УКАЗ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР

865 О лишении гражданства СССР Арутюняна Ш. А.

Учитывая, что Арутюнян Ш. А. занимается враждебной Союзу ССР деятельностью, не совместимой с принадлежностью к гражданству СССР, Президиум Верховного Совета СССР постановляет:

На основании статьи 18 Закона СССР «О гражданстве СССР» за действия, порочащие высокое звание гражданина СССР и наносящие ущерб престижу Советского Союза, лишить гражданства СССР Арутюняна Шагена Арутюновича, 1937 года рождения, уроженца гор. Еревана, проживающего в США.

Председатель Президиума Верховного Совета СССР А. ГРОМЫКО.
Секретарь Президиума Верховного Совета СССР Т. МЕНТЕШАШВИЛИ.

Москва, Кремль. 29 сентября 1986 г.
№ 5813—XI.

Շահեն Հարությունյանին ԽՍՀՄ քաղաքացիությունից զրկելու որոշումը

ԱՄԿ հիմնադիրներից **Շահեն Հարությունյանն,** իր առաջին պատժաչափն ավարտելուց եւ Հայաստան վերադառնալուց հետո, շարունակում է իր քաղաքական գործունեությունը: 1976-ին նրա նախաձեռնությամբ կազմակերպվում, իսկ 1977-ի ապրիլին Մոսկվայում հայտարարվում է Հայաստանի հելսինկյան խմբի ստեղծման մասին: Նույն թվականի հունվարի 8-ին արդեն հնչել էր Մոսկվայի մետրոյի պայթյունը, եւ ՊԱԿ-ը փնտրում էր հեղինակներին: Ամիսներ անց՝ 1977-ի հոկտեմբերի 28-ին այդ գործով կալանավորվում են Հակոբ Ստեփանյանն ու Զավեն Բաղդասարյանը, իսկ նոյեմբերի 2-ին՝ Ստեփան Զատիկյանը: Շահեն Հարությունյանը Հայաստանի հելսինկյան խմբի անունից հաղորդագրություն է տարածում այս կալանավորումների կապակցությամբ՝ նշելով, որ նրանք կալանավորվել են Մոսկվայի մետրոյում իրականացված պայթյունի համար:

Շահեն Հարությունյանը պատմում է. «Արդեն Մոսկվա մեկնելու ժամանակ չկար: Դեկտեմբերի երկուսին ես զանգահարել եմ Մոսկվա՝ արտասահմանյան թղթակիցների ինձ մոտ եղած հեռախոսահամարներով եւ Հելսինկյան խմբի անունից տեղեկացրել

նրանց Ստեփանի ու իր ընկերների ձերբակալության եւ ներկայացված մեղադրանքի մասին: Նույն օրն ինֆորմացիան հնչել է արտասահմանյան մամուլի միջոցներով, եւ որպես ինֆորմացիայի աղբյուր նշվել է իմ անունը»:

Բազմաթիվ լրատվամիջոցներ անմիջապես տարածում են այս հաղորդագրությունը՝ հղում անելով Հայաստանի հելսինկյան կոմիտեի եւ Շահեն Հարությունյանի վրա: Համաձայն «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկայի», Հայաստանի հելսինկյան խմբի հաղորդագրությունը եղել է նոյեմբերի 28-ին եւ այնտեղ նշվել է, որ Զատիկյանը, Ստեփանյանը եւ Բաղդասարյանը կալանավորվել են Մոսկվայի Կուրսկյան կայարանում պայթյուն կազմակերպելու փորձի համար: Շահեն Հարությունյանի պնդմամբ՝ ինքն ասել է. «Կալանավորվել են իբրեւ թե Մոսկվայի մետրոյում պայթյուն իրականացնելու համար», շեշտելով «իբրեւ թե» բառակապակցությունը, քանի որ հաստատապես իմանալ չէր կարող եւ օգտվել է տարբեր շրջանակներից ստացած ու մինչեւ վերջ չճշտված տեղեկություններից:

Այս հաղորդագրության տարածումից օրեր անց, առավոտյան տնից դուրս գալու պահին Շահեն Հարությունյանին ձերբակալում եւ տեղափոխում են Օրջոնիկիձեի (Էրեբունու) շրջանի ոստիկանություն: Նրան ՀԽՍՀ քր.օր.-ի 222 հոդվածով (խուլիգանություն) մեղադրանք են ներկայացնում. իբր, առանց հիմնավոր պատճառների, խուլիգանական նկատառումներով հարձակվել ու ծեծի է ենթարկել հինգ մարդու: Այս մեղադրանքով նրան դատապարտում են 3 տարի ազատազրկման: Դատավճռի հրապարակումից հետո Հարությունյանին տեղափոխում են Լեֆորտովո՝ Մոսկվայի ՊԱԿ-ի մեկուսարան, որտեղ պահում են 5 ամիս: Այդ շրջանում Պերմի կալանավայրից այնտեղ են տեղափոխում նաեւ Պարույր Հայրիկյանին: Շահեն Հարությունյանին ներկայացնում են արտասահմանյան թղթակիցների հետ դեկտեմբերի 2-ին Երեւանից հեռախոսով ունեցած նրա զրույցի սղագրությունը, որը ՊԱԿ-ը գաղտնի ձայնագրել էր: Փորձում են պարզել՝ եթե նախապես տեղյակ չէր պայթյունից, ապա որտեղի՞ց է ստացել այն տեղեկությունը, որ Զատիկյանը, Ստեփանյանը եւ Բաղդասարյանը կալանավորվել են մետրոյի պայթյունի համար: Փորձում են նրա, Ստեփան Զատիկյանի եւ Պարույր Հայրիկյանի ունեցած կապն օգտագործել՝ ԱՄԿ-ին այս գործի մեջ ներքաշելու նպատակով: Շահեն Հարությունյանը բացատրում է, որ իր տեղեկությունները հստակ չեն եղել, դրանք ստացել է տարբեր պատահական աղբյուրներից, ինչպես նաեւ իրեն անծանոթ մի կնոջից, ով ներկայանալով որպես Ստեփան Զատիկյանի հարեւանուհի տեղեկացրել է իրեն այդ մասին, այդ իսկ պատճառով էլ հաղորդագրության մեջ օգտագործել է «իբրեւ թե» բառակապակցությունը: Հինգ ամիս անց տեսնելով, որ ոչ մի կերպ չեն կարողանում Շահեն Հարությունյանին կապել մետրոյի պայթյունի հետ, նրան տեղափոխում են Հայաստան, որտեղ շարունակում է կրել խուլիգանության համար ստացած պատժաչափը եւ ազատ է արձակվում 1981 թվականին:

Հայկազ Խաչատրյան.
Հերթական Շինծու մեղադրանքը

Մոսկվայի մետրոյի պայթյունից եւ այդ կապակցությամբ ԱՄԿ հիմնադիր անդամ Ստեփան Զատիկյանի կալանավորումից հետո ՊԱԿ-ը վճռում է, որ ազատության մեջ գտնվող արդեն բացահայտված ԱՄԿ այն անդամները, որոնք արդեն որպես ԱՄԿ անդամ դատապարտվել ու ազատ են արձակվել, պետք է տարբեր պատրվակներով կալանավորվեն, իսկ ովքեր կալանավորված են եւ գտնվում են կալանավայրերում՝ չպետք է ազատ արձակվեն:

Ազգային միացյալ կուսակցության հիմնադիր, 60-ամյա գեղանկարիչ, 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ «Կարմիր աստղ», «Խիզախության համար», Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով եւ այլ պարգեւների արժանացած, առաջին կալանավորումից վերադարձած, բայց դեռ ոստիկանական հսկողության տակ գտնվող ու քայքայված առողջությամբ Հայկազ Խաչատրյանն առանցքային զոհերից մեկը պետք է լիներ: Պետանվտանգության կոմիտեի գործակալի մասնակցությամբ կազմակերպված սադրանքի արդյունքում 1978-ի նոյեմբերին նրան կալանավորում են՝ ՀԽՍՀ քր. օր.-ի 222-րդ հոդվածով (խուլիգանություն) եւ 149 (քաղաքացիների անձնական գույքի դիտավորյալ ոչնչացում) հոդվածներով: Դեկտեմբերին դատապարտում 1,5 տարի ազատազրկման: ՊԱԿ-ի հաշվարկներով՝ Հայկազ Խաչատրյանը չպետք է վերադառնար կալանավայրից: Ոչ այնքան մեծ պատժաչափը հնարավորինս անտանելի դարձնելու նպատակով նրան Հայաստանից տեղափոխում են Վորկուտա, Խորհրդային Միությունում քրեական հանցագործների համար նախատեսված ամենադաժան կալանավայրերից մեկը: Կալանավայրում նրա համար ստեղծում են հատուկ ծանր պայմաններ: Քրեական հանցագործները, ճանաչելով նրան, իմանալով նրա ով լինելը՝ կալանավայրի ղեկավարությունից գաղտնի աջակցում ու օգնում են Խաչատրյանին: 1980-ի ապրիլին, լիովին քայքայված առողջությամբ եւ ինֆարկտ տարած Խաչատրյանը վերադառնում է Հայաստան: Մինչեւ իր վախճանը (1989-ի սեպտեմբերի 27) Հայկազ Խաչատրյանը մեծ հեղինակություն էր վայելում հայ քաղբանտարկյալների ու այլախոհների շրջանում, իսկ ԱՄԿ-ականները նրան միշտ վերաբերվել են ընդգծված հարգանքով: Վստահ ենք, որ կգա այն ժամանակը, երբ Հայկազ Խաչատրյանն իր արժանի տեղը կգրավի մեր նորագույն պատմության էջերում:

Հայկազ Խաչատրյան

Պատմում են Հայկազ Խաչատրյանի մասին

Շահեն Հարությունյան. «Հայկազը չափազանց ռոմանտիկ անձնավորություն էր: Հռետորի ձիրք ուներ: Արագ բոր - բոքվում էր: Ինքը նկարիչ էր եւ ուներ նկարչին վայել խառնվածք: Երբեմն ապրում էր երազանքներով: Կարող էր առանց աչք թարթելու ասել՝ երեկ հանդիպել եմ Կոջոյանին: Անծանոթները կարող էին զարմանալ մեկի վրա, որը հայտնա-

բարում է, թե հանդիպել է վաղուց մահացած մեկին: Իսկ նա շարունակում էր պնդել, թե իր լավագույն ընկերները Նապոլեոնը, Ռեմբրանդտը կամ Կոջոյանն են: Ասում էր՝ նրանց հետ զրուցում եմ: Երբ կարդում եմ նրանց կամ նրանց մասին՝ դառնում են իմ ընկերները: «Փարոսը» տարածելուց հետո մի օր ասաց՝ երազ եմ տեսել, Գավառի սարերից հսկայական քարեր էի գլորում, քարերը դղրդյունով լցվում էին անդունդը, իսկ վերեւից մի հսկայական կարմիր արծիվ հարձակվեց ինձ վրա: Բռնեցի ու գլուխը պոկեցի: Արյան փոխարեն թարախ էր հորդում: Արծիվն, ասում էր, կոմունիստներն են, իսկ հսկայական քարերի գլորումից առաջացած դղրդյունը «Փարոսի» առաջացրած աղմուկն է: Սա լավ նշան է, ասում էր, մենք հաղթելու ենք»:

Լրագրող-հրապարակախոս Գեղամ Քյուրումյան. «Մեզ տեղավորեցին բանտաշեն - քերից մեկի առաջին հարկում: Այստեղ մի քիչ խաղաղվեցինք, արդեն գիտակցում էինք գլխներիս եկածը: Հատկապես ակտիվ էին Շահեն Հարությունյանն ու Ստեփան Զատիկյանը՝ կոմունիստ ղեկավարների ու պետանվտանգության աշխատակիցների մասին իրենց առարկություն չընդունող գնահատականներով: Նրանց համարձակությունն ինձ ներքուստ թե՛ ոգեւորում էր, թե՛ զգուշության դրդում: Շահենը 1980-ականներին արտաքսվեց ԽՍՀՄ-ից, հիմա ԱՄՆ-ում է, թերթ է հրատարակում: Ստեփան Զատիկյանը գնդակահարվեց Մոսկվայի մետրոյում տեղի ունեցած պայթյունի կազմակերպման կեղծ մեղադրանքով: Բանտախցում էլի մարդիկ կային, որոնց չեմ կարողանում հիշել: Առաջին ճաշը լափ էր հիշեցնում, լուցկու հատիկներով միջի կարտոֆիլը հանում էինք՝ ուտում: Երկրորդ, թե երրորդ օրը համալսարանական հնգյակով մտածեցինք հացադուլ անել: Հայկազ Խաչատրյանը, որ մեզանից տարիքով ավելի մեծ էր եւ ավելի պատասխանատու էր զգում, գնաց աղմուկ բարձրացրեց՝ սովից կմեռնեն երիտասարդները, պետք է միջոցներ ձեռք առնել»:

«Ես գնացի Կոմիտասի այգի», Երեւան 2005, էջ 12

Պատմաբան, պատմ. գիտ թեկնածու Էդուարդ Բաղդասարյան. «Էդտեղ էր նաեւ տարիքոտ, հաղթանդամ, իր նկատմամբ պատկառանք թելադրող մի նկարիչ, Հայկազ էր անունը. լռելյայն դարձավ բանտախցի ղեկավարը: Նրան լավ ծեծել էին, չէր դիմացել հայհոյանքներին, ձեռնամարտի էր բռնվել: …Ուտելիքը, հատկապես աղապատված ձուկը չէր ուտվում: Մի անգամ թղթի տոպրակով երշիկ, պանիր, քաղցրավենիք բերեցին: Հայկազի դատված ընկերն էր ուղարկել, երբ տեղեկացել էր՝ ընկերը բանտում է, կից խցերից մեկում»:

«Ես գնացի Կոմիտասի այգի», Երեւան 2005, էջ 55

Գեղամ Քյուրումյան. «Անունդ հիշարժան, Հայկ Խաչատրյան

Ճաղապատ ու ապակեզուրկ լուսամուտի տակ քայլելը նրա մենաշնորհն էր: Բան - տախցում հայտնվածներիցս երեւի ամենաավագն էր՝ մթամած ու խորհրդավոր: Իրար հետ ցածրաձայն խոսող համալսարանականներս չկարողացանք առաջին հարցումից պարզել նրա ինքնությունը, ինքն էլ, կարծես, ներկայանալու որեւէ տրամադրություն-ցանկություն չէր ցուցաբերում: Միայն բանտախցի ամենաշատախոս Շահենն էր (կներես այս բառի համար, Շահեն), որ ասաց.

- Կարծեմ նկարիչ է՝ Հայկ Խաչատրյան:

1966-ի ապրիլի 24-ից սկսած, այդ համատեղ մեկշաբաթյա բանտարկությունից հետո՝ անցած երեք տասնամյակների ընթացքում ինձ հաճախ է հարգանք տածելու ա-

ռիթ ընձեռվել քչախոս մարդկանց հանդեպ: Բայց որ պատկառանք զգաս գրեթե չխոսող մեկի նկատմամբ, երեւի չհանդիպած երեւույթ է: Ապրիլի 26-ից բանտախցում ծխախոտի սով սկսվեց: Կարծես միմյանց հետ պայմանավորվելով՝ ծխողներն իրենց վերջին հոգեպահուստ գլանակները հրամցնում էին նրան: Լռելյայն վերցնում էր ու խոժոռադեմ ըմբոստի իր ձիգ կեցվածքով չափում լուսամուտի տակի մեկ, մեկուկես մետր տարածքը: Երեկոյան կողմ լուսամուտի այն կողմում ինչ-որ խոսակցություններ լսվեցին, իսկ այն, ինչ կատարվեց մութն ընկնելուց հետո, ուղղակի հրաշք էր: Պատուհաններից մեկի ճաղերին հայտնվեց կեռիկ մետաղի կտոր, որի ծայրին կապված պարանը ձգվում էր դեպի դիմացի շինությունը: Բանտախցում շշուկ անցավ, որ այնտեղ քրեականներ են նստած: Չոր տախտակների վրա, աններքնակ, անվերմակ քնելու նախապատրաստվողներս դեռ չէինք հասցրել աչքներս կպցնել, երբ բանտախցի լուսամուտի մոտակա հատվածում թեթեւ աշխուժություն նկատվեց: Շատերս երկրորդ օրն արդեն շարունակվող թերսնման պատճառով չէինք կարողանում նիրհել, ոմանց տանջում էր ծխախոտի բացակայությունը: Եւ հանկարծ… բանտախցում հայտնվեցին ամենազոր ծխախոտն ու շաքարի տուփը: Բոլորիս տրամադրությունն անմիջապես փոխվեց. լռելյայն բանտախցի ավագ հաստատված Հայկ Խաչատրյանը բաժանեց ծխախոտը, իսկ ցուկոր-ռաֆինադի տուփը, մի տեսակ անփութությամբ, զիջեց չծխողներին: Շաքարահատիկներից առավել շատ օգտվելու մեկ-երկուսի ձգտումներն արժանացան մյուսների հանդիմանական հայացքներին:

Ապրիլի 27-ի առավոտյան տրամադրություններս այլեւս հուսալքվածի չէր: Արդեն գիտեինք, որ մեր տեղը գիտեն, մեզանով հետաքրքրվողներ կան: Ետկեսօրյա բանտային հացը շաքարով ուտելուց հետո անգամ երգելու ցանկություն առաջացավ: Երգեցինք «Կիլիկիան», «Եղբայր եմք մեքը», «Օն անդր յառաջը»: Մեր ընտրյալի դեմքի խոժոռը կարծես նվազեց, հայացքում ջերմություն նշմարվեց: Թե ինչ էր կատարվում նրա հոգու մեջ, մեզ դժվար էր ենթադրել, բայց որ տրամադրող փոփոխություն նկատեցինք, անառարկելի իրողություն էր: Նա, կարծես, իր բանտախցում հայտնված գաղափարակիցների ջոկատի ստվարությունից ներքին հպարտություն էր ապրում, ուրեմն՝ ինքը միայնակ չէ, կա այդ գաղափարը, չի մեռել, ուրեմն՝ արժե հռչակել այդ գաղափարախոսությունը: Թող որ շատ թույլ հույսով, թող որ այս մի քանի անփորձ երիտասարդներով, բայց կա այդ ճախրելու կիրքը, անկախ գոյատեւելու տենչը…

Երեկոյան կողմ դիմացի շինությունից լսվեց մեկի ձայնը: Քրեական էր, որը ոչ ավել, ոչ պակաս բղավեց.

-Արա՛ հայրենասերներ, մի երգ երգեք:

Երգերի մասնակիցներս միմյանց նայեցինք: Մենք՝ արդեն մեզ քաղաքական շարժառիթով բանտ նետված համարողներս, պետք չէ, որ ինչ-որ քրեական տարրի պատվերը կատարեինք: Չլսված ու չտեսնված բան: Բայց եւ նույն ակնթարթին մեզ բռնեցինք այն մտքի վրա, որ նրանք ավելի վատը չեն, քան մեր բանտապահները, որոնցից ոչ մեկը նախօրեին չընդառաջեց ծխողներիս աղերսին: Մենք բոլորս ակամայից նայեցինք նրա կողմը: Ըմբոստ հայացքը խնդրանքը կատարելու տրամադրող էր, եւ պատվերն ինքնաբերաբար կատարեցինք: Քանի որ խմբակային կատարումով էր հնարավոր մեր ձայնը հասցնել դիմացի շինություն, հնչեցրինք «Կիլիկիան», այնուհետեւ՝ մի այլ երգ: Քրեականները պարտքի տակ չմնացին եւ նույն երեկոյան մեզ հասցրեցին ծխախոտի եւ ցուկոր-ռաֆինադի հերթական խմբաքանակը, որը մեզ բավարարեց մինչեւ ապրիլի 29-ը՝ մեր անակնկալ ազատվելու օրը:

Անունդ հիշարժան, Հայկ Խաչատրյան: Ահա տասնյակ տարիներ ես մտովի

փնտրում եմ քեզ, գծագրում քո կերպարը եւ ամեն անգամ ակնածանքով մոտենում եւ նույն ակնածանքով հեռանում եմ քեզանից: Չլինի հանկարծ անզգույշ արտահայտությամբ խեղաթյուրեմ քո նկարագիրը, որը հոգուս մեջ դաջվել է: Քեզ բանտախցի ավագ հաստատելու մեր լռելյայն որոշումը հիմնավոր է եղել: Փառք Աստծո»:

«Ես գնացի Կոմիտասի այգի», Երեւան 2005, էջ 56

Շահեն Հարությունյան. «Հինգերորդ օրը՝ ճաշից հետո խցիկ մտավ հսկիչներից մեկը եւ հայտնեց, որ մեզ բոլորիս ազատ են արձակում, բացառությամբ Հայկազ Խաչատրյանի:

- Հայկազը ձերբակալության պահին դիմադրություն է ցույց տվել եւ հայհոյել է միլիցիայի պետին, - պատճառաբանեց հսկիչը:

Խցից դուրս էին կանչում սկզբից անուն-ազգանունները կարդալով, իսկ հետո փոխվեց ձեւը. հսկիչը բոլորիս հրավիրեց դուրս գալ միջանցք, բացառությամբ Հայկազ Խաչատրյանի: Բոլորս դուրս եկանք, միմյանց հրաժեշտ տվեցինք եւ բաժանվեցինք:

… Հայկը բացառիկ հատկություններով օժտված մարդ էր, նախ՝ բավականին ռոմանտիկ, մասնագիտությամբ՝ նկարիչ: 1939-ին ավարտել էր Սով. Հայաստանի նկարչական ակադեմիան (ինքն այդպես էր անվանում նկարչական ինստիտուտը), այսինքն՝ Սով. Հայաստանի նկարչական ինստիտուտի առաջին շրջանավարտներից էր, պատկանում էր հին սերնդին: Նա կխոսեր դասական արվեստի մասին ժամերով ու չէր հոգնի, եռանդուն էր ու տաքարյուն»:

«Ես գնացի Կոմիտասի այգի», Երեւան 2005, էջ 62

Ռոբերտ Նազարյան. «Հայ մշակույթի ակումբ»-ից՝ Հելսինկյան խումբ

Ռոբերտ Խաչիկի Նազարյանը ծնվել է 1948 թվականին, Երեւան քաղաքում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը եւ Էջմիածնի հոգեւոր ճեմարանը: Աշխատել է որպես ինժեներ-ծրագրավորող: Կալանավորվել է 1977 թ. դեկտեմբերին: Մեղադրանք է առաջադրվել ՀԽՍՀ քր.օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա): Հասարակական-քաղաքական գործունեությամբ Նազարյանը սկսել է զբաղվել համալսարանում ուսանելու տարիներին: Մասնակցել է այդ տարիներին իշխանական վերահսկողությունից դուրս՝ Երեւանի պետական համալսարանում գործող «Հայ մշակույթի ակումբի» աշխատանքներին: Ակումբին անդամակցում էին ե՛ւ ուսանողներ, ե՛ւ դասախոսներ, ե՛ւ մի շարք հայտնի մտավորականներ: Նազարյանն իր հայացքներով ու ազատամտությամբ չէր տեղավորվում անգամ «Հայ մշակույթի ակումբի» շրջանակներում: Ծավալած ակտիվ գործունեության համար 1969-ին նրան հեռացնում են կոմերիտմիությունից, իսկ 1970-ի հունիսին կայացած ռեկտորատի նիստի որոշմամբ՝ «համալսարանի կարգապահությունը կոպիտ կերպով խախտելու, դեկանի որոշումները չկատարելու համար» հեռացնում են համալսարանից, ինչն ուսանողների շրջանում բողոքի մեծ ալիք է բարձրացնում: Նրանք գրավոր ու բանավոր բողոքներ են հղում ե՛ւ համալսարանի ղեկավարությանը, ե՛ւ վերին ատյաններ: Արդյունքում, ավելի լուրջ զարգացումներից խուսափելու նպատակով եւ վերադասի հրահանգով, 1970-ի հոկտեմբերին կայացած ռեկտորատի նիստում որոշում է կայացվում նախազգուշացում եւ նկատողություն հայտարարելով՝ Նազարյանին վերականգնել համալսարանում: 1976-ի վերջերից ԱՄՆ անդամ Շահեն Հարությունյանը նախաձեռնում է Հայաստանի հելսինկյան խումբ ստեղծելու գործը եւ դիմում այդ շրջանում հայտնի մտավորական-այլախոհներին՝ խմբի մեջ ներգրավվելու առաջարկով: Այդ այլախոհներից մեկից՝ Էդմոնդ Ավետյանից Նազարյանը տեղեկանում է Շահեն Հարությունյանի նախաձեռնության մասին, անմիջապես այցելում է նրան ու առաջարկում կազմավորվող խմբում ներգրավել նաեւ իրեն: 1977թ. ապրիլին, Մոսկվայում կայացած մամլո ասուլիսի ժամանակ հենց Նազարյանն էլ կարդում է Հայաստանի հելսինկյան խմբի հռչակագիրը: Խմբի մեջ սկզբում ներգրավված էին Ռոբերտ



Ռոբերտ Նազարյան

Հովիկ Վասիլյան
Ռոբերտ Նազարյան
Անդրանիկ Մարգարյան

Նազարյանը եւ Էդուարդ Հարությունյանը: Հետագայում ակտիվ անդամների կալանավորման ու նորերի ներգրավման հետ կապված՝ Հայաստանի հելսինկյան խմբի անդամների կազմը փոփոխվել է: Ավելի ուշ միանում է Համբարձում Խլղաթյանը, ապա՝ Սիրվարդ Ավագյանը եւ Ռաֆայել Օհանյանը: Հենց այս՝ 1976-77 թթ. ծավալած գործունեությունն է Ռոբերտ Նազարյանի դատապարտման հիմք ծառայում: Մինչեւ 1977-ի դեկտեմբեր նա հասցնում է հսկայական աշխատանք կատարել: Հրապարակում է Խորհրդային Հայաստանում մարդու իրավունքների ոտնահարումների փաստերը, դրամահավաք է կազմակերպում քաղբանտարկյալների ընտանիքներին օգնություն ցուցաբերելու նպատակով, զբաղվում է հայ քաղբանտարկյալների պաշտպանությամբ, հսկայական քանակությամբ ինքնահրատ գրականություն է հասցնում Հայաստան: 1978 թ. դեկտեմբերին, կալանավորումից մեկ տարի անց տեղի է ունենում Նազարյանի դատավարությունը: Նրա դատավարությունը ժամանակին հանգամանորեն լուսաբանվել է «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկայում» եւ արեւմտյան լրատվամիջոցնե-



Ռ.Նազարյանին կոմերիտմիությունից հեռացնելու որոշման արձանագրության վերջին էջը

ռով: Նազարյանին դատապարտում են հինգ տարի ազատազրկման եւ երկու տարի աքսորի: Պատիժը կրելու համար ուղարկում են Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսվող խիստ ռեժիմի կալանավայր: Կալանավայրում դրսեւորած ըմբոստ վարքի պատճառով 1981-ի հոկտեմբերին նրա պահման ռեժիմն ավելի են խստացնում եւ տեղափոխում Չիստոպոլի բանտ, որտեղ էլ ավարտում է ազատազրկման իր պատժաչափը: Այնուհետեւ աքսորվում է Կրասնոյարսկի երկրամասի Աբան ավան, որտեղից երկու տարի անց, ողջ պատիժը կրելուց հետո, ազատ է արձակվում եւ վերադառնում Հայաստան: Այժմ ապրում եւ աշխատում է ԱՄՆ-ում:


ՀՐԱՄԱՆ նո.163 քաղվածք.-
Երեւանի պետական համալսարանի
15.7.70թ.պար. 5

Ֆիզիկայի Ֆակուլտետի ցերեկային ուսուցման 4-րդ կուրսի ուսանող
Ռոբերտ Խաչիկի Նազարյանին հեռացնել համալսարանից համալսարանի կարգապահությունը կոպիտ կերպով խախտելու, դեկանատի ցուցումները չկատարելու համար:
Հիմք՝ ռեկտորատի 1970թ. հունիսի 30-ի նիստի որոշումը/արձ.նո.17/:
ՊՐՈՐԵԿՏՈՐ՝ ԱՍԼԱՆՅԱՆ
Ճիշտ է՝ /ՍԱՄԻՐՅԱՆ/

Ռոբերտ Նազարյանին Երեւանի պետական համալսարանից հեռացնելու որոշումը


ՀՐԱՄԱՆ նո. 269 Քաղվածք
Երեւանի պետական համալսարանի
18.11.70թ.
պար. 43

Ֆիզիկայի Ֆակուլտետի ցերեկային ուսուցման 5-րդ կուրսի նախկին ուսանող Ռոբերտ Խաչիկի Նազարյանին ուսանողական իրավունքները վերականգնել նույն Ֆակուլտետի ցերեկային ուսուցման 5-րդ կուրսում: Միաժամանակ Ռ.Նազարյանին հայտարարել խիստ նկատողություն, նախազգուշացնելով, որ հետագայում կարգապահության որեւէ խախտում թույլ տալու դեպքում, նա կհեռացվի համալսարանից:
Հիմք՝ ռեկտորատի 1970թ.հոկտեմբերի 29-ի նիստի որոշումը:
ՊՐՈՐԵԿՏՈՐ՝ ԱԴԱՄՅԱՆ
Ճիշտ է՝ /Ս.Ամիրյան/

Ուսանողների բողոքի արդյունքում
Ռ. Նազարյանին համալսարանում վերականգնելու որոշումը

ОПРЕДЕЛЕНИЕ СУДЕБНОГО ЗАСЕДАНИЯ

27 октября 1981 года Зубово-Полянский районный народный суд Мордовсеой АССР в составе:

Председательствующего Мартышкина В. Н.
Народных заседателей Кошелевой Е.И. и Юркина Г.П.
при секретарей Семеновой Т.Т.
с участием прокурора Осипова Н.В.

в открытом судебном заседании, рассмотрев материаль на осуждённого НАЗАРЯНА РОБЕРТА ХАЧИКОВИЧА родившегося в г. Ереване в 1948 году, армянина, гражданина СССР, беспартийного, с высшим образованием, окончил Ереванский госуниверситет физический ф-т и Эчмиадзинскую духовную академию, женат, физический здоров. Отбывающего наказание по приговору судебной коллегии по уголовным делам Верховного суда Армянской ССР от 4/XII - 1978 года по ст. 65 ч. I УК Армянской ССР к 5 годам л/свободы в ИТК строгого режима и на 2 года ссылки. Начало срока наказания с 22/XII - 1977 года.

У С Т О Н О В И Л :

Назарян Р.Х. отбивая наказание, администрацией мест лишения свободы характеризуется крайне отрицательно, к труду относится не добросовестно. Находясь в следственном изоляторе КГБ Армянской ССР допускал нарушения режима содержания /л.д. 151 т.I/. Находясь в местах лишения свободы Дубравного УИТУ систематический и злостно нарушает режим содержания и трудовую дисциплину, за что неоднократно водворялся в ШИЗО и ПКТ. Всего допустил 42 нарушения.

Администрация ИТК-3 Дубравного УИТУ предоставило личное дело и ходатайство об изменении режима содержания с переводом Назаряна Р.Х. на тюремный режим на оставщийся срок наказания.

Расмотрев ходатайство материалы личного дела, заслушав заключение прокурора,полагавшего ходатайство удовлетворить, нарсуд считает необходимым Назаряна Р.Х. для дальнейшего отбывания наказания перевести на тюремный режим, т.к. все меры воспитательного характера, предусмотренные законом к нему исчерпаны и положительных результатов не дают, Назарян продолжает систематический нарушать установленный режим.

В силу изложенного и руководствуясь ст. 364 УПК РСФСР и ст. 53 ИТК РСФСР Зубово-Полянский райнарсуд

О П Р Е Д Е Л И Л :

Назаряна Роберта Хачиковича для дальнейшего отбывания наказания перевести на тюремный режим на оставщий ся срок один год один месяц двадцать пять дней.

Определение кассационному обжалованию не подлежит.

Председательствующий - подпись
Нарзаседатели - подписи
Копия верна: Пред-щий

Ռ. Նազարյանին բանտային ռեժիմի տեղափոխելու որոշումը

Ռոբերտ Նազարյանի գործով կայացված դատավճիռը

Ռ.Նազարյանի նկատմամբ կայացված դատավճիռը վերցրել ենք Նազարյանի անձնական արխիվից: Դա է պատճառը, որ տպագրվում է ամբողջական, առանց ԱԱԾ կողմից արված ջնջումների:

Գործ նո. 136
1978թ.

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1978 թվականի դեկտեմբերի 1-ին Երեւան քաղաքում

Նախագահությամբ՝	**Հ. Նադարյանի**
Ատենակալներ՝	**Ռ. Մարդանյանի**
	Հ. Առաքելյանի
Քարտուղարությամբ՝	**Գ. Շիրինյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Պ. Խուդոյանի**
պաշտպան՝	**Յու. Մկրտչյանի**

Քննության առնելով դատական դռնաբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝

Ռոբերտ Խաչիկի Նազարյանի, ծնվել է 1948 թվականին Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, բարձրագույն կրթությամբ, ավարտել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը եւ էջմիյածնի հոգեւոր ճեմարանը, ամուսնացած, խնամքին՝ երեք անձ, նախկինում չդատված, ֆիզիկապես առողջ, աշխատել է «Հայգյուղտնտտեխնիկայի» հանրապետական միավորման հաշվողական կենտրոնում որպես ինժեներ ծրագրավորող, բնակվել է Երեւանի Արաբկիրի 17փողոցի նո. 9 տանը, մեղադրվում է ՀՍՍՀ քր.օր-ի 65 հոդվածի 1-ին մասով, որում նա իրեն մեղավոր չճանաչեց: Նախնական կալանքի տակ է 1977 թվականի դեկտեմբերի 22-ից:

Դատաքննությամբ եւ գործի փաստական տվյալներով դատական կոլեգիան հաստատված համարեց հետեւյալը՝

Ամբաստանյալ Նազարյանը 1976-77թթ. ընթացքում Սովետական իշխանությունը քայքայելու եւ թուլացնելու նպատակով տարել է հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա: Այդ ժամանակաշրջանում նա սիստեմատիկաբար պատրաստել, ինչպես նաեւ ձեռք է բերել, պահել եւ ձեռագիր ու մեքենագիր ձեւով բազմացրել տարածելու համար եւ տարածել է սովետական պետական ու հասարակական կարգը, ՍՄԿԿ եւ Սովետական պետության քաղաքականությունն արատավորող ակնհայտ զրպարտչական բնույթի գրականություն:

1976թ. սկզբին ամբաստանյալ Նազարյանը նամակագրական կապեր հաստատելով առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների համար դատապարտվածներ Պարույր Հայրիկյանի, Ռազմիկ Մարկոսյանի, Բագրատ Շահվերդյանի եւ մյուսների հետ, հանդես է եկել նրանց պաշտպանությամբ: Այդ կապակցությամբ նույն ժամանակաշրջանում նա գրել է «Հանգանակություն ի նպաստ հայ քաղբանտարկյալներին եւ նրանց ընտանիքներին» տեքստը, կազմակերպել եւ կատարել է դրամական հանգանակություն, բազմացրել է այդ դատապարտյալների լուսանկարները, նրանց ներկայացրել որպես ազգայնական եւ քաղաքական համոզմունքների համար դատապարտվածների (հ.1, գթ..76-79):

1976 թվ. փետրվարի 19-ին ամբաստանյալ Նազարյանը գրել եւ ՀՍՍՀ ՊԱԿ-ին է ներկայացրել «Իմ համոզմունքը» վերնագրով տեքստը, որտեղ նա ըմբոստ տոնով դարձյալ հանդես է եկել վերը նշված դատապարտյալների պաշտպանությամբ, համարելով այդ իր մտքի եւ խղճի թելադրանքը, անկախ այն բանից՝ դրանք համընկնում են իշխող մտայնությանը եւ գաղափարախոսությանը, թե ոչ: Նա նույն տեքստում կանխազգալով իր գաղափարների հակասովետակն էությունը, երկընտրելի պահանջ է ներկայացրել՝ թույլատվություն ստանալու արտասահման մեկնելու կամ ազատազրկման դատապարտվելու (հ. 1 գթ. 74-75):

1976 թվականի մարտի 3-ին ամբաստանյալ Նազարյանը գրել է «Բարի սրտի տեր հայ քաղաքացիներ» տեքստը, որում շարադրել է իր մտորումները, իրեն ներկայացրել է որպես այլախոհ անձնավորություն (հ. 3, գթ. 55-56):

Վերոգրյալ տեքստը ամբաստանյալ Նազարյանը 1976-77թթ. տարբեր ժամանակներում տվել է կարդալու համար գործով վկաներ Էդմոնդ Ավետյանին, Սամվել Օսյանին, Վահան Անանյանին, Սիմոն Շահազիզյանին, Էդուարդ Հարությունյանին:

1977թ. հունվարի 20-ին ամբաստանյալ Նազարյանը գրել է «Բաց նամակ ԱՄՆ-ի նորընտիր պրեզիդենտ Ջեյմս Քարտերին» տեքստը, որում դրսեւորելով ակնհայտ հակասովետական դիրքորոշում, չարամտորեն հայտնել է, որ վերջին հաշվով մենք զրկված ենք բուն հայրենիքից եւ պետականությունից: Տեքստում ԱՄՆ պրեզիդենտին անվանելով մնայուն ճշմարտությունների հետեւորդ, հորդորել է նրան օգտագործելու իր պաշտոնական դիրքը՝ օգնելու «ճշմարտության» եւ «բարու» հետեւորդների՝ «հայ քաղաքական բանտարկյալների» փրկության գործին, որոնք խորհրդային միությունում դատապարտվել են երկարաժամկետ ազատազրկման իրենց ազգային, քաղաքական համոզմունքների համար, այդպիսին անվանելով մարդու անբռնաբարելի իրավունքների աղաղակող ոտնահարում (հ. 1 գթ. 91-92):

Ամբաստանյալ Նազարյանը անձնական ծանոթություններ ստեղծելով Մոսկվայաբնակ այլախոհներ Ելենա Սիրոտենկոյի, Տատյանա Խադարովիչի, հոգեւորական Գլեբ Յակունինի եւ այլոց հետ, 1976 թվ. Մոսկվա քաղաքում ձեռք է բերել եւ 1976-77 թթ. սիստեմատիկորեն տարածել հակասովետական 40 անուն գրականություն, այդ թվում Նյու-Յորք քաղաքում տպագրական եղանակով հրատարակված երեք ժողովածուներ «ՍՍՀՄ-ում իրավունքների պաշտպանության խրոնիկա» վերնագրով, «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկա» մեքենագիր ժողովածուն, «Քաղբանտարկյալների օրը 30 հոկտեմբերի 1975թ», «Մոր նամակները» վերնագրով բրյոշյուրները, «Այժմ երբ գնդակը թռչել էր», «Եվգենի Բարաբանովի հայտարարությունը մամուլին», «Ճամբարների ամոթալի համակարգը», «Գլխավոր քարտուղար», «Քաղբանտարկյալների նամակը Սովետական մշակութային գործիչներին», «Ակադեմիկոս Ա. Դ. Սախարովի քննարկումը», «Բաց նամակ ՌՍՖՍՀ գրողների միության քարտուղարությանը», «Գրողը որպես

Ռուսաստանի խիղճը», «19-ը ապրիլի 1974թվ», «Հիտլերը շահել է պատերազմը», «Տխուր եւ զգացողական պոեմա», «Աշխարհը, առաջադիմություն, մարդու իրավունքները» եւ այլ հոդվածներ ու տեքստեր, որոնք լեցուն են սովետական իրականությունը արատավորող, զրպարտչական հերյուրանքներով ու հարձակումներով ՍՄԿԿ-ի եւ սովետական պետության ներքին ու արտաքին քաղաքականության նկատմամբ:

Ամբաստանյալ Նազարյանը 1976 թվ. վերջին իր բնակարանում կարդալու համար էդուարդ Հարությունյանին է տվել «Աշխարհը, առաջադումությունը, մարդու իրավունքները» հոդվածը, որը 1977թվականին վերջինս վկա Կարինե Մկրտչյանի միջոցով վերադարձրել է Նազարյանին եւ 1977 թվականի դեկտեմբերի 22-ին առգրավվել է նրա բնակարանի խուզարկության ժամանակ:

Մոսկվա քաղաքում ձեռք բերված վերը թվարկված գրականությունից ամբաստանյալ Նազարյանը 1977 թվ. մայիս ամսին վկա Կարինե Մկրտչյանին է տվել պահելու եւ կարդալու համար 37 անուն գրականություն, որպիսին վերջինս ներկայացրել է ՀՍՍՀ պետական անվտանգության կոմիտեին:

1977 թվ. գարնան ամիսներին ամբաստանյալ Նազարյանը Սամվել Օսյանին եւ էդուարդ Հարությունյանին է տվել կարդալու «Աշխարհի դեմոկրատական հասարակությանը», «ՍՍՀՄ-ում Հելսինկայան պայմանագրի կատարմանն աջակցող հասարակական խումբ կազմելու մասին», «ՍՍՀՄ-ի Հելսինկայան պայմանագրի կատարմանը աջակցող խումբ» վերնագրով, Սովետական իրականությունը արատավորող, զրպարտչական հերյուրանքներ պարունակող հոդվածները: Նույն ժամանակաշրջանում նա այդ հոդվածներից առաջինը եւ երրորդը տվել է ծանոթանալու վկաներ էդմոնդ Ավետյանին եւ Ռաֆայել Պապայանին:

Իր կողմից գրված, ինչպես նաեւ այլ աղբյուրներից ձեռք բերված զրպարտչական գրականությունը մեքենագրված եղանակով բազմացնելու նպատակով ամբաստանյալ Նազարյանը 1977 թվ. սկզբին Երեւանի կոմունալ-կենցաղային ծառայությունների նո. 12 «ծիածան» սրահից վարձույթով վերցրել է ժամանակավոր օգտագործման համար հայկական տպատառի «Ուկրաինա» մակնիշի, իսկ տարբեր ժամանակներում գործով վկաներ Ռաֆայել Պապայանից եւ էդուարդ Հարությունյանից՝ ռուսական տպատառի «Մոսկվա» մակնիշի գրամեքենաներ: Նա օգտագործել է նաեւ մագնիսական ժապավենի վրա վերարտադրելու միջոցով տարածելու մեթոդը:

Ամբաստանյալ Նազարյանը ձեռագիր եւ մեքենագիր ձեւով բազմացրել, պահել եւ տարածել է հայ ժողովրդին «Վրեժի», «միության» եւ «ազատ անկախ Հայաստան ստեղծելու» կոչ անող հակասովետական, ազգայնական հերյուրանքներ պարունակող երգեր, ինչպիսիք են՝ «Կրկին ոտքի հայորդիներ», «Գերված զինվորի երգը», «Հայ ենք մենք», «Հայաստանի մտորումներ», «Հայորդիների երգը», «Ղարաբաղի ողբը» եւ ուրիշներ, որոնցում հայ ժողովուրդը պատկերված է որպես իրավազուրկ եւ իր անկախությունը կորցրած:

Առանձնապես վտանգավոր պետական հանցագործության համար դատապարտված Պարույր Հայրիկյանին համարելով իր «կուռքը» եւ ներկայացնելով նրան որպես «ազգային հերոս», ամբաստանյալ Նազարյանը ի բավարարումն իր ազգայնական նկրտումների, բազմացրել է Հայրիկյանի լուսանկարները, նրա «վերջին խոսքը» արտասանած դատարանում, նրա վերաբերյալ դատական փաստաթղթերը, նամակները, նրա եւ մյուսների համահեղինակությամբ կազմված այսպես կոչված «Ազգայի միացյալ կուսակցություն» հակասովետական անլեգալ խմբի «ծրագիրն» ու «կանոնադրությունը», որոնցում ցասման կոչ է արվում հայ ժողովրդին, մռայլ գույներով ներկայացվում

Սովետական իշխանությունը, զրպարտչորեն պնդում, որ ռուս ժողովուրդը փոքր ժողովուրդներին իբր ձգտում է զրկելու անկախությունից:

Ազգայնական մոլեռանդությունը ամբաստանյալ Նազարյանի մոտ հասել է այն խորության, որ նա իր քրոջ որդի՝ անչափահաս Արթուրիկ Հեքիմյանին նվիրելով «Նոր կտակարան» գիրքը, նրա վրա կատարած 26-մարտ 1976թ. ընծայագրում նշել է՝ «Ես հավատում եմ, որ վաղ թե ուշ մեր ազգը կթոթափի իր վրայից ստրկության լուծը եւ կապրի ազատ իր անկախ ու միացյալ հայրենիքում: Թող օրհնյալ լինեն այդ նպատակի համար զոհողության գնացող հայերը: Հուսով եմ, որ դու կլինես այդպիսին (հ.3 գթ. 338):

1977 թ. մարտի վերջին ամբաստանյալ Նազարյանը վկաներ Սամվել Օսյանի եւ Էդուարդ Հարությունյանի աջակցությամբ պատրաստել եւ գրամեքենայով բազմացրել է «Հայտարարություն» («Դեկլարացիա») վերնագրով հակասովետական, ազգայնական բովանդակությամբ, զրպարտչական փաստաթուղթ, որում ի թիվս բազմաթիվ հակասովետական մտքերի, խոսվում է Սովետական Հայաստանում միայն հայոց լեզվով գործավարություն տանելու, այսպես կոչված, «քաղբանտարկյալներին» ազատելու, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը եւ Նախիջեւանի ինքնավար հանրապետությունը ՀՍՍՀ-ին վերամիավորելու մասին:

Նշված «Հայտարարությունը» Երեւանում տարածելուց բացի ամբաստանյալ Նազարյանը 1977 թ. ապրիլի 2-ին այդ փաստաթղթի մի քանի օրինակ անձամբ տեղափոխել է Մոսկվա եւ ապրիլի 4-ին այդպիսիք տվել բուրժուական թերթերի եւ ռադիոյի Մոսկվայում հավատարմագրված թղթակիցներին, հաղորդելով նրանց սովետական իրականությունը սեւ հայելիների մեջ պատկերող հերյուրանքներ Հայաստանում «մարդու իրավունքների խախտման» եւ այլ հարցերով, որպիսի նյութերը արեւմուտքում մասսայական ինֆորմացիայի բուրժուական մարմինները լայնորեն օգտագործել են հակասովետական պրոպագանդայի համար:

Ամբաստանյալ Նազարյանը 1977 թվականի ապրիլին գրամեքենայի վրա բազմացրել եւ տարածել է «Ինչու ես այրեցի նրան» հակասովետական հոդվածը, որում զրպարտչական նյութեր են պարունակում իբր Մոսկվայի կողմից իրականացվող «հակահայկական» քաղաքականությունը, հայ «հայրենասերների» եւ այլախոհերի նկատմամաբ «ճնշում» գործադրելու դեմ: Իսկ 1977թ. մարտ-ապրիլ ամիսներին գրամեքենայի վրա բազմացրել, ինչպես նաեւ լուսանկարման միջոցով ու տարածել է բացարձակ զրպարտչական հերյուրանքներ պարունակող այսպես կոչվող «Բողոք-դիմումներ» որոնց հեղինակները նշված են էդուարդ Բեգլարյանը, Թաթոս Արթին Կասպարը, Համբարձում Իրադյանը, Ալեքսանդր Մալխասյանը, Շահեն Հարությունյանը, Ռազմիկ Մարկոսյանը եւ ուրիշներ:

1977 թվականի մայիս-հունիս ամիսներին ամբաստանյալ Նազարյանը կազմել է «Հաղորդագրություն Բելգրադի կոնֆերանսի մասնակիցներին» վերնագրով ամփոփագիր 10 մեքենագիր էջից բաղկացած ակնհայտ հակասովետական, զրպարտչական փաստաթուղթը, որում թշնամական տեսանկյունից է ներկայացվում Սովետական իշխանությունը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, ՍՄԿԿ ու Սովետական կառավարության գաղափարախոսական եւ տնտեսական քաղաքականությունը, անիրական ազգային խտրականություն վերագրում մեր հասարակությանը, սուտ պնդում կատարում ՍՍՀՄ-ում «ՍՄԿԿ դիկտատուրայի» առկայության մասին, որն իբր «քայքայել» է երկրի տնտեսությունը եւ ազգային մշակույթը, թշնամական կոչ արվում օտարերկրյա պետություններին՝ քաղաքական «ճնշում» գործադրելու ՍՍՀՄ-ի վրա:

Տարածման նպատակով ամբաստանյալ Նազարյանը 1977թվականի ամառը նշված «հաղորդագրություն» տեքստը բազմացրել է գրամեքենայի վրա եւ ֆոտոժոպավենի ձեւով, նրան կցելով «Հայտարարությունը» եւ բազմաթիվ այլ զրպարտչական տեքստեր, փաթեթավորել է յուրաքանչյուրը մոտ 100 էջի շրջանակներում եւ գործով վկաներ Բենիամին Հովակիմյանի, Սարիբեկ Գյոդակյանի ու այլոց միջոցով ուղարկել Մոսկվա իր ծանոթ այլախոհերին հանձնելու եւ վերջիններիս միջոցով այդպիսիք այնուհետեւ արտասահման ուղարկելու նպատակով:

Մոսկվա հղված հիշյալ փաստաթղթերի մի մասը, իրավասու օպերատիվ մարմիններիի կողմից հայտնաբերվել եւ առգրավվել են Գյոդակյանից, Հովակիմյանից: Երեք մասի բաժանված եւ առանձին թերթերի մեջ դրված համանման նյութեր հայտնաբերվել ու առգրավվել են Մոսկվա-պասաժիրսկայա երկաթուղային կայարանի պահեստասենյակում 1977թվականի հունիսի 27-ին:

Ամբաստանյալ Նազարյանը 1977 թվականին Երեւանում ծանոթանալով ֆրանսիայի քաղաքացուհի Ֆրանսուազա Օպետիի հետ, նրան է հաղորդել զրպարտչական ինֆորմացիա ՍՍՀՄ-ի մասին, տալով «Հայտարարություն» տեքստը: Վերջինս 1978թ. հունվարի 9-ին Լոնդոնում մասնակցելով արեւմտյան լրագրողների պրես-կոնֆերանսին, հարցազրույց է ունեցել Նազարյանի «գործունեության» մասին, վատաբանելով Սովետական իրականությունը: Միաժամանակ ամբաստանյալ Նազարյանը Երեւանում Օպետիին խնդրել է, որ իր նկատմամաբ քրեական հետապնդում լինելու դեպքում նա արտասահմանում հանդես գա իր պաշտպանությամբ:

Բացի վերը շարադրվածը, ամբաստանյալ Նազարյանը 1977 թվ. իր բնակարանում պահել է տարածելու համար, «Բելգրադի կոնֆերանսի մասնակից երկրների ներկայացուցիչներին - հայրենակից հայերին», «Ի լրացումն Բելգրադի կոնֆերանսի մասնակից երկրների ներկայացուցիչներին - հայրենակից հայերին», «Դիմում ամնիստիա միջազգային միության մեջ մտնելու մասին» տեքստերը, որոնք պարունակում են սովետական իրականությունը արատավորող զրպարտչական հերյուրանքներ:

1977 թվականի ընթացքում ամբաստանյալ Նազարյանը ձեռք է բերել եւ տարածելու համար պահել «Իրավական պայքարը պետ. աթեիզմի դիկտատուրայի դեմ», «ՍՍՀՄ օրենքները» անոնիմ գրքերը, «ՍՍՀՄ սահմանադրության շուրջը», «Դա իմ սահմանադրությունը չէ», «ՍՄԿԿ ԿԿ քաղբյուրոյին», «Մի քանի դիտողություններ 1977թ. ՍՍՀՄ ասիմանադրության նախագծի վերաբերյալ», «Դիմում համաշխարհային հասարակայնությանը» «Անկետային տվյալներ», «Իզվեստիա թերթի գլխավոր խմբագրին», «Բաց դիմում Սովետական Միության տիրակալներին», «Խնդրագիր» մեքենագիր հոդվածները եւ «Հարգելի Սիլվա Կապուտիկյան» ձեռագիր տեքստը, որոնցում վատաբանվում է սովետական իրականությունը, հարձակումներ թույլ տրվում ՍՄԿԿ եւ Սովետական պետության քաղաքականության հասցեին;

Վերոգրյալ հանցավոր արաքի համար մեղադրանք է առաջադրվել ամբաստանյալ Նազարյանի նկատմամաբ ՀՍՍՀ քր. օր.-ի 65 հոդ. 1-ին մասով, որում նա իրեն մեղավոր չճանաչեց, հայտարարելով, որ ինքը սովետական իշխանությունը քայքայելու եւ թուլացնելու նպատակով հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա չի տարել, որ իր կողմից կազմված, ձեռք բերված, եւ տարածած գրականությունը իրենց էությամբ հակասովետական չեն, պատճառաբանելով, որ գործով ապացույցներ ձեռք չեն բերվել այդպիսիք հակասովետական համարելու: Նազարյանը միաժամանակ ընդունեց իրեն կողմից տեքստեր կազմելու, ձեռք բերելու, բազմացնելու, տարածելու վերաբերյալ իրեն վերագրված փաստերը մասնակիորեն:

Նա հայտնեց, որ ղեկավարվելով իր մտքի եւ խղճի պահանջով, ի նպաստ «հայ խղճի» կալանավորներին եւ նրանց ընտանիքներին, 1976թ. կազմակերպել է հանգանակություն 185 ռուբլու չափով, իր հեղինակությամբ գրել է «Իմ համոզմունքը», «Բարի սրտի տեր հայ քաղաքացիներ» տեքստերը, որոնցում շարադրել է իր մտորումները, «Բաց նամակ ԱՄՆ-ի պրեզիդենտ Քարտերին» տեքստը, մասնակցել է «Հայտարարություն», «Հաղորդագրություն» տեքստերի կազմանը, վերջինիս կից նյութերի հայթաթմանը, տարածմանը, որ Մոսկվայում այլախոհ Գրիգորենկոյի տանը մասնակցել է օտարերկրյա թղթակիցների համար հրավիրված պրես-կոնֆերանսին, վերջիններին տվել «Հայտարարություն» տեքստից 3-4 օրինակ, որ Մոսկվայից ձեռք է բերել 40 անուն գրականություն, այդ թվում նաեւ Նյու-Յորք քաղաքում հրատարակվածներից, որ զբաղվել է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով, իր գործողությունները կատարելով ՍՍՀՄ-ու գործող օրենսդրության շրջանակներում:

Ամբաստանյալ Նազարյանի կողմից բերված պատճառաբանություններն անհիմն են, նպատակ են հետապնդում զերծ մնալ քրեական պատասխանատվությունից եւ նրան մեղսագրված հանցավոր արարքը դատական կոլեգիան հաստատված է համարում գործով ձեռք բերված հետեւյալ ապացույցներով՝

Գործով հարցաքննված վկաներ Էդմոնդ Ավետյանը, Սամվել Օսյանը, Սիմոն Շահազիզյանը, Վահան Անանյանը, Ռաֆայել Պապայանը, Լիաննա Սարգսյանը, Կարինե Մկրտչյանը իրենց ցուցմունքներով հաստատել են, որ 1977թ. ընթացքում տարբեր ժամանակներում ամբաստանյալ Նազարյանը իրենց տվել է կարդալու, ծանոթանալու համար վերոհիշյալ գրականությունից առանձին տեքստեր: Այդ վկաներից Կարինե Մկրտչյանը հաստատեց, որ Նազարյանն իրեն պահելու համար տվել է մեկ ամբողջ փաթեթ, մոտ 35 անուն գրականություն, որ ինքը նրա ասելով ծանոթացել է այդ գրականության հետ, համոզվել այդպիսինի հակասովետական էության մեջ (հ. 2, գթ. 47-164, 214-234, հ. 5, գթ.92-94, 148-154, 235-238 եւ դատական նիստի արձանագրությունը):

Վկա Գյոդակյանի ցուցմունքներով հաստատված է, որ ամբաստանյալ Նազարյանը իմանալով իր Մոսկվա գնալու մասին, 1977 թվ. օգոստոսի սկզբին իրեն է տվել ծրար Մոսկվա տեղափոխելու եւ իր կողմից նշված հասցեատերերից որեւէ մեկին հանձնելու համար, սակայն դեռեւս Մոսկվա չմեկնած, Լենինական քաղաքում բերման է ենթարկվել ՆԳ բաժին, որտեղ պարզվել է, որ ծրարում եղել են մեծ քանակությամբ ֆոտոժապավեններ (հ.3 գթ, 1-2, հ. 5, գթ. 155-157):

Համանման ցուցմունք է տվել նաեւ վկա Բենիամին Հովակիմյանը, հայտնելով, որ 1977թ. հունիսի 11-ին իր անձնական գործերով Մոսկվա մեկնելու ժամանակ ամբաստանյալ Նազարյանը Մոսկվա տեղափոխելու եւ իր տված հասցեատերերից մեկին հանձնելու համար իրեն է տվել մեկ փաթեթ եւ ինքը երբ ցանկացել է գնալ Գլեբ Յակունինի տուն փաթեթը հանձնելու, նրանց տան մոտ բերման է ենթարկվել ՆԳ աշխատակիցների կողմից, բացվել է փաթեթը, որտեղ եղել է «Հաղորդագրություն» տեքստը, «Դեկլարացիայի» եւ կից այլ նյութերի հետ, միաժամանակ հայտնելով, որ մինչ այդ Նազարյանը իրեն ընթերցելու համար տվել է «Դեկլարացիան» եւ Պարույր Հայրիկյանի «վերջին խոսքը»: Վկան հայտնել է նաեւ, որ իր հետ Մոսկվա ուղարկված նյութերը կլինեին մոտավորապես 100 էջի չափով (հ.5. գթ. 17-21):

Գործին կցված հակասովետական բովանդակություն ունեցող նյութերով, որոնք առգրավվել են Նազարյանի բնակարանի խուզարկությամբ, Կարինե Մկրտչյանի ներկայացմամբ, ինչպես նաեւ այլ աղբյուրներից, հաստատված է, որ ամբաստանյալ

Նազարյանը իրոք զբաղվել է այդ գրականության բազմացմամբ եւ տարածմամբ:

Վկաներ Կարինե Նավասարդյանի, Սվետլանա Հովհաննիսյանի ցուցմունքներով եւ ամբաստանյալ Նազարյանի հանձնառումով հաստատված է, որ վերջինս հանգանակությունների միջոցով օգնություն է ցույց տվել իրենց:

Հակասովետական բովանդակությամբ գրականության բազմացման փաստն է հաստատում այն հանգամանքը, որ ամբաստանյալ Նազարյանը «Ծիածան» սրահից վարձույթով վերցրել է «Ուկրաինա» մակնիշի գրամեքենաներ, իսկ վկաներ Պապայանից ու Էդուարդ Հարությունյանից՝ «Մոսկվա» մակնիշի գրամեքենաներ, այդ մասին եղած փաստաթղթերով եւ նշված վկաների ցուցմունքներով, որ իրոք, Նազարյանը ժամանակավոր օգտագործման համար իրենցից վերցրել է գրամեքենաներ:

«Նոր կտակարան» գրքի վրա ամբաստանյալ Նազարյանի կատարած ընծայագրի տեքստով (հ. 6, գթ. 333) հաստատված է այդպիսի գրության հակասովետական էությունը:

Ամբաստանյալ Նազարյանի կողմից կատարված հանցավոր արարքը հաստատված է նաեւ իրեղեն ապացույցների զննման արձանագրություններով, որոնցից երեւում է, որ նշված տեքստերի բովանդակությունը Սովետական պետական եւ հասարակական կարգն արատավորող, զրպարտչական հերյուրանքներ են պարունակում (հ. 6, գթ. 1-164, 238-248, 261-264):

Ձեռագրային փորձաքննության եզրակացությամբ հաստատված է, որ «Ազգային միացյալ կուսակցության ծրագիրը» եւ «Բաց նամակ ԱՄՆ-ի պրեզիդենտ Քարտերին», «Հայտարարություն», «Հայ ենք մենք» գրվել են ամբաստանյալ Նազարյանի ձեռքով (հ. 5. Գթ. 258-279):

Դատա-տեխնիկական փորձաքննության եզրակացությամբ հաստատված է, որ «Գերված զինվորի երգը» «Կրկին ոտքի հայորդիներ» «Բաց նամակ ԱՄՆ-ի պրեզիդենտ Քարտերին», «Դիմում-բողոք» տեքստերը մեքենագրվել են «Ուկրաինա» մակնիշի նո. 515998 հայկական տառի գրամեքենայով (հ. 5. Գթ. 280-326):

Ամբաստանյալ Նազարյանի կողմից գործում եղած տեքստերի տարածելը հաստատված է նաեւ Մոսկվա-պասաժիրսկայա երկաթուղային կայարանի ադմինիստրացիայի կողմից 1977 թվ. հունիսի 22-ին կազմված արձանագրությամբ այն մասին, որ կայարանի պահեստասրահում հայտնաբերվել են «Հաղորդագրություն Բելգիայի կոնֆերանսի մասնակիցներին», «Ինչպես ես այրեցի նրան», Պարույր Հայրիկյանի «Վերջին խոսքը», «Դիմում-բողոքներ» վերնագրով տեքստերը, յուրաքանչյուրից երեքական օրինակ, բաժանված երեք մասի, դրված երեք առանձին թղթերի մեջ, որոնց վրա ձեռագիր գրությունների հեղինակը, ըստ ձեռագրային փորձաքննության եզրակացության, հանդիսանում է ամբաստանյալ Նազարյանը (հ. 3 գթ. 107-308, հ. 5 գթ. 258-279):

Արարքը հաստատված է նաեւ ամբաստանյալ Նազարյանի բնակարանի խուզարկությամբ առգրավված մագնիտոֆոնով եւ կոմպակտ-կասետայով՝ մագնիտաֆոնի ժապավենի հետ միասին, որի վրա ձայնագրված է 1977թվ. ապրիլի սկզբին Մոսկվա քաղաքում Նազարյանի կողմից օտարերկրյա թղթակիցներին հաղորդած զրպարտչական ինֆորմացիան (հ. 8. Գթ. 78-182, հ.7, գթ. 1-11, 313-315):

Բերյութ քաղաքում հրատարակվող դաշնակցական «Ազդակ» թերթի 1977 թվականի հունվարի 23-ի համարով, որով զետեղված է «Հայտարարություն» հակասովետական տեքստը, հաստատված է, որ իրոք ամբաստանյալ Նազարյանը այդ փաստաթուղթը տվել է օտարերկրյա քաղաքացիներին (հ.7, գթ. 1-իի, հ.8, գթ. 217):

Այդ հանգամանքն են հաստատում նաեւ «Ամերիկայի ձայն», «Բի-բի սի», «Գերմա-

նական ալիք», «Ազատություն» օտարերկրյա ռադիոկայանների հաղորդումներից քաղ - վածքներ, որոնք կցված են գործին, ամբաստանյալ Նազարյանի մոտ հայտնաբերված եւ առգրավված օտարերկրյա թղթակիցներ Թոմաս Քենտի, Պեպի Պոլի, էբբա Սեվբորդի այցետոմսեր եւ հասցեները (հ. 8. Գթ. 21-70, հ. 10, գթ. 145-180, հ. 1, գթ. 21-71):

Ամբաստանյալ Նազարյանի կողմից պատրաստված եւ տարածված նյութերի զրպարտչական բնույթը հաստատված է վկա Կամո Պետրոսյանի եւ մյուսների ցուցմունքներով, որ առանց իրենց գիտության իրենց մասին հաղորդվել է ակնհայտ սուտ հերյուրանքներ (հ. 5, գթ. 23-34, 206-215):

Գործում եղած պաշտոնական տեղեկանքներով հաստատված է, որ Պ. Հայրիկյանը, Ռ. Զոհրաբյանը եւ մյուսները դատապարտվել են առանձնապես ծանր պետական հանցագործություններ կատարելու համար, որով հերքվել է ամբաստանյալ Նազարյանի պնդումը՝ իշխանությունների կողմից նրանց նկատմամբ անձի ազատությունների խախտում թույլ տալու մասին (հ. 1, գթ. 76-78, 93, 98, հ. 7. Գթ. 38-41, 56-61, 373-393, հ. 8, գթ. 110-162, հ.1 գթ. 108-127):

Ամբաստանյալ Նազարյանի այն պատճառաբանությունը, որ իր կողմից պատրաստված, ձեռք բերված եւ տարածված տեքստերի , գրվածքների բովանդակությունը հակասովետական համարելու վերաբերյալ գործում տվյալներ չկան, ուստի այդ ուղղությամբ մեղադրանքն անհիմն է, չի կարող նրան ազատել քրեական պատասխանատվությունից, քանի որ գործի նախաքննությամբ կատարված իրեղեն ապացույց համարվող գրականության զննության արձանագրություններով, այդ նյութերում պարունակող ակնհայտ զրպարտչական հերյուրանքների առկայությունը, ինչպես նաեւ նրանցում ՍՄԿԿ եւ Սովետական պետության քաղաքականության նկատմամբ թշնամական հարձակումները հիմք են տալիս դատական կոլեգիային այդ տեքստերը համարելու հակասովետական բնույթ կրող, հաստատված համարելով, որ սյուբեկտիվ տեսակետից ամբաստանյալ Նազարյանը կատարել է հանցավոր արարք նախատեսված ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդվածի 1-ին մասով, որով նա պետք է պատասխանատվություն ենթարկվի:

Գործով իրեղեն ապացույցներից «ծիածան» սալոնին պատկանյալ «Ուկրաինա» մակնիշի հայկական տպատառի եւ վկա էդուարդ Հարությունյանին պատկանյալ «Մոսկվա» մակնիշի ռուսական տպատառի գրամեքենաները ենթակա են վերադարձ - ման ըստ պատկանելույն, ամբաստանյալ Նազարյանին պատկանյալ «Սոննա» մակնիշի մեկ մագնիտոֆոնը չորս կոմպակտ կասետներով ՀՍՍՀ քր դատ. օր-ի 72 հոդվածի 1-ին կետի կարգով ենթակա է բռնագրավման, որպես հանցագործության գործիքներ, «ՍՍՀՄ օրենքները» եւ «Իրավական պայքար պետ. աթեիզմի դեմ» գրքերը անհրաժեշտ է պահել սույն քրեական գործի հետ, «Նոր կտակարան» գիրքը վերադարձնել ամբաստանյալ Նազարյանի մայր Սրբուհի Նազարյանին, իսկ ֆոտոնեգատիվները եւ ֆոտոպատճենները ոչնչացնել:

Դատական կոլեգիան նկատի առնելով կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանը, գտնում է, որ ամբաստանյալ Նազարյանի նկատմամբ պատիժ պետք է սահմանել ելնելով ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված ինչպես ազատազրկման, այնպես էլ աքսորի ձեւով, միաժամանակ հաշվի առնելով նրա անձնավորությունը:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելու ՀՍՍՀ քր. դատ. օր-ի 293-294 հոդվածներով ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ռոբերտ Խաչիկի Նազարյանին ճանաչել մեղավոր ՀՍՍՀ քր. օր-ի 65 հոդվածի 1-ին մասով եւ դատապարտել ազատազրկման հինգ (5) տարի ժամանկով ու աքսորի երկու (2) տարի ժամանկով, ազատազրկումը թողնելով կրելու խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում կալանքի սկիզբը հաշվելով 1977թվականի դեկտեմբերի 22-ից:

Իրեղեն ապացույցներից «Ուկրաինա» մակնիշի նո. 515998 հայերեն տպատառի գրամեքենան հանձնել Երեւան քաղաքի կոմունալ-կենցաղային սպասարկման կոմբինատի նո. 12 սրահին, իսկ «Մոսկվա» մակնիշի նո. 1803060 ռուսական տպատառի գրամեքենան՝ Էդուարդ Բագրատի Հարությունյանին ի տնօրինություն, «Սաննա» մակնիշի մագնտոֆոնը չորս կոմպակտ կասետներով բռնագրավել:

«Նոր կտակարան» գիրքը հանձնել Սրբուհի Նազարյանին, «ՍՍՀՄ օրենքները» եւ «Իրավական պայքար պետ. աթեիզմի դեմ» անոնիմ գրքերը պահել գործի հետ, իսկ ֆոտոնեգատիվները եւ ֆոտոպատճենները ոչնչացնել:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով գանգատարկման ու բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀ՝ **Հ. ՆԱԴԱՐՅԱՆ**
ԺՈՂԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություններ**
Իսկականի հետ ճիշտ է
ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **(ստորագրություն) Հ. ՆԱԴԱՐՅԱՆ**

ԿՆԻՔԻ ՏԵՂԸ 5/12-78թ.

Ստեփան Զատիկյան Հակոբ Ստեփանյան Զավեն Բաղդասարյան. «Մետրոյի գործ»

1977 թ. հունվարի 8-ին Մոսկվայի մետրոյում պայթյուն հնչեց, որի հետեւանքով զոհվեց 7 եւ վիրավորվեց 37 մարդ: Ինն ամիս անց՝ 1977 թ. հոկտեմբերի 28-ին պայթյունն իրականացնելու կասկածանքով՝ Մոսկվա-Երեւան գնացքում, Հայաստանի եւ Վրաստանի սահմանագծին ձերբակալվեցին Հակոբ Ստեփանյանը եւ Զավեն Բաղդասարյանը, իսկ նոյեմբերի 2-ին Երեւանում ձերբակալվեց Ստեփան Զատիկյանը: Հենց Զատիկյանին էլ խորհրդային իշխանությունները ներկայացրին որպես պայթյունի կազմակերպիչ: Մինչ այդ Ազգային միացյալ կուսակցության անդամ Ստեփան Զատիկյանն իր համախոհների՝ Հայկազ Խաչատրյանի եւ Շահեն Հարությունյանի հետ 1969 թ. ընդհատակյա քաղաքական գործունեության համար դատապարտվել էր չորս տարի ազատազրկման, որը պետք է կրեր, ինչպես ՀԽՍՀ քր. օր.-ի 65 եւ 67 հոդվածներով դատապարտված բոլոր քաղբանտարկյալները խիստ ռեժիմի կալանավայրում: Կալանավայրում ցուցաբերած ակտիվության ու ըմբոստ վարքի պատճառով նրա ռեժիմն ավելի են խստացնում եւ տեղափոխում Վլադիմիրի բանտ: Ազատ արձակվելուց հետո շարունակում է իր ընդհատակյա գործունեությունը:

Պայթյունից անմիջապես հետո արեւմտյան մամուլում՝ խորհրդային Պետանվտանգության կոմիտեի հետ անմիջական առնչություններ ունեցող խորհրդային լրագրող Վիկտոր Լուիի հեղինակությամբ հոդված հրապարակվեց, որտեղ խորհրդային պաշտոնական աղբյուրներին հղում անելով՝ հեղինակը պնդում էր, թե պայթյունին առնչություններ ունեն այլախոհ-իրավապաշտպանները: «Այլախոհ-իրավապաշտպաններ» ձեւակերպման հեղինակը Վիկտոր Լուին է: Արտասահմանյան ռադիոկայաններից մեկով՝ 1977 թ. հունվարի 11-ին այս հոդվածի մասին տեղեկանում է Անդրեյ Սախարովը: Պարզ էր, որ խորհրդային իշխանությունները փորձում են այլախոհներին որպես ահաբեկիչներ ներկայացնել: Հասկանալով այս վտանգը, Անդրեյ Սախարովը հաջորդ օրը՝ հունվարի 12-ին հրապարակում է «Դիմում համաշխարհային հանրությանը» հոդվածը, որտեղ, մասնավորապես, գրում է. «Ես չեմ կարողանում փարատել այն կասկածները, որ մոսկովյան մետրոյի պայթյունը եւ մարդկանց ողբերգական մահը պատժիչ մարմինների նոր եւ վերջին տարիների ամենավտանգավոր սադրանքն է: Հատկապես այս կասկածները եւ սրանց հետ կապված վախը, որ այս սադրանքը կարող է բերել երկրի ներքին եղանակի փոփոխության, այս հոդվածը գրելու պատճառ հանդիսացան: Ես շատ ուրախ կլինեի, եթե իմ այս կասկածները սխալ դուրս գային»:

Իսկ հունվարի 14-ին հրապարակվում է Մոսկովյան հելսինկյան խմբի դիմումը, որին միացել էին նաեւ մի շարք այլ իրավապաշտպան ու այլախոհական կազմակերպություններ, որտեղ ասվում էր. «Այլախոհները, որպես իրենց նպատակների իրականացման միջոց, բացարձակապես մերժում են բռնությունը եւ բռնության կոչերը: Այլախոհները ահաբեկչությանը վերաբերվում են վրդովմունքով եւ գարշանքով»:

Չնայած այս եւ այլախոհների այլ դիմումների ու հայտարարությունների առատությանը, «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկան» այդ ժամանակ տեղեկություններ է հրապարակում այն մասին, որ պայթյունի հետ կապված՝ առանց հիմնավոր կասկածների հարցաքննվում են կալանավայրերում գտնվող կամ արդեն ազատ արձակված բազմաթիվ այլախոհներ: ՊԱԿ-ը հատուկ հարցաշար էր մշակել եւ այդ հարցաշարի միջոցով քննում էր այլախոհներին: Յուրաքանչյուրից պահանջվում էր ապացուցել, որ

պայթյունի հետ առնչություն չունի:

Մետրոյի գործով Ստեփան Զատիկյանի, Զավեն Բաղդասարյանի եւ Հակոբ Ստեփանյանի կալանավորված լինելու մասին առաջին տեղեկատվությունը տարածում է Հայաստանի հելսինկյան խումբը: «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկան» իր 48-րդ թողարկման մեջ գրում է. «Երեւան: Ինչպես 1977 թ. նոյեմբերի 28-ին հաղորդում է Հայաստանի հելսինկյան խումբը, նոյեմբերի սկզբին Մոսկվայի Կուրսկյան կայարանում պայթյուն կազմակերպելու փորձի համար ձերբակալվել են Հակոբ Ստեփանյանը, Զավեն Բաղդասարյանը եւ Ստեփան Զատիկյանը (Զատիկյանը մի քանի տարի առաջ մասնակցել է ազգային շարժմանը. տես նաեւ՝ Խր. 15, 27): Ձերբակալվածները գտնվում են երեւանյան ՊԱԿ-ում: Երեւան են ժամանել Մոսկվայի ՊԱԿ-ի աշխատակիցները: Ընթանում են խուզարկություններ ու հարցաքննություններ: Զատիկյանի մասին, մասնավորապես, հարցրել են Ռ. Նազարյանի գործով դեկտեմբերին ընթացող հարցաքննությունների ժամանակ (տես՝ «Ճնշումներ «Հելսինկի» խմբերի դեմ»:

Զատիկյանի կալանավորումն ամրապնդում էր խորհրդային իշխանությունների այն վարկածը, որ պայթյունի թիկունքում կանգնած են այլախոհները: Նրանք ոչ մի ուշադրություն չէին դարձնում այն հանգամանքին, որ Զատիկյանն ապացույցներ ուներ, ըստ որոնց՝ ինքը պայթյունի հետ կապ չունի: Այդ տարիներին ե՛ւ խորհրդային հանրության մեջ, ե՛ւ այլախոհական շրջանակներում հիմնավորված կասկածներ էին հնչում, որ Ստեփան Զատիկյանին արհեստականորեն են կապում այս պայթյունի հետ, որպեսզի այդ ճանապարհով ապացուցեն այլախոհ-իրավապաշտպանների կապը կամ առնչությունները դրան: Զատիկյանի անմեղության մասին խոսակցությունները հիմնավորվում էին նաեւ այն հանգամանքով, որ նախաքննությունը եւ հատկապես դատաքննությունն անցել են հույժ գաղտնիության պայմաններում: Տրամաբանական կլիներ, որ խորհրդային իշխանությունները կազմակերպեին բաց դատ եւ հանրությանը ներկայացնեին ահաբեկիչներին, եթե, իհարկե, թաքցնելու ոչինչ չունեին եւ դատում էին պայթյունի իրական հեղինակներին: Անկասկած, դա իրենց օգտին լավագույն քարոզչությունը կլիներ: Բայց սրա փոխարեն՝ նրանք կազմակերպում են գաղտնի դատավարություն: Անգամ ամբաստանյալների հարազատները չեն տեղեկացվել դատավարության օրվա մասին ու ներկա չեն եղել: Ահա այս կատարյալ գաղտնիության պայմաններում, 1979 թ. հունվարի 24-ին հրապարակում են մահապատիժ նախատեսող դատավճիռը եւ հապշտապ, դատավճռի կայացումից 5 օր անց՝ 1979 թ. հունվարի 29-ին ի կատար են ածում մահապատիժը: Նաեւ այս շտապողականությունն է կասկածների տեղիք տվել ու տալիս:

1979 թ. հունվարի 30-ին, դեռեւս տեղյակ չլինելով, որ դատավճիռն ի կատար է ածվել, Սախարովը Բրեժնեւին ուղղված նամակում պահանջում է հրաժարվել այդ դատավճռից՝ մինչեւ նոր դատաքննություն: Նա գրում է. «Հիմնավոր փաստեր կան անհանգստանալու համար, որ այս գործում առկա է դատական սխալ կամ միտումնավոր կեղծիք: Մետրոյի պայթյունի ժամանակ Զատիկյանը չի գտնվել Մոսկվայում, բազմաթիվ վկաներ կարող են հաստատել նրա ալիբին. քննությունը ոչ մի շահագրգռվածություն չի ցուցաբերել պարզելու համար այս եւ այլ կարեւոր հանգամանքներ: Առանց անգամ չնչին անհրաժեշտության՝ դատաքննությունն ամբողջությամբ փակ ու գաղտնի է եղել: Նույնիսկ հարազատները դրա կայացման մասին ոչինչ չեն իմացել: Նման դատաքննությունը, երբ ամբողջությամբ խախտված է հրապարակայնության սկզբունքը, չի կարող ճշմարտությունը պարզել»:

Այնուհետեւ դատավարության հրապարակայնության սկզբունքների աղաղակող խախտման ակնհայտության մասին հայտարարություն է տարածում Մոսկվայի հել -

սինկյան խումբը. «Հասկանալ հնարավոր չէ, թե ինչու՞ պետք եղավ նման մեղադրանքով դատավարությունը կազմակերպել բացարձակ գաղտնի… Չէ՞ որ մետրոյի պայթյունը համընդհանուր բողոք առաջացրեց, եւ մեղադրյալների մեղքի համոզիչ ապացույցը, եթե միայն մեղադրող կողմն ունի նման ապացույցներ, կնպաստեր հանցագործների համընդհանուր դատապարտմանը: Հրապարակայնության բացակայությունը եւ գաղտնիության ողջ մթնոլորտը մեղադրանքի հիմնավորվածության, դատավա- րության օբեկտիվության նկատմամբ կասկածների հիմք են տալիս»:

Հարկ է ընդգծել, որ ե՛ւ Մոսկովյան հելսինկյան խմբի, ե՛ւ այս թեմայով հանդես եկած այլ իրավապաշտպանական խմբերի ու այլախոհների հայտարարությունները, որպես կանոն, վերաբերել են դատաքննության գաղտնիությանը: Ոչ ոք հստակ ու միանշանակ հայտարարություն չի արել մեղադրյալների անմեղության մասին: Բոլորը պահանջել են արդարադատություն: Միայն բաց ու արդար դատավարությունը կկարողանար դատարանի առջեւ կանգնած Զատիկյանի ու նրա ընկերների անմեղությունը կամ մեղավորությունն ապացուցել: Միայն հրապարակային դատավարության պայմաններում հասարակությունը կհամոզվեր, որ իրական մեղավորներն են կանգնած դատարանի առջեւ: Նման դատարանը կարող էր այս գործի վերջակետը դնել: Բայց խորհրդային իշխանությունները չցանկացան, չկարողացան կամ չհամարձակվեցին գնալ այս միակ ճիշտ ճանապարհով: Կազմակերպված կասկածելի դատավարությունը պատճառ դարձավ, որ պայթյունի օրը ծագած հարցերն այդպես էլ անպատասխան մնան: Խորհրդային իշխանությունների կողմից նման գերգաղտնի դատավարություն կազմակերպելու եւ վճիռը հապշտապ ի կատար ածելու հանգամանքը կարող են վկայել միայն այն մասին, որ կամ մեղադրյալները բացարձակապես անմեղ մարդիկ են եղել, կամ՝ դատարանը նրանց մեղքը լիարժեք ապացուցող համոզիչ ու բավարար ապացույցներ չի ունեցել:

Մոսկովյան մետրոյի պայթյունը հետագայում էապես ազդեց հայ այլախոհներից շատերի ճակատագրերի վրա: Հալածանքները Հայաստանում առավել ուժգնացան: 1978 թվականից հետո կալանավորված այլախոհներին դատապարտում էին է՛լ ավելի մեծ պատժաչափերով: Կալանավայրերից վերադարձածների նկատմամբ հալածանքներ ու սադրանքներ էին կազմակերպվում: Առավել ակտիվները շինծու մեղադրանքներով կրկին դատապարտվում էին: Նման ճակատագրի արժանացան Շահեն Հարությունյանը, Հայկազ Խաչատրյանը, Շիրակ Գյունաշյանը, Հայաստանի հելսինկյան խմբի ղեկավար Էդուարդ Հարությունյանը: Աքսորավայրում նոր մեղադրանք ներկայացրին ու անհիմն դատապարտեցին Ռազմիկ Մարկոսյանին: Յոթնամյա ազատազրկման ավարտից հետո այդպես էլ կալանավայրից դուրս չեկավ ու նոր՝ եռամյա ազատազրկման դատապարտվեց Պարույր Հայրիկյանը:

Մինչեւ 2005 թ. հստակ ու միանշանակ հայտարարությունը, ըստ որի՝ Ստեփան Զատիկյանն է եղել Մոսկվայի մետրոյի պայթեցման կազմակերպիչը, իսկ Հակոբ Ստեփանյանն ու Զավեն Բաղդասարյանն էլ՝ իրականացնողները, չի հնչել: Այս ողջ պատմության ընթացքում, չհաշված խորհրդային Պետանվտանգության կոմիտեն ու դրան կից օղակները, ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Հայաստանից դուրս, կասկածելի եւ մութ մնացած հանգամանքներում դատապարտված ու 1979-ին գնդակահարված Զատիկյանի, Ստեփանյանի եւ Բաղդասարյանի մոսկովյան պայթյունին մեղսակից լինելու մասին ոչ ոք միանշանակ հայտարարություն չի արել:

Միայն 2005-ին նման միտք է հայտնել նախկին քաղբանտարկյալ, «Հանուն Հայրենիքի» ամսագրի հրատարակման համար 1969-ին դատապարտված Հովիկ Վասիլյանը: Նա իր համախոհների հետ 2005-ին հրատարակում էր նույնանուն մի պարբե-

բական: Ահա այդ պարբերականում՝ Ստեփան Զատիկյանի 59-ամյակին նվիրված հոդվածում նա անդրադարձել էր Զատիկյանին ու մետրոյի գործին:

Որպես Ստեփան Զատիկյանին եւ մետրոյի գործին առնչվող հրապարակում՝ այդ հոդվածը հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ:

Կգա եւ Զատիկյանին հերոս ճանաչելու ժամանակը

Հունիսի 20-ին կլրանա 1960-ականների ազգային շարժման նվիրյալ մասնակիցներից մեկի, անզուգական հայի՝ Ստեփան Զատիկյանի ծննդյան 59-ամյակը: Խմբագրությունը հավաքում եւ համակարգում է նրան վերաբերող հուշեր, լուսանկարներ եւ փաստագրական այլ նյութեր:

Ընդհատակյա հայ ազգային գործիչների շարքում Ստեփան Զատիկյանն առանձնահատուկ է մի քանի առումներով: Առաջին. շատերը նրանից են «վարակվել» ազգային գաղափարներով: Երկրորդ. նրա գերեզմանատեղը դեռ անհայտ է: Եվ երրորդ. նրա անվան դիմաց դաջված է «ահաբեկիչ» պիտակը:

Մոսկվայի մետրոյի հանրահայտ պայթյունի մեջ Զատիկյանի մեղսակցության վերաբերյալ տարբեր կարծիքներ կան, բայց, որքան էլ հակասական լինեն, չեն կարող ստվեր գցել նրա հանուն հայրենիքի ապրած կենսակերպի եւ հայկական հարցի համար զոհված լինելու հանգամանքի վրա: Մենք կողմնակից ենք ճշմարտությունը համարձակորեն ներկայացնելով՝ նրան արժանի գնահատական տալու մոտեցմանը:

Այդ պայթյունից առաջ Ստեփան Զատիկյանը, Հակոբն ու ես Իջեւանի շրջանի Վերին Աղդան՝ իմ ծննդավայր գյուղի կողքի Բուդուր անտառածածկ փեշերով ժայռոտ լեռան տափարակին, խարույկի մոտ ենք անցկացրել:

Մի ամբողջ գիշեր համոզում էի հետ կանգնել մետրոն պայթեցնելու մտքից. «Այնտեղ միամիտ, անմեղ մարդիկ են, թե պայթեցնող եք՝ գնացեք Կրեմլ»:

- Կրեմլը չենք կարող, - պատասխանեցին, - այն պահպանվում է:

Պայթյունը հնչեց:

Հակոբն ու հետի իմ չճանաչած իր գործընկերը չվերադարձան: Հետագայում իմացանք, որ նրանց ձերբակալել եւ Մոսկվա էին տարել Կովկասից, իսկ քանի օր անց ձերբակալեցին ու Մոսկվա տարան նաեւ Ստեփանին:

Ես սպասում էի, որ ինձ կկանչեն հարցաքննության, բայց այդպես չեղավ, ինչից եզրակացնում եմ, որ խոսել է միայն այն՝ ինձ եւ իմ չճանաչած մասնակիցը:

Եթե ՊԱԿ-ը պարզեր, որ ես թեկուզ լոկ տեղյակ եմ եղել այդ ձեռնարկին, բայց չեմ հայտնել ուր հարկն է՝ կգնդակահարեր եւ ինձ:

Հովիկ Վասիլյան
«Հանուն Հայրենիքի»
7 հունիս – 6 հուլիս, 2005թ., թիվ 11 (31)

Զավեն Բաղդասարյան

Զավեն Բաղդասարյան
լուս. վերցված է Վահան Իշխանյանի բլոգից

Հակոբ Ստեփանյան



Հակոբ Ստեփանյան

Ստեփան Զատիկյան

В Верховном суде Союза ССР

Судебная коллегия по уголовным делам Верховного суда СССР рассмотрела в открытом заседании уголовное дело по обвинению особо опасного рецидивиста Затикяна С. С. и двух его сообщников в совершении в январе 1977 года в вагоне Московского метрополитена взрыва, повлекшего за собой человеческие жертвы. В ходе судебного разбирательства вина подсудимых полностью доказана показаниями свидетелей, заключениями экспертиз и другими материалами дела. Затикян и его сообщники приговорены к исключительной мере наказания — смертной казни. Приговор приведен в исполнение.

Դատավճիռն ի կատար ածելու մասին «Իզվեստիա» թերթի 1978թ. հունվարի 31-ի հրապարակումը

Ստեփան Զատիկյանը Ազգային միացյալ կուսակցության հիմնադիրներից էր: Առաջին անգամ կալանավորվել է 1968 թվականի հուլիսի 11-ին, իսկ 1969-ի հունվարի 9-ին դատապարտվել է 4 տարի ազատազրկման: Կալանավայրում ցուցաբերած ըմբոստ վարքի համար 1970-ին նրա ռեժիմը խստացրել են եւ տեղափոխել բանտային ռեժիմ՝ Վլադիմիրի բանտ: Ազատ է արձակվել 1972-ի հուլիսին: Երեւան վերադառնալուց անմիջապես հետո շարունակել է իր ընդհատակյա գործունեությունը, զբաղվել է ԱՄԿ նոր կառույցների կազմակերպմամբ: Այդ շրջանում Ստեփան Զատիկյանն առաջ էր մղում այն տեսակետը, որ ընդհատակյա աշխատանքի լուրջ փորձ ձեռք բերած ԱՄԿ-ականները չպետք է մանր գործերի մեջ ներքաշվեն ու դրանց պատճառով կալանավորվեն, այլ պետք է անշտապ ու խիստ գաղտնի պայմաններում, խորը ընդհատակում պատրաստեն ու կազմակերպեն ազգային-ազատագրական պայքարին իրենց ողջ էությամբ նվիրված գործիչներից բաղկացած լուրջ կառույցներ, որոնք կկարողանան նոր ու ժամանակակից միջոցներ գտնել ԱՄԿ գաղափարները ժողովրդի լայն շերտերին հասու դարձնելու համար: 1977-ի նոյեմբերի 2-ին ՊԱԿ-ի աշխատակիցները Երեւանում ձերբակալում ու մեղադրում են նրան Մոսկվայի մետրոյում իրականացված պայթյունը կազմակերպելու համար: 1979 թ. հունվարի 16-20-ին՝ խիստ գաղտնիության պայմաններում ընթանում է այս գործով դատավարությունը: Այդ տարիներին խորհրդային Պետական անվտանգության կոմիտեի ղեկավար Անդրոպովի հանձնարարությամբ՝ ողջ դատավարությունը նկարահանվել է, բայց մինչ օրս համարվում է գաղտնի եւ հանրութ-

յանը հասանելի չէ: Համացանցում կարելի է գտնել միայն առանձին դրվագներ այդ նկարահանումից, որոնք ռուսական Անվտանգության դաշնային ծառայության պատվերով նկարահանված ֆիլմերում նույնությամբ կրկնվում են: Այդ դրվագները համատեքստից կտրված մեջբերումներ են, որոնք ոչ մի դեպքում չեն կարող ամբողջական պատկերացում տալ ո՛չ ահաբեկչական ակտի կազմակերպման ու իրականացման, ո՛չ նախաքննության, ո՛չ դատաքննության եւ ոչ էլ մեղադրյալների մասին: Մի դրվագում Ստեփան Զատիկյանն ասում է. «Ես արդեն քանիցս հայտարարել եմ, որ հրաժարվում եմ ձեր դատ-ֆարսից եւ ոչ մի փաստաբանի կարիք չեմ զգում: Ես ինքս եմ մեղադրողը, ոչ թե՝ մեղադրյալը: Դուք ինձ դատելու իշխանություն չունեք, քանի որ ջհուդառուսական կայսրությունն իրավական պետություն չէ: Սա պետք է ամուր հիշել»: Հաջորդ դրվագում ասում է. «Քանզի ռուսներից ու Ռուսաստանից այսօր Հայաստանը բացարձակապես ոչ մի օգուտ չունի, իսկ դուք ունեք: Այնպես, որ, եթե փորձանք կլինի, փորձանքը կլինի միայն ձեզ համար, մեզ համար չի լինի, քանզի մենք կորցնելու բան չունենք»: Այնուհետեւ ավելացնում է. «Ես ցանկանում եմ մի քանի խոսք ընկերներիս ասել: Տղե՛ք, մնաք բարով: Մարդկանց ասեք, որ սրանք Ստեփանի վերջին խոսքերն էին՝ վրեժ, վրեժ եւ նորեն վրեժ»: Հունվարի 24-ին կայացվում է մահվան դատավճիռ: Հունվարի 27-ին դատապարտյալներին իրենց հարազատների հետ տեսակցության հնարավորություն են տալիս: Տեսակցության ժամանակ հարազատներին Զատիկյանն ասում է. «Ամբողջ 15 ամսվա ընթացքում ես նրանց բառ անգամ չեմ ասել»: Այս խոսքից եւ դատարանի դահլիճում դրսեւորած նրա պահվածքից կարելի է եզրակացնել, որ Ստեփան Զատիկյանը չի ընդունել մեղադրանքը եւ ցուցմունքներ չի տվել: 1979 թ. հունվարի 31-ին «Իզվեստիա» թերթը տեղեկացնում է, որ հունվարի 30-ին՝ դատավճռի կայացումից 6 օր անց մահապատիժն ի կատար է ածվել՝ նշելով միայն Ստեփան Զատիկյանի անունը: Այս վերջին հանգամանքը առիթ էր դարձել, որ խոսակցություններ պտտվեն, թե Հակոբ Ստեփանյանն ու Զավեն Բաղդասարյանը չեն գնդակահարվել ու կենդանի են:

Հակոբ Ստեփանյանը ծնվել է 1949 թվականին, Երեւանում: Բնակվել է Ստեփան Զատիկյանի հարեւանությամբ: 1972-ին՝ Զատիկյանի ազատ արձակվելուց եւ Երեւան վերադառնալուց հետո մտերմանում է նրա հետ: Ժամանակ անց անդամագրվում է Ազգային միացյալ կուսակցությանը: 1977 թ. հոկտեմբերի 28-ին Մոսկվա-Երեւան գնացքում՝ Հայաստանի եւ Վրաստանի սահմանագծին ձերբակալվում եւ մեղադրվում է 1977 թ. հունվարի 8-ին Մոսկվայի մետրոյում տեղի ունեցած պայթյունն իրագործելու համար: Հունվարի 8-ի պայթյունը միակը չէր: Պայթյուններ էին իրականացվել մոսկովյան խանութներից մեկում, ճամփեզրին գտնվող աղբամանում, եւ մեկ չհաջողված պայթյունի փորձ էր եղել Կուրսկյան կայարանում: Ըստ նախաքննական մարմնի տեղեկությունների, Կուրսկյան կայարանում նախատեսված պայթյունը չէր հնչել, որովհետեւ պատահական անցորդը նկատել էր մի պայուսակ, որը, կարծես, ոչ մեկին չէր պատկանում, բացել էր եւ տեսել ռումբն՝ իր ժամացույցային մեխանիզմով, ու դիմել էր միլիցիոներներին: Թե ինչպես են դեպքերը զարգացել իրականում, հայտնի չէ: Ըստ նույն՝ նախաքննական մարմնի տեղեկատվության, բացի ռումբից, պայուսակում եղել են նաեւ մարզական հագուստ եւ գլխարկ, որոնց միջոցով էլ կարողացել են հայտնաբերել պայթյունն իրականացնողներին:

Համացանցում առկա Մոսկվայի մետրոյի պայթյունի հետ կապված իրար կրկնող ֆիլմերից մեկում մի փոքրիկ հատված կա Ստեփան Զատիկյանի ու Հակոբ Ստեփանյանի միջեւ կայացած առերես հարցաքննությունից: Զատիկյանը ողջ ընթացքում լռում է: Խոսում է Հակոբ Ստեփանյանը: Խոսքը էմոցիոնալ է եւ խառը. «Եթե պետք լինի, ես

կպայթեցնեմ: Եթե մեզանից մեկնումեկն էլ կենդանի մնա, եթե արյուն թափեցիք, նորից կլինի պայթյուն: Եթե դուք կրակելու եք՝ կրակեք, բայց ես ասում եմ ձեզ՝ մենք ապրելու ենք: Ավելի վատ ձեզ համար, եթե մենք ապրենք»: Այնուհետեւ մի հատված էլ Հակոբ Ստեփանյանի դատավարության ժամանակ տված ցուցմունքներից է: Նա պատմում է, թե որտեղ են տեղի ունեցել պայթյունները. «Մեկը հոկտեմբերի 25-ի փողոցում է տեղի ունեցել, մյուսը մետրոյում է տեղի ունեցել, մյուսը՝ նույն փողոցի խանութում»: Այնուհետեւ շարունակում է. «Ես գիտեի, որ ռումբ է պայթում, եւ կլինեն զոհեր»: Չնայած այն հանգամանքին, որ Հակոբ Ստեփանյանը դատապարտվեց մահապատժի, եւ ըստ ամենայնի՝ գնդակահարվել է դատավճռի հրապարակումից 5 օր անց՝ հունվարի 30-ին, բայց փաստ է, որ դատավճռի ի կատար ածելու մասին պաշտոնական հաղորդագրության մեջ Հակոբ Ստեփանյանի անունը չի հիշատակվում:

Զավեն Բաղդասարյանը ծնվել է 1948 թվականին, Արտաշատի շրջանում: Մասնագիտությամբ նկարիչ էր: 1977 թ. հոկտեմբերի 28-ին Մոսկվա-Երեւան գնացքում, Հայաստանի եւ Վրաստանի սահմանագծին՝ Հակոբ Ստեփանյանի հետ ձերբակալվել է 1977 թ. հունվարի 8-ին Մոսկվայի մետրոյում տեղի ունեցած պայթյունն իրականացնելու մեղադրանքով: Ձերբակալվածներն սկզբում պահվել են Երեւանի ՊԱԿ-ի մեկուսարանում: Այնուհետեւ տեղափոխվել են Մոսկվայի ՊԱԿ-ի Լեֆորտովոյի բանտ: Քանի որ այս գործով դատավարությունն ընթացել է խիստ գաղտնի պայմաններում, եւ մինչ օրս նախաքննության ու դատաքննության նյութերը, գործով կայացված դատավճիռը հայտարարվում են հույժ գաղտնի փաստաթղթեր ու պահվում են ռուսական Անվտանգության դաշնային ծառայության արխիվում, մենք ստիպված ենք այս գործի մասին դատողություններ անել նույն այդ ծառայության՝ հանրությանը նետված եւ միայն քարոզչական նպատակներ հետապնդող կցկտուր տեղեկատվությունից: Ըստ հակասական խոսակցությունների եւ լուրերի, Զավեն Բաղդասարյանը նախաքննության ու դատաքննության ժամանակ ընդունել է իր մեղքը եւ տվել համապատասխան ցուցվունքներ: Թե իրականում ինչ է եղել, ինչ կապ ուներ Զավեն Բաղդասարյանը Ստեփան Զատիկյանի հետ, ինչ ճանապարհներով է նախաքննական մարմինը Զավեն Բաղդասարյանից իրեն անհրաժեշտ ցուցմունքներ ստացել, եւ իրո՞ք ստացել է, թե՝ ոչ, այս հարցերը մինչեւ այսօր անպատասխան են մնում: Մոսկվայի մետրոյում հնչած պայթյունի մասին ֆիլմերում Զավեն Բաղդասարյանից չափազանց քիչ բան կա: Համեմատաբար մեծ մեջբերումներ կան Զատիկյանի խոսքերից, որոնք նա ասել է դատաքննության տարբեր օրերի ընթացքում, քանի որ նույն հագուստով չէ: Հակոբ Ստեփանյանից ե՛ւ դատաքննական ցուցմունքից մի փոքրիկ հատված կա, ե՛ւ Զատիկյանի հետ առերես հարցաքննությունից կա, իսկ Զավեն Բաղդասարյանից ընդամենը դատարանում արտաբերած մի կարճ նախադասություն է: Նա ընդունում է ռումբը տեղադրելու հանգամանքը, սակայն, ի տարբերություն Հակոբ Ստեփանյանի, որն ասում է՝ տեղադրել են ռումբը, եւ հասկանում էր, որ պայթելու է, ու լինելու են զոհեր, Զավեն Բաղդասարյանը տալիս է խուսափողական պատասխան. «Պայմանավորվեցինք, դզեցինք, ես շատ գիտեմ՝ պայթելու է, չի պայթելու…»: Զավեն Բաղդասարյանը՝ Ստեփան Զատիկյանի եւ Հակոբ Ստեփանյանի հետ դատապարտվեց մահապատժի, որն, ըստ «Իզվեստիա» թերթի հրապարակած տեղեկատվության, որտեղ Զավեն Բաղդասարյանի անունը չի հիշատակվում, ի կատար է ածվել 1979 թվականի հունվարի 30-ին:

Պատմում են Ստեփան Զատիկյանի մասին

Բագրատ Շահվերդյան. «Հիմա չեմ հիշում, թե ում միջոցով ծանոթացա ու մտերմացա Ստեփան Զատիկյանի հետ: Հաճախ էի լինում նրանց տանը: Նրան դուր էին գալիս մեր հավաքած ազգագրական երգերը: Ինքն էլ էր հաճույքով երգում դրանք: Շատ ավելի ուշ ինձ ասաց Ազգային միացյալ կուսակցության մասին: «Փարոսի» տպագրությունից հետո ինձանից կարծիք հարցրեց: Ես ասացի, որ հակակոմունիզմն այն ճանապարհը չէ, որով պետք է տանենք մեր ժողովրդին: Ասացի, որ ես էլ կոմունիստական գաղափարները չեմ ընդունում, բայց կարծում եմ, որ սկզբում պետք է ժողովրդին տանենք ինքնաճանաչողության, հետո նոր արդեն՝ անկախության: Ասացի՝ գուցե հետաքրքիր են հակակոմունիզմը, սուր նացիոնալիզմը, բայց դրանք արդյունքի բերել չեն կարող: Բացատրում էի, որ անգամ մեզ՝ միայն ազգային գործունեությամբ զբաղվողներիս մարդիկ չեն հասկանում: Անգամ մեզանից են զգուշանում ու խուսափում, էլ ու՞ր մնաց՝ հակակոմունիզմ ու անկախություն: Մարդիկ այդ մտքերից սարսափելու են: Չեն կարողանալու ընդունել դրանք: Բայց նա չընդունեց իմ տեսակետները: Մենք շարունակեցինք մնալ լավ բարեկամներ, բայց ոչ՝ գաղափարակիցներ:

Բանտում իմացա, որ Ստեփանն իրականացրել է Մոսկվայի մետրոյի պայթյունն ու շատ զարմացա: Մոսկվայից եկան ինձ հարցաքննելու: Ասացի, որ Զատիկյանին լավ եմ ճանաչում ու զարմացած եմ, որ նա նման քայլի է դիմել: Մինչեւ այսօր այդպես էլ չեմ կարողանում հասկանալ, թե ինչը պետք է Ստեփանի կարգի կազմակերպված, պատրաստված, համեստ ու հայրենասեր մարդուն դրդեր նման քայլի»:

Շահեն Հարությունյան. «Ստեփանի հետ ծանոթացել եմ խցում՝ 15-օրյա կալանքի ժամանակ: Հենց սկզբից նա համառ մարդու տպավորություն թողեց ինձ վրա: Ուներ ընդգծված ազնվություն: Երբեք ստել կամ կեղծել չէր կարող: Այդ ամենի հետ միաժամանակ՝ հեռատես էր: Իր մեջ հակասովետականությունն առաջացավ առաջին կալանավորումից հետո: Նա կալանավայրից վերադարձավ արդեն որպես ձեւավորված ու համոզված հակասովետական գործիչ: Նրա հակասովետիզմն իր մեջ նաեւ հակառուսականություն էր պարունակում: Հայ ժողովրդին պատուհասած ցավերի հիմնական մեղավորներ էր համարում Ռուսաստանին ու կոմունիստներին: Նվիրված էր, անկոտրում ու անշահախնդիր»:

Լրագրող-հրապարակախոս Լեւոն Անանիկյան. «Իհարկե, Կոմիտասի հուշարձանին ուսանողական աղքատիկ միջոցներով գնված ծաղկեփունջ դնելն անգամ այն ժամանակ, անգամ ապրիլի 24-ին՝ հերոսություն չէր: Հերոսը Ստեփան Զատիկյանն էր՝ իր խրոխտ կեցվածքով, որն էլ հետագայում իր կյանքը զոհեց հանուն հայրենիքի ազատության եւ անկախության: Հերոսները նրանք էին, ովքեր իրենց կյանքի լավագույն տարիներն անցկացրեցին բանտախցերում ու աքսորավայրերում:

«Ես գնացի Կոմիտասի այգի», Երեւան 2005, էջ 29

Ստեփան Զատիկյան. «Ես հայ ժողովրդի մատաղն եմ»

Սա էր եղել Ստեփանի վերջին խոսքը 1979 թ. հունվարի 29-ին, գնդակահարության վճիռը ի կատար ածելուց մեկ օր առաջ՝ հարազատների հետ թույլատրված տեսակցության ժամանակ:

Այս խոսքն ասելու քաղաքական գործչի իրավունքը Ստեփանը սկսել էր նվաճել 1966 թ. ապրիլի 24-ին՝ Հայոց եղեռնի նահատակների հիշատակը հարգելու համար Պանթեոն՝ Կոմիտասի շիրիմին խոնարհվելու եկած ուսանող երիտասարդների հետ ձերբակալվելուց եւ նույն բանտախցում պատմական օրեր անցկացնելուց հետո:

Այդ մի քանի օրերը բավարար էին եղել բացահայտելու համար իր էության ամենանվիրական՝ հարազատ ժողովրդի ազատությանը նվիրաբերվելու կոչումը, դառնալով անհատի ազատամտությունը խեղդող խորհրդային կուսակցապետությունում հայ ժողովրդին՝ հանուն ազատության, անկախ պետականության վերականգնման, ժողովրդավարության պայքարի կանչող ընդհատակյա Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) եւ նրա օրգան «Փարոս» թերթի երեք հիմնադիրներից մեկը:

Ստեփանն իր հաստատուն ազատախոհությամբ «սիրելի երիտասարդ» էր ճանաչվում արդեն հայ հայրենասեր մտավորականության միջավայրում՝ հատկապես 1968 թ. առաջին երկարաժամկետ դատապարտվելու հանգամանքով, իսկ քաղաքական գործիչ ընկերների կողմից՝ իր «կյանքը բարոյական արժեքներով կազմակերպող, կայուն հասարակական-քաղաքական եւ փիլիսոփայական հայացքներ ունեցող, խորագիտակ, զարգացած, բարեկիրթ եւ բազմակողմանի մշակութային հետաքրքրություններով» մարդ…

Ստեփանը գնդակահարվեց իր երկու ընկերների հետ տառացիորեն անպաշտպան՝ 1977 թ. հունվարի 8-ի Մոսկվայի մետրոյի պայթյունը կազմակերպողի մեղադրանքով, եւ ընտրված պատիժը որպես ճնշամիջոց օգտագործվեց խորհրդային երկրում հետզհետե ավելացող այլախոհների շարքերի վրա: Ու թեեւ այդ շարքերը ծավալեցին Ստեփանի եւ ընկերների անմեղությունը եւ մեղադրանքի հորինված լինելն ապացուցող հրապարակային եւ թղթակցային պայքար, այնուամենայնիվ, գործնականում այդ բոլորը հնչեցին ձայն բարբառո հանապատի, ինչպես եւ անցյալ դարի 90-ականներին նորանկախ Հայաստանում հայ մամուլի Ստեփանին եւ նրա ընկերներին անմեղ տեսնելու ակնկալիքով անդրադարձն իրադարձություններին:

Շուրջ չորս տասնամյակ առաջ տեղի ունեցած, մի խումբ երիտասարդների կյանքի ապագա ընթացքը որոշող եղելություն եւ մի լուսահոգի անուն հիշեցնող այս գրքույկը հավանաբար առիթ ծառայի հայոց նորանկախ պետականության՝ 60-ականների ազգային զարթոնքի ոգին դեռեւս կրող ներկայացուցիչներին՝ փորձելու մաքրել անհեթեթորեն սարքված «հանցագործությունը» Ստեփանի կենսագրությունից, կենսագրություն, որ անկասկած կհարստացնի հայ ժողովրդի նորագույն պատմության մեր ժամանակների հայ երիտասարդի հայրենանվիրումի եզրերը մեկնող էջերը…

«Ես գնացի Կոմիտասի այգի», Երեւան 2005, էջ 63

Էդուարդ Հարությունյան

Իրավապաշտպան, Հայկական հելսինկյան խմբի ղեկավար Էդուարդ Հարությունյանը դատապարտվել է երկու անգամ՝ 1980 եւ 1983 թվականներին: Ի տարբերություն այլ քաղբանտարկյալների նկատմամբ կայացված դատավճիռների, որոնք պահվում են ԱԱԾ արխիվում, Հարությունյանի նկատմամբ կայացված դատավճիռները գտնվում են Դատական դեպարտամենտի արխիվում: Հավանաբար, պատճառն այն է, որ որոշ մարդկանց նկատմամբ, նրանց թվում նաեւ՝ Էդուարդ Հարությունյանի, Պետական անվտանգության կոմիտեի հանձնարարությամբ՝ նախաքննությունը վարել է ոչ թե ՊԱԿ-ի քննչական ծառայությունը, այլ դատախազությունը կամ այլ քննչական մարմին, եւ քանի որ թղթաբանությունը ՊԱԿ-ում չի իրականացվել, դատավճռի հրապարակումից հետո ուղարկվել է իրենց սեփական արխիվ: Նույն ճակատագիրն է ունեցել նաեւ Շիրակ Գյունաշյանի նկատմամբ կայացված երկրորդ դատավճիռը, որը նույնպես՝ առանց դժվարությունների ստացել ենք Դատական դեպարտամենտի արխիվից: Այնտեղից դատավճիռներ ստանալն անհամեմատ հեշտ էր: Այնտեղ, ի տարբերություն ԱԱԾ-ի, արհեստական ու մտացածին խոչընդոտներ չեն հարուցվել: Այս արխիվից ստացված դատավճիռները ձեռագիր վիճակում էին եւ շատ հաճախ՝ դժվար ընթեռնելի, հատկապես՝ Էդուարդ Հարությունյանի նկատմամբ կայացված առաջին դատավճիռը: Դատական դեպարտամենտի արխիվում են պահվում նաեւ այն մարդկանց նկատմամբ կայացված դատավճիռները, որոնց ծավալած քաղաքական գործունեության համար, Պետական անվտանգության կոմիտեի հանձնարարությամբ, դատապարտել են մտացածին ու հորինված քրեական գործերով: Այս հորինված գործերով նախաքննությունները վարել են միլիցիայի շրջանային բաժինները կամ շրջանային դատախազությունները, եւ ըստ այդմ՝ դատավճիռները գտնվում են տարածքային արխիվներում, որոնք այսօր դեռեւս համակարգման փուլում են, եւ այնտեղ որեւէ բան գտնելը մեծ դժվարությունների հետ է կապված: Այս առումով քիչ թե շատ համակարգված է Գերագույն դատարանին առնչվող արխիվը: Հենց այդ արխիվից էլ ստացել ենք Էդուարդ Հարությունյանի դատավճիռները:

Էդուարդ Հարությունյան

Էդուարդ Բագրատի Հարությունյանը ծնվել է 1926 թ., Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում: Ավարտել է Բաքվի ժողտնտեսության ինստիտուտը: Աշխատանքի է անցել Երեւանում: 1961-ին պաշտպանել է թեկնածուական թեզ ու ստացել տնտեսական գիտությունների թեկնածուի կոչում: Չնայած այն հանգամանքին, որ եղել է համոզված կոմունիստի ընտանիքի զավակ, ունեցել է ընդգծված ազատամիտ հայացքներ: Նրա ազատամտությունը սկզբնական շրջանում չէր հակադրվում կոմունիստական գաղափարախոսությանը: Հարությունյանը համարում էր, որ խորհրդային հասարակության մեջ առկա անարդարությունները խորթ են կոմունիստական գաղափարախոսությանը, եւ դրանց մեղավորներն առանձին մարդիկ են, ոչ թե՝ հասարակարգը: Նրա այս մոլորութ-

յունը, սակայն, երկար չի տեւում: Ցուցաբերած ազատամտության պատճառով 1967-ին հեռացվում է աշխատանքից: Սկսվում է տարիներ ձգվող հալածանքների մի մեծ շղթա: Էդուարդ Հարությունյանը բախվում է խորհրդային իրականությանը եւ ինչ-որ պահից գիտակցում, որ հարկավոր է պայքարել այդ իրականության դեմ: Նրա հոդվածներն արգելում են հրապարակել, համապատասխան աշխատանք գտնելը դառնում է անհնար: 1972-ին Մոսկվայում նա մտնում է Մեծ Բրիտանիայի դեսպանատուն եւ փորձում դեսպանատան աշխատակիցներին փոխանցել իր հոդվածները: Նրան ձերբակալում եւ հոգեբուժարան են տեղափոխում: Ազատ են արձակում միայն այն բանից հետո, երբ մայրն սպառնում է՝ որդուն ազատ չարձակելու դեպքում ինքնահրկիզվել հենց Լենինի դամբարանի մոտ: 1977-ին ստեղծվում է Հայաստանի հելսինկյան խումբը: Խմբի ղեկավար է դառնում Հարությունյանը: Նա էլ գրում է խմբի հռչակագիրը եւ մեծ եռանդով լծվում Խորհրդային Միությունում իրավապաշտպանի ծանր գործին: 1977-ի դեկտեմբերին Հելսինկյան խմբի անդամներ Ռոբերտ Նազարյանը եւ Շահեն Հարությունյանը կալանավորվում են, իսկ 1978-ին՝ դատապարտվում երկարատեւ ազատազրկման: Էդուարդ Հարությունյանը նոր համախոհների՝ Սամվել Օսյանի, Ռաֆայել Օհանյանի, Սիրվարդ Ավագյանի, Համբարձում Խլղաթյանի եւ այլոց հետ շարունակում է հանդես գալ Հայաստանի հելսինկյան խմբի անունից: 1979-ի հուլիսին նրան կալանավորում ու մեղադրանք են ներկայացնում 206[1] հոդվածով (սովետական պետական ու հասարակա - կան կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը): 1980-ի մարտին Հարությունյանը դատապարտվում է 2 տարի 6 ամիս ազատազրկման: Պատիժը կրելու համար տանում են Սիբիր: Ազատ է արձակվում 1982-ի հունվարին եւ, չնայած մտահոգիչ առողջական վիճակին, անմիջապես վերսկսում է իրավապաշտպանական գործունեությունը: Նրա առողջական վիճակը չափազանց վատ է եղել: Շահեն Հարությունյանը պատմում է , որ Էդուարդ Հարությունյանի ազատ արձակվելուց հետո իրենց տանը հավաքվել են ինքը, Ռաֆայել Պապայանը, Գեորգի Խոմիզուրին, Էդմոնդ Ավետյանը եւ Էդուարդ Հարությունյանը: Այդ օրը բոլորը նրան համոզում են, որ դադար տա, մի փոքր հանգստանա, ակտիվ գործունեություն չծավալի, քանի որ արդեն ուներ չափազանց քայքայված առողջություն: Սակայն, նա խիստ վրդովվել եւ հրաժարվել է ընդունել նրանց առաջարկները:

Հայաստանի հելսինկյան խմբի անդամներ Սիրվարդ Ավագյանի եւ Ռաֆայել Օհանյանի ձերբակալությունից չորս օր անց՝ 1982 թ. նոյեմբերի 10-ին եւ իր ազատ արձակվելուց 10 ամիս անց՝ Էդուարդ Հարությունյանը կրկին ձերբակալվում է: Այդ նույն օրը ձերբակալվում են նաեւ Էդմոնդ Ավետյանը, Գեորգի Խոմիզուրին եւ Ռաֆայել Պապայանը: Արդեն ծայրահեղ քայքայված առողջությամբ Էդուարդ Հարությունյանին խորհրդային պատժիչ մեքենան 1983-ի հունիսի 6-ին, նույն 206[1] հոդվածով երկրորդ անգամ է դատապարտում: Այս անգամ՝ երեք տարի ազատազրկման: Ե՛վ նրա հալածանքն իրականացնող ՊԱԿ-ը, ե՛ւ դատավորներն ու դատախազները, ե՛ւ բանտապահները, ե՛ւ համախոհները, եւ ինքը՝ Էդուարդ Հարությունյանը, գիտեին, որ այս անգամ նա ողջ դուրս չի գալու կալանավայրից: Նույնիսկ օր օրի վատթարացող առողջության պայմաններում Հարությունյանը շարունակում է մնալ սկզբունքային ու անկոտրում: Հրաժարվում է դիմում գրել վաղաժամ ազատ արձակվելու խնդրանքով: Ընդհակառակը՝ տարբեր ատյաններ ուղարկված իր դիմումներում ու նամակներում գրում է իր անմեղության, իր քայլերի օրինաչափության ու իշխանությունների անբարոյականության մասին: Միայն 1984 թ. դեկտեմբերի 5-ին են խորհրդային իշխանությունները վճռում՝ առանց նրա դիմումի ազատ արձակել արդեն մահամերձ Հարությունյանին: Ազատվե-

լուց 12 օր անց՝ դեկտեմբերի 17-ին, 58 տարեկան հասակում Էդուարդ Հարությունյանը վախճանվում է Երեւանում: Նրա մարմինն, իր ցանկությանն ընդառաջ, հողին է հանձնվում հայրենի Թալիշ գյուղում: Ֆրանսիական հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ ու միջոցներով նրա գերեզմանին տապանաքար է դրվում, բայց խորհրդային իշխանությունները պահանջում են հանել տապանաքարը, իսկ հանելուց հետո՝ բարբարոսաբար ջարդում են այն:

Էդուարդ Հարությունյանի գործով կայացած դատավճիռը

Դատավճիռն ստացել ենք Դատական դեպարտամենտի արխիվից, ձեռագիր վիճակում: Այն ամբողջական է, միայն մի քանի անընթեռնելի բառեր են բաց թողնված: Դրանք նշված են կետագծերով:

Մարտ 1980թ.
գործ N 49

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1980թ. մարտի 10-ին քաղ. Երեւանում

Նախագահությամբ՝	**Ա. Եղիազարյանի**
Ատենակալներ՝	**1. Խ. Ա. Բաբախանյանի**
	2. Ռ. Ա. Պապոյանի
Քարտուղարությամբ՝	**Ա. Հովհաննիսյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Ս. Խոնդկարյանի**
Հասարակական մեղադրող՝ -	
Պաշտպան՝	**Յու. ----յանի, Բ. Հարությունյանի**
Թարգման.	**Ա. Վ. Ուզունյանի**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Էդուարդ Բագրատի Հարությունյանի, ծնվել է 1926թ. Ադրբ. ՍՍՀ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում, անկուսակցական, բարձրագույն կրթությամբ, տնտեսական գիտությունների թեկնածու, ամուրի, խնամքին ոչ ոք, կառավարական պարգեւներ չունի, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, չի աշխատել, մշտապես բնակվել է Երեւան քաղաքի Հ. Ներսեսյան փողոցի շենք 1 N 5 բնակարանում, այս գործով կալանքի տակ է 1979թ. հուլիսի 13-ից:

Էդուարդ Հարությունյանը մեղադրվում է Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 206 պրիմ հոդվածով:

Դատաքննությամբ, վկաների ցուցմունքներով, գործին կցված իրեղեն ապացույցներով քրեական գործերի դատական կոլեգիան ապացուցված է համարում հետեւյալը՝

Ամբաստանյալ Էդուարդ Հարությունյանը մշտապես բնակվելով Երեւան քաղաքում, 1976թվականին կապեր է հաստատել Ռոբերտ Նազարյանի, Մարտիրոսյանի, Գյոդակյանի եւ մյուսների հետ, որոնք հետագայում դատապարտվել են Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 65 եւ 67 հոդվածներով ու նրանցից ձեռք բերել սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող կնհայտ հերյուրանքներ պարունակող երկեր, այդպիսիք պահել իրեն մոտ, իսկ որոշ դեպքերում ինքն է գրել այդ կարգի ու բովանդակության հոդվածներ ու երկեր, հասցեագրելով «Գերմանական ալիք», «Բի-բի-սի», «Ամերիկայի ձայն» ռադիոհաղորդումների խմբագրություններին, Ամերիկայի միացյալ նահանգների, Իզրաելի, Հնդկաստանի, Անգլիայի եւ այլ պետությունների քաղաքացիներին, ինչպես նաեւ սովետական ղեկավար աշխատողներին:

Էդուարդ Հարությունյանը անտեսելով ՍՍՀՄ հիմնական օրենք՝ կոնստիտուցիայով նախատեսված սովետական քաղաքացիների իրավունքները, իր երկերում եւ հոդվածներում այդպիսիք դիտավորյալ շարադրել է խեղաթյուրված ձեւով, անվանել սովետական քաղաքացիներին իրավազուրկ, «խոսքի իրավունքից» զրկված, իսկ փոքր ազգություններին հալածված, ճնշված ու այլ հերյուրանքներ:

Ամբաստանյալը, ինքնագլուխ հանդես գալով հայ ժողովրդի անունից, իբր նրա կողմից լիազորված անձ, իրեն ներկայացրել է Հելսինկիի եզրափակիչ ակտի դրույթների կատարմանը հետեւող գոյություն չունեցող այսպես կոչված հայկական խմբի ներկայացուցիչ, փորձել է այդ եղանակով արդարացնել իր հանցավոր գործունեությունը եւ ակնհայտ հերյուրանքներ պարունակող հոդվածների պատրաստումը:

Այսպես օրինակ՝

- «ՍՍՀՄ ժողովուրդներին» ուղղված իր հոդվածում ամբաստանյալը փորձում է ամեն կերպ արատավորել, սեւացնել սովետական միության կառավարության կողմից կիրառվող ներքին եւ արտաքին քաղաքականությունը: Նա նույնիսկ «փչոց» է համարում մեր պետության կողմից կնքված զինաթափման պայմանգրերը:

«Երկրագնդի կանանց»-ը ուղղված իր հոդվածում ամբաստանյալ Էդուարդ Հարությունյանը գրել է, որ իբր ռուսաստանում «դեռ գոյություն ունի ճորտատիրություն», որ ՍՍՀՄ-ի քաղաքացիները մինչեւ չտան իրենց արյունը հիվանդները բուժման համար հիվանդանոցում չեն ձեւակերպվում:

«Բելգրադյան կոնֆերանսի» մասնակցող այլ պետությունների ներկայացուցիչներին ուղղված հոդվածում Էդուարդ Հարությունյանը հերյուրանքների է դիմել այն մասին, որ Սովետական կառավարությունը իբր ոտնահարում է մարդկանց իրավունքները: Ընդ որում, ՍՍՀՄ-ի ամբողջ տերիտորիան անվանելով «համակենտրոնացման լագեռ»:

Օտարերկրյա «ԲԻ-բի-սի», «Ամերիկայի ձայն», «Գերմանական ալիք» խմբագրությունների սեկցիաներին հղած իր հոդվածներում ամբաստանյալ Հարությունյանը վարկաբեկիչ արտահայտություններ է թույլ տվել սովետական միության ղեկավարության հասցեին: Նա պնդում է որ ՍՍՀՄ կազմում գտնվող հանրապետությունները իբր իրավահավասար չեն, որ փոքր ազգերը իրենց ազգային պատկանելիության պատճառով իբր հալածվում են եւ ոչնչացվում է նրաց պետականությունը:

Ամերիկայի միացյալ նահանգներին, Հնդկաստանին, Անգլիային եւ այլ պետություններին հասցեագրված հոդվածներեւմ Էդուարդ Հարությունյանը դարձյալ հերյուրանքներ է գրել սովետական սոցիալիստական հանրապետությունների միության, այսինքն, մեր երկրի սոցիալիստական կարգերի մասին հայտարարելով, որ միլիոնավոր մար-

դիկ մեզ մոտ իբր հալածվում են, սովետական քաղաքացիներին անվանում է «նապաստակներ», «մանեկեններ», «խրտվիլակներ» ու այլ վիրավորական արտահայտություններ: Նա վիրավորական հերյուրանքներ է տարածել նաեւ սովետական միության կոմունիստական կուսակցության եւ քաղբյուրոյի անդամների հասցեին:

Ամբաստանյալը, սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ է տարածել նաեւ «Ռումինական ժողովրդին» հասցեագրված հոդվածում:

Էդուարդ Հարությունյանը ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանին ուղղված նամակում խեղաթյուրելով իրականությունը նշում է, որ ՀՍՍՀ քրեական օրենսգիրքի 65 եւ 67 հոդվածներով դատապարտված Ռոբերտ Նազարյանը իբր ոչ մի հանցանք կատարած չի եղել եւ որ նա նույնիսկ ազգային հերոս պետք է ճանաչվեր: Այս այն դեպքում, երբ ինքը՝ Ռոբերտ Նազարյանը, դատապարտվելուց հետո դատավճիռը հսկողական կարգով ընդհանրապես չի գանգատարկել:

Հայկական ՍՍՀ եւ ՍՍՀՄ Գերագույն Սովետների նախագահության նախագահների հասցեներով ուղերձներում, ամբաստանյալը ՍՍՀՄ կոմունիստական կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հիմնական դրույթները ներկայացնում է միանգամայն խեղաթյուրված ձեւով: Թվարկված բոլոր հոդվածների ու երկերի բովանդակությանը ծանոթացրել է վկաներ Սամվել Օսյանին, Կարինե Մկրտչյանին եւ ուրիշներին:

Ամերիկայի միացյալ նահանգների պրեզիդենտ Քարտերին հասցեագրված հոդվածում Հարությունյանը հանդես է գալիս միջազգային լարվածության թուլացման դեմ: Նա գտնում է, որ իբր սովետական միությունը օկուպացրել է Լեհաստանը, Վենգրիան, Չեխոսլովակիան: Այդ նույն հոդվածում Հարությունյանը նշել է, որ ՍՍՀՄ-ում մարդիկ իբր ոչ մի իրավունքներից չեն օգտվում, բացառությամբ աշխատելուց եւ որ աշխատելուց հետո վարձատրվում են կես կիլոգրամ կարկանդակի արժեքով միայն:

Ամբաստնյալը սոցիալիստական սիստեմը ներկա վիճակով համարում է --------- ազգերի ոչնչացման սիստեմ, իսկ մնացած դեմոկրատական սոցիալիստական երկրները որպես բանտեր, համակենտրոնացման ճամբարներ եւ այլ պետությունների տերիտորիաների զավթում: Նա կոչ է անում իմպերիալիստական երկրներին «խփել սովետական կառավարության ձեռքերին, ուժեղացնել սպառազինությունը» եւ այլ պրովոկացիոն մտքեր: «Սովետական ժողովրդին» ուղղված հոդվածում Էդուարդ Հարությունյանը հարելով համաշխարհային բուրժուազիային եւ իրեն ներկայացնելով որպես մարդու իրավունքների «պաշտպան» զրպարտչական ձեւով գրել է, որ ՍՄԿԿ-ի ղեկավարությունը սովետական միության շահերը «ծախել է համաշխարհային իմպերալիզմին եւ չի մտահոգված երկրի պաշտպանությանը եւ սպառազինմամբ»:

Մեկ այլ դեպքում սովետական կառավարության հասցեին թույլ տալով հերյուրանքներ նշել է, որ մեր երկրում սարսափի, տեռորի, մասսայական սպանությունների պատճառով ոչնչացվում են փոքր ազգերի պետականությունը, զավթվում է այլ երկրների տերիտորիաներ: ---------- գրված բոլոր 14 հոդվածներն ու երկերը:

Բացի արդեն իսկ թվարկված երկերից ու հոդվածներից, որոնց հեղինակը ամբաստանյալ էդ. Հարությունյանն է հանդիսանում, նա իր բնակարանում պահել է նաեւ Վայնովիչի, Ագուրսկու, Ալբերտ Կամյուի, Գենրիխ Բելլի, ----------, Սոլժինիցինի հոդվածները ու տարբեր պատրվակներով արտասանած ճառերը, որոնք իրենց բովանդակությամբ հագցած են սովետական պետական ու հասարակական կարգն արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող բովանդակությամբ:

Առաջադրված մեղադրանքում էդուարդ Հարությունյանը իրեն մեղավոր չճանաչեց, սակայն չժխտեց, որ իրեղեն ապացույց ճանաչված նշված 14 հոդվածները ու երկերը, որոնց բովանդակությունը արդեն շարադրված է այս դատավճռում, գրվել են իր կողմից, նա նաեւ ընդունեց, որ Վայնովիչի, Ագուրսկու, Կամյուի, Բելենկովի, Սոլժինիցինի, եւ այլոց տպագիր ելույթները եւ հոդվածները ինքը ձեռք է բերել Մոսկվայի նախկին բնակչուհի, այժմ ՍՍՀՄ տերիտորիայից արտաքսված Տատյանա Խոդորովիչից, պահել է իրեն մոտ եւ ապա հանձնել գործով վկա Կարինե Մկրտչյանին եւ որ ինքը անվանվում է Հելսինկի եզրափակիչ ակտի դրույթների կատարմանը հետեւող եւ նպաստող հայկական խմբի ղեկավար, իրենց տանը գտնվող գրամեքենայով բազմացրել է իր կողմից գրված հոդվածների մի մասը՝ այնուհանդերձ իր արարքներում քրեորեն դատապարտելի գործողություններ չի տեսնում: էդուարդ Հարությունյանը նաեւ ընդունեց, որ ինքը մուտք է գործել Անգլիայի դեսպանություն ու պահանջել հրապարակել իր հոդվածները այնտեղ կամ հաղորդել «Բի-բի-սի» ռադիոկայանով:

Բացի էդուարդ Հարությունյանի այդ հանձնառումից նրան մեղսագրված արարքը նաեւ քրեական օրենսգրքի 206 պրիմ հոդվածով կոլեգան հիմնավորված է համարում գործին կցված եւ իրեղեն ապացույց ճանաչված սովետական պետական կարգերն արատավորող, ակնհայտ հերյուրանքներ պարունակող հոդվածներով (հ.1 գբ. 167-205, 215-224, հ. 2 գբ. 11-52, 58-80, 107-467) ձեռագրային փորձաքննության եզրակացությամբ այն մասին, որ դատավճռում թվարկված բոլոր 14 հոդվածները գրված են էդուարդ Հարությունյանի կողմից (հ.2 գբ. 1-6):

Վկաներ Կարինե Մկրտչյանի եւ Սամվել Օսյանի ցուցմունքներով այն մասին, որ էդուարդ Հարությունյանը իրեն անվանակոչել է մարդու իրավունքների պաշտպանման հելսինկյան համաձայնագրերի խմբի ղեկավար, ներգրավել նրանում մեկ այլ դատավճռով դատապարտված Ռոբերտ Նազարյանին, Օսյանին ու ծանոթանալու համար նրանց տվել Տատյանա Խոդորովիչից ստացած հոդվածները, իր կողմից գրված սովետական կարգերը արատավորող հոդվածները ու այլ բովանդակության երկեր:

Ահիդա Մկրտչյանը նաեւ հաստատեց, որ ամբաստանյալ Հարությունյանի կողմից Մոսկվայից բերված Վայնովիչի, Ագուրսկու, Ալբերտ Կամյու, Բելինկովի, Սոլժինիցինի եւ այլոց սովետական կարգերը արատավորող հոդվածները եւ գրի առնված նույնաբովանդակ ելույթները ինքն է տվել է իրեն, սակայն ինքը այդպիսիք հանձնել է պետական անվտանգության կոմիտեի ներկայացուցիչներին:

Դատահոգեբուժական փորձագետների եզրակացությամբ էդուարդ Հարությունյանը ճանաչվել է մեղսունակ:

Ամբաստանյալ Հարությունյանի նկատմամբ ազատազրկման հետ կապ ունեցող պատիժ սահմանելիս կոլեգիան հաշվի է առնում նրա կատարած արարքի հասարակական վտանգավորությունը եւ այն, որ առանց ազատազրկման վայրերում պատիժը կրելու նա չի կարող կանգնել ուղղման ճանապարհին:

Վերոհիշյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՍՍՀ քր. դատ. օրի 293-294 հոդվածներով, քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալ Էդուարդ Հարությունյանին հանցավոր ճանաչել ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 206 պիրմ հոդվածով ու դատապարտել նրան ազատազրկման երկու (2) տարի 6 ամիս ժամանակով, թողնելով այն կրելու ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1979թ. հուլիսի 13-ից:

Իրեղեն ապացույց «Զիմ» մակնիշի N 8274-71 գրամեքենան պետականացնել, իսկ գրականությունը թողնել գործում:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով գանգատարկման ենթակա չէ:

Նախագահող՝

Ատենակալներ՝

Արսեն Ղազարյան

Արսեն Հայկազի Ղազարյանը ծնվել է 1952 թ., Երեւան քաղաքում: Առնչություններ է ունեցել Ազգային միացյալ կուսակցության անդամ Շահեն եւ Մարզպետ Հարությունյանների հետ: Արսեն Ղազարյանն է Շահեն Հարությունյանի եւ Հայաստանի հելսինկյան խմբի մյուս անդամ Ռոբերտ Նազարյանի կալանավորումն ու դատավարությունը լուսաբանող տեղեկություններն ու այլ փաստաթղթեր Մոսկվա հասցրել: Նրա միջոցով են Հայ երիտասարդների միության ապագա անդամներ Վարդան Հարությունյանը եւ Իշխան Մկրտչյանը ծանոթացել Մարզպետ Հարությունյանի հետ ու անդամագրվել ՀԵՄ-ին: Ինքը՝ Արսեն Ղազարյանը, ընդհատակյա գործունեությամբ չի զբաղվել: Միաժամանակ չի թաքցրել իր հայացքները եւ ազատորեն արտահայտել է իր տեսակետները խորհրդային երկրի ու այդ երկրում տիրող բարքերի մասին: Հաճախել է Կոմայգի (Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնին հարող այգու մասին է խոսքը. այսօր՝ Անգլիական այգի), որտեղ այդ տարիներին հավաքվում էին տարբեր զբաղմունքի տեր մարդիկ ու զրուցում տարաբնույթ, նաեւ՝ քաղաքական թեմաներով: Ղազարյանը հաճախ է հավաքվածների ներկայությամբ ելույթներ ունեցել ու հայտնել խորհրդային իրականության մասին իր տեսակետները: Կալանավորվել է 1980-ի օգոստոսին: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 69 (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը) եւ 206[1] (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) հոդվածներով: Նրա նկատմամբ քրեական գործը հարուցվել եւ դատավճիռը կայացվել է միմիայն Պետանվտանգության կոմիտեի գործակալների դիմումների եւ դատարանում ու նախաքննության ժամանակ նրանց իսկ տված ցուցմունքների հիման վրա: Դատապարտվել է 2 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Նովոսիբիրսկի քրեական կալանավորների համար նախատեսված կալանավայրում: Ազատ է արձակվել 1982-ին եւ մինչեւ գորբաչովյան պերեստրոյկան գտնվել է Պետանվտանգության կոմիտեի մշտական հսկողության տակ: Ապրում եւ աշխատում է Երեւանում:



Արսեն Ղազարյան

Պատմում է Արսեն Ղազարյանը

1980 թվականի մայիսի 24-ին մեր տան մոտ մի Գազ-24 կանգ առավ: Մեքենայից դուրս եկան հինգ հոգի, մտան մեր տուն ու սկսեցին խուզարկել: Խուզարկությունը տեւեց չորս ժամ: Ոչինչ չգտան: Ավարտին՝ ինձ իրենց հետ տարան Պետական անվտանգության կոմիտե եւ սկսեցին հարցաքննել: Դրանից մեկ տարի առաջ՝ 1979 թ. փետրվարին ինձ տարել էին Կոմունաների անվան այգու մոտակայքում գտնվող իրենց գրասենյակը: Այդ ժամանակ ստուգեցին գրպաններս ու վերցրին փաստաթղթերս, ծոցատետրս եւ մի հոդված՝ հրեա Բորուքի նամակն ուղղված Կարլ Մարքսին: Զանգահարեցին անվտանգության կոմիտե, այնտեղից մարդ եկավ. հարցաքննեցին, ինչից հետո ասացին, որ կարող եմ գնալ: Հաջորդ օրը գնացի իրենց նույն գրասենյակ ու հետ ստացա փաստաթղթերս

ու ծոցատետրս: Ծոցատետրիս մեջ բազմաթիվ հասցեներ ու հեռախոսահամարներ կային, այդ թվում՝ մոսկովյան այլախոհներ Սախարովի, Ելենա Սիրոտենկոյի, արտասահմանյան մի քանի թղթակիցների: Այս ամենն արձանագրվել էր դեռ այն ժամանակ: Հիմա՝ արդեն 1980-ի մայիսին ինձ հարցաքննում էին նախորդ տարվա փետրվարին եղածի կապակցությամբ: Հատկապես հետաքրքրվում էին, թե ինչպես ու ինչ հանգամանքներում եմ ծանոթացել Ելենա Սիրոտենկոյի հետ: Երեք օր անընդհատ հրավիրում էին հարցաքննության: Երրորդ օրը դուրս թողնելուց առաջ զգուշացրեցին, որ Կոմայգի չգնամ եւ այնտեղ տեղի ունեցող ամենօրյա զրույցներին չմասնակցեմ: Բնական է, որ շարունակում էի ապրել իմ ամենօրյա կենցաղով ու հաճախել Կոմայգի: Օգոստոսի 16-ին ինձ Սպանդարյանի դատախազություն գնալու ծանուցագիր էր եկել: Բայց ես այնտեղ գնացի ոչ թե իրենց կանչած օրը, այլ մի քանի օր անց՝ օգոստոսի 22-ին: Հենց այդ օրն էլ կալանավորեցին ինձ ու տեղափոխեցին կրկեսի մոտ գտնվող Երեւանի բանտ: Մեղադրանք ներկայացրին 69 եւ 206[1] հոդվածներով, այն է՝ ազգամիջյան թշնամանք սերմանելը եւ սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը: Ողջ մեղադրանքը հիմնված էր Կոմայգի այցելող իրենց գործակալների ցուցմունքների վրա: Ինձ անհայտ հինգ երիտասարդներ դիմում էին գրել Պետական անվտանգության մարմիններին՝ իբր, ես Կոմայգում ունեցած իմ ելույթներում թույլ եմ տվել զրպարտչական հերյուրանքներ սովետների հասցեին եւ վատաբանել ռուսներին: Այդ հինգ երիտասարդներն իրենցից պահանջվող ցուցմունքները տվեցին ե՛ւ առերես հարցաքննությունների, ե՛ւ դատաքննության ժամանակ: Նրանցից մի քանիսն աչքերիս նայել չէին կարողանում, ամաչում էին, բայց շարունակում էին իրենցը պնդել: Երեւի այլ ելք չունեին: Ոմանք էլ ընդհակառակը՝ աչքի էին ընկնում իրենց պատրաստակամությամբ:

Դատական նիստն աչքի էր ընկնում զավեշտով: Նախ ներս մտավ դատավորը՝ ատենակալների հետ միասին, քարտուղարը հայտարարեց՝ ոտքի, դատարանն է գալիս: Ես, բնականաբար, մնացի նստած: Նստածս տեղից շուռ եկա ու նայեցի բացարձակ, 100 տոկոսով դատարկ դահլիճին: Ոչ ոք չկար: Անգամ հարազատներիս չէին տեղեկացրել, որ ինձ դատում են: Թե ով պետք է ոտքի կանգներ դատարանի գալու պահին՝ մնաց անհայտ: Այնուհետեւ մեկին ներկայացրին որպես իմ պաշտպանի, որից ես հրաժարվեցի, սակայն, նա շարունակեց մնալ դահլիճում: Ճիշտ է, ոչ մի բանի չէր մասնակցում, բայց արձանագրվեց, որ դատապաշտպան կա: Ես հրաժարվեցի դատաքննությանը մասնակցելուց: Նստում էի դահլիճում, բայց հարցուպատասխաններին չէի մասնակցում: Դատաքննություն կոչվածը տեւեց երկու օր: Դատապարտեցին ինձ երկու տարի ազատազրկման եւ էտապով, որը մեկ ամիս տեւեց, տարան Նովոսիբիրսկ: Գաղութը քրեական հանցագործների համար նախատեսված կալանավայր էր: Այնտեղ ես միակն էի քաղաքական հոդվածով: Իմ ով լինելն իմանալով՝ ե՛ւ հանցագործները, ե՛ւ կալանավայրի աշխատակիցներն ինձ վերաբերվում էին ընդգծված հարգանքով: Բացի գաղութի պետից ու նրա քաղգծով տեղակալից, մնացած բոլորը հետս «դուք»-ով էին խոսում: Երբ ինձ մնացել էր նստել մի երեք ամիս, ինձ մոտ եկավ Հայաստանի պետանվտանգության կոմիտեի մի աշխատակից: Երկար զրույց ունեցավ ապագայիս, հայացքներիս, անելիքներիս հետ կապված ու գնաց: Ազատ արձակելուց առաջ ինձ կրկին էտապով բերեցին Երեւան ու տեղավորեցին Սովետաշենի մեկուսարանում: Փաստորեն, ինձ ձերբակալել են Երեւանում ու ազատ են արձակել Երեւանում: Երբ դուրս եկա մեկուսարանից, բակում ինձ դիմավորեց նույն՝ ինձ մոտ կալանավայր եկած չեկիստը: Ավտոմեքենայով էր: Առաջարկեց տուն տանել ինձ: Ես հրաժարվեցի՝ ասելով, որ կա-

ղող է ընդամենը քաղաք հասցնել, իսկ տուն կգնամ ինքս: Ինձ հասցրեց կայարան: Կայարանից՝ կալանավորի հագուստը հագիս, առաջին հերթին մտա Կոմայգի, հետո միայն տուն գնացի: Դրանից հետո, մինչեւ սովետների կործանումը, այդ չեկիստն ամեն շաբաթ հանդիպում էր ինձ: Նա, փաստորեն, իմ կուրատորն էր: Օրինական հսկողություն իմ նկատմամբ այդպես էլ չսահմանեցին, բայց ամեն շաբաթ պարտավոր էի հանդիպել նրան: Կոլեկտիվներում, որտեղ աշխատում էի, աշխատակիցներին հաճախ կանչում էին ՊԱԿ, հարցուփորձ անում ինձանից: Շատերը վախեցած էին: Դիմումներ էին գրում՝ պահանջելով, որ ինձ հեռացնեն իրենց կոլեկտիվից: Վիճակս հատկապես ծանրացավ Անդրոպովի ժամանակ՝ 1983 թվականին: Միայն գորբաչովյան պերեստրոյկայի հայտարարումից հետո դարձա «տանելի» անձնավորություն: Աշխատում էի «Գարուն»-ում: Մեր կուսակցական կոմիտեի քարտուղարի դուռն այդ շրջանում ինձ համար միշտ բաց էր: Եթե առաջ հենց այդ աշխատասենյակում էր կազմակերպվում ինձ հալածելու գործը, ապա հիմա ես այնտեղ արդեն ցանկալի զրուցակից էի: Պարտկոմն էլ Ջեմմա Հակոբյանն էր, որն Անկախ Հայաստանի նախագահների աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների եւ կոչումների վարչության անփոփոխ պետն է:

Արսեն Ղազարյանի գործով կայացված դատավճիռը

Դատավճիռն ամբողջական է, ստացել ենք Ղազարյանի անձնական արխիվից:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1980 թվի հոկտեմբերի 29-ին

նախագահությամբ՝	**Ա. Քեշիշյանի**
ատենակալներ՝	**1. Մխիթարյան**
	2. Հ. Հովհաննիսյան
Քարտուղարությամբ՝	**Ս. Բալաբեկյան**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Ս. Մարգարյան**
Դատապաշտպան՝	**Ե. Եղիազարյան**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի Արսեն Հայկազի Ղազարյանի ՀՍՍՀ քր. օր 69 եւ 206[1] հոդվածներով:

Արսեն Հայկազի Ղազարյանը ծնվել է 1952թ. Երեւան քաղաքում, ՍՍՀՄ քաղաքացի, ազգությամբ հայ, ամուրի, խնամքին ոչ ոք, միջնակարգ կրթությամբ, անկուսակցական, չդատված, աշխատել է ՀՍՍՀ կարի եւ մանր արդյունաբերության մինիստրության ՇՄՇ-ում որպես որմնադիր, բնակվել է Երեւան Շահումյանի շրջանի Ջիվանի փողոցի նո. 28 տանը: Կալանքի տակ է 1980թ. օգոստոսի 22-ից:

Դատաքննությամբ ստուգված տվյալներով՝ վկաներ Գ. Հովհաննիսյանի, Գ. Շահվերդյանի, Գ. Ադամյանի, Յու. Ջանգոզյանի, Մ. Ղանդիլցյանի ցուցմունքներով եւ գործում եղած

գրավոր մյուս տվյալներով, դատական կոլեգիան ապացուցված համարեց հետեւյալը:

Ամբաստանյալ Ա. Ղազարյանը 1980թ. հունիս եւ հուլիս ամիսներին սիստեմատիկաբար Երեւանի 26 կոմիսարների անվան զբոսայգում 25-35, երբեմն էլ 50 քաղաքացիների ներկայությամբ սովետական ժողովուրդների միջեւ թշնամություն առաջացնելու նպատակով ագիտացիա եւ պրոպագանդա է տարել, ասելով, որ ռուս ազգը մյուս ազգերի նկատմամբ ճիշտ քաղաքականություն չի վարում, որ ռուս ազգը լի է շովինիզմով, որ աշխարհին պետք է ղեկավարի հրեա ազգը: Այդ ամենից բացի ամբաստանյալ Ղազարյանը նույն վայրում սիստեմատիկորեն Սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ է տարածել, ասելով ինքը դիտել է «Իտալացին Ամերիկայում» կինոնկարը, գովաբանել է ամերիկյան ապրելակերպը, վատաբանել է սովետական ապրելակերպը: Միաժամանակ նշել է, որ ռուսները գաղութացման քաղաքականություն են վարում, արհամարում են ՍՍՀՄ-ի մեջ մտնող մյուս ազգերի ներկայացուցիչներին, որ միութենական մյուս հանրապետությունները պետք է ունենան իրենց գաղտնի զինանոցները, զորքը եւ զենք արտադրող գործարանները, որ հարկ եղած դեպքում պաշտպանվեն ռուսներից եւ մյուս ազգերից:

Ամբաստանյալը հավաքված քաղաքացիների ներկայությամբ ասել է, որ ՍՍՀՄ ժողովուրդների միջեւ բարեկամական եւ եղբայրական հարաբերություններ գոյություն չունեն: Սովետական ժողովուրդների ղեկավարության հասցեին թույլ է տվել արատավորող ածականներով լի արտահայտություններ:

Ամբաստանյալ Ղազարյանը ձեռք է բերել «նամակ Կարլ Մարքսին ոմն հրեա Բարուքի անունից, որ իբր այն տպագրված է 1928թ. հունիսի 1-ին Փարիզում: Նշված «նամակում» նշված է «մարդկային նոր հասարակության կազմավորման մեջ Իսրաելի որդիները կտարածվեն երկրագնդով մեկ եւ ամենուր կդառնան ղեկավար տարր… այդ «նամակը վերջանում է հետեւյալ բառերով «Այսպիսով Թալմուդի խոստումը, որն ավետում է՝ երբ Մեսիայի ժամանակը գա, հրեաներիս ձեռքին կլինի աշխարհի բոլոր ժողովուրդների ունեցվածքը»:

Ամբաստանյալը նշված «նամակը» ձեռքին սրան-նրան ցույց տալով, համոզմունք է հայտնել, որ աշխարհը պետք է տիրեն հրեաները (գթ. 100):

Ամբաստանյալ Ա. Ղազարյանը նախաքննական իր ցուցմունքներում իրեն մեղավոր չի ճանաչել, պատճառաբանելով, որ ինքը ազգային թշնամություն առաջ բերելու պրոպագանդա կամ ագիտացիա չի տարել, որ Սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող հերյուրանքներ չի տարածել, որ վկաները իրեն զրպարտում են, թե ինչու ինքը ոչինչ ասել չի կարող, նրանց չի ճանաչում:

Դատական նիստում ամբաստանյալ Ա. Ղազարյանը հրաժարվեց ցուցմունք տալուց:

Ամբաստանյալ Ա. Ղազարյանին վերագրվող արարքը հիմնավորված է հետեւյալ ապացույցներով:

Վկաներ Գ. Ադամյանը, Գ. Շահվերդյանը եւ Գ. Հովհաննիսյանը իրենց ձեռքով դիմումներ են գրել ՀՍՍՀ պետական անվտանգության կոմիտեին, ցուցմունքներ են տվել եւ ամբաստանյալ Ա. Ղազարյանին առերես պնդել են, որ ամբաստանյալ Ղազարյանը Երեւանի 26-Կոմիսարների անվան զբոսայգում 1980թ. հուլիսի 20-ի եւ 24-ին հավաքված քաղաքացիների ներկայությամբ ազգային թշնամություն առաջացնելու նպատակով պրոպագանդա եւ ագիտացիա է կատարել ասելով ռուս ազգը հայ ազգի նկատմամբ ճիշտ քաղաքականություն չի վարում, վարում է շովինիստական, գաղութացման քաղաքականություն, արհամարելով միության մեջ մտնող մյուս ազգերի ներկայացուցիչներին եւ որ միութենական մյուս հանրապետությունները պետք է ունենան

Ռուսաստանից գաղտնի իրենց զինանոցները, զենքերը, զենք արտադրող գործարանները, որ հարկ եղած դեպքում պաշտպանվեն մյուս ազգերից, որ օտար ազգերը պետք է հեռացվեն Հայաստանից: Ղազարյանը զրպարտչական արտահայտություններ է ցույց տվել Սովետական ապրելակերպի նկատմամբ, գովերգել է ամերիկյան ապրելակերպը (գբ. 1-14, …. 15-23, 50-52, 82-84, 24-30, 52-57, 73-77):

Վկա Մ. Ղանդալջյանի ցուցմունքներով հիմնավորված է, որ ինքը 1980թ. հուլիսի 20-ին ժամը 15-14-ի սահմաններում եղել է 26 կոմիսարների զբոսայգում տեսել է, թե ինչպես ամբաստանյալը ելույթ է ունենում 50-60 մարդու ներկայությամբ եւ քաղաքական տեսակետից անառողջ մտքեր էր արտահայտում՝ վիրավորական խոսքեր էր ասում ռուս ազգի նկատմամաբ եւ ածականներով զրպարտչական արտահայտություններ անում ղեկավարների հասցեին (գբ. 37-38, 45-67, 103-109):

Ամբաստանյալ Ղազարյանի պատճառաբանությունն այն մասին, որ վկաներ Գ. Հով - հաննիսյանը, Գ. Շահվերդյանը, Գ. Ադամյանը, Յու. Ջանգոզյանը եւ Մ. Ղանդիլջյանը իրեն զրպարտում են անհիմն է, քանի որ նշված վկաները մինչ դեպքի օրը ամբաստանյալին չեն ճանաչել եւ նրան զրպարտելու համար որեւէ պատճառ չի եղել: Ամբաստանյալին վկաների հետ առերես հարցաքննելիս ամբաստանյալը հայտնել է, որ ինքը վկաներին չի ճանաչում:

Ամբաստանյալ Ղազարյանի պատճառաբանությունը այն մասին, որ գործով անցնող վկաները իրեն զրպարտում են, անհիմն է եւ այն նպատակ է հետապնդում պատասխանատվությունից խուսս տալ:

Դատական կոլեգիան վերլուծության ենթարկելով գործի ամբողջ տվյալները գտնում է, որ ամբաստանյալ Ա. Ղազարյանին վերագրվող արարքը հիմնավորված է եւ նրա արարքը ՀՍՍՀ քր. օրի 69 եւ 206[1] հոդվածներով ճիշտ է որակված:

Ամբաստանյալ Ա. Ղազարյանի նկատմամբ պատիժ սահմանելիս դատական կոլեգիան հաշվի է առնում ինչպես կատարված արարքի վտանգավորությունը, այնպես էլ ամբաստանյալի ինքնությունը, որ նա նախկինում արատավորված չի եղել, աշխատանքում բնութագրվում է դրական առումով:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օր 293-294 հոդվածներով ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալ Արսեն Հայկազի Ղազարյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օր 69 եւ 206[1] հոդվածներով եւ դատապարտել քր. օր 69 հոդվածով ազատազրկման երկու տարի ժամանակով քր. օր 206[1] հոդվածով երկու տարի ժամանակով ազատազրկման, քր. օր 37 հոդվածի համակցությամբ թողնել կրելու ազատազրկում երկու տարի ժամանակով, սահմանել, որ պատիժը կրի ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, կալանքի սկիզբը հաշվել 1980թ. օգոստոսի 22-ից

Սույն դատավճիռը վճռաբեկության կարգով բողոքարկման եւ գանգատարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. Քեշիշյան**
ԺՈՂԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություն**
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ է
ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ա. Քեշիշյան**

Ալեքսանդր Մանուչարյան, Աշոտ Ափիկյան, Սմբատ Մելքոնյան

Ալեքսանդր Արամի Մանուչարյանը ծնվել է 1929 թ., Երեւան քաղաքում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Այնուհետեւ պաշտպանել է գիտական թեզ եւ ստացել գիտությունների թեկնածուի աստիճան: Զուգահեռ դասավանդել է երեւանյան տարբեր բուհերում: Գիտական մի շարք հոդվածների ու մենագրությունների հեղինակ է: Նրա հայրը ստալինյան բռնությունների զոհ է դարձել, ինչն էլ էապես ազդել է Մանուչարյանի հետագա քայլերի ու աշխարհընկալման վրա: 1970-ականների կեսերից նա սկսում է հայ ժողովրդի վիճակի, քաղաքականության եւ խորհրդային իրականության վերաբերյալ իր մտորումները գրի առնել՝ «Ազգապատում» վերնագրով: Այնուհետեւ ռուսերեն գրում է «Իմպերիալիզմ» հոդվածը: Ե՛վ «Ազգապատումը», ե՛ւ «Իմպերիալիզմը», ե՛ւ «Ազգապատում»-ի բաղկացուցիչ մասերից մեկը՝ «Ազգային իրավունք»-ը, որպես առանձին գրքույկներ, ինքնահրատ եղանակով հրատարակվում եւ տարածվում են ժամանակի այլախոհական շրջանակներում: «Իմպերալիզմը» 1979 թ. տարածվել է նաեւ Լեհաստանում, որտեղ հայ մշակույթին նվիրված գիտաժողովին մասնակցելու նպատակով հրավիրված էր նաեւ Ալեքսանդր Մանուչարյանը: Նրա գործերի հրատարակմամբ զբաղվում է ինչպես ինքը, այնպես էլ մանկավարժական ինստիտուտում գործող ուսանողական խմբակը: Ինքը՝ Մանուչարյանը, անմիջական կապ է ունեցել հայ այլախոհների եւ արդեն կալանավայրից ազատ արձակված նախկին քաղբանտարկյալների հետ, բայց այս հանգամանքը, չնայած թափած հսկայական ջանքերին, նախաքննությունն այդպես էլ, շնորհիվ Մանուչարյանի լռության, բացահայտել չկարողացավ: Նրան մեղադրանք ներկայացվեց 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) ու 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Նախաքննության սկզբնական փուլում Մանուչարյանը հայտարարում էր, որ ինքնահրատների հեղինակն ինքը չէ եւ ցուցմունքներ չէր տալիս: Իր այդ ստեղծագործությունները նա ստորագրել էր «Վինար» կեղծանունով, ինչը ոչ մի կերպ Պետանվտանգության կոմիտեի մասնագետները վերծանել չէին կարողանում: Միայն նախաքննության ավարտին է Մանուչարյանը կամավոր տալիս նրանց «Վինար»-ի վերծանման բանալին՝ իր մասնագիտությունների սկզբնատառերը՝ վիմագրություն, նկարչություն, արվեստ: Երբ նախաքննության ընթացքում Ալեքսանդր Մանուչարյանի հիվանդ տիկնոջ առողջությունը, նաեւ՝ իր կալանավորման հետեւանքով, այնքան է վատանում, որ նրան արդեն տեղափոխում են հոգեբուժարան, եւ երկու մանկահասակ երեխաները մնում են առանց ծնողների խնամքի, Մանուչարյանը ճարահատյալ որոշում է հայտարարել, որ զղջում է եւ իրեն մեղավոր է ճանաչում, որպեսզի հոդվածով նախատեսված մաքսիմում պատժաչափը չստանա եւ կարողանա շուտ վերադառնալ երեխաների մոտ: Այդ շրջանում Մանուչարյանի տված բոլոր ցուցմունքները վերաբերում են անձամբ իրեն: Նախաքննության եւ դատավարության ժամանակ նա չի տվել քրգործով բացահայտված անձանց շրջանակից դուրս որեւէ անուն, չնայած առնչվել է այնպիսի մարդկանց հետ, որոնց ՊԱԿ-ն ուրախությամբ կձերբակալեր: Այդպես էլ քննությանն անհայտ է մնում Շողիկ անունով անձնավորությունը, «Հանուն Հայրենիքի» խմբի անդամների եւ այդ շրջանում գործող այլ այլախոհների, այդ թվում նաեւ իրավա-

պաշտպանների, հետ եղած նրա կապը: Մանուչարյանը դատապարտվում է 4 տարի ազատազրկման եւ երկու տարի աքսորի: Ազատազրկումը կրել է Պերմի քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայրում, իսկ աքսորը՝ Կարակալ-պակիայում: Պատիժը կրելուց եւ 1986-ին Հայաստան վերադառնալուց հետո նրան չեն թույլատրում վերադառնալ դասախոսական աշխատանքի: Ստիպված է լինում բավարարվել պատահական աշխատանքներով: Միայն 1988-ին են հրավիրում աշխատանքի Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1990-ին ընտրվում է Գերագույն խորհրդի պատգամավոր: Զուգահեռ շարունակում է դասախոսական աշխատանքը: Վախճանվել է Երեւանում, 2001 թ. դեկտեմբերի 19-ին: Նրա մենագրություններից են 1976 թ. հրատարակված «IV-XI դարերի սկզբնաղբյուրները հայկական ճարտարապետության մասին» եւ 1999 թ. հրատարակված «Համաշխարհային կերպարվեստի պատմություն» աշխատության առաջին հատորը՝ վերնագրված «Նախնադարյան մշակույթ»:

Աշոտ Հարությունի Ափիկյանը ծնվել է 1958 թ., Երեւան քաղաքում: Երեւանի մանկավարժական ինստիտուտում ուսանելու տարիներին, ուսանողական ընկերների հետ միասին 1978-ին կազմակերպել է ուսանողական խմբակ, որն զբաղվել է թռուցիկների պատրաստմամբ ու տարածմամբ: Նույն ժամանակահատվածում, Ափիկյանի գլխավորությամբ գործող խումբը նախաձեռնել է մանկավարժական ինստիտուտի դասախոս Ալեքսանդր Մանուչարյանի «Ազգապատում», «Ազգապատում»-ի մաս հանդիսացող «Ազգային իրավունք» եւ «Իմպերալիզմ» ստեղծագործությունների ինքնահրատ եղանակով տպագրման ու տարածման աշխատանքները: 1979-ին Ափիկյանը կապ է հաստատել «Հայ ազգային միություն» ընդհատակյա կազմակերպության ղեկավար Սմբատ Մելքոնյանի հետ: Մինչեւ 1980 թ. հարուցված քրեական գործը, Ափիկյանը Թումանյանի շրջանի Ճոճկան գյուղի դպրոցում ուսուցիչ է աշխատել: Քրեական գործի հարուցումից հետո նա չի կալանավորվել: Նախաքննական մարմինը բավարարվել է քաղաքից չբացակայելու ստորագրությամբ: Մեղադրվել է 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա), 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը) եւ 86 հոդվածի 2-րդ մասով (պետական կամ հանրային գույքի հափշտակումը գողության միջոցով): Դատապարտվել է երկու տարի աքսորի, որն անցկացրել է Վորկուտայում: Աքսորի ավարտից հետո վերադարձել է Հայաստան եւ աշխատել որպես բանվոր: 1990-ին մասնակցել է Գորիսի ինքնապաշտպանությանը, 1991-ին՝ Լաչինի համար մղվող մարտական գործողություններին, եղել է Զաբուխի առաջին պարետը: 1991-95 թթ. եղել է Երեւանի քաղխորհրդի պատգամավոր: 1996 թ. աշխատել է Երեւանի քաղաքապետարանում: 1999-ին նշանակվել է քաղաքապետի խորհրդական եւ կրթության վարչության պետ: 2001 թվականից չի աշխատում: Բնակվում է Երեւանում:

Սմբատ Բատիկի Մելքոնյանը ծնվել է 1956 թ., Աշտարակ քաղաքում: Սովորել է Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում: Ուսանողական տարիներին՝ 1978 թվականին թռուցիկներ է տարածել ինստիտուտի շենքում: Այս կապակցությամբ տարվել է Պետանվտանգության կոմիտե ու նախազգուշացվել: Նույն ժամանակահատվածում ստեղծել է «Հայ ազգային միություն» (ՀԱՄ) գաղտնի կազմակերպությունը: Կապ է հաստատել Հայ երիտասարդների միության (ՀԵՄ) , իսկ ավելի ուշ՝ Աշոտ Ափիկյանի գլխավորությամբ մանկավարժական ինստիտուտում գործող ուսանողական խմբակի հետ: Հարուցված քրեական գործի շրջանակներում Մելքոնյանը չի կալանավորվել: Մե-

ղաղրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով եւ 67 հոդվածով: Դատապարտվել է երկու տարի աքսորի, որն անցկացրել է Տյումենի մարզում: Ազատ արձակվելուց հետո Աշտարակի շրջանի Ձորափ գյուղում ուսուցիչ է աշխատել: Մասնակցել է Ղարաբաղյան պատերազմին: 1991-93 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում, եղել է զորամասի հրամանատարի տեղակալ: Մարտական գործողությունների ժամանակ վիրավորվել է: 2006-ին մայորի կոչումով պաշտոնաթող է եղել: Վախճանվել է 2013-ին:



Ալեքսանդր Մանուչարյան



Ալ. Մանուչարյան. ինքնանկար

Աշոտ Ափիկյան

Սմբատ Մելքոնյան

Պատմում է Ալեքսանդր Մանուչարյանի որդին՝ Հակոբը

1980 թ. մայիսի 13-ին՝ բավական ուշ պապան դեռ գործի էր: Տանը անհանգստանում էինք: Որպես կանոն, ինքն այդքան չէր ուշանում: Երեկոյան 10-ի կողմերը եկավ, բայց մենակ չէր: Ես ու եղբայրս՝ Արամը, արդեն պառկել էինք: Նրա հետ մի ամբողջ խումբ էր: Եկել էին խուզարկության: Ես տասը տարեկան էի, Արամը՝ տասնմեկ: Այդ օրն առաջին անգամ ես լսեցի «ընթերակա» բառը: Խուզարկությունը մի քանի ժամ տեւեց: Անգամ նրանց դեմքերն եմ հիշում: Խուզարկության ողջ ընթացքում մտածում էի, թե ինչ են անելու մեր հսկայական գրադարանի հետ, մի՞թե քանդելու են սենյակի բոլոր պատերին կից՝ հատակից մինչեւ առաստաղ ձգվող բոլոր գրադարակները: Չքանդեցին: Խուզարկությունն ավարտելուց հետո գնացին՝ ասելով, որ հայրս առավոտյան տասին ինքը գնա Պետական անվտանգության կոմիտե: Առավոտյան հայրս նստեց տրանսպորտ ու գնաց: Սկսվեց բարեկամների հոսքը: Ինչ-որ բաներ մենք՝ ես ու եղբայրս, հասկանում էինք, ինչ-որ բաներ չէինք հասկանում, բայց, ընդհանուր առմամբ, մի քանի օրից հասկացանք, որ վերջ, պապային տարան:



«Ազգային իրավունք»-ի կազմը



ИМПЕРИАЛИЗМ

Самиздат
Ереван 1979г

«Իմպերիալիզմ»-ի կազմը

Մայրս հիվանդ էր: Պապայի կալանավորումից հետո մորաքույրս թողեց իր անձնական կյանքն ու նվիրվեց մեզ: Նա էր մեզ խնամում, զբաղվում մեր հոգսերով, հայրիկիս հանձնուք տանում: Նախաքննության ընթացքում մեկ անգամ մեզ պապայի հետ տեսակցության հնարավորություն տվեցին: Մեկ անգամ էլ հանդիպեցինք դատական նիստի ընդմիջման ժամին:

Չորս տարի անց պապան դուրս եկավ աքսոր: Մենք արդեն կարող էինք այցելել նրան: Լավ տպավորվել է, որ երկար, երկար ճանապարհ գնացինք: Երեք օդանավ փոխեցինք: Անգամ օդանավերի հոտն է տպավորվել: Միջինասիական յուրահատուկ հոտ էր: Վերջին օդանավակայանը բաղկացած էր ընդամենը մեկ թռիչքուղուց եւ մեկ «բուդկայից»: Գյուղի տները իրարից մեկ կիլոմետր հեռավորության վրա էին գտնվում: Գյուղի միջով մի դանդաղահոս գետ էր հոսում: Դրա ջրերի մեջ ե՛ւ մարդիկ էին լողանում, ե՛ւ իրենց ոչխարներին էին լողացնում, ե՛ւ լվացք էին անում, ե՛ւ տնային այլ հոգսեր էին հոգում, ե՛ւ խմում էին: Գյուղից մի քանի կիլոմետր հեռու ջրհոր կար, որի ջրից երեւի միայն մենք էինք օգտվում: Ջուր չլինելու դեպքում կեչու հյութ էինք խմում, որ վաճառվում էր երեք լիտրանոց ապակյա բանկայով, ու շատ համով էր: Հորաքրոջս անունը Ռեգինա է: Նա հորս հեռագիր էր ուղարկել: Տեղի պետանվտանգության պետը հորս կանչել ու հոխորտացել էր՝ էս ի՞նչ է, Ռեյգանից հեռագիր ես ստանում: Ռեգինան սխալմամբ Ռեյգան էին տպել, իսկ չեկիստը դա չափազանց լուրջ էր ընդունել: Բամբակի բերքահավաքի ժամանակ՝ աշխատելու ունակ ամենափոքրից մինչեւ ամենածերին, մի բաժին ուտելիքի դիմաց, անձամբ շրջանի կուսակցության քարտուղարը դաշտ էր քշում: Հորս հատկացված բնակության պայմանները տվյալ տարածաշրջանի համար տիպիկ էին: Սենյակ կոչվածն ուտիճներով լցված կիսավեր մի շինություն էր՝ երկու-երեք մահճակալով ու սեղանով: Պապաս սիրում էր կրկնել. «Եթե գյուղի փողոցով ինչ-որ տղա է անցնում, ոչ ոք նրա վրա հատուկ ուշադրություն չի դարձնում, եթե ինչ-որ աղջիկ է անցնում, նրա վրա եւս ոչ ոք հատուկ ուշադրություն չի դարձնում, իսկ եթե հանկարծ մի կով է անցնում, տեսնողները բազմանշանակ ընդգծում են՝ անցավ այսինչի կամ այնինչի կովը: Ի՞նչ լավ կով է»: Հատուկ հիշատակման է արժանի այդ գյուղի խանութը, որը, որպես կանոն, փակ էր լինում, բայց բերնեբերան լցված էր տարատեսակ, սովետում չճարվող ապրանքներով: Եթե Սովետական Միության մեծ քաղաքների խանութները դատարկ էին, ապա այստեղ ամեն ինչ կար: Սկսած ֆրանսիական օծանելիքից, տարատեսակ հագուստեղենից մինչեւ տեսամագնիտոֆոն: Իսկ այն տարիներին տեսամագնիտոֆոնը թռչող ափսեին հավասար մի բան էր: Երբ մենք հորս մոտից պետք է հետ գայինք, որոշեցինք գնումներ կատարել, բայց խանութն անընդհատ փակ էր: Երբ վերջապես մեզ հաջողվեց գտնել խանութի վարիչին եւ խնդրել, որ խանութը բացի, նա զարմացավ: Այդ խանութից, որտեղ ուտելիք չէր վաճառվում, փաստորեն ոչ ոք չէր օգտվում: Ի զարմանս խանութպանի՝ գնումներ կատարեցինք ու հորս հրաժեշտ տալով՝ վերադարձանք Երեւան:

Հայրս վերադարձավ 1986 թ. ապրիլի 24-ին: Մենք գիտեինք, որ նա պետք է գար, բայց գալու կոնկրետ օրը չգիտեինք: Այնպես որ՝ գալն անակնկալ էր, այն էլ՝ ապրիլի 24-ին: Ժամանակներն արդեն փոխվել էին: Մարդկանց միջից վախը կամաց-կամաց վերանում էր: Եթե ձերբակալվելիս մեր տուն ոչ բոլոր բարեկամներն ու ընկերներն էին այցելում, իսկ այցելողների մի մասն էլ գալիս էր այնպես, որ գալն աննկատ մնա, ապա ազատվելիս արդեն գալիս էին բոլորը. եւ նրանք, ովքեր ողջ բանտարկության շրջանում այցելել էին, եւ նրանք, ովքեր ընդհանրապես չէին այցելել, եւ նրանք, ովքեր այցելել էին զգուշորեն, գաղտնի՝ գիշերվա ուշ կամ առավոտվա վաղ ժամերին: Չնայած ժամանակ -

ներն այլ էին, Պետանվտանգության կոմիտեն նույնն էր մնացել: Օրումեջ չեկիստները գալիս էին ու ինչ-որ անկապ պայմաններ ու պահանջներ ներկայացնում: Դրանք կարող էին վերաբերվել մեզ՝ ինձ ու եղբորս, իբր՝ դպրոցում այս կամ այն արտահայտություններն ենք արել, կամ կարող էին վերաբերվել հորս՝ այսպես մի ասա, այսպես մի արա եւ այլն: Նման մանր-մունր հորինվածքներով խանգարում էին մեր անդորրը: Այդ շրջանում նրանց անցանկալի ներկայությունը մեր տանը եղել է մշտապես: Այդպես էլ թույլ չտվեցին, որ հայրս իր մասնագիտությամբ որեւէ ինստիտուտում աշխատի: Գրողների միությունում աշխատող Սոֆիկ անունով մի կին, որ իր համակուրսեցին էր եղել, նրան թարգմանչական աշխատանք առաջարկեց: Աշխատանքը մշտական չէր, բայց արդեն ինչ-որ բան էր: Միայն 1988-ին, երբ արդեն պարզ էր, որ սովետներն իրենց հոգեվարքն են ապրում, Վարազդատ Հարությունյանը, որ պոլիտեխնիկի ճարտարապետական ամբիոնի վարիչն էր, փողոցում պատահաբար հորս տեսնելով՝ ասում է. «Ինձ թվում է՝ արդեն կարող ես գալ աշխատանքի»: Եվ հայրս նորից գնաց դասախոսական աշխատանքի:

Ալեքսանդր Մանուշարյանի եւ մյուսների գործով կայացված դատավճիռը

Դատավճռում հիշատակված եւ գործով անցնող առանցքային բոլոր վկաների անունները, որ ԱԱԾ աշխատակիցների կողմից դատավճիռը մեզ տրամադրվելուց առաջ ջնջվել էին, մեծ ջանքերի շնորհիվ կարողացել ենք վերականգնել: Ոչ առանցքային վկաների անունները վերականգնելու համար զուր ջանքեր չենք թափել: Դրանք հրապարակված դատավճռում մնացել են ԱԱԾ կողմից նշված կամայական տառերով: Կետագծերով նշված են դատավճռի մի քանի անընթեռնելի հատվածներ:

ԴԱՏԱՎՃԻՌ

1981թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1981թ. ապրիլի 7-ին քաղ. Երեւան

Նախագահությամբ՝	**Ս. Ասատուրյանի**
Ատենակալներ՝	**1. Մ. Ավչալյանի**
	2. Վ. Հարությունյանի
Քարտուղարությամբ՝	**Ն. ----յանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Գ. Ղամարյանի**

Քննության առնելով դռնբաց դատական նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝

1. Ալեքսանդր Արամի Մանուչարյանի, ծնված 1929թ. Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուսնացած, խնամքին հոգեկան հիվանդ կինը եւ երկու անչափահաս երեխա, անկուսակցական, բարձրագույն կրթությամբ, չդատված, ֆիզիկապես առողջ, աշխատել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում որպես ավագ գիտական շխատող եւ միաժամանակ դասախոսել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, պատմական գիտությունների թեկնածու, գործով կալանքի տակ է 1980թ. մայիսի 10-ից, բնակվել է Երեւանի Կիեւյան փողոցի նո. 3 «բ» շենքի 22 բնակարանում:

2. Աշոտ Հարությունի Ափիկյանի, ծնված 1958թ. Երեւան քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուրի, խնամքին ոչ ոք, ՀամԼԿԵՄ անդամ, թերի բարձրագույն կրթությամբ, նախկինում չդատված, ֆիզիկապես առողջ, աշխատում է ՀՍՍՀ Թումանյանի շրջանի Ճոճկան գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, բնակվում է նույն գյուղում, գործով կալանքի տակ չի գտնվել:

3. Սմբատ Բատիկի Մելքոնյանի ծնված 1956թ. ՀՍՍՀ Աշտարակ քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուսնացած, խնամքին կինը եւ մանկահասակ երեխա, ՀամԼԿԵՄ անդամ, բարձրագույն կրթությամբ, չդատված, ֆիզիկապես առողջ, աշխատում է ՀՍՍՀ Սեւանի շրջանի Դդմաշեն գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, բնակվում է նույն գյուղում, գործով կալանքի տակ չի գտնվել:

Մեղադրվում են՝ Մանուչարյանը եւ Մելքոնյանը ՀՍՍՀ քր. օրի 65 հ. 1 մ. եւ 67 հոդ. Ափիկյանը՝ ՀՍՍՀ քր. օրի 65հ. 1մ., 67հ. եւ 86հ. 2-րդ մասով:

Նախաքննությամբ դատական կոլեգիան գտավ ապացուցված հետեւյալը.

Ամբաստանյալներ Մանուչարյանը, Ափիկյանը եւ Մելքոնյանը ունենալով հակասովետական-ազգայնական տրամադրություններ, սովետական իշխանությունը թուլացնելու նպատակով տարել են հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա եւ դրան ուղղված հակասովետական կազմակերպչական գործունեություն:

Այսպես, Մանուչարյանը աշխատելով Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում որպես դասախոս, 1976թ. աշնանը հանցավոր կապի մեջ է մտել քննությամբ չհայտնաբերված ոմն Շողիկի հետ նրան ներկայացել է որպես ազգայնական գաղտնի խմբի անդամ, եւ նրա խնդրանքով 1977թ. մայիսին անձամբ գրել ու հայերեն լեզվով գրամեքենայով երեք օրինակից բազմացրել է «Ազգա - պատում» վերնագրով հակասովետական ազգայնական բովանդակությամբ հոդված, տարածել է այն տալով երկու օրինակը հիշատակված Շողիկին, իսկ մի օրինակը պահել է իր մոտ:

1978թ. վերջին Մանուչարյանը հանցավոր կապի մեջ է մտել նույն ինստիտուտի ու - սանողներից կազմակերպված հակասովետական գաղտնի խմբի անդամներ գործով ամբաստանյալ Ափիկյանի եւ վկաներ Աշխեն Հակոբյաի ու ՆատալյաՀարությունյանի հետ, հանձնելով նրանց ծանոթանալու եւ բազմացնելու համար հիշատակված «Ազգապատում» հոդվածը:

Ամբաստանյալ Մանուչարյանն ամբաստանյալ Ափիկյանի գաղտնի խմբի անդամ -

ների մեջ տարածելու համար 1977թ. սկզբին գրել է հակասովետական բովանդակությամբ «իմպերիալիզմ» վերնագրով հոդված, որը նույն թվականի գարնանը տվել է այդ խմբի անդամներին՝ ռուսերեն տպատառերով գրամեքենայի վրա բազմացնելու համար:

Ստանալով Ափիկյանից երեք օրինակից բազմացրած «իմպերիալիզմ» հոդվածը, Մանուչարյանը դրա երկու օրինակը հանձնել է վերոհիշյալ Շողիկին, իսկ մի օրինակը, ինչպես եւ Ափիկյանից ստացած «Ազգապատում» հոդվածի վերջնամաս կազմող «Ազգային իրավունք» բաժինը պահել է իր մոտ:

Այդ հոդվածներում թշնամական հարձակումներ է թույլ տրվում ՍՄԿԿ ներքին եւ արտաքին քաղաքականության վերաբերյալ, հակասովետական տեսանկյունով վատաբանվում է սոցիալիզմի էությունը եւ գովաբանվում է կապիտալիստական ապրելակերպը, զրպարտորեն պնդվում է, որ ՍՍՀՄ-ը հանդիսանում է «համակենտրոնացման ճամբար», «շովինիստական սուպեր պետություն որի համար բոլոր ոչ ռուսականի ճնշումը հանդիսանում է պլանավորված ծրագիր»:

Ամբաստանյալ Ափիկյանը լինելով Երեւանի Խ. Աբովյանի անվան ինստիտուտի ուսանող, 1978թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ինստիտուտի ուսանողներից կազմակերպել է հակասովետական ազգայնական գաղտնի խումբ, որ մեջ ընդգրկվել են Աշխեն Հակոբյանը, Նատալյա Հարությունյանը եւ ուրիշները, ընդամենը 7 հոգի:

Ափիկյանը գաղտնի խմբի անդամների հետ միասին նույն ժամանակաշրջանում պատրաստել եւ իրենց կողմից գողացված գրամեքենայի վրա հայերեն ու ռուսերեն լեզուներով մեծ քանակով /մոտ 2500 հատ/ բազմացրել է ,,սովետական ժողովուրդ,, վերնագրով սովետական պետական եւ հասարակական կարգը, ՍՄԿԿ ու Սովետական պետության քաղաքականությունն արատավորող զրպարտչական հերյուրանքներ պարունակող հակասովետական բովանդակությամբ թռուցիկներ:

Ափիկյանը խմբի անդամների հետ միասին նշված թռուցիկները 1978թ. դեկտեմբերի 27-ի երեկոյան տարածել են Երեւան քաղաքում, գցելով դրանք քաղաքացիների բնակարանների փոստարկղերը:

Այնուհետեւ հանցավոր կապի մեջ մտնելով ինստիտուտի դասախոս, գործով ամբաստանյալ Մանուչարյանի հետ, Ափիկյանը 1978թ. վերջերին նրանից ստացել է հակասովետական ազգայնական բովանդակությամբ «Ազգապատում» վերնագրով հոդվածը՝ այն բազմացնելու եւ գաղտնի խմբի անդամներին ծանոթացնելու համար:

Այդ հոդվածի եզրափակիչ մասի՝ «Ազգային իրավունք» վերնագրով բաժնի բազմացնելու անհաջող փորձից հետո, ամբաստանյալ Ափիկյանը խմբի անդամների հետ միասին 1979թ. գարնանը երեք օրինակից բազմացրել է ամբաստանյալ Մանուչարյանից ստացած «իմպերիալիզմ» վերնագրով հակասովետական բովանդակությամբ հոդվածը:

Շարունակելով իր հակասովետական գործունեությունը, ամբաստանյալ Ափիկյանը 1979թ. գարնանը կապ է հաստատել մեկ այլ հակասովետական, այսպես կոչված «Հայ ազգային միություն» («ՀԱՄ») գաղտնի խմբի ղեկավար գործով ամբաստանյալ Մելքոնյանի հետ, որին եւ հանձնել է գաղտնի խմբի տրամադրության տակ եղած երեք գրամեքենաներից երկուսը, ինչպես եւ «Ազգապատում» ու «իմպերիալիզմ» հակասովետական հոդվածները:

Ամբաստանյալ Ափիկյանը ամբաստանյալ Մելքոնյանի հետ միասին բազմացրել է «իմպերիալիզմ» հոդվածը, որի երեք մեքենագիր օրինակը եւ «Ազգապատում» հոդվածի վերջնամաս «Ազգային իրավունք» բաժինը հանձնել է ամբաստանյալ Մանուչարյանին:

Բացի դրանից, ամբաստանյալ Ափիկյանը գաղտնի խմբի անդամների հետ միասին կազմակերպել է երեք գրամեքենաների հափշտակում, որոնց վրա բազմացվել են «Սովետական ժողովուրդ» թռուցիկները եւ «իմպերիալիզմ» հոդվածը:

Այսպես, 1978թ. նոյեմբերին եւ 1979թ. հունվարին Երեւանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտից գողացվել են համապատաս - խանաբար ռուսերեն տպատառերով «Ուկրաինա» մակնիշի նո. 789980 եւ հայերեն տպատառերով «օպտիմա» մակնիշի նո. 329810 գրամեքենաները, իսկ 1978թ սեպտեմբերին Երեւանի Շահումյանի շրջանի նո. 91 միջնակարգ դպրոցից՝ հայերեն տպատառերով «Ուկրաինա» մակնիշի գրամեքենան, ընդ որում Ափիկյանը գործով վկաներ Էդուարդ Հովհաննիսյանի եւ Արամ Պետրոսյանի հետ միասին անմիջական մասնակցել է 1979թ. նոյեմբերի «Ուկրաինա» մակնիշի գրամեքենայի գողացմանը:

Երեւանի Շահումյանի շրջանի նո. 91 միջնակարգ դպրոցից գողացված գրամեքենան դուրս գրված է եղել եւ որեւէ արժեք չի ունեցել, իսկ Խ. Աբովյանի անվան ինստիտուտից գողացված «Ուկրաինա» մակնիշի գրամեքենայի արժեքը կազմում է 200ռ., իսկ «Օպտիմա» գրամեքենայի արժեքը՝ 200 ռուբլի:

Ամբաստանյալ Մելքոնյանը դեռեւս Երեւանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուրում սովորելու ժամանակ՝ 1978թ. նոյեմբերին գործով վկա Ե-ի հետ միասին պատրաստել է սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ եւ «ռուսական օկուպացիայի» տապալման կոչ պարունակող «հայեր» վերնագրով երեք հակասովետական բովանդակությամբ թռուցիկ, որոնք նույն ժամանակ տարածել է նշված ինստիտուտում, կպցնելով դրանք պատերին:

Այդ արարքի համար Մելքոնյանը 1978թ. դեկտեմբերին պաշտոնապես նախազգուշացվել է Հայկական ՍՍՀ ՊԱԿ-ի կողմից:

Սակայն, չանելով համապատասխան եզրակացություն, Մելքոնյանը, շարունակել է իր հակասովետական ազգայնական գործունեությունը եւ 1978թ. կազմակերպել է հակասովետական ազգայնական այսպես կոչված «Հայ ազգային միություն» («ՀԱՄ») գաղտնի խումբը, որի մեջ ներգրավել է գործով վկաներ Սուրեն Հակոբյանին եւ Զ-ին:

1979թ. գարնանը Մելքոնյանը կապ է հաստատել գործով ամբաստանյալ Ափիկյանի հետ, որից ստացել եւ իր համախոհների մեջ տարածել է հակասովետական բովանդակությամբ վերը հիշատակված «Ազգապատում» եւ «իմպերիալիզմ» հոդվածները:

Այդ նույն ժամանակ ամբաստանյալ Մելքոնյանը Ափիկյանից ստացել է երկու գրամեքենա, որոնք գտնվել են նրա խմբի տրամադրության տակ: Այնուհետեւ Ափիկյանը Մելքոնյանի հետ համատեղ կազմակերպել է «իմպերիալիզմ» հոդվածի բազմացումը մեքենագրելու միջոցով:

1979թ. ամռանը ամբաստանյալ Մելքոնյանը հանցավոր կապ է հաստատել այսպես կոչված «Հայ երիտասարդների միություն» («ՀԵՄ») գաղտնի խմբի հետ, նպատակ ունենալով այդ երկու խումբը միավորելու:

Բացի դրանից ամբաստանյալ Մելքոնյանը 1980թ. ապրիլին «ՀԵՄ» գաղտնի խմբի կողմից հավաքած անդամավճարներից ստացել է 35ռ. եւ իր խմբի անդամ Զ-ի միջեցով գնել է սեւ գույնի կտոր՝ դրոշներ պատրաստելու եւ ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը Երեւանի փողոցներում կախելու համար:

Վերոգրյալը հաստատված է ամբաստանյալների խոստովանությամբ, վկաների ցուցմունքներով, իրեղեն ապացույցներով, գործում գտնվող այլ փաստաթղթերով:

Ամբաստանյալներ Մանուչարյանն, Ափիկյանը եւ Մելքոնյանը առաջադրված մե -

ղադրանքում իրենց լիովին մեղավոր են ճանաչել եւ համապատասխան ցուցմունքներ են տվել:

Մանուչարյանը ընդունել է, որ 1976թ. աշնանը Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում ծանոթացել է Շողիկ անունով մի անձնավորության հետ, որն իրեն ներկայացել է որպես ազգայնական գաղտնի խմբի անդամ եւ հանցավոր կապի մեջ մտնելով վերջինիս հետ, նրա խնդրանքով 1977թ. մայիսին հայերեն լեզվով գրել եւ գրամեքենայով երեք օրինակից բազմացրել է «Ազգապատում» վերնագրով հակասովետական եւ հակառուսական բովանդակությամբ հոդված, բաղկացած 33 էջից, որը տարածել է, հանձնելով նրա երկու օրինակը նույն Շողիկին, իսկ մի օրինակը պահել է իր մոտ:

Մանուչարյանը բացատրել է, որ գրամեքենան, որի վրա ինքը տպագրել է «Ազգապատում» հոդվածը հատուկ այդ նպատակի համար բերել է իրենց տուն Շողիկ անունով անձնավորությունը: Հոդվածը մեքենագրելուց հետո նրա ձեռագիր օրինակը ինքը այրել է;

Մանուչարյանը նույնպես ընդունել է, որ 1978թ. վերջին նույն ինստիտուտում հանցավոր կապի մեջ է մտել ինստիտուտի ուսանողներից կազմակերպված գաղտնի խմբի անդամներ գործով ամբաստանյալ Ափիկյանի եւ վկաներ Աշխեն Հակոբյանի ու Նատալյա Հարությունյանի հետ, որոնց հանձնել է ծանոթանալու եւ բազմացնելու համար հիշատակված «ազգապատում» հոդվածը: Հետագայում Ափիկյանից հետ է ստացել այդ հոդվածի վերջնամաս «Ազգային իրավունք» բաժինը, որն իր բովանդակությամբ առավել հակասովետական է:

Ամբաստանյալ Մանուչարյանը ցուցմունք է տվել նաեւ այն մասին, որ գործով ամբաստանյալ Ափիկյանը գաղտնի խմբի անդամների մեջ տարածելու համար իր նախաձեռնությամբ 1979թ. սկզբներին գրել է հակասովետական բովանդակությամբ «իմպերիալիզմ» վերնագրով մեկ այլ հոդված, որը նույն թվականի գարնանը հանձնել է խմբի անդամներ՝ վերը հիշատակված Աշխեն Հակոբյանին եւ Նատալյա Հարությունյանին՝ ռուսերեն տպատառերով գրամեքենայի վրա բազմացնելու համար:

Որոշ ժամանակ անց, ստանալով Ափիկյանից երեք օրինակից բազմացված «իմպերիալիզմ» հոդվածը, բաղկացած 16 էջից, ինքը դրա երկու օրինակը հանձնել է վերոհիշյալ Շողիկին, իսկ մի օրինակը պահել իր մոտ: Այդ հոդվածի ձեռագիրն իր կողմից նույնպես ոչնչացվել է:

«իմպերիալիզմ» հոդվածում, որը խիստ հակասովետական բնույթ ունի, ինքը Լենինի տված իմպերիալիզմի հինգ հիմնական հատկանիշները վերագրել է սոցիալիզմին:

(հ. 1 գթ. 129-130, 160-162, 166-170, 178-180, 196-203, 213-217, հ.3 գթ. 149 եւ հ.6 դատական նիստի արձանագրություն էջ 3,4-15, 28-29):

Ամբաստանյալ Ափիկյանը ընդունել է, որ 1978թ. աշնանը, լինելով Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ուսանող, այդ ինստիտուտում ստեղծել է ազգայնական գաղտնի խումբ, որն իր բնույթով եղել է հակասովետական եւ նպատակ է ունեցել թռուցիկներ տարածելու:

Այդ խմբի մեջ, բացի իրենցից, ընդգրկված են եղել գործով վկաներ՝ Աշխեն Հակոբյանը, Նատալյա Հարությունյանը, Էդուարդ Հովհաննիսյանը, Արամ Պետրոսյանը եւ ուրիշները, ընդամենը 7 հոգի:

Ափիկյանը հաստատել է, որ այդ նույն ժամանակահատվածում ինքը խմբի մյուս անդամների հետ միասին պատրաստել է «Սովետական ժողովուրդ» վերնագրով հակասովետական բովանդակությամբ մոտ 2000-3000 հատ թռուցիկ, հայերեն եւ ռուսերեն

լեզուներով, որպիսիք իրենք տարածել են Երեւան քաղաքում 1978թ. դեկտեմբերի 27-ի երեկոյան, գցելով դրանք քաղաքացիների բնակարանների փոստարկղերը: Ինքն անձամբ այդ երեկոյան Նորքի զանգվածում տարածել է մոտ 200-300 հատ թռուցիկ:

Այդ թռուցիկները մեքենագրելու միջոցով բազմացնելու համար, ինքը գաղտնի խմբի մյուս անդամների հետ միասին կազմակերպել է երեք գրամեքենաների հափշտակում, այդ թվում 1978թ. նոյեմբերին Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստտուտից գողացվել է ռուսերեն տպատառերով «Ուկրաինա» մակնիշի գրամեքենա անձամբ իր եւ խմբի մյուս անդամներ էդուարդ Հովհաննիսյանի ու Արամ Պետրոսյանի կողմից:

Մյուս երկու գրամեքենաները գողացվել են առանց իր անմիջական մասնակցության, այն է՝ 1978թ. դեկտեմբերին՝ Երեւանի Շահումյանի շրջանի նո. 91 միջնակարգ դպրոցից՝ հայերեն տպատառերով «Ուկրաինա» մակնիշի եւ 1979թ. հունվարին վերը նշված ինստիտուտից՝ հայերեն տպատառերով «Օպտիմա» մակնիշի:

Ամբաստանյալ Ափիկյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 1978թ. հանցավոր կապի մեջ է մտել գործով ամբաստանյալ Մանուչարյանի հետ, որից նույն թվականի վերջին ստացել է նրա կողմից ավելի քան 20 թերթի վրա գրված հակասովետական ազգայնական բովանդակությամբ «Ազգապատում» վերնագրով հոդվածը՝ այդպիսին բազմացնելու եւ խմբի անդամներին ծանոթացնելու համար: Ինքը եւ խմբի մյուս անդամները ծանոթացել են այդ հոդվածի հետ, բայց իրենց չի հաջողվել այն մեքենագրել ու բազմացնել:

1979թ. սկզբին Աշխեն Հակոբյանի մոտ տեսել է «իմպերիալիզմ» վերնագրով մեկ այլ հակասովետական հոդված, որը նույնպես գրվել է Մանուչարյանի կողմից եւ տրվել Աշխեն Հակոբյանին ու Նատալյա Հարությունյանին մեքենագրելու միջոցով բազմացնելու համար, որոնք իր մասնակցությամբ այն մեքենագրել են երեք օրինակից:

Ամբաստանյալ Ափիկյանը նույնպես ընդունել է, որ 1979թ. գարնանը կապ է հաստատել մեկ այլ հակասովետական, այսպես կոչված «Հայ ազգային միություն» գաղտնի խմբի ղեկավար, գործով ամբաստանյալ Մելքոնյանի հետ, որին հանձնել է վերը հիշատակված «Ազգապատում» եւ «իմպերիալիզմ» հակասովետական հոդվածները եւ նրա հետ միասին կազմակերպել է «իմպերիալիզմ» հոդվածի բազմացումը:

(հ.1 գթ. 214-216, 251-255 եւ հ.6 դատ. նիստի արձ. էջ 3, 15-23).

Ամբաստանյալ Մելքոնյանը ընդունել է, որ դեռեւս Երեւանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտում սովորելու ժամանակ 1978թ. նոյեմբերին գործով վկա Ե-ի հետ միասին պատրաստել է, իսկ հետո երեք օրինակից մեքենագրել եւ անձամբ ինստիտուտի պատերին կպցնելու միջոցով տարածել է սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ եւ «ռուսական օկուպացիայի» տապալման կոչ պարունակող «Հայեր» վերնագրով հակասովետական թռուցիկները:

Հաստատել է, որ այդ արարքի համար նույն թվականի դեկտեմբերին պաշտոնապես նախազգուշացվել է Հայկական ՍՍՀ ՊԱԿ-ի կողմից:

Մելքոնյանը բացատրել է, որ չնայած դրան, ինքը շարունակել է զբաղվել հակասովետական ազգայնական գործունեությամբ եւ 1978թ. կազմակրպել է հակասովետական ազգայնական, այսպես կոչված «Հայ ազգային միություն» («ՀԱՄ») գաղտնի խումբը, որի մեջ ներգրավել է գործով վկաներ Սուրեն Հակոբյանին եւ Զ-ին:

1979թ գարնանը կապ է հաստատել գործով ամբաստանյալ Ափիկյանի հետ, ընդորում իրենք երկուսով հանդես են եկել որպես առանձին գաղտնի խմբի ղեկավարներ: Այնուհետեւ Ափիկյանից ստացել է եւ գաղտնի խմբի անդամներին ծանոթացրել «Ազգա-

պատում» եւ դրա վերջնամաս «Ազգային իրավունք» եւ «իմպրիալիզմ» վերնագրերով հակասովետական բովանդակությամբ հոդվածները, որոնք գրված են եղել ամբաստանյալ Մանուչարյանի կողմից: Բացի դրանից, ինքն Ափիկյանի հետ միասին կազմակերպել է «իմպերիալիզմ» հոդվածի բազմացումը մեքենագրելու միջոցով:

Ամբաստանյալ Մելքոնյանը ընդունել է, որ 1979թ. ամառը հանցավոր կապ է հաստատել մեկ այլ հակասովետական ազգայնական, այսպես կոչված «Հայ երիտասարդների միություն» («ՀԵՄ») գաղտնի խմբի ներկայացուցիչների հետ, նպատակ ունենալով միավորելու իրենց գաղտնի խմբերը:

Հաստատել է նաեւ, որ 1980թ. ապրիլին «ՀԵՄ» գաղտնի խմբի կողմից հավաքված անդամավճարներից ստացել է 35ռ., որպեսզի գումարը հանձնել է իր խմբի անդամ Ջ-ին, վերջինս գնել է սեւ գույնի կտոր՝ ապրիլի 24-ի օրվա կապակցությամբ Երեւանում սգո դրոշներ կախելու համար, որը սակայն իրենց չի հաջողվել:

Ամբաստանյալ Մելքոնյանը ցուցմունք է տվել, որ «ՀԱՄ» հակասովետական գաղտնի խմբի ծրագրի համաձայն Սովետական Հայաստանը պետք է առանձնանա Ռուսաստանից, պատերազմ հայտարարի Թուրքիային՝ Հայկական հողերը ետ վերցնելու նպատակով: (հ.2 գթ. 10-19, հ.5 գթ. 30-31 հ.6 դատ. նիստի արձ թջ 29-37)

Գործով վկաներ Աշխեն Հակոբյանը եւ Նատալյա Հարությունյանը իրենց ցուցմունքներում հաստատել են, որ 1978թ. աշնանը ամբաստանյալ Մելքոնյանը իրենց հետ միասին որոշել է Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում կազմակերպել գաղտնի խումբ՝ թռուցիկներ տարածելու համար: Այդ խմբի մեջ Ափիկյանը ընդգրկել է գործով վկաներ Էդուարդ Հովհաննիսյանին եւ Արամ Պետրոսյանին, որոնց մասնակցությամբ նա նույն թվականի նոյեմբերին ինստիտուտից գողացել է «Ուկրաինա» մակնիշի ռուսերեն տպատառերով գրամեքենա, որի վրա իրենց կողմից տպագրվել է «Սովետական ժողովուրդ» վերնագրով հակասովետական բովանդակությամբ թռուցիկները:

Այդ թռուցիկները Ափիկյանի եւ խմբի մյուս անդամների կողմից տարածվել են Երեւան քաղաքում 1978թ. դեկտեմբերի 27-ի երեկոյան՝ բնակիչների փոստարկղերը քցելու միջոցով:

Աշխեն Հակոբյանը եւ Նատալյա Հարությունյանը ցուցմունք են տվել, որ իրենց խմբի անդամների որոշմամբ եւ մասնակցությամբ 1978թ դեկտեմբերին եւ 1979թ. հունվարին համապատասխանաբար Երեւանի Շահումյանի շրջանի նո. 91 միջնակարգ դպրոցից եւ վերը հիշատակված ինստիտուտից գողացել են եւս երկու գրամեքենա հայերեն տպատառերով:

Այդ վկաները հաստատել են, որ ամբաստանյալ Ափիկյանը հանցավոր կապի մեջ է գտնվել գործով ամբաստանյալ Մանուչարյանի հետ, որի կողմից գրված հակասովետական բովանդակությամբ «Ազգապատում» հոդվածը բերել եւ ծանոթացրել է գաղտ - նի խմբի անդամներին:

Ափիկյանը մասնակցել է Մանուչարյանի կողմից գրված «իմպերիալիզմ» վերնագրով մեկ այլ հակասովետական հոդվածի ծանոթացմանը եւ ապա մեքենագրելու միջոցով բազմացմանը խմբի անդամների կողմից (հ.2 գթ. 56-78, հ.6 դատ. նիստի արձ. էջ 56-64):

Գործով վկա Կարինե Կիրակոսյանը ցուցմունք է տվել, որ 1979թ. ամբաստանյալ Մելքոնյանը իրեն տվել է ծանոթանալու «Ազգապատում» եւ «իմպերիալիզմ» հոդված - ները: Հիշում է, որ «իմպերիալիզմ» հոդվածը հակասովետական բովանդակություն ուներ, նրա մեջ իմպերիալիզմի հինգ հատկանիշները վերագրված էր սոցիալիզմին: Մելքոնյանի խնդրանքով ինքը նրան ծանոթացրել է իր ընկերուհի Հասմիկ Կարապետ-

յանի հետ, որը եւ մի քանի օրինակից մեքենագրել է այդ հոդվածը:

(հ. 3 գք. 79-83 եւ հ.6 դատ նիստի արձ. էջ 43-45)

Գործով որպես վկա հարցաքննված Հասմիկ Կարապետյանը հաստատել է, որ իր ընկերուհի Կարինե Կիրակոսյանի խնդրանքով 1979թ. մայիսին ամբաստանյալ Մելքոնյանի համար 5-6 օրինակից մեքենագրել է հակասովետական բովանդակությամբ «իմպերիալիզմ» վերնագրով հոդվածը:

(հ.2 գք. 85-90, հ.6 դատ. նիստի արձ. էջ 41-43)

Գործով վկա Սուրեն Հակոբյանը ցուցմունք է տվել, որ ինքն ամբաստանյալ Մելքոնյանի կողմից 1978թ. ընդգրկված է եղել «Հայ ազգային միություն» («ՀԱՄ») գաղտնի խմբի մեջ, որի մասին տեղյակ է եղել նաեւ Ձ-ն:

Մելքոնյանը իրեն տվել է ծանոթանալու համար «իմպերիալիզմ» վերնագրով հակասովետական հոդված, որը նա վերցրել էր Աշոտ անունով մի ուսանողից:

(հ.2 գք. 109-116, հ.6 դատ. նիստի արձ. էջ 50-59).

Ձ-ն ցուցմունք է տվել, որ ամբաստանյալներ Մելքոնյանը եւ Ափիկյանը իր ներկայությամբ խոսակցություններ են ունեցել անկախ Հայաստան ստեղծելու մասին: Այնուհետեւ ինքը նրանց հետ մասնակցել է ինչ որ գրամեքենաներ Ժ-ի բնակարան տեղափոխելուն: Ափիկյանը եւ Մելքոնյանը պետք է մեքենագրեին հակասովետական նյութեր:

(հ.2 գք. 231-237, հ. --- դատ. նիստի արձ. էջ 67-70)

Գործով վկաներ Էդուարդ Հովհաննիսյանը Արամ Պետրոսյանը եւ Ի-ն ցուցմունքներ են տվել, որ իրենք նույնպես գտնվել են գաղտնի խմբի մեջ, ընդորում Հովհաննիսյանը եւ Պետրոսյանը հայտնել են, որ իրենց խմբի մեջ ընդգրկել է ամբաստանյալ Ափիկյանը:

Այդ վկաները հաստատել են, որ խմբի անդամների կողմից 1978թ. նոյեմբերից մինչեւ 1979թ հունվարը ընկած ժամանակամիջոցում գողացվել է երեք գրամեքենա, այդ թվում 1978թ. նոյեմբերին Երեւանի Խ. Աբովյանի անվան ինստիտուտից գրամեքենայի գողացմանը անմիջական մասնակցություն է ունեցել ամբաստանյալ Ափիկյանը:

Խմբի անդամները, այդ թվում եւ Ափիկյանը, մասնակցել են հակասովետական բովանդակությամբ հայերեն եւ ռուսերեն լեզուներով թռուցիկների բազմացմանը, որոնց քանակը եղել է 2000-3000 հատ եւ դրանք 1978թ. դեկտեմբերի 27-ի երեկոյան Երեւան քաղաքում տարածմանը:

Արամ Պետրոսյանը եւ Ի-ն միաժամանակ հայտնել են, որ խմբի անդամները ծանոթացել են «Ազգային իրավունք» եւ «իմպերիալիզմ» հոդվածների հետ, որպիսին այդ նպատակով ամբաստանյալ Մանուչարյանը տվել էր համապատասխանաբար Ափիկյանին եւ գործով վկաներ Հակոբյանին ու Հարությունյանին, ընդորում, «իմպերիալիզմ» հոդվածը եւ մեքենագրելու միջոցով բազմացնելու համար:

(հ.2 գք. 91-107, 190-200, 207-209, հ.6 դատ. նիստի արձ. էջ 63--, 70-77)

Գործով վկա Ժ-ն ցուցմունք է տվել, որ ամբաստանյալ Մելքոնյանը 1979թ. մայիսին իրենց տուն է բերել երկու գրամեքենա եւ կազմակերպել է «իմպերիալիզմ» հոդվածի մեքենագրումը: Բացի դրանից, Մելքոնյանն իրեն ասել է գաղտնի խումբ ստեղծելու մասին:

(հ. 3 գք. 96-101, հ.6 դատ. նիստի արձ. էջ 105-109).

ՀՍՍՀ Սեւանի շրջանի Դդմաշեն գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ գործով վկա Լ-ն ցուցմունք է տվել, որ 1980թ. գարնանը դպրոցի ուսուցիչ, գործով ամբաստանյալ Մելքոնյանը իրեն տվել է ծանոթանալու համար «իմպերիալիզմ» հոդվածը, որը իր մեջ պարունակում է սովետական պետական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ:

Նույն դպրոցի նախկին ուսմասվար Խ-ն եւ դիրեկտոր Ծ-ն հաստատել են, որ 1980թ.

մայիսին իրենք Մելքոնյանի բնակարանում հայտնաբերել են վերը հիշատակված «իմպերիալիզմ» հոդվածը եւ այն պատռել:

(հ.3 գք. 130-140, 186-191, 215-216, հ. 6 դատ. նիստի արձ. էջ. 97-99, 101-103).

Գործով վկա Ե-ն ցուցմունք է տվել, որ ամբաստանյալ Մելքոնյանը 1978թ. իրեն ասել է Թուրքիայից հայկական հողերը ետ վերցնելու համար գաղտնի խումբ ստեղծելու նպատակի մասին եւ որ Հայաստանը պետք է Ռուսաստանից անջատվի եւ դառնա ինքնուրյուն հանրապետություն:

Այնուհետեւ նույն թվականի աշնանը Մելքոնյանի համառորեն խնդրանքով նրա համար գրել է ակնհայտորեն հակասովետական թռուցիկի տեքստ, որը մի քանի օրինակից մեքենագրելու համար նույնպես Մելքոնյանի խնդրանքով նրան է տվել իր ծանոթ Կ-ի հեռախոսի համարը եւ վերջինս այդ թռուցիկը, «հայեր» վերնագրով, մեքենագրել է երեք օրինակից:

Այդ թռուցիկները Մելքոնյանը նույն ժամանակ կպցրել է Երեւանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտի պատերին:

(հ.3 գք. 192-108, հ.3 դատ. նիստի արձ. էջ 77-80).

«Հայեր» վերնագրով հակասովետական բովանդակությամբ թռուցիկները մեքենագրելը երեք օրինակից եւ դրանք ամբաստանյալ Մելքոնյանին հանձնելը հաստատել է իր ցուցմունքներում Կ-ն: (հ.3 գք. 207-212, հ.- դատ. նիստի արձ. էջ 90-92)

Ամբաստանյալ Մելքոնյանի կողմից 1978թ. հակասովետական թռուցիկներ տարածելը հաստատել է նաեւ գործով վկա Հ-ն (հ.3 գք.199-201, հ- դատ. նիստի արձ. էջ 100-110):

Գործով հարցաքննված վկաներ Ձ-ն Ղ-ն Ճ-ն Մ-ն եւ Յ-ն ցուցմունք են տվել, որ ամբաստանյալ Ափիկյանի եւ նրա գաղտնի խմբի անդամների կողմից իրենք ենթարկվել են «Սովետական ժողովուրդ» վերնագրով թռուցիկի տարածմանը:

Ձ-ն միաժամանակ հայտնել է, որ խմբի անդամները ծանոթացել են ամբաստանյալ Մանուչարյանի կողմից գրված «Ազգային իրավունք» եւ «Իմպերիալիզմ» հակասովետական հոդվածների հետ, Մ-ն բացատրել է, որ թռուցիկները եղել են 2000-2500 հատ եւ որ գաղտնի խմբի տրամադրության տակ եղել են հակասովետական նյութեր, Յ-ն հաստատել է, որ ամբաստանյալ Ափիկյանի եւ մյուսների կողմից գողացված գրամեքենաները մի քանի օր պահվել են իրենց բնակարանում:

(հ.2 գք.----------)

Վկաներ Ն-ն, Ռ-ն եւ Շ-ն իրենց ցուցմունքներում հայտնել են, որ գաղտնի խմբի անդամներ Ափիկյանից եւ մյուսներից իմացել են նրանց կողմից թռուցիկներ տարածելու մասին:

(հ. 3 գք. ----------)

Երեւան քաղաքի տարբեր շրջանի բնակիչներ, գործով վկաներ՝ Չ-ն Պ-ն Ձ-ն Ռ-ն Ս-ն Վ-ն Տ-ն Ր-ն Ց-ն ՈՒ-ն եւ Փ-ն ցուցմունք են տվել, որ 1978թ դեկտեմբերի վերջին իրենց բնակարանների փոստարկղերում հայտնաբերել են «Սովետական ժողովուրդ» վերնագրով հակասովետական բովանդակությամբ թռուցիկներ, ընդ որում դրանց մի մասը եղել է հայերեն, իսկ մյուս մասը՝ ռուսերեն լեզվով:

Այդ վկաները միաժամանակ բացատրել են, որ հայտնաբերված թռուցիկները իրենց կողմից հանձնվել են Հայկական ՍՍՀ ՊԱԿ-ին:

(հ.2 գք. 203, հ.3 գք. 45, 55, 69, 68, 83, 85, 87-88, 91, 116, 220-223, հ. 6 դատ. նիստի արձ. էջ 45-46, 64-67, 82-89, 98-100)

Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ---- Ք-ն եւ Կ-ն, ինչպես եւ Երեւանի Շահումյանի շրջանի 91 միջնակարգ դպրոցի նախկին դիրեկտոր Օ-ն եւ Ֆ-ն իրենց ցուցմունքներում հաստատել են համապատասխանաբար

այդ ինստիտուտից 1978թ. նոյեմբերին եւ 1979թ. հունվարիան «Ուկրաինա» մակնիշի ռուսերեն տպատառերով եւ «օպտիմա» մակնիշի հայերեն տպատառերով գրամեքենաների գողանալը:

Օ-ն ե Ֆ-ն միաժամանակ հայտնել են, որ դպրոցից գողացված գրամեքենան եղել է դուրս գրված եւ որեւէ արժեք չի ունեցել:

(հ. 3 գբ. 102-103, 118-121, 121-125, 186-187, հ.6 դատ. նիստի արձ. էջ 81-86, 88-90, 93-94)

Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գրությամբ հաստատված է, որ գողացված «Ուկրաինա» եւ «Օպտիմա» մակնիշի գրամեքենաների արժողությունը կազմում է 450 ռուբլի (հ. 6 գբ. 134):

Ամբաստանյալների արարքները հաստատված են նաեւ՝ ամբաստանյալ Մանուչարյանի աշխատասենյակից 1980թ. մայիսի 14-ին «Ազգային իրավունք» եւ «իմպերիալիզմ» հոդվածներն առգրավվելու մասին ու դրանց հակասովետական բովանդակությունը հաստատող զննման արձանագրություններով (հ.4 գբ. 138-168, հ.6 գբ. 10-16, 17-23), ամբաստանյալ Ափիկյանի եւ նրա գաղտնի խմբի կողմից պատրաստած, տարածած եւ հետագայում սույն քրեական գործին կցված հակասովետական բովանդակությամբ թռուցիկներով ու դրանց զննման արձանագրությամբ, Ափիկյանի եւ մյուսների կողմից քննությանը ներկայացրած մինչ այդ իրենց կողմից գողացված գրամեքենաներով (հ.5 գբ. 3, 6-8, 57-67), ամբաստանյալ Մելքոնյանի կողմից պատրաստած եւ Երեւանի Վ. Բրյուսովի անվան ինստիտուտի պատերին կպցրած ու հետագայում սույն գործին կցված «Հայեր» վերնագրով հակասովետական բովանդակութ- յամբ 2 թռուցիկով, այդ կապակցությամբ նրա 1978թ. դեկտեմբերի 12-ի բացատրությամբ, որով նա միաժամանակ պարտավորվել է այլեւս թույլ չտալ նման արարք, 1980թ. օգոստոսի 18-ի նամակով այն մասին, որ Մելքոնյանը այդ արարքի համար Հայկական ՍՍՀ ՊԱԿ-ի կողմից նույն ժամանակ պրոֆիլակտիկայի է ենթարկվել, ինչպես եւ գործին կցված Մել - քոնյանի գաղտնի խմբի ծրագրով (հ.5 գբ. 49-54, 55-56 հ. 1 գբ. 65):

Ամբաստանյալների արարքները հաստատված են նաեւ գործով իրեղեն ապացույցներով (հ. 5 գբ. 16-18).

Այսպիսով ամբաստանյալներ Մանուչարյանի եւ Մելքոնյանի արարքները Հայկական ՍՍՀ քր. օրի 65հ. 1-ին մասով եւ 67 հ., իսկ Ափիկյանի արարքները ՀՍՍՀ քր. օրի 65հ. 1-ին մասով, 67 հ. եւ 86հ. 2-րդ մասով ճիշտ են որակված եւ գործի նյութերով ապացուցված են:

Պատիժ սահմանելիս դատական կոլեգիան նկատի է ունենում ինչպես յուրաքանչյուր ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանն, այնպես էլ նրանց առաջին դատվածությունը, դրականապես բնութագրվելը, կատարվածի համար անկեղծորեն զղջալն ու հանցա - գործությունը բացելուն աջակցելը, նրանցից Մանուչարյանի խնամքին հոգեկան հիվանդ կնոջ եւ 2 անչափահաս երեխայի, իսկ Մելքոնյանի խնամքին կնոջ եւ մանկահասակ երեխայի գտնվելը:

Շարադրված պատճառաբանությամբ դատական կոլեգիան հնարավոր է համարում ամբաստանյալ Ափիկյանի նկատմամբ Հայկական ՍՍՀ քր. օրի 86հ. 2-րդ մասով պատիժ նշանակել ՀՍՍՀ քր. օրի 40 հոդվածի կիրառմամբ:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով Հայկական ՍՍՀ քր. դատ. օրի 293-294 հոդվածներով, դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալ Ալեքսանդր Արամի Մանուչարյանին ճանաչել հանցավոր Հայկական ՍՍՀ քր. օրի 65հոդ. 1-ին մասով եւ 67հոդ. եւ ՀՍՍՀ քր. օրի 65հ. 1-ին մասի սանկցիայով դատապարտել ազատազրկման խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում չորս (4) տարի ժամանակով եւ աքսորով երկու (2) տարի ժամանակով:

Ամբաստանյալ Աշոտ Հարությունի Ափիկյանին ճանաչել հանցավոր Հայկական ՍՍՀ քր. օրի 65հ. 1-ին մասով, 67 հոդ. եւ 86հոդ. 2-րդ մասով եւ դատապարտել՝ ՀՍՍՀ քր. օրի 65հ. 1մ. սանկցիայով աքսորի երկու (2) տարի ՀՍՍՀ քր. օրի 86հ. 2-մասով քր. օրի 40 հոդ. կիրառմամբ աքսորի երկու (2) տարի ժամանակով, ՀՍՍՀ քր. օրի 37հ. համակցությամբ վերջին հաշվով թողնել կրելու աքսոր երկու (2) տարի ժամանակով:

Ամբաստանյալ Սմբատ Բատիկի Մելքոնյանին ճանաչել հանցավոր Հայկական ՍՍՀ քր. օրի 65հ. 1մ. եւ 67հ. եւ ՀՍՍՀ 65հ. 1-ին մասի սանկցիայով դատապարտել աքսորի երկու (2) տարի ժամանակով:

Դատապարտյալ Մանուչարյանի կալանքի սկիզբը հաշվել 1980թ. մայիսի 14-ից, իսկ դատապարտյալներ Ափիկյանի եւ Մելքոնյանի պատիժների սկիզբը հաշվել նրանց աքսորի վայր ուղարկելու օրվանից:

Գործով իրեղեն ապացույցներ ճանաչված գրամեքենաները վերադարձնել ըստ պատկանելույն, մնացած իրերը եւ թռուցիկները ոչնչացնել:

Դատավճիռը վճռաբեկության կարգով գանգատարկման եւ բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ս. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ**
ԺՈՂԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություններ**
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ս. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ**

10/4-81թ.
Հ. Ս.

Հայ երիտասարդների միություն

Հայ երիտասարդների միությունը երիտասարդական կազմակերպություն էր, որը, որպես ԱՄԿ երիտասարդական կառույց, ստեղծել էր Ազգային միացյալ կուսակցության հնագույն անդամներից մեկը՝ Մարզպետ Հարությունյանը: Անգամ կազմակերպության բոլոր անդամները չէ, որ գիտեին, որ հանդիսանում են ավելի մեծ եւ ավելի հին կազմակերպության՝ ԱՄԿ կառույց: 1978-ին ծրագրված, իսկ 1979-ին արդեն գործող այս կազմակերպությունը բավական արագ համալրվում է նոր անդամներով: 1979թ. վերջերից ՀԵՄ-ի կազմում արդեն գործում էին հնգյակներից բաղկացած մասնաճյուղեր: «Հնգյակ» ասվածը պայմանական էր, որովհետեւ «հնգյակ»-ի մեջ կարող էր լինել չորս, վեց, անգամ յոթ մարդ: Գլխավոր միտքն այն էր, որ յուրաքանչյուր ոք սահմանափակ թվով մարդկանց ճանաչի, որպեսզի կալանավորվելուց հետո, եթե չդիմանա ու ստիպված լինի անուններ տալ, ապա տա միայն իրեն հայտնի անուններ: Սա ընդհատակյա գործող բոլոր կազմակերպությունների համար կարեւորագույն սկզբունք է: Կազմակերպությունն իր առօրյա գործունեությանը զուգահեռ անընդհատ նոր անդամների հավաքագրման ու նոր կառույցների ստեղծմամբ էր զբաղված: Ստեղծվել էին առանձին կառույցներ Երեւանում, Արթիկի շրջանում, աշխատանքներ էին տարվում ուսումնական հաստատություններում: Կազմակերպությունն ուներ իր ծրագիրը, կանոնադրությունը, երդումը եւ անվտանգության կանոնները: ՀԵՄ-ի ծրագիրը նախատեսում էր անկախ Հայաստանի ստեղծում, միաժամանակ այն խիստ հակախորհրդային եւ հակակոմունիստական էր: Ըստ ՀԵՄ-ում գործող պայմանի այս փաստաթղթերը համարվում էին հույժ գաղտնի եւ ոչ մի կերպ չպետք է հայտնվեին Պետանվտանգության մարմինների ձեռքում: Ի պատիվ ՀԵՄ-ի անդամների պետք է ասել, որ դրանք ձեռք գցելուն ուղղված ՊԱԿ-ի բոլոր ջանքերը զուր անցան:

Կազմակերպությունը բաղկացած էր երիտասարդներից: **Մարզպետ Հարությունյանը** 40 տարեկան էր: Նա ՀԵՄ-ի անդամ չէր, բայց հանդիսանում էր նրա կազմակերպիչն ու ուղղորդողը: Կազմակերպության մյուս անդամներից երկու ամենատարիքովները՝ **Հովհաննես Աղաբաբյանը** եւ **Իշխան Մկրտչյանը,** ձերբակալման պահին 23 տարեկան էին, **Սամվել Եղիազարյանը՝** 22, իսկ ամենակրտսեր **Վարդան Հարությունյանը՝** 19: Երիտասարդ լինելու հանգամանքը որոշիչ դեր էր խաղում: Կազմակերպությունում առկա էր երիտասարդներին յուրահատուկ ծայրահեղականություն:

ՀԵՄ-ի անդամներ ձերբակալությունները սկսվել են 1980թ. մայիսի երկրորդ կեսից: Ձերբակալվել են հինգ ՀԵՄ-ական: Վերջին ձերբակալությունն իրականացվել է հունիսի 6-ին: Կալանավորված անդամների գլխավոր խնդիրը իրենցով կալանավորվածների թիվը սահմանափակելն է եղել: Չնայած այն հանգամանքին, որ նախաքննության ընթացքում, բացահայտվեց մասնաճյուղերից մեկը, հայտնի դարձան այլ անուններ եւս, բայց նոր կալանավորումներ, ի պատիվ ՀԵՄ-ի կալանավորված անդամների, տեղի չունեցան:



Մարզպետ Հարությունյան
լուս. քր. գործից

Մարզպետ Հարությունյան

Իշխան Մկրտչյան
լուս. քր. գործից



Իշխան Մկրտչյան



Վարդան Հարությունյան
լուս. քր. գործից



Վարդան Հարությունյան

Հովհաննես Աղաբաբյան
լուս. քր. գործից

Հովհաննես Աղաբաբյան



Սամվել Եղիազարյան
լուս. քր. գործից

Սամվել Եղիազարյան

Կալանավայրին կից գերեզմանոցը, որտեղ թաղված է եղել Իշխան Մկրտչյանը

Մարզպետ Հարությունի Հարությունյանը ծնվել է 1940 թ., Երեւան քաղաքում: Նա ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի եղբայրն է: Ընդհատակյա գործունեությամբ սկսել է զբաղվել 1960-ական թվականներից: 1967-ից Ազգային միացյալ կուսակցության անդամ է: 1969-ին, նախաքննության ու դատաքննության ընթացքում, «Հանուն Հայրենիքի» խմբի գործով հարցաքննվել է որպես վկա, այնուհետեւ կալանավորվել է ԱՄԿ գործով: Պետանվտանգության կոմիտեում վճռում են՝ դատապարտելու եւ կալա -

նավայր ուղարկելու փոխարեն, տեղափոխել հոգեբուժարան: Որոշ ժամանակ այնտեղ պահելուց հետո ազատ են արձակում: Եղբորը՝ Շահեն Հարությունյանին աջակցել է Հայկական հելսինկյան խմբի ստեղծման գործում: 1978 թ. հիմնադրել է Ազգային միացյալ կուսակցության երիտասարդական կառույց Հայ երիտասարդների միությունը (ՀԵՄ): 1980 թ. հունիսի 1-ին նրան տանում են Օրջոնիկիձեի (Էրեբունու) ոստիկանություն, որտեղ հայտարարում են, թե, իբր, նա զբաղվում է թմրանյութերի տարածմամբ: Ձերբակալում են, իսկ օգոստոսի 1-ին՝ այդ նույն մտացածին մեղադրանքով ՀԽՍՀ քր. օր.-ի 229 հոդվածի 3-րդ մասով (ապօրինաբար թմրանյութեր պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, գործածելը, փոխադրելը, առաքելը կամ վաճառելը) դատապարտում են ազատազրկման 2 տարի ժամանակով: Ծավալած ընդհատակյա գործունեության հետ կապված կալանավորման այլ հիմքեր դեռեւս չունենալու պատճառով, ՊԱԿ-ը Մարզպետ Հարությունյանին մեկուսացնելու այս ձեւն է ընտրում: Դատարանում իր մեղադրական ճառում դատախազը հայտարարում է, որ Մարզպետ Հարությունյանը, հասկանալով դրա վտանգավոր լինելն, ինքը թմրանյութ չի օգտագործում, այլ տարածում է երիտասարդների շրջանում՝ նրանց թունավորելու նպատակով, ինչին Մարզպետը հակադարձում է այսպես. «Քաղաքացի դատախազ, եթե ես երիտասարդներին թունավորել ցանկանայի, ոչ թե թմրանյութ, այլ մարքսիզմ կտարածեի»: Շինծու գործով կալանավորելուց ժամանակ անց՝ նրան նոր մեղադրանք են ներկայացնում ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Այս հոդվածներով Մարզպետ Հարությունյանը դատապարտվեց նախատեսվող մաքսիմում պատժաչափի՝ 7 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր: Էտապի ժամանակ Իշխան Մկրտչյանը, որը Մարզպետ Հարությունյանի եւ Ալեքսանդր Մանուչարյանի հետ գտնվում էր Ռոստովի բանտի նույն խցում, փախուստի դիմեց: Այդ փախուստի պատճառով Մանուչարյանին ու Հարությունյանին կալանավայրի աշխատակիցները խոշտանգում են: Հատկապես դաժան են վարվում Մարզպետ Հարությունյանի նկատմամբ: Ջարդում են նրա կողոսկրերն ու վնասում կրծքավանդակն այնպես, որ Հարությունյանն առանց կողմնակի օգնության շարժվել կամ խորը շնչել չի կարողանում: Մեկը պետք է սեղմած պահեր կրծքավանդակը, որպեսզի նա կարողանար խորը շնչել կամ հազալ: Ջարդված կողոսկրերից մեկը վնասել էր թոքը: Խոշտանգման այս հետեւանքները պարզվեցին 7 տարի անց՝ ԱՄՆ-ում, երբ ազատ արձակվելուց հետո՝ 1987 թվականին արդեն լուրջ հիվանդ Մարզպետ Հարությունյանը բժշկական հետազոտության ենթարկվեց: Էտապի ընթացքում Հարությունյանն այնքան ծանր վիճակում է եղել, որ քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերը հրաժարվել են ընդունել նրան, որպեսզի նրա շատ հավանական մահվան դեպքում պատասխանատվություն չկրեն: Էտապի ընթացքում արձանագրված մահվան դեպքերը չափազանց հեշտ էր լինում պարտակել, որովհետեւ հստակ պատասխանատուներ գտնելն անհնար էր: Միշտ էլ նման դեպքերը կարելի էր վերագրել քրեականների հետ տեղի ունեցած ընդհարումներին ու խնդիրը փակել: Այդ պատճառով էլ՝ երկու ամսից ավելի Մարզպետ Հարությունյանը, Վարդան Հարությունյանը, Ալեքսանդր Մանուչարյանը եւ Սամվել Եղիազարյանը հիմնականում անցկացրել են կալանավորների համար նախատեսված գնացքների վագոններում, անընդհատ բանտից բանտ ուղեւորությունների մեջ: Այդ օրերին նրանց համար հաջողված են համարվել այն գիշերները, որոնք անցկացրել են Պերմի մարզում գտնվող այս կամ այն բանտերում, երբ հնարավոր է ե-

ղել պառկել՝ թեկուզ առանց ներքնակի երկաթյա կամ փայտյա մահճակալներին: Անգամ այդ բանտերը մեկ գիշերից ավելի թույլ չէին տալիս, որ Հարությունյանն իրենց մոտ մնա: Լուսադեմին կրկին տեղափոխում էին կալանավորներ տեղափոխող վագոն: Այդ ողջ ընթացքում ոչ մի բժիշկ Մարզպետ Հարությունյանին չի այցելել ու չի զննել: Ժամանակ անց Մարզպետ Հարությունյանը կարողացավ հաղթահարել այդ ծանր վիճակը, եւ երբ արդեն պարզ էր, որ ոտքի կկանգնի, նրան ու իր ընկերներին տեղափոխեցին կալանավայր: Նա իր պատիժը կրել է Պերմի մարզում գտնվող քաղաքական բանտարկյալների համար նախատեսված 37-րդ կալանավայրում, որտեղ անցկացրած յոթ տարիների ընթացքում, չնայած օրեցօր վատթարացող առողջությանը, կեսքայլ անգամ չընկրկեց: Մասնակցում էր կազմակերպված բոլոր ակցիաներին: Ազատ արձակվեց 1987 թվականին: Գորբաչովյան պերեստրոյկայի շնորհիվ՝ դատավճռով նախատեսված աքսորը չկրեց: Նույն թվականին էլ քայքայված առողջությամբ մեկնեց ԱՄՆ, որտեղ հնարավոր էր ստանալ բարձրակարգ բժշկական օգնություն: Վախճանվեց ԱՄՆ-ում 2000թ. փետրվարի 2-ին, 60 տարեկանում:

Իշխան (Կնյազ) Մկրտիչի Մկրտչյանը ծնվել է 1957թ., Արթիկի շրջանի Սարատակ գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո՝ ուսումը շարունակելու նպատակով տեղափոխվել է Երեւան: Ծանոթացել է Մարզպետ Հարությունյանի հետ, որը մինչ այդ՝ 1978-ին արդեն ստեղծել էր ԱՄԿ երիտասարդական կառույց «Հայ երիտասարդների միությունը»: Իշխան Մկրտչյանը համաձայնում է դառնալ այդ միության անդամ, իսկ կարճ ժամանակ անց դառնում է նաեւ դրա ղեկավարը: 1978-80 թթ. ծավալում է ակտիվ կազմակերպական գործունեություն: Կարողանում է ստեղծել «Հայ երիտասարդների միության» մասնաճյուղեր, որոնցից մեկը գործում էր Իշխան Մկրտչյանի հայրենի գյուղում: Հետագայում եղած մասնաճյուղերից այս մեկը բացահայտվեց: 1980 թ. գարնանը Երեւանի մանկավարժական ինստիտուտում՝ Աշոտ Ափիկյանի գլխավորությամբ գործող ուսանողական խմբակ է բացահայտվում, որն առնչություններ ուներ 1978-80 թթ. Երեւանում գործող Հայ ազգային միության (ՀԱՄ) հետ, իսկ ՀԱՄ-ն իր հերթին առնչություններ ուներ Հայ երիտասարդների միության հետ: Այս երեք կառույցների հետ կապ ուներ մի անձնավորություն, որը նախկինում՝ դեռ 1978-ին, թռուցիկներ տարածելու պատճառով, հայտնվել էր ՊԱԿ-ի տեսադաշտում, տարվել էր ՊԱԿ ու ազատ արձակվել, բայց դրա մասին ոչ ոք տեղյակ չէր եղել: Հետագայում, անընդհատ գտնվելով ՊԱԿ-ի ուշադրության կենտրոնում, նա հանձն էր առել տհաճ դերակատարում. 1979-ին տեղեկություններ էր տրամադրել ՊԱԿ-ին թռուցիկներ տարածող ուսանողական խմբակի մասին: Ինքն էլ, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, խմբի ղեկավարին պատմել էր, որ ՊԱԿ-ում, իր մեղքով, արդեն գիտեն խմբակի մասին: Խմբակի անդամներն անմի - ջապես՝ հենց 1979-ին չեն ձերբակալվում, որովհետեւ ՊԱԿ-ին այդ շրջանում ավելի շատ հետաքրքրել են նրանց հետ առնչություններ ունեցող այլ գործող անձինք: Մի երկար շրջան նրանց հետեւելով՝ ՊԱԿ-ն ուշադրությունը սեւեռում է Ալեքսանդր Մանու - չարյանի եւ Հայ երիտասարդների միության վրա:

1980 թ. մայիսի 21-ի առավոտյան ժամը 7-ի սահմաններում, երբ տան անդամները դեռ քնած են լինում, ՊԱԿ-ի աշխատակիցներն այցելում են Իշխան Մկրտչյանի եղբոր՝ Երեւանի Ախպարաշեն կոչվող թաղամասում գտնվող տունը, որտեղ բնակվում էր նաեւ Իշխանը: Իշխան Մկրտչյանի համար այդ այցը չափազանց անսպասելի է լինում: Նախորդ օրը՝ ուշ երեկոյան տուն բերած որոշ փաստաթղթեր թաքստոց տանելու փոխարեն, նա դրած է լինում բարձի տակ, առավոտյան թաքցնելու մտադրությամբ: Բնական է, որ բարձի տակից դրանք անմիջապես հայտնաբերվում են: Մինչ խուզարկություն ի-

բականացնողները կշարունակեն իրենց գործը, Իշխանը, օգտվելով նրանց զբաղվածությունից ու անուշադրությունից, վերցնում է հայտնաբերված եւ սեղանին դրված մի քանի կարեւորագույն փաստաթղթեր, այդ թվում եւ՝ հասցեներ ու հեռախոսահամարներ պարունակող տետրն ու տնից դուրս թռչում: Մինչ չեկիստները կհասնեին նրան, կարողանում է հասցեներ պարունակող տետրը ոչնչացնել այնպես, որ անգամ հետքը գտնել չեն կարողանում: Մնացած նյութերից ՊԱԿ-ի աշխատակիցները կարողանում են «փրկել» ոչ շատ կարեւոր մի քանի թուղթ եւ Վարդան Հարությունյանի ձեռքով գրված մի հիմնավորապես պատառոտված տետր՝ «Ընդհատակյա կազմակերպությունների անվտանգության կանոնները» վերնագրով: Չեկիստների ջանքերով սոսնձված ու կցմցված վիճակում այդ տետրը մինչ օրս հանգրվանում է քրեական գործում: Իր այս քայլի համար Իշխան Մկրտչյանին ՀԽՍՀ քր. օր.-ի 207[1] հոդվածի 2-րդ մասով (միլիցիայի աշխատողին կամ ժողովրդական դրուժիննիկին դիմադրություն ցույց տալը) մեղադրանք են առաջադրում եւ 1980 թ. հուլիսին դատապարտում 4 տարի ազատազրկման:

Նախաքննության ու դատավարության ողջ ընթացքում Մկրտչյանը ցուցաբերում է այնպիսի վարքագիծ, որ չեկիստների մեջ իր նկատմամբ խոր ատելություն է առաջացնում: Դատարանում ցուցմունքներ տալու ժամանակ Իշխանը հրաժարվում է դեմքով կանգնել դեպի դատարանը, հայտարարում է, որ դատարանին ու դատավորին չի հարգում, իսկ դահլիճում իր եւ իր ընկերների ծնողներն են, որոնց հարգում է, ինչից հետո դեմքով շրջվում է դեպի դահլիճը, իսկ դատարանին թիկունքով է կանգնում: Նա հայտարարում է, որ միայն այդ դիրքով է պատրաստ ցուցմունքներ տալ: Երկար բանակցություններից հետո Իշխանը վերջապես համաձայնում է ցուցմունքներ տալ դեպի դատավորը ուսով կանգնած վիճակում: Պետանվտանգության կոմիտեի այն գործակալի ցուցմունքների ժամանակ, որի պատճառով բացահայտվել էր Հայ երիտասարդների միությունը, ՀԵՄ-ի չորս անդամները՝ Իշխան Մկրտչյանի առաջարկով ու գլխավորությամբ՝ սուլոցներով ուղեկցվող այնպիսի ծաղրական աղմուկ են բարձրացնում, որ այդ «վկան» ոչ միայն չի կարողանում ցուցմունքներ տալ, այլեւ դժվարությամբ է կարողանում ոտքի վրա մնալ, եւ նրան դատարանի դահլիճից դուրս են բերում առաջին շարքում նստած չեկիստներից մեկի օգնությամբ: ՀԵՄ-ի անդամները հրաժարվում են վերջին խոսքի իրավունքից: Մարզպետ Հարությունյանը հայտարարում է, որ խորհրդային դատարաններին կարող են հավատալ միայն հոգեկան հիվանդները եւ միամիտները. «Մենք ոչ հոգեկան հիվանդ ենք, ոչ էլ՝ միամիտ եւ այս դատարանին ասելիք չունենք»: Միայն Իշխան Մկրտչյանը չի հրաժարվում կարճ վերջին խոսքից, որն ավարտում է այսպես. «Եթե իմ լեզուն պետք է մեռնի վաղը, ես պատրաստ եմ մեռնել այսօր»: Իշխան Մկրտչյանը ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով դատապարտվում է նախատեսված առավելագույն պատժաչափի՝ 7 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր: Դատից հետո դեպի Պերմի մարզում գտնվող քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայրեր էտապի ժամանակ՝ Ռոստովի բանտից Իշխան Մկրտչյանը, չնայած իր հետ միեւնույն խցում գտնվող Մարզպետ Հարությունյանի եւ Ալեքսանդր Մանուչարյանի հորդորներին՝ նման բան չանել, փախուստի է դիմում: Սա Ռոստովի բանտի երկարամյա պատմության մեջ աներեւակայելի ու նախադեպը չունեցող իրադարձություն էր: Ժամանակ անց նա կրկին կալանավորվում եւ տեղափոխվում է Ռոստովի բանտ, որտեղ դաժանագույն կտտանքների է ենթարկվում: 24-ամյա առողջ երիտասարդը կարճ ժամանակում հիվանդ ու հյուծված հաշմանդամի է վերածվում. նրա ականջներից ժամանակ առ ժամանակ արնախառն թարախ է հոսում, թոքերը նորմալ չեն գործում, ոսկորներն ու հոդերը ցավում են, կողոսկրերը ջարդված էին: Փախուստի

համար նա դատապարտվեց եւս երեք տարի ազատազրկման, եւ նրա պատժաչափը դարձավ 10 տարի ազատազրկում ու 5 տարի աքսոր: Անգամ առողջական լուրջ խնդիրները նրան չէին խանգարում կալանավայրում ամենաակտիվ կալանավորներից մեկի համարումն ունենալ: Ընկերների բոլոր հորդորները՝ խնայել իրեն, մերժում էր: Մասնակցում էր ե՛ւ հացադուլներին, ե՛ւ գործադուլներին: Հաճախ էր հայտնվում կալանավայրի պատժախցում: 1985 թ. ապրիլի 24-ին՝ Եղեռնի զոհերի հիշատակի օրը, պատժիչ մեկուսարանի մենախցում՝ 28 տարեկանում նա կնքեց իր մահկանացուն: Կալանավայրի ղեկավարությունը հայտարարեց՝ իբր, ինքնասպան է եղել: Բոլոր փորձերը՝ պարզել նրա մահվան իրական հանգամանքները, այդպես էլ մնացին անարդյունք: 1989-ին՝ ընկերների ջանքերով հնարավոր եղավ նրա աճյունը Հայաստան տեղափոխել: Այժմ նա հանգչում է Արթիկի շրջանի իր հարազատ Սարատակ գյուղը շրջապատող բլուրներից մեկի վրա:

Վարդան Լյուդվիկի Հարությունյանը ծնվել է 1961 թ., Վայքի շրջանում: Դպրոցն ավարտելուց հետո՝ ուսումը շարունակելու նպատակով տեղափոխվել է Երեւան: Ծանոթացել է Մարզպետ Հարությունյանի հետ եւ անդամագրվել նրա ստեղծած «Հայ երիտասարդների միությանը»: Մինչ այդ անդամակցել է «Հայ ազգային միությանը»: Գրել է հայրենասիրական ու հակասովետական բնույթի բանաստեղծություններ: Կարճ ժամանակ անց՝ 1979 թ. նոյեմբերին զորակոչվել է բանակ եւ առնչություններ չի ունեցել կազմակերպության ծավալած գործունեությանը: Չնայած այն հանգամանքին, որ Հարությունյանը Հայաստանում չի գտնվել եւ, փաստորեն, չի մասնակցել կազմակերպության ծավալած գործունեությանը, ՊԱԿ-ը որոշում է նրան նույնպես ներգրավել որպես մեղադրյալ: Պետանվտանգության կոմիտեի համար նման որոշման հիմք է հանդիսանում նախաքննության հենց սկզբից Հարությունյանի ցուցաբերած վարքագիծը: Նա ոչ միայն չէր ժխտում իր մասնակցությունը կազմակերպության աշխատանքներին, այլեւ չէր թաքցնում ու հայտարարում էր իր ունեցած հակասովետական հայացքների մասին: Որպեսզի նրա մոտից առգրավված սեփական բանաստեղծություններից բացի՝ այլ մեղադրանք էլ ներկայացնեն ու գոնե ձեւականորեն հիմնավորեն նրան երկարատեւ ազատազրկման դատապարտելու հանգամանքը, արձանագրում են, թե իբր՝ նա կարդացել է Ալեքսանդր Մանուչարյանի հեղինակած գրքույկները եւ դրանք կարդալու համար փոխանցել այլոց՝ այն դեպքում, երբ ՀԵՄ-ի կողմից Մանուչարյանի գրքույկների տարածման ժամանակ Հարությունյանն ընդհանրապես Հայաստանում չի եղել եւ դրանք կարդալ կամ այլոց փոխանցել չէր կարող: Վարդան Հարությունյանը կալանավորվել է 1980 թ. հունիսին: Մեղադրվել է 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Դատապարտվել է հինգ տարի ազատազրկման եւ երեք տարի աքսորի: Ազատազրկումը կրել է Պերմի մարզի քաղբանտարկյալների համար նախատեսված կալանավայրերում, իսկ աքսորը՝ Մագադանի մարզում՝ Կոլիմայում: Գորբաչովյան պերեստրոյկայի ժամանակ արված բոլոր առաջարկները՝ դիմել խորհրդային իշխանություններին ու վաղաժամ ազատ արձակվել՝ մերժել է: Դրա փոխարեն հանդես է եկել «Ինչու՞ ես ներման խնդրագիր չեմ գրում» նամակով, որը 1987 թ. հրապարակվել է ինքնահրատ մամուլում եւ արեւմտյան լրատվամիջոցներում ու ժամանակին լայն արձագանք է գտել: Ազատ է արձակվել ողջ պատժաչափը կրելուց հետո՝ 1988-ին: Ակտիվորեն մասնակցել է Համազգային շարժմանը: Հայ-ադրբեջանական հակամարտության առաջին փուլում մասնակցել է հայ-

ադրբեջանական հասարակական երկխոսության ձեւավորմանը: Ապրում է Երեւանում, զբաղվում է իրավապաշտպանությամբ ու հրապարակախոսությամբ:

Սամվել Էլիբեկի Եղիազարյանը ծնվել է 1958 թ., Երեւան քաղաքում: 1979-ին ծանոթացել է ԱՄԿ երիտասարդական կառույցի՝ Հայ երիտասարդների միության անդամների հետ եւ անդամակցել այդ կազմակերպությանը: Գրել է կոմունիստական գաղափարախոսության հակամարդկային ու ապազգային բնույթը բացահայտող հոդվածներ: Ակտիվորեն մասնակցել է ՀԵՄ-ի կազմակերպչական գործունեությանը: 1980 թ. մայիսի 21-ին, ՀԽՍՀ քր. օր.-ի 222 հոդվածի 1-ին մասով (խուլիգանություն) նրան մտացածին մեղադրանք են ներկայացնում ու, իբր, կատարած խուլիգանության համար կալանավորում: Մի քանի օրից տեղափոխում են ՊԱԿ-ի մեկուսարան ու մեղադրանք ներկայացնում 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) եւ 67 հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաեւ հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Դատապարտվել է 4 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Պերմի մարզի քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայրում: Ապրում եւ աշխատում է Երեւանում:

Հովհաննես Ռաֆայելի Աղաբաբյանը ծնվել է 1957 թ., Վրաստանի Ախալցխայի շրջանում: Մինչեւ ազատազրկվելը սովորել է Երեւանի նկարչական ուսումնարանի 3-րդ կուրսում: Մասնագիտությամբ նկարիչ է: Անդամակցել է «Հայ երիտասարդական միությանը»: Կալանավորվել է 1980 թ. մայիսին: Մեղադրվել է ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով, 67 հոդվածով եւ 213 հոդվածի 1-ին մասով (փաստաթղթեր կեղծելը, կեղծ փաստաթղթեր, դրոշմակներ, կնիքներ, բլանկներ պատրաստելը, օգտագործելը կամ վաճառելը): 213 հոդվածով առաջադրված մեղադրանքը դատարանում հանվել է: Դատապարտվել է 3 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական բանտարկյալների համար նախատեսված կալանավայրում: 1988 թ. մասնակցել է համաժողովրդական շարժմանը եւ Հայաստանի սահմանների պաշտպանության համար մղված մարտերին: Ապրում է Արտաշատ քաղաքում:

Վարդան Հարությունյանի նամակն ախտարավայրից

Հրապարակվել է 1987 թ., Մոսկվայում հրատարակվող «Гластность» հանդեսում:

Ինչու՞ ես ներում չեմ գրում

1987 թ. գարնանը (մարտին) ինձ մոտ եկան Մագադանի մարզի Սուսումանի շրջանի ՊԱԿ-ի աշխատակիցները: Առաջարկեցին գրել նամակ-խոստում այն մասին, որ ապագայում կապրեմ խորհրդային օրենքներին համապատասխան՝ չխախտելով դրանք, եւ ազատություն ստանալ: Ես հրաժարվեցի: Երկու օր անց ինձ մոտ եկան երկուսը եւ, ներկայանալով որպես մարզային դատախազության աշխատակիցներ, առաջարկեցին նույն բանը. երկար համոզում էին, ասում էին, որ ձեւակերպումները կարեւոր չեն, որ հետո ընդհանրապես ինձանից դատվածությունը կհանեն, բայց ես կրկին հրաժարվեցի: Սրանից հետո ՊԱԿ-ի աշխատակիցները եւս մեկ նման առաջարկ արեցին: Հերթական անգամ մերժում ստանալով, ընդհանրապես դադարեցին այդ մասին խոսել, փոխարենը սկսվեցին գժտություններ աշխատանքի վայրում. վեճ ու կռիվ սադրեցին, չէին վճարում աշխատանքիս դիմաց: Ստիպված եղա տեղափոխվել այլ աշխատանքի:

Ինչու՞ ես հրաժարվեցի գրել: Որովհետեւ իմ քաղաքական համոզմունքները հակա - խորհրդային են եւ, բնականաբար, շարունակելով ապրել ԽՍՀՄ-ում՝ ես չեմ կարող լռել եւ ենթարկվել խորհրդային բոլոր օրենքներին, չընդունելով դրանցից շատերը: Քանի դեռ ապրում եմ ԽՍՀՄ-ում, ես կունենամ հակասություններ իշխանությունների եւ օրենքների հետ: Խոստանալ լռել՝ ես չեմ կարող, իսկ տալ սուտ խոստում եւ ազատություն ստանալուց հետո շարունակել պայքարը՝ համարում եմ անպատվաբեր գործ:

Վերակառուցումը եւ հրապարակայնությունը համարում եմ անօգուտ եւ սուտ քաղաքական խաղ: Իմ նպատակների մեջ չի մտնում կոմունիստական հասարակության վերակառուցումը: Ես գտնում եմ, որ կոմունիստական հասարակարգը պետք է ոչ թե վերակառուցել, այլ վերածել ազատ, ժողովրդավարական հասարակության, եւ պետք չէ «մտցնել» հրապարակայնություն, այլ տալ կամ ավելի ճիշտ՝ հասնել ազատության: Հասնել երկրի քաղաքական կյանքի ժողովրդավարացման, որպեսզի երկրում՝ կոմունիստական կուսակցության հետ միասին, բոլորովին ազատ գոյություն ունենան այլ կուսակցություններ ու կազմակերպություններ եւս:

Քանի դեռ Խորհրդային Միությունում գոյություն ունի մեկ կուսակցություն՝ կոմունիստների կուսակցությունը, խոսել ազատության, անգամ հրապարակայնության մասին՝ վաղ է: Կոմունիզմը չի ընդունում այլակարծություն եւ ցանկացած միջոցներով ճնշել է ու ճնշելու է ազատ միտքը: Պետք չէ մոռանալ, որ այսօր էլ քրեական օրենսգրքում գոյություն ունի 70 հոդվածը, իսկ Սահմանադրության մեջ՝ 47, 50, 51 հոդվածները, որոնք ազատություն են երաշխավորում միայն սոցիալիզմի եւ կոմունիզմի ամրապնդման նպատակ հետապնդողներին: Այլ նպատակներ ունեցող մարդը Խորհրդային Միությունում ինքնաբերաբար դառնում է օրինախախտ եւ կարող է բանտում հայտնվել: Այն, որ բոլոր այս եւ մյուս օրենքները մնում են ուժի մեջ, հաստատեց Գորբաչովը: Ֆրանսիական հասարակության հետ հանդիպման ժամանակ նա ասաց, որ երկրում ամեն ինչ արվում է սոցիալիզմի եւ սոցիալիստական ժողովրդավարության ամրապնդման համար, իսկ թե ինչ է նշանակում «սոցիալիստական ժողովրդավարություն»՝ աշխարհն արդեն գիտի: Նրա խոսքով՝ ԽՍՀՄ-ում «պայքար է մղվում» նրանց դեմ, «ում սոցիալիզմը դուր չի գալիս»:

Չկա եւ չի կարող խոսք լինել ԽՍՀՄ-ում ազատության մասին, քանի դեռ գոյություն ունեն վերը թվարկված հոդվածները եւ Գորբաչովի խոսքերը: Ես չեմ կարող ապրել ԽՍՀՄ-ում՝ չխախտելով խորհրդային օրենքները:


СССР
Министерство Внутренних Дел
Управление МВД Магаданской области
Удостоверение
(взамен паспорта)
№ сп
г. Магадан

Վարդան Հարությունյանի աքսորյալի վկայականի կազմը,
լուսանկարն այդ վկայականից եւ վկայականի ընդհանուր տեսքը

Պատմում է Իշխան Մկրտչյանի եղբայրը՝ Սոկրատը

Պետանվտանգության կոմիտեի աշխատակիցները խուզարկության նպատակով մեր տուն են եկել առավոտյան յոթի-ութի կողմերը, երբ տնեցիները դեռ քնած են եղել: Ես աշխատանքի էի, ինձ զանգահարեցին ու տեղեկացրին: Եկա, բայց տուն չմտա: Մտա հարեւանի տուն: Խուզարկության հետ կապված դեպքերը գիտեմ խուզարկությանը ներկա կնոջս պատմածից: Իշխանը խուզարկության ժամանակ ինչ-որ փաստաթղթեր էր սեղանի վրայից վերցրել ու փախել: Ես հարեւանիս լուսամուտից տեսա, թե ինչպես են Իշխանի թեւերը բռնած տանում դեպի իրենց մեքենան: Մեր մեծ եղբայրն աշխատում էր ոստիկանությունում: ՊԱԿ-ի աշխատակիցների կապը մեզ հետ նրա միջոցով էր: Մի օր նա եկավ եւ ինձ ասաց, որ չեկիստները պատրաստ են Իշխանի հետ տեսակցություն տրամադրել, եւ ես պետք է գնամ տեսակցության: Նպատակն այն էր, որ Իշխանին համոզեի հետ կանգնել այդ ճանապարհից: Զրույցի ժամանակ պետք է շեշտը դնեի դրսում գտնվող մեր հարազատների ապագայի վրա, մորս հիվանդ լինելու հանգամանքը շեշտեի եւ այլն: Ես այդպես էլ արեցի: Ասացի՝ մեզ չես խղճում, գոնե հիվանդ մորդ խղճա՝ կմեռնի: Իսկ նա պատասխանեց. «Իմ մեծ մայրը՝ հայրենիքս է հիվանդ, դու ինձ ի՞նչ ես համոզում»: Ոչինչ չստացվեց: Դատավարության ժամանակ էլ էին չեկիստները մեզ համոզում, որ դահլիճում ընտանիքի ներկա անդամներով ճնշենք Իշխանին, պահանջենք, որ փոխի իր դիրքորոշումը: Բայց այդպես էլ բան դուրս չեկավ:

Դատից հետո մենք Իշխանից լուր չունեինք: Մի օր էլ ինձ զանգահարեց մեծ եղբայրս եւ ասաց, որ պետք է զգույշ լինեմ, Իշխանը Ռոստովի բանտից փախել է, այնտեղից հատուկ խումբ է ժամանել Հայաստան, եւ նրանք արդեն հանդիպել են իր հետ, առաջադրանք ունեն Իշխանին հայտնաբերելու դեպքում տեղում գնդակահարել: Նա ինձ առաջարկեց Իշխանի հայտնվելու դեպքում կապկպել նրան ու զանգահարել իրեն կամ ոստիկաններին: Որոշ ժամանակ անց Իշխանին Ռուսաստանում ձերբակալեցին:

Երբ արդեն փախուստի համար նրան դատապարտել եւ Պերմի քաղբանտարկյալների կալանավայր էին տեղափոխել, ես ու քույրս գնացինք տեսակցության: Մեզ երկու օր տեսակցություն էր հասնում, բայց չէին թույլատրում: Ամուսնանալուց հետո քույրս ազգանունը փոխել էր: Սա հիմք հանդիսացավ, որ նրան ընդհանրապես արգելեն մտնել տեսակցության: Ծանոթացանք այդ տարածքում բնակվող ու աշխատող բազմաբնույթ կապեր ունեցող հայերի հետ: Նրանք մեզ կապեցին տեղի դատախազի հետ: Նա կին էր ու գաղութի պետի մտերմուհին էր: Այս դատախազի միջնորդությամբ քրոջս կարճաժամկետ տեսակցություն տվեցին: Նա ապակիների հետեւից Իշխանի հետ զրուցելու հնարավորություն ստացավ, իսկ ինձ 12 ժամանոց տեսակցության հնարավորություն ընձեռեցին: Իշխանի տրամադրությունը բարձր էր: 12 ժամ միասին ենք անցկացրել: Այնտեղ իմացա, թե ինչ կարգի դաժանությունների է ենթարկվել Ռոստովի բանտում: Պատմում էր, որ ձեռքերն ու ոտքերը կապած՝ իր վրա կարատեի հնարքներ են ցուցադրել, հարվածից ականջներն են վնասել, օրերով ծեծել են, եւ ինքն էլ չգիտեր, թե ինչքան ժամանակ է անցկացրել ուշագնաց վիճակում: Պնդում էր, որ խորհրդային երկրին տասը տարի էլ չի մնացել ու անկասկած փլվելու է, եւ ամեն ինչ լավ է լինելու: Նրա ասածներն ինձ աներեւակայելի էին թվում, բայց ինքը համոզված էր:

1985 թ. ապրիլի 24-ին, երբ Եղեռնի զոհերի հուշարձանին ծաղիկներ դնելուց հետո մեքենայով գնում էի, ինչ-ինչ պատմությունների մեջ ընկա, եւ մեքենաս տարան տուգանային հրապարակ: Գնում էի մեծ եղբորս տուն, որ խնդրեմ՝ մեքենան հանի այնտե-

ղից: Նրանց շենքի բակում հանդիպեցի հորս: Ծնողներս բնակվում էին գյուղում, եւ նրա անակնկալ Երեւանում գտնվելը կասկածելի էր: Այդտեղ էլ իմացա, որ կալանավայրի ղեկավարությունը հեռագրով ծնողներիս տեղեկացրել է Իշխանի մահվան մասին: Սա մի սարսափելի շոկ էր մեզ համար: Նույն հեռագրում հայտնել էին, որ ապրիլի 26-ին Իշխանին թաղելու են: Որոշեցինք, որ ես ու քրոջս ամուսինը պետք է գնանք եւ մասնակցենք թաղմանը: Մենք մեկ օրից քիչ ավելի ժամանակ ունեինք: Մոսկվայից երեք ան - գամ հեռագիր ուղարկեցի գաղութի ղեկավարությանը՝ խնդրելով, որ մինչեւ իմ տեղ հասնելը չթաղեն: Ինչքան էլ շտապում էի, ինքնաթիռների չվերթերի հետ կապված տեղ հասա նշանակված օրվա՝ ապրիլի 26-ի ուշ երեկոյան: Չնայած ուշ էր, գնացի կալանավայր եւ տեղեկացրի, որ տեղ եմ հասել: Ինձ դիմավորեց գաղութի ղեկավարներից Ժուրավկով ազգանունով մեկը: Իշխանին չէին թաղել, սպասել էին իմ գալուն: Ասաց՝ եթե ցանկանում եմ, ապա կարող եմ առավոտյան Իշխանի համար քաղաքացիական հագուստ գնել, նաեւ զգուշացրեց, որ 12 մետր երկարությամբ սրբիչի կտոր գնեմ:

Առավոտյան հագուստն ու սրբիչի կտորն առած՝ գաղութի աշխատողների հետ գնացինք մորգ: Մորգ ասածը գերեզմանոցից ոչ հեռու գտնվող՝ առանձնացված մի փոքր սենյակ էր: Մեզ թույլ տվեցին, որ ինքներս հագցնենք Իշխանին: Ես հուզված էի, ոչինչ չէի նկատում, արտասվում էի, երբ քրոջս ամուսինն ասաց, որ ուշադրություն դարձնեմ Իշխանի մարմնի վրա: Նոր միայն նկատեցի, որ Իշխանի թեւերն ու կողերն ամբողջությամբ կապույտ են, իսկ վզին զինվորական գոտու դաջված հետքը պարզորոշ երեւում էր: Ինձ համար ակնհայտ էր, այսօր էլ վստահ կարող եմ պնդել, որ Իշխանը մահից առաջ բռնության էր ենթարկվել: Ճիշտ է, մեզ օգնություն առաջարկեցին, բայց մենք հրաժարվեցինք եւ առանց կողմնակի օգնության՝ երկուսով դագաղը տարանք մինչեւ գերեզմանափոս: Մեր գնած սրբիչի 12 մետրանոց կտորով դագաղն իջեցրին գերեզմանափոսի մեջ: Գերեզմանափոսը հինգ մետրից ավելի խորություն ուներ: Այդ գերեզմանոցում, որտեղ նաեւ սովորական քաղաքացիներին էին թաղում, կալանավորների գերեզմանները համարակալված փայտյա սյուներով առանձնանում էին մյուսներից: Իշխանի գերեզմանը 8-րդ համարն էր:

Պատմում է Սամվել Եղիազարյանը

Ամեն ինչի սկիզբն իմ ընթերցասիրությունը եւ 1979 թ. Մարզպետ Հարությունյանի հետ ծանոթությունն էր: Որոշ ժամանակ իրար հետ շփվելուց հետո նա ասաց ինձ, որ կա Հայաստանի անկախության համար պայքարող «Հայ երիտասարդների միություն» կոչ - վող ընդհատակյա կազմակերպություն, եւ առաջարկեց անդամակցել: Կազմակերպությունը նոր էր ձեւավորվում: Ես ուրախությամբ համաձայնեցի: Սրանով էլ սկսվեց իմ ընդհատակյա գործունեությունը: Կազմակերպության ներսում շրջող մի շարք փաստաթղթեր գրված էին իմ ձեռքով, բացի դրանից՝ մասնակցել էի ապրիլի 24-ի կապակցությամբ սեւ դրոշների պատրաստման գործին, բայց մեր կալանավորումից հետո ինձ հետ կապված այս դրվագները քննությունն այդպես էլ բացահայտել չկարողացավ: Փաստաթղթերը գտնվում էին թաքստոցում, դրա տեղը նրանք այդպես էլ իմանալ չկարողացան, իսկ դրոշների հետ իմ առնչության մասին մեր տղաները ցուցմունք չտվեցին: Ապրիլի 23-ի գիշերը մենք պետք է արդեն պատրաստի դրոշները կախեինք Երեւանի տեսանելի վայրերում: Նախօրոք նախատեսված տարածքներն ուսումնասիրելուց հե-

տո, ուշ գիշերով Իշխան Մկրտչյանը վերադարձավ եւ մեզ հայտնեց, որ դրոշներ կախելու գործի մասին Պետանվտանգության կոմիտեն տեղյակ է, եւ այն վայրերում, որտեղ պետք է դրանք կախենք՝ մեզ ծուղակ է սպասվում: Պարզ էր, որ մեզ հետեւում էին: Կիլիկիայում գտնվող մեր կոնսպիրատիվ բնակարանից արագ ավելի ապահով թաքստոց տեղափոխեցինք մեր ողջ արխիվն ու բաժանվեցինք: ՊԱԿ-ը նախատեսել էր մեզ ձերբակալել, այսպես ասած, գործի վրա՝ դրոշները կախելիս: Այդ գործից հրաժարվելով, փաստորեն, մենք խառնեցինք նրանց հաշվարկները: Դա էր պատճառը, որ մեզ ավելի ուշ սկսեցին ձերբակալել մտացածին մեղադրանքներով: Օրինակ, ինձ ձերբակալեցին 222 հոդվածով՝ խուլիգանության համար: Մայիսի 19-ին կանչեցին Շահումյանի շրջանի միլիցիայի բաժին եւ հայտարարեցին՝ իբր, հասարակական վայրում ես խուլիգանական արարք եմ թույլ տվել՝ հայհոյել եմ անցնող-դարձողներին: Ես, իհարկե, հասկացա սադրանքի նպատակը: Բաժնից ինձ տեղափոխեցին ժամանակավոր պահման մեկուսարան: Այնտեղ պահեցին երեք-չորս օր ու տեղափոխեցին Պետանվտանգության կոմիտե: «Խուլիգանության» մասին մեկ էլ ինձ հիշեցրին, երբ իմ կալանավորումից չորս ամիս անց՝ օգոստոսին, որոշեցին այդ դրվագով դատապարտել ինձ: Դատարանում, որտեղ ինձ մեկ տարի ազատազրկման դատապարտեցին, գործածս «խուլիգանության» վկաները ոստիկաններ էին: Գոնե մեկ ձեւական տուժող չէին ներկայացրել:

Մեր գործով ընթացող ողջ նախաքննության ընթացքում նկատելի էր, որ քննիչները կանխամտածված այնպես են անում, որ հնարավորինս մեծ ու ծավալուն գործ ցույց տան, որ գործը բազմահատոր լինի: Անընդհատ նույն դրվագներին էին անդրադառնում, մի յոթ-ութ տողով էջեր էին լրացնում: Նախաքննությունից հիշելու շատ բան չկա: Միապաղաղ ու անհետաքրքիր պրոցես էր: Իսկ դատավարությունը հետաքրքիր ընթացավ: Մեր դատը սկսվել է 1981 թ. մարտի 26-ին, ավարտվել՝ ապրիլի 9-ին: Դատարանում, մեղադրյալի աթոռին մեր խմբի հինգ անդամներով էինք նստած, բայց միասնական էինք չորսս: Ես չեմ ցանկանում ծանրաբեռնել կոնկրետ դրվագների ու անձերի վրա: Ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի: Որեւէ մեկի դատապարտելու խնդիր չունեմ: Բայց դատարանում ՀԵՄ-ի անունից չորսով էինք հանդես գալիս: Հիշում եմ, որ Իշխանը ագրեսիվ էր, մեղադրեց խորհրդային իշխանություններին Պարույր Սեւակին սպանելու համար, հիշում եմ, որ ցուցմունքներ տալուց մեջքով կանգնեց դեպի դատարանը, հիշում եմ մեր ցավակցական նամակը Ամերիկայի ժողովրդին՝ նախագահ Ռոնալդ Ռեյգանի վրա կատարված մահափորձի կապակցությամբ: Ցավակցական հեռագրի տեքստը գրեց Վարդան Հարությունյանը, կարդացի՝ ես:

Դատից հետո սկսվեց մեզ համար մի ծանր, դաժան ու երկարատեւ էտապ, որը երկու ամսից ավելի տեւեց: Էտապի ժամանակ Ռոստովի բանտում Վարդան Հարությունյանի հետ էի: Հետո բերեցին Հովհաննես Աղաբաբյանին: Բանտախցում քրեական հեղինակություններով շրջապատված օրենքով գող կար: Ինչ-որ պատճառով Վարդան Հարությունյանը վեճի բռնվեց նրանց հետ: Վտանգավոր ու լարված իրավիճակ էր: Վեճի ժամանակ Վարդանը նրանց ասաց, որ սովետներին մենք տապալելու ենք, իսկ բոլոր գողերին ու հանցագործներին ավելի խիստ ենք դատելու, քան սովետներն են դատում: Վեճն ինչ-որ կերպ հարթվեց, ու գողը Վարդանին հրավիրեց չեֆիր խմելու: Հետո տեղի ունեցավ Իշխան Մկրտչյանի փախուստը բանտից: Մենք դրանից տեղյակ չէինք: Իշխանը փախել էր հարեւան խցից: Նրա հետ Մարզպետ Հարությունյանը եւ Ալեքսանդր Մանուչարյանն էին: Մի քանի օրից մեզ կրկին էտապ տարան: Իշխանի փախուստի հետ կապված՝ Մարզպետին այնքան էին խոշտանգել, որ շարժվել չէր

կարողանում: Ծանր վիճակում էի նաեւ ես: Ինձ մոտ ստամոքսային լուրջ խնդիրներ էին առաջացել, սոսկալի ցավեր ու սրտխառնուք ունեի: Չէի կարողանում ոչ ուտել, ոչ էլ խմել: Մենք չորսով էինք՝ ես, Մարզպետ Հարությունյանը, Վարդան Հարությունյանը եւ Ալեքսանդր Մանուչարյանը: Չնայած մեր ֆիզիկական տառապանքներին՝ ընկճված չէինք: Կարեւորը՝ միասին ենք:

Կալանավայրում ինձ համար հետաքրքիր է եղել: Այնտեղ շատ բան եմ սովորել: Երբ պատժաչափս մոտենում էր ավարտին, ինձ տարան պատժիչ մեկուսարան: 15 օր այնտեղ պահելուց հետո տեղափոխեցին Պերմի բանտ: Մեկ շաբաթ մնացել եմ խցում, ինչից հետո կրկին կարցեր տարան, որտեղ մնացել եմ 22 օր: Այ, այս կարցերի մասին արժե հիշել, բոլորովին նման չէր մեր իմացած պատժիչ մեկուսարաններին: Անհերեւակայելի վիճակ էր. երբ մարդն ստիպված էր զուգարանակոնքից խմելու համար ջուր վերցնել, երբ երկու մետր լայնություն ու վեց մետր երկարություն ունեցող խցի ճիշտ մեջտեղում բետոնե արհեստական թումբ էր սարքած՝ այն նպատակով, որ մարդը չկարողանար տաքանալու նպատակով այդ վեց մետրն արագ քայլել: Ըստ դատավճռի, երկու օր առաջ ես պետք է արդեն ազատ արձակված լինեի: Աղմուկ բարձրացրեցի, ինձ տարան բանտի ղեկավարներից մեկի մոտ: Կին էր: Նա էլ հանձնարարեց, ու ձեւակերպեցին իմ ազատ արձակման փաստաթղթերը: Փաստաթղթերիս հետ միասին՝ ինձ տվեցին Պերմ-Ադլեր-Երեւան ինքնաթիռի տոմս: Ազգանունս փաստաթղթերիս մեջ սխալ էին գրել: Ադլերում ինքնաթիռը փոխելուց խնդիր առաջացավ: Թույլ չտվեցին ինքնաթիռ նստել: Ստիպված գնացքով եկա: Ուղեկցորդները վրացիներ էին: Երբ տեսան փաստաթղթերս ու իմացան՝ ով եմ եւ որտեղից եմ գալիս, առանց գումարի եւ առանց ուշադրություն դարձնելու փաստաթղթումս առկա սխալի վրա, ինձ տեղավորեցին գնացքում, ու ես Երեւան հասա:

Այստեղ ինձ անմիջապես մեկ տարով հսկողության տակ վերցրին: Մեկ անգամ մոռացել էի պահանջվող օրը ոստիկանություն ներկայանալ, այդ պատճառով 1,5 տարի հսկողության ժամկետն ավելացրին: Անիմաստ խստություններ էին ցուցաբերում: Անգամ գաղտնի եմ ամուսնացել: Ապագա կինս Երեւանից չէր, նրան բերելու համար պետք է քաղաքից դուրս գայի, իսկ թույլտվություն չունեի: Վստահ էի, որ դիմելու դեպքում մերժում եմ ստանալու: Դրանում կասկած չկար: Ստիպված խիստ կոնսպիրատիվ պայմաններում է մեր ընտանիքն իրականացրել հարս բերելու արարողությունը:

Պատմում է Վարդան Հարությունյանը

Ես ծնվել ու մեծացել եմ փոքրիկ ու հեռավոր մի լեռնային գյուղում, որտեղ մայրաքաղաքային կրքեր չեն եղել: Երեւի թե ամեն ինչի սկիզբն ու պատճառը ծնողներիս, հատկապես մորս ընթերցասիրությունն էր: Աշխատանքից հետո՝ երեկոները երեխաներով վառարանի շուրջը նստած՝ լսում էինք մորս ընթերցանությունը: Հետո, երբ արդեն մեծ էի՝ ինքս էի կարդում: Ինչ ձեռքս կընկներ: 20-րդ դարի 60-ականների հալոցքը, 1965 թվականի ցույցը, 1966-ի ձերբակալությունները մեր գյուղի ու ինձ համար իրադարձություններ չեն եղել: Ինձ համար, որովհետեւ ես փոքր եմ եղել՝ ընդամենը 4-5 տարեկան, մեր գյուղի համար, որովհետեւ դրանց մասին լուրերը երեւի մեր գյուղ չեն էլ հասել, կամ՝ եթե անգամ հասել են, ապա՝ որպես մեր գյուղին ու մեզ չառնչվող հետաքրքիր պատմություններ:

Վաղ պատանեկությունից եմ սկսել մտածել, թե ինչու Հայաստանն անկախ պետություն չէ: Հետագայում, շատ ավելի ուշ ինձ նույնպես հետաքրքրել է, թե որտեղից ինձ այդ միտքն, ու պատասխանը չեմ գտել: Լավ չեմ հիշում 8-րդ, թե 9-րդ դասարանի պատմության դասագրքում պատմվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին: Դասերից մեկում նկարագրվում էր խորհրդային բանակի շարժը, եւ բանակն անվանվում էր ոչ թե խորհրդային, այլ՝ ռուսական: Ասենք՝ ռուսական բանակն անցավ հարձակման, ռուսները հետ քաշվեցին եւ նման այլ ձեւակերպումներ: Երեկոյան տանը՝ դասը սովորելիս այս տողերը գրավեցին ուշադրությունս: Հաջորդ օրը պատմության ուսուցչուհուն հարցրեցի, թե ինչու է այդպես գրված դասագրքում, չէ՞ որ բանակը միայն ռուսական չէր, այնտեղ խորհրդային բոլոր ժողովուրդներն էլ մասնակցում էին: Նա համաձայնեց, որ դասագրքում ձեւակերպումն այնքան էլ ճիշտ չէ, ասաց, որ ճիշտ կլիներ, եթե գրվեր խորհրդային բանակ, բայց նաեւ բացատրեց, որ այդպես են գրել՝ նկատի ունենալով, որ պատերազմի ծանրության հիմնական բեռն ընկած է եղել Ռուսաստանի եւ ռուսների ուսերին: Բացատրությունը չգոհացրեց ինձ: Իմ երկու պապերն էլ կռվել էին այդ բանակի շարքերում: Մեկը վիրավորվել ու վերադարձել էր, իսկ մյուսն անհետ կորել էր: Այսինքն՝ իմ ընտանիքի վրա պատերազմի բեռն ընկել էր իր ողջ ծանրությամբ, ռուսներից ոչ պակաս, բայց դասագրքի այդ մի տողը ջնջում էր իմ ընտանիքի ողջ ներդրումը: Վիրավորական էր: Այդ ժամանակ, հիշում եմ, միտք ծագեց, որ չէր արհամարհվի հայերի մասնակցությունը պատերազմին, եթե Հայաստանը որպես առանձին պետություն մասնակցեր դրան, այլ ոչ՝ որպես ռուսական բանակի մեջ տարրալուծված միավոր, որին կարելի է եւ չնկատել: Այս փոքրիկ դրվագը տպավորվել է:

Հաջորդ հանգամանքը, որ երեւի ազդել է վրաս՝ «Ամերիկայի ձայնն» էր, որ հաճախ լսում էր տատս՝ մորս մայրը: Նրա ամուսնուն՝ պապիս 1937-ին կալանավորել ու, որպես ժողովրդի թշնամի, ութ տարի ազատազրկման էին դատապարտել: Մորդովյան կալանավայրից նա 1941 թ. կամավոր մեկնել էր ռազմաճակատ՝ հույսով, որ պատերազմը շուտ կավարտվի, ինքն էլ կարդարացվի ու ընտանիք կվերադառնա: 1944-ին անհետ կորել է: Երեկոները հեռուստացույցով խորհրդային լրատվությունը դիտելիս, տատս՝ արդեն նյութին տեղյակ մարդու տոնով հայտարարում էր՝ սուտ են ասում թաղվածները: Նա խորհրդային լրատվությունը համեմատում էր նույն թեմային վերաբերող «Ամերիկայի ձայնի» լրատվության հետ եւ, բնական է, վստահում էր ամերիկյանին ու չէր թաքցնում սովետների նկատմամբ իր հակակրանքը:

Գիտեի, թեկուզ նույն ռադիոձայներից, որ մայրաքաղաքում ընդհատակյա գործող խմբեր կան: Վայքի դպրոցն ավարտելուց հետո, ուսումս շարունակելու նպատակով Երեւան եկա ու միաժամանակ նման խմբակ գտնելու հույս էի փայփայում: Ժամանակ անց ծանոթացա Բրյուսովի անվան ինստիտուտի արդեն բարձր կուրսի ուսանող Մելքոնյան Սմբատի հետ: Սմբատը «Հայ ազգային միություն» գաղտնի գործող կազմակերպության ղեկավարն էր: Կազմակերպության ծրագիրն իր մեջ ներառում էր հայոց լեզվի մաքրության, հայկական կորցրած տարածքները Խորհրդային Հայաստանին վերադարձնելու, ապագայում անկախ Հայաստան ստեղծելու հարցերը: Օրվա վիճակի մասին, խորհրդային կարգերի ու բարքերի մասին ոչինչ չկար: Սա ինձ քիչ էր թվում, եւ ես, Սմբատենց հետ հանդիպելուն զուգահեռ, ավելի լուրջ բան էի փնտրում: Այդ շրջանի իմ նոր ծանոթներից մեկը՝ Արսեն Ղազարյանը, որը հետո՝ 1980-ին դատապարտվեց, իմանալով իմ պրպտումների մասին, ինձ ծանոթացրեց Ազգային միացյալ կուսակցության անդամներից Մարզպետ Հարությունյանի հետ: Դա 1979 թվականն էր: Ինձ համար ամեն ինչի սկիզբ համարում եմ այդ ծանոթությունը: Մարզպետ Հարութ-

յունյանը ԱՄԿ անդամ էր 1967 թվականից: 1969-ին նա կալանավորվել էր, սակայն ՊԱԿ-ը որոշել էր՝ կալանավայր ուղարկելու փոխարեն, հոգեբուժարան տանել նրան: Մարզպետն ասում էր, որ հոգեբուժարանում անցկացրած մեկ ամիսը կարելի է համեմատել կալանավայրի երեք ամսվա հետ: Հետագայում շատ եմ հանդիպել մարդկանց, որոնք իրենց կյանքի մի հատվածը, Պետանվտանգության կոմիտեի որոշմամբ, անցկացրել են հոգեբուժարաններում: Երբ նրանց պատմում էի Մարզպետի պատմությունները, տխուր ժպտում էին: Պարզվում է՝ Հայաստանի հոգեբուժարանները դրախտ կարելի է համարել ռուսաստանյան հատուկ հոգեբուժարանների համեմատ:

Ծանոթանալուց եւ որոշ ժամանակ շփվելուց հետո Մարզպետն ասաց ինձ, որ գոյություն ունի «Հայ երիտասարդների միություն» (ՀԵՄ), որը Ազգային միացյալ կուսակցության երիտասարդական կառույցներից է, պատմեց ԱՄԿ-ի եւ ԱՄԿ-ականների մասին: Ծանոթացա ՀԵՄ-ի ծրագրին ու կանոնադրությանը եւ հասկացա, որ սա ճիշտ այն է, ինչ փնտրում եմ: Չի կարելի ասել, թե այդ փուլում արդեն հստակ ձեւավորված անկախական էի, բայց ոգեւորությամբ ընդունեցի անկախության համար պայքարի գաղափարը: Ծրագրի մեխը հենց սա էր: Անտեսված չէին նաեւ տարածքային հարցերը, բայց անկախությունը, նաեւ հակասովետիզմը, որ ընդգծված էր ՀԵՄ-ի ծրագրում՝ ոգեւորում էին: Այդ շրջանում հակասովետիզմը դարձել էր իմ էությունը, որը երիտասարդական եռանդով հասցրել էի ծայրահեղության: Անգամ բանաստեղծություններ էի գրել Հիտլերի ու Մուսոլինիի մասին՝ փառաբանելով նրանց, որ պատերազմել են սովետների դեմ: Այս դրվագը հետագայում հատուկ ընդգծվել է ե՛ւ մեղադրական եզրակացության, ե՛ւ դատավճռի ինձ վերաբերող հատվածներում: Պատմեցի Մարզպետին Սմբատենց մասին: Հանդիպում կազմակերպեցի: Սմբատենք ոչ մի կերպ չէին ընդունում հակակոմունիզմը, իսկ անկախության պահանջը համարում էին վաղ: Ասում էին՝ պետք է սկզբում ԽՍՀՄ շրջանակներում լուծել տարածքային խնդիրները, հետո անկախության հարց դնել, իսկ ՀԵՄ-ի ներկայացուցիչները՝ Մարզպետն ու Իշխան Սկրտչյանը, պնդում էին, թե քանի դեռ անկախ չենք, ոչ մի հարց էլ մեր օգտին չի լուծվելու, մեր տարածքները կորցրել ենք ԽՍՀՄ-ի մեղքով, ու անիմաստ է այդ հարցով նույն ԽՍՀՄ-ի հետ հույսեր կապել: Որոշվեց ժամանակ առ ժամանակ հանդիպել, բայց միավորման մասին խոսք լինել չէր կարող:

Իշխանն էլ էր Մարզպետի հետ ծանոթացել Ղազարյան Արսենի միջոցով: Իշխանի իսկական անունը Կնյազ էր: Ծանոթացնելիս Արսենը նրան Իշխան անունով էր ներկայացրել, ու նա մեզ համար դարձավ ու մնաց Իշխան: Իշխանը նվիրյալ էր՝ բառիս ամենահիսկական իմաստով: Քաջ, համարձակ, զոհողության պատրաստ: Մեջը պաթետիկ, անգամ գրքային ինչ-որ բան կար, միաժամանակ ամաչկոտ էր ու չափազանց ազնիվ: Հետագայում՝ 1985 թ. ապրիլի 24-ին, Պերմի կալանավայրի պատժիչ մեկուսարանի մենախցում անհայտ հանգամանքներում զոհվեց: ՀԵՄ-ի հաջորդ անդամը Սամվել Եղիազարյանն էր: Հայրենասեր ու գործին նվիրված երիտասարդ էր: Զարմանալ կարելի էր նրա նվիրվածության վրա: Մարքսիզմ-լենինիզմի տեսության մասին հոդվածներ էր գրում, ինչպես ինքն էր ասում՝ դրա հակամարդկային ու ապազգային էությունն ի ցույց դնելու նպատակով: Հաջորդ՝ հինգերորդ անդամը, նկարիչ Հովհաննես Աղաբաբյանն էր: Խմբում էլի անդամներ կային՝ Գեւորգ Սարգսյանը, Աշոտ Մուսախանյանը, Վաչագան Հայրապետյանը: ՀԵՄ-ը նաեւ մասնաճյուղեր ուներ: Մի մասնաճյուղն Արթիկի շրջանում կազմակերպել էր Իշխանը, որը հետագայում՝ մեկի տված ցուցմունքների պատճառով բացահայտվեց: Անդամներն էին Սողոմոն Պողոսյանը (ղեկավար), Ռուսլան Զատիկյանը, Հրաչյա Թորոսյանը եւ Ռոմիկ Մանուկյանը: Ռոմիկը հետագայում

Շիրակի մարզպետ դարձավ:

ՊԱԿ-ի գերխնդիրը, դատելուց բացի, մեր կամքը ջարդելն էր: Այս գործում, որպես իրենց դաշնակից՝ նրանք, երբ կարողանում էին, վերցնում էին մեր ծնողներին: Գոնե իմ դեպքում այդպես է եղել: Ինչու՞ պետք է որդիդ դատվի, նա խելոք, խոստումնալից երիտասարդ է, օգնեք մեզ՝ այնպես անենք, որ չդատվի, որ նրա կյանքը չխորտակվի: Եվ ծնողները հանձն էին առնում չեկիստների օգնականի դերը: Կոնկրետ իմ դեպքում ծնողներս մինչեւ դատավարության ավարտը եղել են նրանց նվիրյալ աջակիցներն ու աշխատել են իմ դեմ: Չեկիստների գերխնդիրը, որ փորձում էին լուծել ծնողներիս միջոցով՝ այն էր, որ ստիպեն ինձ հայտարարել, թե զղջում եմ արածներիս համար ու խոստանում եմ հետագայում նման գործունեություն չծավալել: Նրանք հորս վստահեցրել էին, որ այդ դեպքում դատարանն իմ նկատմամբ մեղմ կվարվի կամ ընդհանրապես ազատ կարձակի:

Դատավարության ժամանակ ծնողներս դահլիճում էին: Երբ ի պատասխան դատավորի հարցի՝ հայտարարեցի, որ ինձ մեղավոր չեմ ճանաչում ու չեմ զղջում, մի աներեւակայելի իրարանցում սկսվեց: Բարձր գոռալով ծնողներս պահանջում էին, որ խոսքերս հետ վերցնեմ, իսկ դատավորը չէր էլ պահանջում չխանգարել դատը: Մայրս բարձրաձայն լաց էր լինում, հայրս՝ պահանջում: Սցենարը լավ մշակված էր: Ըստ հաշվարկների՝ ես չպետք է դիմանայի այդ ճնշմանը: Դատական նիստի ընդմիջումներին հորս բերում էին ինձ մոտ, եւ նա ինձանից պահանջում էր հայտարարել, որ սխալվել եմ: Այդ հանդիպումներն աներեւակայելի ծանր փորձություններ էին ինձ համար: Ես նոր 20 տարեկան էի, շատ էի սիրում ու հարգում հորս, բայց մյուս կողմից չէի կարող կատարել նրա պահանջը: Նա մեկ պահանջում, մեկ՝ աղաչում էր: Խնդրում էր՝ իրեն չմերժեմ, հիվանդ մորս խղճամ: Դատը մի 10 օր տեւեց, եւ այս ամենը կրկնվում ու կրկնվում էր: Ծանր ապրումների մեջ էի: Բանտախցում ամբողջ գիշերներ չէի քնում: Վերջապես դատն ավարտվեց: Հաջորդ օրը պետք է հրապարակվեր դատավճիռը: Վերջ, մտածեցի ու թեթեւացած շունչ քաշեցի: Բայց դատավճռի օրը՝ դատարան տանելուց մի երկու ժամ առաջ ինձ անսպասելի տարան մեկուսարանի պետի աշխատասենյակ: Այնտեղ էին մեկուսարանի պետը, մեր գործով երկու քննիչ եւ ինչքան էլ զարմանալի է՝ հայրս: Նա կրկին, այս անգամ արդեն առանց ձայնը բարձրացնելու, խեղճացած ու արցունքն աչքերին խնդրում էր ինձ գրել, որ սխալս հասկացել եմ, գրել ու թուղթը տալ իրեն: Ես վրդովված էի: Հորս ասացի, որ իրեն օգտագործում են իմ դեմ, խաբում են իրեն, արդեն որոշված է, եւ ինձ դատապարտելու են, դատն արդեն ավարտվել է, պետք է վերջակետ դնել: Հայրս հուզված էր, ձեռքերը դողում էին: Կրակին անընդհատ յուղ էին ավելացնում ներկա չեկիստները: Նրա հուզմունքը փոխանցվել էր ինձ: Շատ վատ էի զգում: Քննիչներից մեկը, որը հետո անկախ Հայաստանում դատավոր ու դատարանի նախագահ դարձավ, ասաց՝ ոչինչ, որ դատն ավարտվել է, հայրդ դատից հետո ուզում է դիմել, որ գործը վերանայեն, այդ ժամանակ էլ նա իր, ոչ թե քո անունից կարող է օգտագործել այդ գրությունը: Այդ ծանր ապրումներից ու նվաստացումից հորս ազատելու համար եւ վստահ, որ դատավճիռն արդեն պատրաստ է, ու ինչ էլ գրեմ՝ մնալու է հորս գրպանում, արագ գրեցի՝ սխալս հասկացել եմ, կատարածի համար զղջում եմ, ստորագրեցի ու տվեցի հորս: Երբ մեզ բերեցին դատարան, ես այս ամենը պատմեցի ընկերներիս: Մարզպետը նույնպես ասաց, որ դատն արդեն ավարտվել է, եւ գրածիս կապակցությամբ մտահոգվելն իմաստ չունի: Որքան մեծ եղավ բոլորիս զարմանքը, երբ դատավորը, դատավճիռը հրապարակելիս՝ ամենավերջում ընթերցեց. «Դատական նիստի վերջին օրը ամբաստանյալ Վարդան Հարությունյանը գրավոր դիմում ներկայացրեց եւ

հայտարարեց, որ իր սխալը հասկացել է եւ կատարածի համար զղջում է»: Այդպես էլ այս մեկ նախադասությունը, որ մեկուսարանի պետի աշխատասենյակում ոտքի վրա գրել էի հորս համար, չեկիստները փոխանցել էին դատավորին, եւ դա՝ առանց փոփոխության արձանագրվեց որպես մեր դատավճռի վերջին տող՝ հենց այնպես, համատեքստից կտրված ու անկապ: Նույն դատավճռում հստակ ու ճիշտ իր տեղում արձանագրված է. «Ամբաստանյալներ Վարդան Հարությունյանը եւ Սամվել Եղիազարյանը նույնպես ընդունեցին, որ ունեցել են եւ այժմ էլ ունեն հակասովետական ազգայնական հայացքներ: …պնդեցին, որ իրենց գործունեությունը, որի նպատակն է հայկական հանրապետությունը ՍՍՀՄ-ի կազմից դուրս բերել, հայկական հողերը միավորել եւ դաշնակցության կուսակցության ղեկավարությամբ «անկախ Հայաստան» ինքնուրույն պետություն ստեղծել՝ իրավացի է, եւ այդ պատճառով իրենց մեղավոր չեն ճանաչում եւ կատարածի համար չեն զղջում, համոզմունքները փոխելու մտադրություն չունեն»: Մեր պատժաչափերը մինչեւ դատական նիստն արդեն որոշված էր: Ինձ տվեցին այնքան, որքան պետք է տային՝ հինգ տարի ազատազրկում եւ երեք տարի աքսոր: Շրջվեցի ու նայեցի հորս, կանգնած էր լուռ ու թեւաթափ: Նրան վստահեցրել էին, որ այդ երկու բառից հետո, եթե անգամ ազատ չարձակեն ինձ, ապա չնչին պատժաչափ են տալու: Հետո, երբ դատից մի քանի օր անց Երեւանի բանտում տեսակցության եկավ՝ խաղաղված էր: Ես նրան այս թեմայով ոչինչ չասացի: Զրույցի ավելի կարեւոր թեմաներ ունեինք: Դա մեր վերջին հանդիպումն էր: Էլ հորս երբեք չտեսա: Նա մահացավ մինչեւ իմ ազատ արձակվելը՝ 1986 թվականին, 49 տարեկանում, երբ ես արդեն աքսորավայրում էի: Հորս մահվան մասին ինձ շատ ուշ են տեղեկացրել: Հարազատներս դիմել են ՊԱԿ՝ խնդրելով թույլ տալ, որ գամ ու մասնակցեմ հուղարկավորությանը, բայց մերժում են ստացել:

Մեզանից առաջ եւ հետո դատապարտվածների հիմնական մասը դատավարությունների ժամանակ հայտարարում էր, որ իրենք հակասովետական գործունեություն չեն ծավալել, ԽՍՀՄ-ը քայքայելու նպատակ չեն ունեցել, եւ որ Հայաստանի անկախության հնարավորությունը նախատեսված է սահմանադրությամբ, ու իրենց գործողությունները տեղավորվում են ԽՍՀՄ օրենքների շրջանակներում: Մենք՝ հակառակը, հայտարարում էինք, որ համոզված հակասովետականներ ենք, մեր նպատակը ԽՍՀՄ-ը քայքայելն է, որ ապագա անկախ Հայաստանում կոմունիստական կուսակցությունը՝ որպես հանցագործ կառույց հայտարարվելու է օրենքից դուրս: Դատական նիստերից մեկի ժամանակ Մարզպետ Հարությունյանը հայտարարեց, որ մենք Ազգային միացյալ կուսակցության երիտասարդական կառույց ենք, եւ ինչպես մեզանից առաջ դատապարտված ԱՍԿ-ականները՝ պայքարել ու պայքարելու ենք, քանի դեռ Հայաստանը անկախ չէ: Դատարանի դահլիճում, դատական նիստերին զուգահեռ, գումարում էինք մեր կազմակերպության ժողովներն ու տեղում հայտարարում մեր ընդունած որոշումների մասին: Այդ օրերին ԱՄՆ նորընտիր նախագահ Ռոնալդ Ռեյգանի դեմ, որն արդեն հասցրել էր Խորհրդային Միությունը «չարի կայսրություն» հռչակել, մահափորձ էր իրականացվել, եւ նա հիվանդանոցում էր գտնվում: Հենց դատարանի դահլիճում՝ Ամերիկայի ժողովրդին ուղղված ցավակցական հեռագրի տեքստ գրեցինք ու հրապարակեցինք, որտեղ հույս էինք հայտնում, որ Ռեյգանը շուտով կապաքինվի ու կշարունակի իր պայքարը չարի կայսրության դեմ: Հեռագրի տեքստը գրեցի ես, ընթերցեց Սամվել Եղիազարյանը եւ փոխանցեց դատավորին՝ գործին կցելու համար: Մեր դատավարությանը եւ մեր այս հեռագրին մանրամասն անդրադարձել էր «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկան»: Ընդարձակ հրապարակումներ են եղել նաեւ արեւմտյան մամուլում:

Մեր քրեական գործում ինձ առնչվող՝ զենք ձեռք բերելու մասին մի անհեթեթ դրվագ կար: Նրանք արհեստականորեն դա գործի մեջ էին ներմուծել փոստային ծառայությունից զարտուղի ճանապարհով խլված՝ Մարզպետին հասցեագրված իմ մի նամակից: Ամիսներ շարունակ չարչարվում էին, որ ասեմ նամակում հիշատակված մարդու անունը, որն, իբր, ինձ հանձնարարել է զենք հայթայթել, իսկ հետո ասել է՝ պետք չէ: Բայց այդպես էլ նա մնաց որպես «գործով չպարզված անձնավորություն»: Զենքի այս դրվագը նրանք ցանկանում էին կապել ցուցմունքներից մեկում իմ արած հայտարարությանը, թե մեր կազմակերպությունը խաղաղ ճանապարհով կպայքարի անկախության համար այնքան ժամանակ, քանի դեռ զինվելու խնդիրը չի լուծել, իսկ զինվելուց հետո անցնելու ենք ռազմական պայքարի: Մեր կազմակերպության խիստ գաղտնի համարվող մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ ցուցակները, ծրագիրը, կանոնադրությունը, կապերը, այդպես էլ մնացին թաքստոցում: Չնայած թափած հսկայական ջանքերին, քննությունը դրանց տեղը պարզել չկարողացավ, եւ ստիպված էին արձանագրել, որ «նշված փաստաթղթերը քննության ընթացքում չեն հայտնաբերվել եւ քր. գործին չեն կցվել»: Մենք կարողացանք այնպես անել, որ մեր խմբի բացահայտված մյուս անդամները մնացին ընդամենը վկայի կարգավիճակում:

Եթե մեր գործը փորձենք համեմատել մեզանից առաջ եւ հետո եղած քաղաքական գործերի հետ, ապա կտեսնենք, որ մենք աչքի ընկնող լուրջ գործունեություն չենք ծավալել, ինչը պարզ երեւում է նաեւ դատավճռից: Բայց պատժաչափերն անհամեմատ խիստ են: Մեր խմբի նկատմամբ ՊԱԿ-ի վերաբերմունքն ընդգծված խիստ էր: Դա նաեւ մեր ցուցաբերած կեցվածքի արդյունք կարող էր լինել: Մի հետաքրքիր հանգամանք եւս՝ որպես կանոն քաղաքական գործերով հրապարակված բոլոր դատավճիռների վերջում էլ գրված էր լինում, որ դատավճիռը վերջնական է եւ բողոքարկման ու գանգատարկման ենթակա չէ: Մեր դեպքում ընդհակառակը՝ գրվել էր, որ դատավճիռը կարող է գանգատարկվել կամ բողոքարկվել հսկողական կարգով: Սա նման հնարավորություն ընձեռող միակ դատավճիռն է: Ազատ արձակվելուց հետո իմացա, որ հայրս տարիներ շարունակ փորձել է բողոքարկել այն, բայց, բնականաբար, անարդյունք:

Հայ երիտասարդների միության անդամների գործով կայացված դատավճիռը

Այս դատավճռում նույնպես ԱԱԾ աշխատակիցները գործով անցնող վկաների անունները ջնջել եւ փոխարենը կամայական տառեր են նշել: Մեր արխիվում եղած տարբեր փաստաթղթերի օգնությամբ կարողացել ենք վերականգնել բոլոր առանցքային վկաների ջնջված անունները: Չվերականգնված են մնացել 2-3 ոչ առանցքային վկաների անուններ, եւ կետագծերով նշված են դատավճռի անընթեռնելի մեկ-երկու հատված:

ԴԱՏԱՎՃԻՌ

գործ նո. 35
1981թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1981թ. ապրիլի 9-ին Երեւանում

Նախագահությամբ՝	**Ս. Դանիելյանի**
Ատենակալներ՝	**1. Յու. Թուրջումյանի**
	2. Գ. Հարությունյանի
Քարտուղարությամբ՝	**Զ. Հաւությունյանի եւ Ա. Սարգսյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Պ. Թոխյանի**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝

1. Մարզպետ Հարությունի Հարությունյանի, ծնվել է 1940թ. Երեւան քաղ. , հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, 6-րդ դաս. կրթությամբ, ամուսնացած, խնամքին երկու մանկահասակ երեխա, նախկինում դատվել է երկու անգամ՝ 1959թ. ՍՍՀՄ գերագույն սովետի նախագահության 4/6-47 թ. հրամանագրով ազատազրկման 2 տարի ժամկետով եւ 1/8-1980թ. քր. օրի 229h. 3-րդ մասով ազատազրկման 2 տարի ժամանակով, աշխատել է Երեւանի մանրացման-տեսակավորման գործարանում, որպես հնոցապան, բնակվել է Երեւանում, Չերնիշեւսկու փ. տուն 23 բն. 12, կալանքի տակ է 1980թ. հունի փ 1-ից:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր .օրի 65h.1-ին մասով եւ 67 հոդվածով:

2. Կնյազ Մկրտիչի Մկրտչյանի, ծնվել է 1957թ. ՀՍՍՀ Արթիկի շրջանի Սարատակ գյուղում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, միջնակարգ կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ ոք, 3/7-1980 թ. քր. օրի 207[1] հոդ. 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամանակով, աշխատել է Երեւանի «էլեկտրոն» միավորումում որպես տեխնիկ-տեխնոլոգ, բնակվել է Երեւանում, Շահումյան 7-րդ փ. տուն 13, կալանքի տակ է 21/5-1980թ.

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65 h. 1-ին մասով եւ 67 հոդվածով:

3. Վարդան Լյուդվիգի Հարությունյանի, ծնվել է 1961թ. ՀՍՍՀ Ազիզբեկովի շրջանի Սերս գյուղում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, միջնակարգ կրթությամբ, ամուրի, չդատված, մինչեւ կալանավորվելը ծառայել է սովետական բանակում, կալանքի տակ է 6/6-80թ.

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65 h. 1-ին մասով եւ 67 հոդվածով:

4. Սամվել էլիբեկի Եղիազարյանի, ծնվել է 1958թ. Երեւան քաղաքում, հայ ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, միջնակարգ կրթությամբ, ամուրի, խնամքին ոչ ոք,

21/11-80թ. քր. օրի 222 հ. 1-մ. դատապարտվել է ազատազրկման մեկ տարի ժամանակով, աշխատել է Երեւանի «Տոչպրիբոր» գործարանում որպես բանվոր, բնակվել է Երեւանում, Շահումյան 4-րդ փ. տուն 4, կալանքի տակ է 1980թ. մայիսի 20-ից:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65հ. 1-ին մասով եւ 67 հոդվածով:

5. Հովհաննես Ռաֆայելի Աղաբաբյանի, ծնվել է 1957թ. Վրաց. ՍՍՀ Ախալցխայի շրջանի փ. Պամաչ գյուղում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ՀամԼԿԵՄ անդամ, Երեւանի նկարչական ուսումնարանի 3-րդ կուրսի ուսանող, ամուրի, խնամքին ոչ ոք, չդատված, բնակվել է Երեւանում, Պրագայի փ. տուն 49, կալանքի տակ է 21/5-80թ.

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օրի 65հ. 1-ին մասով, 67 հոդվածով եւ 213 հ.1-ին մասով:

Դատաքննությամբ պարզված է՝

Ամբաստանյալներ Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ (նույնն Իշխան) Մկրտչյանը ունենալով հակասովետական, նեղ ազգային հայացքներ, 1979-80թթ. զբաղվել են հակասովետական ագիտացիայով ու պրոպագանդայով եւ հակասովետական կազմակերպական գործունեությամբ, նպատակ ունենալով անջատել Սովետական Հայաստանը ՍՍՀՄ կազմից, միացնել Հայաստանին այլ հանրապետություններում եւ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հողեր, ստեղծել «անկախ հայաստան» ինքնուրյուն պետություն, որը պետք է ղեկավարի դաշնակցություն կուսակցությունը, առանց կոմունիստների, դրանով իսկ թուլացրել Սովետական Իշխանությունը:

Այդ նպատակն իրականացնելու համար Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ Մկրտչյանը 1979թ գարնանը ստեղծել են «Հայ երիտասարդների միություն» (ՀԵՄ) կոչ - վող գաղտնի կազմակերպություն, որի համար վերը նշված ոգով մշակել են կանոնադրություն, ծրագիր եւ երդման տեքստը:

Նշված փաստաթղթերը քննության ընթացքում չեն հայտնաբերվել եւ քր. գործին չեն կցվել: Ըստ ցուցմունքների դրանք պարունակում են հետեւյալ մտքերը.

կանոնադրությունը նախատեսել է, որ «ՀԵՄ» անդամ կարող է լինել յուրաքանչյուր հայ երիտասարդ 18-30 տարեկան հասակում, որն ընդունում է «ՀԵՄ»-ի ծրագիրը, վճարում է անդամավճար, նվիրված է «ՀԵՄ»-ի գաղափարներին եւ կարգապահ է:

Ծրագիրը պարունակել է սովետական իրականությունը զրպարտող հեյրուրանքներ, հակասովետական ագիտացիա ու պրոպագանդա անելու միջոցով, ինչպես նաեւ դաշնակցություն կուսակցության ղեկավարությամբ «Անկախ Հայաստան» պետություն ստեղծելու խնդիրներ, կոմունիստական կուսակցությունը հայտարարվել է օրենքից դուրս:

Երդման տեքստը պարտավորեցրել է «ՀԵՄ»-ի անդամներին լինել նվիրված ու կար - գապահ, պայքարել ծրագիրը իրականացնելու համար:

Նույն թվականի մայիս ամսին Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ (Իշխան) Մկրտչյանը ընդգրկել են «ՀԵՄ» կազմակերպության մեջ նույնանման հայացքներ ունեցող ամբ. Հովհաննես Աղաբաբյանին եւ գործով վկա Գեւորգ Սարգսյանին:

1979թ. մայիսի 28-ին նրանք չորսով մեկնել են Գառնի, որտեղ Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ Մկրտչյանը ծանոթացրել են Հովհաննես Աղաբաբյանին եւ Գեւորգ Սարգսյանին «ՀԵՄ» խմբի կանոնադրության եւ ծրագրի հետ: Վերջիններս տվել են իրենց համաձայնությունը եւ ընդունել են երդումը:

Մարզպետ Հարությունյանը նշանակել է խմբի ղեկավար Կնյազ Մկրտչյանին, իսկ ինքը համարվել է խորհրդատու եւ ընդհանուր ղեկավար:

Նույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Կնյազ Մկրտչյանը ընդգրկել է

«ՀԵՄ» խմբի մեջ հակասովետական-ազգայնական հայացքներ ունեցող ամբաստանյալ Վարդան Հարությունյանին եւ Սամվել Եղիազարյանին: Նա ծանոթացրել է նրանց «ՀԵՄ» կանոնադրության ու ծրագրի հետ: Վարդան Հարությունյանը եւ Սամվել Եղիազարյանը հավանություն են տվել այդ փաստաթղթերին, ցանկություն են հայտնել ընդունվել խմբի մեջ, ապա բոլորով մեկնել են Սարդարբադ, որտեղ Վարդան Հարությունյանը եւ Սամվել Եղիազարյանը ընդունել են «ՀԵՄ» երդումը եւ այդպես դարձել են խմբի անդամ:

«ՀԵՄ»-ի անդամներ են համարել իրենց նաեւ գործով վկաներ Աշոտ Մուսախանյանը եւ Վաչագան Հայրապետյանը, որոնք բավականչափ մասնակցել են խմբի գործունեությանը, սակայն նրանցից դեռ երդում չեն ընդունել, համարելով դա վաղաժամ:

«ՀԵՄ»-ի ծրագիրը նախատեսել է աստիճանաբար ընդլայնել այդ կազմակերպությունը: Իրականացնելուվ «ՀԵՄ»-ի ծրագրի այդ կետը, ամբ. Կնյազ Մկրտչյանը 1980թ. փետրվար ամսին մեկնել է իր ծննդավայրը՝ Արթիկի շրջանի Սարատակ գյուղ, որտեղ զրույցներ է ունեցել իր մանկության ընկերներ Սողոմոն Պողոսյանի, Ռուսլան Ջատիկյանի, Հրաչյա Թորոսյանի եւ Ռոմիկ Մանուկյանի հետ եւ տրամադրել նրանց ընդունվել «ՀԵՄ» կոչվող գաղտնի կազմակերպությունը:

1980թ. մարտ ամսին Կնյազ Մկրտչյանը եւ Հովհաննես Աղաբաբյանը մեկնել են Սարատակ գյուղ, ծանոացրել են թվարկված անձանց «ՀԵՄ» կազմակերպության կանոնադրության ու ծրագրի հետ, ընդունել են նրանցից երդում եւ այդպես նրանք դարձել են «ՀԵՄ» անդամ:

Կնյազ Մկրտչյանը նշանակել է այդ խմբի ղեկավար Սողոմոն Պողոսյանին, հանձնարարելով նրան հավաքել անդամավճարներ, զբաղվել ազգայնասիրական մակարդակի բարձրացմամբ եւ միջոցներ ձեռնարկել զենք ձեռք բերելու համար:

1980թ. հունվար ամսին Կնյազ Մկրտչյանը Երեւան քաղաքում քննությամբ չպարզված անձից գնել է մեկ հատ «Մոսկվա» մակնիշի գրամեքենա, անսարք վիճակում, այն վերականգնելու եւ հակասովետական բովանդակությամբ նյութեր բազմացնելու ու տարածելու նպատակով:

Այդ նպատակն իրականացնելու համար Կնյազ Մկրտչյանը փորձել է տեղադրել գրամեքենան Հովհաննես Աղաբաբյանի, Աշոտ Մուսախանյանի եւ Վաչագան Հայրապետյանի սենյակներում, որտեղ նրանք բնակվել են վարձով, սակայն վերջին երեքը չեն համաձայնվել, քանի որ վախեցել են տան տիրոջից, որը նախկինում եղել է միլի - ցիայի մարմինների աշխատակից:

Դրանից հետո Կնյազ Մկրտչյանը Ռուսլան Ջատիկյանի միջոցով փոխադրել է գրամեքենան Սարատակ գյուղ իրենց տուն, որտեղ էլ այն մնացել է անսարք վիճակում մինչեւ Կնյազ Մկրտչյանի ձերբակալվելը:

Իմանալով Կնյազ մկրտչյանի ձերբակալվելու մասին Ռուսլան Ջատիկյանը եւ Հրաչ - յա Թորոսյանը խմբի գործունեության հետքերը կորցնելու նպատակով վերցրել են գրամեքենան, տարել են գյուղից դուրս եւ գցել են փոքրիկ լճակի մեջ, որտեղ հետագայում քննության ընթացքում հայտնաբերվել են այդ գրամեքենայի մասերը (հ.4 գթ. 76-78):

1979թ. ամառը ամբ-ներ Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ Մկրտչյանը ամբ. Վարդան Հարությունյանի միջոցով Երեւան քաղաքում մտել են հանցավոր կապի մեջ այսպես կոչված «հայ ազգային միություն» (ՀԱՄ) գաղտնի հակասովետական ազգայնական խմբի անդամներ Սմբատ Մելքոնյանի եւ Սուրեն Հակոբյանի հետ բանակցություններ են վարել գաղտնի խմբերը միավորելու ու համատեղ հակասովետական գործունեություն տանելու նպատակով: Սակայն երկու խմբերի միավորումը տեղի չի

ունեցել ծրագրային հարցերում տարաձայնություններ առաջանալու պատճառով:

Ամբ. Կնյազ Մկչտչյանը ձեռնարկել է միջոցներ խմբի համար զենք ձեռք բերելու եւ այն Սովետական իշխանության մարմինների դեմ օգտագործելու նպատակով:

Զենք ձեռք բերելու հնարավորություն նա տվել է Սողոմոն Պողոսյանի խմբին, ոմն Վահագն անունով անձնավորության միջոցով հանձնարարել է Վարդան Հարությունյանին սովետական բանակում ծառայելու ժամանակ ձեռք բերել զենք եւ, բացի այդ անձամբ ինքը Սամվել Եղիազարյանի հետ փորձել է պատրաստել ինքնաշեն ատրճանակ խաղալիք ատրճանակից, սակայն այդ բանը նրան չի հաջողվել:

1979թ. մայիս ամսից խմբի անդամները սիստեմատիկաբար կազմակերպել են հավաքույթներ, որտեղ քննարկել են խմբի հանցավոր գործունեության հետ կապված հարցեր հավաքված անդամավճարներով գրամեքենա ձեռք բերելու հակասովետական նյութեր բազմացնելու ու տարածելու համար, Սովետական իշխանության մարմինների դեմ օգտագործելու նպատակով զենք գնելու, խումբը նոր անդամներ ընդգրկելու միջոցով ընդլայնելու եւ այլն:

1980թ. ապրիլին Կնյազ Մկրտչյանը գաղտնի խմբի հավաքած անդամավճարներից տվել է 35 ռ. դրամ Սմբատ Մելքոնյանին սեւ գույնի կտոր ձեռք բերելու, դրոշակներ պատրաստելու եւ որպես սգո նշան Երեւան քաղաքի փողոցներում ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը կախելու նպատակով, նրա հանձնարարությամբ խմբի անդամներ Հովհաննես Աղաբաբյանը, Աշոտ Մուսախանյանը եւ Վաչագան Հայրապետյանը գնված կտորից պատրաստել են 38 հատ դրոշակ, սակայն Կնյազ Մկրտչյանը վախենալով ձերբակալվելուց վերջին պահին արգելել է դրոշակները կախել, այդպիսիք մնացել են տանը եւ առգրավվել են խուզարկության ժամանակ (հ. 4 գք. 223-227):

Խմբի գործունեության ընթացքում ամբաստանյալները տարածել են միմիանց մեջ հակասովետական նյութեր, որոնց մի մասը պատրաստել են իրենք, իսկ մյուս մասը ձեռք են բերել տարբեր աղբյուրներից:

1979թ. Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ Մկրտչյանը գրել եւ տարածել են գաղտնի խմբի անդամների մեջ հակասովետական ազգայնական բովանդակությամբ հոդվածներ, որոնք սկսվում են «ազգային ազատագրական եւ հայրենասիրական շարժման շարքերը», «Ազգային ազատագրական կազմակերպությունների անվտանգության կանոնները» բառերով եւ այլ հոդվածներ, որոնք պարունակում են Սովետական պետական եւ հասարակական կարգի, ՍՄԿԿ ու Սովետական կառավարության քաղաքականությունը արատավորող զրպարտչական հերյուրանքներ: Այդ հոդվածներում պնդում են, որ ՍՍՀՄ-ում իբր գոյություն ունի ազգային ազատագրական շարժում, սովետական պետությունը ղեկավարվում է «հակամարդկային օրենքներով», «վարում է դեսպոտիզմի եւ մտրակի» քաղաքականություն, կոչ են անում հայ ժողովրդին պայքարել ազատության եւ անկախության համար (հ.5 գք. 58-59, 77-79 , հ. 6 գք. 114-115,198):

Մնալով իր թշնամական հակասովետական դիրքերին, ամբ. Մարզպետ Հարությունյանը կալանավորվելուց հետո քննչական մեկուսարանում 1980թ. նոյեմբերին պատրաստել և տարածելու նպատակով պահել է հակասովետական, ազգայնական բովանդակությամբ հոդված, որը սկսվում է «երբ բոլշեւիկները գլուխ բարձրացրին» բառերով, որում զրպատչորեն հաստատվում է, որ բոլշեւիկները իբր հենց սկզբից վաճառել են հայ ժողովրդի շահերը, Սովետական միությունում իբր գոյություն ունի «կոմունիստական բռնապետություն» չկա ազատություն, հայ ժողովուրդը իբր ենթարկվում է հետապնդման (հ.5 գք. 100-101, հ. 6 գք.200):

Ամբ. Կնյազ Մկրտչյանը պատրաստել, պահել եւ գաղտնի խմբի մեջ տարածել է հա -

կասովետական ազգայնական բովանդակություն ունեցող ստեղծագործություններ «Ավ. Իսահակյանի նամակները ուղղված Դ կառավարության լիդեր Պարոն նավասարդյանին», «ծիծեռնակաբերդում», «Մայրենի լեզու», «խորդ անուններ», «Չսպիացած վերք», «Որը կմնա», «Ավ. Ահարոնյանի նամակները ուղղված Չիչերինին», «Ազգային իրավունք» եւ այլն:

Թվարկված ստեղծագործությունները բովանդակում են չարամիտ մեղադրանքներ Սովետական պետության եւ հասարակական կարգի, ՍՄԿԿ եւ սովետական պետության քաղաքականության դեմ, պնդելով, որ իբր բոլշեւիկները «վաճառել են ազգային շահը», օգնել են հայ ժողովրդի թշնամիներին եւ «սկսած 1918թ-ից հանդիսացել են հայերի գերեզմանոցը» (h. 5 գբ. 59-62, h. 6 գբ. 197):

Կնյազ Մկրտչյանը ամբ. Հովհաննես Աղաբաբյանի միջոցով ստացել է Սմբատ Մելքոնյանից «Իմպերիալիզմ» վերնագրով հակասովետական ազգայնական բովանդակություն ունեցող հոդված եւ ծանոթացել է դրա հետ: Նշված հոդվածում թույլ է տրվում թշնամական կշտամբանքներ ՍՄԿԿ-ի ներքին, արտաքին եւ ազգային քաղաքականության նկատմամբ, գովաբանվում է կապիտալիստական կարգերը, իսկ սոցիալիստական հեղափոխությունը համարվում է քրեական հանցագործություն (h. 5 գբ. 12-19, 20-22):

Կնյազ Մկրտչյանը ծանոթացրել է խմբի անդամներին «Ազգային Իրավունք» կոչվող հոդվածի հետ, որը պնդում է, որ Ռուսաստանը բռնապետություն է, իրագործում է ազգերի ռուսացման, իսկ դժվար դեպքերում ուղղակի բնաջնջման քաղաքականություն, Հայաստանը հայտարարվում է Ռուսաստանի գաղութ, սոցիալաիզմը՝ վերադարձ դեպի ստրկություն (h.5 գբ. 24-30, h. 6 գբ. 31-62):

Ամբաստանյալ Վարդան Հարությունյանը 1979-80թթ. պատրաստել եւ պահել է տարածելու նպատակով հակասովետական ազգայնական բովանդակության բանաստեղծություններ, որոնք սկսում են «հայ կոմունիստներին», «իմ աստվածներին», «հիշատակ», «Արդարություն ես երազում, ով մարդ», «Պատգամ իմ ընկերներին», «ես նորից կգամ», «բանաստեղծություն ուղղված «դաշնակցության գաղափարախոսության կրախը» գրքի հեղինակին», «մորթեցիք, մորթեցիք դուք», «Ես կգամ հեթանոս երգերով», «հավատացեք իմ երդմանը, ընկերներ», «եղել է եղեռն ու կռիվ», «հաճախ է սիրտս գոռում ու գոչում», «ինչու դու, հայ ժողովուրդ», «ռուսները տիրեցին մեզ», «ահա ովքեր են մեր եղբայրները», «կանաչ սարերի այն» բառերով, որոնցով պայքարի կոչ է արնում Սովետական իշխանության դեմ, «Անկախության» համար պայքարելու, գուվաբանում է ազգայնական գաղափարախոսությունը, Հիտլերին եւ Մուսոլինիին, համարելով նրանց աստվածներ, իսկ ֆաշիստական գերմանիայի հարձակումը Միության վրա արդարացի եւ ուղղված «աշխարհի չարիքի» դեմ, պնդում է, որ հայ կոմունիստները իբր վաճառել են Հայաստանը թուրքերին, սոցիալիստական հասարակարգում իբր գործում են «կեղծ օրենքներ» (h.5 գբ. 90-94, h.6 գբ. 201-202):

Բացի այդ ամբ. Վարդան Հարությունյանը արտագրել է «Ազգային ազատագրական կազմակերպությունների անվտանգության կանոնները» վերնագրով հակասովետական բովանդակությամբ վեց հոդվածներ համախոհների մեջ տարածելու նպատակով (h. 6 գբ. 198):

Ամբ. Սամվել Եղիազարյանը 1979թ. պատրաստել եւ տվել է Աշոտ Մուսախանյանին «ՀԵՄ» գաղտնի խմբի անդամների մեջ տարածելու նպատակով հակասովետական ազգայնական բովանդակության հոդված, վերնագրված «Մարքսիզմ-Լենինիզմի տեսությունները եւ ընդհանուր նպատակները» (h. 5 գբ. 51-58, h6. Գբ. 83-143):

Այդ հոդվածում բովանդակում են թշնամական հարձակումներ մարքս-լենինյան տե-

սության նկատմամբ, այն համարելով ուտոպիա, որը նպատակ ունի ստրկացնել փոքր ազգերին, գովաբանում է կապիտալիստական ապրելակերպը, չարամտորեն պարսավելով սովետական իրականությունը, Սովետական Ռուսաստանը զրպարտչորեն ներկայացվում է որպես «միջազգային դահիճ»:

Ամբ. Սամվել Եղիազարյանը կալանավորվելուց հետո, մնալով իր հակասովետական հայացքներին, 1980թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին քննչական մեկուսարանում պատրաստել եւ տարածելու նպատակով պահել է հակասովետական ազգայնական բովանդակության հոդվածներ, որոնք սկսվում են «Ազգի ոգին մի անգամ», «Շիրազ ունենք բիբլիական», «15թ. մեծ եղեռն», «Հայոց քաջեր եւ դուք սիրով», «Մարտական է քարոզը մուհամեդի», «եթե դու հարուստ ես քո լեզվով», «Եւ մեր հեթանոս նախնիները», «Սպիտակ լռություն» բառերով:

Այդ հոդվածները պարունակում են հակասովետական զրպարտչական հերյուրանքներ, իբր ՍՍՀՄ-ում բացակայում է դեմոկրատիա, ազգերի ազատություն եւ հավասարություն, հայ ժողովրդի շահերը ոտնահարվում են, ազգը զրկված է ինքնուրյունությունից, դատապարտված է տարալուծման եւ օգտագործվում է ռուսների կողմից իրենց շահերի համար (հ.5 գք. 85-89, հ 6 գք.199):

Ամբ. Հովհաննես Աղաբաբյանը 1979թ. Երեւան քաղաքում պատրաստել եւ տարածել է Աշոտ Մուսախանյանի եւ Վաչագան Հայրապետյանի միջոցով հակասովետական ազգայնական բովանդակության բանաստեղծություններ, որոնք սկսվում են «Գորովակով երկիր հայոց», «կռացել է հարվածների տակ», «բազում սմբակների տակ», «Պատգամավոր դարձած» բառերով եւ որոնք պարունակում են Հայաստանի «անկախության» համար պայքարի կոչ ու զրպարտչական դրույթներ ռուսների կողմից իբր ստրկացնելու ու հարստահարելու մասին (հ. 5 գք. 61-62. հ. 6 գք. 162-163):

1979թ. ամռանը Հովհաննես Աղաբաբյանը հանցավոր կապի մեջ է մտել մյուս գաղտնի հակասովետական այսպես կոչված «հայ ազգային միություն» խմբի ղեկավար Սմբատ Մելքոնյանի հետ, վերջինիցս ստացել է «իմպերալիզմ» վերնագրով հակասովետական ազգայնական բովանդակության մեքենագրված հոդվածը եւ տարածել է այն, հանձնելով Կնյազ Մկրտչյանին ու գործով վկա Գարեգին Աղաբաբյանին:

1979թ. վերջին եւ 1980թ. սկզբներին Հովհաննես Աղաբաբյանը ստացել է Կնյազ Մկրտչյանից «Ավ. Ահարոնյանի նամակը ուղղված Չիչերինին» եւ «Ազգային իրավունք» վերնագրով հակասովետական բովանդակության հոդվածները: Դրանցից առաջինը Հովհաննես Աղաբաբյանը հանձնել է վկա Աշոտ Մուսախանյանին բազմացնելու եւ տարածելու համար, իսկ երկրորդը պահել է իր մոտ տարածելու նպատակով:

1980թ. մարտ ամսին Հովհաննես Աղաբաբյանը ամբ. Կնյազ Մկրտչյանի հետ միասին ՀՍՍՀ Արթիկի շրջանի Սարատակ գյուղում «ՀԵՄ» գաղտնի խմբի մեջ է ներգրավել գյուղի չորս բնակիչներ Սողոմոն Պողոսյանին, Ռուսլան Զատիկյանին, Հրաչյա Թորոսյանին եւ Ռոմիկ Մանուկյանին, ընդունել է նրանցից երդում, ծանոթացրել է խմբի կանոնադրությանը եւ «Ազգային իրավունք» հոդվածի հետ:

Ամբ. Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ Մկրըչյանը նախաքննության ընթացքում եւ դատական նիստում ընդունել են, որ ունենալով հակասովետական ազգայնական հայցքներ, ստեղծել են «Հայ երիտասարդների միություն» կոչվող խումբ, մշակել են խմբի կանոնադրությունը, ծրագիրը եւ երդման տեքստը, նպատակադրվելով հակասովետական ագիտացիայի միջոցով պայքարել հայկական հողերի վերամիավորման համար, անջատել հայկական հանրապետությունը ՍՍՀՄ կազմից, ստեղծել «անկախ հայաստան» ինքնուրյուն պետություն դաշնակցական կուսակցության ղեկավարութ-

յամբ, առանց կոմունիստական կուսակցության մասնակցության:

Ընդունել են, որ երկուսով միասին ներգրավել են խմբի մեջ Հովհաննես Աղաբաբյանին եւ Գեւորգ Սարգսյանին, վերջինիս հետագայում հեռացրել են խմբից անկարգության պատճառով: Ընդունեցին, որ խումբն անմիջապես ղեկավարել է Կնյազ Մկրտչյանը, իսկ Մարզպետ Հարությունյանը կատարել է խորհրդատուի եւ ընդհանուր ղեկավարի դեր:

Կնյազ Մկրտչյանն ընդունեց, որ դրանից հետո 1979թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ընդգրկել է խմբի մեջ Վարդան Հարությունյանին ու Սամվել Եղիազարյանին, իսկ 1980թ. փետրվար-մարտ ամիսներին Հովհաննես Աղաբաբյանի հետ Արթիկի շրջանի Սարատակ գյուղի բնակիչներ Սողոմոն Պողոսյանին, Ռուսլան Զատիկյանին, Հրաչյա Թորոսյանին եւ Ռոմիկ Մանուկյանին:

Երկուսն էլ ընդունեցին, որ զբաղվել են հակասովետական ագիտացիայով ու պրոպագանդայով, պատրաստել եւ տարածել են խմբի անդամների մեջ դատավճռի ֆաբուլայում թվարկված հակասովետական նյութերը:

Կնյազ Մկրտչյանն ընդունեց նաեւ, ու հակասովետական նյութեր բազմացնելու նպատակով Երեւան քաղաքում ձեռք է բերել գրամեքենա եւ Սողոմոն Պողոսյանի միջոցով ուղարկել է Սարատակ գյուղ, սակայն մեքենան չեն հասցրել վերանորոգել եւ այդ պատճառով նյութեր չեն տպագրել:

Երկուսն էլ հայտարարեցին, որ ոգով համոզված հակասովետական անձնավորություններ են, գտնում են, որ իրենց պայքարը սովետական կարգերի դեմ բնական է ու արդարացի, այդ պատճառով մեղավոր չեն ճանաչում ու չեն զղջում: (արձ. 51-67, 67-92, հ. 2 գթ. 112-119, 198-200):

Ամբ. Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ Մկրտչյանը դատական նիստում մեղադրանքից չընդունեցին միայն զենք ձեռք բերելու ցանկությունը: Պատճառաբանեցին, որ նպատակ չեն ունեցել եւ զենք ձեռք բերելու միջոցներ չեն ձեռնարկել, իսկ Կնյազ Մկրտչյանը պատճառաբանեց, որ որոշ խոսակցություն այդ մասին ունեցել են կատակի ձեւով, բացի այդ, նման թեմայի շուրջ խոսել է միայն ծանրակշիռ տպավորություն թողվելու նպատակով:

Մարզպետ Հարությունյանի եւ Կնյազ Մկրտչյանի այս առարկությունները անհիմն են եւ հերքված են հետեւյալ ապացույցներով՝

Ամբ. Վարդան Հարությունյանը մի շարք ցուցմունքներում հայտնել է որ «անկախ հայաստան» ստեղծելու համար խմբի ծրագիրը նախատեսել է երկու ուղի՝ խաղաղ, այսինքն հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա, եւ ռազմական ուղի, որի համար անհրաժեշտ է եղել ձեռք բերել զենք:

1979թ. աշնանը, երբ իրեն զորակոչում էին սովետական բանակ, ինքը ցանկացել է խուսափել ծառայությունից եւ այդ մասին հայտնել խմբի ղեկավար Կնյազ Մկրտչյանին:

Վերջինս որոշոկի պատասխան չի տվել, նույն օրը ծանոթացրել է իրեն ոմն Վահագ անունով անձնավորության հետ, ներկայացնելով նրան որպես «Հեմ»-ի ղեկավարներից մեկին: Վահագն ամբ. Մկրտչյանի ներկայությամբ առաջարկել է չխուսափել ծառայությունից, մեկնել սովետական բանակ եւ հնարավորության դեպքում ձեռք բերել զենք Սովետական իշխանության եւ նրա մարմինների դեմ օգտագործելու համար:

Չնայած բանակ մեկնելուց առաջ Վահագն իրեն ասել է, որ բանակում պետք չէ զենք ձեռք բերել, քանի որ վտանգավոր է, այնուամենայնիվ ինքը համարել է, որ ստացել է զենք ձեռք բերելու հանձնարարություն, սակայն բանակում համոզվել է, որ դա կապված է լուրջ վտանգի հետ եւ նամակով հայտնել է Մարզպետ Հարությունյանին, որ

հանձնարարությունը դժվար է կատարել, բայց եթե պատասխան նամակում գրեն, որ հարկավոր է կատարել, ապա ինքը կկատարի: (հ.6 գթ. 264):

Հարցաքննության ժամանակ Վարդան Հարությունյանը բացատրել է, որ նամակի այդ տողերը վերաբերում են զենք ձեռք բերելուն (հ. 1 գթ. 167-170, 171-174, 225-228, 236-238, 250-254):

Ամբ. Հովհաննես Աղաբաբյանը ցուցմունք է տվել, որ Կնյազ Մկրտչյանը խմբի անդամներին հայտնել է, որ հարկավոր է զենք ձեռք բերել ինքնապաշտպանության համար, իսկ անհրաժեշտության դեպքում օգտագործել ՊԱԿ-ի աշխատակիցների դեմ: Կնյազ Մկրտչյանն ասել է նաեւ, որ հավաքած անդամավճարներից կվճարվի 60-70 ռուբլի յուրաքանչյուր--------:

Ամբ. Սամվել Եղիազարյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ «ՀԵՄ» խմբի հավաքույթների ժամանակ 4 անգամ քննարկվել է զենք ձեռք բերելու հարցը եւ որոշվել է անդամավճարներից հավաքված գումարով գնել զենք: Բացի այդ, ինքն ու Կնյազ Մկրտչյանը փորձել են խաղալիք ատրճանակից պատրաստել իսկական ատրճանակ: Այդ նպատակով Կնյազ Մկրտչյանը պատրաստել է ատրճանակի երկու թմբուկ (բարաբան) խաղալիք ատրճանակի վրա հարմարացնելու համար:

Նշված երկու թմբուկները եւ խաղալիք ատրճանակը հայտնաբերվել են խուզարկության ժամանակ: (հ. 4 գթ. 229-231):

Դատական նիստում Սամվել Եղիազարյանն ընդունեց, որ իրոք ինքը եւ Կնյազ Մկրտչյանը ցանկացել են խաղալիք ատրճանակից պատրաստել իսկական ատրճանակ, սակայն այդ բանը իրենց չի հաջողվել: (արձ. 38-50):

Վկաներ Մուսախանյանը եւ Հայրապետյանը նույնպես հաստատել են, որ խմբի հավաքույթներին Կնյազ Մկրտչյանը առաջ է քաշել զենք ձեռք բերելու անհրաժեշտության հարցը: Այդ հարցը քննարկվել է եւ բոլորը համաձայնել են Կնյազ Մկրտչյանի հետ:

Վկաներ Սողոմոն Պողոսյանը, Ռուսլան Զատիկյանը, Հրաչյա Թորոսյանը եւ Ռոմիկ Մանուկյանը նախաքննության ընթացքում հաստատել են, որ Սարատակ գյուղում գաղտնի խումբ կազմակերպելուց հետո Կնյազ Մկրտչյանը հանձնարարել է իրենց գնել խմբի համար 5-6 հատ ատրճանակ, խոստացել է դրամ բերել այդ նպատակի համար եւ ատրճանակներից մեկը թողնել իրենց: Մի քանի օր անց Կնյազ Մկրտչյանը նորից է եկել Սարատակ գյուղ, բերել է դրամ ատրճանակներ գնելու համար, սակայն իմանալով, որ իրենք ատրճանակներ չեն ճարել, հայտնել է դժգոհություն եւ նախատել է:

Դատական նիստում նշված վկաները հաստատեցին իրենց նախաքննության ցուցմունքները այն տարբերությամբ, որ Սողոմոն Պողոսյանը հայտարարեց, որ իբր չի հիշում ով է հանձնարարել զենք ձեռք բերել՝ Կնյազ Մկրտչյանը, թե Հովհաննես Աղաբաբյանը, իսկ Զտիկյանը եւ Թորոսյանը ցուցմունք տվեցին, որ Պողոսյանն է իրենց ասել, ու Կնյազ Մկրտչյանը հանձնարարել է զենք ձեռք բերել «ՀԵՄ» խմբի համար, եւ հաջորդ անգամ գալով Սարատակ այդ նպատակի համար դրամ է բերել: (արձ. 92-105, 105-112, 112-119):

Այն հանգամանքը, որ Կնյազ Մկրտչյանը ցանկություն է ունեցել «ՀԵՄ» խմբի համար զենք ձեռք բերել հաստատեց նաեւ վկա Սմբատ Մելքոնյանը: (արձ. 115-158, հ. 3 գթ. 50-51):

Ամբաստանյալներ Վարդան Հարությունյանը եւ Սամվել Եղիազարյանը նույնպես ընդունեցին, որ ունեցել են եւ այժմ էլ ունեն հակասովետական ազգայնական հայացքներ: Այդ հողի վրա Վարդան Հարությունյանը 26 կոմիսարների այգում ծանոթացել է Մարզպետ Հարությունյանի ու Կնյազ Մկրտչյանի հետ, իսկ Սամվել Եղիազարյանը

Կնյազ Մկրտչյանի հետ, զրույցների ընթացքում մտերմացել եւ համաձայնել են գաղտնի «ՀԵՄ» խումբ ստեղծելու նրանց առաջարկության հետ: Ծանոթացել են «ՀԵՄ» խմբի կանոնադրության ու ծրագրի հետ, տվել են իրենց հավանությունը, ընդունել են երդում եւ մասնակցել են խմբի հավաքույթներին ու գործունեությանը: Բացատրեցին, որ իրոք գրել են հակասովետական բովանդակության բանաստեղծություններ տարածելու նպատակով, խմբի անդամների մեջ տարածել են վերը թվարկված հակասովետական նյութերը, պնդեցին, որ իրենց գործունեությունը, որի նպատակն է Հայկական հանրապետությունը ՍՍՀՄ-ի կազմից դուրս բերել, հայկական հողերը միավորել եւ դաշնակցության կուսակցության ղեկավարությամբ «անկախ Հայաստան» ինքնուրյուն պետությոն ստեղծել իրավացի է եւ այդ պատճառով իրենց մեղավոր չեն ճանաչում եւ կատարածի համար չեն զղջում, համոզմունքները փոխելու մտադրություն չունեն: (արձ. 19-38, 33-51)

Ամբ. Հոհաննես Աղաբաբյանը առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչեց, ընդունեց, որ ունեցել է հակասովետական ազգայնական հայացքներ, ընդգրկվել է «ՀԵՄ» խմբի մեջ, ընդունել է երդում եւ որպես խմբի անդամ կատարել է դատավճռում նկարագրված հակասովետական գործողությունները: Ինչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ դատական նիստերում ընդունել է, որ սխալվել է, կատարվածի համար զղջում է: Բացի այդ, նա օժանդակել է հանցագործության բացահատելուն:

Բացի շարադրվածից ամբաստանյալների մեղքը հաստատված է հետեւյալ ապացույցներով՝

Վկաներ Սարգսյանը, Մուսախանյանը եւ Հայրապետյանը ցուցմունք են տվել, որ «ՀԵՄ» խմբի մեջ իրենց ներգրավել են Մարզպետ Հարությունյանը եւ Կնյազ Մկրտչյանը: Նրանք բացատրել են, որ խմբի նպատակն է միավորել հայկական հողերը, անջատել Հայաստանը ՍՍՀՄ-ի կազմից, ստեղծել «անկախ հայաստան»: Իրենք մասնակցել են խմբի հավաքույթներին, քննարկել են խմբի գործունեության հարցերը, ծանոթացել են ՊԱԿ-ի վերաբերյալ հոդվածների, Ավ. Ահարոնյանի Չիչերինին ուղղված նամակի եւ այլ հակասովետական նյութերի հետ:

Վկաներ Պողոսյանը, Զատիկյանը, Թորոսյանը եւ Մանուկյանը բացատրել են, որ «ՀԵՄ» գաղտնի խմբի մեջ ընդունվելու իրենց տրամադրել է Կնյազ Մկրտչյանը, իսկ մի քանի օր հետո՝ 1980թ. մարտ ամսին նա Հովհաննես Աղաբաբյանի հետ միասին եկել են Սարատակ գյուղ եւ ընդգրկել են իրենց խմբի մեջ:

Այդ օրը ծանոթացրել են իրենց «ՀԵՄ»-ի կանոնադրության ու ծրագրի հետ, իրենք ընդունել են երդում, որից հետո ծանոթացել են «Ազգային իրավունք» եւ ՊԱԿ-ի գործունեության մասին հոդվածների հետ, Կնյազ Մկրտչյանից ստացել եւ բերել են գյուղ գրամեքենա նյութեր տպագրելու համար, ստացել են հանձնարարություն ձեռք բերել զենք եւ այլն:

Վկաներ Սմբատ Մելքոնյանը եւ Սուրեն Հակոբյանը հաստատեցին, որ իրենք ստեղծել են «Հայ ազգային միություն» կոչվող հակասովետական խումբը, Վարդան Հարությունյանի միջոցով կապ են հաստատել «ՀԵՄ» խմբի ղեկավար Մարզպետ Հարությունյանի ու Կնյազ Մկրտչյանի հետ ունեցել են նրանց հետ մի քանի հանդիպումներ եւ բանակցություններ են վարել այդ երկու խմբերը միավորելու ու համատեղ գործելու համար, ծանոթացել են մեկը մյուսի ծրագրի հետ, սակայն ծրագրային հարցերում եղած տարաձայնությունների պատճառով խմբերի միավորում տեղի չի ունեցել:

Մելքոնյանը հաստատեց, որ «Իմպերիալիզմ» հոդվածը տպագրված վիճակում

տվել է Հովհաննես Աղաբաբյանին տարածելու համար:

Վկաներ Ժ-ն, Ի-ն բացատրեցին, Մարզպետ Հարությունյանը աշխատանքի վայրում եւ շրջապատում արտահայտում էր դժգոհություն Սովետական իշխանությունից եւ զրպարտչական հայտարարություններ էր անում կոմունիստների նկատմամբ, սովետական արտաքին ու ներքին քաղաքականության վերաբերյալ, «կոչ էր անում պայքարել Հայաստանի «Անկախության» համար»:

Այսպիսով դատական կոլեգիան համարում է, որ ամբաստանյալները կատարել են հանցանք, որը նախատեսված է ՀՍՍՀ քր օր-ի 65 հ. 1-ին մասով եւ 67 հոդվածով:

Ամբ. Հովհաննես Աղաբաբյանին մեղադրանք է առաջադրվել նաեւ ՀՍՍՀ քր օրի 213 հ. 1-ին մասով այն բանի համար, որ նա 1976-78թթ.ծառայելով սովետական բանակում իր վաշտի հրամանատար լեյտենանտ Ռենարդ Ենիկեեւի առաջարկությամբ կեղծել է ուրիշ զինծառայողին պատկանող վարորդական իրավունքի վկայականը եւ դրան կից նախազգուշական կտրոնը, դարձնելով այդ փաստաթղթերը Ռ. Ենիկեեւի անունով ու տվել է նրան օգտագործելու համար:

Դատական կոլեգիան գտնում է, որ այս մեղադրանքում Հովհաննես Աղաբաբյանին պետք է արդարացնել հետեւյալ պատճառներով՝

Նախ արարքը սխալ է որոկվել ՀՍՍՀ քր. օրի 213 հ. 1-ին մասով, քանի որ այն կատարվել է Ղազախական ՍՍՀ տերիտորիայում, հետեւաբար այն կարող էր որակվել միայն Ղազախական քր. օրի 177-178 հոդվածներով:

Արարքը գնահատելիս հաշվի չի առնվել, որ Հովհաննես Աղաբաբյանը լինելով շարքային զինվոր եւ կախյալ վիճակում փաստորեն կատարել է իր հրամանատարի կարգադրությունը:

Բացի այդ, մեղադրական եզրակացությունում ճիշտ չի նշվել, որ կեղծված վարորդական իրավունքի վկայականն օգտագործվել է Ռ. Ենիկեեւի կողմից:

Գործում այդպիսի տվյալներ չկան, իսկ Ռ Ենիկեեւը իր ցուցմունքում հայտնել է, որ այդ վկայականը չի օգտագործել: (հ. 4, գթ. 131-132):

Այս պայմաններում Հ. Աղաբաբյանի կողմից վարորդական իրավունքի վկայական կեղծելը ձեւականորեն պարունակում է Ղազախական ՍՍՀ քր. օրի 177-178 հ.հ. հատ - կանիշներ, սակայն իր նվազ կարեւորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում եւ հետեւաբար հանցագործություն չի համարվում:

Պատիժ նշանակելիս դատական կոլեգիան հաշվի է առնում յուրաքանչյուր ամբաստանյալի մեղքի աստիճանը եւ այն, որ հանցագործությունը կատարվել է կազմակերպված խմբի կողմից, նրանցից Մարզպետ Հարությունյանը 1978թ. նախազգուշացվել է պետական անվտանգության կոմիտեի կողմից, սակայն չի դադարեցրել իր թշնամական գործունեությունը:

Հովհաննես Աղաբաբյանը անկեղծորեն զղջացել է կատարածի համար, օժանդակել է հանցագործության բացահայտելուն:

Դատական նիստի վերջին օրը ամբ. Վարդան Հարությունյանը գրավոր դիմում ներկայացրեց եւ հայտարարեց, որ իր սխալը հասկացել է եւ կատարածի համար զղջում է:

Ղեկավարվելով ՀՍՍՀ քր. դատ. օրի 293-294 հոդվածներով, դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալներ Մարզպետ Հարությունի Հարությունյանին, Կնյազ Մկրտիչի Մկրտչյանին, Վարդան Լյուդվիկի Հարությունյանին, Սամվել Էլիբեկի Եղիազարյանին եւ Հովհաննես Ռաֆայելի Աղաբաբյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օրի 65 հոդ. 1-ին մասով եւ քր. օրի 67 հոդվածով, քր. օրի 65 հոդ. 1-ին մասի սանկցիայով նրանց դատապարտել՝

1. Մարզպետ Հարությունի Հարությունյանին ազատազրկման 7 (յոթ) տարի ժամանակով եւ աքսորի 5 տարի ժամանակով: Նկատի ունենալով, որ Մարզպետ Հարությունյանը Երեւան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի ժողդատարանի 1980թ. օգոստոսի 1-ի դատավճռով քր. օրի 229 հոդ 3-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամանակով (հ. 5 գբ. 5), քր . օրի 37 հ. 3-րդ մասի համակցությամբ կլանման սկզբունքով վերջին հաշվով թողնել կրելու ազատազրկում 7 (յոթ) տարի ժամանակով եւ աքսոր 5 (հինգ) տարի ժամանակով:

Պատիժը պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1980թ. հունիսի 1-ից:

2. Կնյազ Մկրտիչի Մկրտչյանին ազատազրկման 7 (յոթ) տարի ժամանակով եւ աքսորի 5 (հինգ) տարի ժամանակով: Նկատի ունենալով, որ Կնյազ Մկրտչյանը Երեւան քաղաքի Շահումյանի շրջժողդատարանի 3/7-80թ. դատավճռով քր. օր. 207[1] հ. 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամանակով, քր. օր. 37հ. 3-րդ մասի համակցությամբ կլանման սկզբունքով վերջին հաշվով թողնել կրելու ազատազրկում 7 (յոթ) տարի ժամանակով եւ աքսոր 5 (հինգ) տարի ժամանակով:

Պատիժը պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1980թ. մայիսի 21-ից:

3. Վարդան Լյուդվիկի Հարությունյանին ազատազրկման 5 (հինգ) տարի ժամանակով եւ աքսորի 3 (երեք) տարի ժամանակով:

Պարիժը պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Պատժի սկիզբը հաշվել 1980թ. հունիսի 6-ից:

4. Սամվել Էլիբեկի Եղիազարյանին ազատազրկման 4 (չորս) տարի ժամանակով, առանց աքսորի: Նկատի ունենալով, որ Ս. Եղիազարյանը Երեւան քաղաքի Շահումյանի շրջ. 21/11-80թ. դատավճռով քր. օր. 222հ. 1-ին մասով դատապարտվել է ազատազրկման 1 տարի ժամանակով (հ.5 գբ. 7-8), քր. օր 37 հ. 3-րդ մասի համակցությամբ կլանման սկզբունքով վերջին հաշվով թողնել կրելու ազատազրկում 4 (չորս) տարի ժամանակով առանց աքսորի:

Պատիժը պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1980թ մայիսի 20-ից:

5. Հովհաննես Ռաֆայելի Աղաբաբյանին ազատազրկման 3 (երեք) տարի ժամանակով, առանց աքսորի:

Պատիժը պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1980թ մայիսի 21-ից:

Հովհաննես Ռաֆայելի Աղաբաբյանին առաջադրված ՀՍՍՀ քր. օրի 213 հ. 1-ին մասով նույն քր. օրի 7-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա արդարացնել հանցակազմի բացակայության պատճառով:

Գործով իրեղեն ապացույցներ՝ երկու մետաղյա թմբուկները, սեւ գույնի գործվածքից 38 հատ դրոշակները, քանդված խաղալիք ատրճանակը եւ «Մոսկվա» Մակնիշի

գրամեքենայի մասերը ոչնչացնել, 14,5մ. սեւ գույնի գործվածքը հանձնել առեւտրի կազմակերպությանը վաճառքի, իսկ գրավոր հոդվածները եւ բանաստեղծությունները, որոնք գտնվում են գործի 6 եւ 7-րդ հատորներում, թողնել գործում:

Դատավճիռը կարող է գանգատարկվել կամ բողոքարկվել հսկողական կարգով:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ**
ԺՈՂԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ՝ **ստորագրություններ**
Իսկականի հետ ճիշտ է՝
ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

28/5-81թ.
Թ. Ս.

Փարոս - 4

1974 թվականին ստացած իրենց պատժաչափերը մինչեւ վերջ չկրելով՝ **Ազատ Արշակյանն ու Աշոտ Նավասարդյանը** վաղակետ ազատ էին արձակվել: Նավասարդյանն ազատ էր արձակվել 1976-ի դեկտեմբերին, Արշակյանը՝ 1977-ի ապրիլին: 1981 թ. փետրվարին պետք է ավարտվեր այդ նույն 1974-ին Արշակյանի եւ Նավասարդյանի հետ դատապարտված, նրանց ընկեր ու համախոհ Պարույր Հայրիկյանի ազատազրկման ժամկետը, եւ սկսվեր աքսորի շրջանը: Սակայն, պատժաչափի ավարտից ամիսներ առաջ՝ 1980-ին նրան նոր՝ մտացածին, այս անգամ արդեն քրեական հոդվածով մեղադրանք են առաջադրում: ՊԱԿ-ը վճռել էր, որ Պարույր Հայրիկյանն ազատ չի արձակվելու: Ազատ Արշակյանը եւ Աշոտ Նավասարդյանը որոշում են, որ չեն կարող մնալ ազատության մեջ, եթե իրենց ընկերոջն սպառնում են նոր դատապարտում ու նոր պատժաչափ, եւ դեռ անհայտ է, թե դրան ինչ է հաջորդելու: Նրանք հրատարակում են ԱՄԿ պաշտոնաթերթ «Փարոս»-ի հերթական՝ 4-րդ համարը, բայց ի տարբերություն նախորդ թերթերի ու թռուցիկների՝ այս համարի տակ ստորագրում են: Թերթի ողջ խմբաքանակը տարածելուց հետո՝ մեկ օրինակ ձեռքներին, Արշակյանը եւ Նավասարդյանը գնում են գլխավոր դատախազություն եւ հայտարարում, որ թերթը պատրաստել ու տարածել են իրենք:

Այս արարքի համար 1981 թ. սեպտեմբերի 18-ին հրապարակված դատավճռով Աշոտ Նավասարդյանը եւ Ազատ Արշակյանը ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 2-րդ մասով եւ 67 հոդվածով դատապարտվեցին 8-ական տարի ազատազրկման եւ 3 տարի աքսորի: Սահմանված պատժի առաջին երեք տարին նրանք պետք է կրեին բանտային ռեժիմով, իսկ մնացածը՝ հատուկ ռեժիմի գաղութում: Միաժամանակ, դատարանը նրանց ճանաչեց առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստներ: Աշոտ Նավասարդյանն ու Ազատ Արշակյանը միակ հայ քաղբանտարկյալներն են, որ առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստներ են ճանաչվել: Նրանք ազատ արձակվեցին 1987-ին՝ գորբաչովյան պերեստրոյկայի արդյունքում:

Ազատ Արշակյան



Աշոտ Նավասարդյան



«Փարոս»-4-ի առաջին էջը



«Փարոս»-4-ի վերջին էջը

Աշոտ Նավասարդյանի
եւ Ազատ Արշակյանի գործով կայացված դատավճիռը

Դատավճիռն ամբողջական է, որովհետեւ այն արտատպում ենք ոչ թե ԱԱԾ-ից ստացված, այլ Ազատ Արշակյանի անձնական արխիվում եղած օրինակից:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1981թվի սեպտեմբերի 18-ին Երեւան քաղաքում

նախագահությամբ՝	**Ս. Գեւորգյանի**
ատենակալներ՝	**1. Է. Ալեքսանդրյանի**
	2. Մ. Առաքելյանի
քարտուղարությամբ՝	**Ն. Գալստյանի**
մասնակցությամբ	**պետական մեղադրող**
դատախազ՝	**Գ. Ղամարյան**

Քննության առնելով դատական դռնաբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Աշոտ Ցոլակի Նավասարդյանի, ծնվել է 1950թ. Երեւան քաղաքում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուսնացած, խնամքին երկու փոքրահասակ երեխաներ, ունի միջնակարգ կրթություն, անկուսակցական, դատված առաջին անգամ 1970թ. քր. օր. 65 հոդ. 1 մասով, 67 հոդվածով երկու տարվա ազատազրկման, պատիժը կրել է, երկրորդ անգամ դատապարտվել է 1974թ. օգոստոսին ՀՍՍՀ քր. օր. 65 հոդ. 1 մասով, 67 հոդ. յոթ տարվա ազատազրկման երկու տարի ժամանակով արտաքսման, 1976թ դեկտեմբերին վաղաժամկետ ազատվել է կալանքից, 1977թ աշխատել է Երեւանի պիտակ-փաթերների կոմբինատում էլեկտրիկ, բնակվել է Երեւան, Օրջոնոկիձեի պողոտա 302- բն 6, առաջադրված մեղադրանքում իրեն հանցավոր չճանաչեց, 1981թ. փետրվարի 25-ից գտնվում է կալանքի տակ ՀՍՍՀ քր. օր. 65 հոդ. 2-րդ մասով եւ 67 հոդվածով:

Ազատ Լեւիկի Արշակյանի, ծնվել է 1950թ. Երեւանում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուսնացած, խնամքին մեկ փոքրահասակ երեխա, ունի միջնակարգ կրթություն, անկուսակցական, դատված 1974թ. հոկտեմբերին ՀՍՍՀ քր. օր. 65 հոդ. 1-ին մասով, 67 հոդվածով յոթ տարվա ազատազրկման, երեք տարի ժամանակով աքսորով, վաղաժամկետ ազատվել է կալանքից 1977թ. ապրիլին, ներկա գործով 1981թ փետրվարի 25-ից գտնվում է կալանքի տակ, մինչեւ կալանավորվելը աշխատել է «Հայառտրանսի» նո2 ավտոձեռնարկությունում վարորդ, բնակվել է Երեւան, Ն. Շենգավիթ 1-ն փողոց. նո. 47 առաջադրված մեղադրանքում իրեն հանցավոր չճանաչեց, ՀՍՍՀ քր. օր. 65 հոդ. 2-րդ մասով եւ 67 հոդվածով:

Դատաքննությամբ, հարցաքննված վկաների ցուցմունքներով, գործին կցված իրեղեն ապացույցներով եւ դրանց վերաբերյալ կազմված փաստաթղթերով Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան գտավ ապացուցված, որ նախկինում հակասովետական ագիտացիայի եւ պրոպոգանդայի, հակասովետական

կազմակերպչական գործունեության համար դատապարտված ամբաստանյալներ Աշոտ Ցոլակի Նավասարդյանը եւ Ազատ Լեւիկի Արշակյանը վաղակետ ազատվելով կալանքից, սակայն հավատարիմ մնալով իրենց նախկին համոզմունքներին շարունակել են ծավալել հակասովետական, հակապետական գործունեություն, այդ նպատակով մղելով սովետական պետական եւ հասարակական կարգը քայքայող ագիտացիա եւ պրոպոգանդա:

1974թ. մինչեւ կալանավորվելն ու դատապարտվելը, սկսած դեռեւս 1973թ ամբաստնյալներ Ա. Նավասարդյանը, Ա. Արշակյանը, իրենց համախոհ Պ. Հայրիկյանի հետ որոշել են վերանայել «Ազգային միացյալ կուսակցության» ծրագիրն ու կանոնադրությունը եւ նրանում պաշտպանելով նախորդ ծրագրի իդեական հիմքը, մշակել նորը: Դրանից հետո նրանք համատեղ նախաձեռնել են այդ աշխատանքը, սակայն կալանավորվելու պատճառով չեն ավարտել:

1974թ. գտնվելով կալանքի տակ եւ գաղտնի կապ հաստատելով միմիանց հետ, ամբաստանյալներ՝ Պ. Հայրիկյանի համագործությամբ մշակել են «Ազգայի միացյալ կուսակցության (ԱՄԿ) ծրագիր, կանոնադրություն եւ պարագայք, Երեւան -1974թ» վերնագիրն ունեցող հակասովետական փաստաթուղթը եւ 1974թ. նոյեմբերին ուղարկել կալանավայրից դուրս Անդրանիկ Մարգարյանին:

Ինչպես հայտնի է գործով այդ փաստաթուղթը թշնամական հարցակումներ է պարունակում ՍՄԿԿ եւ սովետական պետության հասցեին, զրպարտչական պնդումներ, որ ՍՍՀՄ-ում հայ ազգի նկատմամբ կիրառվում են «բռնություններ», «սպիտակ ջարդ», «ցեղասպանություն» եւ կոչ՝ Հայաստանը անկախ պետություն դարձնելու ճանապարհով ազատագրելու մասին:

1977 թ. գտնվելով ազատության մեջ, ամբաստանյալ Ա. Արշակյանը Երեւանում չբացահայտված անձից վերցրել եւ տարածելու նպատակով արտագրել է «ԱՄԿ-ի ծրագիր եւ կանոնադրություն» հակասովետական զրպարտչական փաստաթուղթը որ կազմվել է հետեւյալ վերնագրով «Հայաստանի անկախության կազմակերպության ազգային միացյալ կուսակցությունը իր գոյության տասնամյա տարեդարձի կապակցությամբ, Երեւան 1976թ.»

Ըստ Ա. Արշակյանի ցուցմունքի, այդ տեքստին ծանոթացել է նաեւ Ա. Նավասարդյանը, որ իր հերթին հետագայում, 1980թ. գարնանը արտագրել է այն եւ բնագիրը նորից վերադարձրել:

Այսպիսով կանխորեն լավ ծանոթ լինելով հակասովետական այդ փաստաթղթի նոր տարբերակին աննշան կրճատումներից հետո, պահպանելով նրանում բովանդակված հակասովետական, հակապետական գաղափարները, ամբաստանյալներ՝ Ա. Նավասարդյանն ու Ա.Արշակյանը սկսած 1980թ նոյեմբերից ձեռնարկել են նրա զանգվածային տարածումը այդ նպատակով պատրաստելով «Փարոս-4 Ազգային միցյալ կուսակցության պաշտոնաթերթ»-ը:

Փաստաթուղթը պատրաստելուց հետո Ա. Նավասարդյանն ու Ա. Արշակյանը իրենց միջոցներով ձեռք են բերել «Մոսկվա» մակնիշի գործով իրեղեն ապացույց գրամեքենան եւ մեծ քանակությամբ բազմացնելով այն, 1981թ. փետրվարին տարածել են Երեւան քաղաքում Ամիրյան, Տերյան, Դեմիրճյան, Բարեկամություն, Կոմիտաս, Լենինի պողոտա եւ այլ փողոցների բնակելի շենքերի բնակիչների ունեցած փոստարկղերը քցելու ճանապարհով:

Փարոս-4 ազգային միացյալ կուսակցության Երեւան քաղաքում ազգաբնակչության շրջանում տարածված պաշտոնաթերթը իր տեքստում զրպարտչական հերյուրանքներ է պարունակում այն մասին, որ սովետական պետության պայմաններում հայ

ժողովուրդը չունի քաղաքական ազատություն եւ չի կարող պաշտպանել իր ազգային շահը: Զրպարտություն սովետական պետության ազգային քաղաքականության հասցեին, ինչպես նաեւ «անկախության» համար պայքարի կոչ եւ առաջարկություն Փարոս-2 հակասովետական թռուցիկների դրույթներով ղեկավարվելու մասին:

Եթե Փարոս-4 հակասովետական թռուցիկը Փարոս-2 թռուցիկից հետո 1981թ ամբաստանյալների միջոցով պատրաստվել եւ տարածվել է Երեւանում, ապա 1978թ այն Պ. Հայրիկյանի համագործակցությամբ ուղարկվել է սովետական միության սահմաններից դուրս, որ նույն թվին լայնորեն օգտագործվել է «Ամերիկայի ձայն» «Ազատություն» «Բի-բի-սի» հակասովետական ռադիոկայանների կողմից Սովետական Միության դեմ քայքայիչ թշնամական կոմպանյա ծավալելու նպատակով: Դրանից բացի, նրա լրիվ տեքստը հրապարակվել է դաշնակցական բուրժուական կուսակցության «Ազդակ», «Ալիք», «Հայրենիք», «Արմենիա», «Սփյուռք» եւ այլ թերթերում:

Թեեւ ամբաստանյալներ՝ Ա. Նավասարդյանը եւ Ա. Արշակյանը 1974թ քր.օր 65 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, քր. օր. 67 հոդվածով դատապարտվել են համանման այլ հանցագործությունների համար, սակայն ԱՄԿ նոր ծրագրի եւ կանոնադրության մշակումը, որ նրանք սկսել են դեռեւս 1973թ եւ շարունակել, ավարտել, տարածել են մինչեւ 1981թ. փետրվարը, իր ժամանակին մնացել է անհայտ, այդ ուղղությամբ կատարված կազմակերպական ու ագիտացիոն աշխատանքի համար նրանք պատասխանատվության չեն կանչվել:

Այսպիսով, ամբաստանյալներ՝ Ա. Նավասարդյանը եւ Ա. Արշակյանը կատարել են հանցանք, որը նախատեսված է ՀՍՍՀ քր. օր 65 հոդվածի 2-րդ մասով եւ 67 հոդվածով:

Ամբաստանյալներից Ա. Նավասարդյանի կատարած հանցանքը հաստատված է նախ իր անձնական խոստովանությամբ, որ Հայաստանը ՍՍՀՄ-ից անջատելու, Սովետական իշխանությունը Հայաստանում քայքայելու, թուլացնելու ու ի վերջո տապալելու, նրա փոխարեն «ազատ», «անկախ» Հայկական պետություն ստեղծելու նպատակով Ա. Արշակյանի եւ մյուս համախոհների հետ պատրաստել, պահել եւ տարածել է թռուցիկներ, որ միաժամանակ պայքարի կոչեր են պարունակել ընդդեմ ՍՍՀՄ-ի: Նա 1978թ. ըստ իր ցուցմունքների Ա. Արշակյանից ստացել, ծանոթացել եւ վերադարձրել է, իսկ 1980թ. նորից ստացել, ըստ պայմանավորվածության արտագրել եւ տարածելու նպատակով պահել է «Հայաստանի անկախության կազմակերության ազգային միացյալ կուսակցությունը իր գոյության 10 ամյա տարեդարձի կապակցությամբ, Երեւան -1976թ.», փաստաթուղթը, որը 1978 թ. ընդդեմ Սովետական միության լայնորեն օգտագործվել է արտասահմանի կողմից: Նա այդ փաստաթղթի հիման վրա 1980թ. նոյեմբերին իր ցուցմունքների համաձայն Ա. Արշակյանի հետ պատրաստել է «Փարոս-4 Ազգային միացյալ կուսակցության պաշտոնաթերթ» վերնագրով փաստաթուղթը, որը բազմացրել է եւ 1981թ. փետրվարի 24-ին տարածել են Երեւանում:

Ա. Նավասարդյանի կատարած հանցանքը այնուհետեւ հաստատված է ամբաստանյալ Ա. Արշակյանի ցուցմունքներով, որ իր հերթին ընդունեց վերը հիշատակված հակասովետական փաստաթղթերը Ա. Նավասարդյանի մասնակցությամբ պատրաստելու, պահելու եւ տարածելու հանգամանքը:

Վերջապես ամբաստանյալ Ա. Նավասարդյանի հանցանքը հաստատված է հարցաքննված վկաների ցուցմունքներով: Նրանցից քաղ. Արուսյակ Սարգսյանը, Ժենյա Սիմոնյանը, Հռիփսիմե Կարապետյանը ամբաստանյալներին առերես պնդեցին, ու 1981թ փետիվարի 24-ին «Փարոս-4» նրանց տարածած հակասովետական թռուցիկը հանել են իրենց բնակարանի փոստարկղից եւ հանձնել պետական մարմիններին, Ա. Նավասարդյանն ու Ա. Արշակյանը ընդունեցին, որ այդ թռուցիկները տարածել են իրենք:

Ա. Նավասարդյանի հանցանքը միաժամանակ հաստատված է նրա հարազատների եւ աշխատանքային կոլեկտիվի անդամների, թվով մնացած 15 վկաների ցուցմունքներով, որոնց նա իր զայրույթն է հայտնել Պ. Հայրիկյանին ՌՍՖՍՀ-ում դատապարտելու փաստի առթիվ եւ ազատվել է աշխատանքից այդ առիթով հակասովետական գործունեություն իրականացնելու նպատակով:

Ամբաստանյալ Ա. Արշակյանի մեղադրանքը նույնպես հաստատված է անձամբ իր խոստովանությամբ, ամբաստանյալ Ա. Նավասարդյանի ցուցմունքներով, հարցաքննված վկաների ցուցմունքներով եւ գործի մյուս ապացույցներով:

Ա .Արշակյանը ի հերթին ընդունեց եւ հանգամանորեն ցուցմունք տվեց հակասովետական վերը նշված փաստաթղթերը կազմելուն, պահելուն եւ տարածելուն իր ունեցած ակտիվ մասնակցությունը: Բանն այն է, որ չթաքցնելով իրենց հակասովետական, հակապետական գործունեությունը, այդ նպատակով մղված ագիտացիան եւ պրոպոգանդան, ինչպես Ա. Արշակյանը, այնպես էլ Ա. Նավասարդյանը այն փորձում են բացատրել սովետական միության սահմանադրությամբ, որ միութենական հանրապետություններին իրենց ընտրությամբ թույլ է տալիս դուրս գալ ՍՍՀՄ կազմից անջատ հանրապետություն կազմելու իրավունքով: Այո, ճիշտ է, սովետական միության սահմանադրությամբ այդ իրավունքը իրոգ նախատեսված է, սակայն այն նախատեսված է ոչ թե Ա. Նավասարդյանի, ա. Արշակյանի, նրանց մի խումբ համախոհների կամ արտասահմանյան բարեկամների համար, այլ միայն միութենական հանրապետության համար որպես այդպիսին, այսինքն որպես սովետական սոցիալիստական հանրապետություն, հաղթանակած բանվոր դասակարգի եւ աշխատավոր գյուղացիության ղեկավարությամբ:

Ամբաստանյալներին պատիժ նշանակելիս կոլեգիան հաշվի առավ նրանց նախկին դատվածությունը, այլեւ ներկա վարքագիծը, որ չեն ցանկանում կանգնել ճիշտ ճանապարհի վրա, չեն ուզում հրաժարվել իրենց սխալ համոզմունքներից:

Կոլեգիան միաժամանակ գտավ, որ քր. օր. 25[1] հոդվածի 1-ն կետի համաձայն ամբաստանյալներ՝ Ա. Նավասարդյանին եւ Ա. Արշակյանին պետք է ճանաչել առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ:

Շարադրված հանգամանքների հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օր 293-294 հոդ. հոդ. քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Աշոտ Ցոլակի Նավասարդյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր.օր. 65 հոդվածի 2-րդ մասով եւ 67 հոդվածով եւ ենթարկել ազատազրկման 8 ութ տարի ժամանակով եւ աքսորով 3 երեք տարի ժամանակով: Նրան միաժամանակ ճանաչելով առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ, սահմանված պատժի առաջին երեք տարին թողնել կրելու բանտային ռեժիմով, իսկ մնացած մասը հատուկ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1981թ. փետրվարի 25-ից:

Ազատ Լեւիկի Արշակյանին ճանաչել հանցավոր ՀՍՍՀ քր. օր 65 հոդվածի 2-րդ մասով, 67 հոդվածով եւ ենթարկել ազատազրկման 8 ութ տարի ժամանակով, 3 երեք տարի ժամանակով աքսորով: Նրան ճանաչելով առանձնապես վտանգավոր պետական ռեցիդիվիստ, սահմանված պատժի առաջին երեք տարին թողնել կրելու բանտային ռեժիմով, իսկ մնացած մասը հատուկ ռեժիմի ուղղիչ-աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1981թվի փետրվարի 25-ից:

Գյունաշյան Շիրակի երկրորդ՝ շինծու դատարարությունը

Շիրակ Գյունաշյանի նկատմամբ կայացված երկրորդ դատավճիռը կարող է խորհրդային տարիների «արդարադատության» ցցուն նմուշ լինել: Այստեղ Գյունաշյանի մեղքի ապացուցման փորձ անգամ չի արվել: Իրականում նրան դատապարտել են ոչ թե խուզարկությամբ Գյունաշյանի բնակարանում հայտնաբերված, դեռեւս 1975 թվականին գրված հոդվածի, այլ՝ Շիրակ Գյունաշյանի ծավալած գործունեության համար: 1969-ին առաջին անգամ չորս տարի ազատազրկման դատապարտվելուց հետո նա ազատ էր արձակվել 1972-ին: Ազատ արձակվելուց հետո ոչ միայն չէր կտրել իր կապերը հայ այլախոհների հետ, այլեւ այլախոհական շրջանակներից դուրս նույնպես՝ չէր թաքցնում իր հայացքներն ու ազատորեն արտահայտում էր դրանք: Գյունաշյանի գործունեության հետ կապված, ՊԱԿ-ն իր ունեցած օպերատիվ տեղեկությունները ոչ մի կերպ չէր կարող տեղավորել նրա նկատմամբ կայացվող նոր դատավճռի հիմքում եւ դատապարտել 65 հոդվածի 2-րդ մասով, այդ պատճառով էլ նախընտրում են 206[1] հոդվածը (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը):

1982 թ. փետրվարին Շիրակ Գյունաշյանը կալանավորվում է, իսկ մայիսին՝ քրեական օրենսգրքի 206[1] հոդվածով դատապարտվում երեք տարի ազատազրկման, որը պետք է կրեր խիստ ռեժիմի կալանավայրում: Պատիժը կրել է Հայաստանում: Ազատ է արձակվել 1985-ին:



Շիրակ Գյունաշյան

Շիրակ Գյունաշյանի գործով կայացված դատավճիռը

Դատավճիռն ամբողջական է, ստացել ենք Դատական դեպարտամենտի արխիվից: Տեքստը եղել է ձեռագիր վիճակում:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1982 թվի մայիսի 5-ին քաղ. Երեւան

Նախագահությամբ՝	**Ալ. Թումանյանի**
Ատենակալներ՝	**1. Օ. Աղաբեկյանի**
	2. Վ. Ղուկասյանի
Քարտուղարությամբ՝	**Գ. Մնացականյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Գ. Ղամարյանի**
Պաշտպան՝	**Թ. Բաղասյանի**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի Շիրակ Պավելի Գյունաշյանի, ծնված 1939թվականին Ախուրյանի շրջանի Հայկավան գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին մեկ երեխա, անկուսակցական, դատված 1969 թվականին Հայկական ՍՍՀ քր. օրի 65 հոդ. 1-ին մասով եւ 67 հոդվածով ազատազրկման չորս տարի ժամանակով, ֆիզիկապես առողջ, աշխատել է հայստորգետնյա մետաղպաշտպանության արտադրական միավորման Արարատի ծառայության պետ, բնակվել է Երեւան Մարգարյան փողոցի 4-րդ շենքի 22 բնակարանում: Կալանքի տակ է 1982 թ. փետրվարի 16-ից:

Դատաքննությամբ, գործի նյութերով, ամբաստանյալի եւ վկաների ցուցմունքներով, դատաձեռագրային փորձաքննության եզրակացությամբ, ամբաստանյալի բնակարանում կատարված խուզարկության առիթով կազմված արձանագրությամբ դատական կոլեգիան հաստատված համարեց հետեւյալը:

Ամբաստանյալ Շիրակ Պավելի Գյունաշյանը 1969 թվականին սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող հերյուրանքներ պարունակող թռուցիկներ տարածելու համար դատապարտվելուց եւ նշանակված պատիժը կրելուց հետո համապատասխան հետեւություն չանելով եւ լինելով ազգայնական տրամադրված, դժգոհելով կումունիստական կուսակցության եւ սովետական կառավարության կողմից տարվող քաղաքականությունից, հայ ժողովրդի դրությունը զրպարտչորեն համարելով ստրկական, 1980 թվականի վերջին սովետական պետական կարգերը արատավորող բովանդակությամբ ինը էջից բաղկացած կոչ է գրել, որտեղ նշել է, որ իբրեւ թե ռուս ազգը փոքրաթիվ ազգերի մասնավորապես հայերի նկատմամբ վարում է ռուսական շովինիզմի, ռուս ազգի հեգեմոնյայի քաղաքականություն, որ իբրեւ թե հայը հանդիսանում է ռուսի ստրուկ:

Ամբաստանյալ Գյունաշյանն իր նամակում նշել է, որ իբրեւ թե սովետական իշխանության սխալ քաղաքականության հետեւանքով Հայաստանն անվերադարձ զրկվել է Թուրքահայաստանի ինչպես նաեւ Վրացական եւ ադրբեջանական հանրապետություններում գտնվող տերիտորիաներից եւ այսօր կանգնած է կործանման եզրին (գթ 220-233):

Շիրակ Գյունաշյանին վերագրված մեղադրանքն ապացուցված է 1982 թվականի փետրվարի 9-ին նրա բնակարանում կատարված խուզարկության ընթացքում սովետական պետական եւ հասարակական կարգերն արատավորող ինը էջանոց կոչի հայտնաբերման, այդ կոչը Շիրակ Գյունաշյանի ձեռքով գրված լինելու առիթով դատաձեռագրային փորձաքննության եզրակացությամբ (գ.թ. 216-219):

Ամբաստանյալ Գյունաշյանն ընդունելով, որ սովետական պետական եւ հասարակական կարգերն արատավորող ինն էջանոց հերյուրանքներն ինքն է գրել, իրեն մեղավոր ճանաչեց այդպիսինը գրելու համար, միաժամանակ նշեց, որ այն գրել է 1975թվականին:

Դատական կոլեգիան գտնում է, որ ամբաստանյալ Գյունաշյանը նշված կոչը 1975 թվականին է վերագրում, հետապնդելով քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակ:

Իրականում Գյունաշյանն այն չէր կարող այդ թվականին գրել, քանի որ այնտեղ նա որոշակի նշել է, որ այժմ Հայաստանի արդյունաբերությունը 1913 թվականի համեմատությամբ աճել է 311 անգամ, եւ որ Հայաստանը 60 տարիների ընթացքում միշտ գերակատարել է պետական պլանները: Հետեւաբար այդ կոչը կարող էր գրվել Սովետական Հայաստանի 60 տարին լրանալիս, այն է՝ 1980 թվականի վերջում:

Բացի նշվածից, ինչպես երեւում է «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսությունը 60 տարում» գրքի 71 էջից արված քաղվածքից (գ.թ. 177), Հայաստանի արդյունաբերությունը 311 անգամ աճել է 1977 թվականին, որպիսի արդյունքը կարող էր տեղի ունենալ եւ հետեւաբար մարդկությանը հայտնի դառնալ այդ թվականից հետո, եւ ոչ թե առաջ:

Այսպիսով ամբաստանյալ Շիրակ Գյունաշյանը պատրաստել է սովետական պետական եւ հասարակական կարգերը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող երկ, որպիսի արարքը համապատասխանում է Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 206[1] հոդվածի հատկանիշներին:

Վերը շարադրվածի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օր-ի 293 եւ 294 հոդվածներով Հայկական ՍՍՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալ Շիրակ Պավելի Գյունաշյանին ճանաչել հանցավոր Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 206[1] հոդվածով եւ ենթարկել ազատազրկման երեք (3) տարի ժամանակով: Պատիժը կրելու է խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1982 թվականի փետրվարի 16-ից:

Դատավճիռը վճռաբեկության կարգով գանգատարկման եւ բողոքարկման ենթակա չէ:

Նախագահ՝ **Թումանյան**
Ատենակալներ՝

Հայաստանի հելսինկյան խումբ

Խորհրդային Միությունում առաջին Հելսինկյան խումբը ձեւավորվեց Մոսկվայում, 1976 թվականին: Այնուհետեւ հայտարարվեցին ուկրաինական, լիտվական, վրացական եւ հայկական նմանօրինակ խմբերի ստեղծման մասին: Թվարկված բոլոր հելսինկյան խմբերը ենթարկվում էին դաժան հետապնդումների ու ճնշումների: Խմբերում ներգրավված իրավապաշտպանները դատապարտվում էին երկարատեւ ազատազրկման: Հայաստանի հելսինկյան խմբի անդամներ Շահեն Հարությունյանն ու Ռոբերտ Նազարյանը կալանավորվում են 1977 թ. դեկտեմբերին, իսկ խմբի ղեկավար Էդուարդ Հարությունյանը՝ 1979-ի հուլիսին: Իրավապաշտպանների շրջանում չընդմիջվող կալանավորումներ էին ծավալվում մյուս հանրապետություններում եւս: 1981 թ. վերջին Մոսկովյան հելսինկյան խմբի անդամներից ազատության մեջ էին մնացել երեքը՝ Ելենա Բոները, Նաում Նեյմանը եւ Սոֆյա Կալիստրատովան, որի նկատմամբ արդեն քրեական գործ էր հարուցվել: Ուկրաինայում, Լիտվայում, Վրաստանում ու Հայաստանում հելսինկյան խմբերի բոլոր ակտիվ անդամներն արդեն դատապարտված էին: Վրաստանի հելսինկյան խմբի ղեկավար Զվիադ Գամսախուրդիան ԽՍՀՄ կենտրոնական հեռուստատեսությամբ հանդես էր եկել իր եւ մյուս իրավապաշտպանների գործունեության դատապարտման հրապարակային հայտարարությամբ: 1982 թ. սեպտեմբերի 6-ին, տոտալ հետապնդումներին ու բռնություններին այլեւս չկարողանալով դիմակայել, Մոսկվայի հելսինկյան խմբի դեռեւս չկալանավորված երեք անդամները հայտարարեցին խմբի գործունեության դադարեցման մասին: Այս հայտարարությունը ոչ թե սպասվող հերթական կալանավորումներից խույս տալ էր նշանակում, այլ քարոզչական խնդիր էր լուծում եւ նպատակ էր հետապնդում ցույց տալ աշխարհին, որ ԽՍՀՄ-ում անհնար է զբաղվել մարդու իրավունքների պաշտպանությամբ:

Ահա համատարած հալածանքների այս եռուն շրջանում՝ 1982 թ. հունվարին, առաջին պատժաչափն ավարտելով, կալանավայրից ազատ է արձակվում Էդուարդ Հարությունյանը եւ անմիջապես սկսում է զբաղվել Հայաստանի հելսինկյան խմբի աշխատանքների ակտիվացմամբ: Կալանավորումների նախկին ալիքից խուսափած կամ փոքր պատժաչափեր ստացած (ինչպես Սիրվարդ Ավագյանը, որը շինծու՝ 222 հոդվածով (խուլիգանություն) մեկ տարի ազատազրկման էր դատապարտվել) ու ազատ արձակված խմբի նախկին անդամներն ի մի գալով՝ կրկին ակտիվ գործունեություն են ծավալում: Հանդես են գալիս հրապարակային հայտարարություններով ու դիմումներով, ինքնահրատ գրականության տարածմամբ, հայ քաղբանտարկյալների պաշտպանությամբ:

1982 թ. նոյեմբերին կալանավորվում են Հայաստանի հելսինկյան խմբի հետ բոլոր առնչվողները: Ռաֆայել Օհանյանը եւ Սիրվարդ Ավագյանը կալանավորվում են նույն օրը՝ 1982 թ. նոյեմբերի 6-ին, իսկ Էդուարդ Հարությունյանը, Էդմոնդ Ավետյանը, Գեորգի Խոմիզուրին եւ Ռաֆայել Պապայանը՝ նոյեմբերի 10-ին: Այսպիսով, Մոսկովյան հելսինկյան խմբի գործունեության դադարեցման մասին հայտարարությունից երեք ամիս անց, վերջնականապես դադարեց գործել ԽՍՀՄ տարածքում գործող վերջին՝ Հայաստանի հելսինկյան խումբը:

Էդուարդ Հարությունյանը կալանավայրում

Էդուարդ Բագրատի Հարությունյանը 1982թ. հունվարին ազատ արձակվելով (առաջին կալանավորման ընթացքում նրա առողջությունն արդեն հիմնավորապես քայքայվել էր)՝ ազատության մեջ մնաց ընդամենը 9 ամիս: Այդ ինն ամիսների ընթացքում նա կարողացավ՝ ողջ ԽՍՀՄ-ում իրավապաշտպանների նկատմամբ ամենախիստ հետապնդումների շրջանում վերականգնել ու ակտիվացնել Հայաստանի հելսինկյան խումբը: Խորհրդային ՊԱԿ-ը նրա նկատմամբ առավելագույնս դաժան վարվեց: Քայքայված առողջությամբ Հարությունյանին երկրորդ անգամ դատապարտեցին երեք տարի ազատազրկման եւ ատիժը կրելու համար Ռուսաստան տարան: Սրանով չբավարարվելով՝ տարբեր պատրվակներով նրան էտապով կալանավայրից կալանավայր էին տեղափոխում, ինչն էլ ավելի էր քայքայում նրան: 1984-ին՝ծանր հիվանդ վիճակում բանտային հիվանդանոցից նրան կրկին կալանավայր են տեղափոխում: Նման դաժան վերաբերմունքի պատճառը կալանավայրից տարբեր ատյաններ, այդ թվում՝ Միացյալ ազգերի կազմակերպություն գրած նրա ընբոստ նամակներն էին: 1984 թ. դեկտեմբերի 5-ին ծայրաստիճան ծանր առողջական վիճակում գտնվող Հարությունյանին խորհրդային իշխանությունները ստիպված ազատ են արձակում: 12 օր անց՝ դեկտեմբերի 17-ին 58 տարեկանում նա վախճանվում է:

Ռաֆայել Օհանյանը կալանավայրում

Ռաֆայել Լյուդվիգի Օհանյանը ծնվել է 1925 թվականին, Կիրովական (Վանաձոր) քաղաքում: ՀԽՍՀ քր. օր.-ի 133-րդ հոդվածով (ընտրական իրավունքի իրականացման արգելք հանդիսանալը) 1950-ին դատապարտվել է ազատազրկման 6 տարի ժամանակով: Ազատ է արձակվել երեք տարի անց՝ 1953-ին: Նա կոմունիստական գաղափարների կրող էր: Հավատում էր, որ կոմունիստական կուսակցությունը լցված է պատեհապաշտներով, վերածվել է բյուրոկրատական կառույցի, եւ հարկավոր է զտել կուսակցությունը, վերադարձնել մարքս-լենինյան գաղափարախոսության ու ծրագրերի հարթություն: Այս կապակցությամբ գրել է դիմում-գանգատներ ԽՍՀՄ պետական մարմիններին ու կոմունիստական կուսակցական ղեկավարությանը: Իր պատկերացումների եւ իրական կյանքի միջեւ առկա հակասությունը 1970-ականներին նրան մղել է, պետական մարմիններին ու կուսակցական բարձրաստիճան պաշտոնյաներին դիմումներ գրելու փոխարեն, ավելի ակտիվ գործողությունների: 1978-79 թթ. որոշում է հեռանալ Խորհրդային Միությունից, բայց իշխանությունները թույլ չեն տալիս: Աջակցության համար 1979-ին դիմում է Հայաստանի հելսինկյան խմբին: Այդ առիթով էլ ծանոթանում է Էդուարդ Հարությունյանի հետ, ինչին հետեւում է նրա մասնակցությունը Հելսինկյան խմբի աշխատանքներին: Էդուարդ

Հարությունյանի առաջին կալանավորումից հետո ՊԱԿ-ը բավարարվում է Օհանյանին նախազգուշացում հայտարարելով: 1982-ին Հարությունյանի ազատ արձակումից հետո Օհանյանը վերսկսում է իր համագործակցությունը Հելսինկյան խմբի հետ եւ նույն թվականի նոյեմբերին կալանավորվում, իսկ 1983-ի հունիսին՝ ՀԽՍՀ քր. օր.-ի 206[1]-րդ (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) եւ 208[1]-րդ (միլիցիայի աշխատողին կամ ժողովրդական դրուժինիկին վիրավորանք հասցնելը) հոդվածներով դատապարտվում է երեք տարի ազատազրկման: 1987-ին մեկնել է ԱՄՆ մշտական բնակության, որտեղ էլ 2000 թվականին վախճանվել է: Դին տեղափոխել են Հայաստան եւ հողին հանձնել նրա ծննդավայր Վանաձորում:

Սիրվարդ Արտաշեսի Ավագյանը ծնվել է 1952-ին, Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղում: Աշխատավայրի ղեկավարությանը քննադատելու, նրանց հետ ունեցած հակասությունների պատճառով ենթարկվել է տարաբնույթ հալածանքների, ընդհուպ՝ հոգեբուժական: 1979 թվականից զբաղվել է իրավապաշտպանական գործունեությամբ, մասնակցել է Հայաստանի հելսինկյան խմբի աշխատանքներին: 1978-80 թթ. ընթացքում խմբի անդամների նկատմամբ տեղի են ունենում մի շարք դատավարություններ, դրանց թվում՝ նաեւ շինծու քրեական մեղադրանքներով: 1980-ի մարտին, ՀԽՍՀ քր. օր.-ի 222 հոդվածի 1-ին մասով (խուլիգանություն) Սիրվարդ Ավագյանին նույնպես շինծու մեղադրանք են առաջադրում ու դատապարտում մեկ տարի ազատազրկման: Ազատ արձակվելուց հետո նա շարունակում է հանդես գալ Հայաստանի հելսինկյան խմբի անունից: Խմբի ղեկավար Էդուարդ Հարությունյանի միջոցով կապեր է հաստատում խորհրդային այլ հանրապետությունների իրավապաշտպանների հետ: Մշտապես գտնվում է Պետանվտանգության մարմինների ուշադրության կենտրոնում: Հայաստանում մարդու իրավունքների եւ հայ քաղբանտարկյալների վիճակին վերաբերող փաստաթղթերը Մոսկվա տանելիս, 1982 թ. նոյեմբերին ձերբակալվում է Երեւանի երկաթգծի կայարանում: 1983-ի հունիսին դատապարտվում է երեք տարի ազատազրկման 206[1] (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) եւ 208[1] (միլիցիայի աշխատողին կամ ժողովրդական դրուժիննի - կին վիրավորանք հասցնելը) հոդվածներով: Նախաքննության եւ դատաքննության ընթացքում, ինչպես նաեւ կալանավայրում, շարունակում է հանդես գալ որպես Հայկական հելսինկյան խմբի անդամ: Ազատ արձակվելուց հետո շարունակում է զբաղվել իրավապաշտպանությամբ: 1987-ին մեկնում է ԱՄՆ մշտական բնակության: Ապրում է Բոստոնում:

Խղճի կալանավորը

(Հեղինակ՝ Էդիկ Բաղդասարյան, «Հետք», 19 մարտի 2003 թ.)

«Կարծում եմ՝ շուտով ինձ կձերբակալեն: Ընկերներիս հետ ստեղծել եմ մարդու իրավունքների պաշտպանության Հելսինկյան խումբ: ԽՍՀՄ-ում նմանատիպ խմբերի գոր - ծունեությունը օրենքից դուրս է, եւ այդ խմբերի անդամները գտնվում են ճամբարներում: Ստեղծելով այդ խումբը՝ ես իմ առաջ դրել եմ երկու խնդիր. իմ երկրում ազատության տանող առաջին քայլն անել: Այդ խնդիրը ես իրականացրել եմ: Երկրորդ՝ հասնել Լեռնային Ղարաբաղի, Նախիջեւանի ԻԽՍՀ-ի, Ախալցխայի եւ Ախալքալաքի վերամիա-

վորմանը Հայաստանին: Այս խնդիրը չիրականացվեց:

Հայտարարում եմ. ցանկացած մեղադրանք, որ կհարուցվի իմ դեմ, կեղծ կլինի, եւ ես այն չեմ ընդունում...»: Էդուարդ Հարությունյանն այս տողերը գրել է ձերբակալվելուց երկու շաբաթ առաջ:

Էդուարդ Հարությունյանը ծնվել է 1926 թ., ԼՂԻՄ-ի Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում: Ավարտել է Բաքվի ժողտնտեսության ինստիտուտը եւ աշխատանքի նշանակվել Երեւանում: 1961 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ եւ ստացել տնտեսական գիտությունների թեկնածուի կոչում: Աշխատանքի է ընդունվել Երեւանի պլանավորման եւ նորմատիվների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ: 1967 թ. նա հեռացվել է աշխատանքից: Հրամանի մեջ գրված է. «Ազատել աշխատանքից որպես հոգեկան հիվանդի»:

1972 թ. իր իրավունքները պաշտպանելու համար նա Մոսկվայում մտնում է Անգլիայի դեսպանատուն, խնդրում իրեն օգնել:Այդ քայլի համար ՊԱԿ-ի աշխատակիցները նրան տեղափոխում են հոգեբուժարան, որտեղ պահում են 22 օր: Նրան ազատում են միայն այն բանից հետո, երբ մայրը երդվում է որդուն չազատելու դեպքում իրեն ողջակիզել Կարմիր հրապարակում՝ Լենինի դամբարանի մոտ:

1976 թ. Էդուարդը Երեւանում ստեղծում է «Հելսինկյան հայկական խումբը»: Խմբում երեքն էին՝ Հարությունյան Էդուարդը, Նազարյան Ռոբերտը, Հարությունյան Շահենը, այնուհետեւ նրանց միացավ Խլղաթյան Համբարձումը: 28.12.78 թ. խմբի 4 անդամների բնակարանները խուզարկվեցին, եւ 4-ն էլ ձերբակալվեցին: Է. Հարությունյանին եւ Հ. Խլղաթյանին ազատ արձակեցին: Նրանց զգուշացրել էին, որ քաղաքից չբացակայեն:

Հարությունյան Շահենը դատապարտվեց ազատազրկման՝ երեք տարի ժամանակով, Նազարյան Ռոբերտը՝ 5 տարի ժամանակով: Խլղաթյանը արտասահման մեկնելու թույլտվություն ստացավ: Էդուարդ Հարությունյանի լուսանկարները փակցրել էին օդանավակայանում, որպեսզի նրան քաղաքից դուրս գալու դեպքում ձերբակալեն: Շուտով Մոսկվայում Է. Հարությունյանին ձերբակալեցին որպես «գող-կրկնահանցագործի»: 1980 թ. մարտի 10-ին ՀՍՍՀ Գերագույն դատարանը 206-պրիմ հոդվածով՝ 2 տարի 6 ամիս ժամանակով ազատազրկման դատապարտեց Է. Հարությունյանին: Ազատվելուց հետո նա շարունակեց իր գործունեությունը եւ մի քանի ամիս անց նորից ձերբակալվեց:

1983 թ. հունիսի 6-ին, Երեւանում դռնբաց դատական նիստում քննվեց մի քրեական գործ: ՀՍՍՀ քր. օր.-ի 206 առաջին հոդվածով մեղադրվում էին խմբի երեք անդամները՝ Է. Հարությունյանը, Ռաֆայել Օհանյանը եւ Սիրվարդ Ավագյանը: Մեջբերենք դատավճռից այն հատվածը, որի համար մեղադրվում էր Է. Հարությունյանը. «Նախաքննությամբ եւ դատաքննությամբ ձեռք բերված տվյալներով դատական կոլեգիան հիմնավորված է համարել հետեւյալը.

Ամբաստանյալ Էդուարդ Հարությունյանը դեռեւս 1976 թ. ինքնակամորեն ներկայանալով որպես գոյություն չունեցող այսպես կոչված «Հելսինկյան հայկական խմբի» նախագահ, զբաղվել է սովետական, պետական եւ հասարակական կարգերի դեմ ուղղված ակնհայտ զրպարտություն պարունակող ստեղծագործությունների հրատարակությամբ, ինչպես նաեւ տարածելու նպատակով համանման նյութեր հավաքելով տարբեր անձանցից, որի համար էլ 1980 թ.մարտին ՀՍՍՀ գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի կողմից դատապարտվել է ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամանակով: Կալանավայրից ազատվելուց հետո էլ հանրորեն օգտակար աշխատանքով զբաղվելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել, ուղղվելու փոխարեն

շարունակել է նույն հանցավոր գործողությունները, այս անգամ արդեն գործով մյուս ամբաստանյալների՝ Ռաֆայել Օհանյանի եւ Սիրվարդ Ավագյանի հետ միասին:

Ամբաստանյալ Հարությունյանը երկու օրինակից կազմված եւ «Խնդրագիր Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին» եւ «Հայ եկեղեցու դիմումը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը» վերնագրեր կրող մեքենագիր տեքստերում ներկայացել է որպես «Մարդու իրավունքների պաշտպանության սովետական կոմիտեի անդամ» եւ խնդրել Վազգեն Առաջինին դիմել «սովետական կառավարությանը բոլոր հայ քաղբանտարկյալներին կալանավայրերից եւ հոգեբուժական հիվանդանոցներից ազատելու» պահանջով:

Ամբաստանյալ Հարությունյանը, աղճատված ձեւով մեկնաբանելով ՍՍՀՄ սահմանադրությունը, գրել է, որ իբր «սովետական ժողովուրդը զուրկ է տարրական իրավունքներից», «մշտապես գտնվում է վախ ու սարսափի ազդեցության տակ սովետական կառավարության հանդեպ», որ այսպես կոչված «քաղաքական բանտարկյալները» դատապարտվում են իրենց համոզմունքների համար: Նա աղավաղված ձեւով է նկարագրել կալանավորների գոյության պայմանները:

Այնուհետեւ, առանց խղճի խայթի, նա կշտամբել է սովետական ժողովրդին եւ քրիստոնեական եկեղեցին ՊԱԿ-ի մարմինների հանդեպ տածած «սարսափի» համար:

Շարունակելով սովետական կառավարության դեմ ուղղված զրպարտանքները, ամբաստանյալ Հարությունյանը բառացիորեն գրել է. «Մենք չենք պատկերացնում, որ մեր կառավարությունը ավելի է վախենում մեզնից, քան մենք իրենից, քանի որ այն՝ աշ - խարհում գոյություն ունեցող կառավարություններից ամենավախկոտն է», որ «մեր կառավարությունը յուրացնում է այն ամենն, ինչ ընկնում է ձեռքը, հարվածը հասցնում է այն պահին, երբ զոհն ուժասպառ է»: Դրանից հետո դիմելով Վազգեն Առաջինին պահանջում է. «քաղ. բանտարկյալների» ընտանիքներին օգնություն ցույց տալ այն չափով, որը շոկի մեջ կգցի խորհրդային կառավարությանը:

Ամբաստանյալ Էդուարդ Հարությունյանը 1982 թ. ընթացքում կազմել է 71 թերթանոց անվերնագիր ձեռագիր տեքստ, որի մի մասը տարածելու նպատակով բազմացրել է 4 օրինակից: Նշված տեքստը նույնպես պարունակում է խորհրդային պետական եւ հասարակական կարգը պախարակող բամբասանքներ: Բացահայտ թշնամանք ցուցաբերելով խորհրդային հասարակարգի նկատմամբ՝ փորձել է վարկաբեկել խորհրդային պետության ներքին եւ արտաքին քաղաքականությունը, գրել, թե «խորհրդային պետությունը տնտեսական կործանման եզրին է, խորհրդային մարդկանց կենսամակարդակը ավելի ու ավելի է ընկնում, քանզի խորհրդային կառավարությունը չի մտածում ժողովրդի շահերի մասին, այլ միայն խոստումներ է սփռում, որոնք չի կատարում»: Նույն տեքստում գրել է, որ «ժողովուրդն այս ամենը հասկանում է, սակայն բանտից երկյուղած՝ լռում է»:

Այնուհետեւ, շարունակելով վարկաբեկել խորհրդային ժողովրդին, գրել է, որ «խորհրդային մարդիկ հանրային սեփականության հափշտակումը գողություն չեն համարում եւ գողանում են ինչ որ հնարավոր է գողանալ», «սոցիալիզմի օրոք հարբեցողությունը չարիք չի համարվում, քանի որ խորհրդային մարդիկ խմում են ինքնամոռացության նպատակով, զրկված լինելով բոլոր քաղաքական, տնտեսական եւ սոցիալական իրավունքներից»: Ամբաստանյալ Հարությունյանը թշնամանք եւ բամ - բասանք է տարածել նաեւ խորհրդային պետության արտաքին քաղաքականության վերաբերյալ՝ հայտարարելով, որ «ԽՍՀՄ-ը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իրագործել է տարածքային բռնազավթումներ, մասնավորապես Լատվիա-

յի, Էստոնիայի, Մոլդավիայի նկատմամբ», «օկուպացրել է Չեխոսլովակիան, Լաոսը, Կամպուչիան, ճնշել ապստամբությունները Լեհաստանում եւ Հունգարիայում»:

Ամբաստանյալ Հարությունյանը առաջ է քաշել անհիմն մեղադրանքներ խորհրդային պետության կողմից կիրառվող «ազգային խտրականության վերաբերյալ՝ պնդելով, որ իբր «խորհրդային կառավարությունը վերացրել է Կալմիկական, Չեչենո-Ինգուշական ինքնավար հանրապետություններ, ինչպես նաեւ մի շարք այլ ինքնավար սոցիալիստական հանրապետություններ, որոնց տարածքներից վտարելով բնիկ ժողովուրդներին, դրանք բնակեցրել է ռուս գյուղացիներով»:

Ամբաստանյալ Հարությունյանը զրպարտության եւ հերյուրանքների գագաթնակետին հասնելով՝ հայտարարել է, որ արդարության համար մարտնչող մարդիկ հետապնդվում են կուսակցական մարմինների կողմից: Հարությունյանի հանցանքը հիմնավորված է իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերի ուսումնասիրության արձանագրությամբ: Դատաձեռագրային փորձաքննությամբ եւ գործով ձեռք բերված այլ տվյալներով: Այսպիսով՝ դատական կոլեգիան ապացուցված է համարում, որ ամբաստանյալներ Է. Հարությունյանը, Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը գրել եւ տարածել են Խորհրդային Միությանը զրպարտող եւ պախարակող դիմումներ, բողոքներ, ձեռագրեր, մեքենագիր տեքստեր եւ այլ փաստաթղթեր: Պատիժ սահմանելիս դատական կոլեգիան հաշվի է առնում հանցագործության հանրային վտանգավորությունը, հանցագործների անձը, այն, որ երեքն էլ նախկինում դատված են եղել եւ բացառապես բացասական են բնութագրվում: ՀԽՍՀ գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան վճռեց՝ ամբաստանյալ Էդուարդ Բագրատի Հարությունյանին մեղավոր ճանաչել ՀԽՍՀ քր. օր.-ի 206-ի առաջին հոդվածով եւ դատապարտել նրան ազատազրկման երեք տարի ժամանակով, որը նա պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ-աշխատանքային գաղութում»:

Երկրի «առաջավոր» քրեական ճամբարներով սկսվեց Էդուարդ Հարությունյանի «շրջագայությունը»: Էտապների, մեկուսարանների անտանելի պայմանները լրիվ քայքայեցին նրա առողջությունը: Նա հիվանդացավ քաղցկեղով: Դեռեւս Հայաստանում, ՊԱԿ-ի մեկուսարանում, ԽՍՀՄ ՆԳՄ-ին տեղեկացրեց, որ «ով իրեն՝ ծանր հիվանդին, էտապով ուղարկի Սիբիր, նա ինքն իրեն կկնքի որպես պրոֆեսիոնալ մարդասպան...»:

Բժիշկներն արդեն գիտեին, որ Էդուարդը դատապարտված է մահվան: Վիրահատությունը ոչինչ չտվեց: Արդեն ուշ էր, մահաբեր հիվանդությունը տարածվել էր օրգանիզմում: Ըստ գործող օրենսդրության՝ հիվանդանոցում պարտավոր էին միջնորդել եւ ազատել կալանքից: Բայց արվեց հակառակը. մահամերձ վիճակում գտնվող Հարությունյանին, որպես պատիժ, հիվանդանոցից ուղարկեցին ճամբար: Առիթն այն էր, որ նա պահանջել էր իրեն թույլ տալ օգնության համար դիմել ՄԱԿ-ին: Իմանալով, որ բանտարկյալին օրերի կյանք է մնացել, ազատ են արձակում: 1984 թ. դեկտեմբերի 5-ին, ազատվելուց 12 օր հետո, Երեւանում՝ 58 տարեկան հասակում վախճանվեց Էդուարդ Հարությունյանը: Աճյունը, իր խնդրանքի համաձայն, հողին հանձնվեց Թալիշ գյուղում: Ֆրանսիայի հասարակայնությունը իր հաշվին տապանաքար դրեց՝ «Արտասահմանյան բարեկամներից» մակագրությամբ: Սակայն, նրա գերեզմանն իսկ պղծվեց իշխանությունների կողմից: Երկու շաբաթ անց իշխանությունները ստիպեցին հանել տապանաքարը, ջարդեցին այն եւ հուշարձանի վրայից ջնջվեց «բազմաչարչար» բառը: Միակ մարդը, որը մինչեւ վերջին պահը չլքեց Էդուարդին՝ քույրն էր՝ Սիլվան: Ահա մի քանի պատառիկ քրոջը գրած նրա նամակներից:

«Սիրելի Սիլվա, շատ վատ եմ զգում, հարցրու բժշկին, թե ինչ պետք է անել, որպես -

զի ես այստեղ չմեռնեմ, տուն վերադառնամ եւ մեռնեմ իմ պապի տանը՝ Թալիշում...»:

«Թանկագին Սիլվա, քույրս, տար ինձ այստեղից: Դիակս տանելը հազարներ կնստի: Մերոնց այս մասին ոչինչ մի ասա... Գիտեմ, թե ինչու հանձնաժողովի անդամները չեն ուզում ինձ «բաց թողնել», որպեսզի բուժվելու ոչ մի հնարավորություն չլինի... Սարսափելի ցավեր ունեմ, ցավում է ստամոքսս, ոսկորներս... խոսել անգամ չեմ ուզում...»:

«Բարեւ, թանկագին Սիլվա: Նամակս գրում եմ թմրադեղ սրսկվելուց հետո: Դրա ազդեցության տակ «աշխատում եմ» 45 րոպեից ոչ ավել, որովհետեւ գլուխս այդ ժամանակ է միայն աշխատում, թմրամոլների լեզվով ասած՝ այդ ժամանակ ես գտնվում եմ «կայֆի տակ»:

Այս նամակները գրվել են 1984 թ., մահվանից մեկ-երկու ամիս առաջ: Իսկ իշխանություններին ուղղված վերջին նամակը հետեւյալն էր.

«ԽՍՀՄ Գերագույն խորհրդին

...Ես երբեք դավաճան չեմ եղել եւ չեմ լինի: Ես երբեք ժողովրդի թշնամին չեմ եղել եւ չեմ լինի: Ես սիրում եմ հայրենիքս: Ես չեմ աշխատել ոչ միայն «Ռեյգանի վրա», այլեւ՝ ոչ մեկի...Այո, ես Հայկական հելսինկյան խմբի հիմնադիրն եմ եւ անդամը: Այո, ես ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների համար պայքարողներից մեկն եմ: Ես իմ երկրում միայն մարդու իրավունքներն եմ պաշտպանում: Եվ ոչ մեկին իրավունք չի տրված՝ ինձ վիրավորելու...12.9.84 թ.»:

Հայաստանի հելսինկյան խմբի գործով կայացված դատավճիռը

Դատավճիռն ստացել ենք Դատական դեպարտամենտի արխիվից, ձեռագիր վիճակում:

գործ N 10

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

1983թ. հունիսի 6-ին Երեւանում

Նախագահությամբ՝	**Հր. Կարապետյանի**
Ատենակալներ՝	**1. Հ. Հովհաննիսյանի**
	2. Օ. Աղաբեկյանի
Քարտուղարությամբ՝	**Կ. Մելքոնյանի**
Մասնակցությամբ	**պետական մեղադրող**
Դատախազ՝	**Գ. Պիվազյանի**
Թարգմանիչ՝	**Վ. Վերմիշյան**

Քննության առնելով դատական դռնբաց նիստում քրեական գործն ըստ մեղադրանքի՝

1. Հարությունյան Էդուարդ Բագրատի, ծնվել է 1926թվականին Ադրբ. ՍՍՀ Մարդակերտի շրջանի Թալիշ գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, չամուսնացած, բարձրագույն կրթությամբ, չաշխատող, դատված՝ 1980թ. մարտի 10-ին ՀՍՍՀ Գերագույն դատարանի կողմից քր. օր 206[1] հոդվածով ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամանակով, պատիժը կրելուց ազատվել է 1982թվականի հունվարի 13-ին, մշտական բնակավայրը՝ Երեւան Հ. Ներսիսյանի 1 բնակ. 5, կալանքի տակ է 1982թվականի նոյեմբերի 10-ից:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր-ի 206[1] հոդվածով:

2. Օհանյան Ռաֆայել Լյուդվիգի, ծնվել է 1925 թվականին Կիրովական քաղաքում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, չի աշխատել, դատված՝ 1950 թ. Երեւան քաղաքի Սպանդարյան շրջ. Ժող դատարանի կողմից քր. օր-ի 133 հոդ. ազատազրկման 6 տարի ժամանակով, պատիժը կրելուց ազատվել է 1953թ.հունվարի 24-ին, դատվածությունը մարված, մշտական բնակավայր՝ Կիրովական Զաքարյան 6 բնակ. 12, կալանքի տակ է 1982թվականի նոյեմբերի 6-ից:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր 206[1] եւ 208[1] հոդվածներով:

3. Ավագյան Սիրվարդ Արտաշեսի, ծնվել է 1952թ Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղում, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, միջնակարգ կրթությամբ, չամուսնացած, չի աշխատել, դատված 1980թվականի մարտի 10-ին Երեւան քաղաքի Սպանդարյան շրջ. քր. օրի 222 հոդ 1-ին մասով ազատազրկման մեկ տարի ժամանակով, պատիժը կրելուց ազատվել է 1981թվականի մարտի 10-ին, մշտական բնակավայրը՝ Եղեգնաձորի շրջ. Մալիշկա գյուղ, կալանքի տակ է 1982թ. նոյեմբերի 6-ից:

Մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր. 206[1] եւ 208[1] հոդվածներով:

Նախաքննությամբ եւ դատավարությամբ ձեռք բերված ապացույցներով, դատական կոլեգիան ապացուցված է համարում հետեւյալը.

Ամբաստանյալ Էդուարդ Բագրատի Հարությունյանը դեռեւս 1976 թվականից, ինքնագլուխ հանդես գալով գոյություն չունեցող այսպես կոչված Հայկական Հելսինկյան խմբի ղեկավար, զբաղվել է սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող երկեր պատրաստելով, ինչպես նաեւ այլ անձանցից այդպիսի նյութեր ձեռք բերելով ու տարածելով, որի համար ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի կողմից 1980 թվականի մարտ ամսին դատապարտվել է ազատազրկման երկու տարի վեց ամիս ժամանակով: Պատիժը կրելուց հետո նա որեւէ քայլ չի արել հանրօգուտ աշխատանքով զբաղվելու եւ ուղղման ճանապարհն ընտրելու, այլ շարունակել է նույն հանցագործությունը, այս անգամ գործով մյուս ամբաստանյալներ Ռաֆայել Լյուդվիգի Օհանյանի եւ Սիրվարդ Արտաշեսի Ավագյանի համագործակցությամբ:

Ամբաստանյալ Էդուարդ Հարությունյանը «ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն առաջինին» ուղղված խնդրանքը եւ «Հայկական եկեղեցու դիմումը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը» վերնագրով երկու տարբերակներից ռուսերեն լեզվով մեքենագրված տեքստում, որպիսին պատրաստել է ինքը, հանդես է եկել իբրեւ «մարդու իրավունքների պաշտպանող սովետական կոմիտեի ներկայացուցիչ» եւ խնդրել է Վազգեն առաջինին, դիմել սովետական կառավարությանը «կալանավայրերից եւ հո-

գեբուժական հիվանդանոցներից բաց թողնելու բոլոր քաղաքական հայ բանտարկյալներին»:

Ամբաստանյալ Հարությունյանը խեղաթյուրված ձեւով մեկնաբանելով ՍՍՀՄ Սահմանադրությունը գրել է որ իբր «Սովետական ժողովուրդը իրավազուրկ է, միշտ սարսափի ու վախի մեջ, սովետական կառավարությունից» որ այսպես կոչված «քաղաքական բանտարկյալները» դատապարտվում են միայն իրենց քաղաքական համոզմունքների համար: Նա դատապարտվածներին պահելու պայմանները ներկայացրել է շուռ տված ձեւով:

Այնուհետեւ առանց խղճի խայթի, սովետական ժողովրդին եւ քրիստոնեական եկեղեցուն նախատել է սովետական կառավարությունից եւ հատկապես ՊԱԿ մարմիններից «վախենալու» հարցում:

Ամբաստանյալ Հարությունյանը շարունակելով զրպարտիչ հայտարարությունները սովետական կառավարության հասցեին բառացիորեն գրել է «մենք չենք պատկերացնում, որ մեր կառավարությունը ավելի շատ է վախենում մեզանից, քանի որ ամենավախկոտ կառավարությունն է աշխարհում», որ «մեր կառավարությունը խլում է այն ինչ վատ է դրված, խլում է այն ժամանակ, երբ զոհը անզոր է»:

Դրանից հետո դիմելով Վազգեն առաջինին պահանջում է օգնություն ցույց տալ «քաղաքական բանտարկյալների» ընտանիքներին, այնքան մեծ գումարով, որ շոկային վիճակ առաջանա սովետական կառավարության մոտ»:

Ամբաստանյալ Էդուարդ Հարությունյանը 1982թ. ընթացքում պատրաստել է 71 թերթից առանց վերնագրի ձեռագիր տեքստ, որի մի մասը տպագրել է չորս օրինակից, տարածելու նպատակով նշված տեքստը նույնպես իր մեջ պարունակում է սովետկան պետությանը եւ կառավարությանը արատավորող բազմաթիվ հերյուրանքներ: Բացահայտ թշնամական վերաբերմունք դրսեւորելով սովետական կարգերի նկատմամբ, փորձել է արատավորել սովետական պետության ներքին եւ արտաքին քաղաքականությունը, տեքստի մեջ գրելով որ «սովետական պետությունը կանգնած է վերջնական կործանման եզրին, որ ժողովրդի կենսամակարդակը գնալով ընկնում է, քանի որ սովետական կառավարությունը չի մտածում իր ժողովրդի մասին, միայն խոստումներ է բաժանում, որոնք չեն կատարվում»:

Նույն տեքստում զրպարտիչ կարգով գրել է, որ իբր ժողովուրդը այդ ամենը հասկանում է, սակայն բանտարկվելուց վախենալու պատճառով լռում է»: Այնուհետեւ շարունակելով վարկաբեկիչ արտահայտությունները սովետական ժողովրդի նկատմամբ գրել է, որ իբր «սովետական մարդիկ հանրային սեփականության թալանելը գողություն չեն համարում եւ գողանում են ինչ կարող են», որ սոցիալիզմի օրոք հարբեցողությունը չարիք չի համարվում, սովետական մարդը խմում է որպեսզի մոռացվի, քանի որ բացարձակապես զրկված է քաղաքական, տնտեսական, սոցիալական իրավունքներից»:

Ամբաստանյալ Հարությունյանը զրպարտչական հերյուրանքներ դրսեւորելով նաեւ սովետական պետության արտաքին քաղաքականության նկատմամբ հայտարարում է, որ «ՍՍՀՄ-ը համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ կատարել է տերիտորյալ նվաճումներ, մատնանշելով Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Մոլդովիան, որ օկուպացրել է Չեխոսլովակիան, Լաոսը, Կամպուչիան եւ ճնշել ապստամբությունը Լեհաստանում եւ Հունգարիայում»:

Ամբաստանյալ Է. Հարությունյանը անհիմն մեղադրանք է բարդել սովետական պետության հասցեին «ազգային անհավասարություն» կիրառելու հարցում, պնդելով որ իբր «սովետական կառավարությունը վերացրել է Կալմիկիան, Չեչենո-ինգուշական ու

մի շարք այլ սովետական սոցիալիստական ավտոնոմ հանրապետությունների պետականությունը, նրանց ժողովրդին վտարելով այդ տեղից, տեղը բնակեցնելով ռուս գյուղացիների: Հոդվածի վերջում զրպարտանքներ թափելով սովետական պետության հասցեին «հակասովետական քաղաքականություն տանելու, մարդկանց իրավունքները ոտնահարելու, սովետական քաղաքացիներին իրենց համոզմունքների համար հալածելու հարցում» որպես օրինակ մատնանշելով քրոջը՝ Սիլվա Հարությունյանին եւ իր հանցակիցներ Ռաֆայել Օհանյանին ու Սիրվարդ Ավագյանին, որոնք իբր «իրենց համոզմունքների համար հալածվում եւ հետապնդվում են պետական անվտանգության կոմիտեի կողմից»:

Ամբաստանյալ Հարությունյանը հասել է զրպարտության ու հերյուրանքների գագաթնակետին, հայտարարելով որ «արդարության համար մարտնչող ժողովրդի հալա - ծողները կուսակցության մարմիններն են»:

Վերջապես ամբաստանյալ է. Հարությունյանը 1982 թվականի ընթացքում տարածելու նպատակով գործով մյուս ամբաստանյալ Ռաֆայել Օհանյանին եւ Սիրվարդ Ավագյանին է տվել Կանադայում հրատարակվող «Հորիզոն» շաբաթաթերթի 1982թ. հունիսի 14-ի համարը որտեղ զետեղված է սովետական պետությանը եւ հասարակությանը արատավորող բովանդակության «Խ. Միության հայ բանտարկյալների հարցը» վերնագրով հոդվածը:

Նրանց է տվել նաեւ սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող այլ նյութեր, որոնց բովանդակությունը մանրամասն նշված է գործում գտնվող փաստաթղթերի զննության արձանագրության մեջ:

Ամբաստանյալ Ռաֆայել Լյուդվիգի Օհանյանը եւ Սիրվարդ Արտաշեսի Ավագյանը սկսած 1979 թվականից պատրաստել եւ տարածել են սովետական պետական ու հասարակական կարգն արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող դիմումգանգատներ եւ այլ փաստաթղթեր, այդ հողի վրա կապեր հաստատելով ամբաստանյալ էդուարդ Հարությունյանի հետ, որ իրեն համարել է գոյություն չունեցող այսպես կոչված «Հայկական հելսինկյան խմբի ղեկավար»: Հանցավոր գործունեությամբ զբաղվելու համար դեռեւս 1980 թվականի նոյեմբերի 23-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1972 թվականի դեկտեմբերի 25-ի հրամանագրի համաձայն ՀՍՍՀ պետական անվտանգության կոնիտեի կողմից Ռ. Օհանյանին արվել է պաշտոնական նախազգուշացում, չնայած դրան 1982 թվականի հունվար ամսին, երբ էդուարդ Հարությունյանը ազատվել է պատիժը կրելուց, նրանք կրկին կապերի մեջ են մտել միմիանց հետ եւ շարունակել իրենց հանցավոր գործունեությունը:

Ամբաստանյալներ Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը նշված ժամանակահատվածում պատրաստել եւ տարածել են սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող հետեւյալ փաստաթղթերը.

մեքենագրված տեքստ դիմում ռուսերեն լեզվով մեկ թերթի վրա, 21 օրնակից, հասցեագրված ԱՄՆ պրեզիդենտ Ռեյգանին, ինչպես նաեւ նույն տեքստի ձեռագիր օրինակը մեկ թերթից, կատարված Ռ. Օհանյանի կողմից:

Մեքենագրված տեքստ դիմում ռուսերեն լեզվով մեկ թերթի վրա 11-օրինակից, հասցեագրված ՍՍՀՄ գերագույն սովետի նախագահությանը Ռ. Օհանյանի անունից:

Մեքենագրված տեքստ դիմում ռուսերեն լեզվով երեք թերթի վրա հասցեագրված ՍՍՀՄ պետ. անվտանգության կոմիտեր նախագահին Ռ. Օհանյանի անունից:

Մեքենագրված տեքստ դիմում ռուսերեն լեզվով երեք թերթի վրա չորս օրինակից

հասցեագրված ՍՍՀՄ գերագույն սովետի նախագահության նախագահին Ռ. Օհանյանի անունից:

Մեքենագրված տեքստ դիմում ռուսերեն լեզվով տպագրված մեկ թերթի վրա, հասցեագրված ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահին Ռ. Օհանյանի անունից:

Ձեռագիր տեքստ առանց վերնագրի մեկ թերթի վրա, որը սկսվում է «մեր պարտիայի» եւ վերջանում «թալանվելու մասին» բառերով, կատարված Ռ. Օհանյանի կողմից:

Մեքենագրված տեքստ դիմում մեկ թերթի վրա 8 օրինակից հասցեագրված ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռեյգանին Ս. Ավագյանի անունից:

Մեքենագրված տեքստ-բողոք ռուսերեն լեզվով չորս թերթի վրա երեք օրինակից հասցեագրված ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալին Ս. Ավագյանի անունից:

Մեքենագրված տեքստ-դիմում ռուսերեն լեզվով մեկ թերթի վրա 21 օրինակից հասցեագրված ՍՍՀՄ գերագույն սովետի նախագահության նախագահին Ս. Ավագյանի անունից:

Կանադայում հայերեն լեզվով հրատարակված «Հորիզոն» շաբաթաթերթի 1982թվականի հունիսի 14-ի համարի 2-րդ էջում տպագրված «խորհրդային միության հայ բանտարկյալների հարցը» հոդվածի քսերոքսով պատճենահանված 8 օրինակները:

Ամբաստանյալներ Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը գրում են իբր «սովետական երկրում կատարվող օրինախախտումների դեմ արդարացի պայքարի համար տեղական մարմինները իրենց հալածում եւ հետապնդում են» հայտարարում են, որ Հայկական ՍՍՀ-ում տիրում է անարխիա եւ կամայականություն, որ մեր երկրում չեն պաշտպանվում մարդու իրավունքները: Այնուհետեւ շարունակելով ակնհայտ հերյուրանքներ տարածել սովետական կարգերի եւ ժողովրդի նկատմամաբ, նշում են իբր «սովետական մարդիկ կորցրել են մարդկային կերպարը եւ ընդունակ են ցանկացած դաժանությունների»:

Ամբաստանյալներ Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռեյգանին հասցեագրված դիմումում փորձել են արատավորել սովետական կառավարության մարմինները, նրանց գործողությունները համեմատելով Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ֆաշիստների կատարած արարքների հետ:

Ամբաստանյալ Ռ. Օհանյանը առանց վերնագրի մի թերթի վրա ձեռագրով գրված տեքստում բացահայտ զրպարտչական հերյուրանքներ է թույլ տվել սովետական միության կոմունիստական կուսակցության հասցեին, նշելով իբր «ՍՄԿԿ շարքերը լեփ-լեցուն են օպորտունիստներով եւ ձախ էսեռներով,, պահանջել «զտում» կատարել կուսակցության շարքերում, ցինիկ կերպով հայտարարելով որ կուսակցության ղեկավարները «միայն մտածում են պետությանը եւ ժողովրդին թալանելու մասին»:

Բացի վերը նշվածից, ամբաստանյալներ Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը տարածելու նպատակով է. Հարությունյանից ստացել են նրա կողմից պատրաստված, սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող «ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն առաջինին» ուղղված տեքստ-խնդրանքը, «Հայկական եկեղեցու դիմումը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը» վերնագրով երկու տարբերակի դիմումներ եւ կանադայում հրապարակվող «Հորիզոն» շաբաթաթերթում զետեղված «խ. միության հայ բանտարկյալների հարցը» հոդվածը որը քսերոքսով բազմացրել են 8 օրինակից եւ 1982 թվականին նոյեմբերի 6-

ին ցանկացել տեղափոխել Մոսկվա, սակայն երկաթգծի Երեւանի կայարանում բռնվել են միլիցիայի աշխատակիցների կողմից:

Ամբաստանյալներ Օհանյանը եւ Ավագյանը դրսեւորելով հակակրանք սովետական վարչական մարմինների նկատմամբ, իրենց ծառայական պարտականությունները կատարող միլիցիայի աշխատակիցներին հասցրել են վիրավորանք, նրանց անվանելով «բռնակալներ» «սալդաֆոններ», «ֆաշիստներ» եւ համանման այլ արտահայտություններ:

Ամբաստանյալներ է. Հարությունյանը, Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը դատական նիստը ձախողելու եւ պատասխանատվությունից խույս տալու նպատակով հրաժարվեցին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ ըստ էության ցուցմունքներ տալուց եւ տարբեր միջնորդություններ անելու պատրվակով հանդես եկան սովետական պետական եւ հասարակական կարգերը արատավորող ակնհայտ հերյուրանքներով եւ բացահայտ զրպարտիչ հայտարարություններով:

Ավելին ամբաստանյալներ է. Հարությունյանը եւ Ռ. Օհանյանը քննչական մեկուսարանում նախապես կազմելով նույն բովանդակությամբ երկուական թերթի ձեռագիր փաստաթուղթ այն ներկայացրին դատական կոլեգային իբրեւ «բացարկ» հայտարարելու միջնորդագիր, դրանով իսկ չընդունելով մեղադրանքը եւ չզղջալով կատարած հանցագործության համար:

Ամբաստանյալներ է. Հարությունյանը, Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը նախաքննության ժամանակ տված ցուցմունքներում նույնպես անհիմն պատճառաբանությամբ չեն ընդունել իրենց առաջադրված մեղադրանքը, չնայած չեն էլ ժխտել իրեղեն ապացույցներ ճանաչված սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող զրպարտիչ երկերը, դիմում-բողոքները ու համանման այլ փաստաթղթերը իրենց կողմից կազմելու եւ տարածելու հանգամանքը: Ամբաստանյալ Հարությունյանը իր ցուցմունքներում ընդունել է, որ «Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն առաջինին» ուղղված դիմում-խնդրանքը 16 տպագիր էջից «Հայկական եկեղեցու դիմումը ՍՍՀՄ գերագույն սովետի նախագահությանը» վերնագրով երկու տարբերակից տեքստը, «Հորիզոն» շաբաթաթերթի 1982թ. հունիսի 14-ի համարը այսպես կոչվող «հայկական հելսինկյան խմբի գործունեության մասին» ձեռագիր տեքստի հետ միասին տվել է ամբաստանյալներ Ռ. Օհանյանին եւ Ս. Ավագյանին մի քանիսը ընթերցելու եւ պահելու, իսկ մնացածը տարածելու նպատակով:

Ամբաստանյալ է. Հարությունյանի մեղադրանքը հիմնավորված է նաեւ քրոջ՝ Սիլվա Հարությունյանի ցուցմունքներով այն մասին, որ իր բնակարանում հայտնաբերված տեքստերը պատկանում են եղբորը, ամբաստանյալ Ավագյանի ցուցմունքներով եւ առերես հարցաքննությամբ այն մասին, որ սովետական պետության եւ հասարակության նկատմամբ զրպարտչական հոդվածով «Հորիզոն» շաբաթաթերթը իրեն տվել է Հարությունյանը: Ամբաստանյալ է. Հարությունյանի կատարած հանցանքը հիմնավորված է նաեւ իրեղեն ապացույցներ ճանաչված փաստաթղթերի զննության արձանագրությամբ, դատաձեռագրային փորձաքննության եզրակացությամբ եւ գործի մյուս տվյալներով:

Ամբաստանյալներ Ռ. Օհանյանին եւ Ս. Ավագյանին առաջադրված մեղադրանքները հիմնավորված է նրանց մոտ հայտնաբերված իրեղեն ապացույցներ ճանաչված սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող բազմաթիվ նյութերով, դրանց զննության արձանագրությամբ, տեխնիկական եւ ձեռագրային փորձաքննության եզրակացություններով, վկաներ Ե.

Հարությունյանի, Շ. Հարությունյանի ցուցմունքներով եւ գործի մյուս տվյալներով:

Վերջապես ամբաստանյալներ է. Հարությունյանի, Ռ. Օհանյանի եւ Ս. Ավագյանի հանցավոր արարքը հիմնավորված է նաեւ ՍՍՀՄ տարբեր քաղաքներում հակասովետական ագիտացիայի եւ պրոպագանդայի, ինչպես նաեւ սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելու համար նախկինում դատապարտված անձանց հետ կապեր ունենալու, Հայկական ՍՍՀ-ում նրանց քր. օր-ի 65-67 հոդ. հոդ. 206-պրիմ հոդվածով դատապարտման մասին, սովետական պետությանը եւ հասարակությանը արատավորելու եւ վարկաբեկելու նպատակով աղավաղված ու խեղաթյուրված հաղորդումներ փոխանցելու փաստով:

Ամբաստանյալ Ռ. Օհանյանի եւ Ս. Ավագյանի կողմից տրանսպորտային միլիցիայի վարչության աշխատակիցներին, իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանկ վիրավորանքներ հասցնելու մեղադրանքը հիմնավորված է որպես վկաներ հարցաքննված միլիցիայի աշխատակիցներ Ռ. Ալեքյանի, Վ. Կուլիջանյանի ցուցմունքներով եւ գործի մյուս տվյալներով:

Այսպիսով դատական կոլեգիան հիմնավորված է համարում, որ ամբաստանյալներ է. Հարությունյանը. Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը պատրաստել ու տարածել են Սովետական պետական եւ հասարակական կարգերը արատավորող ակնհայտ հերյուրանքներ պարունակող երկեր, դիմումներ, գանագատներ, ձեռագիր եւ տպագիր տեքստեր եւ այլ փաստաթղթեր:

Բացի դրանից ամբաստանյալներ Ռ. Օհանյանը եւ Ս. Ավագյանը վիրավորանք են հասցրել իրենց պաշտոնական պարտականությունները կատարող միլիցիայի աշխատակիցներին:

Դատական կոլեգիան պատիժ սահմանելիս հաշվի է առնում կատարված արարքի հանրորեն վտանգավորությունը եւ ամբաստանյալների անձնավորությունը, որ երեքն էլ նախկինում դատվել են եւ բնութագրվում են միայն բացասական:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով քր. դատ. օր-ի 293-294 հոդ. հոդ. Հայկական ՍՍՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

Վ Ճ Ռ Ե Ց

Ամբաստանյալ էդուարդ Բագրատի Հարությունյանին ՀՍՍՀ քր. օր-ի 206-պրիմ հոդվածով դատապարտել ազատազրկման (3) երեք տարի ժամանակով, որը պետք է կրի խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1982թվականի նոյեմբերի 10-ից:

Ամբաստանյալ Ռաֆայել Լյուդվիգի Օհանյանին դատապարտել ազատազրկման ՀՍՍՀ քր. օր-ի 206-պրիմ հոդվածով (3) երեք տարի ժամանակով եւ քր. օր-ի 208-պրիմ հոդվածով 6 ամիս ժամանակով, քր. օր-ի 37 հոդվածի հիմունքներով թողնել կրելու ազատազրկում (3) երեք տարի ժամանակով խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում, կալանքի սկիզբը հաշվելով 1982թվականի նոյեմբերի 6-ից:

Ամբաստնյալ Սիրվարդ Արտաշեսի Ավագյանին դատապարտել ազատազրկման ՀՍՍՀ քր. օր-ի 206-պրիմ հոդվածով (3) երեք տարի ժամանակով, քր. օր-ի 208-պրիմ հոդվածով 6 ամիս ժամանակով, քր. օր-ի 37 հոդվածի հիմունքներով թողնել կրելու ազատազրկում 3 տարի ժամանակով ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում: Կալանքի սկիզբը հաշվել 1982 թվականի նոյեմբերի 6-ից:

Դատապարտյալ Ռ. Օհանյանի բնակարանից հայտնաբերված «էրիկա» մակնիշի գրանեքենան, որը գտնվում է Հայաստանի տրանսպորտային դատախազությունում պետականացնել:

Անձնական խուզարկությամբ դատապարտյալ Սիրվարդ Ավագյանի մոտից առգրավված 855 ռուբլին եւ դատապարտյալ Ռաֆայել Օհանյանի մոտից առգրավված 272 ռուբլին, որը գտնվում է Հայաստանի տրանսպորտային դատախազությունում հանձնել նրանց տնօրինությանը, իսկ Ռ. Օհանյանի բնակարանից խուզարկության ժամանակ առգրավված 700 ռուբլին, որը նույնպես պահվում է տրանսպորտային դատախազությունում հանձնել նրա կնոջը եւ երեխաներին:

Դատապարտյալ Ս. Ավագյանից վերցրած դեղին մետաղից խաչով շղթան ու երկու ականջողերը (գտնվում են տրանսպորտային դատախազությունում) վերադարձնել նրան:

Դատավճիռը վերջնական է եւ վճռաբեկության կարգով բողոքարկման ու գանգատարկման ենթակա չէ:

նախագահ՝
ատենակալներ

Էդմոնդ Ավետյան



Էդմոնդ Ավետիսյան

Էդմոնդ Գեղամի Ավետյանը ծնվել է 1929 թ., Ուզբեկստանի Անդիջան քաղաքում: Ավետյանի հայրը եղել է ժամանակի լավագույն գերմանագետներից մեկը: 1937 թվականին նրան կալանավորել, այնուհետեւ գնդակահարել են, իսկ ընտանիքին՝ աքսորել: Ավետյանի մանկությունը, նրա ժամանակակից շատ մանուկների նման, լցված է եղել անսահման սիրով ու հավատով առ խորհրդային հայրենիք ու առ Ստալին: Ավետյանն ընկերներին պատմել է, որ աքսորավայրում, ձմռան սաստիկ սառնամանիքի պայմաններում, սառած մանկական ձեռքերով ջրով լի երկու դույլ բռնած քայլում էր դեպի տուն ու մտածում, թե ինչ լավ է, որ ինքն ապրում է խորհրդային այս ազատ ու երջանիկ երկրում:

Պատերազմից հետո Ավետյանների ընտանիքին թույլատրում են վերադառնալ Հայաստան: 16 տարեկանում Ավետյանն արդեն, ի տարբերություն շատերի, սկսում է հասկանալ, թե ինչ է իրականում Սովետմիությունը, եւ ով է Ստալինը: 1946-ին Ստալինին ուղղված նամակների շարք է գրում, շարադրում է այն ամենն, ինչ մտածում է իրական, ոչ թե առասպելական Ստալինի մասին: Ե՛վ նրա հանցագործություններն է հիշատակում, ե՛ւ անմեղ զոհերին, ե՛ւ նրա կազմակերպած բռնությունները: Բայց ստորագրում է այլ անուն-ազգանունով: Չեկիստները հեշտությամբ կարողանում են պարզել, թե ով է նամակի իրական հեղինակը: Ավետյանին ձերբակալում են: Ըստ ժամանակի պատկերացումների՝ միայն հոգեկան հիվանդը կարող էր «բոլոր ժամանակների հանճար» Ստալինին նման մեղադրանքներ ներկայացնել, եւ Էդմոնդ Ավետյանին, որպես հոգեկան հիվանդի, տեղափոխում են հոգեբուժարան:

Ազատ արձակվելուց հետո Ավետյանն իր հայացքները չի փոխում, բայց եւ՝ ակտիվ հակախորհրդային գործունեություն չի ծավալում: Շարունակում է ուսումը: 1956-ին Ե - րեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո, ռուսաց լեզու եւ գրականություն է դասավանդում հանրակրթական դպրոցներում: 1961-64 թթ. սովորում ԵՊՀ ասպիրանտուրայում, իսկ 1966-ին պաշտպանում է թեկնածուական թեզ: 1965-ից աշխատում է համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնում: Եղել է ժամանակի ամենահայտնի մտավորականներից ու սիրված դասախոսներից մեկը: Նա հայկական նշանագիտության հիմնադիրներից է: Հեղինակել է «Լեզվաբանական նշանի բնույթը» (1968), «Իմաստ և նշանակություն» (1979), «Նշանագիտություն և լեզվաբանություն» (1989) լեզվաբանական աշխատությունները, «Վերադարձի օղակ» (1998, 2003), «Բանտային բանաստեղծություններ» (2002) եւ այլ ստեղծագործություններ:

1970-ականներին սկսվում են նրա ակտիվ շփումներն այլախոհական շրջանակների հետ: Հայաստանի հելսինկյան խումբ ստեղծելու նպատակի մասին Շահեն Հարությունյանը, ի թիվս այլոց, նաեւ Էդմոնդ Ավետյանի հետ է քննարկել 1976-ին: Ճիշտ է, սկզբնական փուլում Ավետյանը չի ներգրավվել խմբի մեջ, բայց ցուցաբերել է ամենայն աջակցություն: Նրա մոտ կենտրոնացել է ինքնահրատ մեծ քանակությամբ գրականություն, որից օգտվել են այլախոհները: Այդ շրջանում մեծ ճնշումների ու հալածանքների էին ենթարկվում ոչ միայն հելսինկյան խմբերի մեջ ներգրավված եւ իրենց ստորագրությունները հրապարակվող փաստաթղթերի տակ դնող գործիչներն, այլ նաեւ նրանք, ովքեր աջակցում էին նրանց: 1977-ին, Հայաստանի հելսինկյան խմբի անդամներ Շահեն Հարությունյանի ու Ռոբերտ Նազարյանի կալանավորումների կապակցությամբ, Ավետյանի եւ Ռաֆայել Պապայանի բնակարաններում խուզարկություն են իրականացնում: ՊԱԿ-ն այդ ժամանակ նրանց չի ձերբակալում: Բավարարվում են պաշտոնական նախազգուշացմամբ եւ դասախոսություններ կարդալու իրավունքից զրկելով: 1978-ին՝ Նազարյանի, այնուհետեւ 1980-ին՝ Հելսինկյան խմբի ղեկավար Էդուարդ Հարությունյանի դատապարտվելուց հետո, Էդմոնդ Ավետյանը՝ Ռաֆայել Պապայանի եւ Գեորգի Խոմիզուրիի հետ էլ ավելի է ակտիվացնում իր գործունեությունը: 1982 թ. նոյեմբերին Պետանվտանգության կոմիտեն նրանց ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա) մեղադրանք է առաջադրում ու կալանավորում: Ի սկզբանե հարուցված քրեական գործով՝ որպես այս եռյակի ղեկավար ու կազմակերպիչ է անցնում Էդմոնդ Ավետյանը: Սակայն, հետագայում՝ 1983-ի ապրիլին, կալանավորումից հինգ ամիս անց վճռում են Ավետյանին ընկերներից առանձնացնել: Ամենայն հավանականությամբ, ՊԱԿ-ում զգուշանում են Ավետյանին դատարան տանելու եւ քաղաքանտարկյալի կարգավիճակով կալանավայր ուղարկելու հեռանկարից: Իրենց համար անցանկալի մեծ աղմուկ կարող էր բարձրանալ: Խորհրդային ՊԱԿ-ը նախընտրում է փակել նրան հոգեբուժարանում, որտեղից Ավետյանն ազատ է արձակվում 1984 թվականին: 1986-89 թթ. գորբաչովյան պերեստրոյկայի շնորհիվ տեղավորվում է աշխատանքի՝ որպես հանրապետական ուսումնամեթոդաբանական կաբինետի մեթոդիստ: 1991-ին հրավիրվում է համալսարան՝ դասախոսական աշխատանքի: Կյանքի վերջին տարիները նա անցկացրեց անկողնուն գամված ու միայնության մեջ: Միայն հատուկենտ մտերիմներ էին այցելում Ավետյանին: Վախճանվել է 2002 թ. դեկտեմբերի 6-ին:

Էդմոնդ Ավետյանի գործով որոշումը

Այս որոշումը նույնպես ԱԱԾ-ից ստացել ենք գործով անցնող վկաների ջնջված անուններով: Հարակից դատավճիռների ու այլ փաստաթղթերի համադրմամբ, չնչին բացառություններով, կարողացել ենք վերականգնել բացթողումները: Հոգեբուժարան տեղափոխելու որոշումը կայացվել է ռուսերեն: Ստորեւ ներկայացնում ենք մեր կողմից արված հայերեն թարգմանությունը:

Руководствуясь ст.318 УПК Арм.ССР, Судебная коллегия по уголовным делам Верховного Суда Армянской ССР

ОПРЕДЕЛИЛА:

1. Аветяна Эдмонда Гегамовича на основании ст.11 УК Арм. ССР освободить от уголовной ответственности и в соответствии с требованиями ст.ст.53-54 УК Арм.ССР поместить его для принудительного лечения в психиатрическую больницу общего типа.

2. Избранную в отношении Аветяна Э.Г. меру пресечения - содержание под стражей - отменить.

3. Указанные в п.4 справки к постановлению следователя КГБ Арм.ССР от 28.04.83 г. вещественное доказательство (т.6, л.д.296) хранить при деле.

4. Копии данного определение направить Главному врачу Советашенской психиатрической больницы - для исполнения по существу и следотдел КГБ Арм.ССР - для сведения.

Председательствующий подпись
народные заседатели: 1.
2.

Верно: подпись

Էդմոնդ Ավետյանին հոգեբուժարան տեղափոխելու որոշման վերջին էջը

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիս 1983թ. ք. Երևան

Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան, մասնակցությամբ

նախագահող՝ - **Ս. Ասատուրյանի**
ատենակալներ՝ - **Խ. Չոբանյանի**
Գ. Հովհաննիսյանի
քարտուղարությամբ՝ - **Կ. Մելքոնյանի**
մասնակցությամբ դատախազ՝ - **Պ. Թոխյանի**

Քննության առնելով դատական նիստում քրեական գործը էդմոնդ Գեղամի Ավետյանի նկատմամբ, ծնված 1929 թ. Ուզբեկական ՍՍՀ-ի գ. Անդիջանում, հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուսնալուծված, բարձրագույն կրթությամբ, աշխատում է Երեւանի պետական համալսարանում որպես դոցենտ, բնակվում է ք. Երեւանի Կասյան փ. նո. 2 բն. 37-ում, մեղադրվում է Հայկական ՍՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի առաջին մասով

ՊԱՐԶԵՑ

Այս քրեական գործը 18.04.83 թ. առանձնացվել է որպես առանձին վարույթ Հայկական ՍՍՀ ՊԱԿ-ի կողմից 10.11.82 թ. Խոմիզուրի Գեորգիի եւ այլոց նկատմամբ Հայկ. ՍՍՀ քր. օրի 65 հոդ. 1-ին մասով հարուցված քր. գործից:

1982 թ. նոյեմբերի 2-ին է. Ավետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանքը:

Գործով պարզվել է, որ Ավետյանը 1976-1982 թթ. ընթացքում պատրաստել, պահել եւ տարածել է սովետական պետական ու հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ պարունակող գրականություն (հ. 1 գթ. 26-245):

1977 թ. գարնանը, Երեւանում Ավետյանը՝ հետագայում հակասովետական գործունեության համար դատապարտված Ռոբերտ Նազարյանից ստացել եւ պահել է հակասովետական զրպարտչական բովանդակությամբ նյութեր, վերնագրված՝ «ՍՍՀՄ-ի Հելսինկյան պայմանագրի կատարմանը աջակցող խումբ», «Բելգրադյան կոնֆերանսի երկրների ներկայացուցիչներին, հայրենակից հայերին», «Աշխարհի դեմոկրատական հասարակությանը», «Դիմում» (ֆոտոնեգատիվ), ինչպես նաեւ «Բաց նամակ ԱՄՆ պրեզիդենտ Քարտերին» հոդվածը, որը նա թարգմանել է հայերենից ռուսերեն եւ վերադարձրել Նազարյանին:

Վերոհիշյալը հաստատվում է Նազարյանի նկատմամբ հարուցված քրեական գործի արձանագրությամբ այն մասին, որ Ավետյանը Նազարյանից ստացել եւ պահել է այդ նյութերը (հ.2 գթ. 258-270), խուզարկության ժամանակ Ավետյանի բնակարանից այդ նյութերի մի մասի հայտնաբերմամբ (հ. 1 գթ. 26-51), այդ նյութերի ուսումնասիրման արձանագրությամբ, ինչից երեւում է, որ դրանք պարունակում են հակասովետական, զրպարտչական հերյուրանքներ (հ.2 գթ. 84-257), ձեռագրաբանական փորձաքննության եզրակացությամբ այն մասին, որ «Բաց նամակ ԱՄՆ պրեզիդենտ Քարտերին» գրված է Ավետյանի կողմից (հ.2 գթ. 26-50), գործին կցված վերոնշյալ իրեղեն ապացույցներով (հ.3 գթ. 1-8, 48-65, 187-193, 196-202, 269-272):

1976-1979 թթ. ընթացքում Ավետյանը Երեւան քաղաքում արտասահմանյան աղբյուրներից ռուսերեն թարգմանելու եղանակով պատրաստել եւ պահել է հակասովետական, զրպարտչական բովանդակությամբ «Ստալինյան ռեժիմի զոհերի ընդհանուր թիվը», «Լենինի մահը», «1931-1934 թվականների մեծ բարեգործությունը», «Աստված - ները տենչում են», «Ի. Ստալինի բնական մահը», «Ստալինի վերելքը» եւ «Վեցգլխանի հիդրան», «Ստալինի քաղաքական ցանցը» հոդվածները, որոնք այդ ժամանակ էլ տարածել է՝ ծանոթանալու նպատակով դրանք տալով այլ գործով մեղադրյալ Ռաֆայել Պապայանին:

Այդ ժամանակահատվածում Ավետյանը պատրաստել եւ պահել է «Հեռու՞ ենք, արդյոք, մենք աղետից», «Տնտեսագիտական բնույթի հարցեր», «Բրեժնեւը՝ մեծ մարշալ», «Օղուց լավ խմիչք չկա», «Լիբերալ այլախոհությունը չպետք է», «Գրականություն եւ

կյանք» թերթին», «Ես օղին խմում եմ առանց տխրության ու ծանծրույթի», «Կրեմլյան սրիկաները», «Խանութ մտավ Բուդյոննին» եւ «Քաղբյուրոն օղուց շիկացավ» սովետական պետական ու հասարակական կարգը, ՍՄԿԿ քաղբյուրոն եւ Սովետական պետությունը արատավորող զրպարտչական բովանդակություն պարունակող նյութերը:

Սա հաստատվում է վերը հիշատակված Պապայանի ցուցմունքներով այն մասին, որ Ավետյանը տվել է իրեն ծանոթանալու թվարկված հոդվածների ձեռագրերը, որոնք հայտնաբերվել եւ առգրավվել են նրա մոտից նոյեմբերի 9-ի խուզարկության ժամանակ (հ.1 գթ. 141-193) իրեղեն ապացույցների ուսումնասիրման արձանագրությամբ, ինչից երեւում է այդ բոլոր ձեռագիր նյութերի հակասովետական, զրպարտչական բնույթը (հ. 2 գթ. 84-257), ձեռագրաբանական փորձաքննության եզրակացությամբ, որ դրանք պատրաստել է Ավետյանը (հ.2 գթ. 26-50), գործին կցված իրեղեն ապացույց-հակասովետական բովանդակությամբ նյութերով (հ.3 գթ. 1-127, հ.6 գթ. 258-263):

Սկսած 1976 թ., Երեւանում այլ գործով մեղադրյալներ Խոմիզուրիից եւ Պապայանից, ինչպես նաեւ ք. Մոսկվայում այլ անձանցից Ավետյանը ձեռք է բերել եւ պահել հակասովետական բովանդակությամբ գրականություն՝ Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ» գիրքը, «Նամակ ՍՍՀՄ գրողների միության 15-րդ համագումարի նախագահությանը», Մարչենկոյի «Իմ ցուցմունքները» գիրքը, «Ընթացիկ դեպքերի խրոնիկա, թողարկում 1947 թ.», «ՍՄԿԿ ղեկավարության պատմություն» 12 եւ 14-րդ հրատարակություն, «Վ. Ի. Լենինի քննադատական ժառանգությունը» երկու օրինակից, «ՍՄԿԿ նոր ղեկավարությունը» 10-13 թողարկումները 5 օրինակից, «26 անհայտներով հավասարում» 3 օրինակից, «ՍՍՀՄ նոր ղեկավարությունը», «Մեծ տեռորի հանրագումարը», «Ա. Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը (Բերիայի դավադրությունը) գրքի գրախոսությունը», «Տեռորի խրոնոլոգիան», «Մամուլի ասուլիս ժանտախտի ժամանակ», «Նիժնի Տագիլի մետաղագործական Վ. Ի. Լենինի անվան կոմբինատի բանվորների բաց նամակը ՍՍՀՄ ԳԱ նախագահությանը», «ՍՍՀՄ-ի Հելսինկյան պայմանագրի կատարմանը աջակցող խումբ», «Հենց իր գոյության պահից», «Մարդու իրավունքներ: Փաստաթղթեր մարդու իրավունքների մասին», «Գնացքը Խաբարովսկից դեպի Մոսկվա», Տ. Խոդորովիչի «Խղճի թելադրանքով», Հայնրիխ Բյոլի «Անազատության երկի - ը», Ա. Ամալրիկի «Կգոյատեւի՞ արդյոք Սովետական Միությունը մինչեւ 1984 թվականը», Մ. Ս. Ագուրսկու «Դիմում ամերիկյան մտավորականությանը», Ն. Սոլժենիցինայի «Ալեքսանդր Իսայի Սոլժենիցինը արտաքսված է», Մ. Ագուրսկու «Արեւելքի եւ Արեւմուտքի տնտեսական համակարգերը», Ա. Ավտորխանովի «Պարտիակրատիա», Ա. Բելենկովի նամակը Պեն-Կլուբի կոնգրեսին», Վ. Դելոնեի «Ճամբարային էքսպրոմտներ», «Գրառումներ ինքնակենսագրության համար», «Քամյուի ելույթը Նոբելյան մրցանակ ստանալիս», Վոյնովիչի «Եղել են չեն եղել՝ երկու չինացի են եղել», «Բաց նամակ ՎԱԱՊ-ի նախագահին» եւ «Դիմում ՌՖՍՍՀ ԳՄ ՄԲ քարտուղարությանը», Մ. Բուլգակովի «Շան սիրտը», Ա. Գալիչի «Երգերի գիրք», «Հայկական ՍՍՀ փաստաբանների կոլեգիայի անդամի ելույթը», «Օ՛խ դուք, հարբեցողներ», «2000 թվականին», Ա. Սոլժենիցինի հոդվածների ժողովածուն, «Նամակներ առաջնորդներին», «Ինչ է սպասվում Սովետական Միությանը», 1980 թ. մայիսի «Խարպեր» հանդեսը, Ա. Ավտորխանովի «Իշխանության տեխնոլոգիան» գրքի ֆոտոպատճենը:

Շարադրվածը հաստատվում է այլ գործով մեղադրյալներ Պապայանի եւ Խոմիզուրիի ցուցմունքներով այն մասին, որ նշված գրականության մի մասը Ավետյանը ստացել է իրենցից (հ. 1 գթ. 141-218), է. Ավետյանի տան խուզարկության արձանագրությամբ, որի ժամանակ հայտնաբերվել եւ առգրավվել է այդ գրականությունը (հ. 1 գթ. 26-51),

այդ գրականության ուսումնասիրման արձանագրությամբ, ինչից երեւում է, որ դրանք պարունակում են հակասովետական հերյուրանքներ (հ. 2 գթ. 84-257), գործով իրեղեն ապացույցներ հանդիսացող հիշատակված գրականությամբ (հ. 3 գթ. 1-271, հ.5 գթ. 258-263):

Այդ գրականությունը Ավետյանը 1976-1980 թվականներին տարածել է՝ ծանոթանալու համար փոխանցելով վկաներ Գ-ին եւ Դ-ին, «Ա. Բելենկովի նամակը Պեն-Կլուբի կոնգրեսին» եւ Ա. Ավտորխանովի գրքից առանձին գլուխ «Պարտիակրատիան», այլ գործով մեղադրյալ Պապայանին է տվել Ա. Սոլժենիցինի հոդվածների ժողովածուն, «Նամակներ առաջնորդներին», «Ինչ է սպասվում Սովետական Միությանը», Ավտորխանովի գրքից առանձին գլուխ «Պարտիակրատիան», Հայնրիխ Բյուլի հոդվածները «Անազատության երկիրը», Վ. Դելոնեի «Ճամբարային էքսպրոմտներ», «Գրառումներ ինքնակենսագրության համար», Մ. Բուլգակովի «Շան սիրտը», Ա. Ամալրիկի «Կգոյատեւի՞ արդյոք Սովետական Միությունը մինչեւ 1984 թվականը», «Քամյուի ելույթը Նոբելյան մրցանակ ստանալիս», «Ա. Բելենկովի նամակը Պեն-Կլուբի կոնգրեսին», Տ. Խոդորովիչի «Խղճի թելադրանքով» եւ «Հայկական ՍՍՀ փաստաբանների կոլեգիայի անդամի ելույթը»:

Այս ամենը հաստատվում է Ե-ի, Գ-ի եւ Դ-ի ցուցմունքներով այն մասին, որ նրանք ստացել են Ավետյանից նշված գրականությունը եւ ծանոթացել (հ. 1 գթ. 141-193, 239-245), վերեւում նշված մյուս ապացույցներով:

Վերոգրյալը հաստատվեց նաեւ դատական նիստի ընթացքում: Այսպիսով, Ավետյանի կողմից կատարվել է հանցագործություն՝ նախատեսված Հայկ ՍՍՀ քր. օր.-ի 65 հոդ. 1-ին մասով:

Սակայն, ինչպես պարզել է դատա-հոգեբուժական փորձաքննությունը, փորձագետ Զ-ի 1983 թ. մարտի 29-ին դատարանին տրված եզրակացությամբ՝ է. Գ. Ավետյանն իրեն վերագրվող հանցագործությունը կատարելու ընթացքում գտնվել է հոգեկան հիվանդության վիճակում, որն արտահայտվել է «անձի պարանոյալ կրուսի պաթոլոգիկ զարգացում՝ անհատականության մակարդակի նշանակալի անկմամբ» (патологического развития личности параноялього крусасознаучительным снижением уровня личности), ինչի կապակցությամբ էլ նա ճանաչվել է անմեղսունակ եւ ընդհանուր տիպի հոգեբուժարանում հարկադիր բուժման կարիք ունի (հ.2 գթ. 71-83):

Դատական կոլեգիան, հաշվի առնելով գործած հանցանքի բնույթը եւ հասարակական վտանգավորությունը, հաշվի առնելով Ավետյանի անձը եւ ներկա դրությամբ նրա վիճակը, համարում է, որ Ավետյանին պետք է տեղավորել ընդհանուր տիպի հոգեբուժարանում:

Առաջնորդվելով Հայկ. ՍՍՀ քր. դատ. օր.-ի. 318 հոդվածով, Հայկ. ՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՈՐՈՇԵՑ

Էդմոնդ Գեղամի Ավետյանին Հայկ. ՍՍՀ քր. օր.-ի 11 հոդ. հիման վրա ազատել քրեական պատասխանատվությունից եւ Հայկ ՍՍՀ քր. օրի 53-54 հոդվածների հիմքով հարկադիր բուժման նպատակով տեղավորել նրան ընդհանուր տիպի հոգեբուժարանում:

Է. Գ. Ավետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնել:

Հայկ. ՍՍՀ ՊԱԿ-ի քննիչի 28.04.83 թ. տեղեկանքի 4-րդ կետում նշված իրեղեն ապացույցները (հ.6 գթ. 296) պահել գործում:

Այս որոշման պատճենը ուղարկել Սովետաշենի հոգեբուժարանի գլխավոր բժշկին՝ որոշումը ի կատար ածելու համար եւ Հայկ. ՍՍՀ ՊԱԿ-ի քննչական բաժին՝ ի գիտություն:

Նախագահող՝ ստորագրություն
ժող. ատենակալներ. 1.
2.
Ճիշտ է՝ ստորագրություն

Գեորգի Խոմիզուրի, Ռաֆայել Պապայան

Գեորգի Պավելի Խոմիզուրին ծնվել է 1942 թ., Բաքու քաղաքում: Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայում: Մասնագիտությամբ երկրաբան է: Մինչեւ ձերբակալվելն ունեցել է գիտությունների թեկնածուի կոչում, ներկայումս գիտությունների դոկտոր է: Մինչեւ 1970-ականների առաջին կեսերը եղել է մարքս-լենինյան գաղափարների երդվյալ հետեւորդ: Կոմունիստական կուսակցության շարքեր չի ընդունվել, բայց եղել է կոմերիտական ակտիվ գործիչ: Երկրաբանությանը զուգահեռ՝ զբաղվել է պատմությամբ, ինչի շնորհիվ էլ փոխվել են հայացքները մարքսիզմ-լենինիզմի եւ, ընդհանրապես, սոցիալիզմի նկատմամբ: 1972 թվականից սկսել է առնչվել ինքնահրատ գրականությանը, միաժամանակ՝ բազմացրել է ու տարածել: Հանդես գալով Էռնեստ Գարաեւ կեղծանվամբ՝ գրել է կոմունիստական կուսակցության ու խորհրդային միության պատմության մութ էջերը լուսաբանող հոդվածներ: 1979-ին տեղափոխվել է Երեւան: Աշխատել է Հայկական ԳԱ երկրաբանության ինստիտուտում: Կապեր է հաստատել հայ այլախոհների հետ: Փոխանցել է նրանց ու ստացել նրանցից ինքնահրատ գրականություն: Ձերբակալվել է 1982 թ. նոյեմբերի 10-ին: Մեղադրանք է առաջադրվել ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա): 1983 թ. հունիսին դատապարտվել է վեց տարի ազատազրկման եւ երեք տարի աքսորի: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում: Գորբաչովյան պերեստրոյկայի շնորհիվ 1987-ին ժամկետից շուտ ազատ է արձակվել: Վերադարձել է Երեւան, վերականգնվել նախկին աշխատավայրում: Զբաղվել է ակտիվ հասարակական գործունեությամբ: 1987-88 թթ. եղել է Քաղբանտարկյալների պաշտպանության միջազգային կոմիտեի հայկական ենթակոմիտեի անդամ: 1990-94 թթ. Մարդու իրավունքների պաշտպանության հայկական լիգայի եւ «Հուշամատյան» պատմա-լուսավորչական միության անդամ է (1991-96 թթ.): 1994-96 թթ. մասնակցել է «Նոյյան Տապան» լրատվական գործակալության կազմակերպման աշխատանքներին: 1996-ին տեղափոխվել է Մոսկվա: Աշխատել է մի շարք ուսումնական հաստատություններում: 2000-ին պաշտպանել է դոկտորական թեզ եւ ստացել գիտությունների դոկտորի կոչում: 2001 թվականից Վերնարդսկու անվան պետական երկրաբանական թանգարանի առաջատար գիտաշխատող է: Ավելի քան 130 հրապարակումների, դրանց թվում՝ չորս մենագրությունների հեղինակ է: Բնակվում է Մոսկվայում:

Ռաֆայել Աշոտի Պապայանը ծնվել 1942 թ., Երեւանում: Դրամատուրգ Արամաշոտ Պապայանի որդին է: Ավարտել է Երեւանի Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը: Այնուհետեւ ուսումը շարունակել է Տարտուի (Էստոնիա) համալսարանի ասպիրանտուրայում: Նույն համալսարանում պաշտպանել է գիտական թեզ եւ ստացել գիտությունների թեկնածուի կոչում: 1972-1980 թթ. աշխատել է Երեւանի պետական համալսարանում: Մասնակցել է հայկական Հելսինկյան խմբի գործունեությանը: Տարբեր աղբյուրներից ձեռք է բերել ինքնահրատ գրականություն, ընթերցել ու փոխանցել այլոց: Ինչպես նաեւ ինքն է գրել հոդվածներ, որոնք հետագայում՝ նախաքննության ու դատավարության ժամանակ, հակասովետական են որակվել: Ձերբակալվել է Էդմոնդ Ավետյանի եւ Գեորգի Խոմիզուրիի հետ միասին, 1982 թ. նոյեմբերի 10-ին: Մեղադրանք է առաջադրվել ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա): 1983-ի հունիսին դա -

տապարտվել է չորս տարի ազատազրկման եւ երկու տարի աքսորի: Պատիժը կրել է Մորդովիայի քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրում: Գորբաչովյան պերեստրոյկայի շնորհիվ 1987-ին՝ ժամկետից շուտ ազատ է արձակվել ու վերադարձել Երեւան: 1989-ին հիմնադրել է Մարդու իրավունքների հայկական լիգան ու եղել դրա նախագահը: Նույն թվականին Երեւանի պետական կոնսերվատորիայում հիմնադրել է հայագիտության ամբիոն ու ստանձնել այդ ամբիոնի ղեկավարումը: 1990-95 թթ. ընտրվել է Գերագույն խորհրդի, իսկ 1995-97 թթ.՝ Ազգային ժողովի պատգամավոր: 1992-ից եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգեւոր խորհրդի անդամ: 1997 թվականից մինչեւ իր մահը ՀՀ սահմանադրական դատարանի անդամ էր: Վախճանվել է 2010 թ. հոկտեմբերի 5-ին: Բազմաթիվ աշխատությունների ու հրապարակախոսությունների հեղինակ է: Կատարել է ինչպես հայերենից ռուսերեն, այնպես էլ՝ ռուսերենից հայերեն թարգմանություններ, որոնց թվում ռուսերեն՝ Միսաք Մեծարենցի Երկերի լիակատար ժողովածուն (Երեւան 1997) եւ հայերեն՝ Բուլատ Օկուջավայի «Գիշերային զրույց» ժողովածուն (Երեւան 2000): Հեղինակն է 1981 թ. հրապարակված «Ազգային տաղաչափության համեմատական տիպաբանություն» (1981 թ.), «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները» (2002 թ.) եւ այլ մենագրությունների: 1991 թ. հրատարակել է «Տագնապներ» բանաստեղծությունների ժողովածուն:



Գեորգի Խոմիզուրի
լուս. քր. գործից

Գեորգի Խոմիզուրին «Կոմունարկա» կոչվող հրաձգարանի մուտքի մոտ, որտեղ 1930-1950թթ., համաձայն 1993թ. ուսումնասիրությունների, 10-14 հազար մարդ է գնդակահարվել, որոնցից 5 հազարը հայտնի են անուն առ անուն:



Ռաֆայել Պապայան
լուս. քր. գործից



Ռաֆայել Պապայան

Պատմում է Գեորգի Խոմիզուրին

Մանկուց դաստիարակվել եմ կոմունիստական ոգով՝ վստահությամբ, որ Ստալինը, Լենինը մարդիկ են, որոնք ցույց են տալիս մարդկության զարգացման միակ ճիշտ ուղին: Ստալինի մահը հորս ուրախացրեց: Նա գիտեր իրականում նրա ով լինելը: Բայց ինձ համար դա մեծ վիշտ էր: Հիշում եմ. որպես սգո նշան, տան սեղանին դրեցի Ստալինի նկարը: Հայրս, ինձ չնեղացնելու համար, չառարկեց: Նա երեւի գիտեր, որ ժամանակ է պետք, որպեսզի ես հասկանամ, թե ով է եղել Ստալինն իրականում: Եւ իրոք, ժամանակ անց արդեն հասկացել էի, թե ինչ հրեշ է եղել Ստալինը: Բայց, դրա հետ մեկտեղ, շարունակում էի համարել, որ Լենինը լավն էր, Զինովեւը, Տրոցկին լավն էին, իսկ ահա Ստալինն իրականացրել է իսկական լենինյան գործիչներին ոչնչացնելու հրեշավոր մի ծրագիր:

Ես ծնվել եմ Բաքվում: Ծնողներս ամուսնալուծվել են, երբ երկու տարեկան էի: Հայրս 1947 թ. երկրորդ անգամ ամուսնացավ: Երկրորդ կինը ծնունդով Մոսկվայից էր: Բաքվից՝ իր երկրորդ կնոջ հետ միասին ինձ տարավ Սախալին: Հորս երկրորդ կնոջ քեռին ժամանակին մենշեւիկյան կուսակցության նշանավոր դեմք է եղել: Ցարական տարիներին դատապարտվել էր սիբիրյան ցմահ աքսորի: Սոցիալիստական հեղափոխությունից հետո նա լքել էր մենշեւիկյան կուսակցությունը, բայց բոլշեւիկյան կուսակցության մեջ չէր մտել ու խորհրդային տարիներին ակտիվ գործունեություն չէր ծավալել: Երբ ստալինյան շրջանում սկսվում է կուսակցական շարքերի եւ հին սոցիալիստների զտման գործընթացը, նրան երեւի արդեն մոռացած են եղել, այնպես որ՝ նրան ոչինչ չի պատահել: Մինչեւ քառասնական թվականները հրատարակված 10-րդ դասարանի պատմության դասագրքերի մեջ եղած բոլոր պատկերազարդումները նրա ձեռքի գործն էին: Նրա գրադարանում հսկայական քանակությամբ հին գրքեր կային: Ես կարող էի առանց ավելորդ ջանքեր գործադրելու կարդալ այն ամենն, ինչ չկար պաշտոնապես ընդունված պատմագրությունում: Նաեւ այս գրքերը կարդալուց հետո էի գալիս այն հաստատ համոզման, որ կոմունիստական գաղափարախոսությունը, լենինյան ուղին ճիշտ են, որ Ստալինը մեծագույն սրիկա է եղել, նպատակադրված ոչնչացրել է իսկական կոմունիստներին: Անգամ կոմերիտմիության շարքեր ընդունվեցի ոչ այնպես, ինչպես մյուսները: Բոլորն էլ այդ տարիներին ինքնաբերաբար կոմերիտական դառնում էին, բայց ես, ի տարբերություն բոլորի, դա համարում էի մի կարեւոր հանգրվան իմ կյանքում: Այսպես շարունակվեց մինչեւ 1976 թվականը: 34 տարեկան էի: Այդ թվականին ինձ տվեցին կարդալու Շաֆարեւիչի «Սոցիալիզմը որպես համաշխարհային պատմության երեւույթ» ձեռագիր գործը: Մինչ այդ կարդացել էի Դարսիա դը լա Վեգայի «Ինկերի պատմությունը»: Թվում է, թե տարբեր բաների ու տարբեր ժամանակների մասին են այս երկու գրքերը: Մեկը 16-րդ դար է, մյուսը՝ 20-րդ: Բայց Շաֆարեւիչի ձեռագիրը կարդալիս անընդհատ գլխումս այն միտքն էր պտտվում, որ այն ամենն, ինչ նկարագրում ու բացահայտում է հեղինակը, ես արդեն կարդացել եմ «Ինկերի պատմության» մեջ: Այդ ընթերցանությունն իմ մեջ շատ բան փոխեց: Այդ ժամանակ էլ սկսեցի հասկանալ, որ խնդիրը պետք է սոցիալիզմի մեջ փնտրել: Ինկերն իրենց ժամանակին սոցիալիզմ կամ դրա նման մի բան էին կառուցում, հարյուրամյակներ անց նույն գործով էին զբաղված կոմունիստները, իսկ արդյունքները նույնն են: Մի խոսքով, Շաֆարեւիչի գործը կարդալուց հետո հասկացա, որ ա՛յն աստծուն չեմ խնկարկել: Հասկացա, որ խնդիրը Ստալինը կամ Լենինը չի, անձերի խնդիր չկա, ինքը՝ գաղափարն է արատավոր: Իհարկե,

Շաֆարեւիչի գաղափարները, հատկապես նացիոնալիզմի մասով, ինձ խորթ են, բայց իմ աշխարհընկալման փոփոխության հարցում նրա գիրքը վճռական դեր է խաղացել: Վճռեցի իմ հիմնական մասնագիտությանը՝ երկրաբանությանը զուգահեռ, զբաղվել պատմությամբ: Արդեն Մոսկվայում էի ապրում եւ ծանոթացել էի գործող այլախոհների հետ: Նրանցից գրականություն էի հայթայթել: Իմ ձեռքի տակ ընդհատակյա գրականության հսկայական քանակություն էր կուտակվել: Այդ շրջանում դուստրս առողջական խնդիրներ ունեցավ: Բժիշկները խորհուրդ տվեցին փոխել բնակության վայրը: Քանի որ կինս հայուհի է, որոշեցինք տեղափոխվել Հայաստան: Հայաստան գալուց առաջ հանդիպեցի Տատյանա Վելիկանովային, հարցրի, թե ում կարող եմ ինձ անծանոթ Հայաստանում վստահել, եւ նա տվեց Ռաֆայել Պապայանի հեռախոսահամարը: Արդեն 1979 թվականն էր: Հետս բերեցի իմ ունեցած ողջ գրականությունը, հանդիպեցի Պապայանին, Էդմոնդ Ավետյանին: Սկսվեց գրականության տարածման ու փոխանակման ակտիվ շրջան: Ծանոթացա Շահեն Հարությունյանի հետ, նրա միջոցով՝ Հայկազ Խաչատրյանի եւ Հայաստանի հելսինկյան խմբի անդամների՝ Էդիկ Հարությունյանի եւ մյուսների հետ: Ես երբեք ինձ պայքարի առաջամարտիկ չեմ երեւակայել: Չեմ մտածել, թե երբեւէ կձերբակալվեմ: Ես դեռ Մոսկվայում, լինելով այլախոհ, երբեք չէի անցնում այն սահմանը, որից այն կողմ կարող էր հաջորդել ձերբակալությունը: Կարդում էի արգելված գրականություն, փոխանցում էի այլոց, բայց չէի մտնում գործող այլախոհական կառույցների մեջ, հանդես չէի գալիս հրապարակային հայտարարություններով, չէի ստորագրում կոչերի կամ հայտարարությունների տակ: Հանդես չէի գալիս այս կամ այն գործչի պաշտպանությամբ: Նույն կերպ էլ շարունակում էի Երեւանում: Ծանոթացել էի հայ այլախոհներին: Շփվում էի նրանց հետ, գրականություն էի փոխանակում, սակայն գործող կառույցների մեջ չկայի եւ կարծում էի, որ դա կարող է լինել իմ չձերբակալվելու գրավականը:

1982 թվականի նոյեմբերին սկսվեցին ձերբակալությունները: Մինչ այդ փորձել էին ձերբակալություններ կատարել Հովիկ Վասիլյանենց շրջապատում: Անգամ սադրիչ էին ուղարկել նրանց մոտ: Բայց Հովիկենք կարողացել էին պարզել սադրիչին եւ թաքցրել էին ամեն ինչ: Այնպես որ, խուզարկություններն արդյունք չտվեցին: Այդ դաշտում հաջողության չհասնելուց հետո չեկիստները ձերբակալեցին Հայաստանի հելսինկյան կոմիտեի անդամներ Էդուարդ Հարությունյանին, Ռաֆայել Օհանյանին, Սիրվարդ Ավագյանին եւ մեզ՝ Էդմոնդ Ավետյանին, ինձ ու Ռաֆայել Պապայանին: Ի սկզբանե մեր գործում մեղադրյալներս թվարկվում էինք այսպես՝ Էդմոնդ Ավետյան, Ռաֆայել Պապայան, Գեորգի Խոմիզուրի: Պարզ էր, որ Ավետյանը որպես շոգեքարշ էր գնում, իսկ մենք՝ նրա հետեւից: Բայց մի պահից փոխվեց ոչ միայն մեր ազգանունների հերթականությունը, այլեւ՝ կազմը: Անհետացավ Էդմոնդ Ավետյանի անունը, իսկ ես ու Ռաֆիկը փոխվեցինք տեղերով: Արդեն նշվում էր քրեական գործ՝ ըստ մեղադրանքի Գեորգի Խոմիզուրիի եւ Ռաֆայել Պապայանի: Ես դարձա շոգեքարշ: Իսկ Էդմոնդ Ավետյանի պարագայում, կարծում եմ, չեկիստները վախեցան նրան դատարան բերելու հեռանկարից: Էդմոնդ Ավետյանին դատարան բերելը Պետանվտանգության կոմիտեի համար կարող էր անկանխատեսելի հետեւանքներ ունենալ: Նա հայտնի դեմք էր: Ճանաչված էր եւ՛ Հայաստանում, եւ՛ դրսում: Լավ ճանաչելով Ավետյանին՝ նրանք գիտեին, որ նա դատարանում կարող է այնպիսի ելույթներ ունենալ, որոնք մեծ աղմուկ կհանեն: Որոշեցին նրան հայտարարել հոգեկան հիվանդ եւ հարկադիր բուժման նպատակով հոգեբուժարան տեղափոխել: Սովետական տարիներին, այլախոհության դեմ պայքարում հոգեբուժարանները միշտ էլ օգտագործվել են: ԽՍՀՄ ամենահայտնի այլախոհներից

շատերն են Ավետյանի նման ստիպված եղել տարիներ անցկացնել հոգեբուժարաններում: Ավետյանն իմ ճանաչած ամենատաղանդավոր ու բազմակողմանի զարգացած մարդկանցից մեկն էր: Ցանկացած թեմայով նա կարող էր խոսել սահուն ու գեղեցիկ: Սակայն, բնավորությամբ ծանր մարդ էր: Դժվար էր նրա հետ գործ ունենալ: Նա գիտեր իր հանճարեղության մասին ու առանց բարդույթների դա ե՛ւ ի ցույց էր դնում, ե՛ւ ընդգծում էր:

Մեզ դատեցին 1983 թ. հունիսի 22-ին: Դատի ժամանակ ես հրաժարվեցի փաստաբանից, իսկ Պապայանն ընդհակառակը՝ չհրաժարվեց: Հայաստանում հայտնի շատ մտավորականներ ստորագրել էին ի պաշտպանություն Պապայանի կազմած մի դիմումի տակ: Դա բնական էր: Ռաֆիկը ոչ միայն հայտնի գրականագետ էր, այլեւ՝ Արամաշոտ Պապայանի որդին էր: Այդ դիմումը գտնվում էր Պապայանի փաստաբանի մոտ, որը նա պետք է հրապարակեր դատական նիստի ժամանակ: Սա միակ գործն էր, որ պետք է աներ Ռաֆիկի փաստաբանը: Բայց դատավարության ողջ ընթացքում այդ փաստաբանը ոչ մի կերպ չէր ցանկանում հրապարակել հայ մտավորականների պաշտպանական դիմումը: Վերջապես Ռաֆիկը վրդովված հարցրեց, թե ինչու չի հրապարակում պաշտպանության համար այդքան կարեւոր նշանակություն ունեցող փաստաթուղթը, իսկ փաստաբանը պատասխանեց. «Ինչպե՞ս կարող եմ կարդալ խորհրդային հայտնի մտավորականների նամակն ի պաշտպանություն հակասովետական գործչի»: Ահա այսպիսի զավեշտ:

Դատից հետո մեզ տեղափոխեցին Մորդովիա: Պապայանի հետ ե՛ւ էտապում, ե՛ւ գաղութում միշտ միասին ենք եղել: Այստեղ կրկին դեր էր խաղում Ռաֆիկի հոր՝ Արամաշոտ Պապայանի գործոնը: Որպես կանոն, նույն գործով անցնող մարդկանց իրարից առանձին էին պահում, բայց մենք բացառություն էինք: Հետագայում՝ նույն գործոնի շնորհիվ Ռաֆիկը, Սիբիրի փոխարեն, աքսորվեց Ռոստովի մարզ: Ե՛վ ես, ե՛ւ Ռաֆայել Պապայանը մեր պատժաչափերը մինչեւ վերջ չկրեցինք: Գորբաչովյան շրջանում սովետները ստիպված էին ազատ արձակել քաղբանտարկյալներին, եւ մենք ազատվեցինք: Ես՝ անմիջապես կալանավայրից, իսկ Պապայանը՝ աքսորավայրից:

Խոմիզուրիի եւ Պապայանի գործով կայացված դատավճիռը

Դատավճիռը ստացել ենք Գեորգի Խոմիզուրիի անձնական արխիվից: Դատավճիռը կայացվել է ռուսերեն: Ներկայացնում ենք մեր կողմից արված հայերեն թարգմանությունը:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

1983թ. հուլիսի 22 քաղ. Երեւան

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՆ

Նախագահությամբ՝	**Ս. Ասատուրյան**
ատենակալներ՝	**Ռ. Ներսիսյան**
	Ս. Գեւորգյան
քարտուղարությամբ՝	**Կ. Մելքոնյանի եւ Ա. Հովհաննիսյանի**
մասնակցությամբ	
պետական մեղադրող՝	**Պ. Թոխյանի**
դատապաշտպան՝	**Ա. Մաթեւոսյանի**
թարգմանիչներ՝	**Տեր-Իսայանի եւ Ա. Գրիգորյանի**

քաղ. Երեւանում դատական դռնբաց նիստում քննության առնելով քրեական գործն՝ ըստ մեղադրանքի՝

1. ԳԵՈՐԳԻ ՊԱՎԵԼԻ ԽՈՄԻԶՈՒՐԻԻ, ծնվ. 1942 թ., քաղ. Բաքու, ազգությամբ վրացի, ՍՍՀՄ քաղաքացի, ամուսնացած, խնամքին ունի երկու անչափահաս երեխաներ, բարձրագույն կրթությամբ, անկուսակցական, չդատված, ֆիզիկապես առողջ, մինչեւ ձերբակալվելն աշխատել է Հայկական ԳԱ երկրաբանության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող, բնակվել է Երեւանի Գայդարի փող. 7 բն. 26-ում, գործով կալանքի տակ է 1982 թ. նոյեմբերի 10-ից, մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր.-ի 65 հոդ. առաջին մասով:

2. ՌԱՖԱՅԵԼ ԱՇՈՏԻ ՊԱՊԱՅԱՆԻ, ծնվ. 1942 թ., քաղ. Երեւան, ազգությամբ հայ, ՍՍՀՄ քաղաքացի, ամուսնացած, խնամքին երկու անչափահաս երեխա, բարձրագույն կրթությամբ, անկուսակցական, չդատված, 1983 թ. մայիսի վերջին ստացել է աջ կոնքոսկրի փակ կոտրվածք, մինչեւ ձերբակալվելն աշխատել է Երեւանի պետական համալսարանում՝ որպես ավագ գիտաշխատող, բնակվել է քաղ. Երեւան, Կասյան 3 բն. 25-ում, գործով կալանքի տակ է 1982 թ. նոյեմբերի 10-ից, մեղադրվում է ՀՍՍՀ քր. օր.-ի 65 հ. առաջին մասով:

Դատաքննությամբ կոլեգիան ապացուցված համարեց հետեւյալը.

Ամբաստանյալները սովետական իշխանությունը թուլացնելու եւ քայքայելու նպատակով՝ Խոմիզուրին 1969-1982 թթ. Մոսկվա եւ Երեւան քաղաքներում, իսկ Պապայանը 1976-1982 թթ. Երեւանում՝ զբաղվել են հակասովետական քայքայիչ ագիտացիայով ու պրոպագանդայով՝ պատրաստել, պահել եւ տարածել են սովետական պետական եւ հասարակական կարգերը արատավորող զրպարտչական գրականություն:

Այսպես, ամբաստանյալ Խոմիզուրին նշված ժամանակահատվածում Մոսկվա եւ Երեւան քաղաքներում «Էռնեստ Գարաեւ» կեղծանվամբ պատրաստել եւ իր «Ռայնմետալ» մակնիշի գրամեքենայի վրա բազմացրել, պահել եւ տարածել է գրականություն՝ վերնագրված «ՍՄԿԿ ղեկավարության պատմությունը», «ՍՄԿԿ նոր ղեկավարությու-

նը», «Վ. Ի. Լենինի քննադատական ժառանգությունը», «Ա. Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը (Բերիայի դավադրությունը) գրքի գրախոսությունը», «ՍՍՀՄ նոր ղեկավարությունը», «Մամլո ասուլիս ժանտախտի ժամանակ», «Տեռորի խրոնոլոգիան», «Նիժնի Տագիլի մետաղագործական կոմբինատի բանվորների բաց նամակը ՍՍՀՄ ԳԱ նախագահությանը», «26 հայտնիներով հավասարում», «Մեծ տեռորի հանրագումարը», որոնք պարունակում են սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ:

Այդ գրականությունից 1974-1980 թթ., Մոսկվա քաղաքում իր ծանոթ Ս. Ա. Կուրենկովին է տվել հետեւյալները՝ «Նիժնի Տագիլի մետաղագործական կոմբինատի բանվորների բաց նամակը ՍՍՀՄ ԳԱ նախագահությանը», «Վ. Ի. Լենինի քննադատական ժառանգությունը», «ՍՄԿԿ ղեկավարության պատմությունը», «ՍՍՀՄ նոր ղեկավարությունը», «ՍՄԿԿ նոր ղեկավարությունը», «Ա. Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը (Բերիայի դավադրությունը)» գրքի գրախոսությունը» եւ «Մամլո ասուլիս ժանտախտի ժամանակ»:

Խոմիզուրին 1976-1981 թթ. Մոսկվայում իր ծանոթ Վ. Ա. Լեգլերին է տվել «ՍՄԿԿ ղեկավարության պատմությունը», «Վ. Ի. Լենինի քննադատական ժառանգությունը», «Ա. Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը (Բերիայի դավադրությունը)» գրքի գրախոսությունը», «ՍՍՀՄ նոր ղեկավարությունը»:

1979-1982 թթ. ընթացքում Խոմիզուրին Երեւանում ամբաստանյալ Պապայանին է տվել հետեւյալ ստեղծագործությունները. «ՍՄԿԿ ղեկավարության պատմությունը», «Վ. Ի. Լենինի քննադատական ժառանգությունը», «Նիժնի Տագիլի մետաղագործական կոմբինատի բանվորների բաց նամակը ՍՍՀՄ ԳԱ նախագահությանը», «ՍՍՀՄ նոր ղեկավարությունը», «ՍՄԿԿ նոր ղեկավարությունը», «26 հայտնիներով հավասարում», «Մամլո ասուլիս ժանտախտի ժամանակ», «Ա. Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը (Բերիայի դավադրությունը)» գրքի գրախոսությունը», «Տեռորի խրոնոլոգիան»:

Նույն ժամանակ իր ստեղծագործություններից Խոմիզուրին Երեւանում փոխանցել է մեկ այլ գործով մեղադրյալ Էդմոնդ Ավետյանին «ՍՄԿԿ ղեկավարության պատմությունը», «Վ. Ի. Լենինի քննադատական ժառանգությունը», «ՍՄԿԿ նոր ղեկավարությունը», «26 հայտնիներով հավասարում», «ՍՍՀՄ նոր ղեկավարությունը», «Մեծ տեռորի հանրագումարը», «Ա. Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը (Բերիայի դավադրությունը)» գրքի գրախոսությունը», «Տեռորի խրոնոլոգիան», «Մամլո ասուլիս ժանտախտի ժամանակ», «Նիժնի Տագիլի մետաղագործական կոմբինատի բանվորների բաց նամակը ՍՍՀՄ ԳԱ նախագահությանը»:

Խոմիզուրին 1981-1982 թթ. Երեւանում իր «26 հայտնիներով հավասարում» ստեղծագործությունը տվել է իր ծանոթ, ներկայումս արտասահմանում ապրող Կ. Ի. Ագուլյանին:

Բացի դրանից, ամբաստանյալ Խոմիզուրին 1969-1982 թթ. Մոսկվայում եւ Երեւանում ձեռք է բերել եւ պահել հակասովետական-զրպարտչական բովանդակությամբ հետեւյալ գրականությունը.

Ա. Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ» եւ Ի. Շաֆարեւիչի «Սոցիալիզմը որպես համաշխարհային պատմական երեւույթ» գրքերի ֆոտոպատճենները, Ի. Ռուսլանովի «Երիտասարդները ռուսական պատմության մեջ» գիրքը («Պոսեւ» հրատարակչություն), ՀՏՀ հրատարակչության «Թանկագին ընկեր» տպագրական տեքստը, «Պոսեւ» N7-1976 թ. կրճատված հրատարակությունը, Ա. Սոլժենիցինի «Նամակներ առաջնորդներին»-ի կապակցությամբ հոդվածների ժողովածուն, «Ինչ է սպասվում Սովետական Միությանը», Մ. Բուլգակովի «Շան սիրտը» եւ Ա. Ջինովեւի «Բացվող բարձունքներ»

գրքերի պատճենները, «Իսկ լկստված Շեպչինսկին, գնդակահարված գեներալի որդին» տպագրական տեքստի ֆոտոօրինակը, «Ուժերից վեր էր այս գիրքը գրելը», «Ն. Ս. Խրուշչով. Հուշեր» մեքենագիր տեքստը (հատվածներ), «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկա», «Մարդու իրավունքների համար պայքարը Սովետական Միությունում շարունակվում է…», «Ռոբերտ Նազարյանի վերջին խոսքը», «Հայկական ՍՍՀ փաստաբանների կոլեգիայի անդամի ելույթը», Ա. Ավտորխանովի «Մահախոսական Ստալինի մահվան կապակցությամբ» եւ «Իշխանության տեխնոլոգիան» («Պոսեւ» հրատարակչություն), «ՍՍՀՄ-ում հաշմանդամների իրավունքների պաշտպանության նախաձեռնող խմբի բյուլետենը», Ջորջ Օրվելի «1984», Եվգենի Զամյատինի «Մենք», Ալեքսանդր Զինովեւի «Առանց Լոզանի պատրանքների 1979» եւ «Լուսավոր ապագա», Վաս. Գրոսմանի «Ամեն ինչ հոսում է», Ալեքսանդր Գալիչի «Երգերի գիրք», Ռ. Ա. Պապայանի «Խոմիզուրի ազգանվան ստուգաբանությունը» եւ «Խեւսուրյան բանաստեղծության տիպաբանությունը», «Մ. Բուլգակովի ՍՍՀՄ կառավարությանն ուղղված նամակներից», «Մատնված հույս» (Ժ. Շտերն 1981 N 41), «ОК ПЛЮГПХ ժողովի N2 տեղեկատվական բյուլետեն», Վիկտորյա Շվայցեր «Եղբայրական գերեզման» (սինտեքսիս 1979 N4), Ա. Սոլժենիցին «Ինչպես է հորթը կաղնուն պոզահարում», «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ», «Առաջին շրջանում», «Քաղցկեղի մասնաշենքը», «40-ամյակի կապակցությամբ…», «Ընդամենը մեկ ժամ», «ՍՍՀՄ-ում ԱԲԲ բանտարկյալների հարազատների խորհուրդ», «ԱԻԱ «Սոլիդարնոստի» առաջին համագումարի պատվիրակների կոչը Արեւելյան Եվրոպայի աշխատավորներին», Ա. Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ» եւ Ա. Ավտորխանովի «Պարտոկրատիայի ծագումը» գրքերի ֆոտոնեգատիվները, ձեռագիր տեքստեր, վերնագրված՝ «Պատասխան Զիմյանինին եւ Լ-ին», «Զրույց», ինչպես նաեւ ՍՄԿԿ նախկին ղեկավարներից մեկի ծաղրանկարի ֆոտոպատճենը:

Երեւան եւ Մոսկվա քաղաքներում Խոմիզուրին թվարկված գրականությունից բազմացրել է իր գրամեքենայով «Սովետական Միությունում շարունակվում է պայքարը մարդու իրավունքների համար…», «Ն. Ս. Խրուշչով, Հուշեր», Ջորջ Օրվել «1984», Եվ - գենի Զամյատին «Մենք», Ա. Ավտորխանով «Մահախոսական Ստալինի մահվան կապակցությամբ», «ԱԻԱ «Սոլիդարնոստի» առաջին համագումարի պատվիրակների կոչը Արեւելյան Եվրոպայի աշխատավորներին», «ՍՍՀՄ-ում հաշմանդամների իրավունքների պաշտպանության նախաձեռնող խմբի բյուլետենը», «Տեղեկատվական բյուլետեն N2», Ալեքսանդր Զինովեւ «Լուսավոր ապագա», «Առանց պատրանքների…» եւ «Բացվող բարձունքներ», Ա. Գալիչ «Երգերի գիրք», Ա. Սոլժենիցին «Ինչպես էր հորթը կաղնուն պոզահարում», «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ», «Առաջին շրջանում» եւ «Քաղցկեղի մասնաշենքը»:

Ամբաստանյալ Խոմիզուրին իր ձեռք բերած գրականությունից փոխանցել է իր ծանոթներին. Ս. Ա. Կուրենկովին 1974-1980 թթ. Մոսկվա քաղաքում՝ Ա. Զինովեւի «Բացվող բարձունքներ» եւ Ա. Սոլժենիցինի «Ինչպես էր հորթը կաղնուն պոզահարում», «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ», «Առաջին շրջանում» եւ «Քաղցկեղի մասնաշենքը», Վ. Ա. Լեգլերին 1976-1981 թթ. Մոսկվայում՝ Ա. Ս. Սոլժենիցինի «Առաջին շրջանում»,

Գործով ամբաստանյալ Պապայանին 1979-1982 թթ. Երեւան քաղաքում՝ Ա. Ավտորխանովի «Մահախոսական Ստալինի մահվան կապակցությամբ», Ա. Գալիչի «Երգերի գիրք», Ջորջ Օրվելի «1984», Եվգենի Զամյատինի «Մենք», «Տեղեկատվական բյուլետեն N2», Ա.Սոլժինիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ» եւ Ա. Ավտորխանովի «Պարտոկրատիայի ծագումը» գրքերի ֆոտոնեգատիվները:

Այլ գործով մեղադրյալ էդմոն Ավետյանին 1979-1982 թթ. Երեւան քաղաքում՝ Ա. Գալիչի «Երգերի գիրք» ստեղծագործությունը:

Խոմիզուրին նաեւ Մոսկվա քաղաքում իր ծանոթներին փոխանցելով տարածել է.

1970 թ.՝ Մ. Բուլգակովի «Շան սիրտը», 1976-1978 թթ.՝ Ա. Զինովեւի «Բացվող բարձունքներ», իսկ 1979-1982 թթ.՝ Ա. Ավտորխանովի «Մահախոսական Ստալինի մահվան կապակցությամբ»:

1979-1982 թթ. Խոմիզուրին ամբաստանյալ Պապայանից ստացել եւ պահել է սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ պարունակող գրականություն՝ «Խեւսուրյան բանաստեղծության տիպաբանությունը», «Խոմիզուրի ազգանվան ստուգաբանությունը» եւ Վոլոշինի «Բանաստեղծությունների ժողովածուն», իսկ 1978 թ. գործով վկա Կուրենկովից՝ «Ընդամենը մեկ ժամ»-ը:

Ամբաստանյալ Պապայանը դեռ 1977 թ. ծանոթանալով ներկայումս հակասովետական գործունեության համար դատապարտված Ռոբերտ Նազարյանի հետ եւ համամիտ լինելով նրա հակասովետական հայացքներին, նրանից ստացել եւ պահել է, այսպես կոչ - ված, մոսկովյան եւ հայաստանյան հելսինկյան խմբերի դեկլարացիան: Այդ ժամանակ էլ Պապայանը իր գրամեքենան տվել է նույն Նազարյանին, որի վրա նա բազմացրել է հակասովետական զրպարտչական բովանդակության հետեւյալ նյութերը՝ «Ինչու ես այրեցի նրան», «ՍՄԿԿ գլխավոր քարտուղարին», «ՍՍՀՄ արդարադատության նախարարին», «ՍՍՀՄ գերագույն դատախազին», «Անվտանգության խորհրդակցության մասնակից պետությունների ներկայացուցիչներին…», «Պարույր Հայրիկյանի վերջին խոսքը»:

Այդ նյութերը բազմացնելուց հետո Պապայանը Նազարյանից ստացել է դրանք, ծանոթացել, կատարել իր ուղղումները եւ վերադարձրել, իսկ գրամեքենան ոչնչացրել է:

Ամբաստանյալ Պապայանը 1976-1977 թթ. մագնիտաֆոնով ձայնագրել է «Գերմանական ալիք» հակասովետական բովանդակություն ունեցող հաղորդումից Մարչենկոյի «Իմ ցուցմունքները» եւ գրամեքենայով բազմացրել երկու օրինակից, որոնցից մեկը տարածել է՝ փոխանցելով 1977 թ. այլ գործով մեղադրյալ Ավետյանին, իսկ մյուս օրինակը պահել է իր մոտ:

1977-1981 թթ. Պապայանը պահել եւ տարածել է իր կողմից ձեռք բերված հակասովետական գրականությունը: Այսպես, նա այդ գրականությունից էդմոնդ Ավետյանին եւ Արփիկ Պապայանին է տվել Ա. Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ» եւ «Նամակ սովետական գրողների միության համագումարի նախագահությանը»: Բացի դրանից, Ավետյանին է տվել նաեւ «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկան N47», իսկ Արփիկ Պապայանին՝ Վոլոշինի «Բանաստեղծությունների ժողովածուն», Բունինի «Անիծված օրերը» եւ, այսպես կոչված, հայկական եւ մոսկովյան հելսինկյան խմբերի դեկլարացիաները:

Այդ ժամանակաշրջանում ամբաստանյալ Պապայանը հակասովետական զրպարտչական բնույթի գրականություն է տվել իր ծանոթներ Օլեգ Գրիգորյանին, Լեւոն Հակոբյանին եւ Վալերի Քուրդյանին:

Այսպես, Պապայանն իր տանը Օլեգ Գրիգորյանին տվել է կարդալու Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ»-ի առաջին հատորի քսերոպատճենը, Մարչենկոյի «Իմ ցուցմունքները», «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկա N47», իսկ 1981 թ. Ա. Ավտորխանովի «Իշխանության տեխնոլոգիայի» ֆոտոպատճենը, որը նա ստացել է վերը հիշատակված Կ. Ի. Ագուլյանից եւ պատճենել իր «Զենիթ» ֆոտոապարատով:

Նույն 1977 թ. Պապայանը Լեւոն Հակոբյանին է տվել Ա. Սոլժենիցինի «14-ի օգոս-

տոսը» գրքի ֆոտոպատճենը, որը ստացել է Մոսկվայում բնակվող Նատաշա Բաբիցկայայից, որը ներկայումս մեկնել է արտասահման մշտական բնակության, իսկ Վալերի Քուրդյանին է տվել Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ»-ի առաջին հատորի քսերոպատճենը: 1980-1981 թթ. Պապայանը տվել է նույն Քուրդյանին «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ»-ի երկրորդ հատորի եւ Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը» ֆոտոպատճենները, որոնք նա 1980 թ. ստացել էր, համապատասխանաբար, Բաբիցկայայից եւ ամբաստանյալ Խոմիզուրիից:

Ամբաստանյալ Պապայանը 1976 թ. իր «Զենիթ» ապարատով լուսանկարելու միջոցով կազմել է Նաբոկովի «Նվեր» գիրքը եւ պահել: 1977 թ. իր «Օպտիմա» գրամեքենայի վրա երեք օրինակից նա բազմացրել է Օսիպ Մանդելշտամի զրպարտություն պարունակող «Չորրորդ արձակը» ստեղծագործությունը, մի օրինակը հետագայում տվել է ամբաստանյալ Խոմիզուրիին, իսկ երկու այլ օրինակներն՝ այլ մարդկանց:

1978 թ. Պապայանը ձեռք է բերել եւ պահել «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկա N48», իսկ 1981 թ.Ն. Բաբիցկայայից ստացած մեքենագիր տեքստը, որը վերնագրված է «Տ. Վելիկանովայի պաշտպանության կոմիտե» եւ իր մեջ պարունակում է սովետական պետության հասցեին զրպարտչական հերյուրանքներ:

Պապայանը 1981 թ. պատրաստել եւ մեքենագիր տարբերակով բազմացրել է «Խեւսուրյան բանաստեղծության տիպաբանությունը» եւ «Խոմիզուրի ազգանվան ստուգաբանությունը» զրպարտչական հերյուրանքներ պարունակող տեքստերը եւ յուրաքանչյուրից մեկ օրինակ տվել է Խոմիզուրիին: Նույն ժամանակ էլ նա տարածել է հակասովետական բովանդակությամբ Մ. Վոլոշինի «Բանաստեղծությունների ժողովածուն»՝ տալով Խոմիզուրիին:

1982 թ. գարնանը Պապայանը Երեւանում ձեռք է բերել Ա. Ավտորխանովի զրպարտչական բովանդակությամբ «Բրեժնեւի ուժը եւ թուլությունը» ստեղծագործությունը եւ «Զենիթ» ապարատով լուսանկարել ու պահել իր մոտ:

Նա ինքը՝ սկսած 1977 թ., Երեւան քաղաքում տարբեր ժամանակահատվածներում ստացել է վերը հիշատակված Ավետյանից եւ պահել՝ մեքենագրված հակասովետական զրպարտչական բնույթի գրականություն, վերնագրված՝ Սոլժենիցինի «Նամակներ առաջնորդներին»-ի կապակցությամբ հոդվածների ժողովածու, «Ինչ է սպասում սովետական միությանը», Ավտորխանովի «Պարտոկրատիա» գրքից առանձին հատվածներ, Բյուլի «Խաղաղությունն ազատություն չէ», Վ. Դելոնեի «Ճամբարային էքսպրոմտներ» եւ «Նոթեր ինքնակենսագրության համար», «Քամյուի ելույթը Նոբելյան մրցանակ ստանալիս», Ամալրիկի «Գոյություն կունենա՞ արդյոք սովետական միությունը մինչեւ 1984 թ.», «Բելենկովի նամակը Պեն-Կլուբի կոնգրեսին», «Հայկական ՍՍՀ դատապաշտպանների կոլեգիայի անդամի ելույթը», Տ. Խոդորովիչի «Խղճի թելադրանքով», ինչպես նաեւ նույնպես հակասովետական բովանդակության ձեռագիր տեքստեր՝ վերնագրված «Ստալինյան ռեժիմի զոհերի թվագումարը», «Լենինի մահը», «1931-1934 թթ. մեծ շնորհը», «Աստվածները տենչում են», «Ստալինի բնական մահը», «Ստալինի առաջխաղացումը», «Վեցգլխանի հիդրան. Ստալինի քաղաքական ցանցը»:

Ամբաստանյալ Պապայանը 1979-1982 թթ. Երեւան քաղաքում ամբաստանյալ Խոմիզուրիից ստացել եւ պահել է հակասովետական զրպարտչական բովանդակությամբ նյութեր՝ Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ»-ը եւ Ավտորխանովի «Պարտոկրատիայի առաջացումը» գրքերի ֆոտոպատճենները, Գալիչի «Երգերի գիրքը», Ջորջ Օրվելի «1984», Զամյատինի «Մենք», «Տեղեկատվական բյուլետեն համար 2», Ավտորխանովի «Մահախոսական Ստալինի մահվան կապակցությամբ», ինչպես նաեւ ամբաստան-

յալ Խոմիզուրիի կողմից պատրաստված եւ «Էռնեստ Գարաեւ» կեղծանվամբ ստորագրված՝ «ՍՄԿԿ նոր ղեկավարությունը», «ՍՍՀՄ նոր ղեկավարությունը», «ՍՄԿԿ ղեկավարության պատմությունը», «Վ. Ի. Լենինի քննադատական ժառանգությունը», «26 հայտնիներով հավասարում», «Նիժնի Տագիլի մետալուրգիական կոմբինատի աշխատողների բաց նամակը ՍՍՀՄ ԱՆ նախագահությանը», «Տեռորի խրոնոլոգիան», «Մամլո ասուլիս ժանտախտի ժամանակ» եւ «Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը (Բերիայի դավադրությունը)» գրքի գրախոսականը:

1982թ. սկզբին Պապայանը վերեւում հիշատակված Կ. Ի. Ագուլյանից ստացել եւ պահել է Ա, Ավտորխանովի «Իշխանության տեխնոլոգիան» եւ Ա. Զինովեւի «Լուսավոր ապագա» գրքերի առանձին հատվածների ֆոտոպատճենները, ինչպես նաեւ ԱՄՆ-ում Սոլժենիցինի ունեցած ելույթի մագնիտաֆոնային ձայնագրությունը, որը պարունակում է հակասովետական եւ զրպարտչական հերյուրանքներ, ինչը լսել է իր հոր մագնիտաֆոնով:

Վերոշարադրյալը հաստատված է Խոմիզուրիի եւ Պապայանի կողմից իրենց մեղքի մասնակի հանձնառմամբ, վկաների ցուցմունքներով, իրեղեն ապացույցներ հանդիսացող հակասովետական-զրպարտչական բնույթի գրականությամբ, տեխնիկական եւ ձեռագրաբանական մասնագիտական եզրակացություններով:

Ամբաստանյալ Խոմիզուրին եւ Պապայանն ընդունեցին իրենց կողմից հիշատակված անձանց մեջ նշված գրականության պատրաստելու, պահելու եւ տարածելու հանգամանքը: Նրանք հաստատեցին խուզարկության ժամանակ այդ գրականության հայտնաբերումը եւ առգրավումը՝ ինչպես իրենց բնակարաններում, այնպես էլ՝ այլ գործով ամբաստանյալ Ավետյանի եւ վկաներ Ս. Ա. Կուրենկովի եւ Վ. Ա. Լեգլերի մոտ:

Խոմիզուրին եւ Պապայանը հաստատեցին ինչպես իրենցից յուրաքանչյուրի տված ցուցմունքները, այնպես էլ՝ Կուրենկովի, Լեգլերի, Օլեգ Գրիգորյանի, Լեւոն Հակոբյանի, Վալերի Քուրդյանի եւ Արփիկ Պապայանի ցուցմունքները:

Խոմիզուրին միաժամանակ ցուցմունք տվեց, որ իր անվտանգությունը ապահովելու նպատակով նշված գրականությունը պատրաստել է «Էռնեստ Գարաեւ» կեղծանվամբ: Նա նաեւ հայտարարեց, որ «էթիկական նկատառումներից ելնելով» հրաժարվում է տալ այն մարդկանց անունները, ումից Մոսկվա քաղաքում ձեռք է բերել կամ ում տվել է նշված գրականությունը: Խոմիզուրին ընդունեց, որ իր առանձին ստեղծագործություններում թույլ է տվել անթույլատրելի խստություն, տարբեր պատմական դեպքերից արել է սխալ եզրահանգումներ եւ առանձին դեմքերի տվել է ոչ ճիշտ գնահատականներ:

Ամբաստանյալ Խոմիզուրին եւ Պապայանը, դրա հետ մեկտեղ, ցուցմունք տվեցին, որ իրենց գործողություններով սովետական իշխանությունը քայքայելու կամ թուլացնելու նպատակ չեն հետապնդել: Սակայն, սույն ցուցմունքները հակասում են գործի օբյեկտիվ հանգամանքներին, այդ պատճառով էլ դատական կոլեգիային վստահություն չեն ներշնչում:

(հ.1 գ.թ. 47-50, 55-85, 88-91, 101-102, 105-107, 123-128, 152-300; հ 2 գ.թ. 1-55, 65-78,; հ 31 դատական նիստի արձանագրության էջ 10-11, 14-36, 41-75, 101-105)

Վկա Ս. Ա. Կուրենկովը ցուցմունք տվեց, որ ամբաստանյալ Խոմիզուրին 1972-1980 թթ. ք. Մոսկվայում իրեն է տվել Զինովեւի «Բացվող բարձունքներ» եւ Ա. Սոլժենիցինի «Ինչպես էր հորթը կաղնուն պոզահարում», «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ», «Առաջին շրջանում» եւ «Քաղցկեղի մասնաշենքը» ստեղծագործությունները, որոնք խուզարկության ժամանակ հայտնաբերվել են իր մոտ:

(հ.2 գ.թ. 250-252; հ.3 գ.թ. 285; հ.31 գ.թ. 16, 99)

Վկա Վ. Ա. Լեգլերը վկայել է, որ 1976-1980 թթ. ք. Մոսկվայում Խոմիզուրին, ում կեղծանունը Էռնեստ Գարաեւ է, նրան է տվել հետեւյալ գրականությունը. Է. Գարաեւ «ՍՄԿԿ ղեկավարության պատմությունը», «Վ. Ի. Լենինի քննադատական ժառանգությունը», Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը» (Բերիայի դավադրությունը) գրքի գրախոսականը, «ՍՍՀՄ նոր ղեկավարությունը» եւ Սոլժենիցինի «Առաջին շրջանում»:

(հ. 2 գ.թ. 227-236, 258-261, հ. 30 գ.թ. 288, հ.31 գ.թ. 15, 99)

Վկա Օլեգ Գրիգորյանը վկայել է, որ 1977 թվականից ծանոթ լինելով ամբաստանյալ Պապայանին, հաճախ է եղել նրա բնակարանում, տեսել է այնտեղ պաշտոնապես չհրատարակված, այդ թվում՝ հակասովետական բովանդակությամբ գրականություն, կոնկրետ՝ Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ»-ը (առաջին հատորը), Մարչենկոյի «Իմ ցուցմունքները», Ավտորխանովի «Իշխանության տեխնոլոգիան», «Ընթացիկ դեպքերի խրոնիկա N47»-ը, ընդ որում `վերջին երկուսն ինքը կարդացել է այնտեղ՝ Պապայանի բնակարանում:

(հ.2 գ.թ. 181-196, հ.31 գ.թ. 91-97):

Վկա Լեւոն Հակոբյանը հաստատեց, որ Ռ. Ա. Պապայանից ստացել է Սոլժենիցինի «14-ի օգոստոսը» գրքի ֆոտոպատճենը (հ.2 գ.թ.197-202 եւ հ. 31 գ.թ. 99), վկա Վ. Վ. Քուրդյանը վկայեց, որ ստացել է ամբաստանյալ Պապայանից Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ»-ի առաջին եւ երկրորդ հատորները եւ Ավտորխանովի «Ստալինի մահվան հանելուկը» գրքերը (հ.2 գ.թ. 209-221, հ. 31 գ.թ. 85-91), վկա Արփիկ Պապայանը վկայեց, որ ամբաստանյալ Պապայանից ստացել է Վոլոշինի «Բանաստեղծություններ-ի ժողովածուն», այսպես կոչված՝ մոսկովյան եւ հայկական հելսինկյան խմբերի դեկլարացիան, Սոլժենիցինի «Արշիպելագ ԳՈՒԼԱԳ» (առաջին հատորը) եւ «Նամակ սովետական գրողների համագումարի պատվիրակներին» (հ.2 գ.թ.143-161, հ.31 գ.թ.75-85) ու ծանոթացել:

Ամբաստանյալներ Խոմիզուրիի եւ Պապայանի մեղքը հաստատվում է նաեւ խուզարկությունների ժամանակ՝ իրենց մոտից, այլ գործով մեղադրյալ Ավետյանի մոտից եւ վկաներ Կուրենկովի ու Լեգլերի մոտից առգրավված գրականությամբ, որոնք իրեղեն ապացույց են ճանաչվել եւ կցվել գործին (հ.1 գ.թ.5-24, 130-143, հ. 2 գ.թ.80-107, հ.30 գ.թ.285-288):

Այդ գրականության դիտարկման արձանագրությունից երեւում է, որ դրանց մեջ առկա են սովետական պետական եւ հասարակական կարգը արատավորող զրպարտչական հերյուրանքներ (հ.3 գ.թ.1-175):

Ամբաստանյալների մեղքը հաստատվում է նաեւ Խոմիզուրիի մոտից առգրավված «Ռայնմետալ» (N 092552) մակնիշի գրամեքենայով եւ ձեռագրաբանական ու տեխնիկական ամբողջական փորձաքննութամբ, ինչը հաստատում է, որ Խոմիզուրիի եւ Պապայանի, այլ գործով մեղադրյալ Ավետյանի եւ վկաներ Կուրենկովի, Լեգլերի մոտից առգրավված, Էռնեստ Գարաեւ կեղծանվամբ ստորագրված գրականության մի մասը տպագրվել է նշված գրամեքենայով, եւ այդ ստեղծագործությունները նույն տեքստի պատճեններ են: Իսկ Խոմիզուրիի մոտից առգրավված այդ գրությունների սեւագրությունները արված են Խոմիզուրիի կողմից (հ.3 գ.թ. 176-264):

Ամբաստանյալ Պապայանի մեղքը հաստատվում է եւ նրա բնակարանում խուզարկությամբ հայտնաբերված «Օպտիմա» (N980640) մակնիշի գրամեքենայով, որի վրա նա բազմացրել է գործով անցնող գրականությունը, «Զենիթ» ֆոտոապարատով, որով Պապայանը լուսանկարել է վերը հիշատակված գրքերի տեքստերը, ձեռագրաբանական եւ տեխնիկական փորձաքննության ամբողջական եզրակացությամբ, ինչը մաս-

նավորապես հաստատում է, որ Մանդելշտամի «Չորրորդ արձակը» բազմացվել է նշված գրամեքենայով, եւ Պապայանի մոտից առգրավված գրականության մի մասը՝ ստորագրված «Էռնեստ Գարաեւ» կեղծանվամբ, Խոմիզուրիի մոտից առգրավվածի կրկնօրինակներն են եւ արվել են վերջինիս պատկանող «Ռեյնմետալ» գրամեքենայի վրա (հ.4 գ.թ. 1-8, հ.16 գ.թ. 1-6 եւ հ.3 գ.թ.176-264):

Գործի նյութերից երեւում է, որ ամբաստանյալ Պապայանը 1977 թ. դեկտեմբերից սկսած՝ ՊԱԿ օրգանների եւ Երեւանի պետհամալսարանի ֆակուլտետի կողմից, որտեղ ինքը աշխատել է որպես դասախոս, իր քաղաքականապես վնասակար անթույլատրելի գործունեության համար մի քանի անգամ նախազգուշացվել է (հ.30 գ.թ.298, 316):

Ողջ շարադրվածից երեւում է, որ Խոմիզուրիի եւ Պապայանի մեղքը գործով ապացուցված է, եւ նրանց հանցավոր գործունեությունը ՀՍՍՀ քր. օր. 65 հոդ. 1-ին մասով ճիշտ է որակված:

Պատիժ սահմանելիս դատական կոլեգիան հաշվի է առնում ինչպես գործած հանցանքի հասարակական վտանգավորության աստիճանը, այդպես էլ՝ ամբաստանյալներ Խոմիզուրիի եւ Պապայանի անձերը, որոնց առաջին դատվածությունն է, նրանցից յուրաքանչյուրը խնամքին ունի երկու անչափահաս երեխա, աշխատանքում բնութագրվում են դրական:

Վերը շարադրվածի հիման վրա եւ առաջնորդվելով Հայկ. ՍՍՀ քր. դատ. օր.-ի 293-294հհ. Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան

ՎՃՌԵՑ

Ամբաստանյալներ Գեորգի Պավելի Խոմիզուրիին եւ Ռաֆայել Աշոտի Պապայանին մեղավոր ճանաչել Հայկական ՍՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործություններում, այս հիմքով էլ դատապարտել ազատազրկման խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում.

Խոմիզուրի Գ. Պ.՝ վեց (6) տարի ժամանակով եւ աքսորով երեք (3) տարի

Պապայան Ռ. Ա.՝ չորս (4) տարի ժամանակով եւ երկու (2) տարի աքսոր:

Դատապարտյալներ Խոմիզուրիի եւ Պապայանի պատժի կրման սկիզբը հաշվել 1982 թ. նոյեմբերի 10-ից:

Դատական ծախսերը՝ 172 ռ., բռնագանձել Խոմիզուրիից եւ Պապայանից, յուրաքանչյուրից 86 ռ.:

Մեղադրական եզրակացության 5-րդ կետի (հատոր 3, գ.թ. 341) իրեղեն ապացույցների տեղեկանքում նշված. ա) դատապարտյալներին պատկանող գրամեքենաներ «Ռեյնմետալ» 092552 եւ «Օպտիմա» 980640, «Զենիթ» ֆոտոապարատը, որպես հանցագործության գործիքներ Հայկ. ՍՍՀ քր. դատ. օր.-ի 72 հ. համաձայն բռնագրավել; բ) արտասահմանյան մակնիշի մագնիտաֆոնը վերադարձնել քաղաքացի Արամաշոտ Պետրոսի Պապայանին՝ ըստ պատկանելության; գ) մնացածը (գրականությունը) պահել գործին կից:

Դատավճիռը վճռաբեկության կարգով բողոքարկման եւ գանգատարկման ենթակա չէ:

Նախագահող՝ **Ս. Մ. Ասատուրյան** - (ստորագրություն)

Ժողովրդական ատենակալներ – (ստորագրություն)

Ճիշտ է՝ գործով նախագահող՝ **Ս. Մ. Ասատուրյան**

Ռաֆֆի Մելքոնյան

1985 թ. տեղի է ունենում Խորհրդային Հայաստանի պատմության մեջ վերջին քաղաքական դատավարությունը: Երեւանի պետական համալսարանում գործող ուսանողական մի խմբի բացահայտումից հետո, որն զբաղվել էր արգելված գրականության ընթերցմամբ ու տարածմամբ, կալանավորվում է խմբին գրականություն մատակարարող, 1957 թ. ծնված հալեպահայ ուսանող **Ռաֆֆի Ղազարի Մելքոնյանը:** Նրա նկատմամբ քրեական գործը հարուցվել էր 1985 թ. փետրվարի 25-ին: Մելքոնյանին ձերբակալում են օդանավակայանում, Հալեպից Երեւան վերադառնալիս: Նրան մեղադրանք է առաջադրվում ՀԽՍՀ քր. օր.-ի 65 հոդվածի 1-ին մասով (հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա):

Ճիշտ է, գորբաչովյան վերակառուցումը եւ հրապարակայնությունը դեռ իրենց տարերքի մեջ չէին, բայց շրջանը գորբաչովյան էր. նկատելի էր, որ քաղաքական հալածանքներն ու բռնությունները թուլանում են, եւ խորհրդային երկրում ստեղծված նոր քաղաքական իրավիճակի թելադրանքով՝ բացահայտված խմբի անդամներից դատարանի առջեւ կանգնում է միայն Ռաֆֆի Մելքոնյանը: Ավելին, քրեական գործով խումբը՝ որպես այդպիսին չի երեւում, հակառակ դեպքում մեղադրանքում պետք է լիներ նաեւ ՀԽՍՀ քր. օր.-ի 67 հոդվածը: Նրան դատապարտում են այնքան պատժաչափով, որքան ժամանակահատված գտնվել է կալանավայրում՝ երեք ամիս եւ 27 օր: Դատարանի դահլիճից Մելքոնյանն ազատ է արձակվել եւ հարկադրված լքել Խորհրդային Միության սահմանները:

Ինչպես որոշ դատավճիռներ, Ռաֆֆի Մելքոնյանի նկատմամբ կայացված դատավճիռը նույնպես՝ մեզ չհաջողվեց ստանալ ԱԱԾ-ից:

Այժմ Մելքոնյանը Լոս Անջելեսում հրատարակվող «Ասպարեզ» թերթի հայկական բաժնի խմբագիրն է:



Ռաֆֆի Մեքոնյան
լուս. քր. գործից

Ռաֆֆի Մեքոնյան

Լուսանկարները վերցված են Ռուզան Խաչատրյանի՝ Ռաֆֆի Մելքոնյանին նվիրված «Հայտնի Անհայտը» ֆիլմից:

Կրիշնայականներ

1982-83 թթ. սկսած, ի թիվս այլախոհների, խորհրդային իշխանություններն սկսում են հալածել նաեւ սակավաթիվ ու, թվում է, անվտանգ կրոնական մի համայնքի՝ կրիշնայականներին: Որքան էլ զարմանալի է, այդ հալածանքները ոչ միայն հասան մինչեւ 1985 թ., այլեւ շարունակվեցին դրանից հետո: 1985-ին, կարծես, խորհրդային երկիրը սկսել էր թեւակոխել ազատամտության ու բացախոսության մի այնպիսի շրջան, որից հետո պետք է քաղաքական ու կրոնական հետապնդումների վերջակետը դրվեր: Ակնհայտ էր, որ քաղաքական մթնոլորտը փոխվում էր, եւ նոր հետապնդումներ չպետք է լինեին: Սակայն, կրիշնայականների նկատմամբ հետապնդումները ոչ միայն չէին դադարում, այլեւ ավելի ու ավելի էին սաստկանում: Թե ինչու այդ շրջանում խորհրդային իշխանությունները նրանց հալածելու վճիռ կայացրեցին, ինչը կարող էր նման հալածանքների պատճառ դառնալ՝ շարունակում է անհայտ մնալ: Որպես առիթ օգտագործվեց Կրիշնա գիտակցության միջազգային ընկերության ուսուցիչներից մեկի այցը Մոսկվա: Նրա քարոզները եւ ծավալած գործունեությունը չէր արժանացել խորհրդային իշխանությունների հավանությանը, եւ այդ մարդուն արտաքսել էին Խորհրդային Միությունից: Ահա այս արտաքսումից հետո սկիզբ առան կրիշնայականների նկատմամբ հալածանքները: Հենց այս դեպքն են հալածանքների հնարավոր պատճառ մատնանշում այդ տարիների կրիշնայականները: Բայց սա հալածանքների ծավալման հնարավոր պատճառներից միայն մեկը կարող էր լինել: Թե իրականում ինչ փաստարկներով են առաջնորդվել հալածանքների կազմակերպիչներն, այսօր արդեն դժվար է ասել: Միայն մեկ բան հաստատ ու հստակ է՝ հալածանքներն ուղեկցվել են բացառիկ դաժանություններով: Դաժան էին այն առումով, որ կրիշնայականներին շատ հաճախ՝ հարկադիր բուժման նպատակով տեղափոխում էին հոգեբուժարաններ, որտեղ, փաստորեն, լիովին առողջ մարդիկ հայտնվում էին հոգեկան լուրջ խնդիրներ ունեցողների միջավայրում՝ այստեղից բխող բոլոր հետեւանքներով. անհիմն դեղորայքային ներարկումներ էին անում, որոնք հոգեկան շեղումների, նույնիսկ մահվան պատճառ էին դառնում: Այլախոհների նկատմամբ խորհրդային հոգեբուժարանների դաժան վերաբերմունքի մասին այսօր արդեն շատ բան է հայտնի: Այս բնագավառին վերաբերող հսկայական գրականություն կա: Իսկ ահա այն կրիշնայականները, որոնք դատապարտվում էին ազատազրկման՝ հայտնվում էին ոչ թե քաղաքական կալանավորների համար նախատեսվող կալանավայրերում, այլ քրեական միջավայրում, որտեղ նրանց նկատմամբ վերաբերմունքը պակաս դաժան չէր լինում:

Խորհրդային պետությունն իր ողջ պատմության ընթացքում բռնությունների է ենթարկել ամենատարբեր կրոնական համայնքների ու կազմակերպությունների անդամների: Խորհրդային բանտերն ու կալանավայրերը միշտ էլ լցված են եղել տարբեր դավանանքների տեր հավատացյալներով ու հոգեւորականներով: Դեռ իր կազմավորման առաջին տասնամյակներում էր խորհրդային իշխանությունը թշնամական հայտարարել ցանկացած եկեղեցի, կրոնական ուղղություն ու դավանանք: Ստալինյան բռնատիրության տարիներին հոգեւորականներն ու հավատացյալներն ինքնաբերաբար համարվում էին օրենքից դուրս ու հալածվում էին: Հիսունականների ողջ ղեկավար կազմը 1930-ին կալանավորված ու դատապարտված էր: Պակաս ծանր վիճակում չէին բապտիստները եւ այլ կրոնական ուղղությունների ներկայացուցիչներ: Ետստալինյան տարիներին այս բռնություններն ու հետապնդումները նահանջեցին ու դադարեցին հա-

մատարած բնույթ կրել: 1960-ականների սկզբներից պետությունը նոր վերաբերմունք որդեգրեց կրոնի նկատմամբ: 1964-ին հիմնադրվեց Գիտական աթեիզմի ինստիտուտը, իսկ 1965-ին ձեւավորվեց Կրոնի պետական կոմիտեն, որը կրոնի բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող հատուկ մարմին էր: ԽՍՀՄ Սահմանադրությունն ի սկզբանե՝ ելնելով կրոնի նկատմամբ անհատի վերաբերմունքից, մարդկանց անհավասար պայմանների մեջ էր դնում: Այս անհավասարությունը պահպանվեց նաեւ 1977 թ. ԽՍՀՄ Սահմանադրությունում: Սահմանադրության 52-րդ հոդվածն աթեիստներին իրավունք էր վերապահում ազատորեն պրոպագանդել իրենց գաղափարները, իսկ հավատացյալներին ընդամենը թույլ էր տալիս կրոնական ծեսեր իրականացնել: Բոլոր դավանանքներին էլ պատկանող եկեղեցիները գտնվում էին պետության տոտալ վերահսկողության ներքո: Ակտիվ ու նվիրված բազմաթիվ եկեղեցականներ հանդես էին գալիս իրենց հավատակիցների իրավունքների հրապարակային պաշտպանությամբ, ինչի հետեւանքով հայտնվում էին ազատազրկման վայրերում: 60-70-80-ական թվականներին շարունակում էին ընդգծված դաժան վերաբերմունքի արժանանալ Ավետարանչական ուղղությանը դավանող համայնքները, հատկապես՝ բապտիստներն ու հիսունականները: Քաղաքական կալանավորների համար նախատեսված կալանավայրերում այս ուղղությունների հետեւորդներ միշտ էլ եղել են: Բայց այստեղ հայտնվում էին միայն նրանք, ում դատապարտում էին «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով, իսկ այլ հոդվածներով դատապարտված հավատացյալներն իրենց պատիժը կրում էին քրեական կալանավայրերում: Որպես կանոն, հավատացյալները դատապարտվում էին կրոնական ծեսերի իրականացման պատրվակով՝ անձի եւ քաղաքացու իրավունքների նկատմամբ ոտնձգության եւ կրոնական ծիսակարգին վերաբերող օրենսդրությանը չենթարկվելու կոչերի, դիմումների, նամակների ու թռուցիկների տարածման համար: Նման բովանդակությամբ հոդված կար միութենական բոլոր հանրապետությունների քրեական օրենսգրքերում: Ռուսաստանում դա քր. օր.-ի 142-րդ հոդվածն էր: Հավատացյալներն, այս հոդվածով դատապարտվում ու դատապարտվում էին, բայց իրենց համոզմունքներից չէին հրաժարվում:

Ետստալինյան շրջանի Հայաստանում կրոնական հողի վրա հետապնդումներ, անկասկած, նույնպես եղել են, բայց դրա մասին մեզ քիչ բան է հայտնի: Ունենք հստակ տեղեկություններ այն մասին, որ հայազգի հավատացյալները կապված են եղել Խորհրդային Միության մյուս հանրապետություններում գործող իրենց հավատակիցների հետ, տեղեկություններ ունենք, որ երիտասարդ հայազգի հավատացյալներ են դատապարտվել խորհրդային բանակում երդում ընդունելուց հրաժարվելու համար, գիտենք, որ 1970-ականներին Գյումրիում գործել է հիսունականների համայնք, եւ նրանց հալածել ու դատապարտել են, բայց չունենք այս բնագավառի դատապարտվածների ցանկը՝ մի դեպքում այն պատճառով, որ կրոնական համայնքները, որպես կանոն, գործում էին ներփակված, իսկ մյուս դեպքում, ինչն ավելի էական է, նրանց դատապարտել եւ ուղարկել են քրեական կալանավայրեր, եւ այդ պատճառով նրանց մասին տեղեկությունները քաղաքական շրջանակներ չեն հասել:

1980-ականներին Ռուսաստանում կրիշնայականների դեմ սկիզբ առած հետապնդումները չէին կարող Հայաստան չհասնել: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում կրիշնայականները սակավաթիվ էին, չնայած նրանց գործունեությունը սահմանափակվում էր միայն յուրայինների շրջանակով, չնայած կրիշնայականներն օրենքների հետ հակասությունների մեջ չէին մտնում, միեւնույնն է, Մոսկվայից իջած հրամանով՝ հայաստանյան չեկիստները պետք է սկսեին նրանց հալածել: Այսպիսով,

1985 թ. նահանջող քաղաքական դատավարություններին ու հետապնդումներին փոխարինելու եկան կրոնական հողի վրա սկսված հետապնդումները: Հայաստանյան կրիշնայականների նկատմամբ 1982-83 թթ. սկսված, առաջին հայացքից ոչ շատ վտանգավոր թվացող հետապնդումներն աստիճանաբար սաստկացան, եւ 1985-ին ծայր առան ձերբակալությունները: Ձերբակալությունների հիմնական շարժառիթը Երեւանում կազմակերպված կրիշնայական գրականության տպագրությունն էր: Կրիշնայականները կարողացել էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տպարանում կազմակերպել գաղտնի տպագրություն եւ այդ գրականությունն առաքել ԽՍՀՄ այլ հանրապետություններ: Այս գործի մեջ միջնորդավորված կամ անմիջականորեն ներգրավված բոլորն էլ այս կամ այն կերպ պատժվեցին, իսկ 10 մարդ կալանավորվեց ու դատապարտվեց: Նրանցից մեկը՝ **Արա Հակոբյանը,** ձերբակալվել էր 1985-ի մայիսին՝ Ուկրաինայում, իսկ 9-ը՝ 1985-ի օգոստոսի եւ աշնան ընթացքում՝ Երեւանում: Հայ կրիշնայականներից **Մարտին Ժամկոչյանը** 1985-ի օգոստոսին, դատարանի որոշմամբ, հարկադիր բուժման է ուղարկվել Նուբարաշենի հոգեբուժարան, նույն՝ 1985-ի օգոստոսին հարկադիր բուժման են ենթարկվել **Կարեն Սահակյանը, Արմեն Սահակյանը, Սուրեն Կարապետյանը, Արմեն Սարգսյանը:** Վերջին չորսը սկզբում տեղափոխվել են Նուբարաշենի հոգեբուժարան, այնուհետեւ Ռուսաստան՝ Սերբսկու անվան հոգեբուժարան, ապա նորից ետ՝ Նուբարաշեն: **Գագիկ Բունիաթյանը** եւ **Սարգիս Օհանջանյանը** 1985-ին դատապարտվել են 2 տարի ազատազրկման, որը կրել են Սիբիրում, իսկ Արա Հակոբյանը՝ 1.5 տարի, որը կրել է Ուկրաինայում: 1985 թ. աշնանը կալանավորվել եւ դատարանի որոշմամբ Նուբարաշենի հոգեբուժարան են տեղափոխվել **Արմինե Խտրյանը** եւ **Սերգեյ Կասյանը:** Կասյանը հոգեբուժարանում կարճ ժամանակ է անցկացրել: Արա Հակոբյանը ազատ է արձակվել վաղաժամ՝ 1986-ին, այժմ բնակվում է ԱՄՆ-ում: Մարտին Ժամկոչյանը մահացել է հոգեբուժարանում՝ ներարկված դեղորայքների հետեւանքով: Կարեն Սահակյանը ազատ է արձակվել 1987-ին, ապրում է Մոսկվայում, զբաղվում է էզոթերիկ գրականության հրատարակմամբ: Արմեն Սահակյանն ազատ է արձակվել 1987-ին, վախճանվել է 1998-ին: Սուրեն Կարապետյանը ազատ է արձակվել 1987-ին, բնակվում է Սանկտ Պետերբուրգում: Արմեն Սարգսյանը ազատ է արձակվել 1987-ին, իսկ 1998-ին ինքնասպան է եղել: Գագիկ Բունիաթյանը ազատ է արձակվել 1987-ին, այժմ ապրում է Անգլիայում: Սարգիս Օհանջանյանը վախճանվել է Սիբիրյան կալանավայրում՝ պատժի վերջնաժամկետից կարճ ժամանակ առաջ: Արմինե Խտրյանը ազատ է արձակվել 1987-ին, վախճանվել է 1994-ին: Սերգեյ Կասյանը, ապրում է Ավստրալիայում:

Այս մարդիկ դատապարտվել են իրենց կրոնական համոզմունքների համար եւ, բնականաբար, պետք է ներառվեն Հայաստանի այլախոհների ցանկում:

Պատմում է Արա Հակոբյանը

Ծնվել եմ 1966 թ. դեկտեմբերի 31-ին: Դեպի կրիշնայականություն եկել եմ ինձանից տասը տարով մեծ եղբորս միջոցով: Նա սովորում էր ֆիզմաթ թեքումով դպրոցում: Այնտեղ էլ ծանոթացել էր Սահակյան Կարենի հետ: Նրանք մտերմացել էին ու Կարենի եւ իրենց մի քանի այլ ընկերների հետ հաճախ էին հավաքվում եղբորս մոտ: Հավաքույթների ժամանակ, որպես կանոն, տոմատով կաղամբ էին տապակում, ինչը հաճույքով նրանց հետ ուտում էի նաեւ ես: Պարապում էին ու զրուցում ամենատարբեր թեմաներից:

Դպրոցն ավարտելուց հետո Կարենն ու եղբայրս մեկնեցին Մոսկվա՝ հայտնի ֆիզտեխինստիտուտն ընդունվելու նպատակով: Երկուսն էլ կտրվեցին, վերադարձան Երեւան ու ընդունվեցին մեր համալսարան, մեկը՝ ֆիզիկայի, մյուսը՝ ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, ու հաջողությամբ ավարտեցին: Եղբայրս ամուսնացավ ուսանողական տարիներին եւ առանձին էր ապրում: Նրա տանը, որտեղ հաճախ էի լինում, շատ հետաքրքիր մարդիկ էին հավաքվում: Զրուցում էին յոգայից, հնդկական փիլիսոփայությունից, բուդդիզմից: Գրադարաններից վերցնում էին այս թեմաներին վերաբերող գրականություն, կարդում, քննարկում, ֆոտոեղանակով բազմացնում ու տարածում: Այդ հավաքներին գալիս էին նաեւ Խորհրդային Միության ամենատարբեր անկյուններից՝ Մերձբալթիկայից, Ուկրաինայից, Մոսկվայից, Ռուսաստանի այլ քաղաքներից, ավելի ուշ՝ նաեւ Վրաստանից: 1970-ական-ների վերջի, 80-ականներ սկզբի քարացած, ճահ-ճացած իրականության մեջ եղբորս բնակարանն ինձ ազատամտության կղզյակ էր թվում: Առաջին փուլում այդ ամենն արվում էր բաց: Նրանց գործունեության մեջ գաղտնի ոչինչ չկար: Եվ նրանք որեւէ մեկի չէին խանգարում, իրենց էլ խանգարողներ չկային: Սկզբում նրանք կրիշնայականությամբ չէին էլ զբաղվում: Ամեն ինչ պտտվում էր արեւելյան փիլիսոփայության շուրջը: Կրիշնայականության վերաբերյալ առաջին գիրքը, որ տեսել եմ նրանց մոտ՝ Հրաչյա Աճառյանի թարգմանությամբ «Բհագավադ Գիտա»-ն էր, որ վերցրել էին հանրային գրադարանից ու ֆոտոեղանակով բազմացրել: Որոշեցի կարդալ այդ գիրքը: Կրիշնայականության թեմայով սա իմ կարդացած առաջին գիրքն էր: Ֆոտոպատճենը դժվար էր կարդացվում: Կարդացածից շատ բան չհասկացա, բայց չափազանց տպավորված էի: Դրանից հետո էր, որ որոշեցի լրջորեն հետաքրքրվել այս ուղղությամբ: 1982 թվականին եղբորս ընկեր Սահակյան Կարենը մեկնեց Մոսկվա, որտեղ կապեր հաստատեց Կրիշնա գիտակցության միջազգային ընկերության հետ: Սրանից կարճ ժամանակ առաջ Եվրոպայից Մոսկվա էր այցելել այս ընկերության հայտնի ուսուցիչներից մեկը: Նրա այցը մեծ աղմուկ էր բարձրացրել, խորհրդային իշխանությունները նրան վտարել էին ԽՍՀՄ-ից, ապա սկսել էին մոսկովյան կրիշնայականների շրջանում հալածանքներ ու ձերբակալություններ իրականացնել: Դրանից հետո կրիշնայականներն իրենց գործունեությունը տեղափոխեցին ընդհատակյա դաշտ: Հայաստանում ամեն ինչ շարունակվում էր այնպես, ինչպես եղել է: Որեւէ լուրջ խոչընդոտ կամ հալածանք չկար: Մոսկվայից իջած հրահանգի համաձայն, Պետանվտանգության կոմիտեից հայաստանյան կրիշնայականներին հրավիրում էին զրույցների, բայց թշնամություն չէին ցուցաբերում: Առաջարկում էին չափազանց բաց գործունեություն չծավալել, որպեսզի իրենք ստիպված չլինեն մեզ հալածել: Բաց տեքստով ասում էին, որ չեն ցանկանում կալանավորել մեզ, բայց եթե շրջահայաց չգտնվենք, ապա, ինչքան էլ չցանկանան, ստիպված են լինելու մեր նկատմամբ ավելի լուրջ քայլեր ձեռնարկել:

Արա Հակոբյան

Ես արդեն բավականին մեծ էի՝ 16 տարեկան, սովորում էի համալսարանի առաջին կուրսում: Չի կարելի ասել, թե արդեն կայացած կրիշնայական էի, բայց սկսել էի հետե-

ուել կրիշնայականության որոշ պահանջների եւ որպես առաջին ու կարեւոր քայլ՝ հրաժարվել էի մսից: Այս հողի վրա մեր տանը, իմ ու ծնողներիս միջեւ, լուրջ հակասություններ էին ծագում: Առաջին կուրսի ավարտական քննություններս, ի տարբերություն իմ շատ կուրսեցիների, հանձնեցի շատ արագ: Քննաշրջանը դեռ նոր էր սկսվել, իսկ ես բոլորն էլ արդեն հանձնել էի: Ամառային արձակուրդներին մեկնեցի Ստավրոպոլ: Ռուսաստանի շատ կրիշնայականներ, կենտրոնական քաղաքներում սկսված հալածանքներից խուսափելով, տեղափոխվել էին Ստավրոպոլի մարզի Կուրջինովո կոչվող գյուղ: Նրանք այնտեղ հողատարածք էին գնել ու ստեղծել իրենց համայնքը: Մեկ ամիս ապրեցի նրանց հետ: Այստեղ իմ մեջ տեղի ունեցավ մի այնպիսի հոգեւոր բեկում, որ արդեն առանց կրիշնայականության ինձ պատկերացնել չէի կարող: Անգամ տուն վերադառնալու ցանկություն չունեի: Այնտեղից մեկնեցի Մոսկվա, Լենինգրադ, հանդիպեցի այլ կրիշնայականների հետ, ստեղծվեցին նոր կապեր, եւ այդ ողջ ընթացքում ծնողներիս ոչինչ չէի հաղորդել իմ մասին, իսկ նրանք՝ իրար խառնված, ամենուր ինձ են փնտրել: Տուն վերադառնալուց հետո նոր թափով վերսկսվեցին իմ ու ծնողներիս հակասությունները: Եղբայրս արդեն քիչ էր շփվում իր կրիշնայական ընկերների հետ, եւ կրիշնայականների հիմնական հավաքատեղին եղբորս տնից տեղափոխվել էր Ավան՝ Կարեն Սահակյանի բնակարան: Մի օր էլ եղբայրս մի ճամպրուկ բերեց ինձ՝ մեջը լիքը գրականություն ու ասաց, որ չի ցանկանում իր տանը պահել դրանք: Հարցրեց՝ կուզե՞ս դրանք պահել ինձ մոտ: Ես վերցրեցի ճամպրուկը եւ տեղավորեցի իմ սենյակում՝ մահճակալի տակ: Օրեր անց՝ վաղ առավոտյան մեր տուն մի խումբ եկավ: Հայտարարեցին, որ խուզարկության թույլտվություն ունեն: Հետո պարզվեց, որ ռուսաստանյան կրիշնայականներին ձերբակալելիս՝ նրանց մոտ հայտնաբերել են իմ հեռախոսի համարն ու հասցեն, եւ այնտեղից հայ չեկիստներին հանձնարարական է տրվել՝ գտնել ինձ եւ խուզարկել մեր բնակարանը: Ծնողներս կարկամած էին: Սկզբում հարցրին՝ ու՞նե՞մ ինչ-որ բան, որ կցանկանայի կամավոր հանձնել իրենց: Դե, ես էլ ասացի՝ եթե գրականություն եք փնտրում, ահա այն: Հանեցին գրքերը, արձանագրեցին ու դրանց հետ միասին՝ ինձ տարան դատախազություն: Հարցաքննության ժամանակ ես, բնականաբար, եղբորս անունը չտվեցի, այլ ասացի՝ իբր, Կոմայգում մի անծանոթի հետ եմ զրույցի բռնվել, որը գրականությամբ լի այս ճամպրուկն առաջարկել է 50 ռուբլով գնել, եւ ես գնել եմ: Սա իրավապահ մարմինների հետ իմ առաջին շփումն էր: Այս դեպքից հետո էլ ավելի խորացան իմ հակասությունները ծնողներիս հետ: Հակասությունների հիմնական թեման եղել ու մնում էր խոհանոցը: Նրանք շարունակում էին սնվել այնպես, ինչպես միշտ էին սնվել, իսկ ես պահանջում էի՝ գոնե իմ ներկայությամբ միս չլինի: Հաճախ էի լինում Կարենի Ավանի բնակարանում, պատմում էի նրան տանն ունեցած խնդիրներիս մասին: Մի անգամ էլ նա առաջարկեց թողնել ծնողներիս տունը եւ տեղափոխվել Ավան: Այդպես էլ արեցի:

Համալսարանում կրիշնայական քարոզչություն էի իրականացնում: Այս կապակցությամբ համալսարանական թերթում իմ մասին մի հոդված տպագրեցին, որի մեջ պնդում էին, թե ես հայրենիք չունեմ, ու ընդհանրապես քննադատում էին կրիշնայականությունը: Հոդվածից հետո համալսարանում կոմերիտմիության ժողով հրավիրեցին ու ինձ հեռացրին կոմերիտմիությունից: Դառնում էի 18 տարեկան, շուտով պետք է բանակ տանեին ինձ: Դրանից խուսափելու ճանապարհներ էի փնտրում, եւ երբ տեսա, որ խուսափել հնարավոր չէ՝ որոշեցի հեռանալ Հայաստանից: Հույս ունեի՝ Հայաստանից հեռանալով՝ կորցնել հետքերս: Այս շրջանում մեր մեծ ընկերներից մեկը կարողացել էր Երեւանում գտնվող Գերագույն խորհրդի տպարանում կրիշնայական գրականության

ընդհատակյա տպագրություն կազմակերպել: «Բհագավաթ Գիտա» էր տպագրվում՝ ռուսերեն: Ողջ Խորհրդային Միությունում երեւի միայն Երեւանում էր այս կարգի բարձրորակ տպագրություն կազմակերպվել: Խորհրդային Միության տարբեր ծայրերից գալիս էին Երեւան՝ գրականություն տանելու: Այդ տարիներին Հայաստանում պայուսակ էր արտադրվում, որի վրա Գառնու հեթանոսական տաճարն էր, եւ տակը գրված էր՝ Գառնի: Ահա այս պայուսակի մեջ 50 հատ չկազմած գիրք էր տեղավորվում: Այստեղից չկազմված վիճակով տանում էին ուր որ պետք է, եւ այնտեղ գրքերը կազմում էին: Ընդհատակյա աշխատանքի փորձ չունեցող կրիշնայականները ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից գալիս էին Հայաստան, յուրաքանչյուրը մի քանի հատ այդ «Գառնի» պայուսակից գնում էր, եւ ամեն մեկի մեջ 50 հատ գիրք դրած՝ ուղեւորվում էին. ով՝ Լիտվա, ով՝ Ուրալ, ով՝ Ուկրաինա, ով՝ Միջին Ասիա: ՊԱԿ-ն էլ հետեւում էր սրանց, եւ որտեղ կրիշնայական էր բռնվում, ձեռքի պայուսակի վրա գրված էր լինում «Գառնի»: Ի վերջո, հայաստանյան ՊԱԿ-ին, նախ, դիտողություն են անում, որ իրենց քթի տակ գաղտնի տպագրություն է իրականացվում, իսկ իրենք տեղյակ չեն, ապա հանձնարարվում է գտնել ու փակել տպարանը, իսկ կազմակերպիչներին կալանավորել: Նրանց մտքով անգամ չէր անցնում, որ տպագրությունն իրականացվում է Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի տպարանում: Մինչ այս հանձնարարականը եւ տպարանի բացահայտումը՝ 1985-ի մայիսին, ճիշտ այդպիսի մի «Գառնի» պայուսակ ձեռքիս, ինքս ուղեւորվեցի Ուկրաինա: Գլխավոր նպատակս զորակոչից խուսափելն էր, հընթացս՝ նաեւ քարոզչություն էի իրականացնելու: Բացի գրքերից, նաեւ թռուցիկներ էի տարել: Այդ շրջանում «Գիտելիք» ընկերության անունից թռուցիկներ էինք տարածում: Բնական է, որ «Գիտելիք» ընկերությունում որեւէ մեկը դրա մասին պատկերացում անգամ չուներ: Ամենայն հավանականությամբ, քարոզչական նման հնարք կիրառելու միտքը ծագել էր Կարենի գլխում: Համաձայն այդ թռուցիկների՝ մանտրաներ կրկնելը հոգեբանական դրական ազդեցություն է թողնում մարդու վրա, եւ «Գիտելիք» ընկերության անունից մարդկանց առաջարկվում էին մանտրաներ: Թռուցիկների ու գրականության մի մասը Կիեւի կրիշնայականներին փոխանցելուց հետո, մյուս մասը վերցնելով՝ մեկնեցի Չեռնիգով, որոշ ժամանակ անց՝ կրկին վերադարձա Կիեւ, որտեղ Կրեշչատիկի վրա գտնվող մի գրախանութի մոտ քարոզչություն էի իրականացնում՝ մարդկանց առաջարկելով ինձ մոտ եղած գրականությունը, երբ ինձ մոտեցան միլիցիայի աշխատակիցները եւ ձերբակալեցին: Քանի որ հիմնական քարոզչական աշխատանքներս իրականացրել էի Չեռնիգովում, իսկ նրանք ինձ, ինչպես պարզվեց, անընդհատ հետեւել էին ու տեղյակ էին իմ քայլերից, կյանքիս մեջ առաջին անգամ ձեռնաշղթա հագցրին ու ավտոմեքենայով Կիեւից տարան Չեռնիգով: Որպես առաջին քայլ, չգիտես ինչու, ինձ մի քանի օրով տեղավորեցին վեներական դիսպանսերում, ինչից հետո տեղափոխեցին հատուկ ընդունիչ-բաշխիչ մեկուսարան, եւ միայն մի քանի օր անց տեղափոխեցին քննչական մեկուսարան: Նախաքննությունը հինգ ամսից ավելի տեւեց: Գտնվում էի ընդհանուր բանտախցում: Ամեն ինչ նորմալ էր, մարդիկ ինձ հարգանքով էին վերաբերվում, իրենց հանձնուքի ոչ մսային կերակուրներից ինձ բաժին էին հանում, օգնում ու աջակցում էին, բայց հետո տեղափոխեցին մեկ այլ՝ ավելի փոքր բանտախուց, որտեղ երեքով էինք: Այստեղ ամեն ինչ ավելի քան վատ էր: Խցակիցներիս հանձնարարված էր ճնշել ինձ: Ինձ հալածում էին, բռնություն էին կիրառում իմ նկատմամբ: Նրանցից հատկապես մեկն աչքի էր ընկնում իր դաժանությամբ: Հետո քննիչն ասաց ինձ, որ իմ գործի նախաքննության ընթացքում քննչական խումբ է մեկնել Երեւան, ընդհատակյա տպագրության կազմակերպիչներին բացահայտել են, ու տասից ավելի մարդ է ձերբա-

կալվել: Հասկացա, որ գործը շատ ավելի լուրջ բնույթ է կրում, քան ես կկարողանայի պատկերացնել: Վիճակս թեթեւացնելու համար որոշեցի ասել, թե ձերբակալվածների հետ այլեւս առնչություններ չունեմ, եւ կրիշնայականությունն ինձ համար արդեն անցած էտապ է: Հույս ունեի՝ այս տարբերակով դատապարտվելուց ընդհանրապես խուսափել: Նաեւ հայրս էր գնում-գալիս: Նա էլ իր հերթին էր ջանքեր թափում ու փրկության ուղիներ որոնում, բայց դատից ու դատապարտվելուց խուսափել չհաջողվեց: Ուկրաինական ԽՍՀ քր. օր.-ի 209 հոդվածը (կրոնական կազմակերպություններին մասնակցություն եւ կրոնական քարոզչություն, որը մարդկանց անհատականությանը վնաս է հասցնում), որով դատապարտեցին ինձ, մինչեւ հինգ տարի ազատազրկում էր նախատեսում: Իմ նկատմամբ մեղմ վարվեցին: Տվեցին 1.5 տարի եւ ուղարկեցին քիմիայի: «Քիմիա» կոչվածը խորհրդային իշխանությունների հերթական անբացատրելի նախաձեռնություններից մեկն էր. ոչ ծանր հանցանք գործած դատապարտյալներին ուղարկում էին քիմիական արդյունաբերությունում աշխատելու: Այս նպատակով նաեւ կալանավայրերից էին մարդկանց պահման ռեժիմները փոխարինում ավելի մեղմ՝ պայմանական ռեժիմով: Սա կիրառվում էր որպես խրախուսանք: Արդյունքում՝ թեթեւ հանցանք գործածների կամ ուղղման ճանապարհին կանգնած կալանավորների պահման ռեժիմը էապես մեղմացվում էր: Իսկ ողջ նպատակը քիմիական արդյունաբերությանը զարկ տալն էր: Այս կարգի դատապարտյալների պահման ռեժիմը պահանջում էր յուրաքանչյուր առավոտ ու երեկո՝ աշխատանքից առաջ ու հետո, պարտադիր շարք կանգնած մասնակցել անվանականչին եւ անպայման գիշերել հսկողության տակ գտնվող հանրակացարանում: Ռեժիմի այս պահանջները խախտելու դեպքում կարող էին խախտողին կալանավայր տեղափոխել: Իսկ աշխատավայրերում աշխատում էինք այնպես, ինչպես սովորական բանվորները: Հայրս հաճախ էր այցելում ինձ: Մեկ տարին լրանալուց հետո ինձ առաջարկեցին 300 ռուբլի կաշառի դիմաց ազատ արձակվել: Այդ օրերին հայրս կրկին այցելել էր ինձ: Նա վճարեց այդ 300 ռուբլին, ու ինձ ազատ արձակեցին: Դա 1986-ի մայիսն էր:

Հայազգի այլախոհներ

Խորհրդային տարիների քաղկալանավայրերում, բացի Հայաստանում դատապարտված հայերից, կային նաեւ հայազգի քաղբանտարկյալներ, որոնք, այլ հանրապետություններում ապրելով, դատապարտվել էին այդ հանրապետությունների դատարանների կողմից: Կալանավայրերում եւ ԽՍՀՄ այլախոհական շարժման գործում նրանցից ոմանք լուրջ հեղինակություն ու դերակատարում են ունեցել: Հարկ ենք համարում անդրադառնալ նաեւ նրանց: Ցանկն, անկասկած, ամբողջական չէ:

Սերգեյ Իվանի Գրիգորյանցը ծնվել է 1941 թ., Կիեւում: Ապրել է եւ այժմ էլ ապրում է Մոսկվայում: Առաջին անգամ հակախորհրդային ագիտացիայի եւ պրոպագանդայի համար 5 տարի ազատազրկման է դատապարտվել 1975-ին: Ազատ արձակվելուց հետո շարունակել է իրավապաշտպանական գործունեությունը: Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկություններ է հավաքել եւ հրապարակել: 1983 թ. երկրորդ անգամ է դատապարտվել: Այս անգամ արդեն՝ 7 տարի ազատազրկման: Գորբաչովյան պերեստրոյկայի շնորհիվ ազատ է արձակվել ժամկետից շուտ՝ 1987-ին: Նույն շրջանում էլ հիմնել է «Գլասնոստ» հանդեսը: Այսօր Ռուսաստանում հայտնի ընդդիմադիր գործիչ է:

Հենրիխ Հովհաննեսի Ալտունյանը ծնվել է 1933 թ., Թբիլիսիում: Զինվորական է եղել: Ապրել է Խարկով քաղաքում: 1960-ականների վերջերից սկսել է զբաղվել այլախոհական գործունեությամբ: Այլախոհների հետ կապեր հաստատելու պատճառով 1968-ին հեռացվել է ծառայությունից: Առաջին անգամ 3 տարի ազատազրկման է դատապարտվել 1969-ին: Պատիժը կրել է Կրասնոյարսկի մարզում: Երկրորդ անգամ դատապարտվել է 7 տարի ազատազրկման եւ 5 տարի աքսորի՝ Ուկրաինական ԽՍՀ քր. օր.-ի 62 հոդվածով (հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա): Կալանավայրում ցուցաբերած ըմբոստ վարքի պատճառով է՛լ ավելի է խստացվել նրա ռեժիմը՝ 3 տարով փոխադրվել է բանտային ռեժիմ: Երեք տարի Չիստոպոլի բանտում անցկացնելուց հետո պատիժը շարունակել է կրել Մորդովիայի քաղաքական կալանավայրերում: Ազատ է արձակվել ժամկետից շուտ՝ 1987-ին, գորբաչովյան պերեստրոյկայի շնորհիվ: Եղել է Ուկրաինայի Ժողովրդական Ռուխի ակտիվ անդամներից ու կազմակերպիչներից մեկը: 1990 թ. ընտրվել է Ուկրաինայի Գերագույն Ռադայի պատգամավոր: Վախճանվել է 2005 թ. հունիսի 30-ին:

Անատոլի Լեոնտեւի Ավագովը աշխատել է Կոմսոմոլսկ նա Ամուրե քաղաքում: Նախկինում դատապարտված է եղել քրեական հոդվածով: Ազատ արձակվելուց հետո պետական մարմիններին, ԱՄՆ նախագահին եւ մի շարք լրատվամիջոցների նամակներ է գրել, որոնք ՊԱԿ-ը հակախորհրդային է որակել: Հենց այդ նամակների համար Ավագովը ՌԽՖՍՀ քր. օր.-ի 70 հոդվածի հատկանիշներով (հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա) դատապարտվել է 5 տարի ազատազրկման:

Ալեքսանդր Վլադիմիրի Ավագովը ծնվել է 1954 թ., Բաքվում: 1976-ին, հակախորհրդային որակված, մարքսիստական ուղղվածություն ունեցող թռուցիկներ տարածելու համար, ՌԽՖՍՀ քր. օր.-ի 70 հոդվածի հատկանիշներով Սվերդլովսկում դատապարտվել է ազատազրկման: Ազատ արձակվելուց հետո մեկնել է ԱՄՆ մշտական բնակության:

Էդուարդ Արտաշեսի Լալայանցը ծնվել է 1925 թ., Լենինգրադում (Սանկտ Պետերբուրգ): 1960-ից աշխատել է Լենինգրադի արեւելագիտության գիտահետազոտական

ինստիտուտում: Ունեցել է նաեւ տնտեսագիտական կրթություն: 1969 թ. կալանավորվել, այնուհետեւ ՌԽՖՍՀ քր. օր.-ի 70 (հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա) հոդվածով դատապարտվել է 3 տարի ազատազրկման: Ազատ արձակվելուց հետո աշխատել է տարբեր գործարաններում: 1975-ից հետո պաշտպանել է թեկնածուական թեզ: Գրել է «Հուշեր Գուլագից» գիրքը:

Զավադ Մանգասարի Հայրապետովը ծնվել է 1927 թ., Բաքվում: Մասնագիտությամբ ատամնաբույժ է: Նամակներ է գրել ԽՍՀՄ ղեկավարներին: Հենց այդ նամակների պատճառով 1975-ին՝ Ադրբեջանական ԽՍՀ քր. օր.-ի 63 (հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա) հոդվածով դատապարտվել է 6 տարի ազատազրկման: Համաձայն դատավճռի՝ առաջին 3 տարին պետք է կրեր բանտային ռեժիմում: Երեք տարի Վլադիմիրի բանտում մնալուց հետո Հայրապետովը փոխադրվել է Պերմի մարզի խիստ ռեժիմի կալանավայր:

Պավել Հարիզի Հայրապետովը ծնվել է 1929 թ., Բաքվում: Թռուցիկներ տարածելու համար 1982-ին դատապարտվել է «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով:

Էմիլ Սարկիսյանը տաքսու վարորդ է աշխատել Լենինգրադում: Իր երկու ընկերների հետ միասին՝ 1974-ին «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատական միություն» անվամբ կազմակերպություն է ստեղծել: Կազմակերպությունն՝ ի թիվս այլ գործերի, զբաղվել է նաեւ ինքնահրատ գրականության տարածմամբ: Կալանավորվել է 1975 թ. մարտին: 1975-ի օգոստոսին Սարկիսովը դատապարտվել է 4 տարի ազատազրկման: Պատիժը կրել է Պերմի մարզի կալանավայրերում:

Օգտագործված գրականության ցանկ

Արմենակ Մանուկյան, «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ.», «Ամրոց գոուպ» հրատարակչություն, Երեւան 2005

Նորայր Խանզադյան, «Ազգային միացյալ կուսակցություն-ինքնորոշում միավորում» (ԱՄԿ- ԱԻՄ) համառոտ պատմություն մաս Ա, մաս Բ, ԱԻՄ հրատարակչություն, Երեւան 2002

К истории московской хельсинской группы, Москва 2001

Документы московской хельсинкской группы, 1976-1982, Москва 2001

Л. Алексеева, История инакомыслия в СССР, Вильнюс-Москва: "Весть", 1992

Комментарий к исправительно-трудовому кодексу РСФСР, Москва, “Юридическая литература”, 1979

Էլյա Գյունաշյան, «Մարդ, որ բոլորինն էր», «Վան Արյան» հրատարակչություն, Երեւան 2009

Հակոբջան Թադեւոսյան, «Բեկորներիս իրավունքով», Երեւան 2009

«Ես գնացի Կոմիտասի այգի», Երեւան 2005

«Նվիրյալը», Երեւան 2007

Բովանդակություն

Գրքի ստեղծման նախապատմությունը 3
Անհրաժեշտ ընդգծումներ 7
Այլախոհության պատմությունը ԽՍՀՄ-ում 9
Քաղբանտարկյալների ցանկը համալրման կարիք ունի 12
Քաղաքական բռնությունների ընդհանուր ուրվագիծը 22
Կալանավայրերի պահման պայմանները 25
1953-1958 թթ. դատապարտվածները 28
Խաչիկ Սաֆարյան, Խաչատուր Ամիրջանյան, Վիգեն Բաբայան, Կարապետ Քիրամիջյան, Մերուժան Հովհաննիսյան, Գրիգոր Եղյան, Էդուարդ Կակոսյան **Յոթի Գործ** 31
Եռամյա դադար 49
Զավեն Հարությունյան 51
Հայաստանի վերամիավորման շարժում 60
Լեւոն-Արա Մնացականյան 62
Հակոբջան Թադեւոսյան, Ռուբեն Հովսեփյան, Էդիկ Ալեքսանյան, Ռաֆիկ Ղարագուլյան, Միսաք Խաչատրյան, Անդրանիկ Մխիթարյան, Վահան Եղիազարյան, Ռուբիկ Վարդանյան **Հայ Հայրենասերների Միություն** 63
Հայկազ Խաչատրյան, Ստեփան Զատիկյան, Շահեն Հարությունյան **Ազգային Միացյալ Կուսակցություն (ԱՄԿ)** 78
Հովիկ Վասիլյան, Ասատուր Բաբայան, Գեւորգ Հեքիմյանը, Աղասի Անտոնյան, Սարգիս Թորոսյան, Շիրակ Գյունաշյան, Լեւոն Առուշանյան, Հայկ Իսկանդարյան **Հանուն Հայրենիքի** 102
Պարույր Հայրիկյան, Աշոտ Նավասարդյան, Հակոբ Աշիկյան, Աշոտ Խաչատրյան, Ռաֆայել Բարսեղով **(ԱՄԿ)** 122
Վալտեր Մելիքյան, Յուրիկ Բուդաղյան, Սերոբ Սարգսյան Սուրեն Մելիքյան **Հայաստանի վերամիավորման միություն** 140
Բագրատ Շահվերդյան, Արարատ Թովմասյան 169
Անահիտ Կարապետյան, Ֆիրդուս Մուրադյան, Գարեգին Դավթյան **(ԱՄԿ)** 186

Քաջիկ Սահակյան **(ԱՄԿ)** 196
Նորիկ եւ Սամվել Մարտիրոսյաններ, Լեւոն Բաղալյան **(ԱՄԿ)** 204
Ռուբեն Խաչատրյան **(ԱՄԿ)** 213
Աշոտ Նավասարդյան **(ԱՄԿ)** 223
Գագիկ Առաքելյան, Կոստան Կարապետյան **(ԱՄԿ)** 228
Ազատ Արշակյան, Ռազմիկ Զոհրաբյան, Ռազմիկ Մարկոսյան **(ԱՄԿ)** 238
Պարույր Հայրիկյան **(ԱՄԿ)** 260
Անդրանիկ Մարգարյան **(ԱՄԿ)** 273
Շահեն Հարությունյան **(ԱՄԿ)** 285
Հայկազ Խաչատրյան **(ԱՄԿ)** 287
Ռոբերտ Նազարյան **(Հայաստանի հելսինկյան խումբ)** 291
Ստեփան Զատիկյան, Հակոբ Ստեփանյան,
Զավեն Բաղդասարյան **(Մետրոյի գործ)** 304
Էդուարդ Հարությունյան **(Հայաստանի հելսինկյան խումբ)** 313
Արսեն Ղազարյան 320
Ալեքսանդր Մանուչարյան, Աշոտ Ափիկյան, Սմբատ Մելքոնյան 325
Մարզպետ Հարությունյան, Իշխան Մկրտչյան, Վարդան Հարությունյան,
Սամվել Եղիազարյան, Հովհաննես Աղաբաբյան
(Հայ երիտասարդների միություն) 342
Աշոտ Նավասարդյան, Ազատ Արշակյան **(ԱՄԿ)** 371
Շիրակ Գյունաշյան 377
Էդուարդ Հարությունյան, Ռաֆայել Օհանյան,
Սիրվարդ Ավագյան **(Հայաստանի հելսինկյան խումբ)** 380
Էդմոնդ Ավետյան 394
Գեորգի Խոմիզուրի, Ռաֆայել Պապայան 401
Բաֆֆի Մելքոնյան 414
Կրիշնայականներ 415
Հայազգի այլախոհներ 422
Օգտագործված գրականության ցանկ 424

ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
«ՎԱՆ ԱՐՅԱՆ»
2014

Խմբագիր՝
Լիզա ՃԱՂԱՐՅԱՆ

Չափսը՝ 70x100 1/16: Ծավալը՝ 26,75 տպ. մամուլ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատան տպարանում